

ՀՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ (ՀՃՈՒ) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Դր.-պրոֆ. Ա. Մուրաֆյան (Փարիզ), դր.-պրոֆ. Մ. Հասրաթյան (Երևան), դր.-պրոֆ. Մ. Բունեման-Հախնազարյան (Աախեն), դր.-պրոֆ. Հ. Սուրուզյան (Կահիրե), դր.-պրոֆ. Լ. Չեքիյան (Վենետիկ), դր.-պրոֆ. Պ. Չոբանյան (Երևան), դր.-պրոֆ. Ա. Ղազարյան (Մոսկվա), դր.-պրոֆ. Ն. Սարգսյան (Երևան), Մ. Լալայան (Երևան), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), դր.-պրոֆ. Մ. Բալայան (Ստեփանակերտ)

НАУЧНЫЙ СОВЕТ ФОНДА ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ (ОИАА)
Др.-проф. А.Мутафян (Париж), др.-проф. М. Асратян (Ереван), др.-проф. М. Бунеман-Ахназарян (Аахен), др.-проф. Г. Сурузян (Каир), др.-проф. Л. Зекиян (Венеция), Др.-проф. П.Чобанян (Ереван), Др.-проф. А. Казарян (Москва), др.-проф. Н. Саргсян (Ереван), М. Лалаян (Ереван), Ж. Манучарян (Лос-Анджелес), др.-проф. М. Балаян (Степанакерт)

SCIENTIFIC COUNCIL OF RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE (RAA) FOUNDATION
Dr. A. Mutafian (Prof.), Paris; Dr. M. Hasratian (Prof.), Yerevan; Dr. Margrit Bunemann- Haghazarian (Prof.), Aachen; Dr. H. Suruzian (Prof.), Cairo; Dr. L. Zekiyian (Prof.), Venice; Dr. P. Chobanian (Prof.), Yerevan; Dr. A. Ghazarian (Prof.), Moscow; Prof. N. Sargissian, Yerevan; M. Lalayan, Yerevan; J. Manoucharian, Los Angeles, California; Dr. M. Balayan (Prof.), Stepanakert

Աշխատությունը հրատարակվում է ՀՃՈՒ հիմնադրամի գիտական խորհրդի երաշխավորությամբ
Книга издается по рекомендации научного совета ОИАА
The publication of the present volume has been approved by RAA Scientific Council

ՀՃՈՒ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ ОИАА
RAA SCIENTIFIC RESEARCH SERIES

Գիրք ԺԴ
Книга 14
Volume 14

ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

МЕМУАРНОЕ НАСЛЕДИЕ

COLLECTED MEMOIRS

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄ
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN
2011

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3.(2Հ)
Հ253

Հ253 ՀՃՈՒ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ.- Եր.: Հայկական
ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2011
Գիրք ԺԴ: Հուշագրական ժառանգություն.-384 էջ

Աշխատությունը ներկայացնում է գլխավորապես Արևմտյան Հայաստանի զանազան գավառներում
ծնված և 1915 թ. ցեղասպանությունը վերապրած անհատների՝ առաջին անգամ հրատարակվող հուշա-
գրությունները:

Հասցեագրվում է հայ ժողովրդի պատմությանը և հայրենագիտությանը հետաքրքրվող մասնագետ-
ներին և ընթերցող լայն շրջաններին:

The present work includes the memoirs of a number of survivors of the Genocide of 1915 who are
mostly natives of Western Armenia.

Published for the first time, these memoirs are intended for the general reader, specialists interest-
ed in Armenian history, and all those wishing to enrich their knowledge of their Homeland.

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3.(2Հ)

Նվիրվում է հայրենի օրրանում ծնված լինելու բախտավորությունն ունեցած,
սակայն դիվական ուժի ներգործությամբ սրբազան ծննդավայրի՝ սկամա վերջին
ներկայացուցիչները դարձած, անմոռաց եզերքների հայրենաբաղձ տեսիլքներով
իրենց երկրային ուղին տառապալից անցած
հուշագիր հեղինակների հիշատակին

*Dedicated to the authors of these memoirs, who were lucky enough to be born in their
native land, but were doomed to become its last Mohicans by some evil force, and spent their
earthly lives in incessant suffering, ever haunted by the vision of their unforgettable home-
land*

Աշխատությունը հրատարակվել է ՀՀ Աշակույթի նախարարության հովանավորությամբ

Բովանդակություն

<i>Երկու խոսք</i>	5
ՍԱՐԳԻՍ ՄԻՍԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ	7
<i>Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես</i>	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՔԻԱՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.....	30
<i>Կյանքիս հորձանուտներում</i>	
ԴԱՎԻԹ ԱԶԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ	67
<i>Խարսեցի մեկը՝ հազարներից</i>	
ՍԱՐԹԱ ՊԱՐՏԻՉՊԱՆՅԱՆ	73
<i>Եթե պատմեմ գլխովս անցածը...</i>	
ՍԵՂՐԱԿ ՍԱՐԱՖՅԱՆ	76
<i>Երեք ժանդարմայով, 1500 հոգիով...</i>	
ԳԵՂԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ	83
<i>Վանի գերմանական որբանոցի հուշերս</i>	
ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՍՏԱՄԲՈԼՅԱՆ	95
<i>Խոստովանություն</i>	
<i>Կարսի անկումը</i>	
ԳԱՐԵԳԻՆ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ	162
<i>Մի՞թե մարդկության խիղճը հավիտյանս պիտի լռե</i>	
ՌՈՒԲԵՆ ԵՎ ԶԱԲԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ	179
<i>Փոքր պատմություններ Մեծ եղեռնի մասին</i>	
ՍԱՐԳԱՐԻՏ ԽԼՂԱԹՅԱՆ	184
<i>Թուրքը մուխաննաթ է</i>	
ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ	188
<i>Մեր սերունդէն դուրս ողջ մնասս և մեր վրէժը լուծես</i>	
ԱՐՄԵՆԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ.....	208
<i>Միասին էինք տառապել, անցել գողգոթայի ճամբան</i>	
ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲԻ ՓՈՍՏԱԼՉՅԱՆ.....	221
<i>Բնաջնջման վշտի հետ մտերմացավ հոգիս...</i>	
ՇԵՐՈՆՅ ՇՈՒՇԱՆ, ՄԱՔՐՈՒԽ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱՄՐԻԿՅԱՆ.....	230
<i>Շուշան տատիս հուշերը ոգմեցիների մասին</i>	
<i>Մաքրուխ տատիս հուշերը մորական տատիս և պապիս մասին</i>	
<i>Սարգիս Ամրիկյանի հուշերը Անարխիստ Սարգսի մասին</i>	
ԲԱԳՐԱՏ ԵՂԻԱԶԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ	236
<i>Վերջին տրեխներս...</i>	
ՌԱՇԻԴ ՀԱՐԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ	249
<i>Հուշեր իմ կենսագրութիւնից</i>	
ՊՈՂՈՍ (ՍՏԵՓԱՆ) ՍԱՐԳՍԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ	253
<i>Մի կյանքի պատմություն</i>	
ՎԱԳԻՆԱԿ ՍԱՀԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ	259
<i>Իմ սիրելի երեխաներին, բոռներին</i>	
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿԻ ԱՄՐԻԿՅԱՆ	278
<i>Արդյոք կտեսնե՞ն լույս աչքով Ազատ Հայաստան</i>	

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրքի հեղինակները մարդիկ են, ովքեր բախտավոր էին, որ ծնվել էին հազարամյակների պատմությամբ իմաստավորված և սրբացված նախնյաց Հայրենիքում, սակայն միևնույն ժամանակ նրանց էր վիճակված լինել այն վերջին ապաբախտ սերունդը, ով բիրտ ուժի կամոք արմատախիլ եղավ, դուրս մղվեց հազարամյակներ ծխացրած հարազատ օջախից և դատապարտվեց մինչև կյանքի վերջին ակնթարթներն ապրել նվիրական ծննդավայրի սրտմաշուկ հուշերով և տեսիլքներով:

Գրքի հեղինակները ցեղասպանության ենթարկված ընտանիքների, երբեմն բազմանդամ գերդաստանների՝ հրաշքով ողջ մնացած շառավիղներն են, ովքեր մոխիրների միջից վերստին ծլարձակեցին, հասակ առան, ընտանիք կազմեցին, երեխաներ և թոռներ ունեցան, սակայն այդպես էլ չկարողացան հովացնել իրենց հայրենաբաղձ սրտերը:

Հայրենիքի և ծննդավայրի հանդեպ ունեցած անսահման սերն ու կարոտը մինչև վերջին շունչը պաշարած պահեցին վերապրած բնավեր մի ողջ սերնդի միտքն ու հոգին: Նրանցից շատերն անվերջ պատմում, նկարագրում էին հաճախ սոսկ մանկական հիշողությունների սահմաններում ամփոփված իրենց հուշերը: Ուրիշներն էլ լռում էին՝ իրենց մեջ խեղդելով կորցրած հարազատների և հայրենիքի ցավը:

Ավելի քիչ թվով մարդիկ, ովքեր երբեմն սոսկ ինքնակրթությամբ էին դարձել գրաճանաչ ու նաև բնատուր շնորհքով տիրապետում էին գրչի հմտությանը, հեղինակել են հուշագրություններ և ավանդել ժառանգներին: Մասնավոր և գրեթե առանց բացառության ողբերգական ճակատագրեր ներկայացնելուց զատ՝ հուշագրությունները հաճախ պարունակում են նաև տեղագրական, հայրենագիտական, ազգագրական, վիճակագրական և տարաբնույթ այլ տվյալներ, որոնք չափազանց կարևոր են գերեվարված Հայրենիքի պատմական զանազան անցքերի ուսումնասիրության առումով:

Արդեն 1920-ական թվականներից ի վեր լույս են ընծայվել ցեղասպանությունը վերապրած անհատների բազմաթիվ հուշագրություններ:

Սույն հատորը ներառում է առեճակի Մարգիս Ավետիսյանի, արջարակցի Հովհաննես Հովհաննիսյանի, խարսեցիներ Դավիթ Ղազարյանի և Մարգարիտ Խլղաթյանի, կարմուճցի Մարթա Պարտիզյանյանի, մարաշցի Սեդրակ Սարաֆյանի, խառակոնիսցի Գեղամ Սարգսյանի, Կարսի Առաքելոց եկեղեցու վերջին քահանա Խորեն Ստամբուլյանի, արճակցի Գարեգին Մովսիսյանի, ճալացիներ Ռուբեն և Ջաբել Բաղդասարյանների, սեբաստացիներ Արամ և Արմենակ Կյուրեղյան եղբայրների, հաճնցի Երվանդ Փոստալյանի, ոզնեցիներ Շուշանի, Մարութի և Սարգիս և Արմենակ Ամրիկյանների, օդուզուեցի Բագրատ Սարգսյանի, Շատախի թաղեցի Ռաշիդ Մանուկյանի, սիվրիհիսարցի Պողոս (Ստեփան) Կոստանյանի, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի՝ ցարդ անտիպ հուշագրությունները, որոնց հեղինակներից և ոչ մեկն արդեն վաղուց մեզ հետ չէ (առավել երկարակյացները վախճանվել են 1980-1990-ական թվականներին):

Սույն հատորը լույս ենք ընծայում հուշագիր հեղինակների հիշատակի առջև խորին հարգանքի զգացումով, ակնածանքով և նրանցից յուրաքանչյուրի՝ գուցե և թաքուն փայլիսյառ ցանկությունն իրագործած լինելու հանգստությամբ:

Միաժամանակ շնորհակալություն ենք հայտնում հուշագիր հեղինակների ժառանգներին, ովքեր խնամքով պահպանել են ազգային հարստության մաս կազմող ձեռագիր հուշագրությունները և դրանք վստահել մեզ՝ հրատարակելու պատվավոր և պատասխանատու գործն իրականացնելու համար:


Բոլոր հուշագրությունները ներկայացված են խմբագրական որոշ անհրաժեշտ շտկումներով, ծանոթագրություններով և օժանդակ նյութերով (քարտեզ, լուսանկար):

Հուշագիր հեղինակների ծննդավայրերը





ՍԱՐԳԻՍ ՄԻՍԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(1913-1991)



ՄԱՐԻԱՄ ՄԻՍԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ-
ԲՈՒԴԱՂՅԱՆ (1901-1979)

Համառոտ կենսագրություն

Սարգիս և Մարիամ Միսակի Ավետիսյանները ծնվել են Վանի նահանգի Արծկե գավառի Առեն գյուղում: Հայրը՝ Միսակը, նահատակվում է հայրենի գյուղում Մեծ եղեռնի ժամանակ՝ 1915 թ. ապրիլին: Ջարդից մազապործ՝ նրա մայրը՝ Մարիամը, երկար դեգերումներից հետո զավակների հետ հասնում է Արևելյան Հայաստան և ապաստան գտնում Էջմիածնում:

Ավագ քույրը՝ Մարիամը, աշխատանքի է անցնում Երևանի 5-րդ որբանոցում:

1921 թ. Փաթրինջ գյուղում սովից մահանում են մայրը, հետո Խոսրով եղբայրը:

Սարգիսն ապրում է Ղզթամուր գյուղում՝ բատրակություն անելով:

1921 թ. քույրը գտնում է եղբորը՝ Սարգիսն և նրան տեղափոխում իր մոտ:

1922 թ. աշնանն Ամերիկա մեկնելուց հրաժարվելու պատճառով Սարգիսն որբանոցից դուրս են հանում: Այնուհետև նա բնակվում է Ներքին Աղբաշ գյուղում քրոջ ընտանիքի հետ:

1922-1926 թվականներին Սարգիսը սովորում է Ներքին Աղբաշի քառամյա դպրոցում (ձմռան ամիսներին ուսանում է, իսկ ամռանը զբաղվում հոտադրությամբ և բատրակությամբ):

Սարգիսը քրոջ ընտանիքի հետ հաստատվում է Դիտակում: Հաճախում է Ներքին Դվին գյուղի 7-ամյա կոլերիա դպրոց:

1932-1935 թթ. Սարգիսն ուսանում է Երևանի մանկավարժական տեխնիկումում: Ուսումնառության տարիներին տեխնիկումի գրական թերթի խմբագիրն էր:

1935 թ. գորակոչվում է բանակ:

1939 թ. Սարգիսն ամուսնանում է ուսուցչուհի Արևհատ Մարգարյանի (1920, գ. Ներքին Դվին - 1995, գ. Դիտակ) հետ և ունենում 6 զավակ (Խոսրով՝ ծ. 1941 թ. (մահացել է 1 տարին չլրացած), Խոսրով՝ ծ. 1943 թ., Աշոտ՝ ծ. 1945 թ., Նորիկ՝ ծ. 1947 թ., Ազատ՝ ծ. 1949 թ., Քնար՝ ծ. 1951 թ.): Ի դեպ, Սարգիս Ավետիսյանի զավակներից Աշոտը և Նորիկը հետագայում վերցնում են իրենց մեծ պապի անունը՝ Քոչե, և կրում Քոչարյան ազգանունը:

Սարգիս և Արևհատ Ավետիսյանները դասավանդել են Ղամարուի (Արտաշատ) շրջանի գյուղերում: Սարգիսն աշխատել է նաև «Военторг»-ում՝ որպես վերստուգող, Դիտակ գյուղում՝ ֆերմայի վարիչ, Երպտուղբանջարեղենում՝ հաշվապահ, իսկ թոշակի անցնելուց հետո՝ շինարարությունում՝ որպես բանվոր:

Մարիամը վախճանվել է 1979 թ., իսկ Սարգիսը՝ 1991 թ.: Երկուսն էլ ամփոփվել են Դիտակ գյուղի գերեզմանոցում:

Ներկայացվող հուշագրության սկզբնամասը (մինչև 1920-1921 թթ.) եղբայր գրի է առել քրոջ՝ Մարիամի պատմածների հիման վրա, իսկ շարունակությունը հեղինակել է ինքը՝ Սարգիսը, 1950-ական թթ.:

ԻՆՉՔԱՆ ՑԱՎ ԵՄ ՏԵՍԵԼ ԵՄ...

Նախաբան

Իմ մանկության վաղ շրջանի, միջավայրի, վարքուբարքի մասին ես թերևս չկարողանալի պատմել, եթե չլիներ 1901 թ. ծնված մեծ քույրս՝ Մարիամը: Միայն 1927-1928 թթ., երբ մեր երկրում անգրագիտության վերացման հարց դրվեց, քույրս գրաճանաչ դարձավ և մասամբ էլ իմ օգնությամբ որոշ գրագիտություն ձեռք բերեց: Ասում եմ որոշ, որովհետև նա մինչև իր կյանքի վերջն էլ միայն կարդալ գիտեր, այն էլ ոչ սահուն, իսկ գրել, թեկուզ մեկ-երկու նախադասություն, չէր կարողանում:

Սկզբնական շրջանում քրոջս և նրա ամուսնու՝ իմ հանգուցյալ փեսա Գառնիկի համար երեկոները լամպի լույսի տակ կարդում էի ձեռքս ընկած գեղարվեստական գրքեր, որոնցից նրանք հոգեկան մեծ բավականություն էին ստանում: Քրոջս և փեսայիս համար իմ կարդացած առաջին գիրքը «Մամվել» վեպն էր: Այդ ժամանակ Բաֆֆին արգելված էր, և ես, լինելով մեր գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղարը, իրավունք չունեի Բաֆֆու մասին գաղափար ունենալու: Դեռ ավելին, պիտի կանխեի մյուսներին էլ և թույլ չտայի արգելված գրականություն կարդալ:

Մեր գյուղում, որի բնակիչները բացառապես Արևմտյան Հայաստանից գաղթած հայեր էին, բառիս բուն իմաստով գրագետ մարդիկ չկային, հետևաբար գրքեր ու գրադարան ունենալու մասին խոսք լինել չէր կարող:

Կոմերիտների շրջանի հանձնարարությամբ մեր և հարևան գյուղերի՝ գրադարան ունեցող ընտանիքների տները ստուգելիս և արգելված գրքերը ժողովելիս շուրջ մեկ-երկու տասնյակ գրքեր իմ ձեռքն ընկան, որոնք պիտի այրեինք: Իհարկե, ցուցակում նշված արգելված հեղինակների և նրանց գրքերի մեծ մասը մենք այրեցինք, բայց և այնպես մեր մեջ գտնվեցին նաև «գողեր», որոնցից մեկը ես էի: Ինչ վերաբերում է գրքերն այրելու բարբարոսությանը, ես այրվում էի նրանց հետ...

Քրոջս վառ հիշողություններն ինձ հիմք են տալիս շարադրելու իմ մանկությունը:

Մեր Առեճը

Մեր գյուղը՝ Առեճը, գտնվելիս է եղել Վանա ծովակի հյուսիսարևելյան ափին՝ Արծկե գավառի¹ Արծկի (Արծկե)² և Ականց³ քաղաքների միջև, այն-

տեղ, ուր Միփանից հոսող ջրերը մի լճակ են առաջացրել, որը բաժանվում է Վանա ծովակից 3-4 կիլոմետր⁴ լայնությամբ հողաշերտով:

Ասում եմ գտնվելիս է եղել, քանի որ չգիտեմ՝ ներկայումս այն գոյություն ունի⁵, թե՞ ոչ⁵: Արևմտյան Հայաստանի բոլոր շեների նման 1915 թ. գարնանը թուրքերն Առեճն էլ հրո ճարակ դարձրին և հիմնավեր կործանեցին:

Արևմտյան Հայաստանի գյուղերն առանց բացառության կառուցված են իրար կից. փողոցի ամենածայրի տանն անմիջապես հաջորդում էր երկրորդը, երրորդը, և այսպես մինչև փողոցի մյուս ծայրի վերջին տունը: Մեկի տան պատը ծառայում էր նաև մյուս տան համար: Այդ պատերն ունեին փոքրիկ անցքեր, որոնց միջոցով հնարավոր էր տնային իրեր վերցնել կամ փոխարինաբար տալ հարևաններին: Ավելի մտերիմ հարևանները կամ մերձավոր ընտանիքներն այդ անցքերի փոխարեն պատերի մեջ բաց էին անում դռնակներ, որտեղից կարելի էր ոչ միայն տնային իրեր փոխանակել, այլև ելումուտ անել: Այդ անցքերն ու դռնակները միմյանց հետ հաղորդակցվելու հարմարավետ միջոցներ էին:

Գյուղին վտանգ սպառնալու դեպքում առանց դժվարության լուրը փողոցի մեկ ծայրից մյուսն էր հաղորդվում, և մի քանի րոպեի բավական էր ողջ գյուղը ոտքի հանելու և համապատասխան միջոցների դիմելու:

Հայկական գյուղերի այդպիսի կառուցվածք ունենալը մտածված էր և արդարացվում էր տասնամյակների ընթացքում հայերի նկատմամբ բազմաթիվ օտար նվաճողների դեմ ինքնապաշտպանության դիմելու ժամանակ:

Ամառ թե ձմեռ մարդիկ մեծ մասամբ տանիքներով էին գյուղից դուրս գալիս և գյուղ մտնում:

Ամռանը նեղ փողոցները ծառայում էին միայն բազմաթիվ ու բազմապիսի գրաստներով անցուդարձ անողներին և անասուններին:

Փողոցների լայնքը հազիվ էր թույլ տալիս, որ երկու սայլ միմյանց կողքով անցնեն: Չյուրառատ ձմռանը, երբ ձյան շերտի հաստությունը հասնում էր մեկ մետրի և նույնիսկ դրանից էլ ավելի, փողոցներով երթևեկելու մասին այլևս խոսք լինել չէր կարող, քանի որ դրանք լցվում էին փողոցների երկու

4 Իրականում միայն 1 կմ է:

5 Առեճը հայաբնակ գյուղ էր՝ Վանի նահանգի Արծկե գավառում՝ Արծկե քաղաքից 24 կմ արևելք՝ Առեճ լճի արևելյան ափին, ծովի մակերևույթից 1660-1670 մ բարձրության վրա: Այժմ վերանվանված է Գյուլյուզյու (Göldüzü):

1 Թուրքերն անվանում են Աղիջևազ, Ալջևազ:

2 Համանուն գավառի կենտրոնը:

3 Արճեճ քաղաքն է՝ համանուն գավառի կենտրոնը:



ԱՌԵՆ. Գյուղային զուտ քրոաբնակ և Գյուղյուզյու վերանվանված գյուղի տեսքն արևմուտքից

կողմերի տանիքներից մաքրված ձյան հաստ շերտով: Իսկ ձյունն իր առատությամբ Արծկեի բարեբեր ու հացառատ դաշտավայրում ոչ մի տարի չի զիջել մյուսին: Ձյան շերտի հաստությունը փողոցներում երբեմն հասնում և հավասարվում էր տանիքներին, և երթևեկությունը կատարվում էր բացառապես տանիքներով:

Խոռանց գյուղի կողմից Առեն կարելի էր մտնել միայն եկեղեցու և վարժատան արանքով, որոնք կառուցված էին դեմ դիմաց՝ Առենի գլխավոր փողոցի վերջում: Դրանցից այն կողմ սկսվում էր Առվտոցներ կոչվող հանդամասը՝ 8-10 կիլոմետր սնկառատ մի հարթավայր, որը զարնանը՝ մինչև մայիս-հունիս, և աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, լիառատ սունկ էր մատակարարում մեր և շրջակա գյուղերին: Մեր Առվտոցներում 5-10 բուպեն բավական էր մի մեծ սալա⁶ սունկ ժողովելու համար, որով զբաղվում էին գլխավորապես երեխաները:

Մեր սունկի համն ունի միայն Գեղամա լեռներում աճող սունկը, որն այստեղ մսից եռակի թանկ են ծախում քիչ լինելու պատճառով:

Առվտոցներ կոչվող հանդամասով էին անցնում մի քանի առվակներ, որոնք սկիզբ էին առնում Սիփանից: Դրանց մի մասը թափվում էր Վանա ծովակ, իսկ մեծ մասը հոսում էր դեպի Առենի լճակը: Այդպիսի առվակներ էին առաջացրել նաև ստորգետնյա ջրերի ինքնաբուխ աղբյուրները, որոնք բխում էին Առենի շրջակայքում, նույնիսկ գյուղի մեջ: Դրանց թվին էր պատկանում Բանգուշի գերդաստանի հարդանոցից վերջերս ժայթքած աղբյուրը, որը հայտնի էր Բանգուշի աղբյուր անունով: Այդ գերդաստանը ստիպված էր ճեղքել մարագի պատը, այդ աղբյուրի ջրերի համար քարերով շարված առու բացել և այն ուղղել Առվտոցներով անցնող առվակներից մեկի կողմը և խառնել նրա ջրե-

րին, որը լցվում էր Վանա ծովակի մեջ: Վանա ծով թափվող այդ աղբյուրները և Սիփանից եկող ջրերն անուշահամ էին, որի հետևանքով էլ ծովից տառելի ձկան հսկայական վտառներ էին շարժվում այդ ջրերով դեպի վեր՝ դեպի դրանց ակունքները:

Ծովի ջրի՝ խիստ աղի լինելու պատճառով միակ ձկնատեսակը՝ տառելիը, երբեմն այնպիսի մեծ վտառներով էր շարժվում դեպի այդ քաղցրահամ առվակները, որ հաճախ ջրաղաց աշխատեցնելու ուժ ունեցող առվակները փոխում էին իրենց հունը և նոր հուն բաց անում իրենց համար:

Բանգուշի աղբյուրից օրվա ցանկացած ժամի ցանկացած քանակով կարող էիր տառելի վերցնել: Ասում են վերցնել, քանի որ այդ ձուկը ոչ թե ձեռքով էին բռնում, այլ ուղակի ուռնու շիվերից պատրաստված սալան կարող էիր մտցնել աղբյուրի ջրի տակ և այդտեղից կիսով չափ լցված թայրտացող տառելի հանել:

Արևմտահայ գյուղերը սովորաբար թոնրի վրա էին պատրաստում իրենց ամենօրյա ճաշը: Ծաշերը պատրաստելուց հետո հաց էին թխում՝ լավաշ և բոբոն: Հետո հաջորդում էր թոնրի մեջ՝ նրա կողերին ամեն օր քիչ աղ դրած տառելի շարելը (այն շարվել է շարք-շարք, քանի դեռ հնարավոր է եղել մարմնով կիսով չափ կռանալ և ձեռքը հասցնել թոնրի խորքը) և խորովելը: Այդ խորոված տառելիը, լցնելով սալան, մեծերն ու երեխաներն օգտագործում էին մյուս ուտեստներից ավելի: Տառելիը փշոտ ձուկ չէ, ես այդ լսել եմ շատ-շատերից, նրա միայն ողնաշարն է բաղկացած փշերից: Եփված տառելիը գլխի կամ պոչի կողմից բռնելով՝ հեշտությամբ ողնաշարը բաժանվում է: Դրա համար էլ մեզ մոտ դեռևս բնակվող հատուկեմտ վանեցիներից հիմա էլ լսում եմ. «Ա՛խ, մեր Վանա տառելիը»:

Այդ «ա՛խը» բացառապես կարելի է լսել Մեծ եղեռնը վերապրած առնցիներից:

Արծկեի հայկական գյուղերը հայտնի էին իրենց ցորենով: Գարի քիչ էին ցանում՝ գլխավորապես հավուճիվին և անասուններին կերակրելու համար,

⁶ Ուռնու բարակ ճյուղերից հյուսված կողով, քթոց, սակառ, տառաղա:

իսկ կորեկ, տարեկան կամ գրգռվ⁷ կոչվող հացահատիկի մասին խոսք լինել չէր կարող:

Գրանք հայտնի էին Լեռնային Մասունում, Մոկսում, որոնք հացահատիկի, հատկապես ցորենի ցանքերի համար բարեբեր հողեր քիչ ունեին, և նրանց մոտ գարու, տարեկանի, կորեկի ու գրգռվի համեմատությամբ ցորենի ցանքատարածությունները քիչ էին: Արևմտյան Հայաստանի այդ շրջանները, հատկապես Տարոնը, սակայն, Արծկեի հարթավայրի նկատմամբ ունեին կենսապայմանների մի առավելություն՝ անտառ, ուր աճում էին վայրի տանձ, խնձոր, ընկույզ, սալոր և այլ մրգեր: Գլխավորն այն է, որ անտառն այդ շրջաններին մատակարարում էր վառելիքայտ և փայտից պատրաստվող տնային իրեր՝ շերեփ, գդալ, սեղանտախտակ, խմորի տաշտ և այլն, որոնք մեծ մասամբ վաճառվում էին անտառագուրկ Արծկեի գյուղերում:

Այդ շրջանները նպաստավոր էին նաև անասնապահության համար, որի պատճառով էլ այդտեղ հայաբնակ գյուղերում հայերի հետ բույն էին դրել նաև քրդեր, որոնք հողագործության և հողի մշակության մասին գաղափար չուներին և զբաղվում էին բացառապես խաշնարածությամբ: Մոկսի արական բնակչությունն Արծկեում և Արևմտյան Հայաստանի շատ շրջաններում թե՛ հայերին, թե՛ քրդերին և թե՛ թուրքերին հայտնի էր որպես զգրար⁸ աղեղներով ու չաքերով⁹ և նախշավոր թաղիքներ¹⁰ պատրաստելու արհեստով:

Լեռնային այդ շրջանների ժողովուրդն իր դժվարամատչելի և անառիկ լեռների պես քաջ էր, մի տեսակ ինքնիշխան և հարկ եղած դեպքում ինքնապաշտպանության համար դիմում էր զենքի:

Այդ հարցում Կիլիկիայի լեռնային զեյթունցիներից հետ չէին մնում սասունցիք, ես կասեի քաջ սասունցիք: Նրանց՝ Եղեռնից փրկված մնացորդներն իրենց բույնը հյուսեցին Արագածի լանջերին, որն իր բնակլիմայական պայմաններով քիչ թե շատ մոտ էր մեր Մասունին:

Ցանկանում եմ սասունցիներին երկու բան մաղթել. թող այս լուսավոր դարում ձեր պապերի ու հայրերի քոլոզին¹¹ փոխարինած լայնեզր գլխարկը, տրեխին¹² փոխարինած մոդայիկ ոտնամանը, քազախին¹³ փոխարինած կոստյումի տակից հագած սպիտակ վերնաշապիկն իր փողկապով ձեզ չհանեն հայ ժողովրդին խիստ անհրաժեշտ, այսպես ասած, առաքինության շարքերից:

7 Կորեկի մնան, բայց խոշոր հատիկներով հացաբույս:

8 Բուրդ կամ բամբակ գզող արհեստավոր:

9 Բամբակը կնգողներից մաքրելու փայտե գործիք (բարբառային՝ աղընփայտ):

10 1. Բրդյա խիտ և հաստ կտոր, 2. Մամլած բրդից պատրաստված հովվական անթև կապա:

11 Քրդական գլխարկ:

12 Առանց կրունկների ոտնաման:

13 Մազից կարված կարճաթև զգեստ, բաճկոնի մի տեսակ:

Դառնանք Արծկեին, հարթավայրային շրջանի հայկական գյուղերին ու Առենին:

Արծկեն Արևմտյան Հայաստանի ամենահացառատ գավառներից մեկն էր, հացի շտեմարան: Առենում յուրաքանչյուր ընտանիք, իր տնտեսության կարիքների համեմատ, զբաղվում էր նաև բանջարաբուծությամբ: Նրանք մշակում էին կաղամբ, շաղգամ, ճակնդեղ, սոխ, սխտոր, բողկ, կարտոֆիլ, բանջարանոցային այլ բույսեր ու համեմունքներ, ինչպես նաև կանեփ, կտավատ, սխեռ, գլու¹⁴, վարունգ, սեխ, ձմերուկ և այլն:

Հացահատիկը և բանջարաբուստանային կուլտուրաները մեծ մասամբ մշակում էին առանց ջրի, քանի որ դաշտում կես մետր փորելուց հետո հայտնվում էր անուշահամ ջուրը: Բավարար էին նաև բնական տեղումները:

Առենում չկային ծառ ու մրգատու այգիներ: Իբր այդպիսին՝ արմատների և բների մնացորդներ կային հենց տատիս կողմից մշակվող մեր բանջարանոցում, իսկ թե ով էր ոչնչացրել և ինչու՝ հայտնի չէ: Փաստն այն է, որ գյուղում և դաշտերում ոչ մի տեսակ ծառ գոյություն չուներ:

Միայն բանջարանոցներում աճող հաստաբուն կանեփն էր ծառի նման աճում և հասնում շուրջ երկու մարդաբոյի:

Առենում տաճիկներ կամ քրդեր չէին ապրում, և գյուղաբնակներից քչերը գիտեին քրդերեն և տաճկերեն:

Մի անգամ Վանա շուկայում, ուր սովորաբար արծկեցիք իրենց ցորենն էին վաճառում, իսկ քրդերը՝ իրենց անասունները և անասնամթերքները, հայրս, տեսնելով 3-4 տարեկան մի քրդի երեխայի քրդերեն բլբլալիս, իր շուրջն է հավաքում մեր համագյուղացիներին և այդ երեխայի թևից բռնելով, իր կատակասեր բնավորության համաձայն, ասում.

–Տղեկներ, տեսե՛ք աշխրքի բան, էսա բերան շուկ լամուկն էլ քրդերեն գիտա, համա ես չգիտեմ:

Մեր Առենում Միսակ անունով երկու մարդ են եղել: Միմյանցից տարբերելու համար նրանց կոչել են իրենց տոհմանուններով՝ Դռոյի Միսակ և Քոչեի Միսակ: Երկրորդը հայրս էր:

Հայրս իր կյանքի վերջին տարիներին եղել է միջակ տնտեսության տեր, սակայն իր ազատախոսությամբ համարվել է ոչ ժամանակի մարդ: Այն, ինչ կատակով ասում էր հայրս, եթե ասեր մեկ ուրիշը, դժվար թե չարժանանար մահակի համտեսին, սակայն հորս ասածները և նրա կատակները վաստակել են միայն «Խորեմ քե, Միսակ, անառակ ադափոզ (անամոթ)» և այլ մակդիրներ:

Պապս՝ Քոչեն, նման ազատ վարքագծի համար հորս դուրս է անում տանից, այսինքն՝ բաժանում է ամուսնացած իր մյուս չորս տղաներից և որպես ապրելատեղ՝ հատկացնում հարդանոցը՝ տալով

14 Ցորենի արտում աճող մոլախոտ:

նրան մի կով և մի քանի գլուխ ոչխար ու այծ: Հար- դանոցը հայրս բաժանում է մի քանի մասերի՝ ա- նասնագոմ, թոնրատուն և այլն:

Հայրս սիրահարված էր մորս՝ մեր տոհմի հա- րուստ ընտանիքներից մեկի աղջկան: Նրա իսկա- կան անունը Մարիամ էր, սակայն կոչել են Մամո: Արյունակից և չհաս համարելով՝ սկզբում նրան ա- մուսնացնում են ուրիշի հետ, սակայն իրականում նկատի է առնվում հորս աղքատությունը և ազա- տամտությունը: Եվ որ գլխավորն է, գտնում են, որ հայրս տվյալներ չունի օրինակելի ամուսին լինելու և ընտանիք կազմելու՝ անվանելով նրան «Առինի աղքատ-խապարտ Միսակ»:

Հարսանիքին հայրս կտրում է հարս ու փեսայի առաջը և ձեռքերը երկինք կարկառած՝ անիծում նրանց՝ ասելով.

–Ո՛վ ամենակարող տեր, դու այս անարդարու- թյունը հատուցես նրանով, որ Մամոյի մարդը մեռնի, և Մամոյին ինձ կնության արժանացնես:

Նույնիսկ հանապարաստից երգ է հորինում և իր հասակակից մի քանի երիտասարդների ձայնակ- ցությամբ երգում.

Մամոն էրթեր սնձի,
Չուր տուն դառներ,
Մարթը մեռներ,
Մամոն մներ ընձի:

Մեկ տարի շանցած՝ մահանում է մորս առաջին ամուսինը, և հայրս չի հրաժարվում մորս տված սի- րո երդումից, և նրանք ամուսնանում են:

Հայրս բարության չափ բարի է եղել: Այդ է ցույց տալիս այն, որ մորս առաջին ամուսնու մահվանից հետո ոչ մի անգամ իրեն թույլ չի տվել նրա մասին որևէ բացասական արտահայտություն, հակառա- կը, նրա մասին խոսելիս միշտ էլ մորս ասել է, որ իր անեծքն ու հորինած երգն իր կողմից բերանբացու- թյան և ջահելության արդյունք են եղել:

Մի անգամ գյուղում հարսանիք գնալիս հայրս շտապեցնում է մորս, որ արագ հագնվի և լվացվելիս ջրի փոխարեն մալթ է լցնում ձեռքերին: Մայրս, շունչը պահած, շրմփոցով մի քանի անգամ ձեռքե- րը խփում է երեսին ու հարդարում մազերը և դառ- նում հարսանքատան՝ այդ օրվա ու դեռևս հաջորդ օրերի ուրախ խոսակցության առարկան:

Հայրս մեր գյուղի միակ մսավաճառն ու մսա- գործն էր: Առեմի, ինչպես Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գյուղերի մսավաճառը տարբերվում էր Արևելյան Հայաստանի իմ տեսած մսավաճառնե- րից, որոնք անասունների շուկայում կենդանի ա- նասուն էին գնում և իրենց խանութներում էլ մոր- թում էին և միսը վաճառում:

Մեր գյուղում, ով վաճառքի մսացու անասուն էր ունենում, կանչում էր հորս, մորթվող անասունը հորս օգնությամբ տանում գյուղի կենտրոն, որտեղ էլ հայրս մորթում էր: Այդ ամբողջ գործողությունը տեղի էր ունենում գիշերով, որպեսզի առավոտյան՝

լույսը բացվելուն պես, մարդիկ կարողանան միսը տաք-տաք տուն հասցնել, և քուֆթա (կոլոլակ) պատրաստողները չդժվարանան սալքարի վրա մի- սը ծեծել: Միսը վաճառվում էր հենց մորթու վրա՝ մաս-մաս անելով:

Մեր ընտանիքը համարյա ամեն օր թարմ միս ուներ, և պուտուկով խաշլաման մեր թոնրից անպա- կաս էր, իսկ եթե լինում էր այնպիսի օր, որ միս չէինք ունենում, հայրս իր ձեռնափայտով մեր հավերից մեկ-երկուսին մորիցս թաքուն գետին էր տապալում և վզները քաշած՝ տուն էր բերում՝ ասելով.

–Մամո՛, տես, ընկած թպրտում էին, լավ էր, որ վրա հասա և չթողեցի հարամվեն:

Պատահել է, որ այդպես է վարվել մաև գառների հետ:

Մորս կշտամբանքներին, թե «Միսակ, դու չես թողնի, որ մենք մալի տեր դառնանք», հայրս մեկ պատասխան է ունեցել.

–Վի՞ր խամար, օսմանցուի՞ խամար, ընձի խորս ցավ ուտա օսմանցուն, թող հինք դատի, հուր դատած ուտա, հորի՞ իմ դատած ուտա: Չէ՛, Մամո՛, ես կասեմ վոն դատա, էնի ուտա:

Մեր ընտանիքի ամենահարուստ ժամանակա- շրջանում՝ 1910-1914 թվականներին, ունեցել ենք մի զույգ եգ, սայլ, 3-4 կով, 30-40 գլուխ այծ ու ոչ- խար, այնինչ մեր գյուղի հարուստ ընտանիքների փարախներից դուրս են եկել խոշոր եղջերավոր բազմաքանակ անասուններ, 500-1000 գլուխ ոչ- խար: Հայրս միշտ ծաղրել է այդ հարուստներին՝ ասելով.

– Չուր չխատի, էնոնք չմորթին, մսի երես չտե- սին, թող պախեն, տան օսմանցուն:

Մեր գյուղում, ինչպես և այլուր, հարստությունը մեծ գլխաքանակով անասուններ ունենալու մեջ էր: Դրան կուտակելն աննշան տեղ էր գրավում: Մեր՝ շուրջ 300 տնից բաղկացած գյուղից 15-20 հազար գլուխ մանր և 1500-2000 գլուխ խոշոր եղջերավոր անասունների մի քանի հոտ ու նախիր էր դուրս գա- լիս:

Մինչ Առաջին աշխարհամարտը հայրս և մեր գյուղացի մի քանի տղամարդիկ գալիս են Արևել- յան Հայաստան՝ նպատակ ունենալով ուսումնասի- րել տեղի կարգերն ու բարքերը և այնտեղ փոխա- դրվելով՝ փրկել իրենց ընտանիքները և թոթափել իրենցից վաղվա օրվա նկատմամբ ոչ մի հավատ չներշնչող օսմանյան բռնապետությունը:

Նրանք հավանաբար շրջում են Արարատյան դաշտի գյուղերում, որի չոր կլիման, հեղձուցիչ օդը դուր չի գալիս նրանց: Վերադարձին Մարգարա գյուղով անցնելիս տեսնում են, որ տներից մեկում հաց են թխում: Հորս ընկերները ասում են.

–Տղա՛ Միսակ, գնա՛, մի քանի լավաշ բեր, ու- տենք, չուր խասնինք Իգդիր:

Հորս՝ հաց խնդրելուն հացթուխ կինը նրան է մեկնում կես լավաշ հաց: Հայրս այն շարտում է

հացթուխ կնոջ երեսին և ընկերներին ասում, թե այստեղ ապրել չարժի:

Ծնողներս 1900 թ. ունենում են մեկ աղջիկ (մեծ քույրս՝ Մարիամը), ապա երեք տղա՝ մեծ եղբայրս՝ Խոսրովը, հետո Սարգիս անունով մյուս եղբայրս, որն անժամանակ մահացել է, և վերջինը՝ ես, որ կրում եմ մահացած Սարգիս եղբորս անունը: Ինչպես մեռած եղբայրս, նույնպես և ես, ծնվել ենք Սուրբ Սարգսի տոներին, որը նշվում էր փետրվարի մեջ:

Այստեղ պետք է հիշել նաև գաղթի ժամանակ ծնված քրոջս և եղբորս: Մայրս Թիմարի շրջանի Խժիշկ գյուղում¹⁵ ծննդաբերում է և ունենում զույգ երեխա՝ տղա և աղջիկ: Չունենալով ոչ մի օգնող, բացի քրոջիցս, որը կամա թե ակամա ստանձնել էր իմ խնամքն ու փոխադրումը, մայրս նորածին դստեր բարուրը թողնում է Ամկու ավերակ բերդում¹⁶, իսկ տղային կարողանում է հասցնել Էջմիածին, այնուհետև Աղավնատուն¹⁷, որտեղ էլ նա մահանում է յոթ ամսական հասակում: Նրանք երկուսն էլ մկրտված չեն եղել և անուն չեն ունեցել: Մա է նրանց կենսագրությունը:

Առենը Մեծ եղեռնի նախօրեին

1915 թվականի փետրվարյան երեկոներից մեկն էր: Երկինքն անամպ էր և աստղային, լուսնի մահիկն իր վերջին շուրթն էր ծածկում Միսիան սարի թիկունքին: Վանա ծովակի շնկշնկան հովն իր բյուրավոր բարիքներն էր շաղ տալիս ծիլ ու ծաղիկներին: Հեքիաթային այդ խաղաղ երեկոյան անեացել էր աշխարհը, լռել էին Վանա ծովի թևավոր բնակիչները, հողը հանգիստ շնչում էր, բազմաթիվ սողուններ ու գազաններ, որոնք դուրս էին եկել գիշերային որսի, ոչնչով չէին խախտում բնության անդորրությունը: Բնությունը սիրասուն ու գորովագույթ մոր պես խնամում, փայփայում ու սնուցում էր աշխարհը:

Այդ խաղաղ իրիկունը մի մարդ՝ քրդական տարագով, հովվի ցուպը ձեռքին, մախաղն ուսին, դուրս եկավ Խոռանց¹⁸ հայկական գյուղից ու ուղղություն վերցրեց դեպի Առեն: Նա ճանապարհով չէր գնում: Նրա համար վաղուց արդեն ճանապարհ գոյություն չուներ, ավելի ճիշտ, նրա համար ճանապարհ էին դարձել լեռ ու ձոր, հանդ ու արտ, և նա առանց դժվարության կտրում-անցնում էր այն ամենի մի-

ջով, ինչը կողմնակի աչքի համար դժվար էր և անանցանելի: Մթան մեջ այդ հաղթանազամ մարդու կերպարանքը սարսազողու էր: Տեսնողը կկարծեր, թե անբուժելի դիվահար է: Այդ մարդը, որի տարիքը չէր անցնում 30-ից, Կոճերեր¹⁹ գյուղից էր, այրի Մարոյի տղա Մեթոն:

Այրի Մարոյին երանի էին տալիս այդպիսի գավակ ունենալու համար: Մեթոն ուներ առնական, գեղեցիկ դեմք, որի վրա փայլում էին սև, կրակոտ ու խորաթափանց աչքերը, որոնք այդ պահին մերթ ընդ մերթ երևան էին հանում հոգու ամբողջ հուզմունքը, անափ բարկությունը, թախիժն ու շվարումը:

Ավելի քան տասնհինգ տարի զբաղվելով նախարականությամբ, շնչելով Միսիան սարի՝ բուրմունքով լի օդը, խմելով նրա աղբյուրների կաթնահամ ջուրը, հեռու լինելով մարդկային ճոճիմ կյանքից՝ մեծացել էր որպես բնության ազատ զավակ:

Այդ ահավոր անթափանց խավարի մեջ Մեթոյի փութկոտ քայլվածքը հաստատուն էր, կորովի: Նրա խռովահույզ հոգին չէր համընկնում ամենակարող բնության պարզաժամ խաղաղության հետ: Լուռ առաջ էր ընթանում, և երբեմն-երբեմն բերանից դուրս էր թռչում հոգում կուտակված դառնությունը. «Չուլում աշխարհ..., սև՝ ճակատագիր, իմ անտեր ու անօգնական, իմ խեղճ, իմ անճա՛ր ժողովուրդ»:

Մեթոն Առեն մտավ կեսգիշերից առաջ և ուշադրություն չդարձնելով գյուղի շների հալածանքին՝ ուղղություն վերցրեց դեպի ռես Կարոյի տուն: Չեռնափայտով երեք անգամ համարձակ խփեց ռես Կարոյի օդայի²⁰ դռանը:

Դուռը ներսից սողնակից ազատվեց, կրնկի վրա հետ գնաց, և դռան սեմին հայտնվեց պատկառելի մի ծերունի՝ մելիք Ապրեն՝ ռեսի հայրը:

Մեթոն զարմացավ, երբ Առենի ռեսի՝ Կարոյի փոխարեն իր առջև տեսավ իր քեռուն՝ մոր՝ այրի Մարոյի հինգ եղբայրներից ամենամեծ եղբորը՝ արծկեցի մելիք Ապրենին՝ թուրքական կառավարության հայ պաշտոնյային: Նա խորը գլուխ տվեց և բարի երեկո մաղթելով՝ ներս մտավ: Յոթնամասունամյա մելիքը Մեթոյից պարթևահասակ էր, հպարտ կեցվածքով: Թեթև խոնարիվելով՝ համբուրեց Մեթոյի ճակատը, նրա բարևն առավ, հետո գնաց, նստեց հասիքներով²¹ ծածկված հատակին փռված մի մեծ խալու վրա, թիկն տվեց դիմացի պատի տակ շարված բրդյա հենաբարձերից²² մեկին և նշանացի

15 Հայաբնակ գյուղ Վանի նահանգի Թիմար գավառում՝ գավառանիստ Ջանիկ գյուղից 10 կմ արևմուտք: Այժմ վերանվանված է Հայկալը (Halkalı):

16 Ամյուկ (Ամկու) բերդը գտնվում է Թիմար գավառի գավառանիստ Ջանիկ գյուղից 15 կմ հարավ-արևմուտք՝ Փոքր Ամյուկ գյուղի մոտ՝ լճափին: Փոքր Ամյուկն այժմ վերանվանված է Յաբալը (Yabali):

17 Գյուղ Արմավիրի մարզում:

18 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 18 կմ արևելք՝ Առեն լճի արևմտյան ափին՝ Առեն գյուղի դեմ հանդիման: Այժմ վերանվանված է Բարշըլաքա (Karslıyaka):

19 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 12 կմ արևելք՝ Վանա լճի ափին: Հայտնի էր նաև Կոճերեր, Կոճեր, Կոճրեն անուններով: Այժմ վերանվանված է Երիքբաղը (Erikbağlı):

20 Գյուղական հին տներում այն սենյակն է, որը հատկացված է ճաշելու, հյուրեր ընդունելու և քնելու համար:

21 Ծոթոյից, բույսերի կեղևից կամ դալար ոստերից հյուսված կարպետ, խափր, փսիաթ:

22 Հենվելու, թիկն տալու փոքրիկ, երկար գլանաձև բարձն է:

նույնը պահանջեց իր հյուրից՝ քրոջ միևնույն արդուց: Մեթոն, սակայն, իրեն թույլ չտվեց նստել մեղիքի կողքին և մախաղն ուսից վեր առնելով՝ հովվական ցուպը դրեց դռան հետևում ու նստեց: Մեղիքը թեքվեց առաջ և Մեթոնի թևից բռնելով՝ քաշեց, նստեցրեց իր կողքին և ասաց.

–Դու քեզ իրավունք չե՞ս վերապահում հավասար նստելու մի հայի հետ, որը թուրքական պաշտոնյա է, սակայն իմացի՛ր, որ, սահմանադրությունից հետո նման պաշտոններ տալը փառահեղ գաղափարներով սքողված մի դավ էր մեզ թմբեցնելու, քնեցնելու և ապա բռնաբարելու, լլկելու, թալանելու և ոչնչացնելու համար: Հայերս, ճիշտ է ուշացումով, բայց սկսել ենք հասկանալ: Իմացի՛ր նաև, որ եթե հայ ժողովրդի բոլոր խելացի գլուխները քեզ նման հայրենասեր լինեին և գործելու խոհեմություն ունենային, ապա մենք դատապարտված չէինք լինի այսպիսի ստորացման: Խոսի՛ր, իմ զավակ, իմ քաջ, ի՞նչ նոր արհավիրքներ են սպասվում մեզ, որոնք գիշերվա այս տարածամ պահին քեզ իմ դուռն են բերել: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, խոսի՛ր, ես քեզ լսում եմ:

–Միբեղի՛ քեռի, ակնատես բարեկամներից լսել եմ, որ Շապին-Գարահիսարի ճակատամարտում հայերի ձեռքով սատկած Բշիրի²³ Չաթոյին փոխարինել է նրա քրոջ որդին՝ Օմարի Չաթոն²⁴, որն էլ, ստանձնելով բշերի քրդերի էլ-աղասիրությունը²⁵ և անցնելով Չաթոյի խառնիճաղանջ խուժանի գլուխը, գնում է թուրքերի հետ ռուսական բանակի դեմ կռվելու: Նրա ճանապարհին անցնում է Արծկեի հայկական գյուղերով: Նա մեր Կոճերեր գյուղում պահանջել է, որպես գերագույն պատիվ, իր խմբի բոլոր անդամներին տեղավորել այն հայ ընտանիքներում, որոնք ունեն գեղեցիկ աղջիկներ և երիտասարդ հարսներ, և գիշերը քնեցնել նրանց հետ: Նա իր այդ անպատկառությունը բռնի գործադրել է թե՛ Կոճերերում և թե՛ Խոռանցում: Ես երեկ գիշեր և այսօր ցերեկը կարողացել եմ լինել միայն Կուզել²⁶,

Բարկաթ²⁷, Առնչկուս²⁸, Արջոս²⁹, Կարաքեչի³⁰, Վիճկացուս³¹ գյուղերում, հանդիպել մեր հարազատներին և իմ խոսքն ասել, սակայն այդ գյուղերում զենք ունեցող չկա, և հնարավոր չէ զինված ինքնապաշտպանության դիմել: Մորս և մեր բոլոր հարազատների անունից այժմ եկել եմ քեզ խնդրելու, որ կան իշխանության ուժով, կան Առնանում գտնվող զինված հայ ջոկատի միջոցով կանխե՛ք Չաթոյի գազանությունները: Նրա հրոսակները վաղն այստեղ կհասնեն: Արծկեի հայկական գյուղերը քեզ են նայում և սպասում են քո խելացի միջամտությանը թե՛ որպես թուրքական պաշտոնյայի և թե՛ որպես ազգի պատիվը ճանաչող հայրենասեր հայի: Կոճերերում սպանել են երեք, Խոռանցում մեկ մարդ, որոնք ըմբոստացել են այդ անիծված քրդի պահանջի դեմ:

Մեթոնի այս հաղորդումից շարժվեց նույնիսկ մեղիքի թերթերունքը: Նա միայն արագացրեց իր թագբեհի³² հատիկների համրանքը, իսկ խոնարհած ճերմակահեր գլուխը մնաց անշարժ:

Մեղիքն հայտնի էր, որ թուրքական օրենքն էր հայ և քուրդ ժողովուրդներին իրար դեմ հանողը: Տարիներ շարունակ թուրքական կառավարությունը պառակտություն էր մտցնում հայ և քուրդ բնակչության միջև և այդ ազգերի նկատմամբ վարում էր միմյանց ոչնչացնող քաղաքականություն:

Թուրք կառավարողների սերմանած թշնամանքն արդեն իր խոր արմատներն էր գցել, և չկար թե՛ քուրդ և թե՛ հայ մի մարդ, գորավոր մի ձեռք, որ կարողանար արմատախիլ անել այդ հրահրված թշնամանքը:

–Ուրիշ ի՞նչ ասելիք ունի իմ հարգելի հյուրը,– մրմունջով հարցրեց մեղիքը:

–Մեղիքն ապրած կենա, այն բոլորը, ինչ որ Չեզնից խնդրելու էի, ասացի: Սպասում եմ Չեր հրամանին:

Մեղիքը տեղից վեր կացավ, թեթևակի ծափ տվեց և կունդուռաները³³ ոտքերն անցկացնելով, չուխան³⁴ վրան գցելով՝ պատրաստվում էր դուրս ելնել, երբ ներս մտավ նրա եղբորորդին՝ Կիրակոսը, որը, տեսնելով իր հորաքրոջ տղային, ջերմ համբուրեց:

Հարազատների փոխադարձ գուրգուրանքը, քաղցր հայացքով միմյանց ոտքից գլուխ չափելը, հաղթ բազուկներով իրար փաթաթվելը, երկու արյունակից երիտասարդների՝ անհուն կարոտով

23 Բշիրի Չաթոն այլ ակնատեսների հուշերում հիշատակվում է Բշարե Չաթո ձևով (ԱԳՕ, Մեծ դեպքերը Վասպուրականում, Երևան, 1917, էջ 137: Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ակնատեսների աչքերով, Երևան, 2005, էջ 121):

24 Օմարի Չաթոն այլ ակնատեսների հուշերում Բշարե Չաթոյի որդին էր և հիշվում է Ամարե Չաթո անունով (ԱԳՕ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 137: Վասպուրական, Վեներտիկ, 1930, էջ 406: Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ակնատեսների աչքերով, էջ 121):

25 Ժողովրդի դեկավարություն:

26 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 15 կմ արևելք: Հայտնի էր նաև Կյուզել, Գյուզել, Դուզել անուններով: Մեծ եղեռնից հետո՝ մինչև 1970-ականներն ամայի էր: Այնուհետև հաստատվել են քրդեր: Անվանափոխության չի ենթարկվել:

27 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 23 կմ արևելք: Հայտնի էր նաև Բարկաթատ ձևով: Այժմ վերանվանված է Էսենկյուլ (Esenktyul):

28 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 29 կմ արևելք: Հայտնի էր նաև Արիճկուս ձևով: Այժմ վերանվանված է Քավուշքուլ (Kavuştuk):

29 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 32 կմ արևելք: Այժմ վերանվանված է Աքչիա (Akçira):

30 Հայաբնակ գյուղ Արծկե քաղաքից 36 կմ արևելք: Այժմ վերանվանված է Յարիմադաքոյու (Yarimadaköyü):

31 Վիճկացուս հայաբնակ գյուղը Մեծ եղեռնից ի վեր ցարդ (2010 թ.) անբնակ գյուղատեղի է՝ Արծկե քաղաքից 34 կմ արևելք:

32 Համբիչ, տերողորմյա:

33 Ճտքավոր կոշիկ:

34 Տղամարդու վերնագգեստ, մահույ:

նման ողջագուրվելը մեկ այլ դեպքում կարժանանային մեկիք Ապրելի գթառատ խանդաղատանքին: Այժմ, սակայն, մեկիք Ապրելն զրկված էր կյանքի քաղցրությունն ու հաճույքը զգալուց. նրա սրտից ու հոգուց արյուն ու մաղձ էր կաթում: Խռովահույզ հոգին ստեղծված վիճակից ելք էր որոնում:

Դուրս գալով օդայից՝ մեկիք Ապրելն մտավ տուն, արթնացրեց գզիր Գևոյին, որն այդ խառը ժամանակաշրջանում մեկիքի ընտանիքի մշտական անդամն էր դարձել և զիշեր ու ցերեկ նրա տանն էր բնակվում, կարգադրեց անմիջապես հասնել Արջրա և հայտնել Հովանին, որ իր խմբով մինչև լուսաբաց լինի Առենում և ներկայանա իրեն:

Վերջին շրջանում հայկական գյուղերում, որպես «կարգ պահպանողներ», թուրքական կառավարության կողմից գիշեր-ցերեկ հսկում էին 2-3 թուրք ոստիկաններ, որոնք ամեն օր վերադաս ոստիկաններին հաղորդում էին գյուղերում տեղի ունեցող ամբողջ անցուդարձը: Դժվար էր Առենի մի փողոցից մյուսն անցնել կամ տնից տուն թափանցել և աննկատ մնալ շան զգուշավորությամբ և հոտառությամբ փողոցներում ու տանիքների վրա թափառող ոստիկաններից: Սակայն դա գզիր Գևոյին չէր վերաբերում: Նա մեկիք Ապրելի ցուցումով մայրամուտից հետո ձի էր նստել և հեռացել Առենից:

Արջրացի Հովանի³⁵ հարազատ որդի էր ճանաչվել Մերոբ փաշայի³⁶ և նրա կնոջ՝ Սոսեի³⁷ կողմից: Մոտավորապես քառասունամյա Հովանը ոչ միայն հայտնի էր իր քաջագործություններով ու սուր շարժելու հմտությամբ, այլև անվրեպ նշանառու էր Մերոբ փաշայի դրոշի տակ գործող հայ քաջորդիների խմբում: Նրա անունն արդեն իսկ սահագրու էր թուրք և քուրդ ջարդարարների համար:

Մերոբ փաշայի մահից հետո Հովանն իր շուրջն էր հավաքել Արջրայի շրջակա հայկական գյուղերից 7-8 տասնյակ հայերի և ստանձնել անպաշտպան հայ մայրերի ու անմեղ երեխաների պատիվը պաշտպանելու պատրաստ այդ խմբի ղեկավարությունը:

Սոսեն Մերոբի՝ իր սիրելի ամուսնու մահից հետո ցանկություն հայտնեց մտնելու Հովանի խմբի մեջ՝ ոչ միայն իր մայրական օրհնությամբ հովանի դառնալու մահվանն ընդառաջ գնացող հայ քաջերին, այլև զենքը ձեռքին կռվելու և մեռնելու նրանց հետ՝ հանուն իր ամուսնու պարգած արդար դրոշի: Հովանը, սակայն, համբուրելով նրա ձեռքերը, մերժեց նրան:

35 Արջրացի Հովան (Օհան) Դարբինյանը 1915 թ. փետրվարին իր խմբով Առենում դիմադրում է Օմարե Չաթոյի հարձակումներին, իսկ ապրիլին բազմաթիվ հայերի նավերով անցկացնում է Լիմ ամապատ: Վանի՝ 1915 թ. նահանջից հետո անցնում է Էջմիածնի շրջան, բնակություն հաստատում Աշտարակի Հախս (Աղջ) գյուղում, որտեղ էլ վախճանվում է 1924 թ. (Վասպուրական, Վենետիկ, 1930, էջ 406):

36 Խոսքը հայրուկապետ Աղբյուր Մերոբի մասին է:

37 Սոսեն հայրուկապետ Աղբյուր Մերոբի կինն էր:

Հովանի խմբի մեջ էին մեկիք Ապրելի ավագ որդին՝ գյուղի ռես Ավիդի Կարոն, Խազեց Մուսոն, Սիրունի Մամվելն ու Ռաշիդը, Ամրոյի Աբգարը, Դռոյի Միսակը, Մուսոյի անբաժանելի ընկեր, Ոզմ³⁸ գյուղից մի քանի տարի առաջ մեր գյուղում հաստատված Աբրիկը, Կրջոյի Սողոմ, ոզմեցի Ասատուրը, թվով մոտ 50 տղամարդ, որոնք կանգնած էին Առեն և հարևան Կոճերեր, Կուզել, Խոռանց, Բարկաթ, Առնչկուս, Արջրա, Կարաքեշիշ, Վիճկացուկ և այլ գյուղերի պաշտպանության դիրքերում:

Մեկիք Ապրելն գիշերը չէր քնել: Լուսաբացից առաջ, իր շուրջը հավաքելով հայ սպառազեն ջոկատին, խորհրդի էր նստել:

Իր շուրջը տեսնելով Արծկեի հայկական գյուղերից մեծ մասի ներկայացուցիչներին, որոնք պատրաստ էին ամեն գնով պաշտպանելու իրենց ու իրենց ընտանիքների պատիվը, երկար սպասեցնել չտվեց:

– Իմ սիրելի՛ զավակներ, – սկսեց նա, – մենք՝ հայերս, լինելով աշխատասեր, ռանչպար ժողովուրդ, հետևելով մեր նախնիների խորհրդին, բռնություն չենք գործադրել ոչ մեկի դեմ, չենք թալանել, չենք սպանել, չենք արատավորել ուրիշների պատիվը: Հակառակ դրան, սակայն, մեր հարևաններն օգուտ են քաղել մեր թուլություններից և հարյուրամյակներով մեզ դարձրել են իրենց ծառան և մեզ համարել աշխարհի երեսից բնաջնջելու արժանի և անպիտան մի ժողովուրդ: Թող հայտնի լինի ձեզ, որ Օմարի Չաթոն, իր մորեղբայր Բշիրի Չաթոյի գլուխն անցած, որպես նրա էլ-աղասին, գնում է թուրքական բանակին միանալու: Ճանապարհն անցնում է Արծկեով: Նա Կոճերերում և Խոռանցում արատավորել է մեր քույրերի, աղջիկների և հարսների ու մեր պատիվը: Այսօր դա սպառնում է նաև Առենին, իսկ վաղը՝ մյուս հայ շեներին: Մենք պետք է, ինչ գնով էլ լինի, թույլ չտանք Չաթոյին շարունակելու իր արարքները: Դժվար է, իհարկե, իր ատամները մեկ անգամ արյան մեջ թաթախած շանը զսպել, սակայն մենք ևս մեղավոր ենք այդ ամենի համար: Մեղավոր ենք, որ հենց սկզբից էլ պետք եղած միջոցների չենք դիմել նրան կանգնեցնելու համար:

– Ինչպե՞ս կվարվի պարոն Հովանը, – դիմեց մեկիքը Հովանին:

– Մեկիքն ապրած կենա, խմբիս բոլոր անդամները, որոնցից ութը միայն Ձեր մերձավորներն են, սպասում են Ձեր հրամանին: Առայժմ այստեղ գտնվող իմ 73 եղբայրներով պատրաստ ենք զոհվելու մեր ազգի պատիվը սրբությամբ պաշտպանելու համար: Իմացե՛ք, որ մեզ չի սպանի Չաթոյի հազարանոց խուժանը, դուք դրանում չկասկածեք: Հրամայե՛ք, մենք Ձեզ լսում ենք:

38 Հայաբնակ գյուղ Մոկսի զավառում: Հայտնի էր նաև Ոզմ ձևով: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Գյումուշորեն (Gümüşören):

–Գնացե՛ք եկեղեցու բակ և վարժատուն, մենք հոգացել ենք ձեզ անհրաժեշտ սննդի և հանգստի համար: Հանգստացե՛ք և սպասե՛ք մինչև տեսնենք, թե ինչ բարի առավոտ է բացվում մեզ վրա:

Փետրվարի 13-ին՝ վաղ առավոտյան, Առեճի եկեղեցու և վարժատան տանիքներին դիրքեր բռնած զինված ջոկատի մարտիկները տեսան, թե ինչպես Խոռանց գյուղից անջատվեց մի սև գունդ և ծովի ափով օձապտույտ գալարումներով շարժվեց դեպի իրենց կողմը:

Մելիք Ապրեն ցած իջավ եկեղեցու տանիքից և մտավ եկեղեցի, ուր, տերտերից, բացի ոչ ոք չկար, և կանգնեց խաչելության պատկերի առաջ: Նա նման չէր այն ջերմեռանդ հավատացյալին, որը նման դեպքերում ծնկի է իջնում, ձեռքերը խաչում, աղոթում ու թողություն խնդրում: Դիմացից մելիքին նայողը կտեսներ, որ նա, այդ պատկերի առաջ կանգնած, ոչ միայն չի հանդարտվում, այլև նայում է նրան և նրա երեսին շարտում հետևյալը. «Քո հավատը միակողմանի է, սուտ, իսկ քո հետևորդները, բազմապիսի ավետարաններն ու հատկապես քո հավատի սպասավորները տգետ ու որկրամուլներ են: Քո՝ մարդասիրությամբ շարված քարոզիչներն ավելի քան մարդատյաց են: Դարեր ի վեր քրիստոնեություն ընդունած հայերս, հետևելով Գրիգոր Լուսավորչի իմաստություններին, աղոթել ենք, աղերսել, ենթարկվել, աշխատել ու ստեղծել ենք, սակայն մեր դարավոր աղոթքներն ու աղերսանքը գրոշի արժեք չեն ունեցել: Մեր ստեղծածը ոչնչացրել են, մեր աշխատածը թալանել, մեր իրավունքը, մեր պատիվը ոտնահարել: Քո կրոնը փոքր ազգերին, այդ թվում հայերիս, որ միշտ շրջապատված ենք եղել զենք շարժելու պատրաստ հզորներով, բերել է աղետ ու ավեր: Դեռևս կան հոգևորականներ, ինչպես անասուն Մխոն, որոնք դժգոհում են ժողովրդից, նրա ողորմածությունից ու տված արդյունքից: Աշխարհով մեկ ցրված հայերս ամենուր եկեղեցի ու վանք ենք կառուցել, կերակրել ու պարարտացրել այդ հոգևոր հայր կոչվածներին, իսկ նրանք մի կողմից ուղղափառություն, մյուս կողմից կաթոլիկություն և չգիտեմ էլի ինչեր են քարոզել ու մեր պետականության անկումից հետո ինքնակոչ հոգևոր իշխաններ դարձել, աղավաղել մեզ, խաթարել մեր հոգին, կերել մեր միսը, կրծել մեր ոսկորը և հզորների ձեռքին դարձել մի քանի փարայի ծախու ապրանք: Եվ այսքանից հետո ուզում են դառնալ մեր ժողովրդի երախտավորներից: Մենք հավատացել ենք, որ վերևն Աստված կա, նա ամենագոր է, ամենատես, արդարադատ: Ո՞ր է այդ Աստված կոչվածը»:

Մելիք Ապրեն երկար կշարունակեք արտահայտել իր հոգեկան վրդովմունքը, եթե բարձրաձայն արտասանած «Ու՞ր է այդ Աստված կոչվածը»-ը չսթափեցներ նրան: Նա ընդոտտ շուռ եկավ և եկեղեցու դռանը հանդիպելով կծկված տեր Մխիթարին՝ բղավեց.

–Չբվի՛ր աչքիցս:

Տան ճանապարհին մելիքի հոգու փոթորիկը շարունակում էր մեծանալ. աչքերը մշուշապատվել էին, ոչինչ չէր տեսնում, ոչ մեկի բարևին չէր պատասխանում:

Տան շեմից ներս մտնելով՝ նկատեց, թե ինչպես իր ավագ որդին՝ Կարոն՝ գյուղի ռեսը, վախվորած մի կողմ քաշվեց իր ճանապարհից: Մելիքը զսպեց իր գայրույթը, մի լավ տնտղեց իր որդուն և հայացքով նստելու տեղ որոնելով՝ իրեն գցեց մեծ տան երկու թոնիրներից փոքրին դրված քուրսու³⁹ վրա և գլուխն ափերի մեջ առավ: Կարոն չէր համարձակվում հորը խոսեցնել և կանգնած նրա հետևում՝ լուռ ու ամռունչ սպասում էր:

–Կարո՛, որդի՛,– ասաց մելիքն առանց նրան նայելու,– փորձենք այդ շանը դարավոր սրբություն համարվող աղ ու հացով դարձի բերել, հակառակ դեպքում պետք է ոչնչացնել այդ սողունին: Գնա՛ տղաների մոտ, և հետևե՛ք իմ գործողություններին: Ես նրան միայնակ կդիմավորեմ դեռ գյուղ չմտած՝ եկեղեցու պատի տակ:

Քրդերից բաղկացած խառնիճաղանջ ամբոխը, հեծյալ և հետիոտն խուժանը, երկար շարքերով ձգված, դանդաղ շարժվում էին Առեճի ուղղությամբ: Նրանք՝ թե՛ ձիավոր և թե՛ հետիոտն, մեծ մասամբ շալակած ու ձիերին բեռնած, բերում էին հայկական գյուղերից թալանած ապրանքը: Թվով 10-12 եզասայլ ու մի 2 տասնյակ ձիեր բեռնված էին զինամթերքով ու ուտեստով: Բերում էին 500 գլուխ խոշոր և շուրջ 2000 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Խոշոր եղջերավոր անասունների մի մասը նույնպես բեռներ էր կրում:

Այդ ամբոխը զինված էր տաճկական, ֆրանսիական, գերմանական, ռուսական հրացաններով, մաուզերներով⁴⁰, ատրճանակներով: Կային նաև հրագեն չունեցողներ, որոնք կրում էին միայն սրեր ու խենջալներ⁴¹:

Ձիավոր մի ջոկատ՝ բաղկացած 25-30 հոգուց, անջատվեց սևին տվող օձաշարից: Մեկ ժամվա ճանապարհ առաջ ընկնելով՝ ջոկատն արագ մոտենում էր Առեճին: Ջոկատի առջևից ընթանում էր արաբական սև նժույզին ձուլված մի քուրդ, որն իր շքեղ արտաքինով տարբերվում էր մյուսներից: Չաթոն էր՝ իր թիկնապահ ջոկատով: 30-35 տարեկան այդ քուրդը զինված էր զույգ մաուզերով և արծաթապատ սրով: Նրա թուխ մորթը, սև սաթի աչքերը, սպիտակ քլոզը, որ փաթաթված էր գույնզգույն փուշիով⁴², քլոզի տակից դուրս թափված սև մազերն իր որսը հոշոտելու պատրաստ ամենի գազանի սպավորություն էին թողնում: Նրա քննախույզ

39 Քառակուսի երեսով փայտից առարկա, որը դրվում է տաք թոնրի վրա:

40 Ատրճանակի տեսակ:

41 Դաշույն, խենջար:

42 Մետաքսե փայտյուն գլխաշոր:

հայացքը զգուշությամբ խուզարկում էր շրջակայքը: Դեռևս հեռվից Չաթոն տեսավ, թե ինչպես մի մարդ, սկուտեղը ձեռքին, կանգնեց ճանապարհի ուղիղ կենտրոնում, որը Առվտոցների կողմից Առեն մտնող միակ փողոցն էր՝ ընկած եկեղեցու և վարժատան միջև:

Այդ մարդը մեկիք Ապրեն էր: Չաթոն իշխանավորի կեցվածք ընդունեց, հակառակ իր կամքին, բնագողով ձգեց ձիու սանձը, որը, կանգնելով հետևի ոտքերի վրա և տիրոջ կամքը հասկանալով, նետվեց ուղիղ իր դիմաց կանգնած մեկիք Ապրեի վրա: Վերջինս հրաշքով կարողացավ իր հսկա մարմնով խուսափել ձիու սմբակների տակ մխրճվելուց և գորավոր ձեռքով կառչել նրա սանձից:

Հեծյալը քահ-քահ ծիծաղեց և նշանացի ցույց տալով աղ ու հացը՝ արհամարհանքով նետեց.

–Ո՞վ ես, ծերո՞ւկ, և ի՞նչ ես խնդրում այդ հիմար և իմաստից զուրկ աղ ու հացով ինձ դիմավորելով:

Մեկիքը, զսպելով իր ներքին զայրույթը, հանգիստ տոնով ասաց.

–Ես արծեկեցի մեկիքն եմ՝ այս գյուղացի ու այս գյուղի ռեսի հայրը: Քո և իմ պապերն այս աղ ու հացի վրա երդվել են իրենց բոլոր սրբություններով չարատավորել միմյանց պատիվը, չխաթարել հանգիստը: Այդ երդումով հարյուրամյակներ շարունակ ապրել են կողք կողքի, հաշտ ու խաղաղ, ինչպես եղբայրը եղբոր հետ: Այժմ էլ թե՛ հայերիս և թե՛ քրդերի մեջ քիչ չեն այնպիսի մարդիկ, որոնք ավանդաբար հարգում են աղ ու հացի վրա տված մեր նախնիների երդումը: Սակայն կան մարդիկ, որոնք չար թշնամանք են սերմանում եղբայր դարձած քուրդ և հայ ժողովուրդների միջև, և մենք առանց լուրջ պատճառների սկսել ենք միմյանց միս ուտել, միմյանց ոչնչացնել: Հուսով եմ, ո՞վ քաջ, որ ինձ հետ խոսողը մեր պապերի ու հայրերի օրհնած խաղաղ կյանքի կողմնակիցն է: Ես մաղթում եմ քեզ հաջողություն և խնդրում եմ ասել, թե ինչո՞վ կարող եմ ծառայել:

Չաթոնի թիկնապահ ջոկատը 40-50 քայլ հեռավորությունից հետևում էր իրենց պետի և մեկիքի բանակցությանը:

–Ծերո՞ւկ, դու ինձ սպառնու՞մ ես քո մեկիքությամբ և քո գյավուր⁴³ ձեռքով համարձակվում ես բռնե՞լ իմ ձիու սանձը ու նրան կանգնեցնե՞լ: Բարոզներդ քեզ պահիր և հեռու չքվիր իմ ճանապարհից:

Չաթոն ձեռքը տարավ դեպի գեները: Մեկիքն իրեն արդեն զգել էր վարժատան պատի հետևը, երբ Չաթոն մատուցեց մի համազարկ տվեց նրա հետևից: Նրա կրակոցները կրակ բաց անելու ազդանշան եղան եկեղեցու և վարժատան տանիքներից, պատերի գլխին և անկյուններում դիրքեր գրաված հայ մարտիկների համար:

Հայերի՝ առաջին իսկ տեղատարափ համազարկից քրդերից մի քանիսը վայր գորվեցին իրենց ձիերից, իսկ մի քանիսի ձիերն էլ տապալեցին իրենց հեծյալներին: Չաթոն վիրավորված կարողացավ ցած իջնել ձիուց և մտնել մի կիսաքանդ պատի հետևը: Քոլոզը գլխից հանելով՝ ամրացրեց մի քարի վրա և, պատի հետևում սողալով, այս ու այն անկյունից ու ճեղքերից սկսեց կրակել հայերի վրա: Չաթոն կրակում էր շատ քիչ, բայց անվրեպ:

Տեսնելով, որ ճակատից Չաթոնին հնարավոր չէ ոչնչացնել, Մուսուն և ոգմեցի Աբրիկն անցան նրա թիկունքը և վերջը տվեցին:

Քուրդ թիկնապահ ջոկատը շատ արագ նոսրանում էր:

Չաթոնի հավատարիմ նժույզը, որը մինչ այդ աներեր կանգնած էր նրա կողքին և ոչ մի տեղից վիրավորված չէր, Մուսոյի հրացանազարկից բնագողով զգաց իր տիրոջ մահը և շուռ գալով վրնջաց ու առանց հեծյալի սուրաց դեպի քրդերը:

Նժույզի վրնջոցը հնչեց որպես մահանջի փող, և կենդանի մնացած մեկ-երկու տասնյակի հասնող քրդերը, իրենց զցելով ձիերի վրա, փախուստի դիմեցին: Քրդերը կորցրին 13 մարդ և 9 ձի:

Հայերից սպանվեց 3 մարդ՝ Միրունի Ռաշիդը, ոգմեցի Ասատուրը և կարաքեշիջի մի երիտասարդ⁴⁴:

Չաթոնի թիկնապահ ջոկատի մնացորդները, որոնց մի մասը վիրավոր էր, հայերի կրակոցների և արճճե կարկուտի ուղեկցությամբ փախչում էին դեռևս դեպի իրենց շարժվող ձիավոր և հետիտուն խուժանի կողմը: Նրանց առջևից գեղեցիկ գլուխը բարձր պահած, իր սիրասուն զավակը կորցրած մոր պես, արտասուքն աչքերին, բաշը քամուն տված՝ լալագին վրնջոցով սլանում էր Չաթոնի երկվարը մի քանի ձիերի հետ, որոնք ողբասացների պես կարծես ձայնակցում էին նրան:

Մինչ այդ քուրդ կամավորների բազմամբոխ խուժանը, որը սկզբում միայն լսում էր հեռվից եկող հրագեների համազարկերը, այժմ տեսնելով Չաթոնի թիկնապահ ջոկատի մնացորդների փախուստը և նրա նժույզն առանց իր տիրոջ, չսպասելով իրենց պետերի հրահանգին և նույնիսկ հակառակ հրամանների, դիմադարձ եղավ և սկսեց փախուստի դիմել:

Գյուղը հսկող ոստիկաններն Առենից Չաթոնի դիակը խալիներով ծածկված սայլին դրված տարան, որոնք, չգիտես որտեղից, կրկին հայտնվեցին և տեսնելով գյուղի մի քանի ընտանիքների լացն ու ողբը զոհվածների համար, այնուհանդերձ, մեկիք Ապրեի ներկայությամբ անիծում էին այն մարդուն, ով զենք էր բարձրացրել և սպանել այդ թոսուն⁴⁵

44 Մեկ այլ վկայությամբ՝ կովի ժամանակ զոհվել են «Փարսանի Միրզոն, Միրունի Ռաշոն և Ջելօի Ասպատուրը» («Ասպատուրական, Վենետիկ, 1930, էջ 406»):

45 Կտրիճ, բարետես:

43 Անհավատ:

տղամարդուն, ինչպես նրանք անվանում էին Չաթոյին:

Փետրվարի 16-ին Առենը շրջապատվեց թուրքական կանոնավոր զորքերով: Նրանց՝ դեպի Առեն ուղղված հրանոթների երախները սպառնում էին հուր ու կրակ թափել գյուղի վրա և հիմնահատակ կործանել այն:

Առենը հրանոթազարկ անել թույլ չի տալիս Ակնի⁴⁶ գավառապետը՝ գայմագամը: Նրան հայտնի էր իր կառավարության գաղտնի հրահանգը պատերազմական շրջանի բնակչության, հատկապես հայերի տեղահանության և երկրի խորքերում, ինչպես նաև Բարդաղ-Բեռլին կառուցվող երկաթգծի շրջանում տեղավորելու անվան տակ ընդհանուր և վերջնական ջարդ կազմակերպելու մասին:

«Կտրել է բոլոր ճանապարհները և թույլ չտալ Առենում բույն դրած զինված գյավուրներին օգնության հասնելու Արծկեի հայկական գյուղերին: Առենը հրանոթազարկ անելը կնախագուշացնի, ոտքի կհանի և ինքնապաշտպանության կպատրաստի շրջակա գյուղերը, որոնք բացառապես անհավատներ են: Կատարել է Բարձր դռան ցուցումը և խոհեմ լինել թշնամուն ոչնչացնելու գործում: Մեզ չեն կարող բավարարել սուլթանների կողմից տասնամայակներ իրականացվող ջարդերը, որոնք ամեն անգամ չեն անցել 20-30 հազարից: Հայերն իրենց աճով արագ լրացնում են այդ կորուստները: Այժմ նրանք մեր հողում 3-3,5 միլիոնի են հասնում: Հայ տարրը իսպառ պետք է մաքրել երկրի երեսից՝ ահա մեր խոսքը: Սուլթանների՝ 20-30 հազարանոց ջարդերն այժմ Բարձր դռան կողմից դիտվում են որպես մարդասիրություն և կոպիտ սխալ, որը թույլ է տրվել մեր ամենագոր տիրակալության ճանապարհին: Պատերազմական այս թոհուրոհի մեջ մենք հանուն Մուհամմեդի սիրո, հանուն մեր կրոնի պահպանության, մեր մեծ ու ազնիվ ազգի և հանուն արդարության պետք է անհետ ոչնչացնենք մեր ճանապարհին ցցված այդ անպիտան, տիրադավան ազգը: Հանձնարարում են Չեզ, Սիահմադ փաշա, և հուսով են, որ Դուք ձեզ վստահված գործը պատվով կկատարեք: Միջոցների մեջ խտրություն չդնեք: Եթե գործադրած միջոցով հասել ես նպատակիդ, ուրեմն դա ամենախմաստունն է: Շարունակեք Առենի պաշարումը մինչև մեր կողմից նոր ցուցումներ ստանալը», – այսպես երկար խորհուրդ էր տալիս և բացատրում Ակնի գայմագամը Առենը շրջապատած զորքերի հրամանատար Սիահմադ փաշային:

Առենը շրջապատված էր. դրսից ոչ մի լուր չէր թափանցում գյուղ, և ոչ էլ գյուղից հնարավոր էր որևէ ձևով հաղորդակցվել հարևան գյուղերի հետ: Շրջակա գյուղերից Հովանի հրամանատարության տակ հավաքված մարտիկների օրինակը, Չաթոյի

մուտքը դեպի Առեն թույլ չտալը և նրա խաժամուժ խուժանի հետ շարտելը քաջալերող դեր խաղացին:

Այդ ամենն Առենում գաղտնի զենք ունեցող մոտ 2 տասնյակ տղամարդկանց ստիպեց վերջնականապես հասկանալու, որ ժամանակն անցել է, և այժմ ոչնչով չի կարելի արդարացնել տասնյակ տարիներով քարոզվող այն գաղափարը, որ հայերն անխոհեմ կգտնվեն, եթե զենք վերցնեն և զենքով դիմադրեն թուրքական տիրապետությանը նույնիսկ այն դեպքում, երբ համոզվեն, որ թուրքը գործում է միակողմանի, անարդար և ասիացու բիրտ ու անասնական անողորքությամբ ոչնչացնում է իրենց:

Առենից 10-12 հոգի էլ զինվեցին սպանված քրդերի զենքով: Այդպես 1-2 օրում գյուղում թուրքական վախրագ կարգերի դեմ զենք վերցնողների թիվը կրկնապատկվեց, եռապատկվեց և հասավ 40-45-ի:

Առենի զինված մարտիկները ցանկանում էին, որ շրջակա գյուղերից իրենց օգնության հասած եղբայրները դուրս գային շրջապատումից և փրկեին իրենց գյուղերն ու ընտանիքները՝ Առենի պաշտպանությունը թողնելով առենցիներին: Գյուղը պաշտպանող խմբերից մեկը դիրքավորվել էր գյուղի եզրին՝ փոքրիկ բարձրության վրա գտնվող զերեզմանատանը:

Խավար ու անլուսին գիշեր էր, շրջապատման ահավոր գիշերներից երրորդը: Քնած էր Առենը:

Գյուղը շրջապատած թուրքական զորքերի վառած խարույկներն արտացոլվում էին Վանա ծովի մեղմ ալիքների մեջ, որոնք, արմաներկ ու մերկ սրերի պես ցուլքեր արձակելով, չընդհատվող հաջորդականությամբ սողում էին դեպի Առեն:

Գերեզմանատանը դիրքեր գրաված տասնյակից հինգ հայ մարտիկները գերեզմանատան եզրին իրարից 30-40 քայլ հեռավորության վրա հսկում էին գյուղը շրջապատողներին ու հետևում նրանց շարժումներին, որոնք պարզ երևում էին բազմաթիվ խարույկների և նրանց բոցեղեն լեզուների լույսի տակ: Իսկ մյուս հնգյակը, որը պետք է հանգստանար և իրենց ընկերներին որոշ ժամանակ հետո փոխարիներ, նստել էր իրար կողքի դրված երկու զերեզմանաքարերի վրա: Նրանք, զենքերը ծնկներին դրած, գլուխներն ափերի մեջ առած, զրուցում էին օրվա դեպքերից և իրենց անելիքներից: Այդ երկու հսկա գերեզմանաքարերի արանքում կար մի փոքրիկ հողաթումբ, որը շրջապատված էր մանր քարերով: Դա մի ընտանիքի միակ ու ծաղիկ հասակում մահացած զավակի գերեզմանն էր, որին երկու կողմից կարծես իրենց հավիտենական զիրկն էին առել հայրն ու մայրը: Այդ փոքրիկ գերեզմանի մոտ տեղ էր գրավել Հովանը: Նա գիշերը ստուգել էր գյուղի շուրջը դասավորված բոլոր ջոկատները, որոնք թվով 8-9-ն էին, և ապա ռես Կարոյի հետ անձամբ հետախուզել էր Առենը շրջապատած թուրքական բանակի թույլ տեղը գտնելու և իր խմբի մի մասը շրջապատումից գաղտնի դուրս բերելու հա-

46 Ակն, Ականց. Վանի նահանգի Արճեշ գավառն է:



ԱՌՆՆ. քանդուքար գերեզմանոցի մնացորդների ներկայիս տեսքը (2006 թ.)

մար: Նա համոզվել էր, որ նախորդ գիշերների ընթացքում իր ուղարկած հետախույզների տվյալները ճիշտ են, և անհնար է շրջապատումից ազատվել առանց զենքով չափվելու թուրքական բանակի հետ: Սակայն դա անդառնալի կորուստ կլիներ նրանց համար:

Մելիք Ապրեն արդեն քանիերորդ գիշերն էր՝ աչք չէր փակել և գիշեր ու գոր շրջում էր ջոկատից ջոկատ, դիրքից դիրք: Նա պապանձվել էր, լռել և տեսնում էր հայ քաջերի հոգեցունց վիշառը, որոնք ծուղակն ընկած առյուծների նման մռնչում էին՝ իրենց հարազատներին օգնության հասնելու համար ելք չգտնելով: Մելիքն իրեն մեղավոր էր զգում, որ ժամանակին չէր շտապեցրել Հովանի շուրջ հավաքված և Արծկեի հայ շեներից Առենին օգնության հասած մարտիկներին, որոնք, գյուղից լրիվ հեռանալով, կփրկեին իրենց կյանքը, ինչպես նաև հնարավորություն կտրվեր նրանց խափանելու այն վտանգը, որ սպասվում էր այդ գյուղերին: Առենից հեռացել էր միայն 15-20 մարդ:

Մելիքը երերալով քարշ էր տալիս պարթև մարմինը և փառահեղ գլուխը խոնարհած կրծքին՝ միջոցներ էր որոնում ստեղծված վիճակից դուրս գալու համար, սակայն իզուր:

Պաշարման յոթերորդ օրը Առենի շրջապատումը վերացվեց:

Մելիք Ապրեն մի գրություն ստացավ գավառապետից, որի մեջ նա ափսոսանք էր հայտնում Չաթոյի և առենցիների միջադեպի համար և նշում, որ թուրքական բարեխնամ կառավարությունը քրդերի ինքնագլուխ խժոժությունների համար հայերին չի մեղադրի: Մյուս կողմից գովեստի խոսքեր էր շռայլում Առենի պաշտպաններին, որոնք իրենց պատիվը փրկելու համար պատժել էին Չաթոյին:

Երկրորդ գրությունը, որը ևս գավառապետից էր, մելիքը ստացավ Առենի շրջապատումը վերացնելու օրը: Այդ գրության մեջ գավառապետը նշել էր, որ ցուցում է տվել Սիահմադին հեռանալ Առենից, քանի որ այդ միջադեպի համար մեղավոր են ինչպես հայերը, առավել ևս քրդերը:

«Չէ՞ որ պատերազմի մեջ գտնվող թուրքական կառավարությունը կոժվարանա շուտափույթ հաղթանակի հասնել իր թշնամիների նկատմամբ, եթե թուրք և մեր քրիստոնյա եղբայր ժողովուրդները չկատարեն իրենց պարտքը»,– գրում էր նա:

Շրջապատումը վերացնելուց երեք օր հետո իր 20 ձիավորներով Առեն մտավ Սիահմադը, 4-5 զինակիցներով սեղան մատեց մելիքի, նրա որդի ռես Կարոյի, Մուսոյի և գյուղի մի քանի երեխաների հետ, կերավ, խմեց, կատակեց և ապա հանձնարարեց մելիքին հեռացնել գյուղից զինված մարդկանց, կամ ավելի լավ է, որ նրանք զենքերը հանձնեն և անցնեն իրենց վարուցանքին:

–Երիտթուրքական կառավարությունը, հավատարիմ իր սահմանադրական սկզբունքներին, լիակատար ազատություն է տալիս իր հպատակներին և միջոցներ է ձեռնարկում նրանց կյանքի և գույքի ապահովության համար: Նա դեմ է սուլթան Աբդուլ Համիդի կողմից գործադրված խտրականությանը քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Խնդրում են Ալնի գավառապետ փաշայի և մասամբ էլ իմ անունից զարման վարուցանքի դուրս բերել Արծկեի հողագործ աշխատավորությանը: Ինձ է հանձնարարված պաշտպանելու ձեր շրջանի աշխատավորությանը, և ես երդվում եմ ամենակարող Ալլահի անունով պատվով կատարել ինձ վստահված հանձնարարությունը: Ես կզսպեմ քուրդ և չերքեզ բոլոր հրոսակներին, որոնք վերջին տարիներին լցվել են մեր սուրբ հողը և իրենց ավազակաբարո ալան-թալանով, սպանություններով մեր դեմ են հանում մեզ կերակրող քրիստոնյա առաքինի բնակչությանը,– այսպես էր համոզում մելիք Ապրենին թուրք Սիահմադ փաշան:

Մելիքին հայտնի էր, որ Ալնի գավառապետը ինչ-ինչ միջոցներ էր ձեռնարկել ժամանակավորապես հեռու պահելու քրդերին, որոնք Չաթոյի վրեժը լուծելու համար պատրաստ էին անգն ու անպաշտպան մնացած ողջ Արծկեն իր մի քանի տասնյակ գյուղերով սրի քաշել և տեր դառնալ նրա ունեցվածքին:



ԱՌԵՆ. Ամուշների ավերված գերեզմանոցի՝ ցարդ պահպանված խաչքարերից (2006 թ.)

Մելիք Ապրեն մնացել էր երկու քարի արանքում: Ռես Կարոն, որ մինչ այդ չէր համարձակվում հոր խոսքին հակառակվել, երբ տեսավ մելիքի տատանվող դիրքը, թե գուցե այս անգամ թուրքերը չեն կեղծում և, իրոք, կպաշտպանեն իրենց, վճռականապես դեմ դուրս եկավ հորը: Նա չէր հաշտվում այն մտքի հետ, որ առաջարկում էին ոմանք, այն է՝ թողնել Առենը և զենքն առանց հանձնելու ծովով անցնել Վան և պետք եղած դեպքում վերադառնալ ավելի մեծ ուժերով ու պաշտպանել ժողովրդին: Այդ վեճը երկար կշարունակվեք, եթե մի քանի օրից կրկին չհայտնվեք Սիահմադն իր ձիավորներով: Նա մելիքին ոչ այն է սպառնալով, ոչ այն է համոզելով հասկացրեց, որ նա չի կարող չկատարել Բարձր դրան հրամանը, և որ ինքը մեկ-երկու օրից կստուգի առենցիներին և նրանց վերաբերմունքը կպարզի թուրքական կառավարության նկատմամբ:

Այս անգամ արդեն մելիքը թույլ տվեց աններելի մի սխալ: Մի քանի հարցեր, ինչպիսիք էին՝ Առենը շրջապատած թուրքական կանոնավոր զորքերի ձեռքը ո՞վ բռնեց, որ նրանք չկործանեցին այն, ինչու՞ քրդերը չհամարձակվեցին գործադրել իրենց բարբարոսություններն Արծկեի հայկական անպաշտպան գյուղերում այն ժամանակ, երբ զինված արծկեցիները շրջապատման մեջ էին մնացել Առենում, վերջապես գավառապետի հավաստիացումները և Սիահմադնի բռնած դիրքը չե՞ն խոսում այն մասին, որ պատերազմի մեջ գտնվող թուրքական կառավարությունը չի ցանկանա զրկվել իրեն հաց և այլ սննդամթերքով ապահովող ժողովրդից, և, ի վերջո, 100-120 զինված մարդկանցով մի՞թե հնարավոր է կռվել թուրքական կանոնավոր զորքերի դեմ, մելիքին վերջնականապես կանգնեցրին զենք վերցրած արծկեցիներին Վան ուղարկելու որոշման առաջ: Այդ պատճառով էլ նա հորդորեց և համոզեց զինված առենցիներին և արծկեցիներին անցնել Վան, չնայած բոլորից լավ գիտեր Համիդյան ջարդերի և Երիտթուրքերի՝ Աբդուլ Համիդին գահընկեց անելուց և սահմանադրություն հռչակելուց հետո՝ 1909 թ.

ապրիլին կազմակերպած Ադանայի⁴⁷ 30 հազար հայերի գազանաբարո կոտորածի մասին:

Մելիքի որոշման հետ չէին հաշտվում Հովանը, ռես Կարոն, էլի մի երկու տասնյակ քաջեր, սակայն վերջին վայրկյանին Կարոն տեղի տվեց հոր թախանձանքներին և մյուսների հետ առագաստանավ մտավ⁴⁸:

Առենի կոտորածը

1915 թ. ապրիլի 7-ին Սիահմադը 100 զինված ձիավորներով մտավ Առեն: Մելիք Ապրեից պահանջեցին, որ 12 տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց հավաքեն եկեղեցու հետևում գտնվող Խաչաղբրի դարում: Այնուհետև իբր զենք ու ջանֆիղա հայտնաբերելու և իբր հետագա բոլոր հնարավոր անախորժությունները կանխելու պատրվակով սկսեցին տուն առ տուն խուզարկել: Տղամարդկանց տներից և թաքստոցներից հանելով՝ նրանց բշտում էին Խաչաղբրի դար՝ իբր ժողով անելու: Առենցիները գլխի են ընկնում, որ իրենց հավաքել ու շարունակում են հավաքել և գյուղից դուրս են բերում կոտորելու համար, քանի որ զինված ասկյարները կտրել էին գյուղ տանող բոլոր հնարավոր անցքերն ու ճեղքերը և ոչ մի մարդու թույլ չէին տալիս նորից գյուղ մտնել: Դրանում համոզվեցին հաստատապես բոլորը նաև այն ժամանակ, երբ մելիք Ապրեն, որը նույնպես գյուղից դուրս քշվածների մեջ էր, միամիտ ձևանալով, փորձեց գյուղ մտնել, սակայն թուրք ձիավորը ոչ միայն թույլ չտվեց, այլև հրացանի խզակոթով հարվածեց մելիքի թիկունքին:

3-4 ժամվա ընթացքում լրիվ դուրս բերվեց Առենի՝ տասներկու տարեկանից բարձր տարիքի արական սեռը: Գյուղից դուրս եկավ նաև Սիահմադը,

⁴⁷ Նահանգ, գավառ և քաղաք Կիլիկիայում:

⁴⁸ Առենի փետրվարյան դեպքերի մասին տե՛ս նաև Ա.Դօ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 137-141: Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով, էջ 112-113, 122-123:

ձին քշեց մեղիքի կողմը, որը, ամբոխից զատ, կանգնած էր միայնակ: Առաջվա ժպտերես Սիահմադից հետք չէր մնացել, ավելի ճիշտ, նա միայն այժմ երևաց մեղիքին իր իսկական կերպարանքով՝ որպես արյունաբքու գազան և հրամայական հոխորտաց:

–Ասա՛, ու՞ր ես թաքցրել քո զինված գազաններին, և որտե՞ղ է քո կուտակած ոսկին, քավթա՛ն շուն:

–Ձինված հայ քաջերը գնացին Վան, պետք եղած դեպքում կառավարության ձեռքը երկար է, կարող է նրանց բռնել, իսկ ոսկին մեզ՝ աշխատավոր հայերիս չի տրված, այն կուտակվել և կուտակվում է այնպիսի մարդակեր գազանների մոտ, ինչպիսին դու ես, գարշելի՛ գազան:

Մաուզերի համազարկը ծնկի բերեց մեղիք Ապրեին, սակայն հենց ծնկած վիճակում, մի քանի տեղից ծակծկված՝ նա կարողացավ կունդուռան ոտքից հանել և անսպասելի հարվածել Սիահմադի երեսին, որը, վրեժից կատաղած, շարունակեց անշնչացած մեղիքին ծակծկել իր թիկնապահներից մեկի ձեռքից խլված երկրորդ մաուզերով:

Կրակոցները սկսվում են միաժամանակ, և գյուղի ճանապարհները փակված լինելով՝ առենցի տղամարդիկ փախչում են դեպի բաց դաշտ՝ Առվտոցներ: Ասկյարները, սկզբում կանգնած տեղերից, հենց ձիերին նստած, սկսում են հրացանազարկ անել, սակայն քիչ անց նրանց հրացաններից արձակված գնդակներն այլևս հնձելու արդյունքը չեն տալիս արդեն հեռու փախածներից սպանելու համար, ուստի Սիահմադը, սուրը մերկացնելով, առաջինն է օրինակ ցույց տալիս: Թուրքերը կատաղի ընթացքով սկսում են սրի քաշել փախչողներին՝ ճեղքելով և ցրիվ տալով նրանց գանգերը, կիսելով մարմինները, թոցներով գլուխները: Առվտոցները դառնում է առենցի մոտ 400-500 տղամարդկանց բացօթյա գերեզմանոցը:

Առենցի տղամարդկանց սպանողից ազատվում է ընդամենը 4-5 հոգի: Նրանցից 2-3-ը փախչելով հասնում են Առնչկուսա քոեն, իսկ 1-2-ն էլ սպանված են ձևանում՝ երեսնիվայր ընկնելով դիակների կողքին: Նրանց թվում էին Ավետիս և Վահան (Փոխան) հորեղբայրներս⁴⁹ և հորեղբորս աղջկա՝ Նիգյարի ամուսինը՝ Հովոն: Արյան մոլուցքով տարված թուրքերը, ընկնելով մինչև Առնչկուսա քոեն փախչողների հետևից, սրատելով առենցիներին, կրկին վերադառնում են և ընկածների մեջ վիրավորներ տեսնելով՝ սպանում նաև նրանց:

Բացի այդ՝ մի քանի տասնյակ ասկյարներ բարկաթցի տղամարդկանց ևս բերում են և Ավզի լճակ⁵⁰

և Խոռանց գյուղի արանքում սպանում՝ երկու կողմից փակելով ճանապարհները:

Օրը ցերեկով՝ մի քանի ժամվա ընթացքում, շրջանի հայկական բոլոր գյուղերը սկսում են ծուխ ու բոց տարածել հարթավայրի վրա: Դրան շուտով ավելանում է նաև մարդկանց այրվող մսի ճենճահոտը. Խոռանց գյուղի ողջ արական սեռն էր, որոնց հավաքել և լցրել էին գյուղի ռես Հակոյի մարագում և այրել:

Առաջին աշխարհամարտի սկզբին հորս ևս գորակոչում են տաճկական բանակ՝ աշխատեցնելով ճանապարհների կառուցման ժամանակ: Շատերի մեծն նա էլ փախուստի է դիմում, վերադառնում հայրենի գյուղ և թաքնվում մեր գոմում: Իմանալով, որ հայրս մեր գոմում է, ծեծելով գոմի դուռը, ավու՛ր-ավու՛ր կանչելով՝ մատնում են հորս տեղը: Հարևանուհի Սիմեի այն պնդմանը, թե՛ քո ավուհն բանակում է, ես պնդում եմ՝ չէ՛, իմ ավուհն այստեղ է՛ գոմում:

Հայրս, չցանկանալով իր սիրած կնոջն ու գավակներին թողնել բախտի քմահաճույքին և մի քանի տասնյակ առենցիների հետ մեկնել Վան, սպանվում է Առենցի հողում՝ Առվտոցներում, իր հարագատների հետ կողք կողքի (հայրս, երկու եղբայրները՝ Առաքելը, Հովհաննեսը և Առաքել հորեղբորս անդրանիկ և միակ որդին՝ Մուրայելը, սպանվում են մեկը մյուսից մի քանի քայլ հեռավորությամբ): Բոլոր առենցիների պես նրանք էլ մնացին անթաղ ու անգերեզման...

Գա 1915 թ. ապրիլի 7-ին էր՝ Ավետյաց չորեքշաբթի օրը:

Նույն գիշերը և հաջորդ ցերեկը թուրքերն Առենցի դուրս են բերում բանող և մթերատու ամբողջ անասունը, այժմ ու ոչխարը, ինչպես նաև մեծ քանակությամբ հացահատիկ և տնային թանկարժեք իրեր և շուրջ 80-100 աայլերին, եզներին, կովերին ու գոմեշներին բռնած՝ իրենց թալանով հեռանում: Ավարի մեջ էին նաև գեղեցիկ կանայք ու աղջիկներ:

Թուրքերի հեռանալուց անմիջապես հետո Առենցի են լցվում քուրդ ու չերքեզ մարդասպանների ունակները: Եվ սկսվում են անլուր թալանը, բռնաբարություններն ու սպանությունները, որոնց անխնա ենթարկվում էին բոլորը՝ կին ու երեխա, աղջիկ ու տղա, ծեր ու երիտասարդ:

Անպաշտպան մնացած հոտի մեծ ժողովուրդը մի տեղից մյուսն էր փախչում, մի գյուղից մյուսը գաղթում և ապահով տեղ փնտրում: Առենցիք մեկերկու շաբաթ հետո գաղթում են Բարկաթ, սակայն քուրդ հրոսակների հետապնդումը շարունակվում է նաև այստեղ: Փախցնում են Մանուկի կնոջը՝ Սիմեին, մեղիք Պողոսի աղջկան՝ Հայկոյին, հորեղբայր Սիմոնի աղջկան՝ Կուրոյին և շատ ուրիշներին: Իմ հորեղբայր Հովեն ուներ երկու երեխա՝ 3 և 1,5 տարեկան: Նրա կինը՝ Ալմաստը, Բարկաթում հասիրի վրա ծննդաբերում է և ունենում երրորդ որդուն: Սակայն ծննդաբերությունից մեկ ժամ անց ստիպ-

49 Ավետիս հորեղբայրը սովամահ է լինում, իսկ Վահանը սպանվում է Այլանլու (1946 թ.-ից՝ Ծաղկունք, Արմավիրի մարզ) գյուղի դաշտից մի քանի հասկ գարի պոկելիս: Գարու դաշտի թուրք տերերը բռնում են, գցում գետը, հանում են և ծեծում մինչև մեռնելը (ըստ հուշագրի):

50 Ավզին Առենցի լճակի անվանումներից է:

ված են լինում կրկին փախչել և վերադառնալ հայրենի գյուղ՝ Առեն: Այնաստը, մեկ երեխային կապած շալակին, մյուսին վզին դրած, երրորդին կրծքին սեղմած, չէր կարողանում քայլել փախչողների հետ: Ճարահատ նորածնին թողնում է ճանապարհի եզրին, սակայն իմ մեծ եղբայրը՝ Խոսրովը, լայով վագում և ետ է բերում փոքրիկին: Վերջապես հասնում ենք Առվտոցներ և մինչև մութն ընկնելը թաքնվում գետնափոր պահարանում: Իմանալով, որ առեցիկների մի մասը գյուղում է և հավաքվել է Սրգոյի Մուսեի, Քանքնի Հակոյի և Գևորգի Մնեի տներում, մենք ևս գնում ենք Առեն և պատասպարվում Սրգոյի Մուսեի տանը: Քրդերի ներխուժման ժամանակ մարդիկ լցվում են միմյանց վրա, և շատերը, հատկապես փոքր երեխաները, խեղդամահ են լինում: Մայրս տեսնելով, որ մենք ևս կարող ենք զոհ գնալ, մեզ Սրգոյի Մուսեի տնից տեղափոխում է մեր տուն. քրդերը չեն կասկածում, թե այնտեղ բնակվող կա, քանի որ մեր՝ այնտեղ մնալու մեկ շաբաթվա ընթացքում դռները փակ էին:

Գյուղի մեծ տներում ժողովրդին մի քանի օր շարունակ խուզարկելուց, թալանելուց, բռնաբարելուց հետո քրդերը դռները կողպում են և հրդեհում (քրդերից մեկը գյուղաբնակ մի երիտասարդ կնոջ պարանոցից հանում է ոսկյա վզնոցը, սկանջոներից՝ գինդերից մեկը, իսկ մյուսը պոկում է բլթակի հետ միասին: Գրկից ծծկեր երեխան խլելով՝ խփում է պատին ու կիսամեռ ու ուշակորույս գետին տապալված կնոջը բռնաբարում այդ տանը հավաքված կանանց ու երեխաների ներկայությամբ):

Առենի հայ բնակչության եղերական կոտորածը⁵¹ միայն մի նմանակն է Արծկեի, ինչպես նաև ողջ արևմտահայության ջարդի⁵²:

Արծկեի գյուղերից կենդանի մնացած կին, երեխա, ծեր ու մանուկ, ենթարկվելով քրդական ոհմակների հոշոտումներին, անպաշտպան մնացած հոտի նման գյուղից գյուղ փախչելով, ընկնելով սար ու ձոր, զրկված ապրուստի միջոցներից, սնվելով բացառապես խոտաբույսերով, հյուծված, բռնաբարված, տկլոր ու բոբիկ հուլիսի 19-ին բռնում են գաղթի ճանապարհը, այն է՝ Աբաղայի դաշտ, Բերկրի⁵³, Բայագետ⁵⁴, Սուրմալուի հարթավայր⁵⁵, Էջմիածին:

51 Առենի կոտորածի մասին տե՛ս նաև Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ակնատեսների աչքերով, էջ 114-116:

52 Ինձ հասակակից թո՛ղմաս անունով մի մարդ, որն ինձ հետ մի քանի ամիս քանվորություն էր անում շինարարության վրա, պատմում էր, որ երբ Կիլիկիայի իրենց գյուղից 30-40 հայերին կապկպած տանում էին գյուղից դուրս՝ ձորակի եզրին սպանելու, հարևան թուրքը, որը ջարդարարների մեջ էր, մտնեմուն է հայերին և ասում հետևյալը. «Մի՛ վախեցեք, ես ձեզ այնպես կսպանեմ, որ դուք ոչ մի ցավ չեք զգա, նույնիսկ չեք զգա, թե ինչ կատարվեց ձեզ հետ»: Հերթական ջարդի այդ շարասյունն ազատվել է ձորակում խոշտանգված և սպանված դիակների հետևում թաքնված մի քանի զինված հայերի կողմից, որոնք սպանել են հայերին ուղեկցող 4-5 թուրքերին և ազատել մնացածներին: Դրանց թվում էր և Թովմասը:

Գաղթից հետո

Էջմիածնին մոտիկ գտնվող Աղավնատուն և հարևան գյուղերում մայրս, որբերիս ձեռքից բռնած, մուրացկանություն և ապա գյուղաբնակների տներում ծառայություն անելով, որոշ ժամանակ փրկել է մեզ սովամահությունից:

Հիշում եմ, շատ լավ եմ հիշում, մի գիշեր, մի ևս գիշեր մայրս ու եղբայրս արթնացրին ինձ: Աղավնատուն գյուղում էր, Դողսո՞ւմ⁵⁶, Քորփալվիո՞ւմ⁵⁷, թե՞ Ղզթամուրում⁵⁸, չեմ հիշում, և կարևոր էլ չէ, քանի որ մենք հավասարապես այդ բոլոր գյուղերի բնակիչ էինք այն իմաստով, որ այդ գյուղերն ընկած՝ շրջում և մուրում էինք և մութն ընկնելուն պես օթևան գտնում մի պատի տակ, մի ավեր տան մեջ՝ ծվարելով մորս փեշերի տակ: Այդ գիշեր մենք, հետներս վերցնելով ջարդված կժի մի կտոր, գնացինք գյուղամեջ, որպեսզի ժամ առաջ ներկա լինենք և վերցնենք վաճառքի համար մորթվող եզան արյունը:

Մորս այն թախանձագին խնդրանքին, թե՛ երեխասս (մատնանշում էր ինձ), մեկ շաբաթ է, ինչ ոչինչ չի կերել, ի սեր քո երեխաների, թույլ տուր, որ ես էլ արյուն վերցնեմ, մսավաճառը չտվեց՝ պատճառաբանելով, որ արյունը խոստացել է տալ այսինչին, քանի որ նա օգնել է եզր գյուղամեջ բերելուն և դեռ պետք է օգնի եզր մորթելուն:

Այնուամենայնիվ, երբ եզր մորթեցին, մայրս փորձեց կողքից օգտվել և թույլ չտալ, որ մսավաճառի թույլտվությամբ արյունը բռնող տղամարդու կարասի կողքից արյան ավելորդ շիթերը թափվեն գետնին, ու դեմ արեց ջարդված կժի կտորը: Մսավաճառը դանակի հետևի կողմով խփեց մեր կարասին, ջարդուփշուր արեց այն, մյուս կողմից արյունից օգտվելու իրավունք ստացած տղամարդն այնպես ուժգին հրեց մորս, որ մայրս գետին տապալվեց ու քիչ էր մնում կեր դառնար արյան հոտից հավաքված և մեզ շրջապատած գյուղի սոված շներին, եթե չլիներ եղբորս մահակի փրկարար միջամտությունը, մահակ, որը եղբորս անբաժան ընկերն էր արդեն մի քանի տարի:

Սակայն նրանք կարողացան մի քանի վերքեր հասցնել մորս ոսկրացած ձեռքերին ու բոբիկ ոտքերին:

Փաթրինջում⁵⁹ մեզ նպաստ տրվեց՝ ալյուր, ճարպ, օճառ ու շաքար: Մայրս թոնրի մեջ բոքոն

53 Գավառ Վանի նահանգում:

54 Գավառ Էրզրումի նահանգում:

55 Գավառ Երևանի նահանգում:

56 Գյուղ Արմավիրի մարզում՝ Քասաղ գետի մոտ՝ Աղավնատուն գյուղից 2 կմ հարավ-արևելք:

57 Գյուղ Արմավիրի մարզում: 1935 թ. Քյորփալուն վերանվանվել է Արշալույս:

58 Գյուղ Արագածոտնի մարզում: 1935 թ. վերանվանվել է Ոսկեվազ:

59 Գյուղ Արագածոտնի մարզում: 1949 թ. վերանվանվել է Ոսկեհատ:

թխեց և ապա այդ ճարպի մեջ տաք բոբոնով ճմուռ⁶⁰ սարքեց:

Նա իր սարքած այդ ճմուռը ոչ թե ուտում էր, այլ լավում (բերանս կտրվի): Նրա ձեռքը ճմուռի կավե ամանի մեջ այնպես էր դողում, որ նրա պարունակությունը շաղ էր տալիս չորսբոլորը: Երկար ժամանակ սովամահությունից հետո այդ կոշտ կերն ուտելու երրորդ թե չորրորդ օրը մայրս մեռավ:

Չհասկանալով մորս հետ կատարվածը, երբ իր ունեցած քրջերի հետ նրան փաթաթեցին մեր տան կարպետ կոչված լաթի մեջ, դրեցին սայլին, ինձ այնպես թվաց, թե մայրս շատ մեծ փառքի է արժանացել, քանի որ իրավունք է ստացել միայնակ գրադեցնելու մի ամբողջ սայլ, և ոչ ոք ինձ չի կարող զրկել այդ փառքից, քանի որ ես ոչ միայն կաշում էի սայլի պոչից, այլև բարձրանում էի սայլին, պառկում մորս կողքին ու փարվում նրան:

Ես իրողությունը հասկացա, երբ սայլը, անցնելով Ամբերդ գետը⁶¹, կանգ առավ Ղզլթամուրի գերեզմանատան եզրին՝ ոչ խորը մի փոսի մոտ, ու մորս իջեցրին այնտեղ և սկսեցին հողով ծածկել ու քարեր գլորել նրա վրա:

Իմ՝ թեկուզ այդ քար ու հողի տակ մորիցս անբաժան մնալու բոլոր փորձերն ապարդյուն անցան, քանի որ սայլապանը, որը Խոսրովի հետ հուղարկավորության թափորի միակ մասնակիցն էր, թևիցս բռնած ինձ դուրս է քաշում գերեզմանից, հանձնում եղբորս՝ Խոսրովին, ու շարունակում փոսը լցնել: Ես իմ թույլ ու տկար մարմնով պատրաստ էի կրծելու այդ անխիղճ մարդու կոկորդը, որն այդքան անխղճաբար քարերը թմփոցով գլորում էր մորս վրա:

Մորս թաղումից հետո Խոսրովն ապրեց 10-15 օր, սակայն ոչ ոտքի վրա, այլ մերկ գետնին՝ թոնրի շրթին պառկած:

Մենք ապրում էինք հորեղբորս աղջկա՝ Նիգյարի և ականջներից ծանր նրա ամուսնու՝ Առնի սպանդից ազատված Հովոյի (Հովհաննես) հետ միասին մի հարկի տակ: Նրանք ունեին ինձ հասակակից 6-7 տարեկան մի աղջիկ՝ Մառնազ անունով (մինչև 1991 թ. ողջ էր):

Եղբորս մահվան օրը Նիգյարն իր ամուսնուն լսելի ձայնով ասաց.

–Խովո՛, Աստված չենա, որ Խոսրովն էլ մեռավ, ապա մենք ի՞նչ անենք Սարգսի խեստ: Չէ՞ որ մենք մեր գլուխը չենք կարողանում պախել և ձեռքներս ընկածով հագիվ կարողանանք սովից փրկել Մառնազին:

Եղբայրս, որ արդեն մի քանի օր էր, ինչ ուշակորույս վիճակում էր և անընդհատ ջուր էր ուզում, անսպասելի ուժ գտավ իր մեջ և նվաղած ձայնով ասաց.

–Նիգյար՛, քո և իմ հոր խաթրու պախա՛ Սարգսին ու մի՛ թողնի, որ իմ խոր տան ճրագ ընցի, մեկ էլ թողեք, որ ես հանգիստ մեռնեմ:

Դա էր մեռնելուց առաջ 15-16 տարեկան եղբորս վերջին խոսքը...

Մայրս ու եղբայրս մեռան Փաթրինջում, որը թուրքերից ազատված գյուղ էր: Մուրացկանությամբ ստացած հացի փշրանքը մայրս ու եղբայրս իմ բերանն են դրել՝ մտածելով, որ ես փոքր եմ, չեմ դիմանա...: Դա 1921 թվականին էր՝ փետրվար ամսվա կեսերին:

Ավագ բույրս՝ Մարիամը, աշխատանքի էր ընդունվել Երևանի 5-րդ որբանոցում որպես մայրապետ՝ շնորհիվ մեր գյուղացի և այդ որբանոցի կառավարչի և ամուսնացել նույն որբանոցում դռնապան աշխատող մի երիտասարդի՝ Գառնիկի հետ: Նա չտեսավ մորս ու եղբորս մահը:

Այսուհետ բույրս բաժին չունի հուշագրությունս շարադրելու մեջ:

Խոստովանում եմ, որ չունենալով քրոջս հիշողության հզորությունը՝ ջանք եմ գործադրում, որպեսզի ճիշտ շարադրեմ այն:

Մորս և եղբորս մահից հետո

Չեմ հիշում, թե ինչպես եղավ, որ ես դարձա Ղզլթամուրի Մոզինեց Համազասպի հոտադր: Դա, անշուշտ, արեց հորեղբորս աղջիկը՝ Նիգյարը, սակայն լավ հիշում եմ այդ ընտանիքին և այնտեղ ապրած 7-8 ամիսների ընթացքում ինձ հետ կատարված իրադարձությունները:

Որբանալուց հետո դա առաջին ընտանիքն էր, որին ես պատահեցի և հասկացա, որ աշխարհում լավ մարդիկ էլ կան:

Համազասպը, որը մոտավորապես քառասուն տարեկան էր, ուներ բարեստես կին և երկու տղա՝ Ասո (Ասատուր) և Պարույր: Ասոն ինձնից մեծ կլիներ 4-5, իսկ Պարույրը՝ 1-2 տարով:

Նրանք ունեին մի գոմեշ՝ իր ձագի հետ, և մեղվի 3 փեթակ, որոնք դրված էին 3-4 ծառերից բաղկացած փոքրիկ պարտեզում: Պետք է դաշտ տանելի, արածեցնելի և երեկոյան տուն բերելի այդ գոմեշը, որի անունը Շեկո էր՝ չնայած իր ահավոր սևությանը:

Ամեն օր սովորականի պես Համազասպը մեջքիս կապում էր իմ օրապահիկը, որը սովորաբար բաղկացած էր լինում 1,5-2 լավաշ հացից, ժածիկից⁶², պանրից, կարագից կամ էլ տապակած բանջարից, երբեմն էլ լոբախաշուկից, գրկում, նստեցնում գոմեշին, ձեռքս էր տալիս իմ երկու ձեռնափայտը ու կարգադրում Շեկոյին տանել ձորի մեր դռուղը⁶³:

60 Հացից և հալած տաք յուղից պատրաստված ուտելիք, հացաբան:

61 Սկիզբ է առնում Արագած լեռան հարավային լանջերից և աջից միախառնվում Բասաղ գետին:

62 Թանր եփելուց և քամելուց ստացվող պանրանման նյութ, բանից պատրաստվող լոբ:

63 Խոտհարք, արոտ:

Հինգ ամիս էր, ինչ ես պահում էի այդ գոմեշը բացառապես նրա մեջքին նստած և այդ ընթացքում եկել էի այն համոզման, որ Շեկոյին մեկ փայտով հնարավոր չէ դեկավարել: Սկզբում մինչ ես փայտը մի ձեռքից մյուսն էի փոխանցում, որպեսզի այդ կողմից խփեմ նրա վզին և քշեմ ցանկացած ուղղությամբ, Շեկոն գլուխը թափահարում էր, հետույքը վեր-վեր գցում և փախչում հակառակ կողմը: Այստեղից էլ առաջացավ երկու ձեռնափայտ պահելու անհրաժեշտությունը, որոնք ես բռնում էի մեկը ձախ, մյուսն աջ ձեռքում և գործադրում էի հերթով և երբեմն էլ միանգամից երկուսը միասին:

Օրերից մի օր ես Շեկոյին տարա Օշականի⁶⁴ և Ղզլթամուրի սահմանը կազմող Քասաղ գետի ձորի խոտհարքը, որը գյուղից բավական հեռու էր:

Այդտեղ ես արդեն երկրորդ անգամ էի լինում: Առաջին անգամ Համազասպն ու Ասոն այնտեղ էին, նրանք խոտը հնձել էին և խորոմն⁶⁵ էին պատրաստում, իսկ այս անգամ ոչ ոք չկար, նրանք խոտը օր առաջ հնձել և տարել էին:

Վայր գլորվելով Շեկոյի մեջքից՝ նրան ազատ թողեցի խոտհարքի մեջ և ընդարմացած ոտքերով մոտեցա գետափին, բացեցի իմ օրապահիկը, որն այդ օրը բաղկացած էր երկու լավաշից ու նոր ժածիկից... Նախաճաշիկս ավարտված էր, այժմ պետք էր ձկնորսությամբ զբաղվել: Ես նախօրոք էի պատրաստվել: Այդ օրը ես կարողացա 10-ից ավելի ձուկ որսալ, որոնք կեսօրից հետո խորովեցի խարույկի վրա, ախորժակով կերա ու քնեցի բարդու սովերում: Երբ արթնացա, արևն արդեն մայր էր մտնում, ու ձորը բավական մթնել էր: Իմ բախտից Շեկոն ինձնից հեռու չէր ու որոճում էր: Ինչպես միշտ, բարձրացա մեջքին ու քշեցի ձորից դուրս բերող արահետով: Հասնելով խոտհարքի վերևով հոտող առվին՝ գոմեշն այն է պետք է անցնեմ, երբ անսպասելիորեն շուռ եկավ ու հետ վազեց դեպի հյուսիսի արտոք: Նրա մեջքից ես վայր գլորվեցի և ընկա առվի թմբին: Լացակունձում ու երկյուղով փորձեցի հետիոտն հետևել նրան ու դուրս բերել ձորից, սակայն իզուր: Արևը մայր մտնելուն պես ձորը միանգամից մթնեց, և երկյուղը պատեց ինձ:

Տեսնելով, որ միայնակ չեմ կարող Շեկոյին դուրս բերել ձորից, բարձրացա գետափին գտնվող բարդիներից մեկի վրա, ճյուղերից մի քանիսը ծալեցի, հացի շորով ինձ կապեցի ծառից ու նստեցի: Գետի խշշոցը, ծառերի սոսափյունը, թռչունների գիշերային ձայներն ինձ թվում էին բյուրավոր գազանների մոնչոցներ, և ես վախից դողում էի:

Գիշերը դեռ այնքան էլ չէր մտել իր իրավունքների մեջ, երբ ծառին նստած՝ լսում էի ձորում արձագանք տվող իմ անունը, սակայն պապանձվել

էի ու չէի կարողանում ձայն հանել: Նշմարում էի մի քանի սև կետեր և լսում էի խոսակցության բարձր ձայներ, որոնք գալիս էին մեկ մոտիկից, մեկ հեռուից:

Ես ճանաչեցի այդ ձայները. Համազասպի ձայնն էր, որն ընկերներին ասում էր. «Կամ էդ անտերը տղային խփել է գետին, կամ նա այժմ ուշակորույս մի կողմի վրա ընկած է, կամ էլ մեջքին նստած՝ մտցրել է գետը, և ջուրը տարել է նրան»:

Տեսնելով, որ ձայն հանել չեմ կարողանում, սկսեցի բարդու ճյուղերն իրար խփել, որով էլ կարողացա շուտով իմ տեղն իմաց տալ՝ միաժամանակ արձակելով իմ կապանքները:

Վերջապես Ասոյի օգնությամբ ծառից իջեցրին, և անպիտան Շեկոյի հետ դուրս եկանք ձորից: Չնայած Ասոն ինձ մի քանի բուռ ջուր խմեցրեց, սակայն լեզուս չէր բացվում:

Գաղթից շուրջ 5-6 տարի հետո առաջին անգամ այդ ընտանիքում էր, որ կուշտ փորով հաց կերա՝ 7-8 ամիս ապրելով նրանց տանը: Համազասպն ինձ ու Պարույրին միատեսակ շոր ու կոշիկ հագցրեց նրանց տանը գտնված հենց առաջին ամսից: Պարույրն ու Ասոն ինձ չէին վիրավորում, ծեծում. մենք եղբոր պես էինք: Քրոջս մասին լուր չունենալով (որտե՞ղ է և ի՞նչ է անում)՝ ես ստիպված էի Պարույրին ասելու, որ ոչ մի հարազատ չունեմ: Նա էլ ասել էր ծնողներին, և մի երեկո Համազասպն ինձ հարցուփորձ անելուց հետո կնոջն ասաց.

—Ա՛յ կնիկ, երկուսը չունենք, երեքն ունենք: Թո՛ղ ապրի ու մեծանա մեր երեխաների հետ, լավությամբ չի կորչի, խելացի, աշխատող տղա կդառնա, դա երևում է:

Իմ ուզածն էլ հենց այդ էր, սակայն այդպես չէի գալ:

Աշուն էր, Արարատյան դաշտի աշուններից մեկը, երբ այգեկույթը վերջացել էր, և սկսվել էր աշնանային կանաչ, կարմիր, դեղին գույներով զարդարված այգիների տերևաթափը: Ուրիշ հոտաղների պես ես էլ Շեկոյին տարել էի տիրոջս այգին ու բաց թողել այնտեղ:

Կինոժապավենի նման գալիս և անցնում էին իմ մանկության վերջին շրջանի դեմքերն ու դեպքերը: Կարծես լսում էի մորս դիակի վրա գլորվող քարերի թրմփոցներն այն անխիղճ մարդու կողմից, որը թաղեց մորս այդ քարերի տակ: Մսավաճառը և մորթվող եզան արյունը բռնող մարդը, շների՝ մորս գգելը, նրա արյունածոր ձեռքերն ու ոտքերը, գորովագութ եղբորս մահն ու թաղումն ու էլի ինձ շատ ու շատ անհասկանալի բաներ, որոնց մասին չգրեցի, իմ հոգին լցնում էին անհուն ատելությամբ մարդ արարածի դեմ: Հիշում էի իմ տիրոջը՝ Համազասպին, գալույթն⁶⁶, Պարույրին ու Ասոյին: Նրանք լավ էին,

64 Օշական գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում:

65 Հնձած խոտի փոքրիկ դեզ, որից մի քանիսը միացնելով՝ խորձ են կապում, փուփուկ:

66 Հարս, եղբոր կամ հորեղբոր կինը:

բարի, ինչպես մայրս, Խոսրովը: Օ՛, ո՛չ, մայրս ու Խոսրովն ուրիշ էին, ավելին, քան բարին ու լավը, բայց ախր նրանք չկան, ուրեմն ինձ համար աշխարհի երեսից վերացել են իմ բաժին լավն ու բարին:

Մի օր հոտաղները կոխի մրցում էին կազմակերպել: Ես չհասկացա, թե ինչպես եղավ, երբ տեսա նախրապան Ավագից փարթամ մի երիտասարդի նրա ծնկի տակ թայրտալիս, սակայն Ավագն իր հաղթանակով չհպարտացավ, այլ ծունկը վերցնելով նրա կրծքից՝ ոտքի ելավ: Մենք հեռացանք: Ձեռքը ուսիս դնելով՝ նա անսպասելի հարցրեց.

–Դու վի՞ր խոտաղն ես:

–Մոզիենց Համազասպի:

–Ես էլ Մուխսունց տան խոտաղն եմ, իմ անունն Ավագ ա: Քո խեր, մեր կա՞ն, դո՞ր կապրին:

Նրա՝ ինձ ուղղած երկրորդ հարցը տարօրինակ թվաց. մի՞թե չգիտի, որ հեր ու մեր ունեցողը ուրիշների դռներում հոտաղություն չի անի: Այնուամենայնիվ, քիչ ուշացումով պատասխանեցի.

–Մեռուկ եմ, չկան: Իմ խոր թուրքեր սպաներ են մեր գեղում՝ Առեմում, մերս ու ախպերս մեռան Փաթրինջում, անուն Խոսրով էր:

–Էլ քուր, ախպեր չունի՞ս:

–Չէ:

Ավագը նստեց մի քարի վրա, գլուխն ափերի մեջ առավ ու լռեց, իսկ ես կանգնել էի նրա կողքին և չգիտեի անելիքս, ուզում էի հեռանալ, բայց չէի կարողանում: Հետաքրքրությունս այրում էր ինձ: Նա թողեց ինձ և քիչ անց մի շարան խաղող բերեց:

–Ես էլ հառնցի եմ, իմ ու քո խերն ու մեր մոտիկ հարևաններ ու բարեկամներ էին, ես ու Խոսրով ընդերներ: Խոսրով ընձնից պատիկ էր 2-3 տարով,– ու կրկին գլուխն ափերի մեջ առավ...

Մի քանի խոսքով ուզում եմ ծանոթացնել Ավագի հետ: 1918 թվականից զրկվում է միակ ապավենից՝ մորից, որը մինչ այդ ոչ մի կերպ չէր հաշտվում այն մտքի հետ, որ իր միևնույնս որդին՝ մի մեծ տոհմից կենդանի մնացած միակ շառավիղը, գնա, մեջք ծռի ուրիշների տանը, արևի և անձրևի տակ անասուն արածեցնի, նրանց տակը մաքրի, աղբը թափի, կերակրի, մաքրի մի փոր հացի համար: Դա էր այդ ժամանակ հոտաղների մեծ մասի լիարժեք վարձատրությունը:

Գյուղը դեռ քնած էր լինում, երբ Ավագի մայրը՝ Ատլասա խաթունը, քնած թողնելով Ավագին, տանից դուրս էր գալիս, բոքիկ ոտքերով, հասնում դաշտ, խոտ հնձում, այս կամ այն տանտիրոջ անասունների համար երեկոյան կեր պատրաստում, կատարում տնային բազմապիսի ցածր ծառայություններ, ջուր կրում, լվացք անում: Ուշ գիշերին տուն էր վերադառնում և հոգնաբեկ գիրկն առնելով զավակին՝ քնում էր թոնրի շրթին փռած հասիրի վրա:

Մորս պես Ատլասա խաթունը նույնպես ձեռքի ընկածն Ավագին էր կերցնում, իսկ ինքը հալվում ու մաշվում էր, մինչև որ 1918 թ. աշնանը հիվանդա-

նում է և երրորդ օրը մեռնում՝ թոնրի շրթին հասիրի վրա որդուն գրկած:

Ավագը 16-17 տարեկան էր, երբ մայրը մեռավ: Արդեն չորրորդ տարին էր, որ նա Ոսկեվազի նշանավոր Մուխսունց տան հոտաղն էր: Նրանց ընտանիքում և հատկապես ընտանիքի գլխավոր տնային տնտեսուհու՝ մեծ գալոյի մոտ նրա բազմաթիվ թոռների ու ծոռների մեջ Ավագը մի տեսակ ուրույն տեղ էր զբաղեցնում, որին ոչ ոք չէր կարող փոխարինել: Այդ տեղը նա գրավել էր իր բացառիկ աշխատասիրությամբ: Ընտանիքում նրա համբավը և մեծ գալոյի «խամավոր խարս» անվանումը, սակայն, նրան ոչնչով չէր բարձրացնում ընտանիքի անդամներից և ոչ մեկի աստիճանին: Բացի մեծ գալոյից՝ մնացած բոլորի համար նա մնում էր գյաղա⁶⁷ Ավագ: Նա միջահասակից քիչ բարձր էր, համակրելի դիմագծերով, զարգացած ու ջլապինդ: Խաղող ժամանակ ձայնը գորովալի էր, մեղմ, սակայն, երբ նրան զազազեցնում էին, ահարկու մռնչում էր:

Շուրջ 150 հոգուց բաղկացած հոտաղների մեջ ոչ ոք նրա մեջքը գետին չէր դրել հոտաղների շրջանում տարածված համարյա ամենօրյա կազմակերպող կոխի մրցումներում:

Ղզթամուրի հոտաղության շրջանի երրորդ տարվա ընթացքում Ավագը դարձավ այդ գյուղի հոտաղների մի կողմից պարծանքն ու հպարտությունը, մյուս կողմից խնամակալը, խորհրդատուն ու պաշտպանը: Թույլերի, տկարների պաշտպանն էր, իսկ զորեղների թշնամին: Ավագի նման վարմունքը Ոսկեվազի հոտաղների մեջ համարյա վերջ էր տվել միմյանց բզկտելուն, ծեծկռտուքին:

Որբանոցում

Մի երեկո, երբ սովորականի պես Շեկոյին բազմած՝ ներս մտա տիրոջս բակը և նրա մեջքից վայր իջնելով՝ թոնփացի գետնին, տեսա Համազասպենց շարդախի⁶⁸ տակ աթոռին նստած մի մարդու, որն իր սպիտակ վերնաշապիկով, կոստյումով, գեղեցիկ ոտնամաններով, լայնեզր գլխարկով ինձ օտարոտի թվաց:

Ես չգիտեի, որ այդպիսի դեպքում պետք է բարևել, ու լուռ, գլխիկոր անցնելով նրա կողքով՝ Շեկոյի հետևից մտա գոմ, չնայած այնտեղ անելիք չունեի:

Չալուն ներս մտավ գոմ առանց բաղայի⁶⁹ և ժպտերես ու մայրաբար ձեռքիցս բռնելով և դուրս տանելով՝ կանգնեցրեց այդ քաղաքացի մարդու դիմաց:

–Ա՛յ տղա, բա ասում էիր, որ ես ոչ մի բարեկամ չունեմ, բա սա ո՞վ է, որ եկել է քեզ տանելու,– ինձ դիմեց գալուն:

67 Բառը գործածված է ծառա իմաստով:

68 1. Ծածկ, սրահ, 2. տան կտուրին թեթև շինություն՝ ամառային պետքերի համար, 3. շվաքարան:

69 Պղնձն կամ արծաթե խորունկ աման՝ հեղուկների համար:

–Չգիտեմ:

–Դու Մարիամ անունով քույր չունե՞ս, Գառնիկ եղբայրը նրա մարդը չէ՞:

–Չգիտեմ:

–Դու ասում ես չգիտեմ, իսկ Գառնիկ եղբայրը գիտի եղբորդ ու ծնողներիդ անունները, հը՞, ի՞նչ կասես:

–Նրանք մեռել են:

–Լավ, բայ՛ւ, ես հասկանում եմ, թե դու ինչո՞ւ էիր ասում, որ ոչ մի հարազատ չունեմ, որ ասած լինեիր էլ, թե քույր ունես, մեկ է, մենք քո, Ասոյի ու Պարույրի միջև տարբերություն չէինք դնի: Դու նրանց պես մեր կողմից սիրվում ես որպես մեր տղան:

Չալոյի ասածներից ես ամոթից կարմրեցի և չգիտեի, թե ինչպես արդարանամ: Համազասպը, Պարույրն ու Ասոն, որոնք շրջապատել էին մեզ, մի տեսակ շվարած կանգնել ու չէին իմանում, թե ինչ անեն...

Չալոն սեղան պատրաստեց, որն այդ օրն ավելի ճոխ էր՝ մսով շորվա⁷⁰, մածունի սեր, մեղր, պանիր, մի գունդ կարագ, մի կուլա գինի, թթու դրած պոմիդոր ու տաքդեղ:

Համազասպը, որ ընդհանրապես քչախոս մարդ էր, այդ օրը մի քանի բաժակ գինի խմելուց հետո բլբուլ էր կտրել, խոսում ու խոսեցնում էր իր հյուրին՝ փեսայիս:

Ես առաջին անգամ էի լսում այդքան սրտակեղեք երգեր, մանավանդ, որ փեսաս շատ դուրեկան ձայն ուներ: Երբ պառկում էինք քնելու, փեսաս հարցրեց.

– Մարգի՛ս ջան, Մարիամն ինձ ուղարկել է, որ քեզ տանեմ, կգա՞ս գնանք Երևան՝ մեզ մոտ:

Ես գլխով արի:

Առավոտյան դարձյալ փեսայիս ու ինձ լավ կերակրեցին և որպես իմ կատարած աշխատանքի վարձատրություն՝ Համազասպը փեսայիս տվեց 3 ռուբլի, ճանապարհի համար ուտելիք դրեցին, և մենք բռնեցինք Երևանի ճանապարհը:

Բակից դուրս գալուց առաջ ես ինձ գցեցի գոմը՝ համբուրելու Շեկոյի դուռը...

Փեսաս ու քույրս աշխատում էին պարսիկ սարդարների⁷¹ կայարան դարձած Երևանի բերդի արևմտյան կողմում գտնվող մի որբանոցում, որը մի տեսակ հավաքակայան էր:

Որբերին հավաքելով՝ որոշ չափով կարգի էին բերում, գլուխները խուզում, ոջլոտ մազերն ու ցնցոտիներն այրում, լողացնում, որբանոցի շորեր հագցնում և ապա ուղարկում ուրիշ որբանոցներ: Ես էլ ընդունվեցի այդ որբանոց-հավաքակայան ու մեկ ամիս անց տեղափոխվեցի ամերիկյան 11-րդ որբա-

նոցը, որը գտնվում էր Աբովյան և Գնունի փողոցների խաչմերուկում:

Որբանոցի կառավարչին ոմանք պարոն, ոմանք ընկեր Մուրադ էին անվանում: Մեր որբանոցը համարվում էր ամենալավը, ու չնայած դրան՝ մենք մնում էին քաղցած ու երբեք չէինք կշտանում: Ուշադիր հետևում էինք, թե երբ խոհանոցից աղբարկղ կթափեն օրվա կերակրից մնացած ոսկորները, և այդ պահին հարձակվում էինք աղբարկղի վրա, իրար ձեռքից խլում թափված ոսկորները և սոված գայլերի նման ծամում ու ծծում էինք նրանց մեջ եղած հյութը: Նախաճաշի հետ մեզ ամեն առավոտ խտացրած կաթով կես բաժակ կակաո էին տալիս: Գարձյալ աղբարկղ թափված տուփերի մնացած խտացրած կաթը հանում էինք ու լպստում՝ իրարից խլելով, տուրուրմիտց սարքելով, ինչպես նաև բակում գցած ձավարեղենի դատարկված պարկերից թափված լոբու, բրնձի, ձավարի հատիկները դնում էինք բերաններս: Որոշ ժամանակ անց ընկերացա Սամվելի հետ (քնում էր իմ կողքի մահճակալին): Պարզվեց, որ նա պարոն Մուրադի եղբոր որդին է: Սամվելի ընկերությունն ինձ օգուտ բերեց: Հաճախ ուրիշ որբերից թաքուն՝ նա գրպանից հանում էր թերթով փաթաթած ինչ-որ բան և խոթում գրպանս կամ բռնի մեջ, որի պարունակությունը ես բակի մի անկյունում կամ գուգարանում գաղտնի ուտում էի:

Որբանոցում ես դարձա գրաճանաչ: Իմ ոգևորությանը չափ չկար, երբ ես մյուս որբերին լսելի ձայնով կարողացա կարդալ կարմիր պաստառի վրա սայիտակ բամբակով, խոշոր և մեծատառերով գրված լոզունգը՝ «Ով կարդա, նա մարդ է»:

Շուրջ մեկ տարի էր, ինչ ես 11-րդ որբանոցում էի: Օրերից մի օր պարոն Մուրադն ինձ կանչեց իր մոտ (այնտեղ էր նաև Սամվելը) և ասաց, որ Սամվելին ուղարկելու է Ամերիկա, արդյոք չե՞մ ցանկանում Սամվելի հետ Ամերիկա գնալ. այնտեղ մեզ համար կյանքը լավ կլինի: Ես կնկմացի, և նա իմ պատասխանը չիմացավ, միայն ավելացրեց.

–Դու գիտես, մտածի՛ր և վաղը կամ մյուս օրը Սամվելի միջոցով իմա՛ց տուր:

Ամերիկան ես մի տեսակ քարանձավներում ապրող վայրենիների որջ էի պատկերացնում, և որ այդ վայրենիները խոսել չգիտեմ, իրար հետ հաղորդակցվում են ձեռքերի ու ոտքերի շարժումներով: Չէ՞ որ որբանոցների ամերիկացի վերակացուն՝ պարոն Սմիթը, որը շաբաթը մեկ բանտերով⁷² զարդարված իր շնիկի հետ այցելում էր մեր որբանոցը, մեզ ու իր շնիկի հետ ոչ թե խոսում էր, այլ բերանից մի տեսակ ձայներ արձակում:

Ես ի՞նչ պիտի անեմ այնտեղ՝ այդ վայրենիների մեջ: Այստեղ մարդիկ խոսել գիտեմ, ես նրանց եմ հասկանում, նրանք էլ՝ ինձ, և վերջապես այստեղ քույր ունեմ, ինչպե՞ս թողնեմ քրոջս ու հեռանամ:

70 Մսով ապուր:

71 Պարսկական զորքերի պետ, զորավար, Երևան նահանգի կուսակալ:

72 Ժապավեն, վարդակապ:

Հաջորդ օրը ես որբանոցից ճողոպրեցի և գնացի Սիլաչիում⁷³ գտնվող այն տունը, որը քույրս ու իր ամուսինը վարձակալել էին որբանոցում աշխատելու ժամանակ: Նրանք 4-5 ամիս առաջ ազատվել էին աշխատանքից և տեղափոխվել Արտաշատի շրջանի Ներքին Աղբաշ⁷⁴ գյուղ:

Քույրս երկու անգամ գյուղից եկել էր ինձ տեսության և ուտելիք բերել որբանոցից ազատվելուց և գյուղ տեղափոխվելուց հետո: Նա նկարագրել էր այն ճանապարհը, որով կարելի է հասնել Ներքին Աղբաշ, իսկ գյուղում իրենց գտնելն արդեն ոչ մի դժվարություն չէր ներկայացնում:

–Ինչպես տեսնում ես, դժվար չէ այդ գյուղը հասնելը, մինչև գարուն դիմացիր: Ես ու Գառնիկ քիչըմ տնավորինք, կուգամ, քե կտանիմ,– խրատում էր քույրս:

Հակառակ քրոջս ցանկությանը, որ ես դիմանամ որբանոցում մինչև գարուն, ես դուրս գրվեցի որբանոցից Նատոյի շնորհիվ: Դա 1922 թ. աշնանն էր:

Այդ տունը գտնվում էր այժմյան «Գայանե» հանրախանութի արևելյան կողմում գտնվող դպրոցի տեղում: Բակում կային թթենու 2-3 հաստաբուն ծառեր: Դրանք քաղցր պտուղներից նախորդ տարվա ընթացքում մի քանի անգամ կերել էի պայթելու չափ և դեռ լաթի մեջ լցրած՝ հետս որբանոց տարել Սամվելի համար:

Տանտիրոջ՝ Արամայիսի կինը՝ Նատոն, տանն էր: Նրան ասացի, որ ինձ ուզում են ուղարկել Ամերիկա, իսկ ես չեմ ուզում գնալ: Այն որբերը, որոնք հարազատներ ունեն, կարող են որբանոցի իրենց որբերին դուրս գրել և թույլ չտալ, որ Ամերիկա տանեն: Ուստի խնդրեցի, որ Նատոն ինձ հետ ներկայանա գրասենյակ և որպես իմ քույր՝ ինձ դուրս գրի որբանոցից: Նա չմերժեց:

Գրասենյակում, որը գտնվում էր Կոնդի⁷⁵ ներքևում, մենք ներկայացանք մի տարեց մարդու, որը զբաղվում էր որբերին դուրս գրելու գործով:

Նատոյին դիմելով, նա հարցրեց իմ հայրանունը, Նատոն՝ այդ միամիտ կինը, չկարողացավ պատասխանել և կարմրելով ինձ դիմեց:

–Սարգիս, մոռացա հորդ անունը, ասա՛, թող գրի:

–Տիկին, դուք Ձեր հոր անունն է՞լ եք մոռացել,– կշտամբեց այդ տարեց մարդը:

–Չէ՛, մենք մի մորից, բայց տարբեր հորից ենք,– կմկմաց Նատոն և հազիվ կարողացավ իրեն գցել մի աթոռի վրա: Նատոն բռնվել էր սուտ խոսելու մեջ, բայց և այնպես էժան պրծավ, քանի որ ինձ դուրս գրել տվեց: Պարզ էր, այդ դուրս գրող մարդը չէր ցանկանում, որ որբերին Ամերիկա տանեն, իսկ խեղճ կինն իմ երեսից քիչ էր մնում՝ ուշագնաց լիներ:

Ես դարձա ամերիկյան որբանոցից դուրս գրված սան:

Քրոջս հետ

Քույրս ու փեսաս սկզբում ինձ սառնությամբ ընդունեցին, քանի որ դեռևս չէին տնավորվել, դժվար էր ապրելը, սակայն ես նրանց կանգնեցրել էի փաստի առաջ, և նրանք այլևս չէին կարող ոչինչ անել:

Գրասենյակից ստացած իմ առաջին և հետագա նպաստները կտրտեցին այն սառույցը, որ կար իմ և քրոջս, փեսայիս միջև (մինչև 1925 թ. գրասենյակից ամենամսյա նպաստ էի ստանում՝ 4-5 կգ ալյուր, 2 կտոր օճառ, 1 կգ մարգարի կամ ձեթ, 1 կգ շաքար, 2 կգ ձավարեղեն):

Ամեն ամիս՝ նշանակված օրը, ես և քույրս առավոտ շուտ դուրս էինք գալիս գյուղից, ոտքով հասնում էրևան, նպաստը ստանում և շալակներս առած՝ երեկոյան վերադառնում գյուղ: Մենք անցնում էինք շուրջ 50 կմ ճանապարհ:

Ընդունվեցի Ներքին Աղբաշի քառամյա դպրոցի 2-րդ դասարան: Մինչև 1926 թվականը ձմռանը շուրջ վեց ամիս սովորում էի, իսկ ամռանը բատրակություն անում: Դրանով իսկ մի կողմից օգտակար էի լինում փեսայիս ու քրոջս, մյուս կողմից կտրում, ոչնչացնում էի մեր ընտանեկան սառույցը:

Քույրս ու քրոջս ամուսինն էլ զբաղվում էին այգեպանությամբ՝ բանավոր համաձայնության գալով այս կամ այն այգետիրոջ հետ: Բերքահավաքին այգեպանը ստանում էր բերքի 1/10-րդ մասը, իսկ այգետերը՝ 9/10-րդը:

Ես շատ եմ լսել, թե ինչպես էին որոշ տեղացիներ մեզ անվանում գաղթական շներ: Հողաբաժանության ժամանակ մի քանի ներքինաղբաշցիներ կարողացան լեզու գտնել հողը բաժանող մարդու հետ, որ մեզ՝ գաղթականներիս ոչ թե տրվի իրենց մշակած այգիներից ու բերքի վարելահողերից, այլ գյուղից հեռու գտնվող իրենց հողերն առանձին հատվածով առանձնացվեն և մեզ տրվեն թե՛ որպես վարելահող և թե՛ որպես գյուղատեղ իրենց տնամերձ հողակտորներով: Այդպես էլ եղավ:

Հողաբաժանությունը գաղթականներիս ոչ մի թիզ այգի, անգամ պտղատու մի ծառ չտվեց, բացի մեծ տերտերի միջոցներով կառուցված առվի եզրերին տնկված մի քանի հարյուր փշատենու ծառերից:

Ուղիղ ու միմյանց հասող փողոցներով նախագծված մեր գյուղը, որի մի մասն ընկնում էր բարձունքի վրա, իսկ մյուս մասը՝ ներքին հարթավայրում, կոչեցին Դիտակ:

Ներքին Աղբաշի հողերից մեր գյուղին հատկացված հողատարածությունն ընդգրկում էր երեք հանդամաս՝ Վերին և Ներքին Փամբուղդարա կոչվող հանդամասերի, Փշոտ ու Չարդա կոչվող հանդամասի կեսը, Ղարաղաջներ և Աղգոռնի կոչվող հան-

73 Թաղամաս Երևանում:

74 Գյուղ Արարատի մարզում: 1945 թ. վերանվանվել է Արևշատ:

75 Թաղամաս Երևանում:

դամասերն ամբողջովին: Առաջին երկու և վերջին հանդամասերի մի զգալի մասը քարքարոտ էր, իսկ մի մասն էլ ծանր կավահող էր:

Չնայած ես ապրում էի փեսայիս ու քրոջս հետ, սակայն օրենքի ուժով ինձ ճանաչել էին որպես առանձին ընտանիք, այն էլ աճող ընտանիք ու հատկացրել տնամերձ և երկու շնչապատկան վարելահող: Իմ մեկ շնչապատկան հողամասը՝ մոտ 500 մ², գտնվում էր Ներքին Փամբուղարայում, որը քիչ քարքարոտ էր, իսկ մյուսը՝ Փշոտներում:

Ինչպես Ներքին Աղբաշում, այնպես էլ նոր հիմնադրված մեր Դիտակ գյուղում, որտեղ 1927 թ. մի քանի ընտանիքներ սկսեցին սեփական տներ կառուցել, այդ թվում՝ և քրոջս ամուսինը, ես՝ անչափահաս պատանիս, շարունակում էի ամռան վեց ամիսներին նախարապանությամբ զբաղվել, իսկ դպրոց գնալ ձմռան վեց ամիսներին:

Ներքին Դվինի դպրոցում

Ես և մեր գյուղացի մի քանի պատանիներ՝ Խաչատրյան Յուլակը, Սահակը, Նեճոնց Հովհաննեսը՝ նույն ինքը Ջոջոն, իզգիթցի Լուսիկի աղջիկ Այծեմնիկը, Քաչալ Խաչոն, հաճախում էինք Ներքին Դվինում⁷⁶ գտնվող 7-ամյա կոլեթիտ⁷⁷ դպրոց՝ ամեն օր անցնելով 16-17 կիլոմետր ճանապարհ: Չմռան ցուրտ ամիսներին և զարմանք, երբ վարարում էր Ազատ գետը⁷⁸, որի վրա կամուրջ չկար, ստիպված էինք մնալ դպրոցի կողմից հատկացված հանրակացարանում, որը գտնվում էր դպրոցի երկհարկանի շենքի 2-րդ հարկում:

Այնտեղ էինք մնում 14-15 հոգով՝ Ներքին ու Վերին⁷⁹ Աղբաշներից, Արփավարից⁸⁰ և մեր գյուղից նշածս դպրոցականներով:

Կենսագրությանս մեջ ու նույնիսկ ճակատագրիս վրա իրենց կնիքն են դրել այդ նույն դպրոցի երկրորդ հարկում ապրող ուսուցիչներից երկուսը՝ դպրոցի տնօրեն Լիպարիտ Հովհաննիսյանը և գյուղատնտեսության դասատու Եղիշե Փանյանը:

Լիպարիտ Հովհաննիսյանը կարսեցի էր՝ մոտ 24-25 տարեկան: Հայոց լեզվի և գրականության ուսուցիչն էր: Մեր գրական անդաստանի գործիչների մասին իմ ունեցած խիստ սահմանափակ գիտելիքներն ընդլայնելու հարցում նա իմ առաջին ուսուցիչն է եղել: Գրականության դասագրքերի սահ-

մաններից դուրս ինձ շատ բան է պատմել հայ գրողների մասին: Իսկ գլխավորն այն է, որ իմ տրամադրության տակ էր այն ժամանակ ինձ տիեզերքի մեծություն թվացող իր՝ 200-300 կտոր գրքերից բաղկացած գրադարանը: Ես կլանված էի Լիպարիտով և թաղվել էի նրա գրքերի մեջ: Մենք դարձանք մտերիմ ընկերներ: Մինչ Լիպարիտ հանդիպելս՝ հատկապես քառամյա դպրոցում սովորելիս, ես փայլում էի թվաբանությունից:

Արցախցի Եղիշե Փանյանը՝ մեր գյուղատնտեսության խիստ փոքրահասակ դասատուն, ամուսնացած էր իրենից ավելի բարձրահասակ և հաղթանդամ մի գերմանուհու հետ և ուներ մի չքնաղ աղջիկ՝ Օլյա անունով, որն ինձնից փոքր կլիներ 2-3 տարով: Գեղեցկուհի Օլյան առաջին աղջիկն էր, որն ինձ վրա ուշադրություն է դարձրել և ինձ հետ խաղացել է ինչպես հավասարը հավասարի հետ: Մենք 3 տարիների ընթացքում ոչ մի անգամ իրարից չխռովեցինք, ավելի ճիշտ, նա ցույց չտվեց իր առավելությունն այն իմաստով, որ ինքը, լինելով մտավորական ընտանիքի երեխա, իրեն թույլ է տալիս խաղալ մի տղայի հետ, որը դեռ ոչ վաղ անցյալում իր գոյությունը պահել, այժմ էլ պահում էր ուրիշների սեղանից ստացած փշրանքներով:

Օլյայենց ընտանիքն ապրում էր մեր սենյակահանրակացարանի մուտքի մեկ այլ սենյակում:

Մեր կոլեթիտ դպրոցը Ներքին Դվինում ուներ խաղողի այգի, հողամաս, որտեղ մենք՝ աշակերտներս, մրգատու ծառեր էինք տնկում, ջրում, պատվաստ կատարում: Գյուղատնտեսություն առարկան ընդգրկում էր այգեգործություն, պտղաբուծություն և բանջարաբուծություն ճյուղերը:

Եթե ես երախտապարտ եմ Լիպարիտին հայ գրականության ու արվեստի մշակներին այս կամ այն չափով ճանաչելու գործում, ապա Եղիշե Փանյանին ավելի քան պարտական եմ այն բանի համար, որ ինձ սովորեցրեց սիրել հողը՝ որպես պաշտամունքի առարկա, քանզի իմ տեսած առաջին ու վերջին մարդն էր, որի համար հող և աստված բառերը նույնանիշ էին: Պետք էր տեսնել, թե ինչպես էր ձեռքերով մաքրում տնկիների շուրջ աճած մոլախոտերը, փխրեցնում հողը, պատվաստում ծառերը: Նրա կատարած պատվաստը չէր կարող չկաշել, քանի որ այդ նուրբ աշխատանքը նա կատարում էր վերին աստիճանի խնամքով: Պատվաստի աշխատանքին մասնակցում էին բացառապես տղաներ: Ինքը՝ Փանյանը, ժամում կատարում էր 60-70 պատվաստ:

Ես հինգերորդ դասարանից աչքի ընկա և ապա ավարտական դասարանում դարձա նրա սիրելի աշակերտներից մեկը ոչ միայն պատվաստի, այլև այգեգործի, բանջարաբուծության և այլ մշակությունների գործում: Ես, զիր ու գրականությունից որոշ բաներ հասկանալուց զատ, դարձա հողապաշտ:

76 Գյուղ Արարատի մարզում: Հայտնի էր նաև Դվին Հայկական ձևով: 1950 թ. վերանվանվել է Դվին:

77 Կոլեկտիվ երիտասարդական դպրոց:

78 Արաքսի ձախ վտակն է: Կազմավորվում է Գողթ և Ոսկեջուր գետերի միախառնումից:

79 Գտնվում է Արարատի մարզում՝ Ազատ գետի աջ ափին՝ Արևշատ գյուղից 1 կմ հյուսիս-արևելք: Հայտնի էր նաև Խաբաբ Աղբաշ ձևով: 1949 թ. վերանվանվել է Աբովյան:

80 Գյուղ Արարատի մարզում: Հայտնի էր նաև Ալփավա ձևով: 1945 թ. վերանվանվել է Լուսակերտ, 1967 թ.-ին՝ Նշավան:

Հետագա կյանքս

1930 թ. Դիտակ գյուղում նույնպես սկսեցինք կոլտնտեսություն կազմել: Մեր տնտեսության առաջին ղեկավարը դարձավ Կարմիր բանակից 1-2 տարի առաջ զորացրված կոմունիստ, ինձնից մոտ 5-6 տարով մեծ ներքինադրաշցի Կողակենց Արմենը: Ես էլ կոմերիտական կազմակերպության քարտուղարը դարձա: Մեր հիմնադրած հանրային տնտեսությունը հիմքից զուրկ էր, ինչպես ավագի վրա կառուցած շենքը:

1932 թ. մեր գյուղի՝ Դիտակի ողջ բնակչությունն աշխատում էր կոլտնտեսությունում, բացառությամբ երկու մարդու: Դրանցից մեկն ապարանցի Ասատուրն էր, մյուսը՝ տիրացու Վարդանը: Ասոն, ինչպես կոչում էին գյուղացիները, իր երկու եղբայրների՝ Բարեղամի ու Գևորգի ընտանիքների հետ Ապարանից գաղթել էր Ներքին Ադրաշ: Նրանք մեզ պես ու մեզ հետ ուրիշի դռներում մշակություն էին անում ու մեզ հետ էլ հող ստացան մեր գյուղում: Բարեղամն ու Գևորգը չքավոր էին, մտան կոլտնտեսություն, իսկ Ասոն միջակ տնտեսության տեր էր, մի գույզ ձի ուներ, 3-4 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Տիրացու Վարդանը մոկսեցի էր⁸¹: Տիրացու մականունը վաստակել էր նրա համար, որ, չնայած իր՝ համարյա անգրագետ լինելուն, մի երկու շարական գիտեր, այն էլ խիստ աղավաղված և մոկաց բարբառին հարմարեցված: Նա ժամասացության ժամանակ ձայնակցել էր տերտերին նույնիսկ Ադրաշում մինչև հողաբաժանությունը ու եկեղեցու փակումը: Մարդ ու կին էին, անժառանգ և չքավոր: Վարդանի հագուստի վրա նրա կնոջ՝ Գուլեի կողմից արված կարկատաններն այնքան շատ էին, որ դժվար էր որոշել, թե դրանցից որն է այն հիմքը, որը սկզբում ծառայել է որպես հագուստ: Չնայած իր ծերությանը՝ նա հող ստացավ, զիջեց-ցերեկ աշխատում էր այդ հողի վրա, և նրա այգու պես այգի մեր գյուղում ոչ մեկս էլ չունեցավ, բայց երկար չվայելեց այգու բարիքները:

Մեր Դիտակում քիչ թե շատ գրագետ երկու մարդ կար, և նրանց էլ ընտրեցինք բրիգադիրներ: Դրանցից մեկը վանեցի Հայկն էր, որին ոչ թե Հայկ էին կոչում, այլ Հայկո, մյուսը՝ Թիմարի Ալյուր⁸² գյուղից գաղթած մեր Արմենակը:

Իմ ու Վարդանի հարաբերությունները հասել էին ընկերության մակարդակի, չնայած նա տարիքով չորս անգամ մեծ էր:

1932-1935 թվականներին ուսանելով Մանկավարժական տեխնիկումում՝ ամառվա արձակուրդներին աշխատում էի մեր հարազատ կոլտնտեսությունում ու շարունակում էի մնալ կոլտնտեսության

վարչության անդամ և այսպես թե այնպես ինչ-որ չափով կշիռ ունեի: Գյուղացիները հաճախ էին ինձ պատմում իրենց հուզող խնդիրների մասին:

Մանկավարժական տեխնիկումի երկրորդ կուրսում էի սովորում, այսինքն՝ 1933-1934 թվականներին, երբ մեր կուրս եկավ Գարեգինը: Նա Լեռնամետալուրգիական տեխնիկումից էր փոխադրվել մեր տեխնիկում: Այդ կուրսը դարձավ 33 հոգի՝ 16 տղա, 17 աղջիկ:

Ես 2-3 տարով մեծ էի մյուսներից: Տարիքային առավելությունն էր, թե՞ մի ուրիշ բան, չգիտեմ, բայց ինձ ընտրել էին կուրսի ավագ: Երկրորդ տարում ինձ ընտրեցին նաև մեր տեխնիկումի գրական թերթի խմբագիր, չնայած ես չափածոյով ոչ մի բոթովանք չէի տպել: Այդ ասպարեզում հաջող էին Լուսինեն, որին անվանում էինք նաև Փնթունի՝ նրա խիստ թափփվածության համար, մեր կապուտաչյա Սիլվա Կապուտիկյանը⁸³ և ուրիշներ:

Գարեգինը չէր հանդուրժում իմ, այսպես ասած, գերիշխանությունը թե՛ կուրսում և թե՛ հասկապես նրա գրական թոթովանքները մեր գրական թերթում չտպելու համար: Ինչևէ, դա տևեց մինչև երրորդ կուրս փոխադրվելը: 1934-1935 թվականներին, երբ սովորում էինք 3-րդ կուրսում, մեկընդմիջտ դարձավ իմ ընկերը:

Տեխնիկումն ավարտելիս ես խիստ հյուծված էի, ուստի չհետաքրքրվելով նշանակման հարցով՝ սար գնացի, որտեղ գտնվում էր մեր կոլտնտեսության ֆերման, իսկ քույրս իրենց, ավելի ճիշտ մեր ունեցած մեկ կովով ու մի քանի ոչխարով սար էր բարձրացել և աշխատում էր ֆերմայում:

Մարում անցկացրած 2-3 ամսվա ընթացքում վերականգնվեց իմ առողջությունը, սակայն քաղաք վերադառնալուն պես ես բանակ զորակոչվեցի: Ինձ և ինձ պես մի քանի տասնյակների՝ զինկոմիսարիատ կանչելն ու զորամիավորումներ ուղարկելը տեղի ունեցան մեկ օրում, որն ինձ համար անսպասելի էր: Հենց նույն օրն էլ հասանք զորամաս, որը Հայկական դիվիզիայի 476 առանձին կապի գումարտակն էր:

* * *

Ես եկել եմ այն համոզման, որ հայերիս ճակատագիրն արյունոտ զոհասեղանին դնելու հարցում արևմուտքի և արևելքի տիրողներից ոչ պակաս, եթե ոչ ավելի, հանցավոր են ռուս տիրակալները:

Հանգել եմ նաև այն եզրակացության, որ եթե հայերը թուրքերին վերաբերվեին այնպես, ինչպես ռուսներին, եթե ոչ միայն օգտակար էլ չլինեին, այլև նույնիսկ չխանգարեին և չեզոք դիրք բռնեին թուրքերի նկատմամբ, թերևս Խորհրդային Հայաստանի ներկա տարածքի մեջ մտներ Հայաստանի ոչ թե մեկ տասներորդ, այլ մեկ երրորդ կամ մեկ չորրորդ մասը:

81 Մոկս գավառը գտնվում է Վանի նահանգում:

82 Հայաբնակ գյուղ Թիմար գավառում՝ գավառանիստ Ջանիկից 54,5 կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Ալաքոյ (Alaköy):

83 Անվանի հայ բանաստեղծուհի (1919-2006):



Սարգիս Ավետիսյանը սիրելի թոռնիկի՝ Արամի հետ (1980 թ.)



Սարգիս Ավետիսյանը և Արևիկ Մարգարյանը որդու՝ Ազատի ընտանիքի հետ (1990 թ.)

Հենց այժմ էլ՝ խորհրդային կարգերի օրոք, երբ մեր նշանավոր մարդկանցից մեկն ու մեկը փորձում է այս կամ այն առիթով շոշափել ռուսական կայսրության թույլ տված սխալները, անճշտությունները ու հայերիս իրավունքների ոտնահարումը և որոշ պահանջների առաջադրումը, դիտվում է որպես հակապետական արարք:

Արյան ու ավերի կողմնակից չեմ և ամբողջ հոգով ու սրտով ցանկանում եմ, որ մեր հողագնդի բոլոր ազգերը հավասարապես օգտվեն հողագնդի ընձեռած բարիքներից, վերջ տրվեն պատերազմների, սակայն մեծերի կողմից թող չտոնահարվեն փոքրերի՝ փոքր կամ մեծ հայրենիքներն ու հայրենիքի գաղափարը:

Գտնում եմ, որ խորհրդային պետական քաղաքականությունն ավելի կշահեր, եթե 30 հազար քառակուսի կիլոմետրի դիմաց Խորհրդային Հայաստանի տարածքը լիներ գոնե իր նախկին տարածքի կեսի չափ՝ 100-150 հազար քառակուսի կիլոմետր, և

ունենար 7-8 միլիոն բնակչություն, թեկուզ այնտեղ հայերի հետ միասին ապրեին քուրդ և տաճիկ, ռուս ու թաթար:

Քաջ գիտեմ, որ, ինչպես ընկերս է ասում, իմ այս մրոտումները եթե ընկնեն քծնողների ձեռքը, որոնք քիչ չեն, կարող են ինձ մեղադրել «իզմերից» շովինիզմ կոչվածի մեջ:

Ես սիրում եմ Խորհրդային Հայաստանը, բայց և այնպես սիրում եմ և իմ հայրենիքը և չեմ հաշտվում այն մտքի հետ, որ մենք ոչ մի հողի պահանջ չունենք ոչ մեկից: Գեղեցիկ է ասել Շիրազը.

Մասի՛ս, Մասի՛ս, ա՛խ, Մասի՛ս,
Մարս դարձրին դաղ Մասիս,
Սիրտս վրեղ այսքան տաք,
Եվ դու այսքան պաղ Մասիս:

Մասիսից հետո երկրորդ մեծ գերին Սիփանն է, երրորդը Վանա ծովակն է...



Սարգիս և Մարիամ Ավետիսյանների տապանաքարերը Դիտակ գյուղի գերեզմանոցում



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՔԻԱՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1904 -1984)

Համառոտ կենսագրություն

Հովհաննես Սուքիասի Հովհաննիսյանը ծնվել է մոտավորապես 1904 թ. Էրզրումի նահանգի Բասեն գավառի Արունագրակ (Արջարակ) գյուղում: 1912-1914 թթ. սովորում է գյուղի դպրոցում:

1914 թ. հայրը՝ որպես թարգմանիչ, ռուսական զորքերի հետ հասնում է Հասանդալա և սպանվում արդեն գրավված քաղաքում: Գյուղի կոտորածի ժամանակ նահատակվում են մայրը, երկու քույրերն ու վեց եղբայրները: Հովհաննեսն ու քույրերից մեկը փրկվում են Սեբաստացի Մուրադի շնորհիվ: Շրջակա գյուղերի բնակիչները Մուրադի հեծելազորով մի կերպ հազիվ հասնում են ռուսաց սահմանամերձ Ներքին Բասենի Բաշգեղ:

1917 թ. գաղթականների հետ քույր ու եղբայր անցնում են Սարիղամիշ, Կարս, Կարսի հարավային Բերնա գյուղ, Ալեքսանդրապոլ, Դիրաքլար, Մեդիքլու, Սպիտակ, Դշլաղ, Ղարաքիլիսա, Համզաչիման, Դիլիջան: Մոտ վեց ամիս բնակվում են Էֆենդի գյուղում:

1918 թ. աշնանը քույր ու եղբայր, բաժանվելով Թարգոյենց ընտանիքից, հաստատվում են Քանաքեռում: 1919 թ. գարնանը հասնում են Ալեքսանդրապոլ:

Մի տարի բնակվելով Ալեքսանդրապոլում՝ վերադարձող գաղթականների հետ քույր ու եղբայր վերջապես հասնում են Սարիղամիշ: Հովհաննեսը զինվորագրվում է և ընդգրկվում 4-րդ գնդի 5-րդ վաշտին կից կամավորական խմբում: Մասնակցում է Սարիղամիշի շրջակայքում մղվող բազմաթիվ մարտերի:

Մինչև 1920 թ. բազում ճակատամարտերի մասնակից էր: Հայոց զորքի հետ նահանջում է և հասնում Արևելյան Հայաստան: Մծնկերտում բաժանվում է քրոջից, քույրը մյուս գաղթականների հետ հասնում է Շոռլու գյուղ, որտեղ էլ Հովհաննեսը նրան տեսնում է վերջին անգամ: Քույրը մահանում է Երևանում 1921 թ.:

1922 թ. գործուղման է մեկնում Բաքու՝ հանքահորերում աշխատելու նպատակով: 1930 թ. հաստատվում է Խորհրդային Հայաստանում և մեկ տարի աշխատում Մեղրու շրջանում:

1931 թ. մեկնում է Թիֆլիս՝ սովորելու: Մեկ տարվա ֆինանսական դասընթացներն ավարտելուց հետո՝ 1932 թ., վերադառնում է Երևան, ՀԿԿ Կենտկոմի ուղեգրով նշանակվում է Հոկտեմբերյանի բանկի կառավարիչ մինչև 1934 թ.:

1934 թ. գործուղվում է Լենինգրադ՝ սովորելու: Ավարտելուց հետո Երևանի Կենտկոմի ուղեգրով նշանակվում է Ստեփանավանի և Կալինինոյի միացյալ շրջանային բանկի կառավարիչ:

1946 թ. նշանակվում է Երևանի Ստալինյան շրջանի Ներգաղթի կոմիտեի նախագահ:

1959 թ. Ստեփանավանից Կենտկոմի միջոցով տեղափոխվում է Երևան և նշանակվում բամբակի սերմնաբուծական գրասենյակի պետ:

1960-ական թթ. սկզբին Մեծ եղեռնին զոհ գնացած իր գերդաստանի հիշատակին կերտում է տուֆակերտ մի հուշարձան և կանգնեցնում Երևան քաղաքի Չեյրուն քաղամասի գերեզմանոցում:

Հովհաննես Հովհաննիսյանը վախճանվել է 1984 թ. Երևանում և ամփոփվել Չեյրունի գերեզմանոցում:

ԿՅԱՆՔԻՍ ՀՈՐՉԱՆՈՒՏՆԵՐՈՒՄ

Նախքան կյանքիս էությանն անցնելն անհրաժեշտ եմ համարում ընթերցողին ծանոթացնել հայկական այն երկրամասին, որտեղ ծնվել եմ:

Ծննդավայրս է Հայկական բարձրավանդակի Կարնո (Էրզրում) նահանգի Բասեն գավառի Ալիճագրաք գյուղը¹:

Էրզրումի նահանգ

Նահանգը հյուսիսից սահմանակից է Տրապիզոնին, արևելքից՝ Կարսի մարզին, ծայր արևելքից՝ Բայազետի գավառով՝ Պարսկաստանին, արևմուտքից՝ Սեբաստիային, հարավ-արևմուտքից՝ Խարբերդին, հարավից՝ Բաղեշին, հարավ-արևելքից՝ Վանին:

Բյուրակնյա սառնորակ աղբյուրներից սկիզբ է առնում մայր Արաքսը: Հոսում է դեպի հյուսիս՝ հասնելով Բասեն գավառ: Ծեղքելով Վերին Բասենի Յաղան² և Քրդաբաս³ գյուղերը՝ անցնում է Կամրջագյուղի⁴ մոտով և հոսում դեպի արևելք: Անցնելով Վերին Բասենի հիասքանչ տարածությունը՝ մխրճվում է Ներքին Բասենի լեռնային խորխորատները, կիսում գեղեցիկ Կաղզվանը և հասնում Արարատյան դաշտ:

Ահա այդ շքեղ երկրի որդին եմ ես:

Կարին քաղաքը

Կարին քաղաքի արևելքով ձգվում է Ուղտի պարանոց (Դավաբոյնի) լեռնաշղթան, իսկ արևմտյան և հյուսիսային կողմերում տարածվում է Օվալի հարթավայրը: Օվալի ամենամեծ գյուղը Կանն է⁵:

Օվալի արևմտյան կողմում Իլիջայի⁶ ջերմուկն է, որը հռչակված է բուժիչ հատկություններով: Ամառվա ընթացքում ջերմուկ են ժամանում երկրի բոլոր կողմերից գլխավորապես հայեր, զանազան հիվանդություններով տառապողները, որոնք իրենց հիվանդությունները թողնում են Իլիջայի ջրերում և առողջ վերադառնում իրենց տները:

Օվան շրջապատող արևմտյան լեռներով ճանապարհը թեքվում է դեպի Մամախաթուն⁷, որը Կարինից ցած է: Մամախաթունը գտնվում է Եփրատի ափին:

Կարինը պաշտպանության տեսակետից ռազմական մեծ նշանակություն ունի իր բնական ամրություններով, որոնց վրա կառուցել են բերդեր: Քաղաքը շրջապատված է մինչև 10 մ բարձրությամբ արհեստական պարիսպներով, որոնք դրսի կողմից պատնեշված են հաստ հողաթմբերով, իսկ ներսի կողմից շարված են սրբատաշ քարերով:

Քաղաքն ունի 4 դուռ, արևելքից՝ Կարսա դուռը, հարավից՝ Վանա դուռը, արևմուտքից՝ Երզնկայի դուռը, հյուսիսից՝ Տրապիզոնի դուռը:

Դռների ներսի կողմից քաղաքի պաշտպանության համար կառուցված են զորանոցներ: Այդ բոլոր ամրությունները կառուցվել են մեր նախահայրերի կողմից:

Կարնո քաղաքի շենքերը միապաղաղ են՝ առանց ճարտարապետական ձևավորման: Կառուցված են մեկ-երկու հարկանի շենքեր: Ընդհանրապես ամբողջ մահմեդական աշխարհում տարածված է արաբական ճարտարապետությունը. ուր էլ գնաս, կհանդիպես արաբական մինարեթների:

Փողոցները նեղ և ծուռուծուռ են:

Միայն քաղաքի արևելյան մասում են կառուցված հայկական ճարտարապետության վեհաշուք կոթողները, ինչպիսիք են՝ հայկական հրաշակերտ եկեղեցիները, Մանասարյան վարժարանը: Բացի դրանցից՝ կառուցվել են նաև այլ պետությունների դեսպանատները: Նշված շենքերը շրջափակել են լայնահուն փողոցների երկու կողմերը, որոնք գտնվում էին հայկական մասում: Նազիկ չարսը⁸ փողոցը Կարնո նահանգի փառքն էր:

1 Մինչև 1915 թ. հայերի ցեղասպանությունը գոտ հայաբնակ գյուղ էր Էրզրումի նահանգի Վերին Բասեն գավառում: Անվանվել է նաև Ալիճագրաք, Արջարակ, Արուճագրակ: Պաշտոնապես վերանվանվել է Ալիչեյրեք (Aliçeyrek):

2 Յաղան (Աղան, Եղան, Ճաղան) հայաբնակ գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում: Չի անվանափոխվել և այժմ էլ կոչվում է Յաղան (Yağan):

3 Քրդաբաս (Քիրդաբաս, Քրդաբագ) գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ Հասանդալայից հարավ-արևելք: Պաշտոնապես վերանվանվել է Քիյիքոնակ (Kiyikonak):

4 Մինչև 1915 թ. հայերի ցեղասպանությունը գոտ հայաբնակ Կամրջագյուղը (Վաղարշավան) գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ Հասանդալայից 17 կմ արևելք: Վերանվանվել է Քյոփրոյոքյոյ (Köprüköy): Վաղարշավանի սրբատաշ կարմիր տուֆից կառուցված Հովվի 7 թիչքանի կամուրջը գտնվում է գյուղի հարավարևելյան կողմում՝ Արաքս և Մուրց գետերի միախառնման վայրի մոտ:

5 Կան հայաբնակ գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Էրզրում գավառում՝ Էրզրում քաղաքից 4 կմ հյուսիս: Պաշտոնապես վերանվանվել է Դադաշ (Dadaş) :

6 Իլիջա գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում՝ Էրզրում քաղաքից 16 կմ հյուսիս-արևմուտք: Չի անվանափոխվել:

7 Մամախաթունը (Դերջան) Էրզրումի նահանգի կենտրոնական գավառներից էր:

8 Այս փողոցը Նազիկ-Չարսու անվամբ հիշվում է 1878 թ. (Յրիցեան Ա., Մի երես Կարնոյ նորագոյն պատմությունից, «Փորձ», 1879, էջ 195):

Քաղաքին ծանոթանալու համար իմ սիրելի հայրիկի հետ մի օր եղանք թուրքական մասում, որտեղ ձգվում էին նեղ, ծուռումուռ, կեղտոտ փողոցները: Բացասական իմաստով ավելի տպավորիչ էր այն փողոցը, որին թուրքերն առանց խղճի խայթ զգալու, առանց ամոթանքի, լրբաբար անվանել են Գ-ավուր բողան⁹: Այսինքն՝ քրիստոնյային գազանի նման հռչակել են, և դա դեռ բավական չէ, փողոցի անունն էլ դրել են Գ-ավուր բողան¹⁰:

Երբ սիրելի հայրիկիս հետ, որի քաղցր խնամքը կոտորածի պատճառով շատ քիչ վայելեցի, սայլով անցնում էի Գ-ավուր բողան փողոցով, բնակիչները գազանային հայացքով էին մեզ նայում և մտովի հռչակում: Գազանային նման հայացքներ ինձ հանդիպել են կոտորածի ժամանակ:

Կարնո քաղաքի ջուրը և շուկաները

Կարնո քաղաքը Երևանի նման առատ է սառնորակ, քաղցրահամ աղբյուրներով: Այդ սառնորակ ջուրը քաղաքի հարավային լեռնաշղթայից մեր պապերը բերել են թրծված կավից պատրաստված խողովակներով: Բոլոր փողոցներով անցկացված են ջրատար խողովակներ, և ամեն մի տան դռան առջև կանգնեցված է աղբյուրի ծորակը, որի վրա ամրացված է սպիտակ պղնձի թասը, և գիշեր-ցերեկ ծորակով հոսում է ջուրը:

Իմ մանկական հիշողության մեջ տպավորվել է Կարնո քաղաքի կիսածածկ շուկան՝ պարսպված ջրավազաններով: Դրանց չորս կողմը շարված են ջրի խողովակները, և այդ ջրացայտ աղբյուրներից շատրվանող ջրի ցայտերը խաչաձևում են իրար, իսկ արևի շողերը լճակների վրա ծիածան են կապում, և ստացվում է մի անկրկնելի բնական գեղեցկություն:

Հենց ջրավազանների շուրջն էին ամփոփված տարբեր տեսակի խանութներ և կրպակներ, խորտկարաններ, սրճարաններ և ամենակարևորը՝ հայկական խորովածի սրահը, որի խորովածի բուրմունքը դեռևս բավական հեռավորությունից մարդու ախորժակ էր գրգռում: Խորովածի պատրաստման ձևերն ինձ համար նորություն էին: Խորովածի համար նախօրոք պատրաստված հաստ շշերի ամեն ծայրն ամրացված էր անիվների կենտրոնին, և այդ շշերի վրա փաթաթված էր մի ամբողջ ոչխարի միս: Անիվների կենտրոնում վառվում էր կրակը: Խորոված անող մարդը պտտեցնում էր շիշը, կարմրած միսը դանակով խորովածից շերտ առ շերտ կտրտում և լցնում էր հատուկ ամանների մեջ, որտեղից մատուցողը հրամցնում էր հաճախորդներին:

րին, որոնք արդեն լեփ-լեցուն էին հայկական խորովածի սրահում: Իհարկե, բացառություն չէին կազմում թուրքերը:

Մի օր սիրելի հայրիկիս հետ զբաղեցրինք մի հարմար տեղ սեղանի շուրջը, որը գտնվում էր հայ մատուցողի ուշադրության կենտրոնում: Առանց հապաղելու մեր հայրենակիցը մեզ մատուցում էր հայկական համեղ խորովածը: Մենք՝ հայր ու որդի, բասենցու ախորժակով ուտում և պատվերը պատվերի հետևից էինք տալիս, այնքան համեղ էր: Հայ մատուցողն արագությամբ կարողանում էր խորովածի հետ միասին նաև զովացուցիչ և ոգելից խմիչքներ մատուցել: Չնայած թուրքերի կրոնը թույլ չէր տալիս նման խմիչքներ ըմպել, բայց նրանք գաղտագողի չարաշահում էին Մահմեդի պատվիրանը: Խորովածի համեմունքն առավել համեղություն էր տալիս: Այս ձևով պատրաստված խորովածը հայտնի էր Կարսի կամ Կարնո անունով:

Մեր պապերը խորոված էին պատրաստում նաև մեկ այլ ձևով: Բաց դաշտում՝ հողի մեջ, փոս էին փորում և ոչխարը տիկ հանում: Միսը լցնում էին տիկի մեջ և դնում նախօրոք փորված փոսը, հողով ծածկում, որից հետո կրակը վառում էին փոսի հողի վրա: Որոշ ժամանակ անց հողը մաքրում էին փոսի վրայից և հանում էին ոչխարի խորովածը:

Կարնեցիների զբաղմունքը

Հայերի մեծ մասը զբաղվում էր ուսումնառությամբ, արհեստներով և գյուղատնտեսությամբ, իսկ մնացած մասը՝ առևտրով, իսկ թուրքերը՝ գլխավորապես առևտրով, նաև գյուղատնտեսությամբ և հատկապես բոստանաբանջարաբուծությամբ: Մակայն թուրքերի զգալի մասն անգործության էր մատնված և թափառում էր խանութներում, վարում այլանդակ վարքագիծ:

Կարնեցիների տարազը

Հայ տղամարդիկ հագնվում էին հայկական և կիսատեղապական ձևով: Գլուխները ծածկում էին հայկական արաղչի կամ լայնեզր գլխարկով, երբեմն կրում էին ֆես: Հայ կանայք հագնում էին շրջագետ, բաճկոն, երեսին՝ կիսածածկ չիքիլաներ¹¹: Լայն և գեղեցիկ ճակատներին շարում էին ոսկիների շարանը, պարանոցներն օղակում էին թանկարժեք մարգարիտներով, ականջներին կրում էին օղեթ, մատներին՝ թանկագին քարերով մատանիներ:

Թուրք կանայք հագնվում էին հայ կանանց նման և չադրաներով ծածկում էին երեսները: Հագուստները նույնքան շռայլ էին, որքան հայերինը: Տարբերությունն այն էր, որ նրանք քաղաք դուրս գալիս չադրաներով էին երեսը ծածկում:

⁹ Կեավուր Բողանը՝ որպես թուրքական քաղամաս, հիշվում է նաև այլ ակնմատեսի հուշագրության մեջ (**Պապար-Չարդգ**, Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պեյրուք, 1957, էջ 70):

¹⁰ Բաղկացած է գլավուր (անհավատ) և բողան (խեղդել) բառերից, այսինքն՝ քրիստոնյաներին խեղդելու վայր:

¹¹ Մետաքսյա նուրբ քող, շղարշ, որ կանայք գցում էին գլխներին, և հասնում էր մինչև մեջքը:



ԿԱՐԻՆ. քաղաքի ընդհանուր տեսքը Ի դարի սկզբին

Բասեն գավառ

Բասենը բաժանված է երկու մասի՝ Ներքին և Վերին: Ներքին Բասենը գտնվում է ռուսաց Վերին Բասենը՝ թուրքական սահմանում:

Բասենն առատ երկիր է, այդ առատությանը չափ ու սահման չկա, անհաշիվ են խոշոր և մանր եղջերավոր անասունների հոտերը, ձիերի երամակները: Իզուր չէ, որ թուրքական կառավարությունն ասում է. «Բասեն գիրի ամբարըն օլսուն»¹²:

Դռնի կազակները զարմացել էին, թե ինչ հարուստ երկիր է. թուրքերը կրում են, մենք կրում ենք, բայց դարձյալ սար ու ձոր վխտում են անասունների հոտերով և ձիերի երամակներով, իսկ փողոցները, մարազները, հորերը լեփ-լեցուն են հացահատիկով ու այլ մթերքներով:

Վերին Բասեն գավառ

Վերին Բասեն գավառը սկիզբ է առնում Ներքին Բասենի սահմանից և հասնում մինչև Կարնո քաղաքի լեռնաշղթան:

Վերին Բասենի ամենագեղեցիկ սարը Բոցիկն է: Մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը երգ է գրել Բոցիկի մասին¹³:

12 Բասենի նման շտեմարանս լինեք:
 13 Այս բանաստեղծությունն Ավետիք Իսահակյանը նվիրել է իր ընկերոջ՝ Արցախի Քասանի գյուղում ծնված Եզոր Առստամյանի (Մենակ) հիշատակին, որը զոհվել է 1903 թ. Բասենի դաշտում: Բանաստեղծությունն ամբողջությամբ տե՛ս **Իսահակյան Ա.**, Հայրուկի երգեր, Երևան, 1990, էջ 86-87:

Բոցիկու սարին սև ամպն է չոքել
 Հովն է հեծեծում Բասենու դաշտում:

Գեղեցիկ է Բոցիկու սարը: Նրա գագաթից բոց է պոռթկում, դրա համար էլ կոչվում է Բոցիկու սար:

Բոցիկու սարն ունի նաև մի ճակատագրական պատմություն: Երբ քաջ Խանի¹⁴ խմբին չի հաջողվում հասնել Մասուն, նա ետ է դառնում, գալիս է Յուզվերան գյուղ¹⁵ և տանտիրոջը կարգադրում է, որ գնա Հասանդալա¹⁶ և մյուռիքին ասի, որ ջանֆիդայիները եկել են մեր գյուղը:

Խանը դա անում է այն նպատակով, որ թուրքերն առիք չփնտրեն և գյուղացիներին չվնասեն: Հասանդալայի դայմադանը (գայմագամը) հայտնում է Էրզրումի վալուն, այսինքն՝ անահնգապետին: Վալիի կարգադրությամբ զորք են ուղարկում

14 Խանը (Բարսեղ Թիրյաքյան) ծնվել է 1863 թ. Կեսարիայի Տերեվանք գյուղում: Մասնակցել է Խանասորի արշավանքին, որից հետո ստացել է Խան մականունը: Չոհվել է 1903 թ. սեպտեմբերին, երբ իր գլխավորած Կայծակ հեծյալ խումբը դեպի Մասուն գեներ փոխադրելիս Բասենի դաշտում կռվի է բռնվել թուրքական զորքի հետ (Խանի և իր Կայծակ խմբի զոհվելու վերաբերյալ մեկ այլ տարբերակ տե՛ս Յուզամատեան Հայ Յեղավոյիական Դաշնակցութեան. Ալբոմ-ատլաս, հ. Ա, Լոս-Անճելլոս, 1992, էջ 55, 114: Տե՛ս նաև Դաշնակցական պատանիին գիրքը, հ. Ա, Պեյրուք, 2003, էջ 264-268, 270-271):
 15 Յուզվերան հայաբնակ գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ Հասանդալայից 37 կմ արևելք: Պաշտոնապես վերանվանվել է Յուզյորեն (Yüzören):
 16 Հասանդալա գյուղաքաղաքը Էրզրումի նահանգի Բասեն գավառի կենտրոնն էր: Պաշտոնապես վերանվանվել է Փասինլեր (Pasinler):

Խանի վրա, կռիվը տևում է երեք օր ու գիշեր: Թուրքական զորքերը, ի վիճակի չլինելով ջլատել հայկական ուժերը, ստիպված թողնում են ուղարկում, սակայն դարձյալ Խանը մնում է անդրդվելի: Վալին ստիպված պատգամավոր է ուղարկում Խանի մոտ և հարցնում. «Ի՞նչ ես ուզում, ասա՛, միայն թե թո՛ղ մեր գյուղը ու հեռացի՛ր»:

Խանը պատասխանում է. «Գյուղի արևելյան կողմի զորքերը հեռացրո՛ւ»:

Փաշան կատարում է խանի պահանջը.

Լուսին չկար, մութ գիշերին
Մի խումբ կերթար արագ-արագ,
Տեսանք, որ քաջ Խանի խումբն էր,
Չինված էին բոլոր նրանք,
Լեն սուրերը քաշած էին,
Կտրիճ Խանը առաջ ընկած
Գնում էին դեպի Տաճկաց սահման,
Թռչում էին ինչպես կրակ¹⁷:

Խանը կեզիչերին իր տղաներով հեռանում է գյուղից արևելք՝ իր հետ տանելով միակ վիրավորին: Խանի քաշվելուց հետո գյուղացիներն իրենց սայլերով հավաքում են թուրք սպանված ասկյարների դիակները և թաղում:

Խանը, հեռանալով Յուզվերանից, գնում է դեպի Բոցիկու սարը և այնտեղ մի քանի օր մնալուց հետո շարժվում է դեպի Ռուսահայաստան:

Սահմանին դեռ չհասած՝ մեր գյուղից արևելք ճռասուն հայի գյուղն էր¹⁸, որի կեսը քրդեր էին:

Տղաները, չափազանց հոգնած լինելով, մտնում են ճռասուն գյուղի ներքևի մարգագետինների քաղած խոտերի խորամների¹⁹ մեջ, խոտը քաշում են վրաները և խոր քնում: Արդեն օրը լուսանում է, բայց հերոսները դեռևս քնած էին:

Քուրդ հովիվները ոչխարներն արածեցնելիս տեսնում են նրանց և հասկանում, որ դրանք ջանփիղայիններ են: Վազում են գյուղ և հայտնում տեսածի մասին: Քուրդ էլաբեդ Նինաբեկն իր խուլամներով²⁰ հարձակվում է քնած տղաների վրա, բոլորին կտտորում: Խանն արթնանում է, տեսնում՝ ոչ ոք չկա, ցատումով հարձակվում է առաջին հերթին Նինաբեկի վրա և նրան սրախողխող անում, հարձակվում է նաև մյուսների վրա, նրանց նույնպես սպանում: Բայց երբ հեծնում է իր սպիտակ նժույզը, որ արշավի դեպի Ռուսաստանի սահմանը, հետևից

17 Այս երգի մեկ այլ տարբերակ տե՛ս Ազգային յեղափոխական եւ ժողովրդային երգեր, Պէյրուք, 1987, էջ 133-134; նաև՝ Գաշնակցական պատանիին գիրքը, հ. Ա, էջ 272-273:

18 Ճռասուն (Ջեռասուն, Ջրասուն) հայաբնակ գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Բասենի գավառում՝ Խորասանից 20 կմ հարավ-արևելք: Պաշտոնապես վերանվանվել է Քիրքլար (Kirklar):

19 Քաղված ու չորացած խոտի փաթափված, կտրացված փոքրիկ դեզ, որոնցից երկուսը միացնելով՝ մի խորձ են կապում:

20 Շառա:

տեղացող գնդակների տարափից մահամերձ ընկնում է ձիուց: Հետո ճռասունի հայերը հավաքում են տղաների դիակները, թաղում եղբայրական գերեզմանոցում, Խանին էլ թաղում են հենց ճանապարհի եզրին, վրան էլ մի աննշան քար դնում:

Միրելի հայրիկս մի առիթով այդ կողմերն էր գնում ինձ հետ և այդ ժամանակ ցույց տվեց Խանի գերեզմանը:

Բասենի մյուս գեղեցիկ սարը Հնարն է: Գտնվում է Բոցիկից դեպի հյուսիս՝ Օկոմի²¹ գյուղաքաղաքի սահմանում: Օկոմին հայոց փառքի ժամանակ գեղեցիկ քաղաք է եղել: Լեռան մասին ժողովուրդը պարերգ ունի:

Վերին Բասենի քաղաքները

Բասենի գլխավոր քաղաքը Հասանդալան է, որը շրջապատված է համանուն լեռնաշղթայով: Մեր նախահայրերը քաղաքի պաշտպանության համար այդ լեռնաշղթայի զագաթներին կառուցել են ռազմական հենակետեր:

1914 թ. հայ զինվորները Հասանդալի մասին երգ էին հյուսել.

Հասանդալի բերդի լալեն
Մեռնի Նիկոլայի բալեն,
Յարս թողեց տանը լալեն,
Հասանդալեն, Հասանդալեն:

Հասանդալեն քար ու քռա,
Գյուլեն մեջը կզոզա,
Չեռքիս յարեն կմռմռա,
Հասանդալեն, Հասանդալեն:

Դիրքը մտա, տեղս թաց էր,
Վիրավոր եմ, վերքս բաց էր,
Միրած յարս տանը քնած էր,
Հասանդալեն, Հասանդալեն:

Դիրքը փորի, մտա յառը,
Թուրքը եկավ հայը խառը,
Ինչպես ինձ վրա կրակի իմ եղբայրը,
Հասանդալեն, Հասանդալեն²²:

Ներքին Բասեն

Ներքին Բասենից Կարին քաղաք գնալու համար պետք է կտրել-անցնել Վերին Բասենի հարթավայրը, Արաքսի աջ ափով մինչև Քյոփրիքյոյ, մինչև Կարնո լեռնաշղթա, որի աջակողմում Ղարղաքազարի սարն է: Գագաթը կոնաձև է և հարթ տարածություն ունի, որի վրա են սառնորակ աղ-

21 Օկոմի (Օգոմի) գյուղաքաղաքը գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ Հասանդալայից 6 կմ հյուսիս-արևելք: Պաշտոնապես վերանվանվել է Յուլյումյու (Üçümü):

22 «Հասանդալ» երգի մեկ այլ տարբերակ տե՛ս Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 343-344:



ԱՐՈՒՃԱԳՐԱԿ (ԱԼԻՃԱԳՐԱՔ, ԱՐՋԱՐԱԿ). Հովհաննես Սուքիասի Հովհաննիսյանի ծննդավայրը

բյուրները: Անառվա ընթացքում մեր գյուղերի մերձակա քրդական գյուղերը ոչխարի հոտերով, ձիերի երամակներով և խոշոր եղջերավոր անասուններով բարձրանում են Ղարղաբազար:

Ղարղաբազար սարի ձախակողմյան ճանապարհը գալիս-հասնում է Կարնո լեռնաշղթային, բարձրանում է և թեքվում դեպի գլխավայր ու հասնում Կարնո քաղաքի պարիսպներին, որտեղ կա մի փոքրիկ հարթ տարածություն: Այդտեղ են տեղավորվում գյուղերից եկած գյուղացիներն իրենց սայլերով ու լծկան անասուններով և հանգստանում սառնորակ աղբյուրների շուրջը, մինչև որ թույլտվություն ստանան քաղաք մուտք գործելու համար:

Ներքին Բասենի գեղեցիկ սարը Ալադաղն է, որի լանջերում փռված էին ալվան ծաղիկներ: Ալադաղի հովտում էր գտնվում Չանգլու²³ մեծ գյուղը՝ իր հիասքանչ տաճարով:

Մեր գյուղը

Մեր Ալիճագրաքը շրջապատում էին յոթ գյուղեր: Հյուսիս-արևելքից գյուղը սահմանակից էր Մալքորի²⁴ գյուղին: Ինչպես այս գյուղը, այնպես էլ քրդական և թուրքական բոլոր գյուղերը ժամանակին հայկական են եղել:

23 Չանգլու (Եղեգնամոր) հայաբնակ գյուղը գտնվում էր Կարսի մարզում՝ Կաղզվանից 10 կմ արևելք:

24 Մալքորի քրդաբնակ գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Ներքին Բասեն գավառում՝ Խորասան քաղաքից 14 կմ հյուսիս-արևելք:

Մալքորի գյուղը դարերի պատմություն ունի: Մի առասպել կա, իբր թե այդ գյուղի բնակիչներից մեկը սպանում է մի օձի, որը օձերի թագավորի կինն է լինում: Այդ պատճառով ամբողջ օձերն արշավում են այդ գյուղի վրա և հալածում են գյուղացիներին, և գյուղը դառնում է անմարդաբնակ:

Գյուղից դեպի հարավ-արևելք հարթավայրը հասնում է մինչև Արաքսի ձախ ափը: Նշված տարածության կենտրոնում կա մի բլուր, որն անվանում էին Գանձաբլուր: Բլրի վրա բնակվում էին երկու մեծ, կիսակարմիր օձեր, որոնց պատճառով քրդերը վախենում էին մոտենալ բլրին: Մեր գյուղացի Սիրունենց Գևորգը սպանեց բլրի այդ օձերից մեկին և ձիու վրա գցած՝ բերեց գյուղի կենտրոն, փռեց գետնին: Օձն այնքան երկար էր, որ գլուխը ձիու մի կողմից էր քարշ գալիս, պոչը՝ մյուս կողմից: Այդ օրվանից հետո մյուս օձն այլևս չերևաց:

Ի՞նչ ապացույց կա, որ այդ գյուղը օձերի կողմից է կործանվել: Մեր ժամանակ Մալքորի հանդերում շատ օձեր կային: Ես, որ օձ էի տեսնում, անպայման պետք է սպանեի, որից հետո սատկած օձի գլուխն անպայման պետք է մարմնից բաժանեի, առանձին հորեի, անունն էլ պետք է դնեի Մահմեդ:

Հյուսիսային կողմից մեր գյուղը սահմանակից էր քրդական Չիֆլիկ գյուղին, որն Արաքսի ձախ ափին էր: Արևմուտքից սահմանակից էր Վերին ու Ներքին Թարխոջա գյուղերին: Թարխոջայի կեսը հայ էր, կեսը՝ թուրք:

Մեր գյուղի հարավային կողմում հայկական Դելիբաբա գյուղն էր, հարավարևելյան կողմում՝

հայաբնակ Տոդին, արևելյան կողմում՝ քրդաբնակ Ախկերանը՝ փռված Արաքսի աջ ափին:

Մեր գյուղն արևելքից հարավ, հարավից արևմուտք շրջապատված է լեռներով: Արևելքից հարավ դեմ դիմաց հարավային կողմի լեռը կոչվում է Ղարաղուլ, իսկ նրա դիմացի՝ հյուսիսային կողմի լեռան անունը Սևքար է:

Ղարաղուլ են անվանում, քանի որ իր դիրքով, որպես պահակ (ղարաղուլ), հսկում է գյուղին: Գագաթը սլացիկ է և անմատչելի, իսկ սարավանջի կրծքի մասը մխրճված է ժայռի խորքը: Մեզ միայն հիացմունք ու զարմանք են պատճառում մեր նախնիների աննկուն, աննահանջ կամքն ու անսպառ եռանդը, քանի որ հաղթահարել են բոլոր տեսակի դժվարությունները և լեռան կրծքի ներսում խորանալով՝ պատռել են, բաժանել չորս մասից բաղկացած տաճարը: Նրա երեք մասը հավասար է հատակին, իսկ չորրորդը հատակից վերին հարկումն է: Վերևի հարկ բարձրանալու համար պատրաստված էր քարակույի աստիճաններ, որով բարձրանում էին երկրորդ հարկ: Այնտեղ էր թաղված Թագվոր սուրբ Խեչի մարմինը: Առաջին հարկի դռնից ներս մտնելով՝ աչքիդ առաջ բացվում է մի մեծ սրահ, որի աջ ու ձախ կողմերում փորված են երկու սենյակներ, իսկ այդ երկու սենյակների գագաթներին՝ խորաններ: Ուխտավորները մտնել վառելու համար չորեչոք բարձրանում էին, հասնում խորաններին, ուռքի էին կանգնում, աղոթում և իրենց բերած մկերները դնում էին խորանների մոտ:

Սևքար լեռը մեր գյուղից հեռու չէր՝ Ղարաղուլի դեմ դիմացը: Նրա հետ մի պատմություն է կապված: Ազատագրական շարժումների ժամանակ մի օր ջանֆիդայիները հավաքվում են Սևքար լեռան խորաններում: Նագար անունով մի ֆիդայու ուղարկում են գյուղ՝ ուտելիք բերելու: Այդ ժամանակ մեր գյուղում էին գտնվում թուրք ասկյարները: Նրանք գլխի են ընկնում, որ անձանոթը ֆիդայի է, բռնում են, տանջում, որ ֆիդայիների տեղը ցույց տա: Նագարին շատ են տանջում, բայց նա ոչինչ չի ասում: Վերջում պարանը զցում են վիզը, քարշ են տալիս Տափ ձորի հեղեղատով և խեղդում: Դրանից հետո մեր գյուղացիները նրա դիակը տանում, թաղում են գյուղի դիմացի սարում, վրան քար քաշում և քարի վրա գրում, թե ով է, ինչու է նահատակվել: Ես, երբ հասակ առա, տեսա այդ գերեզմանը:

Մեր գյուղի հյուսիսարևմտյան կողմում՝ հենց գյուղի դեմ դիմաց, ոչ բարձր մի սար կար, որին Պրասկոնդ էին ասում, որովհետև պրաս²⁵ շատ էր լինում: Գյուղացիները քաղում էին, թթու դնում: Այն տիսից ավելի լավն էր և պանրով լավաշի հետ շատ համեղ էր: Ես էլ շատ են կերել: Գառներն ու հոր-

թերը տանում էինք արածեցնելու, պրաս էինք քաղում և տավարջուղները²⁶ լցրած՝ տուն էինք գալիս: Այդ սարում խորխորատներ կային: Իջնելու հնարավորություն չկար, և շատ վտանգավոր էր: Պրասկոնդի արևելյան կողմից նավթ էր դուրս գալիս:

Ղարաղուլին կպած արևմտյան սարը ցածրադիր է, որի լեռնանցքով լայն ճանապարհ է բացված: Այն տանում է դեպի հայկական Դելիբաբա գյուղ: Մեր դաշտերի այս ճանապարհը պետական կենտրոնական ճանապարհ է:

Դելիբաբայից սկսած՝ ճանապարհը ձգվում է գետի ափի հոսանքով, որի երկու կողմերը շրջապատված են բարձր, գեղեցիկ լեռներով: Լեռնաճեղքվածքներից բացված այդ ճանապարհին տալիս են Քոփդուռ անունը:

Սևքարը դեպի արևմուտք դառնում է ցածրադիր և գալիս-հասնում է մինչև հողածածկով փոքրիկ սարահարթ, որի թիկունքից մեր գյուղից ճանապարհ է ձգվում դեպի դաշտերը: Այն անվանում են Քեշ ճանապարհ:

Նշված երկու ճանապարհներից բացի՝ կար նաև երրորդ ճանապարհը, որը կոչվում էր Բողազ: Այդ ճանապարհը մեր գյուղից սարավանջով ձգվում է դեպի արևմուտք, անցնում է սարի տակով (սարի միջով), որը ժայռոտ չէ, այլ տուֆակերտ է, կարմիր գույնի: Այդ ճանապարհը նույնպես տանում էր դեպի մեր դաշտերը և հասնում Վերին և Ներքին Թարխոջա գյուղեր:

Մեր գյուղի չորրորդ ճանապարհն անցնում է Պրասկոնդի լանջով և մեր դաշտից գնում, հասնում է Արաքսի ձախ ափին գտնվող Չիֆիկ գյուղ:

Հինգերորդ ճանապարհը, որը գնում է դեպի հյուսիս-արևելք, անցնում է հարթավայրով, այսինքն՝ մեր գյուղի միջով անցնող գետերին զուգընթաց և հասնում է Արաքսի ափը:

Գյուղի վեցերորդ ճանապարհը դեպի արևելք դարձյալ անցնում է սարահարթով, որին Արեքինի անունն են տալիս: Այն հասնում է Արաքսի ձախ ափին գտնվող Ախկերան գյուղ:

Մեր գյուղի յոթերորդ ճանապարհը Սևքար և Ղարաղուլ սարերի լեռնանցքի գետերի հոսանքով գնում, հասնում է մինչև հայկական Տոդի գյուղ:

Մեր գյուղի մոտ միանում են երկու գետեր: Մեկը գալիս է հարավից, մյուսը՝ հարավ-արևելքից: Հասնելով գյուղ՝ խառնվում են իրար ու գյուղը կիսելով Տկմ հեռավորությամբ Չափարենց չայիրներով²⁷ թափվում են Արաքսը: Հարավից հոսող գետը Քոփդոնից մեր գյուղ մուտք է գործում գյուղի վերևից:

Արևելքից գյուղ հոսող գետը կոչվում էր Չոչոնան, որտեղ մենք լողում էինք ուզած ժամանակ: Այդ գետի աջ ափին՝ Սևքար լեռան հյուսիս-արևելք ձգվող

25 Շուշանագիների կարգին պատկանող բանջարեղեն տիսի համով, տափակ տերևներով, որ օգտագործում են կերակուրների մեջ իբրև համեմ:

26 Կաշվից պայուսակ:

27 Մարգագետին:

սարի քարանձավի մեջ, կար հանքային տաք ջուր: Ջերմուկ էին ասում (այդ ջերմուկում ես ու հայրս շատ ենք լողացել): Դրա կողքին կար նաև թթու ջուր: Շատ էի սիրում հանքային ջուր խմել, իսկ մեր երկրում Արաքսի ավերին թթու ջրի աղբյուրներ շատ կային:

Մեր գյուղի դաշտերը

Մեր գյուղի դաշտերը շատ բերքառատ են: Բերքահավաքից հետո գյուղացիները գիշեր-ցերեկ կրում են բերքը դաշտերից, և այն չի վերջանում:

Դեպի մեր գյուղ Քոփոզնից հոսող գետերի երկու կողմերը հարթ են: Այդ տարածքը Ղարաղուլից դեպի Քոփոզու, իսկ Քոփոզնից մինչև Բողազ նշված սարերի միջև ընկած հարթության մեծ մասը բաժին է ընկնում Ղարաղուլ լեռանը, այսինքն՝ գետի աջ կողմից մինչև Ղարաղուլի լեռնալանջի սահմանը:

Ղարաղուլը և Սևբարը, երբ սկսում էին իրարից հեռանալ, աչքիդ առաջ բացվում էին հարթ տարածություններ և մարգագետիններ: Այդ հարթության վրա մեր Քեռանց չայրներն էին և գետափերին բուստանները, որտեղ լավ ձմերուկ, վարունգ և այլ բարիքներ էին աճում: Հորս հետ այդ բուստաններում շատ ենք վայելել թարմ վարունգ ու ձմերուկ: Գետափի վարունգը համեղ է լինում:

Բոստան չունեցողները մի երկու սազ կամ մի երկու հավ էին տանում, տալիս բոստանչուն, որն էլ ասում էր. «Գնացե՛ք, ինչքան կուզե՛ք, ինչ հարկավոր է՝ ձմերուկ, կաղամբ, հավաքե՛ք, տարե՛ք»: Այդ մարդիկ սայլը լիքը բարձում ու բերում էին իրենց ձմռան պաշարը:

Օգտակար հանածոներ

Մեր գյուղը հարուստ էր հանքային հանույթներով: Հենց արևելյան կողմի ընդերքում՝ ճանապարհի ուղղությամբ չորս կիլոմետր հեռավորության վրա, հեղեղների հետևանքով առաջացել է երկու մետր բարձրությամբ փլատակ: Եվ ի՞նչ անտրացիտ, ածուխ: Մեր գյուղացիները հասարակ գործիքներով, բահ ու փետատով²⁸ քանդում էին և բերում, ձմռանը վառում: Այնքան ուժեղ էր, որ թիթեղից վառարանը մի ձմեռ չէր դիմանում, կողերը ծակվում էին:

Գյուղի սուրբը

Մեր գյուղի Թագվոր սուրբ Խեչը հռչակավոր էր ոչ միայն Բասենում, այլև արևմտյան մի շարք գավառներում: Տոն օրերին բոլոր կողմերից գալիս էին ձիերով, սայլերով, ոտքով, որպեսզի մատաղացուներ բերեն Թագվոր սուրբ Խեչի համար: Որոշ տարածություն ծնկաչոք էին գնում, հասնելուն պես երեսները խաչակնքում էին և սրբի շեմը համբուրում, որից հետո ոտքի կանգնած մոտենում էին խո-

րաններից, մտներ էին վառում, խաչհամբույրներ գցում, նվերներով զարդարում խորանների շուրջը: Ջահերը, կանթեղները, մոմակալները տեղավորում էին խորանների ներսում, որից հետո բարձրանում էին երկրորդ հարկ, համբուրում սուրբ Խեչի գերեզմանը, համապատասխան նվերներով զարդարում, կրկին ու կրկին աղոթում և խնդրում էին Թագվոր սուրբ Խեչին, որ իրենց մուրազին հասցնի:

Աղոթքի ու նվիրատվության արարողությունը կատարելուց հետո ուխտավորները մատաղացու երիցները, ոչխարները և այլ անասուններ ու թռչուններ բերում էին Թագվոր սուրբ Խեչի դռան մոտ և մատաղ անում: Այնուհետև պատրաստի կրակի վրա խաչլամա, խորոված էին պատրաստում, սփռոցների վրա փռում հայկական անուշահամ լավաշը, խումբ-խումբ դասավորվում և սկսում էին բաղձալի կերուխումը՝ թնդացնելով դիոլ-գուռնան, պարելով հայկական ավանդական մարտական քուչարին, որի ժամանակ պարողների դուփյուններից թնդում էր գետինը, իսկ շրջակա լեռներն արձագանքում էին: Հարսներն ու աղջիկներն էլ իրենց գույնզգույն զգեստներով ալ ու ալվանի էին տալիս ողջ տարածքով մեկ, և նրանց գեղեցկությունը և շքեղությունն առավել էին շքեղացնում շրջակայքը:

Կերուխումից հետո ուխտավոր հանդիսատեսին ուրախացնելու այլ բան էր սպասվում: Սկսվում էր ամենահետաքրքիրը՝ ձիարշավը: Տղաները բաժանվում էին երկու խմբի՝ ութ ձիավոր մի կողմում, ութը՝ մյուս, պատերազմողների մեծ մասնակներով սկսում էին թափով հարվածել իրար: Երբեմն էլ նժույգների վրայից սկսում էին իրար քաշքշել, թե ով ավելի ուժեղ կերպով մյուսին կկարողանա ձիուց ցած բերել ու հաղթանակել:

Եվ այդ ամենը՝ թե՛ պարը, և՛ թե՛ ձիարշավը, թե՛ կերուխումը, շարունակվում էր մինչև ուշ երեկո: Նման տոնախմբություններին՝ որպես մեր տոհմակից բարեկամ, իր ընտանիքով և եղբայրներով մասնակցում էր նաև Ռաշիդ բեկը:

Մեր գյուղացիները

Մեր գյուղացիները հայտնի էին իրենց քաջագործություններով: Պարսիկների, սելջուկների արշավանքների ժամանակ այնքան տարածված էին մեր պապերի սխրագործությունները, որ թշնամիները սարսափել են մեր գյուղի սահմանները մտնելուց:

Հայտնի էին Ղազարը և Գուրգենը: Մի անգամ, երբ ուզում էին Արաքսի կամրջով անցնել, գորավարի ձին կանգնում է կամրջի ծայրին և տեղից չի շարժվում, իսկ կամրջի երկու ծայրերից անվրեպ շառաչում են Գուրգենի և Ղազարի համազարկերը՝ գետին տապալելով թիկնապահներին և զինվորներին: Չորքը, այդ տեսնելով, խուճապի է մատնվում և դիմում է փախուստի, իսկ Ղազարը և Գուրգենը սողաների հետ հետապնդում են նրանց: Այդ հաղ-

²⁸ Կացին, տապար, սակր:

թանակից հետո էլ ավելի է բարձրանում Ղազարի և Գուրգենի սարսափը թշնամիների շրջանում:

Ես տեսել եմ Արաքսի վրա կառուցված այդ կամուրջը, որին ժողովուրդը Կոտրած կամուրջ էր անվանում:

1914 թ. պատերազմի ժամանակ ռուսները մեր գյուղը գրավելուց հետո արդեն հասել էին Հասանդալա քաղաք: Բուժտրանսը միշտ գործի հետևից էր շարժվում, այդ պատճառով մեր գյուղի արևելյան կողմում՝ կալերից ներքև՝ հարթության վրա, տեղավորվել էին երկու անիվներով ձիասայլեր: Մայրապանների հագուստներից երևում էր, որ նրանք կան չեչեններ էին, կան էլ օտեր: Նրանք սկսեցին կալերից գողանալ գարի, ցորեն և այլն: Այդ տեսնելով՝ իմ քեռի Խաչոն մի առավոտ առանց գյուղացիներին իմաց տալու իր մտադրության մասին ուսին է առնում մի երկար գերան և շարժվում դեպի սայրապանները: Ես էլ իմ հասակակիցների հետ վազեցի քեռի Խաչոյի հետևից: Քեռի Խաչոն հասնելուն պես հսկա գերանը վրա է բերում առաջին հանդիպածին և նման ձևով իրար հետևից գետին փռում երրորդին, չորրորդին... Մյուսները դիմում են փախուստի, քեռի Խաչոն էլ կրնկակոխ հետապնդում է նրանց: Վազելիս քամին վերև էր բարձրացնում նրանց հագուստները, իսկ նման երևույթը չտեսնված հրրճվանք ու ծիծաղ էր առաջացնում մեզ՝ չարածիներին համար: Մենք ծիծաղից ուղղակի մարում էինք և տեսնում, թե ինչպես էին նրանք սարսափից լեղապատառ լքում իրենց սայլերը և ձիերը:

Այդ հաղթանակից հետո քեռի Խաչոն վերադառնում է գյուղ առանց նրանց իրերին անգամ ձեռք տալու:

Մեր գյուղի քոխվա Իրիցանց Ղազոն ևս ճանաչված էր իր արարքներով:

Մի տարի երաշտ է լինում, գյուղացիները ո՛չ ուտելու հաց են ունենում և ո՛չ էլ ցանելու սերմ: Ղազոն ինքնագլուխ ջարդում է մեր գյուղի հացահատիկի թուրքական պահեստները և հացահատիկը բաժանում է գյուղացիներին թե՛ ուտելու և թե՛ ցանելու համար՝ ցուցակագրելով, թե որ գյուղացուն ինչքան է տվել: Երբ գալիս է բերքահավաքը, նախատեսված պայմանով հացահատիկը հավաքում և լցնում է պահեստները, որն ավելի էր, քան նախկինում:

Լուրը հասնում է Էրզրումի թուրք նահանգապետին: Ղազոյին տանում են մյուղիի մոտ, իսկ մյուղիին ուղարկում է վալիի մոտ: Նրա հարցերին Ղազոն չի պատասխանում՝ իրեն խուլ ձևացնելով: Նրա նպատակն էր, որ նստի փաշայի կողքին և պատասխանի նրա հարցերին: Փաշան հարց է տալիս Ղազոյին, թե ի՞նչ իրավունքով է բաժանել հացահատիկը: Դրանից հետո Ղազոն ինքն է փաշային հարց տալիս.

—Դուք երեխաներ ունե՞ք: Եթե ձեր ամբարները լեփ-լեցուն լինեն ուտելիքներով, դուք կարո՞ղ եք ձեր երեխաներին սոված թողնել:

Փաշան պատասխանում է.

—Ո՛չ, իհարկե, ո՛չ, ինչպե՞ս կարելի է երեխաներին սոված թողնել:

Ղազոն տալիս է հետևյալ պատասխանը.

—Եթե դուք ձեր երեխաներին սոված չեք թողնում, ուրեմն մարդիկ էլ թագավորի զավակներն են: Երբ թագավորի ամբարները հացահատիկով լեցուն են, ապա ինչպե՞ս կարելի է թագավորի երեխաները սոված մնան: Ես էլ՝ որպես թագավորի ավագ որդի, բաց եմ արել հացահատիկի ամբարները և բաժանել եմ իմ երեխաներին և ցուցակագրել եմ, որպեսզի գալիք բերքին հավելումով հավաքեմ և ավելցուկով լցնեմ իմ հոր պահեստները: Փաշան ապրած կենա, եթե ես հացահատիկը թողնեի փակ պահեստներում, ժողովուրդը պետք է սոված մնար, և զարնանացանը չպետք է կատարվեր: Ուրեմն ես իմ արարքով և՛ ժողովրդին եմ սովից փրկել, և՛ զարնանացան եմ կատարել և օգուտ տվել:

Փաշան լսում է Ղազոյին, գովում նրան և պարզակներով ուղարկում գյուղ:

Մեկ ուրիշ անգամ թուրք ավագակները մեր գյուղի լծկան և կթու անասունները քշում-տանում են: Գարնանացանի ժամանակ Ղազոն կարգադրում է, որ պետք է զարնանացանը կատարեն, իսկ գյուղացին լծկան չունեն, ինչո՞վ կատարեր: Ղազոն հրամայում է ընտանիքի անդամներին եզների փոխարեն լծել և դուրս գալ դաշտ: Գյուղացին ստիպված կատարում է Ղազոյի ասածը, հավաքում է տղաներին, հարսներին ու աղջիկներին, լծում է արորներին ու սկսում է զարնանացանը: Այդ լուրը հասնում է Բասենի գավառի թուրք գայմագամին: Նա, իմանալով եղելությունը, իսկույն միջոցներ է ձեռնարկում թուրք ավագակներին գտնելու և եզները գյուղացիներին հանձնելու համար, քանի որ նման երևույթը պետության համար վարկաբեկիչ էր:

Մեր տոհմը

Մեր տոհմական անվանումը եղել է Չախալենք: Այդ անունը եկել է դարերի խորքից: Հայտնի է, որ թուրք Մուրադ սուլթանի ժամանակ մեր Չախալ պապը թարխանի կոչում է ունեցել: Թարխան նշանակում է իշխան, ազնվական:

Մեր գյուղում այսպիսի դարձվածք կար, որ կապված էր մեր տոհմի առասպելի հետ: Ես շատ եմ լսել այն: Երբ մեկը հակառակվում էր, ասում էին՝ ի՞նչ է, հո Չախալենց սատանեն չե՞ս:

Չախալենց ազգը եղել է տոհմական բազմանդամ ընտանիք: Հետագայում պատերազմների պատճառով մեր պապերի հին տները կործանվում են, մեր տոհմի մեծ ընտանիքը ցրվում է տարբեր վայրեր: Դրա հետևանքով անգամ Ներքին Բասենի Բաշգեղ²⁹ գյուղում երկու ընտանիք կար:

²⁹ Բաշգեղ հայաբնակ գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ Խորասանից 38 կմ հյուսիս-արևելք (1878 թ.-ից հետո՝ Կարսի մարզի Կաղզվանի գավառում):

Իմ պապի եղբայր Նահապետի մասին

Քուրդ Ռաշիդ բեկի³⁰ հետ մեր տոհմի հարաբերությունները շատ խորն էին: Նրանք հայերի երեխաներին գրկել են և մկրտել, իսկ հայերն էլ նրանց հարսանիքների քավոր են եղել և այլն:

Ռաշիդ բեկը քրդերի ցեղապետն էր, և շրջապատի գյուղերի քրդերը ենթարկվել են նրան: Քրդական աշիրեթների մեջ ամենաազդեցիկն էր: Ուներ յոթ եղբայր: Նրանցից ամեն մեկն ուներ իր գյուղը, որտեղ բնակվում էին տվյալ եղբոր ազգականներն ու խուլամները:

Ռաշիդ բեկն ապրում էր Խանազահ³¹ գյուղում, որը տեղավորված էր Արաքսի ձախ ափից դեպի հյուսիս՝ ոչ բարձր լեռների սարալանջին, իսկ արևմուտքից հոսող գետափի նույն տարածքը և գետի ուղղությամբ իր փոքր եղբորն էր: Գյուղի անունն էր Խըզըր Էլազ³²: Նրանք նույնպես պաշտում էին սուրբ Սարգսին:

Երրորդ եղբոր գյուղը Սալքորին էր՝ նույն գետի ափին, չորրորդ եղբոր գյուղը դեպի հյուսիս ձգվող Սեգիբլյուն է³³, հինգերորդ եղբոր գյուղը՝ Ղարայվաղը³⁴:

Մեր տոհմի և Ռաշիդ բեկի տան անդամներն ազատ ելումուտ ունեին: Հովհաննես պապիս եղբայրը՝ Նահապետը, նրանց ընտանիքում հարգված էր: Ինչպես Հովհաննես պապս, այնպես էլ նրա փոքր եղբայրը բարձրահասակ, լայնաթիկունք, հաստաբազուկ, քաջազուն մի երիտասարդ էր: Նրա գեղեցկությանը սիրահարվում է Ռաշիդ բեկի գեղանի աղջիկը՝ Չեյնաբ խանումը: Օրերից մի օր Նահապետը փախցնում է Չեյնաբին: Նրանք բնակություն են հաստատում Թագվոր սուրբ Խեչում:

Կատաղում է քուրդը. ո՞վ է համարձակվել իր քթի տակից տանել իր ամենասիրուն և ամենասիրելի Չեյնաբին: Մտածում է, որ միայն Նահապետը կարող էր անել: Հրամայում է ձին թամբել, ու եղբայրների և ծառաների հետ հասնում է Ալիճագրաք: Պապս իր եղբայրների հետ սիրալիք ընդունելություն է ցույց տալիս Ռաշիդ բեկին և եղբայրներին:

րին: Նրանց այդ վերաբերմունքը քիչ թե շատ մեղմացնում է բեկի բարկությունը: Իմ պապերը ևս տեղյակ չեն լինում, թե Նահապետը ինչ է արել և հիմա որտեղ է: Մտնելով Նահապետի սենյակը՝ տեսնում են, որ նրա զենքն ու զրահը կախված են գորգի վրա: Ռաշիդ բեկը տատանվում է. չէ՞ որ Նահապետն առանց զենք ու զրահի չէր կարող աղջիկ փախցնել: Սակայն Նահապետը երկու զենք ու զրահ ուներ:

Հայտնի է դառնում, որ Չեյնաբ խանումը Նահապետի հետ բնակություն է հաստատել Թագվոր սուրբ Խեչում:

Բեկը հրամայում է շրջապատել Սուրբ խեչը և բռնությամբ դուրս բերել աղջկան: Սակայն միջամտում է բեկի կինը, շեյխի և տերտերի հետ գնում Սուրբ խեչ: Չեյնաբ խանումը ձեռքը դնում է սկզբում դուրանի, ապա ավետարանի վրա և երդվում է, որ Նահապետը իրեն չի փախցրել, այլ իր կամքով է գնացել Նահապետի հետ և ուզում է դառնալ նրա կինը: Նույն երդումը տալիս է նաև Նահապետը: Երդման արարողությունից հետո Ռաշիդ բեկին այլևս ոչինչ չի մնում և իր հայրական համբույրներով բարեմաղթում է նրանց ուրախ ու երջանիկ կյանք: Բեկի ցանկությամբ Նահապետի և Չեյնաբի պսակադրությունը կատարվում է Թագվոր սուրբ Խեչի տաճարում: Հետո վերադառնում են մեր պապենական տունը, և, ըստ սովորության, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում, որից հետո հաշտ ու համերաշխ շարունակվում են Ռաշիդ բեկի և Չախալենց բարեկամական հարաբերությունները:

Մեր ընտանիքը

Մեծ պապս էր Չախալը, մամս՝ Մարոն, իմ պապը՝ Հովհաննեսը, պապիս եղբայրը՝ Նահապետը, հայրս՝ Սուքիասը, մայրս՝ Թուխուն, քույրերս՝ Սահանդուխտը, Չարդարը, Դշխուհին, եղբայրներս՝ Նահապետը, Համբարը, Հրանտը, Վահանը, Պետրոսը, Սասունը:

Պապիս եղբայրը՝ Նահապետը, ունեցել է վեց երեխա: Մեծ տղայի անունը նույնպես Նահապետ էր, հետո գալիս էին Խաչոն, Վահանը, Պայծառը, Աղավնին, Արամը:

Իմ սիրելի Մարո մամս չափազանց բարի էր, արտաքինով և կեցվածքով՝ վեհ: Հարկ եղած ժամանակ օգնության է հասել, բուժել հիվանդներին, վիրավորներին, մահից փրկել է նաև ինձ: Նրա հետ հաշվի են նստել անգամ գյուղի մեծերը:

Հայրս՝ Սուքիասը, բարձրահասակ, թիկնեղ, լայնալանջ, հաստաբազուկ, պինդ ազդրերով մարդ էր, ինչպես ասում են, երբ քայլում էր, գետինն էր դրնում: Կերպարանքը դյուցազնական էր, հասակը՝ սլացիկ: Ուներ խորաթափանց հայացք, նայվածքն արծվային էր, և մարդիկ ակամայից խոնարհվում էին նրա վեհաշուք տեսքի առաջ: Խոսքը հատու էր ու վճռական, խստապահանջ էր բոլորի,

30 1880-ական թվականներին գրվել է, որ Խանազահ գյուղում «Ամենահարուստը և ազդեցիկը Նախորան ցեղի ղեկավար քուրդ Ռաշիդ բեկն է: Ծառայել է ռուսների մոտ է և ուներ մայրի կոչում» (բնագրում՝ «Очень богатый и влиятельный курд Решид-бек, глава рода Нахобан; был на русской службе; имел чин майора». **Колюбакин А.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. II, часть II, Тифлис, 1890, с. 24).

31 Խանազահ (Խանգե) քրդաբնակ գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ հեղինակի ծննդավայր Արուճագրակից 10 կմ հյուսիս:

32 Խըզըր Էլազ (Խըզըր Էլյաս) քրդաբնակ գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Բասեն գավառում՝ հեղինակի ծննդավայր Արուճագրակից 13 կմ հյուսիս-արևմուտք:

33 Սեգիբլյու (Սոգյուբլյու) գյուղը գտնվում է հեղինակի ծննդավայր Արուճագրակից 9 կմ հյուսիս-արևելք:

34 Ղարայվաղ գյուղի տեղադրությունը մեզ չի հաջողվել ճշտել, սակայն ակնհայտ է, որ հարևանակից էր նախորդ գյուղերին:

ինչպես նաև իր նկատմամբ: Հայրենասեր էր, ընկերների նկատմամբ ազնիվ ու անշահախնդիր էր, իսկ թշնամիների նկատմամբ՝ անզիջող:

Մայրս՝ Թուխուն, հորս համեմատ միջահասակ էր, բայց սլացիկ և նուրբ կազմվածքով: Ուներ գեղեցիկ և փարթամ վարսեր, որոնք էլ ավելի էին շուք տալիս սիրուն դեմքին: Աղեղնաձև սև հոնքերի տակից վառվում էին սև խոշոր աչքերը, նայվածքը գրավիչ էր ու թափանցիկ, հոգին՝ պարզ ու զուլալ: Չափազանց բարի էր, սիրալիր, ուներ կանացի հմայք: Արտաքին կեցվածքով կարծես նման էր հավերժահարսի:

Իմ քաղցր ու անուշ, հեզամազ քույրիկներ՝ Մահանդուխտ, Չարդար, Դշխուհի, դուք ձեր աստվածային կերպարանքով փոխարինում էիք երկնային հրեշտակներին, ձեր կաթավի քայլվածքով, հրապուրիչ նայվածքով նման էիք անմեղ աղավնիների:

Մեծ եղբայրս՝ Նահապետը, նույնպես բարձրահասակ էր, դյուցազնական կերպարանքով, սլացիկ հասակով, լայնաթիկունք, հաստաբազուկ, պինդ ազդրերով: Երբ գրում եմ այս տողերը, աչքիս առաջ հերթականությամբ կարծես շարված լինեն իմ եղբայրները՝ Նահապետը՝ իր խոհուն հայացքով, Հրանտը՝ իր հրացայտ, Համբարը՝ իր խորաթափանց, Վահանը՝ իր վահանակուռ աչքերով, որոնք նայողի վրա սարսափ էին ազդում: Պետրոսի աչքերի նայվածքը վեհացնում էր բոլորին, Մասունիկիս աչքերից կարծես թե հուր ու կրակ էր թափվում թրշնամու վրա: Այդպիսին էին իմ հզոր ու ապերջանիկ եղբայրները:

Մանկություն

Զգիտեմ ինչու, մանկուց միշտ հակված էի դեպի մեծերը: Ըստ սահմանված կարգի՝ փոքրերին իրավունք չէր վերապահվում, որ երեկոները օրայում նստեին մեծերի կողքին: Նրանք պետք է լինեին տանը կանանց և երեխաների հետ, սակայն ես պետք է մեծերի կողքին նստեի:

Մի անգամ հեղինակություն ունեցող մեծերի՝ Օլոյենց Կիկոյի և Դարբենց Մարտիրոսի կողքին նստած էի դրսում՝ մի բարձր թմբի վրա: Հանկարծ նստածս տեղը «օֆ-օֆ» բացականչեցի: Նրանք երկուսով շուռ եկան, ինձ նայեցին ու ասացին.

–Այ տղա, էդ դու ի՞նչ դարդ ունես, ու ծիծաղեցին: Երևի նախօրոք զգում էի, որ մանկությունս պետք է անցներ դառնությամբ:

Ինձանով շատ էին հետաքրքրվում թե՛ մեր ազգակիցները և թե՛ մեր հարևանները: Կարծես թե ես նրանց խոսակցության ու զբաղմունքի առարկան լինեի, անընդհատ խոսեցնում էին, և այդ բոլորից հիշողությանս մեջ մնացել են այս խոսքերը, որ ասում էին. «Այնքան չմահավան ես, տեսնենք՝ ինչ կլինես դու»:

Մի օր քրոջս հետ գնացել էի մայրիկիս հոր՝ մորական պապիս՝ Սկրտիչ աղայի և քեռուս գյուղը՝

Թարխոջա: Թուրքերը հայերի երեխաների հետ տարբեր խաղեր էին խաղում: Թուրքի աղջկան հարս էին անում, իսկ ինձ թագվոր՝ փեսա ու մեզ՝ երկուսիս մտցնում մեծ քրոջի տակ...

Ազդեցիկ էր Սկրտիչ աղան՝ իմ պապը: Նրա վեհաշուք հասակն այսօր էլ աչքիս առաջ է: Հագնում էր սև մահուդից կարված չուխա: Նրա ամեն մի խոսքը մի անվրեպ գնդակ էր իր ախոյանների համար: Մի օր Սկրտիչ աղայի եղբոր՝ Թաթոսի տղային՝ Մանուկին, թուրքերը քարհալած են անում: Մանուկը փոխանակ իրենց տուն գնա, իրենց տան մոտով փախչում է դեպի Սկրտիչ աղայի տուն, ցույց տալիս թուրքի տղաներին, որ հետապնդում էին իրեն: Սկրտիչ աղան դուրս է գալիս տան կտուրը և միայն երկու խոսք արտասանում: Դրանք մոզական ազդեցություն են գործում թուրք տղաների վրա, և նրանք իսկույն չքանում են:

Դեպի ազատագրական կենտրոն՝ Մասուն շտապող զորախմբերից մեկը, որը բաղկացած էր 12 հոգուց, պետք է ձիերին բարձած ոսկով, թղթադրամներով և այլ պաշարով հասներ, ապահովեր Մասունում հավաքված ուրիշ զորախմբերին: Երբ հասնում են Թարխոջա գյուղի հանդասահմանը, 12 հոգին իրենց ձիերով հավաքվում են մի ձորի մեջ հանգստանալու և հոգնած լինելով՝ քնում են: Կեսգիշերին արթնանում են և տեսնում, որ ձիերը չկան: Սկսում են փնտրել, հասնում են Թարխոջա, որպեսզի Սկրտիչ աղային տեղյակ պահեն դեպքի մասին և օգնություն խնդրեն:

Գիշերը փոխանակ Սկրտիչ աղայի տան երդիկին մոտենան, սխալմամբ մոտենում են Օսման աղայի երդիկին ու հայերեն կանչում են՝ Սկրտիչ աղա, արի՛, դուռը բաց արա: Գյուղի բոլոր թուրքերը հայերեն հասկանում էին, Օսման աղան գլխի է ընկնում, որ ջանֆիդայիներ են, և հայերեն պատասխանում է. «Հիմա կգամ, բաց կանեն դուռը»:

Այդ ժամանակ տներն իրար կպած էին, և մի տունը պատի միջի անցքով կապված էր հարևանի տան հետ: Օսման աղան բոլորին իմաց է տալիս, որ գյուղում հայտնվել են ջանֆիդայիներ...

Երբ դուռը բացելու պատասխանը ուշանում է, տղաները հասկանում են, որ իրենք Սկրտիչ աղայի տան կտուրի փոխարեն մոտեցել են թուրքի տանիքին: Նրանք շտապում են իրենց ընկերների մոտ և հայտնում, պատմում եղելությունը և որպեսզի ռուսական զենքը չընկնի թուրքերի ձեռքը, պայմանավորվում են, որ սպանվածի հրացանը կենդանի ընկերը ջարդուփշուր անի:

Թուրքական զորքի հետ վրա է հասնում նաև գյուղական խուժանը, և սկսվում է կռիվը՝ մի կողմում գերազանց ուժեր, իսկ մյուս կողմում՝ միայն տասներկու հոգի: Վերջին ֆիդային ինքնասպան է լինում, որպեսզի չընկնի թշնամու ձեռքը:

Այսօրվա նման հիշում եմ, երբ սիրելի Դշխուհի քրոջս հետ գնացել էի մորական պապիս՝

Թարխոջա գյուղ, որի բնակչության կեսը թուրք էր: Այդ գյուղի Օսման աղայի տղան, որպեսզի իմ սիրուն քույրիկին գաղտնագերեր, ջրի ճանապարհին փող ու քաղցրավենիք էր շաղ տալիս, որ քույրիկս ջրի գնալիս դրանք հավաքի: Իսկ դա կնշանակեր, որ քույրիկս համաձայն է... Բայց քույրս արհամարհում է, թքոտում, ոտքերով տրորում ու անցնում:

Օսման աղայի տղան, թուրքին հասուկ կեղտոտությամբ, իր նպատակին չհասնելուց հետո դիմում է ավելի ստոր միջոցի. գիշերը, երբ բոլորս քնած էինք, լսվում է քույրիկին ճշոցը, բոլորս վեր ենք թռչում: Թուրքին ո՞վ է տվել այդքան քաջասրտություն, որ կանգնի վտանգի դիմաց, նա արդեն չքացել էր, բայց ստոր արարքը մատնում էր նրան, որովհետև վախից ու սարսափից ֆեսն ընկել էր հենց քույրիկին անկողնու մոտ, դռներն էլ կրնկի վրա բաց էին: Նա իջել էր տանիքի երդիկից և նախօրոք բացել բոլոր դռները, որպեսզի քրոջս փախցնելու ժամանակ ճանապարհն ազատ լինի:

Առավոտ, երբ հարցը քննության առարկա էր դարձել, Օսման աղայի տղան գյուղից փախել էր:

Իմ սիրելի քրոջ հետ մի օր պետք է գնայինք գետի այն ափը: Երբ գնալու ժամանակ քույրիկս գետի վրայի կամրջով երևի արդեն անցել էր այն կողմը, իսկ ես դեռ կամրջի վրա եմ եղել, քուրդ համիդիները ձիերով անցնում են կամրջի վրայով: Ես շփոթվում եմ և ընկնում գետը, որտեղ և՛ խորն է լինում, և՛ քարքարոտ: Սուր քարերից մեկը լայն բացվածքով պատռում է իմ գլուխը (ճեղքվածքը հավասար էր 6 սմ-ի, լայնությունը՝ 1,5 սմ-ի): Իմ ընկնելու ժամանակ հորս քեռանց ջրաղացպանը տեսնում է, վազքով մտնում է գետը, ինձ արնաշաղախ հանում է ջրից: Իմ սիրելի Մարո մամս, որի գեղեցկությունը և բուժելու ունակությունը հայտնի էին բոլորին, բուժել է ինձ, բայց ես իմ սիրելի մամիս չեմ հիշում: Մինչև իմ մարդ ճանաչելը նա հեռացել է այս աշխարհից, բայց նրա բարի գործը՝ որպես հիշատակ, մնացել է երախտագետ մարդկանց սրտում:

Ես Արաքսի ափի ծնունդ եմ և շատ էի սիրում Արաքսում լողալ: Մի օր տղաներով գնացինք լողալու: Քանի որ փոքր էի, լողալ չգիտեի, և իմ խելքով ասացի. «Ձեռք ձեռքի բռնած ես առաջ կգնամ, հենց որ ջուրը հասնի կրծքիս, ետ կդառնանք»: Որպես առաջատար՝ առաջ շարժվեցի, բայց այդտեղ շատ խորն էր, և չիմացանք, թե ինչպես մեր սիրելի Արաքսը մեզ կլանեց: Չհասկացա, թե ինչպես դուրս եկա Արաքսի միջի կղզյակը: Եվ ի՞նչ տեսնեմ. նրանք սուզվում են ջրի մեջ և ելնում են ջրի երես, ջուրը բերաններից թափում դուրս, նորից սուզվում են ջրի մեջ ու ելնում ջրի երես:

Մեկ էլ մեր գյուղացիներից մեկը վազելով մտավ Արաքսը՝ գոռալով, թե տղաները խեղդվում են, ու լող տալով հասավ տղաներին, վերցնելով թևերի վրա՝ հանեց ափ, մի երկու անգամ նույնը կրկնեց և

ընկերներիս փրկեց խեղդվելուց: Եթե այդ մարդը չհասներ, տղաները պետք է խեղդվեին:

Այս դիպվածից հետո անցան տարիներ, լողալու համար այլևս Արաքսը չէինք մտնում, այլ նստում էինք գոմեշների վրա, պինդ բռնում կոտոշներից, փռվում էինք նրանց փարթամ լանջին և քշում էինք գետի մեջտեղը: Գոմեշները ջուր շատ են սիրում, մանավանդ ամռան շոգին, մենք էլ մեր ուզածի չափ լողում էինք գոմեշների հետ:

Գարնան անձրևների ժամանակ գետերը հոր-



2006 թ., երբ անցնում էինք Վաղարշավանի կամրջի վրայով տեսանք, թե Հովհաննես պապիս նկարագրած ձևով ինչպես էին լողում մերձակա գյուղերի քուրդ երեխաները միայն ոչ թե գոմեշների, այլ կովերի հետ (Ս. 4.):

դում էին, ելնում ավերից: Երբ Արաքսը հանդարտվում էր, ջուրը քաշվում էր ետ, ձկների վտառները մնում էին ավերից: Իսկ մենք հանում էինք շալվարներս, կապում փողքերը, հավաքում էինք ձկները, լցնում շալվարների մեջ և տուն բերում:

Մի օր գոմեշների մեջքին նստած՝ ձկներով լիքը եկա գյուղ: Երբ եղբայրներս՝ Նահապետը, Համբարը, Հրանտը, տեսան ձկների քանակությունը, ուրախացան, ինձ առան իրենց ձեռքերի վրա և վեր բարձրացրին իրենց հաղթ բազուկներով ու ասացին, թե՛ էս մեր պզտիկ եղբայրը շատ ճարպիկ տղա է լինելու, տեսե՛ք, հիմիկվանից մեզ կերակրում է: Իմ քաղցր ու անուշ մայրիկը լռքոն դրեց թոնիրը, կարմրացրեց, իսկ ճանառն (կարմրածուկ) ու կապուտը (կապտածուկ) այլ կերպ պատրաստեց: Մեղանին փռեց բասենցու՝ համով-հոտով և բուրավետ ցորենի լավաշը ու այլ խորտիկներ, և մենք երեք բուրիկներով և յոթ եղբայրներով մորս հետ միասին բուրեցիցիք սեղանի շուրջը: Մեկ էլ այդ ժամանակ ինչպես արև՝ հայրս ճառագեց ներս իր հաղթ կազմվածքով, հիասքանչ կերպարանքով, և նրա ահարկու, անհողողող ու շառաչուն ծիծաղը ուրախություն բերեց մեզ: Տեսնելով սեղանը՝ բացականչեց.

–Էս ի՞նչ առատ սեղան եք պատրաստել:

Իսկ մայրս մատնացույց արեց ինձ: Հայրս գուրգուրանքով առավ իր բազուկների մեջ ու սկսեց աջ ու ձախ համբույրներ քաղել ինձնից՝ ասելով, թե ինչ արժանի փոխարինող ունեն:

Ու բոլորս միասին սկսեցինք ախորժակով ճաշակել մայրիկիս պատրաստած համեղ ուտեստները:

Մանուկ ժամանակ շատ էի սիրում կռիվ-կռիվ խաղալ, հավաքվում էինք տղաներով, բաժանվում երկու մասի, սկսում էինք քարերով իրար հալածել կամ էլ վիճում էինք, թե ով կարող է սարն ի վեր վազ տալ և հաղթել:

Երբեմն էլ կազմակերպում էինք հողային խաղ, այսինքն՝ չորս հոգի մի կողմում, չորս հոգի մյուս կողմում փայտերը (քառակուսի կարճ կտրած փայտի կտորին հող էինք անվանում) աշխատում էինք դիպուկ մտցնել խցիկի մեջ:

Գայրոցում

Մի օր իմ սիրելի հայրը, ձեռքիցս բռնած, ինձ տարավ տոհմական դպրոցը, քանի որ պաշտոնական դպրոց չկար: Ես մինչև հիմա չեմ մոռացել հայրիկիս այդ ուսումնատենչ ձգտումը, որ այդ խավար աշխարհում մտածում էր իր երեխաների ուսման մասին:

Տոհմական այդ դպրոցը ոչ մի հարմարություն չուներ, ամեն մի դպրոցական նստելու հարմարանքը տանից էր բերում, իսկ հարմարություն չունեցողներն աթար էին բերում և նստում աթարի վրա:

Միմոն անունով մի տղա կար, շատ բթամիտ էր ու մեծագլուխ, անունը Դանչո էինք դրել: Ինձ էլ նման բան էր հարկավոր, որ չարություն անեի ու

ծաղրեի նրան: Միմոնը միգում էր տակը, աթարը խոնավանում էր, ու գարշահոտություն էր ընկնում սենյակով մեկ: Մի անգամ ընդմիջման ժամ էր, դասարանը դուրս էր եկել, ես էլ առիթից օգտվեցի, վերցրի աթարը ու լցրեցի Միմոնի գլխին, ծոծրակին: Դանչոն գոմշի նման գոռաց, ներս մտավ դասատուն, տեսավ ամեն ինչ և որպես պատիժ՝ ինձ երկու ժամ անկյուն կանգնեցրեց:

Ես շատ չար էի և անզիջող: Պետիկ անունով մի տղա կար, քավորիս քեռանց տղան էր, ինձանից մեծ էր, շատ գեր էր ու հաղթանդամ: Նրա հետ մի օր կռվեցինք: Շատ ուժեղ էր, ես պետք է ամբողջ աշակերտության առաջ հաղթվող ճանաչվեի՞... Բռնեցի ճկույթը և պինդ կծեցի: Նա ոռնոցը գցեց, և սա պատճառ եղավ, որ Պետիկն ինձ հետ այլևս չկռվի:

Գայրոցում ես ամենաընդունակ և ամենալավ սովորողն էի: Իմ սովորելու համբավը տարածվել էր գյուղով մեկ: Գյուղի մեծամեծերը իրար ասում էին, թե գնանք Սուքիասի տղա Հովհաննեսի դասը լսենք: Գալիս նստում էին և դասատուին ասում, որ ինձ դաս հարցնի: Ես ոտքի էի կանգնում և շատ համարձակ պատմում էի դասս, իսկ նրանք հիացմունքի խոսքեր և բարեմաղթանքներ էին ասում:

Երբ դասատուն դաս էր հարցնում, բոլոր աշակերտները ոտքի վրա պետք է շարք կանգնեին, որպեսզի դասատուն հերթականությամբ դաս հարցներ: Պատահում էր, որ դասը պատմելուց խուսափողները թաքուն անցնում էին այն կողմը, ով արդեն պատմել էր դասը, իսկ դասատուն չէր նկատում կամ էլ նկատում էր և չէր ուզում ուշադրություն դարձնել այդ անախորժ երևույթի վրա:

Վահան Փափագյանը ազգային գործիչ էր, շրջում էր Արևմտյան Հայաստանի նահանգներով, գավառներով և գյուղերով:

Գարունը նոր էր բացվել, եկավ մեր գյուղ: Նրա գալը հատկապես երեխաներիս համար արտակարգ ուրախացրեց և տպավորություն բողեց: Նա հետաքրքրվեց դպրոցով³⁵, առաջադեմ աշակերտներով, իր ծոցատետրում գրեց իմ ազգանունը և անունը: Երկու գիշեր մեր տանը հյուրընկալվեց, երբոր օրը բոլոր աշակերտները դասատուի ուղեկցությամբ Վահան Փափագյանին ճանապարհեցին մինչև պատմական Քոփդուրը: Այդ օրերը մեզ համար, մեր գյուղի համար արտասովոր օրեր էին: Նա շատ շքեղ ու վեհապանձ մարդ էր, կարծես ձուլված լիներ իր արաբական սպիտակ մժույզին:

Մենք նրան շուքով, հույզերով ու հույսերով ճանապարհեցինք:

Հաջորդ տարին լուր ստացվեց, որ Վահան Փափագյանը մեր գյուղում դպրոց կառուցելու համար ազգային միջոցներից գումար է հատկացրել: Այդ գումարով կառուցվեց երկու՝ արական և իգական

35 Վահան Փափագյանի (Կոմս) հուշագրություններում այս դրվագի մասին վկայություն չենք գտել:

բաժնից բաղկացած դպրոց: Տղաները պետք է սովորեին դպրոցի մի բաժանմունքում, իսկ աղջիկները՝ մյուս:

Դպրոցը շատ շքեղ էր, ուներ բոլոր հարմարությունները՝ աշխարհագրական քարտեզ՝ պատին փակցված, սև գույնի գրատախտակ: Դասարանում շքեղությամբ դասավորված էին սեղանը, աթոռները, դասագրքերը, որոնք ուղարկվել էին Կարնո քաղաքից:

Նոր դասատուն՝ Միսակ վարժապետը, ավարտել էր Կարնո քաղաքի Մանասարյան վարժարանը: Նա Խնուս գավառի Լարաչոբան գյուղից էր, վերին աստիճանի կիրթ ու շատ ազդեցիկ մարդ: Իսկական հայի տիպար էր՝ բարձրահասակ, հայկական խոշոր և խորաթափանց աչքերով: Դասավանդությունը պարզ էր ու հստակ, աշակերտները շատ հեշտությամբ էին ընկալում ամեն մի բացատրություն:

Միսակ վարժապետը կարճ ժամանակում կարողացավ աշակերտների հետ լեզու գտնել: Մենք դարձանք մի ամբողջություն, կարգապահությունը բարձրացավ: Դանչո Միմոնն անգամ վերացրեց նախկինում ունեցած իր այլանդակությունները և դարձավ մաքուր ու կարգապահ աշակերտ, իսկ ես էլ Պետիկի հետ հաշտ ու համերաշխ էի: Ես էլ վերացրի իմ չարածճիությունները և դարձա լուրջ դպրոցական:

Մենք շատ երջանիկ էինք մեր դպրոցով: Աշխարհի ամենաերջանիկ աշակերտներն էինք, մանավանդ երբ դասամիջոցներին աղջիկների հետ դուրս էինք թափվում, խառնվում նրանց հետ, և սկսվում էին երեխայական մտորումները, հարցն ու գրույցը, ծիծաղն ու հաճոյախոսությունները տղաներն աղջիկներին, աղջիկները տղաներին: Հետո դողանջում էր զանգը, և մի վայրկյանում բոլորն իրենց տեղերում լուռ նստած էին, կարծես թե քիչ առաջվա աղմկոտ երեխաները չլինեին:

Այդպես ուրախ ու անհոգ էին անցնում մեր օրերը, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ հանկարծ մի օր այդ դպրոցի շքեղ շենքը կարող է վերածվեր մարդկությանը արհավիրք պատճառողների որջի: Միայն երկու տարի վայելեցինք այդ շքեղ դպրոցի երջանկությունը: Երբորդ տարին վրա հասավ պատերազմի լուրը³⁶, և մեր մանկական երջանկությունը, երեխաների ուրախ ճշոցները, աղաղակները ոլորապատվեցին սև ժապավենով:

Հայրիկս

Հայրիկս Խաչո քեռուս հետ թուրքական և ռուսական սահմանն անցնելու համար հասնում էր Բասենի և Ալաշկերտի սահմանագլուխը՝ Բասենի

վերջին գյուղը Դահարի լեռնանցքով, որն իրարից բաժանում էր Ալաշկերտը և Ներքին Բասենը: Նշված լեռնանցքով անցնում են ռուսաց կողմը: Նույն սարավանջի վրա փոված է հայկական Խոշգյաղի³⁷ գյուղը:

Այդտեղից դարձյալ հայկական գյուղեր են՝ Չոլախլու³⁸, Բաշգեղ (Բաշկերտ)³⁹, Գյուլանթափ⁴⁰, որտեղից հասնում են Արաքսին: Նրա ձախ ափին Դարաղուրտ⁴¹ քաղաքատիպ ավանն է: Նրանից 30 կմ սաղարթախիտ անտառներով հասնում ես ինձ համար շատ սիրելի Մարիդամիշ, հետո մի քանի գյուղեր անցնելով՝ Կարս քաղաք:

Հորս և քեռուս ամբողջ գործունեությունն ամփոփվում էր Կարսով: Թե ի՞նչ էին անում, ինչո՞վ էին զբաղվում, ինձ հայտնի չէր: Բայց երբ վերադառնում էին, իրենց հետ ինձ համար անսովոր արտաքինով ու հագուստներով, սպառազինված մարդիկ էին գալիս մեր տուն, ուտում-խմում էին, երգում: Նրանց երգերից մի քանիսը մինչև հիմա մնացել են հիշողությանս մեջ:

Դահարի լեռնանցքով սահմանը խախտելը հորս համար ջրի ճամփա էր: Մի անգամ, երբ նա գիշերով լեռնանցքով անցնում է սահմանը և գալիս է Դահար գյուղ, որը Վերին Բասենի և Ալաշկերտի սահմանակետի վերջին գյուղն էր, հյուրընկալվում է մի քրդի տանը՝ տեղավորվելով գոմի օդայում: Հանկարծ դռան հետևից լսում է փսփսոցներ, թե գնանք վառելիք բերենք, օջախը թեժ վառենք և այս ֆլաշին⁴² կոխենք վառարանը ու վառենք: Հայրս հասկանում է: Լինելով հաղթանդամ, ուժեղ մարդ, փակ դուռը մեկ-երկու անգամ ցնցելով՝ բացում է, վերցնում իրերը և դուրս է գալիս գյուղից: Գալիս-հասնում է այն ճանապարհին, որը տանում է դեպի մեր գյուղ, հետո մտափոխվելով, թե կարող է քրդերը հետապնդեն և վրեժխնդիր լինեն, իբր թե գիշերը դուռը ջարդել է և տունը կողոպտել, հետքը կորցնելու համար փոխանակ շարունակի ճանապարհը, գնում է հենց նույն գյուղի (մեր գյուղացի վարպետները քուրդ էլաբեկի տղայի համար էլվան են կառուցում) մեր գյուղացի վարպետների մոտ և պատմում եղելությունը:

Վարպետները հորս թաքցնում են Աղաբեկի տան նկղողներում: Մի քանի օր հետո հայրս մեր գյուղացիների օգնությամբ դուրս է գալիս թաքըստոցից և բռնում է մեր գյուղի ճանապարհը: Մեկ էլ կեսգիշերին մեր տանիքի երդիկից մեկը կանչում է.

–Թուխ՛, Թուխ՛, դուռը բաց արա:

Մայրս, լսելով հորս ձայնը, դուռն անմիջապես բաց է անում: Մենք՝ բոլոր երեխաներս, գիշերանոց-

36 Սույն վկայությունը հիմք է տալիս կարծելու, որ Արուճագրակի դպրոցը բացվել է 1912 թ., իսկ Վ. Փափագյանն էլ Արուճագրակ է այցելել նախորդ՝ 1911 թ.:

37 Տեղադրությունը հստակ չէ:

38-40 Միմյանց հարևան երեք գյուղերն էլ գտնվում են Կարսի մարզի Կաղզվանի գավառի Ռուսական Բասեն գավառակում:

41 Այժմ էլ գյուղություն ունի միևնույն անվամբ:

42 Զրդերեն նշանակում է հայ:

ներով փարվում ենք մեր հորը, կախ ենք ընկնում պարանոցից, իսկ ամենափոքրիկները, որոնց թվում էի նաև ես, մեջքից ու ազդրերից: Տունը լցվում է ուրախ ճիչերով:

Հորս հետ

Մինչ 1914 թ. պատերազմը մի օր հորս հետ գնացի՞նք դեպի հյուսիս, անցանք Արաքսը, հասանք պատմական Սալթրոյի գյուղը, որտեղից սկսվում է դարիվեր ճանապարհը: Այդ սարավանդին կային սառն աղբյուրներ: Մենք արձակեցինք սայլի եզները, բաց արեցինք խուրջիները, հայրս հանեց մորս դրած գանազան խորտիկները, բասեցնու ախորժակով կերանք ու խմեցինք սառն աղբյուրի ջուրը և մածմաքանը: Հետո շարունակեցինք այն ճանապարհով, որի արևելյան կողմի հարթավայրը կոչվում էր Խորումներ, որտեղ ուժեղ կռիվ է տեղի ունեցել ջանֆիդայիների և թուրքական զորքերի միջև: Հետո շարունակեցինք մեր ճանապարհն այդ պատմական հարթավայրով և հասանք թուրքական Ալթնբուլաղ⁴³ գյուղը:

Հայրս այդ գյուղում Ալի անունով մի թուրք ծանոթ ուներ: Գնացի՞նք նրանց տուն, Ալին մեզ ընդունեց սրտաբաց և ուրախ: Նրա ընտանիքը մեծ չէր, ուներ բարձրահասակ, գեղեցիկ կին և երկու դեռահաս աղջիկներ: Մայրը և աղջիկներն ինձ ընդունեցին շատ սիրով և տարան մեծ տունը, որտեղ հայերի նման թունդի էին վառում: Նույն տանը կից փոքրիկ սենյակում նույնպես վառել էին փոքրիկ թունդիքը և շուրջը գորգեր փռել: Մենք քնեցինք, իսկ առավոտյան, երբ արթնացա, արդեն գնալու ժամն էր. հայրս արդեն սայլը լծել էր և սպասում էր ինձ:

Մենք կարոտալի համբույրներով մնաս բարով արեցինք և հրաժեշտ տվեցինք Ալիի ընտանիքին: Մեր սայլը շարժվեց դեպի ռուսական սահման: Տեսանք ռուս սահմանապահներին, հասանք սահմանագլխի Քյոթակ քաղաքատիպ ավանը, որն ուներ թուրքական ճաշակով բնակելի երկհարկանի տներ:

Այդ ամենն ինձ համար անսովոր տեսարան էր, մանավանդ սահման անցնելը: Վերջապես սայլը հասավ գետի վրայի կամրջի արևմտյան կողմում և կանգնեց: Հայրս թուրք սահմանապահներին ինչ-որ բան ասաց, որն ինձ համար անհայտ մնաց, թուրք սահմանապահն էլ կամրջի արևելյան կողմում կանգնած ռուս սահմանապահին փոխանցեց հորս ասածը: Ռուսը գնաց և կանչեց Կոստան անունով մի հույն մարդու: Թե նա ինչ խոսեց, մեկ էլ սահմանաձողը բարձրացավ, և մեր սայլն անցավ կամրջի ռուսական կողմը՝ ռուսաց սահմանակից Ղարաուրդան, որի բնակիչները բոլորը հույն էին: Մեր սայլը կանգնեց կամրջից ոչ շատ հեռու՝ Կոս-

տանի երկհարկանի տան առաջ: Կոստանն առևտրական էր և ամեն ինչի մեջ տեսնում էր իր անձնական շահը: Մեզ շատ պատվով ընդունեցին իրենց հարուստ, շքեղ, կարելի է ասել պալատում: Երեք օր մնալուց հետո մենք նորից անցանք թուրքական սահմանը:

Շարունակելով ճանապարհը՝ Ղարաուրդանից անցանք Թուրքիայի սահմանը և Քյոթակի միջով թեքվեցինք դեպի հյուսիս, գնացինք պատմական Արդանուշ քաղաքը, որը Քյոթակի հետ մտնում էր Տայքի գավառի մեջ: Այն պատկանել է Մամիկոնյաններին: Արդանուշում էր գտնվում հայկական ճարտարապետական հռչակավոր տաճարը: Արդանուշից մենք վերադարձանք Քյոթակ և շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Ալաշկերտ՝ պատմական Բագրևանդ: Եթե մենք մինչ այդ գնում էինք դեպի հյուսիս-արևելք, այժմ Ալաշկերտ գնալու համար պետք է գնայինք դեպի հարավ-արևելք: Անցնելով իմ սիրելի Արաքսը՝ հասանք հայկական Դելիբաբա գյուղը, որտեղից էլ քրդական Էշակեյազ: Հենց այդ լեռներից սկիզբ առնող գետը գալիս-հասնում էր մեր գյուղ: Էշակեյազ գյուղից հետո գալիս է քրդական Էլաբեկ Աղաբեկի գյուղը՝ Դահարը: 1905 թ. Դահարի Էլաբեկ Աղաբեկն իր աշխրեթով գալիս է դեպի Դելիբաբա գյուղ, իսկ նշված գյուղում գտնվում է ջանֆիդայիների հրամանատարը՝ Արմենակ անունով:

Արմենակը տեսնում է, որ քրդական աշխրեթն Աղաբեկի գլխավորությամբ սարի գագաթից շարժվում է դեպի գյուղ, նշան է բռնում, կրակում և Աղաբեկի քոլոզը գլխից ցած է շարժում: Աղաբեկը նորից շարժվում է առաջ: Արմենակն այս անգամ նշան է բռնում ձիու ականջին, և գնդակը ծակում է ձիու ականջը: Աղաբեկը նորից առաջ է շարժվում, այդ երկու նախագուշացումներից չի խրատվում: Արմենակն այս անգամ նշան է բռնում ձիու կրծքին, և ձիու թավալվում է գետին, Աղաբեկը մնում է ձիու տակ: Այդպիսի հեռավորությունից անվրեպ կրակելով՝ քրդին հասկացնում են, որ չեն ցանկանում անմեղ կոտորած սարքել: Դա սարսափ է տարածում քուրդ աշխրեթի մեջ: Աղաբեկին ասում են, որ այդ մարդիկ իրենց տված ազդանշաններով ուզում են մեզ հասկացնել, որ իրենք չեն ուզում կռվել, մի անգամ քոլոզը վայր գցեցին, մյուս անգամ ձիու ականջը թոցրին, բայց տեսան, որ մենք չենք խրատվում, ձիուն փռեցին գետին: Այդպիսի անվրեպ կրակողները, եթե մոտենան, բոլորիս կզնդակահարեն, խոհեմությունն այն կլինի, որ վերադառնանք: Եվ վերադառնում են:

Հայր ու որդի սայլով հասանք քուրդ Աղաբեկի գյուղը, այն գյուղը, որտեղ ցանկացել էին հորս վառել: Գյուղ հասանք գիշերը, մնացինք Աղաբեկի եղբոր տանը: Առավոտյան մենք շարունակեցինք ճանապարհը: Դահար գյուղով վերջանում է Վերին Բասենի սահմանը, և սկսվում է Ալաշկերտի տա-

43 Այլ վկայության համաձայն՝ Ալթնբուլաղը քրդաբնակ էր, բնակիչները պատկանում էին Նախտրան կամ Կիսկիմ ցեղին (Քեթբաձեզի Ա. Ի., նշվ. աշխ., էջ 26): Միևնույն անվամբ գյուղն այժմ էլ գոյություն ունի:

րածքը: Եվ ի՞նչ տեսարան... այդ հրաշագեղ հովտում հազարավոր ալ ու ավան ծաղիկներ են, որոնց բուրմունքն ուղղակի լցվում էր էությունը մեջ: Նման շքեղություն ես ոչ մի տեղ չեմ տեսել:

Հիացած այդ տեսարանով՝ չիմացանք, թե ինչպես հասանք Ալաշկերտի առաջին գյուղը՝ Չետկան⁴⁴, այնտեղից էլ Խասթուր⁴⁵, հետո Չկանի⁴⁶: Ճանապարհի եզրին՝ փոքրիկ ձորի մեջ, գետ էր անցնում: Գետի վրա ջրաղաց կար, որտեղ էլ մենք գիշերեցինք: Չկանի գյուղացիները ջրաղացում մեզ շատ լավ ընդունեցին, բաղարջ թխեցին, շատ համեղ էր (ընդհանրապես մարդիկ ասում են, գնանք ջրաղաց՝ բաղարջ ուտելու, մենք այդ բաղարջը Չկանի ջրաղացում կերանք):

Առավոտյան շարժվեցինք դեպի Յոնջալու⁴⁷ գյուղ, որտեղից գնում էին Ղազի⁴⁸, այնտեղից էլ Տերտերի գյուղ⁴⁹:

Այդ վայրում տարա եզներին արածեցնելու: Այնտեղ էին մաև մի քանի քրդեր: Նրանք տեսել էին իմ հագուստի սադաֆե գեղեցիկ կոճակները: Հենց որ գնացի եզը բերելու, նրանք երեք հոգով անմիջապես թափվեցին ինձ վրա և ինձ գցեցին գետին՝ փորձելով պոկել դրանք: Երկար չարչարվելուց հետո պոկեցին ինձ համար շատ սիրելի սադաֆե կոճակներս ու փախան:

Շարունակեցինք մեր ճանապարհը, բայց ես կոճակների մասին հորս ոչինչ չասացի, որովհետև իմ պարտությունն ինձ համար շատ վիրավորական էր:

Մենք մոտենում էինք Ղարաքիլիսա⁵⁰ քաղաքին, չգիտեմ ինչու, ասում էին մաև Նայենու Ղարաքիլիսա:

Ղարաքիլիսա հասնելուն պես գնացինք հորս ծանոթի տուն: Ինձ համար շատ զարմանալի էր, որ հայրս թե՛ հեռու, թե՛ մոտիկ վայրերում միշտ ծանոթներ ուներ: Երկհարկանի պատշգամբով տուն էր, բայց մինչ տուն հասնելը հենց հրապարակի վրա էր գտնվում երկհարկանի դպրոցը:

Տանտերն ուներ միայն երկու աղջիկ: Նրանք սլացիկ էին, բարձրահասակ, նուրբ կառուցվածքով, սպիտակամաշկ և գեղանի: Ունեին սև սաթե խոշոր աչքեր:

Այդ տանը հյուրընկալվելուց հետո շրջեցինք խանութներով: Բոլոր խանութներն էլ առանձին-առանձին էին դասավորված: Ինձ համար շատ հետաքրքիր էին կոշկակարանոցները, դարբնոցները:

Հայրիկս գնում էր այն, ինչ հայկական էր: Մեկ էլ հանկարծ մկատեց, որ սադաֆե կոճակներս չկան,

44 Չետկանն այժմ վերանվանվել է Էլեշկիրտ (Eleskirt):

45 Խաստուրն այժմ վերանվանվել է Յուչեկապը (Yücekapi):

46 Չկանին (Ճկկանի) այժմ վերանվանվել է Գյուվենջե (Güvence):

47 Յոնջալու գյուղն այժմ էլ կա միևնույն անվամբ:

48 Ղազի գյուղն այժմ վերանվանվել է Ասլանգազը (Aslangazi):

49 Տերտերի գյուղը, ամենայն հավանականությամբ, Ջաջուռ Իրիցու գյուղն է, որն այժմ վերանվանվել է Բալուկ (Baloluk):

50 Ներկայիս Աղբյուր իլի համանուն վարչական կենտրոնն է:

ու կուրծքս բաց է: Ես նրան ասացի, թե կորցրել եմ: Նա գնեց ինձ համար նորը, իսկ տանտիրոջ աղջիկը կարեց բաճկոնս:

Բռնեցինք տունդարձի ճամփան, այս անգամ՝ հայոց սրբազան Արածանի գետի հոսանքին զուգընթաց: Արածանին լայնահուն է ու հոսում է դանդաղ: Միրուն աղջկա նման իրեն է ձգում. որքան նայում ես, այնքան հիանում ես: Արածանին Բագրևանդ գավառի շքեղությունն է, այնպես դանդաղ է հոսում, որ թվում է, թե ինքն էլ է ափսոսում, որ թողնում է Ալաշկերտի հիասքանչ հովիտը:

Բագրևանդին հարող լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը Քոսադաղն է: Թուրքերն այդպես են անվանել, քանի որ գագաթը զուրկ է բուսականությունից: Սակայն հայկական ավանդությունն այլ մեկնաբանություն է տալիս. երբ Նոյյան տապանը հասնում է այդ սարին և ուզում է հանգրվանել, սարը չի ընդունում և այդ օրվանից զրկվում է բուսականությունից:

Այդ սարավանջի հարավային ստորոտում է գտնվում Մոլլա Սուլեյման⁵¹ հայկական մեծ գյուղը:

Հիմա նորից անդրադառնանք մեր հետդարձի պատմությանը դեպի մեր գյուղ:

Չետկանից Ալաշկերտը թողնելով մեր հետևում՝ շրջվեցինք դեպի Բասենի սահմանը և հասանք Դահար գյուղ, հետո Էշակեյլազ, որտեղից էլ Դելիբաբա հայկական գյուղ:

Հորս մահը

1914 թ. Առաջին աշխարհամարտի նախօրեին մեր գյուղում տեղավորվեց հինգ հարյուր հեծելազոր, որի հրամանատարը Նազիմ փաշան էր: Նա իր շքախմբով տեղավորվեց մեր գյուղի նորակառույց դպրոցում, իսկ զորքը՝ գետի եզերքով՝ վրանների տակ: Թուրքական զորքերը չունեին կենցաղավարության տարրական կանոններ: Փոխանակ մի քանի տեղով փոս փորեին և այդ փոսերի շուրջը տախտակներով ծածկեին և իրենց համար զուգարան պատրաստեին, անպատկառորեն գետի եզերքով մեկ շարվում էին իրար դեմ դիմաց ու ապակաճում էին գետափը, այնտեղ, որտեղ իրենց վրաններն էին: Հենց այդ գետից էլ ջուր էին խմում, կերակուր էին եփում և լողում էին գետում...

Հինգ հարյուր ձիավորներին կերակրում էին մեր գյուղացիները՝ սահմանված հերթականությամբ: Օրական մի տուն տալիս էր զորքի պարենը՝ հացը, միսը, կարտոֆիլը, ձավարը, յուղը, կաթը, մածուրը և այլ մթերքներ: Այս կարգով մեր գյուղը մոտ չորս ամիս պահեց թուրք հեծելազորին, ինչպես մաև ձիերին՝ կերակրելով յոնջալով և գարիով, մինչև սկսվեց պատերազմը:

Հրամանատարը՝ Նազիմ փաշան, հայասեր էր, երբ զորքը պետք է գնար ռուսների դեմ ճակատա-

51 Այժմ զուտ քրդաբնակ է, չի անվանափոխվել:

մարտի, նա հայկական գյուղի դեմ գործին չգրգռելու նպատակով խաբեց, որ իբր թե վերադարձի հրաման է եկել: Եվ փոխանակ գործին տաներ դեպի արևելք, տարավ դեպի արևմուտք, այսինքն՝ գործին անցկացրեց գյուղի արևմտյան կողմի Բողազ ճանապարհով և Պրասկոնդ սարի հետևից պտտեցրեց, դարձրեց արևելք ու տարավ ռուսների դեմ: Մի երկու օր հետո մեր գյուղում հայտնվեց երկու ձիավոր: Գյուղի տանուտերը Օլոյենց Գրիգորն էր: Որպեսզի թուրք զինվորները պահանջներ չներկայացնեն, նա թաքնվեց և պատվիրեց գյուղացիներին՝ ասելով, որ տանուտերը իբր Դելիբաբայի մյուդիբի մոտ է:

Չիավորները, ձիու սանձերը բռնած, կանգնած էին Օլոյենց դռան փոքրիկ հրապարակում, իսկ մեր տունը կից էր Օլոյենց տանը: Ես էլ բոլոր դեպքերում, գյուղում ինչ նորություն էլ որ լիներ, պետք է ներկա լինեի, անկախ նրանից՝ դա վտանգավոր է, թե անվտանգ: Կանգնած էի թուրք զինվորների կողքին:

Որոշ քրդերի և հայերի մեջ կար փոխադարձ պայմանավորվածություն, եթե հայերին վտանգ էր սպառնում, նրանք դիմում էին քրդերի պաշտպանությանը, իսկ երբ վտանգը սպառնում էր քրդերին, նրանք դիմում էին հայերի պաշտպանությանը: Հենց այդ պատճառով էլ մեր գյուղում պատասպարվել էին ծանոթ քրդեր ռուսներից խույս տալու համար:

Այդ ժամանակ, երբ թուրք զինվորները մեր գյուղում էին, քուրդ հովիվները տավարը և ոչխարը տարել էին մեր գյուղի արևելյան կողմը՝ Բողազի կողքին՝ Քեշ ճանապարհի բլրի ետևում արածեցնելու: Քուրդ հովիվի կանչը լսելուն պես նրանք սլացան դեպի գետի այն կողմն իրենց սպասող գորամասերը: Նրանց հեռանալն ու կազակների գյուղ մտնելը մեկ եղավ: Կազակները սլացան նրանց հետևից, ես էլ կոզակների հետևից վազ տվեցի մինչև գետափ: Կազակները վերադարձան մեր գյուղ, կանգնեցին Օլոյենց դռան հրապարակում: Հայի հյուրասիրությունը պարզ է, մանավանդ ռուս զինվորի նկատմամբ. ոչխար է, երինջ է, որ տապալում էին գետին, մորթում, քերթում, և խորովածն ու խաշլաման կարճ ժամանակ անց արդեն պատրաստ էր: Դրանց հետ միասին մեղրը, կարագը, պանիրը, մածունը, լավաշը դրված էին բացված սուփրաների վրա:

Ծիծաղում էինք, երբ նրանք մածուն էին ուտում: Մածունը լցնում էին լավաշի երկարությամբ, բրդուն անում, և, երբ բերանին էին մոտեցնում, մածունը թափվում էր հագուստների վրա: Որքան առատ էր հյուրասիրությունը, այնքան առատ էին հրճվանքն ու ծիծաղը:

Երբ կերան, կշտացան, արդեն կազմ ու պատրաստ էին, եկավ առաջ շարժվելու ժամը: Բայց նրանց անհրաժեշտ էր ճանապարհներին ծանոթ մարդ: Դրա համար նպատակահարմար համարե-

ցին թարգմանիչ ունենալ: Դժբախտաբար, այդ թարգմանիչը եղավ իմ հայրը: Հրամանատարը խնդրեց հորս, որ և՛ առաջնորդի և՛ թարգմանի: Հայրս չկարողացավ մերժել, համբուրեց մեզ ու մորս հուսադրեց.

–Երեխաներին լավ մայի՛ր, ես շուտով կգամ:

Այս խոսքերը հորս վերջին խոսքերն էին: Նա մնաս բարով արեց և առաջնորդեց գործին դեպի Խորասան: Այն քաղաքատիպ ավան էր և տեղավորված էր Արաքսի ձախ ափին: Ռուսներն առանց լուրջ դիմադրության գրավում են Խորասանը և շարժվում են դեպի արևմուտք, հասնում են Հասանդալա և պատրաստվում հարձակման: Այն Արաքսի ձախ ափին է՝ մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա: Հասանդալա հասնելու համար ռուսները պետք է անցնեին Կամրջագյուղի (Քյոփրուքյոյ) գյուղից դեպի հյուսիս:

Հասանդալան հարավից դեպի հյուսիս-արևելք շրջապատված է լեռնաշղթայով, որի վրա պատրաստված են արհեստական ամրություններ: Ռուսական զորքը հայ կամավորների հետ շրջանցում է ամրությունները և սեպած և խրվում քաղաքի հարավային կողմը պաշտպանող թուրքական զորքի մեջ և զորքը բաժանում երկու մասի, իսկ թևերի վրա սրարշավ հարձակվում են պահեստային գորամասերը: Կազակների հեծելազորը սարսափ է տարածում թուրքական զորքի վրա, և թուրքերը ստիպված թողնում են քաղաքը և մահանջում դեպի արևմուտք՝ դեպի Էրզրում քաղաք:

Քաղաքը գրավելուց հետո հայրս կազակների առաջապահ ջոկատների հետ անցնում է քաղաքի փողոցներով: Տեղի թուրքերը ճանաչում են հայրիկիս և պատուհանից կրակում են: Հայրս սպանվում է երկու կազակների հետ, իսկ հրամանատարը թեթև վիրավորվում է: Սպանված կազակների հետ հայրիկիս բերում են մեր գյուղ և գորահանդետով թաղում գյուղի գերեզմանոցում:

Հայրս դառնում է մեր ընտանիքի գալիք կոտորածի լրաբեր ծիծեռնակը:



ԱՐՈՒՃԱԳՐԱԿ. հայոց գերեզմանոցի մնացորդները (2006 թ.)

Մեր փրկությունը

Մի գիշեր քրդական, թուրքական չաթաները խուժում են մեր գյուղ և սկսում են կոտորած ու կողոպուտ: Այս լուրը հասնում է Մեքաստացի Մուրադին: Նա իր հեծելագործով հանկարծահաս հասնում է մեր գյուղ, թրատում և գնդակահարում է կոտորածով ու թալանով զբաղված թուրքերին և քրդերին: Դրա շնորհիվ գյուղացիների մի մասն ազատվում է կոտորածից: Երբ խուժում են մեր տուն, մի քուրդ ամենափոքրիկներիս՝ ինձ և իմ քրոջը, առանձնացնում է տան անկյունում, իսկ մյուս քրդերը գազանի նման հարձակվում են եղբայրներիս և քույրերիս վրա: Մայրս էգ արծվի նման թևատարած փարվում է ձագուկների՝ նրանց փրկելու համար, սակայն կատաղած գազանների ռիմակն անողորմ կերպով հոշոտում է մորս, անմեղ քույրիկներիս ու եղբայրներիս:

Այդպես էլ սիրելի մայրս չինացավ, որ իր երկու փոքրիկները դուրս պրծան գազանների հոշոտումից, մնացին կենդանի պանծալի գորավար Մեքաստացի Մուրադի շնորհիվ:

Ինչպես մեր գյուղացիներին, այնպես էլ շրջակա գյուղերից ազատվածներին Մուրադն ուղարկում է ռուսաց սահմանամերձ Ներքին Բասենի Բաշգեղ, իսկ ինքը մնում է գորքի հետ՝ պաշտպանական կռիվներ մղելով թուրքերի դեմ, թույլ չտալով նրանց առաջ շարժվելու և հասնելու ազատված գյուղացիներին:

Մեր ժողովուրդը շատ բանով է պարտական քաջակորով Մուրադին:

Սիրելի՛ իմ մայր, դու չտեսար, թե ինչպես պզտիկ Հովհաննեսը դարձավ քո երագած տղան: Այս տողերը գրելիս դուք՝ իմ անմեղ զոհեր, կարծես կանգնած եք իմ առաջ ձեր գեղանի հասակով, հիասքանչ ժպիտով...

Բաշգեղում

Քույրս իր ընդունակությունների շնորհիվ ընդգրկվեց Ներքին Բասենի Բաշգեղի Թարգոնց⁵² ընտանիքի շարքերը և գյուղի աղջիկներին ու հարսներին սովորեցնում էր զանազան ձեռագործ, կար ու ձև, որի համար մեծ հեղինակություն ձեռք բերեց գյուղի կանանց շրջանում: Նա դարձավ Թարգոնց ընտանիքի անդամը: Իր համեստ, մարդկային բնավորությունը և բարի կամեցողությունն իրեն ձգեց գյուղի բոլոր հարսներին ու աղջիկներին: Քույրիկս չափից ավելի ընդունակ էր, ինչպիսի բարդ ձեռագործ կամ կար ու ձև լիներ, մի նայելուց իսկույն ընդօրինակում էր և սովորեցնում ուրիշներին: Ե՛վ ձեռագործ էր անում, և՛ շոր կարում:

Քույրս և ես դարձանք նրանց տան անդամները:

Ես հոտաղ էի Չոքոյի մոտ, որն այլանդակ կերպարանքով, մարդկային հատկություններից զուրկ մարդ էր: Գնում էինք դաշտը վար ու ցանքի, բերք էինք հավաքում:

Չոքոն կալի ժամանակ չաթան⁵³ քթոցը դնում էր իմ շալակը, կալը ցածր էր, մարագը բարձր էր, չաթանը շալակիս դարիվեր բարձրանում էի, մարագի կտուրից լցնում երդիկից ցած, երբ աջ ոտքս բարձրացնում էի և հենվում ձախ ոտքիս վրա, կարծես թե տաք ջուր էր լցվում, և ծանրության տակ ոտքիս երակները լայնանում էին:

Կալն ու կուտը վերջացնելուց հետո ինձ ուղարկեց ճանապարհի վրա աշխատելու: Այդ ճանապարհը Բասենից հասնում էր Վերին Բասենի Արաքսի ափը, որտեղից պետք է հասներ մինչև Հասանդալա: Ծանապարհի կապանը շինելու կապալառուն մեր գյուղացի Նիկողոսենց Նիկողոսն էր, որն ավարտել էր Կարնո քաղաքի Սանասարյան վարժարանը:

Բանվորները և ճանապարհ կառուցողները Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հրից ու սրից փրկվածներն էին՝ մշեցի, սասունցի, խարբեղոցի, բաղեշցի, մոկացի, շատախցի, վանեցի, կարնեցի, սեբաստացի, տրապիզոնցի, տիգրանակերտցի, եղեսիացի, բուլանլիցցի, խլաթցի, խնուսցի, բասենցի: Նրանք գիշերում էին Արաքսի ափին խփած վրաններում: Կարծես բաժան-բաժան հարազատներ լինեին, որոնք նոր էին իրար գտել: Ցերեկն աշխատում էին, իսկ մինչև ուշ երեկո սկսում էին երգել, պարել, մի մասն էլ հավաքվում էր, հեքիաթներ և պատմություններ պատմում: Արաքսի օղը թարմացնում էր և ցրում ցերեկային ծանր աշխատանքի հոգնածությունը:

Ես էլ շատ էի սիրում պատմություններ ու հեքիաթներ լսել ու դրանք կլանել:

Տասնհինգ օրը մեկ աշխատավարձ էինք ստանում: Ստացա իմ տասնհինգ օրվա աշխատավարձը և առանց ծախսելու տվեցի իմ աղա Չոքոյին, որն առանց խղճի խայթ զգալու, շատ հանգիստ գրպանեց այն: Քույրս հագուստներս լվաց, մաքրեց, և ես վերադարձա՝ շարունակելու աշխատել ճանապարհի վրա:

Մի անգամ Նիկողոսը հարցրեց, թե ես փողն ի՞նչ եմ անում: Պատասխանեցի, որ տալիս եմ աղայիս՝ բաշգեղցի Չոքոյին: Նիկողոսն ասաց, որ այս անգամ չտամ, այլ ինձ ու քրոջս համար նոր հագուստ և կոշիկներ գնեմ: Նա գիտեր, որ մենք երկուսով ենք փրկվել կոտորածից: Ինձ էլ դա էր հարկավոր, որ մեկն ինձ խրատի:

Ես եկա գյուղ, փողը տվեցի քրոջս ու ասացի Նիկողոսի ասածը: Քույրս ինձ համար խանութից կտոր գնեց, մի շալվար, երկար թևով բլուզ և կարճ թևով բաճկոն կարեց, կոշիկներ գնեց: Հազա հա-

52 Գյուղի մեծ և հայտնի ընտանիքներից էին Թարգոնց (Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 18, 173):

53 Հարդ կրելու համար ծղոտահյուս մեծ կողով:

գուստներս և կոշիկներս, գնացի խանութների և աղբյուրների հրապարակը, մարդկանց շարքում կանգնեցի, մեկ էլ տեսա, որ Չոքոն իր այլանդակ կերպարանքով ցցվեց կողքիս և հարցրեց փողի մասին: Ես՝ որպես պատասխան, վերևից ներքև ցույց տվեցի շորերս: Նա խոզի պես մոթմոթաց և թունավոր օձի նման ֆշշալով չքվեց:

Չոքոյից ազատվելուց հետո սկսեցի աշխատել խմբապետ Շավարշի մոտ: Նա վար ու ցանքով չէր զբաղվում, ուներ մի քանի ոչխար, երկու հատ կով և մի արաբական նժույգ: Ես, նժույգին հեծած, կովերն ու ոչխարները տանում էի արածեցնելու Սարիղամիշի ոստիկան Վասիլի տղա Միհրանի հետ: Ոստիկան Վասիլը բաշգեղցի էր: Նա գեղեցիկ տղամարդ էր, ոստիկանի հագուստը մոխրագույն էր և շատ սազական, թուրն ու ատրճանակը կախված էին կողքից: Միբուն կին ուներ, տղայի անունը Միհրան էր: Տղան ինձանից փոքր էր, իսկ աղջիկը՝ Ազնիվը, մեծ էր: Ես ազատ ժամանակ միշտ նրանց տանն էի լինում, նրանց մայրն ինձ շատ էր սիրում և երեխաների հետ հացի էր նստեցնում: Ամբողջ օրը խաղում էի Ազնիվի ու Միհրանի հետ: Հետագայում՝ գաղթից հետո, չիմացա, թե ծնողներն ինչ եղան, բայց աղջիկը՝ Ազնիվը, Համգաչիման⁵⁴ գյուղի տերտերի տղայի՝ Սուրենի հետ էր ամուսնացել: Հետագա կյանքի մասին տեղյակ չեմ: Այս տեղեկությունը ես իմացել եմ գաղթից հետո:

Միհրանի և խմբապետ Շավարշի հետ տավար էի արածեցնում:

Խմբապետ Շավարշը գյուղում շատ մեծ հեղինակություն ուներ: Ուներ մի տղա և մի աղջիկ, ես նրանց հետ մտերիմ չէի: Պատճառը չգիտեի: Հավանաբար անընդհատ Վասիլենց տանն էի, իսկ խաղընկերներս Ազնիվն ու Միհրանն էին: Բացի դրանից՝ Շավարշի տղան՝ Իշխանը, ինձանից մեծ էր (քրոջ անունը չեմ հիշում): Նրանք գեղեցիկ էին, իսկ Շավարշի կինն իմ նկատմամբ շատ սիրալիք էր ու բարի: Նրանց տանը ինձ հոտաղ չէի համարում, կարծես թե ես նրանց տան անդամներից մեկը լինեի:

Մի անգամ ես Շավարշի ննջասենյակի բարձի տակ տեսա մաուզերի ծայրը: Չեմ շատ էի սիրում, ձեռքս տարա, բարձի տակից հանեցի մաուզերը ու բարձրացրի դեպի առաստաղը: Գաղափար չուներ, թե ինչպես են կրակում, առանց մտածելու անկախ ինձանից քաշեցի ձգանք: Առաստաղը ծակվեց, ու դրմբոցը ելավ, բայց մինչև հիմա ինձ հանելուկ մնաց, թե արդյո՞ք նրանք հարևան սենյակում կրակոցի ձայն չլսեցին, թե՞ չուզեցին ինձ անհարմար վիճակի մեջ դնել: Ոչ ոք չեկավ, ես մաուզերը կամացուկ դրեցի բարձի տակ, պատուհանը բաց արի, որ ծուխն ու փոշին մաքրվի սենյակից: Եվ այդպես էլ

հետագայում չխոսվեց դրա մասին: Այսպես փակվեց կրակոցի հարցը:

Բաշգեղի հանդամալը հարևան էր Չոլախլու գյուղին: Այդ գյուղում մի հոտաղ տղա կար՝ Տիգրան անունով: Նա քաջ, սրտոտ տղայի անուն էր հանել, և բաշգեղցի հոտաղ տղաները նրանից վախենում էին: Մի անգամ Միհրանի հետ տավարը տարանք Չոլախլու գյուղի կողմերը՝ Տիգրանին հանդիպելու համար: Կամաց-կամաց մոտեցանք տավարածներին: Տիգրանը նրանց հետ էր: Ինչպես առակն է ասում, գիժը գժին տեսավ, մահակը թաքցրեց: Այնպես էլ Տիգրանը փափկեց, ու մենք շատ հաշտ ու խաղաղ ժամանակ անցկացրինք և բաժանվեցինք: Անհնար էր հանդիպել Տիգրանին ու կռիվ չանել:

Գյուղում տարածվել էր, թե գաղթական տղայից, ալսինքն՝ ինձանից, քաշվում էին Բաշգեղի տղաները՝ Տերտերանց⁵⁵ Խաչիկը, Գասպարենց Սարգիսը:

Այսպես էին անցնում իմ օրերը Վասիլենց ու Շավարշենց ընտանիքներում:

Մի անգամ ես, Շավարշը, նրա կինը, տղան ու աղջիկը գնացինք Չոլախլու գյուղ՝ իրենց բարեկամի տուն: Չոլախլուն գտնվում էր Բաշգեղից հարավ: Բարեկամի ընտանիքը շատ հարգանքով ընդունեց մեզ, իսկ ես նրանց ուշադրության կենտրոնում էի:

Մի օր նրանց և ուրիշ ընտանիքների հետ գնացի Չոլախլու գյուղի դիմացի սարը, որը բաժանում էր Ներքին Բասենը և Ալաշկերտը: Դա Բարդուղիմենուսյան լեռնաշղթան էր: Մենք պետք է բարձրանայինք վաղ առավոտյան:

Կեսօրին արդեն Քոստադաղի սարալանջերում էինք: Ես կարոտած սրտով և աչքով կարծես լափում էի Բագրևանդի հովիտն Արածանի գետի հետ միասին: Նայում էի ազահաբար, բայց սրտիս կարոտը աչքս չէին հագեցնում:

Նրանք բարձրացել էին, որպեսզի օգտվեն բնության բարիքներից և այդ շքեղ լեռնալանջերից հավաքեն ձմեռվա պաշարը՝ խավրժիլ, բոխի, ծնեպուկ, խաշխաշ, երինջնակ և այլ բանջարեղեն:

Իսկ ես ինչո՞վ էի զբաղված: Սարի ծամոն շատ էի սիրում: Նրա արմատներում տղամարդու բազուկից հաստ արմատներ կային: Սուր դանակով կրտրում էի արմատները ու շուռ էի տալիս թիթեյա տուփի մեջ: Դնում էի արևի տակ, մի ժամից հետո կաթն արդեն մերվում էր, այդպիսով ես իմ գործն ավարտած էի համարում:

Վերադառնալիս մի անգամ էլ կարոտով նայեցի Արածանի գետին, Ալաշկերտի հովիտին, ու ճանապարհ ընկանք դեպի Չոլախլու գյուղ: Դա իմ վերջին այցն էր դեպի իմ սիրած Հայկական լեռնապար:

54 Համգաչիման (Թագավորանիստ, Բոզիգեղ) գյուղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում: 1978 թ. վերանվանվել է Մարգահովիտ:

55 Գյուղի մեծ և հայտնի ընտանիքներից էին Տերտերանք (Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 18):

Հաջորդ օրը ես և Շավարշի ընտանիքը գնացինք Բաշգեղ, իսկ երկու օր հետո՝ Բաշգեղից դեպի արևելք ընկած սահմանակից Արմուտլու գյուղ:

Երկու օր մնալուց հետո Բաշգեղ չվերադարձանք, այլ գնացինք դեպի արևելք՝ Արաքսի ափամերձ ձորամիջի Չիրիկ գյուղ, որտեղ նրանց բարեկամ Ենգոյենց տունն էր:

Նրանք ևս շատ հարգանքով ընդունեցին և լավ հյուրասիրեցին: Երկու օրից վերադարձանք Բաշգեղ: Դարձյալ ես ու Միհրանը տավարը տանում էինք արածեցնելու: Այդպես անցնում էին իմ օրերը, մինչև վրա հասավ 1917 թ. գաղթը:

Գաղթի ճանապարհին

1917 թ. գաղթեցինք Թարգոնց ընտանիքի հետ: Մայի վրա նստած էին քույրիկս, նրանց հարսը՝ Թաթոսի կինը, և երեխան՝ վեցամյա Արփենիկը: Ես ու Թաթոսը քշում էինք ոչխարները և կովերը: Թաթոսը երեսունն անց էր, բայց շատ անբաշար ու ծույլ էր: Նա Թարգոնց միակ տղան էր:

Ինչպես Բաշգեղի, այնպես էլ շրջապատի գյուղերի՝ Խոշգյալղի, Չոլախլուի, Չիրիկի, Արմուտլուի, Սթահանի, Գիլանթափի, Աղփունդարի ամբողջ բնակչությունը բռնել էր գաղթի ճանապարհը: Նրանց սայլերի քարավանը քառաշար և շատ դանդաղ շարժվում էր դեպի Սարիղամիշ: Ուղիղ ճանապարհով գնալ հնարավոր չէր և վտանգավոր էր, դրա համար էլ նրանք գնում էին դեպի հարավարևելք:

Վերջապես հասանք Ղարսա (Կարսի) հարավակողմի Բերնա գյուղը, որը դարերի խորքից եկած հայկական մեծ ու շատ հարուստ գյուղ էր:

Այդտեղ սայլերը կանգ առան: Ես գնացի լքված գյուղը այլուր փնտրելու, քանի որ այլուր չէինք վերցրել: Մի քանի տուն մտնելուց հետո մի տան մեջ մի պարկ այլուր գտա: Արդեն գիշեր էր, պարկը շալակեցի և հասցրի սայլին: Շատ ուրախացան, երբ տեսան ինձ: Առավոտ սայլերի քարավանը շարժվեց դեպի Կարս: Մեր սայլը կանգ առավ հենց Սուրբ Առաքելոց վանքի պատի տակ՝ գետի ափին:

Պարսպի դռնից ներս մտա վանքի բակ և աստիճաններով բարձրացա վեր ու տաճարի դռնից ներս մտա: Գեղեցկությունը, ներսի շքեղությունը շլացրին աչքերս, չէի իմանում՝ որ կողմը նայեի՝ արևի ճառագայթներից հուրհրացող ջահերի՞ն, թե՞ քանդակագործ անգերազանցելի նկարների: Ինձ կլանել էր հայկական ճարտարապետական կոթողը:

Հայաստանում

Գաղթի քարավանն իր քառաշար սայլերով շարժվում էր դեպի Ալեքսանդրապոլ: Գիշերը, երբ հասանք Ալեքսանդրապոլ, հյուրընկալվեցինք Թարգոնց տաճուի ծանոթ երաժիշտ Վահրամենց տանը: Մեզ շատ սրտաբաց ընդունեցին: Մի քանի օր նրանց տանը մնալուց հետո Վահրամը մեզ տա-

րավ լեռան խոռոչում տեղավորված Դիրաքլար գյուղը⁵⁶: Այդ գյուղում երաժիշտ բարեկամ ուներ, մեզ տեղավորեց իր բարեկամի տանը, իսկ ինքը վերադարձավ: Նրանք ևս շատ հյուրասեր մարդիկ էին:

Դիրաքլարում մի քանի օր մնալուց հետո լծեցինք սայլերը և շարժվեցինք դեպի հարավ: Ուղիղ ճանապարհով գնալը վտանգավոր էր: Բարձրացանք Վերին և Ներքին Քյափանակներ⁵⁷ հայկական գյուղերը, հասանք Մեղիքլու:

Մեղիքլուից շարժվեցինք դեպի Համամլու⁵⁸: Անցնում էինք Արագածի հյուսիսարևելյան ստորոտներով: Գեղեցիկ Արագածը շապյորեն ծածկվել էր գարնան փարթամ կանաչով և գույնզգույն ծաղիկներով: Այդ գեղեցկությունը շլացնում էր նայողին:

Մենք հասանք Համամլուի լեռնանցքը, արդեն շարժվելու ճար չկար, որովհետև, բացի Արևմտյան Հայաստանից, քանդվում էր նաև Արևելյան Հայաստանը: Գյուղաբնակների սայլերի քարավանը քառապատկվել էր:

Վերջապես մինչև լույս հագիվ հասանք Համամլու, որտեղից շարժվեցինք դեպի Ղարաքիլիսա⁵⁹: Բայց մինչև Ղարաքիլիսա հասնելը Թարգոնց տաճուն ինձ տարավ Ղշլաղ⁶⁰ գյուղից դեպի հյուսիս՝ Ջալալօղլի⁶¹ լեռնանցքի հարավային կողմում գտնվող Բզովղալ⁶² հայաբնակ գյուղ, որովհետև նրանց հորթը հասել էր այդտեղ: Ես, Բզովղալից հորթը դնելով պարանոցիս, բռնելով ոտքերից, մինչև Ղշլաղ գյուղ հասցրի, որտեղ կանգնած էին գաղթականների սայլերը:

Վերջապես գաղթականների քարավանը շարժվեց դեպի Ղարաքիլիսա: Հասանք կայարանամերձ փողոցն ու կանգ առանք, որովհետև քաղաքի կենտրոնում վառվում էր ռազմամթերքով լի պահեստը, այն ժամանակվա լեզվով ասած՝ չախավուզը:

Ճակատամարտի տպավորություն էր թողնում, պայթում էին փամփուշտները, արկերը, վառողը և այլն: Գիշերն անցկացրինք փողոցում հորդ անձրևի տակ՝ սայլերի վրա: Կեսգիշերին տեսա մարդիկ պարկերը շալակած գնում են: Պարզվեց՝ կայարա-

56 Գյուղ Շիրակի մարզում՝ Ախուրյան շրջկենտրոնից 5 կմ հյուսիս-արևելք: 1946 թ. վերանվանվել է Կառնուտ:

57 Վերին և Ներքին (Մեծ և Փոքր) Քյափանակները գտնվում են Շիրակի մարզում: Փոքր Քյափանակը 1945 թ. վերանվանվել է Հովիտ, Մեծ Քյափանակը 1935 թ.՝ Մուսայելյան:

58 Համամլուն գտնվում է Լոռու մարզում: 1949 թ. վերանվանվել է Սպիտակ:

59 Ղարաքիլիսան գտնվում է Լոռու մարզում: 1935 թ. վերանվանվել է Կիրովական, 1992 թ.՝ Վանաձոր:

60 Ղշլաղ գյուղը գտնվում է Լոռու մարզում: 1946 թ. վերանվանվել է Ժղանով, իսկ 1960-ական թվականներից ներկայիս Վանաձոր քաղաքի քաղամասերից մեկն է:

61 Ջալալօղլին գտնվում է Լոռու մարզում: 1924 թ. վերանվանվել է Ստեփանավան:

62 Բզովղալը գտնվում է Լոռու մարզում: 1978 թ. վերանվանվել է Բազում:

նի պահեստներից շաքար են տանում: Ես էլ գնացի, ճանապարհին սրան-նրան հարցնելով՝ վերջապես հասա երազած շաքարի պահեստին, ներս մտա, շաքարի պարկը հապճեպ գցեցի շալակս ու հասա մերոնց: Պարկով լիքը շաքարը տեսնելով՝ բոլորը շատ ուրախացան:

Առավոտյան անձրևն արդեն դադարեց, դադարեցին նաև ռազմական պահեստի կրակոցները: Բայց սկսվեցին թուրքական հորդանների համազարկերի կրակոցները:

Թուրքերը ճեղքում են մերոնց ճակատը և շարժվում են դեպի Ղարաքիլիսա:

Գաղթականությունը, տեսնելով թուրքերի առաջխաղացումը, դիմում է փախուստի դեպի Դիլիջան: Ղարաքիլիսայից հետո Վարդանու⁶³ գյուղն է, որից հետո՝ Համգաչիմանը: Հենց այդ ճանապարհին էլ թուրքերը սկսեցին թնդանոթներով հեռահար ռմբակոծել գաղթականների քարավանները, բայց, բարեբախտաբար, վրիպում էին: Մի քանի ժամ այդպես ռմբակոծեցին, սակայն չկարողացան գաղթականներին վնասել: Համգաչիման հասնելու ժամանակ արդեն դադարեց ռմբակոծումը: Դա Ապարանի ճակատամարտում թուրքերին լավ ջարդելու և հետ շարժելու արդյունքն էր:

Համգաչիմանից գաղթականությունը հասավ Դիլիջան: Մենք մեր սայլը քշեցինք գետափ, եզներն արձակեցինք, ջրեցինք: Տավարները սկսեցին արածել: Գիշերը մնացինք գետափին: Առավոտյան Դիլիջանի միջով հասանք Գալավիհն⁶⁴ և բարձրացանք լեռնանցքով Սեմյոնովկա⁶⁵ գյուղը, որից հետո Չբխլու⁶⁶, այդտեղից էլ հասանք Ելենովկա⁶⁷:

Ժողովրդի հույսն ու ապավենն Անդրանիկ գործվարն էր: Ամբողջ գաղթականությունը գնում էր նրա հետևից: Երբ նրանք լուր ստացան, որ Անդրանիկը հետ է դարձել, այլևս առաջ չգնացին և կանգ առան այնտեղ, որտեղ հասել էին:

Իսկ մենք հասել էինք Սևանա լճի ափը: Տեղի թուրքերին քշել էին: Տեղավորվեցինք մալականի Չեյնալ Աղալու⁶⁸ գյուղից դեպի արևելք՝ թուրքական Էֆենդի⁶⁹ գյուղում:

Վեց ամիս մնացինք այդ գյուղում, հացի մասին գաղափար չունեինք: Ինձ համար կարծես թե աշ-

խարհում հաց գոյություն չունեք, չէր էլ ունեցել: Թարգոնց ընտանիքի հետ վեց ամիս հաց չկերանք: Նրանք ոչխար ունեին, տանում էին Երևան, բրնձով փոխում, ոչխարի դիմաց բրինձ էին ստանում և այդպես շարունակ: Հենց բրինձը վերջանում էր, տաժուն ոչխարները քշում էր Երևան և քերում էր բրինձը: Մենք օրական երկու անգամ բրնձով կաթնով էինք ուտում:

Իհարկե, ես էլ պարսպ նստած չէի, տավարն ու ոչխարները տանում էի սարահարթ, սարից գանազան կանաչեղեն էի քաղում՝ խավրժիլ, խաշխաշ, երինջակ, կառ, կոճղեզ (սոխարմատ), սնձամեր, սինձ, գգրիկ (ճլախոտ), ժախ (բոխի), անշտախ և այլ: Նշված կանաչեղենը ինձ համար հաճելի և օգտակար էր: Կշտանալ չունեի: Ուտում էի, ուտում, իսկ երբ իրիկունը հասնում էի տուն, կաթնովն արդեն պատրաստ էր, ու ճաշում էինք բոլորս միասին: Երբեմն էլ Սևանա ծովում էի լողում:

Այսպես ապրեցինք մինչև 1918 թ. աշունը:

Քույր և եղբայր Թարգոնց ընտանիքից և Սևանից բաժանվեցինք, Ախտայից եկանք Քանաքեռ: Հյուսիսային կողմում հոսում էր Չանգու գետը, որի հարթ բարձունքներին ցորեն էր ցանված: Հասկերը շատ ցածր էին, ձեռքով էինք քաղում: Այդ արտին կից ծիրանի այգի կար: Երեկոյան քամին որ փչում էր, ծիրանը ծովի նման թափվում էր գետնին, դե հավաքիր, որ կհավաքես, դե կեր, որ կուտես: Այդ արտատերը շատ բարեխիղճ մարդ էր, լավ կերակրում էր մեզ՝ մտով և մաքուր ցորենի լավաշով և այլ խորտիկներով:

Այդ օրերին շատ լավ սնվեցինք: Մի օր էլ գորանոցի դաշտային խոհանոցի մոտով անցնելիս մի դույլ ծիրանը փոխեցի մտով ճաշի հետ: Մի շերտի էլ խնդրեցի քրոջս համար: Բարի խոհարարը չմերժեց: Եվ այսպես մի քանի օր մնացինք Քանաքեռում:

Մի քանի օր հետո մնաս բարով արեցինք մարդաշեն Քանաքեռին ու անցնելով Չանգուի մյուս ափը՝ հասանք Եղվարդի հացաշատ դաշտերը: Քույր ու եղբայր քաղած ցորենի արտերից պաշար էինք հավաքում, այսինքն՝ գերանդու, փոցխի բերանից մնացած ցորենի կռուսները հավաքում էինք ու լցնում մեր պարկի մեջ: Մեկ էլ երկու տղամարդ եկան, տեսնելով մեր պարկերը՝ կարծեցին, որ իրենց դեզից ենք գողացել: Ու ինձ մի լավ ծեծ տվեցին: Գլուխս ջարդեցին, արյունը թափվում էր շորերիս վրա:

Եղվարդ գյուղից անցանք Ապարանի կողմը: Բայց մինչև Ապարան գնալը մի քանի օր մնացինք Փարպի և Վանքի գյուղերում:

Աշտարակում մասնակցում էինք խաղողաքաղին: Երկհարկանի տուն էր, այգում խաղող էինք քաղում: Քույրս երբեմն էլ նրանց համար ձեռագործ ու կարուճ էր անում: Մենք քնում էինք ներքևի հարկում:

63 Վարդանու գյուղը գտնվում է Լոռու մարզում: 1948 թ. վերանվանվել է Խնձորուտ: Այժմ Վանաձոր քաղաքի թաղամասերից է:

64 Գալավիհն (Գոլովիհն) գյուղը գտնվում է Տավուշի շրջանում: Ներկայումս մտնում է Դիլիջան քաղաքի շրջագծի մեջ:

65 Սեմյոնովկա գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում:

66 Չբխլու (Չիբուխլու) գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում: 1935 թ. վերանվանվել է Ծովագյուղ:

67 Ելենովկան գտնվում է Գեղարքունիքի մարզում: 1935 թ. վերանվանվել է Սևան:

68 Չեյնալ Աղալու գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում: 1946 թ. վերանվանվել է Չկալովկա: Մինչև 1926 թ. ռուսաբնակ էր:

69 Էֆենդի գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզում: 1938 թ. վերանվանվել է Նորաշեն:

Երբ Աշտարակում խաղողաքաղն ավարտվեց, սկսեցինք հնձանում խաղող ճմռել: Հանում էինք ոտնամանները, տան մեծի հսկողությամբ սկսում էինք խաղողը տրորել, իսկ մյուս կողմից ծորակի միջից խաղողի հյութը լցվում էր մեծ կարասները: Այդպես շարունակվում էր մինչև խաղողի մշակման վերջը:

Մինչև խոր աշուն մենք ապրեցինք այդ հյուրընկալ տանը: Ընդհանրապես հայտնելով նրանց՝ շարունակեցինք մեր աստանդական կյանքը: Ծարժվելով դեպի Ապարան՝ հասանք Ալի Քուչակ⁷⁰ գյուղ: Տեղավորվեցինք գյուղի հարավարևելյան կողմի տնակներից մեկում: Ապարանցիների մեջ մնացել էին հային հատուկ հոգատարությունն ու հյուրասիրությունը մարդու նկատմամբ:

Արդեն ձմեռնամուտ էր: Մենք շարժվեցինք դեպի արևմուտք, հասանք Տանագիրմազ⁷¹, որը Ապարանի վերջին գյուղն էր: Մի օր մնալուց հետո հասանք Հաջի Խալիլ⁷², որն Արագածի հյուսիսային սարալանջին էր: Երբ Ապարանը կազմավորվեց՝ որպես առանձին շրջան, այն դարձավ Արագածի շրջկենտրոնը:

Ապարանում ձմեռը շատ ցուրտ է լինում, ցորեն չի աճում, այլ միայն գարի: Գյուղի կենտրոնում մի տուն կար: Տանտերը գոմի օդայում մեզ տեղ տվեց: Ցուրտ ձմեռ, գոմի տաք օդա, կարծես դրախտում լինեինք: Ես նրանց անասուններին էի նայում, կերակրում էի, ջրում, թրիքը թափում:

Այդպես անցավ 1918 թ. ձմեռը, և եկավ գարունը: Մենք պետք է այդ գյուղից չվեինք: Մեզ միացավ կոտորածից մեզ նման փրկված Մեթոն (4 եղբայրներից միայն նա էր փրկվել), որի հետ էին գոհված եղբայրների երկու դուստրերը: Նրանց հետ հասանք Գյոզալդարա⁷³ գյուղ: Քրոջս ու երկու աղջիկներին տեղավորեցինք մի կիսափուլ տան մեջ, իսկ մենք ուղղություն վերցրինք դեպի Ալեքսանդրապոլ: Հասանք Դոխդազիրմազ⁷⁴:

Երկու օր հետո քրոջս հետ եկանք Ալեքսանդրապոլ: Տուն ճարելու համար չնեղվեցինք, քանի որ տեղի թուրքերին քշել էին, նրանց տները դատարկ էին: Բնակչության մեծամասնությունը կազմում էին արևմտահայերը: Քաղաքի կարգ ու կանոնը նրանց էր պատկանում: Առաջին օրը մի տեղացի ինձ տարավ և ամբողջ օրը ձեռքի մեքենայով թութունի տերևներ քաշել տվեց: Տերևները դնում էին մեքենայի

ներսում, իսկ ես, բռնակից բռնած, պտտեցնում էի անիվը, որը մանր կտրտում էր թութունի տերևները: Նա ամբողջ օրն ինձ սոված աշխատեցրեց, երեկոյան չնչին գումարով վարձատրեց, որով ես ու քույրս մի երկու օր ապրեցինք:

Ալեքսանդրապոլը բաժանված էր չորս լիազորությունների, որոնք քաղաքի բնակչությանը հաց էին բաժանում: Օրական մեկ անձին տրվում էր 100 գրամ հաց, ստանալու համար հարկավոր էր գրանցվել և ստանալ հացի գրքույկ:

Մեզ տեղափոխեցին Ալեքսանդրապոլի կենտրոնական փողոցի հյուսիսային կողմում կառուցված երկհարկանի մի տուն: Տեղավորվեցինք երկրորդ հարկի մի սենյակում: Այդ շենքն ուներ մեծ բակ, որտեղ շատ խիտ տեղավորված էին գաղթականները:

Բակի գաղթականների հացը բաժանում էր Սմբատ անունով մի երիտասարդ, որը Կաղզվանի շրջանի Ջոճի կամ Ջոչի⁷⁵ գյուղից էր: Նա կշեռքին այնքան լավ էր տիրապետում և այնպես էր օրապահիկի հացը բաժանում գաղթականներին, որ օրական երեք բուխանկա հաց էր ավելացնում:

Մի անգամ սկսեցի փողոցներում թափառել: Մեկ էլ հասա Գիմնազիայի փողոց, որը քաղաքի արևմտյան կողմում էր: Այգու փողոցից անցնելու ժամանակ բռունցքի չափ ճմռված փող էր ընկած: Ծտապ վերցրեցի, և մի քանի օր լավ ապրեցինք:

Անգլիական զորաբանակը տեղավորված էր Ալեքսանդրապոլի հարավային կողմում, որտեղ ռուսական նախկին կազակների զորանոցներն էին: Անգլիական զորքի մեծ մասը հնդիկ էր: Նրանք անգլիացի մյուս զինվորներից շատ բարյացակամ էին մեր նկատմամբ, մեզ՝ անչափահասներին, շոկոլադ էին հյուրասիրում: Այդ զորքերը ժամանել էին Ալեքսանդրապոլ, որ թուրքերին ետ քշեն մինչև հին սահմանը: Եվ վերջապես եկավ այդ օրը, թուրքի շները ետ քաշվեցին, բացվեցին հայ ժողովրդի ապրելու, ուրախության օրերի դռները: Առաջին հերթին պետք է գնային Կաղզվանի գավառի և Չղրբի, երկրորդ հերթին՝ Կարսի և շրջակայքի, երրորդ հերթին՝ Սարիղամիշի գավառի գյուղերի բնակիչները, որից հետո՝ Օլթիի, Արդահանի, Արդվիհի և Չարիշատի բնակչությունը: Այդ գավառները գտնվում էին Կարսի հյուսիսային կողմում:

Մինչև թուրքերի ետ քաշվելը Ալեքսանդրապոլի բնակչությունն ապրում էր մահվան ճամբարում՝ սովալլուկ, դեղնած դեմքերով, ուռած ոտքից մինչև գլուխ:

Ամեն օր դիակներով բարձված ձիու սայլը գալիս-կանգնում էր մեր բակի առաջ, և բղավում էին. «Մեռել կա, բերե՛ք»: Դեռ քիչ թե շատ ուժ ունեցող

70 Գտնվում է Արագածոտնի մարզում՝ Ապարան քաղաքից 8 կմ հարավ: 1935 թ. վերանվանվել է Քուչակ:

71 Տանագիրմազ (Դանագիրմազ) գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում (1946 թ. վերանվանվել է Հովիտ, 1967 թ. -ին՝ Նիզավան):

72 Գտնվում է Արագածոտնի մարզում: 1946 թ. վերանվանվել է Ծաղկահովիտ:

73 Գտնվում է Արագածոտնի մարզում: 1946 թ. վերանվանվել է Գեղաձոր:

74 Գտնվում է Արագածոտնի մարզում: 1946 թ. վերանվանվել է Հնարերդ:

75 Մինչև 1920 թ. հայաբնակ գյուղը գտնվում է Կարսի մարզի Կաղզվանի գավառի Նախիջևանի գավառակում: Այժմ քրդաբնակ է և վերանվանվել է Յաղլըջա:

մարդիկ դիակը շարունակում էին սայլի մեջ: Նրանց համար նախօրոք փոսեր էին փորված, լցնում էին այդ փոսերի մեջ: Եվ այդպես ամեն օր:

Հաց բաժանող Սմբատը գաղթականների հետ Կաղզվանի Ջոշի գյուղ մեկնեց: Նրա գնալուց հետո Սմբատի պաշտոնն ինձ տվեցին, և ես սկսեցի հացը բաժանել: Այդ ընթացքում երբեք չկարողացա գաղթականների խղճուկ օրապահիկից հաց գողանալ: Ստացած հացը բաժանելու ժամանակ հագիվ էի ծայրը ծայրին հասցնում: Հիվանդացա: Մեր բակում գաղթականների հացը հսկող մատուցողը մի աղջիկ կար: Նա շատ հոգատար էր իմ նկատմամբ, բժիշկ կանչեց, նշանակված դեղերը բերեց, ամեն օր հետևում էր իմ առողջանալուն: Մի խոսքով, ես նրա շնորհիվ առողջացա:

Սարիղամիշում

Վերջապես մենք դուրս պրծանք Ալեքսանդրի մահվան ճամբարից և հասանք Սարիղամիշ քաղաք, որն իր դրախտի դռները բացեց սովակույ գաղթականների առաջ և գրկաբաց ընդունեց եկվորներին:

Քույր և եղբայր Սարիղամիշում առաջին անգամ եղել էինք: Էնվեր փաշայի զորքերի ջարդվելուց հետո: Նա ձմեռն էր արշավել Սարիղամիշի վրա, իսկ մենք գարնանը գնացինք: Ինչքան էլ որ հավաքել էին թուրքերի դիակները, բայց դեռ քաղաքի փողոցների ջրատարներում թափված էին դրանք: Ինձ համար շատ շքեղ էր Սարիղամիշը: Շրջապատված էր սլացիկ տսիներով, խիտ անտառներով, որոնք մի արտակարգ շքեղություն էին տալիս այդ հիասքանչ քաղաքին:

Գետը քաղաքը կիսում էր արևմուտքից դեպի արևելք: Քաղաքից դեպի արևմուտք՝ գետի ափին, հանքային թթու ջուր կար: Տոն օրերին քաղաքի հասարակությունը կետրոնանում էր այդտեղ, և սկսվում էին դիոլ-գուռնայի զրնգոցն ու մարդկանց երգն ու պարը:

Սարիղամիշի պահեստներում կուտակված էր հսկայական քանակով ցորեն, վարսակ, ձավար և այլ մթերքներ: Վերադարձող գաղթականներին իրավունք վերապահվեց (անգլիացիները թույլ չէին տվել թուրքերին քաղաքի պաշարը հետները տանել) երեք օր շարունակ ամբարներից տանել այնքան մթերք, որքան կարող էին թե՛ ուտելու և թե՛ ցանելու համար: Մի խոսքով, Սարիղամիշը զվարթացրեց մեռելային գույն ստացած սովակույ գաղթականներին, մոռալ դեմքերին տվեց մարդկային կերպարանք:

Մեր օրվա ապրուստն էլ ապահովված էր: Կարճ ժամանակ անց վերականգնվեցին իմ ուժերը: Տեսնելով քաղաքում զինվորների զորավարությունները՝ ամբողջ էությամբ հափշտակված էի զինվորագրվելու գաղափարով: Վերջապես մի օր գնացի և ներկայացա՝ հայտնելով, որ ցանկանում եմ զինվոր դառնալ: Հրամանատարն ինձ ոտքից զլուխ չա-

փեց և մերժեց՝ ասելով, որ դեռ զինվորացու չեմ: Բայց մի դեպք պատահեց, որի պատճառով ես դարձա զինվոր: Թուրքերը Սարիղամիշից հարավ-արևելք խորացել էին մոտավորապես 50 կմ, որտեղ չեքքեզական մի գյուղ էր ծվարած:

Այդ ամենի պատճառով Սարիղամիշի բնակչությանը տեղահան արեցին, լցրին բեռնատար վագոնները Կարս տեղափոխելու նպատակով: Հնարավոր էր, որ թուրքերը հասնեն Սարիղամիշ և վնաս տան բնակչությանը:

Մինչ գնացքի շարժվելը ես անդրդվելի էի. ոչ մի կերպ չէի նստում վագոն, չնայած քույրս շատ էր աղերսում: Երբ գնացքը սուրաց դեպի Կարս, իսկ ես դատարկ կայարանում մնացի, քայլերս ուղղեցի դեպի զորանոց: Այս անգամ արդեն հրամանատարը, ժպիտը դեմքին, գովելով իմ համառությունը, ընդգրկեց չորրորդ գնդի հինգերորդ վաշտին կից կամավորական խմբում: Այդպես ես հասա իմ նպատակին, ինձ հագրին ամերիկյան զինվորական հագուստ, հրացան տվեցին և այլն:

Հաջորդ օրը թնդանոթներով, մաքսիմ և կոլտ գնդացրային վաշտերով շարժվեցինք դեպի հարավ: Մաքսիմ գնդացրային վաշտի հրամանատարը ռուս սպա Մաքսիմովն էր, իսկ կոլտ գնդացրային վաշտի հրամանատարը՝ ինձ համար շատ սիրելի Լիպարիտ Մյուշյանը: Մեր վաշտի հրամանատարն Իջևանի շրջանի Կոթի գյուղացի Սարատնիկովն էր, որին Վանիչկա էին ասում:

Երեկոյան զորաբանակը շարժվեց Սարիղամիշից դեպի հարավ-արևելք՝ Համանլու գյուղի վրա: Մենք գնում էինք անտառների միջով, հետո բաց տարածություններով ու ձորերով: Վերջապես կեսգիշերին տեղ հասանք: Թշնամու դիրքերը, ռազմական ուժն ուսումնասիրելու նպատակով հետախույզ ուղարկեցինք: Որոշ ժամանակ անց հետախույզը վերադարձավ և իր հետ բերեց մի ասկյարի: Նա պատասխանեց բոլոր հարցերին, որի հիման վրա հրամանատարը կազմեց հարձակման ծրագիր: Չորքը, թնդանոթները, գնդացիները բաժանեց երեք մասի՝ երեք ուղղությամբ հարձակվելու համար:

Հարձակման հրամանը եղավ նշված ծրագրով: Հանկարծահաս հարձակվեցինք թուրքերի վրա, թնդանոթների, գնդացիների փոթորկալից կրակը շփոթ առաջացրեց թշնամուն չսպասող, հանկարծակիի եկած թուրքական զորաբանակի մեջ, և ստեղծված խուճապը ապահովեց հայ զորքի հաղթանակը: Փախչում էին խուճապահար, գլխիկոր, թուրք հրամանատարությունն անգոր էր զսպելու զորքի փախուստը: Գերեվարված գերմանացի և թուրք սպաներին ու զինվորներին հրամանատարությունն ուղարկեց Կարս:

Հաղթանակից հետո երկու օր գյուղում մնալուց հետո վաշտերը շարժվեցին դեպի Սարիղամիշ: Գյուղում, ըստ կարգադրության, մնաց միայն մի վաշտ:

Ես վերցրել էի սպիտակ պղնձով զինվորական մի կաթսայիկ, որը բերմեբերան լցված էր հալած յուղով:

Հաղթական գործն արդեն Սարիղամիշում էր, իսկ Կարսից վերադարձավ Սարիղամիշի բնակչությունը, որոնց թվում էր նաև իմ քույրը:

Քույրիկս տեղավորվել էր քաղաքի հյուսիսային կողմում զինվորականների համար կառուցված փայտե տներից մեկում, որի առջև անցնում էր սալահատակված ճանապարհը: Տուն գնալիս ես ոտքերս ուժգին և դիտմամբ հարվածում էի սալահատակ ճանապարհին, որպեսզի լսեին, որ ես զինվոր եմ: Ինձ համար հպարտություն էր զինվոր լինելը: Քույրս ինձ տեսնելուն պես իսկույն վեր էր թռչում տեղից, փաթաթվում ինձ ու ասում, որ ես այդ հագուստով նման եմ իսկական սպայի: Երկուսիս սիրտն ուժգին բաբախում էր ուրախությունից ու հուզմունքից. չէ՞ որ աշխարհում մենք երկուսով էինք և ուրիշ ոչ մի հարազատ չունեինք:

Չորրորդ գնդի հինգերորդ վաշտին կից կամավորական խումբը ձուլվեց հինգերորդ վաշտի մեջ, իսկ մեծահասակներն ազատվեցին: Ես դարձա հինգերորդ վաշտի զինվոր:

Սարիղամիշ վերադառնալուց հետո ամեն առավոտ սկսվեցին զինվորական շարային մարզանքները: Երբ վաշտը շարվում էր, վաշտի ավագը զեկուցում էր վաշտի հրամանատարին զինվորների առօրյա մարզումների մասին: Վաշտի հրամանատարը Վանիչկա Սարատնիկովն էր: Նրանք երկու եղբայրներով ծառայում էին Սարիղամիշի զորագնդում: Փոքր եղբոր անունը Համբո էր: Երկուսն էլ շատ լավ մարդիկ էին: Մեծ եղբայրը կոչումով լեյտենանտ էր, իսկ փոքր եղբայրը՝ պրապորշչիկ՝ կրտսեր լեյտենանտ:

Սարիղամիշը զինվորական քաղաք էր: Քաղաքի սահմանապահ զորամասի չորրորդ գնդին կից կար մի խումբ: Կոչվում էր Մխոյի խումբ, քանի որ խմբապետի անունը Մխո էր: Այդ խումբը Սարիղամիշի հարավային սահմաններն էր պաշտպանում: Հարավային սահմանով Ալաշկերտը բաժանվում էր Ներքին Բասենից, այսինքն՝ այդ լեռնաշղթայի հարավային կողմում Ալաշկերտն էր, իսկ նրա հյուսիսային կողմում՝ Ներքին Բասենը, և այդ լեռնաշղթայի այս կողմի ստորոտում ծվարել էին քրդական գյուղեր: Գրանց կենտրոնը Չառաբխանա գյուղն էր: Այդտեղ հայտնաբերվել էին ոսկու հանքեր, բայց շահագործման չէին ենթարկվում:

Մխոյի խումբը նստում էր Չառաբխանա գյուղում: Նա ծնկի էր բերել քրդերին և այնպիսի սարսափ տարածել քրդական գյուղերում, որ երբ քրդի երեխան քնում էր, նրա մայրը երեխային ասում էր. «Մու՛ս, սու՛ս, Մխոն կգա (հաշ, հաշ Մխո հատի)»: Ահա այդպիսին էին Մխոն և նրա խումբը: Չորրորդ գնդին մատակարարողն էլ մեծ մասամբ Մխոն էր: Գնդի զինվորները լավ էին սնվում: Մեկ էլ տեսար

Սարիղամիշը լցվում էր տավարներով ու ոչխարներով: Ես Մխոյին երբեք չէի տեսել, այլ միայն նրա համբավն էի լսել:

Չորրորդ գնդի սահմանապահության տարածքը սկսվում էր Ներքին Բասենի հարավային լեռնաշխարհից, ձգվում էր դեպի արևմուտք և թեքվում հյուսիս: Գնդի արևմտյան և հյուսիսարևելյան սահմանները սկսվում էին Ներքին Բասենի սահմանամերձ գյուղերից: Անցնելով Ղարաուրղանի վրայով՝ հասնում էր մինչև հայոց Տայքի այն մասը, որը ցարական Ռուսաստանը կիսել է Թուրքիայի հետ, այսինքն՝ Արևելյան Տայքը մտնում էր ռուսաց սահմանի մեջ, իսկ արևմտյանը մնացել էր թուրքերին: Հայոց Տայքը մի չնաշխարհիկ երկրամաս է:

Չորրորդ գնդը պաշտպանում էր Ներքին Բասենի Չոլախլու, Խոշգյալդի, Ստեփան գյուղերը, երբեմն նաև Բաշգեղից Մժնկերտ:

Սարիղամիշի հյուսիսային կողմը սկսվում էր Մերդենիկից, Օլթիից, Արդահանից, Արդվիհից, որոնք պաշտպանում էին երկրորդ-երրորդ գնդերի սահմանապահ զորամասերը: Նրանց հետ մենք առնչություն չունեինք:

Չորրորդ գնդի վաշտերը հերթով էին պաշտպանում սահմանը: Ամեն մի վաշտ մեկ ամիս կանգնում էր սահմանագլխի տարբեր ուղղություններով: Ամիսը լրանալուց հետո վերադառնում էր Սարիղամիշ հանգստանալու, իսկ Սարիղամիշում հանգստացող վաշտը փոխարինում էր նրան, և այդպես շարունակ:

Մեր վաշտն իր սահմանային առաջին մկրտությունը ստացավ Սարիղամիշի հարավային կողմի Բաշգեղ գյուղում, որը հեռու էր Սարիղամիշից քառասուն կիլոմետր: Մաստիկ ձմեռ էր, սառնամանիք: Առատ տեղացած ձյան բարձրությունն անցնում էր մեկ մետրից և դժվարացնում էր առաջխաղացումը դեպի Բաշգեղ գյուղ: Չյունը փակել էր ճանապարհները: Մեր վաշտը մի շաբաթից ավելի ոչ լուր և ոչ էլ մթերք ստացավ: Կապ չկար: Չինվորները սովի էին մատնվել, իսկ Բաշգեղն անբնակ էր: Բնակիչները վաղուց էին լքել գյուղը: Չինվորները գնում էին, գյուղի կալերի ձյունը մաքրում էին, կալում մնացած հացահատիկը հարդից մաքրում-բերում էին, և դրանով ապրում էինք: Մի անգամ էլ տղաներից երեք հոգի բարձրացան սարը՝ որս անելու, բայց ոչ մի կենդանի չէր հանդիպել: Տղաները միայն մի գայլ էին խփել: Քերթեցինք միսը, վառած թոնրում խորովեցինք:

Գարունը եկավ, ձյունը հալվեց, ճանապարհները բացվեցին, վաշտի հրամանատարը եկավ, իհարկե, մթերքի հետ: Իսկ սահմանը պահելու մեր ժամկետը լրացավ, և մեր վաշտը տեղափոխվեց Սարիղամիշ՝ հանգստանալու: Իսկ քաղաքում փառավոր կյանք էինք վայելում. տեղավորված էինք ցարական շատ լավ զորանոցներում, որտեղ տիրում էր զինվորական իսկական կարգուկանոն,



ՍԱՐԻՂԱՄԻՇ. տեսքը Ի դարի սկզբներին



մահճակալները և անկողինները մաքուր էին, օրական երեք անգամ տաք ճաշը կար և այլն: Սակայն տրված օրապահիկը չէր հերիքում, մենք կարտոֆիլի կեղևը եփում էինք և ուտում:

Ավարտվեց մեր վաշտի մեկ ամսվա հանգիստը: Կարգադրություն ստացանք մեկնել արևմտյան կողմի սահմանը հսկելու, որը Սարիղամիշից հեռու էր մոտավորապես 60 կմ: Հասանք լքված հունական Քյոռոզլի գյուղ: Այն դարձավ մեր վաշտի հանգրվանը: Վաշտի կեսը մնաց գյուղում, իսկ մյուս մասը Չամբարդախ անունով մի սարի երկարությամբ հսկում էր սահմանը գյուղի թիկունքում: Թուրքերի սահմանը Թոփդաղն էր: Մի փոքրիկ գետակ էր այդ երկու սարերն իրարից բաժանում: Նրանց սահմանապահ զորամասն այնքան էլ հեռու չէր: Ցերեկը պարզ տեսնում էինք իրար:

Մի անգամ հրաման եղավ, որ գիշերով պետք է հարձակվենք թուրքերի սահմանապահների վրա և գրավենք Թոփդաղը: Հարձակման պատրաստվելու համար հանեցինք ամերիկյան զինվորական կոշիկները, տրեխներ հագանք և գիշերով անաղմուկ շարժվեցինք երեք ուղղությամբ՝ աջ, ձախ և կենտրոնով:

Մեր վաշտը պետք է շարժվեր կենտրոնով: Մենք իջանք սարից, անցանք հովիտը, հետո փոքրիկ գետակը և դեմ առանք Թոփդաղին: Շատ շուտով կամաց, առանց շշուկի համարյա թե հասանք նրանց գիշերապահներին, պահակների բերանները փաթաթեցինք շինելներով և թուրքերին հանկարծակի բերելով՝ անաղմուկ հարձակվեցինք նրանց խրամատների վրա և գրավեցինք նրանց դիրքերը: Մեծ մասը շապիկով քնած էր: Այդ խառնաշփոթի մեջ թուրք հրամանատարությունը վախից գլուխը կորցրել էր, վեր կացողը կա՛մ սվինի, կա՛մ էլ գնդակների էր հանդիպում, կա՛մ էլ գլխիկոր գլորվում էր սարն ի վար՝ դեպի Բարդուղ: Վերջապես մի մասին կոտորեցինք, մի մասին էլ սպիտակ շապիկներով ու վարտիքներով գլորեցինք դեպի Բարդուղ: Նրանց մի մասն էլ գերի ընկավ, որոնց թվում կային նաև գերմանացի սպաներ: Թուրք կառավարության պարագլուխ Զյոռ Քամալը հայտարարում էր, որ ձեր դեմ կռվողը բաշիբոզուզն է, այսինքն՝ խուժանը, այլ ոչ թե կանոնավոր զորքը:

Այդ հաղթանակից հետո մենք մեզ պարզատրեցինք հեռախոսներով, որովհետև նրանք ունեին գերմանական հեռախոսներ և սահմանի մի կետից մյուսի հետ կապվում էին հեռախոսով, իսկ մենք չունեինք հեռախոս և մինչ այդ սուրհանդակների միջոցով էինք կապ պահպանում սահմանապահ կետերի հետ: Հետո լրացրինք մեր հագուստի պակասը՝ տիրանալով նրանց ուսապարկերի նոր և մաքուր, սպիտակ փոխնորդներին և այլ հագուստների: Եվ վերջապես տիրացանք նրանց ուտելիքին՝ կաթսաներում եփած մսով փլավին և այլն:

Հետո մյուս օրը գերիներին ուղարկեցինք Սարիղամիշ: Երկու օր մնալով մեր գրավված դիրքերում՝ թողեցինք Թոփդաղը ու վերադարձանք մեր սահմանակետերը, այսինքն՝ Չամբարդախ:

Բարձր հրամանատարության հրամանն էր գրավել և հետ դառնալ: Այնուամենայնիվ, բոլոր հարձակումների ժամանակ հաղթանակը մերն էր: Իններորդ վաշտի հրամանատար ունեինք: Նրան սովորաբար անվանում էին Արջ Պետրոս: Նա զենք չէր բարձրացնում նահանջող թուրքի վրա, ձեռքին ուներ մի մեծ մահակ, այդ մահակն էլ նրա զենքն էր: Հենց որ փախչող թուրք ասկյար էր տեսնում, վրա էր բերում մահակը, թուրք զինվորը տեղնուտեղը մահամերձ փռվում էր գետնին:

Դարձյալ հասել էր հերթափոխի ժամանակը, և մեր վաշտը պետք է թողներ Զյոռոզլու գյուղի Չամբարդախ սարը և գնար հանգստանալու Սարիղամիշ: Մենք վերադարձանք Սարիղամիշ, սկսվեց նախկին կյանքը:

Քաղաքում խոսակցություն տարածվեց այն մասին, որ վաշտի հրամանատար Սարատնիկովը ցանկություն է հայտնել իր դենշիկի (ծառայող) փոխարեն ինձ դարձնի դենշիկ: Երբ այդ լուրը ես լսեցի, չափազանց վիրավորվեց իմ ինքնասիրությունը: Ուրեմն ես պետք է թողնեի զենքը և դառնայի ինչ-որ մի սպայի ծառայող: Ո՛չ, նման ծառայությունը մեր տոհմին հատուկ չէ, լավ է զենքը ձեռքին մեռնել, քան կաշին փրկելու համար մրտաէլ քաջագնական տոհմի պատիվը: Սարատնիկովի ծառան՝ Գարեգինը, Կարսի արևմտյան կողմի Բայբուրդ գյուղից էր: Կարճահասակ էր, այնքան էր կերել, կլորացել էր, իսկ երեսը կարմիր խնձոր էր: Ըստ կարգի՝ ա-

ուսջ նրանք պետք է ստանային ճաշը, հետո զինվորները:

Մերժողական խոսակցություններն իմ և Գարեգինի միջև, ըստ երևույթին, հասել էին Սարատոնիկովին: Վերջինս, հարգելով իմ ինքնասիրությունը, երբեք այդ հարցով ինձ չկանչեց և չանհանգստացրեց՝ դառնալով էլ ավելի հարգելի:

Այդ ժամանակաշրջանում հեղափոխական մթնոլորտը շիկացած էր, ընդհատակը գործում էր: Մեր վաշտից երկուսը, որոնք անցել էին Հոկտեմբերյան հեղափոխության բովով, ևս մասնակցում էին ընդհատակյա աշխատանքներին: Մի գիշեր մեր և այլ վաշտերից հավաքել էին ընդհատակի մասնակիցներին: Առավոտյան տեսանք, որ տղաները չկան, տարել էին ու բանտարկել և զինվորական հագուստների փոխարեն հագրել էին բանտարկյալի հագուստներ Կարս ուղարկելու համար:

Առավոտյան մեր վաշտն անտառի եզրով շրջապատեց սպայակույտի շենքը՝ պահանջելով տղաներին ազատել, եթե ոչ, համազարկով գրավելու ենք շենքը: Մի քանի նախազգուշացումներից հետո տղաներին դուրս թողեցին, ամեն մեկը գնաց իր վաշտը: Մենք հաղթել էինք: Տղաները մեզ անվանում էին իրենց ազատարարները: Այս դեպքն այսպես ավարտվեց մեր օգտին: Մեր վաշտի հրամանատար Սարատոնիկովը շատ խիստ էր, ամեն մի զանցանքի համար հրամայում էր տղաների հետույքները մտրակահարել, որը հաճախ էր կրկնվում և հոգեբանորեն ազդում էր տղաների վրա: Մի օր էլ որոշեցինք պահանջել վաշտի հրամանատարի հրաժարականը: Նրա ծառային՝ Գարեգինին, ասացինք, որ հրամանատարին հայտնի, որ այսուհետև թող վաշտ չգա, եթե գա, կխփենք:

Բոլորս, լուրջ դիրք ընդունած, նստած էինք ճաշարահում, մեկ էլ Սարատոնիկովը եկավ, գորանոցի դրսի դուռը բացելով՝ կանգնեց դռան մեջտեղում: Մենք բոլորս նստած մնացինք:

Մյուս օրը փոխզնդապետ Պապոնցն ամբողջ վաշտը շարեց գորանոցի երկարությամբ և հրամայեց երկու քայլ առաջ գալ նրանց, ովքեր չեն ուզում Սարատոնիկովին: Ամբողջ վաշտը մի մարդու նման առաջ շարժվեց: Հետո նա երկար-բարակ սկսեց համոզել, որ մեր վարքագիծը զինվորական կարգապահության խախտում է և այլն: Սակայն մենք անդդվելի էինք, և Սարատոնիկովի փոխարեն մյուս օրը վաշտ եկավ նոր հրամանատար, որը ոզնու նման վիզը փորը քաշած օձագալարի պես արտաքին ուներ: Մենք մեր խելքից զրկվեցինք իսկական, բացարձակ ազնիվ հրամանատարից:

Նոր հրամանատարը Կարո Հախնազարյանն էր՝ Դամարուի շրջանի Վերին Արտաշատ գյուղից:

Ռուսաստանում արդեն հաղթանակել էր հեղափոխությունը: Սարիղամիշի շորրորդ գնդում առկա էր հեղափոխական շունչը: Հեղափոխության այդ եռուզեռի մեջ քնած չէր դաշնակցական կառավարու-

թյունը: Նա գաղտնի կերպով գիշերը Սարիղամիշ ուղարկեց գեներալ Հովսեփյանին: Նույն գիշերը վաշտերից հավաքել էին ընդհատակում գործող հեղափոխականներին: Առավոտյան զինվորները լսեցին, որ գիշերը տղաներին հավաքել են Կարս տանելու համար: Դա նշանակում էր մահ:

Սարիղամիշում հանգստացող վաշտերը կարճ ու կտրուկ պահանջեցին գնդի հրամանատար գնդապետ Միրիմանյանից ազատ արձակել տղաներին: Նա համոզում էր, որ իբր թե իր պատասխանատվությամբ տղաներին Կարս չեն ուղարկի: Այս բոլորը կատարվում էր գեներալ Հովսեփյանի ներկայությամբ, բայց նա լուռ էր: Նրա պարտականությունը կատարում էր գնդի հրամանատար Միրիմանյանը:

Միրիմանյանը, ճիշտ է, համոզեց վաշտերին գնալու ամենօրյա մարզումների, սակայն չկարողացավ հավատ ներշնչել, թե, իրոք, կկատարի իր խոստումը: Դրա համար մենք գնացինք զինվորական պարապմունքի, բայց վստահելի անձանց պատվիրեցինք տղաներին գնացք տեղափոխելու դեպքում իսկույն մեզ տեղեկացնել դրա մասին: Մեր բախտը բերեց, քանի որ մեզ ուղարկեցին մարզվելու հարավարևելյան երկաթգծին գուգահեռ հարթավայրում: Նստած հանգստանում էինք, երբ տղաներից մեկը, ձին քառատրոփ քշելով, բղավում էր՝ տղերանցը տարան...

Այդքանը բավական էր, մենք իսկույն ոտքի կանգնեցինք և ուզում էինք վազել դեպի հյուսիսարևելյան երկաթգծի ուղղությամբ, երբ Կարո Հախնազարյանը հրամայեց կարգով շարժվել, որպեսզի մենք գնացքին չհասնեինք: Իսկ ո՞վ էր լսողը:

Արագ վազքով կտրեցինք-անցանք հինգ կիլոմետր տարածություն և հասանք գնացքին՝ պահանջելով կանգնեցնել, եթե ոչ համազարկով կվնասեինք շոգեքարշը: Մեքենավարն առանց դանդաղելու կանգնեցրեց գնացքը: Մենք սարալանջից ցած թափվեցինք և վագոնից դուրս քաշեցինք տղաներին: Այդ լարված վիճակում ես հանկարծ գլուխս վեր բարձրացրի և տեսա մեր նախկին հրամանատար Սարատոնիկովին ու նրա եղբորը՝ Համբոյին, որոնք կանգնած էին վագոնի միջանցքում:

Կալանավորված հեղափոխականներին ազատելուց հետո մեր հրամանով գնացքը սլացավ դեպի Կարս, իսկ մենք մեր ազատված ընկերների հետ շարժվեցինք դեպի Սարիղամիշի մեր գորանոցները:

Չորրորդ գունդը սահմանապահ գորամաս էր և իսկույն էր Հայաստանի արևմտյան սահմանները: Մեր վաշտի մեկ ամսվա հանգստի ժամանակը լրացել էր, և մենք դարձյալ պետք է շարժվեինք դեպի սահման:

Հասանք Քյոռոզլի գյուղ, վաշտի մի մասը մնաց գյուղում, իսկ մյուս մասը բարձրացավ Չամբարդախ սարը և սկսեց սահմանը իսկելու հերթապահությունը:

Մի անգամ ես Սարգիս անունով մի զինվորի հետ գիշերային գաղտնի հերթապահության էի: Քունս սաստիկ նեղում էր ինձ: Սարգիսն ասացի, որ չեմ կարողանում աչքերս բանալ, մի քիչ քնեմ: Սարգիսը համաձայնվեց: Մեկ էլ հանկարծ գնդացրային հախտուն կրակոցներից վեր թռա, և ի՞նչ տեսնեմ, Սարգիսը խոնարհ էր, և ինչպես ասում են, հայոց աշխարհը այրվի, նրա մի խորոմ խոտը չի վառվի:

Կրակոցներից իսկույն հասկացա, որ թշնամին կա՛ն եկել է, կա՛ն էլ շարժվում է առաջ: Հիմա անհամբեր սպասում եմ, որ գնդացրային կրակը մի փոքր դադարի, որպեսզի հասկանամ, թե ի՞նչ է կատարվում: Խրված էինք փոսի մեջ, որի առաջ ցրտից պաշտպանվելու համար քարեր էինք շարել: Ես վեր կացա, նայեցի առաջ, մեկ էլ ի՞նչ տեսնեմ, գիշերվա մթության քողի տակ թշնամին մեզանից մի տասը քայլի վրա էր, ինչպես մի սև անտառ: Նրանք վաղորոք եկել և մեր դիմաց շղթա էին կազմել՝ չիմանալով մեր պահակակետերի տեղը. չէ՞ որ եթե իմացած լինեին, մեզ շուրջկալի մեջ առնելով՝ հեշտությամբ կհասնեին մեր դիրքերին և կջարդեին մեր քնած գործին: Հենց որ թուրքերն ինձ տեսան, ալլա՛հ, ալլա՛հ գոռալով՝ սկսեցին արշավել դեպի մեր պահակակետը: Այդ ժամանակ ես, ինձ չկորցնելով, ռումբը նետեցի նրանց շղթայի մեջ, որը խառնաշփոթ ստեղծեց նրանց շարքերում և առաջ-խաղացումը մի փոքր կասեցրեց:

Ես արագ վրայիցս շարտեցի ծածկոցը (ցուրտ քամին թրատում էր սառը օդը, դրա համար էլ մենք, բացի շինելից, թաղիքաձև ծածկոցներով էինք փաթաթված) և սկսեցի փախչել: Սարգիսը ծանրաշարժ էր, մինչև վեր կացավ, ուզում էր ծածկոցը վրայից շարտեր, այն փաթաթվեց ոտքերին, ու վայր ընկավ: Ես վազում էի օձի մամն, որպեսզի գնդակներն ինձ չհասնեին: Հասա բարձունքին, որտեղ մեր հյուղակներն էին, դիրքերում մարդ չկար. բոլորը փախել էին, միայն սերբաստացի մի զինվոր էր մնացել՝ Արտավազը: Ես նրան շտապեցնում էի, որ արագ փախչի, իսկ նա, փամփշտակալներն ու հրացանները զցելով շալակը, անդադար կրկնում էր.

–Ծո՛, ատոնք ի՞նչ մարդիկ են, մեր զենքերը, մեր փամփշտակալները թողել են թուրքերին ու փախել են:

Արտավազը հաղթանդամ էր, ոչ Սարգիս նման դժբրած: Երկուսով թռանք դեպի վաշտերը: Ես հասա նահանջող վաշտերի աջ թևը, որը ղեկավարում էր վաշտի ավագը՝ կարնեցի Արտաշեսը: Հենց որ հասա նրանց, նրանք չհավատացին, որ ես կենդանի եմ: Նրանք կարծել էին, թե իմ նետած ռումբը թուրքերն են նետել, իսկ ես գերի եմ ընկել:

Արտաշեսը խոստովանեց, որ իրենք հույսը դրել էին գիշերային պահակների վրա և խոր քուն մտել: Այսպիսով, իմ աշարժությունը և նետած ռումբը մեզ փրկեցին մահից:

Փրկվել էր նաև Սարգիսը: Փախչելիս նա ընկել էր մեր շղթայի ճախ կողմում, իսկ ես՝ աջ կողմում:

Այդ հարձակումից հետո մենք զինվորի ոչ մի կորուստ չունեցանք, իսկ թուրքերն իրենց նպատակին չհասան, միայն իրենցից խլված հեռախոսները հետ տարան: Նրանք էլ մեզ նման հաջող օրը թողեցին մեր դիրքերը և նահանջեցին Թուփդաղ՝ դեպի իրենց դիրքերը: Այդ արարքով թուրքերը ցանկանում էին մեր օրինակով վրեժ լուծել մեզանից: Սակայն հարձակումն անարդյունք ավարտվեց նրանց համար:

Մենք նորից բարձրացանք Չամբարդախ, շարունակեցինք սահմանի պաշտպանությունը: Մի քանի օր հետո հարձակման հրաման եղավ, այս անգամ մենք պետք է հարձակվեինք Ղարաուրդանից դեպի հյուսիս, այսինքն՝ Բարդուղից դեպի Մերդենիկի ուղղությամբ: Մեր վաշտերին միացան այլ վաշտեր: Հարձակման հրամանատարը փոխգնդապետ Պապոնցն էր: Սրա նպատակն այն էր, որպեսզի ուղղություն մտցնեին նախկին սահմանագծում, քանի որ թուրքերն այդ ուղղությամբ առաջ էին անցել:

Բացի գնդացիներից՝ կային նաև թնդանոթներ, բոլոր գորամասերը շարժվում էին անաղմուկ, առանց ծխելու: Կեսգիշերին տեղ հասանք: 10 հետախույզներս (դրանց թվում էի նաև ես), շարժվելով ձորերով առանց շշուկի, հասանք թուրքերի սահմանագծին, թաղվեցինք խոտերի մեջ և ուշիուշով հետևում էինք, որպեսզի պարզենք թուրքերի գիշերային գաղտնի պահակների վայրը և նրանց վիճակը: Բախտը մեզ ժպտաց, մեզանից հեռու անցավ մի նապաստակ, որն էլ առիթ դարձավ թուրքերի գաղտնի պահակների տեղը հայտնաբերելու համար: Երբ խոր լռություն տիրեց, մենք բաժանվեցինք երկու մասի և սողեսող առաջ շարժվեցինք՝ հասնելով նրանց պահակակետերին: Շինելներով փաթաթեցինք թուրքերի գլուխները և բերանները, ձեռքերը կապեցինք և այդ ձևով նրանց հասցրինք մեր գորամաս: Նույնանման հաջողության էր հասել նաև մեր մյուս հնգյակը թուրքական մյուս գաղտնի պահակների նկատմամբ: Չորսհրամանատարությունը մանրամասն տեղեկություններ հավաքեց գերեզմարված թուրքերից (նրանց նախազգուշացված էր, որ եթե տվյալները ճիշտ չլինեն, տեղումուտեղը սրախողխող են լինելու, իսկ նրանք երդվում էին իրենց դուրանով):

Ըստ կազմած ծրագրի՝ մեր զորքն անցավ հարձակման: Թուրքերի համար անսպասելի էր մեր հարձակումը: Նրանք կրակի օղակի մեջ էին. մի կողմից գնդացիների, մյուս կողմից թնդանոթների կրակոցները խուճապի էին մատնում նրանց, իսկ թնդանոթների հեռահար կրակոցներից թուրքերի դիրքերը տակն ու վրա էին լինում: Նրանց մեծամասնությունը ջախջախվեց, իսկ մնացածները դիմեցին փախուստի:

Այսպիսով, մենք գրավեցինք թուրքական դիրքերը: Թուրքերն այս ճակատամարտում մեծ զոհեր տվեցին, իսկ իններորդ վաշտի հրամանատար Արջ Պետրոսն այս անգամ էլ, ինչպես միշտ, զենք չբանեցրեց և թուրքերին զետի՛ն էր տապալում իր մահակով:

Այդ ճակատամարտը մեծ հեղինակություն բերեց հայոց զորքին: Մենք ձեռք բերեցինք հսկայական ռազմավար, գերեվարեցինք գերմանացի, թուրք սպաների և 100-ից ավելի զինվորների: Այս հաղթանակը թուրքական կառավարությանը ստիպեց հայ-թուրքական սահմանագիծն ուղղել ռուսների ժամանակ գծված սահմանագծերով, այսինքն՝ Բարդուղի և Մերդենիկի ուղղությամբ: Մեր հաղթանակից հետո ամեն մի վաշտ վերադարձավ իր սահմանագիծը, սահմանի նոր ուղղությամբ ավելացան նոր զորամասեր, իսկ մեր վաշտը վերադարձավ Քյոռոզլի գյուղ՝ հսկելու Չամբարդախի սահմանագիծը:

Կարճ ժամանակ անց մեր վաշտին փոխարինեց մեկ այլ վաշտ, և մենք վերադարձանք Սարիղամիշ՝ հանգստանալու:

Մայիսյան ապստամբությունը

Մեր հինգերորդ վաշտը կարծես առանձնահատուկ վաշտ էր այն իմաստով, որ ամեն մի հանգստի գնալու ժամանակ անպայման պետք է հեղափոխական անցուդարձ տեղի ունենար: Այս անգամ էլ վրա հասավ Մայիսյան վերջնական և վճռական ապստամբությունը: Մայիսի 11-ի գիշերը մինչև լույս մեր հեղափոխական գործիչները բանակցություններ էին վարում դաշնակցական կառավարության կողմից լիազորված Օդաբաշյանի, խմբապետ Ղարիբյանի, Մխչյի և այլոց հետ, սակայն դրանք անարդյունք էին վերջացել:

Մայիսի 11-ի առավոտյան կապիտան Չմշկյանը, ձին նստած, անցնում էր զորանոցների փողոցների երկարությամբ և հրամայում էր հրամանատարներին վաշտերը հանել դաշնակցականների վրա արշավելու: Նա երեք անգամ անցավ մեր զորանոցի առջև ու վաշտի հրամանատար Կարո Հախնազարյանին նույնպես հրամայեց կատարելու իր ասածը: Կարո Հախնազարյանը կանգնած էր զորանոցի դռան մոտ և չէր թողնում, որ տղաները դուրս գային: Տեսնելով, որ առաջին, երկրորդ վաշտերը դուրս եկան և շարժվեցին դեպի դաշնակցական վարիչների շենքը, մենք վերցրինք մեր զենքը և շարժվեցինք այդ ուղղությամբ: Հախնազարյանին այլևս բան չմնաց, բացի լռելուց: Մեր վաշտն արագ ընթացքով հասավ վաշտերին: Իմ և տղաների արարքը խոցեց Հախնազարյանին: Նա իմ նկատմամբ դարձավ ոխակալ և ամեն կերպ ցանկանում էր վարկաբեկել ինձ:

Առաջին վաշտի դասակի հրամանատար Մեդրակ Պապոյանը՝ որպես ցարական զինվոր, անցել

էր Հոկտեմբերյան հեղափոխության բովով և մեծ աշխատանք էր կատարել զորամասերում՝ բացատրելով հեղափոխության նշանակությունը: Նրա փոքր եղբայրը՝ Բագրատը, ծառայում էր մեր վաշտում: Մեղրակն ինձ շատ էր սիրում, իսկ երբ մայրը գալիս էր որդիներին տեսակցելու, շատ սիրալիր էր իմ նկատմամբ: Նրանք վաղուց էին գաղթել և բնակություն էին հաստատել Ներքին Բասենի Արմտլու գյուղում, որը Սարիղամիշի հարավային կողմում էր՝ 40 կմ հեռու: Մեղրակը թույլ էր, իսկ Բագրատը՝ մոր նման սպիտակամորթ: Երկուսն էլ բարձրահասակ էին, գեղեցիկ արտաքինով, օժտված մարդկային բարձր հատկանիշներով: Մեղրակն ավելի բանիմաց էր, կազմակերպված, հայրենասեր և մարդասեր:

Մինչև դաշնակների շենքի վրա հարձակվելը Մեղրակը՝ որպես բանագնաց, սպիտակ դրոշով ուղղություն վերցրեց դեպի դաշնակների շենքը: Սակայն խմբապետ Ղարիբյանը պատուհանից մաուզերի կրակոցներով Մեղրակին զետի՛ն տապալեց, որը մահացավ մինչև բուժկայան հասնելը: Այդ լուրը ցնցեց գնդի հեղափոխական բոլոր զինվորներին, և նրանք վրեժի ցասումով հարձակվեցին դաշնակ կառավարիչների շենքի վրա և գրավեցին այն:

Մենք հարձակվում էինք շենքի հարավային կողմից, իսկ դաշնակներ Օդաբաշյանը, Ղարիբյանը և այլք փախչում էին հյուսիսարևելյան դռնից, քրդերի և սարսափ համարվող խմբապետ Մխոն էլ վրիժառու գնդակով փռվել էր ախոռում՝ ձիու ոտքերի տակ, ըստ երևույթի, նա էլ իր ընկերների նման ցանկացել էր ձիով ճողոպրել, սակայն բախտը չէր ժպտացել:

Հարձակումը պակասակց հաղթանակով, որից հետո իմ ջոկը նշանակվեց շենքի պաշտպան: Ես պահակներ կարգեցի շենքի շուրջը լուրը: Մխոյի դիակը տեղափոխեցինք շենքի առաջին հարկի սենյակներից մեկը և թույլ տվեցինք, որպեսզի նրա կինն ու երեխաները վերջին անգամ տեսնեն նրա աճյունը: Նրանք երկու ժամից ավելի կսկծացին ու ողբացին իրենց հարազատի մահվան համար և գնացին:

Հաջորդ օրը՝ առավոտյան, իմ ջոկը տեղափոխվեց կայարան, որտեղ տեղավորված էր ռազմահեղափոխական կոմիտեի կազմը: Նրա պաշտպանությունը հանձնեցին իմ ջոկի հսկողությանը:

Քաղաքը և այնտեղ գտնվող վաշտերը բաժանված էին երկու մասի:

Առաջին, երկրորդ, հինգերորդ և գնդացրային, մարզական և սահմանագծում եղած վաշտերն անցել էին բոլշևիկների կողմը: Նրանց էր պատկանում քաղաքի կայարանը և կայարանամերձ հյուսիսային մասը: Մեր կողմն էին անցել նաև մաքսիմ և կոլտ գնդացրային վաշտերը: Մաքսիմ գնդացրային վաշտի հրամանատարն ազգությամբ ռուս էր՝ Մաքսիմովը: Նա հարել էր բոլշևիկյան կազմակերպությանը:

Իսկ գնդի իններորդ, տասներորդ վաշտերն իրենց հրամանատարների՝ Արջ Պետրոսի և Գանդաքյանի ազդեցությամբ հարել էին դաշնակցականներին, և քաղաքի հիմնական մասը՝ հարավային կողմը, մնացել էր նրանց հսկողության տակ: Սակայն դաշնակներն այնքան էլ վստահ չէին այդ վաշտերի վրա:

Չորրորդ գնդի հեղափոխական մյուս վաշտերը գտնվում էին սահմանագծում: Մի խոսքով, քաղաքում տիրում էր լարված իրավիճակ:

Քաղաքի մարտկոցն ուղղված էր մեզ վրա՝ դեպի հյուսիս, իսկ մաքսիմ և կոլտ գնդացիները հետտիտոնի զինվորների վաշտերի հետ դիրքավորված էին կայարանի դիմացի հյուսիսային բարձունքների վրա, և նշանառության ուղղությունը վերցված էր դեպի հարավ, քաղաքի այն մասի ուղղությամբ, որը պատկանում էր դաշնակցականներին:

Չնայած երկու կողմերն էլ պատրաստ վիճակում էին, բայց իրար վրա հարձակվելու ազդանշան չկար: Գնդապետ Միրիմանյանը չնայած բացահայտ բոլշևիկների կողմը չէր, բայց ներքուստ համակրում էր նրանց: Այդ էր ապացուցում նաև նրա գործելակերպը: Ամեն կերպ աշխատում էր, որպեսզի վաշտերի միջև բախում տեղի չունենա, և համոզում էր, որ մենք համախմբված կովել ենք թշնամու դեմ, իսկ հիմա ինչու երկու եղբայրները իրար դեմ պետք է կռվեն:

Նա, անկախ իր պաշտոնից, անգամ խնդրում էր զինվորներին, որ եղբայրասպան կոտորած չլինի: Գնդապետ Միրիմանյանը, իրոք, կարողացավ մեղմացնել շիկացած մթնոլորտը, նրա միջնորդությամբ բախումը տեղի չունեցավ:

Քաղաքի ռազմահեղափոխական կոմիտեն գլխավորում էր Անդրանիկ Ճուղուրյանը, որն էլ ձեռնարկեց ապրանքատար վագոններից գրահապատ գնացք կառուցելու փորձերը:

Ջրահապատը կառուցում էին երկաթգծի երեք վարպետները, որոնցից մեկը ռուս էր: Վագոնների չորս կողմը քսան սմ լայնությամբ տախտակներ էին ամրացվում և եղած միջուկներում լցնում էին ցեմենտի ու ավազի շաղախը, որից հետո վագոնները պատում էին գնդակ շծակող քիթեղով, և ամեն մի վագոնի ներսից անցքեր էին թողնում և այդ անցքերում տեղավորում մաքսիմ գնդացիներից չորսը վագոնի մի կողմում, չորսը՝ մյուս կողմում: Իսկ ես գիշերները հսկում էի ժամապահներին, ցերեկը պատրաստում էի ցեմենտի ու ավազի շաղախը՝ տախտակների միջուկը լցնելու համար: Այդ ձևով պատրաստվեց գրահապատը: Ջրահապատի գիշերային արշավանքների նպատակն էր վերականգնել Կարսի և Սարիղամիշի բոլշևիկների կապը և օգնել Կարսի հեղափոխությանը: Արշավանքը ղեկավարում էր Անդրանիկ Ճուղուրյանը՝ տիպիկ հայկական դեմքով, միջահասակ, նիհար, սև վերարկուն հագին:

Այդ գիշերային արշավանքների ժամանակ իմ ջոկը միաժամանակ նշանակվեց նաև գրահապատի պաշտպան: Տեղ հասնելուն պես ջոկի զինվորները դուրս էին գալիս և շարվում գրահապատի շուրջը՝ պաշտպանելով դաշնակցականների հարձակումներից: Ջրահապատով հասնում էինք Սեյլիմբեի կայարան, Ճուղուրյանը գնում և հեռախոսով կապվում էր Կարսի բոլշևիկների հետ:

Գիշերային արշավանքները շարունակվեցին մինչև մայիսի 18-ը: Նույն գիշերը, երբ Ճուղուրյանը կայարանից կապվեց Կարսի հետ, այնտեղից դաշնակցականները կատաղությամբ և կոպիտ կերպով պատասխանել էին.

—Կորե՛ք ձեր բոլշևիկներով:

Արդեն պարզ էր, որ Կարսի հեղափոխությունը տասպալվել է, որի արդյունքում Սարիղամիշը մեկուսացվեց:

Խանջյանը ժամանակին գրել էր, որ ամբողջ Հայաստանում Մայիսյան ապստամբությունը տասպալվել է, իսկ Սարիղամիշում դեռ ծածանվում էր հեղափոխության ալ դրոշը: Դա այդպես էր, սակայն ի՞նչ պետք է աներ մեկուսացված Սարիղամիշը, երբ Արևելյան Հայաստանում տասպալել էին ապստամբությունը, իսկ խմբապետ Մեպուհը գրահապատով ժամանեց Սարիղամիշ, հավաքեց Սարիղամիշի բոլշևիկյան հեղափոխական կազմը և լցրեց գրահապատի մեջ:

Խմբապետ Մեպուհն իր հետ տարավ Անդրանիկ Ճուղուրյանին, Լիպարիտ Մխչյանին, Ստեփան Խուլզարյանին, կապիտան Հակոբյանին, կապիտան Չմշկյանին, Արվիհարին, Կարգաշին, Լ. Նալբանդյանին, Կոխմանին, Մատիշկինին, Մամվելին: Նրանք մինչև Կարս հասնելը սպանում են Ճուղուրյանին, Մատիշկինին, Կոխմանին, Մամվելին, կապիտան Չմշկյանին և դիակները նետում Կարսից 3 կմ հեռավորության վրա գտնվող լճի մեջ:

Մայիսյան ապստամբության առատ բերքը հրմ-ձեցին աշնանը: 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվեց Խորհրդային Ընկերվարական Հանրապետություն:

Մայիսյան ապստամբությունից հետո բաժանված չորրորդ գնդի վաշտերը կազմ ու պատրաստ շարունակեցին Սարիղամիշի սահմանագծի պաշտպանությունը: Մեկ ամիսը լրանալով՝ մեր վաշտը շարժվեց դեպի սահմանագլուխ: Չնայած դարձյալ տեղավորվեցինք Քյոռոզի գյուղում, բայց այս անգամ ոչ թե Չամբարդախում, այլ մեր պաշտպանած սահմանագիծը դարձավ Ղարաուրդանը:

Ներկայիս Ղարաուրդանն այն Ղարաուրդանը չէր, որ մինչև 1914 թ. պատերազմը այցելել էինք հորս հետ և հյուրընկալվել հույն Կոստանի տանը: Քաղաքատիպ այդ ավանի միջով անցնող գետի վրա զգված կամուրջը երկու պետությունների սահմանագատման հանգուցակետն էր, որի արևելյան ծայրը ռուսական սահմանապահներն էին հսկում,

իսկ կամրջի արևմտյան ծայրը՝ թուրքական գործա-
մասերը: Ես այն ժամանակ ի՞նչ իմանայի, որ զին-
վոր կդառնամ, և բախտը ինձ նորից կժպտա, ու ես
այդ նույն կամրջի արևելյան կողմում՝ որպես սահ-
մանապահ, կպաշտպանեմ հայկական սահմանը:

Գարաուրդանից միայն փլատակներն էին մնա-
ցել: Նախկին շեն ու գեղեցիկ ավանից ոչինչ չկար,
դրա համար էլ մեր վաշտը տեղավորվեց Քյոռոզլի
գյուղում: Մեր սահմանային հանգուցակետը գլխա-
վորապես նշված կամրջի արևելյան ծայրն էր, իսկ
պահակատունը կամրջի ծայրից հեռու էր երկու
հարյուր մետր, որտեղից երկու ժամապահներ տես-
նում էին իրար:

Մի օր գիշերային հերթապահ էի: Թուրք սահմա-
նապահները բոլորը միասին հավաքվել էին սահ-
մանի կամրջի ծայրին և ձայնեցին ինձ, թե արի մեզ
մոտ: Ես թուրքերեն պատասխանեցի, որ գիշեր ժա-
մանակ չի թույլատրվում մի պետության պահակա-
կետից անցնել մյուս պետության պահակակետը:
Երբ նրանցից մեկը սկսեց առաջանալ դեպի իմ կող-
մը, ես հրացանն ուղղեցի նրա ուղղությամբ: Այդպես
իմ պահակության ժամը սպառվեց, և պահակապե-
տը ինձ փոխարինող բերեց: Մեկ էլ թուրքերը նորից
սկսեցին կանչել մեզ իրենց մոտ: Մերոնց առաջար-
կեցի միանալ նրանց: Մենք գնացինք, միասին
նստեցինք ու սկսեցինք զրուցել, մեկ էլ նրանց գիշե-
րային հերթապահ սպան եկավ, նրանց պահակա-
պետը սկսեց զեկուցեց, որ իր հերթապահության
ժամանակ ոչ մի դեպք չի պատահել: Սպան մի շա-
ռաչուն ապտակ հասցրեց նրա երեսին՝ թուրքերեն
ասելով, որ գիշերային պահակության ժամանակ
այլ պետության զինվորների հետ չի թույլատրվում
նստել միասին: Այդ նախազգուշացումից հետո
շատ քաղաքավարի սկսեց մեզ հետ զրուցել, իհար-
կե, ոչ թե զինվորական հարցեր էր տալիս, այլ ուղ-
ղակի հետաքրքրվում էր, թե մենք որտեղից ենք:

Մեր չորրորդ գնդի զինվորների մեծամասնու-
թյունը Արևմտյան Հայաստանից էր՝ կոտորածից
մազապուրծ բասենցի, դերջանցի, երզնկացի, սե-
բաստացի, կարնեցի և այլն:

Նա, այդ լսելով, ասաց.

–Բոլորը մեր տղաներն են, դե եկե՛ք, ձեր հայրե-
նիքում ապրե՛ք:

Եվ այսպես բավական երկար ժամանակ ան-
կեղծ զրուցում էինք մենք և թուրք սպան: Հետո նա
գնաց՝ անհետանալով գիշերային խավարում, իսկ
մենք էլ վերադարձանք մեր պահակակետը:

Հետագայում՝ Բաքվի հանքահորերում աշխա-
տելիս, վերհիշում էի և զոջում կատարվածի համար:
Անհետատես քայլ էր մեր կողմից: Չէ՞ որ հնարավոր
էր, որ թուրքերը, դիտմամբ կանչելով իրենց սահմա-
նի մոտ, կարող էին զինաթափել մեզ, գերեվարել, և
սահմանն արդեն ազատ էր:

Նահանջ

Սահմանապահության մեկ ամսվա ժամկետն
արդեն լրացել էր, և մենք վերադարձանք մեզ հա-
մար շատ սիրելի դարձած Սարիղամիշ: Շարու-
նակում էինք մեր առօրյա զինավարժությունները:

Վերջին շրջանում սահմանի բոլոր ուղղությու-
ններում որոշ ժամանակ խաղաղություն էր տիրում,
սակայն այդ խաղաղությունը չարագուշակ լու-
թյուն էր:

Վերջին անգամ մեր վաշտը դարձյալ սահմա-
նագլխում էր, դարձյալ Քյոռոզլի գյուղում: Գիշերը
բոլորս քնած էինք, երբ գիշերային պահակը լեղա-
պատառ ներս ընկավ և բղավեց, որ թուրքերը գալիս
են: Դա խառնաշփոթ առաջացրեց քնաթաթախ
տղաների մեջ: Կրակոցները շատ հեռվից էին գալիս:
Մենք զինված դուրս եկանք, շարվեցինք Չամբար-
դախ սարի առջևի հարթավայրում, ձորի միջի ձո-
րակով բարձրացանք երկու սարերի փոքրիկ հովիտը
և հասանք դիմացի արևելյան սարը: Թուրքերն ար-
դեն սարի արևմտյան կողմում էին և շրջվել էին սար-
ի արևելյան երեսը: Հայտնվել էինք դեմ դիմաց, իսկ
այդ երկու սարերն իրարից բաժանում էր մի փոքրիկ
ձորահովիտ, այնպես որ շատ պարզ տեսնում էինք
իրար: Դա նահանջ էր, մեր զորքերն արագ ընթաց-
քով բարձրանում էին սարն ի վեր: Մեր վաշտից
Սմբատ անունով մի զինվորի ոտքերը թուլացան, նա
չէր կարողանում քայլել: Ես վերցրի հրացանը, ուսա-
պարկը դրի ուսիս և իրեն քարշ տալով՝ բարձրանում
էի սարն ի վեր. հո նրան չպետք է թողնեի թուրքերին
գերի: Մեր զորքն արդեն անցել էր սարի այն կողմը,
իսկ մենք երկուսով մնացել էինք, և թուրքերի գնդակ-
ները վզում էին մեր շուրջը:

Վերջապես հասանք սարի գագաթը և շրջվե-
ցինք մյուս կողմը: Մեր զորքը պառկած վիճակում
շղթա էր կազմել՝ ճակատամարտ ընդունելու, իսկ
մեր զինասայերը սարի արևմտյան կողմից դուրս էին
եկել արևելյան ուղղությամբ և հասել էին մեր զոր-
քին և հարթավայրով շարժվում էին դեպի Սարիղա-
միշ: Ես Սմբատին նստեցրի սայլերից մեկին:

Սկսվեց հանկարծահաս հարձակումը: Այդ օրը,
երբ հարձակվեցին մեզ վրա, միևնույն հարձակումը
սկսվել էր Հայաստանի հարավային, արևմտյան և
հյուսիսային սահմանների վրա: Մեր վաշտը շղթա
էր կազմել՝ ճակատամարտ տալու համար: Թուրքե-
րը ռմբակոծում էին: Մժնկերտի գիշերային խավա-
րում պարզ երևում էր թնդանոթների, արկերի
բոցկլտացող կրակը: Ես նայում էի, և սիրտս մոր-
մոքվում էր. չէ՞ որ միակ քույրիկս հացքաղի կա-
պակցությամբ գտնվում էր Մժնկերտում: Մտածում
էի, որ գուցե չկարողանան փախչել ու մնան գերի:
Այդ մտքերի մեջ խորասուզված էի, երբ հնչեց նա-
հանջի հրամանը: Մենք առանց կանգ առնելու հա-
սանք Սարիղամիշ:

Իսկույն գնացի այն տունը, որտեղ բնակվում էր
քույրիկս: Սայլերի անիվների թողած հետքերից

կռահեցի, որ սայլ է բակ մտել, հետո բռնել վերադարձի ճանապարհը: Ազատ շունչ քաշեցի. քույրիկս փրկված է:

Մեր չորրորդ գունդը, որը սարսափ էր տարածել թուրքական սահմանապահ զորամասերի վրա, այսօր դարձել էր հսպնեպ նահանջող գունդ: Եվ մենք հասանք Կարսի արևմտյան կողմում գտնվող Բայբուրդ գյուղի սահմանների մոտ:

Գյուղից վերև՝ Դոշդայա կոչված սարի մոտ, մենք ուժեղ ճակատամարտ տվեցինք: Այդ սարը թուրքերը գրավել էին և ամրացել էին խրամատներում, նրանք բարձունքի վրա էին, իսկ մեր վաշտը գտնվում էր ցածրում: Թուրքերը չկարողացան դիմանալ մեր ուժեղ գրոհին և թողեցին բարձունքը ու նահանջեցին դեպի արևմուտք: Գրավելով այդ ամրությունը՝ մենք այն պահեցինք մի քանի օր: Արդեն վերջացել էին մեր փամփուշտները, սպասում էինք ռազմամթերք ստանալուն: Բայց ի՞նչ... դրա փոխարեն սայլեր են բեռնված սննդամթերքով ու դարկել դեպի ճակատամարտ:

Երբ մենք գրավեցինք լեռնագագաթը, միևնույն ժամանակ հյուսիսային կողմի մեր երկրորդ և երրորդ գնդերի զորամասերն առանց դիմադրելու խուճապահար նահանջում էին՝ լքելով ձախ թևի հարթ տարածության դիրքերը, իսկ մեր ուղղությամբ հարձակում չկար: Դա երևում էր մեր գրաված բարձունքից:

Փաստորեն մենք մնացել էինք օդակի մեջ: Դրությունն անտանելի էր: Փամփուշտները սպառվել էին: Նահանջելու համար սպասում էինք գիշերային խավարին: Թուրքերը, ըստ երևույթին, հասկացան այդ և հարձակվեցին մեզ վրա, իսկ մենք նահանջեցինք: Ինձ հասակակից և ինձ նման կոտորածից փրկված մանկական ընկերոջս՝ Գևորգի հետ սարն ի վար փախչում էինք: Գնդակները թափվում էին մեզ վրա, մի քանի գնդակ դիպան իմ շինելի փեշերին, բայց Գևորգը վիրավորվեց ու վայր ընկավ: Նրան բարձրացրի, մի քանի քայլ անելուց հետո նորից ընկավ և այլևս չկարողացավ վեր կենալ...

Շատ էի կտրվել մեր զորամասից: Առանց շփոթվելու ինձ զցեցի դիմացի ձորակի մեջ: Երբ գնդակներն ինձ այլևս չէին հասնում, դուրս եկա այդ ձորակից և հարթավայրով հասա մեր նահանջող զորքին:

Բայբուրդ գյուղը թողնելով՝ հասանք Կարսի արևմտյան կողմի Վարդանյու կոչված բարձունքներին և ամրացանք այդ խրամատներում:

Մեր ձախակողմյան զորամասերը խուճապահար նահանջում էին թուրքական հեծելազորի առջևից: Մերոնք արդեն թուրքերին էին թողել Օլթին, Արդահանը, Արդվինը և Ջարիշատը: Կարսի հարավային կողմում էր գտնվում Գետիկսաթմաշ հայկական մեծ գյուղը: Այդ գյուղից դեպի հարավ՝ Փարքիդ գյուղի գերեզմանների մոտից, ինչպես ստում են, մի ջրաղաց դարձնող ջուր էր դուրս գալիս:

Կարսի շրջակայքի գյուղերն ինձ վրա մեծ տպավորություն էին թողել:

Գետիկսաթմաշ գյուղում էին հավաքվել տարբեր գնդերի հրամանատարներ: Մեր աջակողմյան զորամասի հրամանատարն էր Մազմանյանը:

Ես նրան առաջին անգամ շատ մոտիկից տեսա այդ գյուղում: Նա շատ հասարակ էր հագնված, շինելն առանց ուսադիրների էր, արտաքին կեցվածքը՝ հայկական, բարձրահասակ, խոշոր խոհուն սև աչքերով: Գետիկսաթմաշ գյուղի հավաքից հետո նա մեկնեց իր զորագունդը, որը պաշտպանում էր Կարսի հարավային ճակատը Կաղվանի ուղղությամբ: Երբ դաշնակ կառավարության հրամանատարությունը կարգադրում է թողնել Կաղվանի պաշտպանությունը և նահանջել, հայրենասեր Մազմանյանի վրա սոսկալի ազդեցություն է գործում այդ հրամանը, և նա դիմում է ինքնասպանության, որպեսզի չտեսնի հայկական շքեղ երկրամասի կորուստը: Հայրենասեր զորապետ Մազմանյանի ինքնասպանության ցավալի լուրն ազդեց բոլոր նրանց վրա, ովքեր սիրում էին հայրենիքը: Նրա դիակը տեղափոխեցին Կարս: Իսկ Կարսը թուրքերին հանձնելու հետ միասին գերի մնաց նաև Մազմանյանի դիակը:

Կարսի նահանջը

Կարսում կոտակված զորամասերից երկրորդ, երրորդ, հինգերորդ գնդերը մտցրին բերդերը: Բացի այդ՝ Կարսի բերդում տեղավորված էին 350 բերդային թնդանոթներ, իսկ չորրորդ գունդը առանձին-առանձին տեղավորեցին Կարսից դեպի արևելք տարբեր ուղղություններում: Մեր հինգերորդ վաշտը տեղավորվեց Կարսից դեպի արևելք գտնվող Բոշագայիմ գյուղում: Կարսի մարզի բոլոր գյուղերն ամայացել էին, ի թիվս նաև այն գյուղի, որտեղ մենք էինք տեղավորված: Նրա տարածքը ցածր էր Կարսի հարթավայրից:

Թուրքերը հարձակվում էին արևմուտքից, հյուսիսից և հարավից, իսկ դաշնակ հրամանատարությունը Կարսի բերդերում դիրքավորված զորամասերին թույլ չտվեց դիմադրություն ցույց տալու: Անառիկ Կարսն առանց կռվի հանձնեցին մեր դարավոր թշնամուն: Բացի դրանից՝ Արևմտյան Հայաստանից գաղթած ժողովրդին Կարսի բնակչության հետ միասին թույլ չտվեցին գաղթելու: Նրանց մի մասին մի կերպ հաջողվեց գաղթել, իսկ այն մասը, որ չկարողացավ, մնաց ու կոտորվեց:

Մի օր հրաման եկավ, որ մեր հինգերորդ վաշտը վազքով պետք է բարձրանա Կարսի դուրանը և թույլ չտա հարավից արշավող թուրքական զորամասերին կտրելու Կարսից եկած գաղթականների ճանապարհը, որ կողոպտի ու կոտորի: Երեք կիլոմետրից ավելի վազքով հասանք բարձունքները, որտեղից արդեն երևում էր ամբողջ Կարսի դուրանը: Շահեն անունով երզնկացի գնդացրորդ ունեինք:

Նա վազքի ընթացքում ձեռքի գնդացրից ցրում էր գնդակները, իսկ մենք էլ համազարկով և վազքով բարձրանում էինք: Երբ արդեն բարձրացել էինք այդ բարձունքը, տեսանք, որ Բերնա գյուղի սարավանջից թուրքական հեծելազորն արշավում էր դեպի խճուղին և երկաթգիծը: Մեր համազարկերից և Շահենի գնդացրային անվրեպ կրակոցներից առջևից արշավող թուրք հրամանատարը ձիուց գլորվեց ցած: Նույն բախտին արժանացան նաև մի քանիսը: Տեսնելով իրենց հրամանատարների սպանվելը՝ մնացածները գլուխները շուռ տվեցին ու փախան: Իջնելով և հասնելով խճուղի՝ մենք խճուղին և երկաթգիծը վերցրինք մեր պաշտպանության տակ՝ թույլ տալով գաղթականներին Կարսից դուրս գալ ու շարունակել գաղթի ճանապարհը: Նրանք եկան ու անցան իրենց սայլերով, ոմանք էլ շալակավորված:

Վրա հասավ գիշերը: Ես խճուղու վրա հերթապահում էի, մեկ էլ նկատեմ, որ մի սպիտակ խրտվիլակ գալիս է դեպի ինձ: Հայ էր՝ առանց հագուստի: Նա պատմեց, որ երբ թուրքերը լցվում են Կարս քաղաքը, նրանք հազիվ հասնում են կայարանի ուղղությամբ: Գիշերը թուրքերը կտրում են նրանց ճանապարհը, կտորորում ու կողոպտում: Նա սպանվածների հետ վայր է ընկնում ու պառկում դիակների մեջ: Թուրքերը հանում են բոլոր սպանվածների հագուստները: Տկլորացնում են նաև նրան՝ կարծելով, թե սպանված է: Ահա այդպես նա գաղտագողի հասնում է մեզ: Նրան հագուստ տվեցի: Գնաց Ալեքսանդրապոլի կողմը:

Մի քանի օր հետո թողեցինք Բոշազայիմ գյուղը, շարժվեցինք դեպի արևելք՝ դեպի Թիկնիզի⁷⁶, Ղզլախախախի⁷⁷ ուղղությամբ: Գիշերը մնացինք Թիկնիզում:

Այդ գիշեր այնքան առատ ձյուն եկավ, մոտ մեկ մետր: Առավոտյան հազիվ ձյան տակից դուրս եկանք: Օրը պարզ էր ու արևոտ: Կեսօր էր, երբ տեսանք, որ կենտրոնական ճանապարհից մի ձիակառք արագ ընթացքով Ալեքսանդրապոլի կողմից եկավ ու անցավ թուրքերի կողմը և մի քանի ժամ հետո վերադարձավ: Հրաման տվեցին, որ մեր զորքն իջնի դեպի խճուղի ու դրա երկարությամբ շարվի:

Մեր հետևից երկու հարյուր մետր հեռավորության վրա թուրքական զորքը շարվեց, և շարժվեցինք դեպի Ալեքսանդրապոլ:

Հասանք Ախուրյան գետի կամրջի արևելյան ծայրին, իսկ թուրքերը մնացին արևմտյան ծայրին: Այսպիսով, նրանք կամրջի այն կողմում էին, մենք էլ՝ այս կողմում: Մի երկու օրից թողեցինք Ախուր-

յանի կամուրջը, շարժվեցինք Խլի-Ղարաքիլիսա⁷⁸, այդտեղից Հոռոմ⁷⁹, հետո Մոլլագյոչկա⁸⁰, որտեղ մի քանի ամիս կանգ առանք: Նշված գյուղերի բնակչությունը գաղթել էր, բայց մարալիկցիները տեղում էին:

Մինչև զարուն մնացինք Մոլլագյոչկայում: Չհասած Բողազքյասան⁸¹ գյուղ՝ ճակատամարտեցինք թուրքերի հետ: Անդրանիկ զորավարի օգնական Սմբատը կռվում էր մեր աջ կողմում: Նա կանգնած էր սալաքարի վրա և հրամաններ էր տալիս: Նա վիրավորվեց: Մի քանի ժամ հետո ես նույնպես վիրավորվեցի աջ ոտքից: Պառկեցի Բողազքյասանի բուժարանում, և ապաքինվելով դուրս գրվեցի: Մեր վաշտը Կոշում⁸² էր:

Երբ Թալինի վրայով գնում էի Կոշ՝ միանալու մեր վաշտին, Թալինի ճանապարհի ժայռերի մեջ զինված մարդիկ էին թաքնված: Ես զենք չունեի, միայն մի ռումբ էր մնացել մոտս: Գլուխները բարձրացրին ու ինձ հարցրին, թե ո՞վ եմ, ո՞ր եմ գնում: Պարզվեց, որ նրանցից մեկը ճանաչում էր մեր ընտանիքին, եղել էր մեր գյուղում: Ինձ փաթաթվեց, համբուրեց ու ասաց.

– Դու փոքրիկ Հովհաննեսն ես, ես ձեր տանը շատ եմ եղել:

Ինձ ճանապարհեցին Կոշ: Նրանք թաքնվել էին այդ ժայռաքարերի մեջ, որպեսզի պատահական մարդկանց կողոպտեին:

Այնտեղ, որտեղ տեղավորված էր մեր վաշտը, հրամանատարը Կարո Հախանզադյանն էր: Նա ցանկանում էր ինձանից ազատվել, դրա համար էլ պատճառաբանեց, թե ոտքիս վերքը չի սպաքինվել: Սարիղամիշի դեպքերից հետո ռիս ուներ իմ նկատմամբ և ուզում էր ինձնից ազատվել: Ես՝ որպես սպացույց, սկսեցի զինվորական հպարտ քայլվածքով ուժգին դուրս գետնին: Տղամերը, այդ տեսնելով, պահանջեցին, որ ինձ զենք տան: Կարոյին այլևս առարկելու տեղ չմնաց: Ձենքս վերադարձրին ինձ, և շարունակեցի զինվորական ծառայությունը:

Մեր վաշտը Կոշում փաստորեն սահմանապահի պարտականություն էր կատարում, քանի որ դաշնակները հայկական մահաճգների հետ նաև թուրքին էին հանձնել Ալեքսանդրապոլը:

Որոշ ժամանակ անց հայտնեցին, որ խմբապետ Դրոն Երևանից պետք է ժամանի Կոշ: Ես լսել էի նրա մասին, բայց չէի տեսել: Իսկ երբ տեսա, ուղղակի հիասթափվեցի. վրաս բոլորովին զինվորականի սպավորություն չթողեց:

78 Խլի Ղարաքիլիսա գյուղը գտնվում է Շիրակի մարզում: 1945 թ. վերանվանվել է Ազատան:

79 Հոռոմ գյուղը գտնվում է Շիրակի մարզում:

80 Մոլլագյոչկա գյուղը գտնվում է Շիրակի մարզում: 1935 թ. վերանվանվել է Մարալիկ:

81 Բողազքյասան գյուղը գտնվում է Շիրակի մարզում: 1935 թ. վերանվանվել է Չորակապ:

82 Կոշ գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում:

76 Թիկնիզ (Տիգնիս) հայաբնակ գյուղը գտնվում էր Կարսի մարզի Բաշ-Շորազայի գավառում: Հայաթափ է 1920 թ.-ից:

77 Ղզլախախախ հայաբնակ գյուղը գտնվում էր Կարսի մարզի Բաշ-Շորազայի գավառում: Հայաթափ է 1920 թ.-ից:

Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ նույն-բերի հաղթանակի լուրը ծածանվեց Կոչի վրա: Մեր վաշտի ուրախությանը չափ չկար: Հաջորդ օրը Սարիղամիշի հեղափոխականներից Կոչ ժամանեց կապիտան Հակոբյանը և ստանձնեց չորրորդ գնդի երկրորդ գումարտակի հրամանատարությունը: Դրանից հետո մի քանի սպաների հետ կալանավորեցին նաև Կարո Հախնազարյանին և տարան Էջմիածին: Թե ի՞նչ եղան նրանք, ինձ հայտնի չէ: Դաշնակցական սպաներից մի քանիսը՝ կապիտան Գանդարյանը, Արջ Պետրոսը և այլք, գիշերով փախել էին:

Մի քանի օր հետո մեր վաշտը հրաման ստացավ մեկնել Ուջան գյուղ՝ զենք ունեցողներին զինաթափելու: Հետևյալ օրը մեր վաշտը թնդանոթներով, գնդացիորդներով հասավ Ուջան և կանգ առավ գյուղի կենտրոնում: Ուջանում մի ձորակ կար, որ գյուղը բաժանում էր երկու մասի: Այդ ձորակով գյուղի վերևից բարձրանում էին դեպի Արագած: Գյուղացիները չհանձնեցին զենքերը՝ պատճառաբանելով, որ իրենք հեղափոխական Հայաստանի կողմն են, սակայն առայժմ թուրք և քուրդ չեթեմեր ավազակային հարձակումների պատճառով զենքերը չեն կարող հանձնել: Այդ զենքերը նրանց անհրաժեշտ են ինքնապաշտպանության համար: Դրանք Սասունի ինքնապաշտպանության զենքերն են, այնտեղից են բերել: Երբ կամրապնդվի սահմանի պաշտպանությունը, նրանք կամովին կհանձնեն դրանք:

Հրամանատարությունը և զինվորները հարգեցին ուջանցիների պատճառաբանությունը: Առանց գյուղացիներին նեղացնելու վերադարձանք Կոչ:

Որոշ ժամանակ անց վաշտը պետք է տեղափոխվեր Էջմիածին՝ հանգստանալու, միաժամանակ պաշտպանելով վանքի պահեստները և ամբողջ ունեցվածքը: Չորքի առօրյա մատակարարումը բավարարում էր Էջմիածնի վանքը:

Մի օր քաղղեկը եկավ վաշտ և հարցրեց, թե ով է ուզում սովորել: Վեցամսյա կուրսեր էին: Ես ասացի, որ ուզում եմ սովորել, քանի որ շատ էի սիրում զինձառայությունը:

Փետրվարյան ավանտյուրան ջախջախելու համար նորից զենք վերցրինք: Մեկ օր հետո վաշտը հրաման ստացավ զնալ նախկին Վեդիի շրջանի Չինաքյանը⁸³ գյուղի ուղղությամբ՝ պաշտպանելու սահմանը թուրքերի դեմ: Դեռ չհասած Չոբանքյարա⁸⁴ գյուղը՝ համազարկեր սկսվեցին Արագածի ստորոտներից, իսկ հրանոթների կրակոցները՝ Քանաքեռից: Մենք հանկարծակիի եկանք, եթե թուրքն է, Հայաստանի կենտրոնի՞ց է դուրս եկել, իսկ եթե

դաշնակներն են, այս կարճ ժամանակամիջոցում ինչպե՞ս կարողացան ուժ հավաքել և հարձակվել նոր ստեղծված հանրապետության վրա:

Նույնբերյան հաղթանակի վրա զենք բարձրացնողները խմբապետ Մուշեղն էր և նրանց մամաները, որոնք հանկարծապես հարձակվում են չորրորդ գնդի և մյուս վաշտերի վրա և մեծ կորուստ են տալիս:

Երբ Էջմիածնի ճակատամարտում տեղի ունեցածը ստուգելու համար վաշտի հետախույզ հեծյալներից մեկին ուղարկեցինք տեղեկություններ հավաքելու, նա գնաց և չվերադարձավ: Մեկ ուրիշ հեծյալ տեղեկություն բերեց, որ Էջմիածնի վրա հարձակվողը մշեցի Մուշեղ խմբապետն էր: Արդեն պարզ դարձավ, որ դաշնակները նորից գլուխ են բարձրացրել:

Մենք այլևս թիկունք չունեինք, հետևաբար պետք է շարժվեինք առաջ: Հասանք Չոբանքյարա գյուղ: Գյուղապետը ցանկանում էր մեզ բաժանել գյուղացիների տների վրա, որպեսզի մասնատեր: Հրաժարվեցինք և պահանջեցինք ամբողջ վաշտին տեղավորել մի վայրում: Նա ստիպված կատարեց մեր պահանջը:

Տեղավորվեցինք գյուղի կենտրոնում՝ ինչ-որ մի ազատ սրահում: Մենք խստացրինք պահակակետերը: Պարզվեց, որ դաշնակցականները շրջապատել են գյուղը, գլխավորապես գյուղի հարավարևելյան կողմից, որի ուղղությամբ մենք պետք է շարժվեինք: Առավոտվա մթնշաղիմ մեր վաշտը, շրթա կազմած, շարժվեց առաջ: Նրանք ցանկանում էին մեզ օղակել, սակայն մեր գնդացիորդների և համազարկերի օղակում բոլորը գնդակահարվեցին: Երբ արդեն գյուղից դուրս էինք գալիս, շարժվում էինք դեպի հարավ-արևելք, գյուղից լավում էին լացուկոծի ձայներ:

Ինձ առաջադրանք տրվեց հետախույզել դաշնակների թիկունքը: Մենք որոշ հեռավորության վրա նշմարեցինք մարդկային ստվերներ, թաղվեցինք ջրատարի փոսերում: Գնալով ստվերները մարդկային կերպարանք ստացան, և արդեն շատ քիչ տարածություն էր բաժանում մեզ նրանցից: Նրանք երկուսով էին: Պարզվեց, որ դաշնակ սուրհանդակներ էին: Խուզարկեցինք և հայտնաբերեցինք ծրարներ, որոնց մեջ գրված էր խիստ գաղտնի հրաման՝ ուղղված գյուղերի կոմիտեներին: Նշված էր հարձակման օրն ու ժամը և այլն:

Նորից առաջ էինք շարժվում, նորից հետախույզություն: Չհասած Շոռլու⁸⁵ գյուղի շրջակայքը՝ ինչ-որ զորամասեր նկատեցի, բայց հնարավոր չէր պարզել, թե ինչ զորամասեր են: Մեկին ուղարկեցի հրամանատարությանը Շոռլու գյուղի մոտակայքում ինչ-որ զորախմբավորումներ նկատելու մասին

83 Չինաքյանը (Ներքին Դարաբաղյար) գյուղը գտնվում է Արարատի մարզում: 1978 թ. վերանվանվել է Ուրցածոր:

84 Չոբանքյարա (Մեծ Չոբանքյարա) ռուսաբնակ գյուղը գտնվում էր Արարատի մարզում: Ապաբնակեցվելուց հետո վերածվել է գյուղատեղիի:

85 Շոռլու (Դեմուրչի Մեծ) գյուղը գտնվում է Արարատի մարզում: 1978 թ. վերանվանվել է Դաշտավան:

զեկուցելու համար: Չկարողանալով պարզել՝ բարեկա՞մ են, թե՞ թշնամի, մենք փոսերով, խանդակներով շարժվում էինք առաջ: Ի վերջո պարզեցի, որ դրանք կարմիր գորամասեր են:

Հաղորդած լուրը ուրախացրել էր վաշտի բոլոր զինվորներին: Նրանք արագ ընթացքով հասան մեզ այն ժամանակ, երբ ես արդեն առանց տատանվելու մոտեցել էի գորահրամանատարին, որը Սարիղամիշի հեղափոխական կոմիտեի անդամ, կոլտ գնդացրային վաշտի հրամանատար, մեր բոլորի սիրելի Լիպարիտ Մխչյանն էր: Գրկախառնվում ենք հարազատների պես:

Շոռլու գյուղում տեղավորված էր նուխեցի Արամի խումբը: Դիմադրությունը կարճ տևեց, և նրանք հանձնվեցին:

Լիպարիտ Մխչյանը Ղամարլուից⁸⁶ գրահապատով ժամանել էր Շոռլուի կայարան: Գերվածներին զցեցին գրահապատ: Մինչև Ղամարլու շարժվելը Մխչյանը կարգադրեց խմբապետ Արամի ունեցածը՝ որպես վաշտի պաշար, պետականացնել, իսկ շրջակայքը վերցնել մեր հովանավորության տակ մինչև նոր հրաման ստանալը: Ինքը շարժվեց դեպի Ղամարլու:

Խմբապետի շենքի պաշտպանությունն ինձ հանձնվեց: Տան շուրջը ժամապահներ կարգեցի: Տունն ուներ մեծ և լայնարձակ սրահ, որտեղ կուտակված էր բրնձի չալթուկ, այսինքն՝ չկպճված, չհանած բրինձ, որը բարձր բլուր էր հիշեցնում: Բացի այդ՝ կային նաև պարկերով այլուր, բրինձ, շաքար, քառակուսի սայտակ թիթեղյա ամաններով յուղ, զանազան տեսակի պահածոներ, մրգեր, իսկ կտորեղենին, տղամարդու և կանանց հագուստեղենին հաշիվ չկար:

Շոռլուն թուրքական գյուղ է եղել, տվյալ դեպքում ոչ մի թուրք բնակչություն չկար: Բոլորը գաղթական հայեր էին, բայց մեծամասնությունը նուխեցի էր: Նրանք գաղթել էին Նուխվա⁸⁷ գանազան գյուղերից: Մինչև ռուսների գալը Նուխվա գավառը հարյուր հինգ գյուղ է ունեցել, ներկայումս Նուխիում հազիվ 5 հայկական գյուղ լինի:

1918 թվին թուրքերի՝ Բաքվի վրա հարձակվելու ժամանակ տեղի թուրքերի հետ միասին մեծ կոտորած է տեղի ունեցել: Հենց այդ ժամանակ էլ նուխեցիները գաղթել են դեպի Արարատյան դաշտ և բնակություն հաստատել Շոռլուում: Սակայն նուխեցիները կարծես թե փշերի վրա նստած լինեին, իրենց հետ բերած կապոցները դեռ չէին քանդել և այդպես կապած՝ նստած էին տների մեջ:

Էջմիածնում վերոնշյալ զոհվածների համար հուշարձան է կանգնեցված: Իսկ մի քանի տարի

անց հուշարձանը փոխվեց, նոր հուշարձան կանգնեցրին ոչ միայն չորրորդ գնդի զինվորների, այլ նաև Էջմիածնի ճակատամարտում բոլոր զոհվածների համար:

Քույրս

Երբ թուրքերն առանց պատերազմ հայտարարելու, գաղտագողի, ամբողջ ճակատով հարձակվեցին, իմ սիրելի և միակ քույրս հացքաղի կապակցությամբ գտնվում էր Մժնկերտում, որտեղից փախչելուց հետո ես նրան չէի տեսել և չգիտեի, թե որ կողմի վրա է չվել բնավեր թռչունի նման: Եվ ահա բախտի բերմամբ նրան հանդիպեցի Շոռլու գյուղում, որտեղ տեղավորված էին Արևմտյան Հայաստանի և նուխեցի գաղթականները:

Գյուղում ծվարած սովակալ գաղթականներին սկսեցի ինքնագլուխ բաժանել խմբապետ Արամի տանը դիզված բրնձի չալթուկը:

Քրոջս և երկու աղջիկ երեխաների համար բիտոնով յուղ, այլուր, պահածոներ տարա, որի մի մասը՝ իբրև նեղ օրերի պաշար, թաղեցինք հողի տակ:

Այս ամենից հետո հրաման եղավ մեր վաշտին շարժվելու դեպի Ղամարլուի կողմը:

Իմանշալուի⁸⁸ և Նորագավթի ուղղությամբ ուժեղ ճակատամարտ տեղի ունեցավ:

Խմբապետ Արամի զինվորների վերադառնալուց հետո Արամի մայրը հայտնում է, որ չորրորդ գնդի հինգերորդ վաշտի Հովհաննես անունով մի զինվոր մեր չալթուկը և ունեցածը բաժանել է գաղթականներին: Յույց է տալիս մեր տունը, որտեղ ապրում էր քույրս: Խուզարկում են տունը և ոչինչ չեն գտնում: Սակայն հանգիստ չեն թողնում քրոջս ու երկու աղջիկներին, որի պատճառով էլ նրանք շալակավորված հասնում են Երևան: Քույրիկս հիվանդանում է, նրան չեն կարողանում փրկել: Նա մահանում է:

Երևանը գրավելուց հետո անմիջապես փնտրեցի ծանոթներին և գտա այն երկու աղջիկներին, որոնք միշտ քույրիկիս հետ էին: Նրանք էլ պատմեցին, թե ինչպես է եղել:

Այդ դժբախտ լուրը խորը խոցեց սիրտս: Աշխարհում մնացի մեն-մենակ իմ ժողովրդի հետ:

Տխրությունս, սակայն, կամաց-կամաց անցնում էր, քանի որ ես մասնակից էի իմ ժողովրդի աշխատանքին և ուրախությանը: Այդպես շարունակվեց իմ կյանքի ընթացքը:

Բաքվում

1922 թ. գորացրված զինվորներին, որոնց թվում և ինձ, գործուղեցին Բաքու՝ նավթահանքերը վերա-

⁸⁶ Ղամարլուն (Վերին Ղամարլու) գտնվում է Արարատի մարզում: 1945 թ. վերանվանվել է Արտաշատ: Քաղաք է 1961 թ.-ից:

⁸⁷ Նուխիսն ներկայումս կոչվում է Շաքի:

⁸⁸ Գյուղ Արարատի մարզում: 1935 թ. վերանվանվել է Մխչյան՝ ի պատիվ Լիպարիտ Մխչյանի, որը Իմանշալուի ուղղությամբ ճակատամարտի ժամանակ մահացու վիրավորվել էր:

կանգնելու: Պետք է աշխատել որպես հորահատ բանվոր:

1924 թ. դարձա կուսակցական: Աշխատանքին զուգընթաց՝ սովորեցի երեկոյան հանրակրթական դպրոցում, ապա երկու տարի սովորեցի Ստեփան Շահումյանի անվան կուսակցական դպրոցում:

Բաքվի նավթահանքերում աշխատելու ժամանակ նավթահորը պետք է, ըստ նախատեսվածի, շահագործման հանձնվեր երեք կամ չորս ամսում, իսկ մենք հանձնում էինք նախատեսված ժամկետից շուտ:

Մեղրիում

1930 թվականին ՀԿԿ Կենտկոմն ինձ գործուղեց Մեղրու շրջան՝ սոցիալիստական տնտեսություններ ստեղծելու գործով զբաղվելու համար: Կոլխոզ կազմակերպելու առաջին մկրտությունը ստացա Շիրվանիձոր⁸⁹ գյուղում, որը 3 կմ Արաքսի ափից դեպի հյուսիս էր ընկած: Հյուսիսային կողմից մի գետ էր անցնում և գյուղը բաժանում էր երկու մասի: Գյուղի վերևի մասում կար հինավուրց տաճար, որն օգտագործում էին որպես ակումբ, ամբողջ բնակչությունը հավաքվում էր եկեղեցում:

Եղա նաև Կարճևան գյուղում: Այն Մեղրիից բաժանվում էր մի լեռնանցքով, բայց մինչև լեռնանցք հասնելը պետք է իջնելի ձորը, որից հետո բարձրանալի դեպի լեռնանցքի բարձունքը: Կարճևանցիներն ունեն իրենց առանձին բարբառը, որ ուրիշների համար անհասկանալի էր:

Շեն ու առատ Կարճևանից հետո ես հասա Մեղրի՝ բնակություն հաստատելով շրջկենտրոնի դպրոցի ուսմանավար Մարտիրոսյանի տանը:

Ուղիղ մեկ տարի աշխատեցի Մեղրիում, վայելեցի ինձ համար շատ սիրելի մեղրեցիների հարզն ու պատիվը, մանրակրկիտ ուսումնասիրեցի հայկական այդ արևավառ լեռնաշխարհը:

Հետագա կյանքս

1931 թ. Թիֆլիսում տեղավորվեցի Ռուսթավելի պողոտայի և Լենինի հրապարակի անկյունի մի շենքում: Մեկ տարվա ֆինանսական դասընթացներն ավարտելուց հետո վերադարձա Երևան, ՀԿԿ Կենտկոմի ուղեգրով Հոկտեմբերյանում նշանակվեցի բանկի կառավարիչ:

Կուսակցական շրջկոմի կողմից, որպես ակտիվիստ, կցված էի Արմավիր գյուղին: Մի օր գյուղում ինձ հայտնեցին, որ մի կնոջ (վաղուց արքայածին) ինչ-որ խմբապետ Մխոյի կին էին ասում, ուներ տասը-տասներկու տարեկան երկու երեխա՝ տղա և աղջիկ) և մի հյուսնի ընտանիքներին պետք է արքայրեն: Այդ գործը կազմակերպել էր Մարգարա գյուղի բնակիչ Մարգարյանը՝ Էնկագեպեի պետը: Գնացի շրջկոմի քարտուղար Խաչիկ Հակոբջանյանի մոտ

և ասացի, որ մեկ տարի բնակվելով այդ գյուղում՝ բոլորին լավ ճանաչում եմ: Այդ կինը ինչն էլ է մեղավոր, որ երկու երեխաների հետ պիտի արքայրվի: Մյուսի մասին էլ ասացի, որ կոլխոզի հյուսն է, շատ լավ աշխատող, ունի վեց երեխա, ո՞ր իրավունքով պետք է այդ հիանալի աշխատողին վեց երեխայի հետ արքայրեն այն դեպքում, երբ նա բոլորովին անմեղ է:

Շրջկոմի քարտուղարը հարգեց իմ առաջարկը, և այդ երկու ընտանիքներն ազատվեցին արքայրից:

Ամուսնացա Արմավիր գյուղից մի աղջկա՝ Էլյա-յի հետ:

Հոկտեմբերյանում մի քանի տարի բանկի կառավարիչ աշխատելուց հետո ինձ գործուղեցին Լենինգրադ՝ սովորելու: Ավարտելուց հետո վերադարձա Երևան և Կենտկոմի ուղեգրով նշանակվեցի Ստեփանավանի և Կալինինոյի միացյալ շրջանային բանկի կառավարիչ: Կցված էի Ղարաբաղի, Սարչաքեկ և Նորաշեն, իսկ միառժամանակ հետո նաև Ագարակ և Լոռիքերդ գյուղերին:

1946 թ.⁹⁰ հայրենադարձներին տեղավորելու համար անհրաժեշտ էր Երևան քաղաքում նրանց համար սենյակներ առանձնացնել:

Ինձ հանձնարարեցին Բութանիայի շրջանից 24 սենյակ առանձնացնել: Ես կատարեցի այդ աշխատանքը, ներկայացա շրջկոմի բյուրոյին՝ քարտուղարին հանձնելով առանձնացված սենյակների ցուցակը:

Ներգաղթն ընդունելու ժամանակ ինձ նշանակեցին Ստալինյան շրջանի Ներգաղթի կոմիտեի նախագահ: Որպես նախագահ՝ իմ տրամադրության տակ կար այն բոլոր միջոցները՝ դրամ, հագուստ, կտորեղեն, զանազան տեսակի ապրանքներ, որով ես պետք է բավարարեի հայրենիք ներգաղթած կարիքավոր ընտանիքներին:

1959 թ. Ստեփանավանից Կենտկոմի միջոցով տեղավորվեցի Երևան: Կենտկոմի ուղեգրով նշանակվեցի բամբակի սերմաբուծական գրասենյակի պետ:

Իմ վերջին պաշտոնը, որ ընտրվել եմ, Երևան քաղաքի պահակային արտելի վարչության նախագահի պաշտոնն էր: Ես և՛ աշխատում էի, և՛ սովորում Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի համալսարանում:

Այդ հիմնարկում ես վերացրի պահակների փող պոկելը և հարբեցողությունը, իսկ գողությունն էլ հասցրի գրոյի: Սակայն նման աշխատանքը չէր հետաքրքրում Սպանդարյանի շրջանի կուսշրջկոմի քարտուղար Գեորգի Փանոսյանին: Աշխատավայրում ոչինչ չգտնելով՝ մի օր, երբ ես զիջերը քաղաքի պահակակետերն էի ստուգում, Փանոսյանի կար-

⁸⁹ Շիրվանիձորը Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղն է:

⁹⁰ Երբեք մի տեսնել Սևքար գյուղը: 1946 թ. տեսա Սևքարը, որը ֆիդայի Մաքոյի ծննդավայրն էր: Տեսա նաև մեր վաշտի քաջ հրամանատարի՝ Վանիկյա Մարատնիկովի հայրենի Կոթի գյուղը (ըստ հուշագրի):



Լուսանկարն արտատպված է Հ. Կարապետյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» գրքից (Երևան, 1961, էջ 176): Աջից առաջին կանգնածը՝ Հովհաննես Հովհաննիսյան

գաղությամբ իմ տունն են խուզարկում: Խուզարկողներն ասել են կնոջս, թե էս ի՞նչ է, ուրիշ տները խուզարկելիս նրանց պահարաններում շորերին տեղ չկա, իսկ դուք կարգին շոր էլ չունեք:

Մի օր էլ մեծ տղաս մի գրություն բերեց, որով պետք է ներկայանայի 9-րդ քաղմաս: 9-րդ քաղմասը և շրջկոմը գտնվում էին հենց Օպերայի դիմացի սև շենքում: Ինձ մեղադրում էին սպեկուլյացիայով զբաղվելու մեջ:

Փանոսյանի ու միլիցիայի պետի ամբողջ գործունեությունը պարփակվում է վեց երեխաների հորն անմեղ տեղը խորտակելու մեջ: Ինձ կալանավորեցին: Բանտից տարան 26 կոմիսարների շրջանի դատարան: Դատը դատարանի դահլիճում չարեցին, այլ դատավորի առանձնասենյակում: Երեխաներին կնոջս հետ դուրս արեցին և ինձ վերջին խոսք չտվեցին, միայն ասում էին՝ քեզ մեղավոր ճանաչո՞ւմ ես: Ես ասում էի, ի՞նչ եմ արել, որ մեղավոր ճանաչեմ: Դատեցին ու տարան բանտ: Բանտից էլ տարան 1-ին գաղութ: Նշանակվեցի առաջին բրիգադի ազիտատոր:

Մեկ տարի հետո ազատվեցի: Չնայած ժամանակը կարճ էր, բայց ճակատագրական էր:

Եկա տուն. կինս մահացել էր, վեց երեխաներս՝ անտեր, տունը քափթփված:

Ինձ օգնեցին ընկերներս՝ Միրզոյանը և Կենտկոմի բաժնի վարիչ Հրաչ Առաքելյանը:

Վերջաբանի փոխաբերն

Բասենի արտակարգ բնությունը, նրա շքեղությունը ոչ միայն խորն են տպավորվել իմ հոգում, այլև իմ էության անբաժանելի մի մասնիկն են դարձել:

Ես էլ չգիտեմ, թե որտեղից է իմ մեջ այդքան հայրենասիրություն, ով է մղել այն իմ էության մեջ:

Աշխարհակործան Առաջին աշխարհամարտը հատկապես հայ ժողովրդի համար ճակատագրական եղավ: Բացի տեղահանումից ու անխնա ջարդից՝ նաև գրկվեց իր պատմական սիրելի հայրենիքից, որտեղ մի քանի հազարամյակների ընթացքում ստեղծվել էին հայ ժողովրդի հանճարեղ մտքի հրաշալիքներն ու ճարտարապետական անգուգական կոթողները:


Սրբազան հայրենիքի կորուստը անմար կանթեղի նման կրակ է դառնում, հուրիրատում է հայրենիքից գրկվածների սրտերում և այդ կշարունակվի նաև նրանց հետնորդների և զավիք սերունդների սրտերում: Արդյոք կլինի՞ երջանիկ մի օր, որ այդ կրակը բոց դառնա, և թուրքերից ետ վերցնենք հայկական արևմտյան նահանգները:



Կնոջ՝ Էլյայի գերեզմանաքարի հարևանությամբ և նրա մահվանից միայն մի քանի տարի անց, այն է՝ 1960-ական թթ. սկզբներին, Հովհաննես Հովհաննիսյանը Չեյթունի գերեզմանոցում իր իսկ ձեռքով, ի հիշատակ Եղեռնին զոհ գնացած ծնողների, քույրերի և եղբայրների, կերտում է կարմիր տուֆից (իր խոսքով՝ արնագույն) մի հուշարձան, որի մի երեսին արծվաքանդակի ներքո 23 տողով արձանագրում է.

Կարնո (Էրզրում) Բասեն, գյուղ Արջարակ, զայս ի հավերժացումը 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակը. մեծ պապս Չախալ, պապս Հովհաննես, մամս Մարո, հայրս Սուքիաս, մայրս՝ Թուխտ, քույրերս Դշխուն, Չարդար, Սա(հա)նդուխտ, եղբայրներս՝ Նահապետ, Համբար, Հրանդ, Վահան, Պետրոս, Սասուն: Իրենցից հետո ես աշխարհում իմ ժողովրդի հետ լքված մի մանուկ, բայց երագով միշտ իրենց հետ: Սակայն նրանք ինձանից պարտքի հատուցում էին պահանջում: Ես դեռ 16 տարեկան զենք վերցրի իրենց նողկալի թշնամու դեմ: Արհավիրքներից իրենք ինձ կյանք պարգևեցին, որ ես որպես հիշատակ կանգնեցնեմ այս կոթողը արնագույն, որից առավել իրենց արժանի փոխարինողներն են իմ 6 երեխաները եղեռնից փրկված եղբայրներից մատղաշ:

Հովհաննես Հովհաննիսյանից



ԴԱՎԻԹ ԱԶԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ
(1908 -2004)

Համառոտ կենսագրություն

Դավիթ Ազատի Ղազարյանը ծնվել է 1908 թ. փետրվարի 7-ին Ռումինիայի Չերնովից քաղաքում: Ծնողներն էին Ազատը (Ազգե), որին ռումինացիները կոչել են Լազար, և Եղիսաբեթը (Սավետ): Եղբայրներն էին Գրիգորը (ծնվել է 1901 թ.) և Արմենակը (ծնվել է 1905 թ.):

1908 թ. Սահմանադրության հռչակումից հետո հայրն ընտանիքով փոխադրվում է Մշո Խարս գյուղ: Մեծ եղեռնի ժամանակ փրկվում են Դավիթը, եղբայրը՝ Գրիգորը, հորեղբայրը՝ Պողոսը, հորեղբոր կինը՝ Լուսինը, հորեղբայր Հակոբի կինը՝ Ազնիվը:

1918 թ. գաղթում են Խարդուն, 1920 թ.-ին՝ նախ Ապարան, ապա Ախուրյանի շրջանի Լուսաղբյուր գյուղ:

1930 թ. Լուսաղբյուրում ամուսնանում է Արաքսյա Սկրտչյանի հետ (1916-1993) և ունենում 8 զավակ: 1941-1944 թթ. մասնակցում է Երկրորդ աշխարհամարտին: Լենինգրադյան ռազմաճակատի մարտերի մասնակցության համար արժանանում է Լենինգրադի պատվավոր քաղաքացու կոչման:

1946 թ. Լուսաղբյուրից փոխադրվում է Երևան: 1946 թ.-ից աշխատում է Երևանի շինարարական 2-րդ տրեստում՝ որպես քարտաշ-որմնադիր: Մասնակցում է նաև ՀՀ Գիտությունների ակադեմիայի, Ծիծեռնակաբերդի Յեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի կառուցման աշխատանքներին:

Պարգևատրվել է աշխատանքային և ռազմական շքանշաններով: Ստացել է Հայոց ցեղասպանությունը վերապրածի վկայական:

Վախճանվել է 2004 թ. նոյեմբերի 22-ին 96 տարեկանում և ամփոփվել Նուբարաշենի գերեզմանոցում: Հուշագրությունը թղթին է հանձնել 1990-ական թվականներին:

ԽԱՐՍԵՑԻ ՄԵԿԸ՝ ՀԱԶԱՐՆԵՐԻՑ

Պապերս

Իմ Ղազար պապի հայրը՝ Հնդոն, եղել է Մշո մոտիկ Շեխուսով¹ գյուղից:

Օրերից մի օր մի քուրդ բեկ խոսք է գցում իմ պապերի հարևանի հարսին: Հարսը վախենում է իր մարդին կամ կեսարարին ասի այդ մասին: Գալիս է և պապերիս ասում:

—Հրանտ և Վանո՛, քրդի բեկը ինձնից վազ չի գալիս (ինձնից պոկ չի գալիս):

Հրանտը և Վանոն հարսին ուղարկում են՝ ասելով, թե գնա բեկին ասա, համաձայն եմ, երեկոյին կգաս մեր տուն:

Երեկոյան Հրանտը և Վանոն մտնում են տուն, թաքնվում խարի հետևը: Դա լինում է իրենց հազարաշեն ծածկով բարձր հացատանը: Բեկը գալիս է տուն, ուզում է հարսի հետ հանաք անի, երկու եղբայրով քաշում են խանչալները և բեկին լավ բրդում:

Դուրս են գալիս գյուղից և գնում նույն Մշո Չխուրախարս² գյուղը:

Գնում են այդ շրջանի Խորշուղ բեկի մոտ, պատմում են իրենց հանցանքը՝ վերցնելով իրենց հետ 4-ական գյազ³ կտոր՝ որպես իրենց պատանքացու:

Խորշուղ բեկը պապերիս պատվիրում է. «Օղո՛վ (որդիս), գնացե՛ք Խարս գյուղում ապրե՛ք»:

Դու մի ասի Խորշուղ բեկը թշնամի է լինում այդ սպանված բեկին:

Հրանտ պապն ամուսնանում է խլաթցի մի աղջկա հետ: Ունենում են երեք տղա՝ Ղազար, Եփրեմ և Գրիգոր:

Իմ Ղազար պապը սովորում է լավ կարգալ, բայց գրել քիչ է իմանում: Նա լինում է հոտաղ, մշակ: Ամուսնանում է Մարգարիտ անունով աղջկա հետ, որից հետո սկսում է անասուններ գնել և քոչան հողեր առնել: Դառնում է Ղարս գյուղի ռեսը՝ քյոխվան, և շատ է օգնում ֆիդայիներին՝ Սերոբ փաշային, Նադր քաջ քեռուն, Գևորգ Չավուշին: Չմեռ ժամանակ նրանք հաճախ էին գալիս Վարդենիս⁴ գյուղ, և Ղազարը մարդ էր ուղարկում նրանց

բերելու մեր տուն և հյուրասիրելու: Շատ կրոնասեր մարդ էր, զիշերները միշտ եկեղեցական գրքեր էր կարդում ձեթի ճրագի լույսի տակ: Ղազարն ունենում է 4 տղա՝ Ազատ, Չաքար, Սերոբ, Պողոս, 3 աղջիկ: Երկու տղաներին՝ Ազատին և Չաքարին, ուղարկում է դարիբության՝ Ռումինիա, Սերոբին՝ Բաղեշ: Սերոբը Բաղեշում ուներ մեծ կալվածք և յոթ ջրաղաց: Նա հորն ուղարկում է 110 ոսկի, որից հետո Ղազարը սկսում է անասուն և քոչան հողերից ավելի շատ գնել:

Մի օր Ղազարն արտից գալու ժամանակ տեսնում է, թե ինչպես է մի հարուստ քուրդ բեռներ թափում հարևանի դռանը: Ղազարը, թե՛ այ՛ քուրդ, դու ի՞նչ իրավունք ունես բեռներ թափել: Զուրդը ցույց է տալիս իր փաստաթղթերը՝ ասելով. «Քո համագյուղացին 110 ոսկի է պարտք մրիբա եղած ժամանակ, օրենքի հիման վրա ես իրավունք ունեմ հարևանիդ տները վերցնել ու նստել»: Ղազարը խոստանում է վճարել քրդի պարտքը և չի թողնում նրան գյուղում ապրել, որովհետև եթե քուրդը մնար, նա իր մոտիկներին կբերեր, և գյուղը կդառնար քրդանոց: Նա մեր գյուղացիներից պարտքով վերցնում է հարյուր տասը ոսկին, տալիս քրդին և նրան հետ ուղարկում:

Մի օր էլ թուրք ասկյարները մեր գյուղում բռնում են Սերոբ փաշայի զինվորներից մի երիտասարդի, բերում են և հանձնում Ղազարին:

—Ռե՛ս, այս ֆիդայուն կպահես, առավոտյան կհանձնես մեզ:

Ղազարը մտածում է՝ եթե տղային տարան, կոչնչացնեն: Տղային ասում է՝ «Դու փախի՛ր, գլուխդ ազատի՛ր, ինձ ինչ կանեն, թող անեն»:

Առավոտյան Ղազարից ասկյարները պահանջում են տղային: Իսկ նա ասում է.

—Դուք ինձ չեք հանձնել:

Ղազարին տանում են մարագ, ձեռքերը կապում են մի սյունից, ոտքերը՝ մյուս սյունից և սկսում են ծեծել: Շատ են ծեծում, սակայն Ղազարը ոչինչ չի ասում: Ասկյարները բերում են նրա չորրորդ տղային՝ Պողոսին, և մանրած փայտեր:

—Ղազար՛, տղայիդ միսը կեփենք, քեզ կկերցնենք:

Ղազարն ասում է.

—Ինձ արձակեցե՛ք, կասեմ:

Արձակում են, սակայն Ղազարն ասում է.

—Այստեղ չեմ ասի, ինձ տարե՛ք Մուշ, կասեմ:

Ղազարին տանում են Մուշ՝ վալիի մոտ:

Ղազարն ասում է.

1 Մինչև 1915 թ. հայաբնակ Շուխուսով (Շեյխ-Յուսուֆ, Շըխուսուֆ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք: Վերանվանվել է Բոյունջուկ (Boyuncuk):

2 Մինչև 1915 թ. հայաբնակ Չխուրախարս (Խարս, Խարց, Ղարս, Հարս) գյուղը գտնվում է Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 34 կմ հարավ-արևելք: Վերանվանվել է Գյունեյիկ (Güneyik):

3 Երկարության միավոր: 1 գազը կամ գյազը հավասար է 112 սմ:

4 Մինչև 1915 թ. հայաբնակ Վարդենիս գյուղը գտնվում է Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 40 կմ արևելք: Վերանվանվել է Ալթինովա (Altinova):



ԽԱՐՍ (ՂԱՐՍ). գյուղի մուտքը հարավարևոտյան կողմից (2007 թ.)

–Վալին սաղ մնա, օրենք, կարգ-կանոն քաղաքում է, տղայիս մորթում էին, ասի կասեմ, բայց ոչինչ չգիտեմ:

Ղազարին նստեցնում են բանտ՝ 101 տարով: Իսկ տղեն՝ Պողոսը, այդքան ծեծ ու ջարդից հիվանդանում է: Նա ուներ մի աղջիկ: Աղջիկը մահանում է, դրանից հետո Պողոսը ժառանգ չի ունենում: Պողոսը մահանում է 1921 թ. Ապարանի Քուչակ գյուղում:

Ղազարը 1903 թ.-ից մինչ 1908 թ. բանտում էր: 1908 թ. Սահմանադրությունից հետո նրան էլ շատ բանտարկյալների հետ ազատում են: Ղազարի տղան՝ Ազատը, լսելով այդ Հուրիեթի ձայնը, կնոջ, 3 տղաների՝ Գրիգորի, Արմենակի և իմ՝ 8 ամսական Դավթի հետ հասնում է հայրենի Ղարս գյուղ: Սակայն հայրը՝ Ղազարը, այդքան ծեծից և բանտարկությունից մահամերձ էր, միայն կարողանում է համբուրել տղային, հարսին, 3 թոռներին և մահանում է 1908 թ.:

Կարճ ժամանակից կանչում են Ազատին և ռեսի պաշտոնը հանձնում նրան: 7 տարի Ազատը լինում է քոլիսվա: Օսման թուրքը հայերից վերցնում էր ասկյար, բեկյար (բեռնակիր), օլամ, չարուխ, բրդից գուլպա, ձեռնոց: Հայ երիտասարդները փախչում էին՝ փորձելով ազատվել, իսկ ասկյարները գալիս էին ռես մաջլիսին⁵ ծեծում, ջարդում և պահանջում փախածներին:

Մի անգամ բերեցին մի ռես մաջլիսի՝ ծեծելու համար: Բերեցին հորս: Այդ մեջլիսի անդամներից Օհանի Պողոսին տկլորցրին՝ թողնելով միայն շապիկ և վարտիք, մտցրին սառույցի մեջ մինչև բուկր: Հետո քաշին, ջրից հանեցին, մեջքին 100 զուպա (հաստ մահակ) զարկին, կիսամեռ քաշին տարան: Հերթը եկավ հորս՝ Ազատին: Այդտեղ էր մակ մուրդուրը (հարկահավաքը), որն ամեն տարի ապարում էր մեր գոմի օդայում: Նա իր վերարկուն գցում է մի կողմ և ասում.

–Աղա՛ Ռ-գա, ինձ ծեծե՛ք, Ազատին ձեռք մի՛ք տա, քանի որ մեր իսլամները Ազատի հացը շատ են կերել:

Այդպես հորս ազատում է ծեծից:

Խարսի կոտորածը⁶

1915 թ. Վարդերի (Վարդավառի) երկուշաբթի օրը (հունիսի 29-ին) մահացած մորս 7-ի անասունների ոտ ու գլուխները դեռ տանն էին, երբ առավոտյան՝ մոտավորապես ժամը 10-ին, քրդերը Մառնիկ գյուղից (գտնվում էր մեր գյուղից մոտավորապես 5 կիլոմետր դեպի հարավ) Խարս եկան:

Հանդում եղած մարդկանց սպանելով՝ որին խանչալով, որին հրացանով, որին կեռով, անասունները թալանին ու տարան: Հորեղբորս կինը՝ Լուսինը (Լուսոն), մոտեցավ իր տեգրոջը.

–Ազա՛տ ջան, ախպեր, գյուղը կոտորում են, գնա՛ հերանցս պահարանը, քո եղբայր Պողոսը, քո տղա Գրիգորը այնտեղ են, արի դու էլ գնա:

Ազատն ասում է.

–Հա՛րս ջան, ես որ գնամ, գյուղի հալը ինչպե՞ս կլինի:

Բայց մի քանի րոպեից հետո գնում է ուրիշ՝ Իրեցուտան պահարանը⁷: Իր հետ վերցնում է իր եկանիս⁸ 6-7 տարեկան Մխիթարին:

Մեր տներն առհասարակ շինում են տապալով: Հարևան պատին կպած պատերը ցածր ծածկում էին կաղնու գերաններով և ճյուղերով: Ամբողջ

⁵ Գյուղական խորհրդի նախագահ:

⁶ Խարսի կոտորածի մասին տե՛ս մեկ այլ ակնառեսի հուշերը (Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ակնառեսների աչքերով, էջ 237-239)

⁷ Պահարանը թաքստոց է գոմի լայնքի ավարտին և նրանից բաժանված է պատով: Մուտքը գոմի հատակից է՝ ստորգետնյա նեղ թունելով, որը տանում է դեպի թաքստոց:

⁸ Եղբոր կամ քրոջ որդի:



Գրիգոր Ազատի Ղազարյան

թաղի կտուրները լինում են մեկ և այնքան ամուր, որ շատ ժամանակ գոմեշները բարձրանում էին կտուրները, և ոչինչ չէր լինում: Պահարանները լինում էին գոմերի վերի գլուխը և անցք թողնում մինչ անասունների տակի սալը: Քարը վերցնում են և անցքով գնում պահարան, կտուրից թողնում փոքր անցք փարչի բերանի չափով՝ լույսի համար: Պահարանները շինում են քրդերից պաշտպանվելու համար:

Քրդերը կտուրի անցքից կախում են հրացանը և կրակում: Այն կաչում է մեր եկանի փորին: Հայրս, այդ տեսնելով, վերցնում է հրացանը, երդիկից խփում է իր եկանին սպանողին: Քրդերը սկսում են տները հրդեհել:

Եկավ մոլլան: Մեր տան բոլոր ունեցածը, մեզ էլ՝ Արմենակին և ինձ, հորեղբորս՝ Հակոբին⁹, և նրա կնոջը՝ Ազնիվին, վերցրեց ու տարավ Մառնիկ:

Կտտրածից հետո

Մյուս օրը մոլլան, իմ և եղբորս ձեռքերը բռնած, բերեց մեր տուն, գոմի դուռը բացեց, ներս արավ, դուռը փակեց ու գնաց: Թալանող մյուս քրդերը դուռը բացին: Մեզ թվում էր, թե մեր փրկությունը Մառնիկ գյուղն է: Ես 7 տարեկան էի, Արմենակը՝ 9: Մենք լալով դուրս եկանք գյուղից, մտանք արտի մեջ, մեկ նստում էինք, մեկ բարձրանում և նայում: Քրդերը մեզ ծեծին, ճանապարհը տեսցրին դեպի Մառնիկ: Մի միաջր (գաղթական), որը եկել էր Դահստանից, Արմենակին վերցրեց իր մոտ որպես հոտաղ, իսկ ես մինչև չորքես հասնող կարճ շապիկով, ոտաբոբիկ գյուղում հաց էի հավաքում: Գիշերներն աթարի ամրոցներում էի քնում մինչև ձմեռ: Քալաշո անունով մի քուրդ ինձ տարավ, որ իր գառներից նայեմ:

Ամեն օր գերմանացիները հավաքում էին հայ կանանց, երեխաներին և թուրք ասկյարների հետ խուճ-խուճ տանում էին, լցնում հայերի մարագները, նավթը ցանում, վառում էին կամ էլ լցնում Եփրատ գետը և խեղդում: Նախքան քրդի տուն գնալը մի քանի անգամ ինձ էլ տարան, բայց ես ամեն անգամ մի կերպ ազատվում էի:

Եկավ գարունը: Գարնանը գառներին տանում էի արածեցնելու, բերում էի գոմ, մարքում քնում: Մի օր Մեղրագետի ափին գառներն արածեցնելիս մի գառ ընկավ գետը: Ես լալիս էի և չէի կարողանում գառը հանել: Սև սարից՝ Տավրոսի անտառից, եկավ մի ձիավոր: Ինձ կանչեց, զնացի ձին բռնեցի, գառը հանեց: Վախից հագիս փոքր շուրթը (մուշտակը) հանեցի, փաթաթեցի գառին ու լալիս եմ, որ գառը չսատկի, իսկ ես ցրտից դողում եմ: Մի կերպ գառը լավացավ: Շուրթը հագա: Շուրթը ոչլոտ էր, բռով ոչիլ էր թափվում գետը:

Ամռանը քրդերը փախան Սև սար: Ինձ էլ տարան: Ճանապարհին հիվանդացա: Ինձ թողին, զնացին: Այդպես 12 օր հիվանդ պառկած էի ծառի տակ: Մոված գնում, ջուր էի խմում առվից և նորից պառկում ծառի տակ: Մի քանի օրից քրդերը հետ եկան և ինձ էլ բերին գյուղ: Չմռանը ասին, թե ռուսը գալիս է: Քրդերը հավաքվեցին Քալաշոյի կտուրը՝ ասելով, թե ռուսը գալիս է: Ի՞նչ կանեն քրդերը ռուսական կանոնավոր զորքի դեմ: Քրդերը հեծան իրենց ձիերը, փախան դեպի Սև սար՝ Տավրոսի լեռներ:

Մենք կարծում էինք, թե ռուսները մեզ կսպանեն: Փախանք, Մեղրագետն անցանք: Այդ ժամանակ տեսա Արմենակ եղբորս՝ նստած հորթիկի վրա: Գետն էր անցնում: Քրդերը մեզ ծեծին, հետ դարձրին, եկանք գոմ: Երկուսով մտանք գոմ և քնեցինք: Շատ էինք քնել, թե քիչ, դուռը սկսեցին ուժեղ թակել, վեր կացանք: Ընկերոջս հայրը գիշերը եկել, դռան սողնակը բացել էր և մտել, իսկ մենք չէինք իմացել: Նա ռուսների մոտ խաչ հանեց երեսին: Ռուսներն իմացան, որ խաչապաշտ է: Մեծ կերոնները ձեռքերին՝ մեզ իջեցրին թոնրատուն, թոնիր վառեցին, սկսեցին մեզ հայերեն հարցեր տալ: Շորերս ամբողջապես փոխեցին, շավարիս փաչեքը և թևերս ծալեցին, շատ մեծ էին: Ես հայերեն համարյա կիսով չափ մոռացել էի և շատ ժամանակ քրդերեն էի պատասխանում: Ոչխարի և գառների տեղ էին հարցնում: Առավոտյան զնացի, պահածու գառների դուռը բացեցի և սովորականի նման առաջ ընկնելով՝ բերեցի: Մեր զինվորները սկսեցին մորթել և ինձ էլի ուղարկեցին ոչխարներ բերելու: Մեծ պղինձ դրեցին թոնրի վրա և մտով ճաշ եփեցին:

Գնացինք մեր գյուղ: Մեր գյուղացիները հավաքվին, սալլեր լծին, հանդերից հավաքեցին ոսկորները և թաղին գերեզմանոցում:

Մի ժամանակից հետո զնացինք Մուշ քաղաք: Մեր ապրած տնից ներքև ապրում էր գորավար Անդրանիկ փաշան: Ինքն ապրում էր վիրի հարկում: Իր ասլան ձիու կաշվի վրա կային պուտեր: Մի ուրիշ՝ կարմիր ձի էլ ուներ: Չորավար Անդրանիկը, կանգնում էր պատշգամբում, դանդ (գլուխ) շաքար էր մանրում, զցում էր ասլան ձիու առաջ: Չին բարձրանում էր հետևի ոտքերի վրա և շաքարը բռնում էր բերանով: Մենք՝ երեխաներս, հավաքվում էինք ու նայում: Նա բռով շաքար էր զցում մեզ համար:

⁹ Հակոբը հավանաբար Դավթի հոր ազգականներից է:

Մուշ քաղաքից տեղափոխվեցինք Առնջվան¹⁰ գյուղը: Ես մնում էի հորեղբորս՝ Հակոբի մոտ, դարձյալ տավար էի արածեցնում: Մի օր էլ իմ հորեղբայր Պողոսը եկավ, նորից հետ եկանք մեր գյուղ՝ Խարս:

Մեր խարսապա եղած գյուղը և ճանապարհներն ամբողջովին ծածկված էին խաժկով¹¹ և ուրիշ խտերով:

Հորեղբայր Պողոսի ազատվելը

Ամբողջ մայլեն հրդեհված էր, նույնը նաև հորեղբայր Պողոսենց պահարանը: Գիշերվա կեսին պահարանում թաքնված 10 մարդկանցից 7-ը ուշքի են գալիս: Նրանց մեջ էր նաև Գրիգորը: Փախչում են ուղիղ Շամբ: Պողոսը և կնոջ եղբայրը՝ Վանոն, առավոտյան ժամը 4-ին արթնանում են: Կաղ Խչոն գինու կտորած աման է գտնում, առվից ջուր է բերում և լցնում իր եղբոր որդու և փեսայի՝ Պողոսի գլխին: Մի կերպ եղբոր որդուն արթնացնում են: Փախչում են արտերի մեջ: Քիչ հետո արթնանում է նաև Պողոսը և նույնպես փախչում է արտեր: Մի շաբաթ նրանք մնում են արտերում՝ իրարից լուր չունենալով: Մի օր Պողոսը գնում է աղբյուրից ջուր վերցնելու, տեսնում է մի մարդու, որ փախավ: Կամացուկ ձայն է տալիս, թե՛ ես հայ եմ, կանգնի: Հասնում է նրան և տեսնում, որ իր կնոջ եղբայրն է՝ Վանոն: Ուրախանում են, գնում են կաղ Խչոնի մոտ և նույն գիշերը գնում Շամբ: Շամբում շատ մարդ է եղել: Գիշերը դուրս են եկել, արտերից ցորեն են բերել և այդպես ապրել են:

Մինչև ռուսի՝ Շամբ հասնելը ամռանը նրանք ազատվել են: Իսկ հորեղբայրս՝ Պողոսը, մեզ համար կամավոր է գրվում և գալիս է մեր գյուղ:

Պողոսը, ինձ գտնելով, Մուշում տվեց որբանոց: Բերին մինչև Ախալքալաք, իրենք գնացին Հաջինազար¹²:

Հետո Պողոսն ինձ էլ բերեց Հաջինազար:

Գաղթ

1916 թ. սայլերը լծինք, գնացինք Խնուսներ և այնտեղ մնացինք մինչև ձմեռ: Մի օր տեսանք, որ բլրի գլխին կանգնած մի մարդ բղավում է.

- Տղեկներ, նհանջ է:
- Մերոնք ասում են.
- Այ տղա, նհանջ ի՞նչ է:
- Թուրքը եկա՛վ, փախե՛ք...

Ես հորեղբորս կնոջ՝ Լուսյի հետ էի մնացել: Մայրիկիս մահանալուց հետո նա էր ինձ պահում, իսկ Պողոսին բանակ էին կանչել:

10 Մինչև 1915 թ. հայաբնակ գյուղ էր Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 3 կմ հյուսիս-արևելք: Հայտնի էր նաև Առնջվանը ձևով: Վերանվանվել է Յեշիլջե (Yesilce):
 11 Երկար ցողունով բույս, որն օգտագործում են առաստաղի տախտակները ծածկելու և վրան հող փռելու համար:
 12 Գյուղ Շիրակի մարզում: 1935 թ. վերանվանվել է Կամո:

Մինչև իրերը բարձում էին, ես մեր հավերից 4-ին մորթեցի, յուղով տապակեցի, փաթաթի, լցրի տոպրակ, դրինք եզներին վրան: Կովին բերինք, հորթը փոքր էր, շալակեցի: Մի քիչ տարա, բեզարեցի և թողի, կովը հետ դառավ:



Լուսի


Չյուն-ձմեռ էր: Ես ու Լուսն, բարձած երկու եզները, տանջալից գնում էինք ձյունների միջով: Մեր եզներից մեկը կորցրինք, հետո գտանք, բայց հավերը վերցրել էին գաթաների հետ: Գիշերով դավուրմով լիքը մի դաբո¹³ գտա, բացինք և մեր չափով վերցրինք, ինչպես նաև մեծ բուխանկեքով հաց ճարեցինք:

Ճանապարհը նեղ էր, հազիվ երկու սայլ էր իրար հետ անցնում: Գիշերը քայլում էի, քունս որ տանում էր, գորվում էի մինչև փոսը: Այդպես տանջանքներով քայլում էի եզների հետևից, մեկ-մեկ էլ բռնում էի եզան պոչից, որ չընկնեմ:

Եկանք-հասանք Ուշքիլիսի վանքի¹⁴ դուրանը: Վանքը պարսպապատ էր և գտնվում էր բարձր դիրքում, իսկ ներքևում հոսում էր Եփրատ գետը: Գետի վրա փայտից կամուրջ կար: Հեռվից նկատեցինք, որ վանքի բակում լիքը զորամաս կա: Մեզ ասին, որ քրդերը մեր դեմը կտրել են: Ամբողջ դուրանը լիքը գաղթականներ էին, սկսեցին լացուկոծը: Տղամարդիկ հավաքվեցին և որոշում կայացրին, որ ամեն մարդ իր ձեռքով սպանի իր ընտանիքին, հետո տղամարդիկ զենքերը վերցնեն, բարձրանան սարերը: Մենք ուժեղ լալիս էինք: Մեր գյուղից Բոնդո անունով մի հազարապետ ասաց, որ սկզբում ինքն իր կնոջը և աղջկան կսպանի, ում ձեռքը, որ չի բռնի, ինքը կսպանի իր զենքով: Քրդերին ընտանիք չեն թողնի: Տղամարդիկ կկռվեն, վերջին փամփուշտն էլ իրենց վրա կկրակեն:

Երկու հոգի եկան կամրջի վրա, գլխարկով կանչին: Մեր տղերանցնեմ երկուսը գնացին, տեսան, որ մեր հայ կամավորներն են: Ի՞նչ ուրախություն բարձրացավ: Շարունակեցինք մեր ճանապարհը: Գնում էինք ձորերի միջով: Իսկ սարերի գագաթներից քրդերը կանչում էին. «Տղե՛քք՝ Գասպար, Կի-

13 Թիթեղյա նավթաման:
 14 Ուշքիլիսա (Բագրևանդի Սբ. Հովհաննո) վանքը գտնվում էր Արածանի գետի ձախ ափին (կառուցվել է 631-639 թթ.): Հիմնահատակ քանդել են 1940-ական թվականներին:



Դավիթ Ղազարյանի՝ Ցեղասպանությունը վերապրածի վկայականը, Ղազարյան ընտանիքի և հուշագիր հեղինակի գերեզմանը Նուբարաշենի գերեզմանոցում

րակոս, Մարկոս, Թորոս, մենք էլ ձեզ նման հայ քրիստոնյա ենք, եկե՛ք, մնացե՛ք, տաքացե՛ք, լույսը կբացվի, նոր կգնաք»: Ետևի սայլերից մի քանիսը խաբվել էին և զնացել: Նրանց բռնել ու մորթել էին:

Եկանք, հասանք Ալաշկերտ: Ղարաքիլիսան¹⁵ հրդեհված էր: Պահեստներից հրանոթի արկեր էին պայթում և բարձրանում երկինք: Մեզ ասացին, որ քրդերը բռնել են Ղարաքիլիսայի կամուրջը: Բռնուրն մի հարյուրյակ ձիավոր դարկեց, որոնք քրդերին սպանում և ջուրն են գցում:

Մենք անցանք կամրջով: Մի քիչ հեռու գյուղ կար՝ Իրիցուգյուղ¹⁶: Եզները արձակեցինք, կերակրեցինք: Ես բարձրացա գյուղ, տեսա՝ լիքը պահածոներ կան: Եկա, մի պարկ վերցրինք, զնացինք լիքը բերինք, լցրեցինք սայլին: Հասանք Մասիս սարի հետևը: Ձյունն արդեն սկսել էր հալվել:

Հասանք Իգդիր: Քաղաքի մի խաչմերուկում կերակրում էինք եզներին, երբ մի քանի ձիավորներ եկան: Իմ հորեղբոր կինը՝ Լուսինը, նստած էր սայլի վրա, և մեր հրացանը նրա մոտ էր: Ձիավորները սկսեցին մտրակով ծեծել, որ հրացանը վերցնեն: Ուղղակի խփում էին աչքերին, բայց Լուսին հրացանը չտվեց: Հանկարծ փողոցի մյուս կողմից դուրս եկան Մխիթարի ձիավորները, շրջապատեցին իգդիրցիներին, զինաթափ արին ու մի լավ ծեծին: Խմբապետ Մխիթարը մեր սայլերը դուրս հանեց Իգդիրից և ասաց.

– Գնացե՛ք, հիմա ամբողջ Իգդիրն էլ որ գա, ձեզ բան չի կարա անի, դուք հինգ զենք ունեք:

Մենք եկանք Խարդուն¹⁷ գյուղ և մնացինք այդտեղ:

¹⁵ Ղարաքիլիսան Էրզրում նահանգի Ալաշկերտ գավառի համանուն գավառակի կենտրոնն էր՝ Ալաշկերտ քաղաքից 24 կմ հարավ-արևելք: Ներկայումս Աղբյուր իլի վարչանիստ քաղաքն է:

¹⁶ Իրիցուգյուղը (Իրիցուգեղ) հայաբնակ գյուղ էր Էրզրումի նահանգի Ղարաքիլիսայի գավառակում՝ Ալաշկերտից 12 կմ հարավ-արևելք: Վերանվանվել է Ակբուլգեր (Akbulger):

¹⁷ Խարդուն (Ղարխուն, Վերին Ղարխուն) գյուղը գտնվում է Արմավիրի մարզում՝ Էջմիածին քաղաքից 12 կմ հարավ: 1946 թ. վերանվանվել է Ջրառատ:



ՄԱՐԹԱ ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ
(1908 -2004)



ԼՈՒՍԻՆ ՄԻՆԱՍՅԱՆ
(ծնվ. 1927)

Համառոտ կենսագրություն

Մարթա Պարտիզպանյանը ծնվել է 1876 թ. Եղեխայի Կարմուռ գյուղում:

Սովորել է Եղեխայի բարձրագույն վարժարանում: Ուներ 2 եղբայր:

1890 թ. ամուսնանում է կարմուռեցի Աբրահամ Մինասյանի հետ:

Մեծ եղեռնի ժամանակ փրկվում են Մարթան, ամուսինը և ամենափոքր որդին՝ 1914 թ. ծնված Սյրտիչը:

1947 թ. Հալեպից գաղթում են Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատում Հոկտեմբերյանում: 3 ամիս հետո մահանում է Աբրահամը և թաղվում Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր) քաղաքում:

Մարթա Պարտիզպանյանը վախճանվել է 1972 թ. ապրիլի 2-ին և ամփոփվել Երևանի Զեյթունի գերեզմանոցում:

Ապրել է եղեխացիներին բաժին հասած ողբերգական տարագրությունը, հայ բնավեր և որդեկորույս գաղթական կնոջ տառապանքները, իր մաշկի վրա զգացել թուրքական յաթաղանի հարվածը:

Կենդանության օրոք այդ ամենի մասին բազմիցս պատմել է իր զավակներին, թոռներին ու հարսներին:

2009 թ. մարտի 28-ին «սկետրոջ շուրթերով» Մարթա Պարտիզպանյանի հուշերը մեզ է փոխանցել նրա հարսը՝ եղեխացի մագապուրծ մեկ ուրիշ հայ ընտանիքի զավակներից մեկը՝ Լուսին Մինասյանը՝ ծնված 1927 թ. Հալեպում:

ԵԹԵ ՊԱՏՄԵՄ ԳԼԽՈՎԱՍ ԱՆՑԱԾԸ...

Կարմուճն ու Եղեսիա քաղաքն իրարից մի առու էր բաժանում¹:

Մարթայենց ընտանիքին էր պատկանում 100-ից ավելի նռան և մրգատու այլ ծառերով մի ընդարձակ պարտեզ, որից էլ սերում էր նրանց ազգանունը՝ Պարտիզպանյան:

1890 թ. 14 տարեկան հասակում ամուսնանում է կարմուճցի Աբրահամի հետ:

1914 թ. Մարթան արդեն 6 երեխայի մայր էր:

1915 թ. թուրքերը մտնում են Կարմուճ և սկսում թալանն ու ավերը: Շփոթված ժողովրդի մի մասը շտապում է եկեղեցի: Թուրքերն այրում են եկեղեցին: Եկեղեցու հետ այրվում է նաև ժողովուրդը: Փրկվում են միայն մի քանի հայեր, որոնք կարողանում են դուրս փախչել եկեղեցու տանիքից:

Հաջորդ օրը թուրքերը հավաքում են գյուղի 30 երիտասարդների՝ իբր ժողովրդի համար ցորեն բերելու և սպանում են. «Գնացին սարի հետևը, 30 հոգուն կրակեցին, զցեցին»:

Այնուհետև հավաքում են երեխաներին՝ այս անգամ իբր դրբանոցում պահելու համար: Մարթայի 3 երեխաներին նույնպես տանում են և բոլորի նման 3-ին էլ «ջուրն են զցում»: Մարթայի մոտ մնում են 3 երեխաները՝ 7 տարեկան տղան, 1 տարեկան Սկրտիչը և ամենափոքրը՝ ընդամենը 1 ամսական:

Սկսվում է տեղահանությունը: Մարսափ, ճիչ, վախ, արցունք...

Գյուղից դուրս գալու ժամանակ սայլի կողքը կանգնած 7 տարեկան զավակին սպանում են հենց մոր աչքի առաջ: Մնում են 2 զավակները:

Մարթայի ամուսնու՝ Աբրահամի թուրք ընկերն ասում է.

– Մեկ է, ձեզ տանելու են սպանեն, երեխային ինձ տու՛ր:

Աբրահամը մերժում է՝ ասելով.

– Կնոջս ձեռքից ո՞նց վերցնեն երեխային: Եթե կարող ես, արի՛, ինքդ վերցրու՛ և տա՛ր:

Երբ արդեն գյուղից դուրս էին գալիս, թուրք ընկերը Մարթայի գրկից փախցնում է Սկրտիչին և ասում.

– Եթե ետ գաք, երեխային կտամ ձեզ:

Քաղաքից և Կարմուճից հանում են բոլոր հայերին՝ այր ու կին, երեխա, ծեր ու մանուկ: 400-500 հոգի դուրս են գալիս քաղաքից և ոտքով ճանապարհ ընկնում: Սինչև երեկո քայլում են: Առաջին գիշե-



Մարթա Պարտիզպանյանը (կենտրոնում) կրտսեր որդու՝ Սահակ Մինասյանի, հարսի՝ Լուսին Մինասյանի և թոռների հետ (1955 թ.)

րատեղին ջրի եզերքին էր: Դա հատուկ էր արված, «ցերեկը արևը կխփի, գիշերը ցուրտը, այդ ձևով ժողովուրդը կտանջվի, և կմահանան»:

Երկրորդ օրը նրանք քաղցած ու ծարավ նորից սկսում են քայլել 10 ոստիկանների ուղեկցությամբ: Ով ետ էր մնում, սպանում էին: Մարթան, ոտքերն ուռած, անոթի և տանջված, չլիմանալով տանջանքներին, բարուրի իր երեխային դնում է գետնին և հեռանում՝ առանց հետ դառնալու. «Հետ չդարձա, որ չկրակեն, իսկ ձայնը մինչև հիմա ականջումս է»:

Օրվա վերջին դարձյալ հասնում են ջրի եզերքը և պատրաստվում գիշերելու: Ցերեկը ոստիկանները ջոկում էին գեղեցիկ կանանց և աղջիկներին, գիշերը տանում և բռնաբարում: Հղի կնոջը բռնաբարելուց հետո սրով պատռում են որովայնը և հանում երեխային: Նրանք այս ամենի ականատեսն են լինում ցերեկը: Բազմաթիվ հայուհիներ իրենց գետն են նետում՝ չլիմանալով անպատվությանը կամ փորձելով խուսափել դրանից:

¹ «Կարմուճը Ուրֆայի մեկ քաղը ըսել էր» (Սահակեան Ա., Դիցակցական Ուրֆան եւ իր հայրորդիները, Պէրյուք, 1955, էջ 664):

Երրորդ օրը նրանք դարձյալ քայլում են: Այս անգամ ժողովրդին բաժանում են 2 մասի: Մարթան մնում է մի խմբում, ամուսինը՝ մյուս խմբում: Մարթայենց խումբը շարունակում է քայլել: Հասնում են մի մեծ փոսի մոտ: Սկսվում է սպանողը. «Իմ խմբի մարդկանց տարան մի մեծ փոսի մոտ: Թրով խփում էին ամեն մեկին որտեղ պատահի և ողջ-ողջ գցում փոսը: Փոսը լցվում է դիակներով: Արյունը հոսում էր գետի նման: 500 հոգու արյունն ու գոռոցները խառնվել էին իրար»:

Մարթան ևս վիրավորվում է ուսից: Նա և համագյուղացի 2 աղջիկներ ընկնում են փոսի մեջ, բայց մնում դիակների վերևում, որի շնորհիվ էլ հրաշքով փրկվում են:

Սահացած ձևանալով՝ ոստիկանների հեռանալուց հետո Մարթան ողջ մնացած 2 աղջիկների հետ մի կերպ ոտքի է կանգնում, բազմաթիվ տանջանքներից հետո դուրս գալիս փոսից և սկսում քայլել: Ոտաբոքիկ, ծարավ ու անոթի՝ հասնում են մի քրդաբնակ գյուղի մոտ: Քրդերն օրևան են տալիս նրանց, բուժում են վերքերը: Մարթայի վերքը «թարախտովել էր և սկսում էր որդնել»:

Որոշ ժամանակ գյուղում մնալուց հետո նրանք հեռանում են: Քայլելով հասնում են մի քարայրի և հանդիպում վիրավոր մի քանի եղեսիացի տղամարդկանց: Սկսում են հաց մուրալ ցերեկը, իսկ գիշերը տանում են քարայր և հացը կիսում տղամարդկանց հետ:

Այդ ձևով գոյատևում են որոշ ժամանակ: Մարթան որոշում է վերադառնալ նույն քրդաբնակ գյուղը: Դարձյալ երեքով գնում են գյուղ և սկսում աշխատել՝ որպես սպասավոր: Կատարում են տարբեր աշխատանքներ:

3 ամիս ծառայելուց հետո Մարթան որոշում է գնալ Բաղդադ: Բազմաթիվ դժվարություններից հետո հասնում է Բաղդադ: Այստեղ աշխատում է հիվանդանոցում՝ որպես անգլերենի թարգմանչուհի:

1919 թ. գարնանը անգլիացիները, երբ մտնում են Եղեսիա և Կարմուճ, հայերը որոշում են վերադառնալ իրենց ծննդավայրը: Բոլորը ցուցակագրվում են վերադառնալու համար: Նրանց մեջ էր նաև Մարթան:

1920 թ. Կարմուճ վերադառնալով՝ այրված եկեղեցու պատին փակցված ցուցակներում տեսնում է ամուսնու և եղբոր՝ Վարդանի անունները: Ուրեմն ամուսինն ու եղբայրը ողջ էին: Երկար տարիներ հետո նրանք հանդիպում են Եղեսիայում: Տունն ավերակ էր, դատարկ, ծառերը՝ կտրված, անխնամ, այգին՝ ամայի...

Ամուսնու՝ Աբրահամի հետ որոշում է գտնել իրենց զավակին՝ թուրքին հանձնած Սկրտիչին: Գտնում են թուրք ընկերոջը: Սկրտիչն արդեն 8 տարեկան տղա էր դարձել: Չգիտեր հայերեն և ոչ մի բառ: Ամուսն էլ Խալո էր: Մարթան գրկում է երեխային, սակայն կասկածում է. գուցե իր զավակը չէ: Սակայն նկատելով ականջի վրայի նշանը, որ կար ծննդյան օրից, իրոք, համոզվում է, որ իր Սկրտիչն է. «Ականջի նշանից համոզվեցի, որ իմ Սկրտիչն է»:

Ամուսնու թուրք ընկերն ասում է.

– Ես, իմ խոստման համաձայն, ետ եմ տալիս երեխային երկու պատճառով: Առաջինը, որ դուք երեխաներ չունեք, իսկ երկրորդը, որ ինձ դատի չեք տվել: Եթե անգամ դատի տայիք, դատը ես էի շահելու, իսկ երեխային ձեզ չէին տա:

Նրանք հեռանում են թուրքի տնից: Շուրջ 2 տարի թուրքը երեխային նվերներ էր բերում՝ քաղցրեղեն, հագուստ և այլն:

Սկրտիչը հայերեն չգիտեր: Մարթան տանը նրան սովորեցնում է հայերեն գրել և կարդալ. «Օրեր շարունակ ցերեկները ես հայերեն էի սովորեցնում իմ Սկրտիչ միակ զավակին»:

1923 թ. ընտանիքով գյուղաբնակների հետ անդարձ հեռանում են ծննդավայրից և բնակություն հաստատում Հալեպում: Հալեպ է գաղթում նաև Մարթայի եղբայրը: 1925 թվականին էլ Հալեպում ծնվում են Մարթայի զույգ երեխաները՝ աղջիկ և տղա: Տղան մահանում է, իսկ աղջիկը՝ Մարին, կենդանի է մնում: 1926 թ. Մարթան ունենում է ևս մեկ տղա՝ Սահակ անունով:

Մարթա Պարտիզպանյանը, ամուսինը՝ Աբրահամ Մինասյանը, 3 զավակներով՝ Սկրտիչի, Մարիի, Սահակի հետ 1947 թ. գաղթում են Խորհրդային Հայաստան:

Սկրտիչ Մինասյանն ամուսնանում է Հալեպում Արշալույսի հետ: 1947 թ. նրանք ընտանիքով նույնպես գաղթում են Հայաստան:

Սկրտիչը մահացել է 1983 թ.-ից հետո, իսկ կինը՝ Արշալույսը, նրանից մեկ տարի հետո: Երկուսն էլ ամփոփվել են Երևանի Շահումյանի գերեզմանոցում:

Սահակ Մինասյանն ամուսնանում է 1949 թ. Երևանում սկեսրոջ տառապանքի պատմությունը մեզ փոխանցած Լուսին Մինասյանի հետ: Սահակը մահացել է 1983 թ. Երևանում:

Մարի Մինասյանն ամուսնանում է Հայաստանում՝ Հոկտեմբերյանում: Անգլերենի ուսուցչուհի էր: Մահացել է Երևանում 1990-ական թվականներին:



ՄԵԴՐԱԿ ՄԱՐԱՖՅԱՆ
(1907 -1999)

Համառոտ կենսագրություն

Մեդրակ Մարաֆյանը ծնվել է 1907 թ. Մարաշում:

1915 թ. ընտանիքով ենթարկվում է բռնագաղթի: Ծնողներին կորցնում է գաղթի ճանապարհին: Քրոջ և եղբայրների հետ հաստատվում է Սիրիայում:

Մեդրակի քույրը՝ Սիրանույշը, Մարաշի ներգաղթի օրերին ամուսնանում է, ապա հաստատվում Գամասկոսում:

Մեծ եղբայրը՝ Գրիգորը, նույնպես հաստատվում է Գամասկոսում և զբաղվում վարորդությամբ:

Մյուս քույրը՝ Փայլածուն, որին առևանգել էր Պելենկեզ Օղլի Մահմուտ անունով մի թուրք, ամուսնանում է Ուրֆայում և ունենում երկու զավակ: Ամուսինը նրան հավատացրել էր, թե աշխարհում այլևս հայ գոյություն չունի: Սակայն 1930-1940-ական թթ. միջակայքում Ուրֆա գնացած եղբայրները վաճառականների միջոցով գտնում են իրենց քույրիկին, որն էլ գալիս է Գամասկոս և այլևս չի վերադառնում Ուրֆա: Գամասկոսում ամուսնանում է հայի հետ և ունենում երեք զավակ:

Մեդրակը մյուս եղբոր՝ Միսակի հետ նույնպես փոխադրվում է Գամասկոս: Այստեղ ընտրվում է Մարաշի Հայրենակցական միության վարչության անդամ: Անդամակցում է նաև միության «Վասպուրական» մարզական խմբին:

Այնուհետև Միսակը փոխադրվում է Բաղդադ, ապա Իրան:

26 տարեկանում Մեդրակն ամուսնանում է աղանացի մի հայուհու հետ և ունենում 3 զավակ:

1956 թ. Մեդրակի, Գրիգորի և Սիրանույշի ընտանիքները հաստատվում են Բեյրութում:

Մեդրակը մինչև խոր ծերություն աշխատում է իր իսկ ստեղծած արհեստանոցում:

Վախճանվել է 1999 թ. 92 տարեկան հասակում:

Հուշերը բազմիցս պատմել է զավակներին և թոռներին: Թոռներն էլ արձանագրել են ձայնասկավառակի վրա՝ անմահացնելով իրենց մեծ հոր ողիսականը:

ԵՐԵՔ ԺԱՆԴԱՐՄԱՅՈՎ, 1500 ՀՈԳԻՈՎ

Չափութի Ավետիսը

Մարաշցի Ավետիս Չափութեան անունով մարդ մը կար:

Ժամանակին՝ կէսօրէն վերջի շաբաթ օրուն մարդը տունը եկեր է: Տունը եկեր է, մէկէնմէկ դուռը զարնվեր է: Դուռը զարնվեր է, դուռը բացեր է, տեսեր է տաճիկ մարդ մը:

–Մահրապա¹, Ավետիս:

–Մահրապա, գյավուր, մահրապա²:

–Չափութ,– ըսեր է,– սանա պիր սիլահ վերեճեյիմ, սաթաճամ ամմա սենին իսմինի եագմիանամ³,– կըսէ կոր:

Ան ալ լավ ըսեր է: Ձենք մը կուտա կոր, դրամն ալ կը վճարէ կոր: Քիչ հետո խոսակցութեան ժամանակ Ավետիսին կինը բաղնիքէն կուգա կոր: Ներս կը մտնէ, իրենց քովէն կանցնի կոր, աստիճանէն կելլա կոր: Ո՛չ բարև, ո՛չ աստծու բարեն, վեր կելլա կոր:

–Ուլան Չափութ,– ըսեր է,– ավրատըն տա պուրճու-պուրճու խոխիյի⁴:

Ասիկա իր միտքը նետեր է: Հաջորդ օրը Ավետիսը Մարաշի Քառասուն մանկանց եկեղեցին գացեր է երկու կուսակցութիւն ժողով ըրած ժամանակ մը, ինքն ալ ներս մտեր է.

– Բարև ձեզ:

– Աստծու բարեն:

Ըսեր է.

– Խնդիր մը կա, ձեզի պիտի պատմեմ: Խնդիրն ասանկ-ասանկ է. ես շաբաթ օրը կէսօրէն վերջը կանուխէն տուն եկա, և աս տաջիկ մը ներս մտավ, ինձի զէնք մը ծախեց, դրամն առավ: Բայց ըսավ, քու անունը չի պիտի գրեմ: Եւ չը գրեց: Քիչ հետո իմ կնիկ բաղնիքէն կուգա կոր, իրենց քովէն առանց բարևով վեր կելնա կոր՝ «Ուլան Չափութ, ավրատըն տա պուրճու-պուրճու խոխիյի», ըսավ կ'ըսէ կոր: Ասոր համար ի՞նչ բան կընենք կոր, կը մտածէք:

– Է՛,– նստեր են,– լավ,– ըսեր են:

Ժողովի կը նստին:

Ժողովին նստած ժամանակը երկու կուսակցութեան քվէ պիտի նետեն, որ մէկ երիտասարդին անունը ելլան, անոնք պիտի մեռնեն ալ:

Երկու երիտասարդին անունը կ'ելլա կոր, մէկը հնչակեան, մէկը դաշնակցական: Մէկը Չափութ Ավետիսին անունը կ'ելլա կոր, մէկ հատ ալ ուրիշ կելնա գոր: Կըսեն՝ ասոնք պիտի մեռնեն: Ինչպէ՞ս մեռնենք: Սի քանի օր վերջը ան Ալին Չափութը տեսեր է: Չափութ ըսեր է.

–Չափութ, պիզե պիր կյավուր դըզ կեթիր, շեհիրտեն տըշարը չըխախ օյնատախ, յանի խաղցնենք: Պեն ըախը հեր պիշեյ կյոթյուրյուրյում, սեն պիրշեյ կեթիրմե, դըզըլան պարապար կել⁵:

–Լավ,– ըսեր է:

Արանձնացեր է ժողովին մէջ, ըսեր է, որ ասանկ-ասանկ խնդիրը եղավ, ի՞նչ կըսէք կոր:

–Լավ,– ըսեր են:

Երկու հոգի քվէ կը նետեն: Կելլան կոր, չվանը լավ մը կ'օճառեն կոր: Այնտեղ վարդապետ մը կա եղեր, գլուխին պահպանական մը կը կարդայ կոր: Երկու երիտասարդը երեսնին խաչ կը հանին, կելլան եկեղեցիէն դուրս: Կելլան, կելլան քաղաքէն դուրս, կելլան, իշթա ասինչ պարտեզը: «Ալի՛, Ալի՛» ըսելով՝ կը պոռա կոր: Ալին ան ձայն կուտա կոր, եկուր, հոս եմ՝

–Հանը՞, դըզը կեթիրիյո՞ն մը,– կըսէ կոր:

–Հա կեթիրիյոմ, արխամ սըրա կելիյո⁶:

Գացեր է, որ խայմային⁷ մէջ մտեր է, այնտեղ գետնը նստեր է: Ավետիսը մտեր է խայմային մէջը, մէկէնմէկ շանը գլուխին նետեր է վիզին՝ «Եալլա՛, կէ՛լ դըզ»⁸, ըսեր է, և երկուքը մէկ չվանը քաշեր են, այնտեղ աստկեցուցեր են: Ամա քիչ մը կեցեր են, որ մեռնի: Եվ մեռնելէն հետո գրպանին կը խուզարկեն կոր, տետրակը կը հանեն կոր, ան գրած անունները, հազարներով հայու անուններ գրած է, անիկա առեր են: Դրամը եղեր է, դրամը չառեր են: Հեչ ուրիշ բանը չառեր են վրայէն, միայն ան տետրակը առեր են:

Ետ եկեր են ժողովին, կը սպասեն կոր ժողովը: Կուգան կոր, կը մտնան կոր:

–Մեռցուցինք,– կըսեն կոր:

–Ինչէ՞ն պիտի գիտնանք մեռնելը:

–Ուրիշ երիտասարդ մը ինձի հետ դրկեցէք երթանք, այնտեղէն աչքովը թող տեսնա, գանք:

1 Մահրապա՝ բարև:

2 «Բարև, անհավատ, բարև»:

3 «Քեզ զենք եմ տալու-վաճառելու, սակայն քո անունը չեմ գրանցելու»:

4 «Ծօ, Չափութ, կինդ ինչ անուշ կը բուրե»:

5 «Մեզ համար մի հայ աղջիկ բեր, քաղաքից դուրս գնանք, զվարճանանք: Ես օղի և ամեն ինչ կըրերեմ, դու ոչ մի բան մի՛ բեր, միայն աղջկա հետ արի՛»:

6 «Ասում է, աղջիկը բերո՞ւմ ես: Այո՛, բերում եմ: Հետևիցս գալիս է»:

7 Վրան:

8 «Դեհ, արի՛, աղջիկ»:

Կերթան նորեն, կը տեսնան կոր մարդը սատկեր է: Կուգան կոր, ըսեր է.

– Այո՛, մեռեր է մարդը:

Ան տետրակը կը վառեն կոր: Հազարներով հայտ աճուն, ալ ի՞նչ պիտի ըլլա, կառավարութեան պիտի տա՞ր, ի՞նչ պիտի ընէր, չենք գիտեր:

Հաջորդ օրը կը սպասեն կոր, Ալին տունը չի գալ կոր: Անտին-աստի խանութներ կը հարցնեն կոր, «Ի՞նչ ֆիլանըն յանընտա պեն կյորտուն»⁹, տաճիկին մեկը կըսէ. «Ֆիլանըն տուքյանընտա օթուրույորտուն»¹⁰: Հենեն կերթան, կը կոխեն «Ալի տուն սե-նին տյուքանընտա օթուրմուշտուն: Հա օթուրտու ա-մա կեթտի»¹¹: Անոր կառնեն, կը նետեն բանտ: 2-3 հատ մարդ կը վերցնեն, բանտը կը նետեն եւ կը ծե-ծեն: Կը սկսին ծեծելով, որ աս մարդը ո՞ր է: Չեն գտնար կոր:

Երկրորդ օրը կը գտնան կոր, քաղաքէն դուրս կը գտնան կոր խայմային մէջ: Մեռելը ջամին կը բերեն կոր: Չամին ելնելէն հետո Չափութ Ավետիսն ալ մեռելին ետևէն կերթա կոր: Տաճիկն մեկն ըսեր է.

–Ուլան Չափութ Ավետիս, կյավուր օղը, պու իս-լամլարըն իշի տեյիլ, պու կավուրլարըն իշի տիր¹²:

–Ուլան, պոյլե տոյլեն, էրմենիլեր էրքենտեն տյուքանը օրթերլեր էվերինն կիտերլեր, կորխար-լար չյունբու, օգաղա կեթմեզլեր, պու սիզին իշինիզ տաճիկլերին իշի փարասու իւչին¹³,– կըսէ կոր Չա-փութ Ավետիսը:

Չի բռնվիր կոր, հայերուն մերցուցածն ալ չեն գիտնար կոր, գնաց ու գնաց:

Մարաշցիների գաղթը

1914 թ. հայութիւնը Մարաշէն ըսկասն աքսորել: Բազմաթիւ հայեր, առաջին անգամ լուսավորչա-կանները, ելան քալելով: Տարիքս 7 տարեկան, և կը հիշեն՝ մամաս, պապաս, ամենքս մէկ՝ 8-ը հոգի, ըսկրասնք քալելու և հասանք Էրքեննազ¹⁴: Էրքեննազ ըսածը գետ մըն է: Այնտեղ պառկեցանք: Յաջորդ օրը ելանք, նորէն սկսանք քալելու Աղսու¹⁵, ան ալ նույնպէս գետ է, բայց քիչ մը մեծ է անիկա:

Անկէ հետո նորէն զիշերները կը պառկենք, նորէն մեզի հանեցին, հասանք Այնթապ: Չեն գի-տեր, որ մինչեւ Հալեպ քանի օրէն հասանք: Ան-թեպը մեզի բողոքական եկեղեցիի մը մէջ, մի քանի օր այնտեղ կեցանք, նորէն մեզի հանեցին:

9 «Այսինչին մոտ ես տեսա»:

10 «Այսինչի խանութուն մտած էր»:

11 «Ալին երեկ քո խանութուն էր մտած»: «Այո՛, մտած էր, սակայն գնաց»:

12 Այսինքն՝ «Մա իսլամների գործը չի, սա անհավատների գործն է»:

13 «Օո, այսպէս մի՛ ասա, հայերը վաղ են փակում իրենց խանութ-ները և գնում են տուն, որովհետև վախենում են, նրանք հեռու չեն գնա: Մա ձեր՝ տաճիկների գործն է փողի համար»:

14 Էրքեննազ գետը թափվում է Աղսու գետի մէջ:

15 Աղսու գետը թափվում է Ճիհուն գետի մէջ:

Հասանք Քիլիս: Քիլիսէն ելանք, ըսկասնք քալե-լու: Թրենի գիծ մը եկավ դիմացնիս և անցանք թրե-նի գիծը, կը քալենք կոր: Ինչ որ է, Հալեպ հասանք: Հալեպ հասանք, մեզի հին դշլայի¹⁶ մը մէջ լեցուցին, բայց աս մի քանի օրուան մէջ ան թիրքական զինուորները ուր որ տեսան մեզի, ճերմակ կտավ մը գետինը կը փռեն և կը մուրան՝ դրամ տուէ՛ք ըսելով: Տուողը տուավ, չտուողը չտուավ: Հալեպ հասանք, դշլային մէջ մի քանի օր ես կեցանք: Վերջը ժան-դարմաները կուգային, վրան մըն ալ շինած ենք, դրպաճներով¹⁷ կը զարնեն՝ ըսելով՝ «Յալլա, ելէ՛ք, պիտի երթաք»: Մի քանի հատ ուղտ միասին կը բե-րեն, ապրանքներն ան հայերու ապրանքները կը բերձնեն իրենց ձեռքովը, եթէ տէրը ետևէն երթան՝ կ'երթա, չերթանը կը մնայ: Անոնք ժանդարմաները կուտեն: Ողորմած պապաս ըսավ.

–Օղում Գիրգոր կէլ շուրտան¹⁸ արած հի-ւանդանոց մը կայ եղեր, տանիք-մանիք չունի, մի-նակ պատեր ունի: Մա դշլայէն երթանք, գոնէ ազա-տինք, Դեր Չոր չերթանք:

Թրենի կայարանին մոտ էր ան, ալ այնտեղ գա-ցինք: Հինգ հատ մաֆրաշ¹⁹ ունեինք, անկողին և այլն: Եկանք ան հին հիւանդանոցին մէջ, վարի հարկ մի քանի օր կեցանք: Մէկէնիմէկ տարաք-ները²⁰, նորէն ժանդարմաները եկան, ըսին՝ «Յալ-լա, թրեն է»:

Դէպի Ռայաք

Թրենը հեծանք, ամա ինչ թրեն, ապրանք լցնելու թրեն: Անոր մէջը հեծանք՝ ապրանքնիս, մենք, ժո-ղովուրդը, ամենը թրենի մէջ հեծան: Կերթանք կոր: Ամա ո՞ր կերթանք, չենք գիտեր: Ճամփան ածուխը վերջացավ, թրենին ածուխը: Թրենը կեցավ: Արդէն երիտասարդ մարդ չկար մեր մէջը, ամենը չուլիս-չոճուլս²¹ և ծեր մարդեր: Երիտասարդները Մարա-շէն չեկածէն, ամեն հավաքեցին տարին, ամա ո՞ր տարին, չենք գիտեր: Կեոյա²² զինուորութեան տա-րին:

Թրենը կեցավ: Թրենի գիծի մոտի գյուղերը ֆե-լահներուն²³ ըսին, որ «Կետեճէքսինիզ շինտիք օր-տան օ քեօյտան թեզեք կեթիրեճէքսինիզ»²⁴: Թեզե-քը կովի աղտոտութիւն և այլն, կը չորցնեն ֆելլահ-ները, անիկա կը վառեն: Անկէ դուճաղ-դուճաղ²⁵ կը բերեն: Թրենը սկսավ կամաց-կամաց քալել, հա-սանք Ռայաք:

16 Չորանոց:

17 Մարակ:

18 «Արի այստեղից»:

19 Ներքնակ:

20 Ոստիկան:

21 Երեխաներ:

22 Իքր:

23 Գյուղացի:

24 Այսինքն՝ «Հիմա գնալու եք այդտեղից, այդ գյուղից արաք բերելու»:

25 Գիրկ-գիրկ:

Ուայաք հասանք, մեզի ընդարձակ տեղ մը իջեցուցին: Մենք մարաշցի և զէթունցի էինք: Ամա մարաշցիները ալ ավելի՝ երեք քառորդը մարաշցի, մեկ քառորդը՝ զէթունցի: Մի քանի օր կեցանք այնտեղ: Հայերուն կեցած տեղը եկան թելխներով²⁶ պաքսիմատ, չոր պաքսիմատ (պաքսիմատ ըսածս յանի հացին չորը) մեր առջեւը թափեցին, մի քանի տոպրակ ալիւր և ալյւն, կեոյա հայերուն պիտի բաժնեն: Հայերուն չը բաժնած՝ յարձակեցան ան պաքսիմատու և ալիւրու վրայ, ամենը յափշտակեցին: Մէկ էլ մէկ մեր շուրջը ժանդարմներով, զինուորներով մեզի պաշարեցին: Պզտիկ չոճուխ-չոլուխ ջուր թափելու համար դուրս պիտի ելնան, որ ջուր թափեցան, չեն ձգեր կոն: Ըսկսան բոլոր ժողովուրդը լալ և ողբալ:

Ճեմալ փաշան հրաման տուեր է, որ անտեղի կեցող հայերը բոլոր փչացուցէք: Թիրքական զինուորութեան մեջ հայ բժիշկ մը կար եղեր: Անիկա լսեր է: Ըսեր է, թելեֆոն մը բացեր է Ճեմալ փաշային, որ ինչո՞ւ համար աս ժողովուրդին հանցանքը ի՞նչ է, որ անտեղի պիտի փչացնես եղեր: Ըսեր է, որ իմ եղբայրս Ջէթունին մէջ զէթունցիները մեռցուցեր են, անոր համար: Ըսեր է ան հայ բժիշկը:

–Ո՛չ, ես կը հավատամ, որ անոնք բոլոր մարաշցի են, զէթունցի չկա մէջը, զէթունցիները առաջ արտրեցին գնաց:

–Ուրեմն,– ըսեր է փաշան,– իրենց մաֆրաշները, ապրանքները և ծերուկները թրեճը դրէք, թող երթան: Եվ մյուսներն ալ մինչև Դամասկոս թող քալեն:

Դէպի Դամասկոս

Ըսկսանք քալելու: Թրեճը մեզմէ մը առաջ գնաց: Ամմա ո՞ր գնաց, չենք գիտնալ կոր: Իմ մեծ մամաս ալ 75 տարեկան, ան ալ միասին մաֆրաշներուն հետ գնաց: Անունը Ղուտուրեթ էր:

Մենք ըսկսանք քալելու մինչեւ Դամասկոս 3 ժանդարմայով, 1500 հոգիով: Գիշերները 2-3 ժամ կը պառկեցնեն, երբ կելնենք, նորէն կը սկսինք քալելու:

Հալեպի մեր փողոցին մէջ Տիգրան անունով մարդ մը կար, նոր ամուսնացած: Առաջին զավակը տղա՝ 1 տարեկան կա-չիկա, կինը յոգնած, տղային քարի մը ետեւը դրաւ, սկսաւ քալելու: Մենք ալ կը քալենք կոր, մամայիս, պապայիս շուրջը կը քալենք կոր: Եղբորս և պապայիս ողորմած, երկուքն ալ ողորմած եղան, կռակակին բռն, անկողին կամ պաթանեա²⁷, ջուր-մուր: Կը քալենք կոր: Ժանդարմային մէկը առջեւէն կերթաւ կոր հայերուն, մէկը մէջտեղէն, երրորդն ալ ետէն կու գա կոր: Ետէն եկողը ան չոճուխը քարին քովը տեսեր է: Երեք ժան-

դարման ձիավոր են, մենք քալելով: Ան երրորդ ժանդարման տեսեր է, որ չոճուխ մը կա անտեղ, առեր, բերեր է. «Ասոր մայրը ո՞ր է, ո՞վ է ասոր հայրը, մայրը»:

Հայրը, մայրը ըսան. «Մեզի է, չենք կրնար կոր շալկել, յոգնած ենք, անօթի ենք, ծարաւ ենք»:

Ժանդարման ըսեր է. «Դուն ուր որ մեռնիս, չոճուխն ալ քեզի հետ թող մեռնի»:

Հասանք Դամասկոս: Մէյդան կըսեն, քաղաքէն դուրս մէյդան, կալարանին մօտ: Այնտեղ մեզի ծառերուն տակը իջեցուցին: Դամասկոսին մէջ եղող հին հայերը լսեր են, որ արքայութեան հայ եկեր է այսինչ տեղը: Մեզի ըսկսան կերակուր և ալյւն հաց բերել մի քանի օր: Կերանք, խմեցինք: Մէկէնիմեկ թրեճը եկաւ, կեցաւ: Ըսին, որ ամէն մէկ մարդուն մէկ մէջիդ կուտաւ և թրեճը կելլա, չունեցողը հոս պիտի մնա: Մենք պզտիկ էինք, ես՝ 7 տարեկան, և եղբայրս՝ Միսակը՝ 4 տարեկան: Ողորմած պապաս մեզի թրեճին ըռախին մէջը պահեց, որ մեզի համար ալ մեկական մէջիդ չտվին՝ «Չի տան» ըսելով:

Հեծանք, գացինք Օրտունի մրհաթթան²⁸, Էզրա կըսեն անունը: Դահա թրեճէն չի հասած՝ մեծ մամաս տեսանք: Տեսանք 5 մաֆրաշները հավաքեր է, հայերէն և օսմաներէն գրուած վրան: Մեծ մամաս անոնք ամէնը մէջտեղ բերեր է և վրան ալ կը պառկի կոր: Առտուն կանուխէն հասանք Էզրա:

–Մեծ մամա՛, մեծ մամա՛,– ըսելով պռռացինք: Մեծ մամաս ելավ, ուրախութենէն խենթացաւ: Ի՞նչ ընելը չգիտեր կոր: Թրեճէն վար իջանք: Աղտոտություն, ճանճերը, անանկ ճանճ մը կայ, որ տեսնաք խոշոր-խոշոր ճանճեր, կերակուրը բերանդ լոխմայի²⁹ տանելու ատեն 2-3 հատ ալ միասին կը մտնա բերանդ: Պապաս ողորմած, եղբայրս վրան մը լարեցին, տենկերը³⁰, մաֆրաշները քակեցին, կը նստինք կոր, ջուր չկա: Հայութիւնը յարձակեց թրեճի վրա, որ ջուր առնի: Երիտասարդին մէկը թրեճին դազանին³¹ և վազոնին մէջտեղը հեծեր է, որ այնտեղէն ջուր առնէ: Թրեճը քալելուն պես այն երիտասարդը ինկավ, կտեսնանք կոր մենք ալ, փարչա կտոր³² եղավ: Ուրիշ տեղ մը կա եղեր, մեզի ըսին, որ այսինչ տեղը ջուր կա: Այնտեղ ալ գացինք, որ տարաքներ՝ ոստիկաններ կան, մեզի ջուր չը տվին, դրբաճներով վռնեցին: Ըսին. «Աս Էզրայի գիտնուն, այնտեղէն մեծ լիճ մը կա, գացէք այնտեղէն ջուրը բերէք, կէս ժամ կա հեռավորութիւնը»: Գացինք այնտեղ: Գացինք, որ ֆելլահները, չոճուխի աղտոտութիւն, ձեզմէ հեռու, էշերը, եզերը, կովերը մտեր են, ջուր կը խմեն կոր, աղտոտություն: Պարտախի³³ մը վրա գրալ մը կը դնեն և ջուրը

28 Հորդանանի կայարանն է:
 29 Պատառ:
 30 Ներքնակի կապոց:
 31 Շոգեկառքի քրամբարը:
 32 Կտոր-կտոր:
 33 Բաժակ:

26 Պարկ:
 27 Ծածկոց:

կ'առնեն-կառնեն, պարտախին մեջ կը լեցնեն, որ աղտոտութիւնը մեջ չիջնա: Ան ջուրը մի քանի օր խմեցինք, վերէն-վարէն կերթա կոր: Մեծ մամաս հիւանդացաւ: Մեկէնիմէկ նայեցանք, որ ամէն մէկ ընտանիքին մէկական ուղտ բերին՝ ապրանքները բերելու համար: Ապրանքներնիս բերձուցինք: Ուղորմած մամայիս ոտքերը ուռեցաւ: Մամաս ուղտին վրա հեծցուցին և երկու հատ ալ մաֆրաշ միասին, մյուսները մեծ մամայիս քով մնաց: Ողորմած պապաս ըսավ.

–Մեկ-երկու օր մենք կերթանք, ուր որ կը տանին: Մենք երթանք, ետ կը վերադառնամ, քեզի կառնեն, կը տանեն:

Մեծ մամաս և երեք մաֆրաշները իր քովը մնացին:

Ծնողներին մահը

Մեզի Նինվե անունով գիւղ մը տարին, ֆելլահներուն մէջ: Այնտեղի միտիւրը մեզի տուն մը տուաւ, տեղաւորեցանք: Ետ պապաս պիտի երթա, որ մեծ մամաս բերեր, ձիւնը իջավ: Անձրեւ-ձիւն իջաւ, մենք դուրս չենք կրնա կոր ելլալ: Քիչ մը պապաս ուշացաւ՝ 5 օր: Այնտեղէն եկող մը եղավ, ըսավ. «Մեծ մամանիդ մեռավ, կեանքը ձեզի, և իրեն անկողինի մաֆրաշները ամէնը առին ժողովուրդը»: Մենք մնացինք այնտեղ մի քանի տարի, դրամ չունինք: Բոլոր ունեցած տունի ապրանքները հացով կը փոխենք կոր, դրամ-մրամ չկա: Պապաս հիւանդացավ, մամաս հիւանդացավ թիֆոյիս, ետ ալ հիվանդ էի: Ջուր մը բերին, ծարաւ էի, ջուրը առի (արգելած էր ջուր խմելը), գլուխս քաշեցի, լավ մը խմելէն հետո ետ յաջորդ օրը ոտքի ելա: Ոտքի ելա: Պապաս մեռաւ, կեանքը ձեզի, երեք օր վերջն ալ մամաս մեռաւ: Մենք մնացինք մէջտեղ՝ պզտիկ եղբայրս, մեծ եղբայրս, քույրս և ես՝ 4 հոգի:

Օրին մէկը սենեակին մէջը բան մը դրեր են, որ տանիքը չըփլի, ձիւնը լեցուցաւ: Ամէն օր 2-3 անգամ ձայն կելլա կոր՝ չաթ-չաթ, չաթ-չաթ: Ֆելլահներն ըսին. «Ասիկա պիտի փլի, դուք ալ տակը կը մնաք, կը մեռնիք, այստեղէն քաշվեցէ՛ք»:

Մի քանի կտոր ապրանք ունինք, անկիւնը դրինք: Այնտեղ սենեակ մը կար, այնտեղ մարդ կը բերեն, կը բանտարկէին, մենք ալ գիշերը անոնց սենեակը նստանք: Գիշերը մեյ մըն էլ նայեցանք, որ կյուրբետն³⁴ փլեցաւ մեր տունը:

Ոջիլ, ուզածիդ պէս ոջիլ կա գլուխնիս, ամէն կողմերնիս, մաքրութիւն չկա, օճառ չկա, լուսալ չկա: Քրոջիս երկայն մազերը ոջիլ լեցուցաւ, և ողորմած եղբայրս, թենիքեճի³⁵ մկրատով ան մազերը տիպէն կտրեց: Կտրելու ատեն ոջիլներուն արիւնը մինչեւ բան հասավ: Ինչ որ է, մէկ կտոր հանեց մազերը: Եկան ֆելլահները, արին տարին: Գլուխը լուսաց պաղ

ջուրով: Քույրս ալ հիւանդ էր: Ան ալ ոտքի ելաւ կամաց-կամաց, մենք ալ սկսանք քաղաքէն, գիւղէն դուրս ելլալ: Ֆելլահներէն սորվեցանք մի քանի տեսակ խոտեր, տեսանք՝ ասկէ կուտեք, ասկէ չեք ուտեր և այլն: Խոտ կուտեցինք:

Հասան քէյին որբանոցում

Եղբայրս զինուորութեան տարին, մեծ եղբայրս, թիրքական զինուոր, մինչեւ Հոնս տարեր են: 6-7 ամիս հետո, օրին մէկը նայեցանք, որ փախեր է, եկեր է: Եկավ, մեզի առաւ: Քալելով Հավրանէն մինչեւ Դամասկոս եկանք հասանք: Մեզի դրին Հասան քէյին որբանոցը: Անոր որբանոցը դրին, քույրս ալ, տոքթոր Ընծայիկ կար մեր դրացին Մարաշի (մեր դրացին տոքթոր էր զինուորական), ան ալ բոլոր Մարաշի երիտասարդ աղջիկները հաւաքեց, հիւանդանոց տարավ, որ այնտեղը չի մեռնին, գոնէ ուտեն-խմեն: Եղբայրս ալ համապալություն կընէր, երբեմն կուգար մեզի կայցելէր: Ամա այն ժամանակ մեզի ալ թիրքերէն աղօթք կը սորվեցնէին: Այնտեղը երիտասարդ Հասան քէյի տղուն հարսն է եղեր: Օրին մէկը մի քանի հատ հայ, մեր մէջը տաճիկ ալ կար, ամա հայութիւնը շատ էր, մի քանի հատ հայ չոճուխ գլուխը հաւաքեց, ըսաւ. «Ես հայ եմ, Հասան քէյին տղան ինձի մամայիս, պապայիս ձեռքէն փախցուց, հիմա հոս եմ»: Մենք այնտեղ մի քանի ամիս կենալէն յետոյ փախանք ետ և պզտիկ եղբայրս, դուռէն դուրս փախանք:

Անունս Շաքեր դրին

Դամասկոս Մեզգե անունով գիւղ մը կա, այնտեղ զացիներ, զինուորական տեղ էր: Այնտեղ նորէն մեզի բռնեցին, տաճիկ պիտի դարձնեն մեզի, անունս ալ փոխեցին Շաքեր: Շաքեր կըսէին ինձի: Այնտեղը թիրքերէն աղօթք, արաբերէն եւ այլն կսորվեցնէին: Այնտեղ մի քանի ամիս կենալէն հետո մէկէն մէկ նայեցանք, որ երկնքի վրա թուրքուններու պէս օդանաւեր եկան, մի քանի հատ ռումբ նետեցին, ամա մեր վրա չեկաւ: Մեր վրա կեցողները բոլոր փախան, մեզի ձգեցին: Նայեցանք, որ ձիւնը անգլիացի շերիֆ և ֆրանսիացի կուգան կոր: Մենք ալ իրենց լեզուով չենք գիտեր, երեսնիս խաչ կը հանենք՝ «Արմինյան, արմինյան» ըսելով: Մեզի բան մը չրին, մենք ալ այնտեղէն փախանք: Իջանք Դամասկոս:

Դամասկոսում

Եղբայրս երկրորդ անգամ նորէն բռնեցին, տարին Դամասկոսէն, նորէն զինուորութեան տարին: Քոյրս հիւանդանոցն է: Երբեմն կերթանք կայցելեմք, մեզի հաց կուտա եւ այլն: Կուտենք, կը խմենք, այնտեղերը չենք կրնար կենալ, փողոցները կը պառկինք: Հազարներով չոճուխ՝ հայ: Համիտիէն դիմացը մէկուկէս մետրանոց դուռ մը կար: Այդ դուռին այնտեղը կը պառկէինք: Ոջիլ ջուրի պէս կը

34 Գողորմունով:

35 Թիքեղագործ:

վազեր, և առտու կելլայինք, որ մեր մէջը մի քանի հաստ չոճուխ մեռեր է, հիւանդացեր է թիֆոիս, խոլերա: Կուզան արապան կը լեցնեն, արապայէն մէջը կը նետեն, ոտքերէն, ձեռքերէն կը բռնեն, կը նետեն, կառնեն, կը տանեն: Մենք ալ, մեր ոջիլ մաքրենք ըսելով, Մերճեյին այնտեղ ըրմախ³⁶ մը կար, Պարատա կըսեին, այնտեղ կերթայինք, կը հանէինք հագուստնիս, հագուստ ըլլալը ի՞նչ է որ, մէկ ֆուսթան³⁷ մը: Կը հանէինք, կը ցուփէինք ջուրին վրա, կը լվայինք, քիչ մը կը չորցնէինք, ետ կը հագնէինք: Մեզի նորէն հաւաքեցին անգլիացիները: Սիֆլիթելի անունով փողոց մը կար, այնտեղ էլ մեզի որբանոց դրին, լաւ մաքրեցին, բաղնիք, ուրիշ մաքուր հագուստներ տւին, մեզի այնտեղ դրին: Այնտեղ լավ կուտէինք, կը խմէինք, կը պառկէինք, ամա կարդայ, գրել եւ այլն բան մը չի կայ: Մեծ եղբայրս նորէն զինուորութենէն փախեր, եկեր է: Քրոջս հետ որբանոց եկան: Եկան հարցուցին:

–Մեղրակ, Միսակ Սարաֆեան անունով այստեղ չոճուխ կա՞:

–Այո՛, կա,– ըսեր են:

Մեզի տարին դուռնի մօտ, այնտեղ բերին, մեզի դրամ տւին, պտուղ բերին, ըսին նորէն կուզանք: Մենք ներս գացինք, իրենք ալ գացին: Երկրորդ անգամ նորէն եկան, ըսին, որ անգլիացիները մեզի Մարաշ պիտի տանին, ձեզի պիտի առնեն:

Մարաշում

Մեզի որբանոցէն հանեցին: Եղբայրս ալ տուն բռներ է քրոջս հետ, տուներնին տարին: Մի քանի օր կենալէն յետոյ թրեմի կայարան գացինք: Թրեմը հեծանք, Մարաշ կերթան կոր, դրոշակներով եւ այլն երգերով, կանչերով կերթանք կոր: Հալեայ հասանք:

Մեր դրացին՝ պատեպատ դրացի տէր Գեւորդ Նահապետեան անունով ավագ քահանա մը, մեր մարաշցիներս գլուխը հավաքեց, աղաչեց լալով, ողբալով. «Չաւակներս, մի՛ երթաք: Մարաշը դահա Մարաշ չէ, մի՛ երթաք, հո՛ս կեցեք, Հալեայ կեցեք»: Մտիկ չըրին: Հալեայէն մինչեւ Մարաշ մեզի արապա բռնեցին անգլիացիներուն հաշվին:

Մարաշ գացինք: Մեր տունին և ճամփուն մէջտեղը հայ կաթոլիկներուն դպրոցը կար 3 հարկանի, անիկա փլեր են: Մեր տունը մէջտեղ ելեր է: Իրական ալ անանկ էր:

Մենք դպրոցին ետեւը կինայինք, ճամփան ալ հոս, դպրոցն ալ հոս, չէինք երևար: Մենք մէջտեղ ելեր ենք, օթոստարատ³⁸ եղեր է: Տուներնիս հասանք: Ողորմած հարսնուկս՝ ամիս կնիկը եկեր է, իր եղբորը հետ կը նստին կոր մեր տունը: Մենք ալ մտանք: Ամիս գաւակ չունէր, ինձմէ 3 տարի մեծ քոյր մը ունէի, Փայլածու անունով, անիկա իրենց

քովը արին: Իրենք Հալեային մէջ տուն մը բռնեցին, կը նստին կոր: Մեզի ալ Հալեայէն Ռայաք տարին, ինչ որ է ըսած էի: Անոնցմէ լուր չունեցինք: Հարսնուկիս հարցուցինք. «Հարսնուկ, պաճըմ ներտե՞, միյե պարապար կեթիրմետին»³⁹: Այն ժամանակ ինք 10 տարեկան եղած էր, ըսավ. «Յավորըմ գորըման էլըմտեն պտըլար»⁴⁰:

Ողորմած եղբայրս՝ Գիգորը, Ուրֆայի եկեղեցուն նամակ գրեց քանի անգամ, թէ ասանկ-ասանկ է: Պատասխան մը չ'եկավ:

Մեզի որբանոց դրին նորէն, Էպիսեպեր անունով որբանոց մը դրին: Քոյրս մեր տունը մնաց: Եղբայրս թենեքեճիութիւն կընէր, կապրէին միասին: Մենք ալ որբանոցն էինք՝ եղբայրս և ես: Այնտեղէն մի քանի տարի կենալէն յետոյ անգլիացիներ ելան, ֆրանսիացին եկավ: Ֆրանսիացիներուն հետ պատերազմի բռնեցան թիրքերը: Օր մը նայեցանք, 2 հաստ օղանաւ եկավ, ֆրանսիացիներուն վրայ թուղթ նետեց: Ֆրանսիացիներն առանց նայելու, առանց լուր տալու հայերուն կը փախին կոր: Մենք ալ քաղաքէն դուրսն էինք՝ մեր որբանոցը: Ամերիկացիները կը նայէին մեզի: Միստեր Լայմն անունով ռէյս մը ունէինք: Մեզի նույն ժամանակ Էպիսեպերէն առին, քոլեջն տարին: 150 չոճուխ էինք՝ տղա: Ուրիշ աղջիկներուն որբանոց մը կար, ուրիշ տղերքներուն որբանոցը կար:

Չիւն 5-6 մետր, պաղ, Սիբերիայի պէս: Ան ժամանակ ֆրանսիացիները երթալէն յետոյ, բաւական հայերը լսեր են, միասին գացեր են եւ ճամփան ձիւնի տակ մը մնացեր են, հազարներով հայութիւն, այնտեղ բոլոր սառեր են: Նորէն այնտեղ լուր չուած, փախեր գացեր են:

Մեր Մարաշի մէջն ալ սկսեր են մորթել հայութիւնը, 15 հազար հայութիւն մորթեր են: Մենք կլսենք կոր, չենք զիտեր, կլսենք կոր: Վերջը կառաւարութիւնը հրաման հաներ է, որ հայութիւնը, եթէ երթալ կուզեն կոր, երկրորդ անգամ պիտի արքորվին, մեզի ստորագրութիւն կուտան, մենք այստեղէն առնելիք մը չունինք: Ո՛չ տուն ունինք, ո՛չ տեղ ունինք, ո՛չ բան ունինք:

Բեյրութում

Երկրորդ անգամ կ'արքորվինք կոր, ամերիկացիները մեզի մինչեւ Քիլիս բերին քալելով, արաքալով: Քիլիսին այնտեղ թրեմի գծին չի հասած, 2-3 հաստ օթո եկաւ, բոլոր չոճուխները վրան՝ փիքալ⁴¹օթոներու մէջ, մեծ օթոներ մեզի մէջը լեցուցին: Կէս ժամայ մէջ Հալեայ եղանք, ամա մեր ետեւէն ահագին ժողովուրդ մը կուգա կոր, անոնք ի՞նչ եղան, ի՞նչ չեղան, չեն զիտեր: Մենք հասանք Բեյրութ: Նոյստեան օֆիս անունով, Նոյստեան

36 Առու:
37 Շոր:
38 Մայրուղի:

39 «Քույրս որտե՞ղ է, ինչո՞ւ ձեր հետ չբերեցիք»:
40 «Որդիս, ուժով ձեռքիցս խլեցին»:
41 Բեռնաստար փոքր մեքենա:

պատվելի էր, իրեն օֆիսը կա եղեր, մեզի այնտեղ իջեցուցին: Ես ալ ան ժամանակ հիւանդ էի: Զյուլիե զանգեր են, որ հիւանդ մը կա՝ ըսելով. «Եկէ՛ք, տարէ՛ք»: Ան գիշեր ինձի արին, տարին Զյուլիե: 3 ամիս այնտեղ կեցա, ինձի ամելիաթ⁴² ըրին կուրծքէս: Լաւ եղա, ոտքի վրա ելայ, բաւական այնտեղը ժամանակ անցուցի հիւանդանոցին մէջ: Հիւանդներուն նունի⁴³ կը դնէի, ինձի դրամ կուտային, շաքար կուտային: Մի քանի դուրուշ ալ այնտեղ հաւաքեցի: Վերջը ինձի ճելտիպ տարին: Գացի, որ եղբայրս հոն է, պզտիկ եղբայրս: Ամա բոլոր մա-

զերս թափեցան, դապախի⁴⁴ պես եղաւ: Ճելտիպ մի քանի ամիս կենալէն յետոյ մեզի Անթիլիաս իջեցուցին, մեր տաճարը: Այնտեղը 3 հատ վարագա⁴⁵ շինեցուցին, մենք ալ ամալեութիւն⁴⁶ ըրինք: Խոշոր-խոշոր վարագաներ՝ 6500 հոգի էինք: Մեր Անթիլիասը դուրսէն՝ Սուրիայէն, Թիւրքիայէն հայ չոճուխները՝ աղջիկ-տղա, կը հաւաքէին, Անթիլիաս կը բերէին, կը մաքրէին հազուստնին, անկողինին կը վառէին և Շումլան, Ղազիր, ամէն տեղ կը դրկէին: Ամա մենք մնացինք այնտեղ:

42 Վիրահատություն:

43 Գիշերանոթ:

44 Դդում:

45 Տնակ:

46 Բանվորություն:

ԳԵՂԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
(ծնվ. 1901 թ.)

Համառոտ կենսագրություն

Գեղամ Կարապետի Սարգսյանը ծնվել է 1901 թ. Վանի նահանգի Արճակ գավառի Խառակոնիս գյուղում:

Ծնողներն էին Կարապետը և Նուբարը: Գեղամն ուներ 3 եղբայր և մեկ քույր:

Մինչև 1915 թ. ուսանել է Վանի գերմանական որբանոցում:

Մեծ եղեռնից փրկվում են ինքը՝ Գեղամը, մայրը, եղբայրներից մեկը: Մայրը, սակայն, մահանում է 1917 թ.:

Նույն թվականին էլ եղբոր հետ ընդունվում է Էջմիածնի պետական մանկատուն:

1917 թ. սեպտեմբերին Գեղամն ընդունվում է Գևորգյան հոգևոր ճեմարանի 2-րդ դասարան, 1919 թ.՝ Երևանի թեմական դպրոցի 4-րդ դասարան, իսկ հաջորդ տարին թռիչքային կարգով փոխադրվում է 6-րդ դասարան:

Աշխատել է Երևանի Գավիեղկոմի բնակարանային բռնագրավման բաժնում, Երևանի գավառի Սոցապի ձեռնարկությունում, Ծաղկաձորի որբանոցում՝ որպես կառավարչի օգնական և ուսուցիչ, Կոտայքի Գյոյքիլիսա (այժմ՝ Կապուտան) գյուղում՝ որպես ուսուցիչ, Հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ գնդում՝ քաղղեկ, Ներքին Ախտայի շրջանում՝ Պետապի գործակալ և Շրջսպառնուպի միության նախագահ, Վաղարշապատի շրջգործկոմի առևտրի բաժնի վարիչ, Կարմիր խաչի կենտկոմի բուժսանիտարական վարչության պետ, Հայարդիտրիդի սիստեմային կոմբինատներում՝ գլխավոր ինժեներ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին եղել է ավտոգումարտակի պարենի մատակարարման պետ:

ՎԱՆԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՀՈՒՇԵՐՍ (1908-1915 թթ.)

Հայրս բատրակ էր, մայրս տնային սև աշխատանք էր կատարում գյուղի ունևոր տներում:

Գյուղի քահանայի և ռեսի միջնորդությամբ 7 տարեկանում ընդունվում եմ Վանի գերմանական որբանոց, որտեղ ստեղծված էին մեզ համար ապրելու և սովորելու համար լավագույն պայմանները:

Գերմանական բարեգործական ընկերությունը Վանում կազմակերպել էր երկու որբանոց՝ տղաների և աղջիկների¹: Այդ որբանոցներն իրարից հեռու էին մոտ 150-200 մետր և անջատված էին մոտ 2 մետր բարձրության պարսպով:

Գպրոցը հարմարավետ, գեղեցիկ, երկհարկանի մեծ շենք էր, դասարանները բաշխված էին առանձին-առանձին՝ տղաների և աղջիկների:

Կառուցված էր նաև հարմարավետ շենք փռի, խոհանոցի, պահեստների համար: Ուներ խաղողի և մրգատու մեծ այգի, որը պարսպապատված էր: Բացի այդ այգուց՝ մանկատան բակում զգալի մեծ տարածության մեջ տնկված էին տանձի, խնձորի ծառեր:

Որբերն ամռանն օգտվում էին մրգից, իսկ ձմռանը Շատախից գնում էին ընկույզ ու չամիչ, և դրանով ձմռանը երեխաները մատակարարվում էին չոր մրգերով:

Որբանոցի բակում, բացի պտղատու այգուց, նաև ցանում էին լոլիկ, սմբուկ, տաքդեղ, վարունգ: Այնպես որ ճաշարանն ապահովվում էր պահանջ-վելիք բանջարեղենով, իսկ ձմերուկի և սեխի պահանջը լրացվում էր գնումների կարգով:

Որբանոցում սահմանվել էր հետևյալ ռեժիմը.

- 1) Քնել ժամը 22-ին, արթնանալ ժամը 6-ին:
- 2) Սերտեղության դաս՝ ժամը 6.30-7.30:
- 3) Նախաճաշ՝ ժամը 8-9, ճաշը՝ 14-15, ընթրիք՝ 19-20:
- 4) Գպրոցական պարապմունքներ՝ ժամը 9-14:
- 5) Հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի:
- 6) Ամառային արձակուրդ՝ հուլիս-օգոստոս ամիսներ (որբերից ովքեր ցանկանում էին, կարող էին հենց որբանոցում անցկացնել իրենց արձակուրդը, իսկ մնացածը կա՛մ իրենց հարազատների, կա՛մ բարեկամների մոտ):

Որբանոցի դպրոցում երեխաները սովորում էին հայոց լեզու, գերմաներեն, թվաբանություն, աշխարհագրություն, թյուրքերեն, գեղագրություն, երգեցողություն և քերականություն:

Գպրոցի բակում ֆիզկուլտուրայի համար կառուցված էր ճոճանակ և զուգափայտ:

Որբանոցն ուներ մեկ սենյականոց 5-6 մահճակալներով հիվանդանոց, իսկ մեկ բժիշկը երկու մանկատան համար էր:

Կային 5-6 մայրապետեր՝ նոր շորեր կարելու և հները կարկատելու, գուլպաները վերանորոգելու և հագուստները լվանալու համար:

Կային 3 հացթուխ, 2-3 խոհարար, 2 հավաքարար:

Բնավորությամբ շատ չարածճի էի և աշխույժ: Սկզբնական մանկապարտեզից հետո, երբ դարձել էի 1-ին դասարանի աշակերտ, շատ ծույլ էի և ավելի շատ տարված էի խաղերով, քան դասերով: Սակայն, չնայած դրան, ուսուցիչներն ինձ սիրում էին ու կանչելով ուսուցչանոց՝ շատ անգամ հերթական խրատներ էին տալիս. «Դու ընդունակ երեխա ես, եթե դառնաս աշխատասեր, կլինես դասարանի առաջավոր աշակերտներից մեկը»: Այդ խրատները, թեև դանդաղ, բայց արդեն 3-րդ դասարանից տվեցին իրենց դրական արդյունքը: Ես տարվա վերջում դասվեցի առաջավորների շարքերում՝ գրավելով 2-րդ տեղը, որի համար իմ հասցեին շաշվեցին գովասանքներ: Ինձ թվում է, որ այդ գովասանքները շաշվում էին ոչ այնքան իմ առաջադիմության, այլ նրա համար, որ դասատուական կազմին վերջ ի վերջո հաջողվել էր բեկում մտցնել իմ մեջ դեպի ուսումը: Այսպես էլ ընթացավ իմ ուսումը մինչև 5-րդ դասարան, այսինքն՝ մինչև 1915 թ. ապրիլը:

Մի քանի դրվագներով ներկայացնեմ կյանքս որբանոցում անցկացրած տարիներից:

Ֆիզկուլտուրայի մեջ գրավում էի առաջին տեղը՝ զուգափայտի, ճոճանակի, օդերի, վազբի և այլ մրցույթների մեջ: Ծատ հեշտությամբ կատարում էի բոլոր տեսակի մարզանքները, և ինձ գերազանցող չկար:

Որպեսզի այս խնդրում կարելի լինի ավելի ճիշտ պատկերացում կազմել, կրեմն մի շատ կարևոր փաստ: Հիշում եմ՝ մի անգամ թուրք զինվորականները ներկա էին մեր պարապմունքներին: Մարզանքի դասից հետո ինձ կանչեցին որբանոցի կառավարիչ պ. Հեր Սփերիի² մոտ: Դիշտն ասած, ես

¹ 1900 թ. կեսերին դոկտոր Ռեյնոլտը Հեր Սփերիին հանձնում է 200-250 երկսեռ որբերին: Նոր խնամակալը ուսուցչական կազմն ընտրում է ամերիկյան շրջանակից: Ծնորիվ Սիմոն և Պետրոս Մխիկյան եղբայրների հոգածության՝ «մեծ խնամ կը տարուէր ազգային պատմութեան» (**Յրամանակ** Հ., Յուշարձան, հ. Ա, էջ 450-451): Ի դեպ, Հեր Սփերին Այգեստանի արևելյան կողմում մի թուրքից կարողանում է գնել ընդարձակ կարվածք, արտ, մարզագետին և այգի, որտեղ էլ սկսում է կառուցել իր որբանոցների համար ուրույն և փառավոր շենքեր, իսկ մնացած ծառուղիների մասը վերածում է որբերի գրասավայրի (նույն տեղում, էջ 452):

¹ Որբանոցները հիմնվել են 1896 թ. աշնանը (**Յրամանակ** Հ., Յուշարձան, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 438):

զարմացել էի թե ինչո՞ւ է ինձ կանչել: Ահը սրտումս՝ ներկայացա ու տեսա, որ այդ թուրք զինվորականները նույնպես նրա ընդունարանում էին: Պ. Հեր Սփեռին իմ գլուխը շոյեց և գովեց. «Այդպես լավ ֆիզկուլտուրնիկ ես: Զինվորականները հիացած են և խնդրում են, որ քեզ տեղափոխենք թուրքական զինվորական սպայական դպրոց, մնում է, որ դու տաս քո համաձայնությունը»:

Ես հայտնվեցի տարօրինակ վիճակում. եթե համաձայնվեմ, նշանակում է գրկվելու եմ մանկատան հարազատ միջավայրից և պետք է լինեմ թուրքական ատելի շրջապատում: Լացս եկավ, արտասվեցի:

–Ինչո՞ւ է լաց լինում,– հարցնում են պ. Հեր Սփեռին զինվորականները:

Լացով պատասխանում եմ, որ ես կմնամ մանկատանը, այստեղ ինձ լավ եմ զգում: Թեև շատ երկար համոզեցին՝ նկարագրելով զինվորական դպրոցի լավագույն պայմանները, զինվորական հագուստը և վերջիվերջո սպա դառնալու փայլուն ապագան: Բայց ես իմ որոշման մեջ մնացի անդրդվելի, և սպաներն ափսոսանքով հեռացան:

Ես ընդունակ ու համարձակ էի բոլոր տեսակի խաղերի մեջ, որոնք ընդունված էին որբանոցի երեխաների մեջ:

Վանում շատ անգամ ականատես լինելով լարախաղացների ցուցադրական խաղերին՝ ես ոգևորված որոշեցի փորձել նաև իմ առաջադիմությունն այդ ուղղությամբ: Մեր որբանոցի պահեստապետ Նազե մայրիկից խնդրեցի ինձ ժամանակավորապես տրամադրել 30-40 մետրանոց հաստ պարան, որը, հետաքրքրվելով թե ի՞նչ նպատակի համար է, նախ վախեցավ. «Շան լակոտ Դղեզ³ (նա ինձ միշտ այդպես էր կանչում և այդ անունն էլ ինքն էր դրել իմ չարածճիության պատճառով), կընկնես, կսատկես, քո մեղքի տակից ի՞նչխ դուրս կուզամ»: Վերջ ի վերջո կարողացա համոզել և ստացա երազածս պարանը: Դիշտ լարախաղացների օրինակով չորս գերանների ծայրերն ամրացրինք հողի մեջ, և պարանի երկու ծայրերը կապելով գետնի մեջ խրված փայտերին՝ սկսեցի վարժվել՝ ձեռքիս ունենալով 2-3 մետրանոց փայտյա ձողը: Հաջորդ օրն արդեն մեր որբանոցի հասարակության առաջ ցուցադրեցի լարախաղացության մեջ ձեռք բերած վարպետությունս՝ հիացնելով նրանց իմ համարձակ այդ խաղով:

Պատրաստում էի նաև փայտյա ոտիկներ: Վերցնում էի փայտյա երկու ձող՝ 35-40 մմ հաստությամբ և 2-3 մ երկարությամբ, նրանց վրա ներքևի կողմից 1,5-2,0 մետր բարձրության վրա մեխում էի փայտից պատրաստված տափակ ձևի ոտնատեղեր: Բարձրանում էի պարսպի վրա և ոտքերս դնելով պատրաստված այդ ոտ-

նատեղերին և այդ երկու ձողերի վերին վերջավորությունները ձեռքի ափի մեջ սեղմելով՝ սկսում էի քայլել ամբողջ բակով մեկ, իսկ երբ ցանկանում էի իջնել, ուղղակի թռչում էի գետին՝ ձեռքից բաց չթողնելով այդ զուգահեռ փայտյա ոտիկները:

Շատ հաջող օղապարիկ էի պատրաստում, որը չտեսնված ուրախություն էր պատճառում բոլոր երեխաներին: Օղապարիկ պատրաստելու համար պահանջվում էր փայտյա երկու ձողերը ճիշտ խաչուձև ամրացնել միմյանց, իսկ այդ խաչուձև փայտե վերջավորությունները թելով իրար հետ միացնելով՝ ստանալ օղապարիկի կմախքը: Մի քանի տակ թուրք միմյանց վրա կայցնելով՝ փակցնում էինք օղապարիկի մակերեսին: Որպեսզի օղապարիկը օդ բարձրանալու դեպքում պահպաներ իր դիրքը և հավասարակշռությունը, դրա վերջավորությունների վրա նախօրոք թողած անցքի վրա թելով կապում էինք պոչը՝ մոտավորապես 2-3 մ երկարությամբ: Պոչը պատրաստելու համար պահանջվում էին թել և թղթի կտորտանքներ: 2-3 մետրանոց թելի մեջ անցկացնում էի այնքան թուրք, որն իր ծանրությամբ համապատասխան լինի օղապարիկի տեխնիկական պահանջներին, իսկ այդ կարելի է ստուգել փորձնական թռիչքների միջոցով՝ ավելացնելով կամ պակասեցնելով պոչի երկարությունն օղապարիկի սահուն ու բարձր թռիչքն ապահովելու համար: Օղապարիկն օդ բարձրացնելու համար պահանջվում է 400-500 մետր երկարությամբ կծիկ թել, որի մեկ ծայրը կապում էինք օղապարիկի խաչաձև թևերի 4 վերջավորություններին կապած և կենտրոնական մասում իրար հետ միացած ու հանգուցված թելով: Օդ բարձրացնելու համար գնում էինք որբանոցի դիմացի մեծ դաշտը: Թելի կծիկը բռնողը պետք է կծիկի թելը բաց թողնելով հեռանար օղապարիկ բռնողից մոտավորապես 40-50 մետր: Կծիկ բռնողը օղապարիկ բռնողի ազդանշանով պետք է արագ վազեր և, օղապարիկի բարձրանալուն զուգընթաց, աստիճանաբար բաց թողներ թելի կծիկը մինչև կծիկի վերջանալը: Նաև պետք է նշեն, որ կծիկ բռնողի համար պարտադիր չէր միշտ վազել, երբ օղապարիկը հասնում է մոտ 100-150 մետր բարձրության, արդեն ինքնիրեն սկսում է բարձրանալ մինչև մեր ունեցած թելի երկարությանը, բայց պիտի նկատի առնել, որ կծիկի թելը մեր սահմանած բարձրությամբ էր, բայց դրա բարձրանալը կշարունակվի այնքան, ինչքան որ ցանկանանք՝ ավելացնելով թելի երկարությունը: Օղապարիկն իջեցնելու համար սկսում էինք կծկել բաց թողնված թելը մինչև իջեցնելը:

Ժամանակի ազգային-ազատագրական դեպքերի ազդեցության տակ մանկական մեր հոգում իր արտահայտությունն էր գտնում նետ ու աղեղի, հրացանի պատրաստումը: Աղեղի պատրաստումը մեծ վարպետություն չէր պահանջում, այլ կարևորը

3 Մեղու, իշամեղու:

նետի պատրաստումն էր: Պետք էր գլխիկի և ձողիկի միջև պահպանել հավասարակշռություն: Պատրաստված նետը վերամշակում էինք այնքան, մինչև որ համապատասխան լիներ աղեղի տեխնիկական պահանջներին, այսինքն՝ սահուն, հեռու կամ բարձր թռիչքի ունակության մակարդակին հասներ: Աղեղի պատրաստման համար կտրում էի ծառի թարմ ճյուղ՝ մոտ 2 սմ հաստությամբ և 60-70 սմ երկարությամբ: Երկու վերջավորության վրա դանակով առվակներ էի փորում թելի ծայրը տվյալ տեղում կապելու համար, իսկ ծռելու համար օգտագործում էինք ուղղակի ֆիզիկական ուժ, կամ, եթե շատ ամուր էր լինում, մտցնում էի ծառի հաստ ճյուղերի արանքը և ձգելով ստանում էի պահանջված կորություն և վերջավորությունների վրա կապում էի բամբակյա մեղրամոմված թել:

Հրացան պատրաստելը պահանջում էր ֆիզիկական լարված աշխատանք: Նախ պետք էր 5-6 սմ հաստության և լայնության տախտակից պատրաստել 50-60 սմ երկարության հրացանի փայտյա կմախքը, նաև վերևի կողմից հիմնական կմախքի վրա դրվելիք փայտյա մասը (որի միջոցով պետք է բացվի խողովակի վերին մասի կեսը)՝ 30-40 սմ երկարությամբ, 5-6 սմ լայնությամբ և 3-4 սմ հաստությամբ: Հրացանի արտաքին ձևավորման համար վերցրել եմ ճիշտ հրացանի ձևը: Հիմնական կմախքի վերջավորության վրա բացում էի համապատասխան անցք աղեղի տեղադրման համար: Կմախքի վերջնամասի և նրա վրա դրվելիք ամբողջ փայտամասի վրա մոտ 25-30 սմ երկարությամբ փորում էի առվակ այն լայնքի և խորությամբ, որ երբ երկու մասերը միացնում էի միմյանց, ստացվում էր խողովակ, որի միջոցով պետք է դուրս մղվեր դրա անցքի համապատասխան 30-35 մմ երկարություն և 16-18 մմ հաստություն ունեցող փայտյա կոնաձև փամփուշտը: «Հրացանին կրակելու» ունակություն տալու համար խողովակի առաջամասի իր համապատասխան տեղում մեխով կողքից տեղադրում էի ձգան՝ իր ատամնավոր փոսիկով՝ աղեղի լարը ձգված նրա վրա հագցնելու և մարտական վիճակում պահելու համար: Մարտական խողովակի առաջամասում 3-4 մմ բարձրությամբ և 5-6 սմ երկարությամբ ճեղք էի թողնում՝ աղեղալարն այդ ճեղքի մեջ տեղադրելու, ձգելու և մարտական դրության մեջ ձգանին միացնելու, որը, կրակելու ժամանակ ուժգին հարվածելով փամփուշտին, ապահովում էր դրա խողովակից դուրս մղմանը մինչև 80-100 քայլ հեռավորության վրա: Հրացանը կրակելու համար խողովակի առաջամասում վերևի կողմից փամփուշտի տեղադրման համար թողնում էի համապատասխան անցք, որի միջոցով փամփուշտը տեղադրում էի խողովակի դիմաց բաց ձգված լարի առաջ: Երբ նշանառության ուղղությունը ճշտվում էր, ձգանը ձգելով՝ թելը, ուժեղ հարվածելով փամփուշտին, արագ և ուժեղ դուրս է մղվում խողովակից դեպի նշանակետը:

Շաբաթ և կիրակի օրերին դպրոցական պարապմունքներ չէին լինում, ազատ էինք, երբեմն այդ օրերին մի քանի ընկերներով փախչում, գնում էինք Մղգա կոչված քաղաքամաս, որտեղ ծառերի բներից, կամուրջների տակերի բներից ծառերի փոքրիկ ճտեր էինք բերում, պահում, սկզբնական շրջանում սովորական շատ հասարակ կավից պատրաստած փոքրիկ բնում, որոնք, չդիմանալով տվյալ պայմաններին, աստկում էին: Իմ մեջ միտք ծագեց նախօրոք պատրաստել նրանց համար բազմա-հարկ բնակարան: Ես և իմ ընկերը՝ կաճեցոցի Մուրադը, կառուցեցինք 5 հարկանի շենք՝ իր բազմազան սենյակներով, ապակյա լուսամուտներով, այնպես որ դրսից կարող էինք դիտել յուրաքանչյուր սենյակում տեղավորված ծառերին: Նրանց կերակրելու և ջրով ապահովելու համար պատրաստել էինք հողե ամաններ, իսկ թառելու համար՝ ճաղավանդակներ: Կերակրման համար, բացի կուտից, հացի փշրանքներից և կերակրի մնացորդներից, հոսող առուների եզերքից, ցեխերի միջից փնտրում և հավաքում էինք ճիճուներ և կտրտած վիճակով մատուցում դրանց: Մեր փոքրիկ «գազանանոցով» շատ էր հետաքրքրվում նաև մեր որբանոցի կառավարչի տասնութամյա աղջիկը՝ Ֆրիդան, որը շատ էր մտերմացել մեզ հետ:

Ինձանից 3-4 տարի մեծ որբերից մեկը, որին «շուն խաղցնող» Արմենակ էինք կանչում (նա մի փոքր տուն էր շինել և շան փոքրիկ լակոտներ էր հավաքում-պահում և շատ անգամ հետևից գցած զբոսանքի էր դուրս գալիս բակ և զվարճացնում երեխաներին), շատ էր սիրում ինձ հետ կոպիտ կատակներ անել: Մոտենում էր ինձ, շանչերը պարզելով և կատվի անճռռնի մլավոցով՝ մառ՛ւ, փֆ՛..., անելով, արագ-արագ մի քանի անգամ բամփում էր գլխիս, ես էլ իմ հերթին ոտքով մի քանի հարված էի հասցնում նրա չոքերին ու փախչում: Տեսնելով, որ այդ սովորությունը դարձել է մշտական, մտածեցի նրա գլխին մի օյին խաղալ, որ ձեռք քաշի այդ կոպիտ կատակներից: Մենք՝ բոլոր որբերս, գլխներիս կրում էինք քեչայից ֆեսի ձևի գլխարկներ, որը մեզ տրվում էր ամեն Նոր տարվա տոնական հանդեսին մի շաբաթ այլ նվերների հետ միասին: Որոշեցի երկու ասեղ խրել գլխակի պատերի մեջ, այնպես, որ սուր ծայրերը մոտ մեկ սմ բարձրությամբ դուրս մնան գլխարկից: Արմենակն ինձ տեսնելուն պես կատվի մլավոցով մոտեցավ: Ես նրան ասացի.

–Խելոք կա՛ց, ինձնից դու շատ վնաս կստանաս:

Նա բանի տեղ չդրեց և ըստ իր սովորության՝ սկսեց արագ-արագ բամփել գլխիս, ու զգաց շատ սուր ցավ, իսկ ձեռքի ափերից էլ արյուն էր թափում: Տեսնելով, թե ինչ խաղ եմ խաղացել գլխին, ջղայնացավ և հարձակվեց ինձ վրա, սակայն ես փախա: Նա ընկավ իմ հետևից: Երբ հասա զուգարանին, բարձրացա դրա կտուրը, նա ևս մեծ դժվարությամբ բարձրացավ, իսկ ես, բռնելով ընկուզենու ծառի

ճյուղերից, որոնք կռացած էին գուգարանի կտուրի վրա, բարձրացա այդ ծառը: Շուն խաղցնող Արմենակին, որը մեծ ջանքեր էր գործադրում, հաջողվեց ծառը բարձրանալ: Ես մագլցել էի ավելի բարձր տեղ, նա ևս ջանք էր գործադրում հասնել ինձ: Տեսնելով, որ նա համառում է և փորձում է գտնել հարմար ճյուղ՝ վեր բարձրանալու համար, ես վերևի ճյուղից կապիկի մման թռա նրա ուսերին և նրան վայր գցեցի ծառից, իսկ ես բռնել էի և կախվել վերևի ճյուղից: Հաշվի առնելով, որ նա շատ չարացած կլինի ինձ վրա ու ծեծի կենթարկի, մնացի այգում, ընթրիքի չգնացի, մինչև տրվեց քնելու զանգը: Առավոտյան սերտեղության պարապմունքից հետո ինձ բռնացրեց միջանցքում. «Տղա՛ Դեզ, էս ի՞նչ օ՜յին բերիր իմ գլխին, բա որ մեռնեի, լավ էր, որ այգին նոր էր փորած, հողը փափուկ էր, թե չէ կաստկեի, թե ձեռքս ընկնեիր, լավ սխկոց կուտեիր, տե՛ս, թե ինչ ես արել»՝ ցույց տալով ձեռքի ափը, որ 4-5 տեղ ճղճղված էր: Գանգատվեց նաև կողքի ցավից: «Լսի՛ր, Դեզ՛, ես քեզ չեմ ծեծի, գիտես ինչո՞ւ, երեկվա էտ քո արած սատանայությունները և ինձ ծառից ցած գցելու համարձակությունը շատ է զարմացրել: Մինչև հիմա մտածում եմ, թե ո՞վ կարող է քեզ պես մման սատանայական օյին խաղա ուրիշի գլխին: Դրա համար խալալ լինի քեզ քո մորից կերած կաթը»:

Ինձ մինչև օրս էլ դեռ հայտնի չէ, թե ինչպես այս դեպքի մասին տեղյակ էին դարձրել պ. Հեր Սփերիին (Արմենակը չէր բողոքել): Ինձ կանչեցին ներկայանալու որբանոցի կառավարչին: Ներկայացա: Նա ինձ մեղադրեց Արմենակի նկատմամբ իմ կատարած հանցանքի մեջ՝ ասելով.

–Եթե նա մեռնեք, դու և մենք աստծուն ի՞նչ պատասխան պետք է տայինք:

Առաջարկեց ինձ իջեցնել շավարս: Հանցեցի, նա սկսեց ճիպտասհարել հետույքիս փափուկ մասերին: Հետո ինձ մեկ օրով բանտարկեց իրենց խոհանոցի կողքի մի փոքրիկ մութ սենյակում՝ գրկելով սննդից: Մակայն կառավարչի 18-ամյա աղջիկը՝ Ֆրիդան, գաղտնի ինձ կերակրում էր խմորեղենով: Նրա հոգատարությունը իմ նկատմամբ հետևանք էր այն մտերմության, որը ստեղծվել էր նրա՝ իմ կառուցած թռչնանոց հաճախելիս:

Ննջարանը, որտեղ քնում էինք, բավական մեծ սենյակ էր, և ամեն ննջարան ուներ նշանակված հսկիչ, որ նմանապես քնում էր տվյալ ննջարանում, մեր ննջարանի հսկիչը Նազե մայրիկն էր:

Մահճակալներ գոյություն չուներին: Անկողիններն ամեն երեկոյան փռում էինք հատակին և առավոտյան հավաքում, դարսում ննջարանում իրենց տեղում հերթականությամբ, այնպես որ չէր կարող պատահել, որ խախտվեր յուրաքանչյուր երեխայի քնելու համար հատկացված տեղը:

Անկողին մտնելով՝ ես չէի կարող առանց արկածի քնել: Մեկի ոտքի տակ խուտուտ էի տալիս,

ականջը կամ մագերը քաշում, փետուրով քիթը, ականջ խառնում կամ քնածների ոտքերը կոխկռտելով՝ վագում էի ննջարանի մեկ ծայրից մյուսը: Այս կապակցությամբ, երբ սկսվում էր աղմուկ, գոռոռոց, ննջարանի հսկիչ Նազե մայրիկը, համոզված լինելով, որ այդ իմ արածն է, տեղից բղավում էր.

–Դէ հուշ կացեք,– հետո խոսքն ուղղում էր ինձ. – Դեզ՛, Դեզ՛, որ էլա, ջուխդ ոտնով կթռնես քո փորուղ, շուտ մռոխի:

Շատախցի էր, այդ բարբառով էր խոսում:

Մենք ունեինք լվացք կամ կարկատան անող 4-5 կանայք: Նրանցից մեկն ակնոց էր կրում, բայց հատուկ կայուն ռեժիմով. ակնոցն առավոտյան տեղադրում էր քթի ծայրին, ճաշին՝ քթի մեջտեղը, իսկ երեկոյան՝ վերին մասում:

Մի անգամ էլ պատահմամբ ինձ կանչեցին, թե արի, քեզ բան պիտի ասենք:

Նրանցից մեկն ասաց.

–Դեզ՛, առ էսա փարչ, տար զար ախպրի վրա, արի (այսինքն՝ ջուր լցրու, բեր):

Ասի.

–Աչքի՛ս վրա:

Փարչն առա, վագեցի ներքև՝ դեպի աղբյուր, որը բակում էր: Հասնելով աղբյուրին՝ սափորը ուժով խփեցի աղբյուրի կողքին: Ջարդ ու փշուր անելուց հետո գնացի, ներկայացա նրանց դատարկ ձեռքով, ասացի.

–Ինչպես ասիք, այնպես էլ արի:

–Վայ, քյո ումուտ խորենք, Դեզ, դո՞ւզ ես ասում:

–Խոն՝ ձեր խոսքերից դուրս չեմ եկել, ինչխ ասել էք, այնպես էլ արել եմ:

Նրանցից երկուսը գնացին դեպի աղբյուրը, երբ տեսան սափորի կտորտանքները, ձեռքերը չոքերին խփելով՝ սկսեցին ինձ հայհոյել, անիծել և միաժամանակ ծիծաղում էին՝ ասելով.

–Էս ինչ օյինբազ լաճ է, ինչխ էլ սագական անուն եմ կնքել՝ Դեզ, Դեզ, քո սիրտ-սակատ խորինք, էդ ինչ օյին խաղացիր մեր գլխին:

Այս դեպքը դարձավ որբանոցի մարդկանց ծիծաղի առարկան, իսկ երբ առիթ էր լինում, հանդիպում էի այդ մայրապետերին, նրանք ինձ ասում էին.

–Տղա՛ Դեզ, դու ծուռ ես:

Ես էլ ասում էի.

–Դուք եք ինձ ծուռցրել, ինչ ասել էք, էն էլ արել եմ, հիմա ո՞վ է ծուռը:

–Քո սիրտ, սակատ խորինք, մենք տնագ արինք, բա դու չխասկցար, որ փարչ տվինք քեզ, որ էրթաս ջուր բերես, ընչի մենք ծուռ էի՞նք, որ փարչ տանք քեզ, որ դու տանես ջարդես, վոլա դու ծուռ ես:

Տերտեր Ատոմը

Որբանոցն ուներ փաթաթեզի (կարտոֆիլի) մեծ հոր, որն աշնանը լցվում էր, իսկ մինչև ամառ դա-

տարկվում: Հիշողության մեջ մեծապես տպավորված է որբերից մահ Ատոմը, որն ինձանից 2-3 տարով մեծ էր: Ամռան ամիսներին, երբ դատարկվում էր փաթաթեզի հորը, Ատոմը շատ եռանդուն գործի էր անցնում այն վերածելու եկեղեցու: Դրա համար մայրապետներից ձեռք էր բերում հնամաշ գգեստներ ու պատրաստում տերտերի փիլոն ու վարագույրներ: Պատրաստում էր կավից մոմակալներ, բուրվառ և այլ սպասք, որոնք անհրաժեշտ էին այդ հորին եկեղեցու տեսք տալու համար: Քարոզ էլ էր կարդում Քրիստոսի պատվիրանների շուրջ և հետո պահանջում էր, որ «եկեղեցականները» հերթով խոստովանեն, թե ով ի՞նչ մեղք է կատարել, և, ըստ այդմ էլ, մեծավարի խրատներ էր տալիս խոստովանողին: Երբ մի անգամ հարցն ինձ ուղղեց, ես խոստովանեցի, որ մի քանի օր առաջ մեր որբանոցի այգուց տանձ եմ գողացել: Նա ինձ ասաց.

– Լուրջ մեղք ես գործել, իսկ եթե ինձ հետ միասին վայելեիր, թողություն կտայի, և հանդերձալ աշխարհում աստվածը քեզ կգովաբաներ՝ որպես պատվիրանները հետևողականությամբ կատարողի, քո ունեցածից չունեցողներին բաժին հանելու Քրիստոսի տված խրատին համապատասխան: Դժոխք կզնաս, եթե նորից շարունակես մենակ խժռել գողացած այդպիսի համեղ տանձերը:

Այսպիսով, Ատոմի այդ եկեղեցին էլ իր հերթին էր մեզ համար դարձել մի տեսակ զվարճալի զբաղմունքներից մեկը:

«Ոսկեբակ» ամառանոցում

Որբանոցի կառավարչությունը դպրոցական ամառային արձակուրդին երեխաներին տարավ «Ոսկեբակ» կոչվող ամառանոց, որը գտնվում էր Վան քաղաքից 15-20 կմ հեռավորության վրա՝ մի լեռնային գեղեցիկ վայրում: Բոլոր կողմերով շրջապատված էր պտղատու այգիներով, հարուստ էր սառնորակ, վճիտ աղբյուրներով, և այդ բոլորին էլ գունարենք ջրառատ գետը, որը մի տեղամասում ասիական բարձրությունից թափվում էր ներքև՝ գոյացնելով գեղատեսիլ ջրվեժ:

Օրվա մեր ազատ ժամերն անց էինք կացնում այգիներում կամ լողում էինք գետում՝ ջրվեժին շատ մոտիկ: Սակայն ինձ չէր բավարարում միայն գետում լողալու բավականությունը, և ես որոշեցի ջրվեժի հոսանքի հետ թափով նետվել ներքև: Ես չէի գիտակցում, թե այդ փափուկ, թափանցիկ, մաքուր ջուրը կարող է ջարդ ու փշուր անել իմ մարմինը: Երբ ջրվեժի հետ թափով ներքև սահեցի, զգացի, որ իմ ամբողջ մարմինն ցավում է այնպես, ինչպես փայտով ջարդ կերածի հետ է պատահում: Հետո երկար պառկեցի արևի տակ, տրորեցի մարմինս, զգալի չափով մեղմացան ցավերս: Հաջորդ օրը հիվանդացա: Ողնաշարս փայտացել էր, ո՛չ կարող էի նստել, ո՛չ էլ աջ կամ ձախ շուռ գալ անկողնում: Իմ աչքին երևում էին զանազան զարհուրելի տեսա-

րաններ՝ զազաններ, հսկայական վիշապ-օձեր՝ լեզուները դուրս գցած, զարհուրելի տեսքով:

Երեք երկար ու ձիգ ամիսներ ես գամվեցի անկողնում՝ գերմանական բժիշկների և բույրերի ջերմ հոգածությամբ շրջապատված: Հրավիրեցին մահ ամերիկյան որբանոցի՝ շատ բարձր հեղինակություն վայելող բժիշկ Աշերին: Թե ինչ հանձնարարական տվեց, ինձ անհայտ է, սակայն սկսեցին իմ մարմնիս քսել վազելիսն մանավոր մի տեսակ դեղ ու փաթաթում էին բուժագիտի մասն փափուկ խավից կտորով և խմցնում էին զանազան դեղեր: Հիվանդության հաջորդ ամիսն ինձ մոտ հայտնվեց քութեշ կոչվող հիվանդություն: Կոկորդս այնպես էր լցված, որ դժվարանում էի որևէ բան ուտել: Քույրերը բերանս բացում ու գրալով կաթ կամ մսաջուր էին լցնում կոկորդս: Նիհարել, չոփ էի դարձել: Բժիշկները և որբանոցի կառավարչությունը որոշեցին ինձ հանձնել «Աստծո խնամքին», որի համար մի օր առավոտյան՝ հերթական աղոթքի ժամանակ, Հեր Սփերին որբանոցի երեխաներին և ծառայողներին հայտնում է իմ հիվանդության լըռության ու ապաքինման անհուսալիության մասին ու առաջարկում է բոլորին «աղոթել Աստծուն և խնդրել առողջություն մեր սիրելի Գեղամին»: Բժշկուհի Գեթեն, որն ապրում էր աղջիկների որբանոցում, երբ եկավ ինձ հերթական այցելության, շոյելով իմ գլուխը՝ ասաց.

– Ես որոշել եմ քեզ տեղափոխել իմ սենյակ, որպեսզի հնարավորություն ունենամ գիշեր ու ցերեկ հետևելու քեզ ու ժամանակին կատարելու պահանջված բուժամիջոցները:

Պետք է ասեմ, որ այդ քանի օրը ինձ վրա հայտնվեց մահ կարմրուկ հիվանդությունը՝ ավելի քան բարդացնելով իմ վիճակը: Գեթեն հաջորդ օրը կատարեց իր խոստումը: Ինձ պատգարակով տեղափոխեցին աղջիկների որբանոց՝ նրա բնակարանը, որը բաղկացած էր երկու սենյակից և փոքրիկ միջանցքից: Գիշեր-ցերեկ հերթապահում էին ինքը և բույրերը: Նրանց շնորհիվ առողջացա:

Հեռուց անունով մի գերմանացուց հիշողությանս մեջ մնացել է մի դաժան դրվագ: Որբանոցի պահեստապետը կանչում է որբերից մեկին՝ Վարդ Մուրադյանին, և ասում է.

– Էտ գող կատվին եթե սպանես, քեզ չարազ կտամ:

Վարդը բռնում է և վզի կեսը կտրած կատվի ճվճվոցից վախեցած՝ բաց է թողնում: Կատուն փախչում, բարձրանում է ծառ, շարունակում իր սոսկալի մլավոցը: Հեռուց վայրագորեն ծեծում է Վարդին, որը մի քանի ժամ մնում է ուշագնաց վիճակում և բժիշկների ջանքերով մի կերպ փրկվում է մահից: Որբանոցի մեծահասակ տղաների բողոքների հիման վրա նրան ուղարկում են Գերմանիա:

Մեծահասակ որբերից մեկը, որն ինձանից մեծ էր 4-5 տարով, որին, չգիտեմ ինչու, կոչում էին Մեսրոպ Թաշտիկ, ցորենի ծղոտից ամառային



ՈՍԿԵՐԱԿ. մինչև 1915 թ. զուտ հայաբնակ, ներկայումս Բաշչաբակ վերանվանված քրդաբնակ գյուղի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2004 թ.)

գլխարկներ էր գործում: Ծղոտները դասավորում էր հոսող առվի մեջ: Վրան քար դնելով՝ թողնում էր, որ փափկեն, ինքն էլ նստում էր առվի եզրին՝ ջրում քրջոց դրած ծղոտից մոտավորապես 10-15 քայլ հեռու: Մի օր սկսեցի ծղոտի այդ փոքրիկ խրճից մեկ-մեկ դուրս քաշել ծղոտները և գցել հոսող ջրի մեջ, այնպես, որ ջրի հոսքով ծղոտներն անցնում էին նրա առջևով: Տեսնելով, որ ջրի հոսքն անընդհատ ծղոտ է բերում, կասկածեց և ուզեց ստուգել իր՝ քրջոց դրած ծղոտների վիճակը: Երբ նա մոտենում էր այդ տեղին, ես քարի տակից դուրս եկա և փախա: Նա էլ ընկավ իմ հետևից: Վազեցի դեպի 150-200 մետր հեռավորության վրա գտնվող լեռը, որի լանջերը լիքն էին խոշոր ժայռաբեկորներով: Հետապնդելով ինձ՝ մի ժայռաբեկորից սայթաքեց և ոտքի ցավից այլևս չկարողացավ հետապնդել ինձ: Ես հանգիստ հեռացա: Պարզվեց, որ սայթաքելիս ծունկը խփել է քարին, որից առաջացել էր մի փոքր ուռուցք: Դրանից հետո Մեսրոպ Թաշտիկի հետ ավելի մտերմացանք, նա խոստացավ՝ մի գլխարկ էլ ինձ համար գործի, բայց ես հրաժարվեցի՝ ասելով, որ «Էդ վարժապետի գլխարկով ես չեմ ծածկի»:

Եկեղեցում

Գերմանացիները, լինելով բողոքական, մեզ՝ որբերիս, մեր եկեղեցին չէին տանում, սակայն մեծահասակ որբերի բողոքների հիման վրա զգացին իրենց սխալը և սկսեցին ամեն կիրակի մեզ տանել մեր հայկական լուսավորչական եկեղեցին: Երբ առաջին անգամ հաճախեցինք եկեղեցի, տիրացուն ասաց.

–Ձեզանից ո՞վ կուզի շապիկ հագնի, մոմ բռնի տերտերի շարական կարդալու ժամանակ:

Անմիջապես առաջ անցա, ասացի.

–Ես:

Ինձ և մի այլ տղայի տարավ խորանի հետև: Հազարին եկեղեցական սպիտակ շապիկ, ու տիրացուն բացատրեց մեր պարտականությունները: Մեկս աջ, մյուսս ձախ կողմից մոմեր բռնած՝ պետք է հետևեինք տիրացուին, որպեսզի, երբ նա սկսեր Սուրբ գրքի ընթերցումը, մենք երկար ձողափայտերի վրա ամրացված վառած մոմերով աջից ու ձախից լուսավորեինք նրան՝ ապահովելով պահանջված լուսավորություն կարդալու համար:

Երբ տերտերի հետ խորանի հետևից մենք դուրս եկանք առաջին մասը, ու տերտերը սկսեց իր ընթերցումը, մենք՝ երկու մոմ բռնող տղաներս, ընդունել էինք ճիշտ դիրքավորում և ճիշտ կերպով կատարում էինք մեր պարտականությունը՝ լուսավորելով նրան ընթերցման ժամանակ: Ես տեսա, որ տղաներն ինձ վրա ծիծաղում են, իրար ականջին փսփսում այդ նախանձելի պարտականությունն ինձ բաժին ընկնելու համար: Մինչ ես տարված էի իմ ընկերներով, մոմն աստիճանաբար թեքվել էր դեպի տերտերի միրուքը: Հանկարծ տերտերը ոտքս այնպես տորրեց, որ ես վեր թռա, բայց այդ տեսարանին ականատես ժողովուրդը և մեր որբանոցի տղաները խեղդվում էին ծիծաղից: Տերտերը շարականի ընթերցումը կարճ կապեց, և վարազույրը քաշեցին: Տերտերը ջղայնացած սկսեց թև և վիզս ամուր սեղմել՝ լուրջ ցավ պատճառելով ինձ և մի շարք կծու խոսքեր տեղալ իմ գլխին. «Փուչ կենդա-

նի, տխմար, անառակ, շան վաստակ և այլն»: Ես մի կերպ թև ազատեցի տերտերի ձեռքից, փախա խորանի հետևի մասը, շապիկը հանեցի, գցեցի և փախա: Դրանից հետո էլ մեզ՝ որբերիս, չվստահեցին շապիկ հագնելը:

Նազե մայրիկը լսելով զարմացել էր, որ ինձ շապիկ են հագցրել. «Ապա Դղեզից ի՞նչ կսպասես, որտեղ լինի, մի օյին կխանի: Հողեն մրանց էլ գլուխը, որ էտ սատանին պիրեր են, շապիկ են խագցուցել: Տեղմե խո եղան խայտառակ»:

Նոր տարվա տոնաձառը

Որբանոցի երեխաների համար ամեն տարի դեկտեմբերի 31-ի գիշերը կազմակերպում էին տոնաձառ: Տարվա մեր ամենաերջանիկ օրն էր:

Գերմանական որբանոցները պահվում էին Գերմանիայի բարեգործական ընկերության միջոցներով: Որբանոց ընդունվող յուրաքանչյուր երեխա անպայման պետք է ունենար իր խնամակալը, որն ամեն տարվա համար այդ ընկերությանը պետք է մուծեր իր որդեգրած երեխայի ապրելու և ուսման համար սահմանված գումարը: Դրա համար մանկատուն ընդունվող յուրաքանչյուր երեխային լուսանկարում և կենսագրական տվյալների հետ ուղարկում էին Գերմանիա՝ բարեգործական ընկերությանը: Խնամակալ գտնվելուց հետո այդ բարերարն ուղարկում էր իր խնամքին վերցրած տղային նամակ ու իր լուսանկարը: Սկսվում էր նամակագրական կապեր կողմերի միջև: Հատկապես ամեն Նոր տարվա նախօրյակին միմյանց հղում էին շնորհակալորական նամակներ, իսկ բարերարները նաև ուղարկում էին զանազան նվերներ: Իմ բարերարն այրի կին էր, որն ամեն Նոր տարուն ուղարկում էր շնորհակալական նամակ ու որևէ նվեր: Ես ստացել եմ մեծ ալբոմ՝ շատ հարուստ գեղարվեստական նկարներով, գուլպա, կիսագուլպա, բրդյա ֆայկա: Բացի դրանից՝ նաև որբանոցի կառավարչությունը ամեն Նոր տարուն մեզ նվիրում էր քեչաչից ֆեսի ձևի գլխարկ և թաշկինակ, որի մեջ լցված էր լինում զանազան տեսակի չիր-մրգեր (չամիչ, ընկույզ, կաղին, թուզ, խուրմա, նոխուտ շաքար և այլն): Մրգերով լցված ծայրերը միմյանց կապած այդ թաշկինակը դնում էին մեզ տրվելիք նոր գլխարկի մեջ մեր համարի հետ միասին (ամեն երեխա ուներ իր համարը, ես 161-րդն էի, իսկ մեր որբանոցում կար մոտավորապես 200 երեխա):

Ընդհանրապես շատ ճոխ էին տոնում Նոր տարին: Բերում էին եղևնու մեծ ծառ, որն ամրացնում էին մեծ ծավալի պատվանդանի մեջտեղում: Այն ունենում էր մոտավորապես մեկ մետր բարձրություն: Ծառը զարդարում էին մոմերով, գույնզգույն ապակյա խաղալիքներով, գունավոր թղթե շղթաներով, իսկ պատվանդանի վրա հաստ շերտով բամբակ փռում էին: Ծառի կողքին կանգնեցնում էին Ձմեռ պապին՝ գավազանը ձեռքին և պայուսակը ուսին:

Ծառի շրջապատում էլ դասավորում էին Նոր տարվա նվերները (բարերարներից, որբանոցի կառավարչությունից և որբերի ու ծառայողների՝ միմյանց հասցեագրված նվերները): Նոր տարին սկսվում էր կառավարիչ Հեր Սփերիի աղոթքով, որից հետո հանդես էին գալիս երգեցիկ խմբերը, անհատ երգողները և արտասանողները: Մի անգամ ես արտասանել եմ գերմաներեն՝ «Մկնիկ, որտե՞ղ է իմ բնակարանը» ոտանավորը:

Գեղարվեստական մասն ավարտելուց հետո սկսվում էր նվիրատվությունների բաշխման արարողությունը, որին մենք՝ բոլորս, սրտատրոփ սպասում էինք: Դեկավարներից մեկը կարդում էր համարը, և մենք ներկայանում և ստանում էինք նվերները: Մի անգամ Նազե մայրիկի տղային՝ տնտեսավար Հովակիմին, հանձնեցին բավական մեծ ու ծանր նվեր՝ գունավոր թղթի մեջ խնամքով փաթեթավորված և ոսկեգույն թելով կապված: Հովակիմը շատ էր ուրախացել և շտապեց բացել: Ո՛վ զարմանք, փթիռի մի մեծ կտոր էր: Անհայտ մնաց նվիրողը, կապոցի վրա տպագրական տառերով գրված էր Հովակիմի անունը: Տոնական հանդեսից հետո երեխաների մեծամասնությունը չէր քնում: Հագուստով կամ առանց հագուստի պառկում էինք անկողիններում, մկան պես կռքկռքացնում նվեր ստացած մրգերը: Չէինք քնում. նախ մեր կարոտն էինք հագեցնում տրված մրգերից, և երկրորդ, տղաների և աղջիկների որբանոցների միջև կար ընդունված հաճելի սովորություն. Նոր տարվա կեսգիշերին տղաների ու աղջիկների երգեցիկ խմբերը փոխադարձ համերգ էին տալիս դրսում՝ ննջարանի առաջ: Որպես սովորություն՝ երաժշտությունն ավարտելուց հետո որբանոցի կառավարչի կինն ու աղջիկը երրորդ հարկի իրենց ննջարանի լուսամուտից նկարներ էին շաղ տալիս ներքև երգեցիկ խմբի համար՝ որպես նվեր: Իսկ մենք՝ տղաներս, սրտատրոփ սպասում էինք մեզ համար բերկրալի այդ ժամին: Ննջարաններից որը տկյոր, որը հագնված դուրս էինք փախչում և շաղ տված նկարներից հավաքում: Դրանից հետո նոր միայն մտահոգվում էինք, որ արդեն քնելու ժամն է, այնինչ լուսանալուն մնում էր 2-3 ժամ:

Խմբերգի գիշերային այդ երաժշտությունն ուներ հաճելի մեղեդի ու խորհրդավոր միտք.

«Լո՛ւս գիշեր, սո՛ւրբ գիշեր,
Քնով և խաղաղ աստղ
Փայլում էր Բեթխեհեմումը,
Ուր որ փրկիչը ծնավ» և այլն:



ԽԱՌԱԿՈՆԻՍ. մինչև 1915 թ. զուտ հայաբնակ, ներկայումս Կարապունդյուզ վերանվանված քրդաբնակ գյուղին կից պահպանված Հին Խառակոնիսի մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

Խառակոնիսը Մեծ եղեռնի օրերին

Իմ ծննդավայր Խառակոնիս գյուղը գտնվում է Վանից մոտավորապես 55-60 կմ հեռավորության վրա՝ Արճակ լճի ափին: Գյուղի կենտրոնում կար բավական բարձր երկարավուն բլուր, որի վրա էլ կառուցված էին եկեղեցին և դպրոցը, իսկ մնացած տարածությունը վերածված էր գերեզմանի, որտեղ թաղված է նաև մեծ բանաստեղծ Նահապետ Բու-

չակը: Բլրի շրջապատը բոլոր կողմերից կազմում էր գյուղի բնակելի տարածությունն այնպես, որ դպրոց, եկեղեցի կամ գերեզմանոց հաճախելու խնդրում գյուղացիները գտնվում էին համահավասար վիճակում:

Վանի նահանգի հայկական գյուղերի բնակիչների կոտորածի լուրը տարածվել էր բոլոր շրջաններում: Այդ տեսակետից մեր գյուղի ղեկավարու-

թյունը բոլորի կողմից հարգված, ռազմական գործին տիրապետող Շիրինի⁴ գլխավորությամբ գյուղի երիտասարդությանը զինելու մասին հոգ էր տարել ավելի վաղ ժամանակներից, երբ դեռ չէր ծագել Առաջին աշխարհամարտը, իսկ մնացած պակասը հապճեպորեն լրացրին պատերազմը սկսվելուց հետո (այն սկզբունքով, որ յուրաքանչյուր տնատեր պարտադիր կարգով պետք է գենը ձեռք բերեր իր միջոցներով, իսկ չքավորների մասին հոգում էր դեկավարությունը):

Պատերազմը սկսվելուն պես հորս տանում են բանակ: Մեր տանը մնում են մայրս, 2 եղբայրներս, մեկը՝ 7, իսկ մյուսը՝ 3 տարեկան, քույրս՝ 5 տարեկան, իսկ ինձնից անմիջապես փոքր՝ 10 տարեկան եղբայրս նույն թվին մահացել էր եզան քացու հարվածից: Ես էլ գտնվում էի Վանի գերմանական որբանոցում:

Թուրքական կանոնավոր բանակը հարձակվում է մեր գյուղի վրա: Մեր գյուղի նկարագրած դիրքը նպաստում էր ինքնապաշտպանությունը խելա-

ցիորեն կազմակերպելու գործին: Մերոնք 2-3 օր դիմադրում են, սակայն փամփուշտների սպառման վտանգի առաջ կանգնելու հետևանքով ամբողջ գյուղով մի գիշերվա ընթացքում թուրքերի համար անսպասելի գաղթում են լճի արևմտյան կողմով դեպի Վան: Ճանապարհին հանգստանալու համար ընտրում են Վանից մոտ 15-20 կմ հեռավորության վրա գտնվող Լեսկ գյուղը: Մակայն թուրքերը նորից հարձակվում են գյուղի վրա, թերևս դիմադրության միջոցով սպառնալիքը վերացվում է, սակայն այդ գյուղում քնդանոթի արկի բեկորի հարվածից սպանվում են նոր ամուսնացած իմ ամենաերիտասարդ քեռին և կինը⁵:

Մեր գյուղացիք հիմնովին գաղթեցին Վան՝ բացի շատ ծերացածներից ու հիվանդներից, որոնք չէին ցանկացել հեռանալ՝ գերադասելով մեռնել ոչ թե ճամփեքին, այլ իրենց հարազատ օջախում: Այդ թվում էր քեռուս կինը, որը ևս հրաժարվում է գաղթել: Մորս դրությունը շատ ծանր էր: Մեծ դժվարության առաջ է կանգնում, մանավանդ, որ քույրս հիվանդ էր և ուներ բարձր ջերմություն: Զեռուս կինը համոզում է մորս, որ աղջկան թողնի իր մոտ, ու այդպես էլ անում են: Մայրս, երեք տարեկան եղբորս շալակած, իսկ մյուսի ձեռքը բռնած, բռնում է գաղթի ճանապարհը:

Գաղթականները գերմանական որբանոցում

Մեր գերմանական որբանոցի բակում իրենց ապաստանն էին գտել բավական մեծ թվով գաղթականներ, որոնց թվում էին նաև մայրս ու երկու եղբայրներս: Նրանց հատկացրին փոքր ցախատունը: Փոքր եղբայրս, Լեսկ գյուղում հրանոթի ռմբակոծումից սարսափած, հիվանդացել էր և մեզ մոտ տեղավորվելուց 8-10 օր հետո մահացավ: Նրան թաղեցինք որբանոցի խաղողի այգում: Բակում ապրող գաղթականների մեջ կար մի կին, որը խելագարվել էր ամուսնուն և 2-3 երեխաներին աչքի առաջ մորթելու պատճառով և միշտ երգելով պատվում էր բակում: Երգից միայն մի քանի բառ են հիշում. «Գերմանացու կոնախ (որբանոց) հունտն (զիրկն) խաց են թխել» և այլն: Մի անգամ սկսանալու եղա, երբ նրան քյասայով⁶ մածուն տվեցին, նա մածունը շուռ տվեց գլխին ու ձեռքով շփեց գլուխն ու երեսը՝ իրեն այլանդակելով, բարձր-

4 Շիրինը (Շիրին Եղիազարյան, Հակոբյան) ծնվել է 1876 թ. Խառակոնիսում: Մովորել է գյուղի դպրոցում: 1896 թ. կազմակերպել է Խառակոնիսի ինքնապաշտպանությունը: 1898-1905 թթ. գյուղի գրագիրն էր: 1905 թ.-ից գրադվել է գենքի փոխադրությամբ, և «Թաղեառ Առաքելի ճամբով եկող ապրանքներն ու գործիչները կանցնեին Շիրինի ձեռքով»: 1907 թ. մատնվել է, մեկ տարի անց ձերբակալվել, սակայն շուտով ազատվել է և անցել Կովկաս: 1908 թ. օգոստոսին վերադարձել է և վարել գյուղապետի, շրջանապետի պաշտոնները: 1915 թ. կազմակերպել է ոչ միայն Խառակոնիսի, Արճակի ու շրջակայքի, այլև Վարազ-Շուշանց գծի պաշտպանությունը: Չկարողանալով այլևս դիմադրել թուրքական զորքին՝ ապրիլի 8-ի վաղ առավոտյան գյուղում հավաքված հայերին առաջնորդել է Վան՝ չիմանալով, որ Խառակոնիսում են մնացել հիվանդ կինն ու չորս երեխաները. «...քնամին, տեղեկանալով թե հիանդը եւ երախաները պ. Շիրինին են, անխտիր կտորած էր բոլորն ալ» (Մխիթարեան Օ., Վանի ինքնապաշտպանությունը, «Հայրենիք» ամսագիր, 1924, № 1, էջ 89): Վանի Հայկական ժամանակավոր կառավարության գոյության կարճատև ժամանակաշրջանում եղել է Արճակի գավառապետը: Նահանջից հետո հաստատվելով Հայաստանում՝ կառավարության կողմից նշանակվել է եզդիների կառավարիչ: Մահացել է 1920 թ. հոկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում («Գրօշակ», 1926, № 8-10, էջ 270-271: Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակի առթիւ, 1915-1930, Վենետիկ, 1930, էջ 392-393):

Արամ Մանուկյանը նրա մասին գրել է. «Շիրինը թեև տարրական կրթությամբ, բայց խելօք եւ զարմանալի կազմակերպչական կարողութիւն ունեցող տղայ էր: Բնատրուքեամբ մեղմ էր, մի քիչ ազնուական ձեռով...: Մեծ հեղինակութիւն ուներ Արճակի, Թիմարի եւ Սարայի շրջանի հայ, քիւրտ եւ ասորի ժողովուրդների վրայ: Շիրինը այդ շրջանի ժողովրդական հերոսն էր եւ կառավարութեան աչքի փուշը: Եռանդով կպել էր գործի՝ մոռացած տուն-տեղ: ...Շիրինն նուիրուած էր ազգին ... Ապրիլեան կռիւներին իրենց զինող էր հաւաքել շրջանի երիտասարդներին. հերոսական դիմադրութիւն է ցույց տուել Սարայի գայմագամին եւ թղանօթներին. իր սեփական տունը, ընտանիքի անդամները ձգած, հիւանդ կնօջ եւ երեխային մոռացած...: Նահանջի ժամանակ ամենակարեւոր եւ ապահով կերպով նա իր շրջանի ժողովրդին եւ եզիտի քրտերին բերեց Կովկաս» (Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 302-303):

5 Խառակոնիսցիներն ինքնապաշտպանության են դիմում 1915 թ. ապրիլի 6-7-ը, իսկ 8-ի լուսադեմին Շիրինի գլխավորությամբ հեռանում են դեպի Վան (այդ մասին մանրամասն տես Մխիթարեան Օսնիկ, Վանի ինքնապաշտպանությունը, «Հայրենիք», Պոսթրն 1924, № 1 (25), էջ 87-90: Մարտիրոս քահանայ, Մահակ քահանայ (Խառակոնիս գիւղացի), Արճակի շրջանի կռիւները, «Աշխատանք», 1916, № 46, էջ 2-3: Ա.Ռ. Մեծ դեպքերը Վասպուրականում, Երեւան, 1917, էջ 192-194: Մերին, Արճակ, «Հայ ազգագրություն և բանասիրություն», հ. 8, Երևան, 1978, էջ 20-21: Չարդան Ն., Երկրորդ կյանք, Եժ, հ. 4, 1985, էջ 177-190):

6 Փոքր ոտքով և լայն բերանով կերակրի աման:

բարձր ծիծաղելով: Մի անգամ էլ նույն բախտին արժանացրեց այլ ափսեով նրան տված ապուրը:

Մի անգամ դպրոցի պատի մոտ գրուցող գաղթական տղամարդկանց խմբից լսեցի մի ճիչ.

–Վա՛յ, խփվեցի:

Երբ շրջապատողները ստուգեցին՝ արձակելով նրա շորերը, հրացանի գնդակը շալվարի միջից ցած ընկավ գետին: Պարզվեց, որ գնդակը եկել է բավական հեռվից, հետևաբար հարվածի թափը կորցրել էր: Գնդակը ծակել էր հագուստը, կապտացրել մարմինը: Նրա բախտը բերեց, կենդանի մնաց:

Գաղթականների կյանքն անտանելի էր, թեև որբանոցի կառավարչությունը օգնում էր կենսամթերքներով և հացով, սակայն բաց երկնքի տակ արևահարությունից, կեղտոտվածությունից կային շատ հիվանդներ:

Հայ-թուրքական կռիվները սկսվելուն պես պահանջ զգացվեց շենքի վրա բարձրացնել գերմանական դրոշմը: Սակայն ոչ ոք հանձն չէր առնում: Տվեցի իմ թեկնածությունը: Տնտեսվար Հովակիմի հետ վերցրինք դրոշմը, բարձրացանք չորսհարկանի շենքի կտուրը, մոտեցանք փայտյա ձողին, որի վրա պետք է տեղադրեինք դրոշակը: Հովակիմը տվեց ինձ պարանի մի ծայրը, կապեցի մեջքիցս, որ իմ ձեռքերն ազատ լինեին փայտե ձողին հասնելու համար, իսկ ինքը պռակեց կտուրին, որովհետև գնդակները վզգալով անցնում էին մեր մոտով: Արագ բարձրացա, պարանի ծայրը անցկացրի դրա համար բացված անցքի մեջ և սողալով իջա ցած, բայց գնդակները շարունակում էին սուրալ շատ մոտիկից: Պարանի ծայրը տվեցի Հովակիմին, որ երկու ծայրերը կապի կտուրի վրա դրա համար ցցված փայտին: Այդ համարձակության համար Հեր Սփերին ինձ զովեց, շնորհակալություն հայտնեց և ինձ հյուրասիրեց խմորեղենով և նոխուտ շաքարով:

Մորս ու եղբորս կարողացա ապահովել անկողինով ու նաև կերակրել որբանոցի խոհանոցի ճաշերով, իսկ Նազե մայրիկի միջոցով՝ հացով:

Կրկին Խառակոնիսում

Հերոսամարտը հաղթանակով ավարտելուց հետո Շիրինը նորից հավաքեց կենդանի մնացած մեր գյուղացիներին և տարավ գյուղ, որ լրիվ թալանված էր, տների դռներն ու լուսամուտներն էլ հանել ու տարել էին:

Մինչ այժմ էլ մեզ անհայտ մնաց քեռուս կնոջ, քրոջս և նաև զինվոր տարված հորս ճակատագիրը: Ինձ համար պարզ չէ, թե Շիրինն իր մարտական ջրկատներով որտեղի՞ց և ի՞նչ ճանապարհով էր ձեռք բերել բավական քանակությամբ տավար, ոչխար և բաժանել գյուղացիներին: Մեզ հասել էր մեկ ոչխար:

Երեխաներով ոչխարները տանում էինք դաշտ արածեցնելու, մենք էլ լողում էինք մեր ջրառատ գետերում:

Մի անգամ ընկերներիցս մեկը գյուղից վազելով եկավ և հայտնեց.

–Գիտեք ի՞նչ, մենք ամբողջ գյուղով վաղը՝ առավոտյան, պետք է քոչնեք և գնանք Ռուսաստան:

Մենք զարմացանք, չհավատացինք, բայց նա երդվում էր, թե արդեն բոլոր տներում հաց են թխում և պատրաստություն տեսնում, բոլորին էլ իմաց են տվել: Ես չհամբերեցի, վազեցի գյուղ, տեսա՝ հաց են թխում: Ավագ քեռուս կնոջ՝ Նազուլի ուշքը գնացել էր, սառը ջուր էին շփում նրա գլխին, այնքան լարված էր աշխատել, որ թոնրի տաքությունն ազդել էր նրա վրա, և այդ օրն էր ընկել: Իմացա, որ առավոտյան շուտ գաղթելու ենք⁷:

Գաղթի ճանապարհին

Մայրս ծանր հիվանդ էր: Առավոտյան պետք է պատրաստվեինք ճանապարհ ընկնելու: Նա հրաժարվեց՝ ասելով, որ քայլել չի կարող, տեղ չի հասնի, ճանապարհին մեռնելու փոխարեն ավելի լավ է մեռնի իր սուրբ օջախում: Ինձ ու եղբորս համբուրեց: Երբ մեր թևը մտած՝ ոտք դրինք դուրս, դուռը փակեց մեզ վրա: Լալով գնացի, քեռի Մարգարին պատմեցի եղելությունը, նա բարկացավ, խփեց, ջարդեց դուռը և ստիպեց, որ հագնվի, նրան պառկեցնելու է սայլի վրա:

Շիրինի կողմից ձեռք բերված ավարից, քեռուս ու նրա հարևանին հասել էր մեկական երինջ, որ երբեք դեռ չէին լծվել: Քեռիս, ջարդված սայլերի մնացորդներն իրար կպցնելով, հավաքել էր մեկ սայլ, որի վրա էլ բարձեցինք մեր ունեցած աղքատիկ իրերը և մորս էլ պառկեցրինք այդ սայլի մեջ: Ծանապարհ ընկանք դեպի Ռուսահայաստան: Ծանապարհորդության 3-րդ օրը մայրս խնդրեց իրեն իջեցնել սայլից: Չնայած քեռուս արգելքներին՝ մայրս պնդեց, որ իջեցնեն, որովհետև ողջ մարմինը ցավում էր: Ստիպված իջեցրին, ես ու եղբայրս, նրա ձեռքը բռնած, շատ դանդաղ քայլում էինք քարավանի հետ: Մոտավորապես մեկ ժամ հետո մեզ ասաց.

–Ես այստեղ կնստեմ, իսկ դուք գնացեք, ես հետո կգամ:

Չնայած մեր առարկությանը՝ նա պնդեց, և մենք ստիպված սկսեցինք կամաց առաջ գնալ գաղթողների շարասյան հետ: Մոտ մեկ ժամ հետո նստեցինք ու սպասեցինք նրան, բայց նա չկար: Ուզեցինք հետ դառնալ՝ նրան գտնելու, բայց ոռու զինվորները թույլ չտվին՝ միշտ բղավելով՝ «Բերյո՛ւտ-բերյո՛ւտ»: Ստիպված շարունակեցինք մեր ճանապարհը՝ առատորեն աղի արցունք թափելով: 3-4 օրից հետո հասանք Իզդիր: Քեռիս մեզ տարավ մի այգու մեջ հանգստացնելու, բայց իմ ականջին հասնում էր քեռուս ընտանիքի անդամների միջև

7 1915 թ. հուլիսին էր:

եղած խոսակցությունները, որտեղ իմ մոր հասցեին խոսելիս «ողորմածիկ Նուբար» էին անվանում և երանելի էին տալիս նրան, որ ազատվեց այս տառապանքներից: Մի քիչ հաց կերանք, ես ու եղբայրս առանձնացանք, մի ծառի տակ արտասվեցինք դառնորեն ու իրար գրկած՝ խորը քնեցինք: Հանկարծ արթնացանք և ի՛նչ ենք տեսնում: Մեռած համարվող մայրս, տեսնելով մեզ, կարոտից կռացել է ու ջերմորեն համբուրում է մեզ: Նրա համբույրներից էլ արթնացել ենք և ուրախությունից, երջանկությունից փաթաթվել ենք մեր մորը, համբուրում և ուրախությունից ու հուզմունքից արտասվում ենք: Նա էլ շարունակում է համբուրել մեզ: Մայրս առողջացել, լավացել էր: Մենք հարցրինք.

–Մեզանից բաժանվելուց հետո մենակ, հիվանդ ինչպե՞ս ես հասել այստեղ:

Նա պատմեց, որ որոշ ժամանակ անց գալիս է մեր տան կողքին կպած հարևան Մանասերյանի ընտանիքը: Նրանց տանը մայրս կատարել է տնային զանազան սև աշխատանքներ: Նրանք, չնայած իրենց տնտեսական ներկա պայմաններին, մի ոչխար են մորթում, փոստը փաթաթում մորս մարմնին ու առողջացնում են նրան:

Հաջորդ օրը հասնում ենք Էջմիածին, և մեր գյուղի ղեկավար Շիրինի նախաձեռնությամբ մեր գյուղացիների զգալի մասը տեղավորվում է Սարդարապատում: Նպաստամատույց գաղթականական կոմիտեն մեզ այրուր և այլ սննդամթերքներ էր մատակարարում, իսկ ես բատրակություն էի անում մեր ապրած տանտիրոջ մոտ: Մի կերպ ապրում էինք:

1917 թվի գարնանը մայրս հիվանդանում ու 3 օր հետո մահանում է:

Գաղթականական կոմիտեի միջնորդությամբ ես և եղբայրս ընդունվում ենք Էջմիածնի պետական մանկատուն: Նույն թվին՝ որբանոցի մի քանի տղաների հետ 3 ամիս վերապատրաստվելուց հետո՝ սեպտեմբերին, հաջող քննություններ հանձնելով, ընդունվում եմ Գևորգյան հոգևոր ճեմարանի երկրորդ դասարան: Հայ-թուրքական կռիվների պատճառով մենք՝ որբերս, նորից վերադառնում ենք որբանոց:

1919 թվին ընդունվում եմ Երևանի թեմական դպրոցի 4-րդ դասարան, իսկ հաջորդ տարին թռչալիս կարգով փոխադրվում 6-րդ դասարան: Դրանով էլ սահմանափակվում է ուսումս:



ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՄՏԱՄԲՈԼՅՅԱՆ
(1858 - 1928)

Համառոտ կենսագրություն

Խորեն (աշխարհիկ անունը՝ Համբարձում) Գրիգորի Ստամբուլյանը ծնվել է 1858 թ. մայիսի 2-ին Ալեքսանդրապոլում:

Հայրը Գրիգոր Օհանի Ստամբուլյանն էր, մայրը՝ Եղիսաբեթ Գաբրիելի Ստամբուլյանը:

Ուներ յոթ եղբայր և մի քույր (երեք եղբայրն ու քույրը մահացել են փոքր հասակում): Ողջ են մնացել Հարություն, Ավետիս, Սկրտիչ և Մարտիրոս եղբայրները:

Խորեն Ստամբուլյանը 1873-1878 թթ. ուսանում է Գևորգյան ճեմարանում, որից հետո մինչև 1883/1884 ուստարին դասավանդում է Կարսի Սբ. Լուսավորչյան դպրոցում:

1883 թ. ամուսնանում է Գայանե Էհրամճյանցի հետ:

1884-1889 թթ. դասավանդում է Վանաձորի (Մեծ Ղարաքիլիսա) դպրոցում:

1907 թ. Անիի վանահայր Միքայել Տեր-Մինասյանի հանձնարարականով տեղ Խորենն Ալեքսանդրապոլում այցելում է Թորոս Թորամանյանին, որն էլ նոյեմբերի 30-ին Ն. Մառին հղված նամակում գրում է. «Կարսեն եկավ երեկ տեղս տ<եր> Խորենը, և ...պատմեց հետևյալ անախորժ դեպքը. «Ամսիս 24-ին հայր սուրբը հրավեր կատանա Անիի պարիսպեն դուրս գտնված 100 տեսեթին վարելահողին աճուրդին մասնակցելու համար: ...հայր սուրբը չի հասներ աճուրդի համար որոշված<ամ> օրին, ամսիս 26-ին, սակայն տ<եր> Խորենը կանխավ իմանալով և խղճալով հայր սուրբի ըրած ծախքերուն վրա, մի կերպ կհաջողացնե աճուրդը վերջացնել հայր սուրբի անունով, տարեկան 150 ռուբլի փոխարեն վեց տարի պայմանաժամով»¹:

1896-1914 թթ. հիշվում է որպես Կարսի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանաներից մեկը²:

1919 թ. Կարսի Առաքելոց եկեղեցու քահանան էր: Մինչև 1921 թ. հունիս մնացել է Կարսում. «...քահանաներից միմիայն տեղ Խորեն Ստամբուլյանն էր մնացել Կարսում, որը զատկական տոներից հետո հեռացավ Կարսից»³: Գնում է Վանաձոր, ապա Գյումրի:

1926 թ. հիշվում է Շիրակի թեմի թեմական խորհրդի նախագահի պաշտոնում⁴: 1927 թ. փետրվարի 20-ին Շիրակի թեմական պատգամավորական ժողովում ընտրվում է թեմական խորհրդի անդամ⁵:

Խ. Ստամբուլյանը վախճանվել է 1928 թ. սեպտեմբերի 9-ին Թբիլիսիում (գնացել էր դատերը՝ Շամունեին տեսության) և ամփոփվել Խոջիվանքի գերեզմանոցում:

Հուշագրության առաջին մասը՝ «Խոստովանություն» խորագրով, ամբողջությամբ, սակայն նոր ուղղագրությամբ արտագրել է բոնուռիին՝ նկարչուհի Հեղինե Աբրահամյանը, իսկ երկրորդ մասը՝ «Կարսի անկումը», հուշագիրը հեղինակել է 1920-1921 թթ.:

¹ Թորամանյան Թ., Նամակներ, Երևան, 1968, էջ 87:

² ՀԱԳ, ֆ. 47, ց. 5, ֆ. 638, ք. 238; գ. 679; 48, գ. 1, գ. 299, ք. 32:

³ Ավետիսյան Մ., Փաստաթուղթ Կարսի հայ բնակչության կոտորածի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, № 1, էջ 105:

⁴ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Երևան, 1997, էջ 315:

⁵ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, էջ 396, 398:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Գևորգյան ճեմարանում սկսեցի հուշատետր պահել, որն էլ «Հիշատակարան» անունով շարունակվեց երկար տարիներ:

1918 թ. Կարսը թուրքերի կողմից գրավելու ժամանակ ամեն բան թողեցի այնտեղ ու հեռացա, և ոչ միայն քառասուն տարվա ընթացքում հավաքածս տան կահ-կարասին, այլև մինչև վերջին չոփը կորցրի՝ 1500-ի չափ գրքերից բաղկացած գեղեցիկ գրադարանս, բոլոր գրվածներս, թարգմանություններս, հին ձեռագրերի միջից և ավերակների վրայից հավաքած բազմաթիվ ծաղկանկարներս, որոնցից զծագրական ու նկարչական տետրակներ էի կազմել դպրոցական Ա, Բ և Գ տարիների համար: Այդ բոլորի հետ միասին երկար տարիների ընթացքում գրած հիշատակություններս և հավաքածս նամակներս կորցրի, որոնց մրմուռը երբեք չպիտի կտրվի սրտիցս:

1919 թ. գարնանը Կարս վերադառնալիս մեծ հույս ունեի, թե կորցրածներիցս շատ բան կգտնեմ, բայց, ավա՜ղ, գրեթե ոչինչ չգտա՝ բացի մի քանի կտոր գրքերից ու թղթերից և քարոզի տետրակներից, այն էլ ցեխի ու ապականության մեջ շաղախված և պատառոտված: Այդպես էր եղել ռուս կապիտան Սերգեևի պատճառով, որը, ինչպես Թիֆլիսում լսեցի և Կարսում էլ ստուգեցի, մնացել էր Կարսում և թուրքերի գալուստ պես մտել էր մեր կեցած բնակարանը (Ղասաբյան եղբարց տներում), սեփականացրել իմ և ուրիշների ունեցածները: Մինչև իսկ չի լսել հույն ընկերոջ խորհուրդը՝ գրքերն ու եկեղեցական իրերը թաղել մի ապահով տեղ: Իր համար անպետք համարվածները աղբանոց էր լցրել, իսկ մնացածներն արկղերով հետը տարել էր Կարսից հեռանալիս:

Նորից սկսեցի գրադարան կազմել և պարսպապայության տխուր ժամերն իզուր չկորցնելու համար «Հիշատակարան»-ի շարունակությունը գրել: Երբեք մտքիցս չէր հեռանում անցյալում գրածներս, մտածում էի նորից հիշել ու գրել: Բայց ո՞վ կտար ինձ այդ հիշողությունը, այդ ուժն ու համբերությունը, որ կարողանայի վաթսուներեքամյա կյանքիս նկարագրիքը նորից հիշել ու կազմել: Մի՞թե այն առավելությունը, բազմակողմանիությունը, նյութերի ու դեպքերի առատությունը և ճշգրտությունը կարող էր ունենալ նոր գրածս, ինչ որ ուներ կորցրածս:

1920 թ. հոկտեմբերի 30-ին թուրքը նորից գրավեց Կարս քաղաքը: Ուր ամսից ավելի մնացի գերության մեջ, պատահարների բոլոր մանրամաս-

նությունները գրեցի «Կարսի անկումը» տետրակիս մեջ: 1921 թ. հունիսի սկզբներին մի կերպ ազատվեցի գերությունից: Ղարաքիլիսայում բնակություն հաստատեցի ու մի տեսակ երկրորդ գերության մեջ ապրում եմ՝ օրավուր սպասելով ցանկալի Կարսի վերադարձին:

Վերջապես մի օր վերցրի գրիչս և սկսեցի վաղուցվա ցանկացածս ի կատար ածել, այն է՝ կորցրածս «Հիշատակարան»-ի փոխարեն գոնե մի ամփոփում գրել: Կարծում եմ, որ ուրիշները չպիտի գրեին այն ամենի մասին, ինչ որ ես մտածել եմ պարզությամբ և անկեղծությամբ գրելու, թեկուզ ինձ համար աննպաստ ու պախարակելի լինին, և թող զավակներս, ազգականներս, ընկերներս ու պաշտոնակիցներս և առավել ևս եկեղեցու սրբազան հայրերը ներող լինեն, եթե նրանց պատիվն ու փափկանկատությունը վիրավորած կլինեմ պատմությանս ընթացքում: Ո՞վ է իմանում, գուցե ընթերցողի համար խրատական և օգտակար ևս լինի այս աշխատությունս, եթե արժանանա հրապարակ դուրս գալու:

Մեր տոհմը

Ծնվել եմ 1858 թ. մայիսի 2-ին Ալեքսանդրապոլում: Հաջորդ օրը մկրտվել եմ Սբ. Աստվածածին եկեղեցում Թադեոս քահանա Տեր-Հովհաննիսյանի ձեռքով: Կնքահայրս եղել է Պողոս Գալստյան Խախանյանը (Խրիստյանց):

Ծնողներս՝ Գրիգոր և Եղիսաբեթ Ստամբուլյանները, բնիկ կարսեցի էին: Աղեքսանդրապոլ են գաղթել 1830 թ. մեծ գաղթին՝ գտնվելով ազգականների՝ հայրս՝ մեծ եղբոր՝ Միքայելի, իսկ մայրս՝ զնդապետ Հովհաննես աղա Տիգրանյանի խնամակալության ներքո:

Մեծ հայրս՝ Օհանը, պոլսեցի էր: Կարսում բնակություն է հաստատել Ստամբուլի անունով, որից էլ և առաջացել է մեր Ստամբուլյան ազգանունը⁶:

Պապիս ամուսնանալու առթիվ մի դեպք էր պատմում հայրս: Իբր պապս ուզել է կարսեցի Տիրոսենց աղջկա հետ ամուսնանալ, բայց ծնողները չեն տվել:

⁶ Ըստ հուշագրի՝ «Կարսեցի մի ծերունի էլ Գոփսիկենց ազգանունով պատմում էր. «Ջանմ, ինչ Ստամբուլի, ինչ բան: Օհանը կարսեցի էր ու մեր դրացին, մի անհանդարտ բնավորություն ունեցող, ուտող, խմող, ընկերների հետ շարունակ քեֆ անող մարդ: Ջահել ժամանակ տանից փախել էր Ստամբուլ, միառժամանակ այնտեղ մնացել ու եմիչերների ձեռքից ազատվելու համար նորից վերադարձել էր Կարս. այդտեղից էլ մնացել է նորա Ստամբուլի անունը»:

Պապս ետ չի կանգնել իր մտադրությունից ու մինչև իսկ սպառնացել է զենքով: Կաշառել են ենիչեր Ադասուն՝ Ստամբուլի Օհանին սպանելու համար: Մի գիշեր ենիչեր Ադասին մի քանի ընկերներով պապիս դուրս է կանչում տանից: Նրանց տեսնելով՝ հասկանում է ամեն ինչ: Առանց իրեն կորցնելու, հագնվելու պատրվակով ներս է հրավիրում և աշխատում է մի լավ հյուրասիրել ու պատվել: Երբ հյուրերի քեֆը բավական լավացած է լինում, պապս իբր թե կատակով ասում է ենիչեր Ադասուն. «Ես զարմանում եմ, թե քեզ պես մի հայտնի անունով քաջ տղամարդ ինչպես՞ է կեսզիչերին մի քանի ընկերներով եկել մի գյավուրի դռաը, դուրս կանչել նրան և ուզում է տանել, սպանել: Դա ի՞նչ քաջություն ու տղամարդություն է, իմացողն ի՞նչ կասե՞ս»:

Պապս էլ դրանից հետո ամուսնանում է Տիրուսենց աղջկա հետ և ունենում երեք տղա՝ Միքայել, Կարապետ և Գրիգոր: Կարծեմ մի աղջիկ էլ է ունեցել, որը գաղթից առաջ Կարսում վախճանվել է և թաղվել Չուխտր մահլի վերևում գտնվող գերեզմանատանը:

1830 թ. Ստամբուլի Օհանի տղերքն էլ գաղթում են Ալեքսանդրապոլ և Կաթողիկոս եկեղեցու թաղում սեփական տներ են ձեռք բերում և տուն-տեղ դնում:

Մեծ հորեղբայրս՝ Միքայելը, ունենում է երկու տղա՝ Օհան, Գևորգ, մի աղջիկ՝ Շողո անունով: Շողոն հոր մահից հետո մեր տանն էր ապրում: Պսակվում է ախալցխացի հաճի Խաչատուր Ստեփանյանի հետ և հորանց տան դեմը սեփական տներում ապրում: Օհանը պսակվում է Խանում Մատնիշյանի հետ և ունենում է մի աղջիկ՝ Փետրոն անունով, որը հետո պսակվում է Արշակ Հովհաննիսյան-Բրուտյանի հետ: Գևորգը հայտնի դերձակ էր և լավ ձևարար, պսակված էր Քյուփալենց ներկարար Նիկոլի աղջկա՝ Տիրուսի հետ և ուներ չորս զավակ՝ Մեխակ, Արտաշես, Եղիշե, Հայկանուշ:

Կարապետ հորեղբայրս դալլաք է լինում, ունենում է մի աղջիկ՝ Մարթա անունով:

Մեր ընտանիքը

Հայրս ամուսնանում է Հովհաննես աղա Տիգրանյանի խնամակալության ներքո գտնվող Եղիսաբեթի հետ և ունենում ութ տղա և մի աղջիկ: Եղբայրներիցս երեքը փոքր հասակում մեռել են, իսկ քույրս՝ Հռիփսիմեն, ինձանից երկուսուկես կամ երեք տարով մեծ էր: Ես ամենից փոքրն էի: 1858 թվի սեպտեմբերին հայրս տանեցոց Էջմիածին՝ Սբ. Գևորգ ուխտի է ուղարկում հորեղբորս որդու՝ Օհանի առաջնորդությամբ: Ես հիվանդ եմ լինում, մայրս հետը պատան է վերցնում, որ, եթե ճանապարհին մեռնեմ, առանց պատան չթաղեն, բայց աստված ուրիշ կերպ է տնօրինում: Ճանապարհին՝ Ալի-Քուչակ գյուղի մոտ, քույրս սայլից ընկնում է, որի հետևանքով մեռնում է և ինձ համար տարված պա-

տանով էլ թաղվում հիշյալ գյուղում: Հայրս և մայրս շատ են ցավում և սգում:

Հայրս, թեև կրթված մարդ չէր և հագիվ գրել էր սովորել ինքնիրեն, և այդ գիրն էլ միայն ինքը կարող էր կարդալ, զավակներին տվել էր կրթության: Մեծ եղբայրներս՝ Հարությունը և Սկրտիչը, Քաղաքային դպրոց են հաճախել և բավական վարժվել են գրել-կարդալու մեջ թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն: Մեծ եղբայրս ինքնակրթության մեջ բավական առաջ էր գնացել և Ղզըղոշ⁷ գյուղում գրագիր և ուսուցիչ էր:

Մարտիրոս և Ավետիս եղբայրներս ուսման մեջ շատ հետ էին մնացել: Առաջինը դերձակություն էր սովորում հորեղբորս որդու՝ Գևորգի մոտ, իսկ երկրորդը թեև գնում էր դպրոց, բայց շարունակ փախչում էր դասերից, վերջն էլ կոշկակարի մոտ աշակերտ սվեցին, որ գոնե այդ արհեստը սովորի:

Տունը գլխավորապես հայրս էր կառավարում, իսկ Հարություն և Սկրտիչ եղբայրներս էլ օգնում էին: Հայրս սկզբում քաղաքում պարենի լավ խանութ է ունեցել, բայց հետո թողել ու անցել է ռուսաց սահմանը: Քաղաքից երկու վերստ հեռու՝ Ախուրյանի ափին՝ Խան կոչված տաճկապահականոցում, խանութ է բացել, բայց շուտ-շուտ գալիս էր տուն: Երբեմն հայրս տուն գալիս հետը հյուրեր էր բերում: Մի անգամ հյուր էին եկել Պոլսից հայտնի վաճառականներ՝ Կյուրեղյան ազգանունով, որոնք Էջմիածին ուխտ էին գնացել և վերադառնալիս հորս էին հանդիպել: Հարց ու փորձից պարզվել էր, որ պապիս ազգականներն էին: Երբեմն էլ ես էի գնում հորս մոտ, սահմանապահ կազակներն ու թուրք ասկյարները ճանաչում էին ու բան չէին ասում: Մի անգամ, երբեք չեմ մոռանա, գնացի, գետն անցա ու երբ բարձրանում էի դեպի հորս խանութը, թուրքերի շները վրա տվին, ես լալով փախա՝ մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան բղավելով: Հայրս դուրս եկավ, ինձ ազատեց շներից ու ձեռքիցս բռնած տուն տարավ՝ ասելով.

–Քեովիակ օղլի, մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան է բղավում, փոխանակ հայրի՛կ ջան կանչի:

Ուսումնառությունս Ալեքսանդրապոլում

Մինչև 1870 թ. ես կանոնավոր դպրոց չեմ հաճախել: Ինձ ուղարկել էին կաղ Թաքունի մոտ կարդալու: Չեռքս տվել էին պոչավոր մի տախտակ՝ վրան այբուբենը գրած: Այդ էր իմ դասագիրքը, որի հետ կար մի կտոր հաց ու պանիր դրած ուսիցս կախված տոպրակի մեջ: Գնում էի դպրոց, մատում գետնին՝ մի փալասի վրա և երկար նայում տախտակիս ու կրկնում անհասկանալի բառեր ու զանազան ձայներ հանում:

Մի անգամ Ավետիս եղբորս հետ գնացի նրա դպրոցը, որը մեզանից շատ հեռու չէր և իբր թե ա-

⁷ Գյուղ Շիրակի մարզում: 1951 թ. վերանվանվել է Վերին Ղուկասյան, 1956 թ.-ից՝ Ղուկասյան: Այժմ Աշոցք քաղաքն է:

վելի կանոնավոր դպրոց էր: Ուսուցիչը Սկրտիչ Տիգրանյան անունով մի կաղ մարդ էր: Սկրտիչ խալֆա էին ասում: Հենց որ եղբորս տեսավ, մոտ կանչեց և մեծ աշակերտներից մի երկուսին կանչելով՝ եղբորս ֆալախկա դրեց նախորդ օրը դպրոցից փախչելու համար: Պառնեցրին նրան մի փայտի վրա, երկու ծայրն ամրացրած չվան բերին, ոտքերը մերկացրին, այդ փայտի ու չվանի մեջ անցկացրին, ոլորեցին, վեր բարձրացրին ու ճիպտներով ձաղկեցին մերկ ոտներին՝ երբեք ուշք չդարձնելով եղբորս լաց ու կոծին, ճվղոց-բռռոցին:

Ավելի կանոնավոր դպրոց էր կաթողիկեների ուսումնարանն⁸ իրենց եկեղեցու բակում, ուր մայրս ինձ տվեց կարդալու համար, և ես այնտեղ սովորեցի գրել-կարդալ: Պողոս անունով տիրացուն էր ուսուցիչը, որը բլի տակից մինչև ոտքերը կոճակներով, երկար սև շոր էր հագել: Երբեմն գալիս էր դրանց մեծը՝ Ալեքսանդր վարդապետ Արարատյանը՝ մի շատ զարգացած, համեստ և սիրելի անձնավորություն: Մխիթարյան հայրերից էր և շատ էր սիրում մեզ: Ինչքան փողոցից անցներ, պիտի վազեինք ու ձեռքերը համբուրեինք:

Բայց ինձ այդ դպրոցում երկար չթողեցին: Մեր հոգևոր դպրոցը⁹ բավական կանոնավորել էին, մի քանի ուսուցիչներ հրավիրել և մի քանի դասընթացներ բացել՝ կանոնավոր սեղաններով և նստարաններով: 1870 թ. ամռանն ինձ էլ տարան այդ դպրոցը և նստեցրին պատրաստական Բ դասարան: Սկսեցի կանոնավոր դպրոց հաճախել և բան սովորել: Դպրոցն ավելի կանոնավորվեց 1871/72 ուստարում, երբ տեսուչ հրավիրեցին գիմնազիա սովորած Սարգիս Բեկնազարյանցին¹⁰:

Նոր ուսուցիչներ հրավիրվեցին՝ Ղազարոս Աղայանը, Հայրապետ Դուկասյանը, բժիշկ Գաբրիել Հովհաննիսյանը, Մենեքերիմ Տեր-Մատթևոսյանը, ռուսերենի դասատու Միքայելյանը:

Ուսումնա շարունակեցի մինչև 1874 թ.:

Դեպի Գևորգյան ճեմարան

1874 թ. ամռանն Ալեքսանդրապոլ եկավ Արիստակես վարդապետ Մեղրակյանը¹¹, որն իր հետ Ախլցխայից բերել էր երեք աշակերտների՝ Ստեփան Մալխասյանին, Սինաս Ազնավուրյանին և ծուղրութեցի Գալուստ Տեր-Սկրտչյանին՝ Էջմիածնի նոր բացվելիք Գևորգյան ճեմարան տանելու համար: Երեք-չորս աշակերտ էլ մեր քաղաքից պիտի ընտրեին: Մեծ եղբորս՝ Հարությունի շնորհիվ բախտ ունեցա այդ ընտրվածների (Եմովք Գյուզյան, Պողոս Տեր-Պողոսյան, Ստեփան Տեր-Անտոնյան՝ Եզոբ Իվանիչի եղբոր որդին) շարքն ընկնել¹²:

Չափազանց ուրախացել էի: Սկզբում հայրս համաձայն չէր մասնավորապես Էջմիածին գնալու համար: Պատճառը չէր հայտնում, բայց հետո իմացա, որ նա, մի անգամ ուխտի գնացած լինելով, ընդհարում է ունեցել վարդապետների հետ, չի հավանել նրանց վարքուբարքը և վախեցել է, որ ես էլ վարդապետ դառնամ, բայց Հարութ եղբայրս համոզել է նրան և հաճություն ստացել:

Օգոստոս ամսվա մեջ մի օր քաղաքից մեծ բազմության ուղեկցությամբ ճանապարհ ընկանք:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում

Կեսօրն արդեն անցել էր, որ ճանապարհ ընկանք Ապարանով դեպի Էջմիածին: Մեզ հետ եկավ նաև Ալեքսանդրապոլի հաջորդ Սուքիաս վարդապետ Պարզյանը¹³:

Ալեքսանդրապոլից դուրս գալու երրորդ օրը Ղազարապատ կոչված հյուրատան սենյակներում ժամանակավորապես տեղավորեցին մեզ: Բոլորիս

8 Ալեքսանդրապոլի հայ կաթողիկեների հոգևոր դպրոցը 1858 թ. հիմնադրել է վարդապետ Ալեքսանդր Արարատյանը (**Խոռոչյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 26):

9 Խոսքը վերաբերում է Ալեքսանդրապոլի Սբ. Փրկիչ եկեղեցու վիճակային դպրոցին, որը հիմնադրվել է 1839/40 թթ.: 1870-ական թթ. դպրոցի զարգացման գործում մեծ դեր են խաղացել Սարգիս Բեկնազարյանը, Ղազարոս Աղայանը և այլք (**Խոռոչյան Ս.**, նշվ. աշխ., էջ 17):

10 Սարգիս Բեկնազարյանը ծնվել է 1840 թ. Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղում: 1871-1875 թթ. եղել է Ալեքսանդրապոլի Սբ. Փրկիչ եկեղեցու վիճակային դպրոցի տեսուչն ու ուսուցիչներից մեկը: 1878 թ. հիմնադրել է Երևանի Սահակաճուղյան օրիորդաց դպրոցը: Կազմել է Ալեքսանդրապոլի հայոց ազգային հոգևոր դպրոցի կանոնադրությունը (մանրամասն տես **Պարսամյան Վ.**, Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1988, էջ 80-84: **Խոռոչյան Ս.**, նշվ. աշխ., էջ 94):

11 Արիստակես Մեղրակյանը (Մելիք-Առաքելյան) ծնվել է 1845 թ. Սուրմալու գավառի Խալֆալու գյուղում: Հայտնի է որպես բանասեր, պատմաբան, եկեղեցական գործիչ: Եղել է Երմզակի Սբ. Կարապետ և Էջմիածնի Սբ. Գայանե վանքերի վանահայր, Տաթևի, Արցախի, Աստրախանի, Վրաստանի և Իմերեթի թեմերի առաջնորդ: 1874-1876 թթ. Գևորգյան ճեմարանի ուսուցիչն էր, իսկ 1891-1893 թթ.՝ նույն ճեմարանի տեսուչ: Հեղինակել է «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երմզակո» աշխատությունը: Վախճանվել է Վաղարշապատում 1906 թ. (մանրամասն տես Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 10, Երևան, 1983, էջ 264-265):

12 1874 թ. սեպտեմբերի 4-ին Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունից Սբ. Էջմիածնի Սինդոնի ուղղված գրության մեջ ևս նշված է Գևորգյան ճեմարանում ուսանելու համար ընտրված հուշագրի անունը. «...Արիստակես վարդապետն Մեղրակեանց եկեալ այսր զկնի կարևոր հարցաքննութեան ընտրեաց ի ցուցակագրեալ աշակերտաց զաղեքսանդրապոլցի Համբարձումն Գրիգորեան Ստամբոլցեանց, եւ զԵմովքն Գեորգեանց, եւ զարմուտլեցի Պողոսն Թաղեւեան Տեր-Պողոսեանց» (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ, Երևան, 2004, էջ 517):

13 Սուքիաս Պարզյանը ծնվել է 1837 թ. Նախիջևանի գավառի Աստապատ գյուղում: Հայտնի է որպես բանասեր, մանկավարժ, եկեղեցական գործիչ: Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդն է եղել 1872-1874, 1875-1877 թթ.: 1874-1875 և 1895-1899 թթ. դասավանդել է Գևորգյան ճեմարանում, 1897-1899 թթ. խմբագրել է «Արարատ» ամսագիրը: Վախճանվել է Վաղարշապատում 1914 թ. (մանրամասն տես ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 196):

շորերն էլ փոխեցին և վանականի մոխրագույն զգեստ հագցրին:

Մինչև ճեմարանի բացումն ապրեցինք Ղազարապատում Սուքիաս վարդապետ Պարզյանի հսկողության տակ: Իրավունք չունեինք ազատ ման գալու, դրսի դուռը փակված էր, դուրս գնացողը թույլտվություն պիտի ստանար, բայց մենք մեկ-մեկ ծկում էինք կա՛ն լճի ափը ման գալու, կա՛ն անտառ՝ թութ ուտելու, կա՛ն վանքապատկան Ղուի կոչված այգին՝ խաղող ուտելու:

Երկհարկ ճեմարանի վերին հարկում երեք սենյակ հատկացված էր ննջարանի համար: Երկաթե մահճակալների վրա փռված էր մաքուր տեղաշորը՝ վերմակով (բրդե գունավոր) ծածկված, երեսաբեխն էլ գլխավերևում՝ բարձի վրա փռված, իսկ ներքևում կախված էին մեր համարները: Ես 24-րդ համարն էի: Վերին հարկումն էին գետեղված նաև գրադարանը, տեսչի և օգնականի կամ վերակացուների սենյակները, բայց ամենից գեղեցիկը կիսակոթ զմբեթավոր հանդիսարանն էր: Ներքևի հարկում դասարաններն էին, սեղանատունը և խոհանոցը:

Սեպտեմբերի 28-ին՝ Մթ. Գևորգի տոնի օրը, ճեմարանի հանդիսավոր բացումն էր¹⁴:

Հանդեսի հաջորդ շաբաթ սկսվեցին մեր դասերը: Ինձ և ալեքսանդրապոլի ընկերներին տեղավորել էին առաջին դասարանում: Պարզյանը տեսչի օգնականի պաշտոն էր վարում, իսկ Սեդրակյան և Սուրենյան Գևորգ վարդապետները՝ դասատուի: Ալեքսանդրապոլից նույնպես հրավիրված էր ուսասց լեզվի մեր ուսուցիչ Միքայելյանը: Ներսես Սիմոնյանն էլ վերակացուի պաշտոն էր վարում:

Ճեմարանի այրվելը

Երկու շաբաթ հազիվ էր անցել, երբ հոկտեմբերի 16-ին լուր տարածվեց, որ ճեմարանն այրվում է: Սոսկալի իրարանցում տեղի ունեցավ: Դողս կրկնվելու պատճառով ես հիվանդանոցում էի, դուրս եկա միջանցք և տեսա, որ արևմտյան կողմի առաստաղի անկյունից ծուխ է բարձրանում, և մարդիկ ջրի դուլերով վազում են կտուրը: Հետզհետե ահագին բազմություն հավաքվեց, ամեն կերպ աշխատում էին իրերը դուրս կրել և հանգցնել կրակը:

Մինչև երեկո կրակը հազիվ հանգցրին, բայց արդեն կեսից ավելին այրվել էր: Ցավալի էր հատկապես հրաշալի հանդիսարանի անկումը¹⁵:

Մեզ՝ աշակերտներին նորից հավաքեցին ու տեղավորեցին Ղազարապատում և բավական հանդարտվելուց հետո այնտեղ էլ շարունակեցին դա-



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Գևորգյան ճեմարանի ընդհանուր տեսքը

սավանդումը, մինչև ճեմարանը մեկ տարվա ընթացքում նորից կշինվեր:

Տխուր ու միօրինակ անցավ ուսումնական տարին: Դասավանդումն ընթանում էր խոնավ ու մութ դասարաններում:

Վերջապես եկավ սեպտեմբերը, նոր տեսուչ Գաբրիել եպիսկոպոս Այվազյանն¹⁶ էլ եկավ, նոր ուսուցիչներ բերեց: Մեզ նորից տեղավորեցին ճեմարան: Հանդիսավոր բացումից հետո շարունակեցինք ուսումնական պարապմունքները:

Ճեմարանական կյանքս

Նոր տեսուչ Գաբրիել եպիսկոպոս Այվազյանը կարճահասակ, լղար, ալեխառն մորուքով, խորիմաստ աչքերով, ժիր և բանիմաց մարդ էր: Վեներտիկյան Մխիթարյաններից էր, սկզբում կաթողիկե, հետո մեր եկեղեցու ծոցը դարձած, կանոնավոր կրթություն ստացած ու լեզվաբան: Ասում էին, որ ինը լեզուներով (հին և նոր) կանոնավոր գրել, կարդալ և խոսել գիտեր, գրականության մեջ էլ մեծ անուն էր հանել:

«Օրագիր» անունով մանրանկար թերթ ունեինք՝ հիմնված տեսչի ղեկավարությամբ, որի մեջ զանազան հոդվածներ և լուրեր էինք գրում և նկարներով զարդարում ու երեկոյան սերտողության ժամանակ կարդում¹⁷:

Տեսչի բացակայության ժամանակ նրա պաշտոնը կատարում էր Կարգապահ մականունով մի ուսուցիչ՝ Հովհաննես Գալստյանը:

14 Գևորգյան ճեմարանի բացման մասին տես Վավերագրերի հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԱ, Երևան, 2004, էջ 524-533:

15 Գևորգյան ճեմարանի իրկիզման և դրա պատճառով կազմված վերաշինության պայմանագրի մասին մանրամասն տես Վավերագրերի հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԱ, էջ 558-562; 573-576:

16 Գաբրիել Այվազյանը (Այվազովսկի) ծնվել է 1812 թ. Թեոդոսիայում: Հովհաննես Այվազովսկու եղբայրն է: 1826 թ. ուսանել է Վեներտիկի Մխիթարյան միաբանությունում: 1842-1848 թթ. դասավանդել է Վեներտիկի Ռաֆայելյան, 1848-1856 թթ.՝ Փարիզի Մուրադյան վարժարաններում: «Բազմավեպ» հայագիտական հանդեսի հիմնադիր-խմբագիրն էր: 1858 թ. հիմնել է Թեոդոսիայի Խալիբյան վարժարանը: 1875-1876 թթ. Գևորգյան ճեմարանի տեսուչն էր: Հեղինակել է բազմաթիվ աշխատություններ: Վախճանվել է 1880 թ. Թիֆլիսում (մանրամասն տես ՎՄՀ, հ. 1, Երևան, 1974, էջ 349):

17 1876 թ. սեպտեմբերին՝ Գևորգյան ճեմարանի երկրորդ տարեդարձի հանդեսին, ճեմարանի վերատեսուչն իր ճառում գովեստի է արժանացրել նաև ուսման առաջավորներին, որոնց թվում էր նաև Համբարձում Ստամբոլցյանը (Վավերագրերի հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԱ, էջ 694):

Միրում էի նկարչությանը պարապել և լավ էլ նկարում էի: Մեզ այցելության էր եկել Պետերբուրգի կայսերական համալսարանի նկարիչ Պրեմացցին¹⁸ և նկարներս տեսնելով՝ հավանել էր: Նրա գնալուց հետո տեսուչը մի օր ինձ հարցրեց.

–Եթե քեզ ուղարկելու լինենք Պետերբուրգ՝ նկարչության մեջ կատարելագործվելու, ծնողներդ կհամաձայնվե՞ն:

Ես զարմացած պատասխանեցի.

–Ինչու՞ պիտի չհամաձայնվեն, նրանց համար միևնույն չէ՞, ավելի լավ, շատ էլ ուրախ կլինեն:

–Իսկ դու կգնա՞ս, եթե ուղարկելու լինենք,– նորից հարցրեց սրբազանը:

–Ինչու՞ չէ, ամենայն ուրախությամբ,– պատասխանեցի ոգևորությամբ:

Ռուս-տաճկական պատերազմն արդեն սկսվել էր: Գյուղը և ճեմարանը կենդանություն էին ստացել, շարունակ զինվորներ, թնդանոթներ ու սայլեր էին գնում դեպի սահման, շարունակ լսվում էր զինվորական երաժշտություն:

Մի անգամ էլ գեներալներ Լորիս-Մելիքյանը, Լազարյանը, Տեր-Ղուկասյանն իրենց շքախմբերով եկան ճեմարան:

Տաճկական ֆեսեր գլխներիս, շարքով կանգնած՝ ընդունեցինք նրանց, որոնք հարցուփորձ էին անում աշակերտներին: Նրանք այդ այցելությունից դժգոհ մնացին, մանավանդ տաճկական ֆեսերի համար: Այդ գլխարկներն անմիջապես փոխել տվեցին նրանց գնալուց հետո:

Անցավ ամառը, հոկտեմբերին սկսեցինք մեր պարապմունքները¹⁹: Նոյեմբերի 6-ի երեկոյան հանդիսարան մտավ տեսուչը և հայտնեց Կարսի առման լուրը: Մեծ ոգևորություն և ուրախություն տիրեց աշակերտների մեջ:

Ահա այսպես վերջացրինք մեր ճեմարանական վերջին երեք տարվա կյանքը, որից հետո ես դուրս եկա աշխարհ «թարածամի խում եզի մման»՝ իբրև թե ուսում առած ու զարգացած երիտասարդ:

Չատկին եկավ Ավետիս եղբայրս և սրբազան տեսչից խնդրեց ինձ արձակուրդ տալ՝ մորս տկարության պատճառով: Նա համաձայն էր: Ապրիլի 18-ին եղբորս հետ ուղղվեցի դեպի հայրենիք:

Չորս ամիս արձակուրդում

Ճանապարհորդության երկրորդ օրը՝ երեկոյան, մտանք հայրենի քաղաք՝ Ալեքսանդրապոլ: Մտերիմ ընկերս՝ Ալեքսանդր Տեր-Սարգսյանը, մտել էր ճարտարապետական վարչության մեջ ծառայության և որպես կոնստրուկտոր՝ տների հատակա-

գծեր էր նկարում, մեծ եղբորս՝ Հարությունի աղջկա՝ Հռիփսիմնի (մոտ 10-11 տարեկան) հետ էր պարապում: Հռիփսիմնն հաճախում էր Արդուսյան օրիորդաց դպրոց, որը, շնորհիվ ուսուցչական կազմի, շատ լավ վիճակում էր:

Եղբայրս առաջվա գործը և տունը թողել էր, այժմ քաղաքային ակումբն ինքն էր պահում և մնում էր Վառլամյանի՝ Չիթողյանների փեսայի տանը:

Արդեն յոթ-ութ ամիս էր անցել, որ Կարսը ռուսաց ձեռքն էր ընկել: Ալեքսանդրապոլից տեմդոտ երթևեկություն ու առևտրի փոխանակություն կար դեպի Կարս: Մկրտիչ եղբայրս էլ գնացել էր այդ քաղաքը, Գզիրյանց Գևորգի հետ ընկերությամբ ապրանք էին փոխադրում սեփական ֆուրգոնով:

Մի օր Մկրտիչ եղբայրս էլ եկավ Կարսից: Ես շատ խնդրեցի, որ վերադառնալիս ինձ էլ հետը տանի: Այդ քաղաքն ինձ շատ էր հետաքրքրում, ծնողներիս ծննդավայրն էր և պապիս հանգստարանը:

Կարսում

Եղբայրս խոստացավ ինձ անպայման Կարս տանել, սպասում էինք ֆուրգոնի գալուն: Հունիսի սկզբներին Ալեքսանդրապոլից մի այնպիսի հեղեղ պրծավ, որի տված հարվածները լեզվով չէր կարելի պատմել: Լսեցինք՝ մեր Եսթերենց տունն էլ էր ջուր լցվել, շտապեցինք այն կողմը: Արդարև, ջուրը շտապատերի տունն էր ողողել, շատ ապրանք էր քշել-տարել, մի քանի հոգի էլ խեղդվել էին:

Վերջապես մի օր մեծ հրճվանքով ու բավականությամբ նստեցի եղբորս ընկերոջ՝ Գզիրենց Գևորգի ֆուրգոնը և ուղևորվեցի դեպի Կարս: Եղբայրս ձիով էր գալիս: Երեկոյան իջևանեցինք Փալտվան գյուղի եզերքին:

Հասանք Մշկոներ կոչված վայրը: Հեռու բլուրների ստորոտում՝ մի ձորակի բերանին կպած, ադոտ կերպով երևում էր Կարսը: Մենք հետզհետե իջնում էինք և մոտենում քաղաքին: Վերջապես երեկոյան Ղարադաղ կոչված ամրության սարահարթի տակից մտանք քաղաք: Իջանք ֆուրգոնից քաղաքի ծայրամասում գտնվող աղբյուրի մոտ և նեղ ու կեղտոտ փողոցներով դիմեցինք դեպի մեր իջևանը: Քաղաքը տեղավորված էր պատմական Ռահ գետի՝ Կարսագետի երկու կողմում, որն արևմտահյուսիսային կողմից մտնում էր ձորի մեջ: Հենց այդտեղ՝ քարե կամրջից ներքև՝ գետի երկու կողմում էին գետեղված հայկական երկու թաղերը, աջ կողմում՝ Ժամտուն, ձախ կողմում՝ Չուխուր թաղերը: Տները շինված են անկանոն կերպով, մեկը մյուսի կտուրի վրա: Փողոց կոչվածը Կարսում գոյություն չունեի. նեղ ու անկանոն, ծուռ ու մուռ անցքեր էին սալահատակված: Քարե հին կամրջից դեպի արևելք ու հարավ գետեղված էին քաղաքի մյուս մասերը, որոնք գրեթե զուտ թուրքաբնակ էին: Կամրջից դեպի ձախ՝ մի բարձրավանդակի ստորո-

18 Պրեմացցի Լյուդվիգ (1818, Միլան - 1891), գեղանկարիչ:
19 1877 թ. սեպտեմբերին՝ Գևորգյան ճեմարանի երրորդ տարեդարձի հանդեսին, Համբարձում Ստամբուլյանը հիշվում է չորրորդ դասարան փոխադրված առաջնակարգ աշակերտների թվում (Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԱ, էջ 755):

տին, գետեղված էր Բերդամեջ (Քալախչի)²⁰ կոչված թաղը, պատմական հին պարսպով շրջապատված: Նրա գագաթին բազմած էր պատմական միջնաբերդը, որի մուտքն անմատչելի էր հասարակ մահկանացուների համար:

Այդ թաղի մեջ կային երեք հին եկեղեցիներ, չորս կողմից շինված էին տներ, նույնիսկ եկեղեցիների պատերին կպած, այնպես որ չէր երևում նրանց եկեղեցի լինելը, միայն վերին մասերը՝ գմբեթներն էին երևում: Առաջինը որձաքարից շինված պատմական աբսասաշեն Առաքելոց եկեղեցին էր, որ հացի պահեստ էին դարձրել: Գմբեթից միայն մի քիչ մասն էր քանդված, մնացածն ամբողջովին կար: Մյուս եկեղեցին փուխր քարերով շինված փոքրիկ մատուռ էր, որը գտնվում էր Առաքելոց եկեղեցուց դեպի արևելք: Դարձյալ գմբեթը քանդված էր: Երրորդն օրորոցաձև մի շինություն էր: Չէր նկատվում, որ եկեղեցի է, և չէր էլ կարելի մանրամասն զննության ենթարկել, որովհետև զուտ թուրքաբնակ էին այդ կողմերը, որոնց տղաները հայիտյուն և քարհալած էին անում այցելողին: Գոնե ես չկարողացա հագեցնել անսահման հետաքրքրությունս այդ հանգամանքի պատճառով:

Քաղաքի այդ մասի հին պարիսպները, որոնք սկսվում էին վերը հիշված կամրջի ձախ կողմից, միջնաբերդին կպած ժայռերի վրայից իջնելով գետի ափը, դառնում էին դեպի արևելք և երկար ձգվելով՝ հասնում Շարամփա կամ Գյոլի գլուխ կոչված վայրը, որտեղ միայն գարնան սկզբներին էր ջուր հավաքվում և մի կեղտոտ առվակով միանում գետին: Այդտեղից պարիսպները ծովում էին դեպի հյուսիս, ապա ուղիղ գծով հասնում միջնաբերդի հավասար բարձրավանդակի վրա և ձորի ափին վերջանում:

Իմ այցելած ժամանակ գրեթե կանգուն էին այդ պարիսպները, որոնց կորած և քառանկյունի ձևով շինված բուրգերի վրա հայերեն արձանագրություններ էին երևում կարմիր քարերի վրա փորված, որոնք կարդալու հնարավորություն չունեցա:

Երեք դուռ ուներ այդ հին ու պատմական քաղաքամասը: Մեկն արևելյան կողմում էր՝ Երևանյան դուռը (Էրեվան-կապուսի), որի առաջ՝ Գյոլի ձախ կողմում, տեղավորված էր Բայրամ փաշա կոչված թաղը՝ զուտ երկրագործ դարձած թուրք բնակչությանը լցված: Երկրորդը հարավային կողմից Էրզրումի կամ Կարնո դուռն էր (Էրզերում-կապուսի): Այս դուռն մոտ, որն ուներ շատ գեղեցիկ ծաղկանկարներ՝ մեծ մասը փչացած, ներսի կողմից եղբորս խանութն էր, որ կարսեցի Խանամիրյան Արսենի հետ ընկերությամբ էր պահում: Կային մի քանի խանութներ ու մի հյուրանոց էլ, որը պահում էր Աղյխանենց Աղասարը: Այդ դռնից դուրս սկսվում էին քաղաքի խանութները և տարածվում աջ ու



ՎԱՐՍ. քաղաքի շրջապարիսպը և միջնաբերդի ստորոտում փռված ժամտուն թաղը

ձախ, անկանոն շինություններով և ծուռումուռ, կեղտոտ փողոցներով քաղաքի կենտրոնում: Դրանց մեծ մասը շարված էր կողք կողքի և շինված էր փայտե ձողերով:

Երրորդ դուռը գտնվում էր արևմտյան կողմում՝ քարե կամրջի մոտ, որին կպած կար մի հին բաղնիք, որ այն ժամանակ գործածվում էր: Երկու բաղնիքն էլ կամրջի աջ և ձախ կողմերում էին գտնվում, մի բաղնիք էլ կար քիչ վերև՝ գետի աջ ափին՝ Մուղաբի կոչվող թաղամասում: Այդ թաղամասը միանում էր քաղաքի հետ փայտածածկ կամրջով: Մի ուրիշ կամուրջ էլ՝ դարձյալ փայտածածկ, միացնում էր հայկական Չուխուր և Ժամտուն թաղերը: Այն սկսել էր քանդվել: Դրանից ներքև գետի ընթացքով գտնվում էին ջրաղացները:

Հայոց միակ եկեղեցին գտնվում էր Ժամտուն թաղում՝ միջնաբերդի ժայռերի տակ: Հասարակ ու փայտով ծածկված եկեղեցի էր, որի բակում կար երկհարկանի ընդարձակ մի շինություն՝ հատկացրած առաջնորդի տան և դպրոցի համար:

Խանութների մեջ աչքի էին ընկնում մի քանի խանութներ՝ ծածկված չորսուներով, մինդարի վրա նստած առևտրականներով: Շուրջը գտնվում էին բնակելի թաղեր՝ բազմաթիվ միմարեններով: Կարսը ասիական, թուրքական հին քաղաք էր:

Այցելեցի առաջնորդին՝ Գրիգորիս Աղվանյան վարդապետին²¹:

Մի շաբաթից ավել մնացի քեռուս աղջկա՝ Վարդունի տանը՝ Ժամտուն թաղում, որի ամուսինը՝ Ա-

20 Բերդամեջ թաղը լքվել է 1880-ական թվականներին:

21 Աղվանյան Գրիգորիս եպիսկոպոսը Կարսի փոխանորդ է հիշվում 1877-1892 թթ. (**Քաջրեումի**, Ալեքսանդրոպոլից դեպի Կարին, «Փորձ», 1879, № 5, էջ 177: Նաև՝ № 9, էջ 116, 118: Մատենադարան, թիք. 63, վավ. 29, ք. 1):



ԿԱՐՍ. միջնաբերդը, նրա հարավային ստորոտին փռված ժամտուն թաղն իր Սբ. Աստվածածին եկեղեցով

դամենց Կարոն, առևտրով էր զբաղվում: Մի գիշեր (հուլիսի սկզբներին) հրդեհ ծագեց քաղաքում, որ երկու օր տևեց և չափազանց վնաս տվեց թե՛ բնիկ և թե՛ եկվոր քաղաքացիներին: Ցավալի էր տեսնել խանութների կործանվելը, ապրանքների ցիրուցան դառնալը և թալանի մատնվելը: Եղան մարդիկ, որ առավտորը գնացին խանութ և փոխարենը մոխրակույտ տեսան:

Արարվիսում

Վերադարձա Ալեքսանդրապոլ: Շատ չանցած՝ հայրս էլ եկավ, խնդրեցի վերադարձին ինձ էլ հետը տանի: Արարվիսում²² հայրս միայնակ ապրում էր թուրքերի մեջ: Այդ մասին հայրս ասաց. «Օղո՛ւլ, քաղաքում ես լավ խանութ եմ ունեցել, լավ գործ կատարել և հաջողություն ձեռք բերել, բայց մարդկանց վարքուբարքը և ընկերների խաբեությունը, որոնց հետ գործ եմ կատարել, ինձ բոլորովին զզվեցրին և քաղաքից հեռացրին: Մեկ էլ ես ռուս ազգը չեմ սիրում, կուզես տասը մատդ մոմ արա, իրա համար վառե, չի ճանաչե: Էս անօրեն օսմանցին էդպես չէ,

մե ջուրմ խմցնես, չի մոռանա, շատ պատվով ու լավություն իմացող և փոխարենը հատուցող ազգ է, հետև էլ գործ ունենալիս խարդախություն, խաբեություն չգիտես: Դրա համար էլ մի անգամ ընկա սրանց մեջ, էսպես սովորեցի, քաղաքի խառնակ կյանքը ինձ դուր չի գա»:

Ձննեցի գյուղի եկեղեցին, որը թեև փառավոր ու մեծ շինություն էր, բայց խարխուլ, անխնամ ու կեղտոտ վիճակում էր: Բագրատունյաց առաջին թագավորների՝ այստեղ՝ Երազգավորսում նստած ժամանակից մնացած միակ մնացորդն էր այս եկեղեցին²³:

Այս եկեղեցուց ոչ շատ հեռու՝ դեպի արևելք, մի առանձին բլրակի գլխին կար ավերակի մնացորդ, որին Թագավորի թախտ էին ասում գյուղացիները. երևի մի մեծ ու նշանավոր շինության մնացորդ էր հենց ամբողջ բլրակը: Գյուղի մեջ մի հին ավերակի մնացորդ էլ կար (անշուշտ, եկեղեցու պատ կը լիներ), որի վրա բույն էր դրել արագիլը:

²² Գյուղ Շիրակի մարզում: 1945 թ.-ից վերանվանվել է Երազգավորս:

²³ Հարկ է նկատել, որ նկարագրված եկեղեցին և մյուս հուշարձանները գտնվում են ոչ թե Արարվիս, այլ նրա մոտ՝ Ախուրյանի աջ ափին գտնվող պատմական Երազգավորս կամ Շիրակավան (հետագայի՝ Բաշ-Շորագյալ) գյուղում:

Այս գյուղը դպրոց էլ ուներ, որի ուսուցիչը թվաբանագետ Արմենակ Ահարոնյանն էր: Հայրս շատ էր պարծենում ինձանով, գյուղացիներին ասում էր. «Մի քանի լեզու գիտե»: Այնինչ մի լեզու լրիվ չգիտեի:

1878 թ. օգոստոսի վերջերին ներկայացանք ճեմարանի վարչությանը, որը բոլորովին փոխվել էր: Այվազյանը դուրս էր եկել, և նրա փոխարեն նշանակվել էին Անդրեաս եպիսկոպոսը և Վահան վարդապետ Բաստամյանը: Ուսուցիչները նույնպես փոխվել էին, աչքի էր ընկնում միայն տնօրենը՝ վարդապետ Ստեփանեն: Ինձ բոլորովին մենակ և շատ վատ դրության մեջ զգացի: Սեպտեմբերի 10-ին հրաժարական խնդիրս ներկայացրի, երկար համոզում էին դուրս չգալ, մինչև իսկ խնդիրս պատռեցին, բայց ես պնդեցի իմ ասածը: Սեպտեմբերի 28-ին մեծ եղբորս՝ Հարությունի հետ գնացի Ալեքսանդրապոլ:

Ուսուցչություն

Ճեմարանից հեռանալուց և ուսանողական կյանքիս վերջ տալուց հետո միայն երեք ամիս անգործ մնացի հայրենի քաղաքում:

Դեկտեմբերին Կարսից Ավետիս եղբորս նամակով մեզ մոտ հյուր եկավ ակնեցի դեղագործ Նշան Պլեխանյանը: Նա գնում էր Թիֆլիս՝ Կարսի համար ուսուցիչ վարձելու և հիմնվելիք գրադարանին գրքեր բերելու:

Մի օր Թիֆլիս գնալուց առաջ ինձ հարցրեց.

—Համբարձո՞ւմ, եթե թեզ հրավիրենք Կարս ուսուցչի պաշտոնով, կգա՞ս:

—Ինչո՞ւ չէ,— պատասխանեցի,— միայն թե առայժմ օգնականի պաշտոնով:

Ոչինչ չպատասխանեց նոր ծանոթս ու գնաց:

1879 թ. հունվարի 10-ին Կարսից հեռագիր ստացա, որ ինձ հրավիրում են որպես ուսուցիչ: Ավետիս եղբորս հետ գնացի Նշան էֆենդու մոտ, որն ինձ տարավ և ներկայացրեց Աղվանյան Գրիգորիս վարդապետին՝ քաղաքի հայոց առաջնորդին: Նա էլ սիրով ընդունեց ինձ և հայտնեց.

—Պ. Մտամբուլյան, ձեզ հրավիրել ենք մեր նորաբաց դպրոց՝ որպես երկրորդ ուսուցիչ: Շուտով Թիֆլիսից ձեր ընկերն էլ կգա՝ որպես առաջին ուսուցիչ, իսկ մինչև նրա գալը դպրոցը կհանձնենք ձեզ: Կամաց-կամաց կարգի կբերեք, կծանոթանաք աշակերտների հետ և կաշխատեք բարեխիղճ կերպով վարել ձեր պաշտոնը:

Կարսի դպրոցը և գրադարանը

Կարսում դպրոց և գրադարան գոյություն են ունեցել դեռ տաճկաց ժամանակվանից: Դպրոցն ունեցել է հայտնի ուսուցիչներ՝ Մաղոյան Հակովբ, պատվելի Ահարոնյան և այլն: Տղայոց մասը զետեղված էր եկեղեցու բակում գտնվող երկհարկանի շինության արևմտյան մասում (արևելյանում



Կարսի փոխանորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյան

առաջնորդարանն էր տեղավորվել): Վերին հարկում տղայոց դպրոցն էր, երկու սենյակ, իսկ ներքևի հարկի մի մութ սենյակում օրիորդաց դպրոցն է եղել, որն իմ գնացած ժամանակ գոյություն չի ունեցել. միայն դասարանի կազմությունը ցույց կտար նաև դպրոցի ձևն ու դրությունը: Սենյակից ներս մտնելիս՝ աջ ու ձախ պատերի տակ, հատակից մի ոտք բարձր սատիրների վրա ամրացած էր աշակերտական սեղանների միայն վերին մասը (որտեղ մեզանում գրքերն էինք պահում), որոնց տակը տեղտեղ փռված կային չուլ ու փալաս՝ կեղտոտ ու թոզի մեջ կորած: Երևում էր, որ աշակերտները ծալապատիկ նստելիս են եղել և այդպես դաս պարապել: Իսկ ճակատում՝ երկու փոքր պատուհանների (շատ բարձր էին) տակ, կար բազկաթռռի պես մի բան, աջ ու ձախ կողմերում՝ ճիպոտներ ու ավելներ թափթփած, իսկ նստելատեղում՝ նույնպես պատառտված, մի քանի տեղով գունավոր կտորներով կարկատած, թոզոտ ու կեղտի մեջ կորած միճուկար, որը, ինչպես երևում է, ուսուցչի նստելու տեղն էր: Ինձ ասացին, որ պատերագմից հետո, ուրեմն մի տարի է, որ փակվել է օրիորդաց դպրոցը և հագիվ թե կարելի լինի այս տարի նորից բաց անել:

Դրա վրայի հարկում տղայոց դպրոցին թեև հատկացրած էր երկու սենյակ, բայց մեկը դատարկ էր, սեղաններ չուներ, իսկ մյուսը նույնպես գուրկ էր աշակերտական կանոնավոր սեղաններից: Դակատում փայլում էր ուսուցչի բազկաթռռը՝ կեղտոտ ու պատառտված միճուկարով ծածկված:

Բազկաթռռի կողքին ֆալախկայի համար ճիպոտներն էին, դրանից մի քիչ բարձր պատից կախված փայլում էր նույն ինքը ֆալախկան (մի հաստ

փայտ, արշին ու կես, կամ երկու արշին երկարությամբ մեջտեղից աջ ու ձախ երկու ծակ արած, միջից մի չվանի կտոր օղակաձև անցկացրած), որի մեջ կանցկացնեին պատժող աշակերտի մերկ ոտներ, վեր կը բարձրացնեն և ճիպոտներով կձաղկեն մինչև արյունելը:

Այս էր տղայոց դպրոցի կահ-կարասին: Մրան կից կար մի փոքրիկ ու մութ սենյակ, որը հատկացված է եղել ուսուցչի բնակարանի համար, որի մեջ աչքի ընկան Վենետիկում տպված աշխարհագրական մի քանի հայերեն քարտեզներ և մի կոտորտված երկրագունդ, մի քանի գրքեր՝ նախկին գրադարանից մնացած:

Երևում էր, որ առաջ դպրոցը եղել է բարեկարգ: Պատերազմի պատճառով խանգարվել է դպրոցը, որից հետո օրիորդաց դպրոցն այլևս չի վերաբացվել, իսկ տղայոցն անկանոն կերպով շարունակվել է Մովսես վարժապետի հսկողության տակ: Նա մեռել էր իմ գալուց մի քանի օր առաջ:

Դպրոցն այսպիսի դրության մեջ ինձ հանձնելուց հետո ներկայացրին նաև 25-30-ի չափ աշակերտների, որոնց հետ ես պիտի սկսեի պարապել:

Առաջին գործս եղավ լավ մաքրել տալ դպրոց կոչված սենյակները, ֆալսիկայի ճիպոտները կոտրատեցի աշակերտների ներկայությամբ և հայտնեցի, որ այսուհետև այդպիսի ծեծ չպիտի լինի դպրոցում: Պահանջեցի բոլորի դասագրքերը ու քննության ենթարկեցի՝ իմանալու համար, թե ով որքան է պատրաստված, և ինչ դուրս եկավ: Մոտ տասը տեսակ դասագրքեր ունեին իմ առաջին աշակերտները՝ երկու-երեք տեսակ Քերական, Սաղմոս, Կտակարան, Ավետարան, «Հիսուս որդի» և այլն:

Որը կարդալ գիտեր, գրել չգիտեր, որն էլ գրել գիտեր, կարդալու մեջ կաղում էր: Կային այնպիսիները, որոնք բավական լավ հաշվել գիտեին և թվաբանության սկզբունքները սովորել էին: Անհամբեր սպասում էի ընկերոջս գալուն (որը, ինչպես իմացել և ուրախացել էի, ճեմարանի ընկերներիցս Ե-րդ դասարանից Սիմեոն Հախումյանն էր²⁴): Դպրոցը փոքրիշատե կարգի բերեցի, աշակերտներին երկու մասի բաժանեցի: Առաջինում անգրագետներ և նոր սկսնակ գրագետներն էին, երկրորդում՝ արդեն կարդացողներ, թեև անկանոն ու բազմատեսակ: Մյուս կողմից էլ հրավիրված հյուսներին ցույց էի տալիս, թե ինչպես լինեն աշակերտական սեղանները, մինչև իսկ մի հատ փոքր ձևով ես շինել եմ, որ նրա օրինակով մեծերը պատրաստեն:

24 Սիմեոն Հախումյանը ծնվել է 1859 թ. Շուշում: 1875-1878 թթ. հուլագրության հեղինակի հետ ուսանել է Գևորգյան ճեմարանում: 1878-1880 թթ. դասավանդել է Կարսի Սբ. Լուսավորչյան դպրոցում: 1882-1884 թթ. Շուշում, ապա Թիֆլիսում հրատարակել է «Գործ», 1901-1902 թթ. Փարիզում՝ «Ժամանակ» հանդեսները: Վախճանվել է 1905 թ. Փարիզում:

Դպրոցի պարապմունքներից դուրս օգնում էի Նշան Էֆենդու բերած գրքերը ցուցակագրել և գրադարանը կարգի բերել, որոնց մեջ իմ փնտրած դասագրքերը չերևացին, որպեսզի հմար լինեին աշակերտների հետ կանոնավոր պարապմունքներ սկսել: Նշանն ասաց, որ դասագրքերն իր հետ կրեռի մյուս ուսուցիչը:

Վերջապես փետրուարի սկզբներին²⁵ նա էլ եկավ և դպրոցը գտավ բավական կարգի բերած ու գոհմնաց: Դասագրքերը բաժանեցինք, դասերը որոշեցինք մեր մեջ: Երգեցողության ուսուցչին՝ Կարապետ Մարգարյանցին էլ հրավիրեցինք և սկսեցինք կանոնավոր պարապմունքները: Մինչև անգամ մի բեմ պատրաստեցինք, հարդարեցինք և բարեկենդանին Կարինյանի «Շուշանիկը» ներկայացրինք, որը շատ լավ տպավորություն էր թողել ու բավականին էլ արդյունք բերեց: Որքան տրտունջներ ու բողոքներ լսեցինք մանավանդ հարուստների կողմից, որ իրենց որդոց դասագրքերը փոխել, սուրբ գրքերը խլել, «շուն ու կատվի» գրքեր ենք տվել, որ ծեծը վերջացրել, աշակերտների հետ մինչև իսկ վստահանում ենք խաղալ:

Բայց մենք բոլորովին ուշք չդարձրինք և շարունակում էինք մեր գործը: Գրադարանը բավական կարգի ընկավ, որի համար կազմեցինք հոգաբարձություն (Գևորգ Միրիմանյանց, Հովհաննես Էլենյան), Նշան Պլեոխանյանն ընդհանուր հսկիչ էր: Ժողովրդի համար Հախումյանը սկսեց կիրակնօրյա դասախոսություններ կարդալ:

1879 թ. հուլիսին Արաբկիրի առաջնորդ Եզնիկ վարդապետը Էջմիածնից եպիսկոպոս ձեռնադրված վերադառնում էր իր տեղը, ներկա եղավ կիրակնօրյա դասախոսությանը: Հախումյանը քննադատեց Լուսավորչի գործունեությունը և ցույց տվեց այդ գործունեության վնասակար կողմերը ևս (զվսավորապես կռապաշտական գրքերն ու գրականությունը ոչնչացնելը)²⁶: Այդ դասախոսությունը դուր չեկավ հայ եպիսկոպոսին: Հին ու նորի կռիվ էր, ուրիշ կերպ էլ չպիտի լիներ:

25 Դպրոցը բացվել է 1879 թ. փետրվարի սկզբին. «Վերջապես Դարսի հայոց ուսումնարանի բարեկարգությունը, որ հակառակ նրա արիաջան առաջնորդի և հոգաբարձուների ջերմ ցանկութեան և աշխատանաց այսքան ժամանակ յետաձգվում էր ուսուցիչներ չը գտնելու պատճառով, այս փետրուարի սկզբից սկսեց կանոնաւոր ուղղութեան մեջ մտնել նոր ուսուցիչների գալովը: Ուսումնարանում առ այժմ հաւաքւած են 150-ի չափ մանուկներ, դաս են տրոււմ երկու դասատանց մեջ... Ժողովրդեան մի մասը շատ համակրում է, իսկ միս մասը, նախապաշարեալները, շատ խորթ և սառն արիամարհանքով են նայում այն հանգամանքի վրա, որ ուսումնարանում փոխանակ Սաղմոս և Նարեկի, դաս են տալիս «Մայրենի լեզու» դասագիրքը, նրանց սրտին այս շատ ծանր է եկել և աններելի մեղք են համարում» («Մշակ», 1879, № 20, էջ 2):

26 Կարծրացած խավարը սասանող Ս. Հախումյանի այդ դասախոսությունն իր ժամանակի համար այն աստիճան արտառոց է նկատվել, որ իր արձագանքն է գտել նաև մամուլում՝ «Մշակ», 1879, № 114, էջ 2:

Թաղապետներ Առաքել Սաղաթեյանը, Հովհաննես Դոխիկյանը և Ստեփան Սաղաթեյանը դպրոցի հոգաբարձուներն էին:

Չնայելով բազմաթիվ ներքին և արտաքին խոչընդոտների՝ բավական կանոնավորեցինք դպրոցն էլ, գրադարանն էլ, երկուսն էլ Սբ. Լուսավորչյան անունով կնքված էին արդեն: Վերջինը հետզհետե հարստանում էր գրքերով ու լրագրերով, մի կողմից նվերներ էինք ստանում, մյուս կողմից էլ գնում անդամավճարներից ու դրամական նվերների ստացած արդյունքից:

Առաջին վեցամսյակում (1879 թ.) դպրոցական աշխատավորներիս մեջ մտավ նաև ախլոցիացի բժիշկ Ալեքսանդր Ղազազյանը: Նա ամենայն պատրաստակամությամբ հանձն առավ դպրոցի տեսչությունը ձրի կատարել և ամեն ջանք գործ դնել թե՛ տղայոց դպրոցը բարեկարգելու, թե՛ օրիորդաց դպրոցը վերաբանալու:

Անիում

1879 թ. օգոստոսի վերջերին Աղվանյան վարդապետի հետ ձիով գնացի Անի: Առաջին անգամն էր, որ ես տեսնում էի այդ պատմական ավերակները և մեր նախնյաց երջանիկ ժամանակներից թողած հրաշալիքները:

Անիում էր լուսանկարիչ Հովհաննես Քյուրքչյանը: Մայր եկեղեցու խորանի մեջ էր իր արհեստանոցը և նկարում էր Անիի տեսարանները, որոնցով կազմեց իր հայտնի «Ալբոմը»՝ միակը իր տեսակի մեջ: Ա՛խ, որքա՛ն կուզեի ես էլ մասնակից լինեի այդ աշխատանքներին:

–Մնա՛ մոտս,–ասում էր պ. Քյուրքչյանը,–և աշխատի՛ր, ես կսովորեցնեմ լուսանկարչություն, որը կարող է պետք գալ կյանքում»: Ինչպե՞ս կարող էի մնալ նրա մոտ աշխատելու, քանի որ կապված էի դպրոցական գործին:

Բացի Քյուրքչյանից՝ Անիում հանդիպեցինք Ալեքսանդրապոլի ուսուցչական խմբին տեսուչ Աբիսողոս Հովհաննիսյանի գլխավորությամբ: Նրանք հրավիրել և Անի էին բերել հայտնի բանաստեղծ Պատկանյանին: Նրանց հետ էր և աշուղ Ջիվանու խումբը: Քյուրքչյանը նկարեց այդ խմբի պատկերը, որից մի հատ էլ ես էի ձեռք բերել և սրբությամբ պահում էի: Երրորդ օրը դժվարությամբ բաժանվեցինք այդ խմբից և Աղվանյանի հետ վերադարձանք Կարս: Դռնավանք էլ հանդիպեցինք, որի զանգակատան սքանչելի զարդանկարները երբեք-երբեք չեն հեռանում մտքիցս, իսկ Աշոտ թագավորի անշուք գերեզմանը մինչև օրս էլ ճնշում է հոգիս:

1879/80 ուստարի

Վերադառնալով Կարս՝ տեսուչ բժիշկ Ա. Ղազազյանին հայտնեցի վարժուհու համար կատարած ջանքերի և դիմումների, ինչպես նաև որպես վարժուհի՝ հարսիս հորեղբոր աղջկան՝ Եսթեր Թա-

դեսուի Ասանթյանին հրավիրելու մասին, որը սովորել էր Արդուքյան օրիորդաց դպրոցում:

Եռանդուն ջանքերով աշխատանք էր տարվում օրիորդաց դպրոցը վերաբանալու: Ունեցած դպրոցական շինությունը պետք էր վերանորոգել, երեք պատրաստական սենյակները՝ տղայոց, մեկ կամ առավելը երկուսն էլ՝ օրիորդաց համար: Դպրոցին հատկացրած մասը միայն երկու սենյակ ուներ, որին կից մի շատ փոքրիկն էլ կար՝ ուսուցչի համար հատկացրած, բայց այդ էլ անցյալ բարեկենդանին բեմի էինք վերածել և միացրել պատրաստականին: Այն բավական երկար սենյակ էր ու ներկայացման ժամանակ դահլիճի տեղ էր ծառայում: Կարելի էր այդ սենյակը երկուսի վերածել տախտակե շարժական պատով, բայց այդ էլ շատ անհարմարություններ ուներ: Օրիորդաց բաժինը ներքևի հարկում բաղկացած էր միայն մի սենյակից՝ երկու շատ փոքր լուսամուտներով (կես արշին բարձրությամբ և 1/4 արշին լայնությամբ), շատ մութ ու անհարմար էր դասատվության համար: Ներքևի հարկում՝ առաջնորդարանի տակը, մի սենյակ էլ կար, որ առաջ ընդունարանի և հյուրերի համար էր հատկացված, բայց այդտեղ էլ արդեն գրադարանն էր տեղավորված, որի գրադարանապետը ես էի²⁷:

Շատ ծախսի կարոտ էր այդ բոլորը դասարանների վերածելու համար, այն էլ եթե հաջորդ Աղվանյան վարդապետը համաձայներ փոխադրվել վարի կողմը՝ եկեղեցուն կից (արևելյան կողմից) գտնված տանը, բայց վարդապետը բոլորովին միտք չուներ դպրոցի համար զիջել իր երկու սենյակները, որտեղից ամբողջ քաղաքի ու դաշտավայրի վրա սիրուն տեսարան էր բացվում: Հոգաբարձությունը ստիպված էր օրիորդաց դպրոցի համար վարձու տուն գտնել՝ գոնե երկու սենյակից բաղկացած: Որոշեցին վարձել քարե կամրջի ձախ կողմում (աջից բարձրանում էր եկեղեցին և հաջորդարան-դպրոցը)՝ նահանգապետի տան դիմաց գտնված երկհարկանի մի տուն, որի լուսամուտները գետի վրայից նայում են եկեղեցուն և դպրոցին: Թեև այդ տունն էլ միանգամայն անհարմար էր դպրոցի համար, մանավանդ որ բակ էլ չուներ խաղալու համար, բայց հոգաբարձությունն անճարացած որոշել էր անպատճառ բաց անել և գոնե մի տարի այդտեղ տեղավորել օրիորդաց դպրոցը:

27 Գրադարանը բացվել է 1878 թ. և նվիրատվությունների շնորհիվ արդեն 1879 թ. օգոստոսին ուներ 750 կտոր գիրք և լրագիր (նվիրատուների անվանացանկը տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880, № 9, էջ 3: Հոդվածը հեղինակել են ատենապետ Նշան Պլեխանյանը և հուշագիրը՝ ատենադպիր Համբարձում Ստամբոլցյանը 1879 թ. օգոստոսի 20-ին): Համաձայն մեկ այլ տեղեկության՝ դպրոցի գրադարանը բացվել է 1879 թ. փետրվարի 18-ին. բացման հանդեսին ելույթ են ունեցել ուսուցիչներ Ս. Հախումյանը, Հակոբ Մամիկոնյանը (կարմեցի) և Նշան Պլեխանյանը (* * *, Նամակ Դարսից, «Մշակ», 1879, № 31, էջ 2):

Նոր ուսուցիչներ էին վարձված՝ կրոնի համար՝ Ալեքսանդրապոլի Բայանդուր գյուղից Մելքիսեդեկ քահանա Մանուկյանը, երգի համար՝ Պետրոս Աղուզումյանը (ձայնագրագետ), ռուսաց լեզվի համար՝ ոմն Հակովբյանը, որ չափազանց հարբեցող մի անձնավորություն էր: Վարժուհի դեռ չէր գտնվել, վերջիվերջո ինձ հանձնարարեցին, որ գրեմ օրհորդ Ասանթյանին: Եսթեր Ասանթյանը եկավ Կարս և ստանձնեց վարժուհու պաշտոնը: Բայց դպրոցը չբացվեց, որովհետև նահանգապետ Ֆրանկին գեներալը արգելեց եղավ, թե մենք իրավունք չունինք «դպրոց բանալու առանց Լուսավորության նախագահից թույլտվություն ստանալու»:

Հոգաբարձության մոտ՝ հաջորդի սենյակում հավաքվեցին ռուսագետ և օրենսգետ մարդիկ՝ բժիշկ Կառկաճյանը, Գաբրիել Հարությունյանը և ուրիշներ, շարունակ խորհրդակցություններ էին տեղի ունենում, գրագրություն էր փոխանակվում նահանգապետի և Էջմիածնի կաթողիկոսի և Տփլիսի դպրոցական հոգաբարձուի միջև, որը տևեց մոտ երկու ամիս: Վերջապես թույլ տրվեց դպրոցները բանալ:

Օրհորդաց դպրոցի բացման հանդեսին մեծ բազմություն էր հավաքված: Կանանց կրթության նշանակության մասին խոսեցին տեսուչ բժ. Ղազարյանը, Հախումյանը, երգեր երգեցին և մաղթանքով հանդեսը վերջացրին: Հետո ուսուցչական խումբը դասերը բաժանեց և սկսեց պարապմունքները տղայոց երեք և օրհորդաց երկու բաժանմունքներում²⁸:

Ուսուցիչներն ընդամենը վեց հոգի էին՝ տեր Մելքիսեդեկ քահանա Մանուկյան, Ս. Հախումյան, Հակովբյան, օր. Ասանթյան, Պետրոս Աղուզումյան և ես:

Գպրոցական գործը սովորական կարգով ընթանում էր, միայն մի փոփոխություն տեղի ունեցավ: Հունվարի տոներից հետո հեռացավ ռուսաց լեզվի ուսուցիչ Հակովբյանը: Նրա դասերը ձրիաբար պարապելու հանձն առավ տեսչի ընկերներից ղզլարեցի բժիշկ Կառկաճյանը, որը թատրոնում էլ շատ մեծ օգնություն և ծառայություն մատուցեց՝ հօգուտ դպրոցների պահպանության:

Ուսումնական տարին և քննությունները վերջացան: Միմեռն Հախումյանն իսպառ հեռացավ Կարսից կնոջ հետ:

Անցավ Կարսի դպրոցների երրորդ՝ 1879/80 ուսումնական տարին:

Գրադարանը հետզհետե ընդարձակվում ու հարստանում էր գրքերով և լրագրերով, որի համար առանձին հոգաբարձություն էր ընտրված՝ կարնեցի Հովհաննես Էլպեյեանց, տփլիսեցի Գևորգ Միրիմանյանց և այլք:

²⁸ Կարսի օրհորդաց Հռիփսիմյան (Շուշանիկյան) նորաբաց դպրոցը հիշվում է 1879 թ. սեպտեմբերին («Մեղու Հայաստանի», 1879, № 74, էջ 4):

Ամռանը պետք է Ալեքսանդրապոլ գնայի: Տեսուչն ինձ հայտնեց, որ մի քանի նոր ուսուցիչներ են հարկավոր, լրագրերում հայտարարություն կտրվի, ես էլ աչքի առաջ ունենամ Հախումյանի տեղը: Գպրոցների ծավալը պիտի ընդարձակվեր. տղայոց դպրոցը չորս և օրհորդացը երեք բաժանմունքներից պիտի բաղկանային: Առնվազն 7-8 ուսուցիչ էր հարկավոր, իսկ ներկայիս կայինք չորսը: Եթե բժիշկ Կառկաճյանին էլ չհաշվեինք, կմնայինք երեք հոգի՝ տեր Մելքիսեդեկը, ես և օր. Ասանթյանը:

Ալեքսանդրապոլում պատահեցի մանկության ընկեր և ճեմարանում ինձ հետ սովորող Մեղրակ Գրիգորյանցին, որն Ախալքալաքում ուսուցչական պաշտոն էր վարել անցյալ տարի: Խոսեցի Կարս փոխադրվելու մասին. նա ասաց, որ ձայնագրագետ Հայրապետ Աղամյանցն էլ իր հետ էր պաշտոնավարում, նրան էլ կարող է բերել տալ:

Օգոստոսի սկզբներին շտապեցի գնալ Կարս:

Կարսի միակ Սբ. Աստվածածին եկեղեցում լուսարարի պաշտոնով ծառայում էր Խաչատուր Ալեքսանյան Էհրամճյանցը: Նա ինձ հրավիրեց դիմավորելու իր քրոջը, որ օգոստոսի առաջին կեսին գալու էր Էրզրումից: Որոշյալ օրը՝ ճաշից հետո, գնացինք Փաշալը-չայիր կոչվող, քաղաքի հարավային կողմում գտնվող ընդարձակ խոտհարքի տափարակ տեղը՝ Կոտրած եկեղեցի կոչված ավերակ վանքի մոտ, որ գտնվում էր Կարս գետի արևմտյան ափին: Իջանք կառքերից և սպասում էինք Սարիդամիշից եկող ֆուրգոններից: Խաչատուրն ընդառաջ գնաց և ֆուրգոններից մեկի մոտ կանգնեց: Այնտեղից իջան մի կին և 8-10 տարեկան մի տղա, որոնց հետ նա համբուրվեց: Խաչատուրը ներկայացրեց ու ծանոթացրեց իր քրոջ՝ Գայանեի հետ, որ մի համակրելի օրհորդ էր՝ ըստ երևույթին 18-19 տարեկան: Հետի տղան էլ փոքր եղբայրն էր՝ Սկրտիչը:

1880/1881 ուստարի

Ամռանը դպրոցների հոգաբարձությունը դպրոցական շենքը վերանորոգեց: Առաջնորդ Աղվանյան վարդապետը փոխադրվեց նոր գնված բնակարանը, որ գտնվում էր եկեղեցու կողքին հարավարևելյան կողմից: Թեև երկհարկանի, բայց անշուք էր, որի պատճառով հայր սուրբը չէր ուզում իր բնակարանից գրկվել:

Վրայի հարկը՝ հաջորդարանը բարձրանալու սանդուղքները քանդեցին և դրսից շինեցին պատըզ-գամբի հետ միասին, որով հաջորդարանը կազմեց երեք ընդարձակ սենյակ, մեկն էլ կիսապատով կտրեցին և ստացան չորս դասարան, որտեղ տեղավորվեց տղայոց դպրոցը: Արևմտյան մասն էլ պատրաստվեց օրհորդաց դպրոցի համար երեք բաժանմունքներով: Դահլիճը, որ թատրոնի համար էլ էր ծառայում, տախտակով կիսվեց երկու դասարանի

համար: Մեկն էլ արդեն կար՝ ուսուցչի հին սենյակը: Այն բեռ էր դարձած և ծառայում էր ուսուցչանոցի տեղ:

Հին ուսուցիչներիս՝ Մելքիսեդեկ քահանա Մանուկյանի, օր. Եսթեր Ասանթեթյանի և իմ կողքին նոր ուսուցիչներ ևս ավելացան՝ վանեցի Խաչատուր Դարբինյան (առաջնորդի գրագիրը), Հարություն Փիլոյան: Մեպտեմբերի վերջերին եկան Սեդրակ Գրիգորյանը և Հայրապետ Ադամյանցը երգեցողության և դպրապետության համար: Կանոնավոր դասերը սկսվեցին՝ շնորհիվ տեսուչ բժիշկներ Ղազազյանի և նրա ընկեր դղարեցի Գևորգ Կաճկաճյանի: Թատերական գործն էլ ընդարձակվեց և կանոնավորվեց:

Տիրացու Խաչատուր Էհրամճյանցի քույրը՝ Գայանեն ևս ընդունվեց ուսուցչական խմբի մեջ՝ որպես վարժուհու օգնական:

Թատրոնին ու երեկույթներին մեծ եռանդով ուժ տալու պատճառն էլ այն էր, որ դպրոցների նյութական նպաստների մեծ մասը դրանցից էր ձեռք բերվում, և առանց դրանց չէր կարելի դպրոցները պահել²⁹: Պետք է անկեղծորեն խոստովանել, որ բժ. Ղազազյանը և կինը՝ Մոֆյան, դպրոցի պահապան հրեշտակներն էին, իսկ Կաճկաճյանը՝ թատրոնի հոգին, որի շնորհիվ ներկայացումները մեծ հաջողություն էին գտնում:

Ամեն ամիս մի ներկայացում էինք տալիս, որի ժամանակ ղեկորացիաները և կուլիսները պատրաստելու աշխատանքը ծանրացած էր գրեթե միայն ինձ վրա: Ինձ օգնում էր մի տիրացու՝ Սարգիս Քոթանջյան անունով, որին Աղվանյան վարդապետը բերել էր Օրթա-Քյադիկլար գյուղից լավ ձայն ունենալու պատճառով: Սա Հայրապետ Ադամյանի մոտ ձայնագրություն էր սովորում, եկեղեցում տիրացություն անում, գրադարանում ծառայում և երբեմն էլ դասեր լսելով՝ ուսման մեջ պատրաստվում:

1880 թ. նոյեմբերի 30-ին ներկայացրինք «Թուրք խաղացողի կյանքը»:

1881 թ. Նոր տարվա և Ծննդյան տոներից հետո Ադամյանը դիմում է ինքնասպանության, որի պատճառով ձայնագրության դասերը ժամանակավորապես հանձնվում են Հարություն Փիլոյանին: Դասերն ու ներկայացումները շարունակվեցին, բայց այդ ողբերգական պատահարը խոր ու տխուր

տպավորություն էր թողել: Զննությունները վերջացան հունիսին, և ուսուցիչները ցրվեցին հանգստանալու:

1881/1882 ուստարի

Այս ուստարվա ուսուցչական խմբի մեջ մի առանձին փոփոխություն չեղավ, միայն ձայնագրության դասերի համար հրավիրվեց Իգդիր-Մավեցի Ալեքսանդր Շավարշյանը, որը ճեմարանի մեր ընկերներից էր: Խեղճի ձայնը բոլորովին կտրվեց և չկարողացավ իր պաշտոնը մինչև վերջ կատարել: Նրան հաջորդեց Սարգիս Քոթանջյանը:

Աղվանյան վարդապետի մոտ էին եկել Օլթիի կողմից տասը գյուղի ներկայացուցիչներ, որոնց պատերը մոտ 200 տարի առաջ Լալա Մուստաֆա փաշայի³⁰ կողմից մահմեդականացվել են: Այժմ տաճկաց լծից ազատվելով՝ եկել, իրենց պապերից ավանդ մնացած եկեղեցական անոթներ՝ սկիի, մասնատուփ, մաղզմա, խաչ ու ավետարան, շուրջառ ու փորուրար էին բերել, խնդրել էին վարդապետին ընդունել իրենց նորից հայ եկեղեցու ծոցը: Որքան սրտառու էին սրանց դիմումն ու արտասվախառն խնդիրը: Վարդապետը, չուզելով ինքնագլուխ մի այդպիսի գործ կատարել, դիմել էր կաթողիկոսին, վերջինս էլ փոխարքային, որի պատճառով քննություն էր կատարվում: Վերջն էլ, շնորհիվ ռուս քաղաքականության և պարսիկ պաշտոնյաների, խեղճ գյուղացուց խնդիրը մնաց անհետևանք: Տասը գյուղերից միայն երեքը մնացին հաստատ իրենց որոշման մեջ: Աղվանյան վարդապետը պատրաստվում էր 1882 թ. ամառը գնալ և ընդունել նրանց հայ եկեղեցու ծոցը:

1882/1883 ուստարի

Այս ուսումնական տարվա սկզբին ուսուցչական կազմի մեջ բավական փոփոխություն եղավ: Օրիորդ Ասանթեթյանն արդեն հեռացել էր, նրա տեղը վարժուհի հրավիրեցին տիկին Եղիսաբեթ Ամատունուն Երևանից: Նրա ամուսինն էլ՝ Կարապետը, ստորին դասարանների ռուսաց լեզվի դասերն էր ստանձնել: Բարձր դասարանների համար հրավիրեցին սպա Մակար Պապյանին: Հներից մնում էինք ես, Մելքիսեդեկ քահանա Մանուկյանը, Սեդրակ Գրիգորյանը, Խաչատուր Դարբինյանը, օր. Էհրամճյանցը, Սարգիս Քոթանջյանը: Նույնպես հրավիրեցին աշխարհագրության և պատմության դասերի համար Սարգիս Մուպաեաճյանին (կաթողիկե)՝ ավարտած Պոլսում: Բժիշկներ Ղազազյանը և Տեր-Հարությունյանը դարձյալ մնում էին իրենց բարձր դերում, ձրի տեսչություն անում, դասեր տալիս, նվիրատվություններ հավաքում, թատրոնական ներկայացումներն ու երեկույթները ղեկավարում:

29 Կարս քաղաքի երկսեռ դպրոցների նյութական դրությունը բարելավելու նպատակով 1880 թ. ստեղծվում է Հայ թատերասիրաց ընկերությունը, որը նույն թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բեմադրում է երեք ներկայացում: Այս ընկերության անդամներն էին Ալեքսանդր և Մոֆյա Ղազազյանները, Ռ. և Ա. Մելիք-Արամյանցները, Եսթեր Ասանթեթյանը, Գայանե Էհրամճյանցը, Գևորգ Կաճկաճյանը, Սեդրակ Գրիգորյանը, Ս. Արաբաջյանցը, Ա. Մանուկյանցը, Գ. Խոջայանցը, Ե. Տեր-Գաբրիելյանցը, Հ. Փիլոյանցը և հուշագրության հեղինակը՝ Համբարձում (Խորեն) Ստամբուլցյանը (Դարբինեանց Խ., Կարս, «Մեղու Հայաստանի», 1881, № 8, էջ 3):

30 Լալա Մուստաֆա փաշայի (1500-1580) մասին տես Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, Գ, Երևան, 1967:



Ուսուցիչ Խորեն Ստամբուլցյանը կնոջ և զավակների հետ



Ուսուցիչ Խորեն Ստամբուլցյանը (նստած)

Թ. Կաճկաճյանի՝ Կաղզվան փոխադրվելը մեծ հարված տվեց թատրոնին, բայց էլի մեկ-մեկ գալիս, մասնակցում էր: Փիլոյան Հարությունն էլ փոխադրվեց Կաղզվանի դպրոցը: Կաճկաճյանը ինձ էլ համոզում էր տեղափոխվել, բայց ես մերժեցի և վերջում էլ շատ զոջացի:

Այս կազմով դպրոցական աշխատությունները սկսվեցին և շարունակվում էին եռանդով ու սիրով:

Ամեն ամիս թատրոնական ներկայացում էր տրվում սիրողների օգնությամբ, որոնք շատ հաջող էին անցնում: Ամեն տարվա պես ծրագրում էինք Նոր տարին դիմավորելու երեկույթ կազմել:

Անցավ ուստարվա առաջին կիսամյակը: Ծննդյան տոներից հետո ամուսնացա Գայանե Էնրամճյանցի հետ:

1883/1884 ուստարի

Այս ուսումնական տարին ուսուցչական կազմից դուրս գնացին Մակար Պապյանը, Կարապետ և Եղիսաբեթ Ամատունի ամուսինները: Նրանց տեղը հրավիրեցին ախլցխացի եղբայր ու քույր Խաչատուր ու Նեկտար Չիլինգարյաններին և Տիխիսից ճեմարանի ուսանող Գրիգորիս Երզնկյանին, որոնք, հներիս հետ մի նոր ուժ կազմելով, սկսեցին դպրոցական գործն ավելի եռանդուն կերպով:

Ընտանեկան կյանքս ընթանում էր խաղաղ ու երջանիկ: Նոյեմբերի մեջ Գայանեն ինձ պարգևեց իմ անդրանիկ ու սիրունիկ Արշավիրիս:

Դպրոցական գործը և ներկայացումներն իրենց կարգով առաջ էին գնում: Հաջող կերպով անցկացրինք նաև այս ուստարին: Միայն սիրտս որոշ կերպով պաղել էր: Կարսի դպրոցներում արդարությունը և անաչառությունը տեղ էին տվել կեղծավորու-

թյան և եսականության, մաքուր ու անբիծ աշխատանքը չէր գնահատվում: Դրա համար էլ մտածում էի ուրիշ տեղ փոխադրվել, բայց մի կողմից էլ ավստում էի դպրոցական գործի վրա հինգ և կես տարվա անընդհատ և անխոնջ աշխատանքս:

Ամռանը լրագրերում կարդացի, որ Փամբակի Ղարաքիլիսա մեծ գյուղի համար ուսուցչի և վարժուհու կարիք կա ձեռնտու պայմաններով: Մտածում էի տեղափոխվել այդ գյուղը և հեռու քաղաքային ժխտրից և ընտանեկան տարածայնություններից՝ խաղաղ ու հանգիստ սրտով պարապել սիրածս գործով՝ մատաղ սերնդի դաստիարակությամբ:

Խորհրդակցեցի բժ. Ղազազյանի հետ, տեսա, որ նա էլ ինձ նման հիասթափված է Կարսի գործունեությամբ և որոշել է հրաժարվել դպրոցների տեսչի պաշտոնից: Խորհրդակցեցի նաև կնոջս հետ: Խնդրագրով դիմեցի Ղարաքիլիսայի դպրոցների հոգաբարձությանը և շուտով էլ պատասխան ստացա, որ ընդունվում են խնդիրս և առաջարկած պայմաններս: Ինձ հրավիրում են սեպտեմբերի վերջին լինել նոր պաշտոնատեղում՝ տեղական պայմաններին համապատասխան:

Հրաժարական եմ տալիս Կարսում ուսուցչության պաշտոնից, թեև սրտի կսկիծով: Մեծ դժվարությամբ է ընդունվում հրաժարականս:

Բայց վիճակն արդեն ձգված էր և ես այլևս չէի կարող հետ կենալ որոշումից: Մրտի խորին կսկիծով թողեցի սիրածս Կարսը, ուր հինգ և կես տարի անընդհատ և անխոնջ պաշտոնավարել էի, դրել երիտասարդական ուժս և մաքուր ու անբիծ զգացումներս մատաղ սերնդի դաստիարակության գործում: Դիմում էի մութ ու անորոշ ապագա, թեև նույն գործով և պաշտոնով:

ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ³¹

Կարսի անկման նախօրեակին

Հայաստանի Հանրապետության գործերը ընդհանրապես լաւ վիճակի մէջ էին երևում 1920 թ. երկրորդ կիսամեակի սկզբներում: Գեորգիսում հայ հերոսական դիմադրութիւնները մեծ յոյսեր էին տալիս երկիրը խաղաղելու մասին, որին այնքան կարօտ էր տնտեսապէս քայքայուած հայ ժողովուրդը: Կարսի շրջանում մասնաւորապէս ամէնքը հաւատացած էին, որ շուտով ոչ միայն մինչև հին սահմանը կմաքրուի թշնամիներից, այլև Էրզրումն էլ կը նւաճի, և Մեծ Հայաստանի հիմքը կը դրուի: Քաղաքում մեծ եռանդով կազմակերպում էին ինքնապաշտպանութեան գործը: Ամէն օր հաւաքում էին Առաքելոց եկեղեցւոյ բակը 30-40 տարիք ունեցող քաղաքացիներ, վաշտեր կազմած՝ զինավարժութեամբ պարապում: Ութն վաշտեր արդէն պատրաստուած էին, որոնք հերթով գնում էին քաղաքի պետական հիմնարկութիւնները և քաղաքի շուրջը գտնուած ամրութիւնները պահպանելու, որպէսզի զօրքերն ազատ լինեն ներքին պաշտպանութիւնից:

Բացի այդ ութն վաշտերից՝ 40-ից վեր տարիք ունեցող քաղաքացիներ գիշերային պահպանութիւնների խմբեր էին պատրաստում և ամբողջ գիշերները շրջում քաղաքի փողոցներում, կայարանի կողմերը, քաղաքից դուրս՝ ճանապարհների վերայ հսկում ու պահպանում: Կանայքն էլ յետ չէին մնում տղամարդկանցից, առանձին կօմիտէ էին կազմել: Նորանց կօմիտէն ամէն միջոց գործ էր դնում զօրքերի համար դրամական և այլ նւերներ հաւաքել՝ լուցկի, ծխախոտ, թէյ, շաքար կիտել, գուլպա ու ձեռնոցներ գործել և իւր անդամների ձեռքով զօրաճակատ ուղարկել, զօրքերին բաժանել, խրախուսել ու քաջալերել նորանց:

Ամէն բան խաղաղ ու սպառնալիք էր երևում: Բայց իրականութիւնը այդպէս չէ եղել: Կարսի 20-30.000-ի հասնող զօրաբանակը, որ լաւ զինուած ու հազար-

ւած էր անգլիական զենքով ու շորերով, հետզհետէ յետ էր նահանջում: Ռուսական Բասէնը թուրքերի ձեռքն էր, և այնտեղի հայ գիւղացիք թափառում էին Սարիղամիշի և Կարսի սահմաններում: Մի օր էլ լուր տարածեց, որ Սարիղամիշի ժողովուրդն ամէն բան թողել ու փախել է, իսկ Կաղզվանի բնակչութիւնը հրաման է ստացել տեղահան լինելու: Այս հանգամանքը խուճապի մատնեց նաև Կարսի հարաւարեւելեան եւ արեւմտեան գիւղերի բնակիչներին: Ժողովուրդը նորից բռնեց գաղթի ճանապարհը: 1918 թ. նման նորից լցում են Կարս, նորից նոյն թշուառ պատկերները փողոցներում ու պատերի տակ: Շատերն անցնում էին Շիրակի գիւղերը եւ ցրում աւելի հեռուն՝ ապահովութիւն ու հանգիստ գտնելու:

Օլթիի կողմերը, որ մեր զօրքը մինչևեւ աղահանքերը առաջ էր գնացել, նորից յետ են քաշուել մինչև Մերդենեկ: Ասում էին, որ ինժեներ Խատիսեանը ատօմօբիլով գնացել է Օլթիի ածխահանքերը դիտելու, յարձակման է ենթարկել ու սպանել: Մերդենեկի զօրաց հրամանատարը քանիցս յայտնել է դրութեան լրջութիւնը եւ օգնութիւն խնդրել: Բայց ուշադրութիւն դարձնող չէ եղել: Գիտակ մարդիկ պատմել են, որ Երեւանից օգնութիւն ուղարկելուն արգելք են եղել Ջամալեանն ու Գիւլխանդանեանը, որոնք այդ ժամանակ երկաթուղու վագօնները զբաղեցրել են Երեւանից բամբակ փոխադրելով Վրաստան՝ վախիտայ կազմելու համար: Օգոստոսի վերջերում էլ լուր տարածեց, որ Մերդենեկի կողմերում սպանել են կաղզվանցի պօրուչիկ Կարապետ Կարապետեանը եւ չորս զինուորներ, որոնց դիակները օգոստոսի 29-ին բերին Կարս՝ Առաքելոց եկեղեցին: Կարապետեանին տարան Կաղզվան թաղելու, իսկ չորս զինուորներին, որոց մէկն անգլուխ էր եւ սոսկալի վիճակում տեղ հասցրած, մեծ դժարութեամբ մաքրեցինք ու պատով թաղեցինք:

Չնայելով այս ամէնին՝ քաղաքացիք հանգիստ էին ու իրանց սպառնալիք էին կարծում, մանաւանդ լուր էր տարածուել, որ յայտնի խմբապետներ Սեպուհն ու Սմբատը իրեանց խմբերով հասել են Արդեշահաղապօլ եւ այսօր կամ վաղը կը լինեն Կարսում: Բայց սեպտեմբեր 30-ի գիշերը ժամը 1-ից քաղաքացիքն էլ խուճապի մատնեցին: Գիշերայ ժամը 2-ին փեսաս՝ սպայ Լեւոն Աբրահամեանը, մարդ է ուղարկում ինձ մոտ, քնից արթնացնում եւ աղջիկներիս հետ հրաւիրում իւր մօտ՝ դրութեան մասին խորհելու եւ մի բան անելու: Կարսը տակն ու վերայ է եղած, մտնում են մեր տան դէմը գտնուած Ա

31 Կարսի անկման մասին տե՛ս **Քարալեան Ա.**, Կարսի անկումը, «Հայրենիք», 1923, № 12: **Աղամյան Ա.**, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի օրագիրը և հուշերը, «Էջմիածին», 1970, ԺԱ, էջ 50-56: **Ալեքսանդրյան Ա.**, Կարս. 1920-21, Երևան, 1986: **Ուլուքաբջյան Բ.**, Հայագետ ու հոգևորական մեծ գործիչ Գարեգին Հովսեփյանի ձեռագիրը, «ԲՀԱ», 1989, № 3, էջ 105-161: **Ավետիսյան Մ.**, Փաստաթուղթ Կարսի հայ բնակչության կոտորածի մասին, «ԲՀԱ», 2006, № 1, էջ 100-108: **Տազդճեան Գ.**, Ոգուն չապալինելու արդիւնքը (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին – Գարեգին արք. Յովսէփեանցի յուշագրութիւնը եւ փաստաթղթեր), Երեւան, 2002: **Տազդճեան Գ.**, Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երեւան, 2007 և այլն:

քաղաքամասի կօմիսարիատը, որպեսզի մի դրական լուր իմանամ: Ոչ ոք չկայ, ամեն բան տակն ու վերայ արած՝ թողել փախել են:

Գնում ենք փեսայիս տունը: Ճանապարհին հանդիպում են շալկորած մարդիկ, կանայք, երեխաներ ու աղջիկներ, որոնք լացով ու կոծով դիմում են դէպի կայարանը, հարցնում ենք սորան-նորան, եւ ոչ ոք չի կարողանում մի դրական բան պատմել: Մտնում ենք փեսայիս տունը: Փեսայիս տանը իմացանք, որ քաղաքի եւ գոբքի ղեկավարները այս գիշեր կամեցել են իրեանց ընտանիքն ու գոյքը հեռացնել քաղաքից: Ժողովուրդը տեսել է, իմացել ու խուճապի է մատնել: Ամէն ոք, ով ինչ որ կարողացել է, վերցրել ու շտապել է կայարան, ուր ինքնապաշտպանութեան գնդից քաղաքացի պահակները արգելք են լինում, նոյնիսկ ծեծով ու անպատուութեամբ յետ են դարձնում գլխատրոպէս մեծերին: Գնացքներին էլ թոյլ չեն տալիս շարժելու:

Արոշեցինք մինչեւ առաւօտ տեղից չշարժել, միայն պատրաստութիւն տեսնել եւ սպասել դրութեան պարզելուն: Առաւօտեան իմացանք, որ զօրաճակատի դրութիւնը մի առանձին փոփոխութիւն չէ ստացել դէպի վատը, որ տեղիք տար խուճապի, միայն գիշերը՝ ժամը 9-ից բժիշկ Ղազանճեանի տանը ժողով են ունեցել պ.պ. նահանգապետը, օգնականը, քաղաքագլուխը, սորա օգնական Բզնունին, մի երկու մինիստրների լիազօրներ, կարծեմ զօրքերի հրամանատար Յովսէփեանը³² եւ այլն: Դրութիւնը քննել եւ յարմար են դատել իրենց ընտանիքն ու գոյքը հեռացնել Կարսից եւ այդ գիշերն էլ՝ ժողովից յետոյ, գործի են կպել, իսկ գեներալ Յովսէփեանի համար էլ հաստատում էին, որ օր առաջ արդէն ճանապարհ է դրել իւր գոյքը: Այս գիշերային գործունէութիւնը տեսել են ու արգելք դրել: Այս լուրերը, որոշ չափով եւ կօմիսարիատումն էլ ստուգեցի, որոց հետեւանքով նոքա էլ շտապ հեռացել են ու խառնիխառն վիճակի մէջ թողել գրասենեակը:

Ժողովուրդը իրաւացի կերպով պահանջ էր դրել. «Եթէ արդարեւ վտանգ կայ, պետք է յայտնել եւ իրանց էլ թոյլ տալ ընտանիքն ու գոյքը փոխադրել քաղաքից, իսկ եթէ վտանգ չկայ, ինչո՞ւ էք գաղտագողի այդ միջոցին դիմում՝ օգտւելով ձեր ձեռքի տակ եղած միջոցներից եւ իշխանութիւնից, իսկ խեղճ ժողովրդին թողնում էք անգիտակից իրերի դրութեան հետ ու անտէր վիճակի մէջ»: Քաղաքի կառուարիչներն ու զօրքի հրամանատարներն ամէն կերպ հաւատացնում էին: «Ամէնեւէն վտանգ չկայ: Ե՛հ շտ է, պատերազմական նկատառումներով զօրքը Սարիղամիշից յետ է նահանջել, բայց շատ կայուն ու կռուղ է, մանաւանդ ամէն օր օգնական

զօրքեր են գալիս: Ներկայիս 25 հազարից աւելի կանոնաւոր զօրք ունենք՝ բացի կամաւորներից, ոչ մի դէպքում Կարսը թշնամուն չենք յանձնի, մանաւանդ որ պաշարով էլ ապահովւած ենք եւ այլն, եւ այլն»:

Նետեւեալ օրը՝ հոկտեմբերի 1-ի առաւօտեան, Առաքելոց եկեղեցւոյ բակում, որտեղ եւ էի ապրում, հաւաքեցան ինքնապաշտպանութեան վաշտերը եւ ժողովրդից էլ ասհազին բազմութիւն, որոց խօսակցութեան նիւթն էին գիշերային խուճապը եւ նորա պատճառները: Գիշերային ժողովին մասնակցողներից մէկը (մինիստրի ներկայացուցիչ, գոնէ այդպէս էին անանում)՝ պ. Եաղջեանը, կուրծքը ծեծելով եւ կոկորդը պատռելով, հաւատացնում էր ամէնքին, որ ոչ մի վտանգ չկայ. «Ժգուր է ժողովուրդը խուճապի մատնում: Դաւաճանութիւն է փախուստի դիմելը, Կարսը ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան նեցուկն է, այլեւ ամբողջ Կովկասի փրկութեան բանալին: Կարսը նորից թշնամու ձեռքը տալ նշանակում է խաչ քաշել հայ ազգի ազատութեան եւ գոյութեան վերայ: Երդում եմ երիտասարդ կեանքիս արեւով եւ ամէն սրբութիւնների անունով, որ թշնամին մեր դիակների վերայից պիտի անցնի Կարսին տիրելու համար: Դուք երբէք մի՛ յուսահատւեք եւ տեղներիցդ մի՛ շարժեք, հաւատացած եղէք, որ Կարսը ոչ մի դէպքում թշնամու ձեռքը չի անցնի, մինչեւ արեւան վերջին կաթիլը կը պաշտպանենք Կարսը եւ նորա հետն էլ այնքան ծանր գնով ձեռք բերած մեր ազատութիւնը»:

– Փչէ՛, – ասացի բարձր ձայնով, որ տանս լուսամտից լսում էի այդ գեղեցիկ խօսքերը, եւ «կապրենք ու կը տեսնենք» ասելով՝ ներս քաշեցի դառնացած սրտով:

Պատմում էին, որ գիշերային պատմական ժողովին մասնակցողներից ու գաղտագողի փախչելու որոշումը կայացնողներից մէկն էլ այդ պոռոտախօս պարոնն է եղել:

Ժողովուրդը բաւական հանդարտեց, սկսեցին իրենց գործերով զբաղուել: Գնացողներից շատերին Ղզլչախիսից³³ ու Աղէքսանդրապօլից յետ դարձրին ու այլեւ ոչ մէկին թոյլ չէին տալիս քաղաքից դուրս գալու՝ թէ՛ գիտացիներին եւ թէ՛ դրսից եկածներից (Սարիղամիշի, Կաղզվանի ու շրջակայ գիւղացի գաղթականներին), թէեւ գաղտագողի ու կողմնակի ճանապարհներով գնացողներ էլ շատ կը լինէին:

Այս խուճապային դրութիւնը, Արդահանի, Սարիղամիշի եւ Կաղզվանի ժողովրդոց տեղահան լինելը ի նկատի ունենալով՝ հոկտեմբերի 7-ին գրեցինք Ս. Էջմիածնի հոգեւոր կառուարութեանը, որ միառժամանակ յետաձգի Առաջնորդի ընտրութեան գործը՝ մի առ մի բացատրելով գործերի դրու-

32 Հովսէփեանը Կարսի գործնասի պետն էր, որը «...իր շրջապատին վրայ թողուցած է դաւադիր եւ վախկոտ զինուորականի մը տպաւորութիւնը» (Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Երևան, 2002, էջ 58):

33 Հայաբնակ գյուղ էր Կարսի մարզի Բաշ-Շորագյալ գավառում:

թիւնը եւ ժողովրդի վիճակը, որը տարած էր մի-միայն ինքնապաշտպանութեան խնդրով եւ ոչ մի հնարաւորութիւն չունէր այլ խնդիրների մասին մտածելու եւ հոգալու:

Վերջին շաբաթներում Սր. Էջմիածնից եկած էր գերապատիւ Գարեգին եպիսկոպոսը³⁴: Առաքելոց եկեղեցոյ բակում մաղթանք կատարեց, Վեհափառ հայրապետի քաջալերիչ սրբատառ կոնդակը կարդաց եւ մի գեղեցիկ, զգացած քարոզով յուսադրեց ու քաջալերեց զօրքին ու զօրապետերին եւ հաւաքած խումն բազմութեանը: Յարգելի սրբազանը մի քանի անգամ էլ զօրաճակատ գնաց կռող զօրքերին եւ մխիթարելու եւ քաջալերելու համար: Հոկտեմբեր 24-ին պատարագ մատոյց Առաքելոց եկեղեցում, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց որբերի ծնողների համար եւ մի զգացած քարոզ խօսեց որբերին մխիթարելու, նրանց խնամողներին շնորհակալութիւն յայտնելու եւ հանդիսատես ժողովրդին եւս ոգեւորելու համար:

Ամէն բան խաղաղ էր, ու ժողովուրդն էլ հանգիստ էր: Քաղաքի «Իլլիզիոն» կինոթատրոնում քաղաքացիների ժողով էր կայացել (երեւի դաշնակցականների ղեկավարութեամբ), որտեղ քննել էին իրերի դրութիւնը եւ որոշել ոչ մէկին չթողնել քաղաքից հեռանալու, այլ մնալ եւ ամէն գնով պաշտպանել քաղաքը, մինչեւ իսկ տէր Համազասպ քահանան ճառ է խօսել, դաւաճանութիւն համարել փախուստ տալը: Այս բանը, ներկայ եղողներից զատ, տէր Կորիւն³⁵ եւս պատմեց ու մեղադրում էր ինձ, որ չեմ գնացել այդ պատմական ժողովին: Ես ասացի.

–Նախ, որ չեմ լսել ժողով կայանալու մասին, բայց ի՞նչ թաքցնեմ, իմանայի էլ, չը պիտի գնայի, եւ ի՞նչ կարիք կայ այդպիսի բռնի միջոցներով արգելել ժողովրդին ապահովութեան համար եւ գոնէ ընտանիքի ու երեխաների կեանքն ազատելու միջոցներից զրկել նորան: Կռող ոյժերի մասին հասկանալի է այդ միջոցներին դիմելը, իսկ ընտանիքի եւ գոյքի ազատելն արգելել՝ այդ եւ չեմ կարող ընդունել եւ մասնակցել այդպիսի ժողովներին:

34 Վաստակաշատ ձեռագրագետ, պատմաբան, բանասեր, մշակութաբան և հոգևորական Գարեգին Հովսեփյանը ծնվել է Արցախի Մաղավուզ գյուղում 1867 թ.: 1925 թ.-ից եղել է արքեպիսկոպոս, 1943 թ.-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Վախճանվել է 1953 թ. Անթիլիասում:

35 Խոսքը վերաբերում է Կարսի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխատեր քահանա Կորյուն Քոբանջյանին, որը 1922 թ. հոկտեմբերի 26-ին եկեղեցու ունեցվածքը հանձնում է ՀՄԽՀ Կարսի հյուպատոս Հայկակ Կարապետյանին: Կարսի անկումից հետո հայերի նկատմամբ կատարված բռնությունների մասին 1922 թ. դեկտեմբերի 17-ին գեկուցագիր է հղում Անեմայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին: 1928 թ. փետրվարի 20-ին ընտրվում է Շիրակի թեմական հոգևոր խորհրդի անդամ, իսկ 8 օր անց խորհրդային իշխանությունների կողմից ձերբակալվում Ալեքսանդրապոլում և ազատվում հունիսի 12-ին (**Ալեխայան Մ.**, Փաստաթուղթ Կարսի հայ բնակչության կտորածի մասին, «ԲՀԱ», 2006, № 1, էջ 100: Տե՛ս նաև Վալերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, էջ 396, 397):

Ամսոյ 28-ին լուր տարածեց, որ Մերդենեկի կողմը կռող զօրաբաժնի հրամանատար Մազմանով³⁶, որ Ա գնդի հրամանատար է նշանակւած եղել գնդապետ Յարութիւնեանի հրաժարելու պատճառով եւ վերջին օրերս էլ Արեւելեան ճակատն էր պաշտպանում, անձնասպանութիւն է գործել: Այդ տխուր լուրը ստուգեցի Ա գնդի մի զինուորից, որը պատմեց. «Հրաման էր ստացել յարձակում գործելու եւ համարեայ պաշարման վիճակի մէջ էր դրել թշնամու մի գումարտակը՝ մօտ 1800 հոգուց բաղկացած, որ շատ էլ հեռու չէր Կարսից, բայց զօրքը չէր հնազանդել ու հետեւել այդ քաջարի զօրապետին, որ հասարակ զինուորի մնան հազնւած, ցեխի մէջ շաղախւած առաջ էր ընկել, աղաչում, պաղատում էր զօրքերին, որ իր ետեւից գնան, արդէն պաշարւած թշնամու վերայ յարձակւեն ու մի հարված տալով՝ յաղթանակը վաստակեն: Բայց զօրքը ոչ մի կերպով չէ կամեցել նորան հետեւել, նոյնիսկ սպաներից մէկն էլ այդ կրիտիկական թուլէին սաստիկ վիրաւորել է նորան: Մազմանովը տեսնելով, որ ամէն բան կորած է, անձնասպանութեան է դիմել»:

Պատմում էին, որ զօրապետի վերջին խօսքը եղել է. «Հայրենիք, մի կեանք ունեմ, այն էլ քեզ եմ նւիրում»:

Ասում են նոյնպէս, որ այդ գնդի կարգապահ ու քաջարի սպաներն ուրիշ տեսակ են բացատրում այդ ցաւալի անձնասպանութիւնը եւ ուրիշ պատճառի վերագրում: Է՛հ, հայի վաղեմի յատկութիւն է, եւ ուրիշ էլ չէր կարող լինել: Սակայն անմոռանալի ճշմարտութիւն է, որ հայ զինուորիւնը, յանձին Մազմանեանի, շատ բան կորցրեց, մի այդպիսի բարեխիղճ, անձուէր, քաջ ու փորձւած զօրապետի մեծ կարիք ունէր նա այսպիսի ճգնաժամի մէջ:

Կարսի անկումը

Մազմանեանի մահուան տխուր լուրը թէւ ցնցող եւ ծանր տպաւորութիւն թողեց ժողովրդի վերայ, բայց հանգստութիւնը չխանգարեց՝ չը նայելով ամէն տեսակ վստահացումներին եւ տարածւած լուրերին, որ իբր կռիւր մեծ եռանդով շարունակւում է, մինչեւ իսկ 1500 գերիներ են վերցրել եւ շուտով ընդհանուր յարձակում պիտի գործեն եւ Մարիդամիշ գնան: Բայց եւ այնպէս մեր քաջարի զինուորները մինչեւ Կարսի պատերի տակ յետ էին նահանջել:

Հոկտեմբեր 29-ի գիշերն այնքան հանգիստ էր, որ ժամը 2-ին աղջկաս՝ Շամունէխս հետ դուրս եկայ

36 Գնդապետ Հովհաննես Մազմանյանը, որը «25 տարեկան երիտասարդ մը եւ կրտսերագոյնը հայկական գնդապետներուն: Իր շքապատն անձնական քաջութեամբ հմայելու անսահման տենչ ունէր: Կտրուկ էր, յանդուգն եւ, մանաւանդ, անգութ դէպի թշնամին: Մերդենեկի հիւսիսային եւ աջ թեւի հրամանատարն էր», անձնասպանութիւն է գործել հոկտեմբերի 29-ին առավոտյան (**Արծրունի Վ.**, նշվ. աշխ., էջ 59, 222):

շրջագայութեան հրացանն ուսիս (մէկ ասող լինէր, թէ հրացանն ի՞նչ պիտի անէի, երբ գործածելն անգամ չգիտէի), մինչեւ կայարանի կողմերը գնացինք, փեսայիս տունը հանդիպեցինք, հանգիստ քնած էին: Մտանք ինքնապաշտպանութեան կայանը, Բաղդասարեանների խանութը՝ դրութեան մասին լուրեր առնելու: Ամէն բան խաղաղ էր: Վերադարձանք տուն:

Հոկտեմբերի 30-ի առաւօտը կարծես թէ ժողովրդի հոգին մի վատ բան էր նախատեսում: Եկեղեցին լցած էր բազմութեամբ, մեծ մասամբ կանայք, որոնք լաց ու կոծով խնդրում էին «Տէր ողորմեայ» անել: Ես պարտականութիւնս համարեցի բացատրել նորանց դրութեան լրջութիւնը, տարածած լուրերի անհեթեթութիւնը, ինքնապաշտպանութեան կարեւորութիւնը եւ կատարելու ձեւն ու պայմանները, մանաւանդ կանանց կատարելիք դերը: Հակառակ դէպքում մեր գլխին գալիք չարիքներից ո՛չ «Տէր ողորմեայ», ո՛չ հսկումն ու պատարագ չեն կարող փրկել, բայց խնդրած «Տէր ողորմեան» ասացինք ու արձակեցինք:

Եկեղեցուց դուրս գալիս մի խումբ կանայք մօտ 5000 ռուբլի փող տւին ինձ՝ զինուորների համար նւերներ առնելու եւ խոստացան նորից տներում պաշարներ պատրաստել եւ բերել ինձ մօտ, որ ես իմ պատրաստածիս հետ զօրաճակատ ուղարկեմ: Խեղճ կանայք, ինչպէս երեւում էր, զգում էին գալիք փորձութիւնը եւ չէին իմանում՝ ինչո՞վ եւ ինչպէ՞ս օգնեն: Շատ չանցած՝ նորից եկան այդ կանայք, ինչե՛ր ասես, որ չէին բերել՝ դրամ, հաց, պանիր, խաշած միս, թէյ, շաքար, ծխախոտ, լուցկի, ձեռնոցներ, գուլպէք, խմորեղէններ եւ այլն: Հաւաքած դրամը (մօտ 10.000 ռուբլի) տւի աղջիկներին, որ գնան շուկայ, գնումներ անեն: Փեսայիս ֆուրգօմներից մէկն էլ բերին, որ այդ ամէնն անձամբ տանեն զօրաճակատ եւ բաժանեն զինուորներին:

Նոքա գնացին, բայց ուրբաթը շուտ վերայ հասաւ, քան շաբաթը: Ժամը 10-11-ին լուր տարածւեց. «Թուրքի զօրքերը լցում են քաղաք»: Տանից դուրս եկայ, ամբողջ քաղաքը տակն ու վերայ է եղել, ու բոլոր ժողովուրդը սոսկալի խուճապի մատնել: Չէի ուզում տեսածներիս ու լսածներիս հաւատալ: Բակից դուրս եկայ եւ ի՞նչ տեսնեմ, կայարանի կողմից ամբողջ ժողովուրդը՝ մեծ ու փոքր, կին ու աղջիկ, մի-մի բան շալակած, դիմում են դէպի ձորը՝ փոքրերի ձեռներից բռնած, քարշ տալով, լալով ու կոծով, ում որ մի բան են հարցնում, ոչ մի դրական պատասխան էլ չեն ստանում: Միայն այս էր լսում.

– Փախե՛ք, թուրքերը կայարանն են լցել, անիծւած Մուրադի խումբը պահեստը, պարէնատրոման մթերանոցը թալանել ու փախել է, թուրքի դէմ կռուող հայ զինուոր չկայ:

Անցնում են ձորի կողմը, խճուղու վերայ լցւած են կառքեր, սայլեր, ձիեր ու կովեր, այծեր ու ոչխարներ, ֆայտօններ ու ատօմօբիլներ, բոլորն էլ՝

մարդ ու անասուն իրար խառնւած, մի անպատմելի ժխոր, մի դժոխային խառնուրդ, ճանապարհ անգամ չեն գտնում առաջ շարժելու: Քարէ կամուրջի երկու կողմի խճուղին լցւած է այդ խառնուրդով, իսկ վերելի թաղերի փողոցներից, իրար գլխի դիպչելով, ամէնքն աշխատում են ճանապարհ գտնել, առաջ գնալ, բայց ո՞ր, երեւի իրանք էլ չգիտեն, միայն թէ առաջ գնան:

Աչքերս սեւացած՝ դառնում եմ դէպի տուն, եկեղեցույ բակի դռան ետեւը տեսնում եմ մի թուրքի փոքր երեխայ, մի քանի ոչխարի մօտ կանգնած՝ լաց է լինում: Հարցնում եմ, թէ ո՞ւմ որդին է: Ծանօթ է, քաշում եմ մի ապահով անկիւն, սիրտ տալիս եւ անցնում տուն: Աղջիկներս դեռ չեն եկել: Դուրս եմ գալիս, դուրսը՝ տագնապի մէջ: Տեսնեմ գալիս է եղբօրս որդին՝ Կարապետը (շատ ժամանակ չէր անցել, ինչ եկել էր Կարս, որ գործի անցնի եւ ընտանիքը Կիսլովօքսկից փոխադրէ այստեղ, ուր ապրում էր 1918 թ. փախուստից յետոյ): Խեղճ տղայ, հայրենիքի կարօտը քեզ բերեց Կարս, ահա՛ եւ հայրենիք: Մտածում եմ, իսկ նա մօտենում է սաստիկ շփոթւած.

– Հօրեղբայր, ի՞նչ ես անում, ո՞ր եմ աղջիկները, ի՞նչ պիտի անենք, ո՞ր պիտի գնանք:

Ուզում եմ մի բան պատասխանել, բերանս չի բացում, տեսնում եմ՝ անցնում է Արաբեանց Բաղդասարը՝ երեխան գրկած.

– Կարապետ ջան, եթէ ուզում ես Բաղդասարի հետ գնայ (իւր քենու սկեսրայրն էր), գուցէ կազատւիս, – ասում եմ ու ցոյց տալիս գնացողին:

– Բայց ձեզ ինչպէ՞ս թողնեմ-գնամ, – ասում է եւ լաց լինում:

Տանում եմ տուն, սիրտ տալիս, հանգստացնում: Վերջապէս գալիս եմ աղջիկներս: Սկսում ենք շորերը հաւաքել, կապկապել, բայց ո՞ր մէկը կապենք, ի՞նչ անենք կամ ո՞ր տանենք: Ներս եմ մտնում մի քանի զինուորներ եւ հաց ու ջուր խնդրում:

– Արժէ՞ փախչող զինուորներին հաց ու ջուր տալ, – ասում եմ, բայց միեւնոյն ժամանակ ցոյց տալիս սեղանը, որի վերայ դարսւած էր զօրաճակատ տանելու համար պատրաստած պաշարը:

Գայլի նման յարձակում են սեղանի վերայ, ուտում, գրպան ու ծոց լցնում, յետոյ էլ ջուր խմելով՝ թողնում, հեռանում: Ետեւներիցը դուրս եմ գնում եւ տեսնում, որ իրար աչքով են անում, ծիծաղում եւ դէպի միջնաբերդ ուղղում: Ականջներիս չէի ուզում հաւատալ՝ թուրքերէն էին խօսում այդ զինուորները: Կասկածում եմ, չլինի՞ թէ թուրք զինուորներ են, խուճապի մատնւած ժողովրդի մէջ են խառնել ու առանց կռիւի քաղաք լցել:

Միւս եղբօրս ամուսնացած աղջկայ տանից, որ շատ հեռու չէր մեզանից, եկան եւ աշխատում էին համոզել, որ գնանք իրանց տուն: Դրացի թուրքերը խոստացել են իրանց պաշտպանել, հենց նրանք էլ ասել են.

–Ի սէր Աստծոյ, տէրտէրի աղջիկներն էլ բերէք, անպատճառ փորձանքի կը հանդիպեն:

Ուրիշ ճար չկար: Սկսեցին շորերը կրել այնտեղ, Կարապետն էլ գնաց նորանց մօտ, իսկ ես շարած դէռ կապոցներ էի պատրաստում եւ չը գիտէի՝ ո՞րը վերցնեն կամ ո՞րը թողնեն: Անցայ եկեղեցու խորանը, որտեղ ապրում էր Կաղզվանի տէր Սկրտիչի³⁷ ընտանիքը նոյն տեղացի մի ուրիշ ընտանիքի հետ.

– Ի՞նչ ես մտածում, երեցկի՛ն, ի՞նչ ես անելու,– հարցրի նրան:

– Ի՞նչ պիտի անեն,– պատասխանեց ինձ,– ես չեմ վախենում, այստեղ էլ կը մնամ:

– Մենք գնում ենք եղբօրս աղջկայ տունը, այստեղ մօտ են ապրում, եթէ չկարողացաք այստեղ մնալ, անցէք մեր սենեակները: Եթէ կամենաս, աղջկադ էլ ուղարկիր մեզ մօտ,– ասացի ու հեռացայ:

Աղջիկներս եկան ինձ էլ, Սոֆյային ու երկու Սաթենիկներին էլ քարշ տւին եղբօրս աղջկայ տունը: Մի տեսակ անզգայ ու կամազուրկ արարած էի դարձել:

Դռան առաջը նորից պատահեցին հաց խնդրող զինուորներ, տանից հաց ու ջուր բերին դրանց: Ես նորից կասկածով նայում էի դրանց, միգուցէ թուրք զինուորներ լինեն:

Դռան առջեւ կանգնած՝ նայում եմ. քաղաքի վերայ հարաւից ու արեւելքից սեւ-սեւ ամպեր են բարձրացել, յորդ անձրեւ ու փոթորիկ գուշակող խորհրդաւոր մթնոլորտ ու խաղաղութիւն է տիրում մթնոլորտի մէջ: Մի սաւառնակ թռչում է ամպերի մէջ եւ շարունակ դողաւցնում ու աչքից կորչում: Ոչ մի գնդակ չի արձակում միջնաբերդից կամ Ղարադաղի ամրութիւններից, միայն հեռից լսում է թնդանօթի խուլ դողիւն: Այս միջոցին մի խումբ կանայք, հարս ու աղջկերք դիմում են ինձ.

– Հայրիկ, չի կարելի՞ պատասպարել ձեզ մօտ:

– Ես էլ եմ եկել այստեղ պատասպարելու,– պատասխանում եմ ինձ դիմող պատկառելի կնոջը,– փեսայիս տունն է, ներս մտէք, գուցէ ձեզ էլ տեղ լինի:

Ներս են գնում, իսկ ես դեռ նայում եմ շուրջս մոլորած ու դիտում անցողւարձը: Մեր պատի տակ կատարում է մի սպանութիւն, ինձ ներս են քաշում եւ դուռը փակում:

Բարձրանում եմ սենեակները՝ լեփ-լեցուն կանանցով եւ հարս ու աղջիկներով: Երկու փոքրիկ սենեակներ, մօտ 40-50 հոգի, չի կարելի ազատ շունչ անգամ քաշել:

– Ո՞ր է եղբօրս որդին՝ Կարապետը,– հարցնում եմ միս եղբօրս աղջկան:

– Ամուսնու՝ Կարապետ Շարաֆեանի հետ գնաց Ղաթողոց Ղամիշի տունը: Այնտեղ աւելի

ապահով է: Նոքա խոստացել են, որ լաւ կը պահպանեն բոլորիս էլ:

– Ասումա՞ծ տայ, որ այդպէս լինի,– ասում եմ մտքիս մէջ եւ նորից դուրս գալով բակը՝ նստում քարի վերայ հիծւած ու ջարդած: Գլուխս բռնում եմ ձեռքերիս մէջ ու մտածում, անվերջ մտածում, բայց ի՞նչ, ես էլ չը գիտեմ: Տան պառաւ կինը՝ փեսիս մայրը, դրսից ներս է գալիս եւ ասում, որ պատի տակ սպանածը մի զինուոր է՝ բերանքսիւայր գետնին փռած: Քիչ յետոյ բակում կանգնած կանայք ցոյց են տալիս Ղարադաղ ամրոցի արեւմտեան կուրծքը եւ ասում.

– Երկու կարմիր բայրաղ³⁸ է երեւում:

Վեր թռայ տեղիցս եւ հետաքրքիր նայում եմ, բայց ոչինչ չեմ տեսնում: Վերջիվերջոյ մուտքից ցած՝ քարերի մէջ, տեսնում եմ երկու կարմիր շորեր ծածանելիս: Ուրեմն վերջացաւ, Կարսը գրաււած է, նորից նստում եմ տեղս, ժամացոյցին նայում անզիտակցաբար: Ժամը 1-ն է:

Նստած եմ քարին ու մտածում եմ մոլորւած. «Ո՞ր մնացին մեր քաջարի զինուորներն ու զօրականները, դաշնակցութեան պօռնոտախօս հերոսները, մինիստրների ներկայացուցիչներն ու քաղաքի ապաշնօրհ կառաւարիչները, որոնք կաշից դուրս էին գալիս համոզելու, թէ մեր զօրքը կայուն է, բան չկայ, մի՛ վախենաք, մինչեւ մեր վերջին շունչը կը պաշտպանենք Կարսը: Թշնամին մեր դիակների վերայից պիտի անցնի Կարսը գրաւելու համար: Ո՞ր է, մի գնդակ անգամ չարձակւեց քաղաքը պաշտպանելու համար: Մի քանի ժամ անգամ չկարողացան դիմադրել, որ ժողովուրդը կարողանար իւր ճարը տեսնել: Խե՛ղճ ժողովուրդ»:

Աղջիկներս ներս են տանում ինձ եւ անվերջ նայում եմ երեսիս: Բակից աղմուկի ու լացի ձայն է լսում: Դուրս եմ գնում եւ ի՞նչ տեսնեմ. հանգուցեալ աղջկաս որբերը՝ Մանչուկս ու Աչիկս³⁹, լալով գիրկս են ընկնում: Նորանց հետն են փեսիս քոյրը՝ Տիկուշը՝ աջ ձեռքը արիւնլաւ, փալատով կապկպած, հանգուցեալ եղբօր երկու որբերը եւ հօրեղբօր՝ թախտաչի (փայտագործ) Մարալի կին Մարիամը: Ներս ենք տանում նորանց: Բոլորը շրջապատում եւ հարցերի տարափ են թափում գլխներին: Չը գիտեն պատասխանե՞ն, թէ՞ իրանց ցաւը լան:

Նոքա պատմեցին. «Առաւօտը վաղ մեր տան իրերը փոխադրեցինք կայարան եւ տեղադրեցինք մեր տրամադրութեան տակ եղած վագօնի մէջ: Վերադարձանք տուն՝ նորից իրեր տանելու եւ ձեզ էլ լուր ուղարկեցինք, որ դուք էլ ձեր իրերը բերէք, միասին գնանք Երեւան: Չը գիտեմ ինչո՞ւ, գնացք ուշանում էր: Մեր մարդիկը եկան եւ յայտնեցին, որ այլեւս գնացք չի գնալու, թուրքերն էլ լցում են

38 Դրոշակ:

39 Խոսքը վերաբերում է Խորեն քահանայի թոռնիկներին՝ Կարսի Ծպնի գյուղում ծնված նկարչուհի Հելինե Աբրահամյանին (ծնվ. 1912 թ.) և նրա եղբորը՝ Բենիամինին (ծնվ. 1913 թ.):

37 Կաղզվանի քահանա Սկրտիչ Տեր-Գրիգորյանը ծնվել է 1866 թ., քահանա է ձեռնադրվել 1889 թ. (ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 54, ք. 96):

կայարան: Մեր ֆուրգոնը դռանը պատրաստ կանգնած էր, մնացած իրերն էլ՝ բարձրած: Տեսանք, որ ամբողջ քաղաքը խուճապի է մատնում, մի կերպ տեղատրեցիներ ֆուրգոնի մէջ եւ դիմեցինք դէպի ձորը, որ խճուղու ճանապարհով կարողանանք գնալ: Հազիւ հասանք կոմանդատի տան ներքի փայտե կամուրջի մօտ: Վերելից գնդացիների տարափ տեղաց մեր գլխին: Իսկոյն վայր թափուցինք ֆուրգոնից: Մայրս սպանեց, ես վիրատրեցի, հանգուցեալ եղբորս աղջիկը՝ 5 տարեկան Յողիկը, վիրատրեց ոտքից եւ չէր կարողանում շարժել: Սօրաքրոջս որդին՝ Մարտին Մաղոնեանը, նորա աղջիկը, նույնպէս վիրատրեցին: Մի կերպ պատասպարուցինք դիմացի տան մէջ: Երբ գնդակների տարափը դադարեց, դուրս եկանք տանից, մօրս դիակը ընկած էր կամուրջի գլխի մօտ, այդտեղ շատերը սպանել էին ու շատերն էլ գետը թափել: Նորից նստանք ֆուրգոնի մէջ ու որոշեցինք վերադառնալ տուն: Հազիւ հասել էինք մեր եկեղեցու դէմը, ասկերները մեզ կանգնեցրին, ֆուրգոնը ճանապարհից հանեցին, մի անկիւն տարան ու թալանեցին, վերաներիս շորերն անգամ հանեցին: Տեսնելով, որ ոչ մի հնար չունենք ազատելու, մի կերպ քաշուցինք ու հեռացանք ֆուրգոնից եւ դիմեցինք մեր տուն: Դուռը փակ էր: Աչիկն ասաց, որ Երանեսկենց տունը կը լինեն: Դիմեցինք այստեղ: Դռան առաջ նորից ասկերները մեզ բռնեցին, բայց մի թուրք կնոջ շնորհիւ ազատեցինք ու պատից վայր թափուցինք բակը»⁴⁰:

40 Հեղինէ Աբրահամյանն իր անտիպ հուշերում այդ դեպքի վերաբերյալ գրում է. «Հայրս դասավանդում էր Արդահանի դպրոցում: 1915 թ. Արդահանից ենք փախել սկզբում Կարս: Հորս աշխատանքի են նշանակում Երևանում՝ որպէս գործի մատակարարող: Երևանում մենք երկար չենք մնում: 1918 թ. մահանում է մայրս, և մորաքույրներս ինձ տանում են Կարս, որտեղ ընդունվում են դպրոց: Հայրս էլ 1920 թ. գարնանը նույն պաշտոնով իր գործը տեղափոխում է Կարս: Քաղաքը վերցնելիս հորս, որպէս զինվորական աշխատողի, մի ֆուրգոն են տրամադրել, որ մենք իրերը տեղափոխենք վագոնով, երկաթգծով քաղաքից դուրս քերենք դէպի Ալեքսանդրապոլ, բայց էդ արել են շատ ուշացած: Ամբողջ ժողովուրդը ձորում էր: Թուրքը ճանապարհը փակում է, բարձրանում է լեռ և էն տեղից կրակում բազմությամբ վրա: Մի գյուղացի կին էլ բարձրացել էր լեռան լանջին, որ լեռի վրայով են կողմ տեղ գնացի: Կրակել էին տղայի մեջքին, մայրը շապիկը ետ էր տարել և տղայի արյունը տեսնելով, ձեռքերը վերև պարզած՝ ահափոր ձայնով բղավում էր: Էդ ձայնն էր մնացել իմ ականջի մէջ: Դրանից հետո ես իմ հիշողությունը կորցրել էմ: Աչքս բաց եմ անում էն ժամանակ, երբ որ հորեղբորս փոքր աղջիկը՝ 5 տարեկան Յողիկը, վիրավոր էր և արյունաքամ: Ծանապարհն էն կողմ անցնելու համար կար մի փոքր փայտաշեն կամուրջ, որին տեղացիները սուսն էին Մազե կամուրջ: Ես ինչպէս եմ անցել, չեմ հիշում: Մի ծերուկ՝ մեջքին կապոցով, մեծ անկողին էր երևի, ընկավ: Ես դրա վրայից պիտի թռչել: Երևի հետևից եկողը ինձ անց է կացրել: Մի կերպ դուրս եմ եկել կամուրջը և կանգնել եմ կամուրջի գլխին, արդեն ոչ մի տեղ չեմ գնում: Մեկ էլ մի բոյով մարդ ինձ գրկում է ու տանում է: Երբ որ գնդակոծությունը մի քիչ դադարում է, հորաքույրս գալիս է, նայում է ֆուրգոնը, արդեն այնտեղ լրիվ թալանված էր: Տատս դու մի ասա վիրավորված է եղել գլխից և հենց կամուրջի գլխում ընկած է եղել: Ես չեմ տեսել նրան, ինձ չեմ ցույց տվել:

–Ի՞նչ եղան հօրեղբայրդ՝ Մարալը, եղբայրդ՝ Լեւոնը, Մարտինը,– վրդոված հարցրի պատմողին:

–Եղբայրս սպաների հետ գնացել է կոմանդատ Փիրումեանի տունը: Հօրեղբայրս մեզ հետ էր, երբ ֆուրգոնը բռնեցին, նա ո՞ր գնաց, չը գիտեմ: Յողիկն էլ մնաց ֆուրգոնի մէջ, չկարողացանք հետներս բերել: Մինչեւ վերջին կուպեկը թալանեցինք, հայրիկ,– փղձկալով շարունակեց Տիկուշը,– ամէն բանից գրկեցինք, ոչ մի բան էլ աչքիս չի երևում, միայն թէ եղբայրս, հօրեղբորս որբերը կենդանի մնային: Ա՛խ, մայրիկս, ա՛խ, Յողիկը, արդեօք ի՞նչ եղաւ էն խեղճ անասունը,– ասաց ու լռեց՝ յորդ արցունքներ թափելով:

Նայեցի շուրջս, բոլորն էլ արտասուում էին: Ամէն բան պարզ էր. դրութիւնը սուկալի եւ յուսահատական:

Մի կերպ հանգստացրինք դորանց: Ամէնքս էլ լուռ ու մունջ կծկել էինք մի անկիւն: Երեխաները սսկել ու վախեցած աչքերով նայում էին չորս կողմը մորթող գառների նման: Խղճուկ բալէքս, դուք ինչո՞վ էիք մեղաւոր, որ այս տառապալից օրերն էք տեսնում ու այս ցաւերը քաշում: Սիրոսս փղձկեց, դուրս գնացի՝ արտասուքս ծածկելու համար: Դռները փակ էին պահում եւ ոչ ոքի դուրս չէին թողնում: Մի քիչ բակում կանգնեցի: Հեռուից նորից լսում էի թնդանօթաձգութիւն, հատ-հատ էլ հրացանի պայթոցներ: Մի երկու պառաւ կանայք երբէն-երբէն դուրս ու ներս են անում եւ լուրեր բերում: Նոքա ասացին, որ պատի տակ ընկած, սպանւած զինուորիկ բոլորովին մերկացրել են: Հայեր այլեւս չեն երեւում փողոցներում, միայն թուրք խուժանն է թալանով զբաղւած:

Դրացի թուրք կանայք եւս մի-մի գալիս էին մեզ մօտ, սիրտ տալիս.

–Մի՛ վախենաք, բան չկայ, կռիւը վերջացաւ, մերոնք տիրեցին Կարսին, ձեր դռանն էլ սպիտակ բայրաղ ենք կախել, ով որ գալիս է, «թուրքի տուն է», ասում, ճանապարհ ենք դնում:

Բաւական հանգստացուցիչ էին ասածները, բայց ինձ համար կասկածելի: Աչքիցս չէր հեռանում ժողովրդիս դրութիւնը: Քանի՛, քանի՛ ընտանիքներ ենթարկւած կը լինէին փեսայիս՝ Լեւոնի ընտանիքի օրին: Առաջին փախուստին՝ 1918 թի ապրիլին, սպանութիւններ չեղան, 5 ժամ միջոց ունէին հեռանալու, իսկ այժմ 5 րոպէ անգամ չունեցան: Այն ժամանակ առաջը գարուն էր, իսկ այժմ՝ ձմեռ: Ի՞նչ պիտի լինի այս թշուառ ժողովրդի վիճակը:

Վերջապէս մութն ընկաւ, այս օրն անց կացաւ, ու սեւ գիշեր պատեց մեզ վերայ: Ինչպէ՞ս պիտի

Հորաքույրս ծածկել է նրան ֆուրգոնի մէջ եղած վերմակով, և մենք ուքով վերադարձել ենք քաղաք: Բայց մեր տուն մենք արդեն չէինք կարող գնալ, որովհետև մեր տունը դատարկված էր: Գնացինք Առաքելոց եկեղեցի: Քաղաքի հենց ձորի մայրում է: Պապս էդ ժամանակ Առաքելոց եկեղեցու քահանան էր» (Աբրահամյան Հ., Կարսի Առաքելոց եկեղեցու քահանայի թոռը, «Հայրենիք, եկեղեցի», 2005, № 9-10):

անցկացնենք: Ամեն բան խաղաղել էր, հրացանա-
 ձգութիւնը՝ կտրուել, բայց էլի հատ-հատ լսում էին:
 Ասացին, որ ասկէրներին քաղաքից դուրս են տարել
 գիշերելու: Սենեակում օղը խեղդող էր, դուրս եկայ
 բակը՝ մի քիչ գով օդ շնչելու: Անվերջ ծխում են,
 դուրսը ձայն-ձույն չի լսում: Խաւար է, ճնշող երե-
 կոյ: Ներս են մտնում, ոչ ոք չէ քնել, ու տրամադրու-
 թիւն էլ չկայ քնելու, տեղ էլ չկայ: Բոլորն իրար վե-
 րայ թափած են, քնել են երեխաները, բայց շատ
 անհանգիստ քնով:

Դրսի սենեակում՝ կանանց մէջ, գտնում էր մի
 թուրք մոլլայի կին, որ եկել էր որպէս թէ պահպանե-
 լու ու մխիթարելու: Ո՞վ էր հրաւիրել, չը գիտեմ: Ան-
 վերջ խօսում էր ու անդադար հայերին մեղադրում.
 «Այս արին, այն արին, այսպէս կոտորեցին, այս-
 պէս թալանեցին»,– փառաբանում էր իրենց՝ թուր-
 քերին, գովում նորանց քաջագործութիւնները: Մեր
 կանայքն էլ իւրեանց կողմից մասնակցում էին այդ
 յիմար խօսակցութեան եւ տեղի-ամտեղի խօսքեր
 շարտում:

–Ո՞վ է այդ կինը,– հարցրի մերոնց,– եւ ի՞նչ
 հարկ կայ մասնակցելու այդպիսի խօսակցութեան
 ու տեղիք տալ անելորդաբանութեան:

– Դաբօղունց Շամիլի քոյր եւ մոլլա Քեմալի կի-
 նն է,– ասացին մերոնք,– դիտմամբ ուղարկել են մեզ
 մօտ իբր պահպանելու եւ երեւի բան իմանալու:

Արգելեցի մերոնց մասնակցել այդ խօսակցու-
 թեանը եւ մի անկիւն քաշելով՝ անձնատուր եղայ
 տխուր խոհերի:

Մի երկար ու տառապալից գիշեր անցկացրինք:

Հայ ժողովրդի քաշած տառապանքը

Վերջապէս լուրը բացեց, կիրակէ առաւօտ է, չի
 լսում եկեղեցւոյ զանգերի դողանջիւնը: Ինձ բում է,
 թէ հեռից լսում են այդ ձայնը, դուրս են գալիս, լաց-
 ւում բակում եւ անթարթ նայում Առաքելոց գմբէթին
 ու զանգակատանը. «Ա՛խ, նորից պիտի բախտ ու-
 նենա՞մ այդ հինաւուրց եկեղեցւում ժամերգութիւն
 կատարելու»:

Արդէն ոտքի էր տան պառաւը՝ փեսայ Կարապե-
 տի մայրը, որ ազատ ելումուտ էր անում: Խնդրեցի
 դուրս գնալիս անցնել եկեղեցու բակը եւ լուր բերել
 մեր տանից: Մինչեւ նորա լուր բերելը դրացի թուրք
 կանայք պատմել էին, որ մեր տան դուռը բաց է եղել:
 «Ուրեմն անպայման թալանւած պիտի լինի»,–
 մտածեցի եւ աշխատեցի դուրս գնալ, տեսնել եւ, եթէ
 հնար է, մնացած իրերից նորից տեղափոխել, չէ՞ որ
 շատ բան էր մնացել՝ ձմեռայ պաշարը, գրքերս,
 պատկերներ, անկողին, առանց որոց ապրել ան-
 հնար էր: Շատ աղաչեցի թուրք կանանց, որ ինձ յետ
 գան, բայց հնար չեղաւ համոզել: Ասածներից երե-
 տում էր, որ թալանւած է, երեւի հենց իրենք էլ թալա-
 նել էին: Նոքա պատմեցին, որ քաղաքում ասկէրներ
 չկան: Թուրք խուժանը զինւած պտտում է փողոց-
 ներում եւ թալան անում, դուրս գալը շատ վտանգա-



Կարսի Աբ. Առաքելոց եկեղեցին (լու.՝ Ի դարի սկիզբ)

տուր է: Ամբողջ տնեցիք դէմ էին տանից դուրս գալուս:
 Ի՞նչ կարող էի անել, եթէ ոչ հաշտուել դրութեան հետ:
 Ճաշից յետոյ մի քանի զինւած թուրքեր մտան մեր
 բակը, բաց անել տին Վարսենիկի՝ փեսայ Կարա-
 պետի հօրեղբօր աղջկայ տան դուռը եւ ներս լցե-
 ցին: Սկսեց իրարանցում, լաց ու կոծ, երկու անգամ
 էլ զենք բացեց: Դռներն ամուր փակած՝ սպասում
 էինք մեր հերթին: Դրացի թուրք կանայք լսել էին
 այդ աղմուկը, եկել ու մի կերպ համոզել էին թուրքե-
 րին հեռանալու: Ճիշտ է, թուրքերը հեռացել էին,
 բայց բաւական բան էլ թալանել, տարել էին: Բախ-
 տատուրութիւն էր, որ սպանութիւն չէր կատարուել:
 Երեկոյեան դէմ իմացանք, որ Շամիլենց տանը
 պատսպարւած տղամարդկանց, ի թիւս որոց եւ մեր
 Կարապետին՝ եղբօս որդուն, ու փեսայ Կարապե-
 տին էլ բռնել, տարել են: Ո՞ր կամ ի՞նչ են արել, ոչ
 ոք չը գիտէր: Լաց ու շիւանը մեր տանն էլ սկսեց,
 բայց ի՞նչ կարող էինք անել: Այդ օրն էլ անցկաց-
 րինք եւ անքուն ու դժոխսային գիշեր լուսացրինք:

Միւս օրը՝ նոյեմբերի 1-ի երկուշաբթին եւս բաց-
 ւեց մեզ համար: Լուր տին, որ այսօր պիտի խու-
 զարկեն տները: Տենդային սպասողական վիճակի
 մէջ էինք: Չորս-հինգ տղամարդ պահված էր մեր
 տանը, որոց մասին ամէնից շատ երկիւղ կար: Խոր-
 հուրդ տի դրանց դուրս գալու եւ յայտնելու, հա-
 կառակ դէպքում շատ վատ կարող էր լինել, եթէ գա-
 յին ու պահուած տեղից երեւան հանէին: Վերջապէս
 եկան եւ տղամարդկանց հաւաքեցին, իսկ ինձ
 խնայեցին: Բայց անելի ճիշտն այն էր, որ կանայք
 ընծաներով շլացրին ընչաքաղց ասկէրներին, որոն-
 ցից մէկն ասաց ինձ.

–Միզին իշուն էմիր յօք, սեն քորքմա, ըխթիար
 փափազա⁴¹:

Տղամարդկանց տանելուց յետոյ սկսեց թալա-
 նը: Շարան-շարան գալիս էին ասկէրները եւ ա-

41 «Չեր համար հրահանգ չկա, մի՛ վախեցիր, ծեր քահանա»:

ռանց քաշելու քրքրում պահարաններն ու արկղները, տակն ու վերայ անում ամեն բան, ցանկացածները ծոց ու գրպանը լցնում: Խեղճ աղջիկները սիրաբնաժ ջուրն էին քաշել, մոլորել ու մի կողմ կուչ եկել: Ասկերները կանանցից ոսկի, ամարաթ⁴², ժամացոյց եւ մատանիք էին պահանջում, հագի շորերը հանում եւ աչքի ընկնող իրերը քաշում, տանում էին: Երկու անգամ իմ կօշիկներս էլ հանել տիւն, բարեբախտաբար, ոտները չեղաւ, յետ տիւն, նոյնպէս վերադարձրին ժամացոյցս. «Պու սախաթորը, պիզա լազն տակիլ»⁴³:

Այդ օրը մի տխուր հանգամանք մեզ շատ անհանգստացրեց: Հազիւ կտրել էր թալանի ոտը, ահա ներս մտան մի հայ զինուոր եւ մի թուրք չաուշ, որը քաղաքավարի բարեւելուց յետոյ նստեց, հալ ու խաթր հարցրեց յուսադրելով ու մխիթարելով: Հայ զինուորը, որ իրան վատ էր պահում, ասաց, որ ինքը թագաքեանդոցի է, մայիսեան դէպքերին, իբրեւ բօլշեիկ, բռնած էր ու բանտարկած եւ սրանց շնորհիւ երեկ բանտից ազատած: Նա պահանջեց, որ ինչով որ կարող ենք, պատենք չաուշին: Պատիւրեցի սեղան պատրաստել եւ հրաւիրեցի չաուշին մեզ հետ հաց ուտել, բայց նա ամենայն քաղաքաւարութեամբ մերժեց՝ չնայելով իմ՝ քանիցս խնդրելուն եւ չմօտեցաւ սեղանին, իսկ հայ զինուորը գայլի մման ընկաւ սեղանի վերայ եւ սկսեց ոչ թէ ուտել, այլ լափել, մանաւանդ հացն ու իւղը: Երբ վերջացրեց, ինձ դուրս կանչեց խորհրդատու կերպով եւ սկսեց նորից գովել չաուշին ու ասել.

– Մի շատ պատուական մարդ է, միւս ասկերների մման չէ, շատ հարուստ է եւ ուխտել է մի հայ աղջկայ հետ ամուսնանալ եւ այստեղ էլ մնալ: Եթէ համաձայնեք մի աղջիկ գտնել նորա համար, ձեզ համար էլ շատ լաւ կը լինի, ոչ մի նեղութիւն չէք քաշէ, ամեն տեսակ բարիքներով կը լցնէ ձեզ ու կը պաշտպանէ թալանից ու սպանութիւնից:

– Լավ, ես ո՞ւմ աղջիկը կարող եմ տալ նորան այս նեղ պայմաններում:

– Ձեր աղջիկներից մեկը,– լալիք կերպով պատասխանեց ինձ,– ես լսել եմ, որ դուք լաւ աղջիկներ ունեք:

Ուղեղս խառնեց այդպիսի լիքք առաջարկութիւնից, բայց ինձ զսպեցի ու ասացի.

– Ես զարմանում եմ, որ մի հայ մարդ իւր քահանային այդպիսի առաջարկութիւն է անում, այն էլ այսպիսի պայմաններում: Չեմ կարող այդպիսի բան անել,– ասացի ու զայրացած ներս մտայ:

Տանեցիք երեւի հասկացան, թէ բանն ինչու՞մ է, իրար խառնեցին ու սկսեցին զանազան ընծաներ առաջարկել չաուշին, որը ոսկի մատանի, որը օդ ու չգիտեմ ինչ, որպէսզի մի կերպ հեռացնեն նորան: Նա էլ, ինչ-որ տալիս էին, սառնութեամբ ընդունում

ու գրպանն էր կոխում՝ շնորհակալութիւն յայտնելով: Ես ինձ ուտում էի բարկութիւնիցս, ուզում էի արգելել, բայց չէր լինում: Վերջապէս չաուշը դուրս գնաց՝ ասելով. «Մնաք բարի»: Իսկ հայ զինուորը դեռ մնում էր: Մի ձեռք չամաշուր⁴⁴ էլ նա պահանջեց, տիւն, դեռ մի բան էլ ատելի: Բայց նա երեսը դեմ տուած չէր ուզում դուրս գնալ եւ անպատկառ կերպով կամենում էր մտնել ներսի սենեակը, որտեղ աղջիկներն էին պատսպարուած: Այլեւս չկարողացայ ինձ զսպել, վեր թռայ տեղիցս, թելից բռնեցի ու ասացի.

– Դու իրաւունք չունես այդտեղ մտնելու, քո ընկեր թուրքն ատելի քաղաքաւարի գտնեց եւ դուրս գնաց, դու էլ դո՛ւրս գնա այստեղից, բաւական է, ինչ որ եղաւ,– ու դրսի դուռը ցոյց տալ դողալով:

Սկզբում զարմացած, յետոյ սաստիկ բարկացած՝ բորենու աչքերով երեսիս նայեց.

– Լա՛ւ,– ասաց ու դուրս գնաց:

Ես էլ ետեւիցը դուրս ելայ: Բակում սպասում էր չաուշը ու խօսում էր մեզ մօտ ասպատանած մի հայ կնոջ հետ, որն ինձ դուր չեկավ: Վայր իջայ, որ արգելեմ, չաուշը սկսեց ինձ հետ խօսել եւ անձամբ արեց իւր առաջարկութիւնը.

– Ես սրտով կուզեմ եւ ուխտած եմ մի հայ աղջկայ հետ ամուսնանալ ո՛չ թէ բռնութեամբ, այլ Ալլաի կամքով, դուռան-ինջիլով⁴⁵: Դորա համար էլ խնդրում եմ մի հայ աղջիկ գտնե՞ք ու ձեր ձեռքով էլ պսակե՞ք:

– Եղբա՛յր,– ասացի,– ես այս տանը հիւր եմ, մի քանի օր համբերեցէ՛ք, երեւի կը գնամ իմ տունս, ձեզ էլ կը հրաւիրեմ, ատելի մօտ կը ծանօթանանք, ես բոլորովին հակառակ չեմ, որ դուք կը ցանկաք հայ աղջկայ հետ պսակել: Աղջիկն էլ կը գտնենք, իրար կը տեսնեք, եթէ հաւանեցիք իրար, մոլլային էլ կը հրավիրենք ու կը պսակենք: Այս է օրէնքը:

– Ես մի օր էլ չեմ կարող սպասել, ասկերները կը գան ու աղջկան էլ կը փախցնեն ու ձեզ էլ կսպանեն: Իմ ցանկութիւնս է հէնց այս իրիկուն վերջացնել, բէի տալ ու զիշերս էլ ձեր տունը մնալ ու բոլորիդ էլ պաշտպանել:

Ամեն կերպ աշխատեցի հասկացնել այդ պարոնին, որ այս տանը բոլորը կին ու աղջիկ են, հնարաւորութիւն չկայ այստեղ մնալու: Իմ տանս երեք-չորս սենեակ ունեմ, այնտեղ ատելի ազատ կը լինենք եւ, որպէսզի ատելի զգացնել տամ, ատելացրի. «Ասկերները իմ տանից աղջիկ չեն կարող տանել, այլ միայն մեր դիակները տեսնել»: Նա լռեց եւ այլեւս չխօսեց այդ մասին: Հայ զինուորը մէջ մտաւ ու առաջարկեց, գոնէ մի բան նւէր տալ չաուշին: Տեսնելով, որ կանայքն էլ դուրս են եկել եւ տրամադիր են շարունակել նւէրներ տալը, որպէսզի արգելք լինեմ, ծոցիցս հանեցի ժամացոյցս ու տալ չաուշին,

42 Չարդ:

43 «Մա չի աշխատում, մեզ պետք չէ»:

44 Ներքին սպիտակեղեն:

45 Դուրան և Մուրք գիրք:

իսկ նա, որ մեզ ամեն բարիք եւ օգնութիւն էր խոստանում, առանց այլեայլութեան առաւ ասկէրների յետ տաճ ժամացոյցը, գրպանը դրաւ:

–Միեւնոյն է, կը տեսնեք, թէ ինչ օյիւն կը խաղանք ձեր գլխին հէնց այս գիշեր,– սպառնացին ու գնացին:

Բարկութիւնիցս ինձ կորցրած՝ ներս տարայ կանանց, որոց մէջն էր բազմեցի բժիշկ Կարապետեանի մայրը, որ մի ոսկի մատանի էր բերել չատուշին տալու համար:

–Ախր ի՞նչ էիք անում, ինչո՞ւ ձեր կամքով ընծաներ էիք առաջարկում, նշանի բէ՛հ էիք տալիս, թէ՞ ինչ: Կարծում էիք, թէ կարո՞ղ էք կշտացնել այդ ընչաքաղցներին:

Աղջիկներս շարած դուրս եկան ներսի սենեակից.

–Հայրիկ, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես բարկացել, ու՞րքե՞ր էին դրանք եւ ի՞նչ էին ուզում:

–Ի՞նչ պիտի ուզեն, խեղճ բալէքս, մի՞թէ չհասկացաք, եկել ու ձեզնից մէկին կնութեան են ուզում: Վաղն էլ մի ուրիշը պիտի գայ:

Միրոս լցեց, դուրս գնացի, որ արտասուքս չը տեսնեն: Դռան առաջ յետ ու առաջ էի գնում դռն արտասուք թափելով: Ետեւիցս դուրս էին եկել մի քանի կանայք ու լաց լինելով ստիպում էին, որ ներս գնամ: Հէնց այդ միջոցին ներքեւից մի ձիաւոր պաշտօնեայ երեսաց: Մեզ տեսնելով՝ ձին քշեց դէպի մեզ, մօտեցաւ ու քաղցրութեամբ հարցրեց.

–Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք լաց լինում:

Արտաքին նշաններից ենթադրելով, որ մի մեծ պաշտօնեայ պիտի լինի դէմս կանգնողը, աշխատեցայ որքան հնար է հասկացնել նորան մեր դրութիւնը:

–Էֆէնդի՛,– ասացի,– ես այս եկեղեցոյ քահանան եմ: Ժողովրդիս հետ մնացել եմ՝ աւելորդ համարելով փախչելը, յոյսալով, որ Օսմանեան կառավարութիւնն էլ խնամք ունի եւ կը պաշտպանէ իւր իշխանութեան տակ մնացած խաղաղ ժողովրդին: Այս էլ գիտեմ, որ «Ղաւղատայ բուսկէք չոք օլտը»⁴⁶, բայց չէի սպասում, որ կը գան եւ բռնի կերպով աղջիկ կը պահանջեն: Մի քիչ առաջ մի չաուշ էր եկել մի ասկերի հետ եւ աղջիկ էր պահանջում: Պարզ էր, որ չպիտի կարողանայինք կատարել: Սպառնաց գիշերը նորից գալ եւ ուզածը տանել:

Սաստիկ բարկացած՝ հարցրեց.

–Ո՞վ էր այդ չաուշը, ո՞ր բոլուկից⁴⁷:

Իհարկէ, ես չկարողացայ բաւարարել, քանի որ ինքս էլ չը գիտէի ո՞վ կամ ո՞ր բոլուկից լինելը:

–Լա՛ւ,– ասաց նա ու երեսը մի կողմ դարձնելով՝ քրաւեց,– բակչի⁴⁸:

Մեկ էլ տեսնեմ մի քոստ, չարովսները հագին, հասարակ շորերով, հրացանը ուսն անցրած մի

մարդ վազելով եկաւ, դողդողալով կանգնեց՝ զինուորական բարեւ տալով:

–Դո՞ւ ես այս թաղի բակչին,– բարկացած խօսեց պաշտօնեան: Երբ դրական պատասխան ստացավ, ասաց.

–Խնձր, ի՞նչ⁴⁹, ինչպէ՞ս բակչի ես, որ այստեղից կուզեն աղջիկ տանել, դու չես իմանայ ու չես պաշտպանէ, աչքերդ կը փորեն:

Ու մեզ դառնալով՝ քաղցրութեամբ շարունակեց.

–Բան չկայ, փափագ էֆէնդի, մի՛ վախենաք, հանգստացէ՛ք ու ներս գնացէ՛ք: Ես կը կարգադրեմ, որ ձեզ լաւ մտղայք կենան⁵⁰:

Բակչուն էլ խիստ պատուէր տուց ու գնաց: Կարծես թէ մի ծանր բեռ ուսերիցս վայր են առել: Ներս գնացինք ու դռները փակեցինք: Միրոս հանգստացած զգացի, բայց միեւնոյն ժամանակ մտածում էի. «Արդեօք լա՞ւ եղաւ, թէ՞ աւելի վատ, ու ի՞նչ է սպասում մեզ այս գիշեր»:

Երկու ժամ չանցած՝ մեզ մօտ եկան երկու պաշտօնեաներ, սրտներս թունդ ելած՝ դողդողալով ընդունեցինք հիւրերին, որոնք շատ քաղաքաւարի ու սիրալիր բարեւեցին ու նստան: Բանից դուրս եկաւ, որ ձիաւոր պաշտօնեան էր ուղարկել, մեր թաղի կօմանդատն էր՝ Օսման էֆէնդի անունով, միւսն էլ՝ իւր օգնականը: Մանրամասն հարց ու փորձ արաւ մեր դրութեան ու աղջիկ ուզելու մասին եւ շատ էր ցանկանում իմանալ, թէ ո՞վ էր չաուշը եւ ո՞ր բոլուկից: Իհարկէ, մենք չկարողացանք բացատրել, այն ժամանակ Օսման էֆէնդին ամեն կերպ աշխատեց մեզ հանգստացնել ու մխիթարել: Խոստացաւ հէնց այս իրիկուն մի ասկեր ուղարկել, որ մեզ պաշտպանէ, գիշերն էլ այստեղ մնայ, միայն պատուիրեց, որ թոյլ չտանք, մեր սենեակներում քնելու, փող, ընծաներ էլ չտանք ու եթէ որեւէ նեղութիւն պատճառէ, իրան յայտնենք:

Խոստանալով միշտ այցելել մեզ՝ թողեց գնաց, չթողեց մինչեւ անգամ, որ մեր շնորհակալութիւնն ու երախտագիտական զգացումը յայտնենք նորան: Շատ չանցած՝ խոստացած պահապան զինուորն էլ եկավ իւր պաշարով ու պատրաստութեամբ: Թէեւ բաւական միամտաձեղ, դարձեալ անքուն, անհանգիստ գիշեր անցկացրինք:

Նոյեմբեր 2-ին՝ երեքշաբթի եւս թալանը շարունակեց, բայց մենք հանգիստ անցկացրինք՝ շնորհիւ պահապան ասկերի՝ «Պուրդա եասադ-օլմագ»⁵¹,– ասում էր ու ճանապարհ դնում: Գաշից յետոյ նորից եկաւ թաղի կօմանդատ Օսման էֆէնդին մի բժշկի հետ, հարց ու փորձ արաւ մեր դրութեան եւ գիշերն ապահով անցկացնելու մասին, իւր մօտ կանչեց Տիկուշին, որի վիրաւորելն երեկ իմացել էր: Բժիշկն էլ նայեց ձեռքի վերքին, լաց, մաքրեց եւ պատուիրեց վաղն էլ գնալ իւր մօտ, նորից մաքրելու,

46 «Կովի ժամանակ անպատվաբեր վիճակ շատ է լինում»:

47 Դասակ:

48 Պահակ:

49 «Խոզ, շուն»:

50 Տեր կանգնեն:

51 «Այստեղ արգելք չկա»:

դեղեղու համար: Այդ միջոցին ներկայ էր դրացի թուրք կինը՝ Քաթանը, մէջ խառնուց խօսակցութեան, խոստացաւ ինքը տանել հիւանդին բժշկի մօտ, բայց նորա միջամտութիւնը ինձ դուր չէկաւ: Ինչո՞ւ էր եկել, ինչո՞ւ էր խառնում, չը գիտեմ:

Կուզէի այդ օրը դուրս գալ տանից եւ, եթէ հնար լինէր, ներկայանալ փաշին մի քանի յայտնի մարդկանց հետ եւ մնացածներին համար առանձին պաշտպանութիւն խնդրել: Մի բան, որ մենք պարտաւոր էինք հէնց առաջին օրն անելու, բայց զուլումը կարկտի պէս թափուց գլխներին, եւ ոչ ոք մեզանից այդ մասին չմտածեց ու չհոգաց: Այս բոլորի առթիւ խօսեցի Օսման Էֆէնդու հետ եւ ցանկութիւնս յայտնեցի նորան.

—Այո՛, եթէ այդպէս արած լինէիք, շատ լաւ կը լինէր, բայց ոչինչ, այսօր ուշ է, միտք չունի գնալը, վաղը ես քեզ մի ասկէր կտամ, որ ասպահով կերպով կտանի քեզ փաշայի մօտ:

Առաւօտ նոյեմբեր 3-ին՝ չորեքշաբթի, բաւական հանգիստ եւ ուրախ տրամադրութեամբ վեր կացայ այն յոյսով, թէ այդ օրը պիտի կարողանամ դուրս գալ եւ քաղաքի դրութեան մասին մի բան իմանալ: Մի քիչ բան ուտելուց յետոյ (այս օրում ո՛չ թէ էինք խմում եւ ո՛չ էլ ճաշում) գնացի մեր թաղի կօմանդատ Օսման Էֆէնդու մօտ: Շատ սիրով ընդունեց եւ անմիջապէս մի ասկէր նշանակեց, որ ինձ տանին նախ ալայի կօմանդատի⁵² մօտ, որտեղ ինձ ցոյց կը տան, թէ երբ եւ ինչպէս պիտի գնամ փաշայի մօտ: Ասկէրն ինձ տարաւ մեր նախկին պօլիցեմէյստերի բնակարանը՝ ոստիկանատան շինութեան մէջ: Ալայի կօմանդատը գնացել էր գանձարան, պէտք էր սպասել մինչեւ վերադառնալը: Օգտուելով այս հանգամանքից՝ համոզեցի ասկէրին գնալ մօտիկ տեղ բնակուող ընկերին տունը եւ այնտեղ սպասել: Համաձայնեց, եւ գնացինք նոր եկեղեցու երեցփոխ Սկրտիչ Կոստանեանի⁵³ տունն այն յոյսով, թէ նորան էլ հետս կը վերցնեն փաշի մօտ գնալու: Աստված իմ, ի՛նչ վիճակի մէջ տեսայ նորան: Մի քանի տասնեակ ընտանիքներ պատասխարել էին նրանց տանը, բոլորն էլ կին, աղջիկ ու մանր երեխայք, միայն ինքն էր տղամարդ, այն էլ փառատրապէս թալանած, եղբօրն էլ բանտ էին տարել: Բանից դուրս եկաւ, որ նորա տան վերայ էլ յարձակում են գործել գիշերը եւ աղջիկ պահանջել: Բարձրացրած աղմուկի վերայ է հասել թաղի կօմանդատը՝ մեր Օսման Էֆէնդին, ու նրանց էլ ազատել եւ պահապան ասկէր տուել, որին տեսայ նախասենեակում եւ մօտը թողի հետին ասկէրը: Ինչպէս ոչխարը աղի վերայ է վազում, այնպէս էլ այդտեղ հաւաքած թշուառ ժողովուրդը թափուց վերաս, ամէն կողմից հարցեր տեղացին գլխին, բոլորն էլ կուզէին լուրեր

52 Գումարտակի հրամանատար:

53 Սկրտիչ Կոստանյանը 1912 թ. ընտրվել էր Կարսում կառուցվող նոր՝ Սբ. Լուսավորիչ եկեղեցու շինարարութեան հոգաբարձութեան անդամ (ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 131, ք. 38 և շրջ):

իմանալ, տեղեկութիւններ ստանալ քաղաքում կատարած անցուդարձի եւ իրեանց սիրելիների դրութեան, մէկը իր հօր, միւսը եղբօր կամ քրոջ, մի ուրիշը եկեղեցիների եւ իրենց տների մասին: Չը գիտէի, որին ինչ պատասխանեմ եւ ի՞նչ կամ ինչպէ՞ս կարող էի բաւարարել այդ հարցերի տարափին: Շատերն էլ լուռ ու մունջ լաց էին լինում եւ այդ միջոցով միայն յայտնում իրանց ցաւն ու կսկիծը ու աղերսող աչքերով մի դարման, մի օգնութիւն խնդրում խղճուկ ու անօգնական մնացած քահանայիցս: Բոլորին էլ աշխատեցայ հանգստացնել՝ մի քանի յուսադրական ու մխիթարական խօսքեր ասելով.

—Ես էլ ոչ մի տեղեկութիւն չունեմ քաղաքի անցուդարձի մասին, նոր եմ դուրս եկել տանից փաշայի մօտ գնալու համար: Երբ թոյլտութիւն ստացայ ազատ ման գալու, այն ժամանակ միայն կարող եմ ձեզ տեղեկութիւն բերել, միայն թէ դուք մի ցուցակ կազմեցէ՛ք, թէ քանի ընտանիք կաք այստեղ եւ քանի հոգի, անուն-անուն, որպէսզի ես էլ կարողանամ ձեզանից լուր տանել նորանց, եթէ պատահեցի եւ նորանցից էլ ձեզ լուր բերել, միայն այս ձեռով կարող եմ ձեր խնդիրները կատարել: Բայց դուք էլ պիտի հանգիստ մնաք, չը յուսահատեք, լաց չը լինեք, լացով չէք կարող այս մեծ ցախն օգնել, այլ համբերութեամբ ու սիրով տանելով: Աստուած ողորմած է, կազատեք այս ցախից:

—Օրհնի՛ր, տէ՛ր հայր, օրհնի՛ր մեզ,— ասացին ու չորեցին առաջս:

Արտասուքն աչքերին՝ մի պահպանիչ ասացի, խոստացայ էլի գալ ու այցելել եւ նստայ Սկրտչի մօտ խօսելու: Միտքս յայտնեցի փաշայի մօտ գնալու մասին, խնդրեցի, որ ինքն էլ ընկերանայ, բայց նա այն վիճակի մէջ էր, որ հնարատրութիւն չունէր տանից դուրս գալու: Ես էլ չստիպեցի, մի պնակ տաք կերակուր էին բերել, որից մենք զուրկ էինք այս քանի օրը, կերայ եւ տանից դուրս եկայ: Ալայի կօմանդատը դեռ չէր վերադարձել, այս բանից էլ օգտուելով՝ կամեցայ տէր Կորիւնի տան կողմը գնալ: Գուցէ նորան կը գտնեմ եւ հետս կը վերցնեմ: Յայտնեցի ասկէրին, նա էլ համաձայնեց: Պօլիցեյսկի եւ Գուբերնատորսկի փողոցներով անցայ տէր Կորիւնի կեցած տան կողմը: Բժիշկ Տէր-Յարութիւնեանի էջմիածնապատկան տունը, որտեղ տեղաւորւած էին առաջնորդարանը եւ հոգեւոր կառաւարութիւնը, հետեւի մասում էլ տէր Կորիւնն էր մնում: Դռները բաց էին, ներս մտայ, ոչ ոք չկար, կահ-կարասիք ցիրուցան ու ջարդուած, պահարանի մէջ ընկած էր միտոնի դատարկ շիշը, որը լիքը եւ էի բերել Էջմիածնից: Մտայ տէր Կորիւնի կեցած բաժինը՝ աւելի վատ. կահ-կարասիք շուռ տուած, ջարդուվիշուր եղած, յատակի վերայ բուրդ ու բամբակ շաղ տուած, ամէն բան տակն ու վերայ եղած: Հոգեւոր կառաւարութեան գործերը, չափաբերականները՝ ներսը եւ դուրսը, բակում ցիրուցան եղած,

ցեխի ու կեղտի հետ շաղախած, պատռուած, որոց ի՞նչ դժարութեամբ ու ծանր աշխատանքով էի հաւաքել ու կարգի բերել: Նոյն դրութիւնը տեսայ եւ բակի մէջ գտնուած առանձին տանը, որտեղ Վաղարշակ Ռ-ափայլէեանն էր մնում: Կոտրուած ու ճնշուած սրտով դուրս եկայ փողոց, մտայ դէմի տունը, ուր փեսաս՝ Լեւոն Աբրահամեանն էր մնում: Դէմս ելաւ մի թուրք պաշտօնեայ.

– Ի՞նչ ես ուզում,– հարցրեց:

– Փեսայիս ընտանիքն էի ուզում տեսնել, որ այստեղ էին մնում,– ասացի վախեցած:

– Այստեղ ոչ ոք չկայ, մենք ենք մնում,– կոպիտ կերպով պատասխանեց եւ դուռն երեսիս փակեց:

Անցայ տան միւս կողմը, որտեղ փեսայիս հորեղբայրը՝ Մարալն էր մնում: Դէմս դուրս եկաւ տանտէրը՝ մի յոյն կին եւ ասաց, որ Լեւոնի կովերը, եզներն ու ձիաներն ասկերները տարան, իրանցից էլ ոչ ոք չկայ: Անցայ Աղէքսանդրեան փողոցը եւ մտայ նոր եկեղեցին եւ նորան կից սենեակը, որտեղ մնում էր կեսարացի Տէր-Մեսրոպը քահանան: Մուկայի աւերածութիւն. մի նշխարի տիպ վերցրի սենեակից եւ հեռացայ աչքերս փակելով: Այդ փողոցի վերայ՝ բժ. Ղազազեանի տան ներքեւում՝ մի աւերակ տան աղբիւրի մէջ, երեսն ի վայր ընկած մի մերկ դիակ տեսայ: Ո՞վ էր արդեօք այդ խղճալին: Մի ակնարկ միայն զգեցի ու անցայ: Վերջապէս մտանք ոստիկանատուն:

Ալայի կօմանդատը եկել էր: Հրախիթեցին նորս մօտ: Մի երիտասարդ պաշտօնեայ էր, որ արհամարհական ձեւով հարցրեց, թէ ի՞նչ է խնդիրս: Որքան կարող էի, բացատրեցի ով լինելս եւ փաշային ներկայանալու նպատակս: Դարձաւ ասկերին.

– Փափագ էք ներսն ու կտանես փաշայի մօտ,– ասաց ու արձակեց:

Դուրս եկանք այդտեղից, Լորիս-Մելիքեան փողոցով անցանք դէպի կայարանի կողմը: Պատահող թուրքերն ինձ տեսնելիս ատամները կրճտացնում եւ հայիտում էին, որոց ո՛չ ուշք էի դարձնում եւ ո՛չ էլ լսում: Ասկերն ինձ տարաւ կայարանի մօտ՝ ճարտարապետների բնակարանը: Պատշգամբում մի քանի մոլլաներ էին կանգնած ինձ անձանոթ, որոնք դիւային ակնարկ զգեցին վերաս: Ես բարեւեցի նորանց ու ներս մտայ: Ասկերս գնաց իմաց տալու եւ քիչ յետոյ բարկացած ու հայիտելով ասաց՝ գիդախ⁵⁴ եւ ինձ դուրս տարաւ: Ճանապարհին հարցրի, թէ ի՞նչ ասաց փաշան, ասկերը նորից հայիտելով պատասխանեց. «Ի՞նչ պիտի ասէր, մեծ մարդիկ են, ժամանակ չունէր ընդունելու, ասաց, որ տարէք տուն, լաւ պահպանեցէ՛ք, յետոյ ես կը կանչեմ»: Միրտս կասկած ընկաւ. ուրեմն իզուր անցաւ չարչարանքս, չկարողացայ փաշային տեսնել, ո՞վ գիտէ, ինչ պիտի պատահի մեզ հետ: Անցանք մի վաշտ թուրք ասկերների մօտով, որոնք երգելով

գնում էին մերկ ու բոբիկ, այլանդակ տեսքով: «Մի՞թէ տրանք էին Կարս առնողները»,– մտածեցի եւ եւ տխուր խոհերով գնում էի ասկերիս ետեւից: Անցանք 6-րդ ու 7-րդ որբանոցների առջեւից: Չկային առաջայ ուրախ խաղերն ու աղմուկը, ոչ ոք չէր երեսում նորանց բակերում, հատ-հատ ծառայողներ ուրականի պէս անցնում էին, կարծես մահուան հրեշտակ էր անցել այդ տեղերի վերայից: 7-րդ որբանոցի լուսամուտների առաջ մի աղմուկ կար, մէկը դրսից կախ էր ընկել մի կնոջ փեշերից, իսկ մի երկուսը լուսամուտից վեր էին քաշում այդ կնոջը եւ աղմկում: Նկատեցի, որ ներքեւից քաշողը թուրք տղամարդ էր, երեւի որսը ձեռքից փախցրել էր, ու խեղճ կինը հագիւ իրան զցել էր որբանոց:

Փողոցներում ոչ մի հայ չտեսնեց, խանութները մեծ մասամբ բաց էին ու թալանուած: Նոյն վիճակին էին ենթարկել նաեւ տները, բուրդ ու փետուրը բռնել էր ամէն տեղ: Լորիս-Մելիքեան փողոցի վերայ տեսայ բաց մի դասաքի խանութ՝ հրաշալի մսերով կախ տուած, մի քանի սրճարան՝ թուրքերով լեցուն, եւ հատուկեմտ մանրավաճառների խանութներ՝ թուրքերի կողմից գրաւած:

Վերջապէս հասանք Առաքելոց եկեղեցոյ դուռը: Խնդրեցի ասկերիս այնտեղ էլ մտնել, թէեւ ակամայ, բայց համաձայնեց:

Եկեղեցու դուռը բաց էր: Ներս մտայ, աչքերս սեւացան. ամէն բան տակն ու վերայ եղած ու ջարդոտուած, գրքերը պատռուած եւ ցիրուցան եղած, իսկ արժեքատու բաները՝ անյայտացած: Արտասուքն աչքերիս՝ դուրս եկայ եւ ցանկացայ բնակարանս էլ տեսնել: Դուռը չէին բաց անում: Մի կերպ բանալ տուինք եւ ի՞նչ, բացի իմ գիտեցած երկու կաղզւանցի ընտանիքից, որոց խնդրել էի եկեղեցուց փոխադրել իմ տունս, լեփ-լեցուն տեսայ ուրիշ շատ ընտանիքներ եւս թէ՛ կաղզւանցի եւ թէ՛ քաղաքի նոր թաղամասից, որոնք տակն ու վերայ էին արել ամէն բան ու սաստիկ կեղտոտել: Կաղզւանցի տէր Մկրտչի կինը յարձակեց վերաս կատաղի աչքերով ու սկսեց մեղադրել ինձ, որ իբր թէ ես փախայ եւ պատճառ եղայ թէ՛ եկեղեցին եւ թէ՛ իրան թալանելուն.

– Գոնէ աղջիկս տանէիր եւ անպատուութիւնից ազատէիր: Սպասի՛ր, կաթողիկոսին անգամ պիտ բողբեն:

– Երեցկին, ի՞նչ ես իմացեր,– ասացի նորան հանդարտութեամբ,– մոռացա՞ր, ինչ որ ասացի քեզ եղբօրս աղջկայ տունը փոխադրելուս օրը, կարծում ես, որ ես աւելի ապահով վիճակի մէ՞ջ եմ եղել ու չե՞մ թալանել, ողորմելի՛ կին:

Ինչեւիցէ, մի կերպ հանդարտեցի դորան, միւսներին էլ յուսադրեցի ու քաջալերեցի եւ խնդրեցի հանգիստ մնալ, տունը մաքուր պահել եւ իրերը չփչացնել: Դուրս եկայ եւ գնացի տուն՝ բոլորովին ջարդուած ու լքուած: Տանեցիք անհանգիստ ինձ էին սպասում: Ասկերիս մի բան կերցրի ու արձակեցի,

54 Գնանք:

շատ էի ման ածել խեղճին, եթե նա չլիներ հետս, երկու քայլ անգամ չէի կարող ազատ շրջել:

Ճաշը դեռ չէի վերջացրել. ահա ներս մտա մեզ մօտ Լեւոն փեսայիս հորեղբայր Մարալը, որի կինն արդեն մեզ մօտ էր: Եկա բոլորովին թալանած, ցնցոտիների մէջ փաթաթած, հիւծած ու մոլորած: Դորան էլ մի քիչ հանգստացնելուց ու կերակրելուց յետոյ տարայ կօմանդատ Օսման Էֆենդու մօտ, յայտնեցի, որ ինձ մօտ գտնուած վիրատուր աղջկայ հորեղբայրն է, կինն էլ մեզ մօտ է, ինքը գիւղ էր գնացել գործով, այժմ մի կերպ վերադարձել է եւ ինձ մօտ եկել: Ծերացած ու հիւանդ է, եթե կարելի է, թողնել ինձ մօտ մնալ, երբ հարկատու լինի, կը ներկայացնեն: Ուրախութեամբ համաձայնեց, որին շնորհակալութիւն յայտնեցինք ու հեռացանք:

Երեկոյեան դէմ ինքը՝ կօմանդատը, մեզ մօտ եկաւ, յայտնեց, որ փոխադրուելու են ուրիշ տեղ, իւր տեղն արդէն մի ուրիշին են նշանակել: Յաւ էր յայտնում, որ այդպէս շուտ է գնում եւ մեզ էլ սիրտ էր տալիս, որ ամէնէին չվախենանք, իւր յաջողին պատմել է արդէն մեր մասին, նա էլ խոստացել է պաշտպանել, պահապան ասկերներն էլ միառժամանակ կը գան զիշերները: Խորին ցաւ զգացինք այդ տխուր լուրը իմանալով: Օսման Էֆենդին, երբ իմացաւ, որ այսօր Տիկուշը չէ կարողացել գնալ բժշկի մօտ վերքը լւանալու՝ ընկեր չունենալու պատճառով, յայտնեց, որ բժիշկն էլ իւր հետ պիտի գնայ, եւ այս զիշեր անցնելու են Ղարադաղ ամրոցը եւ այնտեղից Աղէքսանդրապօլ, ուստի առաջարկեց Տիկուշին իւր հետ գնալ եւ մի անգամ էլ մաքրել ու կապել տալ վերքը: Ես էլ հետները գնացի: Մօտ էր բժշկի տունը, տեսնելու էր, թէ ինչպիսի համբերութեամբ ու սիրով մաքրեց վերքը ու կապեց՝ չնայելով, որ ձիերը պատրաստ դասը սպասում էին: Խորին շնորհակալութեամբ եւ երախտագիտութեամբ բաժանեցինք այդ պատուական անձնաւորութիւններից, որոնք իսկապէս մեզ պաշտպանեցին ու հոգացին առանց որեւէ ակնկալութեան ու մեծ ցաւ զգացինք, որ զրկեցինք այդպիսի մարդասէր ու բարի պաշտպաններից:

Գիշերը, երբ հանգիստ նստած՝ խօսում էինք օրայ դէպքերի մասին եւ լսում Մարալի պատմածները, թէ ինչպէս ձորից վերադառնալիս կորցրել է տանեցուց եւ ինչպէս իսպառ թալանել՝ կորուստ տալով նաեւ Լեւոնի՝ իրեն պահ տած փոքրիկ արկղը 40 միլիօնից աւելի դրամով, յանկարծ մի աղիողորմ ձայն լսեց կտուրի լուսամտից. «Ի սէ՛ր Աստուծոյ, դուք հայ էք, մի դուրս արէք եւ ինձ ազատեցէ՛ք ասկերներից»: Չայնը ծանօթ էր: «Կակոսենց Գեորգը կը լինի», – ասացի եւ տան պահապան ասկերի հետ դուրս եկայ բակը: Իսկոյն պատերից վայր թափեցին մի քանի զինած ասկերներ ու մեզ շրջապատեցին: Երբ հասկացայ, որ կուզեն Ղարադաղ ամրութեան ճանապարհը ցոյց տայ, քաղաքավարութեամբ հասկացրի, որ այդ մարդը, որին բռնել են, չի

կարող, մօտակայ թուրքեր կան, որոց պէտք է ձայն տալ, եւ նոքա էլ ցոյց կը տան: Բայց իմ խօսելովս ո՛չ Գեորգին կարողացայ ազատել, ո՛չ էլ ինձ, չթողին մինչեւ անգամ կօշիկ հագնել ու գլխարկ ծածկել: Քարշ տուին բակից դուրս եւ մի երկու հարած էլ տալով՝ առաջ խառնեցին երկուսիս էլ, որ գնանք, Ղարադաղի ճանապարհը ցոյց տանք: Լաւ էր, որ պահապան ասկերին խնդրեցի հետս գալ, ու նա էլ եկաւ:

Մութ գիշեր էր, ցուրտ ու անձրեւ: Գեորգը իւր գլխարկն իմ գլուխս դրեց, որպէս թէ չմրսեմ: Պատահեցինք մի երկու տեղացի թուրքերի, խնդրեցինք, որ իրենք յանձն առնեն ցանկացած ճանապարհը ցոյց տալու եւ մեզ ազատեն, բայց չլսեցին: Մի ժամու չափ շարժարկելով, փշէ պատարներին դիպչելով, ձեռք ու երես արիւնոտելով՝ մեծ խրամատն էլ անցկացրի մեզ հետ եկող հարիւրի չափ զինորդներին: Նոցա հայիոյեանքը, ծաղր ու ծանակը տանելով՝ վերջապէս դուրս եկանք ճանապարհի վերայ: Հէնց այդ միջոցին էլ ամալի տակից երեսաց լուսինը եւ պարզ ցոյց տեց Ղարադաղի պատերը: Ես ցոյց տուի այդ պատերը զինորդներին եւ խնդրեցի թոյլ տալ վերադառնալու, բայց նոքա չհաւատացին, ինձ շրջապատեցին եւ անվերջ հայիոյանքներով մինչեւ իսկ սպառնում էին սպանել: Այդ ժամանակ Բայրամ փաշայի թաղի կողմից մի երկու մարդ բարձրացան եւ շարունակ հարցնում էին՝ քի՞մ դրո՞՞՞: Ասկերների մեծը մօտեցաւ նորանց եւ երբ իմացաւ, որ զիշերային պահապաններ են Բայրամ փաշից, հարցրեց, թէ ո՞րն է Արաք Թաքիի (Ղարադաղի) ճանապարհը: «Հէնց այդ է, որ կանգնել եք, ու երեսացողն էլ Արաք թաքէն է»: Լսելով այդ՝ դիմեց ասկերներին եւ ասաց. «Էխտիարա էլ վերմէին, դոյու վերն, գիտսըն, տողրի ատամ տըր»⁵⁶ ու թեւիցս բռնելով՝ հեռացրեց զինորդներից եւ ճամբու դրեց: Բայրամ փաշի թուրքերն ինձ տեսան եւ շատ զարմացան:

– Դու այստեղ ի՞նչ ես անում, տէ՛ր Խորէն, – ասացին, – չոք շէյ, չոք շէյ⁵⁷:

Մութն էր, չճանաչեցի դրանց, մի քանի խօսքով բացատրեցի եւ հեռացայ: Փշէ արգելարանի մօտ գտայ Գեորգին ու ասկերին, որոց հետ վերադարձանք տուն: Դճանապարհին պատահեցին մի քանի թուրքեր, բայց մօտներս ասկեր տեսնելով՝ բան չասացին, թողին անցան: Ասկերիս հետ Գեորգին էլ իւր տուն տանելով՝ եկայ տուն: Աղջիկներս սարսափած ու վախեցած երեսս էին նայում: Նոր նկատեցի, որ ձեռքերս ու երեսս փշերից պատառուտել են: Ժամը 10-ն անցել էր, թէւ պառկեցի, բայց շատ անհանգիստ գիշեր անցկացրի:

Հետեւեալ օրը՝ հինգշաբթի՝ նոյեմբերի 4-ին, թաղի նոր կօմանդատն ինձ կանչել էր: Թեյից յետոյ

55 «Ո՞վ է»:

56 «Ծերունուն ձեռք մի՛ տաք, թողէ՛ք, գնա, ճիշտ մարդ է»:

57 «Շատ բան»:

զնացի մօտը: Անունը Շառլի էֆենդի էր: Միրով ընդունեց:

–Ձեր մասին նախորդս ինձ պատմել է, բոլորովին հանգիստ եղեք, ես քանի այստեղ եմ, ձեզ ոչ մի բան չի լինի:

Շնորհակալություն յայտնեցի եւ ասացի, որ յոյս ունեմ, որ Օսման էֆենդու նման բարեկամներ կը լինենք ու մեզ մօտ էլ կայցելէք:

–Շատ լաւ, շատ ուրախ կը լինեմ,– ասաց ու աւելացրեց,– միայն այժմ մի նեղութիւն պիտի տամ ձեզ, մեր հիւքիւմաթը⁵⁸ ինձանից պահանջում է հայերի ցուցակը ինձ յանձնուած քաղերում՝ Բայրամ փաշա, Բերդի մէջ, ժամտուն քաղ, Չոխտը մահլա եւ Մուղաթի: Եթէ ձեզ նեղութիւն չի լինի, կազմեցէ՛ք այդ ցուցակը, միայն հարկատըր է անուն-ազգանուն գրել եւ ընտանիքի թիւը:

Ուրախութեամբ ընդունեցի, քանի որ միջոց պիտի ունենայի աւելի մօտ ծանօթանալու ժողովրդիս վիճակի հետ:

–Մենակ չեմ կարող զնալ, ինձ հետ պետք է մի ասկէր էլ լինի, որ կարողանամ ազատ ման գալ,– ասացի:

–Լաւ, լաւ, ասկէր կտամ, մի չաուշ էլ կը նշանակեմ, միայն թէ աշխատեցէ՛ք շատ շուտ վերջացնել: Մի ժամից յետոյ կողարկեմ նշանակած մարդիկ, կը զնաք ու կը գրէք:

–Լաւ,– ասացի ու զնացի տուն:

Թուրք ու մատիտ պատրաստեցի: Մի ժամից եկան ասկէրն ու չաուշը, որոց հետ ծանր մտատանջութեամբ եւ ճնշող սրտով դուրս եկայ գրելու:

Կարծում էի, որ առաջայ նման ամէն տուն եւ ժողովուրդ իւր տեղը պիտի տեսնեմ, բայց որքա՛ն սխալուած եմ եղել:

Ոչ մի տուն չէր մնացել իւր տեղը եւ ոչ էլ առանց քալանելու: Այն տները, որոց բնակչութիւնը թողել հեռացել էր, իսպառ տակն ու վերայ էր եղած, անկողիներին ու բարձերի երեսները տարած, միջինները դուրս էին տուած, ամէն կողմ բուրդ ու բամբակ, փետուր ցիրուցան էին եղած, կահ-կարասիներ կտտրատել ու ամէն բան ջարդուփշուր էին եղել: Տէ՛ր Աստուած իմ, ինչպիսի՛ սեւ-սեւ պատկերներ անցան կտրացած աչքերիս առջեւից այդ օրը: Մարդու գրիչն անգամ չի զօրում գրի առնել, բայց պիտի փորձեմ մի քանի օրինակ գրել նմուշի համար:

Ա. Դոթրուղճեան Համազասպի տան վերի յարկում՝ մահճակալի տակ, բուրդ ու փետուրի հետ խառն, արեան մէջ շախաղուած տեսայ մի պառաւ կնոջ դիակ, որ մայր էր քիթիսցի երկու եղբօր ու համեստ ընտանիքի ծնող ու կառաւարդ: Այդ մեծ ու հարուստ տանը գրելու բան չունէի, որովհետեւ թէ՛ վերի եւ թէ՛ վարի յարկում մարդկային շունչ չկար: Մահն էր այդտեղ թագադրում: Բակից դուրս գալուց

յետոյ, դրացի մուլայի տանը ապաւինող մի հայ կին հաղորդեց ինձ, որ Համազասպի մօրն էլ խեղդել են, առի մէջն են գցել ոչ շատ հեռու այդ տանից:

Բ. Անցայ Թումոյենց տունը, վերի յարկի մի սենեակում նկատեցի մարդու շարժում: Վերեւ բարձրացայ, սենեակը ներսից չանկալով փակած էր, զմելիս հանեցի, ծայրով չանկալը բարձրացրի ու ներս մտայ: Մի թուրք՝ հասարակ շորերով, հրացանն ուսին, չարուխները ոտներին, յետ ու առաջ ման էր գալիս սեւ, մրոտ երեսով, իսկ յատակի վերայ, ցնցոտիներում փաթաթած, վայր էին թափուած կանայք ու աղջկերք:

–Ի՞նչ ես անում այստեղ,– հարցրի թուրքին:

–Բակչի եմ,– պատասխանեց,– իսկ դու ի՞նչ կուգես:

–Ես էլ եկել եմ չաուշի հետ սորանց գրելու:

Ասելս ու չաուշի անուն իմանալուն պէս անհետացայ: Ես դիմեցի չուլ ու փախաւի մէջ փաթաթուած կանանց, որ երկիւղից գլուխներն անգամ չէին ուզում դուրս հանել:

–Մի՛ վախենաք, մայրիկներ ու քոյրիկներ, տէրտէրն եմ, տէր Խորէնն եմ, բան պիտի ասեմ:

Քահանայի անունը լսելուն պէս գլուխները դուրս հանեցին կարպետների տակից, վախեցած աչքերով շուրջը նայեցին:

–Ո՛ր կորաւ էն անօրէնը: Ա՛խ, տէ՛ր հայր ջան, ոտներիդ դուրբան, մեզ ազատի՛ր էդ գազանից,– մէջ ընկաւ մի հասակով կին ու լալով պատմեց,– Էս երկու գօր ու գիշեր է, հոգիներս հանել է, չէ խնայէ ես 8-9 տարեկան աղջկան անգամ, ահա՛ տրան չարչարել է, տրա՛ն, տրա՛ն, տրա՛ն,– ու մէկը միսի հետեւից ցոյց տուց զոհ գնացած աղջիկներին, որոնք սփրթնած, աչքերը կապուտկած չէին համարձակում կարպետի տակից դուրս նայել անգամ, իսկ 8-9 տարեկան աղջկայ վախեցած դէմքն այնպէս սուկալի էր, որ չկարողացայ նայել երեսին, մազերս փշաքաղուեց, ու մի սուկում անցաւ մէջս: Դուրս եկայ, չաուշը դռանն սպասում էր:

–Նէ՛րս արեք,– ասացի եւ,– ի՞նչ եղավ այստեղից դուրս եկող բակչին:

–Չը տեսայ, ի՞նչ է պատահել,– հարցրեց:

–Ոչինչ, յետոյ կասեմ,– ասացի ու սկսեցի գրել:

Բանից դուրս եկաւ, որ եօթն ընտանիք են հաւաքել այդտեղ, 22 հոգուց բաղկացած, բոլորն էլ կին ու աղջիկներ՝ կարծելով թէ գլուխներն ազատել են վտանգից:

Գ. Դիմեցինք մի ուրիշ տուն: Ճանապարհին չաուշին մտերմօրէն պատմեցի այդ տան մէջ պատահած դէպքը:

–Եղբա՛յր,– ասացի,– դուք էլ տուն ու տեղի, կնոջ, երեխայի տէր մարդիկ էք, հաւատ ունեք, Աստուած էք ճանաչում, մի՞թէ կարելի է բռնաբարել 7-8 տարեկան երեխային: Գիտենք, որ կովի մեջ անպատուութիւններ շատ կը լինեն, բայց մարդու համար ամէն բան չափ ու սահման պիտի ունենայ:

58 Կառավարություն:

Չաուշը լսում էր ասածս, բայց ոչ մի խօսք չարտասանեց, միայն ասաց. «Ո՞ր կորաւ եղ անիծածը»:

–Չը տեսայ,– ասացի ու վերջացրեց:

Մտանք Սանթուրճի Սարգսի կնոջ՝ Մարջանի տունը: Մի սենեակում, մաքուր յարդ արած, վառարանն էլ վառած՝ դէմը նստած տաքանում էր մեծ քաջագործութիւն կատարող բակչին: Աչքով ցոյց տւի չաուշին, ու նստանք գրելու. կաղզւանցի երկու ընտանիքի մնացորդ երկու կանայք կային այդ տանը, որոնք չաուշի մօտ ամենայն կեղծաւորութեամբ սկսեցին գովել բակչուն, իրենց պահապան հրեշտակն անանել, իրենց փրկողը: Ականջներին չէի ուզում հաւատալ, չոստ աչքերով նայում էի երեսները եւ զարմանում, թէ ինչպէ՞ս են շաղակրատում, եւ մի՞թէ այդպէս բարոյապէս ընկած կարող է լինել հայ կինը: Նկատեցի, որ չաուշը չէր ուզում դուրս գալ, բայց ես վեր կացայ ու ոչ մի խօսք չասած՝ հեռացայ այդ տանից:

Դ. Քարէ կամուրջի դէմը՝ Լաչին բէկի կարմիր տների վերի յարկում, Բաղչինենց Կարոյի ամբողջ ընտանիքը՝ 8-9 հոգուց բաղկացած, բռնաբարել ու կոտորել էր, չէին խնայել մինչէ իսկ ծծի երեխային: Չկարողացայ այդ տունը բարձրանալ ու աչքով տեսնել այդ արեան ճապաղիքը:

Ե. Քիչուկ Հաճու տների վարի յարկում մի այնպիսի խառնիճաղանջ մարդկային խառնուրդի հանդիպեցի, որ առանց տսկալու չեմ յիշում այդ պատկերը: Բայց աւելի տսկալին այն էր, որ այդ խառնիճաղանջի մէջ պատառոտում շորերով, մրտած, կեղտոտած երեսներով, կեղտի ու ոջիլի մէջ պահել, թաքնել էին ջահել հարս-աղջիկները, որ այդ միջոցով գոնէ կարողանան ազատել իրենց պատիւն ու նամուսը:

Երեսուն տան չափ անցել եւ 150-ի չափ ընտանիքների մնացորդներ գրեցի: Ժողովուրդը, թողած իւր տուն ու տեղը, բնագործն հաւաքել էր իրար գլխի, տղամարդիկ կան փախել-հեռացել էին, կան ասկերները եկել էին, հաւաքել, տարել: Մնացել էին հարս ու աղջիկներ՝ անտէր, անպաշտպան եւ ամեն տեսակ անարգանքի ենթարկւած: Բաց մնացած տներն աւերած ու թալանւած էին: Նոյն վիճակին էին մատնւած նաեւ խանութները:

Հետիս չաուշն ու ասկերն աչքերը չոստ նայում էին մտած տներս եւ փնտրում աչքի ընկնող իրեր ու վերցնում: Երբ նկատում էի նորանց այդ բանը, ասում էին, որ իրանց պատիւրած են զենք կամ տղամարդ պատահելիս վերցնենք: Բայց ի՞նչ կարող էի անել, որքան հնար էր, աշխատում էի սիրտ տալ, յորդորել, զգուշացնել, մխիթարել, հանգստացնել իմ ժողովրդին, իսկ չաուշին ու ասկերին աղաչում-պաղատում էի, որ գոնէ իմ ներկայութեամբ այդպիսի բաներ չանեն: Ոսկերիչ Համոյի վրայից խլած պինճակն անգամ չկարողացայ յետ ստանալ ու տիրոջը վերադարձնել: Վերջապէս օրը տարածամեց: Չա-

ուշն առաջարկեց՝ կէսն էլ վաղը շարունակենք գրել, ես ամենայն սիրով ու սրտի բերկրանքով ընդունեցի ու բաժնեցայ այդ հրէշներից: Ջարդած, բեզարած հոգով ու սրտով, ընկճւած տուն ընկայ, մի կտոր հաց կերայ ու պառկայ հանգստանալու, բայց ի՞նչ հանգստանալ:

Հետեւեալ օրը՝ նոյեմբեր 5-ին՝ ուրբաթ առաօտ, սաստիկ ճնշւած ու տխուր սպասում էի չաուշին եւ ասկերի գալուն, որ գնանք ինձ յանձնւած դժոխային գործը շարունակենք, բայց նոքա ուշանում էին: Երեկ ես նկատել էի, որ նրանց դուրը չէր գալիս, որ արգելում էի իմ ներկայութեամբ թալան անել եւ մանաւանդ որ մանրամասն տեղեկութիւն էի հաւաքում իմ թշուառ ժողովրդիս դրութեան մասին, թէի մեծաւ մասամբ նորանցից գաղտնի էի կատարում այդ բանը:

Այս մտօրումների մէջ էի, որ մի հայ կին երկու թուրք պաշտօնեաների հետ ներս եկաւ մեր տուն:

–Ո՞ր է այն թուրք կինը, որ եկավ մեր տունը թալանեց եւ այստեղ մտաւ, երեւի դուք նորան պահեցիք, ի՞նչ եղաւ իմ ապրանքը: Շո՛ւտ, ցո՛յց տւէք,– ասաց ու սկսեց աղմուկ բարձրացնել:

Մենք մնացել էինք շարած եւ չը գիտէինք ի՞նչ պատասխանել: Լաւ էր, որ թուրք պաշտօնեաները շուտ գլխի ընկան եւ այդ կնոջը դուրս տարան: Ես ետեւներից դուրս եկայ բակը: Բանից ի՞նչ դուրս եկաւ. թուրք պաշտօնեաները յայտնեցին, որ իրենք այս թաղի նոր նշանակւած կօմանդատն ու օգնականն են: Նորից փոփոխութիւն, երեւի նկատեցին իմ շփոթութիւնը եւ իսկոյն ասացին.

–Մեր նախորդը ձեզ յամար պատմել ու մեզ է յանձնել ձեր տան պաշտպանութիւնը: Մենք պիտի տեղափոխուենք աւելի մօտ բնակարան, այս եկեղեցու դէմը, դուք մի՛ վախենաք, ձեզ ոչ մի վատ բան չի պատահի, եւ մենք աւելի լաւ բարեկամներ կը լինենք:

Այս խօսակցութեան ժամանակ մեր բակը մտաւ այլանդակ կերպարանքով, բարձրահասակ, ոտից մինչէ գլուխը թելի կաժեր⁵⁹ փաթաթած ու գլուխն էլ դարուիչի նման սարքած մի անձնաւորութիւն, որ ուղղակի լալով գիրկս ընկաւ: Մեծ եղբօրս որդի Կարապետն էր: Բանտից ազատել էին, ու հազիւ տուն էր ընկել: Ծանօթացրի պաշտօնեաների հետ, որոնք ցաւակցութիւն յայտնեցին եւ սկսեցին ամեն կերպ հանդարտեցնել. «Բան չկայ, ամեն բան կանցնի, ամեն բան կը մոռացի, վերջը լաւ կը լինի, մենք նորից կը տեսնենք, աւելի մօտ կը ծանօթանանք»:

Կարապետիս ներս տարայ: Սկսեցին լացը եւ ուրախութիւնը: Մի կողմից փաթաթած թելերն ենք քանդում, միւս կողմից լսում բանտի արհաւիրքների պատմութիւնը⁶⁰, թէ ինչպէս տարած օրից ուղքից

59 Բամբակի, բրդի մետաքսի մանած թելի փաթույթ:

60 Կարապետ Ստամբուլյանի պատմութիւնը մանրամասն տես՝ **Ուլուքաթյան Բ.**, Հայագետ ու հոգևորական մեծ գործիչ Գարեգին Հովսեփյանի ձեռագիրը, «ԲՀԱ», 1989, № 3, էջ 136-138:

մինչև գլուխ թալանել են մինչև վերջին շորը եւ այդպէս հազարաւոր բանտարկեալներին, թէ ինչպէս օրերով քաղցած ու ծարաւ են պահել, մինչև իսկ պատուհանների վերայ բռնված գոլորշին լիզելով՝ կամեցել են իրեանց ծարաւը յագեցնել: Շատերը սեփական մեզերը սառեցրել ու խմել են, իսկ երբ դրսից ասկերներից խնդրել են կտորից թափած ջուրը տալ խմելու, նոքա դրա փոխարէն մէզ են տուել խմելու:

Թելերից ազատեցինք Կարապետիս, մի կերպ հագցրինք ու սկսեցինք կերակրել, բայց այս ուրախութիւնը կատարեալ չեղաւ, որովհետեւ փեսայ Կարապետին չէին ազատել, թէւ շատ հասակատրների ու ծերերի արձակել էին:

Չառուշն ու ասկերը չեկան: Բարօք համարեցի ինքս գնալ Շառի էֆէնդու մօտ: Շատ քաղաքաւարի ընդունեց, յայտնեց, որ ցուցակագրութիւնը յանձնած է ուրիշին, որ ամբողջ քաղաքը ցուցակագրի: Գրածս էլ, որ հետս տարել էի, չընդունեցին: Մտքովս շատ ուրախացայ եւ շնորհակալութիւն յայտնելով՝ դուրս եկայ: Հանգամանքից օգտուելով՝ մտայ այդ տան վարի յարկը, ուր ապաւինած էր Սիմէօն Մարգսեանը: Նա, արտասուքն աչքերին, պատմեց իւր սոսկալի վիճակը.

–Մի շաբաթ է, որ խեղճ աղջիկներիս մահճակալի տակ են պահում, մեռնում են, ի սեր Աստծոյ, մի ճար արա ու տար աղջիկներիդ մօտ եւ ազատիր նորանց անպատուութիւնից:

–Բայց մի՞թէ այստեղ ապահով չէ,– ասացի,– վերեւում կենում է թաղի կօմանդատը, որ մի պատական մարդ է երեւում:

–Օ՛, դու չգիտես, տէ՛ր հայր, թէ հէնց այդ կօմանդատը իւր ընկերներով ի՞նչ սոսկալի գիշերներ է անցկացնում, այս գիշեր երկու կին էին բերել ու մինչև լոյս քէֆ էին անում:

Ականջներիս չէի ուզում հաւատալ, այնպիսի քստմնեցուցիչ բաներ իմացայ այդ տան մասին, որ գրի առնել անգամ չեմ կարող, սրտէս արիւն էր կաթում, անպատճառ կուզէի ազատած լինել նորան, աղջիկներին, որոց մեծը Շամունէիս մօտ ընկերն էր:

–Մեր տունն էլ ապահով չէ, Սիմէօն աղա, իմ աղջիկներիս էլ պիտի հեռացնեն եւ ինչ գնով լինի, ամերիկացոց որբանոցները գցեն, բայց եւ այնպէս, մի կերպ փոխադրի ձեր տունը, այնտեղից մօտ է, աղջիկներին ուղարկիր մեզ մօտ, աշխատիր, գուցէ յաջողի որբանոց ուղարկել:

Թախիծն ու կասկածը սրտումս՝ թողի ու հեռացայ այդ տնից:

Երեկոյին դեմ ինչ-որ ասկերներ եկել էին մեր դռան առաջ եւ նեղութիւն պատճառել: Կանայք էլ՝ մեր Սոֆյան ու Մարալի կին Մարիամը, գնացել, կօմանդատին իմաց էին տուել, խնդրել, աղաչել ու պահապան ասկեր էին բերել:

Շաբաթ է՝ նոյեմբերի 6-ը: Կարսի անկումից ութն օր է անցել, ութ օ՛ր: Թալանը կարծես վերջացել է,

քաղաքը բաւական խաղաղւել է, կառաւարութիւնը բռնել է տալիս խուժանին ու իրենց տեղերն ուղարկում, մինչև իսկ թալանած իրերն էլ ձեռներիցն առնում, երբեմն էլ լաւ ծեծում, անելի խիստ վարում են քիւրդերի հետ, որ շատ անկարգութիւններ ու սպանութիւններ չկատարեն: Չարմանալին այն էր, որ մալականներն անգամ թալան էին անում, եւ թուրքերը նրանց խրախուսում էին. «Տարէք, եղբայրներս, ձեզի հալալ է»: Աւելի զարմանալին այն էր, որ մեր հայ գաղթականների կանայք ու երեխայքն էլ ազատ շրջում էին փողոցներում եւ թալանով պարապում, թուրքերի ու մալականների թողածներն իրանք տանում: Վայ այն տանը, որ տէրը մէջը չէր մնացել:

Այսօր բազեցի Կարապետեան բժշկի ընտանիքը ցանկութիւն յայտնեց իրեանց տունը գնալու: Ոսկի ամարաթներ էին տալիս այսքան օր պահելու համար իբր վարձատրութիւն: Ես նեղացայ այդպիսի վարմունքի վերայ, պատուիրեցի՝ ոչինչ չը վերցնեն: Շատ խնդրեցի, որ այդ մտքից յետ մնան, ես պատրաստ եմ այսուհետեւ էլ կեանքիս գնով նրանց էլ պաշտպանել, ինչպէս իմ աղջիկներիս, իսկ եթէ անպատճառ ուզում են իրենց տուն գնալ՝ պատճառելով, որ իւրեանց տղամարդիկ կուգան, կը փնտրեն ու չեն գտնի, շատ լաւ, մեր զինուորի հետ նորանց կը տանեն իւրեանց տուն: Աստուած տայ, որ տղաներից մէկն էլ եկած լինի, որ իրանք էլ, մենք էլ միամտենք:

Այդպէս էլ արի: Այդ ընտանիքը եւ երկու էլ կաղզուանցի ընտանիքներ էլ ասկերիս հետ տարինք տեղաւորեցնելու: Ճանապարհին պատահեցին իմ ծխականներից մի քանի կանայք, չուլ ու փալաս շալակած՝ չը գիտէին, թէ ուր են գնալու, դրանց էլ վերցրինք հետներս: Բարեբախտաբար, Կարապետեան տղաներից մէկը տանն էր ու քնած: Առաջ ես մտայ, զարթնեցրի, ինձ տեսնելով՝ իսկոյն վեր թռաւ ու հարցրեց.

–Մերոնց տեղը գիտե՞ս, տէ՛ր հայր:

–Գիտեմ, գիտեմ,– ասացի,– դրա համար էլ եկել եմ,– ու ներս կանչեցի բոլորին էլ:

–Սորանից էլ մեծ վարձատրութիւն չէի կարող ստանալ,– ասացի արտասուքն աչքերիս,– ինձի կը ներէք, ես նորից կը գամ ձեզ տեսնելու, ասկերը դուրսն է միւսների հետ: Չեմ կարող սպասել:

Գուրս եկայ ու շարունակեցինք մեր ճանապարհը: Գուրբերնատորսկի փողոցի վերայ պատահեց Եգոր Իվանիչի քոյր Չարուհին՝ երբեմնի աշակերտուհիս, եւ լալով պատմեց իւր ամուսնու՝ հիւսն Արշակ Ստեփանեանի, Քոթանջեան Յարութիւնի, Հմայակ Արաջեանի սպանութիւնները թուրքերի՝ քաղաք մտած օրը, իւրեանց տան մէջ Համամչեան երեք եղբօր՝ Արտաշի, Մամիկոնի, Բագրատի, Բոյաճեանց Ալէքսանի եւ նորթաղեցի Լեւոն Ստեփանեանի եղբայր Ալէքսանի անձնասպանութիւնները, որոց ամենին էլ ժամանակատրապէս թաղել էին իւ-

րեանց տան շուրջ: Ականջներս դժգոհացին, մի քանի մխիթարական խօսք իբր թէ ասացի, խոստացայ այցելել ու հեռացայ: Ոտներս առաջ չէին գնում, բայց եւ այնպէս տեղաւորեցի հետս վերցրած ընտանիքները: Նորից մի շրջան արի մի անգամ գնացածս տեղերից: Պատահեց տէր Կորիւնի կինը, որ կուգէր իւր տանն այցելել, բայց վախենում էր: Հետս վերցրի, ինչ-որ պաշտօնեաներ տեղաւորում էին այդ տանը, խեղճ կինը շարած նայում էր իւր տան աներածութեան վերայ: Պատմեց, որ պատուպարել են տէր Մելքիսեդէկեանց տանը ուրիշ շատ ընտանիքների հետ, թէւ բոլորն էլ ազատած, բայց իսպառ թալանած են:

Ասկէրս շտապեցնում էր: Աղէքսանդրեան փողոցի վերայ՝ բժ. Ղազազեանի տան մօտ ընկած դիակը դեռ մնում էր: Փողոցներում երեւում էին հատուկներս հայ կանայք: Առաջւայ մման թուրքերը չէին վիրաւորում կամ դիպչում պատահողներին, ինչպէս երեւում էր ամէն նշաններից, քաղաքը բաւական խաղաղուէլ էր:

Երեկոյեան ինձ յիշեցրին, որ պահապան ասկէր չունենք, անելող համարեցի նորից դիմել թաղի կօմանդատին: Այդ գիշերն էլ առանց պահապանի, բայց խաղաղ անցաւ:

Նոյեմբերի 7-ն է, օրը կիրակէ: Թէլը դեռ չէինք վերջացրել, երբ բանտի չաւուշի հետ ներս մտաւ փեսա Կարապետը՝ նոյնպէս թելերի մէջ փաթաթած ու, ինչպէս պէտքն է, թալանած: Պատմեցին, որ բանտից ազատուէլ է: Չափազանց ուրախացանք, չաւուշին լաւ պատելուց եւ ընծաներով ճանապարհ դնելուց յետոյ Կարապետը պատմեց, որ միւսների հետ իրան էլ պէտք է Էրզրում տանէին, բայց ինքը մի կերպ պոկ է եկել վագօնից եւ Անուշաւան Փիլոյեանի հետ թաքնուէլ: Մտածել է, որ ուշ ժամի տուն գալը վտանգաւոր կը լինի, Փիլոյեանին թողել, ինքը գնացել է նորից բանտը իւր ծանօթ չաւուշի մօտ, որի շնորհիւ էլ այսօր ազատուէլ է ու տուն եկել:

Այս ուրախութիւնը կատարելապէս չվայելած, մի երկու ժամ էլ չանցած՝ ասկէրներն եկան եւ Կարապետին նորից տարան: Իսկոյն նորա հօրեղբօր աղջիկ Վարսենիկը, որ մեր բակի մէջ էր մնում, վագեց իւր ծանօթ Էհմէդ էֆէնդու մօտ (գինորական սպայ, մեր տան ետեւը կարաուլնի բատալէօնում կը մնար իւր ընկերների հետ): Անմիջապէս եկաւ այդ էֆէնդին, հանգստացրեց, գնաց թաղային կօմանդատի մօտ, երաշխաւոր եղաւ ու յետ բերեց նորան, բայց այս հանգամանքը շատ ծանր նստաւ թէ՛ իրա՝ Կարապետի եւ թէ՛ մեզ՝ նորա տանը կեցողներիս վերայ ընդհանրապէս:

Վերջին շաբաթւայ մէջ իմ շուրջս կատարւած անցուդարձը, լսածներս ու տեսածներս ինձ չափազանց ջղային ու կասկածօտ էին դարձրել: Տան պահպանութիւնը յանձն առնող թուրք կանայք՝ Քաթանն ու քոյրերը, գալիս էին մեզ մօտ եւ ինչ-որ մութ

գործեր կատարում. ամարաթներ առնում կանանց ձեռքից պահելու եւ վերադարձնելու նպատակով, շարունակ փափսում եղբօրս աղջկայ՝ Երանեակի հետ, որի մօտ բարեկամուհիներն էին, իսկ ինչ որ ինձ համար ամէնից խայթողն էր, ինչ-որ կեղտոտ գործեր էին կատարում աղջիկներիս շուրջը: Հէնց առաջին անգամ չաւուշի գալը եւ աղջիկս ուզելը նորանց տանիցն էր սկսուէլ: Չաւուշը նորանց տանն էր մնում: Հէնց մեր երկու Կարապետների՝ իւրեանց տուն տանելն ու մի օր էլ չանցած բռնուէլը շատ կասկածելի էին: Այս ամէնի մասին խորհրդակցեցի եղբօրս որդու՝ Կարապետի հետ, որ մի քանի նոր բան պատմելով Քաթանեանց տանը պահելու եւ բռնուէլու մասին՝ հաստատեց իմ կասկածներս, մանաւանդ որ ինքն էլ ինչ-որ կասկածելի բան էր նկատուէլ մեր շուրջը՝ առաջի օրը ասկէրների մեր դրան առաջ կատարած անկարգութիւնը, Կարապետի կեղծ ազատութիւնը, Վարսենիկի միջամտութիւնը, Էհմէտ էֆէնդու երաշխաւոր լինելն ու ազատելը: Այս ամէնն ինձ չափազանց կրիտիկական վիճակի մէջ էին դնում: Ի՞նչ էր կատարում շուրջս, շատ էլ այնքան չէի կարող ըմբռնել, բայց կասկածս բազմապատկել էին, մի քանի անգամ զգուշացրել էի մեր աղջիկներին ու կանանց, Մարիամին ու Սոֆյային նորից զգուշացրի, նախապատրաստեցի, բայց ի՞նչ օգուտ, որ եղածն եղաւ հէնց այս գիշեր:

Ձեռքերս դողում, գրիչս վայր է ընկնում ձեռքիցս, բայց պիտի աշխատեն գրել այս գիշեր մեր գլխին եկած զուլումը՝ դժբախտ ժողովուրդիս քաշած բարոյական տանջանքի պատկերը մասամբ դուրս բերած լինելու նպատակով: Գիշերւայ մօտ ժամը 8-9 կը լինէր: Փեսայ Կարապետը, ութնօրեայ բանտային տանջանքից հազիւ ազատւած, շուտ պառկել ու հանգիստ քնել էր: Միւսներն էլ հանգստացել էին, եւ էլ պատրաստում էի պառկելու, երբ բակի դուռը ծեծեցին.

—Դրաման սկսեց,— ասացի ու սկսեցի կօշիկներս հագնել: Կանայք եւս դուրս եկան ու իրար խառնեցին.

—Ի՞նչ պիտի լինի,— ասացի,— այն, ինչ որ ամէն գիշեր ուրիշի տներում է կատարում, այսօր էլ հերթը մերն է:

Դուռը սաստիկ բախում են եւ գոռում.

—Կարապետ աղայ, քափըլը աչ՞⁶¹:

Կարապետին արթնացրի եւ ասացի.

—Քեզ են ուզում, վեր կաց, տես՝ ուլքե՞ր են:

—Ի՞նչ վեր կենալ, դուռը մի՛ բանաք, հարցրէք, թէ ի՞նչ են ուզում, իրաւունք չկայ կէսգիշերին դուռը բանալ:

Ճարահատեալ եւ են գնում, դրան ետեւը հարցնում.

—Ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, բոլորը քնած են, եւ այս միջոցին չի կարելի դուռ բանալ:

61 «Դուռը բացիր»:

Սկսում են սարսափելի կերպով հայիոյել եւ աւելի սաստիկ բախել դուռը: Կոտրում են դռան վերեւի ապակին եւ այնտեղից հրացանի փողերը ներս ցցում՝ սպառնալով բոլորիս էլ կոտորել, եթէ դուռը չբանանք: Աղջիկներս կտուրի լուսամուտը բաց են անում եւ այնտեղից օգնութիւն բղաւում: Մի քանի անգամ աղաչում-պաղատում ենք, որ հեռանան. «Վալի՛ն հրամայել է, որ զիշերայ մէջ դուռ չը բանանք, գործ ունեք, ցերեկն արեք»: Լսող չկայ, ընդհակառակը, արդէն սկսել են դուռը կոտորատել: Վերջապէս համաձայնում ենք դուռը բանալ: Ներս են թափում գազանացած մի քանի ասկերներ եւ հրացանի կոթով հարածներ տեղում գլխիս, մէջքիս: Ես վայր ընկայ սանդուղքների վերայ: Տանը լացն ու շիւանը սկսեցին, անշուշտ սպանած կը լինէի, եթէ ասկերների մեծը չարգելէր նորանց եւ թեւիցս բռնելով՝ բարձրացրեց ու հետը քարշ տալով՝ տարաւ սենեակ՝ հետն էլ ամենակոպիտ հայիոյանքներ թափելով գլխիս.

–Շուն, քեօփակ, խնզը՛ր, դենսը՛գ, իմանաը՛գ⁶², ինչո՞ւ դուռը չբացիր եւ այս խայտառակութիւնը հանցեցիր, ի՞նչ պիտի անեի՛նք ձեզ, այսօր Կարապետ աղային ազատեցինք, իբրեւ բարեկամ եկել ենք տեսնելու, իսկ դու համարձակում ես դուռը չբանալ: Չգիտե՞ս, որ այս բոպէիս կարող եմ լէշդ փողոց շարտել եւ շներին կեր դարձնել:

Ես ոչինչ չէի պատասխանում եւ չէի էլ կարող խօսել, իմ դասս փառաւորապէս ստացել էի, իսկ երկու Կարապետներն էլ կանանց հետ աղաչում, պաղատում եւ աշխատում էին հաւատացնել, որ չճանաչեցին, որ եկողը Էհմէդ էֆէնդու ընկեր Քէմալ էֆէնդին է եւ իրան՝ փեսայ Կարապետին ազատողը:

Փեսայ Կարապետը մի փոքրիկ սեղան պատրաստեց, կօնեակ բերեց, որ անկոչ հիւրի սիրտը շահեցնէ եւ բարկութիւնն էլ իջեցնէ, իսկ նա առանց քաշելու լրբօրէն իւր գալու նպատակը յայտնեց.

–Ես եկել եմ այստեղ է՛ն բոյով աղջկան՝ Տիկուշին, կնութեան ուզելու ոչ բռնութեամբ, այլ Ալլահի կամքով, օրէնքով ու մոլլայով պսակել, իմ տանս պէս ձեր տան մէջ ապրել, ամէն տեսակ օգնութիւն ու պաշար հասցնել ու ձեզ էլ պաշտպանել թէ՛ թալանից եւ թէ՛ սպանութիւններից:

Ոչ ոք չպատասխանեց:

–Միեւնոյն է,– շարունակեց բարեհոգի էֆէնդին,– իմ ասածը կանեմ, բանն այստեղ չհասնէր, իմ ուզած աղջկան կառնեմ, կը տանեմ, եթէ հակառակելք, այստեղ եղող բոլոր աղջիկներին բռնաբարել կը տամ ասկերներիս եւ բոլորին էլ կոտորել կը տամ, դո՛ւք զիտեք:

Երկու Կարապետներն էլ, կանայք էլ ամէն տեսակ աղաչանք, պաղատանք, լաց ու արտասուք թափեցին, ոչ մի կերպով չը կարողացան կոտորել այդ գազանի յամառութիւնը: Կրածս հարածները

եւ գլխիս պտոյտը մոռանալով՝ ես էլ խառնեցի աղաչաւորների շարքը, զգացնել տի Ալլահի անունով արած առաջարկութեանը, այդպէս շտապ կատարելու պահանջի անհեթեթութեանը՝ ատելացնելով. «Մենք չենք այդ աղջկայ տէր ու տիրականը, նորա մայրը նոր է սպանել ձորում, եղբայրը բանտումն է, եթէ կարող եմ տեսնել եղբօրը, որը միայն իրաւունք ունի իւր քրօջ ամուսնութեան խնդրի մէջ խառնելու, աղաչում եմ, զիշերս թո՛յլ տուք մնայ այդ խնդիրը, վաղը բանտում տեսէ՛ք եղբօրը, մոլլային էլ հրաւիրեցէ՛ք եւ այն ժամանակ կատարեցէ՛ք ձեր ցանկութիւնը»:

Ոչ մի խօսք, ոչ մի աղաչանք ու արտասուք եւ ոչ մի թանկագին ներքների մասին չէր ուզում լսել, շարունակ իւր առաջարկութիւն էր կրկնում, մեծ-մեծ խոստումներ առաջարկում, բանտարկած եղբօրն էլ ազատել խոստանում, իսկ հակառակ դէպքում ամէնիս էլ կոտորել, եթէ հէնց այս իրիկուն իւր ցանկութիւնը չը կատարենք: Մտելային լռութիւն էր տիրել մեր մէջ. մի կողմից երկու Կարապետների դրօշիւնը, մանաւանդ փեսայ Կարապետինը, որ Էրզրում տանելու գնացքից փախել ու էս անիծած զաբքիների երաշխաւորութեամբ իբր թէ ազատել էր, միւս կողմից Լեւոնի բանտից ազատելու աղօտ յոյսը, որ քանիցս կրկնեց այդ հրէշը, թէ վաղն եւեթ կազատենք, երրորդ կողմից էլ այս տանը սպաւինած հարս-աղջիկների պատիւը եւ անմեղ երեխաների կեանքը:

Մտքիցս անցաւ մի վերջին փորձ եւս անել, աչքի առաջ ունենալով գազանի՝ որոշ չափով մեղմանալն ու հանդարտելը, համարեայ չոքած՝ նորա առաջ արտասուքօր աչքերով նորից սկսեցի աղերսել. «Էֆէնդի՛, երեւի ամուսնացած կը լինեք, զաւակներ, հայր, մայր էլ կունենաք, խնայեցէ՛ք այս անմեղ մատղաշ անասուններին, խղճացէ՛ք ծերունիներիս ճերմակ մազերին, եթէ քեզ արիւն է պէտք, ինձ սպանի՛ր, թող իմ արիւնս հալալ էղնի քեզ, այդ թշառ ու վիրաւոր աղջկան ազատի՛ր այդ անպատուութիւնից, ես չեմ կարող տանել այդ անպատուութիւնը, որի համար մասամբ էլ ես եմ պատասխանատու նորա եղբօր եւ Աստծոյ առաջ: Աղաչո՛ւմ եմ, սպանի՛ր ինձ եւ ազատի՛ր խեղճ ծերունուս այդ խայտառակութիւնից»: Այդ բոպէին ինձ կանչեցին ներսի սենեակը: Դողողալով բարձրացայ ու մտայ ներս, դէմս ծառացաւ Տիկուշը՝ բոլորովին սառն ու տղամարդու անտարբերութեամբ, մոռացած իւր կանացի տկարութիւնը, վիրաւոր վիճակը.

–Հայրիկ,– ասաց,– ինչո՞ւ ես այդ աստիճան ստորանում էդ շան առաջ եւ այդքան աղաչում, ես բոլորովին չեմ վախենում դրանից, եթէ այնքան ազնիւ կը լինի, որ եղբօրս բանտից կազատե, երկու Կարապետների ազատութիւնը կապահովէ եւ այստեղ գտնուած կանանց ու աղջիկների պատիւը կապահովէ, ես կընդունեմ դրա առաջարկութիւնը, ես ինձ կը զոհեմ:

62 «Շուն, խոզ, անողնաշար, անհավատ»:

Մնացի շնամ, աչքերս չուած նայում էի դէմս կանգնած օրիորդի երեսին, ականջներս թշուած էին, ու չէի հասկանում, թէ ի՞նչ է կատարում շուրջս: Մտքովս անցնում է. «Ի՞նչ է ասում այս գիժ աղջիկը, մեր քաջարի զօրքերն ու զօրապետները իրեանց զենքերով, դաշնակցութեան շէֆերն ու մինիստրների օգնականներն իրենց ճոճան ճառերով ու խոստումներով, մեր կաթողիկոսն ու եպիսկոպոսներն իրենց կոնդակներով ու քարոզներով, տէրտէր-տիրացուներն իրենց տէր ողորմեաներով չկարողացան մեր անմեղ մանուկների, հարս ու աղջիկների կեանքն ու պատիւը ազատել, այս ողորմելի աղջիկը պիտի ազատել իւր ողորմելի զոհաբերութեամբ»:

Նայում եմ շուրջս. գունատ ու կապտած աղջիկներիս դէմքերն են ընկնում աչքերիս, վախեցած ու մի անկիւնում կրկնքած թռռներս են ցցում առաջս, շուրջս ստուերի ման, գաջի պէս սպիտակ դէմքերով հարս ու աղջիկներ են կուչ եկել, գլուխս պտտում է, կոկորդս չորանում՝ խեղդում եմ ու սառած կանգնել եմ.

– Հայրիկ, ի՞նչ ես կանգնել,– լսեցի Տիկուշի ձայնը:

– Եւ դուն հաւատո՞ւմ ես այդ շան խոստումներին,– ասացի նորան:

– Հաւատամ, չհաւատամ, հայրիկ, էլ ի՞նչ կարող եմ անել,– աչքերում արտասուք երեսաց: Բռնեցի ձեռքը.

– Ապրե՛ս, աղջիկս,– ասացի,– թող Աստուած օգնէ քեզ սրտիդ խորհուրդը կատարելու:

Դուրս եկայ սենեակից ատելի ջարդած ու թուլացած ընկայ թախտի վերայ.

– Ի՞նչ էր ասում Տիկուշը,– հարցրին ինձ հօրեղբայր Մարալը եւ նորա կին Մարիամը:

– Ի՞նչ պիտի ասէր խեղճ աղջիկը, գնացէ՛ք ու նրանից իմացէ՛ք:

Յետոյ ընկել եմ ինքնամոռացութեան մեջ, ի՞նչ է կատարել շուրջս, չեմ զգացել ու չեմ հասկացել:

Զգիտեմ որքան ժամանակ էր անցկացել, ինձ ցնցեցին ու ասացին.

– Քեզ կանչում են ներսի սենեակում:

Վեր թռայ, ո՞վ, ինչո՞ւ է կանչում: Շուրջս նայեցի, հրէշը չկար, բոլոր կանայք, հարս ու աղջիկներ դրսի սենեակն էին եկել, մինչեւ իսկ քնած երեխաներին էին դուրս բերել: Կամեցայ դուրս գնալ: Դուռը բացի, դէմս ելան զինւած ասկերները, կրծքիս խփեցին հրացանի կոթով. «Դուրս գնալ չի կարելի, արգելւած է»: Դուռը փակեցի ու ներս մտայ: Նորից ներսի սենեակն են կանչում, չեմ գնում, մտքովս անցաւ անձնասպանութիւն գործել: Չմեղիս հանեցի, ու, երբ կամեցում էի կրծքիս տակը տանել, կարծես ձեռքս բռնեցին: Նայում եմ շուրջս, դէմս են ցցում աղջիկներիս ու թռռներիս սրւած դէմքերը, աղերսող աչքերով երեսս են նայում: Իսկոյն ուշքի եմ գալիս. «Լաւ, ես ինձ կազատեմ այս մղձավանջից, բայց ո՞վ պիտի

պահէ-պահպանէ այս անմեղ հրէշտակներին, ո՞վ պիտի ազատէ նորանց այս դժոխային քաօսից»: Չմեղին ծալում ու ծոցս եմ դնում: Նորից եւ նորից գալիս ու ներս են կանչում. «Բայց ինչո՞ւ են կանչում, ի՞նչ են ուզում ինձանից, այլեւս ի՞նչ կարող եմ անել ես՝ ողորմելի արարածս»: Վերջապէս զիջում եմ շրջապատողներիս թախանձանքներին, մանաւանդ եղբօրս որդի Կարապետի, որ այդ արտասուքօր աչքերով ձեռքերս, երեսս էր համբուրում.

– Լսի՛ր, հօրեղբայ՛ր, միայն դու կարող ես մեզ բուրիս ազատել այդ գազանից, ինչ որ ասում են, կատարի՛ր:

– Բայց ի՞նչ պիտի կատարեմ, Կարապետ ջան, ինձանում այլեւս ճար չէ մնացել:

Մտնում եմ ներսի սենեակը, աղօստ լոյսի տակ նստած է Սաղաւելը, նորա կողքին կանգնած է Տիկուշը՝ գլուխը կախ, զոհող ոչխարի ման: Փեսայ Կարապետը, կիներ մի քանի անգամ դիմում եւ աղերսող աչքերով ասում են ինձ. «Ինչ որ անելու ես, արա՛ վերջացո՛ւր, քեզ ենք սպասում:

Բայց ի՞նչ պիտի անեմ, չեմ իմանում:

– Պիր դովայ օխի՛, փափագ էֆէնդի՞՞՞:

Ապուշ-ապուշ երեսներին եմ նայում ու դարձեալ լուռ մնում:

– Հայրիկ ջան, վերջացո՛ւր,– կարծես նեղացած կրկնում էր Տիկուշը ու աղերսող աչքերով ինձ նայում:

Մօտենում եմ երկուսին, յիշեցնում էֆէնդուն իւր տւած խոստումները եւ Տիկուշից խնդրում եմ ներդրութիւն՝ առաջարկելով, որ ձեռքը բռնէ, մի ինչ-որ աղօթք մրմնջում⁶⁴: Աստժոյ խնամքին եմ յանձնում թշառական աղջկան եւ դուրս գնում՝ արտասուքն աչքերիս, ընկնում աթոռի վերայ ու երեսս ծածկում ձեռքերովս: Կարապետս նստում է մօտս, փաթաթում ինձ եւ հետս արտասում:

Երբ դուրս եկայ ներսի սենեակից, ներս մտաւ Էհմէդ էֆէնդին եւ ուղիղ անցաւ Քէմալի մօտ: Շատ չանցած՝ վրդովւած ու բարկացած դուրս եկավ, գնաց: Ասացին, որ եկել էր իւր ընկերին համոզելու եւ տանելու, բայց նա չէ գնացել՝ ասելով, որ «Ես աղջկայ կամքով եմ հետը ամուսնանում եւ ոչ թէ բռնութեամբ»: Աստուած թող այդպէս համարէ:

Եւ այսպէս մեր կեցած տանը, մեր սեսացած աչքերի առաջ կատարում է այն դիւային հարսանիքը, որ այս ութն օրայ ընթացքում՝ ամէն գիշեր կատարել է խեղճ ու կրակ, անտերութեան մատնւած թշառ հայ ժողովրդի գլխին եւ այդ ոչ միայն տգէտ ու վայրենի ասկերների, այլեւ նոցա մեծերի՝ իբր թէ զարգացած ու քաղաքակրթւած հրամանատարների ձեռքով:

63 «Մի աղօթք կարդայ, տէ՛ր հայր»:

64 Տիկուշի հետ կատարված այս դէպքն արձանագրել է նաև Կարսի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխատեր քահանա Կորյուն Քոթանջյանը («ԲՀԱ», № 1, 2006, էջ 102-103):

Ես ու եղբորս որդին՝ Կարապետը, ամբողջ գիշեր աչք չը փակեցինք, մեր ցան ու դարդը լացինք ու զանազան ծրագրեր կազմեցինք՝ այս սոսկալի դրությունից ազատելու, մի ելք, ճանապարհ գտնելու համար:

Լուսադեմին ներսից լսեց հրէշի ձայնը.

–Կարապետ աղայ, մի ջուր բեր՝ լացելու համար:

Փեսայ Կարապետը իսկոյն ջուր տարաւ: Լուսեց ու հեռացաւ տանից այդ դժոխային արարածը եւ հետն էլ տարաւ դռանը պահապան դրած զինուած ասկերներին:

Ամբողջ գիշերը մեզանից ոչ ոք աչք չէր փակել, ոչ ոք չէր կարողացել քնել՝ բացի երեխաներից: Հրէշի գնալուց յետոյ բոլորս էլ ազատ շունչ քաշեցինք: Դուրս եկանք բակը, լացեցինք, բայց չէինք կարող իրար հետ խօսել, կարծես ամաչում էինք իրար երես նայելուց:

Ասկերները շարունակ դուրս ու ներս էին անում: Պարկերով ալիւր, ցորեն ու գարի բերին, բայց շատ չանցած՝ նորից դուրս տարան, մինչեւ իսկ պահապան ասկեր էլ նշանակուած էր մեր տան վերայ, որ գիշերը հսկում ու պահպանում էր մեզ: Շուքրի էր այդ ասկերի անունը, որ ազատ տուն ու դուրս էր անում, անվերջ հայհոյում իրենց մեծերին ու դատապարտում նորանց կատարած զզուելի գործերը: Մասնատրապէս աշխատում էր ինձ մխիթարել:

–Բիզ դաբուլ էթթըք, Ալլահ դաբուլ էթմասն⁶⁵,– ասացի նորան մի օր:

Բարեբախտաբար, Քէմալի երեսն այլես չտեսանք: Գիշերը Շուքրին տարաւ Տիկուշին իւր աղի մօտ ու առաւօտն էլ յետ բերեց:

Այսօր նոյնքեր 14-ն է, կիրակի է: Եօթն օր է, որ գրիչ չեմ վերցրել այն սեւ գիշերանից յետոյ, չէի կարող մտքերս ամփոփել ու մի երկու տող բան գրել: Խելագարի նման էի, ինչ անելս, ուր գնալս չգիտեի, միակ հոգսս կենտրոնացած էր աղջիկներին ու որբերին տանից հեռացնելու ու Ամերիկեան որբանոց ուղարկելու, թէև ասում էին, որ այնտեղ էլ այնքան ապահով չէ: Մի քանի օր առաջ քենուս աղջիկը՝ Ազնիւր (տէր Չորաբաբեյենց Յակովբի նշանածը), որ այնտեղ էր ծառայում, եկել ու խորհուրդ էր տալիս, որ աղջիկներին էլ, որբերին էլ ուղարկեն իրանց մօտ: Բայց այն ժամանակ, չգիտեմ ինչու, յիմարութիւն արինք ու չը թողինք: Անմիջապէս լուր ուղարկեցի Ազնիւին, որ զան աղջիկներին ու որբերին տանն իրանց մօտ: Մի կողմից էլ աղջիկներս սկսեցին պատրաստել որբանոց գնալու համար: Վերջապէս Ազնիւն ու Մարօն եկան (Մարօն տէր Չորաբաբեյի թոռն էր՝ Յակովբի աղջիկն առաջին կնոջից): Հետները բերել էին ծառայութեան շորեր: Որոշեցինք որբերին առայժմ չը տանել, Իսկուհին ու Շամունէն գնան, տեղաւորեն ու զան, երեխանե-

րին էլ տանն: Այդպէս էլ արեցինք, Իսկուհիս ու Շամունէն գնացին: Մի երկու օրից Շամունէն եկաւ եւ որբերին ու Աղանու աղջիկ Սաթենիկին էլ տարաւ՝ մեզ ապահովցնելով, որ այնտեղ լաւ է, ու լաւ պաշտօն էլ գտել են՝ շնորհիւ ամերիկական ծառայող Արծրունու, որին մի յանձնարարական նամակ էլ տւել էի: Մի ծանր բեռ ուտերիցս վայր էր առնւած: Աղջիկներին ու որբերին մասին որոշ չափով միամտեցանք: Մի քանի օր անցած Սոֆյային Շուքրիի հետ ուղարկեցի ձորը՝ որբանոց՝ աղջիկներին տեսնելու եւ լուր բերելու: Ուրախ տրամադրութեամբ վերադարձաւ Սոֆյան եւ մեզ բոլորովին հանգստացրեց նորանց կողմից:

Այդ շաբաթայ մեջ մի օր էլ (դեռ աղջիկներս չէին գնացել որբանոց), մի շատ սիրտ մաշող խօսակցութիւն լսելու դժբախտութիւն ունեցայ Տիկուշի գործի առթիւ, որի պատճառով էլ շտապորի աղջիկներին ուղարկելը: Դրսի սենեակում պառկած էի թախտի վերայ, թուրք կին Քաթանը ներս մտաւ, ներսի սենեակից էլ դուրս եկաւ Երանեակը ու սկսեցին խօսել ազատօրէն՝ կարծելով, թէ այդտեղ չեմ կամ քնած եմ:

–Աղջի Քաթան, էդ ի՞նչ գուլում բերին մեր գլխուն էս գիշեր ձեր զաբթիները, խեղճ աղջկայ հողը գլխուն տին:

–Ի՞նչ աղջիկ,– պատասխանեց Քաթանը լրբօրէն ծիծաղելով,– լաւ, լաւ ինչխ անենք, ձեր հայերը քիչ թուրքի աղջիկներ ու հարսներ են բռնաբարել: Դեռ դու շնորհակալ եղիր, որ տէրտէրի աղջիկները...– ասաց ու նորից լրբաբար ծիծաղելով՝ ներս գնաց եղբորս աղջկայ հետ:

Ես իմս առայ, այլես չկարողացայ պառկել, դուրս եկայ բակը, Կարապետս այնտեղ էր: Պատմեցի նորան լսածներս, որ հետզհետէ հաստատում էին կասկածներս եղբորս աղջկայ՝ Երանեակի բռնած դիրքի մասին: Խեղճ Կարապետը չէր իմանում, թէ ինչ պատասխանէ, վերջը համաձայնեց ինձ հետ ու ասաց.

–Ես կը հաւատամ, հօրեղբայր, դա կին չէ, Մեգերա է, տեսե՛լ ես աչքերը, երբ բարկացած ծեծում է որդեգրած որբ Մարօյին կամ իր տեգերկին, էն խեղճ Շուշիկին: Մինչեւ անգամս սկեսորին է հայհոյում ու խփում, տեսել եմ: Ես վախենում եմ դրանից, դրա համար էլ ոչինչ չեմ խօսում:

Շաբաթայ ընթացքում երեք թէ չորս անգամ էին տարել Տիկուշին իր դահճի մօտ: Վերջին գիշերը նորս գնալուց յետոյ, երբ հանգիստ նստած՝ դրսի սենեակում խօսում էինք, յանկարծ Տիկուշը սաստիկ վրդովւած ներս ընկաւ եւ մեզ վերայ ուշք չը դարձնելով՝ գնաց ներսի սենեակը: Ես կանչեցի նորս հօրեղբոր կնոջը՝ Մարիամին, եւ ասացի.

–Գնա՛ եւ իմացի՛ր:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ եկաւ Մարիամը նոյնպէս շփոթւած եւ պատմեց, որ էն շուն Քէմալը օյին է խաղցել Տիկուշի գլխին: Գետի-

65 «Մենք ընդունեցինք, թող Աստուած չընդունի»:

նը մտած շունը Տիկուշին առաջարկել է այս գիշեր իր ընկերի ծոցը պառկել: Սա էլ կատաղել է. «Ես բո՞՞զ եմ, ինչ է, դու տղամարդու թասիբ չունե՞ս, օրենքով ես Ալլահի կամքով ինձ հետ պակեցեցար, հիմայ կեղտոտ առաջարկություններ քեզ անում: Է՞դ է՞՞ ձեր Ալլահի օրենքը», – ասում ու մի լաւ էլ անպատոււմ, հայիոյում, թողնում, մինակ գալիս է տուն:

– Ես այլեւս չեմ գնալ էդ շների մօտ, ինչ ուզում եմ անեն: Չեմ գնա ու չեմ գնայ, – ասում է Տիկուշը:

Երեք լսողներս էլ՝ ես, Մարալը եւ եղբօրս որդին՝ Կարապետը, գլխներս կախեցինք ու չզիտէինք՝ ինչ պատասխաններ կամ ինչ խօսեցինք: Տիկուշն ընկել է տեղի վերայ ու լաց է լինում, միւս կանայք ու աղջկերքն էլ ջուրն էին քաշել: Վերջապէս սկսեցին խօսել:

– Է՛, այս արդէն չափազանց է, էդ շները կը բարկանան եւ անպատճառ մի օշին կը խաղան մեր գլուխը (իբրեւ թէ չէին խաղացել), պէտք է օր առաջ յայտնել հիւփիմաթին:

Վտանգաւոր համարեցինք շտապել, որոշեցինք սպասել, գուցէ նորից կը գան ետեւից: Արդարեւ, Շուքրին եկաւ հրացանը ուսին, նա էլ հաստատեց լսածներս եւ սաստիկ գայրացած՝ հայիոյելով աւելացրեց:

– Ես այս գիշեր այստեղ կը մնամ եւ միջանցքումն էլ կընեն: Աստուած մի՛ արասցէ, եթէ մէկն ու մէկը եկաւ, կսպանեն եկողին, այնուհետեւ ինչ ուզում եմ, թող անեն:

Մենք, իհարկէ, ոչինչ չառարկեցինք դրա դէմ, քնում է, թող քնի, աւելի լաւ: Յետոյ երկար խորհրդակցում էինք մեր անելիքի մասին եւ որոշեցինք Տիկուշին Մարալի հետ ուղարկել Աղէքսանդրասայօլ, ինչ միջոցով կուզէ թող լինի, եւ այդ որոշումը գաղտնի պահենք նոյնիսկ տան միւս անդամներից:

Այս տխուր դէպքից մի կամ երկու օր առաջ մի ուշագրաւ դէպք էլ կատարեց մեր տանը: Մի երեկո Քէմալը իր ընկերների հետ թէյ խմելու եկաւ մեզ մօտ: Դրանց մեծը, որին Օսման էֆէնդի էին կոչում, բնիկ պոլսեցի, բաւական զարգացած, ինտիլիգենտ մարդ էր: Դառում էր բոլշեւիկների մասին ու անվերջ փառաբանում վերին աստիճանի արդար, մարդասէր հասարակութիւն, եղբայրութիւն տարածող նորանց գաղափարը: Իսկ միւս զարթիւնը բարձրացնում ու փառաբանում էին իրանց քաջագործութիւնները, ծաղրում ու վարկաբէկում հայ զօրքերի վախկոտութիւնը: Օրինակ, Քէմալ էֆէնդին ասում էր, թէ ինչպէս մի օր ութն հոգով Մերդենկի մօտերը դիմադրել են 3-500 հարիւր հայ զինւորների եւ փախցրել մինչեւ Մերդենկ: Այդ գիշեր ինքը՝ Մազմանովը, միայն չամաշուրով ու բոքիկ ոտներով փախել է իր զօրքի հետ: Կարսն առնելու ժամանակ ինչպէս են խաբել հայ զօրքերին, որոց արձակած թնդանօթները երբէք չեն ծառայել իրենց նպատակին, թէւ այնքան էլ կանոնաւոր զօրք չէին

ունեցել, ոչ աւելի 1-1200 ասկեր: Ամբոթիւններից արձակած թնդանօթներն ուղղւած են եղել այն կողմերը, ուր թուրքի զօրքեր չեն եղել, որոնք փախչող զօրքի եւ ժողովրդի հետ խառնել ու քաղաք են լցնել՝ դէմները կռող զօրք չտեսնելով (ասեմ այս վերջինը ճիշտ էին ասում, այդպէս էլ մենք տեսել էինք):

Հետեւեալ օրը՝ նոյեմբեր 15-ին, Վրթանէս տիրացուի միջոցով Գարեգին եպիսկոպոսը կանչել էր ինձ Մոռայեանց Շուշանիկի տունը: Դուրս եկայ եւ գնացի սրբազանի մօտ, որ ինձ նկատողութիւն արաւ, իբր թէ թաքնել, տանից դուրս չենք գալիս եւ այլն, եւ այլն:

– Այդ բանը ինձ համար մի՛ ասեք, սրբազան, թուրքը գալու երրորդ օրը դուրս եմ եկել ասկերի հետ եւ գնացել Սյրտիչ Կոստանեանի տունը, այնտեղից գնացել եմ փաշի մօտ, որ չէ ընդունել, ման եմ եկել փողոցները, առաջնորդարանը, տէր Կորիւնի բնակարանը, տեսել եմ նորա կնոջը եւ իմացել, որ նրանք պատասպարել են տէր Մեքիսեդէկենց տունը, այնտեղ է նոյնպէս Նժդէհեան քահանան, իսկ տէր Համազասպի տեղը չգիտեմ:

Սրբազանս խօսակցութեան ձեւը փոխեց ու մեղմ կերպով ասաց.

– Անցեալ օրը Նոհրատեանի⁶⁶ հետ ես էլ եմ գնացել փաշին ներկայանալու: Մեզ էլ չէ ընդունել: Մի ցուցակ ներկայացրեց եւ ասաց.

– Առ այս քահանաների եւ տիրացուների ցուցակը, տար վալիի մօտ, եւ այդ ցուցակով վկայագրիր կտան, կը բաժանես, որ ազատ կերպով ման գան քաղաքում:

Ցուցակն աչքի անցկացրի եւ տեսայ այնպիսի մարդիկ կան գրւած, որ իսկի տիրացու էլ չեն եղել եւ մի երկու քահանայի, ժամկոչի, երեցփոխի անուններ բաց է թողնւած:

– Խնդրում եմ, անձամբ տանես քաղաքագլխի՝ Նոհրատեանցի մօտ, ցուցակը լրացնես, տանես վալիին, հետեւես եւ ստանաս վկայագրերը եւ քու ձեռքովդ բաժանես:

Այդպէս էլ արի, երկու-երեք օր գնալ-գալով հազիւ ստացայ վկայագրերը ու բաժանեցի, ում որ պէտք էր:

Այս շրջագայութիւնիցս վերահասու եղայ, որ քաղաքը բաւական հանդարտւել է, կանայք ու երեխայք ազատ կերպով շրջում են, գնումներ անում, ու ոչ ոք նրանց բան չի ասում: Հատ-հատ երեւում են նաեւ հասակաւոր տղամարդիկ, որ իրար պատահելիս իրեանց գլխի եկածները, իրեանց ցաւերն են

66 Համազասպ Նոհրատեանը Կարսի քաղաքագլուխն էր: Նոյեմբերի 29-ին արսուրվել է և ՀՅԴ Կարսի կոմիտեի ղեկավար բժիշկ Գերասիմ Ղազանչյանի և Կարապետ Գրիգորյանի (Սև Կարո) հետ կախաղան բարձրացվել Կարսի Խափան հրապարակում (Ալեքսանդրյան Ա., Կարս. 1920-21, Երևան, 1986, էջ 66-67: Տե՛ս նաև Երզրանցի Գ., Ոգուն չապալիներու արդիւնքը, էջ 115): Համաձայն մեկ այլ տեղեկութեան՝ սպանվել է Մարիդամիշում «սառեցնելէ յետոյ բաց վագոններու մէջ» (Արծրունի Վ., նշվ. աշխ., էջ 253):

իրար պատմում: Պօլիցեյսկի եւ Բեհրուբեան փողոցների անկյուններից սկսած՝ բաւական խանութներ կարգաւորել են եւ առատ ապրանքներով լցրել, բայց բոլորն էլ թուրքեր են կառաւարդները: Մի երկու խանութում տեսայ հայ տղերք՝ 10-12 տարեկան, որ ճարպիկ կերպով ծառայում էին:

Այդ օրն այցելեցի բազմեցի բժիշկ Կարապետեանի ընտանիքին:

Տուն դառնալիս Աղէքսանդրեան փողոցում հանդիպեց մեր երեցփոխ Հաճիպապի կինը մի աղջկայ հետ ու հարցրեց՝ արդեօ՞ք տեղեկութիւն չունեն իր ամուսնուց:

–Մի՞թէ իրար հետ չեք եղել, հապա դուք ո՞ր էիք թաքնել:

–Չուխոր մահէն՝ մի բարեկամի տանը: Կուզեմ տան կողմը գնալ ետեւից, կը վախենամ:

Հետը գնացի, դուռը թակեցինք, եւ ահա Հաճիպապը եկաւ, բացեց եւ շատ զարմացած ու լցւած ընդունեց իւր կնոջը եւ բարեկամի աղջկան: Պատմեց, որ բողոքովին դուրս չէ եկել խանութից ու տանից (երկար մի շինութեան մէջ էր ամփոփւած), ոչ որ իւր մօտ չէ եկել ու չէ թալանել, իսկ կինը թաքնւած տեղում կորցրել է իւր ոսկիքը մի հանելուկային ձեռով:

Միս օրը՝ նոյեմբերի 16-ին, նորից գնացի եպիսկոպոսի մօտ, Կարապետիս էլ հետս տարայ: Եպիսկոպոսն ինձ ասաց, որ վալին մի քանի անգամ կը լինի, ինչ պատիւրել է եկեղեցին կարգի բերել եւ ժամասացութիւն անել: Այդ բանը կարող է շատ հանգստացնող ու մխիթարական ազդեցութիւն թողնել տառապող ժողովուրդի վերայ:

– Սրբազան,– ասացի,– ես էլ շատ եմ մտածում այդ մասին, բայց ես իմ եկեղեցու ու Առաքելոցի ցաւովն եմ տանջւում, ամէն օր նրա շուրջն եմ պտտւում՝ տեսնելու համար, թէ ի՞նչ դրութիւն պիտի ստանայ նորա վիճակը, դժար թէ նորից մեր ձեռքն ընկնի այդ եկեղեցին, իսկ Լուսաւորիչ եկեղեցու համար պէտք է տէր Կորիւնին, Նժդէհեանին եւ տէր Համազասպին դուրս բերել թաքնւած տեղերից եւ նորանց յանձնել այդ գործը: Ես հէնց այստեղից կը գնամ ու տէր Կորիւնին կը բերեմ Չեզ մօտ: Ինչ որ պէտքն է, կարգադրեցէ՛ք, ես էլ, որքան կարողացայ, կաշխատեմ օգնել:

Կարապետին թողի այդտեղ ու գնացի տէր Մելքիսեդէկէնց տուն: 300-ից ասել մարդիկ էին պատասպարել այդ տանը: Ով ասես, որ չկար այդտեղ՝ Թութունճեանց Արսէն, Էփրիկէնց ընտանիքը, իմ ծխերից եւ ուրիշ շատ-շատերը: Վերաս թափուցան՝ դրսից տեղեկութիւններ ստանալու: Տէր Կորիւնը կիսով չափ պառկած էր անկողնում եւ գիրք էր կարդում: Մի քիչ մօտը նստայ, յայտնեցի եպիսկոպոսի պատերը եւ վալիի կամքը, իսկ նա, իւր սովորութեան համաձայն, սկսեց տրտնջալ:

–Թալանւած, մերկ, ոչ մի ապահովութիւն չկայ: Ժողովուրդ չկայ, ո՞ւմ համար ժամերգութիւն կա-

տարենք մանաւանդ, որ եկեղեցին էլ թալանւած, կոտրատւած, ինչպէս ասում են, ամէն բան շարդուփշուր արած, վէմ քարն էլ շուռ տւած:

Ես յայտնեցի, որ երկու անգամ տեսել եմ եկեղեցին, կարելի է կարգի բերել, եթէ ցանկութիւն լինի: Միասին գնացինք Մոսայեանցի տունը: Եպիսկոպոսը գնացել էր քաղաքագլխի՝ Նոհրատեանի տունը: Տէրտէրին ուղարկեցի այնտեղ՝ տեսնելու սրբազանին, իսկ ես մեր Կարապետի հետ վերադարձայ տուն:

Ճանապարհին մունետիկը կանչում էր, որ թէ խաղաղութիւն է հաստատուել, Աղէքսանդրապօլի ճանապարհը բաց է, ով ուզում է գնալ, կարող է հիւքիւմաթից թուրք հանել եւ ազատ կերպով գնալ: Մի քանի օր առաջ նոյն մունետիկը Կարնոյ մասին էր այդպիսի ծանուցում արել, բայց մեր հայերից ոչ որ չհետաքրքրեց, իսկ այսօրայ լուրը մեծ կենդանութիւն եւ հետաքրքրութիւն առաջ բերեցին:

Գիշերը դռնեցինք, որ Սոֆյան ու Մարիամը գնան վալիի մօտ եւ Տիկուշի համար կեղծ անունով, իսկ Մարալի համար իւր անունով վկայական հանեն ու հէնց առաջին գնացողների հետ ճանապարհ ընկնեն դէպի Աղէքսանդրապօլ, այնտեղից էլ Երեւան:

Այս վերջին շաբաթայ մէջ մունետիկը մի քանի անգամ է կանչել, որ ամէն մարդ կարող է ազատ կերպով դուրս գալ եւ իւր գործին լինել, ոչ որ իրաւունք չունի նրանց դիպչելու եւ նեղութիւն տալու, բայց ի՞նչ ազատութիւն, ի՞նչ գործի լինել, մարդիկ հէնց որ դուրս էին գալիս, երիտասարդներին բանտ ու արքոր՝ դէպի Մարիդամիշ, Խորասան եւ Էրզրում, իսկ հասակաւորներին բռնի տանում էին աշխատանքի, իսկ միս կողմից էլ աշխատում են քաղաքը մաքրել խուժաններից ու քրդերից ու խստիւ պատժում անկարգութիւն անողներին:

Մեր քաղաքի նախկին կառաւարիչները՝ քաղաքագլուխ Նոհրատեանը, օգնական Բզնունիին, բժիշկ Ղազանճեանը, Կարապետ Գրիգորեանը (Սեւ Կարոն), Ջամբազեանը, Բէգ-Յովսէփեանները եւ այլն, եւ այլն, արդէն դուրս էին եկել: Նահանգապետի թուրք օգնականի մօտ սենեակ ունէին, ուր հաւաքւում էին, խորհրդակցում, քաղցածներին հաց էին բաժանում՝ փութերում եփել տալով մօտիկ անցեալում ունեցած եւ անվնաս մնացած ալիւրից: Ժողովուրդը շարունակ խռնում էր նրանց շուրջը, նորից խնամիական վարմունք, նորից աղմուկ ու տրտումներ: Իրաւ որ զարմանալի ժողովուրդ է մեր ժողովուրդը, ոչ մի բռնութիւն, ոչ մի տառապանք չպիտի կարողանայ զգաստացնել ու կարգի բերել նրան: Գոնէ այս սոսկալի տառապանքի մէջ մեր վարիչները, որ նորից մէջտեղ էին եկել, կարողանալին իրանց խնամքի տակ առնել գլուխը կորցրած ժողովրդին, պահել, պահպանել եւ փրկութեան ճանապարհ ցոյց տալ: Մի հաց էին բաժանում, այն էլ, ինչպէս ասացի, խնամիական ձեռով, ով ճարպիկ ու

անգգամ էր, հաց կարող էր ստանալ, իսկ ով խեղճ էր, զգում էր այդ ձեռնի հաց ստանալուց: «Աւելի շուտ ես իմ տանն մնացած չուի ու փախար ծախելով, թուրքերի մօտ ծառայելով կը ճարեմ իմ խեղճ բալոցս օրապահիկը, քան գնամ, ժամերով կանգնեմ մի կտոր հաց ստանալու համար», – այսպէս էին պատասխանում, որոց ես խորհուրդ էի տալիս գնալ հաց ստանալու եւ տեսնում էի, որ շատ իրաւացի են ասում:

Նոյեմբերի 17-ին՝ երեքշաբթի, ես ու փեսայ Կարապետը, նկատի ունենալով երկու օր առաջ մուսուտիկի յայտարարութիւնը Աղէքսանդրապօլի ճանապարհը բաց լինելու մասին, դուրս եկանք տանից եւ մի քանի պաշտօնական տներ մտանք՝ մի հաստատուն բան իմանալու, եւ եթէ հնար լինէր, իւր հիւրանոցն էլ ձեռք բերելու, որից յետոյ դժար չալիտի լինէր ապրելը: Բայց պաշտօնատները շատ խառն դրութեան մէջ երեւացին, դրական խօսք ոչ որ չէր կարող ասել, մի գրասենեակից մի ուրիշն էին ուղարկում: Ոչ մի հաստատուն բան չկարողացանք իմանալ ոչ միայն հիւրանոցի մասին, այլեւ Աղէքսանդրապօլ գնալու առթիւ. մեր նախկին կառուարիչներն անգամ այնքան գիտէին, որքան եւ մենք, չնայելով, որ ամէն օր շփումն ունէին կառուարական մարդկանց հետ:

Փեսայիս հետ գնացիմք իւր հիւրանոցը տեսնելու, որ ամբողջապէս թալանած, ջարդ ու փշուր եղած էր. միլիոնի արժողութիւն ունեցող կահ-կարասիք, խալիչա, կարպետ, շուշեղեններ ու բութիլներով լի խմիչքներ: Ոչինչ-ոչինչ չէր մնացել: Բնակարանն էլ ինչ-որ ասկերներ էին գրաւել եւ ոչ որի ներս չէին թողնում:

Անցանք երբօրս որդու՝ Արշալոյսի (իւր աներձագի) թէյարանի կողմը, որ լիքն էր կահ-կարասիներով, այստեղ էլ Կարիմից եկած թուրքերն էին գրաւել եւ, ինչպէս ասում էին, ընկերովի կուզեն բանեցնել տիրոջ հետ: Բայց ո՞ր է տէրը: Անցել էր դէպի Աղէքսանդրապօլ: Նոյնպէս գնացել էր եւ փեսայ Կարապետի փոքր եղբայր Մնացականը եւ ուրիշ շատ մօտ մարդիկ, որոնցից ոչ մի տեղեկութիւն չէինք ստանում:

Տուն վերադառնալուց առաջ մտանք նախկին քաղաքային վարչութեան շինութեան մէջ, որտեղ այժմ տեղաւորած էին վալիի (նահանգապետի) օգնականը եւ այլ պաշտօնեաներ: Այդտեղ շատ հայ կանայք շարքի էին կանգնել, որոց մէջ մի քանի հասակաւոր տղամարդիկ հերթի էին գրուում Աղէքսանդրապօլ գնալու համար եւ ստանում մի փոքրիկ տոմս համարագրած եւ պատիւրում, որ, երբ մուսուտիկը նորից ձայն կը տայ, երեք օրից յետոյ կը գաք, ստացած տոմսերը կը ներկայացնէք, փոխարէնը կստանաք իսկական վկայական ու ազատ կերպով կը գնաք Աղէքսանդրապօլ: Շատերը կասկածով էին վերաբերում այդ հանգամանքին ու գնալները յետաձգում էին, թէւ ակամայից:

Առաջի գիշերը այրեց կարաուլի բառալեօնի շէնքը, որտեղ տեղաւորած էր Էհմադ ու Քէմալ էֆէնդիների հրամանատարութեան տակ գտնուած զօրամասը: Մեր տունը պահպանող ասկեր Շուքրին իւր ընկերներին, որոնք հազիւ ազատուել էին այրելուց, բերեց մեր տուն եւ վարի սենեակում տեղաւորեց: Թէ ինչ բանից էր ընկել հրդեհը, յայտնի չեղավ, միայն երկու օր վառում էր, եւ շարունակ գէնքի տրաքոցներ էին լսվում, որի պատճառով էլ ոչ որ չէր վստահանում մօտ գնալ: Չնայելով մուսուտիկի՝ մի քանի անգամ յայտարարելուն, թէ ամէն մարդ ազատ կարող է դուրս գալ, բայց եւ այնպէս երեսան եկողներին բռնում, բանտարկում էին եւ, ինչպէս լսում էինք, ուղարկում էին Սարիղամիշ կամ Էրզրում: Լսեցիմք, որ մեր տիրացուներ Վրթանէսին ու Գէորգին, նաեւ կաթողիկէ չիւրիկցի քահանային, որոց համար էլ վկայականներ էինք ստացել, կալանաւորել ու Սարիղամիշ են տարել: Մեր փեսայ Կարապետին էլ նորից բռնեցին եւ բանտ տարան: Էհմադ էֆէնդին, որ մի անգամ երաշխաւոր էր եղել, նորից գնաց, ազատեց ու բերեց, բայց այս անգամ իւր աշխատանքի ու լաւութեան փոխարէն պահանջում էր, որ Կարապետը իւր հօրեղբօր աղջկան՝ Վարսենիկին (որ ամուսնու եւ երեք երեխաների տէր կին էր) տան իրան կնութեան: Շատ խնդրեցին, աղաչեցին թէ՛ Կարապետը, թէ՛ Երանեսակը, բայց հնար չեղաւ: Երեխաներին ուղարկեցին պապոնց տուն, եւ այս գիշեր Էհմադ էֆէնդին Վարսենիկի մօտ անցկացրեց: Նոյեմբերի 19-ին Վարսենիկը լացուկոծ էր անում, ինձ էր կանչել, խնդրում-աղաչում, որ միջամտեմ ու մի կերպ ազատեմ նորան, բայց ես ի՞նչ կարող էի անել, ինչպէ՞ս ազատել: Թուրքերի՝ Կարս եկած օրից համարեայ Քաթանի միջնորդութեամբ ինքը ծանօթութիւն էր սարքել, միշտ գնում-գալիս էր մօտները, կարերը կարում, որի շնորհիւ էլ հօրեղբօր տղին՝ մեր փեսայ Կարապետին ազատել տուց:

–Եթէ ոչ, – ասում է, – ես կը թունաւորեմ կամ կը գնամ ջուրը կընկնեմ:

Ես, իհարկէ, խորհուրդ չտի եւ ամէն միջոց գործ դրի այդ վարմունքի առաջն առնելու.

–Անձնասպանութիւնն ամէնից ծանր մեղքն է, – ասացի, – դու իրաւունք չունես այդ քայլն անելու, քանի որ փոքրահասակ երեխաներ ունես, քու կեանքդ նորանց է պատկանում: Բացի դորանից՝ ամուսինդ էլ փախած է, գուցէ ազատուած կը լինի եւ կարող է պատահել, որ իրար կը հանդիպէք, ու յետինը ատելի չար կը լինի, քան առաջինը, քանի որ արդէն այդքան բան պատահել է, պիտի հաշուես դրութեան հետ եւ համբերութեամբ տանես այդ ծանր խաչը եթէ ոչ ուրիշ պատճառի, գոնէ ի սեր խեղճ մատաղահաս բալաներիդ:

Երեկոյեան Էհմադ էֆէնդին կամեցել էր իւր ընկերներով հիւր գալ Վարսենիկի տունը, բայց նա աղմուկ էր բարձրացրել: Թաղային կօմանդատը եւ

ժամդարմները միջամտել ու արգելք էին հանդիսացել, որից եւ կատաղել էին այդ հերոսները:

Երկու-երեք օր կը լինի, որ տանից դուրս չէինք գալիս, խստութիւնների եւ կալանաւորների պատճառով շարունակ հրացանաձգութիւններ էինք լսում թէ՛ ցերեկը եւ թէ՛ գիշերը:

Նոյեմբեր 20-ին՝ շաբաթ օրը, թաղային կօմանդատն ինձ կանչեց եւ պահանջեց մեր եկեղեցւոյ զանգակատան բանալին: Ես յայտնեցի, որ այդ բանալիները եկեղեցու բանալիների հետ հէնց առաջին օրերին էլ անհետացել են, ոչ մի բանալի էլ չկայ ինձ մօտ: Խնդրեց, որ հետը գնամ զանգակատուն եւ ցոյց տամ ժամացոյցը լարելու ձեւը: Գնացի, դռնն արդեն բացել էին: Ժամացոյցը լարեցի, իրան էլ ցոյց տալի ձեւը եւ սիրտն ու բարեկամութիւնը շահելու նպատակով ասացի.

– Եթէ պէտք ունենաք, միշտ էլ կարող էք կանչել, ես ուրախութեամբ կը գամ:

Վայր իջնելուց կանցայ ստուգել, թէ ճիշտ է, որ եկեղեցւոյ դռները կնքել են: Տեսայ, որ արճիճէ պլօմբով կնքած են եղել, բայց գիշերը նորից բացել, մտել ու ճամպուրկներս, լամպեր ջարդուփշուր են արեր: Սիրտս խորին վշտով լցեց: Ամէն նշաններից երեւում էր, որ այդ եկեղեցին այլեւս մեզ չեն յանձնելու եւ նորից ջամի պիտի դարձնեն: Խեղճ իմ եկեղեցի, հազիւ ազատել էր դարատր կապանքներից, հազիւ մի տարի էր անցել, որ իւր կամարների տակ հնչում էր իւր զաւակների մայրենի լեզուով արտասանած մաղթանքներն ու աղօթքները, երգերն ու հոգեշունչ շարականները: Նորից լռեցին հայ եկեղեցւոյ գեղեցիկ օրհներգերը, որոց փոխարէն մահմեդական «ազանը» պիտի լսի զանգակատանից, եւ նորա կամարների տակն էլ նոցա «հայ-հոյը» պիտի հնչէ: Երեւի մենք անարժան էինք այդ հազարամեայ արասաշէն եկեղեցին վայելելու փառքին:

Հանդիպեցի նաեւ մեր տունը. եկեղեցւոյ բակում, ուր տեղաւորել էին 35 ընտանիքի մնացորդներ, իմ թողածներն ամբողջապէս փչացրել ու տիրապետել էին: Հազիւ ձեռք բերի մի կէս պարկ ալիւր (պարկի վերայ անունս գրած էր), մի քանի կտոր գրքեր ու տետրակներ: Մնացածի համար նորից աղաչեցի չփչացնել եւ, որ գլխատրն է, մաքուր պահել, հէնց իրանց առողջութիւնն էր այդ պահանջում: Ծնշած սրտով թողի հեռացայ:

Քաղաքը բաւական հանգիստ է, եւ մարդիկ ու կանայք ազատ շրջում են: Լսեցի նոյնպէս, որ եւ պիսկոպոսը հիւանդացել է: Ամսոյս 22-ին՝ երկուշաբթի օրը, դուրս եկայ տանից եւ ուղղակի գնացի Գարեգին սրբազանին տեսնելու, թէի պառկած չէր անկողնում, բայց բաւական ճնշած ու տկար գտայ նորան: Շատ ուրախացաւ գնալուս մասին. պաշտօնեաներից մէկը զգուշացրել էր նորան քաղաքագլխի միջոցով, որ դուրս չգայ տանից: Պատմեցի նրան Առաքելոց եկեղեցւոյ դրութիւնը եւ թուրքերի ունեցած տրամադրութիւնը, մեր գլխից անցած

չարն ու բարին, նաեւ խեղճ ու կրակ ժողովրդի քաշած տառապանքի մասին: Պատմեցի բանտերում տղամարդկանց բոլորովին մերկացնելը, սոված-ծարաւ պահելն ու ջրի տեղ մէկ խմեցնելը: Պատմեցի փողոցներում խղճուկ կանանց ու երեխայոց ցնցոտիների մէջ փաթաթած ողորմութիւն հաւաքելը, թէ ինչպէս նոքա շարունակ գնում են ձորը ասկերների կերակուրների մնացորդները խնդրելու, սատկած կենդանիների լէշերը հաւաքելու կամ կեղտոտ փորոտիքները ձեռք բերելու, որ տանեն տուն եւ իրենց գոյութիւնը պաշտպանեն:

Մի ամիս չէ անցել, ձիւնը նոր է եկել, ու ցրտերն սկսել են, եւ այս «դեռ սկիզբն է երկանց», ի՞նչ կը լինի յետոյ, ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի հոգայ այս ժողովրդի ցան ու տանջանքը, ո՞վ պիտի կարողանայ կասեցնել նորա գլխին թափուած սոսկալի թշաւառութիւնը:

– Ինչքան էլ բարի ցանկութիւն ու ձգտում ունենաք, սրբազան՝ հայր, – ասացի՝ վերջացնելով խօսքս, – ոչ մի օգնութիւն չէք կարող անել սորան: Ամէնից լսան է մի կերպ անցնէք Ամերիկական որբանոցը եւ այնտեղ միառժամանակ պատասպարեք, մինչեւ տեսնենք՝ որտեղ մայր պիտի մտնի մեր արեւը:

Եպիսկոպոսի մօտից դուրս եկայ, մի քանի ծանօթ տներ եւս այցելեցի ու վերադարձայ դէպի տուն: Մունետիկը նորից յայտարարում էր, որ ամէն ազգի պատկանող տղամարդիկ պէտք է անպատճառ ներկայանան մարքեազ կօմանդատի⁶⁷ մօտ, այնտեղ ցուցակագրեն ու նոր վկայականներ ստանան: Առանց այդ վկայականների ոչ մի մարդ այս քաղաքում ապրելու իրավունք չը պիտի ունենայ:

Նոյեմբերի 24-ին նորից դուրս եկայ տանից եւ գնացի քրոջս որդոց այցելութեան եւ նրանց դրութեան հետ եւս ծանօթանալու: Մքբատին ու Լեւոնին տեսնելուց յետոյ մտայ նորանց եղբօր՝ Ստեփանի տունը, որ Ղօնդաղչեանների տան բակում էր մնում եւ մինչեւ օրս էլ խանութը փակ, տանից դուրս չէր գալիս: Նստած խօսում էինք անցուդարձի մասին ու մեզ հետ պատահածները իրար հաղորդում, երբ ներս մտաւ մի ակնոցատր պարոն՝ պօրտաւելը կռատակին, քաղաքացիական շորերով, մի ուրիշ թուրքի առաջնորդութեամբ, որոնք մեզ վերայ ուշք էլ չը դարձնելով՝ անցան միւս սենեակները, որտեղ կանայք էին տեղաւորուած: Ստեփանը շփոթած ետեւներից ներս գնաց եւ հետները վերադարձաւ: Պօրտաւել ունեցող պարոնը հարցրեց, թէ այս տանը ով է բնակում: Առաջ եկաւ քրոջս թոռը՝ Ստեփան Ստեփանեանը, եւ յայտնեց, որ ինքն է բնակում: Այն ժամանակ այդ պարոնը, ցոյց տալով հետի ընկերջը, սառնասիրտ կերպով, մինչեւ իսկ չը լսելով նորա պատասխանը՝ ասաց.

⁶⁷ Կենտրոնի հրամանատար:

–Այս տները պատկանում են այս պարոնին, եւ դուք պարտաւոր եք մի քանի օրայ մէջ դատարկել եւ ամբողջ տները յանձնել իր տիրոջը:

–Բայց այս տունը տէր ունի, որ քառասուն տարի առաջ օրինաւոր կերպով գնել է Կարսից դէպի Էրզրում գնացող տիրոջից, ահագին փոփոխութիւններ է մտցրած, այս բնակելի սենեակները՝ հիմքից շինած եւ մեզ քրէիով տւած, ու մեր ժամկետն էլ դեռ չէ լրացւած, այսպիսի խառն ժամանակում ես ինչպէ՞ս կարող եմ մի քանի օրում դատարկել եւ ո՞ր էլ կարող եմ գնալ:

–Ես չգիտեմ,– ընդհատեց Ստեփանի խօսակցութիւնը,– այս տները սորա հայրական կալածներն են եղել, եւ այսօր նա իրաւունք ունի իր հօր կալածներին տէր դառնալու: Ժամանակի մասին իրար մէջ եօլայ գնացէ՛ք եւ շուտով իմ առաջարկութիւնս կատարեցէ՛ք:

Ասաց եւ դուրս գնաց առանց պատասխան լսելու: Իրան տանտէր համարողը մնաց, խօսակցութեան մէջ յայտնեց, որ իր հայրն այն ժամանակ ծախսել է, երբ ինքը շատ փոքր է եղել: Այժմ առիթը եկել է, եւ ինքը կուզէ անպատճառ տէր դառնալ այս տներին: Ստեփանը երկար-բարակ սկսեց բացատրութիւն տալ, որ այս տները գնող ու նորոգողները կենդանի են, եւ այդ քանի համար, անշուշտ, ամէն դրութեան մէջ էլ որոշ օրէնքներ գոյութիւն ունի, եւ ոչ ոք չի կարող այդ օրէնքներից դուրս գործ կատարել: Իսկ նա ոչ մի բան չէր ուզում լսել եւ հասկանալ:

–Ես նորից կը գամ,– ասաց ու վեր կացաւ, գնաց:

Ներկայ էր նաեւ մի պարսիկ առեւտրական, որ շարունակ գործ էր անում Գորոյեան առեւտրական տան հետ, որոց մօտ էլ ծառայում եւ նրանց գործերը կատարում էր Ստեփանը: Այսօրինակ խօսակցութիւնից սաստիկ զայրացած՝ ոտքի վերայ էլաւ:

–Չոք շէյ, չոք շէյ,– ասում էր ու ման գալիս,– ես ի՞նչ «լաւ ու արդար» օրէնքների են դիմել, ո՞վ է տեսել այսպիսի բան, Կարսում ո՞վ չի իմանում, որ քառասուն տարի առաջ Ղօնդաղչեան եղբայրներն օրինական ճանապարհով գնել են այս կալվածը, տասնապատիկ աւելի ծախսելով վերանորոգել, կարգի բերել: Այսքան տարիներ օգտել եւ վարձու տել եւ մարդկանց, որոնք տասնեակ տարիներ է, որ կառաւարում եւ օգտում են այս կալվածից: Ո՞ր տեղական թուրքը, ուռումը կամ հայը չի գայ ու չի վկայէ այս ամէնը: Եթէ այդպիսի օրէնք ստեղծի, այս կառաւարութեան օրով էլ ո՞ր թուրքը չի գայ ու փառաւոր միւլքերի տէր չի դառնայ: Չոք շէյ, չոք շէյ: Գլուխը պտտեցնում եւ չէր կարողանում հանգստանալ ծերունի պարսիկը:

Երեւի այս ձեւով էլ եւ հէնց նոյնիսկ առանց օրէնքի դիմելու, գրաւել ու տիրապետում են շատ տներ ու խանութներ: Եթէ տէրերը այստեղ են լինում, կարող են որեւէ բանով օգտել, իսկ եթէ թողել, հեռացել են, անշուշտ, այդ տներն էլ պետական կը

դարձնեն, ինչպէս Ղօնդաղչեանների միւս երկյարկանի փառաւոր տները եւ առհասարակ աչքի ընկնող բոլոր տներն ու այս օրանից էլ բնակութիւն կը հաստատեն նորանց մէջ:

Պատմեցին, որ քաղաքացիք, ամէնքն էլ՝ թուրք, հայ, ռուս, մալական բոլորն էլ գնում են մարքեազ կօմանդատի մօտ, ցուցակագրում եւ վկայական ստանում, առանց որի ոչ ոք իրավունք չունի քաղաքում երեւալու:

Էլ ճար չկար, եւ ու եղբօրս որդին՝ Կարապետը, միասին գնացինք գրելու եւ վկայական ստանալու: Կայարանի մօտ երկաթուղու տներից մէկումն էին գրում: Այնքան բազմութիւն էր հաւաքւած, որ մեծ դժարութեամբ կարողացանք ներս գնալ: Երկար սպասելուց յետոյ ներկայացրինք վալիից ստացած թղթերը: Ցուցակագրող պաշտօնեան Կարապետին գրեց եւ, ինչպէս ուրիշներին ասում էր, նորան էլ պատուիրեց, որ վաղը գայ եւ ստանայ, իսկ ինձ վերայ մի խոր ու հետաքրքիր ակնարկ գցելով՝ ասաց. «Ի-ուն կեցի՛ր, յետոյ կը գրեմ քեզ» եւ, որովհետեւ մեր ժողովուրդը շատ անկարգութիւն էր անում, վեր կացավ ու բոլորին էլ դուրս արաւ՝ բացի ռուս, մալական եւ թուրք ժողովուրդից: Մի քանի հայեր էլ երեսները դէմ տուին ու մնացին, իսկ ինձ հրաւիրեց իւր մօտ: Աթոռ տեց, նստեցրեց եւ խնդրեց թարգման հանդիսանալ, բայց իմ սիրտս կասկած ընկաւ: Ինչո՞ւ չի ուզում ինձ եւս գրել ու արձակել: Մի քիչ յետոյ դուրս եկայ, որ Կարապետին զգուշացնեմ ու տուն ուղարկեմ: Բայց նա արդէն ինձ նման կասկածել էր, մի երկու ծանօթի ասել: «Մեր տէրտէրին չգրեցին, պահեցին մօտները»,– ու վազել էր դէպի տուն: Նորից ներս մտայ գրասենեակը, մի քանի թարգմանութիւններ արի ու խնդրեցի. «Տկար եմ, խնդրում եմ գրել եւ ինձ արձակել»: Փոխանակ պատասխանելու՝ վեր կացաւ եւ գնաց միւս սենեակը եւ ինձ էլ կանչեց այնտեղ: Սկսեց շատ քաղցր ու սիրով հետս խօսել, ինչպէս վաղեմի մօտ ծանօթ: Մենեակում եղողները բոլորն էլ դուրս գնացին, իսկ նա մօտեցաւ ինձ, սկսեց գուրգուրել եւ առաջարկեց իրեն համբուրել: Ես մնացի շարած: Շատ սառն դիրք ստացայ եւ կատակի ձեւով յանդիմանեցի. «Ա՛յ տղա, ժամանա՞կ ես գտել այդպիսի կատակներ անել, գործո՞ք թողել ես, այնքան մարդիկ քեզ են սպասում, արի գնանք գործո՞ք շարունակիր, երեւի նորից կը հանդիպենք եւ աւելի մօտ կը ծանօթանանք»: Լաւ էր, լսեց, դուրս եկանք, մի քանի մարդ եւս գրելուց յետոյ ինձ գրեց, վալիի տւած թուրքը վերադարձրեց ու ճանապարհ դրեց՝ խօսք առնելով, որ վաղն անպատճառ գամ եւ վկայական ստանամ: Շնորհակալութիւնս յայտնեցի, խոստացայ եւ դուրս եկայ: Տանեցիք Կարապետի պատմածից շատ էին անհանգստացել եւ Մարալին ուղարկել ետեւիցս: Տուն հասայ, հանգստացրի բոլորին եւ այլեւս դուրս չեկայ տանից: Միւս օրը՝ նոյեմբերի 26-ին, ուզէի չուզէի պիտի գնայի վկայական ստանալու: Կա-

րապետիս հետ գնացի: Բարեբախտաբար, ոչ ոքի ներս չէին թողնում: Վկայականները դուրս էին բերում, կարդում եւ ներկայ եղողներին տալիս ու արձակում: Մի տասն րոպէից յետոյ մեր անունն էլ կարդացին: Վկայականներս ստացանք եւ շտապով հեռացանք այդտեղից:

Նոյեմբերի 30-ն է՝ երեքշաբթի: Մի ամիս է անցել, որ Կարսը ընկել է թուրքերի ձեռքը: Չնայելով մունենտիկի ազդարարութեան՝ ժողովուրդը հանգիստ ու ապահովութիւն դեռ չի գտել, շարունակ կալանատրութիւն, բանտ եւ աքսոր դէպի Մարիդամիշ եւ Էրզրում: Լսում է, որ զինուորական կալանատրներն եւս տարել են Էրզրում: Մարքեազ կօմանդատից ստացած վկայականներն էլ զօրութիւն չունեցան, պատռում եւ աշխատանքի էին տանում, ինչպէս մեր Մարային: Թէեւ հաստատուն քաղաքային վարչութիւն է կազմել (փոլիս դայրասի⁶⁸ եւ ժանդարմայի), բայց դորանք էլ, ինչպէս երեսում է, չեն կարողանում անկարգութիւնների առաջն առնել: Չնայելով ցոյց տուած խստութիւններին՝ ասկերներն ու զաբթիքը շարունակում են թալանն ու բռնաբարութիւնները, մանաւանդ քունջ ու պուճախներում: Ասում էին, որ մի քանի զաբթիաներ դատի են մատուած գիշերները աղջիկներ տանելու եւ բռնաբարելու համար, ինչպէս որ մեր տուն այցելած զօրքի հարիւրապետ Օսման էֆէնդին: Հիմայ էլ ժանդարմայ կոչւածներն են գալիս տները եւ քաղաքավարի կերպով անկողին ու կահ-կարասիք քաշում, տանում՝ իբր թէ վերադարձնելու նպատակով:

Նոյեմբերի 25-ին մեր տանից տարան երկու ձեռք մահճակալ ու անկողին: Մի օր յետոյ նորից եկան ու նորից պահանջեցին յատկապէս ինձանից՝ որպէս քաղաքի հարուստ քահանայի: Բայց ես չունէի, որ տայի. «Դու չունես, խօսմ գիտես, թէ ովքեր ունեն, ցոյց տուր, մենք գնանք ու կտանենք»: Բայց ես ո՞ւմ տունը կարող էի ցոյց տալ: Քաշեցին, տարան թաղային կօմանդատի մոտ, որ մի լղպոր լակոտ էր: Մի քանի ապտակ խփեցին եւ պահանջեցին, որ ես անկողին, մահճակալ եւ կարասիք եղած տները ցոյց տամ:

–Կուզէ՞ք, սպանեցէ՞ք, ես չը գիտեմ եւ չեմ կարող ցոյց տալ:

–Ի՞նչ էս կարծում, քեզ պէս շանը դժուար է սպանել:

Անկլինից վերցրեց հրացանը եւ դէպի ինձ ուղղեց: Ինչ բան էր, որ ես սառնասիրտ մնացի ու տեղիցս էլ չը շարժեցի: Այդ միջոցին մի ասկեր հրացանը ուսին մոտեցաւ հերոսին եւ հրացանը ձեռքից առնելով՝ դրեց մի կողմը:

–Գլխիդ հե՞տ ես խաղում, գիտե՞ս՝ ով է այս քահանան, – ասաց, դարձաւ դէպի ինձ, թեւիցս բռնեց եւ տարաւ դուրս ու հայերէն խօսքերով սիրտս առաւ:

–Գնա՛ տուն, հայրիկ ջան, գնա՛, եղ շներին ո՛չ հոգի կայ, ո՛չ հաւատ:

Գնացի տուն: Ինձ խորհուրդ էին տալիս հիւքիմաթին բողոքել ինձ ծեծող չաուշի վերայ: Բայց ես չուզեցի օգտել այդ խորհրդից, ատելի թշնամիներ պիտի ճարէի:

Նոյեմբերի 30-ին մեր տուն եկաւ փոլիս դայրասու օգնական պաշտօնեան, մի շատ քաղաքավարի ու բարի պաշտօնեայ: Սկսեց հարցուփորձ անել, թէ մեզ խօսմ շատ նեղութիւն չեն տել, խօսմ մեր տանը զափթէք չեն եկել ու ներկայիս այստեղ նորանց բնակող խօսմ չկան: Երեւի ինչ-որ բան էր իմացել մեր տանն ու բակի մէջ կատարուած անցուդարձից, որի պատճառով էլ եկել, հարցուփորձ էր անում: Ես շատ քիչ վերապահութեամբ պատմեցի, ինչ որ մեր գլխովն անցել էր, եւ ատելացրի, որ այդ այն ժամանակ էր, երբ փոլիս դայրասի ու ժանդարմայ դեռ չէր հաստատուել, ու մենք էլ չը գիտէինք ումից օգնութիւն խնդրենք:

Այդ մարդը երբ անուն-ազգանունս իմացաւ, շատ հետաքրքիր կերպով հարցրեց.

–Դուն խօսմ Գոգոր ամու տղէն չե՞ս՝ Սկրտիչի եղբայրը, որ ռուսները Կարսն առնելու ժամանակ բերդի դռան մօտ խանութ ունէր:

Դրական պատասխան տուի:

–Ես ինքս կարսեցի եմ եւ ձեր խանութի դէմ գտնուած երկյարկանի տունը մեր հայրական տունն էր:

Շատ ուրախացայ այդ հանդիպումի համար: Յիշեցի, որ նորան տեսել եմ դեռ Կարսի չգաղթած ժամանակ:

–Գիտեմ, գիտեմ, դու էլ նոր էիր եկել Կարս՝ եղբորդ տեսնելու: Ջահէլ, անմօրուս դպրոցի տղայ էիր: Եղբորդ՝ Սկրտիչի հետ շատ մօտ բարեկամներ էինք, քանի որ դուն էլ նորա եղբայրն ես, իմ էլ բարեկամն ես: Այսուհետեւ գիտցիր, որ անտէր չես եւ ոչ մի բանից էլ չես վախենայ, ես աչքի տակ կունենամ ձեր տունը եւ էլի կայցելեմ, միայն խնդրում եմ, առանց քաշելու ինձ մօտ գաս եւ եթէ որեւէ պէտք ունենաս, ինձ յայտնես: Բացի դրանից՝ ժողովուրդն էլ մեզ պիտի օգնէ ամէն տեսակ անկարգութիւնների առաջն առնելու համար եւ չպիտի թաքցնէ իրեն հետ պատահած դժբախտութիւնները: Չեր հայերը գիտեն թաքնել կա՛ն երկիւղից, կա՛ն որեւէ օգուտ աչքի առաջ ունենալուց: Այդ շատ վատ է, թող առանց քաշելու գան եւ յայտնեն:

Վեր կացաւ գնալու, մտերմօրէն ձեռքս սեղմեց ու մի քանի անգամ կրկնեց.

–Հա՛յ, թէ Սկրտիչ, եղբորս եղբայրն ես եղել, ասիւն՝ ու, որ այստեղ չէր, – թողեց ու գնաց:

Ես չափազանց ուրախացել ու հանգստութիւն էի գգում այդ հանդիպումի համար:

Պաշտօնէի գնալուց մի ժամ յետոյ եկաւ Գարեգին սրբազանը եւ ցաւ յայտնեց.

–Տէր Կորիւն եւ տէր Համազասպ քահանաները

68 Ոստիկանութեան գրասենյակ:

վախենալուց դուրս չեն գալիս եւ իրան չեն այցելում, գոնէ իրար տեսնելու եւ իրար մխիթարելու համար: Այսօր վճռեցի գալ քեզ մօտ եւ խնդրել, որ ինձ հետ գաս, զնանք մարքեազ կօմանդատից թուղթ առնենք, անյարմար է մենակ գնալը, մանաւանդ, որ տեղն էլ չը գիտեմ:

–Ամէնայն ուրախութեամբ կը գամ, սրբազան հայր, բայց ի՞նչ օգուտ, որ այդ թուղթն էլ գորութիւն չունի: Քանի-քանիսներից առել, պատռել ու նորից աշխատանքի են տարել: Ես յուսահատել եմ, սրբազան հայր, եւ ոչ մի օգնութիւն մեր թշուառ ու մեռնող ժողովրդի համար չեմ սպասում սրանցից: Էհ, մէջները լաւերն էլ կան, բայց ի՞նչ օգուտ, եթէ մասնատր ծանոթութիւնների շնորհիւ տրան-նորան պահպանում կամ օգնում են, իսկ այնտեղ ընդհանուր ժողովուրդը մերկ ու բոբիկ, սովից ու հիւանդութիւնից կորչում է՝ անտերութեան մատնւած: Ման ես գալիս փողոցները եւ տեսնում՝ օրատուր թուրքերն աւելանում են, խանութները շատանում են, ամէն տեսակ ապրանքներով լցում, բայց ի՞նչ օգուտ, որ մեր ժողովրդին մատչելի չէ, քանի որ տաճկական բանկատներ չկան, իսկ մեր չէքերի երեսն անգամ չեն ուզում նայել, առնում, պատռում են, իսկ ռուսական ու կովկասեան փողն էլ նագուտուզով վերցնում: Խեղճ ժողովրդի վերայ հալ չմնաց ոսկի, ամարաթ, տան կահ-կարասիք ծախելով, այն էլ այնպիսի ցած գներով են առնում անի-ծածները, որ ոչ մի բանի տեղ չի ծառայում: Եթէ այդ միջոցն էլ վերջանայ, ի՞նչ պիտի լինի մեր ժողովրդի դրութիւնը:



Առաքելոց եկեղեցու բակում Խորեն քահանա Ստամբուլցյանի տունը (լուս.՝ 2008 թ.)

–Առաքելոց եկեղեցւոյ դրութիւնն ի՞նչ վիճակի մէջ է, տէ՛ր Խորեն, – հարցրեց սրբազանը:

–Է՛հ, մի՛ հարցնէք, սրբազան, այդ դժբախտ եկեղեցին էլ նորից իսպառ ելաւ ձեռներիցս: Այսքան օր է, տենդային աշխատանքներ են տանում, խաչերը վայր բերին, սեղանը քանդեցին, պատկերների հրաշալի շրջանակները դուրս թափեցին ու ջարդուփշուր արին: Խեղճ աշխատատուներին բռնի բերել, չարչարում են, քանի՛-քանի՛ անգամ գնացել եմ

մօտները, յուսադրել, սիրտ տուել. «Բան չկայ, տղէ՛ք ջան, աշխատեցէ՛ք, պրծէ՛ք, գլուխներդ ազատելուն նայեցէ՛ք, դրութիւնը այսպէս չի մնայ»: Բայց շատ ենք խօսում, սրբազան հայր, զնանք, քանի ուշ չէ, եւ այդ վկայականն էլ ստանանք, բայց իմ բարի խորհուրդս է չը մնալ քաղաքում, մի կերպ գնալ ձորը՝ ամերիկացւոց մօտ եւ այնտեղ մնալ, մանաւանդ որ տկար էք եւ միայն այնտեղ կարող էք լաւ խնամք գտնել:

Գնացի՞նք մարքեազ կօմանդատի մօտ: Համարեայ ոչ ոք չկար, առանց որեւէ արգելքի վկայականը ստացանք:

Առաքելոց եկեղեցւոյ բակում իմ կեցած տունը գրաւել էր մոլլա Քէմալը: Մէջի գաղթականներին հեռացրել էր, իսկ մնացած իմ կահ-կարասին էլ դուրս թափել ջարդած ու գրեթէ անպէտքացած, որոց մեծ մասն էլ գնացող գաղթականներն էին հետները տարել: Մի կերպ այդ իրերն էլ քաշեցի, տարայ կեցածս տան մօտ մի դատարկ տուն լցրի՝ ասելով. «Գուցէ պէտքը գայ»:

Չէր պատահի դէպք, որ բարոյապէս քայքայւած տուն վերադառնալիս մի անախորժ պատահարի չը հանդիպէի ու դառն վշտով չը համակէի: Երբօրս աղջիկը՝ Երանեակը, այնպիսի դիրք էր բռնել տան մէջ, որ բացարձակ ցոյց էր տալիս, որ հաճելի չէ իմ եւ հետիններիս ներկայութիւնը իւր տանը: Ահագին քանակութեամբ գարին, որ ունէին լցրած ներքին սենեակում, խնայում էին աղալ եւ կերակրել այս տանը ապաւինած թշուառներին: Դառն վշտով համակւած՝ երկաթի համբերութեամբ տանում էի այս ամէնը, մինչեւ որ Տիկուշին եւ երբօրս որդի Կարապետին ուղարկեմ Ադէքսանդրապօլ, որոց համար թրթերն արդէն ստացւած էին, եւ ապաստում էինք յարմար առիթին եւ Ադէքսանդրապօլ գնացքներ գնալուն:

Գեկտեմբեր ամիսն ենք մտել: 1-ին՝ հինգշաբթի երեկոյին, առաջին անգամ Առաքելոց զանգակատանից տաճկաց ազանն է լսում եւ հաւատացեալներին վաղայ ուրբաթ օրայ աղօթքի հրաւիրում այդ եկեղեցւոյն կատարելու, որոյ գմբէթների գլխին արդէն մի քանի օր է, որ աստղ ու լուսին է փայլում: Կեանքիս մէջ երբէք չպիտի մոռանամ այն պատկերը, որ այդ օրերում փողոցում տեսայ հիւսն Շաւշեղեան Ստեփանին (իմ նախկին աշակերտներից): Իւր վայր առած խաչը ուսին դրած՝ ման էին ածում փողոցներում ու վերջն էլ տարել, ձորը սպանել են երեւի այն ծանր վտանգատուր աշխատանքի վարձատրութեան համար, որ քանի օր տանջեց ու խաչը վայր բերեց: Ու վաղն էլ պիտի հաւաքեն այդ եկեղեցու կամարների տակ եւ հանգիստ խղճով իրենց աղօթքը վեր առաքեն առ բարձրեալն Աստուած: Տեսնում էի, թէ ինչպէս ինքնաբաւական կերպով մահմեդական ժողովուրդը ուրբաթ օրը դիմում էր այդ եկեղեցին խմբերով: Մանաւանդ շատ ուրախ էին մոլլաները, իսկ մոլլա Քէմալը չափ չունէր

իր զգացած ուրախութեան. այդ եկեղեցոյ տէր ու տիրակալան ինքն էր դարձել, իմ կարգի բերած ու յարդարած տան մէջ ինքն էր տեղաւորել:

Ղաբան կոչւած շուկայի վերայ երկու կարգ արկղներ կամ սեղաններ դրած, վերաները զանազան մանրոք ապրանքներ դրած, երբեմն տանը եփած լաւաշ հաց դարսած, շուրջը տան կահ-կարասիք շարած՝ առուտուր են անում նաեւ յայտնի ընտանիքների ցնցոտիների մէջ փաթաթած խանութ-խաթուն կանայք: Շատերը ամաչում, քաշում էին, եթէ մօտենում էիր մի բան գնելու:

Հայ վաճառականի կեանքը մեռել էր Կարսում, եւ ոչ մի խանութ չկայ, եղածներն էլ թուրքերը գրաւել են: Մի երկու-երեք առետրական հայեր թուրքերի հետ ընկերացել են ամբողջապէս իրանց դրամագլխով (Հաճիպապ Մինասեան, Մեխակ Քեօսայեանց, Վարոս Ինճայեան): Այդ խանութներն ամէն տեսակ ապրանքներով լցում էին՝ էլ մանուֆակտուրայ, էլ չիր, թէյ ու շաքար, դեզերով դարսած, էլ ամէն տեսակ չոր մրգեր, լացքի ու Հալէպի սապոններ, իող եւ պանիր եւ այլն, եւ այլն, այնքան առատ, որպիսին չէր տեսել Կարսը իւր ազատութեան օրերին վերջին երկու տարւայ ընթացքում: Հապա ցորենն ու գարին, ալիւրը, փռերում թխած հացերը փմփուշ-փմփուշ: Գարին էլ վատ չէր, անհամեմատ լաւ, քան հայոց ժամանակ եփածները ու այնքան էլ թանկ չէր. ֆունտը 5 դուրուշ ցորեն հացը եւ 3.5 դուրուշ գարին: Բայց ի՞նչ օգուտ, որ այնքան էլ մատչելի չէին հայ ժողովրդին, որովհետեւ տաճկական բանկոտներ չունէին: Մի քանի արհեստատրներ եւս կային դարձեալ թուրքի հովանու տակ, որին իւր բաժինն էին տալիս աշխատանքից: Մի հատ էլ հայկական դայֆէ⁶⁹ ունէին բացած ոտնաման կարողների եւ վառարան շինողների նրբափորոցում: Իսկ թուրքերը մինչեւ 15-ի չափ թէյարաններ ու դայֆաներ ունեն, որոց մի քանիստ ամէն օր նազակցութիւն է ունենում. անկենցաղատէր թուրքեր ամբողջ օրը քեֆ են անում:

Կեանքը կենտրոնացած է գլխատրապէս Պօլիգէյսի փողոցում մինչեւ Աղէքսանդրեան փողոցը եւ Լորիս-Մելիքեան փողոցում մինչեւ շուկա, որտեղ հայ առետրական կանանց շարքերն են: Մնացած խանութների մեծ մասը եղած է քարուքանդ եւ աղբանոց դարձած, որոց առջեւից առանց զգանքի եւ սրտի ճմլումի չի կարելի անցնել: Երբ մարդ այդ ապրանքների առատութիւնն աչքի առաջ է բերում, մանաւանդ հացի առատութիւնը եւ համեմատութեան մէջ դնում հայկական իշխանութեան ժամանակի հետ, մնում է մոլորած. մի՞թէ մերոնք էլ չէին կարող այնպիսի դիրք բռնել գէթ դրա մի տասներորդի չափ ապրանքներ ունենալու, որ շարունակ քրդերը, լազերը, Էրզրումի թուրքերն ու մալականները շարունակ բերում, լցնում էին շուկան կենսա-

կան ամէն տեսակ մթերքներով՝ իւր ու պանրով, տաւար-ոչխարով եւ մանաւանդ ցորեն-գարիով: Որտեղի՞ց բուսան այդ առատ ապրանքները:

Աղէքսանդրապօլից բաւական զօրքեր են վերադարձել եւ ուղարկել այս ու այն կողմերը, դրանց մէջ մի տեսակ լքումն է տեսնում եւ տրտունջներ լսում: Խոստացել են երկար ծառայող հասակաւոր զինուորներին տուն ուղարկել, բայց չեն կատարում, միայն մի քանի հատուկեմտ բախտատրներին է յաջողել տուն վերադառնալ: Աչքի զարնող չափով թուրք ընտանիքատրներ են աւելանում գլխատրապէս Էրզրումի կողմից: Այդտեղից բերել են նաեւ 150-ի չափ որբեր՝ իբր հայ մնացորդներից մնացած, բայց մահմէդականացրած, բայց վարքուբարքով փչացած տղաներ: Մի անգամ պատահեցի նորանց մեր նոր եկեղեցոյ շուրջը. ներսի ապակիներն էին ջարդոտում, դասի ճաղերը կոտրատում եւ նոյնիսկ սեղանի ետեւում ապականում, երբ այդ քանի համար խիստ կերպով նկատեցի նորանց, քիչ էր մնում փորձանքի մէջ ընկնէի ու մի լաւ ծեծ ուտէի, հազիւ փախայ եւ գլուխս ազատեցի: Բայց ի՞նչ եմ զարմանում ու ցաւում սորանց արարքներից, երբ մեր գաղթական ժողովուրդն էլ՝ թէ՛ փոքր եւ թէ՛ մեծ, դրանցից յետ չէր մնում անտէր մնացած տներն աւերելուց, քանդել-տանելուց, դորանց անգամ նկատողութիւն չէր կարելի անել: Միանգամայն այլ լսներել էր այս ժողովուրդը ու այսքան անտանելի ցաւի ու տառապանքի մէջն անգամ չէր զգաստանում, այլ անտէրութեան մատնելով՝ չէր իմանում՝ ինչ աներ:

Մունետիկները իւր ժամանակին ձայնել էին արդեն Աղէքսանդրապօլի ճանապարհը բաց լինելու մասին, եւ գնալու ցանկութիւն ունեցողները կարող էին գնալ: Պատմում էին, որ արդէն մի երկու գնացք գնացել է՝ բաւական հայ ժողովուրդ հետը տանելով, բացառապէս կանայք ու աղջկերք: Ամսոյս 16-ին մենք էլ բախտ ունեցանք Տիկուշին իւր հօրեղբօր՝ Մարալի հետ ճանապարհի դնել Աղէքսանդրապօլ, որոց թղթերն օր առաջ արդէն պատրաստած էին: Լաւ էր, որ Տիկուշը վերջապէս գնաց ու ազատեց ինքն էլ, եւ մեզ էլ ազատեց ամէնօրեայ հոգեկան տանջանքից:

Գնալու հերթը հասաւ մեր Կարապետին էլ, նորա թղթերն էլ արդէն պատրաստ էին: Յաւալին այն էր միայն, որ մի ընտանեկան տխուր դէպք շտապեցրեց նորա գնալը: Մի օր ներս մտնելով՝ տեսայ, որ պառաւ սկեսուրն ընկած է եղբօրս աղջկայ ոտների տակ, եւ նա կատաղի աչքերով այնպիսի հայհոյանքներ է թափում նրա գլխին, որ ես կամաչեմ արտասանել դրանք: Միեւնոյն ժամանակ ոտքերով էլ խփում էր խեղճին: Արիւնս գլուխս խփեց.

– Ի՞նչ էս անում, աղջիկ, – գոռացի ու թելից բռնած՝ ներս քաշեցի միւս սենեակը՝ իրավունք համարելով յանդիմանել: Այս անգամ սկսեց կատաղութիւնը ինձ վերայ թափել.

69 Մրճարան:

–Դու ի՞նչ իրաւունք ունես իմ տան գործին խառնելու, դու ո՞վ ես: Ես չլինէի, հիմա փողոցի շնորհ լէշո կերել էի, աղջիկներիդ էլ թուրքի ասկէրները տարել էին:

–Դեռ խօսում ես, անպիտան աղջիկ,– ինձ զսպել չկարողանալով՝ պատասխանեցի նորան,– ես իրաւունք չունեմ տանդ գործերին խառնելու, հօրեղբայրդ եմ եւ ոչ բարով տանդ քահանան: Եթէ այդպէս էր, էլ ինչո՞ւ էիր թուրք բարեկամներիդ հետ խառնել ու աղջիկներին, Կարապետին ու վերջն էլ ինձ քաշեցիր, բերեցիր այստեղ եւ ամէն պաշարով լի տուն քարոքանդ անելու պատճառ եղաք, վերջապէս կարծում ես, որ դո՞ւ ես եղել իմ, Կարապետի եւ աղջիկներին ազատելու պատճառը, շատ սխալում ես: Մի՛ կարծիր, թէ ես չգիտեմ՝ ինչ անցուդարձ եղաւ աղջկաս՝ Իսկուհուս կնութեան ուզելու եւ Տիկուշին բռնաբարելու դէպքերի շուրջը: Լսել եմ, բայց իմ եղբօր աղջկայ եւ մանաւանդ փեսայ Կարապետի տան պատիւը պահպանելու համար եմ լռել, որ քեզ պէս ապուշ անզգամները չեն հասկանում: Սոֆյա՛,– դարձայ իմ տանն ապրող կնոջը,– այսօր եւեթ կը գնաս ու տուն կը գտնես, ես այլեւս այստեղ չեմ կարող մնալ ու այս գիշերն էլ այստեղ քնելու չեմ, սպասէք մի Կարապետին էլ ճանապարհ դնեն, այն ժամանակ կը հասկանաք, թէ ով եմ ես:

Գիշերն անցկացրի ընկերիս՝ Ստեփան Խանա-միրեանի տունը, որ շատ հեռուն չէր մեզանից:

Հետեւեալ օրը՝ դեկտեմբերի 17-ին, Աղէքսանդրապօլից եկել էր Քեազիմ փաշան, որը Կարսի վալի է նշանակել: Հանդիսատր դիմաւորութիւն են ցոյց տւել ու մեծ պատով ընդունել նորան: Ասում էին, որ փաշան ուխտել է Կարսն առնելուց յետոյ ամուսնանալ, ու այս օրերումն էլ պիտի կատարի նորա հարսանեաց հանդէսը, որի համար նախօրօք պատրաստութիւններ էին տեսնում. թաղի մուխտարի առաջնորդութեամբ մտնում էին տները մի երկու պաշտօնեաներ եւ ցուցակով կահ-կարասիք եւ իրեր հաւաքում: Մեր տանից էլ երեք աթոռ ու մի ջրաման տարան իբր թէ վերադարձնելու պայմանով: Բայց այս ի՞նչ կատակախաղեր են, որ կատարում են. փաշա է պսակում, տներիցն են հարսանիքի համար հարկատր եղած կահ-կարասիք հաւաքում, այն էլ, անշուշտ, քարոքանդ եղած ու թալանած հայ տներից, մի՞թէ չգիտեն, որ հայերի տան աչքի ընկնող իրերն էլ թուրքերի տներն են գտնում: Ինչո՞ւ իրանցից չեն հաւաքում: Մի խօսակցութիւն կատարեց այդ առթիւ մեր մէջ, որ արժէ այստեղ յիշատակել.

–Էֆէնդի՛,– քաղաքացիական պաշտօնեան դիմեց զինուորական պաշտօնեային այսպիսի խօսքերով,– դու տեսնո՞ւմ ես այս տան մաքրութիւնը եւ կարգ ու սարքը, այս տունը մի քիչ առաջ գնացածներս թուրքի տան քաքն էլ չարժէ, բայց սրանք այս հասարակ տան մէջն էլ ապրել գիտեն, իսկ մերոնք խոզի պէս են այնպիսի փառաշէն տան մէջ եւ այնքան հարստութեան մէջ:

Նորանց գնալուց յետոյ ասացի.

–Ողորմելիներ, մի՞թէ չը գիտեն, որ ձեր ժողովուրդը միայն քանդել ու ւերել գիտէ եւ կեղտոտ կրքերին միայն բաւականութիւն տալու համար կաշխատէ, իսկ մարդու ման ապրելու մաքրութեան ու շինարարութեան մասին երբէք գաղափար չէ ունեցել: Հայի անմիաբանութեան, անհեռատեսութեան եւ ապաշնօրհութեան պատճառով երկրի տէր էք դարձել ու այսօր էլ փաշայ էք պսակում դարձեալ թալանի եւ հայի դառն աշխատանքի շնորհիւ:

Ամսոյս 18-ին էլ սուլթանի գահակալութեան տօնն էր: Երեկոյեան Ստեփանի տան լուսամտից նայում էի միջնաբերդին: Հրաշալի հրավառութիւն էին պատրաստել, ամէն ամբոթիւններից թնդանօթներ էին արձակում, եւ երկար ժամանակ հրացանածգութեան ձայները չէին կտրուում:

–Բայց, Ստեփան եղբայր, մի բան չեմ հասկանում,– ասացի,– չէ՞ որ այս եկող թուրքերը քեմալական են եւ, ինչպէս ասում են, բոլորովին կապ չունեն սուլթանի հետ, իրենց մայրաքաղաքն էլ Անգորան է, այս ի՞նչ հրավառութիւններ են սուլթանի տօնի առթիւ:

–Չը գիտեմ, եղբայր,– պատասխանեց ընկերս,– ես էլ բան չեմ հասկանում, բայց այն գիտեմ, որ ինչ էլ պատահի, ինչ փոփոխութիւններ էլ լինեն իշխանութեան մէջ, թուրքը էլի թուրք կը մնայ իւր բոլոր յատկութիւններով: Իսկ մենք՝ հայերս, ամէն բան տուրը տուինք մեր խելքի ճոթէն ու կորչում ենք մեր երկրի երեսէն:

Վերջապէս մեր Կարապետը յայտնեց, որ ամսոյս 20-ին գնացք է գնում Աղէքսանդրապօլ, արդէն գրել է այդ գնացքին: Շատ ուրախացայ՝ այդ լուրն իմանալով: Առաւօտը գնացել էր կայարան եւ տեսել, որ գնացքը Սարիղամիշից դեռ չի եկել: Ճաշից յետոյ ես եւ Սոֆյան հետը գնացիմք կայարան: Բաւական գնացողներ թափած էին պլատֆորմի վերայ եւ սպասում էին գնացքի գալուն: Գնացողների մէջ էր նաեւ Համազասպ Ղոլթուղճեանը, որ շատ ուրախացաւ Կարապետի գնալուն, միասին կը նստեն վագօն եւ կը գնան, ես էլ միամտեցի, որ լաւ ընկեր կունենայ Կարապետս: Բայց գնացքը ուշանում էր, եւ այդպէս արեւը դէպի մայրն էր թեքել: Ի նկատի ունենալով Կարապետի տկարութիւնն ու վախկոտութիւնը՝ առաջարկեցի վերադառնալ տուն եւ առաւօտը գալ: Բայց նա ասաց, որ գնացքն այս գիշեր գնալու է, եւ ինքն էլ գրել է այդ գնացքին, վախենում է յետ ընկնել այդ գնացքից: Ես էլ երկար չպնդեցի, չուզեցի պատճառ դառնալ: Մնաս բարով ասեցիմք, համբուրեցիմք, խնդրեցի Ղոլթուղճեանին եւ կնոջը, որ մուղայթ կենան եւ անպատճառ իրար հետ գնան: Սոֆյայի հետ վերադարձայ տուն: Բայց դեռ տուն չհասած՝ մեզնից շուտ տուն եկաւ եւ պատմեց, որ ասկէրները եկել, անկարգութիւն են արել, դրա համար էլ փախել, եկել է: Շատ աղաչեց,

որ այդ գիշեր իր մօտ մնամ եւ առաւօտն էլ հետը կայան գնամ:

Լաւ եղաւ, որ մնացի. գիշերը ժամը 8-9-ին առանց մեզ իմաց տալու դուրս է գնում եւ փոխանակ բակի արտաքնոցը գնալու, դրսի դուռն էլ բաց է անում եւ փողոցում՝ դռան մօտ եղած արտաքնոցը մտնում: Միամիտ նստած էինք, մէկ էլ այնպիսի սոսկալի ձայն իմացանք, որ դողներս բռնեց: Շուրջս նայեցի, Կարապետը չկայ:

–Վա՛յ, Կարապետն է,– ասացի ու դուրս թայ:

Ինձ հետ եկան նաեւ տնեցիք: Դրսի դռան առաջ գիշերապահը բռնել էր նրան եւ կամենում էր կօմանդատի մօտ տանել, նա էլ չէր գնացել, քիչ էր մնացել, որ սպանէ: Շատ աղաչանք-պաղատանքից յետոյ հազիւ համոզեցինք գիշերապահին ու ներս բերինք Կարապետին համարեայ կիսամեռ: Լեզուն բռնել էր, չէր կարողանում խօսել, շատ չարչարեցինք, մինչեւ որ ուշքի բերինք ու հանգստացրինք: Առաւօտ թէլ խմելուց յետոյ դարձեալ Սոֆյայի հետ տարանք կայարան: Գնացքը եկել էր, բայց լաւ էր, որ չէր մեկնել դէպի Ադէքսանդրապօլ, գնացողներն արդէն համարեայ տեղատուրել էին: Կարապետիս էլ նստեցրին վագօն, միայն երկաթուղու կառաւարիչը 5000 ռուբլիանոց մի չէք եւ մի բանկնոտ էլ կաշառք առաւ եւ նոր թողեց վագօն նստել. ասացին, որ այսօրայ գնացող բոլոր տղամարդկանցից էլ առել էին կաշառք, թէւ վալիից էլ թուրք ունէին, իսկ առաջի գնացքների ժամանակ այդպիսի բան չէր պատահել, ինչպէս հաւատացնում էին: Կարապետն աղաչում էր, որ չգնանք մինչեւ գնացքի շարժելը: Վերջապէս ժամը 11-ին ճանապարհ դրինք. «Ա՛յս, ո՞ր էր, թէ ապահով հասնէր իւր ընտանիքին ու տեսնէր բալոցը: Ո՞ր էր, թէ մի օր էլ ես կարողանայի առնել սիրելիներիս եւ հեռանալ այս դժբախտ քաղաքից հեռո՛ւ, հեռո՛ւ եւ այլեւս չտեսնել այն սեւ նախճիրները, որ ամէն օր կատարում էին աչքերիս առաջ թշուառ ժողովրդիս մէջը»:

Ամսոյս 23-ին ինձ հրախրեցին Հմայակ Աբաջեանի վերաթաղմանը: Այս պատական ու կենսական երիտասարդը սպանել էր թուրքերի՝ Կարս մտած օրը՝ հոկտեմբեր 30-ին, շաբաթ՝ ճաշից յետոյ, երբ տան ճակատին սպիտակ դրօշակ կախելիս կը լինի: Կնոջ եւ Ստեփան Դիլանեանի օգնութեամբ, որը այդ միջոցին անցնելիս է լինում փողոցով, դիակը տուն են տանում եւ մի քանի օրից յետոյ հէնց տան մի անկիւնումն էլ հողին պահ տալիս: Իսկ այսօր կիմը հրաման է ստանում հանելու եւ եկեղեցու բակում թաղելու: Մեր եկեղեցոյ բակում չէին կարողացել գերեզման փորել, գնացել Յունաց եկեղեցոյ բակում, զանգակատան տակը պատրաստել էին, ուր ճարահատեալ տարանք եւ երեկոյեան դէմ թաղեցինք խեղճ նահատակին: Մի անշուք եւ պարզ թաղում, դագաղը վերցնող անգամ չէր ճարում: Չարմանալին այն էր, որ այս երկու ամս-

այ ընթացքում դիակը ամենեւին չէր փոխել, կարծես քնած լինէր: Առաջին անգամ էր, որ կարողանում էի հրապարակաւ թաղում կատարել՝ ննջեցեալի հետ երգելով գնալով: Նախկին աշակերտներիցս էր եւ ամենապատական ու հասարակութեան պիտանի երիտասարդներից մէկը. ա՛յս, որքա՛ն հոգեկան տանջանք կրեցի՝ արտասուքն աչքերիս սորա թաղումը կատարելով: Չեմ կարող նկարագրել այս ընտանիքի դրութիւնը: Հապա սորա կնոջ հօրեղբօր աղջկայ՝ Փեփրոնեա Վանեցեանի սոսկալի դրութիւնը, որ նոյն օրը կորցրել էր իւր ամուսին Չուրաբ Վանեցեանին, որի դիակն անգամ երեսան չէր եկել:

Այս ննջեցեալին թաղելու ժամանակ մի կին պատմում էր, որ մի քանի օր առաջ տէր Համագասպ քահանան, որ բռնի գրաւել է կենում էր Յունաց եկեղեցոյ բակում գտնած տներում, երկու ֆորգօն լիքը ու ընտանիքով գնացել է Ադէքսանդրապօլ եւ ճանապարհին էլ թալանել: Թաղումը վերջացնելուց յետոյ հարցրի այդ կնոջը.

–Ճի՞շտ է, որ տէր Համագասպը գնացել է:

–Ինչպէ՞ս չէ,– պատասխանեց,– ես աչքովս եմ տեսել գնալը:

Ուրեմն տէր Համագասպն էլ է գլուխն ազատել, մտօրելով գնում էի ննջեցեալի տունը: Նա, որ դաւաճանութիւն էր համարում Կարսը թողնելու ու հեռանալը, ամբողջ ազգը դաշնակցական էր համարում եւ «այդ կուսակցութիւնից դուրս հայ ազգին փրկութիւն չկայ» քարոզում: Արդե՞օք մի օր պիտի զգայ իւր սխալը: Ականջը կանչէ Կորիւն վարդապետի, որ ջերմ պաշտպանում էր եւ ամէն տեսակ զեղծումներ անտեսանում, որովհետեւ թունդ դաշնակցական էր ու ինձ մեղադրում էր իբրեւ թոյլ եւ վեճից խուսափող, որովհետեւ տէր Համագասպների մնան երկրեեսանի ու նեղ կուսակցական պօռոտախօսների հետ չէի սիրում խօսել եւ ուր մնայ թէ անգամ վիճաբանել:

Լսել էի, որ Գարեգին սրբազանը գնացել է ձորը՝ ամերիկացոց մօտ: Նա ինձ մի քանի անգամ էր ասել, որ նոր եկեղեցին բանալու մասին հոգամ, ես էլ պատասխանել էի, որ իմ եկեղեցու ցաւովն եմ տանջւում, թող այդ հոգսն էլ քաշեն նոր եկեղեցոյ միաբաններ տէր Կորիւնը, տէր Համագասպը, Նժդէհեան տէր Գրիգորը: Փորձեցի խօսել տէր Կորիւնի, Նժդէհեանի (տէր Համագասպն արդէն գլուխն առել կորել էր), նոր եկեղեցոյ երեցփոխ Սկրտիչ Կոստանեանի հետ եւ համաձայնութիւններն առնելով եւ մեր եկեղեցոյ երեցփոխ Հաճիպապ Մինասեանին էլ մէջտեղ քաշելով՝ մտածեցինք մի խնդիր ներկայացնել եկեղեցին կարգի բերելու եւ ժամերգութիւն կատարելու թոյլտուրեան եւ խեղճ ժողովրդիս էլ ձրի աշխատանքի տանելը վերացնելու համար, որպէսզի կարողանան իւրեանց աշխատանքին գնան եւ իւրեանց ընտանիքի ցաւը հոգալու մասին մտածեն:

Խնդիրը գրել տվինք այստեղի դադի⁷⁰ Ալի էֆենդուն, բոլորս էլ ստորագրեցինք եւ ամսոյս 26-ին միասին ներկայացրինք վալիի օգնական Ֆախրեդդին էֆենդուն, որ սիրով ընդունեց եւ ասաց.

–Մենք արդէն ձեր խնդրածի մասին մի քանի անգամ յայտարարել ենք, իզուր տեղը մինչ օրս չէք բացել եկեղեցին եւ ժողովրդին էլ չէք յորդորել, որ հանգիստ կերպով իրեն գործին լինի:

Մենք բացատրեցինք եկեղեցին իսպառ թալանւած լինելը՝ աւելացնելով, որ ինչպէս լսել ենք, պահեստներում շատ եկեղեցական իրեր կան ամբարւած, ժողովուրդը վերին աստիճանի թալանւած ու խեղճ վիճակի մէջ է եւ չի կարող հոգալ եկեղեցու պէտքերը, յոյս ունենք, որ եթէ պահեստներում արդարեւ գտնեն եկեղեցական իրեր, չեն զլացւի մեզ յանձնելու: Այս բացատրութիւն էլ լսելով՝ խոստացաւ մեր խնդիրը ներկայացնել վալիին եւ մի քանի օրից պատասխանել: Խոնարհ գլուխ տվինք եւ հեռացանք այն յոյսով, որ թէ՛ եկեղեցուն եւ թէ՛ ժողովրդին մի դիրութիւն կտրուի, եւ մենք էլ կարող կը լինենք առաջիկայ ծննդեան ու մկրտութեան տօներին եկեղեցին բանալ եւ որոշ չափով ժողովրդին մխիթարել:

Երկու օր յետոյ Ֆախրեդդին էֆենդին փողոցում պատահեց եւ ասաց, որ առաւօտը կը գաք եւ ձեր խնդրի պատասխանը կստանաք: Միւս առաւօտը՝ դեկտեմբերի 29-ին, ես եւ Սկրտիչ Կոստանեանը գնացինք: Էֆենդին մեր խնդիրը ձեռքը վալիի մօտից դուրս եկաւ եւ ասաց.

–Դուք այստեղ երկու բանի համար էք խնդիր տւել, նախ ժողովրդի ապահովութեան եւ երկրորդ՝ եկեղեցին բանալու, կարգի բերելու եւ ժամերգութիւն կատարելու համար: Չեր գրածները բոլորն էլ յայտնեցի վալիին: Փաշան հրամայեց, որ դուք պէտք է ոչ թէ մէկ, այլ երկու խնդիր տաք, նախ ժողովրդի մասին՝ ցոյց տալով, թէ ովքեր են նրանց ներութիւն տողները՝ ասկերմե՞րը, թէ՞ ժանդարմաները, եւ երկրորդ խնդիրն էլ եկեղեցու համար՝ ցոյց տալու, թէ որտե՞ղ են գտնուում նորա սրբութիւններն ու իրերը, որպէսզի մենք էլ կարողանանք ձեզ ինչպէս պէտքն է բարարարել:

Աշխատեցանք նորից բացատրել, որ մինչեւ օրս էլ լաւ չենք կարողացել զանազանել պաշտօնեաներին ու ասկերմերին, եւ շատ դժար է մեզ ցոյց տալ՝ դրանցից ո՞ր մէկն է ժողովրդին նեղութիւն տողը, իսկ եկեղեցու իրերի համար մենք չգիտենք էլ, թէ որտե՞ղ են գտնուում, միայն կարծիքով ենք ասում, որ կարող է պահեստներում լինել, քանի որ լսել ենք որ թալանւածները կառուարութիւնը մեծ մասամբ ձեռններից առել եւ ամբարել է պահեստներում, բայց մեր գլխաւոր խնդիրն անցածի մասին չէ, անցածն անցած է, այլ մենք խնդրում ենք, որ ներկայիս մէջ փաշա էֆենդին առնէ մեզ հովանու տակ եւ պաշտպանէ:

Բայց օգուտ չունեցաւ մեր տւած բացատրութիւնը, Ֆախրեդդին էֆենդին խնդիրը ձեռններս տւեց եւ պատուիրեց գնալ. «Ինչպէս ասացի, այնպէս էլ կատարէք»: Դուրս եկանք հիասթափված: Ախր ի՞նչ է նշանակում ժողովրդի համար ջոկ խնդիր տալ, եւ ինչպէ՞ս կարող ենք մեզ ներութիւն տողներին ցոյց տալ եւ ի՞նչ գիտենք, թէ մեր եկեղեցու իրերը որտեղ են գտնուում: Որոշեցինք միւս ընկերներին հետն էլ խորհրդակցել եւ այնպէս վարուել ու բաժանեցինք:

Պատմեցին, որ 2-3 օր կը լինի, որ Կարս են եկել բօլշեւիկների ներկայացուցիչներ վրացի Միլեվանու գլխաւորութեամբ: Ամսոյս 28-ին միտինգ են կայացրել եւ խօսել գլխաւորապէս բօլշեւիկ Ռուսաստանում ունեցած յաջողութիւնների մասին: Ինչպէս լսել են, դրանք գնալու են Անգորա բանակցութիւնների համար: Դորանց մօտ ներկայացողների մէջ եղել են եւ հայեր, որոնք խնդրել են իրեանց դրութիւնը պարզելու համար որեւէ տեղեկութիւն հաղորդել, որոնք շատ մութ կերպով եւ վերապահութեամբ պատասխանել են, իբրեւ թէ «Մեզ չի վերաբերի հայ գերիների հարցը, ներքին հարց է դա: Աղէքսանդրապօլում եւ Երեւանում թէեւ տապալել է դաշնակցական կառուարութիւնը եւ կօմունիստական հաստատուել, բայց այդ նոր կառուարութեանն էլ չեն հաւատում, եւ մինչեւ Մոսկուայի վեհաժողովը չվերջանայ, որտեղ հայերն էլ պիտի մասնակցեն, հայկական հարցը չի պարզւի»:

Այս քանի օրերը, գիշերում էի ընկերս՝ Ստեփան Խանամիրեանի մօտ, թէեւ առաջարկում էր, որ բոլորովին փոխադրեմ իւր մօտ, բայց յարմար չէի գտնում: Իմ ցանկութիւնս էր բոլորովին առանձին լինել եւ ոչ ոքի վերայ չծանրանալ: Սոֆյան ինձ յայտնեց, որ Առաքելոց եկեղեցույ դէմը՝ Լորիս-Մելիքեանի փողոցի արեւմտեան ծայրում, երկու տուն է գտել՝ դայսերցի Յուսէփ աղայի որդի Սկրտչի տունը եւ նորան մօտ՝ Մանուսաճոնց տան դէմը (որտեղ թաղային կօմանդատն էր տեղաւորված) գտնուած տան բակում, որտեղ մնում է կարնեցի մի պատական զաբթի՝ Սդրի էֆենդի անունով, իւր ծերունի մօր հետ, կայ մի պարսպ սենեակ՝ առանձին մուտքով: Չաբթիի մայրն էլ ուրախութեամբ կը համաձայնի մեզ թոյլ տալ այդտեղ բնակւելու: Գնացի այդ երկու տունն էլ տեսայ եւ յարմար համարեցի փոխադրել վերջին տանը ու անմիջապէս իրերս կրեցի այնտեղ: Ես, Սոֆյան, Մաթենիկ անունով մի որբ աղջիկ, որ ինձ մօտ էր ապաւինած ու ծառայութիւն էր անում, տեղափոխվեցինք: Սորա մայրն ու միւս քոյրերն էլ բերի, բակի մէջ մի առանձին սենեակ տեղաւորեցի եւ յոյսս Աստուծոյ խնամքի վերայ դրած՝ որոշեցի միառժամանակ ապրել, մինչեւ տեսնենք՝ վերջներս ինչ կը լինի: Մարալի կնոջը՝ Մարիամին էլ առաջարկեցի գալ ինձ մօտ ապրել, բայց նա «կը գամ» ասաց ու չեկաւ: Իւր երկերեսանի բնաւորութեան պատճառով երեւի չուզեց թողնել եղբօրս աղջկայ տունը:

70 Դատավոր:

Տարին դեռ չվերջացած՝ մի երկու գոռ եւս տւեց իմ խեղճ ժողովուրդս մի սուկալի եղեռնագործութեամբ: Աղէքսանդրասպօլցի Մարտին Սողոմոնեանի կին Սոֆյա Յակովբեանը՝ մօտ 20 ամեայ, մի շատ գեղեցիկ կին, երկու աղջիկ երեխաներով, մէկը՝ ծծի, միւսը 5 տարեկան, ամսոյս 25-ին իւր քեռու հետ գնում է կայարան՝ Աղէքսանդրասպօլ գնալու համար: Գնացքը ուշանալու պատճառով գնում են մի ծանօթ թուրքի տուն՝ տաքանալու: Ինչպէս է լինում, յայտնի չեղաւ, այդ գիշեր կնոջը երկու աղջիկների հետ տանում են Բայրամ փաշա թաղը ու կրկին շարք ոսկիները, մատանիներ եւ այլ ամարաքներ ձեռքիցն առնում, ամբողջ գիշեր չարչարում եւ իրան ու 5 տարեկան աղջկան էլ սպանում: Կեսգիշերն անց պահապանները, ծծի երեխայի լացի ձայնին գնալով, գտնում են խեղճ կնոջը մի քանի տեղից վիրաւորած, արեան մէջ լողալիս, բայց տակաւին կենդանի: Ուշքի են բերում: Պատմում է իւր գլխին եկածը եւ ցոյց տալիս յանցատրոններին ու լուսադմին մեռնում է: Գործը յայտնում են իշխանութեան, բժշկական քննութեան ենթարկում, իսկ կնոջն ու երեխային էլ հէնց այնտեղ՝ նոր շինած առի թմբի վերայ թաղում: Ծծի երեխան տուած են լինում պահելու օրական մի հոխայ հացի վարձով: Հանգուցեալի մերձատրոնները լսում են, գնում, այս ամէնը տեսնում, իմանում, այո՛, միմիայն իմանում, եւ ինչ կարող էին անել ողորմելիները: Յանցատրոնները՝ մի քաղաքացի թուրք եւ երկու ասկէրներ, բռնում ու բանտարկում են: Ասում են, որ կախաղան պիտի բարձրացնեն, այդ էլ, այո՛, միայն ասում են:

Կարսի թշառ հայութիւնը այս երկու ամուսայ ընթացքում գրեթէ ամէն գիշեր սուկալի գոհեր տալով, բռնաբարելով, թալանելով եւ մասսայական կոտորածների ենթարկելով թէ՛ քաղաքում, թէ՛ քաղաքից դուրս եւ թէ՛ նոյնիսկ երկաթուղու գնացքներում, իւր սեւ օրերն անցկացրեց ու լրացրեց այս 1920 թ. դժբախտ տարին, որ այնքան ուրախութեամբ ու մեծամեծ յոյսերով սկսեց եւ այսպէս միանգամայն լլուած, քայքայած եւ անյոյս վիճակի մէջ վերջացրեց: Եւ թո՛ղ թուրք կառաւարութիւնը մունետիկներով խաղաղութիւն, արդարութիւն, հանգստութիւն եւ ապահովութիւն յայտարարէ, իսկ վալիի օգնական Ֆախրէդդին էֆէնդին էլ մեղրանոյշ լեզուով մեզ համոզէ, դատարկ խօսքերով եւ սին յոյսերով մեզ կերակրէ եւ ակնարկութիւններով յանցանքը դարձեալ հայերի վերայ գցէ. «Իրանք էլ քի՞չ են կատարել այդպիսի եղեռնագործութիւններ» կամ «Դուք էք մեղաւոր նեղութիւն տուողներին, յանցատրոններին պահում ու չէք յայտնում կառաւարութեանը»:

**Կարսում
կատարած սպանութիւնների մասին
հաւաքած տեղեկութիւնները**

Թուրքը Կարս մտած օրից մեր հայկական կօմիտարիատում ծառայողներից մէկը՝ Մակար Յարու-

թիւնեան անունով, բնիկ Նոր Բայազետի կողմերից, երկար ժամանակ Տփլիս մնացած, այնտեղ էլ պակասած եւ վրացերէն լեզվին լաւ տիրապետած, իբրեւ վրացի մտել էր թուրքաց ծառայութեան մէջ եւ երբէմն-երբէմն գալիս էր ինձ այցելութեան: Այս մարդը Կարսում սպանւածների մասին հետեւեալ տեղեկութիւնները տուեց՝ իբրեւ հսկող այդ գործի վերայ.

1. Կարսուլնի բատալեօնից հանել են 15 դիակ
2. Չախմախ ամրութիւնից՝ 130
3. Ղանլի թաքիից (երկաթգծ. վրայից)՝ 80
4. Չորում մինչեւ Ֆալակի ջրաղացը՝ 200
5. Մագրայի ճանապարհի վերայ, որոնք թաղել են նոյն տեղերում՝ 120
6. Քաղաքի տներից, փողոցներից եւ շրջականերից խումբ-խումբ տարած-սպանած՝ 5725

Ընդամենը՝ 6270

Վերջին սպանւածները (6) ընդհանրապէս թաղւել են քաղաքի արեւելեան կողմը՝ վշեայ արգելաբանի մօտ, ընդհանուր եղբայրական գերեզմանոցներում, այնքան ցած փորած, որ շները բացել եւ կելել էին, ինչպէս աչքովս տեսել եմ:

Բացի Մակարի տած տեղեկութիւնից՝ Չալթիկեան Յակովբն եւս, որ նշանակւած է եղել իբրեւ դիակներ հաւաքող, հետեւեալ տեղեկութիւնը տուեց (15 օր դիակներ է հաւաքել).

1. Թութունճեան Արսէնի տանից հանել են 9 դիակ
2. Եաղջեան Բագրատի տանից, պիվնոյի մօտ՝ 18
3. Պիվնոյի դէմի կղզուց՝ 23
4. Բժ. Հայրապետեանի տան ետեւի ատերակներից՝ 17
5. Քարափի թաղի տակից՝ 18
6. Շաղբաթեանի տան բակից՝ 4
7. Բոյաճեանների տան մօտից՝ 8
8. Սուղաբին Ասանթեան Վարոսի տան մօտերից՝ 7
9. Սարուխանեանց Գրիգորի տան մօտերից՝ 9
10. Բաղնոց մօտ՝ Լաչին բեգի տնից (Բաղչինեանց Կարոյի)՝ 9
11. Բաղնոց դէմի ատերակներից՝ 6
12. Կաթոլիկաց եկեղեցույ մօտերից՝ 23
13. Չուխտր թաղից՝ 8

**Ընդամենը՝ 27 դիակ
178 դիակ**

Սպանւածների մէջ ճանաչւածները

1. Շուշանիկ Մորայեանցի եղբայրը
2. Արշալոյս Ղազարեանց
3. Կոստանդին Մրոյեանց

- 4. Եզոր Չեօրնիյ
- 5. Սաղչի Ասոն երեխաներով
- 6. Ղայվաչի Փանոսը (թաղված Բեազովի պատի տակը)
- 7. Դիմեամալեանց Սեդրաք (թաղած Բայրամ փաշեն)
- 8. Ամիրեանց Գրիգոր
- 9. Սոֆյա Յակովբի Սողոմոնեանց 5 տ. աղջկայ հետ (թաղած Բայրամ փաշեն)
- 10. Ղաբլեյի Մուկուչը
- 11. Միսաք Գրիգորեանը (Հարքէշենց)
- 12. Սորա եղբոր՝ Միսէօնի կինն իր տան մէջ
- 13. Գեորգ Մատինեան՝ կամուրջի դէմը, խաւովի մէջ
- 14. Աբաջեան Հմայեակ
- 15. Վանեցեան Ջուրաք
- 16. Համանչեանց 3 եղբ.՝ Արտաշ, Բագրատ, Մամիկոն (թաղեցին արձանի մօտի եկեղեցոյ բակում)
- 17. Ալեքսան Բոյաճեանց
- 18. Ալեքսան Միսէօնեան
- 19. Արշակ Ստեփանեան
- 20. Յարութիւն Քոթանջեան

Կարսում մնացած հայերի բռնի տեղահանութիւնը

Կարսի հայերը դժոխային պայմանների մէջ ուղիւն Նոր տարու շէնը, ինչ վիճակ կամ ինչ բարի բան պիտի սպասէին 1921 թականից: Ինչպէս երեւում է, ժողովուրդն իսկի չէր էլ մտածում, թէ նոր տարի, նոր օր էր սկսել իւր համար: Նորա օրն էլ, արեւն էլ խաւարել էր: Մի կողմից տան ու տնտեսութեան քայքայելը, որ հազիւ թէ դառն տանջանքով յարդարել էր, միւս կողմից մանր երեխաների գոյութիւնը պահպանելու խնդիրը մղձաւանջի նման ծառագել էր իւր դէմ եւ երրորդ կողմից, որ ամենից սուսկալին էր, աշխատող ձեռքերից զրկել էր, որոնք կա՛ն արդէն զրկել էին կեանքից՝ զոհ գնալով թշնամու գնդակին, կա՛ն գերութեան մէջ տառապում էին անպատմելի տանջանքների մէջ եւ դարձեալ յոյսով սպասում վերադարձի ու ցանկալի ազատութեան:

Ման եմ գալիս ժողովրդի մէջ, թէ՛ տանը եւ թէ՛ դուրսը՝ փողոցում, նոյն յուսահատական դրութիւնը, նոյն տրտունջները եւ նոյն ցաւալի խօսքերը. «Ի՞նչ պիտի լինի մեր վիճակը, ե՞րբ պիտի ազատվին մեր գերիները, ե՞րբ պիտի վերջանայ մեր դառն տանջանքը»: Ոչ մի բանով չես կարող հանգստացնել նորան, մխիթարական խօսք չես գտնում դառնացած սիրտը հանդարտեցնելու:

Աշխարհից բոլորովին կտրւած, ոչ մի տեղից եւ ոչ մի յուսադրական լուր չես կարող առնել: Իսկ ժողովրդի մէջ տարածւած լուրերը խօսմ մարդու ուղեղն են ծակում՝ ըստ, ըսին...: Այնքան լուրեր կան, որ չես իմանում որին հաւատաս: Ասում են՝ յունարի 4-ին

թուրքերն Աղէքսանդրապոլից յետ պիտի քաշեն, ասում են Երեւանում շատ խառնակութիւններ են տեղի ունենում: Դարձեալ բօլշեւիկ ու մենշեւիկ խաղ են խաղում ժողովրդի գլխին, իրար կոտորում, որի պատճառով էլ գերիների վերադարձն ուշանում է: Արդեօք այդ մարդիկ չե՞ն մտածում, որ հայութիւնը միայն Կարսում 5-6000 զոհ է տւել արդէն, գուցէ մի այդքանն էլ գերութեան մէջ են տառապում, եւ գուցէ մի երկու-երեք անգամ աւելի կին ու երեխաներ, այստեղ անյայտ թաքնւած մարդիկ իրեանց սեւ օրն են լալիս, օրաուր սպասում իրեանց սիրելիների վերադարձին, ցանկալի ազատութեան եւ կամ սեւ մահուն:

Այս տարտամ վիճակի մէջ էինք, երբ ամսոյս յունարի 5/23 դեկտ.՝ գիշերայ ժամը 2-3-ը տան լուսամուտը զարկին: Հարցուփորձ անելուց յետոյ ստիպեցանք բանալ: Տուն եկան մի զինւած ասկեր եւ մի պաշտօնեայ, քաղաքաւարութեամբ բարեկեցիկ եւ հարցրին.

–Դո՞ւ ես այս մեծ եկեղեցոյ քահանան՝ տէր Խորէն փափազը:

–Ես եմ, ի՞նչ հրաման ունեք:

–Մարքեազ կօմանդատը մեզ ուղարկել է, որ քեզ տանենք իւր գրասենեակը, ինչ-որ երկու գործ կայ: Թէ ի՞նչ բան է, մեզ էլ յայտնի չէ:

Մնացի մոլորւած դրութեան մէջ, չզիտէի՝ ինչ պատասխանեմ: Երեւի նկատեց պաշտօնեան.

–Մի՛ վախենայ, փափա՛գ էֆէնդի, հիմա էլ վատ բաներ չեն պատահի, շուտով հազնի, գնանք:

Ի՞նչ պիտի անէի, հազնեցի, մօտիս կարեւոր իրերն ու դրամը յանձնեցի Սոֆյային, մի քանի բան պատուիրեցի, Մաշտոց ու փորուրար վերցրի եւ հետները գնացի՝ ինձ յանձնելով Աստոնոյ խնամքին: Մարքեազ կօմանդատի գրասենեակը կայարանի կողմն էր, բայց ինձ անտեղից էլ անցկացրին ու տարան կայարան եւ յանձնեցին գնացքների ճանապարհ դնողին ու իրանք գնացին: Խեղճ մարդն անգամ զարմացաւ, թէ ինչո՞ւ այդպէս ուշ ժամանակ ինձ բերել են իրեն մօտ: Ինձնից հարցուփորձ անելով բան չհասկացաւ: Հեռախոսով խօսեց ինչ-որ տեղ (երեւի մարքեազի գրասենեակը), երեւի բաւարար պատասխան չստանալով՝ մի լաւ հայիոյեց եւ ասաց. «Կսպասենք լուսանալուն»: Սկսեց ինչ-որ պատրաստութիւն տեսնել: Կայարանի կառավարիչը բնիկ կարնեցի մի խղճով ու պատուական մարդ երեսաց, շարունակ սիրտ էր տալիս եւ խօսելով ցրում մտօրումներս:

Բաւական ծանօթացանք միմեանց վիճակի հետ: Ղայֆէն էլ խմելուց յետոյ մարդը ներողութիւն խնդրեց եւ պատրաստեց քնելու, ինձ էլ առաջարկեց երկար նստարանի վերայ պառկելու եւ շոր անգամ տուեց վերաս ծածկելու, ինքն էլ պառկաւ ու կրակն էլ մարեց: Մնացի մթութեան մէջ նստած, աչքերս պէժին էին տալիս, ակննջներս՝ դժժում, իսկ ուղեղս՝ հազար մի տեսակ մտքով պաշարում: Փոր-

ձեռքի քնել: Պառկայ չոր տախտակի վերայ, բայց ի՞նչ բուն կարող էր տանել այդ վիճակի մէջ:

Վերջապէս լուսացաւ: Մօտ ժամը 9-ին եկան, ինձ կանչեցին: Դուրս եկայ՝ շնորհակալութիւն յայտնելով հիւրընկալիս: Ինձ կոչող ասկերը տանում էր դէպի բանտի կողմը՝ ասելով, որ մարքեազ կօմանդատն այն կողմն է գնացել: «Անշուշտ ինձ բանտարկելու են եւ մի կողմ ուղարկելու», - մտածում էի եւ կոտորած սրտով ու թոյլ ոտներով հետետում ասկերին: Դէռ բանտ չհասած՝ Միմէօն Պետրոսեանի տների առջեւ պատահեց մարքեազ կօմանդատը մի քանի ծառայողների եւ զինուորների հետ: Շատ սիրալիր եւ քաղաքաւարի ընդունեց.

– Դուք հայ քահանա՞ն էք, – հարցրեց եւ դրական պատասխան ստանալով՝ աւելացրեց, – ներողութիւն, որ Ձեզ ներողութիւն են տուել, այստեղ մի հայ դատաւարտեալ կայ, որի մասին զինուորական դատարանը մահուան վճիռ է տուել, նորան պէտք է ձեր եկեղեցոյ օրէնքի համաձայն խոստովանեցնէք, գուցէ մի բան կունենայ ասելու:

Նոր միայն գլխի ընկայ, թէ բանն ինչունն է, բայց շփոթութիւնս չանցաւ, որովհետեւ առաջին անգամն էի այդպիսի դէպքի պատահել, որին երբէք չէի սպասում: Բայց ի՞նչ կարող էի անել, հետները գնացի բանտի կողմը: Մօտեցանք մի խումբ ասկերների, որոց մէջ կանգնած էր մի բարձրահասակ, նիհար, հիւժուած, անլայ երեսով, պատռուած շինելի մէջ փաթաթուած մի երիտասարդ, աւելի ճիշտ՝ մի կատարեալ ուրուական, որին մի քանի խօսք ասաց կօմանդատը, եւ ուղղեցինք դէպի պատժոյ տեղը, ուր հրամայեցին ինձ հետը խօսել: Իմ հարցումներին նա պատասխանեց, որ ինքը բնիկ իզմիրցի է, Լեւոն Խասկապեան անունով, ունի Մարտիրոս անունով մի եղբայր՝ արհեստով վիմագրող: Խնդրեց, որ յարմար դէպքում առաջնորդարանի միջոցով նամակ գրեմ իւր եղբորը եւ յայտնեմ իւր մահուան հանգամանքները. «Բայց լաւ կը լինէր, որ մի թուղթ եւ մատիտ տայիք»: Թոյլտութիւն առաջ կօմանդատից եւ իսկոյն տի խնդրածը, նա էլ անվողով, առանց դողողալու գրեց եղբոր հասցէն, տակը ստորագրեց իւր անունը, միւս երեսն էլ գրեց. «Ես նահատակեցայ հրացանագարկ ազգիս ազատութեան համար, Լեւոն»: Թուղթն ու մատիտը տուց ինձ եւ իբր պատասխան իմ մխիթարարական խօսքերին՝ ասաց. «Է՛հ, տէ՛ր հայր, ես մահից չեմ վախենում, ես յարգել եմ իմ եկեղեցիս ու սիրել իմ ազգը: Իմ ամբողջ կեանքը մի խոստովանութիւն է, ես դեռ ուրախ եմ, որ վերջապէս կազատեմ այս անիրաւ աշխարհից: Ինձ մի՛ ողորմեսցե՛ք, միայն ասա՛, տէ՛ր հայր», – վերջացրեց ու չոքեց առաջս: Միրոս լցած, արտասուքն աչքերիս՝ ասացի պատշաճ աղօթքը: Վեր կացաւ, ջերմեռանդ կերպով համբուրեց աւետարանը ու դիմելով կօմանդատին մի պապիրոս եւ ջուր խնդրեց: Իսկոյն ծխախոտ տուին եւ մի դուլով էլ ջուր դէմ արին, որ հազիւ կարողացաւ մի եր-

կու կում խմել, որից յետոյ համարձակ քայլերով դիմեց դէպի ասկերները: Միեւնոյն ժամանակ ինձ ուղղեց խօսքերը. «Տէ՛ր հայր, եթէ ողջ մնացիք, չմռանաք գրել եղբօրս, մե՛նալ չկորցնէք գերեզմանս, գուցէ եկող եւ փնտրող լինի իմ խեղճ աճիւնս, ասիտ՛ս»: Այս եղաւ նորա վերջին խօսքը: Մի կեղտոտ փալասով աչքերը փակեցին, չհակառակեց, թէն չէր ուզում, թեւերն էլ մի կաշի գոտիով ետեւը կապեցին, տարան նշանակած տեղը կանգնեցրին՝ ասկերներից 20-25 քայլ առաջ: Տասն ասկերներ էին, վեցը չոքեցին առաջի շարք, չորսն էլ ետեւները կանգնեցին եւ նշան տալուն պէս հրացանները պարպեցին Ուրականի վերայ: Նա ընկաւ, բայց չմեռաւ, ինչպէս յայտնեց հրաւիրած բժիշկը: Հրամայեցին զինուորների շաւուշին, որը հրացանը ձեռքին մոտեցաւ դիակին: Երեք անգամ արձակեց վերան, որով ամէն բան էլ վերջացաւ: Եւ այս ամէնը հազիւ 10-15 րոպէ տեւեց: Ընկած տեղից մի քանի քայլ հեռու պատրաստել էին գերեզման, որտեղ դրին Ուրականին, եւ էլ օրհնած հող լցրի վերան ու կիսով չափ թաղման կարգ կատարեցի եւ կօմանդատի ետեւից գնացի գրասենեակը: Թաղման տեղից մինչեւ բանտի հարաւարեւմտեան անկիւնը 50 քայլ համրեցի, որ չկորցնեմ գերեզմանը, ինչպէս որ պատուիրել էր հանգուցեալը:

Գրասենեակում արձանագրութիւնը կազմելիս յայտնեց, որ ատօմօրիով փախչելիս երեք հոգի են եղել: Հանգուցեալ Լեւոնը վարորդն է եղել, որ բնիկ իզմիրցի, տաճկահայատակ լինելու պատճառով զինուորութիւնից փախած, իբրեւ դէօվլէք խեանէթը⁷¹, զինուորական դատարանը մահուան վճիռ է կայացրել գնդակահարութեան միջոցով, իսկ միւս երկուսը՝ Չախուշեան եւ Մելքումեան, ռուսահպատակ լինելու պատճառով միայն չորս տարի բանտարկութեան վճիռ են կայացրել: Արձանագրութիւնն ինձ եւս ստորագրել տուին եւ արձակեցին: Երբ գրասենեակից դուրս էի գալիս, երկու թային (չորս հոխա) հաց տուին ինձ՝ երեւի իբր վարձատրութիւն: Սկզբում մտածեցի չառնել հացը, բայց անյարմար համարեցի եւ առնելով շտապ դիմեցի դէպի տուն՝ լաւ գիտեմալով, թէ որքա՛ն անհանգիստ են եղել ու տանջել բացակայութեանս միջոցին:

Ճանապարհին հանդիպեց Շաքարովը, որին յանձնեցի ստացածս հացերը.

– Վա՛յ, տէրտէ՛ր ջան, երկու օր է՝ հաց չենք կերել, – արտասուքն աչքերին՝ ասաց խեղճ մարդը, որի մէկուճար տղին էլ տարել եւ կորցրել էին: Ես պատմեցի, թէ ինչ հանգամանքով եմ ստացել այդ հացերը՝ յորդորելով, որ չը յուսահատուի ու խեղճ կնօջը մխիթարել, քանի որ մէնակ չեն այդպիսի ցաւերի մէջ, ու հազարատրներն են իրենց պէս: Տուն ընկայ բոլորովին ջարդուած, ընկճուած եւ մտքով էլ մոլորուած: Ուրականը չէր հեռանում աչքերիցս, շարունակ

71 «Հայրենիքի դավանանք»:

կարծես դեմս կանգնած էր իր խեղճ, նաղած, գունատ ու անլայ դեմքով, վիթխարի, բայց բարակ հասակով, «ափսո՛ւ» բառը կապտած շրթունքներին: Կեանքումս երբէք այդպիսի համարձակ ու արհամարհող ձեռով մահի դեմ կանգնած մարդկային կերպարանք չէի տեսել, եւ որքա՛ն այդպիսի երիտասարդներ գոհեցին խեղճ հայ ազգի ազատութեան համար ու դեռ չգտան այդ ազատութիւնը:

Ճաշից յետոյ, բաւական հանգստացած, դուրս եկայ փողոց: Ինձ հանդիպեց մոլլա Հաֆիզը եւ ասաց, որ տէր Կորիւնը խնդրեց, որ ձեր կողմից մի խնդիր գրեմ վալիին եկեղեցին բանալու մասին: Մտանք իր խանութը, հարցրի, թէ ով կար տէր Կորիւնի հետ, եւ թէ ինչպէս պիտի գրի խնդիրը:

–Ոչ որ չկար, եւ ինձ էլ ամէն բան ասել է: Ես գիտեմ՝ ինչ որ հարկատու է գրել,– եւ թուրք ու գրիչ վերցնելով՝ սկսեց գրել:

Նստած մտածում էի, որ եթէ ընկերներս մտածել ու որոշում են կայացրել, քանի որ յայտնի էր իրանց, որ դադի Ալի էֆենդին առաջին խնդիրը գրել էր եւ նկատողութեան ենթարկելու պատճառով հրաժարել էր նորից խնդիր գրել: Նոյնպէս մերժել էր եւ մեր Առաքել աղայ Վարդանեանը, իբրեւ լաւ տաճկերէն գիտցող, որին ես անձամբ էի դիմել: Ուրեմն ի՞նչ պետք է անելնք, եթէ գոհ չմնայինք մոլլա Հաֆիզին գրելուց:

Միեւնոյն ժամանակ մտածում էի՝ ինչո՞ւ տէր Կորիւնը ընկերների հետ չէ եկել գրել տալու, այլ միայն ինձ է դեմ արել ու ինքը գնացել է: Մոլլան խնդիրը վերջացրեց ու կարդաց: Բովանդակութիւնը քիչ ու միչ հասկացայ, այն եկեղեցին բանալու, տիրացու Վրթանէսին Հասանդալայից վերադարձնելու եւ եկեղեցուն պատկանեալ վակֆ կոչւած կալւածները մեր տրամադրութեան տակ թողնելու մասին էր: Կարդալուց յետոյ առաջարկեց, որ ես ստորագրեմ եւ անմիջապէս էլ տանեմ, վալիին տամ:

–Բայց ինչո՞ւ պիտի միայն ես ստորագրեմ, հապա տէր Կորիւնը, տէր Գրիգորը, երեցփոխները ինչո՞ւ նրանք էլ չստորագրեն:

–Կարիք չկայ նորանց ստորագրելու,– ասաց մոլլան,– տէր Կորիւնն ասաց, որ տէր Խորէնն է մեր մեծը, միայն նա էլ, որ ստորագրէ, բաւական է, ու ես էլ այդպէս եմ գրել խնդրի տակ, լաւ կանես, որ ստորագրես եւ առանց ժամանակ կորցնելու տանես, տաս վալիին:

Գարձեալ տատանում էի, երեւի տէր Կորիւնը իմ ձեռքով փուշ քաղել կուզէ, մտածեցի: «Լա՛ւ, թող այդպէս լինի»,– ասացի ու վերցրի գրիչը: Մոլլայի ցոյց տուած տեղը ստորագրեցի եւ լսելով նորա մի քանի անգամ տուած խորհուրդը՝ «Առանց ձգձգելու, հէնց հիմայ տանեմ, տամ վալիին», դուրս եկայ, գնացի անմիջապէս ներկայացայ վալիի օգնական Ֆախրեդդին էֆենդուն, որ սիրով ընդունեց, պատիւրեց հինգ դուրուշ մարկի փող վճարել: Այդ էլ տի ու վեր կացայ գնալու, բայց ինձ չթողեց.

–Նստի՛ր,– ասաց,– հենց հիմա էլ պատասխանը կը բերեմ:

Նստայ: Վերջապէս եկաւ օգնականը եւ ասաց.

–Ձեր խնդիրը փաշան ընդունեց, ինչ որ ասուած է խնդրի մէջ, կը յարգի, Ձեզ պատասխան կտրուի, միայն թէ դուք էլ աշխատեցէք շուտով եկեղեցին բանալ, եթէ մեր ամբարներում եկեղեցական իրեր էլ գտնուեցին, ձեզ կը յանձնենք:

Շնորհակալութիւնս յայտնեցի օգնականին եւ դուրս եկայ: Անմիջապէս գնացի Մկրտիչ Կոստանեանի մօտ եւ ամէն բան պատմեցի նորան եւ, ո՛վ զարմանք, աստիկ նեղացաւ Մկրտիչս, որ միայնակ եմ ստորագրել խնդիրը եւ ներկայացրել վալիին:

Մնացի սառած:

–Ես զարմանում եմ ձեզ վերայ, եղբայ՛ր, ես նեղանալու տեղը դուք էք նեղանում,– ասացի,– երեւի տէր Կորիւնը կամեցել է իմ ձեռքովս փուշ քաղել եւ մէնակ է ուղարկել գալի բերանը,– ու մանրամասն կերպով պատմեցի մոլլայի հետ ունեցածս խօսակցութիւնս եւ այնքա՛ն երկար դիմադրելս մէնակ ստորագրելու եւ փաշին տանելու համար:–Չէ՞ք հաւատում, մոլլին հարցրէք, յոյս ունեմ, որ նա այնքան ազնիւ կը գտնուի, որ ճշմարտութիւնը կը պատմէ եւ ոչ թէ ընկերներիս նման: Ի՞նչ էք վախենում,– շարունակեցի արելի վրդոված,– կարծում էք դրանից գալիք փառքը միայն ե՞ս պիտի վայելեմ, ու դուք գրկե՞ք: Ասուած տայ, որ վալիի օգնականի խոստումները կատարեն, որին այնքան էլ չեմ հաւատում, թող եկեղեցին բացուի, ու ժողովուրդն էլ մխիթարուի,– ասացի ու վեր կացայ գնալու:

Ասածներս ազդեց Մկրտիչի վերայ, մեղմացաւ, խնդրեց նստել, աշխատեց սիրտս առնել ու գնալուս ժամանակ էլ թոյլ տուեց ասելու, որ եթէ եկեղեցույ ծառայողների համար ապահովութեան թրթրը ստացուելու լինեն, չմոռանամ մի հատ էլ իւր եղբօր համար առնել՝ որպէս եկեղեցույ ծառայողի: Գուրս եկայ ծանր խոհեղով: Մարդի՛կ, մարդի՛կ, ահա՛ թէ ինչպէս եմ հասկանում գործը եւ ինչպէս եմ ծառայում եկեղեցուն եւ ժողովրդին: Վտանգի դէպքում ծածկում, գործի ծանրութիւնը թողնում ուրիշի վերայ, իսկ յաջողութեան եւ օգուտ սպասելու դէպքում աղմկում, մէջ ընկնում եւ ամէն բան իրանց վերագրում:

Եկեղեցին բանալու գործը ձգձգեց, ծնունդն էլ անցաւ, մկրտութիւնն էլ, ժողովուրդն էլ մնաց անմխիթար: Մատը մատին համարեայ խփող չեղաւ, մինչեւ իսկ քանիցս դիմեցի դարբիններին, եկեղեցու համար իւր ժամանակին փակ ու բանալի անգամ չչինեցին, որ եկեղեցին ազատուէր որբերի պատճառած ապականութիւններից եւ քայքայելուց, որին ոչ պակաս նպաստում էին եւ հայ գաղթականները:

Այս օրերն էլի սեւ-սեւ ամպեր էին հաւաքում մեր ժողովրդի գլխին, պատճառը յայտնի չեղաւ: Մի երեկոյ Բզնունի Խաչատուրն ինձ լուր էր ուղարկել,

թե վալին կանչում է: Գնացի: Խաչատուրը ետ ու առաջ էր քայլում միջանցքում մթագնած:

–Ի՞նչ կայ, Խաչատուր, ինչո՞ւ ես կանչել:

–Չգիտեմ, վալին է կանչել, սպասիր իմաց տամ:

Գնաց եւ մի երկու րոպէ հետո յեկաւ ու ինձ ներս տարաւ վալիի մօտ, որը, ոտքից գլուխ դիտելով, ասաց.

–Սորան ինչո՞ւ էք կանչել, ես սորան չէի ուզում, ուղարկիր, դադի էֆէնդուն կանչիր,– եւ ինձ դառնալով ասաց,– գնա՛, փափա՛գ էֆէնդի, դու այստեղ գործ չունես:

Միջանցքում Խաչատուրին հարցրի.

–Էս ի՞նչ բան էր, ես բան չհասկացայ, ընկերներդ ո՞ր են, չկա՛ն:

–Ես էլ բան չեմ հասկանում,– մռայլ պատասխանեց Խաչատուրը եւ մտաւ վալիի մօտ:

Գառն մտօրումներով գնացի տուն, եւ առաւօտն իմացանք, որ մեր դեկուար մարմինները բոլորն էլ բռնած ու բանտ են տարած: Մի երկու օր յետոյ վախճանել էին Ջամբագեան Չուրաքի մայրը, նոյն օրը՝ Աբաջեան Չէթէթը (տիրացու Գէորգի փեսի մայրը), որի աղջկան Քեագիմ փաշի մօտ կար անելու պատճառով նորան սայլ եւ օգնական են տւել, որ տանի, մօրը թաղէ: Այնպէս կարգադրեցի, որ Ջամբագեանի մօրն էլ հետը թաղէնք: Թէ՛ Աբաջեանի աղջիկը եւ թէ՛ Ջամբագեանի քոյր Սաթենիկն անպատճառ ցանկանում էին ննջեցեալների հետ գալ եւ մասնակցել թաղմանը: Շատ աշխատեցի համոզել, որ յետ կենան այդ մտքից, մանաւանդ ձիւն, ցորտ ու թիփի էր: Չլսեցին, հետս եկան ոտով մինչեւ քաղաքի մօտի գերեզմանատունը: Թաղումը կատարելու ժամանակ Սաթենիկը ցանկացաւ մի քիչ առաջ գնալ եւ տեսնել, թէ ի՞նչ է թափթփւած այնտեղ, եւ ի՞նչ կենդանիներ են հաւաքւած, բայց տեսնելով, որ կենդանիները ուղղեցին դէպի իրենց, փախան եկան ինձ մօտ: Ես էլ գործս վերջացրել էի:

–Ի՞նչ բան է այնտեղ թափթփւած, տէ՛ր հայր, եւ ինչո՞ւ են զագաններն այդքան շատ հաւաքւած:

–Ի՞նչ պիտի լինի, աղջիկներս, ես որ ասում էի մի՛ գաք, դորա համար էի ասում: Այնտեղ՝ գետնի երեսին, թափւած են սպանւածների դիակներ, գազաններն էլ շներ են, որ լափում են մեր մեռելները: Շուտ վերադառնանք, եթէ ոչ, մեզ էլ կուտեն:

Փետրարի 1/14-ին ինձ հրաւիրեցին Ամերիկական որբանոցը՝ ձորում մի կնունք եւ մի պսակի խորհուրդ կատարելու: Գնացի, բաւական ժամանակ սպասելուց յետոյ մկրտեցի օլթեցի Խաչատուր Աւետիսեանի դուստր Սեդային, իսկ պսակողները որբանոցի սաներից էին՝ Սարգիս Աւետիսի Մուրադեանց՝ Մշոյ Մասկարա գիւղից, 18 տ., իսկ աղջիկը՝ Արեւահատ Սարգսեան՝ Երեւանի Թոխանշալու գիւղացի, 16 տ.: Թէ՛ կնունքի եւ թէ՛ պսակի քաւոր եղաւ Բ. հիւանդանոցի կառուարիչ Գէորգ (Ժորժիկ) Մելիք-Հայկազեանցը՝ մի վերին աստիճանի կենսուրախ ու բարի երիտասարդ: Բոլոր հանդիսա-

կանները որբ ընկերներով ու ընկերուհիներով երգեցին, պարեցին, ուրախացան երկար ժամերով:

Առաւօտն այցելեցի Բ որբանոցը, ուր աղջիկներս էին տեղաւորւած, որի կառուարչուհին էլ Իսկուհիս էր: Շատ տխուր պայմանների մէջ գտայ նորանց: Փայտ չունէին վառելու, ձմեռայ շորերով կուչ եկած որբուկներին հետ զբաղւած էին իրենց գործերով: Որբերն էլ, ցիրուցան եղած, շրջում էին այս ու այն կողմը՝ ցրտից դողողալով:

Այցելեցի Գ որբանոցը, նոյն դրութիւնը: Մտայ բժիշկ Երզնկեանի մօտ, որը ընկերին՝ Գրիգորիս քահանայի որդին էր, նորա մօտ տաք էր ու ամէն բան կարգին: Մի երկու ժամ այսպէս անցկացնելով՝ ճանապարհ ընկայ դէպի քաղաք: Հանդիպեցին երկար շարքերով որբեր՝ թեթեւակի հագցրած, որ գունատ ու դողողալով գնում էին նախաճաշելու: Մտածում էի՝ չէ՞ր կարելի արդեօք սրանց աւելի լաւ պայմանների մէջ, պահել ու լաւ հագցնել, կերակրել: Անցնում եմ ամերիկացոց ծառայողների բնակարանների առջեւից, ամէն տան ծխնելոյզից էլ բարդ-բարդ ծուխ է բարձրանում, ուրեմն ամէն տեղ էլ վառում են ու տաք ու փափուկ ապրում: Իսկ խղճուկ որբե՞րը:

Գեռ չէի ազատւած Ուրականի պատճառած ծանր տպաւորութիւնից, նորից ընկայ նոյնանման դէպքի տակ: Փետրար 22-ին (նոր տոմարով 7 մարտի) նորից ինձ տարան գնդակահարութեան դատապարտւածի հանդեսին մասնակցելու: Այս անգամ երկուսն էին դատապարտւածները, մեկը՝ Սրափ Պետրոսեան՝ 65 տարեկան, որին չէի ճանաչում: Ասում էին, որ խմբապետ Շապոյի եղբայրն է եղել եւ Կարնոյ ռուս դեսպանի երկարամեայ թղթատարը, որի պատճառով էլ Չափար Սրափ էին կոչում նորան: Երկրորդն ինձ լաւ ծանօթ Մալախեանց փեսայ թիթեղագործ Գէորգ Յակովբի Դաբադեանցն էր՝ 42 տարեկան (կարնեցի պատմութեան Յակովբի որդին): Երկուսն էլ բնիկ կարնեցի էին, երկուսն էլ համեստ, անշատ, աշխատող եւ ընտանիքի տէր անձինք: Դատարանական վճիռը կարդալիս յայտնեց, որ երկուսին էլ մեղադրում էին թուրք ընտանիքներ բռնաբարելու, կոտորելու, այրելու եւ թալանելու մէջ, որոց դէմ Սրափը ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել, խեղճը համարեայ կիսամեռ վիճակի մէջ հագիւ էր կարողանում ոտի կանգնել, իսկ Գէորգը բացէիբաց մերժեց իւր վերայ բարդած մեղադրանքները.

–Բոլորն էլ զրպարտութիւն է: Ես շատ լաւ գիտեմ՝ ովքեր են այդ զրպարտողները եւ ինչո՞ւ համար են արել, թո՛ղ Աստծու արդար դատաստանին ենթարկեն: Եթէ այստեղ էլ արդար դատ ու դատաստան լինէր, կարող էիք փաստերով հաստատել, որ երկուսս էլ անմեղ ենք: Բայց երբ է եղել այս աշխարհում արդար դատաստան:

Երկուսն էլ հաղորդեցան, երկուսն էլ ինձ յանձնեցին մօտները գտնւած մանր իրերն ու դրամները,

որ տանեն, իրենց ընտանիքներին յանձնեն եւ յայտնեն մահւան բոթը: Երկուսն էլ սառնասիրտ կանգնեցին մահւան գնդակների առջեւ: Նոյն ձեռականութիւնները, նոյն զինուորները եւ նոյն արարողութիւնը: Վերջին յոպէին Գեորգը բարձր ձայնով կանչեց.

–Տէ՛ր Խորէն, մեզ արեւի տակ չթողնես, ձեռքովդ թաղես, յետոյ գնաս:

Երկուսն էլ ընկան հենց առաջին հարածից: Երկուսին էլ թաղեցի մի փոսի մէջ՝ ոչ շատ հեռու Ուրականի գերեզմանից եւ պաշտօնեաների ետեւից գնացի բանտի գրասենեակը, ուր պիտի կազմէր արձանագրութիւնը եւ ստորագրէր: Գրասենեակում, երբ արձանագրութիւն էին պատրաստում, բանտապետն ինձ հարցրեց.

–Դու չե՞ս ճանաչում սպանւածներին:

Պատասխանեցի, որ մեծին՝ Սրափին, չեմ ճանաչում, բայց միւսին՝ Գեորգին՝ պատարմաճի Յակովբի տղին, ճանաչում եմ ու ես էլ պատկեր եմ նորան Մալաթերենց աղջկայ հետ:

–Ինչո՞ւ ես սուտ խօսում, Սրափին էլ կը ճանաչես, խմբապետ Շապոյի աղբէրը չէ՞:

–Ներողութիւն,– ասացի փոքր-ինչ զայրացած,– ես սուտ խօսող չեմ եւ ի՞նչ ունեմ խաբելու:

–Լա՛ւ, լա՛ւ, քեզ էլ լաւ եմ ճանաչում,– ասաց զրգուած բանտապետը,– դու Ստամբուլցօց Աւոյի աղբէրը չե՞ս:

–Ես Աւոյի աղբէրն եմ, ի՞նչ էք ուզում հասկացնել դորանով,– պատասխանեցի կարմրած,– իսկ քեզ առաջին անգամն է, որ տեսնում եմ:

Լաւ էր, որ մարքեազի կօմանդատը մէջ մտաւ, յանդիմանեց նորան.

–Ի՞նչ ես ուզում փափազ էֆէնդուց, մարդն ասում է, որ չի ճանաչում, խօսմ ամէն շուն ճանաչելու պարտատուր չէ՞՞ այդ մարդը:

Երեսը դարձրեց եւ առաջարկեց ինձ ստորագրել արձանագրութիւնը եւ գնալ տուն: Ստորագրեցի եւ դուրս գնալու ժամանակ նայեցի բանտապետի երեսը, սաստիկ կարմրած ու քրտնած էր: Թալին հացը դրի կոնատակս եւ շտապեցի տուն հասնել:

Առաջին պարտականութիւնս համարեցի այցելել սպանւածների ընտանիքներին եւ կատարել յանձնարարութիւնները: Առաջինի կինը հասկացել էր բանի էութիւնը, որովհետեւ մինչեւ իմ գալը գնացել էր բանտը՝ ամուսնուն տեսնելու, ասել էին, որ Սրափին ուղարկել են Էրզրում: Երբ ներս մտայ, արդէն սուգ ու շիւան էին անում: Արտասուքն աչքերիս՝ յայտնեցի եղելութիւնը, ինչ որ տուել էր, յանձնեցի, որքան կարողացայ, մխիթարական խօսքեր ասացի ու չկարողանալով երկար սպասել՝ թողի գնացի՝ խոստանալով նորից այցելել: Գնացի միւսի տունը: Նոյն սուգն ու շիւանը, նոյն տեսարանը, մանաւանդ որ սա երեխաներով ծանրաբեռնւած էր: Այստեղ բաւական նստեցի, որքան հնարատուր էր, մխիթարական խօսքեր ասացի, ինչ որ տուել էր

հանգուցեալը, յանձնեցի, խոստացա հետեւեալ օրը տանել գերեզմանի վերայ, եթէ միայն թոյլ տան: Դիմեցի մարքեազ կօմանդատին, բայց թոյլտուքիւն չկարողացայ ստանալ: Հետեւապէս մի քանի անգամ միայն այցելեցի, բաւական հանգստացրի եւ խորհուրդ տւի ամերիկացուց որբանոցների հետ անցնել Աղէքսանդրապօլ, քանի որ երկուսն էլ այնտեղ էին ծառայում, եւ արդէն լուր էր տարածուել, թէ որբանոցները փոխադրելու են Աղէքսանդրապօլ: Թէ ինչո՞ւ են որբանոցները փոխադրում, այդ մեզ համար մութ մնաց, բայց այդ լուրը երբ ստացուեց, եւ առաջին գնացքն էլ փետրուար 14/27-ին գնաց՝ տանելով իւր հետ բաւական որբեր, ծառայողների ընտանիքներ ու մօտ ծանոթներ, ժողովրդի վերայ շատ վիատեցուցիչ ազդեցութիւն թողեց, որը ամէն միջոց գործ էր դնում, որ կարողանայ մի կերպ յաջողցնել որբանոցների հետ հեռանալ այս քաղաքից: Գերիների մասին, որոց զալստեանն էր սպասում ժողովուրդը, շարունակ այնպիսի տխուր լուրեր էր ստանում, որ լքումը եւ յուսահատութիւնը աւելի էին սաստկանում, եւ աւելի բռուն կերպով էր արտայայտում քաղաքից հեռանալու ձգտումը:

Առհասարակ մեր գերիների հարցը մի շատ առեղծաւծային խնդիր էր դարձել, որոց թիւը 5-6000-ի էր հասցնում եւ միշտ դատարկ յույսերով կերակրում խեղճ ժողովրդին: Ես ինքս դեռ յունար ամսից փեսայիցս, որ սպաների հետ Էրզրում գերի էր տարած, նամակներ էի ստանում, որ փողի եւ չամաշուրի կարիք շատ ունի: Թէեւ իւր դրկած եւ հաւատարիմ մարդկանց հետ ուղարկեցի մի երկու անգամ, բայց չէին տարել ու չէին յանձնել: Այդպէս էլ ուրիշների հետ էր պատահում, եւ մի տեսակ շահագործման առարկայ էին դարձել խեղճ գերիները: Իբր թէ քիչ էին թալանել ու տանջել: Վերջին ամիսներում հատ ու կէնտ գերիներ էին վերադառնում սարսափելի կերպով հիւծւած, սեւացած եւ այլակերպւած, որոնք շատ սեւ գոյներով էին պատմում քաղաքացիական գերիների դրութիւնը, որոց մէջ մահացութիւնը մեծ չափերի է հասած եղել, եւ շատ քչերին է յաջողում այդ մահից ու տաժանակիր աշխատանքից ազատուել:

Յունար 7/20-ին Էրզրումից բերել էին հաշտարար դատատրին եւ Թութունճեան Արսէնին տկարութեան պատճառով, այն էլ վերջինիս բարեկամների անվերջ աշխատանքի շնորհիւ, բայց ի՞նչ օգուտ, բանտում էին պահում եւ միայն այն ժամանակ դուրս տւին, երբ տուն տանելիս կառքի վերայ մահացաւ: Շատ չանցած՝ մահացավ նաեւ հաշտարար դատատրը: Երկուսն էլ թաղեցին հայոց եկեղեցույ բակում: Նոյն վիճակի մէջն էին եւ Աղէքսանդր Մանուկեան եւ Խաչատուր Բզնունին, երկուսն էլ Սարիղամիշի հիւանդանոցում պառկած, երկուսն էլ իրենց կանանց անձուր աշխատանքի շնորհիւ ազատեցին: Բերին Կարս, բայց բանտից չէին թողում, մինչեւ որ ամերիկական գնացքները

սկսեցին գնալ նորանց բանտից: Այդ գնացքների մեջ փոխադրեցին ու ուղարկեցին Աղեքսանդրապոլ: Գերիներից ատելի բախտաւոր եղաւ նախկին ուսուցիչ, այժմ սպայ Վահան Գասպարեանը, որ չգիտեմ ինչպէս էր յաջողորել, որ Էրզրումից բերին Կարս, մի քանի օր բանտում պահեցին եւ ուղարկեցին Երեւան: Դորա հետ բերել էին նաեւ երեք գերիների՝ Կարսի նահանգապետի օգնական Չախուշեան, նախարարների ներկայացուցիչ Մելքումեան եւ Բաղալեան, որոց պատուով պահում էին մարքեազ կօմանդատի մօտ՝ «Մերքիա» հիւրանոցում: Դորանք մի անգամ ինձ կանչեցին տեսութեան՝ փեսիցս՝ Լեւոն Աբրահամեանից լուր հաղորդելու: Գնացի մօտները փետրարի 16/1 մարտ, հետաքրքիր կերպով տեղեկութիւններ էին ուզում իմանալ: Ես գիտցածս չափով հաղորդեցի, բայց ափսոս, որ չէին ուզում հաւատալ տամ չափաւոր տեղեկութիւններին, շատ չափազանցած էին համարում: Ողորմելիք, աչքովս տեսածներին, ձեռքերովս շօշափածներին եւ կաշիներիս վերայ փորձածներին էլ չէ՞ք ուզում հաւատալ, որովհետեւ դորա մէջ ձեր յանցանքի մեծութիւնը պիտի տեսնեք, հապա ինչի՞ն պիտի հաւատաք՝ միայն ձեզ հետ ունեցած քաղաքավարի վարմանց, մեղրանոյշ խօսքերի՞ն եւ կուշտ կերակրելո՞ւն: Է՛հ, այդպէս էլ պիտի լինէր, հարկաւ, ժողովրդի թշուառութեան եւ կորստի մեծութիւնը տեսնել ու հաւատալ նշանակում էր իրեանց յանցանքի մեծութիւնը խոստովանել, իսկ ո՞վ կունենար այդ մեծ առաքի՛նութիւնն այս փուլ աշխարհում: Վերջը ի՞նչ եղան այս գերիները՝ չիմացանք: Երեւի կամ փոխանակեցին, կամ ուղարկեցին Երեւան նոյնիսկ առանց փոխանակութեան:

Մարտի 1/14-ին նորից գնացի որբանոց եւ գիշերն էլ մնացի այնտեղ՝ աղջիկներիս մօտ: Նոքա էլ պատրաստում էին գնալու: Ամէն բան տակն ու վերայ էր եղած, հակեր կապկապած, շորերից շատերն էլ նոր լւացած, թաց-թաց, գետնի վերայ թափթփած: Վաղը որոշել են գնալ, բայց գրեթէ ոչինչ պատրաստ չէ՝ շնորհիվ ամերիկական վարիչների անհոգ եւ անտարբեր վարմունքների: Նստած նայում էի շուրջս, մի տեղից միւս տեղ գնում, դիտում, հետազոտում եւ աշխատում էի պարզել այս ամէն անկարգութեանց դրոյապատճառը: Կեսգիշերին մօտակայ սենեակում հրդէհ ծագեց, որ բավական նեղութիւն կրելուց յետոյ հանգցրին: Ինչո՞ւ ծագեց, դարձեալ անհոգութի՞ւն, թէ՞ նպատակով, ինչպէս փսփսում էին միմեանց ականջին: Արդէն առաջուց էլ խօսում էր, որ առհասարակ ամերիկական որբանոցները բարձրիքով են արած: Ինչո՞ւ, երեւի տաճիկների գալու պատճառով, որ քթները կոխում էին սորանց գործերի մէջ եւ խանգարում գործերի ընթացքը: Մինչեւ իսկ որբանոցների գլխաւոր կառաւարչուհի օրիորդ Խաչատրեանցին եւ ծառայողներից ուրիշ շատերին բռնել, բանտարկել էին:

Օր. Խաչատրեանցին մեղադրում էին, թէ իբր մի քանի հարիւր հայ երիտասարդներ զէնքով պահել ու փախցրել է: Թէեւ քննութեամբ արդարացաւ, բայց նորից բաց չթողին, մինչեւ որ վերջին գնացքներից մէկով ուղղակի բանտից տարան վազօն եւ ուղարկեցին Աղեքսանդրապոլ: Իսկ բռնածներից որը ազատեց, որը աքսորեց եւ որն էլ ոտ ու գլխով կորաւ: Գուցէ միջոցներն էին պակասել, որ որբերին այնքան էլ լաւ չէին պահում այս ցրտերին եւ դժոխային պայմաններում, որ այդ էլ չէր երեւում, որովհետեւ սկսել էին ծախել (այն էլ մեծ քանակութեամբ) ծածկոցներ, կակաօ, կաթ եւ ամէն տեսակ մթերքներից, որ ստացել էին հէնց այդ որբերին պահելու համար: Եւ ինչեւ չծախեցին մի կողմից մինչեւ իրանց գնալը, միւս կողմից գնումներ էին անում՝ խալիչա-կարպետներ, ոսկի, ամառաթներ, եւ ամէն տեսակ գնանոց զարդարանքներ ու այն էլ ի՞նչ տուկալի ընկած գներով, որ ստիպուած էին ծախել ամէն կողմից թշուառութեան մատնուած հայերը:

Այս էլ պիտի խոստովանել, որ ամերիկացիք թուրքի գալուց յետոյ շատ հարս ու աղջիկներ պատասպարեցին, իրանց մէջ պահեցին, կերակրեցին եւ իրեանց որբերի հետ ուղարկեցին Աղեքսանդրապոլ, որոց թիւը հասցնում էին 3000 պատկառելի գումարի: Այս պատասպարածների մէջն էր նաեւ մեր տեղ Գարեգին եպիսկոպոսը, որ տկարանալուց յետոյ մի կերպ ընկել էր սորանց հիւանդանոցը: Խնամքը վայելել, առողջացել եւ ամերիկական առաջին գնացքներից մէկով Աղեքսանդրապոլ մեկնելու օրը յայտնի պաշտօնեայ Իդահաստ Էֆէնդի՛ն՝ Քեազիմ փաշի թարգմանը, տեսել, բռնել, գնացքից յետ էր առել եւ բանտել տուել: Մի կնոջ միջոցով յայտնել էր ինձ: Կարողացանք մի կերպ ազատել տալ բանտից եւ նորից ուղարկել ամերիկացոց մօտ: Որտեղից վերջ ի վերջոյ կարծեմ վերջին գնացքների հետ գնաց ու ազատեցաւ: Առաւօտ մինչեւ ժամը 10-ը դեռ յայտնի չեղաւ, թէ այդ օրը որբերը գնալո՞ւ են, թէ՞ ոչ: Այլեւս չկարողացայ մնալ, ճնշուած սրտով վերադարձայ տուն: Դեռ մի ժամ էլ չանցած՝ յայտնեց, որ որբերը եւ փոքր աղջիկս՝ Շամունէս, այսօր գնալու են, իսկ Իսկուհին մնալու է ինվէնտարը յանձնելու եւ ապա գնալու: Շամունէն էլ, որբերս՝ թոռներս, եկան տուն՝ ինձ մնաս բարով ասելու ու գնացին կայարան: Բաւական ժամանակ անցնելուց յետոյ Իսկուհիս եկաւ եւ յայտնեց, որ արդէն բոլորին տեղաւորեցան վազօններում, կնքեցին եւ ժամը 4-ին մեկնելու են, իսկ ինքը, «գործ շատ ունեմ» ասելով՝ թողեց եւ գնաց ձորը: Հետեւեալ առաւօտը՝ մարտի 3/16-ին, լսեցին, որ իրիկունը որբերին տանող գնացքը յետ է եկել՝ ճանապարհը ձիւնով ծածկուած լինելու պատճառով: Գնացի կայարան, ապրանքատար վազօններում լցուած ու կնքուած տեսայ որբուկներին էլ, Շամունէիս էլ, որ հետս վերելի լուսամուտից խօսեց: Իմացայ, որ հէնց այդ վազօնում էլ երեք հատ մեռած որբերի դիակներ կան, որ

նոր են վախճանվել: Ի՞նչ տակալի դրուփին, երեակայում են: Մի ննջեցեալ էլ երեկ յետ տարան ձորը, որ դարձեալ այդ որբերից էր: Աղջիկս ասում էր, որ հիւանդներ էլ շատ կան:

Ես այլեւս չկարողացայ մնալ կայարանում եւ սպասել, կայարանի թուրք պետն ինձ ասաց, որ մի երկու ժամից անպատճառ կը գնայ, որովհետեւ ճանապարհն արդէն մաքրած էր: Մնաս բարով ասի աղջկաս ու թռնէրիս՝ հետս տանելով նորանց տարօրինակ դրութեան պատկերը:

Մեծ աղջկաս՝ Իսկուռուհուն, ճանապարհի դրի մարտ 14/27-ին: Վերջին վագօնը դուրս եկավ մարտ 19/1 ապրիլի, իսկ իրանք՝ ամերիկացիք, հեռացան Սարիղամիշի-Էրզրումի վերայով դէպի Տրապիզոն մարտի 29/5 ապրիլ: Մնացել էր մի վերջին գնացք:

Վերջին երեք ամիսների ընթացքում Կարսի մէջ ուշագրաւ ասկուսներ եւ անցուդարձեր էին տեղի ունենում, որոց հետ մեր ժողովուրդը կամայ թէ ակամայ կապում էր իւր կեանքը, որոց հետեւել ու ստուգելն անգամ անհնարին էր՝ անկախ մեր կամքից: Այստեղ վերապահութեամբ մի քանիսներին միայն յիշատակենք.

Ա. Շարունակ յամառ լուրեր էին տարածում, թէ թուրքերը հեռանում են Կարսից, ու երբ յունարի 10/23-ին լազ ասկերները հեռացրին եւ ուր որ ուղարկեցին, կարծես թէ ներքին բավականութեամբ հայ ժողովուրդն ընդունեց այդ լուրը, բայց դորա հակառակ, միշտ նոր-նոր վաճառականներ էին գալիս ընտանիքով հանդերձ, լաւ տեղատրուում, խանութներ բաց անում եւ ամէն տեսակ ապրանքի ազատ առուտուր անում: Որոշ չափով հայերն էլ սկսել էին հանգստութիւն վայելել եւ իրանց գործով ու առուտուրով պարսպել, մասնաւորապէս Մէլոսնի մօտի հրապարակի վերայ, որտեղ աչքի ընկնող չափով աւելանում էին արկղները, սեղանները, կրպակները եւ առետրի ենթարկող ապրանքները, որոց բացառապէս հայերն էին պահող ու կառավարողը: Հայերը մի քանի հատ էլ արհեստաւորների խանութ ունէին եւ մի հատ էլ սրճարան:

Բ. Փետրուար 7/20-ին Կարսի զօրքը փոխադրում էին դէպի Արդահանի կողմը, որից երեք-չորս օր անցնելուց յետոյ «Տօնամայ» կատարեց, իբրեւ թէ Արդահանը, Ախլաբաքը եւ Ախլցխան յանձնել է թուրքերի տիրապետութեան տակ, իսկ Բաթումի մասին էլ բանակցութիւններ են տեղի ունենում: Խոսում էր նաեւ, թէ Տփլիսը գրաւել են քոյշեիկները, իբր թէ շատ տներ այրել, սպանութիւններ են կատարել եւ շատ հարուստներ էլ ուղարկել են գործարաններում աշխատելու:

Գ. Ասում էին, որ սոյն փետրուար ամսում Երեւանի մէջ շատ մեծ խռովութիւններ են տեղի ունեցել: Նորից դաշնակցական կառավարութիւն է հաստատել Վրացեանի գլխաւորութեամբ: Այս այն Վրացեանն էր, որ կուրծքը պատռում էր Կարսում, թէ մինչեւ մեր վերջին կաթիլ արիւնը կը պաշտպա-

նենք Կարսը, թշնամին մեր դիակների վերայից պիտի անցնի Կարսն առնելու համար..: Ո՞ր մնացին այդ մեծախօսութիւնները, եւ այսօր, երբ նորից աթոռի ու շահու կռիւներ են անում Երեւանում, զգո՞ւմ են, որ արդէն 5000-ից աւելի զոհ են տւել Կարսում, մի այդքան էլ գերիներ կունենան Կարսիում եւ այլ տեղեր, եւ թէ իւրեանց արիւնահեղ ելոյթները ինչ ազդեցութիւն կարող են ունենալ Կարսում մնացած թշուառ ժողովրդի վերայ:

Դ. Շարունակ խօսում եւ ասում էր, որ Կարսի կառավարութեան ձեւը պիտի փոխի, «Միլի Շուրայ» լինի, ժողովրդական կառավարութիւն կազմի ամէն ազգի մասնակցութեամբ: Վալիի փոխարէն միութասարիֆ էր նշանակել: Հետզհետէ Կարնոյ կողմերից քաղաքական պաշտօնեաներ էին գալիս: Փոլիս դայրասի կազմեց իւր ստորաբաժանումներով, որոնք աւելի քաղաքաւարի ու պատուով էին վարում ժողովրդի հետ: Ժողովուրդն էլ կարծես աւելի ազատ էր զգում իրան, թէւ որբանոցների փոխադրութիւններով շատ էին ճնշւած ու խեղճացած: Եւ ահա մարտի սկզբներից լուր տարածեց, թէ հայ ժողովրդին բռնի կերպով տեղահան պիտի անեն Կարսից:

Մի քանի անգամ արդէն ցուցակագրել էին հայ ընտանիքներին, խումբերի բաժանել ըստ թաղերի: Մի երկու օր առաջ յայտնում էին գնացող խմբին, որ պատրաստեն: Առաջին անգամ՝ մարտի 9/22-ի առաւտուրը, ամէնին էլ հանեցին տներից, ստիպմամբ կայարան ուղարկեցին՝ ոչ մի ուշք չդարձնելով, թէ աւելորդ շորեր չէ ծախել կամ չէ կարողացել տեղաւորելու ու մէկին պահ տւել եւ կամ չէ կարողացել ճանապարհի համար պաշար պատրաստել: Մօտ 530 մարդ քշեցին կայարան, լցրին բաց կամ փակ ապրանքատար վագօններ եւ ուղարկին Ադէքսանդրապօլ: Անցնում էր մի երկու օր, նոր խումբ էին հանում: Հայերն էլ գնում էին թէ՛ կանոնով եւ թէ՛ ակամայ, բայց գնում էին: Մինչեւ մարտ ամսոյ վերջը՝ 30-ին (ապրիլի 12) արդէն հինգ գնացք տարել էր մօտ 3000 ժողովուրդ, որոնցից հետզհետէ հասած լուրերը վերին աստիճանի վիատեցուցիչ էին, բայց ի՞նչ կարող էին անել, թէւ շատերն էլ ամէն միջոց գործ էին դնում, որ յետ ընկնէին, չը գնան, եւ շատ քչերը բախտ կունենային ազատուել այդ անգամ գնալուց, իսկ մնացածներն էլ աւելի լքման եւ յուսահատական վիճակի էին մատնւում, որովհետեւ Կարսը հետզհետէ հայութիւնից դատարկւում էր: Այդ վերջին օրը ինձ էլ յայտնեցին, որ գնալու եմ եւ պատրաստութիւնս տեսնեմ: Կիսով չափ պատրաստ էի, բայց չկարողացայ այդ օրը դուրս գալ, որովհետեւ նորից հրաւիրեցին ինձ գնդակահարութեան դատապարտւածի մօտ գնալ:

Մարտի 29/11 ապրիլի՝ երկուշաբթի օրը առաւտուր վաղ, համաձայն երեկոյին տւած պատերի, գնացի մարքեազ կօմանդատի մօտ: Զնած էին: Մի երկու ժամից յետոյ մի խումբ զինուորների հետ գնացինք

մեր Ղասաբեան եղբարց տունը, ինչ-որ ծառայողի եւ բժշկին առնելու, որոց հետ ինձ էլ տարան դէպի բանտ: Այս անգամ գնդակահարողին Սարիղամիշի վերաբնակիչ Յակովբ Կարապետեան Սարգսեանց անունով էին կանչում, 47 տարեկան, ինձ անծանոթ մի անձնատրուքիւն, որը նախորդների մնացած անտարբեր ու սառն կերպով լսեց մեղադրական ակտը, խոստովանեց ու հաղորդեց եւ մահի դէմ անվրդով կանգնեց եւ թաղեց նոյն տեղում՝ նախորդների գերեզմաններից ոչ շատ հեռու: Նոյն գործողութիւններն ու ձեւականութիւնները, ինչ որ առաջին դէպքերում: Արձանագրութիւնը ստորագրելուց յետոյ շտապեցի տուն: Ճանապարհին պատահեց ծանօթներից մէկը եւ պատմեց, որ երեկ իրիկուն տանից տարել են տէր Գրիգոր Նժդէհեանին եւ բանտարկել, որ առաւօտը ուղարկեն բանտ՝ գնդակահարողին հաղորդութիւն տալու համար: Բայց երբ իմացել են, որ արդէն ինձ տարած են եղել, նորան բաց են թողել, բայց միւս օրն էլ՝ մարտի 30/12 ապրիլի, երեքշաբթի օրւայ գնացքով բռնութեամբ խեղճին ուղարկել են Աղէքսանդրապօլ, այնինչ նորան առանձնապէս իրաւունք էին տւել չզննել եւ թաղապետին էլ պատուիրել, որ պահէ ու պահպանէ այդ քահանային:

Այս օրերում լուր տարածուեց, որ կաղզւանցի հայերին, որոց դրացի թուրքերը եկել, ամէն կերպ համոզել են ու տարել իրանց տուն ու տեղատրցրել, տէր արել, այս օրերս կառաւարութիւնը կամ ատելի ճիշտ մի քանի տասնեակ ասկերներ 7-800 հոգի տեղահան են արել ու տարել են Էրզրում, որի մասին բողոք տողներ եւս եղան: Էրզրումից էլ դարձեալ Ալաշկերտի վերայով տարել, հասցրել են Երեւանի Սարգարա կամուրջի մօտ, բաց թողել: Հազիւ 2-300 հոգի միայն, միւս մնացածներին ամէն տեսակ ներութիւններ տալով՝ ճանապարհին կոտորել, քչացրել են:

Այս տխուր տեղեկութեան ծանր տպաւորութեան տակ այժմ ինքը՝ ժողովուրդն էր աշխատում թողնել, հեռանալ այս անիծած կառաւարութեան ճիրաններից՝ նոյնիսկ սովից կոտորւելն անգամ աչքի առաջ ունենալով: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս ապրիլի 6/16-ին՝ չորեքշաբթի օրը, խումբ բազմութեամբ դիմել էին կայարան եւ իրար գլուխ էին ջարդում վազօճներում տեղաւորելու համար: Ես էլ որոշել էի այս գնացքով անպատճառ հեռանալ Կարսից, բայց մի հանգամանք արգելեց ինձ:

Ի՞նչ հանգամանք պիտի լինէր, որ կարողանար ինձ արգելել եւ դժբախտ քաղաքից հեռանալու, մանաւանդ որ աղջիկներս արդէն գնացել էին: Ծանունէս նամակ էր գրել, որ ամերիկական ծառայութիւնից դուրս են եկել, որբերի հետ առանձին է ապրում, առանց ինձ շատ դժար պիտի լինի նոցա այնտեղ ապրել կամ պաշտօնի լինել, հետեւապէս անհրաժեշտ էր իմ գնալու: Համարեայ պատրաստ էի գնալու վերջին գնացքի հետ: Թէեւ իւր ժամանակին

մուխթարները յայտնել էին, որ ես էլ պէտք է գնամ, բայց ուրիշների մնաց ինձ չէին ստիպում եւ, ընդհակառակը, պաշտօնական մարդիկ միշտ խորհուրդ էին տալիս չգնալ: Թէեւ մի քանի անգամ աղջիկներիս ուղարկել էի փող եւ ուտելու պաշար, բայց զգում էի, որ այդ շատ քիչ է, եւ միշտ էլ հաւատարիմ մէկը չի գտնւի, որ հետն ուղարկես: Մի կողմից, որքան կարող էի, պաշար էի հաւաքում հետս տանելու համար, միւս կողմից տան ատելորդ համարածները ծախում էի գլխատրապէս բանկնոտ կամ ռուսական ոսկիներ ձեռք բերելու համար:

Աղէքսանդրապօլից գնացքներով շարունակ թուրքի ընտանիքներ են գալիս եւ քաղաքում տեղաւորում կամ գիւղերը ցրում: Մարտի 12/25 մօտ 300 թուրք գերիներ էին բերել Ռուսաստանից եւ ասում էին, որ մեր գերիների հետ փոխանակելու են, բայց մէջտեղը մեր գերիներից չէին երեւում՝ բացի մի քանի հիւծուած, ծերացած անձնատրուքիւններից եւ մի քանի պաշտօնական մարդկանցից, որոց մասին յիշել են վերեւում:

Մի երեկոյ տուն վերադառնալիս մեր տունը տեսայ եղբօրս աղջկայ՝ Երանեակի տեգեր տիփիսեցի կինը՝ վրացախօս մարդու աղջիկ, հազիւ 19-20 տարեկան, որին Տիփիսից պսակած հետները բերել էին Կարս թուրքը գալուց մի քանի ամիս առաջ:

Հազիւ ազատւել եւ մօտ երեք ամիս հանգիստ ապրում էի ինձ համար.

–Ինչո՞ւ է եկել, ի՞նչ է ուզում մեզանից,– հարցրի տանեցոց:

Ասացին, որ Երանեակը ծեծել է, նա էլ փախել է տանից, եղբօրը գտել, որ երկաթուղու վերայ ծառայում էր, ուր նրա հետ դիմել է թաղի փոլիս դայրատուն, որ այդ ժամանակ Խալիտ էֆէնդի անունով մի համեստ ու բարի, խեղճ մարդ էր: Նրան խնդրել է իւր շորերը ստանալ եւ իրան ճանապարհ դնել Տիփիսի՝ հօր մօտ: Խալիտ էֆէնդին էլ խոստացել է կատարել նոցա խնդիրը եւ յարմար է գտել ժամանակաւորապէս պահ տալ մեր տանը մինչեւ գործերը կարգի դնել եւ ուղարկելը: Ես անմիջապէս Խալիտ էֆէնդու մօտ գնացի եւ բացատրելով հանգամանքը՝ խնդրեցի, որ ուրիշ տեղ պահ տայ, այդ կինը ինձ համար շատ անյարմար է պահելը, եւ որ ամէնից լաւն է, մեզ ծանօթ ընտանիքներից մէկը (Պարունակեանց Արշակը), մօտ օրերս թուրք բժշկի հետ գնում է Տիփիսի, նորանց հետ ուղարկեն, գնայ: Խալիտ էֆէնդին ասաց. «Դու իրաւունք չունես չպահելու, խօս մեր մոլլայի մօտ ուղարկելու չեն: Մի երկու կամ երեք օր պահի, շորերը կտանանք Կարապետից, թղթերն էլ կը պատրաստենք եւ առածը ընտանիքի հետ կուղարկենք»: Ես էլ մինչեւ անգամ Տիփիսի գտնուող մեծ եղբօրս՝ Սկրտչի անունով նամակ պատրաստեցի, տւի գնացող ընտանիքին, բայց ոչ թէ երեք օր, այլ երեք շաբաթ էլ անցաւ, այդ աղջկան ուղարկելու գլուխ չդրին, այլեւ, ինչպէս երեւում էր, չէին ուզում ուղարկել՝ շնորհիւ Երա-

նեակի եւ Կարապետի ձեռք առած միջոցների: Դեռ այդ մեկը բաւական չէր, մի աղջիկ էլ մարքեազ կօմանդատն էր ինձ մօտ ուղարկել պահելու (ապրիլի 20/3 մայիսի): Աղէքսանդրապօլի Չարնջի գիւղից մօտ 20 տարեկան աղջիկ էր՝ Հրանոյշ Աւանի Դանիէլեանց անունով: Ինչպէս պատմում էր, նոր էր Կարս եկել, երբ թուրքերն եկան: Կայարանի թաղում է եղել, երբ տրապիզօնցի Խալիտ անունով մի շատուշ առեւանգում է դորան եւ տանում Արղահան՝ ասկերի շոր հագցրած: Այնտեղ էլ հեռանալիս իրան անտէր թողել ու գնացել է: Մի թուրք զաբթի դորան առել է իւր խնամքի տակ, բերել Կարս եւ յանձնել մարքեազ կօմանդատին: Մեր տուն բերող ասկերին դիտմամբ եւ տեսութիւն ցոյց տւի՝ ասելով.

–Ես ուտելու հաց շատ ունե՞մ, որ դորանց էլ ինձ մօտ կը բերէք:

–Բան չկայ, փափա՛գ էՖէնդի, հիւքիւմաթը դրանց համար քեզ հաց էլ կտայ, այդպիսիներին ո՞ր պիտի տանենք, եթէ քեզ մօտ չբերենք:

Այդ աղջիկը պատմում էր, որ Արղահանում շատ հայ աղջիկներ կան գնացած թուրք ասկերների հետ, որոց շատերին էլ բաց են թողել, եւ խեղճերը չգիտեն՝ ինչպէս պահեն իրենց գլուխը: Մի շաբաթից յետոյ այս աղջկան ուղարկեցին, իսկ միւսի համար իմ արածս բազմաթիւ դիմումներ մնացին անհետեւանք: Մինչեւ անգամ խնդրեցի տէր Կորիւնին եւ ուղարկեցի երօրս աղջկայ ու փեսիս՝ Երանեակի ու Կարապետի մօտ, որ կա՛մ համաձայնեն նորից իրենց տուն ընդունել իրանց հարսին, կա՛մ շորերը տան եւ ուղարկեն Տիփսիս: Բայց այս միջոցն էլ չօգնեց: Տէր հայրը կա՛մ չուզեց, կա՛մ չկարողացաւ խօսք հասկացնել: Շուշիկը մնաց մեզ մօտ:

Շարունակ խօսուում էր, որ Աղէքսանդրապօլից ռուս բօլշեւիկական կօմսուլ պիտի գայ Կարս իւր կազմով, եւ դրանց իրաւանց տակ պիտի դրի երկաթուղու գիծը: Ապրիլի 10/23-ին եկան այդ ցանկալի հիւրերը, որոց հայ ժողովուրդը մեծ յույսերով ու անհամբերութեամբ սպասում էր: Բայց ո՛չ գիծը յանձնեց նորանց եւ ո՛չ էլ մի բացառիկ իրաւունք: Նոքա տեղաւորեցին Մանուկ Ղօնդաղչեանի տներում, իրենանց դրօշակը կախեցին: Շատ մօտ յարաբերութիւն սկսեցին ռուսների եւ մալականների հետ, իսկ իրենց դիմող հայերին ասել էին, որ ձեր դրութիւնը բարելաւելու պայմանը խախտուած է Երեւանի բռնած ընթացքից, մինչեւ այդ չպարզի, ձեզ համար ոչինչ չի կարելի անել: Եւ այսպէս, այն մեծամեծ յոյսերը, որ սրանց գալու հետ կապուած էր, ջուրը թափեցին: Յուսահատութիւնը նորից պատեց հայ ժողովրդին, մանաւանդ որ բռնի տեղահանութեամբ տանող գնացքներն էլ դատարկեցին: Ընդհակառակը, մնացող հայերին ամէն կերպ հանդուրդ էին չը գնալ, Կարսի վիճակը շատ լաւ պիտի լինի, գնացողները սովից եւ տարափոխիկ հիւանդութիւններից կտտորում են: Ուրիշ բան չէր մնում մնացողներին, եթէ ոչ հաշտել դրութեան հետ, տեղ-

ները նստել եւ օրապահիկը ճարելու մասին մտածել ու սպասել եւ յուսալ:

Ջատկական տօներն էլ մօտենում էին: Մեր բարեմիտ քահանաները, երեցփոխը եւ ժողովրդից մի քանիսը թմրութիւններից սթափուել էին, եկեղեցին մտները զցել ու գնացել նոր նշանակուած միութասարիֆին⁷² ներկայացել եւ թոյլտութիւն խնդրել եկեղեցին բանալու: Այնինչ նոքա մի քանի անգամ էին թոյլ տուել, բայց մեր անհոգութեան եւ մէջբերած անհեթեթ պատճառների շնորհիւ եկեղեցին մնացել էր մինչեւ օրս էլ փակ դրութեան մէջ: Մի օր ինձ կանչեց փոլիս դայրասին եւ յայտնեց. «Մութասարիֆը հրամայել է ձեր եկեղեցին բանալ: Նորա մօտ գնացողներդ արե՛ք այստեղ, ինչ որ պետքն է, կը պատւիրենք, գնացէ՛ք ու բացէ՛ք եկեղեցին»: Ես այս բանը յայտնեցի տէր Կորիւնին եւ երեցփոխ Սկրտիչ Կոստանեանին, որ մութասարիֆի մօտ գնացողները գնան, հրահանգներն ստանան ու եկեղեցին բանալու մասին հոգան: Այդպէս էլ արին, ինձ էլ մէջ քաշեցին: Կրցածիս չափ օգնեցի եկեղեցին բանալու: Մեր եկեղեցուց ազատած կարպետը տարայ այնտեղ, մի քանի ծածկոցներ, եւ այսպէս աւագ հինգ-շաբթի իրիկուն առաջին անգամ բացինք եկեղեցին եւ Ռոնալուայի կարգը կատարեցինք ապրիլի 15/28-ին: Միայն կանայք ու երեխաներ էին լցուած եկեղեցում, տղամարդիկ՝ շատ հազարէկ: Որոշեցինք ուրբաթ եւ շաբաթ երեկոներին միայն սովորական ժամերգութիւն կատարել: Ճրագալոյցի պատարագը մատուց տէր Կորիւնը, գատկի կիւրակէի պատարագը եւ մատուցի եւ յայտնեցի, որ վաղը՝ երկուշաբթի մեռելոցին, դարձեալ մի պատարագ պիտի մատուցանեմ յատկապէս Կարսում նահատակուածների յիշատակին եւ հոգեհանգիստ կատարեմ բոլոր մնջեցեալների համար ու այդպէս էլ արի: Կարծում էի, որ ժողովուրդն այդքան եւ այսպիսի սուկումներ ու տառապանք տեսնելուց յետոյ պետք է գոնէ մի քիչ զգաստացած լինի, եկեղեցում աւելի երկիւղած եւ պատկառանքով կանգնի ու կարգապահ լինի: Անկարգապահ, աղմուկ, իրարանցում, իրար գլխով դիպչել, մասնաւորապէս հաղորդութիւն առնելիս՝ ամէնեւին ուշք չդարձնելով անգամ, որ երբեմն-երբեմն թուրքեր էլ էին գալիս եկեղեցին, երեւի հետաքրքրութիւնից դրուած: Մանաւանդ սրտիս շատ վէրք եղաւ, որ երկուշաբթի մեռելոցին մատուցածս պատարագին եւ Կարսի նահատակների յիշատակին կատարած հոգեհանգստին գրեթէ մարդ չկար եկեղեցում: Ո՞ր էին մնացել՝ չգիտեմ: Գիտէի, որ չկար մի տուն, որ մի յայտնի կամ անյայտ գոհ տուած չլինէր թէ՛ իւր սեփական եւ թէ՛ մերձաւոր բարեկամի կամ ազգականի կողմից: Եւ այն միսիթարական խօսքերը, ինչ որ մտադրուած էի ասելու, մնացին սրտումս: Դառնացած սրտով դուրս եկայ եկեղեցուց եւ գնացի տուն՝ հանգստանալու,

72 Գավառապետ:

լով այն մտքով մխիթարած, որ կատարեցի պարտքս դեպի նոր նահատակածները, որոնք անժամանակ իրանց կեանքը դրին Կարսի անկման օրերին:

Այս գատկին տնօրհնէք էլ ման եկանք, բայց ինչպէ՞ս:

Երկու քահանայ էինք մնացել: Ժողովրդից խելահասներն արելի լաւ էին մտածել, քան թէ քահանաներս: Այդ մտածմունքը յայտնեցին մեզ, որ մենք անխտիր բոլորի տները գնանք օրհնելու առանց որեւէ ակնկալութեան, եւ, եթէ բան է, քչէն-շատէն վարձատրող էլ եղաւ, այդ էլ կիսինք մեր մէջը: Նոյնպէս կիսինք մոմի արդիւնքը: Ես, ըստ ամենայնի, առաջ գնացի այդ մտքին: Խնդրեցի տէր Կորիւնին, որ իրիկունը այդ առթիւ մի քանի խօսք ասէ ժողովրդին տեղեկութիւն տալու համար, իսկ նա մերժեց՝ ասելով. «Լրտեսներ կը լինեն եկեղեցում: Ես չեմ կարող խօսել»: Ես ստիպեցի վերապահութեամբ մի քանի խօսք ասել, որպէսզի ժողովուրդը գիտենայ, որ երկու քահանաներս էլ միասին վաղաւանից պիտի գնանք և Կարսում մնացած բոլոր տներն այցելենք: Բայց վերին աստիճանի եղաւ իմ հիասթափութիւնը, երբ ժամերգութիւնից յետոյ եկեղեցոյ դռանը սպասում էի, որ տէր Կորիւնը դուրս գայ եւ, ըստ սովորականին, միասին գնանք երեցփոխի տուն: Բայց նա ինձ շատ ճարպիկ կերպով ցանց ու մէնակ գնաց: Երբ եկեղեցոյ դռանը մտնում կանգնած էի տիրացուի հետ, Քեօսայեանց Մեխակը մօտեցաւ, հանգամանքին տեղեկանալուց յետոյ ստիպմամբ ինձ էլ, տիրացուին էլ տարաւ իւր տունը, որտեղ ընթրելուց յետոյ գնացի տուն՝ հանգստանալու:

Հետեւեալ երկու օրը տեսնելով, որ ընկերս իսկի էլ տրամադիր չէ միասին ման գալու, միայնակ ման եկայ այն տները միայն, որտեղ գնացել եւ օրինակատարութիւն էի արել, եւ այն տները, որտեղ լսում էի, որ քահանայ չէ մտել: Եւ այսպէս վերջացրի տնօրհնէքի այցելութիւնները, բայց որքա՞ն խղճուկ տներ էին առանց մեր այցելութեան եւ հոգեկան մխիթարութեան, թող Աստուած իմանայ ու դատէ:

Մեռելոցի երկուշաբթի օրը թաղեցին նաեւ Համաձեան Արտաշէս ու Մամիկոն եղբայրները, որոնք սպանւած եւ պահուած էին միւս ընկերների հետ Եգոր Իվանիչեանց տան բակում: Միւսների հետ չկարողացան հանել ու վերաթաղել տալ՝ գետի ջուրը բարձրացած եւ ժամանակաւոր գերեզմանները ծածկած լինելու պատճառով: Այդ թաղմանը եւ չկարողացայ հասնել ու մասնակցել, հակառակ բռուն ցանկութեանս, որովհետեւ տէր Կորիւնը շուտ գնացել եւ թաղել էր:

Աղէքսանդրապոլից աղջիկներս նամակներ էին ուղարկում եւ իրեանց անտանելի վիճակը նկարագրելով՝ ստիպում, որ ինչ էլ լինի, յաջողցնեն գնալու: Առանց իմ գնալուս չպիտի կարողանան գործի լինել եւ ապրել ու ապրեցնել որբերին: Որոշել էի ան-

պատճառ գնալ, բայց հանգամանքները չէին նպաստում, ինչպէս որ վերեւն էլ բացատրել եմ:

Մի անգամ՝ ապրիլի 22/5 մայիսի հինգշաբթի օրը, գնացել էի ալիւր առնելու, որը մտադիր էի հետս տանել: Գրիգոր Ասոյեանը (իմ նախկին աշակերտներից) խոստովանաբար ինձ յայտնեց. «Այսինչ էֆէնդին ասել է Գալուստ աղին, որ քեզ զգուշացնենք, որպէս թէ ես ինձ եւ 20 ընտանիքների համար խնդիր եմ տւել, թոյլտութիւն ստանալու եւ հետս Աղէքսանդրապոլ տանելու եւ որպէս թէ սպառնացել եմ ինձ եւ այդ 20 ընտանիքին փոխանակ Աղէքսանդրապոլ, ուղղակի Կարին ուղարկելու»: Ես, իհարկէ, ծիծաղեցի այդպիսի յայտնութեան եւ սպառնալիքի վերայ, որովհետեւ ինձ համար էլ դեռ խնդիր չէի տւել Աղէքսանդրապոլ գնալու համար, ուր մնաց թէ 20 ընտանիքի հետս կապեմ եւ ինչպէս կարող էի այսպիսի պայմաններում պատճառ լինել ու հետս էլ տանել: Այս ամէնը բացատրեցի Գրիգորին եւ խնդրեցի, որ հասկացնեն այդ ասող էֆէնդուն, որ միանգամայն սխալ է:

Այստեղից, ըստ սովորականի, գնացի Սկրտիչ Սողոմոնեանի մօտ (նոյնպէս նախկին աշակերտներիցս), որին առանց տեսնելու չէի կարող մնալ: Երեւի դէմքիցս նկատել էր Սկրտիչը, որ իսկոյն հարցրեց.

—Հը՞, ինչ է, նոր բան կայ, քեֆդ տեղը չի երեւում:

Ես վերապահութեամբ եւ դարձեալ ծիծաղելով պատմեցի Գրիգորից լսածս լուրը:

—Բայց այդ նոր բան չէ,— ասաց Սկրտիչը,— երեկ էր, թէ չգիտեմ միւս օրը, եւ իրանց մօտ էի, որ այդ մասին խօսում էին: Քու անունդ չտւին, բայց Գալուստ աղեն պէխեր բռնելով ասաց, թէ այդ 20 ընտանիքին Էրզրում ուղարկել չտանք, թո՛ղ այս պէխերը: Միեւնոյն ժամանակ, տէրտէ՛ր ջան, այդ էֆէնդին թէեւ իրան շատ հայասէր է ցոյց տալիս, շատերին օգնում, ինձ մօտ էլ շատ է գալիս, բայց մութ ու կասկածելի մարդ է երեւում: Պէտք է նորանից զգոյշ լինել:

Դեռ այսքանը ոչինչ: Երբ այսպէս թէ այնպէս մտատանջւած տուն էի գնում, իւր մօտ կանչեց Քեօսայեանց Մեխակը եւ խորհրդաւոր կերպով յայտնեց, որ այսինչ էֆէնդին (նոյն մարդը) իրան գաղտնաբար յայտնել է, որ իբր թէ դուն եկեղեցու պատկան խալիչա ու խաչ եւ ծախել, որի համար այս օրերս դատի պիտի մատնեն քեզ, բանտարկեն ու պատժեն: Այս բանը չեմ կարող չասել քեզ իբրեւ բարեկամին, որ ի նկատի ունենաս, զգոյշ լինես, միայն թէ ինձնից իմացած չլինես:

Ես իմս առայ, մնացի շարած. տէ՛ր Աստուած, այս ինչ տարօրինակ զգուշացումներ կը լսեմ միեւնոյն էֆէնդու կողմից, որին չեմ էլ ճանաչում, հետն անգամ խօսած չունեմ, ո՞վ է ինձ զրպարտել նորա մօտ եւ այդ կրկնակի մեղադրանքների պատճառ դարձրել: Ես Մեխակին պատմեցի մի քիչ առաջ լսածներս, թէեւ ծիծաղում էի, բայց այժմ տեսնում

եմ, որ լուրջ խնդիր է ու չի կարելի անուշադիր թողնել: Խնդրեցի Մեխակին ես, որ այդ էֆենդուն հասկացնեմ (քանի որ ծանօթ է եւ իւր մօտ յաճախ է գալիս), որ սխալ եմ իմ մասին լսածները ու կազմած գաղափարը: Շատ մեծ անարդարութիւն պիտի գործէ, եթէ իւր մտադրութիւնը գործադրէ: Գնացի տուն: 3 օր տանից դուրս չեկայ. ո՛չ գիշերը հանգիստ ունէի, ո՛չ ցերեկը: Խեղճ Սոֆյան կաշից դուրս էր գալիս մի բան իմանալու, չէի ասում, որ չվստեցնեմ: Վերջապէս նորան էլ յայտնեցի վերապահութեամբ եւ սպասում էի քննութեան կանչելու եւ բանտ տարելու...:

Բայց ինչո՞ւ պիտի ես գրպարտութեան զոհ դառնայի, ո՞ւմ ինչ վնաս էի տուել, որ իզուր տեղը բանտարկեմ, ոչնչանամ, այն էլ ո՞ւմ ձեռքով, այսքան տանջանքների ու աւեր տանելու շեշտին հասնելուց յետոյ ի՞նչ պիտի լինեն խնամքիս յանձնածների՝ աղջիկներիս ու թոռներիս վիճակը, որոնք արդէն Աղէքսանդրապօլում տառապում են:

Չէ՛, այսպէս չպիտի լինի, դուրս կը գամ, բացարտութիւն կը պահանջեմ այդ վտանգաւոր էֆենդուց, կը պարզեմ ամէն բան: Նա էլ մարդ է, երեւի կը հասկանայ, գործի ընթացքը կը փոխի: Այսպէս որոշեցի եւ դուրս եկայ տանից, հանդիպեցի Մեխակին՝ նոր բան իմանալու համար: Գնացի Գրիգոր Ասոյեանի մօտ, այնտեղ հանդիպեց տէր Կորիւնը, դիմեցի նորան.

–Տէ՛ր Կորիւն, դու այս ինչ էֆենդուն ծանօթ ես, որ մնում է Գալուստ աղոնց տունը, որոց մօտ յաճախ գնում ես, հետը խօսակցութիւն ես ունեցել: Ուրեմն կարո՞ղ ես ինձ օգնել մի բան պարզելու համար: Այդ էֆենդին ինձ մեղադրել է, որ իբր թէ ինձ եւ քսան ընտանիքի համար խնդիր եմ տուել՝ հետս Աղէքսանդրապօլ տանելու, որ գլխովին սուտ է, եւ երկրորդ, որ իբր թէ ես մեր եկեղեցու պատկանեալ խալիչա ու խաչն եմ ծախել, որի համար ինձ պիտի բռնեն, բանտարկեն եւ այլն: Ուստի խնդրում եմ խօսել այդ էֆենդու հետ, հասկացնել նորան, որ ես ոչ թէ քսան ընտանիքի, այլ ինձ համար էլ դեռ խնդիր չեմ տուել Աղէքսանդրապօլ գնալու, իսկ եկեղեցու իրեր ծախելն ինձնից միանգամայն հեռու է:

Տէր Կորիւնը սկզբում, մի քիչ դժարութիւն ցոյց տալով, աշխատեց ինձ համոզել, որ այնքան էլ մօտ ծանօթ չէ այդ էֆենդու հետ: Բայց եւ այնպէս իմ շատ պնդելուս հետեւանքով խոստացաւ Գալուստի միջոցով մի բան իմանալ: Ես նորից պնդեցի, որ աշխատեմ անձամբ տեսնել՝ գիտենալով, որ Գալուստի միջոցով բան պիտի դուրս գայ:

Միւս օրը դարձեալ Գրիգոր Ասոյեանի մօտ պատահեցի տէր Կորիւնին, որն ինձ ասաց.

–Ճիշտ է, էֆենդին կասկածներ ունեցել է քեզ վերայ, բայց թէ ումնի՞ց է իմացել, այդ բանը չկարողացանք իմանալ:

–Շատ լաւ, եղբայր,– ասացի ու շարունակեցի,– ախր իմ Աղէքսանդրապօլ գնալու մասին էլ, մեր

եկեղեցույ՝ ինձ մօտ եղած շորերի մասին էլ քեզ հետ եմ խօսակցութիւն ունեցել, որին ներկայ եմ եղել թէ՛ Գալուստ աղէն եւ թէ՛ մոմ ծախող Ֆինանչոց Եգորը, մէկ էլ մեր տանեցիք կարող եմ ծանօթ լինեն այդ խնդրի հետ: Մեզանից ո՞վ կարող էր գնալ եւ էֆենդուն բան հասկացնէր, որ նա էլ ինձ վերայ այդպիսի մեղադրանքներ բարդեր ու սպառնար Էրզրում ուղարկել կամ բանտարկել տալ: Ինչո՞ւ, ո՞ր մեղքիս համար, մի՞նչեւ այս բանը չը պարզեմ, ես չեմ կարող հանգստանալ եւ դորա համար էլ քեզ եմ խնդրում, որ անձամբ տեսնես ու օգնես ինձ այդ խնդիրը պարզելու:

Ես թողի, դուրս եկայ մօտերից՝ յուսալով, որ տէր Կորիւնը մի բան կանէ: Հետեւեալ օրը, կանգնած Քեօսայեանց Մեխակի խանութը, խօսում էինք այդ միտքի վերայ, ու ես պնդում էի, որ ինքը եւ քաղաքացիներից մի քանիսն էլ, որոնք կան այստեղ, պարտաւոր են պարզել այդ խնդիրը, որովհետեւ եկեղեցուց կատարածս գողութիւնը իրանց էլ է վերաբերում, մանաւանդ այդ եկեղեցույ երեցփոխ Հաճիպապ Սինասեանն էլ այստեղ է, ու նորա պարտքն է հոգալ այդ մասին: Այս միջոցին խանութից դուրս կանչեց Գալուստ աղէն եւ առանձին յանդիմանական ձեւով ասաց.

–Տէ՛ր Խորէն, ես լսել եմ, որ դու կասկած ես յայտնել, որ իբր թէ ես կամ տէր Կորիւնը խօսած կը լինենք էֆենդու հետ, ու այդ գրպարտութիւնը հաղորդել ես նորան: Դու եւս քահանայ ես, ինչպէ՞ս կարող ես առանց մի պատճառի մեզ վերայ այդպիսի կասկած յայտնել:

–Նախ ես դեռ ոչ որի վերայ կասկած չեմ յայտնել, թէ եւ կարող եմ եւ պատճառներ ու փաստեր էլ ունենեմ,– ասացի,– բայց այստեղ՝ փողոցում, ինչ տեղն է այդ մասին խօսելը:

–Լա՛ւ, գնանք Սկրտիչ աղոնց տուն,– ասաց ու առաջ ընկաւ:

–Գնա՛նք,– ասացի ու հետեւեցի նորան:

Այնտեղ էր եւ տէր Կորիւն հայրը. «Ա՛խ, ուրեմն նախապէս խորհրդակցել ու որոշել եմ ինձ այստեղ բերել»,– մտածեցի ու նստայ: Սովորական բարեւից յետոյ եղբայր Սկրտիչը խօսք բացեց եւ Գալուստի փողոցում ասածը հարցրեց ինձ, եւ էլ նոյնը պատասխանեցի եւ աւելացրի.

–Շատ լաւ, նոքա որտեղի՞ց գիտեն, թէ իրենց վերայ եմ կասկածում, մանաւանդ տէր Կորիւնը, եւ մի՞թէ իրաւունք չպիտի ունենամ եւ չպիտի աշխատեմ պարզել այս խնդիրը եւ կը պարզեմ, եթէ տէր Կորիւնը ցանկանայ ինձ օգնել:

Չգիտեմ ինչո՞ւ, տէր Կորիւնը, ծալապատիկ նստած, սաստիկ կարմրել ու ոչինչ չէր խօսում: Այդ միջոցին Գալուստ աղէն մեջ ընկաւ ու մի բան էլ բաց թողեց.

–Էֆենդին կըսէ, թէ ժամի խալիչան Նարոյենց Աղէքսանի միջոցով է ծախել կամ Աղէքսանդրապօլ ուղարկել:

–Ա՛, դէ լա՛ւ, սպասեցէ՛ք, հիմա ինձ համար բաւական պարզ է խնդիրը,– ասացի ու շարունակեցի,– Գալուստ աղա, ինչո՞ւ առաջ չէիր ասում այդ բանը, ուրէմն շատ-շատ պարզ է, որ Էֆէնդու հետ այդպիսի խօսակցութիւններ ունեցել էք:

Տէ՛ր Կորին հայր, դու շատ լաւ գիտես, որ առաջին անգամ Կարսից փախչելիս ոչինչ չէի կարողացել ազատել իմ ունեցածներից: Մինչեւ այսօր էլ մեզ հետ ապրող Սոֆյա Այվազեանի շորերով ենք կառուարում: Այս էլ շատ լաւ գիտես, որ մեր եկեղեցին մի փոքրիկ խալիչա ունէր՝ վարդապետի ոտների տակ գցած, մի կարպետ էլ՝ սեղանի առաջը փռած: Երեցփոխ Հաճիպապը կենդանի է, այստեղ է եւ ամէն բան կարող է վկայել ու պարզել, մի խալիչա էլ կար՝ սեղանի վերայ փռած, որ Սոֆյայի սեփականութիւն էր, իբր թէ ծախել էր եկեղեցուն 5000 ռուբլով, որի փողերը դեռ չէր վճարել երեցփոխը: Սոֆյան էլ թուրքը գալուց մի շաբաթ առաջ գնացել էր, իր խալիչան բերել եւ յետոյ Նարոյենց Աղէքսանի կնոջ միջոցաւ ծախել է ամերիկացոց, որոց մօտ ծառայում էր այդ կինը եւ արհեստանոցի կառուարչուհի էր: Այս բանը կատարել է թուրքերը գալուց յետոյ, եւ խալիչան էլ տարել է եղբօրս աղջկայ՝ Երանեակենց տանից, որտեղ մենք էլ ապաստանուել էինք: Ուրէմն այդ խալիչի պատմութիւնը եղբօրս աղջկայ տանեցիք գիտէին, եւ էլ քեզ էի պատմել, գուցէ Գալուստ աղէն էլ իմացել է: Մի՞թէ այս ամէնի վերայ էլ կասկածելու իրաւունք չպիտի ունենամ, որ կարող էին Էֆէնդուն էլ յայտնել, դեռ մի բան էլ աւելի, որով եւ պատճառ դառնալ ինձ վերայ այդպիսի մեղադրանքներ բարդելու: Ո՞վ կարող էր այս ամէնը յայտնել Էֆէնդուն, եթէ ոչ նա, ով կարող էր տեսնել ու խօսել նորա հետ: Ես չգիտեմ՝ արդե՞օ՞ք եղբօրս աղջիկը կամ նորա ամուսինը՝ Կարապետ Շարաֆեանը, ունեցել են կամ ունեն յարաբերութիւն ձեր Էֆէնդու հետ, այդ էլ դու կարող ես պարզել, Գալուստ աղա, որովհետեւ քո տանն է մնում, եւ նորա մօտ եկողներին, անշուշտ, դու եւ ձերոնք կարող էք տեսնել եւ իմանալ: Ինձ համար միեւնոյն է, թէ ով է մատնել ինձ թուրք Էֆէնդու ձեռքը, թէկուզ հարազատներս լինեն, շատ կեղտոտ գործ են կատարել: Եթէ դո՛ւք, որ մօտ էք այդ մարդուն եւ չէք ուզում պարզել այդ խնդիրը, եւ ինքս կը դիմեմ նորան եւ բացատրութիւն կը տամ:

Գալուստ աղէն խոստացաւ այս մասին խօսել Էֆէնդու հետ եւ ինձ պատասխան բերել, ու բաժանելով:

Մայիս 2/15-ին՝ կիրակի առաւուտ, Գալուստն ինձ յայտնեց, որ Էֆէնդին համաձայն է ինձ ընդունել եւ հետս խօսել: Նորա հետ գնացիմք իրենց տուն: Էֆէնդին տունը չէր, դուրս գալիս պատուիրել էր, որ ժամը 1-ին տանը կը լինի: Նշանակած ժամանակին գնացի: Ամէնայն քաղաքաւարութեամբ ընդունեց: Ես էլ խոնարհութեամբ եւ հանգիստ սրտով նախ շնորհակալութիւն յայտնեցի, որ բարե-

հաճել է ինձ Գալուստ աղայի միջոցաւ զգուշացնել, որ իբր թէ ես քսան ընտանիքի համար խնդիր եմ տւել ու հետս Աղէքսանդրապօլ պիտի տանեմ: Բացատրեցի նորան, որ ես ցանկացայ անձամբ գալ, յայտնել ձեզ, որ ես ինձ համար անգամ դեռ խնդիր չեմ տւել, թող թէ քսան ընտանիքի համար էլ հոգամ: Իմ ի՞նչ գործս է պատճառ լինել ուրիշներին, երբ իմ գլուխս անգամ չեմ կարող պահել: Եւ, երկրորդ, ցաւ յայտնեցի, որ իմ մասին յարգելի էֆէնդու մօտ կասկած է յայտնած, որ իբր թէ իմ եկեղեցու խաչերից ծախել եմ, որի համար էլ ամէնայն իրաւամբ սպառնացել էք ինձ դատի մատնել, դորա համար էլ ցանկացայ անձամբ յայտնել, որ մեր եկեղեցին ինչ որ ունեցել է ցուցակով ինձ յանձնած, երեցփոխը կենդանի է, այստեղ է, ամէն բան գիտէ ու կը վկայէ, ուստի կը խնդրէի, որ ստուգւէր եւ զուր տեղը թէ՛ կառուարութիւնը թիւրիմացութեան մէջ չընկնէր եւ թէ՛ ինձ նման մի ծերունի քահանայ, որ բազմաթիւ գերդաստանի եւ հինգ որբերի խնամող է, իզուր տեղը չզրպարտուի ու չպատժի:

Էֆէնդին շատ մաքուր վէճտիկական հայերէնով սկսեց խօսել ու ասաց.

–Աս քաղաքին մէջ ի՞նչ որ կատարուին, ամէն բանին ալ տեղեակ եմ, ամէն բան ալ գիտեմ: Ձեր Գարեգին եպիսկոպոսին ալ կը ճանաչեմ, անիկա օր մը փախչել կուգէր, ես բռնեցի ու արգելեցի. «Ո՞ր կը փախչես ծպտեալ, հօտդ ո՞ւմ խնամքին կը թողուս», ասացի եւ բերի քաղաք: Երեք օր բանտել տի ու բողի: Անիկա լաւ մարդ մը չէ՛, բաներ մը կը գրէ, ասորէն-անորէն կ'իմանայ, գրի կ'առնի, որ վաղը հրատարակէ ու պարծենայ: Ես կարող եմ անոր գրածներուն պատասխան տալ: Դուն ալ լաւ մարդ մը չես եղած, ադ մեղադրանքները, որ քեզ ասուր են, ճիշտ են, քու ժողովուրդդ ամէնքն ալ կ'իսօսին:

–Էֆէնդի՛, ժողովուրդի խօսք ասածդ շատ առած-գական է, աստոր համար յատուկէն կաղաչեմ, որ քննութիւն կատարէք եւ արդարութիւնը երեսան հանէք: Ժողովուրդի մէկն էլ Գալուստ աղան է, քահանայի մէկն ալ տէր Կորին հայրը, որոց լաւ կը ճանչնաք, մի երկու մարդ էլ ես կորոշեմ ժողովուրդի միջից, կը խնդրեմ դուք ալ ներկայ լինէք, եթէ հաճելի չէ, ձեր կողմէն մէկ ուրիշին նշանակէք, թող քննութիւն կատարուի: Եթէ ստուգեցաւ, թէ ես այդպիսի յանցանք մը գործած եմ, թող կախաղան բարձրացնեն:

–Ատիկայ իմ գործս չէ, ժողովուրդին գործն է:

–Շատ լաւ, Էֆէնդի՛, ներողութիւն կը խնդրեմ շատ խօսելուս համար, թոյլ տւէք ես իմ կողմէն յանձնեմ այդ ժողովուրդին, թող քննեն ու եղելութիւնը ձեզ յայտնեն:

–Ատիկա քու գործդ է, ես չեմ կարող խառնուել ադ տեսակ գործերու մէջ,– ասաց ու կամեցաւ գնալ:

Այդ միջոցին Գալուստ աղէն մէջ մտաւ եւ ասաց.

–Էֆէնդի՛, տէր Խորէնի եկեղեցույ միտոնի արծաթե աղանին գտնուեմ է մոլլա Քէմալի մօտ:

Ես մտքիս մեջ ուրախացայ այդ միջամտութեան համար, բայց արտաքուստ բարկութիւն ցոյց տուի, իսկ Էֆենդիին սաստիկ բարկացած ասաց.

–Ադ ո՞ր մոլլան է, ադ որ շունն է եղեր, ադ աւագակը, ես հիմա կերթամ, անոր հախից կը գամ:

Կամենում էր դուրս գալ, ես անմիջապէս ճանապարհը կտրեցի.

–Կաղաչեմ, Էֆենդի՛,– ասացի,– մի երկու թույլ ալ լսել ծերունուս, տեսնում եմ, որ շատ բարի ու արդարասէր մարդ էք:

Գալուստ աղայի ըսածը, որքան ճիշտ է, չը գիտեմ, ես ալ լսած եմ եւ քանի որ չեմ կրնայ հաստատել, չեմ էլ խօսի ադ մասին, միայն կաղաչեմ այսքան բանը աչքի առաջ ունենաք, ադ միտօնի արծաթէ աղանիւն, արծաթէ խաչեր, մասնատուփ, սկիւի, արծաթապատ անտարաններ այդ ամենը, որ մարդ կարող է գրպանն ու ծոցը տեղադրել, այդ արժէքատու բաները թողի ու փթանոց խալիչա՞ն տարի ու ծախեցի: Եթէ Գալուստ աղի ասած աղանիւն այդտեղէն ելաւ, լա՛ւ իմացէք, որ միւս բաներն էլ, իմ տանս արծաթեղէնն էլ, որ միասին էին դրած, այնտեղէն պիտի ելնեն:

Էֆենդիին այլեւս չուզեց լսել, թողեց ու գնաց:

Ժողովրդից շատերը հետաքրքրուում էին, թէ ինչպէ՞ս վերջացաւ այս միջադէպը, շարունակ ինձ մօտենում, հարցնում էին, ես էլ պարզապէս պատմում էի դիմողներին եւ ասում.

–Եղբայրներ, միայն ինձ չէր վերաբերում այս միջադէպը, այլ ձեզ էլ, Կարսի ժողովրդիդ էլ էր վերաբերում: Եթէ պատույզ գցացում լինէր, դուք ինքներդ պիտի պարզէիք ու յանցաւորին էլ պատժէիք, բայց ձեզ չեմ մեղադրում, որովհետեւ ձեր տեսած ցաւերը չափազանց շատ եղան: Գուք միջոց եւ հնար անգամ չունէիք այս խնդրի մասին մտածելու անգամ: Միայն խնդրում եմ, որ ինձ էլ չմեղադրէք իմ անելիքների մասին: Իմ հաշիւս փակւած է եկեղեցու հետն էլ, ժողովրդիս հետն էլ: Այսօրւանից ամէն միջոց գործ պիտի դնեմ եւ Կարսից հեռանամ:

Գնացի տուն: Ծանօթ մոլլա Հաֆիզին խնդրի էի գրել, բայց չէի ներկայացրել: Այդ խնդիրը տի Սոֆյային ու պատուիրեցի, որ տանի տայ միթասարիֆին անցաթուղթ առնելու համար: Խնդիրն ընդունել էին եւ պատուիրել, որ ես անձամբ գնամ ու անցագիրը ստանամ:

Մի քանի անգամ գնացի-եկայ, շարունակ հարց ու փորձ էին անում, թէ ինչո՞ւ եմ գնում: Ամէն կերպ աշխատում էին համոզել, որ չգնամ, մինչեւ անգամ փոխամէյաստերի օգնականը թղթերս մօտը պահեց եւ սրտով աշխատում էր ինձ համոզել, որ չգնամ.

–Մենք քեզ շատ լաւ կը պահենք, այսուհետեւ վատ բան չի պատահի, կը գնաս, աղջիկներիդ ու որբերիդ հետն էլ սովից կը մեռնես կամ մի փորձանքի կը կրաս:

Չը գիտեմ՝ որքան անկեղծ էին այդ խօսքերը, բայց չափազանց գոհ մնացի ցոյց տրւած համա-

կրանքից ու յարգանքից, մանաւանդ միթասարիֆի մարդասէր ու քաղաքաւարի վերաբերմունքից, որի տակ ճնշւած՝ վերջին խօսք ասացի նորան, որ գնում եմ աղջիկներին ու թռռներին սովից ազատելու եւ նորից Կարս բերելու, այս է գլխատր միտքս ու ցանկութիւնս:

–Է՛, փափա՛գ Էֆենդի, պէտք է գիտենաս, որ այստեղից թոյլ կտանք, բայց այնտեղից գալու առայժմ իրաւունք չկայ: Կարող է շուտով այդ ճանապարհն էլ բացի, գնացէք, Աստուած հետներդ լինի: Միայն աշխատեցէ՛ք վերադառնալ, թոյլտուքիւն եղաւ, այստեղ ձեզ համար շատ լաւ կը լինի:

Սորանից յետոյ հրամայեց թղթերս ինձ յանձնել:

Մայիս 5/18-ին ստացայ թուրքական անցագիրս, բայց պիտի սպասէի բօլշեւիկական անցագիր ես ստանալու, առանց որին ասում էին, որ չպիտի կարողանանք Աղէքսանդրապօլ մտնել: Իսկ բօլշեւիկների նեկայացուցիչը Սարիղամիշ էր գնացել իւր կազմով եւ թուղթ տալը դադարեցրել: Վերջապէս դորանք էլ եկան եւ վերսկսեցին անցագիր բաժանել: Ամսոյս 16/29-ին դրանց անցագիրն էլ ստացայ, միամտեցի եւ սպասում էի գնացքի դուրս գալուն:

Երեկ՝ մայիս 15/28 շաբաթ, աս իմացուց, որ գիշերն անյայտ գողեր մտել են եկեղեցին ու թալանել: Գնացի տեսայ, արեւմտեան լուսամտից էին մտել եւ այնտեղից էլ դուրս եկել: Տէր Կորիւնը յայտնել էր կառաւարութեանը, ինչպէս ասում էր, շատ ցաւ էին յայտնել եւ խոստացել, որ անպատճառ կը գտնեն գողերին եւ կը պատժեն: Ո՛ր էր թէ այդպէս լինէր: Տարած էին նաեւ իմ տւած մեր եկեղեցու կարպետը, ի՞նչ լաւ եղաւ, որ ինձ պահ տրւած թագն ու վակասը եւ սկիւիը տարել էի տուն՝ ուշ չդարձնելով ընկերներին, երեսփոխի եւ ժողովրդից մի քանիսների անտեղի ասէկոսներին եւ տրտունջներին, եթէ ոչ, դրանք էլ պիտի կորչէին միւսների մման, ու այն ժամանակ միայն ես պիտի մնայի պատասխանատու Չորդանի տէր Գարեգինի մօտ, որի սեփականութիւնն էր:

Շատ ցաւ եղաւ այդ հանգամանքը, բայց ի՞նչ կարող էինք անել: Ժամերգութիւնը շարունակուեց, բայց պատարագ չեղաւ, որովհետեւ վարագոյրն էլ պոկել, տարել էին: Մեր եկեղեցուց ինձ մօտ մնացած մի քանի բաներ՝ գրքեր ու զարդեր, յանձնեցի Մկրտիչ Կոստանեանին, իսկ թագի ու վակասի, սկիւիի համար ասացի.

–Թէեւ դրանք ինձ մօտ պահ է տուել չորդանցի տէր Գարեգինը, որի սեփականութիւնն է, բայց ես չեմ ուզում հետս տանել՝ ի նկատի առնելով, որ եկեղեցին չունի, եւ առանց դորանց էլ պատարագ չի կարելի մատուցանել: Ես կը թողնեմ ձեզ մօտ «ամանաթ», միայն խնդրում եմ, որ դու եւ տէր Կորիւնը մի գրութիւն տաք, որ ձեզ մօտ է թողնւած, եթէ բան էլ պատահեց, տէր Գարեգինը պահանջեց, գրութիւն ցոյց կտամ եւ կապահովցնեմ նորան:

Եւ, ո՛վ զարմանք, պ. երեցփոխը մերժեց ինձ այդ գրութիւնը տալ՝ առարկելով, թէ ինքն այլեւս երեց-

փոխ չէ: Իսկ տեղ Կորիւնը պատահեց, եւ թունդ նեղացած ասում էր.

– Ինչ իրաւունք ունեն ստորագրութիւն ուզելու, եկեղեցու իր է, պարտաւոր ես թողնել եկեղեցուն, ո՛չ ստորագրութիւն կտանք եւ ո՛չ էլ պատասխանատւութիւն յանձնէր կառնենք: Դու այդ իրերը չես կարող տանել ու կը թողնես այստեղ, ուրիշ ոչինչ:

Օհո՛, եւ ի՞նչ խօսակցութեան ձեւ է, եւ ինչ սպառնալիք է, այլեւս չկարողացայ համբերել.

– Տէ՛ր Կորիւն, – ասացի, – եղ ի՞նչ սպառնալիք է կարողում եւ ո՞ւմ դէմ: Բաւական է, ինչ որ գլխիս օձիւններ էք խաղացել, մի՛ կարծէք, թէ չեմ հասկանում այդ ամէն խուլիզանական վարմունքները: Ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ անցուդարձ են լինում գնալուս շուրջը, եւ շատ լաւ գիտեմ, թէ ինչեր էլ կարող են պատահել: Միեւնոյն է ինձ համար, ես ամէն բանի էլ պատրաստ եմ, եթէ չունեցածս յանցանքների համար բանտ ու արքայ էր պատրաստում, շատ հեշտութեամբ կարող էր ինձ մօտ պահ տուած իրերի համար լինել, որ շատ լաւ գիտէք, որ իմ սեպհակաւորութիւնը չէ եւ ձեր եկեղեցիներին էլ չէ: Ջրպարտել ինձ եւ ինչ փորձանք ասես գլխիս բերել, ի՞նչ է իմ ուզածը ձեզանից՝ մի պարզ ապահովագրութիւն, որ ցոյց տամ այդ իրերի տիրոջը, ուրիշ ոչինչ: Ինչպէ՞ս է լինում, որ իմ եկեղեցուս իրերը յանձնում եմ երեցփոխ պ. Մկրտչին, ստանում է, իսկ թագ ու վակասի եւ սկիհի համար ստորագրութիւն չտալու պատճառով «Երեցփոխ չեմ» ասում է: Դուն էլ սպառնալիքներ ես կարողում գլխիս: Ապահովագրութիւն կտաք, իրերը կստանաք, եթէ ոչ, չէք ստանալ:

Գրիգոր Ասոյեանը, որի մօտ այս խօսակցութիւն պատահեց, շատ աշխատեց, որ առանց ստորագրութեան թողնեմ այդ իրերը, բայց ես չհամոզուցի:

– Գրիգոր, եթէ ասածներին մէջ սխալ կը գտնես, թքիր երեսիս, իրաւունք տալիս եմ, եթէ ոչ, հապա այս ի՞նչ օյիմբագութիւններ են, որ գլխիս կատարում են: Դուք՝ այստեղ գտնողներդ, լսում էք եւ քաջութիւն չունեք ճշմարտութիւն պաշտպանելու եւ դեռ ինձ էք մեղադրում, որ բարկացել եմ ու վիրաւորական խօսքեր եմ խօսում: Ես էլ ձեզ նման մարդ եմ, իմ համբերութիւնս էլ կարող է սահման ունենալ: Չարմանալի ու վիրաւորական չէ՞ արդեօք, որ ձեր վաղեմի վարժապետին ու ծերացած քահանային անմեղ տեղը զրպարտում էք, թուրքի ձեռքը յանձնում եւ մահուան վտանգի ենթարկում, այն էլ այսպիսի սոսկալի ժամանակում՝ անպատմելի հարւածներ, մարդկանց կորուստներ ու սոսկալի բռնաբարութիւններ տեսնելուց եւ կրելուց յետոյ: Դուք այս ամէնը լսում, հասկանում ու լռում էք: Ինձ համար միեւնոյնն է, իմ հաշիւս Կարսի հետ վերջացած է, եթէ վատը ես եմ, կգնամ, դուք էլ կազատվիք ինձանից:

Մի քանի մարդիկ նորից պնդում էին, որ թագն ու վակասը եւ սկիհը տամ առանց թուրք առնելու: Ես պնդում էի իմ ասածի վերայ:

Տէր Կորիւնը վիրաւորուած թողեց գնաց: Ես էլ էի

ցանկանում հեռանալ եւ ազատիլ այդ անախորժ դրութիւնից, բայց Գրիգորը եւ ուրիշ մի երկուսը շատ էին խնդրում.

– Գրիգոր, – ասացի, – վերջապէս դու տեղ Գարեգինի ամէնամօտ մարդն ես եւ լաւ ընկերը: Ես այդ շատ լաւ գիտեմ, նա քու ստորագրութեանդ աւելի շատ կհաստատայ, քան տեղ Կորիւնի, որովհետեւ նորայ էլ ընկերն է եղել: Դու՛ տուր այդ ապահովագիրը, եւ ես քեզ կը յանձնեմ այդ իրերը:

Գրիգորը մի քիչ մտածեց, համաձայնեց եւ ստորագրութիւնը տուց, եւ էլ Չալֆիկեան Յակովբին (նոյնպէս նախկին աշակերտներից) հետս տարա տուն, նորան էլ ստորագրել տւի ու թագն ու վակասը եւ սկիհը յանձնեցի, որ տանի, Գրիգորին յանձնէ: Այսպէս վերջացրի այդ ցաւոտ գործը՝ գիտենալով, որ անշուշտ գրուխս փորձանք պիտի բերէր Կարսից դուրս գալու ժամանակ, եթէ սովորութեանս համաձայն յամառութիւն անէի, չտայի ու հետս էլ տանել փորձէի: Էֆէնդին էլ կար մեջտեղը, որ Գարեգին եպիսկոպոսին էր վագօնից իջեցրել:

Մի երկու օր չէի ուզում տանից դուրս գալ. թաղուած էի մտքերիս մէջ ու որպէս թէ պատրաստութիւն էի տեսնում գնալու. շորերիս աւելորդները դէն էի գցում, պէտքական համարածները կապում-կապկապում, բայց ո՞րն էր պէտքական կամ որը անպէտք, այդ էլ չէի կարող որոշել: Իսկապէս չէի իմանում՝ ինչ էի անում:

Մի քանի օր առաջ թաղային կօմանդատութիւնն էլ պիտի վերջանար եւ, ինչպէս լսել էինք, մեր պաշտպան համարուած պաշտօնեաներն էլ գնալու էին իրեանց տեղերը:

Այսօր երկուշաբթի՝ 17/30 մայիսի, դիմեցի Խալիտ Էֆէնդուն եւ նորից խնդրեցի Շուշիկի համար մի բան անել.

– Ես վճել եմ անպատճառ գնալ, թրքերս էլ հանել եմ, ի՞նչ կը լինի այդ կնոջ դրութիւնը, եթէ դուք չօգնէք եւ թուրք չհանէք հետս տանելու:

Շատ սառն կերպով պատասխանեց Խալիտ Էֆէնդին եւ անորոշ պատասխան տուց: Ես էլ թողի հեռացայ եւ ճաշից յետոյ դուրս գնացի, որ գնացքի մասին որեւէ լուր առնեմ, թէ եւ ակամայ, բայց նորից մտայ Գրիգորի մօտ, ամէն լուր այնտեղից կարելի էր իմանալ: Այնտեղ էր եւ տեղ Կորիւնը: Ինչպէս երեսում է, տաք-տաք խօսում էին իմ գնալու հարցիս մասին, եւ մի երկուսը փորձեցին ինձանից բան իմանալ.

– Թողէ՛ք, Աստուած սիրէք, այդ հարցի մասին անելորդ է խօսելը, քանի որ վերջացած խնդիր է, – ասացի եւ անլացրի, – այսուհետեւ ինձ համար անելորդ ու հարամ է Կարս մնալը, եւ ոչ մի դէպքում չպիտի հաշտուեմ մնալու հետ:

Մէջ մտաւ դարձեալ Գալուստ աղէն եւ կարծես թէ ինձ վիրաւորելու համար ասաց.

– Դու զուր տեղն ես մեզ մեղադրում ու մեզանից նեղանում, քեզ զրպարտող ու մատնողը քու հարա-

զատներդ են՝ երբօրդ աղջիկը, որ մեր տուն անգամ եկած է էֆենդուն տեսնելու:

Արիւնը գլուխս խփեց նորից, բայց ամէն կերպ աշխատեցի ինձ զսպել եւ բոլորովին սառն, բայց մի քիչ դողալով ասացի.

–Այդ ինչո՞ւ ես նոր ասում ինձ, Գալո՛ւստ աղա, ես բոլորովին չեմ էլ զարմանում, որ նոքա էլ կարող էին այդ վատութիւնը անել, որովհետեւ ինձ հետ ընկած են իրենց տանից փախած հարսի համար, որ թաղի կօմանդատ Խալիտ էֆենդին մեր տուն էր պահ տել մի քանի օրայ պայմանով, բայց մի ամսից անել է, որ թողը չեն հանում եւ չեն թոյլ տալիս, որ ինձ հետ էլ տանեն: Հէնց սորանից մի քիչ առաջ եմ խօսակցութիւն ունեցել Խալիտ էֆենդու հետ, եւ այդ էլ՝ դարձեալ շնորհիւ բարեհոգի երբօր աղջկան, ու այդ բանը տէր Կորիւնին էլ շատ լաւ յայտնի է: Եթէ արդարութիւնը խօսելու լինի, ես նորան կանչեցի եւ խնդրեցի, որ գնայ մերոնց տուն եւ համոզէ, որ կամ նորից ընդունեն իրենց հարսին եւ կամ շորերը յանձնեն եւ ուղարկեն Տփլիս՝ հերանց տուն: Ինչո՞ւ չկատարեցիր այդ խնդիրս:

–Ես չուզեցի մսի ու եղունգի արանք մտնել,– կարմրելով պատասխանեց տէր Կորիւնը:

–Ո՛չ, տո՛ւտ ես խօսում,– անէլի գրգռած խօսեցի,– անէլի շուտ ասա՛, որ չուզեցիր երբօր աղջկայ ու փեսայ խաթրը կոտրել կամ չկարողացար խօսք հասկացնել նորանց: Ես ինձ համար չէի խնդրել, որ պատճառ ես բռնում, թէ չուզեցիր միս ու եղունգի արանք մտնել, այլ մի թշուառ ջահել կնոջ, որ հազիւ 19-20 տարեկան, չուզեցիր օգնել ու դժոխային դուրսից ազատել, որով որոշ չափով ինձ էլ օգնած լինէիր: Եթէ այդպիսի ընկերական պարտականութիւն կատարող լինէիր, Չատկին չպիտի գնայիր նորանց տունը օրհնելու, չէ՞ որ իմ ծովսա էին, այլ միայն պիտի աշխատէիր այդ խեղճ կնոջ գործը գլուխ բերել: Է՛հ, չարժէ այլեւս խօսել, անցած-գնացած բաներ են դոքա, ինչքան էլ որ խօսելու լինեմ, ոչ մի նշանակութիւն չունի ինձ համար, որ մատնեցին, եւ օրը գցեցին, կուզէ հարազատս լինի, կուզէ ընկերս, կուզէ բարեկամս, թող ո՛վ որ արել է, նա էլ ամաչէ, եթէ միայն ամօթ ունի:

Միրտս շատ լցեց, թողի հեռացայ, որ արտասուքս ցոյց չտամ, որ պատրաստ էր աչքերիցս թափելու, այդ էլ միայն Մողմունեանի մօտ թոյլ տո՛ւի՝ համառօտ կերպով պատմելով ունեցածս խօսակցութիւնը:

Սկրտիչը ինձ բաւական հանգստացրեց, միսիթարեց ու վերջն էլ յայտնեց, որ վաղը դէպի Ադէք-սանդրասայօլ գնացք կայ, եւ շատերն էլ գնալու են: Ես այդ լուրի վերայ անէլի ուրախացած շտապեցի տուն: Յայտնեցի բարի լուրը եւ պատուիրեցի վերջնականապէս պատրաստել, որ առաւօտը գնալու ենք:

Գիշերն ամբողջ չէի կարողացել քնել, իբր թէ պատրաստութեան հետ էի, չը գիտեմ՝ ի՞նչ էր իմացել նաեւ Թովլանս (իմ տան պարտեզի, եկեղեցու

բակի հաւատարիմ պահապան շունը), որին թուրքերը տարել էին, բայց փախել-եկել ու ինձ էլ գտել էր, ամբողջ գիշեր չէր ուզում խառնած սենեակից նախասենեակը գնալ, շարունակ «ա՛խ ու վա՛խ էր անում» կարծես մեծ մարդու նման: Միրտս շատ նեղացաւ, մի երկու հատ խփեցի ու նախասենեակն արի: Քիչ հետոյ զղջացի, ճրագն առայ ու դուրս եկայ, նստայ սանդուղքի վերայ եւ ձայն տո՛ւի շանը, որ մի անկիւն կուչ էր ելել: Նորից ոգոց հանելով եկաւ մօտս, դունչը դրեց ծնկներինս, տեսայ, որ լաց է լինում, եւ յորդ արցունք է թափում աչքերից: Միրտս փոճկաց, ես էլ լացի, ձեռքերս դրի երեսին. «Ի՞նչ ունես, Թովլան՝ ջան, դու էլ ես գգում, որ գլխներինս գալիք կայ, համա ինչո՞ւ մարդիկ չեն խղճում, չեն ցաւում: Է՛հ, գնա՛ Թովլան՝ ջան, գնա՛, հանգստացիր»:

Խեղճ կենդանին գնաց ու անկիւնը՝ խոտի վերայ կուչ եկաւ՝ բայց աչքերը շարունակ երեսս ձգելով: Ներս մտայ, գործս շարունակեցի: Լույսը սկսեց բացել, դուրս եկայ մի քիչ մաքուր օդ ծծելու: Թովլանը հետս եկաւ, մի քիչ ձեռքերս լիզեց ու գնաց եկեղեցու կողմը: Մի քիչ ման եկայ, լացեցի, քնածներին ձայն տո՛ւի, որ պատրաստուն վերջացնեն, որ չը լինի թէ յետ ընկնենք գնացքից: Դրացիներից մէկն խոստացել էր, որ ինձ համար էլ ֆուր-գօն բերէր, իրերը բարձէինք ու գնայինք կայարան, մեկ էլ այն տեսնեմ, որ մեր բակում կեցող միս թաղի կօմանդատ Օսման էֆենդին, որի հետ իբր թէ շատ մօտ բարեկամներ էինք, ներս մտաւ շապիկով ու վարտիկով, վարդոց ու չխուրն էլ մինչեւ գետին քարշ տալով, երեսն էլ անլայ ու անպատկառ կերպով կանանց մօտ կանգնեց:

–Հ՞ը, ի՞նչ է, փափա՛գ էֆենդի, խօսքդ արի՞ր այսօր, բայց լաւ իմացիր, որ Շուշիկին չես կարող տանել, նորա համար թողը չունես, ճանապարհին փորձանքի կը հանդիպէս, գուցէ եւ չկարողանաս գնալ: Նորան ինձ մօտ թող, ես յետոյ կուղարկեմ:

Կարծես գլխս ջուր ամեցին. դառն իրականութիւնը սեւ ուրականի նման դէմս ծառացաւ, թէ եւ դէմս կանգնողը սպիտակ շապիկ-վարտիքով ու չխուրն էլ մինչեւ գետին քարշ արած դէմս կանգնած էր: Բարկութիւնից ու կանանց ամօթից արիւնս գլուխս խփեց եւ չգիտէի՝ ի՞նչ պատասխանեմ այդ հրէշին, մանաւանդ երբ Շուշիկը լսեց թուրքի խօսքերը, սաստիկ բղաւեց ու լաց լինելով դուրս վազեց:

–Շա՛տ լաւ,– վերջապէս բացեց բերանս,– Օսման էֆենդի,– ո՞վ է մեղաւոր այս գործի մէջ, ո՞ւմ վիզն է այդ աղջկայ մեղքը, մի ամսից անէլի է, որ աղաչում, պաղատում եմ թէ՛ Խալիտ էֆենդուն եւ թէ՛ քեզ, երկուսդ էլ խաբիւրելով բերիք, եւ օրը հասցրիք: Ես հիմայ ի՞նչ անեմ, դուք ասացէք:

–Ես չեմ գիտէ, ի՞նչ ուզում ես արայ, միայն առանց անցաթղթի Շուշիկին չես կարող տանել,– ասաց ու քաշեց գնաց:

Մնացինք բոլորս էլ սառած-կանգնած: Ներս եկաւ Շուշիկը լացով, գոռալով.

– Ես էլ կը գամ հետդ, հայրիկ ջան, ինձ մի՛ թողնիր էս շների մէջ: Ես ինձ կապանեմ, կը փախչեմ:

Ուտներս ընկած, աղաչում ու պաղատում էր: «Տէր Աստուած, ի՞նչ անեմ, ո՞ր գնամ, ո՞ր կորչեմ»,– խելագարի մման դուրս ու ներս էի անում: Սոֆյան բաւական հանգստացրեց Շուշիկին, ես էլ ասացի, որ կը գնամ, թուրթը կը հանեմ ու հետս կը տանեմ, հանգիստ եղիր: Այս միջոցին ներս ընկաւ մեր տան ծառայող աղջիկ Սաթնիկը, որի մօր ու քոյրերի համար էլ թուրթ էինք հանել ու հետներս տանելու էինք:

–Հայրիկ, Թովլանը գլուխը դրել է ժամի դռան աստիճանի վերայ ու աստկել,– ասաց լաց լինելով:

Ես չռած աչքերով երեսն էի նայում: Սկզբում մի ծակոց զգացի, մի քիչ կանգ առայ.

–Լա՛ւ,– ասացի,– ինչ անենք էս նեղ պահին, թէ կարող էք մի քիչ դէնը՝ ամուսնի մէջ, թաղեցէք:

Սոֆյային էլ պատուիրեցի, որ էլ ուրիշ բանի չնայե, գնա ֆուրգօն խոստացող դրացու մօտ, եթէ ֆուրգօն կամ սայլ չպիտի բերէ մեզ համար, աշխատի ծանօթ թուրքերից գոնէ մի սայլ գտնել եւ շորերը բառնալ մինչեւ գալս, ու շտապեցի փոխի դայրասի ծանօթ օգնականի մօտ: Իմ բախտիցս արդէն եկել էր: Պատմեցի հանգամանքը, որքան կարողացայ, կանչեց մի ասկերի եւ պատուիրեց Խալիտ էֆէնդուն կանչել: Եկաւ, յայտնեց, որ Խալիտ էֆէնդին չկայ:

Ես ասացի, որ հէնց այդ ասկերն էր աղջիկը մեր տուն բերողը, նա ամէն բան էլ գիտէ, դորանից կարող էք իմանալ: Սկսեց դորան հարցութորձ անել եւ, դա էլ շատ նպաստաւոր կերպով խօսեց եւ ինչպէս որ եղել էր, այնպէս էլ պատմեց: Օգնականը գլուխը տարուբերեց, ստացածս անցագիրն ուզեց, կարդաց եւ տեղը մատիտով նշանակելուց յետոյ ինձ տեց.

–Տա՛ր գրագրին, աղջկայ անունը, տարիքը ասա, թող այդտեղ գրէ:

Տարա յանձնեցի, բայց ինչպէս երեսում է, չէր ուզում գրել, բայց ասկերն օգնութեան եկաւ նորից եւ ասաց, որ շուտ արա, գրէ, էֆէնդին պահանջում է: Գրագիրն էլ, ինձ հայոյելով, թուրթն առաւ, ասածս գրեց ու տեց ինձ: Տարայ, ցոյց տւի, մի բան էլ ինքը նշան արաւ ու ասաց՝ ա՛ռ եւ աղջկան հետդ անպատճառ կը տանես: Դուրս թռայ եւ գրեթէ վազելով տուն հասայ: Ֆուրգօնն արդէն եկել էր, եւ իրերն էլ բարձում էին. «Ի սէր Աստուծոյ, շուտ արեք, զնացքին հասնենք, թէ չէ ամէն բան կորած է»: Շուշիկին էլ, որ դողալով գունաթափ ինձ էր նայում, ասացի.

–Շո՛ւտ արա, դուն էլ շտապի՛ր, թուրթն առել եմ:

Չը գիտեմ թէ ինչ բանի համար էի դուրս եկել փողոց, Օսման էֆէնդին հանդիպեց.

–Հը՛, ի՞նչ արիր, փափա՛զ էֆէնդի,– ասաց ծիծաղելով,– թուրթ առա՞ր, Շուշիկին պիտի տանե՞ս:

–Այո՛, այո՛, բարի մարդիկ ողջ լինեն, թուրթ էլ առայ ու պիտի տանեմ:

Չսպասելով պատասխանի՝ անցայ, գնացի: Մի անգամ յետ դարձայ, տեսայ, որ առաւօտայ ուրականը դեռ կանգնել, ետեւիցս կը նայէր: Վերջապէս իրերը բարձեցինք սայլին ու ուղղեցինք դէպի կայարան: Ծանապարհին հանդիպողներին սրտալի մնաս բարով ասում եւ հեռանում էի՝ նոյնիսկ չը գիտենալով, թէ ո՛վ է: Հասանք կայարան: Առաջին զանգը տաւ էր: Չը գիտեմ՝ ովքեր վրայ թափեցին եւ իրերս լցրին առաջի կողմից համարեայ մի դատարկ վագօն, մենք էլ տեղաւորեցինք, բայց Սոֆյան ուշանում էր: Վերջապէս նա էլ եկաւ: Այդ միջոցին ներս մտան երկու ծառայողներ եւ իրերս հաշւելով՝ ինձնից 5 եւ դրացուց 2 բանկնոտ պահանջեցին, մենք էլ տւինք: Դեռ չէին դուրս գնացել, ներս մտաւ զնացքի կառաւարդը, ինձ ծանօթ կարնեցի Շաբան էֆէնդին, որը մի օր էլ տանս հիւր եղած էր.

–Ի՞նչ առաք էս մարդկանցից,– հարցրեց:

–7 բանկնոտ,– պատասխանեցին:

–Չէ՛ք ամաչում, իրենց շորերը իրենց էք ծախում, յետ տւէք փողերը, թալա՞ն է, ի՞նչ է:

Իսկոյն ետ տւին փողերն ու հեռացան: Երեք բանկնոտը տւի ծանօթիս, որ սողոցը, ծառայողներին բաժանէ, չէր վերցնում, բայց շատ խնդրեցի, վերցրեց: Յաւ յայտնեց գնալու մասին: Ինչ-որ բան ասաց վագօնի մէջ նստող միակ ռուս կնոջը, վայր իջաւ ու անմիջապէս շացրեց: Գնացքը սկսեց շարժել: Արեւը կարծես մթնել էր, այնպէս երեսաց աչքերիս: Վագօնի դռանը կանգնած՝ վերջին անգամ նայում էի սիրածս Կարսին, որ գուցէ այլեւս չպիտի տեսնէի: Միրոս կծկւած, նստած մի արկղի վերայ՝ ձեռներով երեսս ծածկեցի ու լացի: Երբ նորից բաց արի աչքերս, արդէն Կարսից հեռացած էինք:

Կարսից յետոյ

Շուտով երեք ամիսը կը լրանայ, որ Կարսից հեռացել ենք: Մի ամսի չափ Ադէքսանդրապօլում քարշ եկանք, եւ ահա երկրորդ ամիսը կը լրանայ, ինչ հաստատուել եմ սիրածս Լարաքիլիսայում, ուր հինգ տարի մնացել եմ (1884-1889 թթ.) ուսուցչական պաշտօնով, աշխարհական ժամանակս եւ կեանքիս երջանիկ ու բախտաւոր օրերն անցկացրել: Այժմ մտել եմ Լուսկօմի գրասենեակը՝ Գործկառարչի պաշտօնով: Աղջիկս՝ Իսկուհին էլ ծառայում է Կուսկօմի գրասենեակում՝ իբրեւ վարձատրութիւն ստանալով չնչին ռոճիկ եւ ողորմելի մթերքներ: Մի կերպ քարշ ենք տալիս զոյութիւններս: Լարաքիլիսայում չէին մնացել իմ հին բարեկամներս ու ընկերներս:

Կեանքը բոլորովին փոխուել ու խորթացել էր ինձ համար, ոչ մի մխիթարութիւն չէի գտնում մարդկանց շրջանում: Ինձ հետ ծառայում էին Կարսի նախկին աշակերտներիցս Դուրգարեան Մարութէն (Լուսկօմի վարիչ), Թասլախճեան Յարութիւնը եւ

Սմբատ Տեր-Մեղրոնեանը, որոնք ինձ էլ քարշ տվին եւ այդ պաշտօնի մէջ գցեցին:

Աղէքսանդրապօլում

Մայիսի 18/31-ին (երեքշաբթի) ճաշւայ ժամը 1-2-ը Կարսից հեռացանք: Հաւատալս չէր գալիս, երազ էր թում: Հասանք Մազրա, ես աղջիկներին պատկերեցի, որ գնացքի կանգնած ժամանակ երեսան չելնեն, ամէն բոլոր սպասում էի, թէ կը գան, ինձ էլ Շուշիկին էլ վագօնից կիջեցնեն, շորերս կը թալանեն ու մեզ էլ Կարս կը վերադարձնեն: Մի քանի ասկերներ անցնում են վագօնների առջեւից եւ ներս նայում լայրը աչքերով: Գնացքը շարժում է, հասնում ենք Բաշքէտաղիկլար, ահա եւ Փալտվանը: Ինձ հրաշք էր թում, որ անվտանգ անցնում ենք ճանապարհը: Ժամը 4-5-ը Ղզլախախտումն ենք: Բաւական անձրեւ է եկել, ասում են, որ այստեղ վագօնները խուզարկելու են: Ինձ ու դրացուս՝ Մանուկին, վայր իջեցրին վագօնից, անցագրերս նայեցին, եկան վագօնը խուզարկելու: Մի պաշտօնեայ մտած խօսում էր ռուս կնոջ հետ, որ Կարսի դեպոյի ծառայողի կինն էր: Այդ պաշտօնեան ասաց, որ ինքը կը նայէ այս վագօնը, դուք միւսներին խուզարկէք, եւ շատ թուցիկ մեզ վերայ նայելուց յետոյ թողեց գնաց: Վերջապէս բաւական երկար ու սրտմաշուկ սպասումից յետոյ այստեղից էլ շարժեց գնացքը:

–Փա՛ռք Աստծոյ, ազատեցանք,– ասացի եւ սկսեցինք ուրախ խօսել ու ծիծաղել, մինչեւ այդ բերաններս չէր բացում խօսելու:

Աղէքսանդրապօլին դեռ չհասած՝ գնացքը նորից կանգնեց: Արդէն մութն էր: Մի քիչ դող ընկաւ սիրտս, հարցրի վագօնի մօտով անցնող ասկերին, պատասխանեց, որ մեր սահմանն է այս, պէտք է մի քիչ կանգնենք՝ քաղաքից տեղեկութիւն ստանալու համար: 10-15 բոլոր անց շարժեց գնացքը, եւ գիշերը՝ մօտ ժամը 8-ին, Աղէքսանդրապօլի կայարանումն էինք: Պէտք էր ամբողջ գիշերը մնալ վագօնում եւ միայն առաւօտը լուսով իջնել քաղաք: Հանգիստ սրտով թէյ պատրաստեցինք, սեղան բաց արինք եւ սկսեցինք ուտել նախաճաշ, ճաշ, ընթրիք՝ միասին խառնած: Մեզ մօտ եկաւ ախցիլացի Սիրունեան Օնիկը, որի կնոջից լուր էի բերել: Մինչեւ առաւօտ խօսելով ժամանակ անցկացրինք:

Վայր իջայ վագօնից եւ կայարանի սենեակները ման եկայ, որ լիքն էին իրար վրա թափած գաղթականներով, ոչ մի ծանօթ եւ ոչ մի կառք էլ չպատահեց վայր գնալու համար.

–Շուտ է,– ասացին:

Պատկերեցի վագօնում մնալ, չհեռանալ, մինչեւ վերադառնամ ու հետս կառք բերեմ ու գնացի քաղաք: Գտայ երբօրս՝ Աւոյին, աղջկաս՝ Շամունէին, ու որբերիս: Լեւոնի երբօր որբերից մնացել էր միայն Քնարիկը, բոլորն էլ ապրում էին հորեղբօրս որդու՝ Գեորգի տանը, իսկ Իսկուհիս Երեսան էր գնացել ու այնտեղ ծառայութեան մտել: Եղբօրս

հետ մեծ դժվարութեամբ կառք ճարեցինք եւ մօտ 200.000 ռուբլի (չեկով) ծախսելով՝ հազիւ կարողացանք կայարանից իրերը փոխադրել քաղաք եւ հանգստանալ: Շամունէիս ու որբերիս սոսկալի դրութիւնը, Իսկուհիս Երեսանում ունեցած անորոշ վիճակն այնքան էլ մխիթարական չեն եղել:

Առաջին գործս համարեցի Շուշիկին իւր հօրը հասցնել: Լսեցինք, որ մի քանի օր առաջ հայրը եկած է եղել աղջկան գտնելու եւ տանելու: Շուշիկը ցանկացաւ գնալ հօր իջած տեղը, գտնել եւ տեղեկութիւններ իմանալ: Մաթենիկի մօր հետ ուղարկեցի: Բաւական ուշ վերադարձաւ եւ յայտնեց, որ գտել է հօր իջած տեղը, որը, իզուր սպասելով, մի երկու օր չէ կարողացել ատելի մնալ իբրեւ երկաթուղու ծառայող եւ գնացել է՝ խնդրելով, որ եթէ աղջիկը գայ, մի կերպ իրեն իմաց տան կամ ուղարկեն Տփլիսիս: Չորս օրից յաջողեց նորան ուղարկել Տփլիսիս, որի հետ մեծ երբօրս՝ Սլյուտիչին, նամակ գրեցի եւ յայտնեցի գալս խնդրելով, որ եթէ հնար է հաշտեցնել Շուշիկին իւր ամուսնու հետ եւ համոզել ընդունել:

Մեզ մօտ ծառայող Մաթենիկն էս իւր մօր եւ քոյրերի հետ գնաց Տփլիսիս՝ աշխատելու: Տեսան, որ այստեղ գործ չպիտի կարողանան գտնել եւ իրանց գոյութիւնը պահպանել եւ շատ էլ լաւ արին:

Երկրորդ գործս եղաւ Սոֆյային ուղարկել Երեսան, որ Իսկուհիս գտնի ու հետը բերէ, որից յետոյ որոշեցինք մեր ապագայ վիճակը, իսկ ես սկսեցի շարունակ ման գալ՝ դրութեան հետ ծանօթանալու համար: Կարսից հեռացած ժողովրդից շատերը մնացել էին Աղէքսանդրապօլում, մի կերպ տեղաւորել եւ օր օրի սպասում էին, թէ ե՞րբ նորից պիտի վերադառնան Կարս եւ գտնեն իրենց տներն ու տնտեսութիւնը: Շատերն էլ հեռացել եւ ցիրուցան էին եղել Տփլիսիս, Վլադիկաւկազ եւ Հիւսիսային Կովկաս, եւ շատերն էլ, կայարանում իրար վերայ թափած, սպասում էին հերթի, որ գնան-հեռանան այս անհիւրնկալ աշխարհից: Ինձնից առաջ եկող ժողովուրդս թափում էր վրաս, անվերջ հարցումներ տալիս, մխիթարական եւ յուսադրական խօսքերի սպասում:

Աղէքսանդրապօլի գլխին մոխիր էր ցանել, հինը բոլորովին չկար, թուրքի ազդեցութիւնը եւ թողած հետքերը դեռ չէին անցել, որքան խժոճութիւններ եւ կոտորած էր տեղի ունեցել այստեղ, շրջակայ գիւղերում, մինչեւ Մեծ Ղարաքիլիսայ: Առեւտուրն ընկած էր, ամէն կողմ թանկութիւն ու շահագործում, կենսական մթերքների սոսկալի պակասութիւն:

Գնացի տեղական առաջնորդարանը, Արտակ վարդապետն էր առաջնորդը⁷³, շատ ճնշւած ու

⁷³ Արտակ վարդապետ Սմբատյանը ծնվել է 1876 թ. Տավուշի մարզի Թովուզ գյուղում: 1903 թ. ձեռնադրվում է վարդապետ, 1922 թ.՝ եպիսկոպոս: 1920 թ. նշանակվում է նորաստեղծ Շիրակի թեմի առաջնորդ, 1922-1927 թթ.՝ Սյունյաց թեմի առաջնորդ և Տաթևի վանքի վանահայր, ինչպէս նաև Սյունիքի

կտրուած: Առաջնորդարանի սենեակները խլած էին ձեռներից, հազիւ մի երկու սենեակ թողել էին բնակութեան համար, իսկ դահլիճն էլ՝ խորհրդարանի համար (առաջւայ կօնսիստօրիան, Աղէքսանդրապօլի վիճակը թեմի էր վերածած), երկու նոր ծառայող (անդամ եւ քարտուղար) քահանաներ նոր մտան պաշտօնի, որոց ես երդուեցրի ըստ առաջնոյն, բայց ի՞նչ պիտի անէին դոքա, միայն եկեղեցիները պիտի կառաւարեն, էլ ուրիշ ոչինչ: Դպրոցներ չկան: Խորհրդային իշխանութիւնը իւր ձեռքն է առել ամէնը, նոյնիսկ եկեղեցիների չափաբերականները վերցրել, այսուհետեւ իրանք պիտի պահէին այդ մատենաները, իրանք պիտի արձանագրէին մկրտութիւն, պսակ, թաղումը եւ իրանք էլ վկայականներ տային: Հոգեւոր իշխանութիւնը գրկած էր այդ իրաւունքներից:

Կաթողիկոսի անունով մի զեկուցում էի պատրաստել Կարսի անկման եւ ժողովուրդի դրութեան մասին, դրա հետ Կարսի հոգեւոր կառաւարութեան հաշիւմատեանները եւ ինձ մօտ մնացած դրամները (ես էի գանձապահը) յանձնեցի Արտակ վարդապետին⁷⁴ եւ խնդրեցի, որ ուղարկեն Վեհափառ հայրապետին, քանի որ ես անձամբ չպիտի կարողանայի գնալ, քանի որ մտադիր էի անցնել Տփլիս կամ աւելի շուտ Բագու՝ տղայիս մօտ:

–Տէր Խորէն, այս ի՞նչ բան է,– ասաց վարդապետը,– քեզ համար ուրիշ բաներ էի լսել, իսկ այսօր դու բերում ես հոգեւոր կառաւարութեան հաշիւներն ես յանձնում, դրամները տալիս, չէ՞ որ այդ ամէնը կարող էր փչացած ու թալանած լինել, իսկ ձեր տէր Համազասպ քահանայ Ղարաբեօզեանը եկած է եղել այստեղ, բռնի մտել առաջնորդարան եւ ապրել այստեղ իմ սենեակում եւ գնալիս էլ թալանել է, տարել վարագոյրներ, սփռոցներ, խալի ու կարպետ եւ այլն: Լաւ էր, որ կայարանում բռնել, խուզարկել էին տւել, խայտառակել, տարածները ձեռքիցն առել, բայց մեզ չէին տւել, այլ կառաւարութիւնն էր գրաւել:

հուշարձանների պահպանության լիզոր ներկայացուցիչ: 1927 թ. վերստին ընտրվում է Շիրակի թեմի առաջնորդ, 1929 թ.՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: 1937 թ. ապրիլի 13-ին ձերբակալվում է խորհրդային իշխանությունների կողմից և նույն թվականի սեպտեմբերի 3-ին գնդակահարվում (մանրամասն տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Երևան, 1997, էջ 6-12):

74 Ի դեպ, 1928 թ. օգոստոսի 14-ին Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոսն Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին է զեկուցել Կարսի Սբ. Լուսավորիչ եկեղեցու եկեղեցական իրերի մի փոքր մասի վերադարձման մասին. «...իմ բացակայության ժամանակ Լենգուգործկոմը յուլիսի 25-ին հրախրել է թեմական խորհրդի քարտուղար անդամ տ. Խորէն ա. քահ. Ստամբուլցեանին և Կարսի ս. Լուսավորիչ եկեղեցուն պատկանող իրերից ստորագրութեամբ յանձնել է մի քանի անձնան և անարժէք իրեր: Մինչդեռ արժէքատու պատկերներ (Աստուածածնայ և այլն) և գրքեր չէ յանձնել: Երբ հարց է տւել տ. Խորէնը, թէ միայն այդ չէ, ամենարժէքատուները չկան, պատասխանել են, թէ այդ է եղածը, կուգէք տարէք, կուգէք մի տարէք» (Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, էջ 417):

–Վարդապետ, դուք տեսէք ու մտածեցէք,– ասացի,– նախանցեալ տարի քահանան Եկատերի-նօղարից թէ Արմաւիրից վերադառնալիս Կարսի եկեղեցիներին եւ քահանաներին բաժանելու համար 200 փութ ալիւր էր նէր ստացել, որը հետը Տփլիս բերել եւ ծախել էր, փութը 510 ռուբլով (չեկերի ժամանակ): Դուք էլ իմացաք այդ մասին Կարսում եղած ժամանակ, ի՞նչ ասացիք կամ ի՞նչ արիք նորան: Ձեզանից յետոյ եկաւ Կորիւն վարդապետը, այդ հերոսութիւնն իմացաւ, այդ քահանայի եւ մէկ էլ տէր Արսէն Տէր-Գրիգորեանի պսակ կատարելը բարեկենդանի շաբաթ երեկոյին, վարագոյրը քաշելուց յետոյ աչքովը տեսաւ, ի՞նչ ասաց կամ ի՞նչ արաւ: Նորան խաչով վարձատրեց եւ Ս. Էջմիածնի կալածների կառաւարիչ էր կարգում: Է՛հ, թողնենք մեզ, ու ե՞րբ է գնահատութիւն եւ ըստ արժանոյն վարձատրութիւն եղել: Յիշածս տէր Արսէն քահանան այստեղ մի ինչ-որ լրագրի մէջ Քրիստոսի մասին ինչպիսի՜ լուսանքներ է թափել, իրան քահանայութիւնից հրաժարած համարել եւ նորից այդ պաշտօնը շարունակել: Ի՞նչ արիք կամ ի՞նչ ասացիք: Չեմ ուզում պատմել Կարսում վերջին շաբաթներում ինձ հետ կատարած դէպքերը, քիչ էր մնացել, որ գօհ գնայի այդ դէպքերին, որի մէջ խառն էր եւ իմ ընկեր քահանան: Մեր բարոյական անկումը սուկալի է, Աստուած էլ բերարից ազատէ:

Տխուր տրամադրութեամբ դուրս եկայ վարդապետի մօտից: Մուռնտիկը կանչում էր.

–Կարսեցի ժողովրդի համար այսօր՝ ժամը 4-ին, ժողով է նշանակւած, թող ամէն մարդ գնայ եւ ներկայ լինի այդ ժողովին:

Ես կարծեցի, թէ կառաւարութիւնն է նշանակել այդ ժողովը, եւ մի կարելուք բան կայ յայտնելու: Գնացի նշանակւած տեղը իւր ժամանակին, եւ ի՞նչ դուրս եկաւ, մազրեցի տէր Աշոտը եւ մի ուրիշ գիւղացի են հրախրել այդ ժողովը իրանց վիճակը բարւոքելու եւ կառաւարութեանը դիմումն անելու համար: Երկար վիճել, խօսելու ճառեր էին արտասանել, վերջումն էլ մի յանձնաժողով ընտրել այդ մասին աշխատելու:

Կիրակէ՛ մայիսի 30 (12 յունիսի), միտինգ կար քաղաքային տան հանդէպ՝ այգու մօտ: Գնացի, բաւական բազմութիւն էր հաւաքւած: Մի քանի պաշտօնական մարդիկ հաւաքւած էին նախապէս պատրաստուած մի ամբիօնի վերայ, որտեղից ռուսերէն ու հայերէն ճառեր արտասանեցին: Առաջին ճառախօսը գեղեցիկ կերպով խօսում եւ բացատրում է Բօլշեւիկեան կուսակցութեան յաջողութիւնների եւ ապագայ անելիքների մասին: Հայ ճառախօսը փայլում էր Դաշնակցութեանը հայիոյելու ձգտումով: Խօսեց նաեւ մի պարսիկ աղաւաղած հայերէնով եւ ձգտում էր փառաբանել եղբայրութիւն, հաւասարութիւն բոլոր ազգերի մէջ, բայց այնքան վատ խօսեց, որ համարեայ չթողին շարունակելու եւ վերջացնելու:



Խորեն քահանա Ստամբուլցյանը կնոջ՝ Գայանեի և զավակների հետ

Սոֆյան էրեւանից վերադարձաւ Իսկուհուս հետ: Չափազանց ուրախացայ աղջկաս առողջ եւ ուրախ տեսնելով:

Որոշեցինք միասին գնալ Ղարաքիլիսա եւ ծանօթանալ այնտեղի դուրսեան հետ: Յունիս 2/15-ին բաւական դժարութեամբ ու նեղութիւն կրելով ճանապարհի ընկանք եւ հետեւեալ առաւօտը՝ հինգ-շաբթի, լուսաբացին մտանք Ղարաքիլիսայ եւ գնացինք ուղղակի երբօրս որդու՝ Պարոյրի մօտ, մա Հայկոպում էր ծառայում եւ ընտանիքով այդտեղ ապրում: Իսկուհուս էլ կանչել էր այստեղ՝ ծառայելու:

Ղարաքիլիսէն այլեւս էն Ղարաքիլիսէն չէր, ինչ որ ես տեսել էի եւ թողել, հեռացել էրեսուներկու տարի առաջ: Բնութիւնը, օդը, անտառները, ջրերը նոյնն էին, չկային իմ ծանօթ, բարեկամ մարդիկ, նահապետական տները քայքայել էին, շատերը՝ մեռել, շատերը 18 թականին թուրքերի արհաւիրքներից թողել, հեռացել էին Տփլիս եւ Ռուսաստան, իսկ 20 թականին, շնորհիւ այդ արանի շուրջը մեր խմբապետների անհեռատես դիմադրութեան եւ կռիվների, ենթարկել էին թուրքերի վրեժխնդրութեան: Սպանել էր երեխաներիս կնքահայր եւ Ղարաքիլիսի մէջ դիրք ունեցող, երիտասարդ յայտնի Նահապետ Ազատեանը: Այժմ Ղարաքիլիսայում տեղադրուել էր մի խառն հասարակութիւն՝ ամէն տեղից էլ եկած, նաեւ մեր Կարսի կողմերից եւ իմ ժողովուրդից: Մեծ մասն անճանօթ եւ օտար, իսկ գիւղը, որ այժմ քաղաքի էր փոխուած, բաւական ընդարձակել է, ուղիղ փողոցներով ու գեղեցիկ, երկ-

յարկանի տներով զարդարել: Մանաւանդ գեղեցիկ էր կայարանի կողմը՝ պարտեզներով եւ երկաթուղային կանոնաւոր բնակարաններով, իսկ ռուսական եկեղեցին փակ էր, գրեթէ անբակ վիճակի մէջ: Չկային մեր ուսումնարանները, որտեղ պաշտօնաւարել էի: Օրիորդաց դպրոցը, որի վերի յարկումն էի բնակուել, այրուել ու բոլորովին աներակ էր դարձել: Մօտը շինուած կար մի հիւանդանոց, իսկ տղայոց դպրոցը թատրոնի էր վերածուած: Նորա բակում մանր-մունր կրպակներ, խանութներ կային շինուած, որոց մէջ եւ դուրսը սեղանների վերայ ու պատերի տակ, բացառապէս գաղթականներն էին առետուր անում եւ իրանց գլուխը պահում: Ընդհանուր առմամբ, Ղարաքիլիսան ո՛չ քաղաք էր եւ ո՛չ էլ գիւղ:

Մի շաբաթի չափ տեղի դրութիւնը եւ հանգամանքները թու-

ցիկ կերպով ուսումնասիրելուց, ծանօթ ընկերների, ընտանիքների եւ պաշտօնակից, հատուկեմտ մնացած անձանց տեսնելուց յետոյ որոշեցինք ամառս գոնէ մինչեւ սեպտեմբեր մնալ ու հանգստանալ: Իսկուհիս եղբօրս որդու՝ Պարոյրի շնորհիւ մտաւ Կուսկօմի գրասենեակ՝ աշխատելու: Մեծ դժարութեամբ յաջողեց ինձ Աղէքսանդրապօլից փոխադրուել Ղարաքիլիսայ: Շամունէս մնաց մինչեւ դպրոցների փակուելը: Ես թողնեիս՝ Աչիկի ու Մանչուկի եւ մեզ հետ ապրող Սոֆյայի հետ յունիս 22-ին (յուլիս 5) հասայ Ղարաքիլիսայ: Այդտեղ՝ կայարանում, մի փոքրիկ կողոպուտն էլ արին կայարանի ծառայողները, որպէս թէ «Ես իրաւունք չեմ ունեցել այդքան ապրանք վազօնի մէջ բերելու»: Կշռեցին ապրանքս եւ 5 ռ. պահանջեցին ու չբողին քաղաք տանել, մինչեւ չստացան: Տեղադրուեցինք մեզ համար վարձած բնակարանում՝ քաղաքի վերի մասում՝ Վրանաձորի փողոցի վերայ՝ անտառին մօտ, Սոնա Ամիրխանեանի տանը ու սկսեցինք մեր Ղարաքիլիսայի կեանքը:

Ղարաքիլիսայում

Մի շաբաթից յետոյ ընկերներս ինձ քարշ տին Լուսկօմի գրասենեակը, ուր վարիչն էր կարսեցի Մարութ Դուրգարեանը, նորա օգնականն էր Յարութիւն Թապախճեանը (ինձնից մի ամիս առաջ՝ յունիսի մէկից էին աշխատանքի անցել), իսկ հաշուապահը՝ Սմբատ Տէր-Մելքոնեանը՝ նոյնպէս կարսեցի էր, մեր նախկին աշակերտներից ու մօտ ընկերներից:

Սմբատ Տէր-Մեղրնեանը մի տարի առաջ էր եղել ծառայութեան մէջ ու այժմեան դպրոցական գործին բաւական հմուտ էր: Նա էլ այնքան զգած էր, որ ի վերջոյ թողեց քաղաքը եւ գիւղ փոխադրուեց՝ գոյութիւնը պահպանելու համար, քանի որ գիւղում խոստացել էին եւ տուն տալ, եւ կերակրել:

Ինձ յանձնեցին կառուարչի պաշտօնը (քարտուղարութիւն), ուր 8-ից մինչեւ ժամը 2-ը գնում էի ծառայելու: Վարձատրութիւնը շատ չնչին էր դրամով, բայց կենսական մթերքներով պէտք է բաւարարէին:

Դպրոցական գործը բաւական անմխիթար վիճակի մէջ էր դրած: Ես կարծում էի, որ գոնէ կրթական մասը լաւ հիմքերի վերայ դրած պիտի լինէր, ու մեր երիտասարդ ուսուցչութիւնն աւելի նւիրած պիտի լինի իւր ստանձնած սուրբ գործին եւ նախանձեղի վիճակի հասցրած մատաղ սերնդի դաստիարակութեան գործը: Քանի մօտ էի ծանօթանում այդ շրջանի հետ, այնքան հիասթափուում էի: Լուսատրութեան ամբողջ գործը (բոլոր դպրոցները, ծաղկոցները, գրադարան, ընթերցարան, պրօլետար գրողների սեկցիան, թատրոնը մի քանի արհեստանոցներ եւ այլն) ենթարկուում էին մեր գրասենեակին եւ կառուարուում վարիչի ձեռքով, ռոճիկ եւ մթերքներ բաժանուում, բաւական բարդ ու ծանր գործ:

Ինձ յանձնում էր դպրոցական գործերը՝ գրագրութիւնները, վերին աստիճանի խառնուած վիճակի մէջ էին, որը բաւական ժամանակ խլեց կարգի բերելու համար: Ծանօթացայ, որ Դարաքիլիսայում եղել են I աստիճանի հինգ դպրոցներ՝ տարրական դասընթացներով, եւ II աստիճանի միջնակարգ մի դպրոց: Պաշտօնի մտած օրից նկատեցի, որ վերջին տեսակի դպրոցը գոյութիւն չունի, եւ նորա ուսուցիչներից երկուսը գրասենեակի աշխատատեղեր էին՝ Գրիգոր Հախումեան՝ մի վերին աստիճանի համեստ եւ պատուական անձնատրութիւն՝ Կարսի թէլալական դպրոցի եւ օրիորդաց գիմնազիայի տնօրէնը: Վիճակի ընդհանուր դպրոցների վարիչի պաշտօն ունէր, իսկ միւսը Մուրէն Մարկոսեանն էր, նոյնպէս պատուական երիտասարդ, երկուսն էլ կրթած ու համալսարանական: Սա էլ դպրոցական ենթաբաժնի վարիչն էր, բայց ինչն էր կայանում նրանց պաշտօնները, եւ չկարողացայ հասկանալ: Միայն այսքանն էի նկատում, որ երբեմն-երբեմն գալիս էին գրասենեակ եւ օգնում Գորգարեանցին:

Քաղաքի տարրական հինգ դպրոցներից միայն երեքն էին աչքի երեսում.

Ա դպրոցը, որ եկեղեցու փողոցի վերայ՝ Քալի Արսէնեանի տանն էր գետեղած, ունէր վեց ուսուցիչ, որտեղ ճաշից յետոյ երկրորդ նւագ պարապում էին Բ դպրոցի աշակերտները հինգ ուսուցչի ղեկավարութեամբ:

Գ եւ Դ դպրոցները, դարձեալ երկու նւագ, պարապում էին պետական դպրոցի շէնքում՝ Ռոտոնդեան կամ Իվանեան փողոցի վերայ:

Գ դպրոցն ունէր չորս ուսուցիչ, իսկ վերջին դպրոցում մնացել էր միայն մի ուսուցիչ՝ վանեցի Համբարձում Տէր-Սարգսեան՝ միանգամայն անհամապատասխան իւր կոչման, շատախօս եւ աղմկարար:

Ե դպրոցը տեղաւորւած էր երկաթուղային նախկին դպրոցի շէնքում եւ այդպէս էլ կոչուում էր: Ունէր չորս ուսուցիչ: Դպրոցի խորհրդի նախագահը վարիչն էր՝ Լիզա Գասպարեանը՝ կարծեմ տփխիսեցի, մի վերին աստիճանի համակրելի օրիորդ եւ նւիրած իւր գործին: Կարող եմ ասել, որ միայն սորա դպրոցն էր, որ կանոնաւոր հիմքերի վերայ էր դրած, եւ բոլորն էլ գոհ էին սորանից: Բացի այս հինգ դպրոցներից՝ կային եւ չորս թէ վեց ծաղկոցներ, որոնցից Ե-րդը, թէ՞ Ջ-րդը տեղաւորւած էր Երկաթուղային դպրոցի շէնքի մէջ, ունէր երեք պաշտօնեայ, մի ղեկավար եւ երկու դաստիարակներ: Միս ծաղկոցները, որ 15-ից աւելի պաշտօնեաներ ունէին, որտե՞ղ էին գետեղւած եւ ինչպէ՞ս էին առաջ տանում իրանց գործը, չկարողացայ հասկանալ: Միայն երբ գործով պաշտօնեաները գալիս էին գրասենեակ, իմանում էին, որ այդպիսի հիմնարկութիւն էլ գոյութիւն ունի, որոց պաշտօնեաների մէջ այնպիսի օրիորդներ կային տեղաւորւած, որ նոյնիսկ անգրագետ էին եւ միանգամայն անհամապատասխան իրենց պաշտօնին:

Պաշտօնի մտած օրիցս երկու շաբաթ յետոյ յայտարարեց դպրոցական արձակուրդ մի ամիս ժամանակով, իսկ Գ դպրոցում ուսուցիչների համար բացեցին յուլիսի 15-ից մանկաւարժական դասընթացներ համալսարանական Յովհաննէս Տէր-Միրաքեանի ղեկաւարութեամբ (որը ինձ հետ մտաւ պաշտօնի) իւր աղջկայ եւ ուրիշ երկու օրիորդների՝ Դորդանեան Ոսկիի եւ Յովհաննիսեան Մարգարիտի հետ: Վերջին երկուսը համարուում էին դպրոցական աշխատատեղեր, թէւ դպրոցներ չկային: Սոցա հետ լոյս ընկան Ազատ Մանուկեան՝ շրջաերաժշտական գործի վարիչի պաշտօնով, եւ նորա կինը՝ Շուշանիկ Մանուկեան, մի աղմկարար ու պահանջկոտ կին, թէ ինչ պաշտօն ունէր, այդ էլ չհասկացայ:

Մանկաւարժական դասընթացները հազիւ մի ամիս տեւեցին: Շրջականերից եկած էին ուսուցիչ, ուսուցչուհիներ: Աղէքսանդրապօլից եկաւ նաեւ աղջիկս՝ Շամունէն: Նա յանձնուում էր այդ կուրսին: Մի երկու անգամ էլ ես այցելեցի, աւելի կակաօ խմելով ու դատարկաբանութեամբ էին զբաղւած, քան լուրջ գործով: Ըստ իս, այդ կուրսերը իւր նպատակին չձառայեցին, այլ միայն մի քանի աչքի ընկնող ուսուցիչների ամառային ժամանցի համար ծառայեցին, ուրիշ ոչինչ: Վերջապէս օգոստոս վերջերին Տէր-Միրաքեանը Դիլիջան գնաց, կուրսերն էլ քայքայվեցին: Ազատ Մանուկեանն էլ, որ իւր երգեցողութեամբ հրաշքներ էր խոստանում, հիւանդացաւ եւ մինչեւ ղեկտեմբերի վերջը արձակուրդով Տփլիսի



Խորեն քահանա Ստամբուլցյանի դուստրերը՝ Իսկուհին, Արաքսին և Շամունեն, որդիները՝ Գրիգորը, Վաղինակը և Արշավիրը

զնաց, որով ազատեցինք նորա կնոջ ամենօրեայ աղմկալի պահանջներից, որ տեղի էր ունենում գլխատրապես պարեն կամ ռոճիկ ստանալու շուրջը:

Հանգստի փոխարեն ամեն օր տանջանքի եւ անախորժ աշխատանքի մէջ էի: Ռոճիկս եւ ստացած պարենս այնքան չնչին էին, որ հազիւ թէ բաւականացնէր գոյութիւն պահպանելու, եթէ միւս կողմից օգնութիւն չգար Իսկուհիս իր ռոճիկով ու պարենով:

Կենսական մթերքների էժանութիւնը, որ գրաւել էր մեզ, յօրս ցնդեց, հացը, որ 2-3 հազար էր, օրատուր բարձրացաւ մինչեւ 15-20 հազարի, իսկ միսը, որ 3-5 հազար էր, բարձրացաւ 25-30 հազարի ու դեռ ամենի, այնպէս էլ միւս մթերքները՝ փայտ եւ ածուխ, ամէնեւին չէին ճարում: Ածուխի ֆունտը 200-500-ի կարելի էր առնել, բարձրացաւ մինչեւ 3000-ի եւ այն էլ շատ դժուար էր գտնուում, իսկ մի շալակ փայտը, որ հազիւ մի փութ գար, 15-20 հազարի էր ծախուում, այն էլ խօսք փայտ չէր, այլ ցախ: Ստիպւած էի շաբաթը երկու անգամ անտառ գնալ եւ ինքնատեղի համար մանր փայտի կտորտանք հաւաքել պար-

կով կամ չորացած ու թափւած ծառի ճիւղեր ժողովել վառելիքի համար, որին մասնակցում էին նաեւ խեղճ աղջիկներս ու թոռներս:

33-35 տարի առաջ, երբ այստեղ ուսուցիչ էի, հայրս անտառում կամ փողոցում փայտի կտոր տեսնելիս վերցնում, տուն էր բերում: Խեղճ կինս՝ Գայանեն, շարունակ հետը կռում էր.

–Հայրիկ, ամօթ է, մի՛ անիր, ի՞նչ է, որ հաւաքում, բերում ես:

–Օղո՛ւ, կպչա՞ն էլ չի՞ լինի,– պատասխանում էր ծերունին:

Մի կերպ գոյութիւն էինք քարշ տալիս: Իսկուհիս ծառայութիւնը Կուսկօմից փոխեց Հայկոպ, ուր ամենի ռոճիկ ու մասմթերք էին տալիս: Շամունէս չմնաց այստեղ, այլ գնաց Աղէքսանդրապօլ՝ իր վարժուհու պաշտօնը շարունակելու, մեծ թոռանս էլ Աչիկիս՝ Հեղինէիս, տարաւ հետը՝ համապատասխան դպրոց տալու, որովհետեւ այստեղ չկար: Ղարաքիլիսում մնացինք չորս հոգի՝ ես, Սոֆյան, Իսկուհին եւ Մանչուկս՝ Բենիամինը:



Խորեն քահանա Ստամբուլցյանի փեսան՝ Լևոն Աբրահամյանը, թոռները՝ Բենիամին և Սկարչուհի Չեղին Աբրահամյանները

Ժողովուրդը նոյնպես ապրում էր յոյսով ու երագներով: Մեծ բան էին սպասում Կարսի կոնֆերանցիայից, հաւատացնում էին, որ այդ դժբախտ քաղաքի հարցը կը լուծվի յօգուտ հայերի, եւ տառապեալ ժողովուրդը նորից կը վերադառնայ հայրենիք, կազատվի այս տարտամ վիճակից, մի կերպ կը շինէ իւր քայքայած օջախը եւ կը պահպանէ իւր գոյութիւնը: Բայց Կարսի կոնֆերանսն էլ սկսեց, վերջացաւ, տարին էլ բոլորեց, եւ մի մխիթարական լուր չստացեց:

Այս միջոցներին միակ մխիթարական բանը գերիների վերադարձնելն էր, այն էլ եթէ կարելի է մխիթարական համարել, քանի որ 8-9 հազար գերիներից միայն 7-800 հոգի հազիւ վերադարձան, որոց մեծ մասն էլ սպայ էին: Նրանք ուրախացրին իրենց թշուառ սպասողներին եւ հիասթափեցրին աւելի բազմաթիւ սպասողների, որ իրեանց սիրելիների վերադարձը չը տեսնելով՝ նոր զգացին իրենց կորստի մեծութիւնը եւ ունեցած թշառութեան խորութիւնը:

Վերադարձողների մէջ էր նաեւ փեսաս՝ Լեւոն Աբրահամեանցը (սպաների շարքից), որին տարել էին Երեւան (ինչպէս եւ բոլորին) եւ այնտեղից արձակել: Փեսայիս չէին արձակել, այլ, ինչպէս ասում էր, ծառայութեան մէջ էին պահել: Մի քանի օրով եկաւ մեզ եւ իւր զաւակներին տեսնելու, որոց իւր հետ տարաւ Երեւան՝ նորից տուն ու տեղ շինելու, նորից նոր դրութիւն ստեղծելու նորանց եւ եղբօր որբերի համար:

Հոկտեմբերը վերջանում էր, իսկ դպրոցական գործը կանոնաւոր ընթացք չէր ստանում: Գլխաւոր վարիչ Դուրգարեանը գործուղումով գնացել էր

Տիփսիս եւ Սոխում: Նորա տեղը կառուարում էր Թաւախճեանը: Գրասենեակում գրեթէ ծառայող չէր մնացել, ուսուցիչներից ոմանք հեռացել էին գանազան պատրասկներով: Վերջապէս Դուրգարեանը վերադարձաւ, եւ Թաւախճեանն ազատեց նեղ դրութիւնից, բայց չազատեց նախախնամութեան տնօրինութիւնից, այնինչ պատրաստում էր արձակուրդ ստանալ եւ գնալ Նախիջեւան մի քանի օրով, այն յոյսով, որ գուցէ աւելի նպաստաւոր պայմաններով տեղ գտնի ծառայելու (աւելի ճիշտը՝ գոյութիւն պահպանելու): Նոյեմբեր 13-ին գրասենեակից ուշ դուրս եկանք միասին եւ ճաշարանի մօտից բաժնեցիկնք: Գնացել էր տուն եւ այդ իրիկունը անսպասելի կերպով վախճանել: Լաւ էր, որ այդ օրն էլ եկել էր մեծ որդին՝ Խաչիկը, որին անհամբեր սպասում էր: 14-ին նշանակել էին թաղումը: Քահանան փորուրարով (շուրջառ չունին եւ բոլոր օրինակարգութիւնները այսպէս են կատարում) կարգ կատարեց մինչեւ գերեզմանոց, որ շատ հեռու չէր, ուր եկան միայն ընկերները ու մօտ ծանօթները: Սիրտս փղձկեց, արտասուքս հեղեղի պէս հոսեց աչքերիցս, չոքեցի գերեզմանի վերայ, համբուրեցի խեղճ ընկերոջս հողաթումբը:

—Յարութիւն ջան, Կարսում միասին գերի մնացիկնք թուրքերի մէջ, բաւական տանջուցիկնք եւ իրար մխիթարելով՝ ազատեցիկնք այն սեւ օրերից: Անաստա՛ս, ինչո՞ւ թողիւր ինձ մէնակ, մխիթարում եւ ապագայի քաղցր յույսերով ապրում էիկնք, ո՞ւր մնացիկն կազմած ծրագրերս: Գնա՛, եղբա՛յր եւ հանգիստ քնի՛ր հեռու այս աշխարհի անիրաւութիւններից:



ԳԱՐԵԳԻՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(1890 -1967)

Համառոտ կենսագրություն

Գարեգին Մովսեսի Մովսիսյանը ծնվել է 1890 թ. Վանի նահանգի Արճակ լճի եզերքի նույնանուն գյուղում:

Հայրը՝ պողանցեցի Մովսես Ջաքարյանը, Վարազավանքի վանահայր Խրիմյան Հայրիկի հիմնած ժառանգավորաց դպրոցի սաներից էր՝ Հայրիկի որդեգիր անվամբ:

Մայրը վախճանվել է 1899 թ., հայրը՝ 1902 թ. Բաքվում: Ուներ քույր¹ և եղբայր²:

Գարեգին Մովսիսյանն ուսանել է Վանի Արարուց դպրոցում:

1903-1907 թթ. սովորել է Վարազավանքի ժառանգավորաց դպրոցում, ապա քեռու՝ Մարգար Հյուսյանի միջամտությամբ Պարսկաստանի վրայով անցել է Ռուսաստան, մեկ տարի անց՝ 1907 թ., ընդունվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոց:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առաջին իսկ տարիներից Գարեգին Մովսիսյանը նվիրվում է մանկավարժությանը՝ մինչև մահ շարունակելով մատաղ սերնդին հայոց լեզու ու գրականություն դասավանդել Երևանի դպրոցներում, ապա Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում:

1965 թ. թղթին է հանձնել մանկության հուշերից որոշ պատառիկներ:

Գարեգին Մովսիսյանը վախճանվել է 1967 թ.:

¹ Հուշագրի քույրը՝ բանահավաք, ազգագրագետ Սերինե Ավագյանը, ծնվել է 1896 թ. Արճակում: Սովորել է Վանում: 1915 թ. գաղթել է Բաքու, ապա Աստրախան: 1920 թ. հաստատվել է Երևանում և աշխատել տարբեր մանկատներում: Վախճանվել է Երևանում 1971 թ.: Հեղինակել է «Արճակի հրեղենները» պոեմը (1944 թ., վրիտ.՝ 1959 թ.), «Արճակ» ազգագրական աշխատությունը (1978 թ.), «Իմ երկրային ուղին» ինքնակենսագրական վեպը (1983 թ., վրիտ.՝ 2005) և այլն:

² Եղբայրը՝ ագրոքիմիկոս Եղիշե Մովսիսյանը, ծնվել է 1900 թ. Վանում: 1927 թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսության ֆակուլտետը և 1930 թ.-ից աշխատել Հայկական գյուղատնտեսության ինստիտուտի ագրոքիմիայի ամբիոնում: Աշխատանքները վերաբերում են ՀՀ հողերի պարարտացման և ագրոքիմիայի հետազոտությունների խնդիրներին: Վախճանվել է 1973 թ. Երևանում:

ՄԻՔԵ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԽԻՂՈՐ ՀԱՎԻՏՅԱՆՍ ՊԻՏԻ ԼՈՒՅ

Վանում

Վանում ես քիչ եմ ապրել, միայն մանկությանս տարիներին: Հիշողություններս այդ սքանչելի և անգուզական քաղաքի մասին այնքան էլ հարուստ չեն, բայց եղածն էլ անջնջելի է մնացել: Տասնյակ տարիներ անցնելուց հետո դեռ մինչև այսօր էլ դրանք մնացել են իմ մեջ:

Մի անգամ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին հարց են տալիս. «Դու շատ ու շատ երկրներ ես ման եկել, աշխարհահռչակ քաղաքներ ես տեսել, մոտիկից ծանոթացել ես այդ քաղաքների բնական և արհեստական շատ ու շատ գրավիչ գեղեցկություններին և տեսարժան վայրերին: Պատմում են, որ դրանցից ամենասիրունն ու գրավիչը Պոլիսն է: Դի՞շտ է այդ, վեհափառ: Մի՞թե Վանը Պոլսի մոտ ոչնչություն է և արժանի չէ հիշատակության»:

Խրիմյան Հայրիկը կարճ ու լակոնիկ ոճով պատասխանում է. «Վանա քաղաքը քաղաք է, Ստամբուլը նրա մոտ ի՞նչ քաղաք է»:

Հայրս՝ Մովսես Չաքարյանը³, 1895 թ., երբ ես 5 տարեկան էի, և հարազատ մորս ու ինձնից փոքր

քրոջս հետ ապրում էինք գյուղում՝ Արճակում, Վարազա ժառանգավորաց դպրոցում⁴ ուսուցիչ էր:

Այդ նույն թվի ամառը հայրս մեզ տեղափոխեց Վանի Այգեստան թաղամաս՝ նախ՝ իր պաշտոնավայր Վարագին մոտիկ լինելու և ապա՝ անխուսափելիորեն ձեռնարկվելիք հայկական ընդհանուր կոտորածի ժամանակ ավելի ապահով վիճակի մեջ լինելու համար:

Մեծ դեպքը

Անխուսափելի կոտորածը տեղի ունեցավ 1896 թվի հունիսին.

1896 թվին, սև երկուշաբթի

Հունիսի 3-ին գիշեր մինչև լույս

Բռռուններ զարկին,

Անօրեն թուրքեր խմբեր կազմեցին:

Վանեցիները դրան անվանում են Մեծ դեպք: Սկսվում է կոտորածը, դիմադրություն են ցույց տալիս միայն Վան քաղաքում կազմակերպված ինքնապաշտպանության խմբերը՝ Վանում գոյություն ունեցող երեք՝ Դաշնակցական, Արմենական և Հնչակյան կուսակցությունների ռազմիկների (Ավետիսյանի, Պետոյի և Մարտիկի) անմիջական ղեկավարությամբ: Դիմադրությունն օրհասական էր, տապալվեց, իսկ զենքը ձեռքին դիմադրող Վանի երիտասարդներին հնարավորություն տրվեց հեռանալ Վանից և անցնել Պարսկաստան: Դեռ Պարսկաստանի սահմանը չանցած՝ անշուշտ, թուրք կառավարության թելադրանքով սահմանազլխին գտնվող Բարդուղիմեոս վանքին⁵ մոտիկ Գյարուկի ձորում խավար գիշերը նրանց շրջապատում են Շարա բեկի զինված ավազակախմբերը և բոլորին էլ սպանում են կամ սրախողխող անում:

1896 թ. ամռան ընդհանուր կոտորածից հետո տիրում է համեմատաբար խաղաղ վիճակ:

3 Մովսես Չաքարյանը ծնվել է Պողանց գյուղում: 1881-1884 թթ. սովորել է Վարազավանքի ժառանգավորաց դպրոցում:

Ըստ ամենայնի, ավարտելուց հետո արճակցի Մարգար Հյուսյան-Հովհաննիսյանի հետ և արճակցիների օժանդակությամբ Արճակում հիմնում է Սբ. Մեսրոպյան դպրոցը (**Ավագյան Ս.**, Արճակ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 8, Երևան, 1978, էջ 62):

1885-1887 թթ. Վարազավանքի դպրոցի տեսչությունը ստանձնում են Վրթաբեն և Հուսիկ վարդապետները Մովսես Չաքարյանի և Հովհաննես Պուլյանի և այլոց «ազնականություններ» (**Բագրունի Հ.**, Հայ դպրոցը Վանի մեջ (1820-1913), «Աշխատանք», 1913, № 6, էջ 4):

1892-1893 թթ. դասավանդում է Արճակի դպրոցում, իսկ 1895 թ. Վանի Արարուց Սբ. Թարգմանչաց դպրոցում՝ հայոց լեզու, աշխարհագրություն և կրոն:

1897 թ. վերաբացվում է ժառանգավորաց դպրոցը, և ուսուցչի պաշտոնով հրավիրվում է նաև Մովսես Չաքարյանը (**Բագրունի Հ.**, Հայ դպրոցը Վանի մեջ (1820-1913), «Աշխատանք», 1913, № 5, էջ 8): Ի դեպ, ըստ հուշագրի՝ հայրը 1896 թ. ջարդերին Վարագ ներխուժած թուրք հրոսակներից կարողանում է փրկել Վարազավանքի գանձ-մասունքները:

1890-ական թվականներին Մովսես Չաքարյանը զինվորագրվում է ազգային-ազատագրական պայքարին. «Արճակի երկու ուսուցիչներ՝ Մովսես Չաքարյանը (Պողանց գյուղացի) ու Մարգար Հյուսյանը (բնիկ արճակցի) ...երիտասարդներից կազմել էին մի խումբ, որը գիշերով գյուղից դուրս էր տանում ու Վան հասցնում ընդհատակյա աշխատող «կովկասահայ կաշախներին» ու նրանց «ապրանքը» (**Ավագյան Ս.**, Արճակ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 8, Երևան, 1978, էջ 17): Մակայն թուրքական իշխանությունների հետապնդումներից խույս տալով՝ 1901 թ. ծպտված Կովկաս է փախչում: Հեռակա դատապարտված էր ցմահ բանտարկու-

թյան: 1902 թ. մահանում է Բաքվում՝ որք թողնելով Գարեգին, Մերինե և Եղիշե զավակներին:

Հուշագիրը նշում է, որ «Բաքվաբնակ իմ հասակակից ընկերներն ինձ 1907 թվին ցույց տվեցին հորս անշուք գերեզմանի հողաթումբը Չեմբերքենդի գերեզմանոցում, որի վրա ես կատարեցի իմ որդիական պարտքը, գրկեցի, համբուրեցի և աղի արցունք թափեցի»:

4 Վարազավանքի ժառանգավորաց դպրոցը հիմնադրվել է 1857 թ. (**Խ. Խ.**, Վարագայ վանքի յօթելեանի առիթով, «Տարագ», 1910, N 3, էջ 36: Տե՛ս նաև **Հ. Մ. Պ.**, Վարագայ յոթելեանը. 1857-1907, «Բազմավեպ», 1910, էջ 316):

5 Ըստ ավանդության՝ Բարդուղիմեոսի վանքը հիմնվել է քրիստոնեական քարոզչության համար նահատակված առաքյալի գերեզմանի տեղում: Աղբակի առաջնորդամիստ վանքն էր:

Վան քաղաքի նկարագիրը

Վան քաղաքը բաժանվում էր իրար հակադիր երկու մասի: Մեկը բուսականությունից զուրկ Բաղաքամեջն էր: Գտնվում էր բերդի ստորոտում՝ շրջապատված հաստ և քարաշեն ամուր պարիսպներով: Այստեղ տեղավորված էին կառավարական պաշտոնատները, գլխավոր շուկան, բանտը, առաջնորդարանը և այլն: Մյուսը կոչվում էր Այգեստան, ուր ապրում էին հայեր և թուրքեր:

Քաղաքամեջը և Այգեստանն իրար միանում էին ընդարձակ մի պողոտայով, որ կոչվում էր Խաչփողան: Այս փողոցում, ինչպես նաև բոլոր քիչ թե շատ բանուկ փողոցներում զգալով հոսում էին առուները, որոնց եզերքին փարթամորեն աճում էին գանազան ծառեր: Սրանք առանձնապես ամառվա ամիսներին մեծ գովություն էին պարգևում բնակիչներին: Այգեստանում ապրող վանեցիներից շատ քչերն էին զուրկ տնամերձ այգիներից, որոնք հարուստ էին բազմատեսակ մրգատու ծառերով և խաղողի թփերով: Փողոցներից մշտապես հոսող առատ ջրերով ջրում էին այգիները, որոնք համարյա իրար կպած էին, և շատ անգամ հնարավոր չէր տարբերել հարևանների այգիները մեկը մյուսից: Սահմանները երբեմն անջատվում էին հողաշեն ցածր պատերով, որոնց վրայից հեշտությանը կարելի էր անցնել մյուս կողմը: Շատ խիտ էին այգիները, տները կորչում էին դրանց արանքում, և հեռվից դիտողին թվում էր, թե Այգեստանում ընդհանրապես տներ չկան, եթե փողոցները չմատնեին դրանց գոյությունը:

Հայրս

Ապրում էինք Խամուր-քյասան փողոցում՝ համանուն աղբյուրին կից՝ Մուկուչենց Մառայի տանը վարձած երկհարկանի, հողաշեն երկու սենյակներում: 1897 թ. ուսումնական տարին վերջացել էր: Հայրս Վարազից տեղափոխվել էր Վան. ուսուցչական պաշտոնով հրավիրված էր Արարուց դպրոց, որի տեսուչն էր Ղևոնդ էֆենդի Խանջյանը⁶:

Հորս հետ հաճախ էի գնում Արարուց դպրոցը, ուր աշակերտներն ամեն անգամ ինձ շրջապատում էին և իրենց այգիներից բերած անգուգակալ մրգերով հյուրասիրում: Հայրս այդ դպրոցում դասավանդում էր հայոց լեզու, աշխարհագրություն և

կրոնի անվան տակ՝ հայոց պատմություն: Պատմում էր մեծ ոգևորությամբ, իսկ աշակերտները դասի ընթացքում պահպանում էին քար լռություն և դառնում լարված լսողություն:

Մի օր էլ Վանի դպրոցական գործի թուրք տեսչի հանձնարարությամբ Արարուց դպրոց է գալիս թուրք մուլլան՝ ուսումնասիրելու դպրոցի գործերը, ուսումնական ծրագրերը, դասավանդման դրվածքը, ինչպես նաև ովքեր և ինչ գաղափարի տեր են այնտեղ դասավանդող ուսուցիչները: Մուլլան հայերեն չգիտեր: Բնական է՝ նրա հարցերին պատասխաններ պիտի տար Ղևոնդ էֆենդին, որը հայտնի թուրքագետ էր և նույն դպրոցում այլ առարկաների հետ դասավանդում էր նաև թուրքերեն: Մուլլան ցանկություն է հայտնում լսելու Մովսես վարժապետի դասը: Ղևոնդ էֆենդին մուլլային առաջնորդում է Մովսես վարժապետի դասարանը, ուր վերջինս ոգևորված պատմում է հայոց պատմությունը և պատասխանում աշակերտների հարցերին: Ղևոնդ էֆենդու և մուլլայի դասարան մտնելը չի շփոթեցնում հորս, որն անմիջապես կողմնորոշվում է և սկսում է կրոնի դասավանդությունը: Դասն անցնում է խիստ հետաքրքիր և աշխույժ: Մուլլան գոհ սրտով դուրս է գալիս և իր հիացմունքը հայտնում տեսչին: Դրանից հետո Մովսես վարժապետը շարունակում է հայոց պատմության ընդհատված դասը: Այս դեպքը հայտնի է դառնում Այգեստանում: Մովսես վարժապետի համբավը շատ շուտ տարածվում է, և նրա մասին հիացմունքով են խոսում:

Դեռ Վարագում չպաշտոնավարած՝ դպրոցն ավարտելուց հետո՝ 1892-93 թվերին, հայրս ուսուցիչ էր Արճակի դպրոցում: Նրա հետ միասին ուսուցիչ էր նաև նույն Վարագա դպրոցն ավարտած իր դասընկեր արճակեցի Մարգար Հովհաննիսյանը⁷, հայտնի պարոն Մարգարը, ինչպես կոչում էին նրան բոլոր գյուղացիները: Այդ թվին մի խումբ հայրուկների հետ Կովկասից Վան է գալիս Խանասորի արշավանքի հերոսներից Վարդանը: Նրանց նպատակն էր կազմակերպել Վանի ինքնապաշտպանության գործը: Պարսկաստանից սահմանն անցնելով՝ մտնում են Արաղայի լեռնային գոտին,

6 Ղևոնդ Խանջյանը «Լուրջ, անկեղծ, պատկառելի եւ պատուական հայ մը ու տիպար ուսուցիչ մը: Մայրենի լեզուի պէս կը խօսէր, կը գրէր ու կը կը կարողար թուրքերէն լեզուն: Երկար տարիներ ձեռնհասօրէն կը վարէ Արարուց երկսեռ վարժարանին տեսչութեան պաշտօնը եւ քանի մը տարիներ ալ նորարաց Կեդրոնական վարժարանին: 1910 թուին Ատենապետ կ'ընտրուի Վանի Արմենական Կուսակցութեան Կեդրոնական Յանձնախումբին: ...կը հրաւիրուի թուրք ոստիկանութեան մէջ պաշտօն մը ստանձնելու, պաշտօն մը, որ շուտով Մեր Թօմիսէի աստիճանի կը բարձրանայ: Իր արժանատր գաւակն է Աղասի Խանջեան...» (Տէր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1966, էջ 497):

7 Մարգար Հյուսյան-Հովհաննիսյանը հուշագրի քեռին է: Մովսես Չաքարյանի հետ ուսանել է Ժառանգավորաց դպրոցում: 1892 թ. Վարագավանքի վանահայր Վրթանես ծայրագույն վարդապետ Տեկանցի հանձնարարականով ընկերոջ՝ Մարգարի հետ դասավանդում է Արճակում: Համիդյան ջարդերի ժամանակ փրկվում է, «Վան է հասնում, տարբեր պետությունների, հատկապես Ռուսաստանի հյուպատոսներին տեղեկացնում կատարվածի մասին ու նրանց միջամտությանը Վանի կուսակալի «ներողամտությունը» հայցում» (Սեդրին, Իմ երկրային ուղին, էջ 343, ծնթ. 5): Ի դարակազմին Բաքվում հիմնում է «Արճակի կրթասիրաց միությունը», որի նպատակն էր աջակցել Արճակի դպրոցի գործունեությանը (Ավագյան Ս., Արճակ, էջ 36): Մարգար Հյուսյանը կնոջ հետ (զավակները մահացել էին մանուկ հասակում) գնելվում է 1918 թ. Բաքվում հայ-թուրքական կռիվների ժամանակ (Սեդրին, Իմ երկրային ուղին, էջ 344, ծնթ. 5):

գիշերն ասպատանում քրդաբնակ գյուղերից մեկում, հաջորդ օրն անհավասար կռվի բռնվում իրենց հայտնաբերող և շրջապատող զինված քրդերի հետ և անկորուստ ազատվելով շրջապատումից՝ հեռանում են դեպի լեռները: Նրանք առանց վախճանների իրենց անձանոթ ճանապարհներով շարժվում են դեպի Վան: Հասնում են Արճակի լեռնային արտավայրերին և պատսպարվում են քարաժայռերի արանքներում: Լուսանում է: Հեռվից նկատում են մի քանի հոտաղների, որոնք, իրենց տավարն առաջներն արած, քշում են դեպի այդ հեռավոր ու փարթած արտավայրերը: Հոտաղներին նկատում են Վարդանը և նրա հայրուկները, որոնք բոլորն էլ քրդական շորերով էին և զինված: Վարդանն իր հայրուկներից մեկին ուղարկում է հոտաղների մոտ: Վերջիններս, նկատելով իրենց մոտեցող զինված անձանոթ մարդուն, սարսափահար են լինում՝ կարծելով, թե քուրդ է, և սպասում են իրենց անխուսափելի մահվան: Վարդանի և նրա խմբի հայրուկների համար պարզվում է, որ հոտաղներն արճակցիներ են: Նրանք ասում են, որ Արճակ գյուղն ունի բավական բարեկարգ մի դպրոց, ուր, որպես ուսուցիչներ, պաշտոնավարում են երկու հայրենասեր երիտասարդներ՝ հայրս և մորեղբայրս: Երկուսն էլ գյուղացիների սիրելիներն են, ոչ մեկը նրանց ասածը գետին չի գցում, ընդունում են որպես սրբություն և օրենք: Վարդանը ենթադրում է, որ ուսուցիչներին կարելի է վստահել և օժանդակիչ դարձնել իրենց ձեռնարկած դժվարին և խիստ վտանգավոր գործին: Մի փոքր նամակ է գրում և նշում Կովկասից դեպի Վան գալու իրենց նպատակը՝ խնդրելով ներկայանալ իրենց: Հայրս և մորեղբայրս, ուտելիք վերցրած, նամակաբեր հոտաղի ուղեկցությամբ գալիս են Վարդանի մոտ: Վերջինս շատ է ուրախանում, որ ծանոթանում է այդպիսի հրաշալի, կրթված երիտասարդների հետ: Մարզարը գյուղ է վերադառնում՝ դպրոցական գործը երեսի վրա չթողնելու և կասկածներ չհարուցելու համար, իսկ հայրս Վարդանի խմբին ապահով հասցնում է տեղ, վերադառնում գյուղ՝ արդեն զինվորագրված ազատագրական պայքարի գաղափարներին⁸:

Հայրս շատ է սիրել իրեն հոգևոր սնունդ տվող Վարագավանքը և Ժառանգավորաց դպրոցը: Նրան շատ է սիրել նաև Խրիմյան Հայրիկը: Ամեն

անգամ լսելով հորս մասին՝ տխրության արցունքներ են թափվել մեծ հայրենասերի աչքերից, և խորունկ ա՛խ է քաշել սրտի խորքից:

Երբ 1896 թվի ջարդերի ժամանակ քրդական մի մեծ ավազակախումբ շարժվում է դեպի Վարագավանք՝ ավարի ու թալանի ենթարկելու, հայրս, որ ուսուցիչ էր այնտեղ, կազմակերպում է ամբողջ միաբանության և աշակերտության դուրսբերումը վանքից: Բոլորին նրա ցուցումներով տեղավորում են լեռան բարձրադիր ծերպերում, ուր քրդերը չէին հանդգնում բարձրանալ և կոտորած կազմակերպել: Դրանից հետո ամայի վանքում մնում է մեծմեծակ և տաճարի ներսում՝ քարե պատերի մեջ շինված թաքստոցներում է տեղավորում ձեռագիր մատյանները, ոսկեղեն և արծաթեղեն թանկագին զարդերը, վանքի արժեքավոր այլ հարստությունները, որից հետո ամուր կողպում է տաճարի դուռը, բարձրանում դեպի լեռը տանող բլուրը, ձորի միջով ապահով հասնում է լեռը և միանում այնտեղ ասպատանածներին: Փրկվում է վանքի հարստությունը, թեև քրդերը, կոտրելով դեպի վանքի մեծ բակը տանող դարպասը, ներս են մտնում և թալանի համար ոչինչ չգտնելով՝ հեռանում են և թալանի նպատակով ուղղվում դեպի հայկական մերձակա գյուղերը:

Դերոյաններ

1896 թվի Մեծ դեպքն իր խոր կնիքն էր դրել Վանի երիտասարդության վրա: Հարկավոր էր գեներ և ռազմամթերք ձեռք բերել և Պարսկաստանի վրայով ներմուծել Կովկասից հավատարիմ և վստահելի մարդկանց միջոցով:

Վաճառահանվող ապրանքների հետ միասին Վան էր ներմուծվում նաև ռազմամթերք: Բերում էին մոսկն հրացաններ, որ Վանում սովորաբար անվանում էին մարդասիրական, որովհետև շատ փոքր, երբեմն աննշան վերք էր պատճառում:

Մեր ապրած բնակարանը եկող մարդկանց համար միանգամայն ապահով վայր էր. բեռնավորված գալիս էին գիշերով, բեռնաթափվում և վերադառնում դարձյալ գիշերով: Գեկավար անդամներից մեկին մինչև այժմ էլ հիշում են: Միջահասակ, լայն թիկունքով, կապույտ աչքերով, կարճ ու շեկ մորուքով վանեցի Դերոյան Տիգրանն⁹ էր, որը Վանի 1896 թվի կռիվների ակտիվ մասնակիցներից էր,

⁸ Հուշագիրն այս դիպվածի մասին նշում է, որ «Երևանում հրատարակված «Նորք» ամսագրի համարներից մեկում իր «Ազատագրական շարժումները Թուրքահայաստանում» աշխատության մեջ հեղինակ Դավիթ Անանունը գրում է, որ այդ շարժումներին Վանում առաջինը զինվորագրվում են Արճակի դպրոցում պաշտոնավարող երկու երիտասարդ ուսուցիչներ՝ Մովսեսը և Մարգարը:

Վերոհիշյալի մասին շատ տարիներ անց ավելի մանրամասն պատմում է 1918 թվին Աստրախանում պատահաբար ծանոթացած Վարդանը, որը 1915 թվին հայ կամավորական խմբերի ընդհանուր հրամանատար էր դարձել և մասնակցել Վանի ազատագրական մեծ պայքարին:

⁹ Դերոյան (Տերոյան) Տիգրանը (Վազգեն) ծնվել է 1872 թ. Վան քաղաքում: Ուսանել է Հանկույսների նախակրթարանում, Հայկազյան կենտրոնական վարժարանում: Մասնակցել է Վանի 1896 թ. հերոսամարտին: Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) մահից հետո՝ 1896 թ., դարձել է Վասպուրականի ՀՅԳ ղեկավարը: Նահատակվել է 1898 թ. Կոռուպաշ գյուղում շատախցի խմբապետ Միքոյի և վանեցի Արշակ Չալկատարյանի հետ միասին («Դրօշակ», 1899, N 3, էջ 38-39): Յուշամատենան Հայ Յեղափոխական դաշնակցութեան Ալբոմ-ատլաս, Լուս-Անճելըս, 1992, էջ 39):

ապրում էր ընդհատակյա պայմաններում, խուսափում էր նույնիսկ իր հայրենակիցներին երևալուց:

Կառավարությունը խոշոր գումար էր խոստացել Դերոյան Տիգրանի տեղը հայտնողին: Վանի թուրքական իշխանություններին վերջապես հաջողվում է հայտնաբերել անվախ ու քաջ հեղափոխականի թաքստոցը, որը շրջապատում են թուրքական զինված ասկարները: Դերոյան Տիգրանն իր հավատարիմ երկու զինակիցների՝ Մուրոյի և Արշակի հետ դուրս է գալիս շրջապատումից, հեռանում է Այգեստանից և գիշերով մեկնում մոտակա Կուռուպաշ գյուղը, պատսպարվում այդ գյուղին մոտիկ ջրաղացում՝ նպատակ ունենալով ըստ երևույթին գնալ դեպի Վարագա սարը: Սակայն ջրաղացում նրանք շրջապատվում են, և անհավասար կռվից հետո երեքն էլ նահատակվում են: Այդ մասին Վանում հորինվել էր մի երգ¹⁰.

Դերոյան Տիգրան, Մուրոն և Արշակ
Դաշտ Կուռուպաշ եղան նահատակ:

Դերոյան Տիգրանի նման հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ էր մտել նաև քույրը՝ Զարուհին¹¹: Եղբոր սպանությունից հետո թուրք իշխանությունները ձերբակալում են Զարուհուն, բանտարկում, ենթարկում խստագույն տանջանքների, ծաղր ու ծանակի և ամեն կերպ աշխատում նրանից գաղտնիքներ որսալ, սակայն նա միայն մի պատասխան է տալիս. «Ես ոչինչ չգիտեմ, ծանոթ չեմ իմ եղբոր բռնած գործերին, նրա հետ հանդիպումներ չեմ ունեցել և չգիտեմ, թե որտեղ էր ապրում, և ովքեր են եղել նրա ընկերները: Ես մի խեղճ աղջիկ եմ և իմ վիճակից դուրս այլ հարցերով չեմ հետաքրքրվել»:

Վարդգեսը¹²

Վանում ընդհատակյա պայմաններում գործում էին Դաշնակցական, Հնչակյան և Արմենական կու-

10 «Դերոյանի հիշատակին» նվիրված այս երգն ամբողջությամբ տեսն «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր», աշխատասիրությամբ Ա. Վազինյանի, Երևան, 1989, էջ 148-149:

11 Դերոյան (Տերոյան) Զարուհի (1870, Վան - 1944, Երևան), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Վազգեն և Վարագա Տերոյանների քույրն էր: Ուսանել է Սանդիստյան վարժարանում, ապա դասավանդել նույն կրթօջախում: 1896 թ. հունիսի 2-ին Տերոյանների տան խուզարկությունից հետո Զարուհին բանտարկվում է և երկու տարի անց ցմահ արքայություն Երուսաղեմ, ուր նա մնում է մինչև 1908 թ. ամառը՝ մինչև Սահմանադրության հռչակումը: Այնուհետև գալիս է Կովկաս և հաստատվում Երևանում արդեն ձերբացած և մի քիչ էլ զիտակցությունը կորցրած: Հուշագիրը նրան հանդիպել է Երևանի փողոցներում բափառելիս, մեջքը կուգ դարձած և տեսողությունն էլ վատ (Զարուհու մասին տեսն Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեփյնգամեակի առթիւ, Վենետիկ, 1930, էջ 324-325):

12 Վարդգեսը (Հովհաննես Մերենկոյան) ծնվել է 1871 թ. Կարինում: Ուսանել է Արծնյան և Սամասարյան վարժարաններում:

սակցությունները՝ ամեն մեկն անկախ, իրար հետ ոչ մի կապ և առնչություն չունենալով, ընդհակառակը, երբեմն բացարձակ թշնամական պայմաններում: Այսպիսի վիճակում հաճախ թուրքական իշխանություններին հաջողվում էր հայտնաբերել ընդհատակյա գործիչների գաղտնի թաքստարաններն Այգեստանի լաբիրինթոսներում:

Այսպես պատահեց 1902 թվի ձմռանը:

Կովկասից Վան էր եկել դաշնակցական հայտնի գործիչ Վարդգեսը՝ կուսակցության թուլացած ու քայքայված գործերը կարգի բերելու: Տների կտուրներից մաքրված ձյունը բլրած և տեր ու տնօրեն էր դարձել փողոցներին և դեպի այգիները նայող տարածություններին: Վարդգեսն ապրում էր Խամուրքյասան կոչված զուտ հայաբնակ փողոցի միհարկանի տներից մեկում: Կեսգիշերին մատնության պատճառով բազմաթիվ զինված ոստիկանները փողոցի կողմից շրջապատում են տունը: Տանտերը՝ Կարապետ անունով մի երիտասարդ, իր կյանքը փրկելու համար կտուրից ցած է թռչում և հարևանի բակով փախչում անհայտ ուղղությամբ: Վարդգեսը բարձրանում է կտուրը և անհավասար կռվի բռնվում ոստիկանների հետ: Ոտքից վիրավորվում է, կտուրից ցած թռչում այգում կուտակված ձյան վրա և արյան հետք թողնելով՝ առաջանում դեպի երկու տուն հեռու գտնվող ծուռ վանեցի Բուռնազի տունը: Բաց է անում թոնրատան դուռը, ներս է մտնում, հասնում թոնրին և սկսում վառել իր մոտ գտնվող փաստաթղթերը:

Մինչ այդ ոստիկանները, արյան հետքը բռնած, հասնում են Վարդգեսի ապաստանած թոնրատանը: Վարդգեսը, մի ձեռքով ատրճանակն ուղղելով դեպի ոստիկանները, մյուս ձեռքով վառում է փաստաթղթերը՝ ասելով. «Մի քիչ էլ համբերեք, ես իմ գործը վերջացնեմ, որից հետո առանց դիմադրելու անձնատուր կլինեմ»:

Ձերբակալում են Վարդգեսին և վիրավոր վիճակում տեղափոխում Քաղաքամեջի կենտրոնական բանտը¹³:

րում: 1890 թ. ղեկավարել է Կարնո հայության բողոքի ցույցը, որի համար էլ բանտարկվել է և ազատ արձակվելուց հետո մեկնել Կ.Պոլիս: ՀՅԴ առաջադրանքով Պարսկաստանի վրայով մտել է Վան, որտեղ կրկին ձերբակալվել է մատնության պատճառով: Որոշ ժամանակ անց Վանի բանտից փոխադրվել է Տիգրանակերտ: 1908 թ. Սահմանադրության հռչակումից հետո ազատվել է և ընտրվել Օսմանյան խորհրդարանի երեսփոխան: Նահատակվել է 1915 թ. Գրիգոր Զոհրապի հետ (Յուշամատենան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Ա, Լոս-Անճելես, 1992, էջ 79):

13 Դեպքը կատարվել է 1903 թ. հունվարի 4-ին: Վարդգեսի ձերբակալման մասին մանրամասն տեսն «Գրոշակ», 1903, № 4, էջ 53: Հուշագիրը նշում է, որ Վարդգեսին ազատելու համար վանեցիները «Քաղաքամեջը շրջապատող պարիսպներից դուրս, գիշերները բերդի ուղղությամբ փորում են ստորերկրյա ճանապարհ, հողը խորջիններով դուրս են տանում և թափում ծովը: Այս աշխատանքը տևում է մի քանի ամիս, բայց հայտնաբերվում է բանտապահի կողմից, երբ ստորգետնյա ճանապարհն արդեն հասել էր մինչև բանտի բակը, բանտից էլ

Վարդգեսին մատնողը վանեցի Սեմերջյան Խաչիկը¹⁴ էր: Որոշվում է նրան տեռորի ենթարկել, որը հանձնարարվում է աժդահա և անվախ մի մարդու՝ Սուրուջի Դավթին¹⁵: Վերջինս երկար հետապնդում է Սեմերջյան Խաչիկին, մի օր բռնացնում է Այգեստանի Աղվեսաձոր կոչված մի խուլ փողոցում, կանգնեցնում է ու սպանում, ապա կռանում է, բուռը լցնում սպանվածի արյունը ու խմում¹⁶:

Սուրուջի դեպքը¹⁷

1904 թվի ամռանը կայծակի արագությամբ լուր է տարածվում, թե արդեն սկսվել է կամ պիտի սկսվի հայկական նոր կոտորած: Այդ ժամանակ ամեն ոք զբաղված էր իր առօրյա խաղաղ աշխատանքով: Մի ակնթարթում մոռացվում է ամեն ինչ, և Վանի հայ խաղաղ ազգաբնակչությունը գտնում է իր փրկության միակ ելքը՝ ապավինել ռուսական, ֆրանսիական, գերմանական և ամերիկյան հյուպատոսարաններին, որոնց վրա ծածանվում էին նրանց դրոշակները: Տները, այգիները, տնտեսությունը թողնելով անտեր-անտիրական՝ ազգաբնակչությունը, ահ ու դողով բռնված, ուղղվում է դեպի վերոհիշյալ հյուպատոսարանների տարածքները: Դեպքը, իրոք, տեղի էր ունեցել, թուրք զինված ոստիկանները կազմ ու պատրաստ հայ երիտասարդների տեղ էին ընդունել փողոցներով անցնող անմեղ մարդկանց, կրակ էին բացել, սպանվել էր փողոցով անցնող Մուրո ամուսնով միանգամայն անմեղ մի խեղճ մարդ: Դրանից հետո տեսնելով, որ կազմակերպված պրովոկացիային պատասխանող չկա, ոստիկանները հեռանում են դեպի իրենց գորանոցները, իսկ վերոհիշյալ հյուպատոսարաններում ապաստան գտածները վերադառնում են իրենց լքված տնտեսությունները և նորից շարունակում խաղաղ կյանքը:

Վերոհիշյալ դեպքը վանեցիների հիշողության մեջ մնացել է որպես Սուրուջի դեպք:

Վարդգեսի բանտախցի տակը»: Այդ մասին տե՛ս Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 266: **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. Ա, Պոսքըն, 1950, էջ 338-346:

14 Մատինչ Սեմերջյան Խաչիկի մասին տե՛ս «Դրօշակ», 1903, № 4, էջ 53-54: Մեկ այլ աղբյուրում մատնիչը Սեմերջյան Հովհաննեսն է (**Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. Ա, էջ 148):

15 Ըստ հուշագրի՝ «Դավիթը մի քանի տարի փախստական դառնալուց հետո մեկնում է Կովկաս, հաստատվում Բաքվում, ուր մի խումբ ընկերների հետ միասին դառնում է խիստ վտանգավոր թաղամասերից մեկի գիշերային պահակախմբի ղեկավարը: Էլ ո՞վ կհամարձակվեր երևալ Դավիթին վստահված տերիտորիան»: Բնիկ արծկեցի Մուրուճի կամ Ծուռ Դավիթի (Դավիթ Թումանյան) մասին մանրամասն տե՛ս «Դրօշակ», 1912, № 6, էջ 149-152:

16 Մատնիչը սպանվել է 1903 թ. փետրվարի 2/15-ին՝ երեկոյան ժամը 11-ին («Դրօշակ», 1903, № 4, էջ 64): Մատնիչին սպանելու մասին տե՛ս նաև **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. Ա, Պոսքըն, 1950, էջ 148:

17 Այս դիպվածի մասին մանրամասն տե՛ս **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. Ա, Պոսքըն, 1950, էջ 332-333: Հիշատակում է նաև Արամ Մանուկյանը (Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, էջ 166):

Ժառանգավորաց դպրոցում

Վան քաղաքի արևելյան կողմում՝ մոտավորապես մեկուկեսից-երկու ժամ հեռավորության վրա է գտնվում Վարագա լեռը, որի լայնահիստ ու ծաղկազարդ ընդարձակ լանջին կառուցված է Վասպուրականի հռչակավոր Վարագավանքը:

Խրիմյան Հայրիկն այս վանքում հիմնել էր Ժառանգավորաց դպրոցը, ուր սովորելու համար Վասպուրականի գանազան գյուղերից, ինչպես նաև Վան քաղաքից ընդունվում էին աղքատ, որք, ուսումնածարավ պատանիներ:

Վարագավանքն ուներ հարուստ տնտեսություն, ոչխարների մի քանի հոտեր, կովեր, եզներ, գոմեշներ, ձիեր, արգավանդ և ընդարձակ արոտավայրեր, արտեր: Դրանցից ստացված եկամուտներն այնքան շատ էին, որ ոչ միայն բավարարում էին վանքի միաբանությանը, բազմամարդ մշակներին ու ծառաներին, այլ Ժառանգավորաց դպրոցի ուսուցչական կազմին ու գիշերօթիկ որբ աշակերտներին, որոնց թիվը երբեմն հասնում էր մինչև հարյուրի: Աշակերտների սննդի ու հագուստի հոգսն ամբողջովին ընկած էր վանքի հարուստ տնտեսության վրա: Նույն վանքի եկամուտներից վճարվում էր նաև երբեմն մինչև տասը հոգու հասնող ուսուցչական կազմի աշխատավարձը, ինչպես նաև նրանք վանքից ձրի ստանում էին սնունդն ու բնակարանը, վառելիքն ու լուսավորությունը:

Ժառանգավորաց դպրոցի աշակերտությունը պարտավոր էր ամբողջ կազմով, առանց տարիքի խտրության, ամեն օր դեռ լույսը չբացված և երեկոյան ներկա լինել և մասնակցել եկեղեցական ժամերգության արարողություններին:

Գիշերապահ Հաջի աղան, դեռ լույսը չբացված, արթնանում էր, հագնվում, իջնում էր իր փայտե մահճակալից, որ գտնվում էր աշակերտների հանրակացարանում՝ նրանց մահճակալների կողքին, երկար-երկար ճիպոտը ձեռքին մոտենում յուրաքանչյուր աշակերտի մահճակալին, խփում և միաժամանակ բարձր ձայնով կանչում էր. «Դե՛հ, վեր կացեք, արդեն լուսանում է, և եկեղեցի գնալու և աղոթելու ժամանակն է»:

Այս գործողությունը նա կրկնում էր այնքան, մինչև որ բոլոր աշակերտները վեր էին կենում, լվացվում դպրոցի բակում գտնվող Փոս աղբյուրում կամ վանքի մեծ բակի Չոխի աղբյուրում, ապա հագնվում, շաք էին կանգնում և շարժվում դեպի եկեղեցի, որը դպրոցի շենքից հեռու էր ընդամենը 25-30 քայլ, և մեծ երկյուղածությամբ ներս մտնում: Այդ բոլորից հետո Հաջի աղան վերջնական ստուգման էր ենթարկում աշակերտներին հատկացված երկու ընդարձակ հանրակացարաններում երկշաք դասավորված բոլոր մահճակալները և, երբ համոզվում էր, որ ոչ մի աշակերտ չի մնացել բոլորն էլ գնացել են եկեղեցի, դրանից հետո պառկում էր իր անկողնում ու քնում:



ՎԱՐՎԱԳՎԱԶԻ. առջևում ժառանգավորաց դպրոցի սաները

Եկեղեցուն հասակավոր աշակերտները հերթով մասնակցում էին հոգևոր արարողություններին, իսկ մնացածները պարտավոր էին ըստ պահանջի ծնկի իջնել հարթ քարերից շինված հատակին, աղոթել անվերջ, մրմնջալ հոգևոր զանազան երգեր՝ առանց հասկանալու դրանց իմաստը, հենց այնպես, մեխանիկորեն, անգիր, ինչպես պահանջում էր հոգևոր դասը:

Վանքի մռայլ ու տխուր միջավայրում աղոթքի կանչված աշակերտներից շատ-շատերը հաճախ կանգնած կամ ծնկաչոք վիճակում քնած էին լինում: Երբ սթափվում էին, սարսափով նայում էին, թե արդյոք միաբաններից կամ հոգևոր դասից ոչ ոք չնկատե՞ց իրենց կատարած ծանր հանցանքն աստծո տաճարում...

Եվ այդպես ամեն օր մինչև դպրոցի դասընթացն ավարտելը և կյանք մտնելը:

Ժառանգավորաց որբանոց-դպրոցում սովորել են 1903 թվի գարնանից սկսած մինչև 1907 թվի հունիս ամիսը՝ ենթարկվելով գոյություն ունեցող ռեժիմին:

1905 թվի աշնանից սկսած՝ աշակերտների դրությունը մի քիչ բարելավվեց: Այդ տարին Ժառանգավորաց դպրոցի տեսուչ հրավիրվեց Վանի Արարուց դպրոցի պաշտոնավարող, Էջմիածնի Գևորգյան ճեմարանավարտ վանեցի Արտակ Դարբինյանը¹⁸, որը մի շարք բարեփոխություններ մտցրեց դպրո-


ցում, կազմեց ուսումնական նոր ծրագիր, որով դեկավարվում էր դասատուական կազմը: Այդ ծրագիրը համընկնում էր Կովկասի հայկական միջնակարգ դպրոցների՝ Գևորգյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի ծրագրերին, այնպես որ Վարագավանքի Ժառանգավորաց դպրոցի յոթերորդ դասարանն ավարտողներն առանց դժվարության կարող էին քննությամբ ընդունվել հիշյալ դպրոցների չորրորդ դասարան:

Վարագավանքը

Վարագավանքը շրջապատված էր բարձրաբերձ պարիսպներով և ուներ չորս դուռ: Մեկը տանում էր դեպի Ժառանգավորաց դպրոց, մյուսն ընդարձակ դարպաս էր, որով անմիջապես կարելի էր մուտք գործել վանքի ընդարձակ բակը, որի վերջում՝ ճիշտ արևելյան կողմը, կառուցված էր բուն եկեղեցին և իր գավիթը: Նախքան եկեղեցի մտնելը պետք էր անցնել գավթով, որը դուռ չուներ, հենված էր երկու հսկա, մեկական բազալտ քարերից շինված, մինչև տաճարի կտուրը հասնող սյուների վրա:

վարտելուց հետո երկու տարի ուսուցչություն է արել Սալմաստում: 1904 թ. Ծերուկ ստորագրությամբ «Մուրճ»-ում հրատարակել է «Վասպուրական նահանգը ներկայումս» հոդվածաշարը: 1905 թ. նշանակվել է Վարագավանքի Ժառանգավորաց դպրոցի տեսուչ: 1915 թ. մասնակցել է Վանի ինքնապաշտպանությանը: Նշանակվել է Վանի նահանգային վարչության ընդհանուր քարտուղար: Խմբագրել է «Վան-Տոսպ», «Հայաստանի ձայն», «Ժողովուրդի ձայն» թերթերը: 1947 թ. հեղինակել է «Հայ ազատագրական շարժման օրերեն» գիրքը: Վախճանվել է 1950 թ. Փառիզում (մանրամասն տե՛ս **Տէր-Մկրտիչեան Ե.**, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պոսթոն, 1967, էջ 537-541: Ով ով է. հայեր, հ. 1, Երևան, 2005, էջ 344):

¹⁸ Արտակ Դարբինյանը (հեղափոխական անունը՝ Նորգեղյի Սախո) ծնվել է 1878 թ. Վանում: Հայտնի է որպես մանկավարժ, լրագրող, հրապարակախոս, ազգային-ազատագրական շարժման գործիչ: Ուսանել է Արարքի Սբ. Թարգմանչաց դպրոցում, 1898 թ. ընդունվել է Գևորգյան ճեմարան, որն ա-



ՎԱՐԱԳՎԱՆՔ

Երրորդ դռնից ելումուտ էին անում վանքի մշակները: Այստեղից դիտողի առջև բացվում էր համեմատաբար մի փոքր բակ, որտեղ շարունակ վառվում էին թոնրատան մի քանի թոնիրներ, տնտեսուհիները պղնձյա կաթսաների մեջ եփում էին մեծ քանակությամբ ստացված կաթը, մածուն դարձնում, խնոցի հարում և ստանում հիանալի կարագ: Այս բակի ձախակողմյան մասում էր ախոռը, ուր խնամքով պահվում էին վանքի ձիերը:

Վանքի եկեղեցու ձախակողմում գործում էր Խրիմյան Հայրիկի հիմնած հողե հատակով մի ընդարձակ սենյակ, ուր տեղավորված է եղել տպարանը¹⁹: Այստեղ ժամանակին հրատարակվել է «Արծվի Վասպուրական» ամսագիրը, ինչպես նաև գեղարվեստական և զանազան բովանդակության մի շարք գրքեր: Տպարանից վաղուց անհետացել էր տպագրական մեքենան, բայց գետնի վրա, հողի ու փոշու մեջ, այս ու այն կողմ թափված էին կապարից ձուլված տառեր, որոնցից մենք՝ աշակերտներս, հավաքում էինք մեր անուն-ազգանուններին համապատասխան տառերը, իրար միացնելով՝ ստանում յուրաքանչյուրս իր համար անվանական կնիք: Այդ նույն տպարանի պատերի տակ, այս ու

այն կողմում, հողի ու փոշու մեջ թափված էին տպագրված զանազան գրքերի ու ամսագրի առանձին թերթիկներ: Մենք ուշադրությամբ ու մեծ հաճույքով էինք կարդում և խոր ավստսանք, սրտի դառն կսկիծ զգում այդ կուլտուրական օջախի ոչնչացման համար, որը Վասպուրական աշխարհում ժամանակին եղել է լույսի մեծ փարոս: Մինչև այսօր էլ ես հիշում եմ վանքի տպարանում իմ գործած տպագիր մի փոքր գրքույկը, ուր գետեղված էին այդ նույն՝ Ժառանգավորաց դպրոցում ուսում առած և հետագայում նույն տեղում որպես ուսուցիչ պաշտոնավարած իմ հոր՝ Վարժապետ Մովսեսի գրած մի քանի բանաստեղծությունները և մի ընդարձակ պոեմ՝ քուրդ ավազակախմբի վայրագությունների մասին Վասպուրականի անգեմ ու աշխատավոր գյուղացիների նկատմամբ: Ես մեծ պարծանքով ու հպարտությամբ էի ցույց տալիս իմ հոր ստեղծագործությունները դասընկերներին²⁰:

Իմ՝ Վարագում եղած ժամանակ վանքի վանահայր, ծերունագարդ ծայրագույն վարդապետ Վրթանես Տեկանցը²¹ հաճախ էր ինձ հրավիրում իր մոտ, հյուրասիրում և ասում. «Եթե չլիներ հայրդ՝

19 1857 թ. Սկրտիչ Խրիմյանը Վարագավանքում հիմնում է տպարան, որն իր գործունեությունը սկսում է 1858 թ. հունվարին: Հրատարակվում էին «Արծուի Վասպուրական» թերթը, դասագրքեր և ընթերցանության գրքեր: 1892 թ. թուրքական կառավարությունը փակում է տպարանը: Վանի կուսակալ Բահիի փաշայի կարգադրությամբ բռնությամբ այն փոխադրվում է Վան՝ սկսելով թուրքերեն «Վան» լրագրի հրատարակությունը («Տարագ», 1910, № 3, էջ 36: **Վարդ.**, Մի պտոյտ Վանի շրջակայքում, «Արաքս», 1898, Ա, էջ 62):

20 Հոր՝ Մովսես վարժապետի բանաստեղծությունների տպագիր գրքույկի հետ կապված այս դրվագը տես նաև **Սեդինե**, Իմ երկրային ուղին, Երևան, 2005, էջ 345, ծմբ. 7:

21 Վարագավանքի միաբաններից և վերջին վանահայր Վրթանես ծայրագույն վարդապետ Տեկանցը (Տեր-Սարգսյան) Վանի Տեկանց հայտնի գերդաստանից էր: Ծնվել է 1835 թ. (՞) Վան քաղաքում: Նահատակվել է 1915 թ. և ամփոփվել վանքում (նրա եղբայրները՝ Երեմիա արքեպիսկոպոսը և Արիստակես եպիսկոպոսը ևս թաղված են այս վանքում):



«Վարազայ սաները այգեգործական աշխատանքն յետոյ. 1912»

Մովսես Վարժապետը, վանքը հիմնահատակ կկործանվեր, և մեզանից շատերն էլ կնահատակվեին: Մենք պարտական ենք հորդ: Թող անմահ լինի նրա անունը»²²:

Վարազավանքի տպարանին կից էր փոքր տաճարածոթյանը, պարսպապատ այգին, որ կոչվում էր Դրախտ: Իրոք, դրախտ էր սա: Դեպի այգին տանող դուռը շարունակ փակ էր, գտնվում էր վանքի տնտես Նորայրի տրամադրության տակ: Այնտեղ կային տանձի, խնձորի, ծիրանի, սալորի և ընկույզի ծառեր: Կային նաև մի քանի թուփեր խաղողի բերքառատ վազեր: Այգին մշակում էր Նորայրը և ստացված ամբողջ բերքը հատկացնում էր հոգևոր դասին:

Դրախտին կից էր վանքի չորս դռներից վերջինը, որը համեմատաբար փոքր էր և տանում էր դեպի բլրի լանջին փոված մեծ այգին: Այստեղ կային մի քանի տասնյակ, քաղցրակորիզ ծիրանի հսկայական ծառեր, որոնցից մեկը կոչվում էր «Հայրիկի ծառ»: Այդ ծառը ժամանակին տնկել է ու խնամել վանքի վանահայր Խրիմյան Հայրիկը: Այս այգուն կային նաև հսկայական մեծությամբ տասնյակ ընկուզենիներ, ինչպես նաև խնձորի և սալորի բազմաթիվ ծառեր: Այգուն կից էր խաղողի ընդարձակ այգին, որն անմշակության պատճառով չորացել էր կամ չորանում էր առանց բերք տալու: Այգին պարիսպներ չուներ: Նա գտնվում էր մեր՝ աշակերտների տրամադրության տակ: Դրանից օգտվում էին միայն աշակերտները, առանձնապես ամառային արձակուրդներին վանքում մնացող 20-30 ծնողա-

գուրկ որք տղաները, որոնցից յուրաքանչյուրն իր համար հավաքած ծիրանը փռում էր դպրոցական շենքի հարթ կտուրին, չորացնում, չիր էր դարձնում, իսկ կորիզները դարձյալ չորացնում էին և ձմռան համար պաշար հավաքում: Այդ նույն տղաները ընկույզի ծառերից դեռ կիսահաս վիճակում քաղում կամ երկար ձողերով ցած էին թափում հարյուրավոր ընկույզներ, ով ինչքան կարող էր: Պահում էին ծառերի փչակում ու խոնավ հողում, սպասում, որ ընկույզը շրջապատող արտաքին կեղևը փտի, որից հետո դուրս էին հանում միայն իրենց հայտնի թաքստոցներից, մաքրում և չորացնելով լցնում տոպրակները՝ ձմռանն ուտելու համար:

Օգոստոսի վերջերին արձակուրդից վերադարձածներս այգու ծառերը գտնում էինք միանգամայն մերկացած իրենց հարուստ բերքից, սակայն ծիրանի կորիզ կամ ընկույզ հավաքած ընկերների հետ վեզ էինք խաղում և մեծ մասամբ հաջողության էինք հասնում խաղի ընթացքում: Մեր պաշարը՝ մեծ քանակությամբ կորիզ և ընկույզ, երբեմն գերազանցում էր պարտվողների մոտ մնացածից:

Մանկական չարաճիություններ

Դպրոցի աշակերտներս զանազան առիթներով թաքուն մտնում էինք ախոռ, պոկում ձիերի պոչերի մազերը՝ ձմեռը կաքավ որսալու նպատակով ձար (թակարդ) պատրաստելու համար: Չարը պատրաստում էինք հետևյալ կերպ. վերցնում էինք կանեփի բարակ, դիմացկուն թելեր, երկու ծայրերից ցցեր ամրացնում, հետո ձիու պոչի մազերն օղակներ դարձնելով՝ այս թելերի վրա աչ ու ձախ կողմե-

²² Վարազավանքի հետ կապված այս դրվագը տե՛ս **Սերինն**, Իմ երկրային ուղին, Երևան, 2005, էջ 343-344, ծնթ. 5:

րից իրար մտախի ամուր կապում, ցցերը պինդ խրում աղբյուրների կամ սառույցներով ու ձյուններով ծածկված առուների եզերքներին, կանաչներին մոտ տեղերում, հարողով աննկատ ծածկում և ապա դրա վրա ցորեն փռում: Դրանով արդեն ձարը պատրաստ էր, և մենք սպասում էինք առատ որսին: Ձմռանը լեռն ու դաշտը ծածկվում էին ձյունով, բայց կանաչը առուների կամ աղբյուրների եզերքներին մշտապես հոսող ջրերի շնորհիվ տեղ-տեղ բաց էր մնում: Կաքավի երամները, թռչելով օդում, հեռվից նկատում էին այդ կանաչները, խմբերով իջնում էին ցած, մոտենում մեր լարած ձարերին, սկսում ուտել ցորենը և քուջուջ անել հարող: Թեի վրա ամրացված օղակների մեջ էին մտնում կաքավների գլուխները, ոտքերը: Մրանք թայտալով աշխատում էին ազատվել օղակներից, բայց վերջիններս ավելի էին պրկվում և բռնում միանգամից 5-6 թռչուն՝ երբեմն դեռ կենդանի վիճակում, երբեմն էլ խեղդված կամ արյունաքամ: Կաքավի մնացած երանը սարսափահար թռչում էր և այլ ձարի մոտ իջնում: Կաքավի որսորդներս, կանգնած դպրոցի շենքի հարթ կտուրին կամ բլրի բարձր տեղերում, հեռվից դիտում էինք որսորդության ամբողջ ընթացքը, շտապ վազում ամեն մեկս դեպի իր համար սարած ձարը, բռնում որսը և տեղավորում վանքի ընդարձակ սենյակներից մեկում: Եվ երբ արդեն մեծ քանակությամբ ողջ-ողջ մնացած կաքավ էինք որսած լինում, խոհարար վարպետ Մանուկ աղան դրանցից ամբողջ աշակերտության և ուսուցչական կազմի համար շատ համեղ ձավարով քաշովի էր պատրաստում: Չէր մոռանում և իր սրբազան պարտքն էր համարում դրանից բաժին հանել նաև վանքի հոգևոր դասին:

Մի անգամ արձակուրդից նոր էի վերադարձել: Տանն ինձ տվել էին թուրքական հինգ դուրուշ (40 կոպեկ): Տղաներից մեկից գնեցի տասը կոպեկի ընկույզ և սկսեցի վեզ խաղալ Եղիշե անունով որբերից մեկի հետ: Խաղում էինք այսպես. հարթ գետնի վրա կավիճով կլոր գիծ էինք քաշում, գծի մեջտեղը իրար մոտ շարում ընկույզ և գծից բավական հեռավորության վրա կանգնած՝ նշան էինք բռնում և վեզով խփում ընկույզներին: Եթե դրանցից մեկն ու մեկը շարքից դուրս էր թռչում և գծից դուրս գլորվում, ապա խփողը տեր էր դառնում այդ ընկույզին, իսկ եթե հարվածը վրիպում էր, ապա խփելու հերթը տրվում էր հակառակորդին: Եվ այսպես շարունակ: Մեծ մասամբ հաջող էի նշան բռնում: Այդ օրը ես Եղիշեից մեծ քանակությամբ ընկույզ տարա: Դրանից հետո Եղիշեն, օձիքս պինդ բռնած, պահանջում էր իմ տարած ընկույզները վերադարձնել: Վեճը վերածվեց իսկական կռվի, որը գնալով բորբոքվում էր: Նա ինձ էր խփում, ես՝ նրան: Գործի դրվեցին մեր գլուխները, բռունցքները, ոտքերը և ծնկները: Ինձ հաջողվեց գետին տապալել հակառակորդիս և վրան չոքել: Եղիշեին օգնության հասավ Էրզրումի

մահանգի Քղի գյուղաքաղաքից Վարազա որբանոց ընդունված աժոհա մի տղա՝ Հովհաննեսը²³, որի աջ ականջի բլթակը չկար: Նա աշակերտների գլխին իսկական չարիք էր: Վա՛յ նրան, ով չէր ենթարկվում քղեցի Հովհաննեսին: Վերջինս իրեն ենթակա աշակերտների միջոցով պատուհասում էր այդպիսիներին: Ահա, երբ ես ու Եղիշեն պայքարում էինք, վրա հասավ Հովհաննեսը և առաջարկեց ինձ վերադարձնել իմ տարած ընկույզները: Բնական է, ես հրաժարվեցի կատարել Հովհաննեսի պահանջը: Այդ ժամանակ նա մի ակնթարթում Եղիշեի վրայից ինձ ցած գլորեց, գրպանից հանեց հատկապես կորիզ ջարդելու համար քարից պատրաստված սրածայր և երկարավուն ինքնաշեն գործիքը, հրամայեց դրանով խփել ինձ: Եղիշեն ուժգին հարվածեց ճակատիս, վնասված տեղից ուժեղ արյունահոսություն սկսեց: Արյունոտվեցին դեմքս, շորերս: Սարսափահար եղան Հովհաննեսն ու Եղիշեն և ականատես աշակերտները: Տղաներն իսկույն ճարեցին լաթի մի կտոր, այրեցին, մուրը դրեցին վերքիս վրա և թաշկինակով կապեցին: Հովհաննեսն ինձ ասաց, որ եթե դպրոցի տեսուչ մշեցի Տիգրան էֆենդին այդ վիճակում ինձ տեսնի և հարցուփորձ անի, ես նրան պետք է պատասխանեմ, որ այգում վազելու ժամանակ ոտքս քարին կպավ, վայր ընկա և ճակատս կտորեցի: Եվ երբ ես արդեն հասել էի դեպի դպրոցի բակ տանող դռանը, հեռվից եկավ Տիգրան էֆենդին: Տեսնելով ինձ արյունվա վիճակում՝ մոտեցավ և հետաքրքրվեց, թե ի՞նչ է պատահել: Ես նրան պատմեցի Հովհաննեսի ասածը, որն էլ հաստատեցին ինձ ուղեկցող աշակերտները: Տիգրան էֆենդին մի քանի խրատ տվեց և ավելացրեց, որ այսուհետև ընդհանրապես զգույշ լինենք: Վտանգն անցած էր, ազատվել էինք մեր տեսչի խիստ բարկությունից և սպասվելիք դաժան պատժից: Դրանից հետո աշակերտներից մի քանիսը, ինչպես նաև Հովհաննեսն ինձ առաջարկեցին ծիրանի չիր, ընկույզ և կորիզ, որ ես իմ կեղծ ցուցմունքով նրանց փրկեցի: Եղիշեն լացակամած մոտեցավ ինձ, առաջարկեց խաղի մեջ ոչ միայն իմ՝ տարած, այլև իր տոպրակի մեջ մնացած ընկույզները ևս: Ես հրաժարվեցի և բավարարվեցի միայն իմ արյան գնով ձեռք բերած ընկույզներով:

23 Հուշագիրը Հովհաննեսի և նրա հետագա ճակատագրի մասին գրում է. «Հովհաննեսը մեզ պատմել էր, որ իր մայրը տասնմեկ երեխա է ունեցել, բայց ոչ մեկը կենդանի չի մնացել: Եվ երբ ծնել է ինքը, քղեցի պառավ կանայք խորհուրդ են տվել մորը դեռ խանձարուրի մեջ փաթաթված երեխայի աջ ականջի բլթակը կտրել և ուտել, որից հետո նա կապի: Մայրն այդպես էլ անում է: Հովհաննեսն ապրում է, մեծանում, բայց մահանում են ծնողները, որբացած երեխային ուղարկում են Վարագ: Տարիներ անց լսեցի, որ Հովհաննեսը նույնպես ավարտել է դպրոցը, անցել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, այնտեղ մտել Հնչակյան կուսակցության շարքերը, գրավել պատասխանատու պաշտոն, զբաղվել քարոզչությամբ: Այնուհետև դարձել է դրամաշորթ, տեռորի է ենթարկվել և սպանվել հերթական դրամաշորթության անհաջողության հետևանքով»:

Դպրոցի տեսուչ Տիգրան Էֆենդին մի քիչ խմող էր և խիստ ու դաժան մարդ: Մենք բոլորս էլ վախենում էինք նրանից և ամեն կերպ աշխատում էինք առիթ չտալ, որ նա բարկանա մեզ վրա ու պատժի:

Մակայն ինձ համար, անկախ իմ կամքից, մի օր եկավ այդ առիթը:

Մեր դպրոցի հայոց լեզվի դասատուն էր նույն դպրոցավարտ Ա. Հ. (Արսեն Հացագործյան)²⁴: Նա դասարանում կարդաց ու բացատրեց դասագրքի բավական խրթին և դժվարըմբռնելի մի հոդված, պատվիրեց լավ ուսումնասիրել և պատրաստված ներկայանալ հաջերդ դասին: Մեզանից ոչ մեկը չէր պատրաստվել: Դասատուն կանչել տվեց Տիգրան Էֆենդուն: Վերջինս մտավ դասարան, շարքի կանգնեցրեց դասարանի ամբողջ աշակերտությանը՝ թվով յոթ հոգի, խրատեց, որ անհրաժեշտ է լրջությամբ վերաբերվել դասերին, հետո հարկադրեց դասատուին մի անգամ էլ կարդալ ու բացատրել հանձնարարված հոդվածը, որ աշակերտները լավ հասկանան և հաջորդ դասին պատրաստված ներկայանան: Հաջորդ օրը դարձյալ ամբողջ դասարանն անպատրաստ էր: Դասատուն նորից կանչել տվեց տեսչին: Վերջինս եկավ, աշակերտներին ըստ հասակի կանգնեցրեց և սկսեց հարցաքննել դասը չիմանալու պատճառների մասին: Ամեն մեկն սկսեց իրեն արդարացնել: Իսկ երբ հերթը հասավ իմ դասընկերներից Գնելին, վերջինս պատասխանեց. «Կրցածիս չափ սովորած եմ»:

Տիգրան Էֆենդու բարկությունն իջավ, նա մեղմացավ և դառնալով մեզ ասաց, որ Գնելի պատճառաբանությունն արդարացի չէ. բոլորս էլ ընդունակ տղաներ ենք, կարող ենք լավ սովորել և շատ լավ սովորել: Այս անգամ էլ մեզ ներում է, միայն թե հաջորդ դասին անպատրաստ չներկայանանք:

Հաջորդ դասին մենք դարձյալ անպատրաստ էինք, կարդում էինք, կարդում, բայց ոչինչ չէինք հասկանում: Դասատուն երրորդ անգամ կանչել տվեց Տիգրան Էֆենդուն: Վերջինս եկավ, շարքով կանգնեցրեց մեզ և սկսեց քայլ առ քայլ մոտենալ: Վախից բոլորս դողում էինք: Առաջին հարցաքննվողը ես եղա. Գնելի նման պատասխանեցի.

–Տիգրան Էֆենդի, կրցածիս չափ սորված եմ...

Կարծում էի, որ իմ պատասխանը կբավարարի տեսչին, և նա ինձ հետ մեղմ կվարվի: Բայց դեռ պատասխանս չվերջացրած՝ երեսիս վրա գզացի ապտակի ուժգին մի հարված, աչքերիցս կայծեր դուրս ցայտեցին: Ինձ թվում է, որ մինչև հիմա էլ այդ կայծերը դեռ շարունակվում են դուրս ցայտել: Այդ դեռ քիչ էր: Տիգրան Էֆենդին կանչել տվեց այդ օր-

վա հերթապահին, որի անունը նույնպես Տիգրան էր, կարգադրեց նրան ինձ տանել իր սենյակ և ծունկի չոքեցնել թրծված, բայց ժամանակի ընթացքում ջարդուփշուր եղած աղյուսով պատած հատակին, հետո էլ վերցնել մի մեծ «գավազան»: Հերթապահ Տիգրանի հետ ես կովել էի և չէի խոսում: Մա առիթ համարեց ինձնից վրեժխնդիր լինելու: Մինչև ես, հատակին չոքած, անհամբեր սպասում էի տեսչի գալուն, հերթապահ Տիգրանը դուրս գնաց ու ձեռքին բռնած բերեց իսկապես մի մեծ գավազան, կանգնեց ինձ մոտ և չարախնդությամբ ասաց.

–Ա՛յ, հիմա կտեսնեն, թե քո գլխին ի՞նչ է բերելու տեսուչը: Է՛յ, չոքած տեղից շարժվես, թե չէ տեսնու՞մ ես այս գավազանը, դրանով գլուխդ ջարդուփշուր կանեն: Այսօր ես եմ քո հոգեառը...

Տասնհինգ րոպե անց եկավ Տիգրան Էֆենդին: Չոքած, հերթապահի հսկողության տակ վախից դողում էի, սկսեցի ավելի դողալ, ատամներս իրար էին զարկվում, ծնկներս գետնին էի խփում, աչքերս փակվում էին, ամեն րոպե սպասում էի, որ տեսուչը կսկսի կա՛մ գավազանով ինձ հարվածել, կա՛մ ուժգին ապտակներ տեղալ երեսիս: Մակայն այդպես չեղավ: Նա կարգադրեց վեր կենալ, գնալ, բայց այլևս անպատրաստ չներկայանալ դասի: Դրանից հետո ոչ միայն ես, այլև իմ բոլոր դասընկերները ոչ մի օր անպատրաստ չէինք ներկայանում դասերին:

«Ո՛վ ոչ լսիցե ունկամբ, լսիցե թիկամբ»: Այսինքն՝ ով ականջով չի լսի, նա կլսի թիկունքին իջած հարվածով, ծեծով»:

Ամառային արոտավայրերում

Ամառվա ամիսներին Վարազա ոչխարները տնտեսուհիների հետ բարձրանում էին գոմաները՝ լեռան բարձրադիր ամառանոցները, որոնք մինչև խորին աշուն ծածկված էին լինում հյութեղ, ծաղկաշատ կանաչով:

Չոմաներ գնում էինք վանքից դուրս, դեպի ձորը տանող նեղ շավղով, որը ծաղկում էր դեպի հյուսիս, դարձյալ լեռան ստորոտը, մեկուկեսից-երկու ժամ հեռավորության վրա: Այստեղից մեր առաջ բացվում էր Հայոց Ձորի ընդարձակ հարթավայրը՝ իր մոտիկ և հեռավոր գյուղերով: Այդ ամբողջ տարածությունը՝ մինչև Հայոց Ձորի սահմանները, վանքի սեփականությունն էր: Վանքի հետ առնչություն չունեցող ոչ մի կողմնակի անձնավորություն իրավունք չունեցրեց օգտվելու այդ ընդարձակ արոտավայրերից, որոնց պահպանությունը հանձնված էր մի քանի հավատարիմ, զինված քրդերի: Չէ՞ որ հայը զրկված էր գենը կրելու իրավունքից:

Այդ քրդերին ու հովիվներին օգնում էին մի քանի ահռելի գելլսեղդ շներ, որոնք աշալուրջ հսկում ու պահպանում էին գայլերից:

Այստեղ վրաններ էին խփում, օրական երկու անգամ ոչխարը արոտից բերում, կթում էին և կա-

²⁴ Բանաստեղծ, մանկավարժ Արսեն Հացագործյանը ծնվել է 1882 թ. Վանում: Դասավանդել է Վանի և Կովկասի դպրոցներում: Թղթակցել է Կ. Պոլսի և Կովկասի թերթերին: Վախճանվել է 1970-ական թթ. Երևանում (տես Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւիցամեակի առթիւ, Վենետիկ, 1930, էջ 284):

տարում իրենց առօրյա աշխատանքները, կաթը մշակում, յուղ ու պանիր պատրաստում: Տնտեսուհիները բարեխղճորեն ամեն օր վանք էին ուղարկում կաթ ու մածուն, յուղ ու կարագ, ժածիկ ու շոռ: Երբեմն էլ գլխավորապես կիրակի օրերն ամբողջ կազմով մենք՝ աշակերտներս, ուսուցիչների հետ միասին գոմաներ էինք գնում, ամբողջ օրն այնտեղ անցկացնում մեր ժամանակը: Վանքի տնտեսապետ պարոն Պետրոսն²⁵ այդպիսի օրերին կարգադրում էր մեզ լավ հյուրասիրել: Մորթել էր տալիս մեկ կամ երկու գեր ոչխար, մեծ կարասների մեջ պատրաստում էին բուլլամա, իսկ երբ ճաշը պատրաստ էր լինում, մենք իրար կողքի, դեմ առ դեմ, երկշարք ծալապատիկ նստում էինք փափուկ արտաների վրա և բնության ծոցում, բացօթյա վայելում անմահական բուլլաման: Համից չէինք կշտանում, տեղից վեր էինք կենում, կարծես ոչինչ չէինք կերել: Նույն գոմաների մոտով գլզլալով հոսում էր սարից վայր իջնող և աստիճանաբար մեծ առվակի վերածված սառնորակ ջուրը, որը խմում էինք մեծ ախորժակով և կերածներս էլ շատ շուտ մարում:

Ճաշից առաջ տնտեսուհիները մեզ հյուրասիրում էին լավաշի վերածված կաթի չոր սերով, յուրաքանչյուրիս առաջ այդպիսի մեկ-մեկ լավաշ էին դնում, այնուհետև բերում էին մածունը՝ առուների և աղբյուրից հոսող ջրի մեջ սառեցրած վիճակում: Մենք ազահաբար ուտում էինք՝ սերի լավաշը բրդուջ արած: Ուտում էինք, վեր կենում և զբաղվում մեր սովորական խաղերով: Մեծ մասամբ գերադասում էինք լախտի:

Այսպես էինք ապրում Վարագում, ուր չորս տարվա ընթացքում ես ոչ մի օր չհիվանդացա, անգամ գլխի թեթև ցավ չզգացի, ինչպես նաև բոլոր որբերը: Երևի դա էր պատճառը, որ վանքը չուներ իր սեփական բժիշկը: Այդպիսին չէր էլ կարող ունենալ, քանի որ այդ ժամանակ Վանում կար մեկ-երկու բժիշկ, այն էլ՝ ամերիկյան միսիոներներից, որոնք սպասարկում էին միայն իրենց որբանոցներում

ընդգրկած որբերին: Բնությունը, մաքուր օդն ու ջուրն էին մեր բժիշկը, ինչպես նաև մեր ամենօրյա խաղերը, որոնք կազմակերպում էինք տարվա բոլոր եղանակներին: Մեր ոտքերին հասարակ չատեր էին, իսկ գլուխներս՝ բաց: Ո՛չ գլխարկ ունեինք, ո՛չ վերարկու, ասենք դրանց կարիքն էլ չէինք գոտմ:

Վարագավանքի մեր զբոսավայրերը

Վարագա մեր սիրելի զբոսավայրերից էր Գյալին՝ Շուշանց սարի հետևում և Վարագա լեռան միջև ընկած բավական ընդարձակ տափարակ տաքածությունը, որի մեջտեղով ամառ ու ձմեռ հոսում էր լեռնային սառնորակ ու վճիտ առուն, որն իր մեջ էր առնում լեռան լանջերից դուրս եկած տասնյակ աղբյուրների ջրերը: Գյալին միշտ ծածկված էր լինում հարուստ ու փարթամ բուսականությամբ, բազմերանգ, խիստ գրավիչ և հոտավետ ծաղիկներով: Դրանք առանձնապես աչքի էին ընկնում անձրևներից հետո:

Գարունը բացվելուն պես մենք Վարագավանքից համարյա ամեն կիրակի զբոսանքի էինք դուրս գալիս դեպի Գյալի, որի ճանապարհին վերոհիշյալ առվակի ստորին ափերից, ժայռերի արանքից բխում էր Ապարանջան աղբյուրը: Սա խառնվում էր առվակին և նրան վերածում առվի, որը գնում էր դեպի վանք և գործի դնում նրա միաչքանի երկու ջրաղացները: Այդ առվից, որը փաստորեն Վարագավանքի սեփականությունն էր, Արծրունյաց թագուհիներից մեկը մի ապարանջան ջուր էր նվիրել Շուշանց գյուղին, որը գտնվում էր Վան քաղաքի ուղիղ արևելյան կողմը՝ Կարմրավոր վանքին կից, գյուղի անունով կոչվող Շուշանց լեռան լանջին և շրջապատված էր աղբատիկ այգիներով:

Ճաշում էինք վերոհիշյալ Գյալիում, ուր մեր խոհարար Մանուկ աղան աշակերտների միջոցով նախապես տեղափոխել էր տալիս հացը, կաթսաները, ափսեները, գդալները: Մորթում էին պարոն Պետրոսի կողմից մեզ հատկացված ոչխարները: Մինչև ճաշը պատրաստվեր, մենք՝ մեծահասակ աշակերտներս, բարձրանում էինք լեռան բարձրադիր լանջերը՝ խավրժիլ քաղելու: Սա բուսումն էր լեռնալանջի ավազուտներում, որոնց վրա փռվում էին խավրժիլի լայն տերևները, իսկ սրանց մեջտեղից դուրս էր ցցվում երբեմն մեկ դաստակի չափ հաստ և բավական երկարությամբ գոխը: Սա թթվաշ և խիստ դուրեկան համ ուներ, կեղևը՝ խիստ նուրբ: Խավրժիլը կեղևում էինք և ուտում մեծ ախորժակով: Չէինք մոռանում Գյալիում մնացած տղաներին, ուսուցիչներին և խոհանոցի սպասավորներին ևս անհրաժեշտ քանակությամբ բաժին բերել: Երբեմն՝ առանձնապես շոգ եղանակներին, խավրժիլի լայն տերևների արանքներում պատսպարված էին լինում թունավոր օձեր, որոնք ֆշշալով և սողալով փախչում էին մեր ոտքերի մոտից՝ առանց վնաս

25 Վարագա պարոն Պետրոսը 1859-1918 թթ. ծառայել է Վարագավանքում: 1925 թ., այլևս հույս չունենալով տեսնել իր հայրենիքը, Վարագավանքը, գնելով ու Միջերկրական ծովի ափքների մեջ և խեղդամահ լինում: «Վանքի գործերում մեջ մեծ դեր կը կատարել Վանքի հինաուրոց վերակացու Պ. Պետրոս, որ երկար տարիներ է վեր, սկսած Մեծ Արծիի օրերեն, կը հսկէ անխոնջ կերպով արծուբայրի ընդհանուր մատակարարութեան վրայ խղճմտօրեն: Եթէ երբեք որեւէ առթիւ Վարագը յիշուի, Վարագի երախտատրները պիտի յիշեն «Պարոն-Պետրոս»-ի անունը, որ Արծիւէն ու անդրանիկ ձագերէն ետք առաջին տեղը պիտի բռնէ:

Բարեխիղճ պատմագիրի կը մնայ շանտեսել «Պարոն Պետրոսի» դերն ու անձնատրոփիւնը, երբ պէտք ըլլայ հինաուրոց Արծուբայրիին դերը մատնանշելու» (Բագրունի Հ., Հայ դպրոցը Վանի մեջ (1820-1913), «Աշխատանք», 1913, № 6, էջ 4): Պարոն Պետրոսի մասին տես Երամեան Հ., Վարագայ Պետրոս, «Արև», 1925, 19 հունիս, № 1921, էջ 2: Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեհինգամեակի առթիւ, էջ 319: Մանրադեան Մ., Կեանքիս յուշերից, Երևան, 2007, էջ 159-162:



Վերին Վարազ վանքի փլատակները Ի դարի սկզբներին

հասցնելու: Ընդհակառակը, հաճախ մենք էինք ընկնում նրանց ետևից և քարերով կամ փայտերով սպանում:

Գյալիից փարթամ կանաչների և բազմերանգ ու հոտավետ ծաղիկների միջով դեպի լեռան հյուսիսային բարձրադիր լանջն էր տանում մի նեղ արահետ, որի վերջավորության վրա տարածվում էր մի փոքր հարթավայր: Այստեղ էր գտնվում Վերին Վարազ ավերակ վանքը, որի միայն պատերն էին կանգուն, իսկ ներսում՝ պատերի մեջ մնացած խորանը և երկու պատուհանները: Դրսից պատերը հողին էին հավասար, իսկ ներսից պատերն ունեին մոտ երկու-երեք մետր խորություն, ուր մտնել կարելի էր դեպի լեռան արևելյան կողմը նայող ավերակ դռնից և պատասպարվել զանազան վտանգներից, անձրևներից:

Վերին Վարազ ավերակ վանքի մոտից՝ 4-5 մետր հեռավորության վրայից բխում էր Քրիստոսի աղբյուրը, որի ջուրը խիստ սառնորակ էր, մաքուր և առողջարար: Կուշտ կերած այցելուն, մի բաժակ խմելով այդ ջրից, քիչ հետո խիստ քաղց էր զգում, ինչպես ասում են՝ անոթությունից ոտքերը դողում էին: Այդ էր պատճառը, որ Վերին Վարազ զբոսանքի գնացողներս մեզ հետ անպայման վերցնում էինք Վարազավանքի փռում թխված բոբոններից, պանիր կամ ժածիկ, նստում էինք Քրիստոսի աղբյուրի եզրին, ուտում և ջուրը խմում: Այդ աղբյուրից դեպի աջ՝ մի քանի քայլ հեռավորության վրա էր գտնվում մի նեղ ու փոքր քարանձավ, որ կոչվում էր Թողիկ ճգնավորի քարանձավ: Իբր թե դա ժամանակին ճգնավորի ապաստարանն էր եղել: Ամառ ու ձմեռ այնտեղ է ապրել Թողիկը, աղոթել անվերջ, որ խաղաղություն լինի մեր հայրենի երկրում, և հայ ժողովուրդը չենթարկվի օտարերկրյա զավթիչների բռնություններին: Մենք երկյուղածությամբ, սողալով մտնում էինք այդ քարանձավը և փնտրում ճգնավորի ոտքերի, ծնկների և ձեռքերի հետքերը, իսկ այդպիսիք չկային:

Քարանձավից աջ՝ արևելյան կողմից տարածվում էր դեպի Վարազ լեռան բարձունքը տանող դարձյալ նեղ, քարքարոտ, դժվարանցանելի մի արահետ: Գնում էինք այդ ուղղությամբ, բարձրանում

լեռն ի վեր, հասնում Աստղկան բերդին²⁶: Ըստ ավանդության՝ այստեղ են ապաստանել Հռիփսիմե և Գայանե կույսերը:

Աստղկան բերդից ավելի հեռու՝ լեռան բուն գագաթի ուղղությամբ առաջ էինք շարժվում այս անգամ արդեն մեծ դժվարությամբ, երբեմն մագլցելով, չորեքքաթ, հաճախ փորսող տալով և հասնում Գալիլիային բնապաշտական ժամանակներից քրիստոնեությանը ժառանգված սրբավայրերին, որոնք նոր իմաստ և նոր վեհություն էին ստացել: Հաճախ գնում էինք գիշերով՝ դեռ լույսը չբացված, որպեսզի տեսնենք արևածագը, լույսի ու խավարի պայքարը, որ միշտ վերջանում էր լույսի հաղթանակով: Պարզ օրերին Վերին Վարազից հեռավոր մշուշի մեջ երևում էր Մասիսը: Ակնասպիշ, սրտի ուժեղ տրոփյունով երկա՛ր, շա՛տ երկար նայում էինք Մասիսին, բայց չէինք գոհանում. ուզում էինք, որ այդպիսի ժամերը վախճան չունենան, և Մասիսի թողած վեհ տպավորությունն անջնջելի մնա մեր հոգում, մեր սրտում:

Վերին Վարազի կռիվը²⁷

Վերին Վարազ վանքի ավերակ տաճարը, նրան շրջապատող ժայռերն ու բնական ամրություններն անվնաս էին պահում սուլթանական Թուրքիայի դեմ ընթրստացած Վան քաղաքի և ամբողջ Վաս-

²⁶ Մեկ այլ ականատես այս վայրերի վերաբերյալ նշել է. «Ձարմանայի ֆիզիկական կազմվածք ունի Վարազա սարը: Չուգահեռ երկարող երկու սարեր են, որոնք կենտրոնից բարձրությամբ իրար կմիանան: Այդ օղակող բարձրությունից սկիզբ են առնում իրար հակառակ ուղղությամբ երկարող խոր հովիտներ, հայտնի մեկը՝ Մուրք Գրիգորի, իսկ մյուսը՝ «Վարագայ կեայի» անուններով:

Երկու սարերը միացնող բարձրության վրա գտնվում է ավերակների կույտ, մի քանի կիսավույ պատեր, իսկ տասնյակ քայլ հեռավորության վրա գտնվում է սառնորակ աղբյուր, որին տեղացիները Քրիստոսի արցունք անունն են տվել: Այդ բարձունքի վրա գտնվող ավերակների կույտը կոչվում է Վերին Վարազ: Քիչ հեռու Բամբասանց բլուրն է, իսկ Վերին Վարազի կողքին, սաստիկ շեղ վերելքով բարձրանում է Աստղկան Բերդը՝ անառիկ ժայռերի մի կույտ» (Մայիլաս, Չարթոնք, հ. Ե, Պոստոն, 1934, էջ 243):

²⁷ Վարազավանքի կռիվը տեղի է ունեցել 1907 թ. հունիսի 23-ին: Այս մասին տես «Դրօշակ», 1907, № 6-7, էջ 86: **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. Ա, էջ 505:



Վերին Վարազ վանքի ավերակները 2004 թ.

պուրականի հայ երիտասարդությանը, որոնցից շատերը փախստական վիճակում գալիս էին Վերին Վարազ, այնտեղ ապրում շաբաթներով, զբաղվում զինավարժությանը և պատրաստվում ազատագրական անհավասար պայքարի:

1906 թվի գարնանն իր հավատարիմ յոթ թիկնապահներով Վերին Վարագումն էր Վասպուրականի զինվորական գործի ղեկավարներից և ամերիկյան բանակի կադրային սպաներից Հարություն Միրաքյանը²⁸: Մենք հաճախ էինք հանդիպում այս խիզախ հեղափոխականին: Բայց մատնիչը, որ պատահմամբ տեսնում է նրանց Վերին Վարագում զինավարժություն անելիս, հայտնում է Վանի թուրքական զինվորական իշխանությանը: Վերջինս մոտ 200-250 զինված ոստիկաններ է ուղարկում և հրահանգում բոլորին ողջ-ողջ բռնել և շղթայակապ տեղափոխել Վան:

1906 թվի Հոգեգալստյան տոնին (կիրակի օրը) գիշերով ոստիկանները դեպի Գյալի են շարժվում Վերին Վարագ գնալու համար երկու ուղղությամբ. մեկը՝ Վարագավանքի տակով, իսկ մյուսը Շուշանց գյուղի մոտով՝ Կարմրվոր վանքից դեպի ձախ՝ Զիաթնուկ կոչված բարձունքով շրջանցում է Շուշանցի սարը և մոտենում Վերին Վարագ ավերակ վանքին: Մի օր առաջ Հարությունը վերցնում է իր զինվորներից երկու հոգու (Մովսեսին, Մալդաթին, երրորդի անունը չեն հիշում), և ավերակների պահպանության համար թողնում է երեք հոգու՝ Շուշանցի Նշանին, Ղուկաս անունով մեկին և Խառակոնիս գյուղից զինավարժության եկած մի երիտասարդի և մեկնում է լեռան հյուսիսային կողմը՝ ձորի բարձունքին կառուցված Սբ. Գրիգոր վանքի ուղղությամբ՝ դիմավորելու Կովկասից եկող հայտնի դաշնակցական գործիչ Արամին:

Վերին Վարագ վանքի ավերակների մեջ մնացած երեք զինվորները խոր քնում են, չնայած նրանց ղեկավարը խստագույնս պատվիրել էր հերթով արթուն մնալ և հսկել շրջապատը:

Գիշերվա կեսին Նշանն ինչ-որ շշուկից արթնանում է և տեսնում, որ ավերակ եկեղեցու պատերի վրայից հրացանները ներքև բռնած՝ ակնդետ իրենց են նայում ժանդարմները, որոնցից ոչ մեկը սիրտ չի անում ցած իջնել պատերից և արևելյան կողմից բաց դռնով ներս մտնել: Նշանը կամացուկ արթնացնում է քնած երկու ընկերներին և հայտնում, որ պաշարված են: Միաժամանակ կարգադրում է տեղերից շարժվել, հրացանները կազմ ու

պատրաստ վիճակի մեջ իր հրահանգին սպասել: Մի քանի րոպե հետո նա հրացանով կրակում է ոստիկանների պետի ուղիղ ճակատին: Սա ցած է գլորվում, մյուսներն էլ, ահ ու սարսափով բռնված, պատերի վրայից ցած են թափվում: Այնուհետև Նշանը կարգադրում է ընկերներին շփոթվել և հետևել իրեն: Դուրս է գալիս ավերակ դռնից և մոտ 5-10 մետր հեռավորության վրա գտնվող մի ժայռի հետևապատարվելով՝ դիրք բռնում: Մակայն ընկերները շփոթվում են, վազում են հակառակ ուղղությամբ:

Ոստիկանների գնդակից տեղնուտեղը սպանվում է խառակոնիսցին, իսկ Ղուկասը, ճեղքելով թշնամու պաշարման խիտ շղթան, բարձունքից ցած է վազում դեպի Սբ. Գրիգոր վանքը, որտեղից պետք է Վերին Վարագ գալիս Հարությունն իր մյուս զինվորներով, Կովկասից եկող և դեպի Վան գնացող Արամն իր ուղեկիցներով: Ղուկասը Հարությունին հայտնում է անսպասելի իրողությունը: Հարությունն իր հետ վերցնում է իր թիկնապահ Մովսեսին, իսկ մյուսներին կարգադրում է բարձրանալ լեռան գագաթը և սպասել իրեն: Լույսը կամաց-կամաց բացվում է, արդեն արոթարան է: Նշանը մենմեակ կռվում է, բայց իր գրաված դիրքից մի մագաչափ անգամ չի կարողանում հեռանալ: Մյուս կողմից էլ թուրքերն իրենց դիրքերից մի քայլ անգամ առաջ գնալ չեն հանդգնում: Այս անհավասար և ահեղ կռվի ժամանակ Նշանին օգնության են հասնում Հարությունն ու Մովսեսը: Կռիվը քանի գնում, ավելի է թեժանում, փամփուշտները վերջանալու վրա են: Օրը ճաշ է դառնում, և մենամարտը դեռ շարունակվում է: Այս օրհասական ժամին բնությունն օգնության է հասնում: Մեզն ու մառախուղը պատում են լեռը: Սկսում է նաև ուժեղ կարկուտ տեղալ: Պաշարվածները դուրս են գալիս իրենց գրաված դիրքերից և շտապ կարգով բարձրանում լեռնի վեր՝ դեպի Աստղկան բերդը և Գալիլիան, ուր ապահով դիրքավորված մյուս ընկերները վերևից երգում էին և անհավասար, հերոսական կռիվ մղողներին ոգևորում.

«Կովեցեք, տղերք, կովեցեք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ...»²⁹:

Այսպես է վերջանում Վերին Վարագի 1906 թվի կռիվը: Թուրք զինված ոստիկանները վերադառնում են Վան՝ իրենց հետ տանելով երկու դիակ, մեկը՝ իրենց պետին³⁰, մյուսը՝ հայրենիքի ազատագրական պայքարի համար զինվորագրված խառակոնիսցի երիտասարդին:

28 Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Հարություն Միրաքյանը ծնվել է 1878 թ. Տարոնի Հողնուտ գյուղում: Տարագրության է գնում նախ Կ. Պոլիս, ապա Բուլղարիա, որտեղից էլ ԱՄՆ և կամավոր ծառայում ամերիկյան բանակում: Այնուհետև գալիս է Վան և երիտասարդների զինավարժում: Մասնակցում է 1907 թ. Վարագավանքի կռիվին: Վախճանվում է 1909 թ. Վանում (Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, էջ էջ 264-265: Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան. Ալբոմ-ատլաս, հ. Ա, Լու-Անճերլս, 1992, էջ 153):

29 «Կռուեցեք տղերք» բանաստեղծության հեղինակն է վանեցի Միհրդատ Եսայանը (1870-1902*):

30 Խոսքը վերաբերում է Շյուքրի բեյին, որը «...տեղիս երևելի ազդեցիկներն էր և կատարած չարագործություններուն մեծագոյն հեղինակներն մեկը» («Դրօշակ», 1912, № 6-7, էջ 86):

Այնուհետև լեռան բարձունքին ապավինած բույր զինվորագրվածներն անցնում են լեռան մյուս կողմը, այլ շրջաններ տեղափոխվում՝ իրենց հետքը կորցնելու և հետագա հետապնդումներից ազատվելու նպատակով:

Դեպի Կովկաս

Վարագա Ժառանգավորաց դպրոցում սովորեցի մինչև 1907 թվի հունիս: Ավարտեցի այդ դպրոցի յոթնամյա լրիվ դասընթացը և մտածեցի ուսումնաշարունակելու մասին: Գիտեի, որ Կովկասում կան հայկական լրիվ միջնակարգ դպրոցներ, որոնցից առանձնապես ինձ գրավում էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Այս բուռն ցանկությամբ հրաժեշտ տվեցի Վարագին և քայլերս ուղղեցի դեպի Վան:

Հայրս՝ Մովսեսը, մահվանից առաջ՝ 1901 թ., Բաքվում Մարգար քեռուս հետևյալն է կտակում. «Քեզ, քո խնամքին եմ հանձնում այրիացած կնոջս և որբերին: Առանձնապես հոգ տար մեծ որդուս՝ Գարեգինի ուսման համար: Իսկ եթե նրան աչքաթող անես, ապա դու էլ ինձ պես լինես»:

Հորս մահվանից քեռիս հեռվից հեռու իմ խնամակալն էր դարձել: Մի օր Վարագում ուսանելու ժամանակ Բաքվից նամակ եմ ստանում: Քեռիս հայտնում է ինձ, որ ես ներկայանամ Վանի Դաշնակցական կոմիտեի ղեկավար պարոն Արամին³¹, որին հատուկ նամակով խնդրել է ապահով մարդկանց միջոցով ինձ Կովկաս ուղարկել: Վարագից գնում եմ Վան: Բայց որտե՞ղ գտնեմ պարոն Արամ կոչված այդ մարդուն: Չէ՞ որ նա ապրում է ընդհատակյա պայմաններում Վան քաղաքի Այգեստան քաղամասում:

Տխուր ու տրտում դեգերում եմ Այգեստանի փողոցներում և չեմ համարձակվում որևէ մեկին հարցնել, թե որտեղ է ապրում պարոն Արամը: Երբ բոլորովին հուսալքված որոշել էի գնալ գյուղ, պատահեցի ինձ նախապես ծանոթ տղաներից մեկին: Պատմեցի ամեն ինչ: Նա ինձ հուսադրեց և ասաց, որ հնարավոր է հանդիպել իր թաքստոցում պարոն Արամին, միայն դրա համար ժամանակ է պետք:

Հաջորդ օրն առավոտյան հանդիպում եմ Այգեստանի խուլ փողոցներից մեկում: Ծանոթս ինձ է ներկայացնում միանգամայն անծանոթ մի մարդու: Նա գնում է, իսկ ես՝ նրա հետևից: Վերջապես հասնում եմք մի տան մոտ: Ինձ առաջնորդող ճկիկով³² ծեծում է դուռը:

Մի քիչ հետո դուռը բաց արին: Ներս եմք մտնում բավական ընդարձակ մի բակ, որից հետո բացված

դռնակով առաջանում ենք դեպի ընդարձակ մի այգի՝ հողաշեն ցածրիկ պատերով և բազմատեսակ պտղատու ծառերով, իսկ միջին մասը՝ խաղողի որթատունկերով: Ինձ առաջնորդող դուրս եկավ փողոց և անհայտացավ: Ես ու տանտերը մնացինք երկուսով: Այգին շրջապատող պատերից մեկում կար մի փոքր դռնակ, որը բացվում էր դեպի հարևանի այգին: Նոր առաջնորդը նախ ստուգեց հարևանի այգին և վստահ լինելով, որ վտանգավոր ոչինչ չկա, ինձ հանձնեց իր հարևանին, իսկ ինքը ետ դարձավ: Անցա մոտ տասն այգիներ՝ ինձ անծանոթ տարբեր մարդկանց ուղեկցությամբ: Օրը վերջանում էր: Վերջապես հասա մի ընդարձակ այգու, որի զանազան կողմերում նկատեցի ծառերի և խաղողի թփերի ետևից թաքնված և զինված մի քանի պահակների: Դրանցից մեկը մոտեցավ ինձ առաջնորդող վերջին տան և այգու տիրոջը, իմանալով իմ այնտեղ հայտնվելու նպատակը՝ կարգադրեց սպասել իրեն: Գնաց, անհայտացավ խիտ ծառերի արանքում: 15-20 րոպե հետո վերադառնալով՝ ինձ առաջնորդեց դեպի պարոն Արամի թաքստարանը, որը մի ընդարձակ սենյակ էր՝ հողե հատակով և պատերի չորս կողմը շարված ներքնակներով և բարձերով: Ուներ մեկ դուռ, որը բացվում էր դեպի այգին: Սենյակում նստած կամ կանգնած էին մոսին հրացաններով և մատուցեց ատրճանակներով զինված 12-15 հոգի: Ես դրանց միջից ճանաչեցի պարոն Արամին, որին մի քանի անգամ տեսել էի Վարագում: Մոտեցա և պատմեցի նրան իմ ներկայանալու նպատակը: Միաժամանակ հիշեցրի, որ քեռիս՝ Մարգարը, Բաքվից մի նամակ է գրել և խնդրել վստահելի և ապահով մարդկանց միջոցով ինձ ուղարկել Կովկաս:

Պարոն Արամն ուշադրությամբ լսելուց հետո կարգադրեց, որ ես վաղն եթե Վանից մեկնեմ Արճակ և սպասեմ իր սուրհանդակներին:

Վանից Արճակ գնացի մոտավորապես օգոստոսի 15-ին: Ապրում եմ քեռուս տանը: Սպասեցի մինչև ամսվա վերջը, բայց չերևացին պարոն Արամի սուրհանդակները:

Մի օր էլ, այդ սպասումից ճանճրացած և հուսահատված, եկա այն եզրակացության, որ պարոն Արամն ինձ մոռացել է: Հուսահատված էի և Կովկաս գնալու հույսերս ի դերև էին ելնում: Սակայն օրերից մի օր՝ խավար գիշերին, մեծ քեռուս տուն եկավ Վասպուրականի դաշնակցական հայտնի գործիչ, ռազմական գործերի ղեկավար, 1906 թ. ամռանը Վարագա կռիվների հերոսներից Հարությունն իր զինված խմբի հետ: Քեռուս տունը գտնվում էր մյուրուրի (զավառապետ) կացարանի ուղիղ դեմ դիմաց՝ 10-15 քայլ հեռավորության վրա՝ փողոցի կենտրոնական վայրում կառուցված երկհարկանի բնակարանում: Ասկյարները չէին էլ ենթադրում, որ հեղափոխականներն Արճակում կանգ կառնեն զավառապետի աչքի առաջ գտնվող մի տանը: Հարու-

31 Մանուկյան Արամ (1879, Մյունիքի մարզի Դավիթբեկ գ. - 1919, Երևան), պետական, հասարակական գործիչ:

32 Հուշագիրը մշում է, որ «դեպի փողոցները բացվող համարյա բոլոր դռների վրա դրսից ամրացված է լինում ձեռքի մեծությամբ և ձեռքի նման երկաթյա թակիչ, որին վանեցիները ճկիկ են կոչում: Դրանով դրսից ծեծում են դուռը: Ներսից լսողը բաց է անում սողնակով ամուր կողպված դուռը և ծեծողը ներս է մտնում»:

թյունը, ինձ տեսնելով Վարագավանքի Ժառանգավորաց դպրոցի հագուստով, հետաքրքրվեց, թե ինչու եմ եկել Արճակ և ինչ եմ մտադիր անել: Նա իմացավ, որ ես Արճակ եմ եկել պարոն Արամի ցուցումով և սպասում եմ նրա սուրհանդակներին՝ Կովկաս մեկնելու համար: Խիստ զայրացավ պարոն Արամի վրա, որ իր խոստմանը տեր չէ: Այս անգամ նա իր հերթին խոստացավ Վան հասնելուն պես դրական լուծում տալ իմ հարցին: Մյուս օրը գիշերով Հարությունն իր զինված խմբով մեկնեց դեպի Վան, որտեղից հաջորդ օրը Արճակ վերադարձավ նույն գյուղի ուսուցիչներից Մնոշյան Մկրտիչը³³, որը Հարությունի խմբի զինվորների հետ Վան էր մեկնել: Նա իր հետ բերել էր Վանի Դաշնակցական կոմիտեի հրահանգ-նամակը, որով կարգադրվում էր ինձ տեղափոխել Խառակոնիս գյուղ: Հրահանգի մեջ կտրուկ և խիստ տոնով մինչև Պարսկաստանի սահմանն անցնելը ճանապարհի վրա գտնվող գյուղերի կազմակերպության բոլոր ղեկավարներին կարգադրված էր իրենց անձնական պատասխանատվությամբ ինձ ողջ և առողջ հասցնել Պարսկաստան:

Խառակոնիս գյուղից ինձ ճանապարհ դրեցին դեպի Անձալ՝ աննշան մի վայր, որ ոչ մի բանով հիշատակելու արժանի չէ: Հաջորդ կայանը Սալա-

խանե գյուղն էր, որը գտնվում էր Աբաղայի ընդարձակ դաշտի եզրին: Այս գյուղը գնալու համար պետք էր շրջանցել Գործոթը, որը հայտնի էր իր հոսող նավթի հանքերով: Թե՛ գործոթցիները և թե՛ շրջակա հայ և քուրդ գյուղացիներն ամեն օր զանազան ամաններով իրենց առօրյա գործածության համար նավթ էին տանում, ինչքան կարող էին:

Լեռներով և բարձրաբերձ ժայռոտ բլուրներով շրջապատված ձորերի միջով գնում ենք Սալախանե գյուղը: Մեր քարավանն այստեղ արդեն կազմված էր 15-20 հոգուց, որոնց թվում կային 4 կանայք և 12 տարեկան մեկ աղջիկ:

* * *

Մի՞թե մարդկության խիղճը հավիտյանս պիտի լռե և հաշվետվություն չպիտի՞ պահանջե հին ու նոր թուրք չարագործներից ու ոճրագործներից: Մի՞թե աշխարհի չորս կողմը սփռված հայ ժողովուրդը վերջիվերջո տեր չպիտի դառնա իր պապեական հնադարյան հողերին:

Այդ են պահանջում մեր նահատակված միլիոնավոր անմեղ հայրերի, մայրերի, եղբայրների ու քույրերի թափված արյունն ու թաղված կամ անթաղ ոսկորները:

33 Մկրտիչ Մնոշյանը ծնվել է 1878 թ. Վանում: Հայտնի է որպես հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Վասպուրականի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամ: Վախճանվել է 1920 թ. Երևանում:



ՌՈՒԲԵՆ ԵՎ ՋԱԲԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ
(1896 -1981, 1899-1979)

Համառոտ կենսագրություն

Ռուբեն Վարուսի Բաղդասարյանը ծնվել է 1896 թ. Կարսի մարզի Ճալա գյուղում: Ինը երեխաներից ավագն էր:

Գաղթի ճանապարհին սպանվում է հայրը՝ Վարուսը, վախճանվում են մայրը՝ Վարդիթերը, եղբայրներն ու քույրերը: Ողջ են մնում ինքը՝ Ռուբենը, եղբայրը՝ Գուրգենը, և քույրը՝ Հռիփսիմեն:

Ռուբենն իր հայրենի գյուղում ամուսնանում է համագյուղացի Ջաբել Սահակի Բաղդասարյանի հետ, սակայն Կարսի անկման և հայրենի գյուղի փախեփախի ժամանակ արդեն մեկ զավակի տեր ամուսինները կորցնում են իրար: Միայն 1924 թ.-ին նրանք նորից գտնում են իրար և վերակազմում ընտանիքը, ունենում չորս զավակ:

Ռուբենը վախճանվել է 1981 թ. Երևանում, կինը՝ Ջաբելը, որը գաղթի ճանապարհին կորցրել էր ծնողներին, Մարգարիտ քույրիկին և անդրանիկ զավակին, վախճանվել է 1979 թ. Երևանում:

Ռուբենի և Ջաբելի հուշերը գրի է առել ավագ դուստրը՝ Երևանի մանկավարժական տեխնիկումի, ապա Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվի և գրականության ֆակուլտետի շրջանավարտ Քնարիկ Բաղդասարյանը (ծնվ. 1925 թ.): Նա աշխատել է Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի, Ապարան քաղաքի, Արարատի մարզի Արարատ գյուղի դպրոցներում և Երևանի Ն. Ջադյանի անվան թիվ 130 միջնակարգ դպրոցում:

Ծնողների հուշերը Քնարիկ Բաղդասարյանը պարտքի զգացումի գիտակցությամբ ի մի է բերել 2004 թ. ապրիլ-մայիս ամիսներին 79 տարեկան հասակում:

ՓՈՔՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Չաբելի հուշերը

Մեր ընտանիքը գյուղի ունևոր ընտանիքներից էր: Ծնողներս էին Սահակ աղան և դազարապատոցի Սոնան: Ունեի երեք քույր և երկու եղբայր: Հոր-եղբայրներիցս մեկը գյուղապետն էր, մյուսը՝ գյուղի քահանան:

Ճալա¹ գյուղը շատ մոտ էր Անիին:

Գրել-կարդալ սովորել եմ գյուղի վարժուհի կաղ Փառանձեմի դպրոցում:

Մեր գյուղի դաշտերը շա՛տ հարթ էին, սարերը՝ կանա՛չ-կանա՛չ, ծաղիկները՝ շատ ու գու՛յն-գու՛յն, աղբյուրները՝ գուլալ, սառը... էդ բոլորը մնացին անիծված թուրքին:

Ինչքա՛ն էինք սիրում բանջար քաղելու գնալ: Մի անգամ էլ հարս ու աղջիկ, գոգնոցներս լիքը բանջար, դաշտից տուն էինք դառնում, հանկարծ երկնքում ուժգին հռնդյուն լսվեց: Վեր նայեցինք և սարսափած տեսանք մի հսկա «ղուշ»: Բոլորս, շունչներս պահած, ձեռքերով գլուխներս բռնած, սարսափահար գետին ընկանք: «Ղուշը» մի անգամ էլ ավելի ցածր սավառնեց, հետո միանգամից վերև սլացավ և հեռացավ: Դա մեր տեսած առաջին օդանավն էր:

Ավետիք Իսահակյանը մեր ազգականն էր և շուտ-շուտ էր գալիս մեր տուն: Ղազարապատ² գյուղը մեր գյուղից շատ հեռու չէր: Փոքրիկ աղջիկ էի, շեկ մազերով: Այդ պատճառով նա ինձ «պժռիկ» (շեկ) էր անվանում: Ինձ շատ բան էր սովորեցնում³:

Մեր ամուսնությունը

Մի անգամ հայրս՝ Սահակ աղան, գործով գնում է Կարս: Ճանապարհին ձիու ոտնաձայն է լսում: Ետ է դառնում և տեսնում է Վարոսին, որը ձիով նույնպես գնում էր Կարս: Պայմանավորվում են, որ երբ իրենց գործերը վերջացնեն, հանդիպեն ճաշարանում և միասին էլ վերադառնան Ճալա: Այդպես էլ անում են: Ճաշում են, խմում, բարեկամանում:

–Դու ի՞նչ երեխեք ունես, Սահակ աղա,–հարցնում է Վարոսը:

–Հասած աղջիկ ունեմ: Չաբելս արդեն 14 տարեկան է,– պատասխանում է հայրս:

–Երեխաներիցս ամենամեծը Ռուբենն է՝ 18 տարեկան,– վրա է բերում Վարոսը:

Բաժակները զարկում են իրար և մեր ճակատագիրը որոշում:

Հայրս տուն եկավ տրամադրությունն ընկած:

–Սոնա,– դիմեց թոճրի մոտ հաց թխող մորս,– էմա՛ն բան եմ արել, որ էլ պրծա՛ր...

–Ի՞նչ ես արել, ա՛յ մարդ...

–Մեր Չաբելին նշանել եմ...

Մայրս ապշահար նրան նայեց:

–Ախր դեռ երեխա է, համ էլ ու՞մ հետ ես նշանել:

–Ասելու բան է՞, որ ասեմ: Վարոսի տղայի հետ... փոշմանել եմ, բայց արդեն ուշ է: Խմած էի:

–Մա՛րդ,– զայրացած գոռաց ապշահար մայրս,– էդ ի՞նչ ես արել, բա մեր երեխան մեղք չի՞, անխի՛ղճ, անաստվա՛ծ:

Խարջիգաթը⁴ թռավ դեպի մայրս: Նա սարսափահար թեքեց գլուխը և խուսափեց ծանր երկաթի հարվածից:

– Ես իմ թքածը չե՛մ լիզի, հասկացա՞ր,– ասաց իրեն կորցրած Սահակ աղան, և հարցը փակվեց:

Թաքուն սիրում էի մի ուրիշ տղայի, նա էլ՝ ինձ: Էն ժամանակ ի՛նչ սիրել, ի՛նչ սեր... Հայրը պիտի որոշեր, թե ում տար, և վերջ:

Հարս գնացի Վարոսի բազմանդամ և աղքատ ընտանիքում: Ինը երեխաների հոգսը քաշում էր սկեսուրս՝ Վարդիթերը:

Ռուբենեց ընտանիքում

Ռուբենեցն ընտանիքը գյուղի աղքատ, խեղճ, բայց բազմանդամ ընտանիքներից էր: Ինը երեխա էին: Ռուբենի հայրը՝ Վարոսը, չէր սիրում աշխատել: Վարուցանքի ժամանակ կատարում էր իր գործը, իսկ հետո օրերն անցնում էին կերուխումի սեղանների մոտ: Լա՛վ, քա՛ղցր ձայն ունեք, երգում էր և ուրախացնում սեղանակիցներին, որոնց մեջ շատ էին հարուստ թուրքերը: Գնում էր հարևան գյուղեր, ուր հրավիրում էին հարսանիքներում երգելու: Ռուբենի մայրը՝ Վարդիթերը (գյուղում նրան Թելո էին անվանում), յոթ եղբայրների միակ քույրն էր: Ռուբենի մորական տատը՝ Գոհարը, ամբողջ նահանգում հայտնի տատներ էր: Շատ հեռու բնակավայրերից անգամ հայ, թուրք և քուրդ գալիս էին և ձիով նրան տանում ծննդկանին օգնելու: Եթե հարուստին տղա էր ծնվում, ոչխար էին նվիրում: Շատ էր օգնում Ռուբենեցն ընտանիքին: Ռուբենի յոթ մոր-

1 Մինչև 1915 թ. հայաբնակ էր և գտնվում էր Կարսի մարզի Բաշ-Շորագյալ գավառում: Վերանվանվել է Էսենքենդ:

2 Ղազարապատ գյուղը գտնվում է Շիրակի մարզի Անիի շրջանում: 1945 թ. վերանվանվել է Իսահակյան:

3 Ավետիք Իսահակյանը Չաբելին սովորեցրել է «Ա՛խ մեր սիրտը լիքը դարդ, ցավ» բանաստեղծությունը՝ գրված 1898 թ.:

4 Բավական ծանր երկաթ, որը դնում են թոճրի վրա և կաթսաներ շարում վրան:

եղբայրներն⁵ աշխատասեր, ընտանիք սիրող երիտասարդներ էին:

Շատ էր պատահում, որ Վարոսը մի քանի օր տնից բացակայելուց հետո հանկարծ վերադառնում էր գյուղ: Սկեսուրս՝ Վարդիթերը, որը միհար, փոքրամարմին կին էր, բայց շատ արագաշարժ և աշխատասեր, սկսում էր հանդիմանել նրան՝ ընտանիքի հոգսերի նկատմամբ անտարբերության և անսահման եսամոլության համար:

Հաճախ էր մայրս մեծ սկուտեղով կամ սալայով ուտելիք ուղարկում մեր տուն՝ հուսալով, որ մի կտոր էլ ինձ կտան: Բայց երեխաները վրա էին պրծնում, և մի քանի բուլե անց այդ համեղ ուտելիքներից ոչինչ չէր մնում: Ինձ և սկեսուրիս ոչինչ չէր հասնում:

Գաղթի ճանապարհին

Մի օր էլ, անիծվե՛ր այդ օրը, էդ ի՛նչ սև օր էր... հավարն ընկավ գյուղ:

–Թու՛ր քըր... թու՛ր քըր գալիս է, փախե՛ք, փախե՛ք...

Թուրքերն արդեն հարևան գյուղում էին, կոտորում էին մեծին ու փոքրին:

Մեր խաղաղ կյանքը վերջացավ: Ճախեցի հայերն էլ գաղթական ու տնավեր դարձան:

Սկեսրայրս՝ Վարոսը, պատրաստվեց ընտանիքը հեռացնել դեպի Արևելյան Հայաստան: Սկեսուրս մոտեցավ ինձ, մի կողմ տարավ և ցածրաձայն ասաց.

–Աղջիկս, վազելով գնա՛ ձեր տուն, տե՛ս, դեռ չե՞ն փախել, ու շու՛տ արի:

Բարձրացա տան երդիկը և տեսա, որ սայլերն էին լծում:

Երբ հասա մեր տուն, տեսա, որ հայրս լծել է մեր երկանիվ երկու սայլերը, և մերոնք պատրաստվում էին փախչել: Մայրս հուզված, սրտաբեկ ինձ ասաց, որ շտապ գնամ, երեխայիս վերցնեմ ու վերադառնամ. «Բալա՛ ջան, արի՛ մեզ հետ, երեխան գրկիդ ո՞նց պիտի ոտքով փախչես, արի՛, արի՛ մեզ հետ»:

Երբ մոտեցա սկեսրայրիս տանը, քարացա: Երեխասս բարուրով դրված էր դռան առաջ՝ գետնին, իսկ դուռը կողպեքով փակ էր: Կովերն ու ոչխարները կանգնած էին գոմի բաց դռան առաջ: Վարոսն իր ընտանիքով արդեն փախել, հեռացել էր:

Շտապ գրկեցի երեխայիս և վազեցի մորս մոտ: Շատերն էին փախուստի ճամփան բռնել, մյուսներն էլ շտապում էին, արագ բացում էին անտեր մնացած անասունների գոմի դռները, որպեսզի տվից ու ծարավից չսատկեն, փակում էին իրենց տան դռները և բացառիկ շտապողականությամբ ջանում փրկել իրենց սիրելիների կյանքը: Կյանքի սերը

ստիպում էր լքել հարազատ գյուղը, սիրելի հանդերն ու դաշտերը, ամեն, ամեն ինչ:

Ճանապարհին երեխասս մահացավ: Հայրս թրի ծայրով մի փոս փորեց, փոքրիկիս անմեղ մարմինը հողին հանձնեցինք և արագ հեռացանք: Ժամանակ չկար: Փոքրիկ քույրս՝ Լուսիկը, որի գեղեցկությամբ զմայլված՝ քահանան ասել էր՝ կարծես լույս լինի, ճանապարհին հիվանդացավ կարմրուկով: Ջերմությունը շատ բարձր էր: Հասանք հայկական մի գյուղի, որի բնակիչների մեծ մասը նույնպես փախել էր: Այդ գյուղը Մայմուջուղն էր⁶: Տներից մեկի մոտ ճերմակահեր մի ծեր կին էր կանգնած: Ծնողներս հիվանդ քրոջս տվեցին նրան և խնդրեցին, որ, եթե կարող է, փրկի նրա կյանքը:

–Կապրի, թե կմեռնի, դա էլ իր բախտից⁷,– ասաց հեկեկացող մայրս՝ Սոնան:

Շարունակեցինք ճանապարհը: Տղամարդիկ քայլում էին հոգնած եզներին համընթաց, իսկ կանայք ու երեխաները, սայլի վրա նստոտած, հոգնատանջ հայացքով նայում էին անծանոթ և անորոշ հեռուն: Շուրջը լռություն էր, որի մեջ ինչ-որ ահասարսուտ բան կար: Բիչ էր մնացել, որ հասնեինք ներքևում՝ հարթության վրա երևացող գյուղին: Հանկարծ սայլը շրջապատվեց զինված տղամարդկանցով: Բոլորս քարացանք: Թուրքե՞րն էին: Բայց չէ՞ որ հայկական գյուղն այնքան մոտ էր: Մի գեղեցկատես երիտասարդ դարձավ մյուսներին և ասաց.

–Դուք գնացե՛ք, ես կգամ:

Հայերե՞ն էր խոսում, ուրեմն հա՞յ էր... Հետո հանեց մատուցեք, կրակեց օդում և ցուցամատը ուղղելով մատաղահաս Մարգարիտ քրոջս՝ գոռաց.

–Էս աղջկան ինձ տվե՛ք, սրտիս դուր եկավ: Հայրս ցնցվեց, ուզեց պաշտպանել աղջկան, բայց երիտասարդը սպառնաց՝ ասելով.

–Կա՛ն կտաք, կա՛ն բոլորիդ կջարդեն: Նրան սիրեցի, հենց որ տեսա: Կամուսնանամ, ընտանիք կկազմեմ, աչքիս լույսի պես կպահեմ նրան: Մշեցի եմ, անունս Վարդան է, ազգանունս՝ Մամիկոնյան: Եկել եմ կովելու թուրքի դեմ:

Մարգարիտին դրեց ձիու վրա, գիրկն առավ և սլացավ ընկերների ուղղությամբ:

Մեր սայլն առաջ գլորվեց: Տխուր լռությունը երկար շարունակվեց: Հասանք գյուղ: Գիշերը մորս վիճակը վատացավ: Անընդհատ ձայնում էր. «Կորա՛վ երեխասս, ձիու վրա առավ երեխայիս ու տարա՛վ, ու՞ր տարավ, ու՞ր ես, Մաքո՛ ջան, վա՛յ, բալա՛ ջան, աչքերս կուրանային, չտեսնեի»:

Մի քանի օր անց հավերժ հանգավ մայրս: Մահացավ նաև հայրս՝ Սահակ աղան: Ծանր էր այդ բոլորը: Նրանք չդիմացան: Ես մնացի մեն-մենակ, անտեր, անտիրական, քաղցած ու անօթևան:

⁵ Ըստ հուշագրի՝ Ռուբենի մորեղբայրներից Արսենը ընտանիքով գյուղից արտագաղթել էր Ամերիկա:

⁶ Մայմուջուղ (Մահմուջուղ) գյուղը գտնվում է Շիրակի մարզում: 1940 թ. վերանվանվել է Պեմզաշեն և դարձել ավան:

⁷ Ըստ Բնարիկ Բաղդասարյանի՝ Չաքելը 1930 թ. գտել է ոչ միայն իր քույրիկին, այլև եղբայրներից Կարապետին:

Քայլում էի շարունակ: Հայերին լցնում էին եկեղեցիներն ու ողջ-ողջ այրում: Մի օր ես ու մի աղջիկ, երբ մութն ընկավ, թաքուն փախանք և այդպես ազատվեցինք:

Դեպի Բաքում

Մեր գյուղացի աղջիկների հետ էի: Այլևս ուժ չունեինք խոսելու, սոված էինք, օրեր շարունակ հաց չէինք կերել, քնում էինք դրսում, որտեղ պատահի: Շատ գյուղերում հաց էինք մուրում, բայց այլևս հաց տվող չկար: Ո՞ր մեկին տային:

Մի անգամ մտա մի գյուղացու բակ: Մի կին լվացք էր փռում արևից տաքացած քարերի վրա: Հաց խնդրեցի, իսկ նա գոռաց և կոպտեց: Հանեցի ցնցոտի դարձած հագուստներինս տակ կապած ոսկե քամարս (հայրական տնից ստացած նվերներից վերջինն էր) և մեկնեցի նրան: Քամարս բավական ծանր էր և գեղեցիկ: Այլ ելք չունեի. սովամահ էինք լինում: Ինձ հետ էին նաև մեր գյուղացի մի քանի աղջիկներ:

–Վերցրո՛ւ այս քամարը ու մեզ ուտելիք տու՛ր,– ասացի կնոջը:

Կինն անթաքույց հիացմունքով նայեց քամարինս, դրեց գոգնոցի մեջ և մտավ տուն: Քիչ անց դուրս եկավ՝ գոգնոցի մեջ ինչ-որ բան լցրած:

–Գոզնոցդ բա՛ց,– կարգադրեց նա ինձ:

Մեկնեցի գոգնոցիս բաց փեշը: Նա լցրեց իր գոգնոցի պարունակությունը և անմիջապես հեռացավ: Հում կարտոֆիլի կեղևներ էր լցրել իմ գոգնոցի մեջ: Ոչինչ անել չէինք կարող: Ես և մեր համագյուղացի երկու աղջիկները կերանք այդ հում, տհաճ կեղևները:

Օրեր շարունակ երկաթգծի կողքի հարթ տարածության վրա խոտ էինք «արածում»: Ուտում էինք ինչ պատահի: Շատվոր էինք: Հարս ու աղջիկ, կանայք ու տղամարդիկ, մույնիսկ երեխաներ կային, որոնք սովից ու անտերությունից դեռ չէին մահացել: Մի օր մեր գյուղացի Վարսիկն ասաց.

–Ասում են, որ վագոնները կուգան, մարդիկ կիջեն՝ կացիները ձեռքերին, ու մեզ նմանների գլուխները կկտրեն: Լավ է մեռնենք, պրծնենք էս տանջանքներից:

Մագթաղն էլ առաջարկեց, որ պառկենք գնացքի գծերի վրա: Գնացքը կանցնի մեր վրայով, և ամեն ինչ կվերջանա:

Բոլորս համաձայն էինք:

Մի քանի ժամ անց լսվեց գնացքի շոգեքարշի սուլոցը: Վազեցինք դեպի երկաթգիծ, պառկեցինք գծերի վրա և սպասում էինք:

Գնացքում գտնվողները նկատել էին մեզ և հասկացել: Գնացքը կանգ առավ՝ չհասնելով մեզ: Մեզ լցրին բաց վագոններն ու տարան Բաքում: Ուտելիք ու նոր հագուստ տվեցին, լողացրին և ուղարկեցին թեյի դաշտերում թեյ հավաքելու: Աշխատում էինք դաշտերում և վարձատրվում:

Այդպես ապրեցինք մինչև 1924 թ.:

1924 թ. Բաքումից եկա Երևան, որտեղ և գտա ամուսնուս՝ Ռուբենին, որը ծառայում էր զինվորական զորամասում: Մեր ընտանիքը վերակազմվեց:

Ռուբենի հուշերը

Գաղթի օրը մեր ընտանիքը հավաքվեց: Ծվարել էինք Մայնուջուղ գյուղում, որը հիմա հայերի ձեռքին է: Ծվարել էինք մի խարխուլ տնակում, որի տանիքը կարծես թե ուր որ է պիտի փլվեր:

Մեծը ես էի՝ 19-20 տարեկան: Ուտելիք չկար, հաց էինք մուրում: Մայրս գրեթե ոչինչ չէր ուտում. հացի փոքրիկ կտորները պահում էր գրպանում և տալիս քաղցած երեխաներին: Քնում էինք սառն ու խոնավ հատակին, քնում էինք նստած: Թուրքերը քշել էին մեզ, զրկել մեզ տուն ու տեղից, ամեն ինչից: Գոհ էինք, որ ողջ ենք:

Մայրս՝ Վարդիթերը, չդիմացավ այդ սոսկալի տառապանքներին ու մահացավ: Դիակը ես ու հայրս տարանք և եկեղեցում դրեցինք: Գնացինք գերեզմանոց, որպեսզի փոս փորենք և մայրիկիս հողին հանձնենք: Ես ու հայրս անուժ ձեռքերով մի կերպ փորում էինք հողը: Հանկարծ գերեզմանոցի ճանապարհի մոտ ձիերի սմբակների ձայներ լսվեցին:

–Որդի՛ս, Ռուբեն՛ն ջան, թուրքերն են,– ասաց հայրս,– մեզ նկատած կլինեն: Փրկվել չենք կարող: Գոնե դու փրկվի՛ր, փոքրիկ անմեղներին տիրություն արա, մե՛ղք են:

Արցունքները հոսեցին տարաբախտ հորս աչքերից: Նա արագ շուրջը նայեց և շարունակեց.

–Էլ ժամանակ չկորցնենք, նրանք մոտենում են: Գերեզմանոցի կողմի գետը տեսնու՞մ ես, շտապի՛ր և գտի՛ր մի տեղ, ուր կարող ես թաքնվել: Ես քեզ շա՛տ եմ սիրում, որդի՛ս:

Սրանք հորս վերջին խոսքերն էին...

Գերեզմանաքարերի արանքով շտապեցի աննկատ հասնել գետափ: Պինդ սեղմվեցի ժայռոտ ափին և սպասեցի: Գարուն էր, ջրերը վարարել էին: Գետը դիակներ էր քշում-տանում, հայերի անթաղ, անշիրիմ դիակներ: Հանկարծ տեսա մի փոքրիկ տղայի, որ ամեն կերպ փորձում էր կառչել գետի քարերից, բայց անօգուտ. ջուրը քշում էր և նրան, տանում առաջ: Նետվեցի ջուրը և օգնեցի տղային: 15-16 տարեկան պատանի էր: Չեռքով նշան արեցի չխոսել: Տղան հասկացավ:

Գերեզմանոցի կողմից կրակոց լսվեց: Հորս սպանեցին: Անձայն, անաղմուկ հեկեկում էի:

Երկուսով կպել էինք քարափին և սպասում էինք սարսափահար: Կարծում էինք, որ մեզ էլ կգտնեն: Չգիտեինք, թուրքերը հեռացնու՞ն են գերեզմանոցից: Այդ տղայի անունը Վահան էր:

Մթնշաղիկն ես ու Վահանը զգուշորեն մտանք շիրմաքարերի արանքը և գնացինք առաջ: Հայրս ընկած էր մորս համար փորված դեռ կիսափոր փո-

սի մոտ: Դիակը քաշեցինք մի կողմ: Փոսը մի քիչ էլ փորեցինք և հողին հանձնեցինք հորս: Առավոտյան Վահանի հետ մորս համար էլ փոս փորեցինք: Բարի մարդիկ գտնվեցին, և նրանց օգնությամբ քաղեցինք նաև մորս: Հետագայում ընդհանուր թոհուրոհի մեջ ես կորցրի Վահանին և այլևս չտեսա նրան:

Քույրերս ու եղբայրներս մնացին իմ հույսին: Ես էի նրանց հույսն ու հավատը: Նրանք, քաղցած ու կմախքացած, անուժ ու անօգնական, հաց էին խնդրում ինձնից.

– Ռուբեն... Ռուբեն... մի շա՛տ փոքրի՛կ կտոր հաց...

Հաց չկար: Աչքիս առաջ մեռնում էին:

Մեր մեծ գերդաստանից բոլորը մահացան, մահացան սովից: Կենդանի մնացինք ես, Գուրգեն եղբայրս, Հռիփսիմե քույրս: Հռիփսիմեին Ղասամալի⁸ գյուղում Մնացական անունով մի մարդ կնության առավ: Մնացինք ես ու Գուրգենը⁹:

Ես կոտորածից փրկվեցի թուրք Հասան բեկի շնորհիվ: Լայն, քարքարոտ ու խոր ձորում, որտեղով հոսում էր սակավաջուր գետակը, երկու թուրք ասկյար հրացանով նշան են բռնում ու քրքջում են, հատուկենտ խոսքեր ասում և նորից հրացանի փողն ուղղում ինձ վրա: Ասկյարները որոշում էին, թե ով ավելի դիպուկ կարող է կրակել.

– Ես ուղիղ ճակատին կկրակեմ, – ասում էր մեկը:

– Իսկ ես կկրակեմ աչքերի մեջտեղը, – պարծենում էր մյուսը:

Հանկարծ ձորի վերևից մի ձայն է լսվում: Ինչ-որ մեկը թուրքերենով խոսում է ասկյարների հետ.

– Հե՛յ, ասկյարներ: Ի՞նչ եք անում: Հա՞յ եք բռնել:

– Հա՛..., հայ ենք բռնել, հիմա կսպանենք, – պատասխանում են ասկյարները:

Ձորի վերևում կանգնած էր մի թուրք բարձրատիճան գինվորական:

– Մի՛ սպանեք նրան, նրա դատաստանը ես պիտի տեսնեմ: Շորերը թող հագնի, բերե՛ք ինձ մոտ: Դու կարող եք գնալ, ուր որ կամենաք:

Ասկյարները կատարում են բեկի հրամանը: Երբ ես ու բեկը մնում ենք մենակ, բեկը հարցնում է.

– Դու Վարոսի տղան չե՞ս: Հայրդ ո՞ղջ է: Մենք միասին շատ ենք կերուխումների մասնակցել: Ի՛նչ լավ ձայն ունեք: Լա՛վ մարդ էր: Նստի՛ր ձիուս գավակին: Քեզ կհասցնեն մոտակա հայ գյուղը և քիչ հեռու կիջեցնեն: Թաքուն հասի՛ր գյուղ և փրկվի՛ր: Հասան բեկն եմ:

* * *

1930-ական թվականներին մի օր, երբ Քնարիկենց ընտանիքը հյուրընկալվել էր Ղոշավանը¹⁰

գյուղում՝ Ռուբենի քեռիների մոտ, Ջաքելը Քնարիկին բարձրացնում է պատի վրա, ցույց է տալիս հեռվում երևացող գյուղը և ասում.

– Էն գյուղը տեսնո՞ւմ ես: Դալան է՝ մեր գյուղը: Եկեղեցին տեսնո՞ւմ ես, դիմացն էլ սպիտակ, ներկած պատերով տուն կա, դուռը բաց է... Դա մեր տունն է, իմ ծնողների տունը: Մեր տան դիմաց եկեղեցին է, ամբողջ գյուղում միակ եկեղեցին¹¹: Տերտերն իմ հորեղբայրն էր՝ տեր Ավոն: Բոլոր ճալացիներն այդ եկեղեցում էին աղոթում, ժամերգություն լսում: Հիմա այնտեղ թուրքերն են ապրում: Հորդ՝ Ռուբենի գերդաստանից փրկվեցինք միայն չորսս՝ ես, հայրդ, նրա եղբայրը՝ Գուրգենը, քույրը՝ Հռիփսիմեն: Հիշի՛ր, աղջիկս, էն մեր գյուղն է, էն երևացողը մեր եկեղեցին է, բաց դուռը մեր տան դուռն է...:

Մայրս տանջահար հայացքով նայում էր հարազատ գյուղին, հարազա՛տ, բայց օտարին բաժին դարձած սիրուն սարերին, կանաչ դաշտերին: Նայում էր կարոտով, երազկոտ հայացքով:

Եվ ինչքան պիտի հայն այդպես նայի իր հազարամյա հայրենիքին:



Ծնողների՝ Ռուբեն և Ջաքել Բաղդասարյանների հուշերը գրի առած մանկավարժ Քնարիկ Բաղդասարյանը

8 Գյուղ Շիրակի մարզում: 1940 թ. վերանվանվել է Գետափի:

9 Գուրգենը զոհվել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ Կերչի մատույցներում՝ կռվելով Թամանյան դիվիզիայի շարքերում:

10 Գյուղ Շիրակի մարզում: 1950 թ. վերանվանվել է Հայկաձոր:

11 Դալա գյուղի եկեղեցին կոչվում էր Սբ. Գրիգոր (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 7765, ք. 63; ֆ. 57Պ, ց. 3, գ. 54, ք. 92):



ՍԱՐԳԱՐԻՏ ԽԼՂԱԹՅԱՆ
(վախճ. 1946)

Համառոտ կենսագրություն

Սույն հուշագրության հեղինակ Մարգարիտ Խղաթյանն (ծննդյան տարեթիվն անհայտ, ծնվ. Խարս գյուղում) իր հուշերը բանավոր ավանդել է դստերը՝ Ռեհան Մխիթարյանին (ծնվ. 1912 թ., Խարս գյուղ - վախճ. 2006 թ., Երևան):

Գրի առնողը եղել է Ռեհան Սմբատի Մխիթարյանի դուստրը կամ բուն հուշագրության հեղինակի թոռնուհին՝ Էմմա Լևոնի Մխիթարյանը (ծն. 1939 թ.):

Մեծ եղեռնի ժամանակ 70 շնչից բաղկացած խարսեցի Բավա Մարգարի ընտանիքից փրկվում են Սմբատի կինը՝ Մարգարիտ Խղաթյանը (Մաքո), դուստրերը՝ Ռեհանը, Ազնիվն ու Աղավնին, Սմբատի եղբոր կինը՝ Մաքոն, և երկամյա որդին՝ Վանոն:

1929 թ. Ռեհանն ամուսնանում է արմատներով Տարոնի Մուշեղաշեն¹ գյուղից Լևոն Պողոսի Մխիթարյանի² հետ և ունենում 4 երեխա՝ 3 տղա, 1 աղջիկ:

Ռեհան Մխիթարյանը վախճանվել է 2006 թ. մարտի 6-ին և ամփոփվել Նուբարաշենի գերեզմանոցում: Մահվանից 6 տարի առաջ վերջինիս դուստր Էմմա Մխիթարյանը գրի է առնում մոր միջոցով ավանդված տատիկի հուշերը:

¹ Մինչև 1915 թ. հայաբնակ Մուշեղաշեն (Մուշ-Խշեն, Մուշաղշեն) գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգում՝ Մուշ քաղաքից 43 կմ հարավ-արևելք: Ներկայումս գոյություն չունի:

² Լևոն Մխիթարյանը ծնվել է 1909 թ. Կարսի Ղոշավանք գյուղում: Կապիտան էր: Ջոնվել է 1942 թ. Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Լևոնի հոր՝ մուշեղաշենցի Պողոսի մասին հուշագիրը վկայել է. «Մի անգամ Մուշեղաշենում հարսանիքի ժամանակ թուրքերը վրա են տալիս և փախցնում հարսին: Պողոս պապս հետապնդում է թուրքերին և նրանց սպանում: Հարսին վերադարձնում է գյուղ, իսկ ինքը բարձրանում է սարերն ու միանում ֆիդայիներին: Այդ դեպքից հետո թուրք և բուրդ զինվորները շրջապատում են գյուղը և հայտարարում, որ պետք է կտտորեն բոլորին: Պապիս կնոջն ու հարազատներին շատ են չարչարում, բայց բոլորը միաբերան պնդում են, թե մա վաղուց դարիբության է գնացել, և ոչ մի լուր չունեն»:

ԹՈՒՐՔԸ ՍՈՒԽԱՆՆԱԹ Է

Պապիկիս գերդաստանը

Մայրս՝ Ռեհանը, ծնվել է Մուշի Խարս գյուղում՝ Բավա (այսինքն՝ Մեծ տուն) Մարգարի¹ 70 անձից բաղկացած գերդաստանում:

Բավա Մարգարն ունեցել է յոթ տղա և Ռեհան անունով մի աղջիկ (մահացել էր երիտասարդ հասակում): Հետագայում նրա անունով են մորս կոչել: Մարգարի որդիներից էին Արշակը, Տիգրանը, Սմբատը: Արշակը հաղթանդամ, շատ խիստ մարդ էր, ինչպես իրենք էին ասում, առնակավոր էր: Մյուս որդին՝ Սմբատ բեկը (պապս), հռչակված էր որպես հողախախտումների և կոտրվածքների հեքիմ:

Աղբյուր Մերոբն իմ պապի՝ Սմբատի հորեղբոր տղան էր: Այդ պատճառով էլ միշտ նեղություն են տվել:

1905 թվին թուրքական մեծաթիվ խուժանը շրջապատում է գյուղը՝ այրելու և ոչնչացնելու նպատակով: Վաղ առավոտյան՝ դեռ լույսը չբացված, Սմբատ պապս, նրա եղբայրները և Գևորգ Չավուշը կռիվ են տալիս²:

Իմ պապեմական տունը մեծ հարգանք էր վայելում. ֆիդայիների սնունդն ու հագուստը լրիվ ապահովում էին:

Սմբատ պապիս պաշտպանում էին Շեկո տան քրդերը: Մի անգամ քուրդ փաշայի միևնույն աղջկա ծնոտը դուրս է ընկնում, ոչ ոք չի կարողանում բուժել: Հավար են գցում իմ պապին: Պապս բուժում է աղջկան և փաշայի այն հարցին, թե՛ որքա՞ն ոսկի կուզես, պատասխանում է՝ ոչ մի դուրուշ: Այդ ժամանակ փաշան հայտարարում է, որ ոչ ոք երբեք չի կարող չար միտք ունենալ պապիկիս ընտանիքի հանդեպ, և եղբայր է համարում իմ Սմբատ պապին:

Պապս միշտ կրկնում է. «Թուրքը մոխաննաթ է, իրենց կարողությունը թող մնա խաչեղբայր Մանթաշովի մոտ, որ եթե պատահի այնպիսի դեպք, որ իրենցից թեկուզ մեկը փրկվի, Մանթաշովը նրան հանձնի իրեն ի պահ տվածը»: Տարին մի քանի անգամ Մանթաշովը գալիս էր Խարս:

Պապիկիս գերդաստանի կոտորածը

1915 թ. Վարդավառին թուրքերը սկսում են կոտորածը: 30 թուրք զինվոր շրջապատում է մերոնց տունը՝ իբր պաշտպանելու: Մի քուրդ, որ մեր տան մշակն էր եղել, գաղտնի հայտնում է, որ վերևից

հրաման ունեն բնաջնջել բոլորին, հայից բեկ չի մնալու, կանանց ու աղջիկներին էլ կտանեն իրենց կնոթյան: Պապիս մեծ եղբայրը՝ Արշակը, ասում է.

–Թուրքը ոսկու մեռած է, հանե՛ք ոսկու կշեռքը, կշռե՛ք ու ոսկի տվե՛ք բոլորին:

Հենց այդ պահին էլ վրա են տալիս ու կոտորում տղամարդկանց: Հարսներից մեկը վառվող թոնրի մեջ ջուր է լցնում, գոլորշին ծածկում է տունը, որ կարողանան փախչել: Սմբատ պապս քթոցով բարձրանում է, որ օճորքից կրակ բացի, թուրքը գոռում է.

–Սմբա՛տ, իջի՛ր, էլ քեզ ձեռք չենք տա:

Պապս ուզում է իջնել, բայց խփում են ուղիղ զլխին: Հետո բարձր գոռում են.

–Էլ տղամարդ չկա, գրկանոցներն էլ խլեք: Կանանց, ջահել հարսներին էլ կապում են, որ տանեն: Հարսներից մեկը կծում է թուրքի ձեռքը, ապա խելագարի նման հարձակվում թուրք զինվորների վրա: Ջահել հարսին տեղում սպանում են: Սկսում են կանանց էլ կոտորել:

Մեծ պապիս՝ Մարգարին, սպանել են իր կալի մեջ:

Տառիկիս հուշերն իրենց փրկվելու մասին

1915 թ. մայրս՝ Ռեհանը, 3 տարեկան էր, փոքր քույրը՝ Աղավնին՝ 6 ամսական: Կոտորածի ժամանակ քուրդ մշակներից մեկը փրկում է տատիկիս, երկու երեխայի և տեգերկին Մաքոյին երկու տարեկան տղայի՝ Վանոյի հետ և տանում-պահում է իր խոտի դեզի մեջ: Մնում են մի քանի օր: Մի օր էլ թուրքերը բռնում են քրդին, թե ո՞ր են հայերը, ու սկսում են խշտկահարել դեզը, բայց ոչ մեկին էլ չի կաշում խշտիկը, երեխաներն էլ լաց չեն լինում: Թուրքերը հեռանում են: Քուրդը գիշերով հեռացնում է մերոնց: Նրանք թափառելով հասնում են մի գյուղ, ուր մարդ չի լինում, տներից մեկում մի քիչ լոռ են գտնում, վերցնում են և հեռանում: Հասնում են մի փոքր առվի, տատս ափի մեջ լոռը ջրով բացում է և լցնում Աղավնու բերանը: Ծարավից նրա լեզուն չորացել էր, չէր կարողանում կուլ տալ: Թափառելով հասնում են Իգդիր, տատս մտնում է եկեղեցի և տերտերին խնդրում է օգնել փոքրիկին, որը սովից թուլացել էր: Տերտերն ասում է.

–Ես երեխա չունեմ, տու՛ր ինձ, դու էլ գնա քո ճամփեն, կպահեն աղջկադ³:

1 1916 թ. գյուղ այցելած ոգմեցի Արմենակ Ամրիկյանը Բավա Մարգարի տները տեսել է ավերակված վիճակում (տես սույն աշխ., էջ 354):

2 Կռիվը տեղի է ունեցել 1905 թ. ապրիլի 21-ին (մանրամասն տես «Մուրճ», 1905, № 8, էջ 170-172):

3 Էմմա Մխիթարյանը նշում է, որ բազմաթիվ փնտրտուքներից հետո Երևանում գտել է իր մորաքրոջ ընտանիքին: Ի դեպ, Իգդիրի քահանան Աղավնուն վերանվանել էր Շողակաթ:

Երկար թափառելով հասնում են Սևան: Մի եզան վրա խորջին էին դրել, խորջինի մի կողմում մորս՝ Ռեհանին էին նստեցրել, մյուս կողմում՝ Վանոյին⁴: Հետո գնում և մնում են Լենինականի պոլիգոններում: Մանթաշովը գտնում է մերոնց: Նա տատիս համոզում է, որ աղջկան՝ Ռեհանին իրեն տա, ինքը կպահի իր խաչեղբոր աղջկան, տատն էլ թող նորից ամուսնանա: Բայց տատս հրաժարվում է՝ ասելով.

–70 հոգուց Ռեհանս է մնացել, չեմ տա:

Տատս մորս քաշալացնում է, և փախչում, գնում են Սվանվերդի⁵ գյուղ:

Շրջապատի գաղթական ժողովուրդը շատ էր սիրում և հարգում տատիս: Տատս մի անգամ ջրի է գնում: Տեղացիներից մեկը հարցնում է, թե ինչն⁶ էն քեզ այդքան հարգում գաղթականները, դուք հա՞յ եք, թե՞ գաղթական (թուրքի, քրդի իմաստով): Տատս ավերից ելած գոռում է.

–Թուրքն ու քուրդը դուք եք, որ չգիտեք հավատք ու մեռնոն: Մենք այսքան տանջանքներ կրեցինք հանուն հավատքի, չուրացանք մեր կրոնը, հիմա դու ինձ թո՞ւրք ես համարում:

Կժով ջուրը լցնում է այդ կնոջ վրա: Մեծ աղմուկ է բարձրանում: Տեղացիները չէին սիրում և չէին շփվում գաղթականների հետ: Գաղթականին աղջիկ չէին տալիս: Սակայն գաղթականներն իրենց միաբանությամբ կարողացան իրենց պաշտպանել:

Վերապրած Ազնիվ մորաքույրս

Գյուղի կոտորածից Ազնիվ մորաքույրս էլ է փրկվել: Երբ ժողովրդին հավաքում, լցնում են եկեղեցի, որ այրեն, մի թուրք ասկյար հարցնում է, թե Բավա Մարգարի տնից մարդ կա՞, այդ տունը հիմնովին պետք է բնաջնջել: Մի պառավ առանց խղճի ասում է. «Զգի մեռնիմ, իդա աղջիկ Բավա Սմբատի աղջիկն է»: Թուրքը կատաղած վրա է պրծնում, բռնորդ խառնվում են իրար, իսկ մորաքրոջս՝ դեռատի Ազնիվին, իրենց փեշերի տակով կանայք փոխանցում են մեկը մյուսին: Եկեղեցին⁶ վառում են:

Մորաքույրս կարողանում է փախչել: Ճանապարհին մի ջրաղաց է տեսնում, հենց ուզում է մոտենալ, մի թուրք, ետևից գյավուր գոռալով, նրան բռնում և զցում է ջուրը: Այդ ջուրը գնում էր դեպի ջրաղաց: Մորաքույրս ուշագնաց է լինում: Պատահմամբ մի թուրք ջրաղաց եկող ջրի մեջ տեսնում է երկար հյուսեր, քաշում է՝ ստածելով, թե պարան

է: Հանում է, տեսնում է մորաքրոջս և իմանալով, թե ում տնից է, ասում է, որ էդ տան հացը կքոռացնի իրեն, եթե ուրանա: Մորաքրոջս տանում է տուն և սովորեցնում, որ ոչ մեկի հետ չխոսի, չասի իր ով լինելը և ծառայի իր տանը իբրև լալ: Իր կինն էլ ինչ որ ասի, թող լսի, մինչև որ մի բան անի նրան փրկելու համար: Տանում է տուն և կնոջն ասում, որ ճամփեն մոլորած է, տունը կորցրել է, թող իրենց մոտ մնա և օգնի: Սակայն թուրքի կինը չարությամբ է լցվում և որոշում է սպանել մորաքրոջս՝ մտածելով, թե ամուսինը նրան կնության համար է բերել: Մի օր էլ հացի մեջ թույն է լցնում, տալիս մորաքրոջս և ուղարկում է կովերին արածեցնելու: Թուրքը տեսնում է կնոջ արածը, մոտենում է մորաքրոջս և ասում՝ «Ազնիվ, հացը մի՛ կեր, մեջը թույն է, զցի՛ր ու փախի՛ր»:

Մորաքույրս նորից թափառում է և միանում ուրիշ գաղթականների, որոնց մեջ էր մորաքույր Ֆիդրոն: Նա տեր է կանգնում Ազնիվին, սակայն չդիմանալով սովին՝ ճանապարհին մեռնում է: Հասնում են Իզմիր: Գնում է շուկա, որ հաց մուրա կամ էլ մի գործ գտնի: Այստեղ մի հայ հարցնում է.

–Ո՞վ ես, ո՞ր գյուղից ես, ո՞ւմ աղջիկն ես:

Պարզվում է, որ իր հոր ընկերն է՝ Մարգարը: Նրա կնոջը և երեխաներին (2 տղա և 1 աղջիկ) կոտորել էին: Մարգարը Ազնիվին տանում է իրենց մոտ, ուր մի թուրք կնոջ մոտ վարձով էին մնում: Ազնիվը քնում է Մարգարի մահճակալի տակ: Բայց մի քանի օր հետո հայերից մեկը Ազնիվի մասին խաբար է տալիս տանտիրոջը, որն էլ գալիս է և ուզում է մորաքրոջս դուրս հանի: Մարգարը հայտարարում է, որ իր կինն է, ու կնության է առնում: Մորաքույրս տեղ ու տեր չունենալու պատճառով, իր կամքին հակառակ, ամուսնանում է: 1918 թ. ծնվում է առաջին երեխան՝ Լուսվարդը:

1920 թվին Իզմիրում էլ սկսում են հալածել ու կոտորել հայերին: Ֆրանսիական նավը փրկում է շատերին, որոնց թվում է մորաքրոջս: Երբ կամրջակը բարձրացնում են, երեխան հոր հետ մնում է ավիին: Մորաքույրս հասնում է Հունաստան՝ Սալոնիկ: Երկու տարի անց եկեղեցում մի օր լսում է երեխայի ձայն, որը կանչում է՝ «Մամա՛-մամա՛»: Շրջվում, տեսնում է իր աղջկան՝ ամուսնու գրկում:

1924 թ. ծնվում է մեծ տղան՝ Մովսեսը, 1931 թ.՝ Կորյունը (Մարգարն իր նահատակված երեխաների անուններով է կոչում): Հետո տեղափոխվում են Վիեննա, ապա Ֆրանսիա՝ Ալֆորվիլ և հաստատվում այդտեղ: Ազնիվ մորաքույրս երբեք օտար լեզվով չի խոսել: Նա միշտ ասում էր. «Թուրքի տունն էլ այնպես բրիչակ⁷ լինի, ինչպես թուրքն իմ հոր տունն արեց»:

4 Ըստ Էմմա Մխիթարյանի՝ Մարք տացուն որդու՝ Վանոյի հետ հաստատվում է Արմավիրի մարզի Հոկտեմբեր (Արմավիր) գյուղում: Վանոն ավարտում է համալսարանի պատմության ֆակուլտետը: Կինը՝ Մեդան, հայոց լեզվի ուսուցչուհի էր: Նրանց միակ որդին՝ Տարիելը, ունի երեք երեխա՝ 2 աղջիկ և 1 տղա:

5 Գյուղ Լոռու մարզում: 1947 թ. վերանվանվել է Լուսաղբյուր:

6 Խարսի եկեղեցին հայտնի էր Սբ. Աստվածածին անվամբ (Տեղանց Ա., Այցելություն ի Հայաստան. 1878 թ., Երևան, 1985, էջ 49): Ներկայումս գոյություն չունի:

7 Ավերակ:



Մոր՝ Մարգարիտ Խլղաթյանի բանավոր հուշերը նույնպես բանավոր կերպով դստերը փոխանցած Ռեհան Մխիթարյանը (1912-2006)



Տատիկի՝ Մարգարիտ Խլղաթյանի հուշերը մոր՝ Ռեհան Մխիթարյանի ասությանք գրի առած Էմմա Լևոնի Մխիթարյանը (ծնվ. 1939 թ.)



ԱՐԱՄ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
(1904 -1993)

Համառոտ կենսագրություն

Արամ Հարությունի Կյուրեղյանը ծնվել է 1904 թ. Սեբաստիայում:

Մեծ եղեռնի ժամանակ Կյուրեղյանների ընտանիքից տարագրվում են հայրը՝ Հարությունը, մայրը՝ Գոհարը, եղբայրը՝ Արմենակը (13 տարեկան) և քույրերը՝ Ջարուհին (15 տ.), Իսկուհին (14 տ.), Հայզվարթը (6 տ.), Արուսյակը (7 ամսական): Այդ ժամանակ ավագ եղբայրներից Համբարձումն ԱՄՆ-ում էր, Խորենը՝ Կոստանդնուպոլսում: Ցեղասպանությունը վերապրում են Արամը և երեք եղբայրները:

1915 թ. Արամը մասնակցում է Ուրֆայի հերոսամարտին: 1919 թ. գտնում է եղբորը՝ Արմենակին:

1920 թ. ուսանում է Կ.Պոլսի Գատրգյուղի Արամյան վարժարանում: Ուսումն ավարտում է 1922 թ. և ստանում առաջին մրցանակ: Նույն թվականի սեպտեմբերին մեկնում է Փարիզ:

1929 թ. ամուսնանում է ծնունդով սամսունցի Ալիս Մուրաֆյանի հետ և ունենում երկու զավակ: 1939 թ. ծառայում է ֆրանսիական բանակում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Միսաք Մանուշյանի խմբի համար Արամ Կյուրեղյանի ոսկերչական խանութի նկուղը վերածվում է գաղտնի զինապահեստի:

1947 թ. ավագ եղբոր՝ Արմենակի ընտանիքի հետ հայրենադարձվում է Հայաստան և այստեղ էլ հիմնում է ոսկերչական արհեստանոց: Նրա ստեղծած գործերից հայտնի են «Հայաստանի Հանրապետության գերբը», «Հորեղանական սկահակը», «Առատության տակառը» և այլն:

1962 թ. ձերբակալվում է: 1965 թ. վերադառնում է Փարիզ:

Որպես Մեծ եղեռնը վերապրող՝ հանդես է գալիս վկայություններով 1981 թ. Փարիզում Թուրքիայի հյուպատոսարանը գրաված «Վան» խմբի չորս հայ մարտիկների՝ 1984 թ. դատավարության ժամանակ Ժողովուրդների մնայուն դատարանի առջև: 1985 թ. Բոստոնի «Ձորյան» հաստատությունում ձայնագրված հուշերը հիմք են ծառայում վեցժամանոց տեսաժապավենի պատրաստմանը, իսկ մեկ տարի անց՝ ապրիլին, գերմանական հեռուստատեսության Ա կայանով ցուցադրվում է ռեժիսոր Ռալֆ Ջորդանոյի պատրաստած «Հայկական հարցն այլևս գոյություն չունի» տեսաժապավենը կրկին Արամ Կյուրեղյանի հուշերի հիման վրա:

Արամ Կյուրեղյանը վախճանվել է 1993 թ. Փարիզում՝ 89 տարեկան հասակում:

Հուշագրությունը եզակի է նրանով, որ հեղինակն իր հուշերը գրի է առել Մեծ եղեռնից մի քանի տարի անց՝ 1920 թ., երբ ընդամենը 16 տարեկան էր:

Մահից մի քանի օր անց ֆրանսահայ մամուլում, ի հիշատակ Մեծ եղեռնը վերապրած Արամ Կյուրեղյանի, հրատարակվում է նրա համառոտ կենսագրությունը¹:

Հուշագրությունն առաջին անգամ որդու՝ Ժան-Վարուժան Կյուրեղյանի ջանքերով և հետագա լրացումներով տպագրվում է 2004 թ. Ստամբուլում թուրքերեն թարգմանությամբ², իսկ 2009 թ. Փարիզում լույս է ընծայվում գրքի ֆրանսերեն տարբերակը³: Ստորև ներկայացվող հայերեն բնօրինակը հրատարակվում է առաջին անգամ:

1 **Մուրադեան Ռ.**, Արամ Կյուրեղյանի յիշատակին, «Յառաջ», 17.06.1993:

2 **Jean-Varoujean Gurégghian**, Babamin yazgisi: Küçük Asya'nın Golgotha'si, İstanbul, 2004.

3 **Jean-Varoujean Gurégghian**, Le golgotha de l'Arménie Mineure. le destin de mon père, Paris, 2009.

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԷՆ ԴՈՒՆ ՈՂՋ ՄՆԱՍ ԵՎ ՄԵՐ ՎՐԷԺԸ ԼՈՒԾԵՍ

1914 թ. թուականն ամենքս ալ գիտենք, որ դժբախտ տարի մը եղաւ մեզի՝ հայերու համար: Թուրք կառավարութիւնը մունետիկներ կանչել տուաւ, որ 18էն մինչեւ 45 տարեկանները երթան ու զինուոր գրուին: Ով որ չի գար, բռնէին, եթէ հայ է, կախաղան կը բարձրացունէին, իսկ եթէ տաճիկ է՝ թեթեւ պատիժ մը տալով՝ թող կուտային:

Ես, որ այն ատենը 8-9 տարեկան էի, Մերաստիոյ Ազգ. Արամեան վարժարանը կերթայի կարողաւ: Ճիշդ այդ միջոցն էր, որ եկան մեր դպրոցը եւ ըսին. «Դուք այստեղէն պիտ ելլաք, որովհետեւ հիւանդանոց պիտի ըլլայ»: Մեր մեծերը հնազանդեցան այս հրամանին, եւ մենք գացինք Ս. Մարգիսի դպրոցը¹: Այնտեղ հազիւ ամիս մը կեցանք, մէյ մըն ալ² տեսանք դուռը երկու ոստիկան եկեր է: Հարցուցինք՝ «Ի՞նչ կուզէք»: Ըսին. «Կառավարութենէն տեսուչը կուզեն կոր»: Առին եւ տարին: Միւս օր նոյնպէս եկան, 2 ոսուցիչ տարին եւ այսպէս քանի մը օր շարունակուելէն վերջը: Դպրոցին վերին սրահն գացինք, եւ փոխտնօրէնը սկսաւ բարձր ձայնով խօսել: Բաւական խօսելէն վերջը ասաւ. «Տղաքս, գացէ՛ք ձեր տուները ու անգամ մըն ալ մի՛ գաք դպրոց»: Սկսանք ցրուիլ: Երբ որ ելանք դպրոցէն եւ դէպի տուն կուգայինք, տեսանք, որ հայ մարդիկը թեւ թեւի կապած կը տանէին դէպի բանտ: Մենք ալ շուարած ուշադրութեամբ կը դիտէինք, թէ ի՞նչ նպատակով կը տանէին ասոնք, հայրի՞կս ալ կայ: Վերջապէս դպրոցական տղաքս գնացինք մեր տուները: Այն էր ու այն, այլ անգամն ալ դպրոցին երեսը չի տեսանք: Ես երբ որ տուն գացի, պայուսակս դեռ գետին չի դրած, մայրիկիս հարցուցի, թէ հայրի՞կս ալ տարին:

–Ո՛չ,– պատասխանեց:

Փառք տալով նստեցայ: Այսպէս քանի մը օր շարունակուեցաւ: Ամէն օր գիտէրէն մարդ կը բերէին եւ բանտ կը դնէին կամ սայլի վրայ դնելով՝ մինչեւ Կարին կը դրկէին: Երբ մենք նստեր էինք մեր տունը, սովորական կերպով դուռը զարնուեցաւ: Դուռը բացինք, երկու ոստիկան հարցուցին մեզի.

–Յարութիւն Կիւրեղեանը հո՞ս է:

–Այո՛,– պատասխանեցինք:

Կառավարութենէն կուգուի կոր: Հայրիկիս տարիքը արդէն 45 էր, իրենց ուզածն ալ մինչեւ 45 է: Առին տարին զինքը զինուորութեան, այսինքն՝ զի-

նուորութիւնն ալ հայերուն համար ամէլէ ըստածն էր: Իմ հայրիկս վարժ չէր այդպէս գործերուն: Ստիպուեցաւ պետէլ վճարել, եւ շատ դժուարութեամբ ընդունեցին պետէլը: Այսպէս ըլլալով՝ նորէն հանգիստ չի մնացինք տեղերնիս, որովհետեւ քանի մը օր վերջը մունետիկ կանչեց՝ ըսելով. «Այս քաղաքին մէջ եւ շրջակաները որչափ որ հայ կայ, պիտի գաղթեն այստեղէն եւ Մալաթիա պիտի հաստատուին, ու կառավարութիւնը տուն-տեղ պիտի տա ձեզ, եւ հոն պիտի ըլլայ ձեր հայրենիքը»:

Բայց հայերը կը հասկնային նպատակնին, բայց ի՞նչ օգուտ, ոչինչ կրնային դիմադրել, որովհետեւ արդէն առաջուց բոլոր զենքերը գրաւած էին, իսկ մենք, որ այն ատենը պզտիկ էինք, կուրախանայինք, որովհետեւ ճամբորդութիւն պիտի ընէինք եւ քաղաքներ պիտի տեսնէինք: Ես ալ որչափ խաղալիքներ ունէի, բոլորը տաճիկ ընկերներու կը բաշխէի:

Օր մըն ալ լսեցինք, որ միւս թաղերուն մէջը շրջապատեր են, որպէսզի չի կրնան բան մը փախցունեն կամ ծախսեն: Առաջուց հրաման ըրած էին, որ ուզածնին ծախսեն: Օրն ալ միասին որոշելով՝ այսպէս ճամբայ հանեցին այդ թաղը: Այսպէս շարունակաբար եւ թաղ-թաղ հանելէ վերջ, կարգը հօրեղբօրս թաղին եկաւ: Հօրեղբայրս զինուոր գացած էր, իր ընտանիքը շատ տրտում, տխուր ճամբայ ելաւ: Որովհետեւ մենք անոնցմէ վերջ պիտի ելլէինք, հօրեղբօրս հագուստեղէնները մեզի յանձնեցին, որպէսզի երբ ինքը գայ, հագուստները մեզմէ առնէ: Մեր թաղին կարգը եկաւ³: Մենք ալ պատրաստուեցանք ճամբայ ելլալու: Ոստիկանները սկսած էին պտտիլ թաղին բոլորտիքը: Մեր թաղին վերի կողմը պզտիկ գետակ մը կար, բոլոր ճամբորդութեան պետքերնիս քաշինք հոն: Հօրեղբօրս հագուստեղէնները, դուռներն ալ կնքելով բանալիները մեր դրացի տաճիկ ընտանիքի մը յանձնեցինք: Մինչեւ ժամը 12 սպասեցինք արեւուն դէմ: Կէսօրին կառքերը դէմերնիս շարուեցան ու սկսան մէկիկ-մէկիկ բաշխել՝ մէկ ընտանիքի մը 1 կամ 2 կառք տալով: Իրիկուան սկսանք ճամբայ ելլալ: Քաղաքին մէջէն կանցնէինք, երբ կը տեսնէինք միւս թաղերն կը գրէին ճամբայ ելլալու համար:

1 Խոսքը վերաբերում է Սբ. Մարգիս եկեղեցու բակում գտնվող Ներսիսյան վարժարանին (**Առաքել Ն. Պատրիկ**, Պատմագիրք յուշամատենան Մերաստիոյ եւ գաւառի հայութեան, Խ. Ա. Պէլյուր, 1974, էջ 457):

2 Հանկարծ:

3 Մերաստահայության տեղահանությունը տեղ է 15 օր՝ 1915 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 5-ը: Հուշագիրք, որ Քյոսադերե (Դասալըներ) թաղից էր, ընտանիքով տեղահանվել է հունիսի 28-ին:

Մերաստիայեն մինչև Մալաթիա ճամբորդություն

Կառքերը կամաց-կամաց քաղաքից դուրս կելնեին, եւ կը սկսինք շիտակ (սօսա) ճամբային երթալ: Ես, կառքին վրայ կեցած, կը դիտէի, թէ ինչպէս կը բաժնուէինք քաղաքէն: Մերաստիոյ բարձր տեղը Հոդքար⁴ կոչուած տեղն էր, որ շատ սքանչելի կերեւար, որչափ որ հեռանայինք: Մինչև արեւը մար մտաւ, Ալիս գետի կամուրջէն անցանք: Առաջին անգամ ըլլալով՝ մարդագլուխ 2 դուրուշ առին, եւ գիշերը հանգիստ ըրինք: Կառասպաններ եզները թող տուին, որպէսզի արածեն: Անոնց կերակուրը մեր վրայ էր, եւ ես ալ գուարթ էի, որովհետեւ այն գիշեր բաց օդին մէջ պառկեցայ: Մենք Մերաստիայեն 1915 թ. Վարդավառի կիրակի օրը⁵ ճամբայ ելանք: Երբ առաւօտ եղաւ, ամէն մարդ բեռը կապեց եւ պատրաստուեցաւ ճամբորդութեան: Մեր կառասպանը կուգայ, միւսը կը պոռայ: Լծեցին կառքերը: Դամբայ ելանք, բայց ամէնէն վերջը մենք: Դամբորդութիւննիս շարունակեցինք եւ սկսանք բլուրէն կտոր-կտոր վեր ելլել: Ես աւելի կուրախանայի, որովհետեւ քաղաքը բոլորովին աչքիս առջեւը բացուած էր: Մէկ կը քալէի, մէկ կը դիտէի, թէ ինչպէս կը բաժնուէինք քաղաքէն: Բլուրին վրայ ելած էինք, շիտակ ճամբանիս կերթայինք, եւ կամաց-կամաց քաղաքը աչքերնուս առջեւէն կը կորի: «Մնա՛ս բարով», – հայրենիքիս ըսի եւ երեսս խաչակնքելով՝ դարձայ ճամբան եւ սկսայ քալել: Դիշտ այս միջոցին էր, որ հայրիկս մեզմէ ետ մնացած էր: Ետ մնացած միջոցին գլուխէն պզտիկ դէպք մը անցեր էր: Քիչ մը վերջը տեսանք՝ եկաւ բաւական յոգնած: Երբ հարցուցինք, սկսաւ պատմել, որ ինք մեզմէ ետ մնացած միջոցին քանի մը ձիաորդներ եկած են եւ ունէ հայրս մը անուն տալով՝ ասած են.

–Այսինչ մարդը դո՛ւն ես:

–Ո՛չ, – պատասխանած է:

Բայց անոնք ասած են.

–Այո՛, դուն ես, եւ մեզի այսչափ դրամ տալիք ունիս:

Քսակը հանել տուած են եւ ձեռքը մէջը խոթելով ձեռքը եկածի չափ դրամ առած եւ գացած են:

Ահաւասիկ այս է անցուցած դէպքը: Այս խնդրին վրայ մայրիկս, հայրիկիս վրայի բոլոր դրամները առնելով, պզտիկ քոյրերուս վրայ կարեց: Իրիկուան մօտ հասանք տեղ մը, որ ձոր մը կար, եւ մէջէն պզտիկ առու մը կերթար, իսկ մեզմէ բաւական հեռու ալ աղբիւր մը կար, որմէ ջուր կը խմեինք: Մութը կոխել սկսաւ: Յանկարծ գէնքի պայթիւններու ձայն լսեցինք, բաւական վախեցանք: Դիշտ այդ միջոցին հայ քաջ մը վարը՝ ձորին մէջ, քիւտ մը ծեծած է: Անոր համար նետուած են այդ գէնքերը: Այդ գիշեր

հոտ անցուցինք, բայց շատ անհանգիստ, որովհետեւ գիշերը մինչև լոյս գող կուգային ձորէն: Երբ որ առաւօտ եղաւ, նորէն ամէն մարդ պատրաստուեցաւ ճամբայ ելլալու, եւ սկսան ոտիկանները խառագանները քաշել: Սկսած էր ժողովուրդը ճամբայ ելլալ, բաւական քալեցինք այն տաքութեան մէջ: Կէսօրուան մօտ հասանք չոր գետի մը, որուն վրայ կամուրջ մը կար: Երբ որ վրայէն կանցնէինք, ամէն տան գլուխ բաւական դրամ առնելէ վերջ թող կուտային, որ երթան: Երբ կարգը մեզի եկաւ, հայրիկիս ճանչողներէն մէկը կար, ան ըսաւ մեզի համար, թէ ասոնք աղքատ են: Ատոր համար քիչ դրամ առին մեզմէ: Այսպէս շարունակ քալելով, երրորդ օրը անցունելով՝ իրիկուան մօտ պզտիկ գիւղի մը քով հանգչեցանք: Այդ գիւղէն յարդ առինք՝ այդ գիշերն ալ հոտ մնալով: Յաջորդ առաւօտ նորէն ճամբան ելանք, նորէն ճամբանիս շարունակեցինք: Օրական հազիւ 6 ժամ, 7 ժամ ճամբայ կը քալէինք: Վերջապէս 5 օրէն Ղանդալ ըսուած գայմագամըղ գացինք: Այնտեղ օր մը հանգիստ ըրինք: 17-18 տարեկան տղայ մը՝ Յարութիւն անունով, բանտ դրին: Այստեղէն ալ ճամբայ ելանք, երեկոյ դէմ տեղ մը հասանք, որուն մէկ կողմը ձոր մը կար, եւ մէջէն պզտիկ գետակ մը կանցնէր, իսկ վերջ տուն մը կար՝ քերպիճէ շինուած: Երբ հոս եկանք, մեզի հանգչեցուցին: Խալիս պէկ եւ մի քանի արիւնարբու ժանտարմաներ եկան, հասան մեզի: Մենք կը կարծէինք, թէ մեզ ետ պիտ դարձունեն: Երբ հոս կեցանք, մեր ուզածնուս պէս չի թողուցին կառքերը, այլ բոլոր իրարու ետեւի քանի մը շարքեր կազմեցին, եւ Խալիս պէկ հրաման ըրաւ, որ ժանտարմաները բոլոր էրիկ մարդերը հաւաքեն եւ իրեն քովը բերեն: Ոստիկանները մտան հայերուն մէջ ու սկսան հաւաքել: Երբ բոլորին բերին անոր քով, այլեւս երեւակայեցէք, թէ հայերը որչափ վախսցան: Բոլորը հաւաքուած ուշադրութեամբ կը նայէին, թէ ի՞նչ պիտի ըլլայ: Իմ մայրս եւ մենք սկսանք լալ եւ կըսէինք իրարու՝ ալ չի պիտի բերեն մեր քով: Երբ ամէն մարդ պատրաստ էր, Խալիս պէկ⁶ հանեց քովին ֆերմանին թուղթը ու սկսաւ մարդոց ըսել.

–Ահայ այս թուղթը, որ կը տեսնէք, Սուլթանին հրամանն է, ասկէ անդին Արապիստանի մէջէն պիտի ճամբորդիք, անոնք ձեզ կը կողոպտեն, կը թալլեն, անօթի կը մնաք, ուստի այս պատճառաւ մենք խորհեցանք ձեզի այս միջոցը գործածել: Հինս դուք ինչ որ ունիք, ոսկեղէն, արծաթեղէն, օղեր, թեւոցներ, վերջապէս ամէն ինչ բերէք եւ մեզի յանձնէք: Մենք որ մարդէս որ որչափ դրամ առինք, բոլոր պիտի գրենք, եւ ամէն ամսագլուխ հաւասար կերպով պիտի բաշխենք, յետոյ դրամնիդ հաւաքելէ վերջ ամէն մարդու քով պիտ նային, երբ որուն քո-

4 Հոդքարը (Հոդքար) 40-50 մ բարձրությամբ բլուր է՝ Մերաստիա քաղաքի համանուն թաղերից մեկում:

5 1915 թ. Վարդավառի կիրակին հունիսի 28-ն էր:

6 Մէկ այլ ակնանտեսի հուշերում այդ հրամանն ընթերցել է Եմիր փաշայի տղան՝ Համիա բեկը (**Գումկան Մերաստիոյ (Կ. Գաբրիէան)**, Եղեռնապատում Փոքրու չալոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Մերաստիոյ, Պոսթրն, 1924, 139-140):

վին 10 փարանոց մը ելլելու ըլլայ, մէկ կապարի դուրպան պիտի ընեն:

Ասանկով ամէն մարդ իրենց տեղը դրկեց, եւ բոլոր ժողովուրդը մտածումնքի մէջ մնաց: Ոմանք վախնալով բոլոր ունեցած չունեցածնին տուին, ոմանք ալ ունեցածնուն կէսը կամ քառորդը պահեց: Մենք ալ բաւական մը յանձնեցինք, մէկ կողմէն կը տանէին, մէկ կողմէն կը գրէին: Երբ որ բոլոր գործերնին լրացաւ, ուզած մարդիկնին բռնեցին, բանտ դրին այդ տանը մէջ, ոմանց ալ հարածեցին: Հարածներինց վախնալով՝ նոյնիսկ ուրիշէն փոխ առաւ տուաւ: Իմ հայրիկս ալ քննեցին ու թող տուին: Ամէն մարդագլուխ 50-ական դուրս տուին: Բոլոր առածնին խուրճերուն մէջ լեցնելով՝ ելան գացին⁷:

Հոս օր մը հանգիստ ըրինք: Առաւօտուն կանուխ նորէն ճամբայ ելանք, սկսանք ճամբորդութիւննիս շարունակել: Այսպէս 2-3 օր վերջ հասանք Հասան Չէլէպի⁸ ըստած տեղը: Երբ որ իրիկուան դէմ կը մտնէինք այս գիւղը, պարտէզներուն մօտ էջ մը փախցուցին հայերուն մէ: Հայ քաջերուն մէ քանի մը քաջեր գացին եւ էջը բռնելով՝ բերին, եւ մտանք գագան: Իրիկունը ժողովուրդին մէջ խլրտում մը ինկած էր, բայց ոչ ոք գիտէր, թէ ի՞նչ էր այդ խլրտումին պատճառը: Իմ հայրիկս ալ իր վրայի մնացած դրամները տուաւ մեզի, եւ իրեն քով մնաց միմիայն 3 դահեկան: Գիշերը պառկեցանք, առաւօտուն ելաւ ամէն մարդ: Տեսանք քանի մը ոստիկաններ, եւ մի քանի ալ գիւղի մարդոցմէն մէկ-մէկ, գէնք առած, չորս բոլորնիս պաշարեցին: Մեծ ոստիկան մըն ալ եկաւ եւ ըսաւ. «Բոլոր էրիկ մարդիկը թող հոս գան», – տեղ մը ցուցնելով: Սկսան ժողովուրդը ցցուցած տեղը հաւաքիլ, իսկ շատերն ալ կը պահուտուին վերմակներուն տակ, երբ ասանկ պահուտածները կը գտնէին, բաւական կը ծեծէին, վերջը տեղերնին կը տանէին: Հոս իմ հայրիկս ալ տարին եւ այնտեղէն բոլոր գիւղին մէջ տարին⁹: Մնացինք մենակ, եւ մեզմէ շատերը, դրամ տալով ազատեցին իրենց մարդերը: Իմ մայրիկս ալ գնաց, մեծերնին գտաւ, շատ աղաչեց, շատ պաղատեց: «Դրամ բեր, որ թող տանք», – ըսեր էին, իսկ մենք ալ արդէն շատ դրամ չունէինք: Տուած դրամներնուս ալ չի գոհացաւ եւ թող ալ չի տուաւ: Յանկարծ տեսանք ոստիկանները «ելէք» ըսելով եկան: Մենք հետաքրքրութեամբ կը հարցուցնէինք. «Էրիկ մարդիկը պիտի չի գա՞ն»: Բայց անոնք բնաւ պատասխան չէ տալով՝ «Քալեցէք» բառը միշտ կը գործածէին: Գիշտ այս միջոցին էր, որ բոլոր աղաղակները մէկէն բարձրա-

ցաւ: Բոլոր միասին կուլային, կողբային, իսկ ետեւնուս ալ կը քշէին մեզի դէպի ճամբայ: Միշտ ետեւնիս կը դառնայինք, կը նայէինք, թէ արդեօ՞ք կուգան կոր, բայց ո՛չ գացող եւ ո՛չ ալ եկող կայ: Այսպէս լացով-կոծով ինկանք ճամբայ: Այդ միջոցին էր, որ մտանք Գանլըտէրէ կոչուած տեղը, որ այնպէս տեղ մըն էր, որ երկու կողմերը լեռ, մէջտեղը ձոր մը, այդ ձորին ալ կէսէն ալ գետակ մը կանցնէր, իսկ մնացած ճամբան հազիւ կառք մը կրնար երթալ: Երբ մտանք այս ձորը, բաւական գացինք քիչ մը: Յանկարծ տեսանք բլուրին վրայէն կիջնէին աչքերնին արիւնով լեցուած, կրակի պէս կը վառէին աչքերնին քիւրտեր, մէկ ձեռքերնին՝ ահագին սուր մը, իսկ միւս ձեռքերնին չուանի մը կտոր: Դէպի վրանիս կը վազէին: Մէկ կողմէն մեր ցաւը, իսկ միւս կողմէն ալ ասիկա: Բաւական դժուար եկաւ մեզի, մինչեւ մեր կառքերը հասան: Ազահութեամբ կը կտրէին պարանները, կառնէին առածնին եւ անմիջապէս կը վազէին վեր, հոն կը տեղատրէին զանոնք ու նորէն կը խուժէին: Վրանիս ժողովուրդը կը պռռար՝ սա բառերը գործածելով. «Ժէնտերմի՛, ժէնտերմի՛»: Բայց անոնք ալ արդէն ծածուկէն անոնց հետ մէկ-տեղ կը կիսուէին թալաննին, անոնք բնաւ օգնութեան չէին գար: Գիշտ այս միջոցին մեր կառքին վրայ պիտի յարձակէին, բայց որովհետեւ մայրիկս հայրիկիս հագուստեղէնները խոստացած էր կառապանին, ատոր համար մեզ վնաս չի տուին: Բայց միւս կողմէն նորէն գործերնին կը շարունակուէին: Քիւրտին մէկն ալ, առիթէն օգտուելով, ոստիկանի մը հագուստ հագնելով, եկաւ մեր քով, բայց մենք բնաւ չի կասկածեցանք, թէ կարելի է կեղծ ըլլալ: Եկաւ մեր մօտ. «Շատ յոգնած եմ, պարոններ, քիչ մը թոյլ տուէք, որ սա պէլկիբի¹⁰ վրայ հեծնամ եւ յոգնութիւնս առնեմ»: Ջորիին տէրն ալ հաւանելով տուաւ, եւ քիչ մը վերջ տեսանք, որ ձին վրայի բոլոր բեռով փախչի կոր՝ գետին միւս կողմը անցնելով: Տէրը սկսաւ պռռալ, բայց ոչ ոք կուգար: Տեսանք ոստիկան մը, որ եկաւ՝ քանի մը գէնք պարպելով օդը, որպէսզի աւելի արագ փախչի: Կամաց-կամաց ձորէն դուրս կելնէինք: Գիշտ ձորին ծայրը՝ գետին վրայ, կամուրջ¹¹ մը կար, որուն վրայէն պիտի անցնէինք: Յանկարծ կամուրջին տակը տեսանք մարդ մը եւ քովն ալ պզտի տղայ մը՝ հազիւ տասը տարեկան, որ ջուրին եզրը՝ թուփի մը քով, նստած էին բոլորովին մերկ: Երբ այս տեսան, կառապանները սկսան կարգի բռնել խեղճերը, որ հոտ հազիւ արեւուն տաքութենէն կը պատսպարուին: Մեր միտքէն ալ շատ բան կանցնէր, ի՞նչ օգուտ, ձայներիս կտրած կը քալէինք: Այս խեղճերը մեզմէ օգնութիւն կուզէին: Ոմանք հացեր նետեցին, ոմանք ալ հագուստեղէններ, վրանին փաթթեն: Ծամբանիս կը շարունակէինք եւ կամուրջէն անդին անցած էինք՝

7 Հուլիսի սույն տեղեկութիւնը հաստատում է նաև եղբայրը՝ Արմենակը (**Գուժկան Մերաստիոյ**, Եղեռնապատում, 149-150 և սույն աշխ., էջ 212):

8 Հասան Չելէպի գյուղը և ճանապարհային կայանը գտնվում է Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառում՝ Մերաստիա-Մալաթիա ճանապարհին:

9 Սույն տեղեկութիւնն Արամի եղբոր՝ Արմենակի հաղորդմամբ տեսն **Գուժկան Մերաստիոյ**, Եղեռնապատում, էջ 200 և սույն աշխ., էջ 212:

10 Անասուն:

11 Խոսքը վերաբերում է Գուրուչայ գետի Դըսըի կամուրջին (**Գուժկան Մերաստիոյ**, Եղեռնապատում, էջ 206):

միշտ ետեմնիս դառնալով. կը նայէիմք, թէ արդեօք կուզա՞ն կոր մեր էրիկ մարդիկը: Բայց ո՛չ եկող եւ ո՛չ ալ գացող կը տեսնէիմք: Շարունակաբար կը քալէիմք: Կէսօրուան մօտ հասանք տեղ մը, ուր հանգչեցանք հոտ հազիւ մէկ ժամ մը: Ամէն ոք շունչը առաւ հոս, վերջը նորէն ճամբանիս շարունակեցիմք: Մէկ կողմէն ձորերու պէս տեղերը կերթայիմք, միւս կողմէն ալ կը վախնայիմք՝ հոս ալ դէպք մը չի պատահի ըսելով: Այսպէս իրիկուան մօտերը Հէքիմխան¹² ըստած տեղը հասանք: Երբ այս գիւղը կը մտնէիմք, ճամբան քիւրտ մը եկաւ, մէկուն սնտուկը առնելով գնաց առանց վախնալու, կարծես իրեն հրաման ընող մը կար: Բայց այդ գիւղին ոստիկանները երեսացին, երբ որ մենք պռռացիմք: Անմիջապէս վագեցին ու բռնեցին մարդը, սնտուկը ձեռքէն առին եւ առանց հարցուփորձ ընելու մէկ կապարով մը զինքը գետին տապալեցին: Երբ որ այս բանը տեսանք, կըսէիմք՝ արդեօք գութի՞ն են եկեր:

Այդ գիշեր գիւղին մէջ անցուցիմք, բայց ոչ ոք չէր քնանար, որովհետեւ բոլորին ալ ազգական՝ կա՛ն հայրիկը, կա՛ն հօրեղբայրը եւ այլ գացած էր: Մենք անգամ մը եղբօրս հետ կելլէիմք ճամբայ եւ կը դիտէիմք, թէ արդեօք՞ եկող, գացող կայ, բայց ոչ: Երբ մէկը կը տեսնէիմք, կուրախանայիմք՝ ահաւասիկ կուզան կոր ըսելով, բայց վերջը կը տեսնէիմք թէ ուրիշներ են, կը յուսահատէիմք: Կուզայիմք տեղերնիս ու միշտ ժողովուրդին մէջ կը պտտէիմք՝ այս միտքն ունենալով, թէ հայրիկնիս կուզայ եւ մեզ կը փնտրի եւ մեզ չի գտներ, ատոր համար իրեն դիպուօթին թող ըլլայ: Բայց իզուր կը պտտէիմք: Այդ գիշեր առանց քնանալու անցուցիմք: Առաւօտուն ոստիկանները նորէն փոխուեցան, ու սկսանք ճամբորդութիւնքս շարունակել: Երբ առաւօտուն ճամբայ ելանք, թուրքերուն գերեզմանոցին մէջէն անցանք, առջեմնիս ինկած էր կարմիր ձիաւոր մը (այսիմք՝ ոստիկան), մէկ յառաջ կերթար, մէկ ետ կուզար, որպէսզի մեզ հետ արկած մը չի պատահի, ու մէկ կողմէն աչքերնուս կը հեռանար Հէքիմխանը:

Բաւական յառաջ կերթայիմք: Երբ բոլորովին չէիմք տեսներ գիւղը, յանկարծ վերի կողմերնուս՝ ծառերուն վրայ, զէնքի պայթիւններ լսեցիմք: Դարձեալ սիրտերնիս վախ ինկաւ: Երբ այս զէնքի ձայները ոստիկանը լսեց, անմիջապէս երկարցուց իր զէնքը դէպի անոնց ու ծայրը դրաւ ձիուն գլուխին վրայ, եւ ահա սկսաւ պատերազմը: Այս անգամին մենք աւելի կը վախնայիմք, որովհետեւ ոստիկանը երբ զարնուի, մենք բոլորովին քիւրտերուն ձեռքը պիտի մնանք, եւ այս ատեն ուզած դերերնիս կը խաղային: Բայց Աստուած պահեց, ու մենք ալ

ազատուեցանք այդ վատերուն ձեռքէն նորէն: Հայերուն մէջէն քանի մը հատը զարնուեցաւ, քանի մը հատ ալ վիրաւորուեցաւ: Այս արկածէն ալ ազատուեցանք եւ կըսէիմք, թէ արդեօք ի՞նչ տառապանքներ պիտի կրենք: Թէ՛ կը քալէիմք, թէ՛ կաղօթէիմք, շարունակաբար կերթայիմք: Երբ կէսօրուան մօտ էր, բարձր տեղէ վար կիջնէիմք, յանկարծ աչքերնուս զարկաւ 20-30ի չափ քիւրտեր, որոնց ձեռքերնիս կապուած էին: Մենք զարմացանք, կըսէիմք, թէ՛ գող կամ մեզի սպաննելու եկած են, որովհետեւ ուր որ քանի մը քիւրտ տեսնէիմք, մեռնիլ պատրաստ էր մեզի համար: Երբ կէսօրին տեղ մը պիտի հանգչէիմք, տեսանք այդ ձեռքերը կապուած քիւրտերը չեկան: Երբ ցցուած տեղերնիս պիտ նստէիմք, կը տեսնէիմք քիւրտեր, որ մեր շուրջը կը դառնային միշտ: Այս անգամին աւելի շատ կը վախնայիմք ալ, կըսէիմք, թէ ազատելու ճար չի կար: Երբ հոս հանգչեցանք, քովերնիս ջուր չի կար, բայց մեզմէ քիչ հեռու գետակ մը կար, ստիպուած էիմք հոն տեղէն ջուր բերելու: Մեզմէն ամէնէն յառաջ կին մը գնաց այդ գետէն ջուր բերելու ու անգամ մըն ալ չեկաւ: Ծատերը կըսէին, թէ ջուրը ինկած, խեղդուած է, իսկ շատերն ալ՝ քիւրտերը փախցուցած են: Մենք շատ կը վախնայիմք: Այս հանգստութեան միջոցին մենք այն յոյսը ունէիմք, թէ մեզի բոլորովին պիտի մեռցունեն: Այդ մտածմունքնիս չի կատարուեցաւ, որովհետեւ քիչ վերջը մեզ թողուցին, գացին: Երբ հանգստութիւննիս առինք, նորէն ճամբայ ելանք: Երբ ճամբայ ելանք, ամէն կառքի գլուխ դրամ առին:

Շարունակեցիմք ճամբանիս, բայց ասկէ վերջն էր, որ մեր դժբախտութիւնները պիտի սկսէին, որովհետեւ անապատներուն մէջէն պիտի ճամբորդէիմք: Այսպէս իրիկուան տեղ մը գացիմք, հոն մեզի տեղ որոշեցին: Այնտեղ մեզի պատուիրեցին, որ 2 օր առանց ջուր գտնելու պիտի ճամբորդենք, ով որ աման ունի, թող հիմակուրնէ պատրաստի իր ջուրի պաշարը: Ով աման կամ թուլու¹³ ունէր, լեցուց եւ պատրաստեց ճամբորդութեան համար: Մենք ալ թուլու մը ունէիմք, լեցուցիմք ջուրով ու պատրաստուեցանք ճամբորդութեան: Այդ գիշեր հոն մնալով՝ առաւօտուն նորէն ճամբայ ելանք, սկսանք ճամբանիս շարունակել: Երբ ժամ մը տեղ գացիմք, սկսանք դիակներու վրայէն ճամբորդութիւն ընել: Մէկ կողմէն տաքը կը զարներ, եւ միւս կողմէն ալ ծարաւութիւն բաւական դժուար եկաւ մեզի: Մեզմէ շատեր սկսան իյնալ՝ ծարաւութենէն մարելով: Շարունակաբար կերթայիմք, ալ չէիմք կրնար. աչքերնիս վեր տնկած, քիթերնիս կապած կը քալէիմք, որովհետեւ այնպէս եղած էր, որ մարդ չէր կրնար նայիլ: Ոմանք, երբ նուաղած ինկած էին, քիւրտերը, անմիջապէս վրայ հասնելով, վրայի հագուստները առած են եւ զինքն ալ կա՛ն մորթած են, կա՛ն փորը դանակ

12 Հէքիմխան գյուղը և ճանապարհային կայանը գտնվում են Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառում՝ Մալաթիա քաղաքից հյուսիս. «Հէքիմ-Խան ալ մահուան հանգրուաններէն, սպանդարաններէն մին է» (Գուժկան Մեքաստիոյ, Եղեռնապատում, էջ 209):

13 Տիկ:

մը խոթելով՝ անցած գացած են: Բոլոր մարմինը ճաքոտած են, փորին մէջէն թոքերը, սիրտը եւ այլն, բոլորը դուրս թափած են: Արեւն ալ, երբ տաքութիւնը տուած է, ալ կսկսի հոտ մը, որ աշխարհը կը բուրէ: Ոմանք ալ, արդէն ողջ-ողջ մեռցնելով, ճամբուն վրայ ձգած են: Ճամբուն վրայ դեռ շատերը կիսամեռ, երբ կը տեսնէին մեզի, որ կանցնէինք, ոտքի կեցնէին եւ վար կիյնային: Կուլային, կը պոռային՝ մայրի՛կ, մայրի՛կ, մեզի ալ հետերնիդ տարէք, ու նորէն յուսախաբ կիյնային, իրարու փարած կուլային, կարծէտ անոնց ձայնը երկինք արձագանք կուտար: Բայց ի՛նչ օգուտ: Մենք ալ մեռնելու վրայ էինք, շատերը նուաղած կիյնային, շատերը կը մեռնէին: Ատոր համար օգնութեան չէինք կրնար փութալ: Այսպէս միշտ կը շարունակէինք, բայց միշտ դիակներու վրայէն ալ, այնպէս որ թիւր չեմ կրնար տալ: Քալելու ատեն, երբ կանցնէինք, բոլորովին մարմինը կտոր-կտոր կըլլար: Այս միջոցին էր, որ իմ պզտիկ քոյրս՝ Արուսեակը, հագի տարեկան մըն էր, ծարաւութեան չի դիմացաւ, եւ արեւն ալ միշտ վրան կը զարնէր, քիչ մնաց պիտի մեռնէր, բայց Աստուած պահեց, իսկ մեզի բան մը չեղաւ: Այո՛, ծարաւ մնացինք, բայց վնաս մը չեղաւ: Մեր ջուրը բաւական պահեց մեզ, որովհետեւ խնամքով կը գործածէինք: Ջուր խմելու ատեն հագի բերաննիս կը թրջէինք:

Այսպէս միշտ կը շարունակէինք ճամբանիս¹⁴: 2 օր քալելով՝ յաջորդաբար հասանք Գրըզկեօզ¹⁵ ըստած տեղը, որ Մալաթիային կը պատկանէր: Երբ այստեղին կը մօտենայինք, այնտեղի բոլոր հայերը, այսինքն՝ մեզմէ յառաջ եկող գաղթականները, ինչ աման որ ունին, ջուրով լեցուն դեմերնիս եկան: Ճիշտ այստեղն էր, որ ոմանք ձեռքերնին ջուրին երկարացուցած կը մեռնէին, ոմանք ջուր կը խմէին, վերջէն կը մեռնէին: Ամէն մարդ կուլար, կողբար, իսկ մեր տունէն ոչ ոք վնասուեցաւ: Աստուած պահեց: Երբ այստեղ մեզի համար տեղ որոշեցին, ու մենք ալ հանգչեցանք, ամէն մարդ իր վրանը լարեց, ու նստաւ հոտ, բոլոր կառքերը մեզի թողուցին եւ ետ դարձան: Հագի մեկ-երկու օր պիտի հանգչէինք:

Գրեթէ 2 օր կեցանք: Բայց բաւական զուարճութիւններ կրնէինք, որովհետեւ գետ կար, կերթայինք, հոն կը լողանայինք: Առաջին օրն անցուցինք: Երկրորդ օրը կէսօր էր, յանկարծ դեմէն տեսանք, նոր գաղթականներ կուգան կոր: Շատերս ուրախացանք, որովհետեւ կը կարծէինք, թէ մեր մարդիկներն են: Երբ ամէն մարդ ջուր կը տանէր, ոստիկաններն արգիլեցին, չուզեցին, որ անոնց ջուր տանինք: Անոնք եկան, տեսանք, որ ուրիշ գաղթականներ են: Երբ կամուրջէն անցան, փորձեցինք օգնութեան փութալ, բայց նորէն չի թողուցին, արգիլեցին:

Եկան մեր քով, հարցուցինք, թէ իրենք ալ մեզի պէս չարչարանք կրեցին, բայց անոնք ո՛չ ըսին, շատ հանգիստ եկած են: Երկրորդ օրը՝ իրիկուան մօտ, հրաման մը եղաւ. ասոնցմէ առաջ եկող գաղթականները պիտ ելնին: Ի՞նչ ընենք, օգուտ չի կար, ըսինք մի քանի օր մնանք եւ յոգնութիւննիս առնենք: Ըսինք, բայց օգուտ չի կար: Այս հրամանին վրայ շատերը կերակուր կեփէին, կէս թողուցին, ոմանք հագուստը կը լուային, կէս թողուցին: Այսպէս յանկարծակի բերին, որ բոլոր ունեցածնիս իրենց մնայ: Մեզի ճամբայ պիտի հանէին: Կրցածներուս չափ ուսերնիս առինք: Մենք ալ էշ ունէինք, քիչ մըն ալ անոր բեռցանք, մնացածը բոլորովին թողուցինք առանց ձեռքերնիս դաչեցնելու: Մէկ կողմէն ալ խաւազաններով մեզի քշեցին: Ով որ դրամ ունէր մինչեւ Մալաթիա երթալու համար, կառք բռնեց, իսկ մենք արդէն դրամ չունէինք, ստիպուեցանք ոտքով երթալ մինչեւ Մալաթիա: Ճամբայ ինկանք իրիկուան մօտերը: Կը քալէինք ոտքով եւ ուսերնիս ալ բեռ, իբր թէ վաղը Մալաթիա պիտի երթանք, եւ այնտեղ մեզի տուն-տեղ պիտի տան: Այս միտքով գուարթ կը քալէինք, բայց երբ կը յիշէինք, թէ հայրիկնիս ետեւը մնաց, այն ատեն կը տխրէինք, կուլայինք եւ ճամբանիս կը շարունակէինք:

Շատ գացինք, քիչ գացինք, գիշերը տեղ մը հանգչեցանք Մալաթիայի ճամբուն վրայ, եւ առաւօտուն նորէն ճամբայ ելլալով քալեցինք: Կէսօրուան մօտ, երբ քաղաք պիտ հասնէինք, մեզի առանց քաղաքը ցուցնելով, գերեզմանոցներուն մէջէն անցուցին: Մենք, որ այն նպատակը ունէինք, թէ Մալաթիա պիտի մնանք եւ հոն պիտի հաստատուինք, բայց նոյնիսկ քաղաքին մէջ չի տարին: Ճամբանիս շարունակեցինք:

Բաւական քալել վերջ Ֆրընճըլար¹⁶ ըստած տեղ գացինք, որ Մալաթիայէն հագի մէկ ժամ կը տեւէր եւ Մալաթիայի չիֆթիկն¹⁷ էր: Երբ հոս եկանք, մեզմէ առաջ շատ գաղթականներ եկած են եղեր: Գաղթավայր էր դարձեր: Մեզի ալ տեղ որոշեցին, ու մենք ալ մնացինք հոս: Երբ տեղերնիս ճանչցանք, սկսանք փնտրել բարեկամներ, ազգականներ, հօրեղբօրս ընտանիքը հարցուցինք: Բաւական տեղ պտտել վերջ Ովսաննա մօրաքուրնիս գտանք եւ բաւական տեղեկութիւններ առինք:

Մալաթիայէն մինչեւ Մուրատ գետ ճամբորդութիւնս

Այս Ֆրընճըլար ըստած տեղը, ուր քանի մը օր հանգիստ ըրինք, լուր մը տարածուեցաւ, ըսելով թէ

14 Ճանապարհն անցել է անջրդի Մուսուզ Օվայով (**Գուժկան Մեքաստիոյ**, Եղեռնապատում, էջ 218):

15 40 թռիչքանի կամուրջ է՝ կառուցված Եփրատի աջ վտակ Մելաս (Թոխմա) գետի վրա:

16 Ֆրընճըլարը «Աննշան գիւղուան մը, որ սակայն բիւր եղեռնագործութեանց, անլուր ոճիրներու, խշխշալի, զկեցուցիչ անցքերու մեծ թատերավայրերն մէկը եղած, հայ տարագրութեան պատմութեան արիւնամանրկ էջերուն մէջ նշանաւոր տեղ մըն է, որ կը բռնէ» (**Գուժկան Մեքաստիոյ**, Եղեռնապատում, էջ 232):

17 Այգի:

մեզի բոլորնիս ալ թուրք պիտի ընեն: Եթէ չըլլանք, մեզի կէս ժամ անդին պիտի տանին ու բոլորնիս ալ սուրի պիտի անցնեն: Շատերն իրաւ ուրացան: Ջանոնք քաղաք տարին, կարծես տուն ալ տուին զանոնց: Ասկէ զատ ուրիշ կառավարութենէն մարդ եկաւ, բոլոր տղաքը հաւաքեցին ու որբանոց տարին: Այդ միջոցին մեզ՝ երկու եղբայրիս ալ պիտի տանէին, բայց մենք չի զացինք եւ փախանք, չի մնացինք: Այստեղ շատ մըն ալ կոյս աղջիկներ տարին: Մինչեւ հոս մեր խումբը բոլոր սեբաստացի էր, բայց հոս բոլոր իրար խառնուեցան, եւ մեզի հրամայեցին. «Պատրաստ եղէք, պիտի ճամբայ ելլաք»: Ամէն մարդ պատրաստ եղաւ ճամբայ ելլալու համար: Բայց բոլորնուս ալ սիրտը վախ կար այն լուրէն, այսինքն՝ կէս ճամբուան անդին մեզի պիտի մորթէին:

Նորէն ճամբայ ելանք իրիկուան մօտերը: Բաւական երթալէ վերջ առջեւնիս լեռ մը եկաւ, որուն վրայէն պիտի անցնէինք, անշուշտ, բաւական դժուար էր: Բայց ի՞նչ ընէինք, ստիպուած էինք: Երբ դեռ այս բլուրին տակն էինք, պաղ ջուր մը կար, որ ժայռերէն կը բխէր: Ամէն մարդ քիչ մը նստեցաւ ջուրին եզրը ու քիչ մըն ալ ջուր խմելով՝ կը սկսէր վեր մագլցիլ: Մենք ալ սկսանք վեր ելլալ: Այնպէս շիտակ էր բլուրը, որ էշերը շատ դժուարութեամբ կընային քալել: Այս ճամբային վրայ շատերը մնացին, արդէն առաջուրնէ մնացածները բոլորը մորթեր են: Իմ պզտիկ քոյրս ալ՝ Հայգուարթը, հագիւ 5-6 տարեկան էր, պիտի մնար ճամբան: Ես իսկոյն գացի, քրոջս ձեռքը բռնելով՝ սկսայ հետս տանիլ. կարծես թէ այն ատեն իմ վրայ Աստուծոյ մի ուժ մը եկած էր: Պինդ մը բռնած անոր ձեռքը՝ ուժ կուտայի՝ ըսելով. «Քալէ՛, քոյրս, քալէ՛, քիչ մնաց»: Այն տեղերը, ուր որ ես առաջ եղած ըլլայի, այս բլուրէն կէսը չէի կրնար ելլել, բայց կարծես ինծի ուժ մը տուող կար, թէ՛ ինքս կը տանէի, թէ՛ քոյրս: Երբեմն-երբեմն ալ կոնակս առնելով, երբ բլուրէն վեր ելանք, հոս քիչ մը հանգչեցուցին մեզի: Արդէն մութը կոխելու վրայ էր, նորէն ճամբայ ելանք: Երբ քիչ մը գացինք, նոյնպէս բլուր մը տեսանք: Երկրորդ բլուրն ալ ելանք եւ երրորդ մըն ալ: Բայց մութը լաւ կոխած էր, արդէն քալելիք ճամբանիս ալ քիչ տեղ էր: Մութ տեղը կը քալելիք բաւական հագիւ քառորդ ժամ մը: Հոն մեզ հանգչեցուցին, եւ գիշերը հոս անցուցինք, որովհետեւ իրիկունը մութ էր, աչքերնիս բան մը չէր տեսներ:

Երբ առաւօտուն ելանք, տեսանք, որ ջուրի մը եզերքն ենք: Այդ գետակէն ամէն մարդ ջուր խմեց, լուացուեց, պատրաստուեցաւ ճամբայ ելլալու. բայց ըսին, թէ այսօր հոս պիտի մնանք: Արդէն այն Մալաթիայի վախերնիս ալ գացած էր: Ամէն մարդ սովորական կերպով կերակուր կեփէր, լաթ կը լուար, վերջապէս ճամբորդութեան պէտքերնուն կը հոգային: Երբ կէսօր եղաւ, ճերմակ ձիաւոր մը եկաւ յանկարծ: Քիչ մը պտտեցաւ բոլորնիս, ոստիկան-

ները հաւաքեց: Քիչ մը խօսիլէն վերջ ոստիկանները քովերնիս եկան ու ըսին, թէ ամէն ընտանիքէ մը մարդ մը թող գայ, կամ բաւական մեծ տղայ մը մինչեւ 15 տարեկանը կընդունուի: Անկէ վար տարիք ունեցողը չի ընդունուի, հարցուցինք, թէ ի՞նչ պիտի ըլլայ, ըսին թէ անուննին պիտի գրուի, որպէսզի թային¹⁸ պիտի տրուի ասկէ վերջ: Այս լուրին վրայ այն մարդիկը, որ Հասան Չելէպիի դեպքէն ազատած փախած էին, ոմանք դուրս եկան եւ որոշած տեղերնին կեցան, ոմանք ալ ինքզինքը մեծ ձեռացնելով յառաջ կը նետուէին, բայց չէին ընդուներ: Այսպէս 100 կամ 150 թէ՛ մարդ, թէ՛ երիտասարդ բաւական հաւաքելէ վերջ ամէն բան պատրաստ էր, միմիայն հրամանին կը սպասէին: Մենք ամէնքս ալ ուշադրութեամբ կը նայէինք, թէ ինչ պիտի ըլլայ ասոր վերջը: Այն ճերմակ ձիաւորը եկաւ, հրաման ըրաւ, որ քալենք՝ ըսելով. «Ձեզի հոս գիտը պիտի տանեն, հոն անուննիդ պիտի գրեն եւ հացերնիդ ալ առնելով՝ պիտի գաք տեղերնիդ, եւ ասկէ վերջը ուր որ ալ երթաք, ձեզի հաց պիտի տան»:

Սկսան քալել, բայց մենք տղաքս ալ ետեւնուն կամաց-կամաց կերթայինք: Հագիւ մեր աչքերնուս յառջեւնիս կորսուեցան, յանկարծ գէնքի պայթիւններ լսեցինք եւ արդէն հասկցանք, որ զարնէն կոր: Սկսան բոլոր ժողովուրդը մէկէն լալ, պռռալ, ոմանք կը պռռային. «Աստուած չի կայ», ոմանք ալ կաղօթէին. «Տէր, ազատի՛ մեզ»: Յանկարծ տեսանք արիւնի մէջ կորսուած եւ քրտինքի մէջ ինկած քանի մը երիտասարդներ, որոնք կը վազէին դէպի մեզ: Ետեւնուն ալ ինկած քանի մը քիւրտեր թող չէին տար, որ երթայ, իր մօրը կամ քրոջը քով մեռնի: Հապա նորէն կը վազէին ետեւնուն: Ասոնց մէջն էր նաեւ մեր դրացիներուն մէկուն փեսային եղբայրը: Ան ալ նոյնպէս կը վազէր, բայց ետեւնին ալ շուն արաք մը՝ ձեռքը կացին մը: Ահա կեղծ ոստիկաններուն մէկը եկաւ, անոր ետեւէն վազեց, բռնեց եւ սկսաւ զարնել, իբր թէ ինքը չի ուզեր կոր այդպէս մեռնի, իսկ տղան վազելով եկաւ մեր քով: Եկածին պէս ինկաւ գետին եւ սկսաւ պռռալ՝ ջո՛ւր: Ջուր տուին, ինկաւ գետին եւ նուաղեցաւ: Մէկ կողմէն ալ արիւն կը վազէր վերքերուն տեղէն, վերքերն ալ կապեցին: Արդէն գիտէինք, որ պիտի մեռնի, բայց չէինք ուզեր հետերնիս տանիք այդ վիճակում: Անկարելի բան մըն էր: Երբ ան այս վիճակին մէջ էր, պատմեց մեզի, թէ ինչպէս զիրենք հոս տարին եւ սկսան մեռցունել: Երբ մեր քովէն զատեցին, տարին, ճիշդ այդ տեղը, ուր պիտի մեռցունին հայերը, հոն առաջուց քիւրտերը պահած են եղեր, որպէսզի, երբ քովերնին երթայ, անմիջապէս զարնեն: Դիշտ որոշած տեղերնին երբ հասեր են, յանկարծ ոստիկաններուն մէկը գէնք մը պայթեցուցած է, այսինքն՝ նշանի համար. «Յարձակեցէք»: Անոնք արդէն հայու արիւնի ծարսան էին, կընկնեն մէջտեղ եւ

18 Զննչութի սերմ և նրանից ստացված ձեք:

կարծես թե ոսկի կամ արծաթ կայ, անոնք պիտի յափշտակեն, եւ այսպէս խեղճերը չեն գիտցած, թե ի՞նչ կը դառնայ: Ոմանք կացիմով, ոմանք գաւազանով որուն գլուխը գլորի: Եթէ անգամ մը զարնելու ըլլայ մարդու մը, անմիջապէս կը մեռնի, ոմանք ալ՝ բահով: Այսպէս սկսեր են զարնել, եւ ինքն ալ, այսինքն՝ ասիկա մեզի պատմողը, փախած է: Երիտասարդը, որ վիրաւորուած էր, մեռաւ, եւ մենք մեր ձեռքովն թաղեցինք: Երբ գործերնին լրացաւ, բոլոր դիակները բլուրին վրայ հանեցին, որպէսզի մենք տեսնանք, աւելի լացերնիս շատցունինք: Բոլորն ալ մէկ վարտիքովը, այնպէս կարծես թէ լեռը ձիւն եկած է: Այսպէս, երբ ամէն կուլար կամ գործով մը կզբաղէր, իրիկուան մօտ տեսանք, ուրիշ գաղթականներ ալ կուգային կոր, բայց անոնց ալ ուրիշ տեսակ վարուած են, այսինքն, երբ բլուրէն վեր ելած են, ճիշդ այդտեղ հաւաքած են անոնց երիտասարդները: Երբ մեզի մօտեցան, նեղ ճամբայի մը մէջէն կանցունէին: Ճամբուն եզրը երկու ոստիկան կեցած մէկին մէկին կը քննէին, թէ արդեօք ուրիշ մարդիկ ալ մնացած են:

2 օր հոտ մնալէն վերջ ճամբայ ելանք, բայց այս անգամուան ճամբորդութիւննիս աւելի սոսկալի էր, որովհետեւ թէ՛ տաքը եւ թէ՛ բեռը, երկուքը իրարու միանալով, բաւական դժուարութիւն կուտային մեզի: Երբ ասկէ ճամբայ ելանք, միշտ կը քալէինք՝ բնաւ յոգնութիւն չառած եւ միշտ լեռներու, ձորերու վրայէն կերթայինք այնպիսի տեղերէ, որ ալ չեն կրնար պատմել: Եկանք այնպիսի տեղ մը, ուր ձոր մը կար, մէջը՝ ժայռեր գլորած, եւ մէջէն ալ ջուր կը վազէր: Երբ հոս եկանք, ստիպուեցանք ջուրէն անցնիլ: Սկսանք անցնիլ: Ես եւ պզտիկ քոյրս էշուն վրայ հեծանք, անցանք միւս կողմը: Քոյրերս ալ անցան, եղբայրս եւ մայրիկս ալ անցան, եւ այն տեղէն սկսանք ճամբանիս շարունակել: Բայց ինչպէ՞ս ճամբայ մը. հազիւ մէկ մարդ կը քալէր: Բաւական գացինք, լայն տեղը ելանք: Բայց այդ ճամբուն վրայ պզտիկ քոյրս ինկաւ, քիչ մը ցաւեցաւ գլուխը: Բաւական վեր ելլել վերջ շիտակ ճամբան գտանք, բայց դժուարութիւն քաշեցինք: Մինչեւ իրիկուան հասնելիք տեղերնիս ջուր չիկար, եւ ծարաւ պիտի ճամբորդէինք: Այսպէս բաւական երթալէ վերջ ալ սկսեցաւ տաժանակիր ճամբորդութիւննիս: Նորէն շատերը կուլային, շատերը ճամբան կը մնային: Ահաւասիկ այնտեղ մեր խումբը երկուքի բաժնուեցաւ, մենք յառաջ ելանք, մնացածներն ալ մեզմէ վերջ եկան: Մենք շարունակ կը քալէինք անջրդի անապատներուն մէջէն: Ահա հոս ոմանք կը նստէին, ջուր կը թափէին ձեռքերնուն մէջ եւ յետոյ կը խմէին, ոմանք ալ ցեխ կուտէին թէ՛ սնունդի համար եւ թէ՛ ջուրի համար: Նոյն փորձերը մենք ալ ըրինք: Այսպէս ճամբանիս կը շարունակէինք: Վերջապէս իրիկուան մօտ տեղ մը հասանք, ուր ձոր մը կար: Չորին մէջէն ջուր կանցնէր, եւ ջուրին վրայ ալ ջաղացք մը եւ մի քանի խրճիթներ կային: Այն գիշեր հոն

հանգիստ ըրինք եւ առաւօտուն ճամբանիս նորէն շարունակեցինք: Այս անգամ նորէն սկսանք բլուր մը վեր ելլել: Բաւական բարձր բլուր մըն էր եւ ծառնոտ: Այս ծառներուն մէջէն շատ կողոպտուտներ եղան, վերջապէս ելանք բլուրը եւ այս անգամին սկսանք բլուրին միւս կողմէն վար իջնել: Նորէն սկսանք հարթ ճամբայէն երթալ եւ կէսօրուան մօտ տեղ մը հասանք, հոս հանգչեցանք: Ոստիկանները մեզի տափարակ դաշտի մը կեդրոնը հաւաքեցին եւ չորս բոլորնիս պաշարեցին եւ յառջեւի կողմէն կամաց-կամաց կը քալեցնէին: Ճիշդ յառջեւնիս շատ պզտիկ բլրակ մը կար: Այդ բլրակին ետեւը կը տանէին, կամաց-կամաց կը կողոպտուէին եւ կանցնէին: Այդ օրը մինչեւ իրիկուն այս գործով զբաղեցան: Իրիկունը բոլոր չի կողոպտուողները գատեցին, նոյնպէս մենք, եւ մեզի գատ տեղ մը դրին: Կողոպտուողներուն եւ չի կողոպտուողներուն մէջ տեղը առուակ մը կար: Արդէն գիշերը շատը այն կողմն անցան: Այն գիշեր ալ հոն անցուցինք եւ առաւօտուն նորէն պատրաստուեցանք կողոպտելու: Բայց չեմ գիտեր, թէ բախտը ինչպէս բերաւ, որ վազ անցան մեզմէ: Նոյն օրը մեզմէ բաժնուող միւս մասն ալ եկաւ, եւ իրարու միացանք: Միւս օրը նորէն ճամբանիս շարունակեցինք նոյն տանջանքներով, նոյն շարժարանքներով: Այս ճամբորդութեանս մէջ շատ չի պիտի ծանրանամ, որովհետեւ մոռցեր եմ, միմիայն քանի մը նշանատր տեղեր կը յիշեմ: Այդ նշանատրներէն մէկն էր, որ հասանք գիւղ մը, մեզմէ քանի մը հատը թրքցնել ուզեցին, բայց մենք կրօնքիս չուրացանք: Երկրորդ տեղ մը նոյնպէս գիւղ մը, որ շատ խազներ¹⁹ կային, շատ կը փախցնէինք: Քանի մը հայ տղաքներ կային, որոնք առաջուրնէ թուրք եղած էին, կուգային մեր քով եւ մեզի կըսէին. «Դուք ալ եղէք, որ ազատիք»: Բայց մենք բնաւ չէինք ուզեր: Երրորդ տեղ մը, որ գետ մը կար, վրան՝ կամուրջ մը, կամուրջին ամէն մէկ գլուխը՝ 2 սիւներ՝ դէպի երկինք բարձրացած: Այս գետին մէջ շատ կը լողայինք:

Գիշեր մը հոն պառկեցանք: Այն գիշեր շատ մը զէնքեր նետուեցան, նաեւ ոստիկաններն ալ նետեցին: Առաւօտուն նորէն ճամբայ ելանք: Մէկ մասը կամուրջին վրայէն անցուցին, իսկ մէկ մասն ալ առանց կամուրջը անցնելու գետին եզերքէն տարին: Մենք ալ կամուրջէն անցանք, այն շանցնողներն ալ, շատ վարէն ջուրէն անցնելով, միացան մեզի:

Արդէն այսպէս քանի մը օրէն Եփրատ գետը հասանք: Երբ Եփրատ գետը պիտի հասնէինք, շատ մը խորոքորոք տեղերէն անցանք: Վերջապէս եզերքը ելանք գետին: Այս անգամին իջած տեղերնիս չի թողուցին, այլ ճիշտ եզերքէն աւազներուն վրայէն շիտակ գետին հոսանքին գացինք, եւ մեզի աւազներուն վրայ տեղ մը որոշեցին, որպէսզի հանգչինք: Երբ ամէն մարդ իրեն յատուկ տեղը նստաւ, ստի-

19 Մազ:

պուեցաւ պզտիկ կերակուրներ եփել, որովհետեւ գետին ջուրը պղտոր էր: Ամէն մարդ իր նստած տեղին քովը աւազը փորեց եւ մաքուր ջուր հանեց: Այսպէս ամէն մարդ իր գործին կը զբաղէր, իսկ մնացած մէկ մասն ալ բոլոր գտնուող պարտէզներուն քով գացեր է կա՛մ առուտորի, կա՛մ թէ քիչ մը գողնալու համար: Հետզհետէ արեւը կը բարձրանար, եւ ժամը երկուքը եկած էր, երբ քանի մը նաւակներ մօտեցան եզերք: Քիչ մը սպասելէն վերջը տեսանք, ոստիկանները հրաման ըրին, ու կամաց-կամաց ժողովուրդը կանցնէր միւս կողմը: Այսպէս մինչեւ արեւը մայր մտաւ, կրեցին ու նորէն թողուցին՝ ըսելով, որ մնացածը վաղը պիտի տանինք: Մենք ալ այս կողմը մնացինք:

Մուրատ գետնն մինչեւ Մղարճի ճամբորդութիւնս

Առաջին օրը հոն մնացինք: Երբ արեւը կը բարձրանար, արշալոյսէն նորէն պատրաստ էինք ամէն ինչ կատարելու: Ժամանակը կամաց-կամաց կանցներ: Մենք բոլորնիս ալ նաւակներուն քովը պատրաստ կեցեր էինք, երբ ոստիկաններէն մէկը հրաման տուաւ, որ նաւակ մտնենք, բայց ամէն մարդագլուխ՝ 2 դուրուշ: Մէկ մասը կամաց-կամաց յառաջացաւ դէպի միւս եզերքը, երբ նաւակը պարպուեցաւ, նորէն վերադարձաւ, որ մեզի ալ տանի: Ոստիկանը նորէն հրաման ըրաւ, որ նաւակը մտնենք, երբ մայրս քսակը հանած էր, որպէսզի դրամը տայ: Այն ատեն անկուշտ քիւրտին մէկը ձեռքը զարկածին պէս առաւ ձեռքէն այդ պզտիկ գումարը, բայց մայրիկս աղաչեց, որ տայ՝ ցուցնելով մեզի, թէ ատնք պիտի կերակրեն, բայց այն անգութը կը խնդայ իր ըրած ապուշութեանը վրայ: Մայրիկս նորէն չի յուսահատեցաւ եւ գնաց մեծերուն ըսաւ: Ան ալ եկաւ եւ զագանին ճանկերէն առաւ եւ մայրիկիս տուաւ: Այսպէս նստեցանք նաւակը, որ կամաց-կամաց յառաջացաւ ափէն: Երբ նաւակը մտանք, տեսանք, երկու մարդ մէջը պտտելին կոր, որպէսզի կողոպտեն: Մեզի մօտեցաւ մէկը, նայեցաւ իմ եւ եղբօս փախօին, մէկ-մէկ ապտակ զարնելով՝ հանեց, առաւ: Ատով չի գոհացաւ, այլ սկսաւ վրանիս խուզարկել, վրանիս քանի մը դահեկան կտանէ: Ան ալ առին: Նոյնիսկ աղին մէջ պահած էինք, բայց նորէն աղին տոպրակովը առին: Հայրիկիս հագուստներէնները եւ եամջին²⁰ փալանի ձեւ ըրած էինք եւ էշուն վրայ կը դնէինք, բայց ան ալ առին: Մայրիկիս քանի մը անգամ զարկին, վերջապէս լաւ մը կողոպտեցին մեզի, եւ լալով նաւակէն դուրս ելանք: Նորէն նաւակէն ելած ատեննիս մայրիկիս անգամ մը զարկին, բայց մայրիկիս չի դբաւ, պզտիկ քրոջս՝ Արուսեակին դբաւ, որովհետեւ մայրիկս կռնակը առած էր զայն: Այնպէս որ խեղճը հոգի տալու վրայ եղաւ, երբ ցամաքը ելանք: Օր մըն

ալ հոն սպասեցինք: Չի մոռնամ ըսելու, որ գետնն դեռ չանցած՝ բոլոր էշերը առին, ինչ ունեինք, ստիպուած էինք մենք տանել, ատոր համար հարկաւ դժուար պիտի ըլլար ճամբորդութիւննիս: Ինչեւիցէ այն գիշերը հոն անցուցինք:

Առաւօտուն ելանք ճամբայ: Բայց շատ ճամբայ չի գացինք, հագիւ թէ 2 ժամուան տեղ, ան ալ գետին հոսանքէն դէպի վեր: Այս ճամբորդութեան միջոցին պզտիկ քոյրս քանի մը անգամ հոգի տալու վրայ եղաւ, բայց չի մեռաւ: Երբ հանգչեցանք, արդէն հոգին տալու վրայ էր, բայց այդ հրեշտակին երեսը երբ նայեցինք, կարծես թէ կը խնդար (արդարեւ, մայրիկս կըսէր, թէ հոգի աւանդելէն վայրկեան մը առաջ խնդացած է): Այդպէս մեռաւ: Երբ որ մեռաւ, մենք մեր ձեռքովը թաղեցինք: Չարուի, Իսկուի քոյրերս եւ Արմենակ եղբայրս տարին մեզմէ քիչ մը հեռուն, պզտիկ փոս մը բացին եւ մէկ-մէկ «Հայր-մեր» ըսելով՝ թաղեցին այս անմեղ սուրբը, լալով ետ եկան: Ահա այդ տեղէն սկսեալ էր, որ մեզմէ մէկը պակաս էր: Երբ այդ իրիկուն այդտեղ մնացինք, ուտելիք չունենալով, հայրիկէս մնացած քանի մը բաներ ալ ծախեցինք եւ քիչ մը դրամ ըրինք, որպէսզի գալիք օրերը անօթի չի մնանք: Ահա ատկէ սկսեալ 2 քոյրերս ուրիշներուն տղաքը կտանէին մինչեւ երթալիք տեղերնիս, որ քիչ մը դրամ առնէինք եւ ուտելիքնուս ծախսէինք: Հետեւեալ առաւօտուն նորէն ճամբայ ելանք, շատ մը կողոպտուներով, չարչարանքներով սկսանք ճամբանիս շարունակել: Այնպէս որ չեմ կրնար բացատրել, արդէն մեռնիլնիս գիտելինք, բայց կուզէինք, որ ժամ առաջ մեռնինք եւ այդ չարչարանքներէն ազատինք: Այսպէս բաւական երթալէ վերջ իրիկուան մօտ գիւղի մը մօտ հանգչեցանք: Երբ ամէն մարդ հանգիստ կրնէր իր ընտանիքով մէկտեղ, յանկարծ տեսանք, որ տղաքը հաւաքեն կոր, մենք արդէն աղջկան տարագով նստեր էինք: Աւելի յայտնի չըլլալու համար ես նստեցայ եւ պզտիկ քոյրս գիրկս պառկեցուցի, եւ սկսայ գլուխը նայիլ, իբր թէ ոջիլ փնտրեմ կոր, իսկ եղբայրս կրակ վառելով զբաղեցաւ: Այսպէս քանի մը անգամներ եկան, նայեցան մեզի, թէ արդեօք մա՞նչ ենք, բայց չի կասկածեցան: Այդ գիշեր հոտ անցուցինք եւ յաջորդ օրը մինչեւ կեսօր նորէն հոն մնացինք: Այդտեղ շատ տեսակ պտուղներ կը ծախուէին: Եղբայրս պտուղ ծախողի մը քով գնաց եւ սկսաւ հետը ծախել, բայց ծախսածէն շատն ալ ինծի կուտար, եւ ալ կը փախցունէի: Այնտեղ շատ մը պզտիկ խլրտումներ եղան: Վերջապէս ճամբայ ելանք: Շատ մը պզտիկ գիւղերու հանդիպեցանք:

Վերջապէս եկանք 2 ճամբաներու, որուն մէկը Եդեսիա (Ուրֆա) կերթար, իսկ միւսն ալ՝ անապատը, այն անիծեալ անապատը: Մեզի անապատին ճամբովը տարին: Ամէնուս սիրտը վախ ինկած էր, կուզէինք ժամ առաջ ալ մեռնիլ, բայց չէինք մեռնէր: Մեզի կը տանէին այդ անապատներուն մէջէն: Վերջապէս հասանք տեղ մը, որ հոր մը կար: Շատերը

20 Թաղիքն (քեշա) վերարկու:

կաշխատեին ջուր հանել, բայց ի՞նչ ընեն, օգուտ չիկայ: Չէինք կրնար ծարաւնիս յագեցունել: Վերջապէս անցանք այն տեղերէն ուրիշ տեղ մը քիչ մը խոտաւէտ: Քանի մը խրճիթ եւ քովն ալ պզտիկ առուակ մը կար: Թողուցին ոստիկանները, որ երթանք, ջուր խմենք: Վերջապէս այն գիշեր անպատճառման մէջը տեղ մը պառկեցանք: Առաւօտուն նորէն ճամբայ ելանք եւ շարունակեցինք այդ տաժանակիր ճամբորդութիւննիս: Վերջապէս հասանք ջրհոր մը, որուն մէջը քիչ մը ջուր կար: Ամէն մարդ կը փորձէր ինքզինքը մէջը նետել եւ քիչ մը ջուր հանել: Երբ մօտեցանք այդ հորին, անմիջապէս ես մէջը նետուեցայ, քիչ մը ջուր խմեցի, քիչ մըն ալ քիթեղի մը մէջ դնելով՝ վեր քաշել տուի: Վերջը մնաց իմ վեր ելլելս, որ հաւանական է, դժուար ըլլար: Չի մոռնամ ըսելու, որ այնտեղ իմ դասընկերներէս մէկը կար՝ Պետրոս անունով, շիտակը մականունը չեմ յիշեր: Վերջապէս չափութի²¹ կտորները իրար կապելով՝ ինձ վեր քաշեցին, եւ նորէն ճամբանիս շարունակեցինք: Կը քալէինք այդ տաք օդին: Շատ քալելէն վերջը հասանք հարթ ձորի մը, որ մէջէն պիտի անցնէինք: Երբ այս ճամբուն մէջ մտանք, յանկարծ տեսանք խումբ-խումբ քիւրտեր եւ արաբներ, որոնք, ձեռքերնին մզազ²² առած, քովերնուս կերթային: Չի մոռնամ ըսելու, այն ատեն ոստիկաններն ալ շատցան, բոլորին քով մէկ մէկ հեյպէ²³ եւ մէջն ալ լեցուն փամփուշտ: Կը շարունակէինք ճամբանիս, բայց այդ վայրերնիները կամաց-կամաց կը յարձակէին ոստիկանը մօտ չեղած տեղը, բոլորովին մերկ կընէին եւ թող կուտային: Այսպէս կը շարունակէինք, երբ տեսանք, որ մեր մօտը արաբ մը, կողոպտուող առնելով, փախչի կոր: Յանկարծ ոստիկանը իր հրացանը աւազակին երկարացուց, եւ մէկ պայթեցնելուն պէս տեսանք, որ ձիուն վրայէն վար ինկաւ առանց շարժելու, իսկ իր ձիւն իր տիրոջը դիակին քով կեցաւ՝ իբրեւ հաւատարիմ կենդանի: Քովի ընկերները նոյնիսկ դիակը չի վերցուցին: Այսպէս հեռացանք քովէն: Բայց նորէն զագանները իրենց գործերնին կը շարունակէին:

Իրիկուան մօտ հասանք պզտիկ ջրհորի մը քով ու արդէն ծարաւութենէն (ճամբան ինկնող շատ եղեր էր) ամէնս միասին վրան նետուեցանք եւ սկսանք ծարաւնիս յագեցնել: Այդ պզտիկ հորէն մէկ կողմը պարտէզ մը կար, միւս կողմը՝ խաղողի այգիներ, արտեր, բաւական հեռու՝ մէկ մղոնի չափ անդին, գիւղ մը: Այն գիշեր հոն մնացինք: Այն ոստիկանը, որ մեռցուցած էր արաբը, քանի մը արաբներ բռնեցին, զանիկա տանելով հորին քովը՝ մեռցուցին: Մէկ կողմէն պատերազմը կը շարունակուէր, բայց մենք ինկանք, քնացանք՝ յոգնած մարմիննիս գետինը փռելով: Երկնքի աստղերը կը փայլփայլային, լուսինը տխուր դեմքով կը նայէր,

կարծես թէ ինքն ալ գոհ չէր այդ ահռելի տեսարանէն: Այդ խոր լռութեան մէջ յանկարծ աղմուկ մը բարձրացաւ, ոստիկանները փախեր էին, իսկ արաբները եւ քիւրտերը, առիթէն օգտուելով, յարձակէր էին վրանիս: Աղմուկը հետզհետէ կը շատնար, իսկ մենք խոր քունի մէջ քնացեր էինք մեր ընտանիքով: Այդ խուլ ճնշիւններէն յանկարծ արթնցանք, որովհետեւ արաբները եզերքի կողմերուն վրայ յարձակեր էին: Բոլորն ալ դէպի կեդրոն կը վազէին: Խեղճ ժողովուրդ: Մենք քիչ մնաց տակ երթայինք, մենք կեդրոնը կը գտնուէինք, յանկարծ մեր վրայ խուժեցին: Ելանք ոտքի, բայց յանկարծակիի գալուն համար խեղճ քոյրս, պզտիկ քոյրս՝ Հայգուարթը, ժողովուրդին տակը գնաց: Մենք ալ չի կրցանք ձեռքէն բռնել, որ վեր հանէինք, մնաց անպէս: Մենք լուր չունէինք, թէ ներքեւնին է արդէն, գիտնայինք ալ, օգուտ չունէր: Միւս կողմէն զագանները կը բռնէին խեղճերը, մէկիկ-մէկիկ կը տանէին, կը մերկացունէին եւ նոյնիսկ պատիւնուն դպչելով՝ թող կուտային: Այսպէս հետզհետէ կը շարունակէին: Կարգը մեզի եկաւ, տեսանք եղբորս թեւէն մէկը քաշէ կոր, մայրս էլ կը քաշէր, մարդը կը քաշէր: Վերջապէս եղբայրս ըսաւ. «Թող տուր, երթամ, մայրիկ, տեսնանք, ինչ պիտի ընէ»: Վերջապէս տարան: Մենք մեզի կըսէինք. «Ան ալ գնաց, թէ տեսնանք մենք ե՞րբ պիտի երթանք»: Մինչդեռ այսպէս կը խօսէինք, տեսանք, որ եղբայրս բոլորովին մերկ եկաւ մեր քով: Իսկ արշալոյսը բացուելու քիչ կը մնար: Տեսանք ոստիկանները նորէն եկան, քիչ մը սիրտերնուս վախը ելաւ: Ամէն մարդ իր կորսնցուցածները փնտրելու ելաւ, այն ատեն եղբօրս վրայ ծածկեցինք ունեցածովնիս, միւս կողմէն քիւրտերը եկեր, ուտելիք բերեր եւ կը ծախսէն կոր: Եղբայրս, քոյրերս եւ մայրս գացեր էին քոյրիկիս՝ Հայգուարթը փնտրելու: Ես ալ ուտելիք առնելու գացեր էի: Գացեր եմ անոնք եւ գտեր եմ քոյրս, բայց ի՞նչ վիճակի մէջ: Պոռալէն, պոռալէն աչքերը դուրս ինկեր են, եւ բերանը բաց, հոգին աւանդած՝ առեր ու թաղեր են: Նորէն մենք բախտաւոր ենք եղեր մէկ կողմէ, որովհետեւ երկու մեռել ունեցանք եւ երկուքն ալ թաղեցինք: Ես երբ եկայ, արդէն ամէն բան արարտուած էր: Գալուս անմիջապէս հարցուցի, թէ գտա՞ք քոյրիկս: Մայրիկս պատասխանեց՝ գտանք եւ թաղեցինք: Ես նորէն չի հասկնալով հարցուցի, թէ արդեօք ինչո՞ւ թաղեցիք: Այն ատեն մայրիկս պատասխանեց. «Մեռած գտանք, տղա՛ս»: Դեռ խօսքը արարտուած չէր, սկսայ պոռալ. «Մայրիկ, ինչո՞ւ համար թաղեցիք, ես չի տեսած քոյրիկս: Շուտ քալէ՛, երթանք, տեսնամ, վերջը նորէն թաղենք»: Այն ատեն ամէնքս սկսանք լալ, եւ մայրիկս ըսաւ. «Տղա՛ս, մեղք է մեռելը նորէն թաղուած տեղէն դուրս հանել»: Անկէ վերջը ալ կիսամեռ դարձեր էինք եւ ապուշի պէս ասդին-անդին կերթայինք, մինչդեռ միւս կողմէն ոստիկանները նորէն պատերազմը կը մղէին քարերու ետեւ ապաստանած:

21 Կտորտանք:

22 Նիզակ:

23 Ուսին գցվող միտեղանի պայուսակ:

Կեսորուան մօտ էր, ժամերը լռիկ-մնջիկ կանցնեին: Արեւի ճառագայթները ուղղակի զարնելու սկսած էին, եւ նորէն ուստիկանները փախչելու մտադիր կերեւային: Տեսանք, որ ուստիկանները նորէն անհետացեր են, այս անգամ ալ բոլորովին կը վախնայինք, եւ ազատելու ճար չի կար: Բոլորովին յուսահատեր էինք, տեսնանք, որ եկան գազանները, այս անգամ հազարներով, եկեր էին ձիերով, էշերով: Եկան եւ ըսին մեզի. «Քալեցէք, ձեզ երկիրնիդ պիտի տանինք»: Խառնեցին մեզի, առջեւին եւ եկած ճամբով ետ տարին:

Սկսանք քալել: Շատերը կը հաւատային, թէ իրաւ մեզի ետ պիտի տանին: Բաւական երթալ վերջ մեզի 2 մասի բաժնեցին, մէկ մասը քիւրտերն առին, եւ միւս մասն ալ արաբները առին: Իրարմէ քիչ հեռաւորութեամբ քալեցուցին բաւական եւ վերջապէս կեցուցին: Նորէն սկսան կողոպտել, մէկ կողմէն ժողովուրդը սկսած էր մերկնալ, կողոպտածնին մէկ կողմ կը գատէին, որպէսզի չի շուարին եւ հանգիստ-հանգիստ կողոպտեն: Գրեթէ մերկ եւ վայրենի մարդոցմով լեցուած էր բոլոր դաշտը: Ծիշող այն ատենն էր, երբ դեռ մէջերնիս կնիկի հագուստ հագնող էրիկ մարդիկներ եւ երիտասարդներ կային: Մերաստացի տղայ մը, հազիւ 15 տարեկան, անունը Վարդան, երբ եկան զինքը կողոպտելու, տեսաւ այդ քաջ երիտասարդը, որ պիտի մեռնի, վազեց, գնաց, քիւրտին մէկը գետին տապալեց, առաւ ձեռքի գաւազանը եւ ինկաւ այդ գազաններուն մէջ: Մէկ մը անոր կը զարներ, մէկ ուրիշին: Մայրիկը կը պոռար. «Վարդա՛ն, Վարդա՛ն, եկո՛ւր, տղա՛ս», – բայց ան բնաւ մտիկ չէր ընէր անոր եւ իր գործը կը շարունակէր: Գրեթէ քովերնիս եղող վայրենիները սկսեր էին փախչիլ, բայց խեղճ կտորիճը՝ այդ արին, այդ քաջը, վիրաւորուած էր քանի մը տեղէն: Ատոր համար յոգնած ինկաւ գետին, անմիջապէս վրան յարձակեցան եւ բոլորովին մեռցուցին:

Գալով մեր ընտանիքին՝ բոլորս ալ մերկ, իրարու փակած, կեցեր էինք: Քանի մը դահեկան ունէինք, այն ալ բերաններուս մէջ պահած էինք: Քանի մը դահեկան իմ քովս կար, ձեռքիս հացի փշրանքներուն մէջ պահած էի, բայց անդիւն շուն գազան մը եկաւ, նայեցաւ ձեռքերուս հացի մէջ, դրամը հանեց եւ ապտակ մը զարնելով՝ թող տուաւ ինծի: Ալ ամէն բան վերջացեր էր, շատերը հետերնին մանուկներ կան աղջիկներ եւ կնիկներ կը տանէին, ոմանք մանչեր կը տանէին, շատերն ալ հետերնին միայն կողոպտածնին կը տանէին: Այնպէս որ ձիերը չէին կրնար տանիլ, բռներնին ժողովուրդը բաժին-բաժին եղած էր, ոմանք, քանի մը ընտանիք միանալով, մէկ կողմ կերթային, միւսները՝ միւս կողմ, վերջապէս բոլորովին ցրուեցան գրեթէ: Մեզի ալ ազատ թողուցին: Ուր որ ուզէինք, կրնայինք երթալ, մնացած մասն ալ դէպի ան ջրհորը կը խուժէր: Այդ տաքէն բոլորս ալ մերկ, այրած էինք: Այդ խուժանին մէջը առաջին անգամ եւ վազեցի եւ ջրհորը նետեցի ինք-

զինքս, լաւ մը ջուր խմեցի եւ նորէն դուրս ելայ, ժողովուրդը հետզհետէ ջրհորին քովը կը հաւաքէր, ջուրը կը խմեր եւ հոգին կուտար: Այն օրը գրեթէ իրիկուն եղած էր, բայց բերաննիս պատառ մը բան դրած չէինք: Իրիկուան մէջ գացի այն վերի կողմի այգիները եւ քիչ մը խաղողի թափթափածներ հաւաքեցի եւ բերի մօրս մօտ, որպէսզի ամէնքս միասին ուտենք: Չարուի քոյրիկս գացեր էր կողոպտուած տեղերնիս եւ այնտեղէն հացի փշրանքներ հաւաքեր, բերեր էր: Բոլորս միասին նստեցանք եւ կերանք: Այն օրը այնպէս անցաւ: Իրիկունը պառկելու պէտք ունէինք, մերկ ալ չէինք, կրնար պառկիլ: Ատոր համար ելայ ծառի մը վրայ, բաւական տերեւ թափեցի, տերեւները ներքեւնին շարեցինք, իրարու փակած պառկեցանք, բայց հովը կը փչէր, կը դողայինք, քուններնիս չէր տաներ: Կեսգիշերուան կելլէինք, կը վազէինք եւ նորէն կը պառկէինք:

Վերջապէս առաւօտ ըրինք, ամէն մարդ անօրի էր, պէտք էր սնունդ փնտրել: Մեր մօտը գտնուած պարտեզին մէջ պտուղի ծառեր կային, անոնց պտուղները հատեր էին, բայց չորցած, թափած քանի մը բաներ կային: Կերթայինք, այն չոր թափած պտուղները կը հաւաքէինք եւ կուտէինք: Միւս կողմը այգի կար, այնտեղ ալ՝ նոյնպէս, իսկ մէկ կողմն ալ մեղուներու փեթակներուն մէջը մեղր կար, անոնց համը կը նայէինք: Չարուի քոյրիկս քանի մը անգամ բերաւ, եւ կերանք առանց հացի: Երբ ամէն բան հատած էր, ծառերու տերեւներ կուտէինք: Կերթայինք կողոպտուած տեղերնիս թիթիկի ամաններ, լուցկիի հատեր կը գտնէինք, կուգայինք, կրակը կը վառէինք, թիթիկին մէջը ջուրը կը լեցունէինք եւ տերեւներն ալ մէջը լաւ մը կը խաշէինք, եթէ աղ գտնէինք, մէջը կը դնէինք, եթէ չի գտնէինք, այնպէս խաշած-խաշած կուտէինք: Վերջապէս մեռնելու աստիճանէն քիչ մը հեռու կը մնայինք: Այն օրն ալ կանցներ կամաց-կամաց: Մէկ կողմէն նորէն քրդեր եւ արաբներ կուգային, երբեմն հետերնին աղջիկներ կը տանէին, պատիւնուն անցնել վերջ նորէն թող կուտային: Տղաքներ կը տանէին ծառայութեան համար, պզտիկ մանուկներ կը տանէին մեծցունելու համար: Այն օրն ալ անցուցինք: Իրիկուն եղաւ, նորէն պառկեցանք նոյն կերպով: Բնաւ հանգիստ չէինք ըլլար:

Նորէն առաւօտ եղաւ: Այն ժամանակ, որ կողոպտուեցանք, այն ատեն խումբ մը բաժանուեցաւ մեզմէ եւ դէպի Ուրֆա գացին: Կեսորուան մօտ էր, երբ տեսանք, որ խումբ հայեր կուգան մեզի պէս մերկ, հետերնին ալ քանի մը ուստիկաններ: Վերջապէս հասան քովերնիս: Հարցուցինք, թէ արդեօք ինչո՞ւ համար կուգան կոր: Անոնք մեզի ըսին, թէ մինչեւ Ուրֆա գացեր են, բայց կառավարութիւնը ներս չի ընդունած, ատոր համար ուստիկանները ետ բերեր են: Քիչ մը հետերնիս խօսակցեցան, քիչ մը հանգիստ ըրին: Մենք մասամբ մը ուրախ էինք, որովհետեւ այն յոյսը ունէինք, թէ մեզի այդ վիճակէն

պիտի ազատելին: Վերջապես 5-6 օր հոտ մնալէն վեր՝ կէսօրուան մօտ ոստիկանները հրաման ըրին, որ ճամբայ ելանք: Իրարու ձեռք բռնեցինք: Մէկ-մէկ քուռչի կտորներ գտանք, եւ առջեւնիս-ետեւնիս կապեցինք եւ ճամբայ ելանք: Այդ տաքուն բաւական քալելէ վերջ գիտի մը հասանք, հոն ջուր կար, բայց չի թողուցին, որ խմենք: Քիչ մը ցորեն կար, ատոնք կուտէինք, բայց ծարաւութիւնը անօթութիւնէն աւելի դժուար է: Նորէն ճամբայ ելանք, կը քալէինք բոպիկ: Փուշերը ոտքերնիս կը մտնէր: Իրիկուան դէմ գիւղ մը հասանք: Այնտեղ խնդրեցինք, որ մեզի քովերնին ծառայութիւն առնեն, բայց չէին առնէր: Մեր հետը կար նաեւ տանուտէրնա հարսը՝ Ֆընտրզ տուտուն: Անոր քովը քիչ մը դրամ կար: Գացինք, այդ դրամով ջուր գնեցինք եւ քիչ մը զովացանք: Այն տեղէն ալ ճամբայ ելանք, նորէն ձորերուն, ժայռերուն վրայէն կը քալէինք անընդհատ: Ուրիշ գիւղ մը եւս եկանք, ինքզինքս փորձեցի մեկու մը քով մնալ, բայց մայրիկս մերժեց: Կը քալէինք միշտ: Վերջապես տեղ մը հասանք, որ եւ արդէն մեռնելու աստիճանին վրայ էի, ատոր համար մայրիկէս խնդրեցի.

–Ես քիչ մը յառաջ երթամ, մինչեւ որ դուք հասնիք, յոգնութիւնս առնեմ:

Մայրիկս հաւանեցաւ: Ես վազեցի յառաջ: Գացի, ժայռի մը տակը հանգչեցայ, այնպէս որ յոգնութենէս անմիջապէս քունս տարաւ: Բաւական քնացեր էի, երբ արթնցայ, եւ ինքս մինակ զգացի, այնտեղ սկսայ լալ, որ արդէն պիտի մեռնիմ, մայրիկիս քովը մեռնիմ: Արդէն ծարաւութենէ բերանս չորցած էր: Երբ քիչ մը կեցած տեղս շրջեցայ, տեսայ քանի մը խեղճեր ինծի պէս: Անոնց հետ ընկերակցեցանք եւ ճամբան ելանք, գացինք այն ճամբով, որ առաջ գացեր էր մեր խումբը: Վերջապէս հասանք ետեւնին: Այս անգամ մայրիկս կը փնտրէի, բայց ուրկէ պիտի գտնէի: Միշտ կուլայի առանց արցունքս դադրելու: Արդէն արեւը մայր մտնելու մօտ էր: Նորէն քանի մը ընկերներով միասին ճամբանիս շարունակեցինք, ալ մութը կոխած էր արդէն:

Հասանք վերջապէս հոր մը քով: Հորին մէջը իջանք հոն հանգիստ ընելու համար: Մատերով կը փորէինք քիչ մը տեղերնիս հարթացնելու համար: Շատ փորելէն վերջը ցեխի պէս ջուր ելաւ մէջէն: Անմիջապէս վրան նետուեցայ եւ սկսայ խմել, բնաւ չէի մտածեր, թէ կոկորդս կը մնայ այդ ցեխի ջուրը: Վերջապէս այն գիշեր հոտ քնացայ: Հորին բերանը նեղ էր, եւ մէջը լայն ըլլալուն համար տաք կընէր բաւական:

Առաւօտ եղաւ, նորէն դուրս ելայ: Այս-այն կողմ կը նայէի մեր ընտանիքը գտնելու համար: Շատ փնտրեցի: Այս կողմ գացի, այն կողմ գացի, վերջապէս տեսայ, որ բլուրին վրայէն խումբ մը մերկեր կուգան կոր: Գացի, ճամբուն վրայ կեցայ՝ ըսելով, թէ անոնք են վերջապէս: Մօտեցայ, տեսայ, որ, իրաւ, ալ մայրիկս, քոյրերս եւ եղբայրս են: Գացի,

անմիջապէս լալով մայրիկիս վիզը փաթթուեցայ, քիչ մը կեցանք:

–Մայրիկ, ես ջուրի տեղ գիտեմ, քալեցէ՛ք, հոն երթանք:

Ելանք ճամբայ դէպի հորը: Բաւական քալելէն վերջը հասանք հորը, մէջը մտանք, լաւ մը փորեցինք եւ քիչ մը մաքուր ջուր հանեցինք: Տեղաորուեցանք եզերքը, ալ բոլորովին հովէն ապաստանած էինք: Մեզի հետ նաեւ կային քանի մը տուներ: Քանի մը օր հոն մնացինք առանց բերաննիս բան մը դնելով: Միմիայն այն ցեխտտ ջուրը փարչերու մէջ կը դնէինք եւ կը սեղմէինք, յետոյ կը խմէինք: Վերջապէս տեսանք, որ հոտ մնալով՝ չի պիտի ըլլայ, ատոր համար ելանք դուրս, ինկանք ճամբայ: Կերթայինք եկած ճամբանու շեղակի ճամբայ մը: Մինչեւ կէսօր քալեցինք արեւին տաքութեան տակ: Վերջապէս հասանք հորի մը քով, ուր քանի մը փլած տուներ կային եւ քիչ մըն ալ երթ կար անոնց մէջ: Լաւ մը ծարաւացած էինք: Իսկուհի քոյրիկս ինքզինքը հորը նետեց, հորին մէջ մարդաբոյ ջուր չի կար, այլ մինչեւ մարդու ծունկ: Երբ քոյրիկս մէջը նետուեցաւ, մենք անմիջապէս ծակ թիթեղ մը գտանք եւ քուրջերը իրար կապելով՝ վար կախեցինք: Մեզի ջուր դրկեց կեսը թափած, կեսը մէջը: Խմեցինք: Քանի մը արարներ կային, ուզեցին քոյրիկս տանին, ատոր համար ձեռքերնուն փախաւ, արդէն ծարաւ ալ էր, ինքզինքը հորը նետեց: Մենք քիչ մը զովացած գացինք եւ այդ փլած տուներուն մէջը երկարեցանք կիսամեռի պէս: Ալ անօթութեան ցարը կը մոռնայինք, երբ ծարաւութեան ցարը սիրտերնիս իյնար: Մինչեւ իրիկուն հոտ մնացինք եւ վերջը իրիկուան մօտ նորէն հորին գլուխը գացինք: Ովսաննա մօրաքոյրս ալ մէջն է: Ըսինք քոյրիկիս եւ մօրաքոյրս, որ մենք կերթանք կոր, ինչ պիտի ըլլա՞ք դուք: Քոյրս պատասխանեց՝ դուք գացէ՛ք, ես հոս կը մեռնիմ: Իրիկուն եղած էր: Մութը կոխեց, քիչ մը արցունք թափեցինք հորին գլուխը եւ մնաք բարով ըսելով թէ՛ քոյրիս եւ թէ՛ մօրաքոյրիս՝ ելանք ճամբայ: Բայց ո՞ր, չի գիտենք: Հետերնիս կային մեր տանուտէրին հարսը՝ Ֆընտրզ տուտուն, եւ մի քանի ընտանիքներ: Գիշերային այդ մթութեան մէջ կը ճամբորդէինք: Աստղերը լուռ կը նայէին՝ ճառագայթներ տալով, կարծես թէ հասկցնել կուզէին՝ ճամբանիդ հոտ չէ: Միշտ կը քալէինք այդ լուռութեան մէջ: Կը վախնայինք պզտիկ շշուկ մը հանելու՝ միտքերնիս բերելով, թէ գիտէրու մօտէն կանցնէինք, եւ շուները ձայներնիս կը լսէին եւ վրանիս յարձակելով լուր կուտան, թէ հոս մարդ կայ:

Բաւական քալեցինք:

Կէսգիշերուան մօտ էր, երբ տեսանք որ դէմերնիս խումբ մը մարդ կուգայ կոր: Վախը սիրտերնուս հանեցինք՝ ըսելով, թէ մեռնիլը պիտի մեռնինք, ժամ առաջ մեռնինք: Անվախ քալեցինք, բաւական մօտեցանք: Հազիւ տասը քայլ անդին տեսանք մեզի պէս խեղճեր: Անոնցմէ ճամբայ հարցուցինք, ա-

ունք ալ մեզի բարի յաջողութիւն մաղթելով՝ իրարմէ հեռացանք: Անընդհատ կը քալէինք: Մեռելի հոտէն քիթերնիս ինկաւ, աչքերնիս գոց կերթայինք, որովհետեւ քուն կար վրանիս, եւ այսպէս անընդհատ կը քալէինք: Վերջապէս տեսանք, որ կարելի չէր ճամբանիս շարունակել, ուստի քիչ մը ճամբայէն շեղվելով՝ բլուրին վրայ ելանք, հոն քարերուն տակը պառկեցանք:

Առաւօտուան քիչ մնացած էր, հազիւ թէ 2 ժամ: Ամէնուս ալ քունը տարած էր, միայն քանի մը կիներ նստած կը խօսակցէին իրար հետ: Արեւը, իր ճառագայթները ցոլացնելով, կը բարձրանար արեւելքէն: Գիւղացիները, եզները առած, կերթային արտը՝ իրենց սովորական գործով զբաղելով: Մենք արդէն արթնցած էինք, երբ տեսանք, որ քիւրտերը դէպի մեզ կը յառաջանային: Մէկն ալ, քիչ մը ճամբայէն շեղվելով դէպի մեզի յառաջացաւ առանց իր նպատակը հասկնալու: Երբ տեսանք, որ մեզի մօտեցաւ, անգամ մը լաւ նայեցաւ մեզի, յետոյ սկսաւ պոռալ.

–Կեավոր վա՛ր, կեավոր վա՛ր:

Անոնցմէ մէկը, այս լսելով, վազեց, եկաւ միւս ընկերոջը քով, իսկ միւսներն առանց ուշադրութիւն դարձնելու ճամբանիս շարունակեցին: Երբ մենք երկու վայրենիները դէմառդէմ կը տեսնէինք, սկսանք դողալ, կը վախճանայինք, երբ անոնցմէ մէկը եկաւ եւ մեզի իր թափփած թուրքերէնով ըսաւ՝ «Փարա, փարա»: Մենք ալ ըսինք. «Չի կայ»:

Բայց անոնք չի վստահեցան մեր վրայ: Եղբօրս՝ Արմենակին թեւէն բռնելով, քաշեցին մեզմէ: 5 քայլ անդին տարաւ, գետին պառկեցուց եւ դանակը հանելով՝ վիզը դրաւ եւ նորէն սկսաւ՝ դրամ, դրամ: Մայրիկս կուլար, բայց ի՛նչ օգուտ: Վերջապէս միւս ընկերը պատճառ եղաւ թող տալու: Արդէն կարգը ինձի եկած էր, երբ տեսայ, որ մարդը դէպի ինձ յառաջացաւ, նոյնպէս ինձի ալ գետին պառկեցուց եւ նոյն բառերը կրկնեց: Ես վախը հանած էի սիրտես, ինչպէս որ ոչխարը, երբ գետին կը պառկեցնեն մորթելու համար, իր վիճակէն անտարբեր՝ չորս դին կը նայի: Նոյնպէս ես ալ հլու, հնազանդ կը նայէի՝ դահիճիս աչքերը նայելով եւ սուս արցունք մըն ալ աչքերնիս սահեցնելով: Դանակը, այն անգութ քիւրտին սուր դանակը հազիւ վիզէս մագ մը հեռաւորութեան կը գտնուէր: Վերջէն ուշադրութիւնս դարձնելով մայրիկիս՝ ըսի. «Մնա՛ք բարով, մայրիկ»:

Հազիւ այս բառերը արտասանած էի, երբ ինքզինքս գազանին ճիրանէն ազատուած զգացի, չէի գիտէր, թէ ինչպէս գութի եկած էր այդ մարդահրէշը:

Առաւօտ է: Չորս կողմ խոր լուրթեան մէջ է, կը լսուի երբեմն շուներու անհասկանալի հաչիւնը: Մենք՝ խումբ մը գաղթականներս, իրարու կողք մտած չորս կողմ կը դիտէինք եւ բնութեանը վրայ կզմայլէինք: Կանիծէինք այդ օրը, որովհետեւ քիչ մը աւելի ուշ ծագէր արեւը, շահաւորը մենք պիտի ըլլայինք...

Կանիծէինք, որովհետեւ դեռ պիտի քալէինք, չարչարուէինք, տառապէինք, եւ վերջ ի վերջոյ մեռնէինք օտար, հեռու հորիզոններու տակ:

Կանիծէինք, որովհետեւ լոյս ժամանակ պիտի մեռնէինք՝ կարօտը մնացած մէկ կաթիլ ջուրի եւ պատառ մը հացի: Կանիծէինք, որովհետեւ արեւի լոյսին տակ պիտի մեռնէինք եւ վերջին անգամ իրարու երես պիտի նայէինք: Գիշերը մթութեան մէջ մեռնիլը կերպ մը դիւրին է, քան ցորեկը, որովհետեւ լուրթեան ու մթութեան մէջ կը կատարուի ամէն գործողութիւն:

Երբ չորս կողմը լաւ մը լուսցաւ, մենք դարձեալ սկսանք մեր տաժանելի ուղեւորութիւնը՝ միշտ նախընտրելով ժամ առաջ մեռնիլ: 5 վայրկեան քալելէ վերջ տեսանք մարդ մը, որ ժայռերու վրայ նստած՝ ոչխար կարածէր: Մօտեցանք մարդուն, ան ալ իր կարգին մօտենալով, հարցուցինք, թէ քովի գիւղէն մեզի օգո՞ւտ մը կուգայ, թէ՞ վնաս մը:

–Ոչ,– պատասխանեց օտարականը,– բնաւ վնաս չի գար:

Մենք իրարու երես քիչ մը նայելէ վերջ՝ մայրիկս հարցուց, թէ կուզէ իր քով տղայ մը պահի՞լ:

Դարձեալ՝ ո՛չ:

Գիւղին ճամբան բռնելով՝ յառաջացանք՝ կաթիլ մը ջուրին կարօտ մնացած: Բաւական քալեցինք, երբ շուներու հաչիւնը երթալով մեզի կը մօտենար, միեւնոյն ատէն իրենք ալ:

Վերջապէս մտանք գիւղ:

Չորս կողմէն կը վազէն բարեսիրտ կիներ՝ իրենց ձեռքը բռնած կտոր մը հաց կամ գաւաթ մը ջուր: Գիւղացիներէն ոմանք ծուռ կը նայէին այն այրերուն, որոնք մեզի այս տեսակ ընդունելութիւն կրնէին, իսկ մաս մըն ալ կար, որ առանց ուրանալու ըսինք, թէ գութ ունէր: Երբ տեսանք, թէ այսպէս մէկ կամ երկու գաւաթ ջուրով չեն կրնար մեր անհագ ծարարը յագեցնիլ, մեզ տարին հորին գլուխը եւ նստեցուցին կենդանիներուն ջուր խմելու ամաններու շուրջ: Լծուեցան երկու գիւղացիներ հորին պարանին եւ շուտափոյթ քայլերով հորէն հեռացան: Քիչ վերջ դուրս եկաւ խալգին²⁴ մը՝ ջուրով լեցուն: Չուրը առնելով՝ թափեցին այն ամաններուն մէջ, որոնց շուրջը քիչ առաջ բազմեր էինք: Ամէնքնիս մեկանց թափուեցանք գուռերուն վրայ եւ անյագ ստամոքսնիս լեցուցինք ջուրով: Հոգ չէ, թէ քիչ մըն ալ աղտոտ է կամ շատ: Երբ տեսանք, թէ այլեւս չէինք կրնար տեղերնիս շարժիլ, այն ատեն զգացինք, թէ այլեւս բաւ է:

Քիչ մը հոտ անշարժ մնալէ վերջ ոտքի ելանք ու հորէն հեռացանք, միեւնոյն ատեն գիւղին ալ: Հազիւ 5 վայրկեան քալեր էինք, տեսանք քարայր մը, որը կարելի էր գործածել մեզի համար իբր իջեւան: Մտանք ներս, եւ ամէն ոք իրեն տեղ մը գրաւեց: Ամէնքս ալ մօրմէ մերկ էինք, միայն թէ դիակներուն

24 Դղնճէ աման:

վրայէ առնելով մէկ-մէկ կտոր լաթեր՝ ծածկած էինք մեր ամօթույքը:

Արեւը հետզհետէ կը բարձրանար: Ժամանակն ալ հետզհետէ կը սահէր: Կէսօր է: Ես մինչեւ այդ ժամանակ քնացեր էի մայրիկիս ծունկերուն վրայ: Երբ արթնցայ, տեսայ, որ Չարուհի քոյրս թիթեղով բան մը կերկարէ ինձի՝ ըսելով.

–Ա՛ռ, Արա՛ն, առ, աղբարիկ, մենք կերանք, սա քու բաժինդ է:

Ես թիթեղը առնելու կը պատրաստուէի, երբ մայրիկս ալ ըսաւ.

–Ա՛ռ, գառնու՛կս, Արա՛նս, ա՛ռ: Դուն կը քնանալիք, երբ քոյրիկդ գնաց եւ վրաններէն հաւաքեց այս կերակուրը: Մենք կերանք, սա ալ քու բաժինդ է: Կէ՛ր, որ իրիկունն ալ դուն երթաս:

Թիթեղով կերակուրը առնելով քրոջս ձեռքէն սկսայ լափել: Քանի մի երկվայրկեան վերջ պարսպ ամանը գետնի վրայէն կը թաւալգորէր: Ես դարձեալ քնացայ: Կը քնանայի, որովհետեւ ամբողջ գիշերները անքուն ճամբորդեր էինք եւ դեռ պիտի ճամբորդէինք:

Իրիկունը մօտ էր: Արեւը դէպի արեւմուտք հակած է: Հօտաղները, կամաց-կամաց իրենց աշխատանքը թող ձգելով, իրիկուան հանգիստը վայելելու կուգան: Նոյնպէս հովիւներն ալ, իրենց հօտերը առջեւնին ձգած, կամաց-կամաց արածեցնելով կը մտնին գիւղ: Դիշտ նոյն պահուն էր, որ մայրիկս ինձի արթնցուց՝ ըսելով.

–Գնա՛, գաւալս, ժամանակը եկաւ, ա՛ռ թիթեղը, գնա՛, քիչ մը ուտելիք ճարէ՛:

Աչքերս շփելով վեր կանգնեցայ եւ վայրկեան մը ինքզինքս մեր ազատ հողին, ազատ վայրին մէջ գզացի, բայց շուտ սթափեցայ:

Առի թիթեղը: Միեւնոյն ատեն ես եւ փոքրիկ տղայ մը սկսանք գիւղ յառաջանալ լուռ եւ դանդաղ քայլերով: Հագիւ թէ գիւղին սահմանին մօտեցանք, յանկարծ պահապան շուները յարձակեցան իրենց գոռու-գոչիւններով: Քիչ մը ճամբանիս շեղելով՝ ազատուեցանք այս կատաղի կենդանիներէն: Վերջապէս մտանք գիւղ ու սկսանք ամէն մէկ տուն ներկայանալով՝ մեր պարսպ ամանները դէպի տէրերուն երկարել: Ոմանք կուտան, ոմանք կը վռնտին, իսկ ոմանք ալ չի տալէ զատ թէ՛ կը վռնտին եւ թէ՛ շուները ետեննին կը քշեն:

Յուսահատելի բան: Երբ տեսանք, թէ ամէն բան անօգուտ է, սկսանք հեռանալ անիծեալ վայրէն:

Անշուշտ, պարսպ:

Բռնեցինք եկած ճամբանիս եւ սկսանք քայլել լուռ ու տխուր: Քանի մը քայլ ես առնելով՝ դէմերնիս գտանք երկու հովիւ տղաք, որոնք հոտերնին առջեւնին խառնած, գիւղ կը մտնին: Տղոցմէ մէկը իմ հասակս, իսկ միւրը ինձմէ բաւական մեծ էր: Այս տղաքը, երբ մեզի տեսան, իրենց հօտերը սկսան մեր կողմ դարձնիլ, անշուշտ, գէշ նպատակով: Աս որ տեսայ, անմիջապէս հասկցայ իրենց ինչ նպատակի ծառայիլը եւ իմ քովի փոքրիկ տղուն ըսի, որ ինք ինձմէ բաժնուի, որովհետեւ եթէ երկուքս մէկտեղ ըլլանք, դիւրին կըլլար բռնուիլը եւ լաւ մը ծեծուիլը, իսկ եթէ զատ-զատ ըլլանք, երկուքը մէկտեղ կ'ան անոր վրայ պիտի երթային, կ'ան իմ վրայ: Փոքրիկին քովէս հեռացուցի՝ թիթեղը իրեն տալով: Բացայայտ բան էր, որ զիս պիտի ծեծէին կամ սպանէին, եթէ կարենային: Տեսայ, որ փոքրիկը ինձմէ բաւական հեռացեր էր, իսկ հովիւները զիս կը շրջապատէին իրենց նպատակին հասնելու համար:

Քաջութիւնս բաւական տեղն էր: Վերջին ճիգ մը, ազատումի ճիգ մը ընելու յոյսով սկսայ վազիլ, ամէն ինչ ի գործ դնելով, բայց պարսպ, բոլորովին պարսպ, որովհետեւ շաբաթներով անօթի, ծարաւ, մերկ, անքուն մնացող մէկէ մը ի՞նչ արդիւնք կ'սպասէի, անշուշտ, ոչինչ: Հագիւ քանի մը քայլ առեր էի, երբ ինքզինքս մեծ հովիւին մեծ ճիրաններուն մէջտեղ գտայ: Յուսահատութիւնը ակնբեր էր նոյն պահուն իմ վրայ: Անխօս եւ լալագին, երբ երեսը կը նայէի, յանկարծ այնպիսի ուժգնութեամբ քար մը եկաւ, ականջիս եւ գլխուս դպաւ, որ անմիջապէս գետիկը քանի մը անգամ համբուրեցի:

Այդ քարը զարնողը, անշուշտ, պզտիկ հովիւն էր, որովհետեւ ասկէ զատ ուրիշ ոչ որ չկար, բացի մեծ հովիւէն, որը ինձմով զբաղած էր նոյն պահուն: Աս վիճակիս մէջ էի, երբ անգամ մը չորս կողմ նայեցայ՝ փոքրիկը տեսնելու յոյսով, արդեօ՞ք անվնաս մնաց, թէ՞ ան ալ ինձի պէս լաւ մը ծեծուեցաւ:

Մէկ ակնթարթին մէջ նշմարեցի որ «քառասամբակ» կը փախչէր դէպի մօրը:

Տաս կէս մը մոռցայ, որովհետեւ գոնէ իմ մէկ ու շիմութեանս հետեւանքով ազատուեցաւ այդ անմեղ մանուկը:

Նայեցայ մեծ հովիւին երեսը, որ կը խնդար փոքր հովիւին ըրած վայրագ գործողութեան վրայ: Գթութիւն խնդրեցի, բայց ի՞նչ կ'սպասուէի այդ լեռնցի գազանանման մարդէն, սպտակ մըն ալ ինքն զարկաւ ինքն ալ բաժին ունենալու մտքով: Արիւնը գլխէս եւ ականջէս կը հոսէր: Երբ տեսայ, թէ խնդրանք, պաղատանք, աղաչանք օգուտ չընէր, վերջին ազատումին յոյսով ներքին ճիգով մը գազանին ձեռքերէն դուրս նետուեցայ եւ շիտակ մերիկներուն ճամբան բռնեցի: Անշուշտ, սա անկուշտ քիւրտերը անտարբեր չը պիտի մնային այս տեսակ փախչումէս յետոյ, ուստի սկսան զիս հալածել եւ քարկոծել: Բարեբախտաբար, նետուած քարերէն մէկն ալ ինձի մագի մը չափ վնաս չի հասցուց, միայն թէ ֆիզիկական տկարութիւնս զիս շատ կը նեղէր:

Գազաններու ձեռքէն ազատեցայ եւ շիտակ մեր իջեւանը վագեցի: Արդէն բոլոր եղելութեանը իրենք ականատես եղած էին, այսինքն՝ քոյրս, մայրս, եղբայրս տեսած էին, թէ ինչ եկած էր գլխուս գիւղ երթալէն վերջ, բայց ի՞նչ կուգար ձեռքերնուն:

Բաւական վազել վերջ վերջապէս ինքզինքս մայրիկիս քեւերուն մէջ գտայ, այդ պահուն էր, որ սկսայ բուն արցունք թափիլ, իսկ հովիւներուն քովը՝ բնաւ երբեք, միայն սուտ:

Այդ ատենն էր, որ կրցայ հասկնալ, թէ քարը ուրտեղիս էր եկած: Մայրիկս քննելով ըսաւ, թէ գլուխդ եւ ականջդ է, բայց անվնաս: Իսկապէս ես ցաւ չէի զգար, չեմ գիտեր, թէ ինչու, անօթութեամբ համար, թէ՞ ծարաւութեան: Շիտակը անհասկանալի է, բայց այս երկուքին միմը կամ միսը հաւանական է ամեն պարագային տակ: Այդ օրէն աղիկն է, որ ականջս կտորած մնաց մինչեւ այսօր: Ինչպէ՞ս աղեկցաւ, ես ալ չեմ գիտեր: Անապատին մէջ ո՛չ դեղ կար եւ ո՛չ ալ դեղագործ:

Այդ գիշեր նոյն գիւղը անցուցինք՝ սուկումով պատուած: Քարայրը փոքր դուռ մը ունէր, ներսի կողմը բաւական ընդարձակ էր, բայց խորդուբորդ: Գետինը ծածկուած էր չախմախ քարով, որը բոլոր գիշերը մեզ արթուն պահեց:

Եղաւ դարձեալ առաւօտ: Այլեւս դուրս ելլելն անկարելի էր: Երեկուան պատահարը մեզի լաւ դաս մը եղաւ: Նոյն օրը բնաւ դուրս չի կրցանք ելլել, որովհետեւ արդէն լսեցինք, թէ դուրսը գտածնիս ինչպէս անգթօրէն կը սպանէին: Թէեւ մենք ալ մահէն վախ չունէինք, բայց վերջապէս կեանքը յանուշ է:

Դարձեալ գիշեր եղաւ: Պատրաստութիւններ կը տեսնէինք այդ վայրէն հեռանալ, երբ յանկարծ քանի մը քիւրտ հուժկու երիտասարդներ ներս մտան՝ ձեռքերնին մէկ-մէկ փայտ առած: Իրենց նպատակն էր այդ մարդ գտնել եւ սպաննիլ, բայց բարեբախտաբար, փնտրածնուն չի կար քովերնիս:

Հեռացան, սուկումնիս ալ աւելի շատցաւ: Կուզէինք ժամ առաջ հեռանալ, սակայն բնական արգելքներ չէին թողոր, որ մտադրութիւննիս անմիջապէս գործադրէինք: Վերջապէս բաւական ժամանակ անցնել վերջ ճամբայ ելանք: Արշալոյսը մօտ էր: Կը քալենք տրտում, տխուր, յուսալքուած՝ անիծելով մեր սեւ բախտը, նոյնիսկ հայ ծնիւնիս: Արդեօք այսպէ՞ս է կարգադրեր Աստուած աշխարհ ստեղծած օրը, թէ հայը միշտ պէտք է չարչարուի, կոպուպտուի, տառապի, իր պատիւը առեւանգուի, գերի դառնայ դարաւոր թշնամիին ձեռք եւ վերջ ի վերջոյ անոր բիրտ կացինով սպանուի: Ո՛չ, ես այս գաղափարին հետ հաշտ չեմ: Հայը ինքն է, որ զինքը մորթող թշնամիի ձեռքը կուտայ այն գործիքը, որ յետոյ իր գլուխը պիտի անջատէ մարմնէն: Հայը ինքը կը շինէ իր ճակատագիրը: Ահա մենք ալ՝ այդ ցեղին մնացորդ զաւակներս, կը կրէինք այդ լուռ չարչարանքները: Կը քալենք ու կը քալենք բոպիկ, մերկ, անօթի, ծարաւ, հիւանդ:

Արեւը ծագեցաւ, իր կենսատու ճառագայթները կը վայելէինք: Ահա մեզմէ քիչ հեռու դէպի յառաջակողմերնիս կը տեսնինք երկու ձիատրներ, որոնք մեզի ձեռքերով նշաններ կընին, որպէսզի իրենց ետեւէն երթանք, բայց չենք երթար, որովհետեւ մեր

քովը կան քանի մը գաղթականներ, որ քիչ առաջ այդ ճամբէն վերադարձան եւ պատմեցին, թէ ինչպէս ջարդեցին միւս մնացեալները, որոնք չկարողացան փախչիլ: Չի գացինք իրենց ետեւէն: Մարդոցմէ մէկը, ետ դառնալով դէպի մեզի, եկաւ ու Մարիամ անունով աղջկան քեւէն բռնելով իրեն քաշեց: Մայրը չէր ուզեր, որ այսպէս տեսարանի մը ներկայ ըլլայ, բայց որովհետեւ հայ է, պէտք է լուռ կենայ: Անձանօթը, մօրը հետ քիչ մը խօսակցել վերջ, աղջկա ձեռքէն բռնուած, եկած ճամբով ետ դարձաւ: Տեսարանը սուկալի է: Մայրը դեռ ողջ եղած ատենը աղջիկը կը քաշին ու կը տանին... արցունք թափիլ չկայ: Երկար ժամանակ կանգնած մնացինք այս տեղը, ուր բաժանումը կատարուեցաւ: Դիտեցինք մինչեւ այն ժամանակ, որ հորիզոնին վրայէ գոյգ մը սեւ կետերը հեռացան: Այդ աղջիկը մեր տանուտէրին աղջիկն էր, որ հազիւ 10-11 տարեկան կար: Մօրը անունն էր Ֆընտրոգ, հօրը՝ Նիկողոս, մեծ մօրը՝ Ծաղիկ:

Սկսանք շարունակել անհատնելի ճամբանիս ժայռերու, խորխորատներու եւ խոր ձորերու մէջէն, որպէսզի չըլլայ, թէ դէմերնիս մէկը ելլէ եւ սպաննէ: Կը նախընտրէինք բնական մահով մեռնիլ, բայց ան ալ չէր իրականանար: Ծարաւէ մեռնելու սուկումը դարձեալ մեզ պատեց: Կեսօր է: Արեւը ճիշդ գլուխնուս վրայ է, դեռ ջուրի մը չի հանդիպեցանք: Կարողութիւննիս սկսաւ հատնիլ, ճամբայ կտրելը հետզհետէ անկարելի կը դառնար: Քիչ մըն ալ քալեցանք, բայց տեսանք, որ անկարելի է: Նստեցանք քիչ մը հանգիստ ընելու համար: Սակայն հոս ալ հանգիստն անկարելի է: Դարձեալ երկու հետիոտն անձեր եկան դէմերնիս: Իւրաքանչիւրին ձեռքը մէկ-մէկ հատ փայտ՝ ծայրը գունդով: Տեսանք մերկութիւննիս եւ համոզվելով, որ մենք դրամ չունինք, հեռացան: Բայց մէջէնիս փոքրիկ տղայ մը կար, ան պիտի սպաննէին, որովհետեւ պառկած էր եւ պառկած մնաց իրենց ներկայութեան ալ: Սուկումնիս երթալով կը շատնար: Յոգնութիւնը, ծարաւութիւնը, անքնութիւնը մոռցանք: Սկսանք գրեթէ վազել՝ ժամ առաջ այդ անիծեալ վայրէն հեռանալու համար: Բաւական քալել վերջ հասանք դաշտը, որ չորս կողմնիս որոշապէս կը տեսնուէր, եթէ մեզ վտանգ մը սպառնար, կրնայինք շուտով ազատիլ:

Մեր հետը կային քանի մը ընտանիք եւս: Երբ հոս բաց դաշտը հասանք, կանանց խօսակցութեան նիւթ բացուեցաւ: Մէկը կըսէ.

–Ես Խարբերդի հոտը կառնիմ կոր:

–Ես ալ Ուրֆայի հոտը:

Երրորդը կըսէ.

–Չէ, ճանրմ, սա նորէն մենք Մալաթիա եկանք, եւ քիչ յետոյ ըսածս պիտի ապացուցանիմ:

Ինծի այնպէս եկաւ, թէ երկրորդին ըսածը ամենէն հաւանականն էր: Թէ՛ կը խօսէինք, թէ՛ կը ճամբորդէինք: Ժամանակը բաւական սահեր էր, երբ վայրի պտղատու ծառի մը տակ հասանք: Ամենքս

ալ որոշեցինք, որ հոտ բաւական մը հանգչինք: Նստանք, որպէսզի յոգնութիւննիս առնինք: Ոմանք ծառը բարձրացան, ոմանք ալ քնացան, ես ալ վերջիններէն էի: Երբ արթնցայ, տեսայ, որ ամէնն ալ, բոտ մը վայրի տանձ առած ձեռքը, կը խածնին, կը խածնին, կը նետեն: Բոտ մըն ալ ինձի տուին: Նոյն փորձերը ես ալ կատարեցի: Սակայն, սա ալ ըսիմ, որ որչափ ալ ուտէինք, ոչինչ կը զգայինք, որովհետեւ ջուրն ամենաանհրաժեշտն է:

Իրիկուան ժամը 5-ը կար, երբ որոշեցինք հեռանալ այդ վայրէն: Ինկանք ճամբայ, քայլեցինք բաւական: Արեւը հետզհետէ արեւմուտք կառաջանար: Քիչ ետքը շարք մը վրաններ ու ստուեր տեսնուեցաւ, անոնց հետ ալ խումբ մը շուներ: Շուները սկսան մեր վրայ հաչել: Բայց տէրերը չթողուցին, որ մեզ վիրաւորեն: Մենք ուղղակի հորին գլուխը վազեցինք: Հազիւ ինքզինքնիս հորին գլուխ գտանք, իրարու դէմ դիմաց եկանք գիւղացիներէն մէկուն, գոր դանակը ձեռքը բռնած՝ չէր թողուր, որ քիչ մը ջուր առնենք: Դրամ կը պահանջէր մեզմէ: Ուրկէ՞: Չէր մտածեր բնաւ, թէ այս մարդիկը արդէն հարիւրաւոր անձերու խուզարկութիւնը անցեր են, ու դարձեալ դրամ կը պահանջէր: Շատ աղաչեցինք, շատ պահատեցինք, վերջապէս սիրտը շահեցանք: Մեզի թոյլատրեց, որպէսզի անկուշտ ծարաւնիս յագեցնինք: Ինկանք ջուրին գոռին վրայ եւ լաւ մը լեցուցինք ստամոքսնիս:

Ահա գրեթէ բոլոր յոգնութիւննիս փարատեցաւ՝ այդ կենսատու հիւթը ստանալով: Նախ մտածեցինք հոտ գիշերել, յետոյ ճամբայ ելլել: Այս երկու մտածումներուն մէջ էինք, մայրիկս լաւ մը նայեցաւ աչքերուս, կարծես բան մը ըսիլ կուզէր ինձի, բայց չէր համարձակիլ: Քիչ մը նոյն դրութեան մէջ մնալէ յետոյ բռնեց թելս ու դէպի իրեն քաշեց՝ ըսելով.

–Արամ, կուզե՞ս, որ քեզի հոս թողունք, այս մարդուն քով, տես՝ արդէն հետզհետէ կը նիհարնաս կոր, կարելի է քիչ վերջն ալ մեռնիս: Անոր աղէկը լաւ չէ՞, որ այս մարդուն քով մնաս, գոնէ մեր սերունդէն դուն ողջ մնաս եւ մեր վրեժը լուծես:

Քանի մը վայրկեան քարացած մնացինք: Ոչ որ կը համարձակէր բառ մը փոխանակել: Ես ալ ապշահար մօրս երեսը կը նայէի, կը ջանայի բան մը ըսել: Բայց չէի համաձայներ: Վերջապէս լռութիւնը մայրիկս խզելով՝ ըսաւ.

–Ես պիտի ըսիմ մարդուն, տեսնինք, ի՞նչ պիտի ըսէ:

Դէպի մարդուն յառաջանալով՝ մայրիկս թուրքերէնով այսպէս խօսեցաւ.

–Կուզե՞ս այս տղան քու քով ունենալ:

Մարդը քիչ մը կմկմալէ վերջ այսպէս ըսաւ.

–Ո՛չ, պէտք չէ, չիմ ուզեր (կէս թուրքերէնով, կէս քրդերէնով):

Այս անգամ մայրիկս քիչ մը խնդրողական ձեւով դարձեալ կրկնեց նոյն խօսքերը: Մարդը խղճմտանքի եկաւ, բռնեց թելս ու ըսաւ՝ քալէ: Ահա

վայրկեան մը, ուր մարդ ինչ ընիլը չի կրնար վճռել: Ես ալ ո՛չ կրնայի բաժնուիլ եւ ո՛չ ալ կրնայի մնալ: Արցունք չէր գար աչքերէս եւ ոչ մէկուն ալ: Շատ ըսպասելը լաւ չէ, այդպիսի տեղ մը ամէն մարդ ալ կրնայ հասկնալ, թէ նոյն վայրկեանին ինչեր կը խօսէին մեր գոյգ աչքերը: Համբուրեցանք իրարու հետ եւ վերջապէս զատուեցանք: Նայեցայ ետեւուն, մինչեւ որ կորսուեցան:

Մարդը, ձեռքէս բռնած, դէպի իր վրանը առաջնորդեց զիս: Շուները դարձեալ սկսան սպառնալ: Բայց մարդը չէր թողուր: Կիմը արհամարհոտ ակնարկ մը նետեց վրաս ու իր աշխատութիւնն սկսաւ: Չիս հանեցին վրանէն դուրս, տուին գետտան²⁵ մը վրաս, հագայ եւ նստեցայ խսիրին վրայ: Անօթութիւն սիրտս կը մարի: Այս մտածութեամբ կը տանջուէի: Կիմն ամանով թանապուր բերաւ եւ առջեւնիս դրաւ: Անմիջապէս լափեցի: Ամիսէ աւելի էր, որ այդպէս տաք կերակուր կամ կերակուր չէի կերած: Գոնէ առաջ, երբ դեռ լաւ մը կողոպտուած չէիք, 2 կամ 4 օրը անգամ մը կերակուրի երես կը տեսնէիք:

Իրիկուն եղաւ, ես հանգիստ եմ, բայց կը մտածեմ մեր ընտանիքի վրայ, թէ ինչպէս հիմա անօթի, մերկ, վախով լի կը շարունակէին իրենց անվերջանալի ճամբան: Արդեօք իրիկուան իջեւան պիտի կարենա՞ն գտնել, ի՞նչ վիճակի մէջ են: Աստըք էին մտածումներս: Մութը լաւ մը պատեց, լուսինը սկսաւ բարձրանալ: Անկողինները դուրս հանուեցան: Ինձի հրամայեցին, որպէսզի պառկեմ, պառկեցայ: Այդ գիշեր խոր երազներէ թաղուած՝ առաւօտուն արթնցայ:

Հազիւ երեսս լուացի, նախաճաշ ըրի, աղաս, քանի մը ուղտեր առջեւը քշելով, քովս բերաւ եւ ըսաւ, որ տանիմ, քիչ մը հեռուն արածացնեն: Առի ուղտերը, հեռացայ վրաններէն: Անոնք սկսան արածիլ, իսկ ես ալ կապոյտ հորիզոնին մէջ բան մը կը փնտրէի: Կը դիտէի այն ծառը, որուն տակ երեկ մեր ընտանիքին՝ մայրիկիս, եղբօրս եւ քրոջս հետ նստանք, պառկեցանք: Վերջապէս մեկնեցանք: Կը դիտէի այն հորը, որուն քով բաժանումը կատարուեցաւ, որմէ ջուր խմեցինք ու վերջին անգամ զիրար համբուրեցինք:

Ուղտերը բաւական խելօք կենդանիներ էին, զիս բնաւ չի յոգնեցուցին, միայն երբեմն իրարմէ կը հեռանային: Ես ալ, իբր հովիւ մը, պարտաւոր էի լիովի պաշտօնս կատարուիլ:

Արդէն կէսօրուան ճաշս հետս առած էի, ուստի պէտք չի կար սնունդի մասին խորհել: Երբեմն ջուրի կերթայի, երբեմն կը պառկէի առանց քնանալու, երբեմն ալ շարունակ կուլայի: Բաժանման ժամանակ բնաւ չի լացի, իսկ հիմա շարունակ: Ինչո՞ւ: Չեմ գիտեր: Ահա այս էր բոլոր գործս: Ամէն առաւօտ կանուխ մը կելլէի, ուղտերը ջուր կը տանէի, նախա-

25 Գետն՝ զգեստ:

ճաշ կրնեի, կես օրուան ճաշ ալ կառնեի ու կը հեռանայի:

Սահեցան քանի մը օրեր:

Յանկարծ օր մըն ալ հիւր եկաւ մեզի: Այդ օրը չի գացի հոտին, չեմ գիտեր, ինչո՞ւ: Անծանօթը Ուրֆայի (Եդեսիոյ) մօտակայ գիւղերէն մէկէն էր: Բաւական թուրքերէն գիտէր: Իմ բնակած տեղս բնաւ չէին գիտեր, աստոր համար շատ կը նեղուէի: Մարդը իր հետը ունէր սայլ մը եւ երեք ալ հայ տղաք: Տղաքը երկուքը որոշեալներու համար էր, իսկ մէկն ալ՝ իրեն: Որովհետեւ ես այդ օրը տունն էի, հիւրերուն ծառայութիւն կընէի: Հիւրը թուրքերէն գիտէր, հետը խօսակցութեան բռնուեցանք: Չիս քովը կանչեց, հարցուց, թէ որտեղացի եմ, ուրկէ եկայ, քանի տարեկան եմ: Երբ կարգը կարդալու եւ գործի եկաւ, մարդը հարցուց.

–Կարդալ գիտե՞ս:

–Ո՛չ,– պատասխանեցի՝ ինքնիրո՞ւս սա գուշակութիւնը հանելով. «Այս մարդիկը գիւղացի մարդիկ են, կարդալ, գրել չեն գիտեր եւ պէտք ալ չըլլար, ուստի ոչ ըսիլը արեւի լաւ է»:

–Գործ կրնա՞ս ընիլ, կրնա՞ս կալ ընիլ,– հարցուց:

–Այո՛,– պատասխանեցի՝ սա գաղափարին յենելով, թէ կարելի է զիս քովը տանի: Մա ալ ըսեմ, որ երբ այդ մարդը մեր քովը եկաւ, ես անմիջապէս աստոր հետ երթալ ուզեցի, տեսայ, որ թէ՛ իրարու լեզու կրնանք հասկնալ եւ թէ՛ գիւղը մօտն է քաղաքին, հարկ եղած պարագայէն կարելի է փախչիլ:

Մարդուն ամենավերջին հարցումը սա եղաւ.

–Կուզե՞ս իմ հետ քաղաք երթալ:

–Այո՛,– անմիջապէս պատասխանեցի:

Մարդը քիչ մը կենալէ վերջ բառ առ բառ թարգմանեց իմ աղայիս այն, ինչ որ մեր մէջ խօսեցաւ: Աս որ լսեց իմ աղաս, քաշեց թեւս, տապալեց զիս գետին, քար մը առաւ ու սկսաւ զարնիլ որտեղիս որ հանդիպեցաւ: Հազիւ ազատեց հիւրը զիս: Պաշտպանիս ձեռքին վրայ ուժ չէր մնացած, երբ ոտքի ելայ: Դարձեալ չէի լացած, միայն սուտ լալ ձեւացնել: Մարդը զիս ծեծեց սա մտքով՝ տես, ազատեցի՞նք, զինքը կերցուցի՞նք, խմցուցի՞նք, հագուեցուցի՞նք, հիմա ալ իր ազատարարը չի ճանչնար եւ երթալ կուզէ:

Շիտակը իրատունք ունէր, բայց ես մնալ չէի ուզէր: Ժամ առաջ հեռանալ կուզէի այդ անիծեալ վայրէն, երբ ծեծը կերայ:

Կառքերը պատրաստ էին, հին պաշտպանս ինծի ծուռ-ծուռ կը նայէր, կուզէր զիս խեղդել անմիջապէս, բայց նոր պաշտպանս կը համոզէր, չէր թողոր, որ իմ կողմս գայ: Այս վերջինը արեւի ծեր էր, իսկ միւսը դեռ երիտասարդ՝ հազիւ 30-35 տարեկան: Ծերը ինծի կամաց մը ըսաւ. «Պիտի երթանք, պատրաստուէ՛ք»: Անմիջապէս քովի վրանը գացի՝ հայ հարսի մը մնաք բարով ըսելու: Գործս լնցնելով եկայ, կառքն ալ սկսաւ քալել: Ես կառքին առա-

ջակողմն անցայ, որպէսզի վերջին անգամ պաշտպանիս վրէժխնդութիւնէն ազատիմ:

Վրաններէն հազիւ դուրս ելած, երբ հորին քովը եկանք, հեռուէն հին պաշտպանս վազելով եկաւ՝ ձեռքը դանակ մը բռնած: Բռնեց զիս, տարաւ հոն, ուր բաժանումը կատարուեցաւ: Պառկեցուց զիս գետին, ծունկը դրաւ կրծքիս, վիզս շտկեց, դանակը առաւ բերնէն եւ պիտի մորթէր, բայց յանկարծ նոր պաշտպանս Գաբրիէլ հրեշտակին պէս բռնեց դանակը, վեր վերցուց մարդը եւ զիս ազատ արձակեց: Լալով փախիլ սկսայ: Այս երկրորդ անգամն էր, որ դանակի տակէ ազատեցայ. «Աստուած երրորդէն, չորրորդէն պահէ»:

Հասայ կառքին ետեւէն եւ փառք տուի, որ այսպէս աժան ազատեցայ: Նայեցայ ետեւ, դեռ նոր պաշտպանս կը համոզէր հին պաշտպանիս, իսկ ան ալ կրակ կտրած իմ կողմս կը նայէր: Նոր պաշտպանս ալ եկաւ, եւ ամէնքս ալ միասին սկսանք քալել:

Ժամանակը ուշ էր, իրիկուան ժամը 4-ը կար, մենք ճամբայ ելանք այդ գործողութիւնները կատարուելէ վերջ: Վրանները հետզհետէ կը կորսուէին: Մենք այն ճամբայէն կերթայինք, ուրկէ արդէն մեր ընտանիքը անցաւ: Ես ցաւս մոռցած էի ալ, շնորհակալութիւն յայտնեցի ազատարարիս, եւ սկսանք քալել: Չորս կողմս կը նայէի շարունակ՝ սա յոյսը ունենալով, թէ կարելի է մերիններէն պահուտողներ կըլլան թշնամիներէն ազատուելու համար: Պարապ, բոլորովին պարապ էր այդպիսի կարծիք մը ունենալ: Բաւական քալեցի՞նք, վերջապէս հասանք փոքրիկ գիւղի մը: Ես հարցուցի պաշտպանիս, թէ սա՞ է կենալիք գիւղերնիս:

–Ո՛չ,– պատասխանեց:

Մտանք գիւղէն ներս, մօտեցանք տան մը եւ կանգ առանք: Ջուր բերին, խմեցի՞նք, քիչ մը խօսակցեցանք, վերջն ալ ճամբայ ելանք: Անցանք կալերուն մէջէն, դարձեալ շուրջս կը նայէի՝ մէկը տեսնելու: Բայց նորէն ոչ ոք: Կը քալեինք շարունակ՝ երբեմն կառք նստելով: Հասանք ուրիշ գիւղ մըն ալ, հոս ալ պարտէզներ լեցուն էին: Գիւղէն եզրէն կանցնէր պզտիկ գետ մը: Երբ այդ գետին քով հասանք, պաշտպանս մեզի ըսաւ, որ հանուինք եւ լաւ մը լոզնանք: Անմիջապէս հրամանը կատարեցի՞նք: Լաւ մը լոզցանք, քով պարտէզներէն քիչ մըն ալ պտուղ ուտելէ յետոյ դարձեալ ճամբայ ելանք:

Արեւը կը սպառնար մեզի մութը ձգել: Ժամանակը կը սահէր: Մենք դեռ շատ ճամբայ ունէինք քալելիք: Շարունակ անհամբեր ես կը հարցնէի, թէ դեռ ճամբայ ունի՞նք:

–Քիչ մնաց, քիչ մնաց,– կը պատասխանէր մեր նոր մարդը: Ճամբան միշտ խոստումներ կուտար, կըսէր.

–Եթէ քաղաք երթանք, ձեզի լաւ հագուստներ պիտի կարել տամ, պիտի առնիմ, պտուղներ շատ կան: Ձեզի կամ էլ պիտի տամ, պիտի աշխատիք, ինձմէ շատ գոհ պիտի մնաք եւլն:

Այսպէս անհատնում խոստումներ: Այս խօսակցութիւնը բառական կրճատեց ճամբանիս:

Իրիկուն է: Հովիւները իրենց հօտերը առած դանդաղաքայլ գիւղ կը յառաջանան: Շուները կը հաչին: Հովիւները իրենց սրինգները կը հնչեցնին եւ բնութեան մէջ ոգեւորութիւն կը դնեն: Հօտաղները, եզները յոգնած, յամրաքայլ գիւղ կը մտնեն: Աս որ ես տեսայ, պահ մը փափագեցայ այդ կեանքէն ես ալ վայելիլ: Խօսակցութիւննիս դադրած էր այլեւս: Ամէնս ալ գրեթէ ապշած կը դիտէիք: Միայն մեր պաշտպանը անտարբերութեամբ կը քալէր, բայց երբեմն-երբեմն ակնարկ մը կը նետէր, որովհետեւ ինքն ալ այդ կեանքը կը վայելէր: Սովորական բան մըն էր այդպիսի տեսարան մը իրեն համար:

Հօտերը, հովիւները, հօտաղները մտան գիւղ, միեւնոյն ատեն մենք ալ: Գիւղն աղմուկի մէջ էր: Ոչխարի տէրերը մեծ փոյթի մէջ էին: Գառնուկները իրենց մայրը կը փնտրին: Գիւղին հարսները ջուրի կերթան: Իսկ մենք այդ իրարանցումին մէջ բան մը կը փնտրինք՝ մեր տունը: Վերջապէս հասանք մի վրանի մը, որուն առջեւ մեծ խարույկ մը կը վառէր, վրան ալ՝ մեծ կաթսայ մը, մէջը կերակուր:

Ներսէն դուրս եկաւ մանկամարդ կին մը, խնդալով վազելով եւ փաթթուելով մեր մարդուն: Ասկէ հասկուեցաւ, որ այդ կինը այն մարդուն ամուսինն էր, եւ այդ վրանն ալ՝ մերը: Քիչ մը խօսեցան կարօտեալ ամուսինները, յետոյ մեր կողմը դառնալով՝ խօսքը մեր վրայ դարձաւ: Երբ մարդը հասկցուց, թէ ես եւ ուրիշ տղայ մը իրենց մօտ պիտի մնանք, պառակնարկ մը նետեց՝ երեսը ծամածռելով, մանաւանդ ինծի համար: Սա միտքով, թէ ֆազիր²⁶, այդչափ յոգնեցար այս երկու տկար արարածները բերի՞ր, առանց մտածելու, թէ այդ երկուքը ի՞նչ օգտակարութիւն կրնային մատուցանել, եթէ երբեք լաւ խնամուէին, շահագործուէին:

Նստանք: Նստեցանք թէ չէ, անմիջապէս հասարակական գիւղացիները: Մեր ընկերներէն երկուքը արդէն իսկ տէրերը ուրախութեամբ հեռացուցին: Իսկ մենք՝ երկու հոգի, նոյն գիւղը մնացինք:

Բազմութիւնը հետզհետէ կաւելնար: Եկողը անգամ մը մեզի նայելէ յետոյ կը բազմէր որոշեալ տեղ մը: Խարոյկին բոցերը վեր կը բարձրանային եւ տխուր երեսոյթ մը կուտային տեսարանին: Ճաշը արդէն պատրաստ է, լամբարները վառուեցան: Հիւրերը հեռացան: Մենք մնացինք մինակ, նստեցանք ճաշի: Եթէ չեմ սխալի, ճաշը մտով, լոյիկով, բաթլըճանով կերակուր մըն էր: Աղաս հացը մէջը փշոցեց, մէկ-մէկ փայտէ գրպալ տուիւն ձեռքերնիս եւ սկսանք ճաշը: Կերանք, մինչեւ որ լաւ մը կշտացանք, վրայէն ալ մէկ-մէկ թաս խմեցինք: Անոնցով յոգնութիւննիս մոռցանք:

Քիչ մը հանգստանալէ վերջ, տուիւն մեզի քէչա մը, փաթթուիցանք մէջը եւ լաւ մը քնացանք մինչեւ առաւօտ:

26 Խեղճ:

Նոյն գիւղին մէջի կեանքս

Եղաւ առաւօտ: Ելանք պառկած տեղերնուս, հագուեցանք, լուացուեցանք եւ կազմ ու պատրաստ աղանուս սպասեցինք: Ան արդէն մեզմէ առաջ ելած էր, մօտեցաւ մեզի՝ բարի լոյս ըսելով: Նոյնը մենք ալ ըրինք:

Մարդը խնդումներս, լայն, կարճ, մօրուսատր եւ սեւ էր: Աչքերը կը փայլէին սեւ դեմքին մէջ, երբեմն ալ ակռաները: Մարդը մեզի նախաճաշ տուաւ: Կշտացուցինք փորերնիս ու ետեւէն ինկանք: Բոլոր բարեկամներուն ներկայացուց մեզ, ամէնէն յետոյ ալ տարաւ գիւղին մեծին՝ քէհեային տունը: Բաւական մեծ տուն մըն էր, ծառաները կաշխատէին, ներս կը մտնէին, դուրս կելլէին: Պաշտպանս, գիւծառաներուն ներկայացնելով, ըսաւ.

–Տեսէք, սա իմ տղաս է:

Ծառաներէն մէկը մօտենալով հարցուց ինծի.

–Անունդ ի՞նչ է:

–Արամ:

–Արա՞պ:

–Ո՛չ, Արամ:

–Այո՛, այո, հասկցայ, Արապ:

Որովհետեւ լեզուներէն չէր դառնար, Արամ ըսելու տեղ Արապ ըսին: Մինչեւ որ գիւղէն հեռացայ, անունս Արապ մնաց:

Տեսակցութիւննիս լրացնելէ վերջ եկանք վրաննիս: Խօսակցութեան նիւթերը փոխեցինք, աղաս ինծի կըսէր.

–Արապ, թուրք պիտի ըլլա՞ս:

–Այո:

–Ըսէ տեսնեմ էշիէ՛տու²⁷...

Կըսեմ՝ էշիէ՛տու... բայց լեզուս լաւ չէր դառնար:

Երբեմն այդպիսի բաներու վրայ խօսելով, երբեմն ալ նիւթերը փոխելով՝ իրիկուն ըրին: Նոյն օրը բնաւ գործի չի գացինք, բայց ընկերոջս հետ գործերը կիսուեցանք: Օր մը ես հերկ պիտի հերկէի, օր մըն ալ ինքը: Իմ հերկ ըրած ատենս ան հօտին պիտի երթար, իսկ անոր հերկ ըրած ատենը՝ ես:

Յաջորդ օրը գործի սկսանք: Ես, առաջին անգամ ըլլալով, հօտը տարի: Ան ալ հերկի գնաց: Առաջին օրը պաշտպանս, հետս գալով, ինծի ցոյց տուաւ, թէ ուր տանելու էի հօտը, ուր աւելի լաւ էր, ուրկէ ետ դառնալու էի եւ այսպէս կարճ մը բացատրութիւններ:

Հօտը տարի որոշեալ վայրը, ձգելէ վերջ ետ դարձայ: Բայց այսչափով գործս չէր լրանար, պէտք էր աչալուրջ հսկողութիւն ընէի կենդանիներուն, որպէսզի ուրիշներու պարտեզ մտնելով՝ որեւէ վնաս չի պատճառեն: Միւս կողմէ տանը կարգ մը գործեր կը կատարէի: Երբ իրիկուն եղաւ, առի ձիւն, վրան հեծնելով գացի անասունները ետ դարձնելու:

27 Այս խոսքն ասվում է մահմեդականությունը ընդունելիս. «Վկայում եմ, որ Աստուծոց բացի Աստված չկա, և վկայում եմ, որ Մուհամմեդը Աստծու առաքյալն է»:



Տեաարան Ուոհա (Շեքսիս) քաղաքից

Չանոնք հաւաքելը բաւական դժվար էր, բայց ուրիշ ճար չի կար: Դարձեալ գործս չէր լմննար, պէտք էր անոնց ջուր տալ, իրենց տեղը մտցնել ու ամէն բան ապահովել:

Միս ընկերս ալ գործը լրացուցած եկաւ: Սկսանք խօսակցիլ օրուայ աշխատութեանց շուրջ:

–Շատ դժուար է,– կըսէր ան:

–Շատ դժուար է,– կը պատասխանէի,– շիտակը, ես չեմ կրնար դիմանալ:

Կարծես իսկապէս տեղեակ ըլլայի յաջորդ օրերու պատահելիքին:

Եղաւ իրիկուն, եղաւ առաւօտ: Հերթի երթալու կարգը իմս էր: Հետեւեցայ աղայիս: Տարաւ զիս կալին գլուխը, ձեռքս տուաւ երկար փայտը:

–Դե, քէ՛, տեսնեմ,– ըսաւ:

–Հօ՛, հօ՛, հօ՛,– եզները չեմ շարժիր իրենց տեղէն:

Մարդը մօտեցաւ եւ ըսաւ, որ պէտք է այսպէս բռնել փայտը, այսպէս զարնել եւլն: Կեանքիս մէջ առաջին անգամն էր, որ մինակս կը վարէի կամը: Արդէն կամին գործը քիչ ըլլալուն շուտով լրացաւ: Այս անգամ սկսանք կռնակով կրել յարդերը յարդանոցը, իսկ ցորենը կը մնար, որովհետեւ դեռ գործ ունէր:

Այսպէս աւարտեցինք գործերս եւ իրիկուան գացինք վրան, ուր պիտի ճաշէինք եւ գիշերէինք: Դարձեալ ընկերոջս հետ մտանք մեր սովորական անկողինը եւ յոգնութիւննիս առինք՝ միշտ աշխատութիւննիս իրարու պատմելով: Այսպէս գրեթէ 3 ամիս անցուցի այդ մարդուն քով:

Վերջին ամիսը շատ տաժանելի կուգար ինձի, որովհետեւ, արդէն հալած, մաշած անապատներու մէջ, յանկարծ մտանք աշխատութեան: Սկիզբները

տոկացի, սակայն վերջ ի վերջոյ տեղի տուի, եւ ահա հիւանդութիւնը եւ աչքի ցավը սկսան տիրապետել տկար կազմիս վրայ: Հետզհետէ վիճակս կը վատթարանար, թէւ մինչեւ վերջին վայրկեանը միշտ ինքզինքիս յոգ կը տանէի, անօգուտ: Եկաւ բաժանման վայրկեանը: Երբ օր մը, գործս վերջացուցած, պառկած էի ընկերոջս հետ, կամաց մը ձեռքս ընկերոջս ձեռքին տանելով՝ լաւ մը սեղմեցի, ասոր վրայ ընկերս ըսաւ. «Տղայ՛, խենթեցա՞ր, ի՞նչ եղաւ քեզի գիշերով»: Նախ լեզուս յառաջ չի գնաց ամէն բան պատմել, սակայն եկած էր բաժանման վայրկեանը, ուստի անգամ մըն ալ ձեռքը սեղմելով՝ ըսի.

–Պիտի երթամ, սիրելիս, պիտի երթամ քաղաք, գոնէ հոն հիւանդանոցի մը անկիւնը հանգիստ մը շունչս յոգամ: Եթէ հոս մնամ, արդէն պիտի մեռնեմ, բայց գործի տակ կքած եւ հանգիստ մը շունչս չպիտի տամ, որովհետեւ մինչեւ այդ վիճակիս կաշխատելի առանց որեւէ գործ մը զանց ընելու:

Ասոր վրա վերջին անգամ մը հարազատ եղբայրներու պէս համբուրուեցանք եւ իրարմէ բաժանուեցանք: Պարտեզի ցանկապատէն կամաց-կամաց ցատկելով՝ բռնեցի քաղաքին ճամբան, որուն բերդը եւ մուխը ամէն իրիկուն տեսնելով՝ կը հալէի ու կը մաշէի: Ըսիմ, որ թէւ վրանի մէջ կը պառկէինք, բայց ցանկապատի մէջ առնուած որոշ սահման մը ունէինք, ինչպէս ամէնքն ալ:

Բաւական յառաջանալէ վերջ այդ մթութեան մէջ երկու ստուերներ նշմարեցի, որ ետեւէս կուգային: Նախ վախցայ, միտքիս մէջ սոսկալի բաներու պատմութիւնները կը սահէին, բայց ոչ մէկէն կը վախնայի, բացի այն կարծիքէն, թէ պաշտպանս եւ ուրիշ մէկը ըլլային..., որովհետեւ առանց տիրոջս լուր տալու հեռացած էի:



Արամ և Ալիս Կյուրեղյանները 1943 և 1975 թթ.



Խոհեմությամբ համարեցի ճամբուն մեկ կողմ քաշվիլ, մինչև որ ստուերները հասնին ինձի: Քանի մը վայրկեան սպասել վերջ յանկարծ մարդ մը եւ յարողվ բեռնուած էջ մը նշմարեցի, որոնք իմ ճամբովս դէպի քաղաք կերթային: Մարդուն հագածէն ճանչցայ, որ պաշտպանս չէ, եւ աւելին, մեր գիւղէն ազնիւ ծերունի մը: Անմիջապէս քովը մօտեցայ ու բարեւելով ըսի, թէ աղաս զիս քաղաքին հիւանդանոց կը դրկէ: Մարդը հաւանեցաւ առանց առարկութիւն մը ընելու:

Բաւական ատեն այդպէս զիշերով ճամբորդեցինք: Հետզհետէ ծարաւանալ սկսանք: Բայց առանց կենալու կքալեիինք: Յանկարծ ճամբուն մեջտեղը գունդի պէս կլոր բան մը նշմարեցինք: Սէկէն իրարու հարցուցինք, թէ ի՞նչ կրնար ըլլալ, եթէ քար է այդքան կլոր, ինչպէս կըլլար: Կամաց-կամաց մօտեցայ, ձեռքս երկարեցի, մատս դպցուցի եւ հոտոտել սկսայ: Անմիջապէս գրկեցի եւ վեր առի: Մարդը հարցուց, թէ ի՞նչ էր այդ, որ այդքան գուրգուրանքով վերցուցի: Չմերուկ մըն էր: Անմիջապէս հանեց դանակը եւ կտրելով ծարաւնիս յագեցուցինք:

Մութը հետզհետէ տեղի կուտար զօրատրին: Քաղաքին բերդը հեռուն կերեար, երբ արդէն հասած էինք քաղաքին ճիշդ տակէն անցնող գետակին քով: Այդ քաղաքը Ուրֆան (Եդեսիա) է: Մարդը ինձի ըսաւ.

–Տղա՛ս, քեզ մինչևի հոս բերի, ասկէ վերջ ուր որ կուգես, գնա՛, ահաւասիկ ճամբանիդ:

Մարդը, զիս կամուրջին վրայ ձգելով, հեռացաւ շուկա երթալու եւ յարդերը ծախելու համար: Իսկ ես կամուրջին վրայ կեցած, առանց ինչ ընելս որոշելու, ապուշ-ապուշ չորս դիս նայիլ սկսայ: Քիչ մը կենալէ վերջ կամուրջէն առանց անցնելու աջ կողմիս գերեզմանոցը մտայ: Բաւական մը գացի, սակայն հասկցայ, որ օգուտ չունի եւ վերադարձայ, յաջորդ գերեզմանոցին ճամբան բռնեցի: Գրեթէ կէս ժամ գետին հոսանքին հետ վար գնացի, երբ կին մը, երկու աղջիկներ ու մէկ տղայ նշմարեցի՝ ֆերածէնքու մէջ ամուր մը փաթթուած, որոնք ոստիկանի մը



Արամ Կյուրեղյանի հուշագրության տիտղոսաթերթը

ետեւէ դէպի թաղ մը կը յառաջանային: Անմիջապէս հասկցայ, որ ատոնք հայեր էին եւ ոստիկանին տունը կերթային: Առանց վարանելու եւ վախնալու հետեւեցայ այդ խմբակին, որպէսզի ուր որ մտնան, ես ալ ետեւնուն մտնիմ եւ այսպէսով թերեւս բաժին մըն ալ ինձի ըլլար:



Արամ և Ալիս Կյուրեղյանների տապանաքարը



ԱՐՄԵՆԱԿ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
(1900 -1969)

Համառոտ կենսագրություն

Արմենակ Հարությունի Կյուրեղյանը ծնվել է 1900 թ. Սեբաստիա քաղաքում: Ուսանել է քաղաքի Արամյան վարժարանում մինչև 3-րդ դասարան¹:

Հայրը՝ Հարություն Կյուրեղյանը, ծնվել է Չառայի մոտ գտնող Քարհատ գյուղում, մայրը՝ Գոհարը (ծնյալ Թոսունյան)՝ Թեքելիում: Ուներ 3 եղբայր (Խորեն², Համբար (Համբարձում)³ և Արամ), 4 քույր (Չարուհի, Իսկուհի, Հայզվարթ և Արուսյակ). «Չարդի ընթացքին իմ ընտանիքի ճակատագիրն է. հայրս Հասան Չելեպի կացնահար, մայրս՝ մերկ, կմախք մնացած անապատը, Արամ եղբայրս մեզմե խլեցին կենդանիներուն տրված ջուրեն մեզի տալու համար, 7 ամսական Արուսեակ քույրս հարվածեմ մեռավ մօրս գիրկին մեջ՝ Մուրատ գետին վրա, 6 տարեկան Հայզուարթ քույրս կոխկռտեցաւ-մեռաւ, Իսկուհի քույրս մարդկային մարմնով լեցուն հորի մեջ նետեցաւ՝ մեզ ջուր հասցնելու համար, արաբները հորին բերանը փակեցին, Չարուհի քույրս գիւղի մը մեջ ծառա վերցուցին՝ մեզ կտոր մը հաց տալու համար: Այս բոլորեն ես ազատեցաւ և 4 տարի հետո ալ եղբարս՝ Արամին գտաւ»: Ի դեպ, կրտսեր եղբոր հուշագրությունը ևս ներառված է սույն աշխատության մեջ:

1919 թ. եղել է Հալեպի, 1919-1920 թթ.՝ Ադանայի, 1920-1922 թթ.՝ Կ.Պոլսի որբանոցներում:

1922 թ. դեկտեմբերին մեկնել է Փարիզ:

1926 թ. ամուսնացել է և ունեցել 2 որդի, 4 թոռնիկ:

Արմենակ Կյուրեղյանն իր կենսագրականում նշում է. «Ահաոր կոտորածեն ազատված եմ մինչև 1914-1918-ի պատերազմը եղել եմ արաբ և քիլոդ աշիրեթներու մեջ: Եղել եմ Ուրֆա, Թելլապիատ, Հալեպ, Ադանա, Պոլիս, Փարիզ, Երեսան: Տունը աշխատող, տաբատ կարող եմ: 1925-1926-էն սկսյալ մինչև 1947 թ. նվիրված եմ եղել հասարակական աշխատանքի: Եղել եմ Հայրենակցական միութեան, ՀՕԿ-ի մասնաճիւղերու քարտուղար, մարզական միության մը գանձապահ, Փարիզի և փարիզյան շրջանի ներգաղթի կօմիտեի քարտուղար...Ամբողջ գիտակցական կեանքս նւիրել եմ հայ և ֆրանսացի ժողովրդի դատին: Եղած եմ անդամ բոլոր կազմակերպություններուն, մանաւանդ հայ մշակոյթի տարածման, հայը հայ պահելու գործում: Երկրորդ համաշխարհային պատերազմին... Միսաք Մանուշեանի տարած աշխատանքներում օգնած եմ նիւթապէս և բարոյապէս»:

1 «Արամեան կը կոչուէր նաեւ Ս. Գեորգի դպրոց: Առաջինէն մինչև 3-րդ դասարանը ճախակրթարան էր, իսկ չորրորդ կարգէն սկսեալ մինչև 10-րդը՝ բարձրագոյնը: Ֆրանսերէն եւ թրքերէն դասերը կը սկսէին չորրորդին: Սեբաստացին հպարտ էր Արամեանով, որովհետեւ... գաւառներու ազգային դպրոցներու շարքին, ան կը հանդիսանար առաջնակարգը իր դասընթացքներով, ուսուցչական կազմով եւ շրջանաւարտներով» (Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Ա, Պէյրոս, 1974, էջ 505):

2 Ավագ եղբայրը՝ Խորենը, փոքր տարիքում ինչ-որ դիպվածի հետևանքով դարձել էր մտավոր հետամնաց և բուժվում էր Կ.Պոլսի հիվանդանոցում: Հավանաբար 1921 թ. Համբարի ցուցումներով և նրա ուղարկած գումարով Արմենակ և Արամ Կյուրեղյաններին հաջողվում է Խորենին ուղարկել ԱՄՆ:

3 Համբարը մինչև Մեծ եղեռնը փոխադրվել էր ԱՄՆ՝ Նյու Յորք:



Հարություն Կյուրեղյան. հուշագիրներ Արմենակ և Արամ Կյուրեղյանների հայրը (1915 թ.)

1947 թ. իր և եղբոր՝ ընտանիքները հայրենադարձվում են և բնակություն են հաստատում Երևանում:

1966 թ. մարտի 18-ին կրկին մեկնում է Փարիզ:

1968 թ. նոյեմբերի 21-ին հուշագրությունը երրորդ անգամ սկսել է գրի առել. «Կարելիս պիտի ընեն շարժանկարի ժապավենի ձեռով պատկերացնել, գրել իմ ապրած օրերն այնքան, որքան պիտի կարողանամ յիշել այս տարիքիս, և մանաւանդ որ կորսնցուցած եմ յիշելու և մտածելու կարողություններս առ հարիւրի մեծ չափով:

Ես ազատվածներէն մէկն եմ, եւ, ահա այսօր, երբ 68 տարեկանիս հասած եմ, կուզեմ գրել, որքան որ կրնամ: Երկու անգամ թարմ մտքով 1914-1919 թերու իմ յիշողութիւնները, մանաւանդ արքորի ճանապարհը, գրի առած եմ: Առաջին անգամ՝ 1919 թ. իմ ուսուցիչ Կարապետ Գաբիկեանն⁴ ուզեց, իմ թարմ յուշերս տւի նրան տօք. Ա. Պօղոսյանի ներկայությամբ. պէտք է գիրք հրատարակէր: Ափսոս, որ իր «Եղեռնապատում» գրքին մէջ չկան իմ բոլոր տեսածներս: Երկրորդ անգամ Պօլսի Կեդրոնական վարժարանում ուսուցիչ Յակոբ Օշականը⁵ ինձմէ պահանջեց, որ դասերուս փոխարեն գրեմ արքորի յուշերս. ան ալ ան առաւ: Եվ այս, որ կը գրեմ, 48 տարիներ արդէն անցեր են, ինչ որ կրնամ յիշել, պիտի գրեմ»:

Արմենակ Կյուրեղյանը վախճանվել է 1969 թ. Փարիզում:

4 Բանասեր, մանկավարժ Կարապետ Գաբիկյանը ծնվել է 1867 թ. Սեբաստիա քաղաքում: Մովորել է տեղի Թարգմանչաց վարժարանում: 1924 թ. Երուսաղեմում հեղինակել է «Եղեռնապատում» գիրքը: Վախճանվել է 1925 թ. Երուսաղեմում (**Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 210: Ով ով է. հայեր, հ. Ա, Երևան, 2005, էջ 243):

5 Գրող, գրականագետ Հակոբ Օշական (Քյուֆեճյան) ծնվել է 1883 թ. Բուրսայում: Ուսանել է Բուրսայի Գևորգյան ազգային վարժարանում և Արմաշի Դպրեվանքում: 1915 թ. ապրիլ 24-ի ձերբակալություններից խույս է տալիս: 1919 թ. դասավանդում է Կ.Պոլսում: 1920-1922 թթ. Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում հրատարակել է ականատեսների հուշեր՝ «Կայսերական յաղթերգութիւն» խորագրով: Վախճանվել է 1948 թ. Հալեպում (մանրամասն տես «Հայրենիք Տարեգիրք», 1947, էջ 175-178: «Օշական», 1983, յունուար-օգոստոս, էջ 123: Հայաստանի սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1968, էջ 547):

ՄԻԱՍԻՆ ԷԻՆՔ ՏԱՌԱՊԵԼ, ԱՆՑԵԼ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՃԱՄԲԱՆ

Ծննդավայրս

Մերաստիան յետամնաց քաղաք էր՝ շրջապատուած շատ գիւղերով՝ Ալիս գետի (Գըզըլըրմագի) եզերքն ի վեր:

Յաճախ ջարդեր տեղի ունեցած են: Հօրս հօրը, մօրս պապը սպաննած են:

Քաղաքի արհեստաւորները զատ-զատ թաղամասեր ունեին: Ոսկերիչ, թիթեղագործ, կօշկակար, ամեն արհեստաւոր հայ էր: Մենք բնակած էինք որպէս վարձակալ Տավշանպայեր կամ Քեօսեւտէրէ թաղամասում՝ Տուզճենց տխախին Շիրինենց բաղնիքին մօտ՝ Տիլտարենց Ծաղիկենց տանը:

Մեր գերդաստանը

Հայրս՝ Յարութիւն Կիւրեղեանը, սովորած է Ս. Նշան վանքը¹: Լավ գիտէր հայերէն, ֆրանսերէն եւ թուրքերէն: Լսածիս համաձայն՝ մօտաւորապէս



Մերաստիայի Սբ. Նշան վանքը (գծանկարը՝ Ժան-Վարուժան Կուրեղեանի)

150 տարի առաջ Կարս քաղաքէն հասեր են մինչեւ Քարհատ, որը զուտ հայաբնակ գիւղ էր, թուրքերը կըսեին Տաշլըլս:

Հայրս Շահինեան Կարապետի եւ Միհրանի մօտ քաղաքում գործակատար եղած է:

Հայրս շատ ազգասեր էր եւ աստուածավախ. առաջինն ընդունեցի եւ իւրացուցի, իսկ երկրորդը բնագոյրաբար չէի ուզէի, կարծեմ թէ պատճառը ինձի համար կրօնքին Աստծուն անտեսանելի ըլլալն էր: Հայրս մեզ կը հաւաքէր տան մէջ, եկեղեցիի նման արարողութիւն կընէր, մենք ալ ստիպուած պիտի ընէինք անել, բայց մայրս ամէն կիրակի առաւօտ մեզ պարտաւորեալ Աստուածամայր եկեղեցին կը դրկէր: Ի՛նչ ծանր բան էր մեզ համար. ստիպուած ժամերով ոտքի կը կանգնէի, ո՛չ կռնակ, ո՛չ ալ ոտք կը մնար, բայց ի՛նչ արած, մայրս խիստ էր:

Մայրս՝ Գոհար, ծնեալ Թօսունեան, ունէր Մխիթար անուն եղբայր Թէքէլլի գիւղում: Մայրս ժիր, աշխոյժ, քաջ կին մըն էր:

Մեր գերդաստանէն մի մասը Քարհատի մօտ Լեղիջուր, Չիֆթլիկ գնացած էին: Մերովքէ հօրեղբայրս Լեղիջուր, Չիֆթլիկ կը բնակէր: Քաջ մարդ էր: Աքսորի ընթացքին լեռ բարձրացեր է, քաջագործութիւններ գործեր է, բայց հիւանդացեր է եւ լերան գագաթին ալ մնացեր է:

Մկրտիչ հօրեղբայրս Սվազ կօշկակար էր: Խեղճ վիճակ մը ունէին: Բազմաթիւ գաւակներ ունէր: Կնոջ անունը Թագուհի էր: Տղաքներից կը յիշեմ Հայկազունին, Յովհաննէսին:

Քերովքէ հօրեղբայրս ուսուցիչ էր: Պոլսի Կեղրոնական վարժարանն ալ ուսուցիչ եղած է: Կնոջ անունն էր Չարուհի:

Ունէի նաեւ Միրիճան եւ Վահան անուններով հօրեղբայրներ: Երեք հօրեղբայրներս ալ Ամերիկա գացած են:

Մխիթար մօրեղբօրս կինը Չանազանն էր: Արամեան վարժարանում ուսանում էին մօրեղբօրս տղաքը՝ Հայկն² ու Լեւոնը: Լեւոնը Սանասարեան վարժարան գնաց: Հայկին Հասան Չէլէպի կացնահարեցին:

Մերաստահայութիւնը, առաւելապէս գիւղացիները, առողջ, հաճախ շէկ, երկարահասակ, ժրաջան, ազնիւ, բարի եւ հայրենասէր էին: Երկարակեաց էին: Իմ մօր հայրը 104 տարեկան էր, մօրս մայրը՝ Արեգ նեմես, 95-ն անց էր:

Մենք միջակ էինք, ոչ հարուստ: Ո՛չ աթոռ կար, ո՛չ սեղան: Մենք շատ ստեպղին, կաղամբ, շաղգամ, ոսպ, սիսեռ, տոմատես կուտեինք: Առատ չէր, դուրսէն կուգար: Կուտեինք սեւ չամիչ: Մեր սնունդն էր բաղարջը, փոխինդը, խաշը եւլն: Ամէնքս մէկ ամանի մէջէ կուտեինք գետինը նստած:

Մեր խաղերն էին մէթ տեյնէկ, ֆեշնէք՝ կուտերով ներկուած, հաւկիթի խաղ եւլն:

Աքսորի պատրաստութիւն

Մի առաւօտ պատերու վրա փակցուած աֆիշներից իմացանք, որ պէտք է պատրաստուէնք մեր դարաւոր օջախէն երթալ Մալաթիա՝ «ապահով մնա-

1 Սբ. Նշան վանքը Մերաստիայի «Պալագոսօգագ թաղէն իբր 20 վայրկեան դէպի հիւսիս Մայրագոմ լերան միջին բազուկին ստորոտը, քաղաքէն 30 մ բարձր լայնատարած սարաւանդի մը վրայ կառուցուած է, որուն տեսքը, մանաւանդ ի հեռուստ, իր սիրուն զմբէթներովը այնքան հմայիչ ու հրապուրիչ է առաջին տեսողներուն» (Առաքել Ն. Պատրիկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 240):

2 Հայկ Գարակոյճյանը Արամյան վարժարանի 1913/14 ուստարվա շրջանավարտներից էր (Առաքել Ն. Պատրիկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 513):



Տեսարան Կյուրեղյանների ծննդավայր Սեբաստիա քաղաքից (լուս.՝ Կուճոնտի)

լու» համար: Մեզ խոստացուած է սայլերով փոխադրել եւ թոյլ տրուած է, ինչ որ կրնանք, հետերնիս տանենք: Իմացանք, որ 7 օրուան մէջ Սվազի հայութիւնը առ յաւետ կերթա դէպի անծանօթը: Եթէ չեմ սխալիր, եօթերորդ կարաւանը մերն էր: Ամէն ընտանիք իրար անցած էր: Տղամարդ չի կար: Լաւով, ողբալով պատրաստուեցանք: Ուտելիք, հագուստ, փող, ինչ-որ հնարատր էր: Մեր դրացի Բիւշտիի հայրն ուզեց, որ 7 տարեկան Հայգուարթը տանք իրենց՝ յայտնելով, որ ճամբան շատ վտանգատր է: Ծնողքս չուզեցին: Գնեցինք մի էշ: Էշն ու սայլը բեռցանք: Իրիկուան դէմ մեզ ճամբայ հանեցին: Քաղաքին եզերքը սայլերը իրար ետեւ շարուած են: Մեր սայլերը սկսան ճոնչալ:

Գաղթի ճանապարհին

Հասանք Գրզըլըրմազի կամուրջը, որին ծայրը ժանտարմաներ սեղան դրած էին եւ անցնող ընտանիքի անդամների եւ անհատների սեռը, տարիքը արձանագրեցին: Ծունքուռակ³ գեղին մօտին բարձունքի մը վրա առաջին գիշերն է: Մեր եւ բոլոր կարաւաններուն մէջ կային հիւանդ կամ զինուորութենէ հրամանով վերադարձած տղամարդիկ: Իմ հայրս տարիքոտ էր, պէտէլ վճարած էր եւ մեզ ընկերացավ: Տղամարդիկ մութին իրար եկան խորհելու. որոշեցին համայնական իրարու օգնութիւն, սայլապան թուրքերուն ուտելիք եւ եթէ կարիք կայ, մանաւանդ մեզ ուղեկցող ժանտարմաներուն կաշառել, տղամարդիկ շատ չայիտի երեսային ելին: Յաջորդ օրը մեր կարաւանը ճամբայ ելավ: Հօրս բռնեցին, քսակն ուզեցին: Ինչ որ ունէր, տուաւ ազատուեցաւ:

Անցանք Գրզըլըրմազի կամուրջը: Յաջորդ օրը կոչվեցանք պարխանա⁴:

Անվերջանալի ճանապարհ, ցերեկուայ յարձակում կրնեն, երբ իջեանամ ենք տեղ մը եւ քիչ հանգիստ պիտի ընենք: Քիւրտեր, արաբներ կուգան, կը ծեծեն, կը սպաննեն, կը կողոպտեն, աղջիկ, կին կը փախցնեն ու կերթան: Կարաւանը կը քայլէ, վա՛յ ետ մնացողին, թէւ առջեւէն կամ մէջտեղէն գացողն ալ ապահով չի. նոյն ջարդը: «Ժանտարմա՛, ժանտարմա՛» կը պոռանք, եւ ահա իբր թէ իրենք չեն թոյլ տուողները, քանի մը գնդակ օդին մէջ, եւ խուժանը մեզ հանգիստ կը ձգէ: Երբեք տեսա՞՞ծ եք սա տեսարանը. մեծ հավնոց մը կը մտնէք, ամբողջ հավերը անդին-ասդին կը զարնեն պատեպատ, որ փախչեն: Արաբները, քիւրտերն ունէին կացին, մանգաղ, երկաթե թօփուգ⁵, ծայրը գավազան մը: Մէկ կողմէն կը պակսէինք, միւս կողմէն ալ կամ նոր պարխանայի կը հասնէինք, կը խառնվէինք, կամ ուրիշ պարխանա մը կուգար, մեզ կը միանար, եւ այսպէս մինչեւ Վերանշեհիի մօտերքը, որտեղ մեզ մի լավ կտորեցին: Բոլորովին մերկ մնացինք անապատի մէջ՝ ցերեկը՝ տաք, գիշերը՝ խոնաւ, ցուրտ: Ծամբաները ինկած սեւցած, ուռած, փտած դիակներ, ոմանք քարայրներու մէջ մեռած ու կաշի դիակ դարձած: Ոմանք հորերու մէջ մետուած էին: Այդ հորերու տակը ցեխ կար, զով էր. մի օր մենք ալ՝ ես եւ մայրս, չեմ յիշեր, ուրիշ ով կար իմ ընտանիքէս, մերկ մարմիննիս ծեփեցինք այդ ցեխով, վրանիս չորցավ, քանի մը օրեր յետոյ սկսանք հանել վրանուցս: Միսերնիս ճեղքուեցաւ: Մարմիննիս աղտոտ, վիրատր կը քալէինք անապատին մէջ ջուր փնտրելու: Հոն գտնուած բոլոր հորերը չոր են,

³ Ծունքուռակ (Շնքուռակ, Ծունքուրակ) գյուղը գտնվում է Սեբաստիայի գավառում:

⁴ Քարավան:
⁵ Մահակ:

երեւի ցորենի շտեմարաններ եղած ըլլան: Բերանը 2-3 մետր լայնք կաթսայի ձեւով, հորին փորը շատ լայն է, տակը՝ սեւ, թաց ցեխ: Վերանշեհիքի մօտերը մէջը շատ-շատ դիակներ մնացին:

Անցանք Ղանդալէն⁶. մի տեղ՝ լեռներու կողքին, շատ վարը կար գետ մը, որի մօտ իջեւանած էինք: Սվազցիներուն ծանօթ Խալիս պէկ անուն ջարդարար մը ձիատրներով եկավ: Ճառ խօսելով պահանջեց, որ բոլոր հարստութիւնը տանք իրեն, անուշ խօսեցավ եւ խոստացավ, որ ճամբաները մեզմէ առած փողով հաց պիտի տա, եւ եթէ չի տանք, մէկ է, ճամբան քիւրտերը կը կողոպտեն: Գործի անցավ. կին մը բռնեց, մերկացուց եւ լավ ծեծել մը տուաւ ու սարսափ ազդեց բոլորիս: Նա շատ ոսկի, արծաթ, զարդեղէն հեյալները լեցուց, չի մոռցավ թուղթի վրա գրել առածները անուն-ազգանունով, իբր որ ապահով ըլլանք, ձին նստաւ եւ գնաց⁷:

Հասան Չելէպի⁸

Մեր կարաւանին տղամարդկանց ամենամեծ կոտորածը եղաւ Հասան Չելէպի ըստած տեղը, ուր հայրս ալ սպանուեցավ:

Հայրս եւ քեռուս տղան՝ Հայկ Գարակեօզեանը (ասոր եղբայրը՝ Լեւոնը, Մանասարեանի տղոց հետ նահատակված է), թան կը խմէին: Ժանտարմաներն եկան, ինչքան տղամարդ, որ գտան, համոզելով եւ բռնութեամբ կարգի շարեցին ու տարան: Շատ չանցած՝ մեզ բոլորիս մտրակելով, ծեծելով ճամբայ հանեցին: Երրորդ գիշերը մեզ մօտ հասան վիրատուր, ուժասպառ երկու երտասարդներ եւ պատմեցին Հասան Չելէպի մնացած տղամարդկանց կոտորածի մասին. «Ամէնը կը բանտարկէին առանձին սրահներու մէջ եւ այնքան իրարու կից, որ մէկ օր ոտքի վրա կը մնան անօթի, ծարաւ: Մէկիկ-մէկիկ դուրս կը հանին, կը հանվեցնէին, գոյգ-գոյգ կը կսպին եւ կը յանձնին նաճախով⁹ զինուած երկուական հոգիի, քաշելով, քաշքշելով կը հասցնեն ձորի գլխին եւ կացիներով գլուխնուն, վզերնուն զարնելով կը գլորին ձորն ի վար: Բոլորին այս ձեւով կը սպանին»¹⁰: Մեզ պատմող վիրատուները նոյն ճակատագրով ձորը կը գլորվեն, մինը գիշերը կարթննա, ձայն կը հանէ, իր հետ եկողն ալ ողջ մնացած կըլլա: Չորակ կը բռնեն ու մեր հետքերը փնտրելով՝ կը հասնին մեզի: Մայրս, որ լալը չէր դադարեցուցած, յուսալքեցաւ այս երկու տղոց լսելով:

Տեղերու անունները քիչեր կը յիշեմ, պիտի խօսիմ, ինչ որ միտքս է: Երկար հարթ, հաւասար դաշ-

տի մը մէջն ենք, սայլերը սկսան ճռնչալ: Ժանտարմաները երբեք թոյլ չեն տար ջուրին մօտեմալու, միայն թան ծախողներ կուգան, անոնցմէ մէկ գաւաթին 1 կարմիր ոսկի տալով կարելի է խմել: Դադար չի կայ, արիւն, քրտինք, վախ, սպառնալիք, մեզմէ առաջ զացողներու դիակներ հատուկտոր: Ճամբան թողնելով շատ ծերեր, հիւանդներ՝ գետ մը հասանք: Արգելեցին ջուր խմել: Գետին եզերքը փոքր տուն մը կար, ասոր քով երկար փոս մը փորուած էր. լքուած երախաներ անօթի, ծարավ կկզած էին, հետո նրանց ողջ-ողջ հողով ծածկեր էին: Գետին միւս եզրը կայարան ըրած էին պարխաններուն, մեզ ջուրով դիմաւորեցին, բայց ժանտարմաներն արգելեցին: Սովորութիւն էր, որ մի կարաւանի կը հասնէինք, թոյլ չեն տար իրար մօտեմալ, բան ըսել: Հոս սայլապանները սայլերը դատարկեցին ու զացին, մնացինք մէկ էշով: Գետը քովերնիս էր, լողացինք: Դպրոցի տղաքներուն կը յիշեմ՝ Նշան Մանուէլեան, Աւետիս Թխիկեան, Վարդան Ղասապեան, Օզսէն Կազանճեան: Մեզմէ առաջ եկածները ճամբայ հանեցին: Մեզմէ վարը արաբկիրցներու պարխանա մը եկավ, չի թողուցին, որ իրար տեսնենք:

Այստեղէն մեզ հապճեպ հանեցին, հասանք Ֆրընճըլար կամ Պաղչեջիկ ըստած տեղ մը Մալաթիայի մօտ: Հոս խոշոր կայան էր՝ լեռներու քղանցքին: Բնութիւնը լավ էր, ծառ-ծառաստան, ջուր կար: Հոս չատրներ լարուած կային: Տեսա շատ տեղերէ եկած մարդկանց: Հոս ամէն քաղաք, ամէն գիւղ, նոյնիսկ ամէն թաղ զատ-զատ իջեւանած էր: Այստեղ թուրքերը աղջիկ-տղա տարին եւ գնումներ ալ ըրին: Սա մեր վերջին կայանը պիտի ըլլար:

Ամէն օր մէկական կարաւան ճամբու հանել սկսան: Կարգը մեզի եկավ: Շտապել պէտք էր: Էշին վրան, ինչ որ կրցինք դնել, դրինք, ամէնուս ձեռքն ալ մէկ-մէկ պողչա եւ կոնակնիս՝ քեռ: Լեբան ի վեր արահետի մը կը բարձրանանք, կը յառաջանանք: Չախ կողմերնիս ձոր է: Հայզուարթ քոյրս սահեցաւ վար՝ 8-10 մետր ցած: Հակառակ մօրս պաղատանքին՝ իջայ եւ յաջողեցայ քոյրս ազատել ու վեր հանել: Մայրս չէր ուզեր երկու պատճառով. նախ յուսահատ էր եւ գիտեր, որ քանի մը օր առաջ կամ քանի մը օր ետք ամէնքս ալ պիտի մեռնինք: Մտածեց, որ գոնէ ճամբու եզերք ինկած է, եւ, ով գիտէ, գուցէ խղճամիտ մի մարդու հանդիպի, կազատուի: Մտածեց նաեւ, որ կուշանանք եւ մեզ շատ վատ տեսակով կը խողխողեն: Այս վերջինը քիչ մնաց լինէր: Ետ մնացինք, էշը կեցած էր: Մերոնց ուղարկած էր յառաջ, երբ ես եւ Հայզուարթը վեր ելանք, մայրս էշով մնացած էր, կաղաչեր ժանտարմային, որ մեզ պաշտպանէ եւ, ո՛վ հրաշք, նա մեզ պաշտպանեց: Ժանտարման գիտէր, որ մեր վերջը մեռնելն է: Հասանք մի լեբան անցքի: Մութը կոխած էր: Այս անցքին կը գատին տեսնուած տղամարդկանց եւ կը ջարդին: Մեզմէ առաջ անցնող կարա-

6 Ղանդալը (Գանկալ) գավառակ է Մեքաստիայի գավառում:
7 Հուշագրի սույն տեղեկությունն առաջին գրառմամբ տե՛ս **Գուժկան Մեքաստիոյ**, Եղեռնապատում, էջ 149-150:
8 Հասան Չելէպի գյուղը և ճանապարհային կայանը գտնվում են Խարբեղի նահանգի Մալաթիայի գավառում՝ Մեքաստիա-Մալաթիա ճանապարհին:
9 Կացին:
10 Հուշագրի սույն տեղեկությունն առաջին գրառմամբ տե՛ս **Գուժկան Մեքաստիոյ**, Եղեռնապատում, էջ 200:

ամին մարդոց մեր դիմացի լեռան լանջքին գնդակահարեցին: Սա Հասան Չելչայիէն յետոյ տղամարդկանց երկրորդ հաւաքական գուման էր, ասկէ յետոյ ալ տեղի չունեցաւ. հատ-հատ սպանեցին գտածնին: Տղամարդիկ կանացի հագնուած էին եւ միշտ մէջտեղերը պահուած, իսկ իջեւանած պահուն կանանց փեշերուն տակ պահուած կը մնային: Ամէն մի տղամարդ կարաւանին յոյսն էր, որ կար:

Իջեւանած ենք մի տեղ: Գիշերը մինչեւ լոյս գէնքի ձայներ, կողոպուտ: Լուսցաւ: Մի սպիտակ ձիատր եկավ, անուշ խօսեցավ, թէ հաց պիտի տանք: Գտած մարդիկ հաւաքեց իբր խորհրդակցելու համար, թէ ճամբան ինչպէս պիտի շարունակուի, որ ապահով ըլլա: Խումբը տարին: Քանի մը ժամ յետոյ այն կողմը, ուր տարած էին տղամարդկանց, մեր հարեւան դասապ Յարութիւնին տեսանք, որ հեւիհեւ մեր կողմը կը վազէ, իսկ ետեւէն երկու քիւրտ կը վազեն: Կանայք հաւաքեցան, պոռալով, կանչելով վազեցին նրանց կողմը: Քիւրտերը փախան: Յարութիւնը մերկ էր եւ քանի մը տեղէ վիրատրուած էր: Մեռնելէ առաջ ըսավ. «Մեզ տարին, չուաններով գոյգ-գոյգ կապեցին, մեր չորս կողմը դիրք բռնած էին ժանտարմաները, որ փախչինք, զարնեն: Մեզ մերկացուցին, յանձնեցին խումբ-խումբ կեցած քիւրտերուն, որոնք սկսան սպանել: Ես փախա: Ահա քեզի հաց եւ օգնութիւն»:

Ճամբա ելանք, անվերջանալի ճամբա: Մէկ էլ ուշադրութիւնս գրաւեց երկարահասակ, մի քիչ կորացած, երկար, հին փեշերով մի կին, երեխա մը կռնակը կապած՝ կը քալէր: Նշմարեցի, որ աշխարհագրութեան եւ պատմութեան իմ շատ սիրելի ուսուցիչս է՝ Կարապետ Գաբիկեանը: Ես իրեն նայեցայ, ինքն ինձի նայեցաւ, քանի մը քայլ ետ, ըսաւ. «Ինձ մի՛ նայիր, ուշադրութիւն կը գրաւէ»: Պեխերը չի կային:

Մեր քալած ճամբաները ընտրուած էին նախօրօք. անջրդի, դժուար ելքերով արահետներ, լեռն ի վար ելնել, ապա իջնել եւ մէկ ալ ետ դարձնել եւ այսպէս տանել-բերել:

Մեզ ապահովութեան համար յատկացուած ժանտարմաները ամէն օր մի անցքի վտանգաւոր տեղից հանելու համար փող կուզէին, ստիպուած կը հավաքէր դրան: Մեքաստացիք այս խնդրին մէջ իրար օգնեցին, ճամբու ընթացքին ունեցողը չունեցողին տուաւ: Միայն կը յիշեմ, որ էրզրումցիք միայն իրենք իրենց մէջ իրարու կօզնէին, իրենցմէ դուրս՝ ոչ ոքի:

Մուրատ գետի անցքերնիս

Հոս, առաջին անգամ ըլլալով, տեսանք արաբ՝ «ակելաւոր» գլխուն չորս կողմը եւ հագած փեշ մը թէ՛ կին, թէ՛ տղամարդ:

Մուրատ գետի եզրն ենք, կը տեսնենք, մեզմէ առաջ եկածները անցուցած են, իջեւանած են: Գետը լայն է, եւ մենք հեռուից կը տեսնենք մարդկային մի

մեծ բանակատեղի, իսկ մեր եզերքը նոյնը՝ մարդկային խլեակներով խառնուած բանակատեղի: Հոս, որս սեւ եամջին վրանիս փռած, կը քնենք: Քանի մը օրեր մնացինք: Ամէն օր այս եզրին միւս եզրը կանցին նախ անան բաներով. վայնասուն, հաճախ գնդակի ձայներ, լուրիւն: Մեզ մօտ քանի մը տղամարդիկ գտան, ստիպեցին մերկանալ եւ լողալ: Երբ լողալ սկսան, նշանառութեամբ զուարճացան, մինչեւ որ մարմիններն անհետացան:

Կարգը եկավ մեզի: Հաւաքեցանք: Թոյլ չտուին, որ էշը հետերնիս տանենք: Մայլերը տարած էին, հիմա ալ բեռնակիր էշերն ալ առին մեզմէ եւ մեզ հետ եղած գոյքերնին, ուտելիք, ջուրի աման, հագուստ, ինչ որ կրնայինք, առինք:

Գետի մէջտեղը հասանք: Մեծ կողոպուտ, մի խոշոր հարուած մօրս կռնակին: Արուսեակը մահացաւ այդ հարուածէն մօրս սրտին վրա:

Նավէն իջանք, կողոպտուած փողերնիս, եամջինիս, ինչ որ կար, առին: Լալով, վազելով հասանք մեզմէ առաջ եկողներուն: Մեզ միսիքարեցին եւ օգնեցին:


Այդ օրուրնէ սկսեալ Չարուի քոյրս, երեխա մը կռնակն առած, կը ճամբորդէր եւ դրա փոխարէն ալ մեզի ուտելիք կուտային մեզմէ աւելի բախտակիցները:

Այն եզրը, որ մեզ դուրս բերին ժանտարմաները, հազիւ կէսը կրցին պաշտպանել: Մի մեծ մաս բոլորովին մերկացուցին: Ատնց մի տեղ կուկուզ ըրած՝ խմբական նստած էին: Փախչողներուն կը գնդակահարէին, գետը նետուողներուն հաշիւ չի կար: Շարան-շարան դիակներ Եփրատ գետը կը տանէր, ազատուած էին...

Մեր կարաւանը թեթեցած է, շատ բեռներ չունինք: Ինչ որ պատահի, ան կուտէինք՝ ցորենի հատիկ, հացի փշրանք, տերեւ, կեղեւ:

Անընդհատ պէտք է քալենք: Ամենաշատը ծարավ կը նեղվենք, դիտմամբ անջրդի տեղեր մեզ կը տանին:

Իջեւանած ենք մի տեղ, կարծեմ Վերանշեհիլիէն շատ հեռու չենք: Գիշերը քնած ենք, յանկարծ վրանիս յարձակեցան: Ես ոտքի ելած եմ: Ընտանիքի անդամներով իրար սեղմուած՝ քշում ենք, ձեռքիս պիղո բռնած եմ ջուրի աման մը, միակ բանը, որ կրցանք ազատել այդ պահուն: Ետեւէս մի փոքր հարուած գլխիս, մէկը ինձ կը քաշէ, ձեռքիս ամանը մօրս տի: Ինձ քաշելով-քաշքռտելով տարաւ ու բոլորովին ինձ մերկացուց, թոյլ չտուալ վարտիքս անգամ վրաս ձգել: Լեզուն չէի հասկնար. լալս, ողբալս, խնդրելս ոչ մի օգուտ. իր դարդը հագուստներս էին, տի: Երբ նշան ըրաւ, ես վազեցի, ետեւէս քանի մը քար զարկաւ: 3 աշիրէթներ ձիով, էշով, տոպրակներով եկեր էին. պիտի հագուստ, փող, տղա, աղջիկ, կանայք ունենային: Մեզ բաժներ են 3 խումբի: Թալան-կոտորածը տեղի ունեցաւ առտուայ մինչեւ ժամը 12-ը: Կողոպտուողները սարձոր ցրուած էին, մէկ հատ չի կար, որ բոլորովին



Սեբաստիայից Դեր Ջոր բռնագողթի ուղին ըստ Արմենակ Կյուրեղյանի

մերկացած չըլլար: Ով որ ողջ մնացած էր, իրենները փնտրել սկսած էր: Մենք բոլորս իրար գտանք, բացակա էր միայն Հայգուարթը: Փնտրեցի եւ նրան գտա կոխկոտուած, մեռած:

Գիշերը, որ մեր վրա յարձակեցան, մեզ վերջնականապէս մերկացուցին: Եթէ բոլորովին մերկացար, կերթաւ ու կնստես մերկացած խումբին մէջ: Ժանտարմաներն անհետացած էին, մնացած էինք անպաշտպան: Այդ օրը եղաւ մեր վերջին կողոպուտը եւ «Չալախ պարխաման» («Մերկերու կարաման») կոչուեցանք:

Այստեղ կար հոր մը, քիչ հեռուն քանի մը ծառեր կային եւ մեղվի փեթակ մը: Անօթի ենք: Ծառին տերեւները, նոյնիսկ կեղեւներն ուտել սկսանք:

Քանի-քանի օրեր ցերեկը հատուկտուր արաքներ, պետեւիներ, քիւրտեր կուգային կողոպուտի: Բան չի կար տանելու, ոսկի գտնալու յոյսով կանանց մագերը կը քաշկոտէին, դանակով փորերը կը պատռէին: Տեսեր էին, որ ոսկի կլլողներ եղած են: Հոս մի դէպք պատահեցաւ: Դասընկեր մը ունէի,

որը Ղասապներու տխախէն էր: Ղասապի տղա էր՝ Վարդան Կինճեան, Կենջոեան կամ Վարդան Ղասապեան, չեմ յիշեր: Նա մեզ մօտ եղող արաքներին մէկուն ձեռքին երկաթի գաւազանը առաւ եւ սկսավ աջ ու ձախ կռուել նրանց հետ: Ամէնը վրան յարձակեցան, այդ պահուն մայրը մագերուն մէջէն ոսկիները հանեց եւ պռռալով վագեց ու գետինը ցրուեց: Խուժանը Վարդանին թողեց: Սկսան ոսկի հաւաքել: Վարդանը շատ մը տեղերէ վիրաւորուած էր, մեռաւ տեղոյն վրա՝ ի ցաւ իր մօրը:

Մի անգամ մի տեղ երկու քիւրտեր ֆիստան հագած մի տղամարդու բռնեցին: Ժանտարման ալ մեզ հետ կը քալէ: Մարդուն դէմը մէկը եկավ, գլխին զարկաւ, մարդը փոխանակ փախելու, գլուխը ծռեց, որ երկրորդ մը զարնէ: Քիւրտը մէկ հատ ես զարկաւ, գլուխը նորէն ծռեց: Այս անգամ զարնողը շվարեցաւ, թէ այս ի՞նչ բան է: Այս անգամ քովինը զարկաւ: Այսպէս քանի զարկին, այնքան ծռեցաւ, որ զարնեն, մէկ էլ դէմքին վրա ինկաւ: Երկու քիւրտերէն մինը գլուխը ջախջախեց, միւսն ալ կացինով

մը վիզը կտրել ուզեց: Մինչև իյնալը փայտի վրա երկաթով խաչի նման զարկին:

Խօսիմ իմ եւ եղբորս մասին: Մերկ ենք: Գիշերը կը քալենք, ցերեկը քարայրներն ենք պահուտում: Լուսցաւ: Տեսանք, որ ճամբուն հորիզոնական դիրքի վրա ենք, արաքներ անցնել սկսան: Մենք սահմնուած քաշուած ենք անկիւնը, մեզ չեն կրնար տեսնել: Մէկ էլ տեսանք, որ քանի մը հոգիներ եւ փաթոցաւոր շէխ մը եկան եւ մեզ ստիպեցին դուրս գալ, փող կուզեին: Լեզուսին չենք հասկնար: Արաքը ինձի բռնեց, գետին պառկեցուց, դանակը հանեց, ծունկը փորիս վրա դրաւ: Նոյն բուպէին խոճան խօսելով ձեռքի դանակն առաւ, ես ոչ մի վախ, մտահոգութիւն չունեցաւ: Բնական գտայ, յոգնած եմ, վերքեր ունեմ, անօթի եմ, ուժասպառ եմ, ո՞վ կը մտածէ դիմադրելու: Արաքը ինձ թողեց, գնաց եղբորս՝ Արամին, գետին պառկեցուց մորթելու համար: Խոճան նրան էլ ազատեց:

7-8 օր վերջ նոր ձեռքի ժանտարմաներ եկան եւ մեզ ճամբայ հանեցին՝ մեր չալախ պարխանան: Հանդիպեցանք մշակուած հողամասերու: մնացեր էին վարունգի, սեխի, ձմերուկի, պատլճանի, դդումի տերեւները, ոչ մի պտուղ չգտանք: Կանաչ խոտերն ու տերեւները կերանք:

Հասկցանք, որ մեր պարխանան Ուրֆայի կողմն է եւ դէպի Տէր-Չօր կը տանեն: Կը քալենք. բուպիկ ոտքերնիս գետնի տաքութենէն վեր կը ցատկենք, արեւը մեր մարմինը կը ցավցնէ, գիշերն ալ կը պահենք: Ես, մայրս, Արամը, Չարուի քոյրս որոշեցինք չի շարունակել, ուժասպառ մնացինք ճամբան. գիշերները քալեցինք, ցերեկները քարայրներու մէջ սեւցած, նեխած դիակների մօտ պառկեցանք, որ արաքներ մեզ չի տեսնեն եւ կոտորեն: Մեռնիլ կը փնտրէինք, բայց շատ կը տանջէին. այդ էր, որ սարսափ էր ազդած:

Հասանք մի տեղ, ուր կենդանիներուն ջուր կուտային: Աղաչեցինք, որ մեզ թոյլ տան խմելու, բայց արաքները չի ձգեցին: Նրանք մեզ չի հարուածեցին ալ: Քիչ վեր, երբ կենդանիները բաւարարեցան, մենք նորէն աղաչեցինք: Իրար չենք հասկնար: Ձեռքով, ոտքով մէկը հասկցուց, որ Արամին իրեն տանք: Արամին տուինք, ջուր խմինք: Արամը գնաց եւ այդ գնալն էր, մէկ էլ չորս տարի յետոյ զինք Աղանայի որբանոցը գտաւ:

Հասանք գիւղ մը: Հոս բիսկ ըրինք, նախ գետակին մէջ մտանք, խմեցինք, մաքրեցանք, բայց ոչ մի կտոր հնարաւոր չէ գտնել եւ ծածկուել: Մտանք գիւղ: Արաք գիւղացին սաճի վրա հաց՝ իլխա¹¹ կը թխէր: Այս գիւղի մէջ մեզ չեն հալածեր, ուստի համարձակեցանք աւելի մօտենալ եւ մի կտոր հաց աղաչել: Կին մը եկավ, ամէնուս նայեց, հասկցուց, որ Չարուի քոյրս իրենք կուզեն: Իսկոյն մայրս հասնութիւն տուաւ: Եթէ չեն սխալիր, 3 հատ իլխա

մեզ տուին: Քրոջս ճակատագիրն ի՞նչ եղավ, չեմ գիտեր մինչեւ այսօր:

Մնացինք մայրս, ես եւ Ֆրնտրզ տուտուն: Նա շատ կտրիճ կին մըն էր: Նա մեզ քաջալերեց, առաջնորդեց, եթէ նա չըլլար, մայրս մինչեւ հոն չէր հասներ:

Այդ գիւղէն քիչ մը հեռու՝ կանաչ խոտերուն մէջ, բնակութիւն հաստատեցինք, որոշեցինք հոտ մնալ եւ հոտ ալ մեռնել: Մօտերնիս ջուր կա եւ խոտ ալ կա: Ամէն օր գաղտագողի գիւղին կը մօտենամ, կը մուրամ, ինչ որ ձեռքս անցաւ, կը բերեմ մօրս եւ Ֆրնտրզ տուտուին: Նրանց բացակայութեամբ երբեք բերանս բան չի դրի. միշտ մայրս, մայրս ու մայրս: Այդ գիւղի մարդիկ մեզ նման շատ էին տեսել:

Մօրս հետ գիրկ գրկի գիշերը նստած էի եւ փաթթուած Ֆրնտրզ տուտուին՝ կը քնանայինք: Մայրս այլեւս նստած տեղէն չէր կրնար շարժիլ եւ ոչ ալ ոտքի կրնա ելլել. մի կմախք, տրտում-տխուր եւ միշտ աչքերը արցունք: Ֆրնտրզ տուտուն ամէն ճիգ կը թափէր միսիթարելու: Հասկցած էի, որ վերջին օրերը կապրի: Ֆրնտրզ տուտուն էլ ուզեց ինձ պատրաստել այդ մտքին: Կապրենք, քանի մը օրեր միասին: Մայրս լալով մի առ մի թուեց. «Հայրդ սպաննեցին, Արուսեակին մեռցուցին, Հայգուարթս կոխկոտեցաւ, Իսկուիսա հորի մէջ խեղդեցին, Չարուիս եւ Արամս տարին, մնացեր ես դուն, ես պիտի մեռնեմ, գոնէ դու ողջ մնայիր»: Կուլար ու կուլար: Կարծես թէ չէի ազդուելի, մի անբան էակ էի դարձեր: Մի առաւօտ երկու ձիաւոր մեր տեղը գտան: Վախցանք, քանի մօտեցան, կծկեցանք: Մէկը մեզի թուրքերէն ըսավ. «Մի՛ վախճաք, ձեզի չի պիտի դպնանք»: Եկան մեզ մօտ: Չգացինք, որ ցաւելով են մեզ նայում: Նրանք անուշ խօսեցան, քաջալերական ըրին, եւ մէկը մօրս ըսավ.

–Կուզեմ տղադ ազատել, ինձի տղա պիտի ընեն:

Մայրս ուրախացաւ եւ ըսաւ՝ Այո՛: Ես ընդդիմացայ եւ թուրքերէն խօսողին ըսի. «Ես մօրմէս չեմ գատուիր, չեմ երթար, հետը պիտի մեռնիմ»: Մայրս ինձ ուժասպառ վիճակին մէջ ծնկաչոք անընդհատ կաղաչի, որ թողնեմ, երթամ եւ լալով, փոճկելով մեր ընտանիքի անդամներուն անունները կուտաւ եւ կաւելցնէ. «Գնա՛, գնա՛, ողջ մնացիր, գուցէ վրեժ լուծես»:

Ես մարդուն յամառեցայ եւ ըսի.

–Իմ մայրս ալ, եթէ տանեք, կուզամ:

Չիաւորն իր վրայի մաշլախը հանեց, մօրս ծածկեց եւ ըսավ.

–Ես հիմա չեմ կրնար տանել, քեզ տանեմ եւ յետոյ կուզամ, մայրդ ալ տանեմ, մեր երթալիք գիւղը հեռու չէ:

–Շուտ կուգաք, ես ալ կրնա՞մ հետերնիդ գալ հացով, ուտելիքով,– ըսի:

–Այո՛,– ըսաւ եւ մօրս բռնած դիրքը, մարդուն վրային տալը եւ խոստումը ինձ թուցուցին:

11 Սաճի վրա եփած, բարակ, լուսնկայի նման հաց:

–Այո՛,– ըսի, եւ իսկոյն ինձ բռնեցին, ձիւն վրա դրին: Ելանք, գացինք: Չիւն վրա նստած՝ ետես նայեցայ, մինչեւ որ մօրս՝ երկինք բարձրացուցած թեւերը այլեւս կորսուեցան անյայտութեան մէջ:

Վերջացաւ իմ տարագրութիւնը Հասանքեանդ Երկաթայ ըստած վայրում:

Կեանքս 1915-1918 թականներին

Ուրֆայէն իշու քայլուածքով 5 ժամ հեռու արաբական մի գյուղ՝ Հասանքեանդ, տարաւ ձիւնը: Հնոս իմացայ, որ շէխ մը՝ գիւղին մեծը, տղա մը ուզէր է: Ինձի յանձնեցին նրան: Դարձաւ իրեն գաւազը, ինձ կնքեց Մուհամմետ Էլ-Իսայի անունով: Իրեն անունը Իսայի էր, իմ անունս՝ Մուհամմետ: Լոգոցիցին, քնացայ: Քնանալս տեսէր է չորս շաբաթ: Չարթնցի եւ ինքզինքս գտա յարդանցի մը մէջ պառկած: Ինձ բերող մարդը պատմեց.

–Քեզ բերինք, մարթեցինք, լոգոցիցինք, գալուն հագեցուցինք, պառկեցար եւ քնացար: Կը խօսէիր, կը գառանցէիր, ոչ մի բան չի հասկցանք եւ տեսանք, որ անհնարին է քեզ բուժել, բերինք յարդանց: Առտու-կեսօր շէխի աղջիկները քեզ ջուր, հաց կը բերէին, բայց միայն մի կաթիլ ջուր կը խմէիր: Փորդ կը բշէր: Անտանելի մի կացութիւն:

Նստայ, յիշեցի մօրս եւ գրեթէ պոռթկալով ըսի.

–Պենիմ անամ ներդէ¹²:

Ըսաւ.

–Կեցի՛ր, ըսեմ: Երդում կրնես գացիմք, հաց տարինք, բայց անտեղ չի գտանք ոչ մի հետք: Կմայքներ կային, բայց նրանք ըլլալու չէ:

Սկսայ լալ, լալ, որքան տեսեց, չեմ գիտեր: Մարդը չի դիմացաւ եւ հեռացաւ քովէս:

Գիւղի ամենամեծին տունն եմ եւ նրա գաւազն եմ: Ամէն մարդ ինձ կը յարգէ որպէս շէխի տղա: Ունեմ մայր մը, երկու քոյր, հայրս շէխ Իսայի է: Կիսաարաբ պետեւի եւ կիսաքիւրտ մեծ ազգու, զօրաւոր ցեղ է եղել: Ուրֆայի կառաւարական մարդիկ իր տունը կիջեանին: Ունի մեծ օդա: Ով որ անցնի այդ գիւղի առջեւէն, անպայման պիտի գա, հանգստանա, սուրճն խմէ. այդ օդային հացը եւ սուրճն ամէն վայրկեան պատրաստ է:

Իմ աշխատանքն էր օդային հիւրերուն ծառայել, կենդանիներուն խնամք տանել, տան համար հեռուից ջուր բերել:

Սվազն մինչեւ այս մարդուն տուն հասնելու կարծեմ թէ երեք ամիս չի տեսեց: Այդ գիւղում զգացի, որ այլեւս աշխարհում մէնակ եմ մնացած որպէս հայ: Ինձ նման տղաներ հազուադէպ պատահէր. փոքր երեխաներ, աղջիկ, տղա, հարսներ եւ կանայք արաբներու, քիւրտերու տան մէջ ընտանիքի մաս կազմած ենք: Մենք տեղւոյն բոլոր բարոյական եւ սոցիալական բարքերը պէտք էր իւրացնէինք: Շատ կարճ ժամանակում իւրացուցի այդ բոլոր

ըր, քրտերէն, արաբերէն սովորեցի եւ քանի մը ամիսներ յետոյ արդէն իրենց նման էի: Երբ տարիները սահեցան, նոյնիսկ արաբը կամ քիւրտը չէր կարող ճանչնալ, որ ես հայ եմ: Բնութիւնն ալ իր գործը տեսաւ. ոտքս բոպիկ, կոշտացած, գլուխս ակալ, իրենց բոլոր յատկութիւնները իւրացուցած էի: Մի բանով իրենցից ատելի էի. ան ալ այն էր, որ շատ աշխատասէր էի: Եղա հովիւ, արածեցի գառներ, ոչխարի հօտեր, եզներ, վարեցի արտեր, հնձեցի ցորեն, գարի, կամենցի, կալ բերի եւ յարդանցներ լեցուցի, զոմերը կարգի դրի, գիշերները կենդանիներուն, կովերուն կեր կուտայի: Այս բոլորէն գատ ալ իրենց ասպատակութիւններուն կը մասնակցէի, իմ սեփական ձիւն ունէի: Ամէն ընտանիք կը փափազէր ինձ նման տղա մը ունենալ եւ սկսան ցավել, որ էլ ատելի տղաներ կան կանայք չեն ազատած եւ չեն որդեգրած: Չգացին, որ չի պիտի կոտորէին:

1915 թի աշնան վերջերն ազատուած եմ եւ Հասանքեանդ գիւղն եմ: Մի քիչ որ արաբացայ, յաջողեցայ քանի մը հոգիներով երթալ Երկաթայ գիւղը եւ մօտերը փնտրել մայրս: Մօրս հետքն այնտեղ, ուր մնացած էր, չի գտա: Նոյնպէս քոյրս՝ Չարուհին ալ անյետացած էր: Տարիներով տրտում-տխուր, միայնակ կը զգայի ինքզինքս: Կըսէի, որ ոչ մի հայ չի մնաց, մանաւանդ որ տարիներու ընթացքին քանի մը ամիսը անգամ մը կը տեսնէի, որ թուրք պաշտօնեաներ յատուկ հրամանով կուգային եւ արաբներու ու քիւրտերու մօտ ազատուածներուն կը տանէին սպանելու: Իմ տէրը շատ ազդեցիկ մարդ էր, ինձ չի տուած: Ասպէս կոտորեցին հաւաքուած եւ թիւրք որբանոցներ դրուած շատ մանուկներ, հակառակ որ նրանց մեծ մասը չէր յիշեր իր ծնողքը:

Ես մնացի իրենց մօտ, յաճախ կը խօսէի, թէ ինչպէս ողջ-ողջ այրած եմ շատերուն եւ շատերուն մեծ չարչարանքներու ենթարկած եմ: Բայց որ ժամանակն անցաւ, զգացին, որ սխալ են ըրած, մանաւանդ այդ ձմեռ մի փոխանցիկ հիւանդութիւն եկաւ, եւ քանի մը օրէն ով որ բռնվէր, անպայման կը մեռներ: Օրինակ, իմ տան մէջ հայր ըստածը, նրա կինը, աղջկան մէկը իրարու ետեւ մեռան, շատ տուներ բոլորովին անհետացան: Կը կարծեմ, որ այդ հիւանդութիւնը այդ շրջանի ժողովուրդի կէտէն ատելի առաւ: Իրենք ըսին. «Ահա Աստուած մեզ պատժեց ջարդերուն համար»: Այդ տունը մնաց մէկ հատ աղջիկ, եւ գիւղին շէխ մը մոլլա ինձ իր մօտ առավ: Նրա փափագն էր ինձ լրիւ իսլամացնել եւ գիշեր-ցերեկ իրենց աղօթքները կը սորուցներ: Մի օր ալ ինձ ծախեց ուրիշ շէխի մը, որը հարուստ էր: Պետք է իր օդային ծառայէի: Տարիները կը սահէին: Որոշեցի յարաբերութեան մէջ մտնել Ուրֆայէն եկող մարդկանց հետ եւ փախչել, գնալ Ուրֆա քաղաք:

Անցնեմ Ուրֆայի հերոսամարտին: Նոր էի ազատվել: Քանի մը ամիսներ յետոյ իմ շրջանի խումբ-խումբ գիւղում քիւրտեր, մանաւանդ մեծ բազմութեամբ արաբներ էշերով եւ ձիերով ճամբայ

12 «Որտե՞ղ է իմ մայրը»:

ելան դեպի Ուրֆա՝ հայերը ջարդելու եւ կողոպտելու համար: Ծովածալալ բազմութիւն էր, որ կերթար շարան-շարան, տուրակները պատրաստ, որ ապրանքները բառնան ու վերադառնան: Այդ գացողները ետ եկան կէսէն աւելին դիակները հոն թողած, մի մասն ալ հաշմանդամ: Ա՛խ, որքա՛ն թեթեցած զգացի ինքզինքս, կարծես թէ ես էի կռուած եւ վրէժ լուծած: Ուրֆայի հայերը այնպիսի ջարդ մը տուած են, որ վերադարձողները կը պատմէին, որ հայերը «Թէ պոռալով, խնդալով, ծաղրելով վրանիս կը յարձակէին եւ կըսէին՝ թէ քաջ եք, եկե՛ք, դուք միայն անապատի անգէն կանանց ու մանկանց սպանել կարող էք»: Ավա՛ղ, գերմանացիի հրամանին տակ գերման թնդանօթը առիծներու նման կռուող ուրֆացի հայերուն ալ ջարդեց, մնացածն ալ քշեց դեպի Տէր-Զօր:

Ուրֆայի շրջակայքի գիւղերը փոխնիփոխ կեանքս քարշ տուի՝ միշտ որդեգրուելով: Օր մըն ալ փափագիս հասա. Ուրֆա գացի եւ մնացի մի երկու օր, ատկէ ալ գիշերանց փախա Ուրֆայի լեռները, հանդիպեցի հովիւներու: Դարձա հովիւ: Պարտաւոր էի լեռնէն վար չիջնել: Հովիւ տղոց փոխնիփոխ կօզնէի, երբ իրենք Ուրֆա կամ գիւղերը կիջնէին: Ուրֆայի մօտ հայաբնակ անայացած, բայց պարտէզներով, խաղողի այգիներով գիւղ մը կար, տեսայ, լացի: Լերան զագաթը հովիւ եմ, հացով, սոխով, կաթով, պանիրով գոհ եմ, բայց բախտես սկսաւ անընդհատ անձրեւել: Այնքան տակալի անձրեւ, որ քարայրերն անգամ չի կրցան պաշտպանել: Որոշեցի ճիւղապի կողմի իմ նախկին գիւղերը երթալ: Գացի: Վերջի շէխն ինձ սիրով ընդունեց եւ ուրախացաւ, որ եկած եմ: Սկսայ նախկին կեանքս. երկրագործութիւն եւ օդա հսկել:

Տարիներ անցան: Սկսայ իմանալ, որ թուրքերը պարտուելու վրայ են: Շրջակայքս սկսան ըմբոստանալու ձեւեր ընել: Պետեիներ կուգան-կերթան: Կռահեցի, որ մի բան փոխուած է: Որոշեցի գիշեր մը նորէն փախչել եւ հասնել Ուրֆա: 5 ժամ լեռներ, ձորեր կտրելով՝ հասայ Ուրֆա: Փողոցի մը անկիւնն ինկայ, քնացայ: Առտու արթնցայ, գտայ հատուկտոր գաղթական կիներ: Հետերնին խօսեցայ եւ վրաս գլուխս փոխելով՝ քանի մը ամիս ապրեցայ հետերնին: Շատ դուրս չէի գար, անոնք կը մուրաշիւն, փուռերը կաշխատէին ելն: Ինձի ալ ուտելիք կը բերէին: Ելա նրանց մօտէն:

Ուրֆայի հայերուն թաղերը ման եկայ, քարէ տներ էին ցած: Ուրֆայի հայերու, որ հանդիպեցի, շատ սիրեցի, մաքուր, ազնիւ մարդիկ էին:

Քաղաքը հասցէ մը ունէի. Միսթաթեք Էմինի՝ արաբ ազնիւ թրքախօս մի մարդ, գիւղերը կուգար: Նա միշտ գալուն կըսէր. «Եկո՛ւր քաղաք: Իմ տան տղան կընեմ, քու տեղդ հոս չէ, բայց չի գիտցնես, որ ես քեզ խորհուրդ տուած եմ, վերջը կռիւ կելլէ»:

Գացի, գտա: Երբ յայտնեցի, թէ փախած, եկած եմ, ուրախացաւ, ըսաւ.

–Ես զաւակ չունեցայ եւ չունեմ: Հարուստ եմ: Ունեմ տուներ, ձիեր, գիւղեր, դուն իմ հարագատ տղան պիտի ըլլաս եւ այս տան դեկավարը պիտի ըլլաս:

Ես ալ այդ կուզէի: Մտայ եւ մնացի: Այս տան մէջ կային 3 հատ հայ կիներ, 2 հատ մատղաշ աղջիկներ, ասոնք ինձի երախտագիտորէն յայտնեցին, որ շատ ազնիւ մարդ է: Իսկապէս ալ, մինչեւ իմ՝ Հալէպ ճամբայ ելնելս այդ մարդն ինձ հանդէպ հօր մը պէս վարեց: Միայն նրա գէշ բաները այն էր, որ ինք Միսթաթեք Էմինի էր եւ յաճախ ստիպուած քէյֆեր կը սարքեր թիւք պաշտօնեաներու հետ: Հայ կանանց մերկ պարել կուտային իրենց վավաշոտ խնջոյքներուն: Բայց պէտք է ըսել, որ այս մարդը, եթէ շար ըլլար, իր Թելլապիատի մօտ պաշտօնաւարած գաղթականներն ամէն ալ սպանել կուտար կամ կրնար քշել, չըրաւ:

Օրէն մէկն ինձ հետը տարաւ Թելլապիատ եւ հոն իր մէկ տան մէջ մնալու ստիպուեցայ: Յետոյ նպարավաճառի խանութ մը բացաւ եւ ինձ յանձնեց, որ աշխատեցնէ: Իրիկունները ձիս հեծած խանութս փակելէ վերջ կերթայի քանի մը ժամ հեռու տուն: Թելլապիատէն Ուրֆա քանի մը անգամ աղայիս բնակարանը գացի գործով: Դամբան աւերակ քաղաք մը կար, եթէ չեմ սխալեր, Ռահա անունով:

Սկսայ մտերմանալ հաճընցիներու եւ կարգ մը հայերու հետ: Քիչ-շատ թուրքերէն կը գրէի եւ կը կարդայի: Խանութն ամէն բանով լեցուցած էի: Բազգա գացող-եկող Հալէպի գծի վրա մեքենան քշող-ծառայող հայեր կային: Անոնց հետ կապեցայ, ասորանք կը բերէին, կը վճարէի: Եւ այս միջոցին շատ ու շատ օգնեցի գաղթականներուն, երբ գնումի կուգային, աժան կուտայի, ոմանց ալ ձրի: Դրամն առատ էր: Կարմիր ոսկիով կը լեցուէր դարակս, ամէն իրիկուն կը տանէի եւ կուտայի «հօրս»: Նա կուգար խանութ, տեսրակներս, հաշիւները կը նայեր եւ կուրախանար: Գործն առատ էր: Խեղին ի՞նչ փշեց, որ ուզեց մէկը բերել, եւ գործը կիսուակէս ըլլա: Երեւի ստիպուած էր: Բերաւ մէկը: Այդ մի սրիկա հայատեաց երիտասարդ թիւք մըն էր: Ինձ ակռա չէր կրնար անցնել, բայց կամաց-կամաց կը պատրաստուէր ինձ դուրս շարտել: Հասկցայ: Քանի-քանի անգամ աղայիս ըսի, բայց նա ականջ չի կախեց: Եղաւ անխուսափելին. մի օր ինք ոսկիները կը թողնու դրամարկղին մէջ եւ խանութը կը գոցէ, կերթա: Միշտ միասին ենք: Առտու կուգա, որ կէսը պակասած է: Այդ պատճառ եղաւ, որ ես նախ խանութէն հեռանամ, եւ նրա ստիպումը, թէ ես եմ գողցած, ինձ արեւի տակ շրթայակապ թողուցին: «Հայր» ըսուածը թէն երկմտում էր, բայց ուզեց ինձ պատժել այդ սրիկային համար: Քանի որ ես գողցած չէի, ուստի յաջորդ օրն ազատեց եւ ինձ սիրաշահել ուզեց եւ, ո՛վ արդարութիւն, այդ օրերուն այդ մարդը հիւանդացաւ, Ուրֆա տարին: Մեռաւ-



«Որբերու Հայրիկը»՝ վերապատուելի Ահարոն Շիրաճեան իր սաներով, Հալէպ, 1915

սատկեցաւ: Խանութք մնաց փակ: Ինչքան պնդեց իմ աղան, չի հնազանդեցայ: Մարդը չուզեց, որ ինձ հեռացնէ, կաշխատէր հօր գուրգուրանք ցոյց տալ եւ կուզէր ամէն գնով ինձ չի վշտացնել, որ չի փախչիմ: Օրէն մէկն ինձ համոզեց եւ ձիով գացիմք, խանութքը բացաւ եւ ըսաւ.

– Իմ գաւակն ես, խնդրում եմ հնազանդէ եւ խանութքը շարունակէ: Այս վայրին մէջ խանութք պէտք է կապ մնա ժողովրդին համար: Հայեր ալ կան, պիտի օգտվին:

Սկսայ շարունակել: Ո՛վ զարմանք, դիտմամբ թողած ոսկիները կը պակասին: Ջուվալներով, մեծ տոպրակներով բրինձ, շաքար, ոսպ, պղուր, ամէն բան կամաց-կամաց կը քիչնա: Հասկցայ, որ գիշերները խանութքը գող կը մտնա: Իսկոյն հասկցայ, որ հայ գաղթականները կրնան ըլլալ: Փոխեցի բանալիները եւ ըսի հայերուն, որ չընեն այդ բանը, իրենք ալ տեսան, որ իրենց երեսէն արեւին տակ շոթայակապ, մերկ մնացի պատժած: Մինչեւ բանալիները Հալէպէն բերել տալս, հակառակ բոլոր հայերուն հասկցուցած ըլլալուս, ուտելիքները կը պակսէին: Ալ ոսկի չէի ձգեր դրամարկղը: Երբեք չի յայտնեցի աղային: Նա չէր ալ կարող գիտնալ, փողն առատ էր: Ես հայ գաղթականներուն աժան եւ յաճախ ձրի, ոմանց միշտ ձրի կուտայի: Ամէնն ապերախտ գտնուեցան: Փռապան հայ մը կար, կարմիր ոսկիներ տուի, որ պահէ եւ օր մը ինձի վերադարձնէ փախած ժամանակս: Այդ մարդ փողեր չի տուաւ: Աղայիս տանն իզմիրցի Մարիամ անուն կնիկ մը կար, վստահութիւնս շահած էր, իրեն կարմիր ոսկի կը նւիրէի եւ ինձ համար ալ: Կըսէի.

– Ասոնք պահէ, որ օր մը հեռանանք, իմիններս ինձի կուտաս:

Մի օր միամիտ պատմեցի, որ խանութիս գետնի տակ՝ հողի մէջ, ոսկի կը պահեմ: Այս կինը Հալէպ փախած օրը փոխանակ փողերս տալու եւ ինձի իմացնելու, թէ ուր կերթա (աղայիս հաւանությամբ պետեւիները եկած էին, ես ալ գիտ չէի կրնար իջնալ), իմ աղային կը մատնէ՝ ըսելով, որ ոսկին

պահած եմ խանութի այսինչ տեղը: Ահա ասանկ ըրին հայերը: Մանաւանդ հաճրնցիք ու գէթոնցիք շատ անմարդկային դուրս եկան: Երբ Հալէպ այս մարդկանց մօտ գացի, որ ինձի օգնեն, խնդալով ու ծաղրելով յայտնեցին, թէ իրենք են գողութիւնն ըրած, բանալիները շինած, բացած են: Երբ ըսի. «Գոնէ խիղճներդ Ձեզ չի տանջէ՞ր, որ ես շոթայակապ մի օր արեւին տակ տառապեցայ», խնդացին: Իսկ աղան, իմ «հայրիկ» ըսուած մարդն արեւի ազնի գտնուեցաւ: Եկաւ խանութ, ըսաւ.

– Բանի մը օր քեզ հետ կը մնամ, յետոյ պիտի փախիմ, կուզես հետս եկուր, կուզես գնա Հալէպ:

Յոյց տուաւ այն տեղը, ուր ոսկիներ պահած էի.

– Հանի՛, կիսվենք, եթէ պիտի ինձ թողնես (Մարիին մատնած փողն է):

Հանեցի, ամէնը տուի իրեն, բայց նա բռնով մի մասը վերադարձուց: Ունէի մէկ ատրճանակ, մէկ հաստ ալ նւիրեց:

Ճաշեցիմք: Թրեմն եկավ, մարդն արցունքոտ աչքերով ըսավ. «Գնա՛, մենք ըրինք, մենք ալ գտանք: Ինչպէս որ մենք Ձեզ կոտորեցիմք, հիմա ալ անգլիացիները կուզան, մեզ կը կոտորեն, Աստուծոյ գործն է»:

Հասայ Հալէպ եւ խումբի մը հետ ուղղուեցայ ելեղեցիի բակը: Եկեղեցին, որ մտայ, տէրտէր մը հարցնուիորձ ըրաւ, թէ որտեղացի եմ: Հայերէն կը խօսէր շարունակ, իսկ ես արաբերէն կը պատասխանէի: Հայերէն գիրք մը բերավ, ջուրի պէս կարդացի: Ջարմացաւ, որ հայերէն չեմ խօսիր: Հասկցաւ, որ չորս տարի հայերէն մէկ բառ չէի խօսած, դժուար էր: Երբ Մապունիսանի որբանոցը մտայ, քանի մը օրէն սկսայ հայերէն խօսել:

Ահարոն պատուելի¹³ Մապունիսան որբանոցում եմ: Ես մեծ եմ: Ինձ ազատ ժամեր տուին, գաղթականներով լիքը դշա մը կար: Ինչքան կարելի է, օգնեցի իմ համաերկրացիներուն: Իրենց Ամերիկայի հարազատներէն փող կուգար, գրել էր պէտք, փողը երթալ-բերել էր պէտք, չէին կրնար, ես օգնեցի: Նոյնը ըրի Աղանա եւ Պոլիս եղած ատեններս: Որբանոցն ինձի պաշտօն տուին. ամէն առաւօտ երթալ եւ ուրիշ շէնքի մը մէջէն փոքր հասակ որբեր բերել Մապունիսան որբանոցը: Ամէն առաւօտ սկաու-

13 Ահարոն Շիրաջյանը ծնվել է 1865 թ. հունվարի 18-ին Մարաշում: Ուսանում է Մարաշի ավետարանական վարժարանում, Այնթապի քոլեջում: 1889 թ. ավարտում է Մարաշի Աստվածաբանական ճեմարանը և ձեռնադրվում է Պատվելի: 1915 թ. ապրիլին տարագրվում է Հալէպ: Նույն թվականի հուլիսի 31-ին հիմնում է որբանոց, որը ժողովուրդը կոչում է Ահարոն Պատվելիի որբանոց: 7 տարի անց հրաժարվում է այս որբանոցի տնօրենի պաշտոնից և հիմնում է որբ աղջկաների համար պատասպարան: Վախճանվել է 1939 թ. դեկտեմբերի 6-ին և ամփոփվել Հալէպի գերեզմանոցում (Ահարոն Շիրաջյանի մասին մանրամասն տես **Գալուստեան Գր.**, Մարաշ, Նիւ Եորք, 1934 (վրիտակ 1988), էջ 933: **Ազատեան Լ.**, Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելլոս, 1995, էջ 90-91: **Կիլիզեան Տ.**, Յուշամատենան Գերմանիկ Վասպուրականի եւ Մարաշի Հայրն. միութեան, Հալէպ, 1982):

տական ձեռով՝ աջը ձախ շարքով կը բերէի, կը յանձնէի ուսուցիչին, տնօրենին, դաստիարակին:

Մի ուրբաք մը առավօտ նորէն այսպէս կը բերէի, որբանոցի դրանը 100 քայլ մնացած էր, մէկ էլ տեսայ, որ արաք խուժանը սուրբերով, զենքով հայերուն ետեւէն կը վազէր սպանելու համար: Ես սուլիչով արագացուցի, վտանգը շատ մեծ էր, բոլորս ալ պիտի մոլորուէինք: Տղոց հնազանդելը բոլորին փրկեց, նրանց արագ ներս մտցուցի: Դուռը փակեց, ես եւ մի փոքր տղա դուրս մնացինք: Եթէ մեզ ալ ներս առնէին, ամբողջ հազարաւոր որբեր կը վտանգուէին: Փոքրիկին բռնեցի եւ միասին մեր դրան դիմաց՝ բաղնիքի մը դրան ետեւն պահուեցա: Ներսը լողացողներ դուրսի գնդակներու ձայնին դուռին մօտեցան հետզհետէ, արաքներ ըսին. «Այսօր ուրբաք օրն է, հայերուն ջարդուելիք որոշուած օրն է»: Մեզ տեսան, կամացուց կը խօսին, ըսին. «Մրանց գործն ալ մենք տեսնենք»:

Ես դարձան: Եթէ գիտնային, որ արաքերէն կը հասկնամ, հաւանաբար ժամանակ չի կորսցնէին: Ես տղուն նետեցի կենդանու աղբի կոյտի մը ակը, պատուիրեցի թաղուած մնալ: Դուրս եկայ: Փողոցի անկիւնը մի ուխտատեղի կար, ուղղուեցայ դէպի հոն, ուր տղաքը տարած-բերած ատենս միշտ շէխ մոլլա մը տեսնէի: Մինակ յոյսս, որ կա, դա էր: Ինձ տեսան, երկու կողմէս շտապեցին վրաս գալ, ես արդէն մօտն էի, ձեռքս շէյխին երկարցուցի, ըսի. «Տախիլաք» եւ արաքերէն բարձրաձայն գոռացի.

–Ես հայ չեմ, ես այսինչ պետեիի տղան եմ, զիս բռնի հոս բերած եմ, ազատեցէ՛ք ինձ:

Շէյխը չար նայուածք մը նետեց վրաս եւ գոռաց.

–Թողէ՛ք սա, կը ճանչնամ, միւսիկման է:

Վրաս եկողներէն միայն մէկը յամարձակեցաւ մօտենալ եւ շէյխին ըսաւ.

–Ո՛չ, այս կեանքով է, թողէ՛ք սպաննենք:

–Ո՛չ, թողէ՛ք ինձ, ես իմ յովանիին տակ կառնեմ, իսլամ է, եթէ չէ, վերջը ձեզ կը յանձնեն:

Այդ օրն ալ ազատուեցայ: Փոքր տղան ազատուեր էր հոտ պահուելով: Այդ օրուայ ջարդին հարիւրաւոր հայեր մեռան մինչեւ անգլիական զօրքերու երեսալը: Խոճան ինձ մտցուց բակը եւ ըսաւ.

–Ես քեզ կը ճանչնամ, դուն տղոց շեֆն ես եւ կեանքով ես: Քեզ խորհուրդ կուտամ, որ նորէն իսլամանաս:

Երբ ջարդը դադարեցաւ, դուրին առջեւ լիքը արաքներ կը պաստէին, որ ինձ մի կերպ անհետացնեն: Չգացի վտանգը եւ պատի մը վրայէն ցատկեցի, որբանոցի դրան հասայ: Հնդիկ զինուորներ որբանոցի դուռը կը պահէին: Մեր որբանոցի որբերը ազատուեցան մառանի թալանին երեսէն, ուսուցիչներս սպաննած էին, մեր շորերուն հսկող ծեր կնոջ մը թեւերը կտրած էին:

Մի օր որբանոցը իրենցիները սովորաբար փնտրելու եկողներէն մէկը սեբաստացի կին մըն էր, ինձ գտաւ: Երբ անուն-ազգանունս իմացաւ, ըսաւ.

«Եղբայրդ՝ Արամը, ողջ է, Ադանայի որբանոցն է: Ես պիտի վերադառնամ, կիմացնեմ»: Այդ սեբաստացի կնոջ շնորհիւ Արամէն երկու տող ստացայ, որով իր ողջ ըլլալն իմացայ: Որոշեցի, հակառակ բոլոր արգելքներուն, նրա մօտ գնալ: Անդրանիկ անունով սեբաստացի մի տղայի հետ գիշեր մը որբանոցէն փախանք, բեռներու վագօնի մը մէջ պահուր-տեցանք ու հասանք Ադանա: Երբօրս՝ Արամին, գտայ: Եթէ չեմ սխալիր, 1919-ին էր:

Հալէպում ուսուցիչս՝ Կարապետ Գաբրիէան, ինձ օգնեց: Տարաւ տօք. Արշակ Պօղոսեանին (սեբաստացի Պարոյրին տղան էր) մօտ, ինձ խնամեց, անսնունդ հետզհետէ սկսած էի տկարանալ. աչքերս խավարում էին, յոգնութիւն: Հոս էր, որ մեր տեսած ջարդերը գրած-տուած եմ Կարապետ Գաբրիէանին:

Ադանայի որբանոցն ինձ ընդունեցին տնօրեն Գուրգենը¹⁴ եւ Տեմիրճիպաշեանը: Մենք անպատմութեան նոր եկած էինք՝ մերկ, անօթի, անդաստիարակ: Դժուար գործ էր: 4000 որբեր լեցուցած էին որբանոցը: Մենք մեծերն էինք: Ուսուցիչներն իրար ուտել սկսան: Տարօրինակ երեւոյթներ տեղի ունեցան: Ես եւ մի քանի տղաքներ նկատեցինք, որ որբանոցի սննդեղէնը, հագուստեղէնը կիրաքնեն: Մեծերուս շատ լավ կը նայէին, փոքրերն էին, որ կը տուժէին: Ըմբոստացանք, մի քիչ ալ քաջալերուեցանք ուսուցիչ Երամեանի կողմէ: Ես ու մի ընկեր՝ Սահակ Ադամեան (Փարիզ մեռաւ) կազմակերպեցինք, եւ մի օր պայթեցաւ, կռուեցանք ուսուցիչներու եւ նրանց պաշտպանող պանակներու դէմ: Երբ գետին ինկած էի, ու ինձ զենքի կոթով կը հարածէին, ընկերներս միմեկի բայբուրոյցի Ոսկան Փոլատեան (Ամերիկա գնաց) խիզախօրէն նրանց ետեւից հարուածեց, զենքն ալ խլեց: Օդի մէջ գնդակներ յարձակեցին մեզ վախցնելու համար, բայց որբերը յարձակեցան, ուսուցիչները պահուեցան: Արդիւնքն այն եղաւ, որ մեզ՝ 9 հոգի գատեցին եւ տարին, բանտարկեցին: Մի օր ալ Չաւէն պատրիարքին¹⁵ հետ ուղարկեցին մեզ դէպի Պոլիս:

14 Բանասեր, քանդակագործ, լուսանկարիչ, ուսուցիչ քահանա Խաչիկ Գուրգենը ծնվել է 1866 թ. Վան քաղաքում: Դասավանդել է Հայոց Չորի Քյոշկ, Էջիսանիում, Խորզոմ գյուղերում, Վան քաղաքի Ամերիկյան վարժարանում: 1909 թ. Ազգային պատրիարքարանի կողմից նշանակվել է Կիլիկիայի որբանոցների ընդհանուր տեսուչ: Մեծ եղեռնի տարիներին տարագրվել է Հալեպ: 1919 թ. աշխատել է Բեյրութի Ամերիկյան Կարմիր Խաչի Անթուրայի որբանոցում: Նույն թվականին էլ նշանակվել է Ադանայի երկսեռ որբանոցի տնօրեն, «ուր հետզհետէ հասած որբերու թիւը բարձրացաւ աւելի քան հազար: ...Տեսնելով կուսակցական ունեւորութիւններ այս հաստատութեանը մէջ՝ գանեցայ եւ ընդունեցի Տարսնի Ամերիկեան Գուրգենի հրատերը»: 1923 թ. Դեթրոյթ քաղաքում ձեռնադրվել է քահանա: Վախճանվել է 1941 թ. (մանրամասն տես՝ Տեր-Սլարաշեան Ե., Գանձեր Վասպուրականի, էջ 509-514: Երամեան Հ., Յուշարձան, Աղեքսանդրիա, հ. Ա, 1929, էջ 445-448):

15 Պոլսոս պատրիարք Չավեն Տեր-Եղիայանը պաշտոնավարել է 1913-1916 և 1918-1922 թվականներին:



Արմենակ և Արամ Կյուրեղյանները Գատը գյուղի որբանոցում 1921 թ. (ձախից կանգնած առաջինն Արմենակն է, ձախից նստած երկրորդը՝ Արամը)

Մտանք Արամեան վարժարանին կից Գատը գիւղի որբանոցը: Հոս պարտք կը սեպեմ յիշել մի մեծ, շատ մեծ հայու՝ Ներսես Օհանեան Հայրիկին: 1920-1922 թուականներուն ամենաբարերար, ամենաազգասէր, ամենաազնիվն էր Օհանեան Ներսէս Հայրիկը: Համայն որբութիւնը նրան «Որբերու հայրիկը» կոչեց: Նա, իր տուն-տեղը, զաւակները մէկ կողմ թողնելով, որբերը որպէս իր հարազատ զաւակները կը խնամէր: Օր չէր անցնէր, որ Գատը գիւղ չի գար եւ չի հետաքրքրուէր: Պոլիս գտնուող բոլոր որբերը նրան յաւէտ չեն մոռնար:

Մի տարի Գատը գիւղի որբանոցը կարդացի, մի տարի ալ Կեդրոնական վարժարանը յաճախեցի: Եսայեան որբանոցն¹⁶ ալ մնացի:

1921 թ.-ի վերջերը եւ 1922-ի սկիզբերը Պոլիս մեր կացութիւնը սկսաւ վատանալ: Քեմալական շարժումն ուժեղացած է. պոլշեիները մէկ կողմէն, համաձայնական պետութիւնները միւս կողմէն ու-

ժեղացրին: Օրերու խնդիր է, որ Քեմալը Պոլիս հասնի, հայերը փախչել սկսան, որբերը փոխադրուեցան Հունաստան, Եգիպտոս:

Արամը Համբիկեան ընտանիքի հետ մեկնեցաւ Փարիզ, միշտ այն յոյսով, որ կրնա Ամերիկա անցնել:

Ես ալ մի օր օգնութիւն ստացա Համբար եղբօրմէս եւ այդ փողին շնորհիվ կրցայ գնալ դէպի Ֆրանսիա, անկէ ալ Ամերիկա երթալու յոյսով:

15 օր Յունաստան նաւերնիս սպասեց, այդ պատճառով Աթէնք եւ շրջակայքը ման եկա: 1922 թ. դեկտեմբերի 2-ին հասա Մարսէլիա եւ անցա Փարիզ: Եղբայրս՝ Արամը, գտայ, եւ միասին ապրեցանք: Երկուքս մնացեր էինք, երկուքիս ճակատագիրը նոյնն էր: Մեր մէջ խտրութիւն չի կար, ինս քուկը չի կար: Միասին էինք տառապել, անցել Գողգոթայի ճամբան:

¹⁶ 1895 թ. եղբայրներ Հովհաննէս և Մկրտիչ Եսայանների նյութական աջակցությամբ կառուցվում է «Եսայան» անունը կրող երկսեռ վարժարանը (**Թորգոմեան Վ.**, Ծանոթագրութիւնք Ստամպուլի պատմութեան Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, «Հանդէս ամսօրեայ», 1929. էջ 239-240:



ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈՒԹԻ ՓՈՍՏԱԼՁՅԱՆ
(1903 -1961)

Համառոտ կենսագրություն

Երվանդ Հակոբի Փոստալյանը ծնվել է 1903 թվականին Կիլիկիայի Հաճըն քաղաքում:

Հայրն էր Հակոբ Ստեփանի Փոստալյանը, որը Հաճընի Յազըլ թաղի պաշտպանության ղեկավարներից էր: Չնհվել է 1908-1909 թթ. կռիվների ժամանակ:

Ուներ մի եղբայր և երկու քույր:

Գաղթի ճանապարհին մահանում են Երվանդի մայրը, պապն ու տատը: Եղբայրը՝ Ստեփանը, փրկվում է կոտորածից, ապաստանում Բեյրութում:

Հոր մահից հետո մայրը Երվանդին տանում է նախ Հաճընի որբանոց, որտեղից էլ նրան տեղափոխում են Ադանայի որբանոց: Այնուհետև Երվանդը հաստատվում է Կ.Պոլսում, հետո Բեյրութում, որտեղից էլ փոխադրվում է Աթենք:

1928 թ. Աթենքում ամուսնանում է իզմիրցի Լուիզա Հովհաննեսի Աբրահամյանի հետ (ծնվել է 1911 թ.): Նրա հայրը մահացել էր չարչարանքներից՝ անպաշտպան թողնելով չորս զավակներին:

Երվանդն աշխատում է Աթենքի գարեջրի գործարանում, իսկ երեկոյան տաքսի է վարում: Ի դեպ, ի հիշատակ իր տատիկի՝ հաջի Գոհարի և քույրերի՝ դուստրերին կոչում է նրանց անուններով (Գոհար, Արշալույս՝ հորական տատիկի անունն է, Պերճուհի և Մարիամ):

1932 թ. Երվանդ Փոստալյանն ընտանիքով հաստատվում է Երևանում:

1933 թ.-ից մինչև կյանքի վերջը Երվանդն աշխատում է որպես անձնակազմի վարորդ:

Մասնակցում է Երկրորդ աշխարհամարտին:

1947 թ. Եգիպտոսից հայրենիք է վերադառնում Երվանդի քեռին՝ գրող Հովհաննես Ուզունյանը:

Երվանդ Փոստալյանը վախճանվել է 1961 թվականի մարտի 1-ին, իսկ կինը՝ 1971 թ.:

Նրա հուշերը գրի է առել և մեզ փոխանցել դուստրը՝ Արշալույսը. «Հայրս սիրում էր իր դրախտավայր Հաճընը, որտեղ ծնվել էր: Օր չկար, որ չպատմեր ծննդավայրից: Անսահման ուրախ էր, երբ հանդիպել էր իր որբանոցի ընկերոջը՝ Գևորգ Էլեգյանին: Մեր հողամասից որոշ մաս էր նվիրել հաճնցի Միսակ Պահատրյանին, որը և տուն կառուցեց մեր հարևանությամբ: Նոր տարին միշտ հաճնցիներով էինք տոնում: Ծնողներս միշտ հայրենասիրական երգեր էին երգում»:

ԲՆԱԶՆՁՄԱՆ ՎՇՏԻ ՀԵՏ ՄՏԵՐՄԱՅԱՎ ՀՈԳԻՍ...

Հաճնցի 1600 որբերից մեկի ճակատագիրը

1908 թվական, ի՛մ Կիլիկիա:

1908 թվական, Մուլթան Համիդի մասսայական կոտորածը Կիլիկիա, Ադանա և Հաճըն քաղաքներում:

Հաճըն, ի՛մ ծննդավայր: Մեպտեմբերի մի խուլ օր թուրքերը սև ամպի պես պատեցին լանջերը: Քաղաքացիները, խուճապի մատնված, պատրաստվում էին ինքնապաշտպանության և դիմադրության: Հորս՝ Հակոբ Ստեփանի Փոստալոյանին, նշանակել էին Յազլիի շրջանի պաշտպանության պետ: Թշնամին հարձակում գործեց բոլոր թաղերից: Քաղաքն ինքնապաշտպանության դիմեց: 28 օր հերոսաբար անընդհատ կռիվ էր գնում: Մի հրաման արձակվեց. «Ժողովուրդը Յազլիի թաղից քաղաքի խորքը քաշվի»:

Գիշեր էր: Մայրս, մեծ եղբայրս ու քույրերս գնացին Վերին թաղ՝ մեզ ցույց տված մի մեծ տուն: Բակում նշանակել էին հսկիչներ և զինել էին որսորդական զենքերով, ով ինչով կարող էր կռվել:

28 օր մարտնչելուց հետո հանկարծ սարի լանջից սպիտակ դրոշով երկու թուրք զինվոր-պատգամավորներ եկան մեր դեկավարների մոտ և ասացին. «Մուլթան Համիդը գահընկեց եղավ, կեցցե՛ Մուլթան Ռեշատը: Ազատություն բոլորին: Կրակը դադարեցրե՛ք, թո՛ւյլ տվե՛ք, որ թուրք զինվորները մտնեն Հաճըն»։ Բայց մերոնք թուրքերին չհավատացին ու թույլ չտվեցին՝ ասելով. «Միայն թույլ կտանք այն պայմանով, որ Մահակ կաթողիկոսը Սսից գա ու մեզ հետ պայման կապի թե՛ մեր կողմից, թե՛ Բոսֆորի կողմից»: Կրակոցներ համարյա չէին լսվում: Երեք օր հետո թուրք զինվորները շրջապատել էին Հաճընը:

Մահակ կաթողիկոսը, թուրք սպաներով շրջապատված, սպիտակ դրոշով, Մսի ճանապարհով մտավ Հաճըն՝ գոռալով. «Կեցցե՛ հայրենիք»: Եկեղեցու զանգերը տվեցին: Ողջ ժողովուրդը հավաքվեց եկեղեցում՝ Մահակ կաթողիկոսին լսելու: Խաղաղություն քարոզեցին: Մարդկանց ձեռք չտալու պայմանով մեր դեկավարները զինաթափ չեղան: Թուրք զորքը մտավ Հաճըն:

30-40 զոհվածներից մեկն էլ հայրս էր: Թուրք զորքերի գալուց հետո շատ հայեր ձերբակալվեցին՝ մոտավորապես 60-70 հոգի: Տեղի հաճնցի թուրք 40 ընտանիք մեզ հետ կռվում էր թուրքերի դեմ: Հաճընում 30 տեղացի թուրքերի ևս ձերբակալվեցին: 90 գյուղեր թուրքերը կոտորեցին ու թալանեցին: Դուրսը շատ վատ էր: Մև զիշերից մնացած հալածված հայերը 1-ից մինչև 5-6 տարեկան երեխաներին հավաքում ու բերում էին Հաճըն: Քաղաքի դի-

մացի սարի լանջի վանքում 360 որբ մանուկներ հավաքվեցին: Մայրս, որ իր չորս երեխաներով ծանրաբեռնված էր, ինձ և փոքր քրոջս տվեց որբանոց:

Առաջին օրն էր: Կլինեի 4-5 տարեկան: Չէի ուզում մնալ որբանոցում: Տղաներն առանձին էին, աղջիկները՝ առանձին: Քույրս, որ ինձանից մեծ էր երկու տարով, զբոսանքի ժամանակ երեխաների մեջ ինձ էր փնտրում ու գրկում, արտասվաթոր նայում առանց խոսելու... Ճաշի ժամանակ ամանների պակասություն էր: Վեց երեխա մի թիթեղյա ամանով էին ճաշում: Կային նաև 170 վիրավոր որբեր՝ գյուղերից եկած, այրված, վիրավոր:

Ամերիկյան և հայկական մեր որբանոցում մնացինք վեց ամիս: Կոստանդնուպոլսից ուսուցիչներ եկան Հաճըն՝ կիլիկիացի որբերի հավաքի համար: Կիլիկիայի որբանոցի տնօրենն էր Վահագնը¹ ու միաժամանակ որբերի սրբազան հայրը: Եկան՝ բոլոր որբերին տանելու Կիլիկիայի կենտրոն՝ Ադանա:

Շատերն իրենց ազգականների հետ երեխաներին չէին թողնում տանել Ադանա: Եկան նաև մայրս ու եղբայրս, քրոջս վերցրին ու տուն տարան: Ինձ վիճակվեց գնալու:

Առավոտ էր, երբ որբերին պետք է տեղափոխեին Հաճընից:

Մեր ճանապարհը շատ դժվար էր: Տավրոսյան լեռնաշղթայով ու անտառներով դեպի Միս ու Ադանա, որոնք մույնիսկ սայլի ճանապարհ չունեին: Բայց հետո կազմակերպվեց քարավան: Պատրաստվեցին ձիեր ու ջորիներ, ամեն մի ձիու վրա՝ երկու քթոց, ամեն մի քթոցի մեջ՝ երկու երեխա: Մի մեծ հասակով ձիու թամբի վրա 3-5 երեխա: 230 երեխաներից քարավան կազմվեց: Մայրս ու եղբայրս եկան մեզ ճանապարհի դնելու: Բաժանվելը դժվար էր: Ամբողջ քաղաքը թափվել էր մեզ ճանապարհելու: Ազգական ունեցողները եկել էին հարազատ երեխաներին համբուրելու: Լաց էին լինում:

1 1910-1914 թթ. Ադանայի հայկական որբանոցի տնօրենն էր Վահագն Տաթևյանը. «...Ատանայի որբերուն համար ճեմնալ Պէյ, Կեդրոնական կառավարութեան մասնատր արտօնութեամբ եւ դրամական յատկացումով, որբանոց մը շինել կու տայ, Միհուն գետի Պերլին-Պաղտատ երկաթուղագիծին համար կառուցուած երկաթեայ կամուրջին մօտը, արդիական սարքատրումով, 400-ի չափ երկսեռ աշակերտներու համար: Տնօրէն կը հրափրէ Պոլսէն իրեն ծանօթ եւ կուսակցական Վահագն, «Տիպար անկեղծ հայրորդի մը», որ սակայն 1915-ի տեղահանութեանց ատեն, ի շարս այլ անմեղ հայերու՝ Ատանայի Ձիւնուորական Ատենի կողմէ կախաղան պիտի հանուէր...» (Ատանայի հայոց պատմութիւն, խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 306):



Ադանայի որբանոցի տնօրեն Վահագն Տաթևյանը

Իմ հարազատներից բաժանվելն ինձ համար հավետ մենություն էր: Շարված քարավանը գրկախառն համբույրներով ճամփա ընկավ: Հաճնցիները ցածրաձայն ասում էին. «Գնացե՛ք, ուսու՛ն առե՛ք, հայրենիքին պիտանի մա՛րդ դարձե՛ք, գնա՛ք բարով, մնա՛ք բարով»:

Հեռանում էի իմ ծննդավայրից, չէի գգում, որ բաժանումը վերջնական է: Հեռացա՝ հետ նայելով, իմ սարերի պատկերը սրտում: Մեր գլխավոր կառապանը՝ Կամբես եղբայրը, Հաճընի սիրված կառապաններից էր: Նոր էինք դուրս եկել Հաճընից, երբ ջորիներն առաջ քաշելով՝ նա երգում էր.

«Կոտորածն անգութ,
Հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,
Միայն ապրեցավ Հաճընը սիրուն,
Ինչու չչարժեր ապառաժներուն»:

Դադարեցնելով երգը՝ աջ ու ձախ ջորիների թամբին նստող հասակավոր երեխաներին հուշում էր. «Հասնում ենք, զավակներս, աշխու՛յժ եղե՛ք, ձեզ նայե՛ք, վատ չլինե՛ք»: Իրիկունները ձիերն ու ջորիները հոգնած էին լինում: Հանգստանալու ժամ էր: Ձիերն արձակեցին: Մեզ թրոցներից հանեցին ու կե-

րակրեցին ոչխարի հոտի նման ջրի մոտ՝ կանաչ մարգագետնի վրա: Կողք կողքի քնեցինք: Առավոտյան լույսը չբացված՝ մեզ արթնացրին ու նույն թրոցների մեջ նստեցրին: Հսկողությունը լավ էր: Քարավանը ճամփա ընկավ:

Ես արթուն էի: Ջորիների զանգերի ձայնն ինձ հիշեցրեց մեր ընտանիքը, երբ զարնանը միասին այգի էինք գնում: Սիրտս տխուր էր... Ես հուզված լաց էի լինում ու մրմնջում: 230 որբերով ո՞ր ենք գնում: Իմ լացը լսելով՝ իմ ընկեր Նիկողոսը նույնպես լալիս էր: Չանգերի անուշ ձայնից մեր բունը տարավ: Կես քնած մեր քարավանը շարունակում էր գնալ: Հեռանում էինք: Կորչում էին անտառապատ սարերն ու ձորերը: Մեր առաջ բացվեց լայնատարած դաշտը, որն ինձ համար օտար էր: Երեկոյան հասանք Սիս: Լևոնաբերդի լանջերին քարավանը կանգ առավ: Ձիերին արձակեցին: Մի 10-15 տեղ կլորածև նստեցինք ու ճաշեցինք: Եկան ստեղի շատ հայեր: Սայլով խաղող բերեցին ու բաժանեցին:

Որբանոցի տնօրեն Վահագն հայրիկն ընդունեց ստեղի 27 որբ մանուկների: Մի գիշեր մնացինք: Մեր հետևում թողեցինք մեր ուրախ սարերն ու անտառները: Պտղատու նարինջներով պատված ճանապարհով հասանք Ադանա: Ադանան այսպիսի մեծ բազմությամբ քարավան չէր տեսել: Խանութների ու պատշգամբների պատուհաններից թուրքերը մեզ էին դիտում: Քաղաքի փողոցները դեռ քարերից ու փլատակներից մաքրված չէին²: Քաղաքը ռմբակոծության էր ենթարկվել: Տեղ-տեղ ծխում էր: Առաջանալով դեպի կենտրոն՝ մեզ ցույց տվեցին Հայոց եկեղեցին, որից միայն զանգակատան մի սյունն էր մնացել: Հրդեհից կես փլատակ էր դարձել:

Մեզ տարան ընկույզի շուկա, որը մի մեծ քարվանսարա էր, որտեղ էլ մեզ տեղավորեցին և դռները փակեցին: Մեզ ստուգելու համար պաշտոնյաներ եկան և սալաներով հաց բերին, մեզ կերակրեցին: Քարվանսարան լայն տարածություն ուներ՝ չորս քառակուսի հեկտար շրջագծով, երկհարկանի պատշգամբով: Առավոտյան դեռ հացը չստացած՝ դռան առջև մի մեծ բազմություն հավաքվեց: Աստված իմ, 500-600 մանչ ու աղջիկ մանուկներ՝ Ադանայի կոտորածի որբեր...

Անցավ հինգ օր: Ամերիկյան, ֆրանսիական, իտալական հյուպատոսարաններից գալիս ու գնում էին մեր բախտը որոշելու:

Չեմ կարող ճշգրիտ թվականներով հիշել եղած դեպքերը, բայց կարծեմ 1909 թ. զարունն էր³: Երեկոյան մայրամուտին՝ դեռ հաց չկերած, Ադանայի՝ մի քանի օր առաջ կատարած թալանից չբավարարվելով, թուրքերը երկրորդ անգամ հարձակում գործեցին: Ամբողջ գիշեր կոտորում էին հայերին: Չեն-

² Խոսքը վերաբերում է Ադանայի առաջին ջարդին՝ 1909 թ. ապրիլի 1(14)-4(18):

³ Ադանայի երկրորդ ջարդը 1909 թ. ապրիլի 12(25)-13(26)-ին էր:



ՀԱՃՆՆ. քաղաքի տեսքը 1900-ական թթ.

քի ձայնը և կրակի բոցերը բռնել էին ամբողջ քաղաքը: Գիշեր էր, երբ որբերի տնօրեն Վահագն հայրիկը կանչեց 20-30 ուսուցիչների՝ քարվանսարան պաշտպանելու: Դռների ետևից ամրացրեց գերաններ: Գոռում էր. «Արշակ, Միսակ, Տիգրան, կտուրները հսկեցե՛ք»: 5-6 հատ հրացան ունեին՝ ի պաշտպանություն քարվանսարայի: Դռան վրա կախեցին սև դրոշակ: Ուսուցիչները գոռում էին. «Հրապարակներից քաշվե՛ք պատշգամբների տակ, դրսում ոչ մի երեխա չմնա՛»: Մեծահասակ որբերը մեզ հանգստացնում էին՝ ասելով. «Ոչ մի ձայն, նստե՛ք տեղերում, ով որ ձայն հանի, դուրս կհանենք»:

Դրսում թուրքերը հայեր էին փնտրում՝ սպանելու համար: Մի երկու հարձակում եղավ քարվանսարայի վրա: Ջենքի պատասխանը թույլ չտվեց մեզ վնասելու:

Ահ ու սարսափ էր...

Հսկիչներն անդադար քարվանսարայի մի ծայրից մյուսն էին վազվզում: Ասում էին. «Չորքերը գալիս են հայերին փրկելու», այնինչ թուրք զորանոցը քաղաքից մեկուկես ժամ հեռու էր գտնվում: Մեկուկես ժամվա ճանապարհը գորքը մեկուկես օրում հասավ քաղաք...:

Մի քանի ժամ հետո մերոնք զենքերը վայր դրին և սպասեցին: Առավոտյան հանդարտության հետ քարվանսարայի դուռը բացվեց, չորս զինված թուրք

սպաներ մերս մտնելով դուռը փակեցին: Վահագն հայրիկի հետ խոսելուց հետո ասացին. «Դուռը բաց չանեք, մինչև մենք չլինենք», – ու գնացին:

Քարվանսարան ջրհոր ուներ, ծարավ չէինք, բայց քաղցածությունը մեզ տանջում էր, մանավանդ չհասկացող մանուկներին. «Հա՛ց, հա՛ց, մամա ջան»:

Գիշեր էր: Չեմ հիշում՝ ում և ինչ հրամանով երկու սայլ հաց բերեցին ու բաժանեցին 750 մանուկներին: Միանգամից շատ չտվեցին: Գիշերը խաղաղ անցավ: Առավոտյան խաղաղություն էր: Նորից հյուպատոսարանից եկել էին զանազան մարդիկ ու տերտերներ՝ իբր մեզ խնամակալելու և սայլերով 1-7 տարեկան որբ աղջիկներ ու տղաներ բերել: Անընդհատ բերում էին, դարձանք 1600 հոգի:

Խաղաղության հինգերորդ օրն էր: Երեկոյան մթին մի խումբ հարբած թուրքեր մոտենում են քարվանսարայի դռանը, վիճելով դռնապանի հետ՝ նրան դաշույնով հարվածում և ներս են մտնում: Հարբած թուրքերի ձեռքերում երկար դաշույններ կային... մինչև հսկիչների հասնելը հարբած թուրքերը հարձակվում են մեզ վրա: Աջ ու ձախ շարժելով թրերը՝ խփում էին որբ մանուկներին, ոնց որ գայլն ընկնի գառնուկների հոտին:

Հասավ տնօրենն իր հսկիչներով, դռները փակելով՝ օդում կրակեց: Թուրքերը զենք չուներին: Վա-



Փոստալքյան ընտանիքը 1904 թ. (առաջին շարքում ձախից առաջինը հուշագրի մայրն է՝ Ուզունյան Արշալույսը, երկրորդ շարքում ձախից առաջինը հուշագրի հայրն է՝ Հակոբ Փոստալքյանը, նույն շարքում ձախից չորրորդն ու հինգերորդը հուշագրի պապիկն ու տատիկն են՝ Ստեփան և Գոհար Փոստալքյաններ, պապիկի գրկում հուշագիր Երվանդ Փոստալքյանն է՝ մեկ տարեկան հասակում)

հագն հայրիկը հարբած թուրքերին վրա տվեց: Մի թուրք սրով հայրիկի վրա հարձակվեց: Հայրիկը ատրճանակով հարբածի գլխին խփեց ու սպանեց: Թուրքերին զինաթափ դուրս հանեցին: Մեկի դիակը մնաց: Ոստիկաններից եկան, հարցուփորձ արեցին ու դիակը տարան: 13 որբեր ծանր ու թեթև վիրավորվեցին: Ինձ հետ մի քթոցի մեջ նստած, աջ ձեռքից անդամալույծ Հովհաննես Ջախիճյանը գլխից ու ոտքից վիրավորվեց: Ստացած ծանր վերքերից երեք հոգի մահացան:

Մեր դրությունը ողբալի էր, սովը, կեղտը, ոչիլը մեզ խեղդում էին: Քաղաքի ոստիկանները տարան մաս մեր ուսուցիչներ Արշակին ու Ավետիսին: Չվերադարձան...

Կաթողիկոսն ու երկու տերտերներ որբերի մեջ գտումներ էին անում: Ջոկեցին 800-900 որբերի: Ով աշխույժ էր, ով կարող էր քայլել, զույգ-զույգ շարեցին 30-33 շարքերի մեջ: Մնացած փոքր մանուկներին սայլերի մեջ լցնելով՝ քարվանսարայից դուրս եկան: Մեր առաջնորդներն էին Վահագն հայրիկն ու մի տերտեր: Գնում էինք կառավարական տուն՝ բողոքի: Սայլերն առաջ էին շարժվում՝ սև դրոշակը տերտերի ձեռքին: Թուրքերին գրված մեր լուսնագն էր. «Մեր մայրերին ու հայրերին սպանեցիք, կա՛մ հաց տվեք մեզ, կա՛մ Սիհուն գետը մեզ թափեք»:

Գնում էինք շուկայի միջով: Թուրքերը, ալլահ-ալլահ ասելով, մեզ էին նայում: Մենք լուռումուռջ գնում էինք բողոքի վայրը: Մտանք Մերայի լայնատարած հրապարակը, հավաքվեցինք Վալի փաշայի պատշգամբի առաջ: Մեծ բազմություն էր: Վալի փաշան, պատշգամբ դուրս գալով, բարձր ձայնով հարցրեց. «Մանուկներ, ի՞նչ եք ուզում»: Միաբերան ձայնակցեցինք գրված լուսնագները: «Հիմա ձեզ կպատասխանեն»,– ասաց Վալի փաշան ու ներս գնաց: Դուրս գալով հայտարարեց. «Ես իմ կողմից չեմ կարող օգնել առանց Ստամբուլի Ռեշատ թագավորի թույլտվության: Այս րոպեին հեռագիր կուղարկեմ, համբերե՛ք, ձեզ կպատասխանեն»: Շոգ էր ու արև: Խույժ-խույժ նստած հողի վրա՝ սպասում էինք մեր բախտի հրահանգներին ու սուլթանից եկող հեռագրին: Երեկոյան մի զինվորական փող հնչեց, և մենք ոտքի ելանք: Վալի փաշան պատշգամբից բարձր ձայնով ասաց հեռագրի պատասխանը. «Ազատություն մանուկներին: Գոռացե՛ք՝ կեցցե՛ սուլթան Ռեշատը, կեցցե՛ սուլթան Ռեշատը»: Երեք անգամ գոռալույց հետո Քարդա որբանոցին հանձնեցին 1600 որբերի խնամակալությունը: Ջեմալ փաշայի կողմից Վահագնին ընտրեցին տնօրեն: Որբանոցն անվանեցին Ջեմալ փաշայի անունով: Վահագն հայրիկը և Ջեմալ փաշան

միասին ավարտել էին Ստամբուլի բարձրագույն դպրոցը:

Մեզ ասացին. «Այս բուպեից ուժի մեջ է ձեզ կերակրելը»:

Մերայի գորանոցի խոհանոցից թիթեղյա դուլլերով ու տաշտերով բրնձով փլավ բերեցին ու բաժանեցին տասը հոգու մեջ: 300 գրամ հաց տվեցին: Առանց գդալի, ձեռքերով կերանք, ու մեզ տարան նախկին տեղը՝ քարվանսարա: Խնամքը լավանում էր. իրեր, ուտելիքներ: Մեզ համար աշխատող, տուն չունեցող կանայք, մայրիկներ մեր շորերը վերցրին ու մեզ լողացրին: Հագնելու շոր չունեինք: Ամբողջ ձմեռ աղջիկ ու տղա սպիտակ վարտիքով ու շապիկով էինք քարվանսարայի վրանների տակ, սեռյակներում ու պատշգամբներում:

Մի տարի հետո մեզ համար նախատեսված Ձեմալ փաշայի նոր որբանոցը պատրաստ էր: Քաղաքից երկու ժամ հեռու՝ այգիների մեջ, 1600 որբերի համար հարմարություններով բետոնե մի նոր շենք էր:

Գասագրքեր չունեինք: Մեր տնօրենը կապեր ուներ Պոլսո պատրիարքարանի հետ, ու ստանում էինք ամեն տեսակի գրքեր: Մեզ դասավանդում էին նախ թուրքերեն, հետո միայն հայերեն: Մեր դասատուների մեջ կային նաև թուրք դասատուներ:

Մեր կյանքը լավացավ: Մահճակալներով ու սեղաններով դասարաններում, խմբերի բաժանված, կրթության դասեր էին ավանդում: Լավ էր, միայն թե իմ սրտում վախ կար իրիկունները քնելուց:

Ես փողի ձայն չլսելու համար վերմակը քաշում էի գլխիս և սուսուփուս լաց էի լինում:

1910 թվական: Մեկուկես տարի էր անցել. Հաճընից ոչ մի տեղեկություն: Կարոտել էի մայրիկիս, անչափահաս քույրերիս և եղբորս: Ծնողի հանդեպ ունեցած սերն ինձ տանջում էր ամեն բուպե: Ասացին, որ Հաճընից քարավան է եկել: Կամբես եղբայրը շատ նամակներ ու թեթև ծանրոցներ էր բերել: Գնացի դեպի պահակատուն: Կամբես եղբայրը մեր գավառական լեզվով նամակներ էր կարդում ու տալիս մանուկներին, ուրախացնում: Ես, վիզս ծռած, նայում էի Կամբես եղբորը ու լուռ էի: Մանուկները կրկնում էին. «Բա ինձ նամակ չկա՞, Կամբես եղբայր»: Կամբես եղբայրը մարդու հանդեպ մարդ էր և որբերի հետ շատ էր կապված: Ասում էր. «Չագուկներս, մյուս անգամ ձեզ նամակ կբերեմ, նամակ տվե՛ք, տանեմ, ձեր ազգականներից նամակ չկար»:

Անցան ամիսներ: Ուզունյան Հովհաննես քեռիս եկավ ինձ տեսության: Գոնապանին ասել էր, որ ինձ կանչեն: Ինձ ասացին, որ քեռիս է եկել, գնամ դոնապանի մոտ: Գնացի: Ես իմ քեռուն չէի ճանաչում: Մի քանի մարդ կար նստած: Նայեցի աջ ու ձախ, մի քիչ սպասելուց հետո ուզում էի վերադառնալ, հանկարծ ինձ գրկեց: Չէի խոսում, կարծես խռովել ու լաց էի լինում: Ինձ տանձ ու սալոր էր բերել: Ասում էր. «Կեր, տղա՛ս»: Բայց ես ասում էի.

«Ինձ մամայիս մոտ տա՛ր»: Մի ժամ մնալուց հետո ինձ համոզեց ու գնաց:

Անցան օրեր: Աշուն էր: Առավոտյան քարավանը եկել էր: Վազելով շրջապատեցինք Կամբես եղբորը: Նա իր խուրջիններից հանեց նամակները, կարդում էր ու մանուկներին քաջալերում, մխիթարում: Հետո հանկարծ կարդաց իմ անունը՝ Երվանդ Փոստալյան: Իմ հագին աղջկա շորեր էին: Ես մոտեցա:

– Ես եմ, ես:

Նայեց ինձ ու ասաց. «Բալե՛ս, դու աղջիկ ես, այս նամակը տղայի նամակ է:

– Անունս Երվանդ է,– ասացի ես:

– Թո՛ղ մորդ ասածը անպայման կատարեմ, քեզ համբուրեմ:

Հետո մի նամակ տվեց ու մի չորս կիլոգրամանոց ծանրոց: Նամակի պատասխանն ուզեց անպայման: Բայց ես յոթ տարեկան չկայի և գրել չգիտեի: Գոնապանին խնդրեցի երկու տող նամակ գրել: Գոնապանը հարցեր էր տալիս՝ ի՞նչ գրեմ: Ես հուզված ու լացելով ասացի.

– Ինձ էլ տարե՛ք իմ մամայի մոտ:

Կամբես եղբայրը, նամակները հավաքելով, գնաց: Բացեցի նամակն ու կարդալ տվեցի: Մխիթարանքի խոսքեր ու համբույրներ էին: Ծանրոցի մեջ մի կիլոգրամանոց տոպրակ էր, տոպրակի վրա քույրերիս անունն էր գրված առանձին՝ Մարիամ, Պերճուհի: Մնացածը չիր, չամիչ ու սուջուխ էր:

Գպրոցի ընդհանուր լեզուն թուրքերենն էր: Ես թուրքերեն չէի խոսում:

Անցան տարիներ: Ոչ մի նամակ իմ ծնողից:

1914 թվական: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց: Մեզ հայտնեցին, որ Հաճըն քաղաքը զինաթափ է արված, և 2500 մարդկանցից ոչ մի մարդու տեղում չեն թողել, տեղահան են արել՝ առանց փոխադրամիջոցի: Անցավ մի քանի ամիս: Հալածանքի հերթը հասավ որբանոցին: Մի օր որբանոցի վրայով անցան անգլիական ու ֆրանսիական ռմբակոծիչ ինքնաթիռներ և Ադանայի Միհուն գետի երկաթե կամուրջը ռմբակոծեցին: Օրեցօր շարունակվում էր գործարանների ու մեծ շենքերի ռմբակոծումը: Մեր որբանոցը, որը գտնվում էր կալարանի մոտ, աչքի էր ընկնում իր մեծությամբ: Որբանոցը ռմբակոծումից փրկելու համար որբերի տնօրեն Վահագն հայրիկը, ի պաշտպանություն որբերի, ռմբակոծումից փրկելու համար որբ մանուկներին իր թևերի տակ առնելու մի միջոց գտավ: Որբանոցի տանիքի վրա 20 քառակուսի մետր ցուցատախտակ ամրացրեց՝ եռանկյունաձև կիսված, սև ու սպիտակ ներկով՝ ի նշան սգո:

Չմեռ էր, Նոր տարի, ցուրտ էր որբանոցում: Գիշերը մի երկու կրակոցի ձայն լսվեց: Մենք բակ վազեցինք: Թուրք 12 ոստիկաններ մեր պահակին հրամայում էին ենթարկվել: Թուրք ու հայ բոլոր ուսուցիչներին դահլիճ տարան: Լուսաղեմ էր: Մեզ

տանում էին թուրք ոստիկանները Վահագն հայրիկի ու չորս ուսուցիչների հետ միասին: Դուռը բացվեց, որբերը ոստիկանների հետ փողոց թափվեցին: Լացով, աղաղակով ճանապարհ ընկանք: Մանուկներն անընդհատ գոռում էին. «Ո՞ր եք տանում իմ հայրիկին»:

Կարծես ճնճողուկի բնին ահաբեկիչ օձեր էին ընկել: Ճչալով աջ ու ձախ էին վազում: Ոստիկանները երեխաներին մտրակում էին՝ ասելով. «Գյավուրներ, ե՛տ դարձեք»: Հայրիկը մեզ համոզում էր. «Միբլեի՛ երեխաներ, ե՛տ գնացե՛ք, մենք շուտ կվերադառնանք»: Հայրիկի ձայնը մեզ ավելի էր մղում առաջ: Ոստիկանները ճարահատյալ մտրակելը դադարեցրին: Մոտ 350 տղա և աղջիկ, հետևներից ընկած, գնացինք, հասանք Մերա:

Առավոտ էր, արև:

Կես ժամ չանցած՝ հայրիկին ու ուսուցիչներին ազատ արձակեցին: Մենք՝ մանուկներս, ուրախացանք: Մեզ շարք կանգնեցրին: Վերադարձանք որբանոց:

Անցավ հինգ, վեց օր: Ցերեկվա ժամ էր: Եկան երկու ոստիկաններ ու նորից տարան մեր հայրիկին: Հարցումորձից հետո բաց էին թողել ու նորից վերադարձրել որբանոց:

Որբանոցում համարյա դասավանդություն չէր լինում: Երեկոները բոլոր ուսուցիչները հավաքված որոշումներ էին ընդունում: Ասում էին. «Հայրիկ, փախչենք Տավրոսյան լեռներ ու Ռուսաստան, թե չէ, եթե ես մեռնեմ, ձեր վիճակն ինչ կլինի, հետագայում դուք կին ու երեխա պիտի ունենաք, չէ՞»:

Երկու օր հետո տնօրեն Վահագն հայրիկին հենախոսով կանչեցին Մերա:

Գնաց ներկայանալու և էլ չվերադարձավ որբանոց: Նրան 1915 թվականի փետրվարին բանտարկեցին:

Տարան նաև 32 հայ ուսուցիչներին:

Փետրվարի ցավալի մի օր դպրոցի զանգերը տվեցին: Աղջիկ ու տղա հավաքվեցին բակում՝ հավաքման սովորական տեղում: Կուպիտ, փորով, գեր ու տարիքով մի մարդ, ֆեսը գլխին, ամբիոն բարձրացավ ու մեզ թուրքերեն ասաց.

–Բարև, երեխանե՛ր, դուք գիտեք, որ պատերազմ է: Մենք պետք է մեր թշնամուն ոչնչացնենք: Թուրք ազգը գյավուրներից հարյուր տարով հետ է մնացել: Մենք պետք է արվեստով ու տեխնիկայով նրանց ջարդենք ու պատերազմը հաղթելով՝ հասնենք ու անցնենք: Չեր տնօրենը ես եմ: Այլևս ձեր դավաճան Վահագնը հետ չի դառնալու: Դուք պետք է իրավացի թուրքի կրոն ընդունեք: Բախտավոր է այն մարդը, որ թուրք է...»:

Երկրորդ օրը մեզ տարան ու առաջարկեցին թուրք լինել, կրոնն ու անունը փոխել:

Կրոնս հավատ էր, ես չէի կարծում... ով որ հուսահատվեր, կորած էր... անունս փոխեցին, դրեցին Մահմեդ Օղլի:

Տարիքս հաշվով համար գրեցին: Մենք՝ որբերս, մեր անունները չմոռանալու համար թղթերի վրա գրված մեզ վրա էինք պահում:

Հայությունը վերացավ որբանոցից: Մենք նոր անունները մոռանում էինք: Իսկական հայի անուններ՝ Վարդան կամ Տիգրան լսելով՝ թուրք որբերն իսկույն հայտնում էին մոլլաներին: Մեզ կանչում, հինգ օրով բանտարկում էին: Մեր որբանոցում կային իրենց անունն ու դավանանքը չփոխածներ: Նրանց տանում էին ներքին հարկ, ծեծից մեռած դիակներ էին ցույց տալիս ու ասում.

–Եթե թուրք չլինեք, ձեզ էլ այդպես շանսատակ կանենք:

Թուրք տնօրենը Ադանայի «Ավետիս» թերթին հայտարարություն տվեց. «Հայտարարություն. հայտնում ենք այն ազիզ թուրք հավատացյալներին, որ, հանուն Մուհամմեդի, Ջեմալ փաշայի որբանոցի 1400 մայր, հայր չունեցող որբ տղաներին ու աղջիկներին ալլահին տված վարձք համարեցեք ու հայ տղաներին գրվեք էիովել լինելու (թլպատում)»:

Գալիս էին թուրք մարդիկ ու խանութներ, նախ և առաջ երեխաներին բաղնիք տանում, շան կեղտով լվանում, որպեսզի հայության մեռածից ու կրոնից դուրս գան, հետո դառնան իսկական թուրք: Հետո կնքահայրը գրկում էր երեխային, իսկ քիլվեն դիոյ, գուռնայի հնչյունների տակ թլպատում էր: Ոմանց տանում էին հոգեզավակ: Ամենամոտ ընկերներով այս անմարդավայել թլպատումից ետ էինք մնում, խուսափում էինք ու մտածում փախուստի մասին:

Ես ու ընկերներս՝ Կարապետ Գոյումյանը, Հովհաննես Չախիջյանը, գիշերվա ժամը 4-ին դուրս թռանք ցանկապատից: Գնացինք Ադանա: 10-11 տարեկան հազիվ լինեինք: Քաղաքում սոված, անտուն շրջում էինք՝ տեսնելով հայերի աքսորն ու դժբախտությունը: Փողոցում տուն, քնելու տեղ չունեինք: Տեղ էինք փնտրում՝ մի ծածկի տակ քնելու համար: Գտանք: Հացի թանկություն էր, մենք էլ՝ սոված: Ընկերս մուրացկանություն էր անում, հաց էր հավաքում ու բերում, մեզ բաժանում: Հովհաննեսն Ադանայի կոտորածից վիրավորված էր, ձախ ձեռքի մատները չէին աշխատում, հաշմանդամ էր: Գործը դժվար էր: Տասը պտույտից հազիվ թե մեկը մի կտոր հաց տար, ու փողոցներով սոված շրջում էինք: Հովհաննեսը մի դուռ ծեծեց՝ ողորմություն խնդրելու: Բաց արին դուռը, երկու թուրք տղաներ Հովհաննեսին քարշ տալով ներս տարան ու ծեծում էին՝ ասելով. «Գյավուր, քեզ պիտի սպանենք»: Մենք բարձր ձայնով գոռում, աղաչում էինք: Վերջապես մեզ բաց թողեցին:

Օրեցօր պայքարը հայերի դեմ սրվում էր: Շրջվեցինք երկրորդ փողոց: 8-10 մեծահասակ տղաներ գաղթից ետ մնացած մի աղջկա, որը բոլորովին թուրքերեն չգիտեր, ծաղրուծանակի ենթարկելով, տանում էին: Ես մոտեցա՝ դեմքը տեսնելու,

իմանալու՝ մեր որբանոցից՝ Է: Բայց չէ, բոլորովին օտար էր ու շատ գեղեցիկ: Աղջիկը, գլուխը կախած, արցունքներն աչքերից չորացնելով, անհույս, օգնություն խնդրելուց թուլացած, աջ ու ձախ էր նայում: Դիմացից եկող մեծահասակ թուրք մի կին, ձեռքի դույլը գետնին դնելով և խնդիրը հասկանալով, գոռաց տղաների վրա:

–Շան լակոտներ, հերիք է ձեր բարբարոսությունները:

Ձեռքի դույլը վերցնելով՝ աղջկա թևից բռնեց ու տարավ նեղ ճանապարհով դեպի պարտեզները: Մենք, այս տեսարաններից հիասթափվելով, իրար հարցեր էինք տալիս. «Ի՞նչ անենք, չգնա՞նք նորից որբանոց»: Կարապետն ասում էր.

–Չէ՛: Եթե գնանք որբանոց, մեզ կտանեն ներքնահարկ ու ծեծելով կապանեն, չէ՞ որ մենք հրաժարվեցինք թուրք լինելուց ու փախանք:

Գիշեր էր, գնացինք մեր քնելու տեղը: Կարապետն ինձ ասաց.

–Երվանդ, վե՛ր կաց, գնանք հացի փուռ, կարող է մեզ հաց տան:

Գնացինք: Հացի փուռը փակ էր: Փռի տախտակների ճեղքից նայեցինք: Տախտակին կպած թարմ հացերը շարված էին առավոտվա համար: Կարապետը տակի լայն ճեղքից ձեռքը ներս մտցրեց:

–Երվանդ, դու տուպրակը բռնի՛ր,– և պատառ-պատառ կտրելով՝ հացը դուրս հանեց: Երկու լրիվ հաց հանեցինք ու գնացինք մեր վայրը: Հովհաննեսը, կրակի մոտ կծկված, քնել էր: Կարապետը ձայն տվեց Հովհաննեսին: Վեր կացավ կրակի մոտից, ուրախացավ. «Այս ի՞նչ լավ, թարմ հաց է, որտեղի՞ց»: Պատմեցինք եղելությունը: Սրանից հետո հացով ապահով էինք: Ուրախացանք: Այսպես շարունակեցինք մի քանի օր:

Մի ուշ գիշեր ես ու Հովհաննեսը գնացինք հաց գողանալու: Այդ օրը շատ քաղցած էինք: Մոտեցանք փռին ու նայեցինք տախտակի ճեղքից ներս: Մի աղոտ ճրագ էր վառվում: Նախ ես ձեռքս մտցրի, պատառ-պատառ կես հացի չափ քաշեցի: Հովհաննեսը կամացուկ ասաց.

–Երվանդ, տուպրակը բռնի՛ր, մի քիչ էլ ես քաշեմ:

Հովհաննեսը ձեռքը մտցրեց թե չէ, ձեռքը ներսից բռնեցին: Ես փախուստի դիմեցի: Տուպրակն իմ ձեռքում էր: Հասա մեր քնելու վայրը:

–Կարապետ, վե՛ր կաց, հա՛ց կեր:

Տուպրակը վերցրեց իմ ձեռքից ու ասաց.

–Հովհաննեսին որտե՞ղ թողեցիր:

Սրտներս նեղված՝ հանգած կրակի մոտ քնեցինք:

Լուսադեմին մեկն ինձ ոտքի կոպիտ հարվածներով վեր կացրեց: Ես և Կարապետը սարսափած ոտքի ելանք: Մի ոստիկան էր՝ Հովհաննեսի հետ: Ասում է.

–Անցե՛ք առաջ:

Երեքիս միասին տարավ ռազմական պահակի մոտ: Ներկայացրեց ոստիկանության պետին: Մեզ հարցուփորձ անելուց հետո մեկին բերեցին միջանցքում հերթապահի մոտ: Մենք իրար ասում էինք.

–Չասենք, թե որ որբանոցից ենք:

Առավոտյան ժամը 11-ին ոստիկանն ու մի քաղաքացի՝ ձեռքում հաց, մտան ոստիկանության պետի սենյակ: Մեզ ետ կանչեցին: Ոստիկանապետը մեկ-մեկ հատ հաց տվեց ու շրջվելով փռապանի կողմը՝ ասաց.

–Մեր օրենքով մի փոքր հաց գողացողները չեն պատժվում, դու փուռդ ապահովի՛ր ճեղքերից ու դուռդ պինդ փակի՛ր:

Կանչեց ոստիկանին ու մեզ ցույց տալով՝ մի բան փսփսաց:

–Վե՛ր կացեք,– ասաց:

Մեզ դուրս տարան:

–Գնացե՛ք, մյուս անգամ գողություն չանեք:

Հացը մեր թևի տակ՝ գնում էինք, չէինք իմանում՝ ուր ենք գնում: Կանանց բաղնիքի մոտից անցնելուց երկու կին Կարապետին կանչեցին.

–Դու ո՞ւմ տղան ես, հայր, մայր ունե՞ս:

–Չէ՛, ես որք եմ:

–Այդ ժամանակ կապոցը վերցրո՛ւ ու արի՛, ինչ որ արժի, կվճարենք:

Կարապետը վերցրեց ճամպուրկն ու կապոցը: Ես մոտեցա կապոցը վերցնելու, ինձ չթողեցին, որ ընկերոջս օգնեմ: Կարապետին մեջտեղ արած գնում էինք: Խոսելով ու Կարապետին հետևելով՝ շարունակում էինք ճանապարհը: Կանայք փողոցի անկյունը հասնելուց հետո հետ նայեցին, մեզ տեսան ու ասացին.

–Ինչո՞ւ եք մեզ հետևում:

Իրենց ծանոթ մի երիտասարդ մեզ իր հետ տարավ: Կարապետի հետքը կորցրինք: Գիշեր-ցերեկ սպասում էինք Կարապետին, բայց չհանդիպեցինք: Մի գիշեր մեր քնած վայրում պայտագործը մեզ տեղում բռնեց: Մի քանի ապտակ տվեց:

–Անհավատներ, այստեղից գնացե՛ք, թե չէ իմ ձեռքով կսատկեք:

Գիշեր է: Երկու որբեր իրար հարց տվինք՝ ո՞ւր գնանք, գնանք հայկական թաղը ննջելու, մի որջ ճարելու: Հայկական թաղում համարյա ամբողջ հայությունը բռնի աքսորված էր: Լռություն էր, տները՝ կնքված: Փողոցի մի անկյունի մոտ՝ խորքում, մի սայլ կար: Սայլի մեջ քնեցինք: Առավոտյան լուսաբացին մի մարդ եկավ սայլը լծելու ու ձայն տվեց.

–Ո՞վ եք, ոչլուտ գյավու՛ր ձագեր, հեռացե՛ք:

Մեզ վռնեց: Երկուսով ցած իջանք ու փախանք: Դեռ մութ էր: Շուկան դեռ բաց չէր: Ճանապարհից դուրս եկանք: Օրը ամպոտ էր: Գիշերային խոնավ ցողից քրջված՝ մի շենքի դռանը նստեցինք թմրած: Ննջում էինք իրար փաթաթված: Դուռը բացվեց:

Տանտերը գործի գնալիս մեզ տեսավ ու հարցու-
փորձ արեց: Պատմեցինք, որ հայ ենք ու որք: Նա
մեզ անմիջապես ներս տարավ: Մեզ լողացրին, մա-
քուր շորեր հագրին: Կանայք լաց էին լինում՝ ասե-
լով. «Մեր քույրերի երեխաներն էլ արքորում ցիրու-
ցան եղան, ուր պիտի մնան...»:

Թուրքական կառավարությունը պետական ար-
հեստավորներին չէր արքորում: Շատ հուզված էր
Գևորգ Գլուխումջյանը: Կանանց պատվիրեց մեզ
դուրս չթողնել ու գնաց Դրքանի տեքստիլ գործա-
րան:

Երեկոյան մի հայ ընկերոջ հետը բերեց: Ընկերը
հարցրեց անուն, ազգանուններս, թե որտեղից ենք,
ու ասաց, որ վաղը մեկնումեկին կտանի: Առավոտ-
յան տանտիկինը ձեռքս մի ավել տվեց.

–Այս ննջասենյակը ավլի՛ր, տղա՛ս:

Ես սեղանների, մահճակալների տակը, ծայրի
անկյուններից մաքուր ավլեցի, աղբը տարա, թա-
փեցի: Տանտիկինը մի սենյակ էլ Հովհաննեսին
տվեց: Հովհաննեսը ձեռքից թույլ էր, ինձ պես մա-
քուր չկարողացավ ավլել, նույնիսկ աղբը չտարավ
աղբանոց: Որոշեցին ինձ պահել իրենց մոտ հոգե-
զավակ:

Անցավ մի քանի շաբաթ: Մի օր ասացի.

–Մայրիկ, Հովհաննեսի տունը հեռո՞ւ է, ուզում
եմ նրան տեսնել:

Ինձ տարավ ընկերոջս տուն: Բարևելով նստե-
ցինք: Ընկերս տանը չէր: Ասացին՝ գնացել է մածուն
բերելու, հիմա կգա: Տասը թույն չանցած՝ ներս
մտավ Հովհաննեսը՝ ձեռքին մածուն: Մածունը
սեղանին դնելով՝ փաթաթվեց ինձ ու լաց եղավ: Մի
քիչ հանգստանալուց հետո միասին բակ գնացինք:
Ես իրենից էի հարցնում, ինքը՝ ինձանից: Հովհան-
նեսը գանգատվում էր, որ դժվարանում է թուրքերեն
խոսել: Աղանայի հայերը թրքախոս չեն: Հովհան-
նեսի հետ միշտ տեսնվում էինք: Երբեմն իրար խա-
ղալիք ու շաբար էինք տալիս, խոսում Կարապետի
մասին:

Հինգշաբթի օրը՝ երեկոյան, եկավ Հովհաննեսը՝
շատ հուզված ու տխուր դեմքով.

–Գիտե՞ս, – ասաց Հովհաննեսը, – մեր տանը խո-
սակցություններ կան, որ վաղ առավոտյան որբա-
նոցի Վահագն հայրիկին կախաղան պիտի բարձ-
րացնեն Թերս Կարոյի հրապարակի փոստի մոտ:

Մի թույն տրտում մնալուց հետո պայմանավոր-
վեցինք Թերս Կարո գնալու: Ամբողջ գիշեր համար-
յա չքնեցի: Օրը ուրբաթ էր: Առավոտ շուտ վեր կա-
ցա: Թուրքերի հանգստյան օրն էր: Ընկերոջս հետ
գնացինք Թերս Կարո: Հրապարակում բազմություն
էր հավաքվել: Մտանք բազմության մեջ: Տեսանք
լարված կախաղանը:

Ոստիկանները ժողովրդին հետ էին մղում: Հեռ-
վից մի բազմություն էր գալիս: Ոստիկանները, թրե-
րը վեր բարձրացրած, եկան: Կառքը մեջտեղում էր,

բազմությամբ շրջապատված: Կառքի մեջտեղում
նստած էր ինքը՝ 45 տարեկան Վահագն հայրիկը՝
հպարտ, ֆեսը դրած, ոտքերը կապած, սպիտակ
շրջագգեստը հագին, մաքուր սափրված:

Մենք՝ երկու որբերս, արտասուքը աչքերիս, հե-
կեկալով եկել էինք մեր վերջին հրաժեշտը տալու
մեր հայրիկին: Յած իջեցրին կառքից: Վահագն
հայրիկը բարձրացավ կախաղանի աթոռին ու սուր
հայացքով չորս կողմը նայեց:

Դատավորը կարդաց մահվան վճիռը: Վճռի
հրամանը կախեցին վզից: Դատավորը հրամայեց
10 թույն վերջին խոսք ասելու: Ես միայն այս տո-
ղերն եմ հիշում. «Ես անմեղ եմ, ոչ մի կապ չունեմ
Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Ես մեղավոր եմ, ո-
րովհետև հայ եմ...»: Վերջին թույնն էր, պարանի
օղակը վզին էր գցած: Օրենք էր հաղորդություն
առնելը: Հայ տերտերներ չկային: Մի հույն տերտեր
էր ներկա: Տերտերը մոտեցավ հաղորդություն
տալու: Հայրիկը գլխով վռնդեց տերտերին և հրա-
մանին չսպասեց: Ոտքով շրջեց աթոռը: Ես և
ընկերս մի վայրկյան փակեցինք աչքերս: Բաց արի
միայն, որ տեսնեմ իմ հայրիկին: Չէի հավատում, որ
նա մեռած է: Մի ցնցումով հոգին ավանդեց: Մեր
ոտքերը առաջ չէին գնում հրապարակից հեռա-
նալու: Մայրի վրա նստած, արտասված աչքերով
նայում էինք անթաթ: Ժամը 2-ին բժիշկը մոտեցավ
ու կախված դիակի զարկերակը ստուգեց: Մեռած
էր: Հրամայեց.

–Կարող եք տանել:

Իջեցրին կախաղանից ու մի ձիանի սայլով տա-
րան...

Բնաջնջման վշտի հետ մտերմացավ հոգիս...

Ա՛խ, մարմինս, Վահագնի ողբերգական կյան-
քը, փշաքաղում է մարդկային ցեղին,

Մեր որբանոցում այլևս որբեր չմնացին...

Հայ որբերին հավիշտակում, դարձնում էին
թուրք,

Ա՛խ, չորացել է Վահագն հայրիկի բերանն ու
թուրք,

Գերեզմանային լռություն տիրեց...

Կախաղանից իջեցրին մի դիակ, դրեցին սայլին
ու տարան,

Գերեզմանում տեղ չունեք,

Քաջ գնաց, տեր էլ չունեք,

Ազգը վերապրեց նոր հավատով ու քո որբ
ձագերին հավաքեց:

Դեռ չկայի ինը տարեկան,

Դու չարժանացար շքեղ թաղման,

Չեր շիրիմը երբեք չի մոռացվի,

Արդար դատին նա զոհ գնաց:



ՇԵՐՈՆՑ ՇՈՒՇԱՆԻ,
ՄԱԶՐՈՒԽԻ ԵՎ
ՍԱՐԳԻՍ ԱՄՐԻԿՅԱՆԻ

հուշերը գրի առնող Տամշեր Հովհաննիսյան
(ծնվ. 1932 թ.)

Սույն հուշագրության հեղինակներն են ողմեցիներ Շերոնց Շուշանը¹ (1887-1951), Մաքրուխը և Սարգիս Ամրիկյանը², որոնցից բանավոր ավանդված հուշերը 2008 թ. գրի է առել Շերոնց Շուշանի և Ավդիշանց Փոխիկի միակ զավակի՝ 1911 թ. Ոգմուն ծնված Ջավեն Հովհաննիսյանի ավագ որդին՝ Տամշեր Հովհաննիսյանը (ծնվ. 1932 թ.): Մասնակցել է Արցախյան ազատամարտին:

Շերոնց Շուշանը գաղթից հետո որդու՝ Ջավենի³ հետ բնակություն է հաստատում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի գյուղում: 1930 թ. Գառնիում ապրող բոլոր գաղթականներին հող են հատկացնում գետի ձախ ափին՝ Ալիղըլիս գյուղում⁴:

Շերոնց Շուշանը վախճանվել է 1951 թ.:

Տամշեր Հովհաննիսյանի մորական մեծ տատը՝ Մաքրուխը, և մեծ պապը՝ Անարխիստ մականվամբ Սարգիս Ռամոյանը (վախճ. 1936 թ.) նույնպես ողմեցի են: Ամուսնացել են 1909 կամ 1910 թթ.: Համատեղ կյանքում ունեցել են 4 զավակ:

1 Շերոնց Շուշանը կոլտնտեսուհի էր: 1941 թ. հուլիսի 18-ին ստացել է Խորհրդային Հայաստանի քաղաքացիություն (ՀԱԳ, ֆ. 207, ց. 8, գ. 250, թ. 6):

2 Սարգիս Ամրիկյանը նախ հաստատվել է Մասիսի շրջանի Ջրահովիտ գյուղում, հետագայում տեղափոխվել է Արտաշատի Դիտակ գյուղ: Ի դեպ, հուշագիր Արմենակ Ամրիկյանի եղբայրն է: Սարգիս Ամրիկյանն իր ընկերոջ՝ Անարխիստ Սարգիսի հետ, միանալով կամավոր խմբերին, մասնակցել է Վանի հերոսամարտին:

3 1929 թ. Ջավեն Հովհաննիսյանն ամուսնանում է Արշալույսի հետ (ծնվ. 1912 թ.) և ունենում 10 երեխա՝ 5 տղա և 5 աղջիկ: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին և գերի ընկել: Մահացել է 1991 թ.-ին 80 տարեկանում, իսկ 84-ամյա կինը՝ Արշալույս Հովհաննիսյանը՝ 1996 թ.-ին:

4 Ալիղըլիս գյուղը գտնվում էր Արարատի մարզում: 1948 թ. վերանվանվել է Բլրաշեն: 1960-ական թվականներին ապաբնակեցվել է: Հովհաննիսյանների ընտանիքը բնակություն է հաստատել Արարատի մարզի Դիտակ գյուղում:

Ա. Շուշան տատիս հուշերը նոմեցիների մասին

Ոգմեցի տղամարդիկ բոլորը հայտնի գրարներ էին: Նրանք բուրդ էին գզում և թաղիք պատրաստում:

Ընդհանրապես ոգմեցիք երկարակյաց էին:

Ոգմեցիք դայրոց չեն ունեցել, եկեղեցում սովորել են շատ քչերը, բայց եղել են ուժեղ, համարձակ, քաջ, խիզախ, լավ կովող, լավ գիտեին քրդերեն: Տիրապետում էին զենքին (տասնոց կամ մոսի):

Մեր հարսներն ու կանայք ևս լավ ձիավարում էին և ձիու վրայից կրակում:

Մեր տոհմը

Մեր տոհմը կոչվել է Ավդիշանց: Ունեցել են մեծ կարողություն, հատկապես շատ հողեր, Ավդիշանց ճամբր կոչվող այգիներ՝ մոտ 50 հեկտար, ջրովի և պարսպապատ: Ճամբրում աճում էր խաղող, տանձ, խնձոր, դեղձ, ծիրան, մուռ, թուզ և ուրիշ շատ մրգեր:

Ունեցել են նաև մի քանի գոմեր, նրանցից մեկը կոչվել է Ավդիշանց գյուղեր:

Բոլորը մեկ ընտանիքում են ապրել. 61 մարդ մի գերդաստանում: Ընտանիքում միշտ երեք հատ օրորոց է եղել:

Շուշան տատս պատմում էր, որ ինքը տան հարսների հետ գիշերը զենքերը թաքստոցներից հանում, ճրագի լույսի տակ մաքրում և նորից թաքցնում էր գոմերի ծածկի գերանների մեջ հատուկ փորված տեղերում:

Մի անգամ քրդերը զենք փնտրելու նպատակով ամեն տեղ ստուգել են և ներս մտնելով մեր մեծ գոմը՝ ասել են, թե կազյաղի⁵ հոտ է գալիս: Մերոնք, նրանց ցույց տալով գոմեշների մեջքի չիբանի նման վերքերը, ասել են, որ բուժման նպատակով կազյաղ են քսել: Համոզվել են և հեռացել:

Ոգմեցիները պատմում էին, որ պապիս մեծ հորեղբայրը՝ Հովանը, արջերին սպանելու մի լավ միջոց գիտեր: Նա սկլորանում, դաշույնը բռնած՝ մտնում էր նրանց որջը, կաշում էր արջին, նրան կողքով հրելով՝ դուրս էր հանում ու սպանում:

Փոխիկ պապս

Պապս եղել է բարձրահասակ, թիկնեղ և մի քիչ շիկահեր:

Ամուսնացել է Շերոնց Շուշանի հետ: 1911 թ. ծնվում է նրանց միակ որդին՝ Չավենը:

Փոխիկ պապս ունեցել է 4 եղբայր, 5 հորեղբայր, որոնք ապրել են հարյուր և ավելի տարիներ:

Պապս ևս զորակոչվում է թուրքական բանակ: Լինելով մի քիչ գրաճանաչ՝ նրան նշանակում են ցածր աստիճանի սպա: Երեք տարի ծառայելով բանակում՝ միայն մեկ անգամ է տուն եկել: Ընդհա-

նուր գաղթից մի քանի ամիս առաջ պապիս և 8 հոգու զինաթափում և կապկպած տանում են, մի ձորի մեջ սպանում են և առանց թաղելու թողնում, հեռանում են: Քուրդ հովիվները, կրակոց լսելով, մոտենում են սպանվածներին, որպեսզի մի քան թալանեն: Երկու տարի պապիս տանը մշակ աշխատած մի քուրդ ճանաչում է պապիս և որոշում է հարազատներին տեղյակ պահել սպանության մասին: Հաջորդ օրը մի քանի ոգմեցիներ քուրդ հովիվի հետ գիշերով մեկնում են դեպքի վայր, քանի որ ցերեկը հայերին արգելված էր գյուղից գյուղ գնալ: Գիշերային պահակակետի հանդիպելով՝ անցնում են անարգել, քանի որ լավ տիրապետում էին քրդերենին: Տեղ են հասնում, մի կերպ թաղում են սպանվածներին՝ ծածկելով քարերով ու խոտերով: Պապիս մոտից մի պղնձե տուփ են բերում: Այն ժամանակ դագի, արջի ճարպը հալեցնում, լցնում էին այդ տուփերի մեջ՝ զենքերը յուղելու համար: Պղնձե տուփը բերում, տալիս են տատիկիս՝ որպես հիշատակ⁶:



Ոգմեցի Փոխիկ պապի պղնձե յուղամանը

⁵ Սագի յուղ:

⁶ Պղնձե այդ տուփը՝ որպես մասունք, առ այսօր պահվում է Ավդիշանց ընտանիքում:

Ոգմի գաղթի մասին

Ընդհանուր տեղահանությունից մի քանի օր առաջ քրդերը մեծ ուժերով հարձակվում են Ոգմի վրա: Գյուղում քիչ կռվողներ կային, մի մասին տարել էին բանակ կամ հարկադիր աշխատանքի, մի մասն էլ զենք էր վերցրել և միացել սարերում կռվող կամավորական խմբերին: Մնացել էին ծերերն ու կանայք: Գյուղացիք իրենց ունեցվածքը խնամքով քաղցնում են և գյուղից հեռանում: Մի քանի օրից հայ կամավորներն ազատագրում են Ոգմը, բայց քրդերն ամեն ինչ տարել էին:

Երկրորդ անգամ արդեն գյուղը չկարողացանք պահել, հարձակվողները շատ էին:

Թուրքական զորքը, քուրդ խուժանի հետ գյուղից երևացող բարձունքներին շարված, սպասում էր հարձակման, բայց վախենում էր ոգմեցիներից: Գյուղին հրաման տրվեց հանգիստ մահանջել:

Մի քանի օրվա պաշար և անհրաժեշտ իրեր բարձել էինք մի եզան վրա, քայլում էինք գիշեր-ցերեկ: Չգիտեինք՝ որ կողմ գնանք, գնում էինք մեզանից առաջ գնացողների հետևից: Թշնամին կրակում էր: Եկան հայ կամավորներն Անդրանիկի հրամանով, պահակախմբեր ստեղծվեցին, հրամանատարներ նշանակվեցին, լավ կազմակերպված շարժվեցինք առաջ:

Քայլում էինք օրերով, հարմար տեղ ընտրելով՝ դադար էինք տալիս: Մի օր երեխան շալակիս առաջանում էինք, հանկարծ Չավենն ինձ ասում է.

–Մարե՛, չվախիս, կալերում տղաները ձիերով ջիրիղ են խաղում, նրանք են կրակում:

4 տարեկան երեխաս չէր հասկանում, որ թուրքերն են կրակողները:

Իմ աչքի առաջ քրդերը սպանեցին բոլոր հարազատներին, Հարուն եղբորս ընտանիքն:

Չէին թողնում, որ մոտենայինք մեռածներին, սպանում էին անգամ երեխաներին: Հարուն եղբորս մեծ տղային՝ Միմոնին (մականունը Ճիտան), բերում են, որ սպանեն, մի քուրդ, ձիու վրա նստած, նայում է հեռվից, չի թողնում, որ սպանեն, ասում է. «Ինձ տվե՛ք սրան, տանեն ինձ «ղանգբեջ», այսինքն՝ երգասաց»⁷:

Անցանք Մոկլաց երկիր: Շատախի և Մոկլի գայմագանը Մուրթուլա բեկն էր, մի լավ, բարի և հայասեր մարդ էր, մեր գյուղի շատ մարդկանց հետ մտերիմ էր:

Երկու օր մեր գաղթականներին պահեց իր տանը, օգնեց ամեն ինչով և ճամփա դրեց:

Հորզովում մահացավ մեր պապերից մեկը: Տա-

7 «Միմոնը 11 տարեկան էր, ասում էին, որ լավ ձայն ուներ, երգում էր քրդերեն և միևնույն ժամանակ ինքն էր ստեղծագործում: Ականատեսները զարմանքով են հիշում Միմոնի մասին: Նրա մասին այլևս ոչինչ չիմացանք: Ասում էին, թե Միմոնին սանող քուրդը երեխա չի ունեցել, պահել է իր համար հոգեորդի, ամուսնացրել, և ապրել են միասին: Միմոնը լավ երգիչ է եղել, անվանի երգիչ, բայց ոչ ոք ճիշտը չգիտի»:

րիքը իննսուն անց էր, նրան քաղեցին: Բերկրիում մեռավ մեկ ուրիշ հարազատ, նույնպես ծերունի: Հետո մեզ ուղարկեցին Արևելյան Հայաստան:

Գառնիում

Ամիսներ անց մեր քարավանը հասավ Էջմիածին, այնտեղ քիչ մնացինք: Մեր գյուղի գորարները մի քանի անգամ եղել էին այս կողմերում՝ աշխատելու համար, ծանոթ էին և որոշել էին գնալ Գառնի, որը նման էր Ոգմին թե՛ լավ ջրով, թե՛ բնությանը: Գառնեցիք սիրով ընդունեցին և ապաստան տվեցին բոլորին: Ես իմ որդու՝ Չավենի հետ ապրում էի Տուկանենց Ալեքի ընտանիքում:

Բ. Մաքրույս տատիս հուշերը

Պապս ու տատս ծնվել են Ոգմում: Պապս՝ Մարգիս Ռամոնի Շերոնցը (հետագայում վերցրել են Շերոյան ազգանունը), փոքրուց շատ աշխույժ երեխա է եղել, սիրել է ձի նստել, զենք քանդել, հավաքել: 15-16 տարեկանից մասնակցել է գյուղի և ուրիշ գյուղերից եկած գաղտնի կամավորական խմբերի ժողովներին:

Ոգմում ստեղծված կամավորական «Ռ-ազմիկ» խմբի ակտիվ անդամներից մեկն էր պապս՝ Ռամոնյան Մարգիսը⁸:

Մարգիս պապս հոր՝ Ռամոնի հետ միշտ գնում է արտագնա աշխատանքի: Ոգմեցի տղամարդիկ բոլորը գորարներ էին. անեղ գործիքով բուրդ էին գզում, թաղիք պատրաստում: Մի քանի անգամ եղել են Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում: Պապիս հայրը՝ Ռամոն, գիտեր նաև գորգ գործել, որը սովորեցրել էր իր որդուն: Ես (խոսքը Տամշեր Հովհաննիսյանի մասին է) նրա դստեր՝ Արշալույսի տղան եմ: 4-5 տարեկան էի, մի քիչ հիշում եմ նրա գունավոր թելերը, դազգահը:

Տատիկս՝ Մաքրույսը, նույնպես ոգմեցի էր, բայց ապրում էր Վան քաղաքում, որտեղից էլ հարս բերեցին գյուղ: 1913 թվականից արդեն սկսվել էին հայերի հալածանքները:

Պապիկս մի քանի անգամ հանդիպել էր մեծ գորավար Անդրանիկին: 1914 թ. պապիկս արդեն հիսնամյետ էր, և մականունը Անարխիստ էր: Կոտորածի և գաղթի առաջին օրերից հայ կամավորական խմբերով միշտ առաջավոր դիրքերում էր:

8 Ոգմեցի Ալան Ստեփանյանն իր հուշերում գրում է, որ «Ռ-ազմիկ» խումբը ստեղծվել է 1907 թ. և բաղկացած էր 17 երիտասարդներից՝ Միմոն Բոզոյան, Մարգիս Ռամոնյան, Միհրան և Մանուկ Գալուստյաններ, Միրզո Բոզիկյան, Եղիազար և Մուրադ Նաղիրյաններ, Ալի Ներսիսյան, Արմենակ Մանուկյան, Մանուկ Ստեփանյան, Շահեն Գումորյան, Պետրոս Գալուստյան, Սահակ (մականունը՝ Բոզկանց), Ալան Ստեփանյան-Ամիրբեկյան, Խաչո Մանուկյան և այլք: Խմբապետ է ընտրվում Ալան Ստեփանյան-Ամիրբեկյանը (մանրամասն տես՝ Ալան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966):

Անարխիստ Սարգսի հոր՝ Ռամոնի սպանության մասին

Գյուղի հովիվները դաշտերում, սարերում ոչ-խարճեր էին պահում, հանկարծ նկատում են, որ կասկածելի մարդիկ իրենց են հետևում: Անմիջապես մեկին ուղարկում են գյուղ՝ օգնություն բերելու, քանի որ քրդերի հարձակումները հայկական գյուղերի վրա հաճախ էին: Տանում էին մեծ քանակությամբ ոչխարներ, կովեր: Այդ օրն էլ քրդերը հարձակվում են հովիվների վրա, հեռվից կրակելով՝ նախ սպանում են շներին, հետո վիրավորում մի հայ հովիվի, այնուհետև սկսվում է հայերի և քրդերի հրաձգությունը: Այդ միջոցին օգնության են հասնում գյուղից եկած տղաները: Մերոնք հարձակվում են երկու կողմից: Կռիվը սկսվում է, թեկուզ ավագակները շատ էին, բայց մերոնք հաղթում են: Նրանք, մի քանի զոհեր և վիրավորներ տալով, փախչում են՝ դաշտում թողնելով սպանվածներին և վիրավորներին, նույնիսկ նրանց զենքերը չեն տանում: Այդ կովի ժամանակ ծանր վիրավորվում է Ռամոն, նրան տեղափոխում են գյուղ, հաջորդ օրը մահանում է:

Գաղթի ճանապարհի մասին

Մաքրուխ տատիս պատմածներից մի քանի դեպքեր կապված են մեծ գորավար Անդրանիկի հետ:

«Գաղթի ճանապարհին դադար էինք տվել մի գետի ափին, ծառերի տակ հանգստանում էինք, — պատմում է տատս:— Ես էի, սկեսուրս՝ Սարգսի մայրը և մեր 2 տարեկան հիվանդ աղջիկը: Մի օր մնացինք այնտեղ: Առավոտյան մի խումբ ձիավորներ եկան, նրանց հետ էր Անդրանիկը: Մոտեցավ, բարևեց, հուսադրեց. «Մարե՛, գետից ջուր մի՛ վերցրեք, վերևում մի քանի մահացած մարդ կա, լողացնում են»: Մի ոսկի տվեց սկեսուրիս ու գնաց:

Մի քանի օր հետո Սարգսիսը եկավ: 2 օր քայլում էինք, մի լավ ձի ունեինք, սև գույնի, անունը՝ Արար: Մեր ունեցածը բարձել էինք ձիուն, և ես նստած էի ձիու վրա, շարժվում էինք առաջ: Ձիու սանձից բռնած՝ առջևից գնում էր Սարգսիսը, իմ երեխային շալակած՝ ձիու ետևից գալիս էր սկեսուրս՝ տարիքով կին, շատ հոգնած, տանջված, ուժասպառ էր, բայց քայլում էր: Հանկարծ հայտնվում է գորավարը: Դեմ դիմաց կանգնում է, մի քիչ զարմացած ու ջղայնացած՝ դիմում է Սարգսին.

—Ամո՞թ քեզ, Անարխիստ, ի՞նչ եմ տեսնում, դու երիտասարդ կնոջո՞ղ նստեցրել ես ձիու վրա, իսկ մորդ թողել ես, ոտքով է քայլում, քո երեխան էլ շալակին:

Սարգսիսը սկսեց արդարանալ, բայց Անդրանիկը չէր թողնում, որ խոսի, վերջում ասաց.

—Փաշա՛, գնա մարեին հարցրո՛ւ, թե նա ինչո՞ւ ձի չի նստում:

Անդրանիկը մոտենում է սկեսուրիս ու հարցնում է.

—Ասմի՛ն մարե (Ասմին էր Սարգսի մոր անունը) ինչո՞ւ չես նստում ձիու վրա, չէ՞ որ քեզ համար շատ դժվար է, դեռ երկար ճանապարհ ունենք գնալու:

Մարեին նրան ասում է.

—Չեմ կարող նստել, վախենում եմ, չեմ ուզում:

—Այդ դեպքում երեխային տուր մոր մոտ, թող ձիով գնա:

—Չէ՛, փաշա՛, մեռնիմ քի, երեխան որ տվեցի նրանց, առանց այդ էլ հիվանդ է, կզցեն գետը, շատերն են այդ բանը անում, չեմ տա:

Անդրանիկը շվարած կանգնել ու մտածում էր, հետո դիմեց Սարգսին, առանձնացած երկար խոսեցին, գնալուց ասաց. «Անարխիստ, լուսաղեմին քո խմբով կփոխարինես աջ թևին»:

Եվ այսպես գաղթի երկար ճանապարհ, նորից հանդիպեցինք Անդրանիկին: Ես էի, սկեսուրս և մեր հիվանդ աղջիկը: Մեզ հետ էին նաև մեր բարեկամները, հարևանները և շատ-շատերը:

Մի օր Սարգսիսը մեզ հետ չէր, դիրքերում էր, ձին թողել էր մեզ մոտ: Առավոտյան մի քանի հայ զինվորներ եկան, ձիու վրայից մեր իրերն իջեցրին, ձին տարան: Մարդիկ միջամտեցին, բայց իզուր: Մնացինք շվարած նույն տեղում: Երեկոյան հանկարծ եկավ Անդրանիկը, մեզ տեսավ, մոտեցավ, հարցրեց.

—Խարսե՛, ո՞ւր է Արարը:

Խոսքը ձիու մասին էր:

Ես չկարողացա պատասխանել, սկեսուրս ասաց.

—Փաշա՛, մեր զինվորներից մի քանի հոգի եկան, ձին գոռով տարան:

Անդրանիկը հետաքրքրվեց, թե ինչպիսի մարդիկ էին և որ կողմ գնացին: Մարդիկ ուղարկեց տարբեր տեղեր, ինքն էլ գնաց: Մի քանի ժամ հետո՝ երեկոյան, Անդրանիկը եկավ, եկան նաև հայ զինվորներ, նրանց հետ՝ նաև ձի տանողներից մեկը: Նա անմիջապես խոստովանեց և Անդրանիկից ներում հայցեց: Անդրանիկը ձեռքը տարավ դեպի մատուցողը, այդ միջոցին սկեսուրս և ես մոտեցանք, խնդրեցինք, որ նրան չպատժի: Հրամայեց նրանց, որ գնան, ձին բերեն: Մինչև ձիու բերելը վրդովված գնած իր գործին:

Գաղթից հետո

Մեր տղամարդիկ, լինելով գորարներ, ծանոթ էին շատ գյուղերի և որոշեցին գնալ Գառնի: Գառնեցիք մեր գաղթականներին շատ լավ ընդունեցին: Տեղավորվեցինք տարբեր տներում: Շատ դժվար պայմաններում էինք ապրում, գաղթից հետո դեռ երկու երեք տարի պատերազմը շարունակվում էր: Սարգսիսը կամավոր էր, մասնակցում էր կռիվներին, ամիսներով գնում էր՝ Անդրանիկի հետ արդեն տեղի թուրքերի դեմ կռվելու Ուլուխանլուից Վեդի, Նախիջևան, Չանգեզուր: Երբ որ տուն էր գալիս, շատ հոգնած էր լինում, երբեմն վիրավոր: Մի քանի օրից նորից կանչում էին, խմբովին գնում էին կռվելու թուրքերի դեմ:



Զորավար Անդրանիկը զինակիցների հետ

Անցան տարիներ: Մենք Գառնիում ունեցանք մի որդի, 1920 թ. մինչև 1930 թ. ապրեցինք Գառնիում, ունեցանք ևս 2 երեխա՝ մեկ աղջիկ և մեկ տղա:

1930 թ. Գառնիում եղած գաղթականներին գետի ձախ ափին՝ բլուրների մեջ՝ աղբբեշաքնակ մի փոքրիկ գյուղում՝ Ալիոբլիսում, հող հասկացրին: Տեղափոխվեցինք այդ գյուղ, նորից տուն ու տեղ հիմնեցինք, ապրել էր պետք: 1936 թ. Անարխիստ Մարգիսը մահացավ: Այդ գյուղում ապրեցինք մինչև 1962 թ.: Մեզ նորից տեղահանեցին, այս անգամ դեպի Արարատյան հարթավայր, ինչ-որ խոշորացում էին անում, բայց սխալ էր: Ընտանիքով տեղափոխվեցինք Մասիսի շրջանի Արևաբույր գյուղ: Նորից գաղթի նման մի բան, նոր հող, նոր տուն ու տեղ ստեղծեցինք:

Գ. Մարգիս Ամրիկյանի հուշերը Անարխիստ Մարգիսի մասին

Մեր կամավորական խմբերը տեղավորվել էին հայկական մի մեծ գյուղում, ուր Անդրանիկի գլխավորությամբ երկու օր պետք է մնայինք: Անդրանիկը կանչեց Անարխիստ Մարգիսին, հրամայեց.

–Վերցրո՛ւ բո մարդկանց, մի մարագում 28 բուրդ գերի կա, գնա՛, քեզ տեղը ցույց կտան, զիշերը կպահեք, վաղը առավոտյան կրերես՝ հարցաքննենք,

միգուցե նոր բան կիմանանք: Տե՛ս հա, շան տղություն չանես, ես քեզ լավ եմ ճանաչում, ինձ քրդերը ողջ են պետք:

–Խա՛, փաշա՛, ամեն ինչ լավ կլինի,– պատասխանեց նա ու ինձ աչքով արեց, մի տղա էլ վերցրեց:

Գնացինք, այդ մարագը գտանք, պահակներին փոխարինեցինք: Շատ հոգնած էինք, նստեցինք մարագի աստիճաններին: Մարագը մեծ էր, գետնափոր, ո՛չ լուսամուտ կար, ո՛չ երդիկ, դուռն էլ քարե աստիճանով իջնում էր փոսը: Տեղավորվեցինք, նստեցինք, խոսեցինք դեսից-դենից: Երեքով էինք, ուզեցինք գոնե մի քիչ քնել. մի քանի օր է, որ չէինք հանգստացել: Մի քիչ ցուրտ էր, և այսպես կեսքնած, կեսարթուն նստած էինք, պառկելը հարմար չէր: Արդեն մութ էր, հանկարծ ներսից քրդերը սկսեցին գոռոռալ, իրար հայհոյել, աղմուկ-աղաղակ: Ուշադիր սկանջ դրեցինք և հասկացանք, որ իրար թշնամի երկու ցեղի քրդեր են, վիճում են, հին հաշիվներ ունեն իրար հետ: Մթուքյան մեջ սկսվեց կռիվը, անպատվում են, կռվում և խփում են առանց իրար տեսնելու: Վիճում են, խոսում տարբեր դեպքերից, գողությունից, սպանություններից, մեկը մյուսին մեղադրում է տարբեր բաների մեջ: Անարխիստն ասաց. «Տղե՛րք, ուշադիր լսեք, հետո նրանց ասածները մեզ շատ պետք կգան»: Նրանց լսեցինք մինչև կեսգիշերն անց, հետո տեսանք, որ խոսակ-



Հիսնապետ Սարգիս Ռամոյանը (Անարխիստ)

ցությունը կրկնվում է: Անարխիստը մարագի դուռը բացեց, տասնոցով մի քանի հատ կրակեց ներս, սակայն նրանք ընդամենը մի քանի բռնակցի միայն լռեցին: Նորից սկսվեց տուրուղմբոցը: Մոռացել էինք քնելու մասին, որովհետև նրանց ասածները կարևոր էին մեզ համար:

Լուսաբացն արդեն մոտ էր, հանկարծ Անարխիստ Սարգիսը վեր կացավ, մարագի դուռը բացեց և մաուզերով սկսեց կրակել քրդերի վրա: Փամփուշտները վերջացան, նորից լցրեց, նորից կրակեց: Մենք մնացել էինք ապշած, մեզ հրամայեց, որ մենք կրակենք, ինքը պատասխան կտա: Մենք շարունակեցինք նրա կիսատ գործը, բոլորին սպանեցինք, դուռը փակեցինք ու քնեցինք մինչև առավոտ, երևի 2 ժամ:

Լույսը բացվեց: Անդրանիկը հրամայեց գերիներին բերել: Մենք շփոթվեցինք, չգիտեինք՝ ինչ անենք, Անարխիստն ասաց.

–Դուք գործ չունեք, գնանք, դուք հեռու կկանգնեք, ես կմոտենամ, եթե քրդերի համար ինձ կսպանի, թող խփի:

Վերջը գնացինք, տեսանք, որ փաշան տան երկրորդ հարկի պատշգամբում մեզ է սպասում: Իջավ ցած, մոտեցավ: Միայն Անարխիստը մոտեցավ: Դեռ չբարևած՝ փաշան հարցրեց.

–Ու՞ր են գերիները, ի՞նչ ես արել նրանց, շուտ պատասխանիր:

–Փաշա՛, քո արև, իմ արև, չեկան, չուզեցին գալ:

Այդ լսեց փաշան, արդեն ամեն ինչ հասկացել էր.

–Չլինի՞ սպանել ես:

–Խա՛, փաշա՛, էդպես ստացվեց, խնդրում եմ ներիր:

Այդ պահին փաշան մտրակով հարվածեց Անարխիստի մեջքին և հայիոյեց. «Բաբանըն ջանընա սըչդըղըն» (հորդ մարմնին կեղտոտեմ): Անարխիստը փախավ, մի քիչ հեռու կանգնեց, անցավ մի քանի բռնակցի, փաշան կանչեց իր մոտ, ջղայնացած ասաց.

–Գոնե մի երկու հոգի թողնեիր, նրանցից մի բան կիմանայինք:

–Փաշա՛ ջան, ինչ որ նրանք պիտի ասեին, մենք գիտենք:

Անդրանիկը նստեց գերանի վրա ու ուշադիր լսեց մեզ: Ամեն ինչ մանրամասն, իրար լրացնելով պատմեցինք, փաշան իր ծոցատետրում նշումներ էր անում: Նա քրդերեն լավ չգիտեր, իսկ թուրքերեն լավ գիտեր: Վերջում ասաց.

–Ապրե՛ք, իրոք որ այս տեղեկությունները շատ կարևոր են մեզ համար, բայց, իմացե՛ք, ինքնագլուխ այսպիսի գործերը միշտ չէ, որ այսպես բարեհաջող են ավարտվում: Չի կարելի ինքնագլուխ գործել, պատրաստվե՛ք, որ գիշերը մեկնելու ենք:



ԲԱԳՐԱՏ ԵՂԻԱԶԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
(1905 -1975)

Համառոտ կենսագրություն

Բագրատ Եղիազարի Սարգսյանը (Թումանյան)¹ ծնվել է 1905 թ. Կարսի մարզի Օղուզլի գյուղում: Արմատներով Բիթլիսից է:

Ծնողները փոխադրվել են Բիթլիսից և բնակություն հաստատել Օղուզլի գյուղում: Հայրն էր Եղիազարը, մայրը՝ Խանումը: Ուներ երեք եղբայր (Ռաֆայել, Արդում և Գերենիկ) և մեկ քույր (Եվգինե): Ընտանիքով հաստատվում են Գյումրիում, որտեղ հայրը և եղբայրը՝ Արդումը, մահանում են սովից:

1924 թ. Բ. Սարգսյանն ամուսնանում է Վանի Ավանց գյուղացի Սիրանույշ Հակոբյանի հետ:

1926 թ. հոկտեմբերի դրությամբ սովորում էր Լենինականի բանֆակում:

1926 թ. Գյումրիի երկրաշարժից հետո Սարգսյանն ընտանիքով փոխադրվում է Բաքու, որտեղ աշխատում է հացի փում:

1928 թ. Բաքվում ծննդաբերություն ժամանակ մահանում է կինը, իսկ որդին՝ Կոլյան, փրկվում է: Չավակների հետ կրկին հաստատվում է Գյումրիում:

Ամուսնանում է Արթիկի շրջանի Արմտլի գյուղից Աղավնու հետ:

1945 թ. վերջերին Գյումրիից տեղափոխվում է Երևան: Ուներ վեց զավակ՝ 3 որդի և 3 դուստր²:

Բագրատ Սարգսյանն իր հուշերը վերնագրել է «Վերջին տրեխներս», քանի որ սովի ժամանակ դրանք կերել էր:

Վախճանվել է 1975 թ. և ամփոփվել Նուբարաշենի գերեզմանոցում:

Իմ անցած ճամփեն քարոտ ու փշոտ,
Մանկության կյանքից մնացի կարոտ,
Փախչում էի սովից, ժանտախտից
Տրեխները հազիս՝ փշոտ ու ցեխտո...

¹ 1937 թ. աքսորից վախեցած շատ մարդիկ փոխել են իրենց ազգանունները: Գերենիկ եղբորը ձերբակալելուց հետո Բագրատը Թումանյան ազգանունը փոխել է և դարձել Սարգսյան Բագրատ:

² Ավագ որդին՝ Ռեմ Սարգսյանը (21.09.1925, Գյումրի - 1975, Երևան) Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ է: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին: Հիմնադրել է ժողովրդական թատրոններ Հոկտեմբերյանում, Էջմիածնում, Հրազդանում: Որպես գլխավոր ռեժիսոր՝ աշխատել է Գորիսում, Կամոյում, Արտաշատում, Կիրովականում, Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ՝ Վ. Փափագյանի) անվան պետական թատրոնում (Ստեփանակերտում թատրոնին կից ստեղծել է դերասանական ստուդիա՝ սեփական կադրեր ունենալու համար): «Ուրախների և հնարամիտների ակումբի» հիմնադիրն է (մանրամասն տես «Եթեր», № 40, 06.10.05):

ՎԵՐՋԻՆ ՏՐԵՆՆԵՐԱՍ

Բիթլիսից Ուղուզլի

1878 թ. Ղարսի շրջանի Ուղուզլի¹ գյուղում բնակվում էր Բիթլիսից գաղթած Սր. Գևորգենց ընտանիքը:

Բիթլիսում նրանց Սուրբ Գևորգենց չէին ասում, այլ Գուլենենց²:

Գուլեն ուներ մի քանի աղջիկ և 3 տղա՝ Հարութ, Սարգիս և Թուման անուններով:

Հավանաբար հալածանքների ու հարստահարությունների պատճառով 1877-1878 թվականներին Բիթլիսից և նրա շրջակա գյուղերից մեծ թվով հայեր բռնում են գյուղից հեռանալու ճանապարհը: Որոշում են հավաքվել Բիթլիսից քիչ հեռու՝ մի մեծ ձորակում, որպեսզի գիշերները վաղաղի ուղեկցությամբ քայլեն, իսկ ցերեկները թաքնվեն հանգստարաններում:

Հարութի և Սարգսի տղաները՝ Հայրապետն ու Գասպարը, Մելիքն ու Գոքորը, չսպասելով իրենց հորեղբոր որդուն՝ Թումանին, որը գնացել էր կողքի գյուղը, կովերի վրա գցում են բեռները և ինչը կարևոր է, բարձում են ու գնում վաղաղի ցույց տված վայրը: Թումանը գալիս և տեսնում է Շողոկաթին՝ յոթ ամսական Եղիազարին գրկին, արտասուքն աչքերին: Հարցնում է.

–Ու՞ր են մերոնք:

Շողոկաթն ասում է.

–Դու որ չսեցիր նրանց ու գնացիր գյուղ, դրա համար նրանք էլ այդպես արեցին:

Թումանը դարձավ դեպի Շողոկաթն ու ասաց.

–Ոչինչ, այդպես էլ է լինում: Դու, Շողոկաթ ջան, բալուլը դիր վար և շտապ ներս մտիր, տես՝ ի՞նչ ես վերցնում մեզ համար:

Թումանը գոմից դուրս է քաշում իր համար թողած կովը և մի էրինջ: Նրանց վրա բեռներ է գցում և սկսում է տեղադրել ուտելիք, անկողին, ամանեղեն և այլն: Շողոկաթը վազելով գալիս է Թումանի մոտ և ասում է.

–Թուման ջան, Գուլեն անայենք Սուրբ Գևորգին չեն տարել: Գնա՛, բեր, մենք տանենք, թող Սուրբ Գևորգը քեզ և Եղիազարին պահապան լինի:

Թումանն իսկույն գնում է և Սուրբ Գևորգի փոքրիկ սնդուկը բերում, դնում է կովի բեռի մի աչքում, փոքրիկ Եղիազարին էլ մյուս աչքում, ու շտապ շարժվում է դեպի վաղաղի ցույց տված ձորակը: Տասնհինգ գիշեր ճանապարհ են գալիս, տասնհինգ ցերեկ թաքնվում են, բայց նրանց նկատում են թուրքերը: Երկու-երեք ընդհարում է լինում. շատերը կոտորվում են: Սպանվում է նաև Եղիազարի հայր Թումանը, և քողը երեսին Շողոկաթ մայրը մնում է անամուսին: Ողջ մնացածները տեղավորվում են Ղարսա շրջակայքում՝ Խանի (Իշխան), Ջախն, Մագրա³, Հոբվերան⁴, Բենգլի-Ահմեդ, Դորբանալի⁵, Աղջաղալա (Ռոմանովո), Գյաղիկաթովիչ, Փոքր Փարգետ⁶, Մեծ Փարգետ, Փաղրովան, Քյուրակ-դարա, Ղզըլչախչախ, Ուզունքիլիսա, Թիքնիս, Գյորխանա, Ճալա, Արագի (Արագոլի), Բաշքաղիկար, Օրթաքաղիկար, Ներքին Զաղիկար, Բայրախտար, Համգաքարակ, Լալոյի Մավրակ, Կարմիր վանք⁷, Բագրան, Ծպնի, Ջոչի, Բվիկ, Մավրակ, Ագրակ, Տիկոռ⁸ և էլի իմ կողմից մոռացված հայաշատ գյուղերում: Մի քանի գյուղեր ես չթվեցի, օրինակ, Ղարսից դեպի արևելք կային Դաշկով⁹, Հաջիվալի, Սուբաթան¹⁰ գյուղերը, որոնք հայտնի էին:

Ուղուզլիում

Շողոկաթը հասնում է Ուղուզլի: Սպանված Թումանի եղբորորդիները՝ Նախանձ Մելիքը և Գոքորը, Հոտած Գասպարը և Գոռոզ Հայրապետը, իմանում են, որ Թումանը բերել է Սուրբ Գևորգին, ինքն էլ ճանապարհին սպանվել է, որոշում են Սուրբ Գևորգը խլել Շողոկաթի ձեռքից: Սկսում են Շողոկաթ հարսին և Եղիազարին լավ նայել: Ուղուզլի գյուղի մեջտեղում, որտեղ կանգնած էր Մայր Աստվածածին անունով մեծ վանքը¹¹, հենց այդ վանքի

1 Մինչև Մեծ եղեռնը գուտ հայաբնակ Ուղուզլի գյուղը գտնվում է Բաշ-Շորագյալ գավառի կենտրոնական մասում՝ Անիի ավերակներից ուղիղ 17 կմ հյուսիս՝ Կարսից 39 կմ արևելք:

2 Գուլեն ամուսնու մահից հետո մոտ 40 ամսից բաղկացած գերդաստանն ինքն է կառավարում: Այդ պատճառով էլ մոտ քառորդ դար կամ ավելի կոչվում են Գուլենենց: Իմ հոր մայրիկը՝ Շողոկաթ տատիկս, 1914 թ., երբ ես տասը տարեկան էի, պատմել է, թե ինչու բնակություն հաստատեցին Ուղուզլի գյուղում և դարձան Սուրբ Գևորգենք:

3 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Կարսի մարզի Կարս գավառում:

4 Մինչև Մեծ եղեռնը գտնվում էր Կարսի մարզի Ռուսական Բասեն գավառում:

5 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Կարսի մարզի Սարիղամիշ գավառում:

6 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Կարսի մարզի Զարիշատ գավառում:

7 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Կարսի մարզի Բաշ-Շորագյալ գավառում:

8 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Կարսի մարզի Նախիջևանի գավառում:

9 Մինչև Մեծ եղեռնը գտնվում էր Կարսի մարզի Կարս գավառում:

10 Նշյալ գյուղերը մինչև Մեծ եղեռնը գտնվում էին Բաշ-Շորագյալ գավառում:

11 Սր. Աստվածածին վանքը թվագրվում է 10-11 դարերով:



ՈւՂՈՒԶԼԻ (ՕՂՈՒԶԼԻ). գյուղի տեսքը հայոց զերեզմանոցի կողմից (հարավ-արևելքից)

արևելյան կողմում՝ 50 թե 60 մետր հեռու, կառուցում են յոթ-ութ աչքերից միհարկանի երկու մեծ տուն՝ իրարից մոտ վաթսու մետր հեռավորության վրա: Երբ ամեն ինչ կատարում, պրծնում են, գյուղի Սմբատ տերտերի միջոցով և նրա խորհրդով Գուլե անունը վերացնում են, և Գուլեենց անունի փոխարեն դնում են Սուրբ Գևորգենց, որպեսզի եկամտաբեր լինի: Գասպարի և Հայրապետի շինած տների վերին անկյունում կառուցում են վեց քառակուսի մետր փոքրիկ ավետարան¹², նույնանմանը կառուցում են Մելիքի և Գոքորի համար, իսկ Թումանի կնոջը՝ Շողոկաթին, խաբում են՝ ասելով.

–Երբ Եղիազարը մեծանա, կկառուցենք մաս նրա համար:

Առաջին տարին Սուրբ Գևորգին դնում են Մելիքի և Գոքորի տանը, մեկ տարի հետո Սմբատ տերտերի աղոթքով Սուրբ Գևորգին տեղափոխում են Գասպարի և Հայրապետի տուն, իսկ Շողոկաթը սպասում է, որ Եղիազարը մեծանա: Երբ հռչակվում է Սուրբ Գևորգենց, է՛լ ոտքով, է՛լ սայլերով գալիս էին, հա գալիս: Ուխտավորները բերում էին՝ ինչ սրտները կամենար: 1878 թվից սկսած, իսկ 1912-14 թթ. ինքս էլ էի տեսնում, հայկական գյուղերից շարան-շարան գալիս էին, հա գալիս դեպի Ուղուզլի գյուղի Սուրբ Գևորգը:

Եղիազարը, երբ մեծացավ, սկսեց Մելիքի և Գոքորի անասուններին խնամել, քրոջներով թրիք թափել, մեծ քրոջներով դարման կրել: Շողոկաթին համբերանք չէր մնացել, կանչում է Ուզունքիլիսայից Հոխենենց Գևորգին և իր եղբորը: 1900-ական

թվականների սկզբին նրանց միջոցով Եղիազարի համար աղջադալեցի Մարդեի աղջկան՝ Խանումին կնացու է ուզում Եղիազարի համար: Մի փոքրիկ, առանց ավետարանի տուն են շինում երկու տների արանքում:

1914-1915 թթ. զարնան գլուխ՝ մայիս ամսի առաջին օրերին, երբ դեռ դուրսը ձյուն կար, ցուրտ էր, Հոտած Գասպարը և Գոռոզ Հայրապետը գոմաղըը լցրել էին մեր տան հետևը: Հաստ շերտով ձյունը նստել էր գոմաղի վրա: Մայիսի հորդառատ անձրևն էլ երկար տեղալուց հետո քանդեց մեր տան արևմտյան կողմի պատը: Գարշաջուրը լցվեց մեր միակ և՛ հացատունը և՛ քնելու տունը, այն էլ՝ այն պահին, երբ մենք եղբայրներով կախված էինք քուրսու տակ՝ թորոնը: Գարշաջուրը լցվեցին տուն, լցվեց մաս թորոնը, ապա բարձրացավ և շեմից թափվեց շվակը¹³, որի շեմից էլ բարձրացավ և թափվեց դուրս: Երբ տան պատը ծակվեց, մենք չորս եղբայրներով լացուկոծով իսկույն դուրս թափվեցինք հորդառատ անձրևի տակ: Հանկարծ նկատեցինք, որ հարևան Թաթոսի կտուրի վրա մեր պապիկի եղբորորդիներ Նախանձ Մելիքը և Գոքորը, Հոտած Գասպարը, և Գոռոզ Հայրապետը, չիբուխները¹⁴ ձեռքներին, հարվածում են մեր անպաշտպան Եղիազար հորը, մեր լացուկոծն ավելի բարձրացավ: Այդ պահին մեր հարևան Նազարենց Մելիքի կինը՝ Սալբին, իսկույն հասավ, գրկեց մեզ և ասաց.

¹³ Միջանցք, տան գավիթ, դրսի դռնից մինչև բակի մուտքը՝ ծածկված երկայն ու նեղ գավիթ:

¹⁴ Ծառի բարակ ճյուղ՝ տերևները պոկած, որ գործածում են իբրև ձեռքի գավազան կամ անասուններին հարվածելու համար:

¹² Մատուռ, սրբատեղի:



Ուղուձևի (Օղուձևի). գյուղի տեսքն արևելքից և գերեզմանոցը

–Գնանք, բալիկներ, գնանք: Հիմա ձեր տատն ու մայրը ձեր հայրիկին կրերեն:

Մեզ համոզելով տարավ իրենց տուն՝ Նազարենց քուրսու տակ: Մի քանի թուփից հետո տատիկն ու Խանում մայրիկը ներս մտան, մեր լացի ձայնը նորից բարձրացավ: Երևում է, որ Շողոկաթ տատը և Խանում արան¹⁵ մեր խաթեր համար չէին ուզում լաց լինել: Երկու-երեք ժամից հետո, երբ մեր տունը կարգի էին բերել, չոր մոխիր ցանել, թորոնը վառել, պատը շարել էին, նոր Շողոկաթ տատիկը եկավ, մեզ տարավ տուն:

Արդեն երեկո էր, մենք դեռ նստած էինք մեր քուրսու տակ: Մեզ հետ նստած էր նաև Շողոկաթ տատիկը: Երբ Ռաֆայելը տատիկին հարցրեց՝ ինչո՞ւ էին ծեծում մեր հայրիկին, Շողոկաթ տատիկն ասաց.

–Դուք հանգստացե՛ք, ես հիմա ձեզ կպատմեմ:

Սկսեց պատմել՝ Տաճկաստանից ինչպես են փախել, Շողոկաթ տատիկին ինչպես են համոզել, որ երբ Եղիազարը մեծանա, նրա համար ևս տուն և ավետարան կչինեն: Հայր Եղիազարի վեճը Մուրթ Գևորգի համար էր: Չորս հոգով ծեծում էին մեր Եղիազար հորը, որ հեռանա, քանի որ խանգարում է:

Ուղուզլի գյուղը և ուղուզլուցիները

Ես նախ ցանկանում եմ նկարագրել Ուղուզլի գյուղը և նրա բնակիչների կարգն ու վարքը:

Ուղուզլի գյուղը գտնվում է Համզաքարակ-Քաղիկլար, Ղարալու սարի և Ղարսի Քուվերան գյուղերի արանքում: Ղարսա հարավային կողմում Ալաջա սարն է, որի մի ծայրը մոտենում է Ղարսին, իսկ մյուս ծայրը՝ Արփա և Ղարսա գետերն իրար խառնվող գետին, իսկ Ուղուզլի գյուղի հյուսիսային կողմում Ղարալու սարն է: Իմ զարմանքն այն է, թե մեր պապերն ինչո՞ւ են թողել, որ այդ անիծած թուրքերը հայոց սարերի անուններն անվանել են թուրքական անուններով, օրինակ, Ղարալու թուրքերեն նշանակում է Սև ճամփա¹⁶:

Գյուղի տարածքը սնկի նման էր: Արևմտյան կողմում, որ վերջանում էր գյուղը, մանգաղի նման ժայռերի արանքներից ժայթքում էր սառնորակ ջուրը, և այնքան շատ ջուր էր, որ դառնում էր գետ, հոսում Համզաքարակ, Կարմիր վանք և խառնվում էր Բայրախտարից եկող ջրին, լցվում Ղարսաչայի մեջ: Գյուղն ուներ մեկ փոքր ջրաղաց: Ես հիշում եմ՝ լոթո¹⁷ գյուղացիներ էին, այնքան լոթո էին, որ իրենց գյուղի սայլի և մարդու ճանապարհները կարգի չէին բերում:

Ուղուզլի գյուղի մասին շատ բան կարելի է գրել: Ուղուզլին ուներ գյուղից դուրս գալու երեք ճանապարհ, մեկը՝ արևելք՝ դեպի Համզաքարակ, մյուսը՝ դեպի Աղին կայարան, երրորդը՝ հյուսիս: Հյուսիս գնացող ճանապարհը գյուղից դուրս գալուց հետո բաժանվում է երեք ճանապարհի: Մի ճանապարհը տանում էր Արգինա, Ղզըլչախչախ և Ալեքսանդրապոլ, իսկ երկրորդ ճանապարհը կտրում էր գյուղի աղբյուրներից հոսող գետը: Այդ ճանապարհը բաժանվում էր երկու մասի, մեկը գնում էր հարավ-արևելք՝ Բայրախտար գյուղ, իսկ մյուս ճանապարհը գնում էր հարավ-արևմուտք՝ դեպի Քյաղիկլար գյուղ:

Ուղուզլի գյուղում կար երկու խանութ, որոնք պատկանում էին Ավոյին և Հովոյի Հարութին:

Գյուղում կար մի մեծ ձիթհանք, որտեղ կտավատի ձեթ էին թորում:

Ուղուզլի գյուղում 360 ընտանիք էր ապրում: Հողագործներ էին և մատիտի հաստության արորներով էին վարում, ցանում, հնձում: Այդ էր պատճառը,

16 Հուշագրի հուշերում պահպանվել է Ղարալու սարի մոտ կատարված հետևյալ դիպվածը. «1915 թ. ես և Եղիազարը գնացել էինք Փարգետ գյուղը, աշունք էր: Հասանք Ղարալու սարի մոտ: Մի երեք-չորս վերստ էր մնացել, նկատեցինք փոսի մեջ պառկած յափունջաներով 2 մարդու, իսկ դեմքերին՝ դիմակ: Իսկույն մուսենի հրացաններով կանգնեցին ու հայր Եղիազարին ստիպեցին՝ ինչքան փող ունի, հանի: Եղիազարը հանեց գրպանից, ցույց տվեց դրամապանակը, որտեղ կային կուպեկներ: Այդ երկու ավագակները թո՛ւրք էին, թե՞ հայ, մեզ հայտնի չեղավ, երբ մոտեցան Եղիազարին, ես սկսեցի բարձր ձայնով լաց լինել, և անվնաս պրծանք այդ շարագործ, անհայտ ավագակներից»:

17 Ծուլլ:

15 Խանում մորս մենք արա էինք կանչում, իսկ Եղիազարին՝ հայրիկ:

որ Եղիազարի գերդաստանի ութ անձը ձմեռվա կեսին մնում էր անհաս:

Ուղուզի գյուղում կային լավ մարդիկ:

Մեր գյուղի կատարյալ խելացի և գիտակից մարդիկ Ղազարենք էին, Յասադուցոնք, Փալեցոնց Սրապը, Հովոյի Հարութը, Աղիկենքը, մեծ տերտերան Առներն իր ընտանիքով:

Կային նաև ավազակներ: Ժամկոչենք էին: Եթե գյուղի հարևանի հետ կռվեցին, պրծավ, վաղը, մյուս օրը իր թշնամու ականջները չկային:

Այդ չար մարդկանցից էր Մուրադի Արշակը, որը սպանեց հայրիկիս հորեղբայր Սարգսի տղա քոխվա Գոքորին, քանի որ վերջինս նրան կարգադրել էր գյուղում խանչալ չկապել: Քոխվա Գոքորին սպանելուց հետո Նազարենց Մելիքի եղբայր Վարդանը դարձավ քոխվա, Յասադուցոնց Ազոն էր գրագիրը՝ Ավոյի տղա Հայրապետը:

Կային նույնանման ավազակներ՝ Չալոյենց Խաչոն: Մի աղքատ մարդ նրա տուն էր մտել՝ հաց խնդրելու: Խաչոն դուրս էր վռնդել, նա էլ հայիոյել էր: Չալոյենց Խաչոն մեծ քարերով ջարդովիշուր է անում մուրացկանի գլուխը և սպանում նրան:

Կային այնպիսիք, որ եթե կռվեցին և խռովեցին, կնշանակեր հունձի ժամանակ հնձած ցորենը, գարին այրում էին:

Մեր ընտանիքը

Մեր Եղիազար հոր ընտանիքը ութ հոգի էր. Շոդոկաթը, որ հայրիկիս մայրն էր, հայրս, մայրս՝ Խանումը, եղբայրներս՝ Ռաֆայելը, Արդունը, Դերենիկը և ես, ինչպես նաև հայրիկիս Սոնա հորաքույրը:

Գուլեն աղջիկներ և թռռներ շատ է ունեցել: Հայրիկիս հայրը՝ Թումանը, ունեցել է չորս քույր: Մի քույրը Հոբվերանում էր, Աշուղ Հարութի (մականունը՝ Նահիլ) կինն էր, մի հորքուրն էլ Տիկոռում էր, մի հորքուրն էլ՝ Մանուշը, Համգաքարակ գյուղացի գուռնաչի Հարութի կինն էր:

Ուղուզի գյուղացիները, որոնք պատվասեր ժողովուրդ էին, հալալ աշխատանք էին անում, այսինքն՝ հողագործությամբ էին զբաղվում, բայց մնում էին չունևոր. արտից ինչ դուրս կգար: Ես օրինակ բերեմ մեր հայր Եղիազարին, տարին բոլոր պարտք էր, հա պարտք, իր հորեղբոր տղաներ Մելիքից, Գասպարից պարտքով գարի, ցորեն էր վերցնում: Հունձի ժամանակ, կալին գալիս էին, չափում իրենց տված ցորենը, գարին և շահը հետը, տակը բան չէր մնում: Դա էր պատճառը, որ Եղիազարը տարին բոլոր մի չորսակնանի սայլ ուներ, լցնում էր կալից հետո և հարուստների համար վարձով աշխատում էր:

Հայրիկիս հետ

Հայր Եղիազարը, ուր գնում էր, ինձ էլ հետն էր տանում, բայց, ցավոք, մինչև հիմա չեմ իմանում՝ Ե-

ղիազար հայրս ինչու էր ինձ յոթ տարեկան հասակից միշտ տանում իր հետ: Երբեմն միայնակ մի սայլով գնում էինք շատ հեռու գյուղեր ու քաղաքներ: Ես հիմա ենթադրում եմ՝ չափ եմ եղել, տարել է հետը, որ մայրս հանգիստ մնա, թե՞ շատ խելոք և ճարպիկ ու դմարով եմ եղել, դրա՞ համար: Ղաչաղները, որ հարձակվում էին վրաներս՝ թալանելու, բարձր գոռում, լալիս էի, Եղիազարը փրկվում էր: Երևի դրա համար, թե էլ ուրիշ ինչ կարող էր լինել: Եվ, իրոք, Ղարսա կողմի գյուղացիները, եթե որոշում էին գնալ, կնշանակե քսան-երեսուն սայլերով էին գնում, և ամենքն էլ իրենց հետ ունեին հրացան, մոսեցի, բերդանկի, դափաղլի և էլի ուրիշ շատ տեսակ հրացաններ:

Հիշում եմ՝ 1914 թ. կամ 1915 թ. մոտ երեսուն հայ սայլվորներով գնացինք Կաղզման: Ես հայր Եղիազարի հետ էի: Բոլոր սայլերի վերջում մենք էինք: Մայրս՝ Խանումը, իմ հագած ֆայկի վրա կարել էր իմ գլխարկը:

Օգոստոսի վերջին օրերն էին, ճանապարհին շորերս հանել էի, մեկ-մեկ իջնում էի, հայրիկիս հետ քայլում էի: Երբ քնել էի, երագիս իմ ընկեր երեխաների հետ իբր գյուղում խաղ էի անում, այնքան քնած տեղը քացի-քացի էի արել, շորերս ընկել էին, կորցրել էի: Հայր Եղիազարը ինձ ստիպում էր հագնել, բայց ինչ հագնեի, վերջում գլխի եղավ, որ չկա, մի երկու ճիպոտ քաշեց փափուկ տեղերիս: Դե, ինչ արած:

Լուսաբացին հասանք Արագի կամուրջը: Կամուրջն անցանք. Կաղզման քաղաքը գտնվում էր ձախ կողմը, իսկ աղիանքը՝ աջ կողմը: Արթիկ տուֆի նման բաց աղիանք էր: Այդքան սայլերով գնացել էինք աղի, թուրքերի շաշխե-բախշեի օրն էր, երեք օր նրանց տոնն էր: Դրա համար նույն օրն էլ վերադարձանք մենակ: Երբ հասանք Ալաջա սարի տակ՝ Բաշքաղիկլարի մոտերքը, հայրս ինձ ասաց.

–Չայն չհանես:

Մայր կանգնեցրինք, և ինքը պառկեց գետնին ու սկսեց նայել դեպի հարավ՝ Ղարս տանող ճանապարհը: Ես թաքուն եկա Եղիազարի մոտ, պառկեցի, ջղայնացավ, բայց ոչինչ չասաց, ես հարց տվի.

–Հայրիկ, ինչու՞ ես պառկած նայում, ու՞մ ես նայում:

–Շատ խավար է, եթե պառկես ու նայես, կտեսնես:

Նայեցի, տեսա երկու ձիավորների: Իրոք, ես տեսա, հարյուր մետր հազիվ հեռու լինել քարքարոտ ճանապարհը:

–Հապա ինչու՞ ձիանց ոտքերի ու քարերի ձայնը չի գալիս:

Եղիազարն ասաց.

–Դրանք դաչաղներ են, գնում են թալանի, ձիանց ոտքերը քեչա են կապել, որ ձայն չգա:

Անցան ձիավորները: Հայրս՝ Եղիազարը, հույնի հնձած շատ լավ խոտից մի շալակ բերեց, դրեց սայ-



Ուրուիճևի (Օղուզի) գյուղի եկեղեցին

լի վրա: Ինքս էլ մտա խոտի մեջ և անուշ-անուշ քնեցի մինչև տուն:

Շատ տեղեր ենք եղել: 1914 թվին Նախանձ Մելիքն իր սայլով, մեր հայր Եղիազարը մեր սայլով (Մելիքի սայլի վրա կար այնպիսի հրացան, իսկ Եղիազարինը՝ բերդանկի էր), գնացինք Արզինա, անցանք Ղարսաչայը, գնացինք Ղզրլախաչախ և Ուզունքիլիսա՝ Հոխեսենց Գևորի տուն: Հոխեսենց Արդենը ևս իր սայլով միացավ մեզ, գնացինք Ախալքալաք, Խրտըզ և վերջապես՝ Ախալցխա: Գնացել էինք միրգ, տանձ, խնձոր բերելու:

Խրտըզում մի փոքր բլուրի տակ՝ հենց Խրտըզ գյուղի դիմաց՝ ճանապարհի վրա, եզները թողեցինք և իջանք դիմացի տուն, որտեղ կանգնած էին ջահել ամուսիններ: Մեր սայլվորները դռնաբու ուզեցին գնելու համար, մարդը կնոջն ուղարկեց՝ համտես անելու համար մի քիչ բերի: Թեյի ափսեն բերեց կինը, ափսեն տվեց ամուսնուն, ամուսնու ձեռքից ափսեն ընկավ: Կինը ձեռքով հարվածեց մարդու գլխին ու փախավ տուն՝ վախենալով ափսեն կոտրելու համար: Մարդը կարմրեց ու հարձակվավ կնոջ հետևից: Երբ Ղարսա հայերը սկսեցին վազել՝ կնոջը փրկելու համար, անվնաս անցավ: Դռնաբու չառանք, եկանք, շարունակեցինք մեր ճանապարհը և ուշ երեկոյան հասանք Ախալցխա:

Գիշերեցինք, առավոտյան գնացինք միրգ առնելու: Երբ ես բակի մեջ խաղում էի, հաղթանդամ մի հայ կին ինձ մոտեցավ, փաղաքշեց՝ ասելով. «Էս ի՞նչ սիրուն տղա ես»: Տարավ իր տան մոտ ու ինձ տանձ տվեց:

Ես վերադարձա: Հայր Եղիազարը Մելիքից ու Հայրապետից շուտ եկավ:

–Առանք,– ասաց,– բայց ես մի արկղ էլ կարմիր խոշոր հասած ճանջուր¹⁸ առա, բանջար:

Վերջապես պատրաստվեցինք մեկնելու: Չորսհինգ օրից հետո հասանք մեր տները:

Արզինա գյուղում՝ գետի ափին, կային թուրքի մի քանի ընտանիքներ, որոնք ունեին գետնին համարյա հավասար հողե տներ: Հիշում եմ՝ մի անգամ Մարգսի տղաներից, Մելիքի և Գոքորի տղան, հայր Եղիազարը և ես տարանք Արզինայի ջրաղացը աղալու: Մեզ հետ էին նաև Հարութի տղաներ Գասպարը և Հայրապետը: Երբ սայլն արձակեցին եզներից, եզներն իսկույն գնացին դեպի գետը՝ ջուր խմելու և կորան: Երբ սկսեցին փնտրել, հայր Եղիազարը քայլում էր մարագի կտուրի վրայով՝ կարծելով, թե գետին է: Կտուրը ծակվում է, և հայր Եղիազարն ընկնում է մարագի մեջ՝ դարմանի վրա, մոտենում է դռանը, գոռում: Թրքուհին լսում է, ձայն է տալիս և գնում մարդուն ասում է: Մարդը դուռը բաց է անում: Երբ Եղիազարը եկավ, եկան նաև շփոթված, կորած եզները:

Եղել եմ հայր Եղիազարի հետ Օլթի, Մերդենիկ, Արդահան, Երզնկա, Էրզրում և էլի ուրիշ շատ տեղեր: Ահա մեր քաղցր Եղիազարի կյանքն ու նրա ապրելակերպը: Մի անգամ եղանք Ադին կայարանում, Երևանի շրջակայքի գյուղերի միջոցով էր խաղող, մրգեղեն, գինի, օղի հասնում Ղարսա շրջա-

¹⁸ Երկարավուն սալոր:

կայքի գյուղերի և անգամ Ղարս քաղաքի բնակիչներին: Ուրեմն Եղիազար հայրիկի հետ եկել էինք միրգ գնելու: Եղիազարը գնաց, ես սայլից իջա, պլաստֆորմի սանդուղքներից բարձրացա և սկսեցի նայել շարվեշարան կանգնած բեռնատար վագոնների մեջ: Եվ ինչ¹⁹, յուրաքանչյուր վագոնի մեջ լիքը գեղեցիկ սապատներով¹⁹ խաղող էր: Դիշտն ասած, սիրտս ուզում էր, որ ուտեի, բայց վախենում էի, չհամարձակվեցի: Այդ պահին խաղողի տերը մտավ վագոնն ու ինձ տեսավ, նկատեց, որ ես ոչ մի բանի ձեռք չեմ տվել, այդ բարի մարդը ինձ խաղող տվեց, ես եկա սայլի մոտ ու սկսեցի մի ճուրջ ուտել: Հայր Եղիազարը եկավ, զարմացավ, ես պատմեցի, նա էլ ուրախացավ, որ ես արդեն տղամարդ եմ: Հայր Եղիազարին մեր գյուղացիները ձայն տվեցին:

–Սայլը բշի՛ր, գնացք է գալիս:

Ալեքսանդրապոլից գնացքը մտավ Ադին. գնում էր դեպի Երևան: Կանգնեց գնացքը: Վագոններից դուրս թռան զինվորները և սկսեցին աջ ու ձախ թալանել, ինչ կպատահեր: Մի հինգ-տասը կգ թալանեցին, մնացած խաղողն էլ որակից զրկեցին:

Վատ կանխազգացում

1914 թվի հունիսի ժամանակն էր, գիշերվա մոտ ժամը երեքին հայր Եղիազարն ինձ գրկեց և տարավ դուրս, դրեց սայլի վրա գցած անկողնու մեջ, համբուրեց ու ասաց.

–Ի՛ն բալիկներ, շուտ մեծացե՛ք:

Մենք ունեինք մեկ լուծ եզներ՝ Ղազախ և Վանկա անուններով: Հայրս լծեց սայլը, մոտ ժամը հինգին հասանք մեր ցանած արտին: Հայրս եղբայր չունեի, նրա եղբայրներն իր չորս տղաներն էին՝ Ռաֆայելը, ես, Արդունը և Գերենիկը: Երբ դրան շեմի վրայով ինձ գրկած դուրս էր տանում, հայր Եղիազարը մոտ տասն անգամ Հիսուս ու Քրիստոս էր կանչում և մեծ հույս ուներ, որ շուտով իր չորս զավակները կմեծանան, և ինքը չորս եղբայր կունենա: Ժամը հինգին հասանք արտը, ես, իհարկե, դեռ քնած էի, իսկ Եղիազարը չորս կոտ ցանած գարու կեսն արդեն հնձել էր: Երբ արթնացա, տեսա՝ հայրիկս հանգստանում էր, իսկույն կարգի բերեցի ինձ: Տրեխ չունեի, ոտաբոբիկ իջա սայլից ու գնացի հայր Եղիազարի մոտ: Գրկեց ինձ, համբուրեց և ասաց.

–Քիչ հետո արադ կգա:

Հայրս սկսեց հնձել, ես իմ փոքրիկ տրմդով²⁰ սկսեցի լաստերի արանքները փոցխել: Բավական ժամանակ անցավ, Եղիազարը թողեց հունձը և մի հարմար տեղ կանգնեց ու սկսեց իր ոտքով չափել, կարծեմ չափեց տասնմեկ և կես մի ուզանգի, ասաց.

–Արդեն հալալ կեսօր է, հիմա Մարդեի աղջիկը կերևա:

Ես ծղոտները ոտաբոբիկ պառկեցնում էի, որ ոտքերս չծակծկեին:

Եղիազարը նորից սկսեց հնձել: Գերանդու առջևից թռան երկու խոշոր լոր: Լորերը մտան մոտակա հնձած գարու բուլուլի²¹ մեջ, հայր Եղիազարը սկսեց հողը ցայնել բուլուլի վրա, հետո ձեռքը տարավ և հանեց երկուսին էլ: Հետ եկանք: Երբ Եղիազարը գերանդին վերցրեց, թռավ մի լոր, որի թևն ու ոտքերը գերանդին կտրել էր:

Վերջապես Խանում արբան երևաց, մի կավե կճուռ շալակած գալիս էր: Վագելով դիմավորեցի մորս: Եկավ, նստեցինք մի փոքր թաբուլի²² կողքին. ձավարով հարիսա էր բերել և գարու այլուրից մի հատ բոբոն: Ուրախ-ուրախ կերանք, մոտավորապես ժամը կլինեի մեկը կամ երկուսը: Հոգնած Եղիազարը թիկնեց թաբուլին ու քնեց: Խանում մայրս, որը մոտ յոթ-ութ վերստ կավից ծանր կճուռը շալակին ճամփա էր եկել, նա էլ թիկնեց ու քնեց:

Ես մնացի մենակ, սկսեցի խաղալ հողի հետ, բուլուլ արեցի հողերից մի քանի հատ, և հանկարծ արևը կորավ, մթնեց, ու քամի սկսվեց: Ուժեղ քամի էր, ոռնալով անցնում էր: Ես նայեցի դեպի վեր և վախեցած գրկեցի քնած մորս: Մայրս իսկույն արթնացավ, նայեց ինձ, նայեց վեր և անմիջապես ձայն տվեց Եղիազարին.

–Եղիազա՛ր, Եղիազա՛ր, մի վե՛ր նայիր, ես ի՞նչ եղավ:

Եղիազարն արթնացավ, նայեց երկնքին ու ասաց.

–Արևը բռնվել է: Բալի՛կ, քիչ հետո արև կլինի:

Մենք սև շուշայի մի կտոր գտանք, դեմ արեցինք դեպի արևը, տեսանք, որ խավարած էր: Չանցած մեկ ժամ՝ արևը դուրս եկավ, Եղիազար հայրիկս և Խանում մայրիկս խոսում էին.

–Այս տարի շատ առատ հաց կա, արևն էլ բռնվեց, էլի արյունահեղություն է լինելու, էլի պատերազմ:

Առաջին աշխատանքս

1915-1916 թվի գարնանը Ալեքսանդրապոլի շրջանի Ղասմալի²³ գյուղից բոստանչի Արամը, մոտ երեսուհինգ կամ քառասուն տարեկան հազիվ լինեի, մեր գյուղի խաչքարի տակը գեղեցիկ բոստան էր դրել գյուղի աղբյուրների ջրերից, որ գետ դառնալով՝ հոսում էին խաչքարի տակով դեպի Համզաքարակ: Մի օր հայրս ինձ տարավ ուստա Արամի մոտ և խնդրեց.

21 Փոքր դեզ՝ 3-5 փութ ծանրությամբ, որի տակից երկու ձող անցկացնելով և նրանց ծայրերից բռնելով՝ երկու մարդ տանում և դարսում են մեկ ուրիշ բուլուլի վրա և խորձ են կազմում:

22 Մի քանի շաքք լաս (գերանդու, մանգաղի մեկ հարվածով կտրած և գետնին ընկած ցորենի, գարու, խոտի յուրաքանչյուր շերտը)՝ շուտ տված և եղանակ իրար միացրած:

23 Գյուղ Արթիկի շրջանում: 1940 թ. վերանվանվել է Գետափի:

19 Դալար ճյուղերից հյուսված կողով, քթոց:

20 Փոցխ:

–Ես տղայիս տամ քեզ մոտ, թող բոստանը մուղաթ կենա²⁴: Վերջում դու, քո խիղճը, ինչ կտաս, քո բանն է:

Ուստա Արամը, իսկապես, ոռոգորմի հոգուն, բարի մարդ էր: Նա ասաց

–Թող մնա:

Անունս հարցրեց ինձանից և ասաց.

–Բոստանի մեջը ման կգաս, եթե քեզ արևածաղիկ է պետք, մի հատ կքաղես և կուտես: Ոչ ոքի չես տա, իսկ երբ անասուններ կգան բոստանը, իսկույն անասուններին կհեռացնես:

Մի երեք, թե չորս օր չէր լինի իմ աշխատելը, երբ օրը ճաշ կլինեիր, գյուղի կողմից գալիս էր Չալոյենց Մաթոսը (Չալոյենց Խաչոյի եղբայրը)՝ գող, ժուլիկ, դումար խաղացող, մարդասպան: Ես, բոստանի մեջը փոքրիկ արևածաղիկի բատատը ձեռքիս, ուտում էի: Կանգնեց իմ դիմաց և ձեռքով ինձ կանչեց: Ես գնացի բոստանից դուրս: Նա մի ապտակ խփեց երեսիս, խլեց ձեռքիցս բատատը և ինձ քարշ տալով տարավ բոստանի հողիկը ուստա Արամի մոտ և ասաց.

–Ես շան որդուն ինչո՞ւ ես պահել մոտդ, որ արևածաղիկը քաղում և բաժանում է ուրիշ լակոսներին: Ուստա՛ Արամ, ջանիդ դուրբան:

Մի ապտակ տվեց ու վռնդեց տուն: Եկա, լալով պատմեցի Եղիազար հայրիկիս, Խանում մայրիկիս: Ի՞նչ արած: Հայր Եղիազարը գնացել էր ու ասել էր, որ դա Մաթոսի կողմից կեղծիք է, գրպարտել է անմեղ երեխային: Տեսել է, որ Չալոյենց Մաթոսը իր տղին է դրել բոստանը...

Ուսումնս

Հայրս վարժարան էր տվել գյուղում երկու մեծ եղբայրներիս, իսկ ինձ չէր տալիս վարժարան, լալիս էի, ասում էի.

–Հայրի՛կ ջան, ինձ էլ տո՛ւր վարժարան:

Բայց չէր հաջողվում: Վերջապես երկար լաց լինելուց հետո՝ 1918 թ., տասներեք տարեկան էի, տվեց վարժարան, որտեղ դասավանդում էր Տիրուհին: Մի թե երկու ամիս սովորում էինք հայերեն, կրոն և ռուսերեն, գիրք ունեի՝ «Живое слово»: Սկզբից խմբով երգում էինք «Հինգալա–հինգալա», «Հայր մեր», «Վարդ կոշիկս, վարդ կոշիկս», «Ես մի ծառ եմ ծիրանի» և այլն: Ինչու Եղիազարն ինձ դպրոց չէր տալիս, ես հետո խելքի եկա, որ մեր ունեցած անասունների գոմաղըը հազիվ էր մեզ վառելու համար բավականացնում: Երկու պարկ աթար շալակով պետք է տարվեր մինչև վարժատուն, նաև նավթ և քյուգյուրդ (ծծուճք), փայտյա ձողիկներ, որ վառարանը վառեր, և ավել, որ վարժատունը ավլեր: Այդ էր պատճառը, որ ինձ ուսման չէր կարողանում տալ:

Գաղթը

1918 թ. ես համարյա 13 տարեկան էի: Թուրքը, երբ լցվեց Ղարսը, Ուղուզլի գյուղացիք նոր պատրաստված փախստի: Եղիազարը մեր չորսակնանի սայլին բարձեց անկողինը, մի տասն օրվա ուտելիք՝ հույս ունենալով, որ հետ ենք գալու: Մուրթ Գևորգի սնդուկն էլ դրել էին մեր սայլի վրա:

Եղբայրներս, մեկ տարեկան Եվգինե քույրս, Շոդոկաթ տատիկս, Խանում մայրս և ես (հայրս մնացել էր գյուղում) փախանք դեպի արևելք՝ Համգաքարակ, Քինակ, Կարմիր վանք, Լալոյի Մավրակ: Չհասած Արփաչայը՝ Բաշ-Շուրազալ գյուղն է: Հասանք Բաշ-Շուրազալ, Արփաչայն անցանք և գնում էինք դեպի Ղարս գյուղ: Մեր սայլը բողբոջ հետ էր, թուրքը կրակում էր, հա կրակում, նրանց կրակած թոփերը²⁵ չէին պայթում:

Ղարսա արևմտյան կողմի ժողովրդից շատերը փախչում էին կարճ ճանապարհով, մարդու սիրտը քար էլ լինեիր, լացը կգար: Փախչելու ճանապարհի աջ ու ձախ կողմերում թափված էր ամեն ինչ՝ ուտելիք, հագուստեղեն, անկողին, խալի, կարպետ, ջիջիմներ, գեղեցիկ կտորեղեն, ամանեղեն, յուղ, բրինձ, շաքարեղեն, էլ որ մեկն ասեմ: Երբ մոտենում էինք Ղափիլի²⁶ գյուղին, մեր սայլը դեմ առավ քարի, և եզները կանգնեցին, էլ չէին կարողանում քաշել: Ես էի հայր Եղիազարի փոխարեն տղամարդը: Եզներին ձախ թեքեցի, աջ թեքեցի, ուսս դեմ արեցի սայլի աջ, մի քանի անգամ ձախ կողքին: Վերջապես Ղազախ ու Վանկա եզները տարան սայլը: Ուրախացա ես, ուրախացան մայրս, տատս և սկսեցին խաչ հանել, որ Մուրթ Գևորգը օգնեց, թե չէ էդ մատողաշ երեխան ի՞նչ կարող էր անել: Հասանք Ղափիլի: Մեր սայլը կանգնեցրինք Խլեզենց փողոցի փոքրիկ բակում: Թուրքը հասավ Արփաչայ, մոտ տասն օր մնաց, առաջ չեկավ, տասն օրից հետո նոր հարձակվեց: Մենք նորից փախանք, գնացինք Եղանլար²⁷ գյուղ՝ Մարդինենց Գարուշի, Գեղամի, Թորգոմի տուն: Ղափիլիում մնացինք տասը օր: Ղափլեցիք կարգադրեցին չթողնել գաղթականների անասուններն արածելու ոչ մի տեղ: Թուրքը գալիս, կտորում էր, իսկ դափլեցիք մեզ դարձրին գաղթականներ և թույլ չտվեցին, որ գաղթողների անասունները սնվեին: Մենք փախանք Եղանլար՝ Մարդինենց տուն: Ճաշից հետո, երբ արդեն թուրքը մոտենում էր գյուղին, գյուղի երեք ծերունիները, սպիտակ լաթի մի կտոր շինած, դրոշակով, աղ ու հացով գնացին դիմավորելու թուրքերին: Գյուղի երեխաներից մի քանի հոգի և ես համարյա երկու վերստ գնացինք: Զինվորները, մոտավորապես տասը-տասը շարված, զենքերն ուսերին գցած, նիհար, կեղտոտ, սգեղ հագնված, գալիս էին մեռելի նման (կարծես

25 1. Թնդանոթ, 2. քնդանոթի գնդակ;
26 Գյուղ Շիրակի մարզում: 1947 թ. վերանվանվել է Գուսանագյուղ:
27 Գյուղ Շիրակի մարզում: 1948 թ. վերանվանվել է Արևշատ:

24 Պահպանել, հսկել:

կարգին հաց կերած չլինեին): Մի հարյուր հայ քաջ տղաներ որ լինեին, դրանց հազարը կոչնչացնեին: Ծերունիների աղն ու հացն ընդունեցին, եկան, հասան գյուղ, տեղավորվեցին ու սկսեցին հայ ջահելներին հավաքել և տանել Ղարս: Ներս մտան Մարդինեց տուն: Գոմուն հայր Եղիազարը անասունների տակն էր ավլում: Բախտի բերմամբ նրա վրա ուշադրություն չդարձրին, կարծեցին՝ ծերունի է:

Հայր Եղիազարին Նախանձ Մելիքը կանչում է.

–Արի ընտանիքով գնանք Ալեքսանդրապոլ:

Եղիազարը հարցնում է.

–Չե՞նք բռնվի:

–Իհարկե, ո՛չ,– ասում է, նա, փաշա են գտել, ես երեք ոսկի պետք է տամ նրան, որ մեզ տանի:

Եղիազար հայրիկն ուրախանում է, գալիս է տուն և ասում Խանում մորս: Մայրս ասում է.

–Գյուղի խաչհամբույրի փողն է, որ ճիշտ լինի, լավ է:

1918 թ. օգոստոս թե սեպտեմբեր ամիսն էր, թուրք փաշան մեզ՝ երեք սայլվորներիս երեք ընտանիքներին տարավ մինչև Ալեքսանդրապոլ քաղաք: Մելիքի և Գասպարի ընտանիքը տեղավորվեցան Թանոյենց տներում, իսկ մեր ընտանիքը՝ Բուլոշնիկ Համբարի տանը, որտեղ մեզանից առաջ կար Ղարսա աղջաղալեցի Խանում մորս բարեկամ մի ընտանիք: Նրանց անունները համարյա մոռացել են, բայց աղոտ հիշում են, որ տանտիրոջ անունը Կարո էր:

Մեր սայլը կանգնեց մի բաց բակում: Դեռ սայլից լրիվ չէինք իջեցրել անկողինը և հացահատիկը: Եղանլարից հայրս երկու պարկ գարի էր գնել: Չմոռանամ ասել, մենք ունեինք բերդանկի հրացան: Հրացանը սայլի վրա՝ անկողնու մեջն էր, բայց ամենից տակն էր դրած: Երբ Եղիազարի ընտանիքը սայլից իջավ, այդ պահին սպիտակ ձիով թուրքի մի փաշա իսկույն կանգնեց մեր սայլի մոտ և ձիուց իջավ, բարևեց: Հայր Եղիազարն ու Կարոն իսկույն փախան, որպես տղամարդ՝ մնացի միայն ես: Խանում մայրս, Շողոկաթ տատիկը սկսեցին լացուկոծը, երբ փաշայից լսեցին.

–Արաբան թեզ օլ բոշալը²⁸:

Ես կարծես անվախ էի, տեսա, որ մեծ եղբայրս՝ Ռաֆայելը, Խանում մայրս մոտեցան և սկսեցին անկողինը գունդուկծիկ վերցնել: Ես թույլ չտվեցի, որ մեկը մոտենա՝ մտածելով հրացանի մասին, որովհետև փաշան մեր հրացանի պատճառով մեզ շատ բան կարող էր անել: Դրա համար էլ ես սկսեցի երկու ձեռքերս տանել դռնակի կամ վերնակի տակ և անկողինը հրացանով վերցնել: Այդպես էլ սայլը լրիվ դատարկեցինք: Թուրքի փաշան ոչինչ չհասկացավ: Երբ դատարկեցինք, պրծանք, փաշան հրամայեց. «Մյուր²⁹»:

28 «Շտապի՛ր դատարկել սայլը»:

29 «Քշի՛ր»:

Խանում մայրս, Շողոկաթ տատիկս համարյա ուշաքափվում էին: Ի՞նչ արած, քաջի մման ռիսկ արեցի, մոտեցա մորս, տատիս և ասացի.

–Մի՛ք վախենա:

Ինձ տարավ Ալեքսանդրապոլի ներկայիս շուկայի հետևը: Պահեստներ կային, որտեղից հայ բանվորներն արկղներով բարձում էին պահածոների տուփեր, տանում էին մինչև Ռումի Յապոյի գորանոցներ: Մատուռ կար, մատուռը չհասած՝ մինչև ուշ երեկո պահեցին ինձ:

Ես՝ տասներեք տարեկան գյուղացի տղա էի 1918 թվին՝ քաղաք չտեսած, ծնված օրից ծնողներից հեռու չապրած, քրքրված վերջին տրեխներով: Թուրքի փաշան հրամանը կատարելուց հետո ինձ ասաց.

–Գալ բուրայա³⁰:

Իջա սայլից, մոտեցա փաշային, նա ինձ տվեց մի տուփ պահածո և մեկ թահին, թահինը (ինչպես մեր Էրեբունի հացը) և ասաց.

–Գիտ չոջուխ³¹:

Ես եզների հետ կենդանի վերադարձա տուն և շատ հանգիստ կարողացա գտնել Բուլոշնիկ Համբարի և նրա կնոջ՝ Շուշանիկի տունը: Երբ հասա տուն, Խանում մայրս, թեև բաց արած, գրկախառնվեց, հետո՝ տատս, եղբայրներս, հարևաններս: Մայրս ինձ տարավ տուն, հայրս մի անկյունից Կարոյի հետ դուրս եկավ, սկսեցին ճակատս համբուրել:

Մի հինգ օր հետո Կարոյի տղայի և հարևաններից երկու տղաների հետ չորս ընկերներով մեր ունեցած անասունները տանում էինք Պոլիգոնի գորանոցներից էն կողմն արածեցնելու: Մենք, բացի Ղազախից ու Վանկայից, ուրիշ անասուն չունեինք: Մի կով ու մի էրինջ կային, հայրս վաճառել էր, դրանով էլ ապրում էինք: Մեկ ամիս կլինեք, ես արդեն ամեն ինչի հետ ծանոթացա, ամեն ճանապարհ սովորեցի, և կարող էի ասել, որ ես իսկական գյումրեցի եմ: Ուրեմն մեր ունեցած երկու եզները հայր Եղիազարը տանում էր Թանոյենց գոմը: Չնայած մեր ապրած տեղը գոմ կար, Կարոյի անասուններն էին մնում: Կարոն, ինչպես է լինում, գոմի դուռը ուշ է փակում, և հանկարծ նորից մի սպիտակ ձիավոր փաշա անմիջապես իջնում է ձիուց, ձին քաշում գոմը: Կարոյի ընտանիքին ասում է.

–Ղորխմա³², ձիս դինջանա, քիչ հետո ես կերթամ:

Եվ երբ խավար գիշերը վրա է տալիս, վախից նրանք այլևս դուրս չեն գալիս:

Լուսաբացին ես արթնացա, լացուկոծն ընկել էր տունը: Մրիկա փաշան հինգ անասունն էլ տարել էր՝ երկու եզներ, երկու կով և մի էրինջ: Էլ ի՞նչ կարող էին անել, տարան ու տարան: Բայց մի քանի օր

30 «Արի՛ ախտեղ»:

31 «Գնա՛, երեխա»:

32 «Մի՛ վախեցիր»:

հետո ես նկատեցի Պալիգոնի շենքերի առջևում՝ երկաթյա ցանցի մեջ, երկու կարմիր անասուն արածում էին: Մյուս օրը գնացի մոտիկ, տեսա, որ խնամի Կարոյի անասուններն էին, միայն եզան մեկը կերել էին: Տուն գալու ժամանակն էր: Ես մեր անասուններին թողեցի իմ ընկերներին, որ բերեն, և Պալիգոնից ոտաբոքիկ վազ տալով՝ եկա տուն, խնամի Կարոյին ասացի:

–Մյուժդես³³ ի՞նչ է, խնամի Կարո, ձեր անասունները գտել եմ, բայց եզու մեկը չկա:

Խնամի Կարոն գնաց, չորս անասունները բերեց, իսկ ինձ մեկ բաժակ արևածաղիկ առավ: Բուլոշնիկ Համբարի տանից դուրս եկանք, եզները հայր Եղիազարը չնչին գնով վաճառեց, կերանք:

1918-1919 թվի ձմռանը մենք տեղավորվեցինք Ումի Յապոյի կազարմեքը և այդտեղ էլ մեկ տարի քաղցած մնացինք հայր Եղիազար հայրս, Խանում մայրս, Շողոկաթ տատիկս, Ռաֆայելը, Դերենիկը, ես և երեք տարեկան Եվգինե քույրս: Արդուժը գյուղում մահացել էր: Հայր Եղիազարը սովամահ եղավ Ումի Յապոյի կազարմեքի մեջ: Մովի պատճառով ոչ մի ուշադրություն չէինք դարձնում մեր հոր դիակի վրա: Մոտ տասնհինգ օր հետո նոր դիակ հավաքող սայլի զանգի ձայնը եկավ, դիակներ բարձեց մի սայլի վրա, տարան, թե ո՞ր, չիմացանք:

Եկավ 1919 թ.: Մոված վերադարձանք գյուղ: Գյուղում ի՞նչ պիտի անեինք: Մայրս փոքրիկ Եվգինեի և Դերենիկի հետ Աղջաղալայից եկած սայլով վերադարձավ հոր տուն: Ես և Ռաֆայելն էլ որոշեցինք գնալ Ալեքսանդրապոլ, թե չէ սովամահ կլինեինք: Գյուղից դուրս եկանք առավոտ կանուխ, մի կերպ մեզ գցեցինք թուրքի գյուղը՝ Ինջաղարա, որպեսզի կիսակայարանից նստեինք, գնալիս Ալեքսանդրապոլ: Մեծ եղբայրս խեղճ էր և զուցե ամաչում էր, բայց քաղցը նրան կուչ էր բերել, ես ասացի.

–Մտնենք թուրքի տունը, հաց խնդրենք:

Մտանք և ուզեցինք, չտվեցին: Մեզ դուրս արին, ես Ռաֆայելին ասացի.

–Դու մոխիր և գնա՛ առաջ, հաց ուզի՛ր:

Այնտեղ էլ չտվին, բայց ես այդ տանից վերցրի մի թաս (երևի ալյումին էր), տարանք մյուս հարևանի տուն, ծախեցինք հացով: Մի տնից էլ վերցրի մեկ կողպեք իր բանալիով, տարանք մյուս հարևանի տուն և փոխանակեցինք հացով: Այդ տնից վերցրի ոչխարի մեկ տիկ, տարանք: Տկի միջին կար մոտ 1 կգ կամ 500 գ լոռ: Հանեցինք, իսկ տիկը նույնպես փոխեցինք հացով և սկսեցինք արագ-արագ գնալ դեպի կիսակայարան: Հասանք կիսակայարան. մի քանդված շենք էր: Երկուսով այդ հացն ամբողջությամբ կերանք ագահ խոզի նման, նոր եմ վերիջում թուրքի Ինջաղարա գյուղը տները մտնելը և ոչ մի տղամարդ չտեսնելը: Եթե տղամարդ տեսնեինք,

մեզ՝ երկու եղբայրներին էլ հավանական էր, որ ոչնչացնեին:

Ես և մեծ եղբայրս Ալեքսանդրապոլի Կազաչի պոստի որբանոցում Ջավահիր խանումի խմբից էինք, օրական երեք-չորս անգամ փախչում էինք: 1922 թվին մեզ՝ քառասուն տղաներին և քառասուն աղջիկներին լցրին վագոն. տանում էին Ամերիկա: Երբ հասանք Թիֆլիզի Նաֆթուլուր կայարանը, ես սկսեցի լաց լինել և Ռաֆայել եղբորս ասացի.

–Մեր մայրը մեղք է, ու՞ր ենք գնում, չէ՞ որ արաս, Դերենիկը, Եվգինեն մնալու են անտեր: Արի՛ փախչենք:

Ես, եղբայրս և մի աղջիկ իջանք վագոնից, իբրև ջուր խմելու էինք գնում և փախանք: Ես և եղբայրս Հավլաբարի պատերի տակ նստանք, սպասում էին լուսաբացին: Մի վրացի մեծ բարություն արեց մեզ, բայց մենք (կամ ավելի ճիշտը մեծ եղբայրս) քաջություն չունեցանք, որ մնայինք այդ փռի տիրոջ մոտ: Նա մեզ տարավ փուռը, եգիպտացորենից հաց կերցրեց և դուռը փակեց ու գնաց: Մենք էլ երկու եղբայրներով քնեցինք փռի կտորի վրա: Երբ լուսացավ, արթնացանք, հատակի վրայից փող գտանք: Երբ ուստեն եկավ, տվեցինք իրեն, հասկացանք, որ նա դիտավորյալ է գցել, որ մեզ փորձի: Ռաֆայելը չդիմացավ, օրական հինգ անգամ դանտալով ջուր էր բերում, դրա համար ասաց.

–Արի՛ գնանք:

Ճաշից հետո ելանք, փախանք Հավլաբարից, նորից գնացինք Նաֆթուլուր կայարանը: Ոտքով էինք գնում: Անձրև էր գալիս հեղեղի նման: Հասանք կայարան և թրջված շորերով պառկեցինք սպասարանի բետոնե հատակին: Մեջք մեջքի տվեցինք և քնեցինք: Լուսաբացին վեր կացանք և քաղցած մտանք կայարանի գնացքների մեջ: Հայերեն խոսող չկար, որ իմանայինք, թե որ գնացքն է գնում Ալեքսանդրապոլ:

Կայարանի մայթի վերևի ծայրին՝ արևելյան կողմում, երկու եղբայրներով նստեցինք, և այդ պահին քամին թղթերի հետ տասը ռուբլիանոց փող բերեց: Ես վազեցի, վերցրի, հաց առա, կերանք նույն տեղում և լսեցինք, որ մի վրացի գոռում էր. «Մարտարաբեղի Երևանչի»³⁴: Ես և եղբայրս թաքուն բարձրացանք գնացքի վագոններից մեկի վրա և զույգ ձեռքերով բռնեցինք կլոր օդանցքի խողովակից: Մեկ ուրիշ վագոնի վրա պառկում է մեզ նման մի տղա, և գնացքը շարժվում է:

Մայիս ամիսն էր: Հայ, թուրք, վրացի իրար հետ լավ չէին, նամանավանդ հայն ու թուրքը: Երբ Քուռ գետն անցանք, մի կայարանի մոտ կանգնեցինք: Երկրորդ կայարանը մի բարձր շենք էր: Դեսպանը, նկատում է ինձ, եղբորս և մի ուրիշ տղայի, որի անունն իմ անունից էր՝ Բագրատ: Թույլ չի տալիս, որ գնացքը շարժվի, մինչև մեզ չի իջեցնում: Գնաց-

33 Ընձա, որ տալիս են ավետալի լուր բերողին:

34 «Երևան գնացող մարդատար գնացք»:

քը գնալուց հետո նա մոտենում է մեզ, շատ քիչ հայերեն գիտեր, հարցնում էր. «Հայ (սոմեխի) ո՞ր գնա»: Երբ լսում է Ալեքսանդրապոլ, ասում է.

–Ոտքով գնա՛ Սանդարո, գնացք կա, գնա՛:

Եղբայրս լաց էր լինում. երևի հասկանում էր, որ կարող է մեզ վտանգ լինի, իսկ իմ մտքով ոչինչ չէր անցնում, ուրախանում էի, որ մորս էսօր կամ վաղը տեսնելու եմ: Սկսեցինք ոտքով գնալ: Ճանապարհին թթի ծառի հանդիպեցինք: Դեռ հասած չէր, բայց մեկ-մեկ հասածներ կային: Այդպես եկանք ճանապարհի կեսը, տեսանք՝ գծի մեջտեղում կանգնած էր մի թուրք՝ մի մեծ խանջալն էլ կապած առջևում: Երբ հասանք, մենք բարևեցինք, հարցրեց մեզ. «Նա միլատան³⁵»:

Ես ասացի.

–Էրմանի:

Մեզ կարգադրեց.

–Գնացե՛ք, այն բլուրի վրա արածող ձիուս բերե՛ք:

Երեքով միասին գնացինք, ձիուն բռնեցինք, թուրքը ոտքից հանեցինք և բերեցինք: Երբ հասանք թուրքին, տեսանք, որ գծի վրա իրարից մի քսան սմ հեռու-հեռու շարված է երեք կտոր իրենց փոխ եփած կլոր սոմի հաց:

–Քաղրն հեր բիրինիդ³⁶:

Իսկույն վերցրինք: Չկերանք, ուղղակի հոշոտեցինք հացը:

Հասանք կայարան, մայթերի վրա շատ կային խնձորներ, ձմերուկի կճեպներ: Կերանք խոզի մման և մի կերպ հասանք Ալեքսանդրապոլ: Գնացինք, Արգինու Ղարսաչայի կամուրջը անցանք և հասանք մեր գյուղ՝ Ուղուզլի: Մայրս, եղբայրս՝ Դերենիկը, և քույրս՝ Եվգինեն, տանն էին, ուրախացան: Պատմեցինք մեր գլխի եկածը, մայրս լաց եղավ:

Մի անգամ գյուղում խոսակցություն ընկավ, որ Օղեսայի այլուր են տալիս: Փալեցոնց Մակարի տանը դարսած էր տասնվեց կիլոգրամանոց սպիտակ տոպրակներով այլուրը: Գյուղի Մմբատ տերտերի գլխավորությամբ բաժանում էին, երբ հերթը հասավ մեզ, Խանում մայրիկս սկսեց արտասվել, տերտերը կարգադրեց մեզ՝ երկու եղբայրներիս այլուր չտալ: Ես լաց եղա և վազեցի, մի քանի քար հավաքեցի ու սկսեցի բարձր ձենով լաց լինել, քարերն էլ շարտել տերտերի վրա: Ավոն ու Մելքոնը սուրբ հորը դիտողություն արին: Ամոթից տվեց մեր՝ երկու եղբոր բաժինը: Ցավոք, երկար չմնացինք մեր գյուղում և նորից փախանք Ալեքսանդրապոլ: Գիշերում էինք Ծաղիկենց խանի մեջ:

Այդտեղ դառաբան³⁷ էր սարքած, տախտակից թախտ՝ մոտ չորս մետր գետնից բարձր: Քնում էինք այդ թախտի վրա: Հանկարծ մի գեղեցիկ օր բնեց

հայր սուրբ անիծյալ Մմբատ տերտերը և մի ամիս քնեց նույն թախտի վրա: Ոջիլ, վա՛յ, ոջիլ, գուցե հավատացող չլինի: Ես ասեմ, ամենքիս վրա հազար, դու ավելին ասա:

Ցերեկները դուրս էինք գալիս փողոց՝ ստամոքսներս որևէ մի բան լցնելու, եթե չէր ճարվում, դուրս էինք գալիս դաշտ և սկսում ուտել անասնակերը: Երբ հոգիներին հասավ, սկսեցինք ամեն տեսակի բան փախցնելը, գողանալը, գոռով խլելը: Մի երկուերեք ամիս Ծաղիկենց խանը ապրելուց հետո, կարող եմ ասել, որ լավ չեմ հիշում, թե ոնց դուրս եկանք, ապրեցինք 24 փողոցի վրա՝ սկզբից Կակոսենց տների մոտ: Կարմիր աղբյուրն էլ Կակոսենց տան հյուսիսային կողմն էր: Հետո, իհարկե, տեղավորվեցինք Կակոսենց բակի մեջ գտնվող սենյակում՝ 20 քմ տարածքով:

Մի քիչ կարծես մեծացել էինք. սկսեցինք դուլեր ճարել և գնալ կայարան: Մագութ էինք հավաքում: Չնայած թուրք ասկյարները նկատելիս կրակում էին մեզ վրա, բայց մենք փախչում, թաքնվում էինք ցորենի և գարու արտերում: Երբ դեռ այդ մագութով ապրելու ճանապարհը չէինք գտել, նոր էինք տեղափոխվել այդ տուն, մենք ունեինք մեկ ձեռք անկողին՝ կեղտոտ, քրքրված, և մենք՝ երեք եղբայրներս, քույրս և մայրս, քնում էինք այդ կեղտոտ մի վերմակի տակ: Թիթեղից վառարանի մեջ դնում էինք մեկլիտրանոց թիթեղյա բաժակ, միջին դնում էինք քրջի կտոր, մագութը լեփ-լեցուն լցնում էինք և վառում: Միջանցքում ունեինք թորոն, որը վառում էինք հազիվ տասնհինգ օրը կամ ամիսը մեկ անգամ, երբ փողոցներից վառելիքի կտորներ էինք հավաքում: Դա լինում էր մեր երջանիկ օրը: Մեր Խանում մայրիկը ասում էր.

–Հանե՛ք ձեր շորերը:

Եվ ի՞նչ. յուրաքանչյուրիցս հազարից ավելի ոջիլ էր թափվում թորոնը, երբ մեր շորերը մեր մայրիկը թափ էր տալիս: Իսկ ցերեկը, երբ հանգիստ էինք լինում, արևակողմում նստում էինք ու սկսում եղունգներով ոջիլը ջարդել: Երբ Ռաֆայել եղբայրս և ես մագութ կրեցինք, սկսեց և՛ մեր տանից, և՛ մեզանից ոջիլը հեռանալ: Մագութի գործը վերջացավ, մի քանի օրից հետո Ռաֆայելն անցավ աշխատանքի Ալեքսանդրապոլի Կազաչի պոստի պերսոնալի մոտ՝ որպես պահակ, իսկ ես Կազաչի պոստի որբանոցում էի՝ Ջավահիրի խմբում: Չնայած ես դեռ փոքր էի, տասնհինգ տարեկան, ինձ հագրել էին սկաուտի շորեր³⁸: Ես հաճախակի փախչում էի, բայց երբեմն բռնում, բերում էին որբանոց: Մի անգամ էլ փախա ու փախա:

Ռաֆայելը սիրահարվել էր շատախցի որբ Արաքսի Միմոնյանին: Արաքսու հետ տասներկու տարի մեկտեղ ապրել էր Միրանույշ անունով մի

35 «Ո՞ր ազգից ես»:

36 «Վերցրե՛ք ամեն մեկը»:

37 Տախտակե ցածրի պատ:

38 1920 թ. Վահան Չերազը Ալեքսանդրապոլի Կազաչի պոստ որբանոցում ստեղծում է Սկաուտական կազմակերպություն:

աղջիկ: Երբ Ռաֆայելն ամուսնացավ Արաքսու հետ, նրա ընկերուհին՝ Վանա Ավանց գյուղացի նավավար Հակոբի դուստրը՝ Հակոբյան Սիրանույշը³⁹, լալիս էր: Ռաֆայելը կանչում է Սիրանույշին, իմանում է նրա լացի պատճառը, որ առանց Արաքսու նրա վիճակը լավ չի լինի, ասում է.

–Լավ, դու էլ կգաս մեր տուն: Ես քեզ կօգնեմ քրոջ պես:

Արաքսին և Սիրանույշն աշխատանքի անցան Պոլիգոնի կարուձևի արհեստանոցում: Ես Կապսում Լենգեֆի էլեկտրոկայանում բանվորություն էի անում: Մակայն հետո Կապսի Լենգեֆի սևագործ բանվորի գործը թողեցի, եկա տուն: Առավոտյան կանուխ գնում էի գյումրեցի Արշակի տղա Չոնիկի (Օնիկի) խանութը: Նա իր չորս-հինգ ընկերներով Հայաստանի շրջաններից քթոցներով տարբեր տեսակի միրգ էր բերում: Մեկ քթոցի քաշը 50 կգ էր: Սկսեցի խաղող կամ այլ միրգ վաճառել:

1924 թ. ամուսնացա Սիրանույշ Հակոբյանի հետ, քավորն էր Ղարսա Գեղիկասարմիշ գյուղացի մեր հարևան Եղիշը:

1926 թվի դեկտեմբեր 6-ին⁴⁰, երբ Լենինականում ուժեղ երկրաշարժ եղավ, ես սովորում էի բանֆակում: Ուսանողները, իրար ջարդելով, փախչում էին, ես էլ կայծակնային արագությամբ հասա տուն: Մեր տունը քարուքանդ էր եղել: Խելագարի պես դուրս թռա: Երբ ես գտա Սիրուշին և որդուս՝ Ռեմիկին, քիչ հետո դիուչի Պողոսի տներից դուրս եկան նաև մայրս, Ռաֆայելը, Դերեմիկը, Եվգենեն և Արաքսին: Քանի որ երկրաշարժն անընդհատ խաղում էր, ստիպված մի կերպ մեր ընտանիքով սայլով տեղափոխվեցինք կայարան:

Գիշերը սկսեց ձյուն տեղալ: Մեր դիմացը՝ մի հարյուր մետրի վրա, կային դատարկ վագոններ: Ես գտա վառարանով մի վագոն, իսկույն ընտանիքս տեղափոխի վագոնի մեջ: Վառարանը վառեցի, տաքացանք, չորացանք: Մյուս օրը լսեցի, որ ուլքեր տուն չունեն, կարող են գնալ Բաքու: Ես էլ ջահել, անխելք, քսանմեկ-քսաներկու տարեկան անփորձ տղա էի, խելքս սղմեց, և հինգ-վեց օր լաց լինելով՝ ընտանիքով հասանք Բաքու: Բաքվի կառավարությունը մեզ բոլորիս տեղավորեց Բիրժի տրուտի շենքում՝ ծովափին: Հետո բաժանեցին երկու մասի: Երանի չմնայինք, չեք պատկերացնի, թե որքան դժվար և անտանելի վիճակի մեջ էինք, չնայած երկար ժամանակ գաղթողներիցս յուրաքանչյուրին 50 կոպեկով էին օգնում: Սիրանույշն աշխատում էր Լենինի անվան մանվածքի գործարանում: Ես էլ հետո աշխատանքի անցա հացի փռում:

1927 թ. մայրս՝ Խանումը, Ռեմիկին տարել էր Լենինական: 2-3 ամիս մնաց Լենինականում՝ տատիկի մոտ: Սիրանույշն էլ չէր կարող դիմանալ,



Բագրատ Սարգսյանը զավակների հետ, 1953 թ.

ստիպեց ինձ, որ գնամ, բերեմ: Ես գնացի, մոտ տասն օրից ավելի տևեց, մինչև վերադարձա: Երբ եկա, Սիրանույշը հիվանդացել էր, ինքն էլ հոլի էր: 1928 թ. հունվարի 11-ին նրան տեղափոխեցին Ազիզբեկովի ծննդատուն: Մեկ օր հետո ասին, որ երեխան կենդանի է, իսկ մայրը մահացել է: Ես խելագարվածի պես լացով, գռռալով երբ գնացի, դիակը տեսա՝ կոկորդի տակից մինչև պորտի մոտ ճղված, ծակբռած ու կարած, ինչպես տրեխը: Հետագայում հասկացա, որ շատ հեշտ կարող էին փրկել, բայց, երբ իմացել են, որ հայ է, ուղղակի մորթել են⁴¹:

Կնոջս մահից հետո ես վերցրի երկուսուկես տարեկան Ռեմիկիս և նորածին Կոլյային ու մեկնեցի Լենինական: Երկրաշարժի հետևանքով շատ տներ

39 Սիրանույշի եղբայրը՝ Հովհաննեսը, ևս մնում էր որբանոցում:

Մակայն նրա հետագա ճակատագիրն անհայտ է:

40 Երկրաշարժը տեղի է ունեցել հոկտեմբերի 22-ին:

41 Դեպքի վերաբերյալ հուշագիրը գրում է. «1956 թվին էր կարծեմ, Ղարաբաղի գյուղերից մեկում դպրոցի դիրեկտորը կազմակերպում է, և երեք հոգով փոքրիկ մի հայ տղա երեխայի տանում են թուրքի գերեզմանի մոտ և սպանում, մատաղ անում, կարծեմ իր եղբոր գերեզմանին: Դպրոցի դիրեկտորը երզվել էր, որ յուրաքանչյուր տարին մեկ պետք է սպանի՝ որպես մատաղ: Դատարանը երեքին էլ պատժում է, բայց դիրեկտորին՝ մեկ տարով: Երեխայի հարազատները բողոքում են Մոսկվա, նորից դատ է կայանում, և նորից դպրոցի դիրեկտորին մեկ տարի են տալիս: Ստիպված սպանված երեխայի հարազատները երեք մարդասպաններին, երբ դնում են դատարանից ծածկած մեքենայի մեջ, որ տանեն, շուտ են տալիս մեքենան և բեմզիմով այրում են, երեքն էլ այրվում են: Այս դեպքերը եղել են 1955–57 թվերին, իսկ իմ Ռեմիկի մայր Սիրանույշի դեպքը 1928 թվի հունվար ամսին էր»:

Էին քանդվել, բայց կառավարությունը տախտակներից բարաքներ էր կառուցել: Ջրաղացի բակի մեջ մոտ քսան բարաքներ ևս կային կառուցված, որտեղ ապրում էին նաև հարազատներս: Երբ Բաքվից ես երեխաներով եկա Լենինական, ինձ և երեխաներիս ոչ մեկը տեր չեղավ: Երեխաներիս տանում էի մսուր, ես էլ աշխատում էի տեքստիլ գործարանում: Վեց ամիս հետո մի օր ծանոթ մի կոշկակար Արտուշն ու կինը եկան և խնդրեցին, որ փոքրիկ Կոլյային դարձնեն իրենց երեխան:

Ես շատ վիրավորվեցի.

–Արտուշ ջան, ես ո՞նց կարող եմ իմ երեխային տամ, տանես:

Բայց մի շաբաթ էլ անցավ, և ես ստիպված համաձայնվեցի և տվեցի Կոլյային: Տվեցի նաև թուղթ, որ հետագայում երեխային չպահանջեմ: Վեց ամիս հետո եկան և ասացին, որ Կոլյան մահացել է: Խնդրում եմ՝ գաք, տանեք: Գնացի և բերեցի տուն: Թաղեցի Կոլյայիս: Մնացինք ես և Ռեմիկս: Որոշեցի ամուսնանալ: Ամուսնացա Ղափլի գյուղում ապրող Արթիկի շրջանի Արմտլի գյուղից Աղավնու հետ:



ՌԱՇԻԴ ՀԱՐԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(1876 -1969)

Համառոտ կենսագրություն

Ռաշիդ Հարիկի Մանուկյանը ծնվել է 1876 թ. Վասպուրականի Շատախ գավառի Թաղ ավանում:
1893 թ. բազմաթիվ շատախցիների հետ ձերբակալվում է և տարվում Վանի բանտ: Ազատվում է 1896 թ. մայիսի 1-ին:
1897 թ. ամուսնանում է շատախցի Կաքավի հետ և ունենում 9 զավակ՝ 5 տղա և 4 աղջիկ (2 աղջիկը և 2 տղան մահանում են մանուկ հասակում):
1915 թ. մասնակցում է Շատախի ինքնապաշտպանությանը: Վասպուրականցիների առաջին՝ հուլիսյան գաղթից հետո ընտանիքով հաստատվում է Երևանում:
Վախճանվել է 1969 թ. Երևանում:
Ռաշիդ Մանուկյանը հայերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներով գրել է բազմաթիվ բանաստեղծություններ:

ՀՈՒՇԵՐ ԻՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Բնիկ շատախցի, Կենտրոնից Ռաշիդ Յարիկի Մանուկյան, ծնել էմ 1876 թին, Վարդավառի կիրակի առաւօտ: Մենք ամբողջ պապերով եղեր ենք հողագործ: Մէկ-մէկ՝ միևնոյն ժամանակ կծառայենք կառավարութեան: Պաշտօնեա հայրս շատ ճարպիկ, լեզվանի, թուրքերէնից հասկացող, ազատախօս մարդ էր, ժողովուրդի քվեարկութեամբ համարեա միշտ դատարանի անդամ էր: Եթէ դատարան մի սխալ որոշում հանէր կամ մի մարդու արդարութեամբ չվճռէր, սխալ վճիռ տար, հայրս երբէք դատարանի տուած որոշում չէր ստորագրի, դատարանի նախագահը պարտաւորուած իր տուած վճիռ պիտի ուղղէր, յետոյ հայրս ստորագրէր: Հայրս միշտ դատարանի ատենակալ էր:

Մեր ընտանիք վեց շունչ էինք:

Ես փոքր էի, երբ մայրս մահացավ: Մնացի որբ: Իմ հայր ինձի չափազանց կը սիրէր: Հետո հայրս կարգվեց մի շատ առաքինի կնոջ հետ: Մեզի շատ լավ կը նայէր, մեր իսկական մորից մենք չենք տարբերի այնքան, որ մեզի լավ կը նայէր:

1893 թի յունուար 1-ին Կիլիկեան աղջիկ Կարաի հետ նշանվեցի:

1892 թ. վերջին կամ 1893 թականի փետրուարի 15-ին, մեր Շատախի կենտրոնի՝ Թաղի մէջ թուրքական մի զինուորական սպա ըսպանվեց, այնպէս, որ անյայտ կորաւ: Դրա պատճառով մենք կրակ ընկանք թուրք կառավարութեան ձեռք: Տասը օր շարունակ զինուորներով խուզարկել, ծեծել, բանտարկել, տանջել, նույնիսկ փոքր երեխաներին ծեծել սկսան: Ոչ մի նշան, ոչ մի տեղեկութիւն չկարողացան յայտնաբերել:

Միմակ մի թուրք գտան 12 երիտասարդի ստորագրութեամբ, իբր թէ մենք պետութեան դէմ ենք: Այդ թուրքի պատճառով 12 երիտասարդներ ձերբակալեցին: Տասնվեց օրից յետոյ զինուորականի դիակը Տիգրիս գետի մէջ գտան՝ կենտրոնից 20 րոպէ ներքև՝ Տիգրիս գետի մէջ, եւ նորէն սկսեցին բանտարկել: 120 մարդ նորէն բանտարկեցին, 15 մարդ՝ իշխաններից և առետրականներից, 105 մարդ երիտասարդներից¹: Երկու ամիս յետոյ բոլորին ազատեցին, մնաց 28 մարդ բանտում:



Շատախի գավառամիստ Թաղ ավանը (լուս.՝ 1900-ական թթ.)

Քանի որ չը կարողացան սպանողին յայտնաբերել, որոշեցին ինձ բանտարկել՝ մտածելով, որ հայրս ինձ ազատելու համար կարող էր սպանողին գտնել և յանձնել:

Երկրորդ օր ինձի կանչեցին, քննեցին և մարտի 5-ին բանտարկեցին որպէս սպանողների ընկեր: Չորս օրից յետոյ մեզի՝ 30 մարդու շրթայակապ ուղարկեցին Վանի բանտ: Իմ հայր ինչքան որ հետաքրքրուեց, հետապնդեց, ոչինչ չիմացավ: Հայրս տեսավ, որ ժողովուրդից ոչ մի ստոյգ բան դուրս չեկավ, կը գնա Վան քաղաք, կը դիմի մեծ պաշտօնեաներին: Ինչքան որ կաշխատի, իզուր կանցնի: Ճարահատեալ կը դառնա Շատախ: Ինձի համար մտածելով վեց օրից կմահանա:

17 տարեկան յասակում շրթայակապ անգութ սուլթանի գնդան բանտերում կը մաշեմ, կը մտածեմ մի կերպ գէնք ձեռք բերեմ, գէնքի ուժով ազատեմ իմ ընկերների հետ միասին: Բայց նորէն կմտածեմ՝ դա յիմարութիւն և ցնօրք է, վերջիվերջոյ յամոզվեցի, որ միմիայն մեր արարիչ տիրոջ վրայ յոյս պէտք է դնել, ուրիշ ոչ ոքի:

Երեք տարի մնացինք բանտարկուած, բայց մեր ազատել ուղղակի հրաշք էր:

Մի առաւօտ շուտ մեզ, զինուորներով շրջապատված, տարան դատարան և ասացին, թէ էսօր մեր վիճակներ կը որոշեն:

Նախագահն իր ամբողջ կազմով մտավ երկրորդ սենեակ ժողովի, 10 րոպէից դուրս եկավ: Մի գրութիւն տուեցին, ձեռքից ձեռք համբուրեցին և նստե-

¹ Նշյալ դեպքի վերաբերյալ գրվել է. «1892 թի վերջեր Շատախի մէկ յիսնապետի սպանիլը Ծիծանց գեղի մէջ Շաքիի երկու ծառաներու և Միւղկնի ձորի մէջ մէկ ոստիկանի և մէկ թուրքի սպանութիւնը կատղեցուցին, որոնք պարզ վրէժխնդրութեան ցոյցեր էին՝ տաճիկ կառավարութեանը կատղեցուցին և նա իւր փրփրալի գայրոյթը, անարգ կտղանքը թափեց անմեղ զինուորացիներու վրայ: Բանտը լեցուցան թաղեցի, կաճէքցի և ուրիշ զինուորացիներով, ու մինչև հիմա կը շարունակուին ձերբակալու-

թիւններէն մեծ մասը, մօտ 40 հոգի, Վանի կենդրոնական բանտ փոխադրուած են, որ կը մնան թշուառ, անօգնական, մերկ ու նօթի» («Դրօշակ», 1895, № 8, էջ 6):



Ուշիդյանների տան գծանկարը Շատախի Թաղ ավանում և ձեռագրից մի հատված

ցին իրենց նստարանների վրա: Նախագահը կանգնեց, ամբողջ ժողովուրդն էլ ոտքի կանգնեց: Նա կարդաց մեր ազատման հրամանը. «Մեր ամենաբարձր վեհափառ սուլթանի ներումով դուք ազատ էք թե՛ սպանությունից, թե՛ յակայեղափոխությունից: Թագավորին աղոթք, շատախցիներ»:

1896 թ. մայիսի 1-ին բանտից մեզ ազատեցին:

Մայիսի 5-ին հայկական կոտորած սկսեց:

Մեր բանտի ընկերներից մի կարգ Այգեստանէն գնացած էր, մի կարգ քաղաքէն մնացած: Այգեստանի ժողովուրդ խուժանի դէմ երեք օր անդադար կուեց: Պետություն ծածկաբար խուժանին կօզներ, պատճառաբանում էր, թէ իբր ֆիտայիներ մեր դէմ կը կուեն:

Երեք օր յետոյ Այգեստանի երիտասարդ կոտորներ նահանջեցին դէպի Պարսկաստան, որովհետեւ փամփուշտը սպառեց, մերոնք էլ սոված, ծարաւ նահանջեցին:

Օսմանեան կուսակալ հեռագրեց աշիրապետ սրիկա Շարաֆ բեկին, թէ ֆիտայիք մեզնից փախան դէպի Պարսկաստան, Խանասորա դաշտ պաշարէք, ամբողջին կոտորէք: Հարիր յիսուն երիտասարդ Խանասորի դաշտի մէջ կոտորեցին:

Վան քաղաքի մէջ կոտորած չեղավ, որովհետեւ հարիր ոսկի կաշառք տւին զինուորական հրամանատարին, զինուորներ քաղաք պաշտպանեցին կոտորածից: Վան քաղաքից եկանք մեր ծննդավայր Շատախ և ի՛նչ տեսանք, Շատախը բոլորովին սև մոխիր է դարձել:

Միմիայն իմ նշանածի տուն մնացեր էր ապահով, որովհետեւ տուն քսան սենեակից էր բաղկա-



Կառավարության նորակառույց շէնքը Շատախի Թաղ ավանում (լուս.՝ 1900-ական թթ.)

ցած, ոչ մի տան հետ կապ չունէր, ժողովուրդի մեծամասնութիւն ամբողջ հավաքվեր էր էն տան մէջ և կը կուեր: Ժողովուրդ ոչինչ չունի, տներ՝ քարուքանդ: Միմակ որտեղ որ դիրք էին բռնած, նրանք էն շատեն քիչ ապահոված էին²:

Սկսեցինք անդադար աշխատել, մի քիչ լավացանք:

1897 թ. յունուարին ամուսնացաւ: Սկսեց մի քիչ ապահովութիւն մի՛նչեւ 1915 թ.: 1915 թ. գարնանը քառասունհինգ զիշեր և ցերեկ կատաղի կովեցինք: Քառասունվեցերորդ զիշեր թուրքեր փախան: Կամաւորներ և ռուսական բանակ մտան Շատախի Թաղի մէջ:

Մայիս-յուլիս հանգիստ մնացինք: Յուլիսին բանակի հետ նահանջեցինք, ոչ մի ապրանք կամ մթերք չի վերցուցինք:

Եկանք Երևան: Կառավարութիւն և ազգութիւն մեզի քիչըն օգնեցին: Տիֆ հիվանդութիւնից մեր գաղթած ժողովուրդ 15 հոգուց մէկ մնաց: Ամերիկացիք, անգլիացիք մեզի կօզնէին քիչ-միչ, մի՛նչեւ խորհրդային կառավարութիւն հաստատեց Հաստատանում:

Վասպուրական և Շատախ

Մեր ծննդաւայր՝ մայր Վասպուրական, Անտէր մնացած և խելագարած,

2 «Գրօշակ», 1896, № 27, էջ 214-215: Տե՛ս նաև **Երանեան Հ.**, Յուշարձան, Աղեքսանդրիա, հ. Ա, 1929, էջ 374-375 («Քաջ Շատախցիք իրենց սանդղական համբաւն արդարացուցին զօրեղ դիմա-դրութիւն կը կազմակերպելով՝ ամենուստ յարձակող թուրքերու և թուրք զինուորներու դէմ: Իրենց պաշտպանութեան զիծը հետզհետէ սեղմելով՝ կը հարկադրուին թիսուլի Գլիկ անուն մեծատուն բաղեցիլի մը ընդարձակ ապարանքին մէջ և հոն դիրք բռնելով՝ կը շարունակեն օրհասական կռիւր: ...Վերջապէս երբ երեք չորս շաբաթ վերջ քաղաքէն գունդ մը զօրք՝ թնդանօթներով օգնութեան կը հասնի պաշարողներուն, հարիւրաւոր կիներ դուրս կ'ելլեն՝ համոզիչ բացատրութիւններով բողոքելու գնդապետը, որ պատահաբար բարի անձ մը լինելով՝ կ'զգացուի տեսարանի դերակատարներուն սպասուրիչ կեցուածքէն ու պերճախօսութենէն»):



Շատախի Թաղ ավանի տեսքը հյուսիս-արևմուտքից (2008 թ.)

Իր ամբողջ կեանքում
 Իր հայ զավակների արիւնով ներկւած:
 Թուրք բռնապետ չար սուլթանների
 Ոտքի փռշիներով
 Մեր սուրբ քաղաքի դաշտեր վարակւած,
 Մեր հայրենի սուրբ քաղաքի
 Արիւնով ներկւած:
 Ա՛խ, Վասպուրական,
 Քո զաւակներ քեզ չպիտի մոռանան մինչեւ յա-
 վիտեան:
 Ամէն արդարութեան պիտի բողոք տան,
 Մինչ իրենց իրաւունք լրիվ ստանան:
 Արդարութիւն չի կորսըվի մինչ հավիտեան
 Մեր պապերի արտասուներ չպիտի մոռա-
 նան,
 Որ իրենց շիրիմներից մեզի բողոքած:

Երկինք բարկացաւ, հայրենիք լացաւ,
 Մեր ջուր ու գինին մեզ արուն դարձաւ:
 Խաչեալ Յիսուս մեզի մոռացաւ,
 Հայերիս բաժին մնաց սուգ ու լաց:

Շուքի պէս անցան այս մեծ, հին օրեր,
 Լացին հայրենեաց դաշտեր ու ձորեր:
 Հերի՛ք է մեզի, հերի՛ք է, հայեր,
 Հերի՛ք է մեզի արցունք ու ցաւեր:

Մեր գորաւարի նախնի քաջերը,
 Մեզի կսպասեն մեր եղբայրները:
 Ազատ չծնանք, կը մեռնինք ազատ,
 Մեր խիղճ ու հոգին պահենք անարատ:



ՊՈՂՈՍ (ՍՏԵՓԱՆ) ՍԱՐԳՍԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ
(1885 -1966)

Համառոտ կենսագրություն

Պողոս Սարգսի Կոստանյանը (Կեոստենյան) ծնվել է 1885 թ. մարտի 21-ին Փոքր Հայքի Սիվրի-Հիսար քաղաքում:

Ուներ մեկ եղբայր՝ Կոստանը, և մեկ քույր՝ Ազնիվը: Մեծ եղեռնին նահատակվում է հուշագրի քույրն ամուսնու՝ Բինբաշյան Նազարի և երկու դուստրերի հետ: Եղբայրը ողջ է մնում: Ընտանիքով բնակություն է հաստատում Գյումրիում:

1938 թ. Պողոս Կոստանյանը ձեռնադրվում է քահանա՝ ստանալով Ստեփան անունը:

1947 թ. ընտանիքով Սալոնիկից հայրենադարձվում է Հայաստան: Կիրովականում Քիմիական կոմբինատի դեղատանը 10 ամիս դեղագործ աշխատելուց հետո՝ 1948 թ., տեղափոխվում է Երևան: Նույն թվականին էլ վախճանվում է կինը՝ Ճենտերեճյան Մարիցան: Նրանք ունեին 4 աղջիկ, 1 տղա, 12 թոռ:

Հուշագրությունը գրի է առել 1944 թ.:

Վախճանվել է Երևանում 1966 թ. հոկտեմբերին 81 տարեկանում և ամփոփվել քաղաքի կենտրոնական գերեզմանոցում:

ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Պողոս (Ստեփան) Սարգսի Կոստանյանս (Կեոստանյան), ծնվել եմ 1885 թ. (հիշքի 1302 թ.) մարտի 21-ին: Հայրս Կոստանյան Սարգիսն էր, մայրս՝ Կոստանյան (Գալփագճյան) Մարիամը: Հայրս զբաղվում էր առևտրով: Ունեինք սեփական երկհարկանի տուն և 3 այգի: Դրանցից մեկը ժառանգություն էր մնացել Գալփագճյաններից, իսկ երկուսը՝ Սարգիս քահանա Տեր-Սարգսյանից:

Ծնողներիս ավագ որդին էի, ունեի եղբայր և քույր (Կոստան և Ազնիվ): Եղբայրս ծնվել է 1888 թվին, իսկ քույրս՝ 1891 թ.:

7 տարեկան էի, երբ գնացի տեղի Ներսեսյան ազգային վարժարան¹, սակայն Խորեն ավագ քահանա Վարդերեսյանը, որը դպրոցի հոգաբարձուների նախագահն էր և մեր ծխատերը, մերժեց՝ պատճառաբանելով փոքր լինելս: Մեկ տարի անց՝ 1893 թ., ընդունվեցի դպրոց, որտեղ սովորեցի մինչև 1903 թ.: Աշակերտել եմ հայտնի մանկավարժներ Սերովբե Վարժապետյանին (մականունը՝ Հրուշան)² և Գրիգոր Հարությունյանին (Արսեն քահանա)³: Ավարտելով դպրոցը, որպես խոստումնալից աշակերտ, հոգաբարձությունն ինձ պահեց որպես դասատու: Սկսեցի պաշտոնավարել նույն դպրոցում՝ սկսած 1903 թ. սեպտեմբերից:

Պաշտոնավարության սկզբնական շրջանում՝ մինչև 1911 թ., օգնական ուսուցիչ էի, իսկ 1911 թ. ստացա ուսուցչության ձեռնհասության վկայական՝ պատրիարքական տեղապահ Վահրամ Մանկունու⁴ ստորագրությամբ և վավերացված կրթության նախարարության կողմից:

1 1879 թ. Սիվրի-Հիսարի դպրոցը, որը 1876 թ. հրո ճարակ էր դարձել, վերաշինվում է «համաժողովրդային գործակցութեամբ: Բոլոր աշխատատեղեր վարպետները գործի են լծուած. պոլսաբնակ Ներսեսեան հաճի Յակոբ աղան ինքնաբերաբար իր անձնական քսակէն տրամադրած է 2000 օսմ. ոսկի, այդ գործին յաջողութեան նպաստելու վեհանձնութեամբ: Վարժարանը վերանուանուած է Ներսեսեան» (Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, աշխատասիրեց Գրիգոր Տեր-Յովհաննիսեան, Պէյրոս, 1965, էջ 122):

2 Սերովբե Վարժապետյանը ծնվել է 1875 թ. Սիվրի-Հիսարում: Ներսեսյան դպրոցն ավարտելուց հետո՝ 1892 թ.-ից դասավանդել է նույն դպրոցում: 1902-1905 և 1909-1915 թվականների ընթացքում կրթօջախի տնօրենն էր: Հեղինակել է բազմաթիվ բանաստեղծություններ, հոդվածներ և այլն: Նահատակվել է 1915 թ. (Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, էջ 171, 352):

3 1897/1898 և 1902/1903 ուստարիներին Գրիգոր Հարությունյանը եղել է Սիվրի Հիսարի ազգային դպրոցների տնօրենը: Հետագայում ձեռնադրվել է քահանա և անվանակոչվել Արսեն: Դասավանդել է Ատաբազարի, Պարտիզակի բարձրագույն դպրոցներում: Նահատակվել է 1916 թ. սեպտեմբերի 10-ին (Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, էջ 171, 178):

4 Վահրամ (Ստեփան) Մանկունի արքեպիսկոպոսը (1846, Բուրսա-1920, Միջագյուղ) հայտնի է Էջմիածնեցի, Հովիվ, Սև, Վեմ և այլ ծածկանուններով (Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 660):

1911 թ. ամուսնացա Ճենտերեճյան Մարիցայի հետ և մինչև 1914 թ. պատերազմն ունեի մի աղջիկ:

Երբ 1914 թ. Համաշխարհային պատերազմը սկսվեց, Սիվրի-Հիսարը դեռ իր բարգավաճման մեջ էր, և մինչև 1915 թ. օգոստոսը համեմատաբար խաղաղ էր ընթանում մեր կյանքը: Տղամարդիկ ընդհանուր զորակոչի էին ենթարկվում: Նրանց մեջ էր նաև եղբայրս, իսկ ես ազատվել էի զինվորագրությունից՝ բեղել⁵ տուրքը վճարելով:

1915 թ. օգոստոսը վերջ տվեց Սիվրի-Հիսարի համեմատաբար խաղաղ կյանքին, և սկսվեց ընդհանուր գաղթը: Օգոստոսի 6-ին դուրս եկանք քաղաքից ով ինչպես կարող էր՝ ոտքով, կառքով կամ շոգեկառքով: Ես իմ ընտանիքով կնոջս ազգականների՝ Ճենտերեճյանների հետ շոգեկառքով գնացի մինչև Էսկիշեհիր, որից հետո բաժանելով նրանցից՝ երկաթուղով մեզ ուղարկեցին Աֆիոն-Կարահիսարի մոտ գտնվող Չայ կայարանը: Այստեղ շատերի հետ վրանների տակ մնացինք մինչև դեկտեմբեր: Այնուհետև գաղթականներին թուրքացնելու նպատակով բաժանեցին գյուղերի վրա, 100 տնվոր գյուղին՝ 10 ընտանիք: Մեզ բախտ վիճակվեց լինել Չայի Բազարաղաճ գյուղում ուրիշ 9 ընտանիքների հետ, որտեղ մեծ զրկանքներով ձմեռեցինք գյուղական փոքր հյուղակների մեջ:

1916 թ. գարնանը անտեսելով տրված բեղելը՝ բոլորիս զինվորագրեցին: Ես ստիպված թողեցի հորս, մորս, կնոջս և աղջկաս: Եղբայրս՝ Կոստանը, զինվորագրվել էր դեռևս 1914 թ. փետրվարին և գտնվում էր Անկարայի ամելե թապուրի կոչված զինվորական աշխատանքային ստորաբաժանումը: Ինձ թրքազետ լինելու պատճառով պաշտոն տվեցին Անկարայում՝ զինվորական տասնապետ և գնդի գրագիր-մատակարար: 1918 թ. հունվար ամսին տեղեկացա, որ թուրք կառավարության հրամանով մեր գնդի հայ բոլոր զինձառայողներին ոչնչացնելու նպատակով անգեն պետք է ուղարկեն ռազմի դաշտ: Փախանք և մինչև նույն թվականի հոկտեմբեր ամիսը՝ մինչև զինադադարը, թաքնվեցի Բոլավաղին կոչվող վայրում՝ ինձ ծանոթ թուրքի տանը:

Պատերազմը դադարելուց հետո կառքով 2 օրվա ընթացքում եկանք Սիվրի-Հիսար: 1918 թ. նոյեմբերի 9-ին արդեն Սիվրի-Հիսարում էինք: Շատ տներ էին քանդել, այդ թվում՝ նաև մեր տունը: Մինչև 1919 թ. ամառը կամաց-կամաց մեր համաքաղաքացիներից ողջ մնացողները վերադառնում էին քաղաք, և սկսվում էր քիչ թե շատ նորմալ կյանքը: Դպրոցն ու եկեղեցին վերաբացվեցին:

5 Օսմանյան 40 հնչուն ոսկի:



Տեսարան Սիվրի-Հիսարից

Մինչև 1921 թ. դպրոցը գտնվում էր իմ ղեկավարության ներքո⁶: Այս քիչ թե շատ նորմալ կյանքն ընդհատվեց 1921 թ., երբ սկսվեց հույն-թուրքական պատերազմը: Հունական բանակի՝ դեպի Սիվրի-Հիսար առաջխաղացման պատճառով թուրքերը շրջանի հայ տղամարդկանց արտոբեցին Մերաստիայով մինչև Կարս՝ առանց հայի Հայաստան:

Երբ հունական բանակը դեռ Սիվրի-Հիսար չէր մտել, քեմալականները 1921 թ. հուլիսի 19-ին հավաքեցին մեր քաղաքի բոլոր տղամարդկանց, որոնց մեջ և ինձ, կազմեցին 500-600 հոգիանոց խումբ: Խմբի մեջ կային նաև էսկիշեհիբցիներ, քյոթահացիներ, բրուսացիներ և այլն: Ստորև տալիս եմ միայն իմ՝ արտորականիս հուշերս, որոնք գրի էի առնում հենց արտորի ժամանակ: 1921 թ. հուլիսի 20-ին դուրս եկանք Սիվրի-Հիսարից: Նույն օրը հասանք Կյունյուզիպազար գյուղաքաղաք: Ինչպես այստեղ, այնպես էլ բոլոր հանգրվաններում, որոնց հասնում էինք ցերեկով, գիշերում էինք տվյալ վայրում: Այսպես տևեց մինչև սեպտեմբերի 4-ը: Ով չէր կարողանում քարավանի հետ ընթանալ հիվանդու-

թյան կամ այլ պատճառով, չէին սպանում, այլ կողոպտված թողնում էին ճանապարհին՝ դարձնելով գազանների կամ գազանացած մարդկանց ճարակ:

Հուլիսի 21-ին՝ արևը ծագելուն պես դուրս եկանք Կյունյուզիպազարից և նույն օրը հասանք Ախրըր գյուղ, որտեղ գիշերելուց հետո՝ հուլիսի 22-ին, հասանք Հայմանա քաղաք: Հուլիսի 23-ին Հայմանայից ուղևորվեցինք դեպի Պոյալու գյուղ և նույն օրը հասանք Ապազըր գյուղ: Հուլիսի 24-ին Ապազըրից հասանք Պալե քաղաք: Շարունակելով ճանապարհը՝ հասանք մի ուրիշ Պոյալու գյուղ: Հուլիսի 25-ին Պոյալու գյուղից դուրս գալով՝ հասանք Քեսկինմատեն քաղաքը: Գիշերելուց հետո հուլիսի 26-ին Ղավրղալը գյուղում էինք: Հաջորդ օրը գնացինք Մեքիլի գյուղ:

Չմոռանամ ասել, որ պետությունը մեզ ուտելիք չէր տալիս. տանող ոստիկանները ամեն հանգրվանում ով փող ուներ, թույլ էին տալիս ուտելիք գնելու, իսկ չունեցողները սպասում էին օգնության, որոնց ուտելիք էին տալիս իրենց հայրենակիցները: Բացի դրանից՝ քարավանը պարտավոր էր կերակրել նաև տանող ոստիկաններին՝ տալով նրանց օրական մարդ գլուխ 5-ական դուրուշ փող: Մեզ հետ կային 4-5 ոստիկաններ, որոնց թիվը և անձնակազմը փոփոխվում էր ամեն մի հանգրվանում:

Հուլիսի 28-ին հասանք Իյտելի գյուղ: Հաջորդ

⁶ Ըստ Մեծ եղեռնը վերապրած Մերոպ Գգիրյանի՝ 1919 թ. Սիվրի-Հիսարում «...եկեղեցի, դպրոց վերաբացուեցան, 50-60 աշակերտ հաւաքուեցան, դպրաց դաս կազմուեցաւ: Մեր ուսուցիչներն էին այր. Պօղոս Կէօստէնեան..., այր. Յարութիւն Դալիթեան, այր. Յարութիւն Հէվանեան: Մեր ուսումը շարունակուեցաւ մինչեւ քեմալական շարժում» (Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, էջ 403):

օրը հասանք Յոզկատ քաղաք, որտեղ հանդիպեցի նախապես արքայազն հայրենակիցներին, որոնց մեջ էր նաև եղբայրս: Նա փռում էր աշխատում: Այստեղ չթողեցին մեզ կանգ առնել՝ հակառակ մեր բռուն ցանկությանը: Նույն օրը Յոզկատից դուրս գալով՝ հասանք Ղարղուլը գյուղ, որտեղ թույլ տվեցին գիշերել:

Հուլիսի 30-ին հասանք Քեռհնե գյուղ, իսկ 31-ին՝ Փենիկ:

1921 թ. օգոստոսի 1-ին Փենիկից շարժվեցինք դեպի Ագտաղմատեն քաղաք, ուր հասանք օգոստոսի 2-ին առանց գիշերելու: Ճանապարհին անցանք Աբդյուլ Ռահման ուռում գյուղով, այնտեղից էլ Ագտաղմատեն, որտեղ գիշերեցինք հունական դպրոցի շենքում: Օգոստոսի 3-ին գնացինք Կեռյուքի, 4-ին՝ Էյեհիք, 5-ին՝ Ենիխան գյուղաքաղաք, 6-ին՝ Յըլդըզխան, 7-ին՝ Սիվազ կամ Սեբաստիա քաղաքը: Սեբաստիայում օգնության խնդրանքով դիմեցինք տեղի հոգևոր առաջնորդ Գրիգոր վարդապետին: Գրիգոր վարդապետը Բարեգործական ընկերության ֆոնդից մեզ նյութապես օգնեց՝ անձ գլուխ ուղարկելով 200 դուրուշ և հաց, որը մեզ հասավ հաջորդ օրը, երբ մենք արդեն դուրս էինք եկել Սեբաստիայից և հասել էինք քաղաքի Քյուփրի կոչվող կամրջի մոտ:

Օգոստոսի 9-ին Սիվազի կամրջի մոտից շարժվելով՝ հասանք Տուզլադի կոչվող աղի հանքը, որտեղ գիշերելով՝ օգոստոսի 10-ին հասանք Տելիքտաղիսան գյուղատիպ վայրը: Օգոստոսի 11-ին այստեղից դուրս գալով՝ հասանք Տելիքտաշ քյուփրի կոչվող կամուրջը, որտեղից էլ օգոստոսի 12-ին գնացինք Ղանդալ գյուղ: Այստեղ զինված թուրքերը հարձակվեցին մեր քարավանի վրա և կողոպտեցին՝ տանելով ճանապարհին գնված անհատական զրաստները, որոնց վրա հագուստեղեն էր բարձր:

Օգոստոսի 13-ին դուրս գալով Ղանդալից՝ նույն օրը հասանք Չաղարա, որտեղ գիշերելուց հետո՝ հաջորդ օրը, գնացինք Էլմալը եղ կոչվող գյուղ: Օգոստոսի 17-ին հասանք Հասան Չելեպի, 16-ին՝ Հարունի գյուղ, որտեղից անցնելով՝ առանց գիշերելու անցանք Ղուզլուչայով, Հեքիմխանով, Ղարապայրով, Հասան պատրըխով և անցնելով Մալաթիայի կամրջով՝ մտանք Մալաթիա: Այստեղ մեզ հանգիստ տվին, որովհետև այդ քաղաքը դարձել էր քարավանների առաքումների վայր: Մնացինք Սբ. Լուսավորիչ հայկական վանքում, որը մաքրելուց և կարգի բերելուց հետո նշեցինք Խաչվերաց տոնը: Մալաթիայում մնացել էին հայ բնակչության բեկորները, իսկ վանքում ոչ ոք չկար: Թուրքերն այն դարձրել էին արքայական քարավանների առաքման վայր: Մալաթիայում մնացինք մինչև օգոստոսի 29-ի առավոտը, երբ մեզ դուրս արին հայկական վանքից: Նորից նախկին ձևով և նույն օրը ոտքով հասանք Կյուլլուպեկ գյուղ:



Մալաթիայի հայոց եկեղեցին

Օգոստոսի 30-ին Կյուլլուպեկից գնացինք Ալտորխարապ կոչվող վայրը, իսկ 31-ին՝ Պուլան:

Սեպտեմբերի 1-ին Պուլանից մեզ տարան Քյուրդ գյուղ, իսկ սեպտեմբերի 2-ին ճանապարհը շարունակելով՝ հասանք Ատրլաման քաղաք: Ատրլամանի ճանապարհին մեր հայրենակիցներից հաջի Մանուկ Պիճիմենյանն այլևս անկարող էր ոտքով շարունակել ճանապարհը, ստիպված մի ջորի ճարեցինք, որի վրա կապելով խեղճ մարդու թուլացած մարմինը՝ շարունակեցինք: Սակայն, երբ Ատրլաման մտանք, ջորուց իջեցրինք նրա դիակը և մեր ամաններով բաց դաշտի մեջ փորելով հողը՝ թաղեցինք նրան:

Սեպտեմբերի 3-ին մեզ հանգիստ տվեցին Ատրլամանում, իսկ հաջորդ օրը՝ առավոտյան, ճանապարհ ընկանք դեպի Քյախտա: Սակայն Քյախտա գնալու ճանապարհին արաբ-քուրդ բինալաշի գատե Ազիզ էֆենտու միջոցով մեզ՝ երեք հայրենակիցներիս՝ ինձ, Հակոբ Բարակյանին և Ավետիս Կետիկյանին հետ դարձրին, և կրկին մտանք Ատրլաման: Նրանք ոսկերիչ էին, ես էլ՝ իբր հյուսն: Ատրլամանում արքայից հետո առաջին անգամ գիշերեցինք սենյակում և կերանք տաք ճաշ:

1921 թ. սեպտեմբերի 4-ից մինչև 1922 թ. մայիսի 22-ը մնացինք Ատրլամանում, որտեղ ընկերներս աշխատում էին իրենց արհեստով, ես էլ՝ իբր թե արհեստավոր-հյուսն, գոյությունս պահպանելու համար մի կերպ աշխատում էի: Այստեղ, զինվորական մասնաճյուղից մեզ կանչելով, ստուգեցին, և ով որ զինվորական տարիք ուներ, զինվորագրեցին: Ինձ էլ զինվորագրեցին, քանի որ ես էլ երիտասարդ էի:

1922 թ. մայիսի 22-ին մի շարք ընկերներով՝ 14 հոգի հայ և հույն, որոնց մեջ էին թոքաթցի Տիմիկոյլու Յորկին, պիլեճիկցի Հակոբ Հովհաննիսյանը և հայրենակիցներս՝ Հարություն Պալյանը և ուրիշներ, միասին եկանք Եփրատ գետի եզերքը գտնվող Սամասա քաղաքը: Այստեղ կային ուրիշ զինվորագրվածներ: Չինվորական մասնաճյուղի հովանավորության ներքո մնացինք մոտ 4 օր: Այստեղի հայերին թուրքերը կոտորել էին, սակայն ամեն մի թուրքի ու քրդի տանը, որպես ծառա կամ որպես

հարեմի կին, մնացել էին կամ ավելի ճիշտ գերվել էին հայուհի կին, երեխա: Նրանք շատ խղճալի վիճակում էին գտնվում, իսկ նրանց մեծամասնությունը հետագայում ճուլվեց:

1922 թ. մայիսի 26-ին դուրս գալով Սամաստից և 2 օրվա ընթացքում անցնելով Ղազիպեյ, Պորու, Ադճեմեջիդ գյուղերով՝ գիշերը հանգստացանք «Միլիսար» Օսման աղա խանում: Հանգստից հետո նորից հետիոտն անցանք Կյուլիչեր, Ահմեդաղա Կյումկյում գյուղերով, հասանք Չիֆլիկ:

Մայիսի 28-ին Չիֆլիկից դուրս գալով՝ հասանք Սևերեկ (Սևերակ), որտեղ մեր ոստիկանը մեզ տարավ զինվորական ճյուղ, և հանգիստ տրվեց մեզ: Այստեղ 2 օր հանգստանալուց հետո՝ մայիսի 30-ին, շարժվեցինք դեպի Դիարբեքիր (Տիգրանակերտ)՝ ճանապարհին անցնելով Ղայնակխան և Հապեշխան կոչվող վայրերով: Հունիսի 1-ին հասանք Դիարբեքիր:

Տիգրան Մեծի կառուցած Տիգրանակերտի պարիսպ ունի 4 դուռ: Արևելքից Էրզրումի դուռն էր, արևմուտքից՝ Սվազի, հարավից՝ Ուրֆայի, հյուսիսից՝ Ղալեյի դուռը: Ամենաբանուկը Ղալեյի դուռն էր: Երկաթյա հին դռները տեղահան էին արված և կողք գցած: Դրանք մշտապես բաց էին, իսկ դռների կամարներից կախված էին երկաթյա գնդեր, ամեն մի դռան կամարից՝ մեկ-մեկ հատ, որն առնվազն կկշռեր 100 կիլոգրամ: Պարիսպները երեքհարկանի են: Առաջին հարկը ծառայում էր որպես գոմ, երկրորդը՝ բնակարան, և երրորդը, որը մի ժամանակ ծառայել էր իբր ամառանոց, 1922 թ. անմարդաբնակ էր:

Տիգրանակերտ մտնող ջրնուղն անցնում է պարսպի միջով, ապա քաղաք է մտնում և ջուր մատակարարում բնակչությանը:

Քաղաքը կառուցված է բաց դաշտի մեջ, և պարիսպներն են անմատչելի դարձրել թշնամու մուտքը կռվի ժամանակ: Արդարև, Տիգրանակերտի օղը, ջուրը և բարեբեր հողն անմոռանալի են: Մի ձմեռուկը կշռում էր մինչև 50-60 կիլոգրամ: Միրզը շատ առատ էր և էժան, որովհետև տրանսպորտը պակասում էր այն արտահանելու համար: Տեղի միրզն ավելի առատ կլիներ, եթե աշխատող ձեռքեր լինեին: Դրանց պակասը խիստ զգացվում էր: Տիգրիս գետը հոսում էր քաղաքին շատ մոտ: Գետն ունի մի շատ բարեբեր հովիտ, որի հողն ավագախառն է, սակայն այդտեղ են հասնում գերածած խոշոր ձմեռուկները:

Հայկական արձանագրության չհանդիպեցի քաղաքում: Միայն հունարեն և արաբերեն արձանագրություններ կային պարիսպների վրա, որոնք շատ անմխիթար վիճակում էին գտնվում: Քաղաքում կար հայկական 3 եկեղեցի, որոնցից 2-ը պատերազմի ընթացքում թուրքերն ավերել էին: Գործում էր կանգուն մնացած հայկական 1 եկեղեցին:

7000 ընտանիքից բաղկացած հայ բնակչություն

նից կոտորածի ժամանակ ազատվել էր միայն 200 ընտանիք՝ կոտորակված անդամներով:

1922 թ. հունիսի 22-ին մեզ միացրին Տիգրանակերտի ամելե թապուրի կոչվող իբր թե զինվորական աշխատանքային հինգերորդ գնդին: Այստեղ էին նաև հայրենակիցներիցս Պողոս Տայլանյանը և Կարապետի տղան՝ Ներսես Տեր-Ներսեսյանը: Աշխատում էինք ճանապարհաշինության վրա, որի համար քար էինք ջարդում:

Իբր զինվոր էինք, բայց զինվորական համազգեստ չէին տվել: Օրը 2 անգամ ճաշ էին տալիս, որն անբավարար էր և սոված չմնալու համար, բացի այդ ճանապարհաշինական աշխատանքից, օրվա վերջին մասնավոր աշխատանք, սևագործ բանվորություն էինք անում: Այս ծանր աշխատանքն իմ առողջության վրա շատ վատ անդրադարձավ, և 1 ամիս հետո ինձ հիվանդանոց տեղափոխեցին: Վիրահատվեցի: Հիվանդանոցում խնամքը լավ էր կազմակերպված:

Հուլիս-օգոստոս ամիսներին մնացի հիվանդանոցում, որից հետո նորից անցա ամելե թապուրիի ծանր աշխատանքին: Այն տևեց մինչև նոյեմբերի 12-ը՝ պատերազմի ավարտը: Այնուհետև մեզ էլ բոլոր քրիստոնյաների նման հրամանագիր տրվեց մեկնելու թուրքական ազգային սահմաններից դուրս:

1922 թ. նոյեմբերի 15-ին դուրս եկանք Տիգրանակերտից հետիոտն և 18-ին հասանք Սևերեկ:

Նոյեմբերի 19-ին դուրս գալով Սևերեկից՝ հասանք Ուրֆա (Եդեսիա):

Ուրֆայից դուրս գալով 22-ին՝ անցանք թուրքական սահմանը և մտանք Սիրիա: Սահմանագլխում գտնվող Ջարասալու քաղաքում նոյեմբերի 22-24-ը հանգստացանք և 25-ին հասանք Հալեպ:

Նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը Հալեպում մնալուց հետո, որտեղ հայկական և ֆրանսիական բարեգործական ընկերությունները մեզ միայն հաց էին տալիս, անցանք Թարասալու (Տրիպոլի), որտեղ շատ առատ էր նարինջը: Տրիպոլիից էլ անցանք Թարթուս, այնտեղից էլ Բեյրութ:

Այստեղ մնացի մինչև 1923 թ. մայիսը: Բեյրութում մոտ 2 ամիս աշխատեցի «Ստամբուլ» հյուրանոցում որպես գրագիր, ապա ընդունվեցի ամերիկյան Մելիֆի որբանոցը, որի տնօրենն էր խարբերոցի մանկավարժ բողոքական Խայիկյանը: Աշխատում էի որպես դպրոցի ընդհանուր հսկող, որի համար ամերիկացիներն ինձ կերակրում, հագցնում և բնակարան էին տալիս: Այստեղ էլ երկար չմնացի. լսելով, որ կինս և երեխաներս Կ.Պոլսից գնացել են Հունաստան, ես էլ դիմեցի դեսպանատուն՝ խնդրելով անցագիր Հունաստան գնալու համար: Անցագրիս գործը գլուխ բերեց Բեյրութի Ազգային դպրոցի տնօրեն Վահրամ Արծրունին: Որպես պատերազմի ժամանակ թուրքերի մոտ մնացած գերի՝ ստացա անցագիրս և մայիսին նավով գնացի Ա-

թենք: Տեղի առաջնորդարանից էլ արտոնագիր վերցրի Սալունիկ գնալու համար:

Հասա Սալունիկ: Թումբա կոչվող արվարձանի գաղթակայանի հիվանդանոցում սկսեցի աշխատել որպես դեղագործի օգնական:

1923 թ. հոկտեմբերին կինս և երկու աղջիկներս Կ.Պոլսից եկան Սալունիկ: Թումբայում աշխատեցի մինչև 1925 թ. վերջերը: Այնուհետև տեղափոխվեցի Սալունիկ և սկսեցի աշխատել հույն Կարամատունայի դեղատանը, որտեղից էլ 1926 թ. դուրս եկա և ընդունվեցի հունական թաղապետարանի դեղերի պահեստը՝ որպես դեղագործ և պահեստապետի օգնական: Մինևույն ժամանակ Աթենքի առողջապահական նախարարության էքստենզիոն քննությունները հանձնելով՝ 1927 թ. ստացա դեղագործի դիպլոմ:

1923 թ.-ից մինչև 1938 թ. Սալունիկի մեջ աշխատեցի որպես դեղագործ:

1938 թ. հոկտեմբերի 2-ին Աթենքում Մազլումյան Կարապետ արքեպիսկոպոսի կողմից Մակեդոնիայի Դրամա քաղաքի հայկական գաղութի համար քահանա ձեռնադրվեցի: 1938 թ. նոյեմբերի 14-ին ընտանիքով տեղափոխվեցի Դրամա: Սակայն մի տարի անց սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը և մենք 1940 թ.-ից մինչև 1944 թ. մնացինք գերմանական օկուպացիայի ներքո: Պատերազմն ավարտվելուց հետո մեր դրությունը սկսեց բարելավվել:

1947 թ. սեպտեմբերին 3-ին «Չուկոտկա» նավը մեզ հասցրեց Բաթում, իսկ սեպտեմբերի 20-ին հաստատվեցինք Խորհրդային Հայաստանի Կիրովական քաղաքում:

1948 թ.-ից ապրում ենք Երևանում:



Պողոս Կոստանյանը 1923 թ.-ին և ընտանիքը (1937 թ.)



ՎԱՂԻՆԱԿ ՍԱՀԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(1907 -1978)

Համառոտ կենսագրություն

Վաղինակ Ավետիսյանը ծնվել է 1907 թվականի հունվարի 12-ին Կաղզվան քաղաքում՝ Տեր-Արթինենց Սաքոյի գերդաստանում:

1910 թ. վախճանվում է հայրը՝ Սահակը: Նրա մահից մեկ տարի անց մայրը՝ Եղիսաբեքը, ամուսնանում է երկրորդ անգամ, իսկ Վաղինակը մնում է հորեղբոր՝ Մուշեղի խնամակալության ներքո:

Տարրական կրթությունը ստանում է Կաղզվանի դպրոցում:

1917 թվականի փետրվարին գաղթում են Կաղզվանից նախ Կարս, ապա Գյումրի, Ղարաքիլիսա (Կիրովական), այնուհետև գնում են Թբիլիսի, Վլադիկովկաս, այնտեղից էլ Արմավիր, հետո Ռասաշտոկա գյուղ, որտեղ ապրում են մինչև 1919 թ. հունիս ամիսը:

1919 թվականի օգոստոսի 15-ին վերադառնում են Կաղզվան:

1919 թվականի սեպտեմբերի 1-ին Կաղզվանում Վ. Ավետիսյանը նորից ընդունվում է դպրոց, սակայն սեպտեմբերի 2-3-ին սկսվում է երկրորդ գաղթը: Ամբողջությամբ բնակեցված Կաղզվանը նորից դատարկվում է, գաղթում են երկրորդ անգամ:

Մինչև 1920 թ. կրկին բնակվում են Գյումրիում: 1920 թվականին մեկնում է Ռուսաստան: Ռասաշտոկայում մոտ երկու շաբաթ մնալուց հետո գնում է Կուրանի ափին գտնվող Ուստլաբանե, իսկ 1920 թվականի մայիսից մինչև 1922 թվականի ապրիլ ամիսը, որպես բատրակ, աշխատում է Կուրանի ափին գտնվող Խատուկա աղբղեական աուլում:

Դրանից հետո աշխատում է նավի վրա՝ որպես օգնական, 1924 թ. սկզբից մինչև 1925 թ.՝ որպես կոշիկ մաքրող: Բելալյա Սելո գյուղում զբաղվում է առևտրով:

1925 թ. նոյեմբերից մինչև 1926 թ. մարտ ամիսը բնակվում է Երևանում, որից հետո վերադառնում է Բելալյա Սելո և շարունակում զբաղվել առևտրով:

1927 թ. մարտին մշտական բնակություն է հաստատում Երևանում: Սովորում է նախ լիկեյանում, ապա Չերժինսկու անվան դպրոցում:

1930 թ. ընդունվում է համալսարանի բանասիրական ֆակուլտետ:

1928 թ. հունվարի 18-ին ամուսնանում է Հասմիկ Կանայանի հետ (նրա հայրը Դրաստամատ Կանայանի (Դրո) հորեղբոր տղան էր) և ունենում 5 զավակ:

1936-1968 թթ. աշխատում է Երևանի Ասֆալտ-բետոնի գործարանում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ վարում է «Ջիս-5» մեքենան:

Վաղինակ Ավետիսյանը մահացել է 1978 թ. հոկտեմբերին և ամփոփվել Սովետաշենի գերեզմանոցում:

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ, ԹՈՌՆԵՐԻՆ...

Իմ սիրելի՛ երեխաներ, թոռներ և ազգականներ, իմ այս անցյալը, որը ես համառոտ գրում եմ, պետք է դարեր շարունակ լավ պահեք՝ լավ և վատ օրերս հիշելու համար: Այն մինչ իմ չորս-հինգ տարեկան դառնալս ինձ պատմել են մայրս և մոտ հարազատներս, որից հետո մինչ այս գրի առնելս շատ լավ հիշում եմ, թարմ է մնացել իմ ուղեղում:

Մեր գերդաստանը

1907 թվականի հունվարի 12-ին լույս աշխարհ եմ եկել Կաղզվան քաղաքում՝ այգեգործի ընտանիքում: Մեր գերդաստանը հորական պապիս անունով կոչվում էր Տեր-Արթինենց Սաքո: Կաղզվանցիները մեզ չեն ճանաչում այլ անունով, բայց, չգիտեմ ինչու, կոչվում ենք Ավետիսյան:

Իմ ծնունդը շատ ուրախություն է պատճառում մեր ընտանիքին, որը բաղկացած էր տասներկու շնչից՝ պապս տատիկիս հետ, չորս տղաներն իրենց կանանց հետ: Իսկ երեխա ինձնից առաջ Մուշեղ հորեղբորս է եղել՝ մեկ աղջիկ՝ ծնված 1905 թվականին, որից հետո էլ ես եմ ծնվում՝ առաջին տղան այդ մեծ ընտանիքում: Ունեցել եմ մեկ հորաքույր՝ Շողոկաթ անունով: Հորաքույրս բոլորի մեծն էր, երեխա չի ունեցել:

Պապս ուներ 5 երեխա. ամենամեծը դուստրն էր՝ Շողոկաթը, որդիներն էին՝ հայրս՝ Սահակը, հորեղբայրներս՝ Մուշեղը, Արմենակը, Գևորգը: Գևորգ հորեղբորս փոքր հասակից որդեգրում է պապիս եղբայրը՝ Մովսեսը, որը երեխա չուներ:

Կաղզվանում պապս ջուլիակություն է արել տանը:

Ունեցել է մեծ այգիներ պտղատու ծառերով, ընտիր պտուղներ՝ տանձ, որոնց անվանում էին բոգորդան, ալմադխալֆա, բլրչին, նանագի, մալաչա, կարմիր տանձ և շատ ուրիշ և շատ համեղ տեսակներ: Նմանապես բազմատեսակ ընկույզ, բալ, խաղող էլ ունեինք, բայց Երևանի խաղողին չի հասնի որակի և քաղցրության տեսակից: Պատճառն այն է, որ մեզ մոտ ամառը շատ շոգ չէ:

Մնացած միքոքը շատ գովելի է: Ով որ եղել է մեզ մոտ, նա շատ լավ կիմանա: Մեր այգին մեծ՝ 3000 կամ 4000 մետր քառակուսի մեծությամբ տարածություն ուներ, կային միայն 60 հատ թեմնի, 50-60 հատ ծիրանենի և տասնյակ տարբեր ծառեր: Այդ իսկ պատճառով պապս ամբողջ աշխատանքը բաժանել էր տղաների վրա:

Հայրս մեծ որդին էր: Անգրագետ էր, հազիվ իր անունն էր գրում: Նրան հանձնարարված էր այգու

թաց միրգն անասուններով տեղափոխել Ղարս, Սարիղամիշ և շրջակա գյուղերը և վաճառել¹:

Արմենակ հորեղբայրս զբաղված էր անասուններով և հողագործությամբ, իսկ Մուշեղ հորեղբորս, քանի որ կրթությամբ մի քիչ բարձր էր (պապս հագիվ հինգ երեխայից մեկին է դպրոց ուղարկել, միջոց չի ունեցել գոնե կեսին կրթության տալու: Ցարական ժամանակ շատ թանկ էր սովորելը), պապս հանձնարարել էր խանութ բացել և վաճառել իր այգու չորացրած մրգերը:

Բացի Մուշեղի աշխատանքից՝ մնացածի աշխատանքը ծանր էր: Մուշեղի գործը սկզբում մի քիչ իր համար էլ դժվար էր, բայց հետո դա էլ հեշտացավ: Խանութի կողքին էր Մուշեղի խանը:

Հորս մահը

1910 թվականի աշնանը հայրս սովորականի պես աշնան ընտիր մրգերն է բարձում մեր անասունների վրա, բայց այս անգամ չի տանում Ղարս, որը մեզանից 60 վերստ հեռու էր: Ղարս չհասած՝ գյուղերից մեկում վաճառում է և գիշերում ազգությամբ թուրք իր ծանոթներից մեկի տանը: Այդ գիշեր հակառակի պես այդտեղ, որտեղ հայրս էր քնած, մարդասպանություն է կատարվում: Ատրճանակի կրակոցից հայրս վախեցած վեր է թռչում, տանտերը հանգստացնում է՝ հորս ասելով.

–Ղոնշի² Սահակ, դու հանգիստ քնիր, այս գործին մի՛ խառնվիր, դա մեր գործն է:

Այս դեպքից հետո շատ վախեցած հայրս վերադառնում է տուն, իրեն լավ չի զգում և ընկնում է անկողին: Մի երկու օր պառկելուց հետո քանի գնում, վատանում է: Հրավիրում են ֆելդշեր Լազենկովին, որը կիսաբժիշկ լինելով, սպասարկում էր Կաղզվանին և շրջակա գյուղերին: Դա էլ որ կար, դարձյալ փառք էր: Շատերն այդ ֆելդշերին չէին կարողանում հրավիրել, քանի որ վարձատրելու հնարավորություն չուներին: Շատ-շատերը բուժօգ-

1 ԺԹ դարավերջին նշվել է. «Կաղզուանի այգեստանայց մեջ 13 տեսակ խաղող, 30-50 տեսակ տանձ և նույնպի տեսակ խնձորենիներ կան, կը գտնուին նաև դեղձ, սալոր, ծիրան, տուման, կաղին, ընկույզ, փշատ, նուշ, թուֆ, պալ, կեռաս, սերկիլ: Թուֆն կը շինեն օղի, քացախ, պաստեղ, եսապ, երշիկ, նաև ձմերուկ, սեխ, վարունգ, թթում, լուրիա, պատրիճան, գանագան ընդեղենք, սոխ, գարսովիլ, կաղամբ: Կաղզուանի բնակիչք այս բերքեր գրաստներով մտակալ քաղաքները և գիւղերը կը փոխադրեն ստակով ծախելու և ուրիշ արմտեաց հետ փոխարինելու» (ԳԱԹ, Գ. Սրվանձույան ֆոնդ, ք. 1, գ. 17, ք. 3):

2 Հարևան, դրացի:

նության չդիմելու պատճառով հասարակ բանից մահանում էին:

Հայրս օր օրի վատանում է: Շատ ջանք են թափում պապս և իր եղբայրները, բայց չեն կարողանում բուժել: 10 օր պառկելուց հետո մահանում է: Ես, երեք տարեկանս դեռ չլրացած, մնում եմ առանց հոր, առանց հոր գուրգուրանքի քաղցրությունն առնելու: Որոշ ժամանակ գուրգուրանք եմ ստանում պապիս կողմից: Այդ էլ տևեց մեկ տարի: Հորս մահանալուց մեկ տարի հետո մահանում է նաև հորական պապս, որն ինձ անչափ սիրում էր, ամբողջ օրն իր ծնկների վրա էր պահում: Դրանից էլ եմ ես գրկվում:

Երբ հայրս մահացավ, մայրս 20-21 տարեկան էր: Այդ հասակում արդեն այրի էր:

Մորս ամուսնությունը

Այդ ժամանակ՝ 1910 թվականին, մահանում է նաև Քյել³ Սարգիսենց Վարդանի կինը՝ Լալա անունով՝ թողնելով Վարդուշ անունով 5-6 տարեկան մի աղջիկ և Մնացական անունով մի տղա, որը հազիվ թե լինեք մեկ տարեկան:

Անցնում է մեկ տարի:

1911 թ. Վարդանը պետք էր ամուսնանար, քանի որ այդ երկու փոքր երեխաներին խնամող էր պետք, և Վարդանին էլ՝ կյանքի ընկեր:

Կարապետյանն իրեն այլ կերպ անվանում էր Քյել Սարգիսյան: Նրա հորեղբայրը՝ Ֆահրադենք, շատ հարուստ էին, ունեին կազարմաներ, ունեին նաև միկիտան՝ այդ կազարմաներին կից, որտեղ վաճառում էին խմիչքեղեն:

Քաղաքում ճանաչված մարդիկ էին, մանավանդ Ֆահրադը, որը Վարդանի հորեղբոր տղան էր: Շատ դեսուդեն ման գալով և հարցուփորձ անելով՝ հարմար են գտնում, որ մորս հետ ամուսնանա:

Մի օր Վարդանը կանչում է իր եղբորը՝ Խաչատուրին, խորհրդակցում են և որոշում են ամեն ինչ կատարել մորս միակ եղբոր հետ (մայրս ուներ մեկ եղբայր և երկու քույր): Մորս եղբայրը Կաղվաճում ճանաչված վարպետ էր՝ ոտնաման կարող, ուներ մեծ արհեստանոց և տասնյակ աշակերտներ: Այդ իսկ պատճառով կոչում էին ուստա Թադևոս Ազոյան:

Գալիս են քեռուս արհեստանոցը և հրավիրում են Վարդանի միկիտանը: Վարդանն իր եղբոր՝ Խաչատուրի հետ և ուստա Թադևոսն անմիջապես տեղավորվում են սեղանի շուրջ և սկսում են մեկը մյուսի հետևից դատարկել բաժակները՝ քաղցր խոսքեր մեկը մյուսին փոխանակելով: Վարդանը և Խաչատուրը նկատում են, որ արդեն ուստա Թադևոսի լավ ժամանակն է, հարյուր ռուբլիանոց դրամը տալով քեռուս՝ անցնում են իրենց հիմնական գործին: Վարդանի եղբայր Խաչատուրն ասում է.

—Ուստա՛ Թադևոս, մենք խնդրում ենք, որ Վարդանին տաս այրիացած քրոջդ: Քեզանից ի՞նչ թաքցնենք, Վարդանի կինն էլ է մահացել և թողել է երկու երեխա: Պարզեպարզ ասում ենք:

Քեռիս խոստանում է գործը գլուխ բերել՝ մտածելով, որ քույրը շատ ջահել է, այդ հասակից այրի մնալը դժվար է: Ինչ վերաբերում է մորս համաձայնությունը, այդ ժամանակ կանայք հակառակվելու իրավունք չունեին, եղբոր կամ ծնողների ասածն օրենք էր: Կանայք ձայնագուրկ էին:


Լուրը հասնում է հորեղբայրներիս, որոնք չենուշում են անում, բայց գործն արդեն քեռիս վերջացրել էր: Այլևս փոփոխման ենթակա չէր: Ինչ վերաբերում է ինձ, ոչ մի կերպ չեն համաձայնում, որ մայրս ինձ տանի իր հետ: Եթե ինձ տաներ, իմ ունեցածն ինձ հետ կտանեի, այսինքն՝ այգու 1/3 մասը, տներ, տարբեր անասուններ, տան իրեր և հորս առած ոսկեղենը: Եկան այն համաձայնության, որ ես մնալու եմ հորս ունեցվածքի վրա մինչ չափահաս դառնալս:

Աշուն է, մենք դեռ այգումն ենք: Քաղաքի տները դեռ չենք փոխադրվել: Հավաքվում են անձանոթ մարդիկ: Տեղավորվում, նստում են ոմանք սնդուկներից, ոմանք աթոռներից և ինչ որ բանի են սպասում: Տեսնում են, որ այդքան մարդկանց մեջ մայրս չկա: Սկսում են լաց լինել՝ կանչելով մորս: Լացս ուժեղանում էր, չեն կարողանում ինձ համոզել, որ լաց չլինեմ: Արմենակ հորեղբայրս ինձ տանում է հացատուն, որտեղ մայրս պատրաստվում էր, նոր հագուստ էր հագնում: Մայրս ինձ գրկում և քնացնում է: Մին էլ արթնանում եմ և տեսնում, որ մեն-մենակ եմ: Նորից սկսվում է լացս և գնալով ուժեղանում: Արմենակ հորեղբայրս ամեն կերպ աշխատում է ինձ հանգստացնել՝ խոստանալով ամեն բան:

Երբ ես շատ եմ լաց լինում, վախենալով, թե ինձ հետ բան կպատահի, Արմենակ հորեղբայրս ստիպված է լինում ինձ ուշ գիշերով տանել մորս մոտ, որը մեզանից մոտ երեք վերստ հեռու էր: Հենց հասնում ենք մորս մոտ, ամեն ինչ մոռանում եմ: Թե ինչքան եմ մնում, մի քանի ժամ, թե՞ օր, ես չեմ հիշում: Իհարկե, շատ չէին թողնի ինձ այնտեղ, քանի որ մտադրված էին ինձ ամբողջապես հեռացնել հարազատ մորիցս: Բայց մի՞թե այդքան հեշտ է մոռանալը: Ես զգացի այդ բանը, երբ յոթ-ութ տարեկան էի: Երբ հաճախում էի դպրոց, ամեն անգամ գնում էի մորս տուն: Մորս փայփայանքն էի տեսնում, մի կողմից էլ երեխաների հետ ընկնում էի խաղով և տուն գնալն անգամ չէի կամենում: Բայց մայրս ինձ ստիպում էր գնալ, քանի որ գիտեր, որ ինձ ուշանալու համար ծեծելու էին: Եվ, իրոք, ամեն անգամ, երբ ժամանակից ուշ էի վերադառնում տուն, այդ օրն անպայման մի լավ ծեծ էի ուտում հորեղբորս կողմից, չնայած կինը հակառակվում էր և ասում.

—Ոչինչ, Մուշե՛, մի՛ ծեծիր, էլ չի գնա:

3 Ծաղատ:



© 2009 Cnes/Spot Image

Այգեվետ Կաղզվանը տիեզերքից

Մուշեղ հորեղբորս ընտանիքում

Մի՞թե ծնողից ավելի քաղցր բան կա աշխարհիս երեսին, որին ես կարոտով մնացի և այլևս չտեսա: Անգամ ինձ ստիպեցին հորեղբորս հայրիկ ասել, կնոջը՝ մայրիկ: Հորեղբորս կինը, որի անունը Վարդանուշ էր, իսկապես արժանի էր մայրիկ ասելուն, իսկ հորեղբայրս անգամ հորեղբայր ասելուն էլ արժանի չէր: Կինն ինձ վրա շատ ամազ ունի, անգամ իմ մորից շատ: Ես նրանից շնորհակալ եմ:

Քանի որ դպրոցական չէի, շատ ուշ-ուշ էր ինձ հաջողվում մորս տեսության գնալ:

Անցան տարիներ, դարձա դպրոցական: Հորաքույրս տարավ դպրոց, ընդունել տվեց: Մի քանի շաբաթ ինձ տանում էր և բերում էր տուն, մինչև ճանապարհը և շրջապատս լավ սովորեցի և սկսեցի ինքնուրույն դպրոց հաճախել: Այդ օրվանից, երբ սկսեցի մենակ գնալ և գալ, գրեթե ամեն օր գնում էի մորս տուն և ամեն գնալուց ծեծվում էի:

Ինը-տասը տարեկան էի: Ամեն ինչ հասկանում էի:

Մենք ունեինք թուրք բատրակ՝ Մամոն անունով, որը երկար տարիներ աշխատում էր մեզ մոտ: Մամոն 18-20 տարեկան էր: Ծանր գործերը կատարում էր Մամոն, իսկ մնացածն իմ պարտականությունն էր:

Քանի որ Մամոն տանից բացակայում էր այգում կամ հանդում աշխատելու պատճառով, տան ջուրը բերում էի, տանը մնացած անասունների տակը մաքրում, անասուններին տանում էի ջրելու և անգամ գոմի թրիքը տանում էի դուրս՝ թափելու:

Իսկ երբ գարնանը տեղափոխվում էինք այգին, այդտեղ գործս կրկնապատկվում էր:

Ես Մամոյին շատ էի սիրում, քանի որ նա գիտեր, որ ես ծնողներից զրկված եմ, ինձ համար պատրաստում էր սահնակ, ֆռիկ և խաղալիքներ, ճան էր տալիս: Նրա հետ շատ կապված էի:

Երբ մամս մեզ չոր միդգ էր տալիս, անպայման իմ բաժնի կեսը պահում էի Մամոյին:

Մի օր պայմանավորվեցինք, որ իրիկունը գնանք գոմը՝ քնելու: Մամոն քնում էր գոմի ուղիղ մեջտեղը, որտեղ գետնից մոտավորապես մետրից ավելի հաստ ու բարձր պատ կար: Մինչև քնելը որոշ ժամանակ խաղաթուղթ էինք խաղում: Այդ օրը Մուշեղ հորեղբորս 5-6 տարեկան որդին՝ Վարոսիկը, լաց եղավ. «Ես էլ կգամ ձեզ հետ»: Չմայած ո՛չ ես էի ցանկանում, որ գար, ո՛չ էլ Մամոն, բայց մայրը խնդրեց, ասաց. «Ոչինչ, տարե՛ք ձեզ հետ»: Ստիպված եղանք տանելու, վերցրինք կարտերը, մի փոքր ճրագ և երեքով գնացինք գոմ: Մամոն բաց արեց տեղաշորը, տեղավորվեցինք և սկսեցինք երկուսովս խաղաթուղթ խաղալ, իսկ Վարոսիկը, նստած մեր կողքին, նայում է: Մի քիչ խաղալուց հետո սովածացանք թե՛ ես և թե՛ Մամոն: Ինչպե՛ս չսովածանաս. ի՞նչ կար սալայի մեջը՝ հացի մի քանի փշրանք և մի քիչ էլ շոռ, այդքանով կշտանալն անհնարին էր:

Ստիպված որոշեցինք Մամոյի հետ գնալ հացատուն, որը գոմին կից առանձին տեղ է, որ գոմե հաց բերենք: Վարոսիկին էլ առաջարկեցինք, որ վերցնենք այդ փոքր ճրագը և երեքով գնանք հաց բերելու: Վարոսիկը հրաժարվեց մեզ հետ գալ, ասաց.

– Ես այստեղ կմնամ, դուք գնացե՛ք:

– Չէ՛, մթանն ես մնալու:

– Ոչինչ, ես այստեղ նստած կսպասեմ,– ասաց նա:

Համոզվեցինք, որ այդպես կանի, վերցրինք ճրագը և գալիս ենք հացատուն: Դեռ հացի տաշտին չէինք մոտեցել, մին էլ լսեցինք Վարոսի ճիչը: Առանց հաց վերցնելու վազեցինք գոմ, տեսանք Վարոսին գոմի մեջտեղն ընկած, քթից ու բերանից արյուն է հոսում: Այդ աղմուկին եկավ մայրը՝ Վարդանուշը՝ չոքերին խփելով, ասում էր.

– Վա՛յ, քոռանամ, այսինչ օրն եք գցել Վարոսիս:

Դու մի ասի, երբ մենք ճրագը վերցրել, գնացել ենք, ինքն էլ ցանկացել է գալ: Պատն իջնելու ժամանակ մթության մեջ կայել է անասունների պոչին, որոնք խրտնել են և ոտնահարել Վարոսին:

Անեծք տալով, մի քիչ ապտակելով ինձ (դե կնոջ ապտակն այնքան էլ ցավ չի պատճառում), երեսմերեսը լվացին և պառկեցրին, բայց դեմքի վրա երևում էր ամեն ինչ:

Հայրը՝ Մուշեղը, իր սովորության համաձայն, ամեն անգամ, երբ գալիս էր խանութից ոչ շուտ, քան գիշերվա ժամը 12-1-ին, համբուրում էր Վարոսին: Հորեղբայրս ներս մտնելուն պես հայացք գցեց Վարոսի վրա և դեռ լրիվ չիմացած՝ ինչպե՞ս է կատարվել, անմիջապես հարձակվեց ինձ վրա՝ ոչ մի հաշիվ չտալով, որ 9 տարեկան որբ երեխա եմ, այն էլ իր մեծ եղբոր որդին, և սկսեց ոտքի հարվածներ տեղալ իմ անպաշտպան մարմնին:

Ի՞նչ է կատարվել, չեմ իմացել: Աչքերս բացի, տեսա, որ տատիս տեղաշորումն եմ պառկած: Այդ ծեծվելուց հետո մի քանի օր մնացի տեղաշորի մեջ պառկած: Այն էի լսում, որ այդ պառկած ժամանակ մամս՝ տատս, անիծում էր իր որդուն՝ Մուշեղին. «Թ՛ւերդ կոտրվեն, անխիղճ»:

Նման դեպքեր շատ են պատահել: Դուրսը խաղալու ժամանակ Վարոսի ոտքը կպչեր քարին ու վայր ընկներ, դարձյալ ինձ էին մեղադրում և ծեծում:

Քաղաքում ապրած ժամանակ աշնանը երեխաներով գնում էինք, մի տեսակ չորացած խոտ կար, հավաքում, բերում էինք և վառում: Այրվելիս չրթչրթոց էր հանում: Մենք էլ 8-9 տարեկան երեխա էինք, ուրախանում էինք, որ ուժեղ բոց էր արձակում և ամենակարևորը, կրակոցներ անում:

1916 թ. ձմեռն էր՝ Նոր տարվա մոտ օրերին: Ըստ մեր՝ կաղզվանցիների սովորության՝ մի քանի օր առաջ պատրաստում էին տարբեր տեսակի խմորեղեն՝ գաթա, շաքարոխում, փախլավա և այլն: Եվ քանի որ տներում հնարավորություն չկար



Այգեվետ Կաղզվանի ընդհանուր տեսքը հյուսիսից

այդպիսի խմորեղեն պատրաստել, ստիպված էին սինիների մեջ դնել և տանել փուռը թխելու: Մի քանի օր առաջ էին պատրաստում, որպեսզի փռերում հերթով թխեն: Փռերը քիչ էին: Մերոնք էլ զանազան տեսակի այդ խմորեղենը տանում, փուռն էին թխում և բերում, դասավորում էին թարեքների վրա, որովհետև այդ ժամանակ ուրիշ ոչ մի հարմարանք չկար:

Տախտակից թարեքներ էին պատրաստում և ամեն տեսակի ամանեղենները դարսում թարեքների վրա: Նաև այդ օրվա լավ տեսակի խմորեղենը դրել էին ամենավերևը, որպեսզի ամեն մարդ չվերցնի:

Բերելու ժամանակ ամենքիս մի փոքր կտոր տվեցին, կերանք: Համը մնաց բերանումս, ուզեցի, չտվեցին: Ստիպված էի թաքուն մտնել հացատուն և վերցնել այդ համեղ թխվածքից: Տախտակները լավ ամրացված չէին, պոկվեցին, ու ահագին ամանեղեն կոտորվեց: Որոշեցի փախչել մորս մոտ և այս իմ տված վնասի մասին պատմել:

Այս դեպքը կլիներ կեսօրին՝ ժամի 12-1-ին: Մեկ էլ ոտքս կպավ թաղարին⁴, որի վրա մեծ պղնձով մտով ճաշ էր եփվում: Թաղարը շուռ եկավ, և ճաշն էլ թափվեց: Մարսափն ավելի շատացավ: Քանի դեռ ոչ ոք չէր տեսել, առանց ժամանակ կորցնելու դուրս եկա և արագ-արագ գնացի մորս տուն:

⁴ Կավից պատրաստված փոքր կրակարան, որի վրա ճաշ են պատրաստում:

Հասա մորս տուն, տեսա թախտի վրա դրված է քուրսին, և տատս ու մայրս, նստած քուրսու շուրջը, դայֆա են խմում: Ինձ տեսնելուն պես մի պահ ուրախացան, բայց ինչ-որ բան կասկածելով մայրս ասաց.

–Վաղո՛ ջան, ինչպե՞ս եղավ, որ այս ժամին եկար: Թո՞ւյլ տվին, թե՞ այնպես ես եկել:

Երբ սկսեցի պատմել, չկարողացա լրիվ պատմել և լաց եղա:

Այս բոլորը երբ իմացավ մորական տատս՝ Գյուլիզարը, սկսեց ուզածիդ պես անիծել իր հարազատ աղջկան: Ի՛նչ անեծք ասես, որ չասաց. «Եղսապե՛րտ, վիզդ Վաղոյիս պես թեք մնա»:

Ինձ հանգստացրին և թույլ չտվեցին վերադառնալ մեր տուն:

–Մնա՛ այստեղ, վաղը երեքով միասին կգնանք:

Իրենց էլ պարզ էր, որ մենակ գնալի, ինձ լավ ծեծելու էին: Մնացի: Գնացիմք մյուս օրը՝ առավոտ ժամը 10-ի մոտ: Երբ դուռը բախեցինք, բացեցին, տեսան մորս, տատիս և ինձ, անմիջապես հրամեցեք, հրամեցեք ասելով՝ կանչեցին սենյակը, որտեղ ամբողջ ընտանիքով նստած թեյ էին խմում: Բարևեցին, տեղավորվեցին սեղանի շուրջ և սկսեցին խոսել: Իմ վերաբերյալ մի քանի բառ խոսելուց հետո մորական տատս խնդրում է, որ ինձ չծեծեն՝ ասելով.

–Երեխա է, ինչ անենք, պետք է քո եղբոր խաբրուն զիջես ամեն ինչ:

Իսկ մայրս չի կարողանում խոսել, միայն աչքերից արցունք է թափում:

Այդ խոսակցությունից հետո հորեղբայրս ասում է.

–Դե ինչ անենք, խնամի՛ Գյուլիզար: Արել է, անցել է, ինչ անենք, ոչինչ: Կոտրվել է, կոտրվել, բան չկա, ինչ անենք, ո՞վ է իրեն բան ասողը:

Մուշեղ հորեղբայրը չէր ների, եթե չխառնվեր այդ գործում կհինը՝ Վարդանուշը: Շատ բարի, խղճով կին էր: Ամեն անգամ, երբ գնում էր իր հարազատների տները, անպայման ինձ հետը տանում էր, իր երեխաներին չէր տանում: Այս անգամվա տվածս վնասի համար հեշտ պրծա: Պետք է խոստովանեմ, որ Արմենակ հորեղբորս կինը՝ Գյարանն էլ հետ չէր մնում Վարդանուշից: Հաճախակի մա էլ էր լողացնում և ոտից գլուխ փոխում, տանում էր իր հետ հարազատների տները:

Ամենափոքր հորեղբայրս՝ Գևորգը, փոքր հասակից մեր ընտանիքում չէր ապրում: Նա ծառայում էր մաքսատանը: Ապրում էին քաղաքի կենտրոնում՝ ռուսաց ժամի մոտ:

Գպրոցից դուրս գալուց հաճախակի գնում էի հորեղբայր Գևորգի տուն: Նա ինձ շատ էր սիրում: Ամեն անգամ, երբ ինձ տեսնում էր թե՛ փողոցում, թե՛ իրենց տանը և նկատում էր իմ հագուստեղենը վատ վիճակում, անմիջապես, ձեռքիցս բռնած, բերում էր խանութ և հագցնում նոր ոտնաման կամ վերարկու: Գրել էր տալիս Մուշեղի հաշվին, քանի որ այդ նրա պարտականությունն էր:

Այդպես շատ է պատահել: Կիրակիից կիրակի գալիս էր մեր այգին իր ընտանիքով և անպայման վեճի էր բռնվում Մուշեղի հետ: Այդ վեճը մեծ մասամբ ինձ համար էր:

–Ինչո՞ւ ես գնումներ կատարում և գրում ինձ վրա:

Պատասխանում էր Գևորգը.

–Ինչքան որ ունեցվածք դու ունես, այնքան էլ Վաղոն ունի: Դուք տասը շունչ եք, իսկ Վաղոն՝ մեկ: Հետևապես Վաղոն տասն անգամ պիտի ավել հագնվի, իսկ դու տասի փոխարեն մեկն էլ չես առնում:

Անցնում էին օրեր, ամիսներ: Մի օր ուրախ, մի օր լացով անցնում էին մանուկ օրերս՝ խեղճ ու անտեր:

Մտաջին գաղթը

1916 թվականի աշունն էր: Աշնան վերջին այգուց տեղափոխվել էինք քաղաքի տները: Վրա հասավ Նոր տարին:

Եթե չեմ սխալվում, 1917 թվականի փետրվարի վերջերին մի օր հորեղբայրս խանութից սովորակա՜նից շուտ եկավ և հայտնեց.

–Վեր կացեք, հագնվե՛ք, ինչքան հնարավոր է շուտ, գաղթվելու ենք: Մինչև լույս պետք է քաղաքը դատարկել:

Բոլորը չգաղթեցին:

Հանեցինք գոմից մեր անասունները: Կովերի վրա գցեցին խալիներ, կարպետներ և ինչ որ հնարավոր էր: Ջորիներ, ձի ու ավանակ, ամեն ինչ կարողացան տեղավորել: Յուրաքանչյուրն իր երեխային տեղավորեց անասունների վրա (էշերի վրա գցեցին խուրջիներ և յուրաքանչյուր կողմից երեխաներ դրեցին), իսկ ինձ ոչ մի ուշադրություն դարձնող չկար: Վերջում ձիու վրա նստեցրին տատիկիս և հետևում Սալվինազին, որն ինձանից երեք տարով մեծ էր: Այդ ձիու սանձը տվին իմ ձեռքը և պատվիրեցին.

–Քաշի՛ր այս ձիու սանձից և անասուններին քշի՛ր:

Ուտքով մնացինք երկու հորեղբայրներս, իրենց կանայք և ես:

Շարժվեցինք դեպի Արաքսի կամուրջը, որը մեր քաղաքի մոտով էր անցնում: Տան բանալիները թողեցինք մեր հարևան թուրքի մոտ, որին էլ մերոնք ասացին.

–Սա մեր տան բանալիքներն է, որոշ ժամանակ նայի՛ր, եթե հետ չեկանք, քեզ հալալ է:

Ու գալիս ենք դեպի Արաքսի կամուրջը: Բայց այստեղից թույլ չեն տալիս առաջ գնալու, որպեսզի ստուգեն ճանապարհները բա՞ց են, թե՞ ոչ: Սպասեցինք բավական ժամանակ, մինչև լուր բերին, թե ճանապարհները բաց են, ոչ մի վտանգ չկա: Գիշերվա ժամը 1-2-ին ժողովուրդը խառնվեց, գնում են, ամեն մեկն աշխատում է ինքն առաջ գնալ:

Կամրջից անցնելու ժամանակ բավականին մարդիկ ընկան ջուրը, շատերն էլ իրենք էին ջուրը գցում փոքրերին և ծերերին: Արաքսը մեծ ջուր էր, ընկնողն իսկույն խեղդվում էր:

Գալիս ենք դեպի Ղարս քաղաքը: Չենք շտապում, որ շուտ հասնենք Ղարս: Անընդհատ հետ ենք նայում, միգուցե ճանապարհից հետ դառնանք: Այս հույսերով հասանք Ղարս: Դարձյալ սպասում ենք:

Վերադառնալու հույսներս կտրեցինք: Արդեն խոսակցություն կար՝ պետք է Ղարսն էլ դատարկել և գնալ դեպի Գյումրի:

Մի օր մի սայլ բերեցին, բարձեցինք ինչ որ բերել էինք՝ կապոցներ, մաֆրաշներ և շարժվեցինք դեպի կայարան, որպեսզի գնացքով գաղթվենք Գյումրի:

Հասանք կայարան, անմիջապես հորեղբայրներս իրենց կանանց և երեխաներին տեղավորեցին գնացքի մեջ, իսկ ինձ՝ որպես պահակ, նստացրեցին սայլի վրա: Իրերը կրողը միայն Արմենակ հորեղբայրս էր: Վերջացնելուց հետո նոր ինձ պետք է տանեին այն վագոնը, որտեղ մերոնք էին:

Արմենակ հորեղբայրս տան իրերից հազիվ երկու կտոր էր տարել, երբ դրոստացին թնդանոթները, սկսվեց աղմուկ, լաց, կոծ: Այդ միջոցին գնացքը շարժվեց և գնաց:

Հորեղբայրս եկավ ինձ մոտ և ասաց, որ գնացքը գնաց, ամբողջ ունեցվածքը դեռ սայլի մեջն էր:

Իրեն էլ ստիպում էին, որ գնա, կովի, որպեսզի գաղթականությունը փախչի:

Ինձ իջեցրեց սայլի վրայից, ձեռքիցս բռնեց, բերեց կայարան և բարձրացրեց մի բեռնատար վագոնի գլուխ, որպեսզի ես էլ դրանով գնամ Գյումրի քաղաք: Ես մի կերպ տեղավորվեցի վագոնի կտուրում: Այնքան խիտ էին նստած, որ մի փոքր շարժում, և կտուրից ընկնող էր լինում:

Սոված, ծարավ նստած՝ սպասում էինք շարժվելուն: Հորեղբայրս էլ գնաց կովելու:

Վերջապես գնացքը շարժվեց: Շատ ենք եկել, թե քիչ, ինչքան էինք Ղարսից հեռացել, մեկ էլ կայարանում, որտեղ ես էլ եմ նստած կտուրում, վագոնն անջատեցին գնացքից և հայտնեցին, որ գծերը վառվում են, գնացքն այլևս չի գնալու: Ուրիշ տեղ էլ չեղավ տեղավորվելու և տեղավորվելու:

Գնացքը գնաց, ժողովուրդը մնաց: Սկսեցինք ոտքով ճանապարհվել:

Ես շատ դեսուդեմ վազվեցի: Սոված էի, ծարավ: Մութ ընկել էր, ցուրտ էր: Խառնվեցի գաղթականներին, ուր որ գնում էին, ես էլ հետները գնում էի, որտեղ կրակ էինք տեսնում՝ տաքանում էինք և նորից շարունակում ճանապարհը:

Գաղթականության հետ գնում եմ: Մի քանի բուրդովին անծանոթ, բարի, խիղճ ունեցող մարդիկ նստեցնում էին իրենց սայլի վրա, մի փոքր կտոր հաց էին տալիս, հարցուփորձ անում, թե ինչպե՞ս է, որ մենակ եմ:

Ես մանրամասն պատմում էի: Խղճում էին ինձ և մի քիչ քայլելով, մի քիչ սայլին նստելով՝ հասցրին ինձ Ալեքսանդրապոլ քաղաքը:

Արդեն երեկո էր: Հարցուփորձ անելով՝ գտա մեր ազգականներից մեկին՝ Աբայենց Կարապետի ընտանիքին, ինձ տարան իրենց տուն: Բայց մերոնցից ոչ մի տեղեկություն չկար: Որտե՞ր եմ այժմ:

Անցավ երկու-երեք օր: Մի օր ինձ ուղարկեցին ջրի, այնքան էլ հեռու չէր տանից: Ճանապարհին ինձ ու ինձ մտածում էի՝ ի՞նչ է լինելու իմ դրությունը:

Գաղթվելու օրից մորիցս այլևս տեղեկություն չկար:

Դույլերը ձեռքիս՝ գալիս եմ աղբյուր, որպեսզի մեր ազգականի համար ջուր բերեմ: Դեռ նոր էի աղբյուրից ջուր լցնում, մեկ էլ տեսա՝ Կարո պապիկը գալիս է իմ կողմը: Հասնելուն պես դույլերը ձեռքիցս վերցրեց ու ասաց.

–Շուտ գնա՛ տուն: Արմենակ հորեղբայրդ մեր տանը քեզ է սպասում:

Ղարաքիլիսայում

Գնացքի մեջ Ղարաքիլիսա գնալու ժամանակ ինձ ճանաչող եղավ և ասաց. «Մորդ լուսը բռռանա, մերդ Ղարաքիլիսայումն ա» :

Ինչքան ուրախացա: Հասնելուն պես շատ խնդրեցի, որպեսզի ինձ տանեն, գոնե տեսնեն: Պատասխանը եղավ. «Հիմա ուշ է, մնա հետո»:

Առաջի անգամն էր, որ մեր երկրից դուրս էի եկել: Տասը տարեկան էի: Մոտ հինգ-վեց ամիս է՝ չէի տեսել մորս և չափից դուրս կարտուել էի: Քաղաքն անծանոթ, ոչ մի ճանապարհ չգիտեմ: Ոչ մի օր ոչ տարան մորս տեսնելու, ոչ էլ ինքն իմացավ, որ ես այդտեղ եմ:

Հորեղբորս հետ միասին հասանք այնտեղ, որտեղ ապրում էին հորեղբայրներիս ընտանիքները՝ Մուշեղն իր ընտանիքով (աղջիկը՝ Մավինազը՝ տասներեք տարեկան, տղաները՝ Վարոսը՝ յոթ տարեկան և Աղան՝ երեք-չորս տարեկան) և Արմենակ հորեղբայրս, կինը և երեք աղջիկները, ամենամեծը վեց տարեկան: Ես էլ եկա, դարձանք նորից տասնմեկ շունչ:

Ղարսից փախչելուց հետո անցել էր մոտ տասնհինգ օր:

Առավոտ լույսը բացվելուն պես ինձ արթնացրին, մի շորի մեջ հաց ու պանիր կապեցին, կովերը դուրս հանեցին, գցին առաջս ու ասացին.

–Կտանես անտառ՝ լավ արոտատեղ, կարածացնես, երեկոյան տուն գալուց շալակով չոր փայտեր կբերես՝ հաց թխելու, ճաշ եփելու համար:

Մոտ երկու ամիս մնացինք Ղարաքիլիսայում: Իմ գործն ամեն օր դա էր, ուրիշ ոչ մի տեղ ինձ չհաջողվեց գնալու:

Ինչքան մնացինք Ղարաքիլիսայում, լավ չեմ հիշում: Մի օր էլ անասունները վաճառեցին, ու նորից գաղթեցինք ավելի ապահով տեղ: Վագոններում տեղ չլինելու պատճառով մերոնք տեղավորվեցին շոգեքարշի վրա. մութ, կեղտ, մազուր՝ այդ բոլորն աչքին չէին գալիս, կյանքը բոլորից թանկ էր: Տեղավորվեցինք այդ մրերի վրա: Գնալու ենք Թիֆլիս:

Ղարաքիլիսայից դուրս եկանք, հասանք մինչև Մողանլու: Այստեղ ճանապարհ չեմ տալիս, որպեսզի գնացքը շարունակի իր ճանապարհը: Այն բավականին մեծ քանակով բեռնատար վագոններ ունենալով՝ լեփ-լեցուն գաղթականներով, որի պատճառով երկու շոգեքարշ էր կայքրած, մեկը՝ առջևից, մյուսը՝ հետևից: Բավական ժամանակ մեր գնացքը պահելուց հետո շարժվեց:

Հազիվ կայարանից հեռացել էինք մեկ-երկու կիլոմետր, մեկ էլ ցորենների միջից սկսվեցին կրակոցներ:

Ամբողջ գաղթականությունը, ամենքն իջնում ու վագոն էին դեպի Թիֆլիսի կողմը, իսկ այդ արտերի մեջ պառկած թալանչիները կրակում էին օդի մեջ, ոմանք էլ մարդկանց էին խփում:

Կիսակայարան փախանք: Այստեղ այլևս ոչ երեխա էին ճանաչում, ոչ մեծ, ոչ փոքր: Ամենքը փախչում էին: Մամս կլիներ յոթանասուն տարեկանից ավել, նա էլ շոգեքարշի վրայից իրեն գցեց և փախչում էր: Չանցած մի քանի ժամ՝ օգնության հասավ զրահապատ գնացքը և երբ սկսեց գնդացրով կրակել, արտերի մեջից կրակոցը դադարեց:

Մեզ հրամայեցին. «Հե՛տ գնացեք և ամեն մեկը գրավեք ձեր տեղերը», չնայած բավականին մարդիկ սպանվեցին և վիրավորվեցին: Նրանց առանձին լցրին վագոնների մեջ և ուղարկեցին Թիֆլիս, իսկ կենդանի մնացողները վերադարձան իրենց տեղերը: Թալանչիները ոչ մի բանի ձեռք չէին տվել, չէին հասցրել:

Մնացածներս առանց որևիցե կորստի հասանք Թիֆլիս: Գնացքը կարող է չկանգնել, բայց վաղորոք այդ թալանչիներից երկու հոգի՝ ոտից գլուխ զինված, բարձրացել էին առաջից քաշող շոգեքարշի մեջ և ստիպել էին մեքենավարին իրենց ցանկացած տեղը կանգնեցնել: Բայց ապարդյուն անցավ թալանչիների ծրագիրը: Այստեղից էլ ազատվեցինք կենդանի և հասանք Թիֆլիս:

Թիֆլիսում շատ քիչ մնացինք: Մեծ քաղաք էր, և դժվար էր բնակարան ճարելը: Ապրուստն էլ էր շատ դժվար: Որոշեցին հարմար տեղ գտնել և ապրել: Գնեցինք մեկ ձիանոց կառք և տեղավորեցինք եղած-չեղածն այդ կառքի վրա:

Գալիս ենք դեպի Վլադիկովկաս՝ Վայենի գրուզինսկի ճանապարհով, Կազբեկով: Բավականին գաղթականություն էր գալիս այդ ճանապարհներով:

Հինգ-վեց օրից հասանք Վլադիկովկաս: Հասնելուն պես կառքը ձիու հետ վաճառեցինք, նստեցինք գնացք և գնում ենք դեպի Արմավիր: Այստեղ էլ վտանգավոր տեղ կար: Այդ իսկ պատճառով մեզանից առաջ գնում էր գրահապատ գնացքը: Որոշ ժամանակ հետո, եթե չեմ սխալվում, Բեսլանում էր, թալանչիները երկաթգծից ոչ հեռու ձիեր լծած կառքերով սպասում էին մեր գնացքին: Բայց որ տեսան գրահապատ գնացքը, մեկ հատ կրակ բացեցին (երևում էր, որ դա իրենց պայմանանշանն էր) և վախեցան, ոչ մի բան չկարողացան անել:

Այդ փորձանքից էլ պրծանք և հասանք Արմավիր:

Այստեղ ապրեցինք շատ քիչ՝ մի քանի օր կամ շաբաթ: Այստեղ էլ չհարմարվեցինք:

Ռասշևոտկայում

Գնացինք Ռասշևոտկա գյուղ:

Հարուստ գյուղ էր, մեծամասնությունը կազակներ են, մնացածը՝ մուժիկներ:

Մեզ՝ մոտավորապես 10 ընտանիքի տեղավորեցին գյուղի մի ծայրում: Գերեզմաններից ոչ հեռու դատարկ տեղ էր: Դպրոց էր, թե՞ կազարմա էր, լավ չեմ հիշում, մինչև որ յուրաքանչյուրն իր համար սենյակ ճարի:

Մոտ տասը օր այդտեղ ապրեցինք: Յուրաքանչյուր ընտանիք զբաղեցրեց մի անկյուն:

Երբ բնակիչներն իմացան, որ գյուղի մոտ գաղթականություն է եկել, սկսեցին ամեն ինչ բերել մեզ համար՝ ամեն տեսակի խմորեղեն, ճաշ և այլն:

Յուրաքանչյուրն իրեն հարմար տեղ գտավ: Մերոնք էլ վարձեցին Խլյուստով Իվան Մակարովիչի բնակարանը: Մեր տանտերը՝ Իվան Մակարովիչ Խլյուստովը, տան մեծն էր: Ուներ երկու տղա, մեծը՝ Սիխայել Իվանովիչը թունդ կազակ էր, իսկ փոքր որդին՝ Բորիսը, հայտնի բուշկիկ էր:

Մեր ընտանիքը մեծ էր՝ տասներկու շունչ, այնպես որ մեզ համար հազիվ հարմար բնակարան գտան: Կանայք սկսեցին իրենց համար աշխատանք գտնել, բրդից շալեր գործել: Բուրդը բերում էին այնքան, որ մեկ շալ իրենց էին մանում և գործում, ավելի շատ մնում էր իրենց: Բացի այդ էլ՝ վարձատրում էին հացով՝ մի քանի բուխանկա, յուղով և այլն:

1917 թ. աշնանն արդեն ամեն ինչով ապահովված էինք: Մեր հարևան Գլասկին Վասիլի մոտ աշխատեցի 6-7 ամիս: Վարուցանքի կամ քաղի ժամանակ ձիու վրա էի նստում: Այնքան հող ունեին, որ երբ նրանց բատրակ Մերգեյի հետ դուրս էինք գալիս վարուցանքի կամ խոտ և ցորեն հնձելու, շաբաթներ էր տևում, այն էլ հնձող մեքենայով:

1918 թ. երկրի դրությամբ խառնվեց: Մեկ օր տեսնում էիր՝ կազակներն են, մեկ ուրիշ օր տեսնում ես՝ կարմիրներն են: Այսպես մի քանի անգամ տվին ու առան:

1918 թ. աշնանը՝ կաղետների ժամանակ, 18-19-ամյա Մերգեյն ինձ կանչեց այգի և սկսեց ինձ ինչ-որ գաղտնի բան ասել, քոլերի տակից հանեց մի հրացան՝ մոսին և մոտ 100 հատ փամփուշտ: Տարանք և իր փամփուշտներով պահեցինք սարայի կտուրում: Մերգեյն ասաց.

–Ես այս գիշեր տանտիրոջ ձիով փախչելու եմ մերոնց կողմը, որոնք այնքան էլ հեռու չեն գյուղից: Ոչ մեկին չես ասի այս հրացանի մասին, մինչև որ կարմիրները կզան, նոր ինքդ կարմիրներին կհանձնես:

Ես փոքր էի՝ տասնմեկ տարեկան: Լավ չէի հասկանում:

Անցան օրեր: Երեք-չորս օր էր, ինչ կարմիրները եկել էին: Մի օր առավոտ շուտ երկու կարմիր բանակայիններ մեր տանտիրոջ հետ բակում ման էին գալիս, մտնում էին ամեն տեղ՝ դարձանաճոցը, ծղոտների մեջ, գոմերը և ինչ-որ զենք են պահանջում: Խեղճ հալիվորը երդվում է՝ ոչ մի զենք չկա:

Ես մոտեցա պապիկին և ասացի.

–Պապիկ, ես գիտեմ, թե որտեղ զենք կա:

Բարձրացա այնտեղ, որտեղ մենք պահել էինք, զենքը հանեցի և տվեցի: Դրա պատճառով ինձ և պապիկին տարան իրենց ղեկավար մարմինների մոտ և սկսեցին հարցաքննությունը: Պատմեցի ես ամեն ինչ, և իմ մեջքին թփթփացնելով՝ ասացին.

–Ապրես, փոքրիկ:

Իսկ պապիկին ասացին.

–Կյանքդ փրկողը սա էր:

Մի դեպք էլ պատմեն: Կազակների ժամանակ հորեղբորս հետ գնացինք տանտիրոջ հանդը, որպեսզի խոտը հնձենք: Այդ գիշեր անձրև եկավ, ստիպված եղանք գյուղ վերադառնալ, քանի որ ցեխ ժամանակ խոտ քաղող մեքենան հնարավոր չէր աշխատեցնել: Երբ վերադարձանք գյուղ, գերեզմանների մոտից անցնելիս տեսանք, որ յոթ բոլշևիկի միայն ներքին սպիտակեղենով կանգնեցրին փոսերի առաջ և գնդակահարեցին:

Ռասշտոտկայում ապրեցինք մինչև 1919 թ. գարունը: Լուրեր տարածվեցին, որ մեր երկրի մուտքը բաց է, արդեն մեկ տարի առաջ որոշ մասը վերադարձել է, և շատ լավ ապրում են: Հայրենիքը քաղցր բան է, մանավանդ մեր հարազատ ծննդավայրը, հողն ու ջուրը: Նաև շատ էինք կարոտել մեր քաղցրահամ մրգերին, որոնցից արդեն երեք տարի է, զուրկ էինք: Իսկ ես ամենաշատն եմ շտապում գնալ, որովհետև, ինչքան որ կարոտել էի մեր այգուն, մրգերին, իմ հասակակից ընկերներին, կրկնապատիկ և հարյուրապատիկ կարոտել էի հարազատ մորս, որին արդեն երեք տարի է, որ չէի տեսել և գիտեի, որ Կաղզվանում է:

Եղան մեր կաղզվանցիներից, որոնք տեղներից չչարժվեցին: Մնացին և ետ չվերադարձան:

Դեպի Կաղզվան

1919 թ. հունիս ամսին Մուշեղ հորեղբորս ընտանիքով դուրս եկանք Ռասշտոտկայից: Գնում ենք հայրենիք:

1919 թ. օգոստոսի 15-ին հասանք Կաղզվան՝ մեր քաղաքը հարազատ, որը մագնիսի պես մեզ ձգում էր դեպի իրեն:

Կաղզվանին դեռ 7-8 կիլոմետր ճանապարհ կար, որ հասնեինք: Իր ձիով մեզ դիմավորելու էր եկել հորեղբորս բաջանաղը՝ Հուրոյի Թադևոսը, որն արդեն մեկ տարի է, ինչ Կաղզվանում էր: Ձին տվեցին ինձ և պատվիրեցին, թե՛ կգնաս մեր այգին: Ես հասկացա մեր այգին: Դու մի ասի՝ Հուրոյի Թադևոսն էր ասողը:

Ձիու քայլերն արագացրի և շտապում էի շուտ տեղ հասնել: Նստած թամբած ձիուն՝ հպարտ-հպարտ բարձրանում էի կամրջի մոտից բարձունքը, որը տանում էր մեր Պետրոս բերդի այգին: Հասնելուն պես մեր այգու հարևաններն իսկույն դուրս թափվեցին փողոց: Ձիուս սանձը բռնել էին և բաց չէին թողնում, որպեսզի իմանան, թե ո՞վ է մնացել մեզանից, և ո՞ր էին մերոնք: Արդեն երեք տարի էր, ինչ թուրքերեն չէի խոսել: Կեսը թուրքերեն, կեսը ռուսերեն մի կերպ հասկացրի որոշ բաներ: Բացի այդ էլ՝ այգու մոտերքն էի, սիրտս լորի սրտի պես արագ գցում էր, և շտապում էի, որ մտնեմ մեր այգին և կանչեմ ամենամոտ և հարազատ ընկերոջս: Մտա դարբասից բակը և ձիուս կապեցի ծառից և բղավեցի՝ Անդրանի՛ կ: Այդ միջոցին տանից դուրս եկան անձանոթ մարդիկ: Հարցրին իմ ով լինելու և

սկսեցին ինձ հյուրասիրել: Այդ բոլորն ինձ չէր հետաքրքրում: Անհամբեր սպասում էի ընկերոջս: Եվ մեկ էլ տեսա, որ արագ վազելով հասավ ինձ, փաթաթվեցինք, համբուրվեցինք և սկսեցինք մեր այգուն ման գալ: Այդ պահին իմ ուրախությունն այնքան էր, որ չիմացա, թե երբ սկսեց մթնել: Ինձ ու ինձ հաշվեցի, որ վաղուց պետք է եկած լինեին, բայց չկան: Նոր հասկացա, որ գնացել եմ Կոտրած կամրջի այգին, որտեղ ապրում էր հորեղբորս բաջանաղը՝ Հուրոյի Թադևոսը: Արդեն մութն ընկել էր: Նստեցի ձիւն և գնում եմ մերոնց մոտ: Ճանապարհները շատ լավ գիտեի, քանի որ դեռ չէինք գաղթել, շատ հաճախ գնացել և եկել էի այդ այգին: Բացի այդ, հորաքրոջս այգին էլ այդտեղ էր: Դրա համար ճանապարհները շատ լավ գիտեի, և մինչ այժմ էլ իմ հիշողությունից չի գնացել:

Պետրոս բերդը և Կոտրած կամուրջն իրարից մոտավորապես երեք վերստ հեռու են:

Հասա հորեղբորս բաջանաղի այգին: Մի քիչ վրես բարկացան, բայց ոչինչ, ուրախություններս այնքան շատ էին, որ այդպիսի բաներ հաշվի չառան:

Առաջին գիշերն էր, ինչ գաղթվելուց հետո նորից վերադարձանք մեր ծննդավայրը: Նորից քնում ենք մեր քաղաքում: Բայց ամբողջ գիշերը քունս չէր տանում, ուզում էի գնամ մորս տեսության, որին արդեն երեք տարի էր, ինչ չէի տեսել: Վաղուց էր, որ եկել էին Կաղզվան: Իմացա, որ ապրում է Ջվարի այգում՝ իր եղբոր այգում: Եղած հագուստից լավը հագնվեցի և գնում եմ տեսության կարոտացած մորս: Հասա դռանը, բայց, չգիտեմ ինչու, չեմ կարողանում միանգամից բացել և մտնել բակը: Վերջապես համարձակվեցի և մտա բակը, որտեղ ներս ու դուրս են անում: Մայրս ինձ տեսնելուն պես անմիջապես վազեց, ինձ գրկեց և ուրախության արցունք էր թափում:

Մեկ օր մնացի մորս մոտ, կարոտս առա: Այժմ անհամբեր սպասում էի, որ գնամ իմ հորական այգին: Հաջորդ օրը գնացի իմ այգին: Ամեն ծառ մեկ առ մեկ նայում եմ, հետաքրքրվում եմ, ուրախանում եմ և ջուր եմ անում: Սրտանց կպել էի գործիս՝ հավատալով, որ այլևս ոչ մի բան չի պատահի, այսպես կապրենք մինչև մեր կյանքի վերջը:

1919 թ. օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը ամեն օր գնում եմ մեր այգին և խնամում եմ, ջրում եմ և այլ գործերով զբաղվում: Եկավ աշուն՝ սեպտեմբերի 1-ը:

– Պետք է գնաք, դպրոց ընդունվեք, – ասաց Մուշեղ հորեղբայրս:

1919 թ. սեպտեմբերի 1-ի առավոտ վեր կացանք, վերցրեց իր երկու երեխային՝ մեծ աղջկան՝ տասնչորս տարեկան Մալվինազին, ութ-ինը տարեկան տղային՝ Վարոսիկին, և ինձ՝ տասներկու տարեկան, բերեց քաղաք: Ընդունվեցինք դպրոց, յուրաքանչյուրս իր համապատասխան դասարան:

Ուրախ, զվարթ վերադարձանք տուն: Երկու օրից պետք է գնալինք դասի: Մեպտեմբերի երեքին եկանք դասի: Հավաքվել էինք դպրոցի բակում, բավական ժամանակ սպասում էինք զանգին, բայց զանգ չկար: Մեկ էլ դասատուներից մեկը մեզ հավաքեց իր շուրջը և ասաց.

–Երեխաներ, ոչ մեկդ ոչ մի տեղ չգնաք, այստեղից ուղիղ գնացե՛ք ձեր տները, երկու օրից հետո կգաք դպրոց:

Ուրախ-ուրախ գալիս ենք մեր տները: Ես իմ հին սովորության պես պետք է մորս տեսնեմ, նոր գնամ մեր տուն: Եկա մորս տուն, որտեղ երկու տղա էլ կար: Մեկը մորս ամուսնու տղան էր՝ Մնացականը՝ ինը տարեկան, երկրորդը՝ Մնացականի հորեղբոր տղան՝ Սրապիոնը՝ տասներեք տարեկան:

Երեքովս վազվզում ենք այգու այս ծայրից մյուս ծայրը, մրգեր քաղում, ուտում: Այնքան վազվզեցինք, որ սովածացանք, եկանք տան կողմը, որտեղ մայրս նոր լավաշ էր թխում, լցրեց յուրաքանչյուրիս մեկ աման մածուն, վրեն էլ դռաք: Նոր թխած հացով ուտում ենք:

Մեկ էլ քաղաքում ապրող Ֆահրադի թոռ Ավոն եկավ և ասաց.

–Վարդան ապր, շտապ պատրաստվե՛ք, այսօր պետք է քաղաքը դատարկվի, նորից գաղթում ենք:

Երկրորդ գաղթը

Շատ լավ հիշում եմ՝ 1919 թ. սեպտեմբերի 2-3-ն էր: Ես իսկույն վազեցի Կոտրած կամրջի այգին, որտեղ ապրում էին մերոնք, որ շուտ այդ լուրը հասցնեմ հորեղբորս:

Ժամը 12-ն էր, երբ նորից սուգի մեջ մտավ Կաղզվանը, նորից գաղթ: Դարձյալ հավաքվեցինք Արագի կամրջի մոտ: Արդեն ժամը երեք-չորսը կլինեք, երբ ամբողջ քաղաքը նորից կամրջի վրա էր հավաքված:

Մինչև հետախույզը չվերադառնար և տեղեկություն չտար ճանապարհների մասին, թույլտվություն չկար առաջ շարժվելու:

Հակառակի պես գաղթի օրը խմորը նոր էինք շաղախել, բայց չէինք հասցրել գոնե մի քանի հաց տանել մեզ հետ: Այս անգամ ինչ էլ որ բերել էինք մեզ հետ, դա էլ թողեցինք, ձեռք ձեռքի բռնած՝ եկել էինք կամրջի մոտ և սպասում էինք:

Հորեղբորս երեք երեխաներից մեկը մեծ էր, բայց երկուսը փոքր էին, սկսեցին հաց ուզել: Ի՞նչ անել: Ոչ մի հնար չկար հաց ձեռք բերելու: Չնայած շատ վտանգավոր էր նորից դատարկված քաղաք վերադառնալ: Ստիպված ինձ վերցրեց, և վերադարձանք տուն, որտեղ խմորը դեռ տաշտի մեջ էր և արդեն տաշտից թափվում էր:

Հորեղբայրս վերցրեց դատարկ պարկը, մեջը խմոր լցրեց: Ես էլ բարձրացա կտուրը, որտեղ չոր միրգն էր՝ պաստեղ, սուջուխ, ալանի, այդ բոլորից լցրի ծոցերս և իջա:

Միասին բաղերի միջով, թաքուն տեղերով հասանք կամրջի մոտ: Մի թիթեղի կտոր ճարինք, կրակ արինք և բոլորս մի փոքր կերանք: Մնացածը պարկով մեզ մոտ էր և աչքի լույսի պես պահում էինք:

Գիշերվա ժամը 12-1-ը դարձավ: Լուր եկավ, որ ճանապարհներին վտանգ չկա, կարելի է գնալ: Այս անգամ գրեթե գաղթականության 90%-ը ոտքով էր, չկար ոչ մի սայլ, ոչ մի անասուն: Գնում ենք Ղարս: Ղարս հասնելուն պես հորեղբայրս իր բաջանադի հետ անմիջապես տեղավորվեց մի ծածկի տակ: Դարձյալ հույս ունեինք վերադառնալու:

Լավ չեմ հիշում՝ քանի օր կամ շաբաթ մնացինք, որից հետո աշնան կեսերին Ղարսում թնդանդները կրակեցին:

Այդտեղից սկսվեց գաղթվելը: Այս անգամ, երբ Ղարսից գաղթեցինք, ինչ-որ սայլ կար: Միայն մի քիչ ուտելիք էր տեղավորված, հասակավոր անձինք և երեխաներ: Մնացածս ոտքով, ամենքն իր համար, շատերն էլ բարձրացան ամերիկացոց որբանոցները, որպեսզի փրկեն իրենց կյանքը:

Գնում ենք Մորբեղի ձորով, երկու կողմերը՝ բարձր լեռներ, տակից գնում են ճանապարհը և գետը: Գնում ենք դեպի Ալեքսանդրապոլ քաղաք:

Գնում ենք սոված, ծարավ, ոմանք, ուժասպառ լինելով, վայր են ընկնում, քաշում, տանում են ճանապարհի մի կողմը, թողնում: Աշնան ցուրտը մի կողմից, ցեխ, սովը մյուս կողմից, կրակոցներ: Հույսներս կտրած՝ ոչխարի պես գնում ենք:

Չտեսա, թե հորեղբորս ընտանիքը ո՞ր կողմը գնաց: Ես մենակ գնում եմ, ոտքերիս հնամաշ տրեխ կար: Այդ ցեխի մեջ ոտքերիցս ընկան, մնացի լրիվ ոտաբոբիկ: Մեկ էլ տեսա՝ բեռնատար ավտո է գալիս: Ես հասա դրան և մի փոքր տարածություն կախված գնացի: Մեկ էլ տեսա մեր բարեկամի սայլը, իսկույն թռա ցած և մոտեցա այդ սայլին: Ինձ որ տեսավ հորեղբորս կնոջ քույրը, անմիջապես տեղ տվեց և մեր հացի տոպրակից հանեց մի կտոր հաց և ասաց.

–Կեր, Վաղո՛ ջան, սա էլ քո բաժին հացն է:

Այլևս չկա այդ կինը, հորեղբորս կնոջ քույրն էր՝ Հուրոյի Թադևոսի կինը: Գյուլի մորաքույր էինք ասում: Շատ բարի սիրտ ունեք:

Երբ ինձ տեղավորեց սայլի վրա, կլինեք երեկոյան ժամը 5-6-ը: Քանի որ ոտքերս մրսած էին, ծալեցի տակս և նստեցի ոտքերիս վրա, որպեսզի տաքանան, և այդ հացի կտորն էի կրծում: Մի քանի անգամ հազիվ թե կրծած լինեի, հանկարծ ձեռքիցս խլեցին և տարան: Մնացի դարձյալ սոված: Ես այնքան ուտելու մասին չէի մտածում, ինչքան ոտքերս ցուրտը տանելուց էի վախենում: Այդ իսկ պատճառով ծալապատիկ նստել էի, որպեսզի ոտքերս տաքանան: Չնայած թմրեցին, բայց տաքացան: Այդ ժամանակ մոտեցավ կաղզվանցի ճուռոյենց Հմայակը և ասաց.

–Թաղևուս, տե՛ղ տվեք, կնոջս պառկացնեմ, քանի որ վիրավորված է, ձիուն նստել չի կարող:

Իսկ Թաղևուսն ասաց.

–Ախար տեղ չկա:

–Չգիտեմ, այդ տղան թող գա իմ թաքում նստի, դրա տեղը կհնս պառկի:

Ինչպես երևում էր, վախեցավ մեր բարեկամը և համաձայնվեց: Ինձ նստեցրեց իր հետևում, իսկ կնոջը տեղավորեց իմ տեղը:

Գիշեր է, ցուրտը սոսկալի է, ոտքերս անցկացնում եմ փալանի տակը, քսում է, վերք առաջացնում: Ի՛նչ արած, մի կերպ համբերում եմ ցրտին: Գալիս ենք իբր թե կարճ ճանապարհներով, և մեզ հետ էլ գալիս է իր ընկերներից մեկը, որին ես չեմ ճանաչում:

Լուսադեմին հասանք ինչ-որ մի մալականի գյուղ: Ճուռոյենց Հնայակը զինված էր, հրամայեց մալականին ձիուն կեր տալ, մեզ էլ որևիցե ուտելու բան: Առավոտ արեգակը դեռ դուրս չէր եկել, ձիուն գոմից դուրս բերեց:

Ես էլ բարձրացել եմ մի քարի վրա, որպեսզի իմ տեղը նստեմ, մեկ էլ տեսա, որ ընկերոջը նստեցրեց իմ տեղը, գնացին:

Ճանապարհից դուրս եմ եկել, անձանոթ վայր, ոտաբոբիկ, խճուղու տեղը չեմ իմանում, որով գաղթականությունն է գնում: Ստիպված եղա հարցնել, թե խճուղին որտեղ է: Ինձ ասացին, որ եթե այս ջուրն անցնեմ, այն բարձունքի տակով խճուղին է գնում: Այնքան էլ մեծ ջուր չէր, բայց մի բարակ սառույց էր բռնել, ջուրն էլ՝ մինչև չոքերս: Բոբիկ ոտքերով, առավոտ շուտ սառույցը կտրելով՝ անցա այդ փոքր գետը և բարձրացա այդ փոքր բարձունքը, որի վրա մեծ կրակ էր վառվում, շուրջն էլ կաղամբի տերևներ էին թափված: Մի կողմից ոտքերս եմ տաքացնում, մյուս կողմից էլ այդ թափած կաղամբի տերևներն եմ ուտում: Գաղթականության հետևից գալիս եմ բանակայիններ և մի քանի թնդանոթ, որոնց եզներ էր լծված: Յուրաքանչյուր թնդանոթի երկու-երեք գույգ եզ էր լծված: Առաջին եզները չէին քաշում, քանի որ ստիպող չկար: Այդ իսկ պատճառով հարցրին ինձ.

–Տղա՛ ջան, կարո՞ղ ես լուծի վրա նստել:

Ասացի.

–Ինչո՞ւ չէ, դա իմ գործն է:

Ինձ նստեցրին լծի վրա և ձեռքս տվեցին ճիպոտ ու ասացին.

–Քշի՛ր չգնացող եզներին:

Այդպես էլ արեցի: Կլինե՛ր առավոտվա 10-11-ը:

Գնում ենք Ալեքսանդրապոլ քաղաք: Գարձավ ցերեկվա ժամը 2-ը: Հրամայեցին հանգստանալ և անասուններին կերակրել: Մի լայն տափաստանում արձակեցին անասուններին, խոտ տվեցին: Զինվորներից յուրաքանչյուրն իր տոպրակից հանեց չոր հաց ու կորկոտ, և սկսեցին ամենքն իրենց համար ուտելիք պատրաստել: Ինձ էլ բաժին տվե-

ցին, կերանք և որոշ ժամանակ հանգստացանք: Երեկոյան ժամը 5-6-ը կլինե՛ր, հրամայեցին առաջ գնալ: Լծեցինք թնդանոթները: Ես էլ պատրաստվեցի, որ նստեմ իմ տեղը, բայց այս անգամ հրամանատարներից մեկը հրամայեց.

–Քանի որ արդեն իրիկուն է ու ցուրտ, փոքրիկին նստեցրե՛ք թնդանոթի վրա, ոտքերը պարկերով փաթաթե՛ք, որպեսզի ոտքերը ցուրտը չտանի:

Թնդանոթի վրա նստած՝ գնում ենք: Որոշ տարածություն անցնելուց հետո, հանկարծ հրամայեցին աջ կողմը շղթա կազմել և պատրաստվել թնդանոթներով կրակ բացել, որպեսզի թուրքերի առաջ-խաղացումը կանգնեցնեն, գաղթականությունն առաջ գնա:

Հենց որ լսեցի, որ թնդանոթները պետք է կրակեն, վախեցա, իջա թոփի վրայից և հասա գաղթողներին: Ոտքերիս պարկերը քանդվեցին: Գարձյալ ոտաբոբիկ եմ: Որոշ տարածություն անցնելուց հետո հանդիպեցի մի անձանոթ մարդու և մեր ազգականներից մեկին՝ Աբայենց Կարոյի տղային: Արդեն լրիվ մութ էր, հասանք մի դատարկ գյուղ: Ոչ մի բնակչություն չկար, մտանք մի տուն, որտեղ թոնիրն էլ վառվում էր, հավաքվեցինք թոնրի շուրջը, տաքացանք: Իմ բարեկամիս մոտ ալյուր կար: Մոտավորապես մեկ փութ հաց, մի քիչ ալյուր շաղախեց առանց աղի, և քանի որ թոնիրը վառն էր, յուրաքանչյուրիս համար մեկ-մեկ հաց թխեցինք, կերանք, թոնրի կողքին քնեցինք:

Առավոտ շուտ ամբողջ գաղթականությունը նորից սկսեց իր ճանապարհը:

Մենք էլ վեր կացանք, որպեսզի գյուղից դուրս գանք և ընկնենք ընդհանուր խճուղին: Իմ բարեկամս ոտքերի վրա չէր կարողանում կանգնել, ոտքերը ցուրտը տարել էր: Մեզ խնդրեց, թե մի կերպ իրեն հասցնենք ճանապարհի վրա, մենք էլ մեր ճամփան շարունակեցինք: Նրան մի կերպ հասցրեցինք ճանապարհի վրա, նստեցրինք հարմար տեղ և ուզեցինք բաժանվել իրարից, մեկ էլ ինձ կանչեց իր մոտ, տվեց մնացած ալյուրը՝ մոտավորապես մեկ փթի չափ և ասաց.

–Կտանես, եթե մերոնց կտեսնես, կտաս, եթե ոչ, քեզ հալալ է:

Բաժանվեցինք:

Անձանոթ մարդու հետ գնում ենք, այդ ալյուրն էլ՝ շալակս: Ճանապարհով գնում ենք՝ դեսից-դենից խոսելով, քանդված բոստաններից կարտոֆիլ, գազար հավաքելով ու սնվելով: Հասանք Ալեքսանդրապոլ քաղաք:

Հենց մտանք քաղաքի մեջ, այդ խիղճը կորցրած մարդը, ուժի գոռով ձեռքիցս խլեց մեր բարեկամի ալյուրը: Այդքան ճանապարհ տված, ցրտից տուժված երեխաս բերեցի, հասցրի տեղ, նա տարավ: Մինչև անգամ մի ապտակ էլ կերա:

Ալեքսանդրապոլում

Լաց լինելով գալիս եմ քաղաքի կենտրոնը, որպեսզի մտնեմ շուկա: Կարող է մի ծանոթի հանդիպել: Շուկայում ման եմ գալիս սոված, ծարավ: Արդեն մութն ընկնում է, ի՞նչ անել, ո՞ր գնալ: Ուտքերս մրսում են, բոքիկ եմ: Վերջապես մի մարդ մոտեցավ և հարցրեց ինձ, թե որտեղացի՞ եմ, ո՞ւմ եմ ման գալիս: Պատմեցի ամեն ինչ: Ինձ ասաց.

–Արի՛ ինձ հետ, տանեմ ձեր կաղզվանցիների տուն, կարող է քեզ օգնեն:

Բերեց մի շենքի մոտ ու անմիջապես գնաց: Մոտեցա դռանը և թակեցի: Երբ բացին, տեսա հորեղբորս կնոջը՝ Գյարանին: Ինձ տեսնելուն պես վերցրեց հին դույլ և գնաց կովի թարմ կու (թրիք) բերեց և ուտքերս դրեց դրա մեջ, որպեսզի ուտքերիս բան չպատահի, եթե ցրտահարված է: Այդ կուն օգնում էր:

Ուտքերիս ոչինչ չպատահեց, իսկ հորեղբորս կնոջ ուտքի մատերը լրիվ ցրտահարվել էին Կաղզվանից երկրորդ անգամ գաղթելու ժամանակ: Տեղափոխեցին հիվանդանոց: Մոտ երեք ամիս պառկեց, երկու ուտքի մատերը հեռացրին: Երբ հիվանդանոցում պառկած էր, ես երկու օրը մեկ անգամ գնում էի հիվանդանոց տեսության և ամեն անգամ գնալուց ինձ տալիս էր այն մթերքներից, որը տալիս էին իրեն ուտելու՝ հաց, շաքար, անգամ պինդ տեսակի ճաշեր: Մի մասը ուտում էի, մի մասն էլ բերում էի տուն: Բացի ինձանից՝ ոչ ոք չէր կարող գնալ: Ամբողջ քաղաքը ասկյարներով լցված էր, և շատ վտանգավոր էր: Մեծերին կամ մանավանդ աղջիկներին տանում էին, իսկ տղամարդկանց ոչնչացնում էին: Ես տասներկու տարեկան էի, ինձ ոչինչ չէին ասում:

Մի երեկո տանը ջուր չլինելու պատճառով Արմենակ հորեղբայրս վերցրեց պարանը և դույլը, որպեսզի ջուր բերի: Դռան առաջ ջրհորն էր, ընդամենը 5 մետր հեռավորության վրա: Դուրս գալուն պես ասկյարները բռնեցին, տարան: Որոշ ժամանակ տանը սպասեցինք, ապա ինձ ուղարկեցին դուրս: Դուրս եկա, դեստոլեն եմ վագում և բղավում եմ.

–Հորեղբա՛յր:

Ոչ մի ձայն չկար: Մեր հարևանները ձայն լսեցին, ինձ կանչին ներս և հարցրին, թե ի՞նչ է պատահել: Ես պատմեցի, որից հետո ինձ ասացին, որ հորեղբորս հրելով, քաշքշելով տարան: Այդ ճանապարհով էլ գնաց 35 տարեկան հորեղբայրս, թողեց 4 երեխա և կինը, այլևս չվերադարձավ:

Մի անգամ էլ Մուշեղ հորեղբորս տարան Ջաջուռի թունելը, բայց բախտը բերեց, կաշառել էր հսկողներից մեկին և ողջ վերադարձել տուն: Ոսկիները տալով ասկյարին՝ փրկեց իր կյանքը: Մարդիկ սոված էին, պետք է դուրս գալին, որպեսզի երեխաների համար գոնե գարի ճարեին, ոսկով կամ թանկարժեք հագուստով գարու հետ փոխեին, իրենց գոյությունը պահեին: Մկան պես հենց տեղից դուրս

էին գալիս, անմիջապես կատվի պես չանչը խփում էին գլխին, այլևս փրկություն չկար: Ինչպես ուզում ես կյանքդ փրկի: Ջաջուռի թունելում տասնյակ հազարավոր մարդ կոտորվեց, որը սովից, որը ծեծից: Եթե մի հազար մարդ տանեին այդտեղ աշխատելու, հազարից հարյուրը վերադառնային, լավ էր:

Ամեն օր տանից դուրս էի գալիս: Գնում էինք մի քանի երեխաներով կայարանի կողմը, որպեսզի ցախ, տաշեղ, հացի փշրանք ձեռք բերենք: Գնացիք, մտանք մի դատարկ գորանոց, որպեսզի տաշեղ հավաքենք, մեկ էլ գլուխս բարձրացնեմ, տեսնեմ ոչ ոք չկա: Դու մի ասի այդ խումբը, բացի ինձանից, գնացել է, կայարանից փայտակոճ է գողացել, բերել հասցրել այդտեղ, որտեղ ես տաշեղ էի հավաքում: Փախել են, քանի որ ասկյար են նկատել: Ասկյարն ինձ բռնեց, հրացանի մեջ փամփուշտ դրեց և պահեց ինձ վրա: Ես ինձ կորցրի: Բղավում է ինձ վրա և հրացանը պահած հայիոյում է և հրամայում.

–Գյավու՛ր օղլի, գյավուր կաղր բունի գրթուր երիհա՛:

Կռանում եմ փայտակոճի վրա, ինձանից երեք անգամ ծանր է, ինքս էլ սոված, հազիվ ուտքերիս վրա եմ կանգնած: Ուզում եմ բարձրացնել, ընկնում եմ: Այսպես մի քանի անգամ, և վերջապես ասաց.

–Դե, փախի՛ր, քանի չեմ կրակել, հետ չնայես: Հենց նայեցիր, կրակելու եմ:

Փախա: Եկա տուն, պատմեցի այդ փորձանքը: Ասացին, թե բան չկա, քեզ ոչինչ չեն անի, գնա՛, մի՛ վախենա:

Մի օր էլ ասացին, թե ինչ-որ կայարանում, որտեղ որ նավթի, մեքենայուղի պահեստներն են, մեքենայուղ են տալիս, որը իբր թե գտում էին և ճաշ պատրաստում: Դրագի համար էլ պետքական էր: Յուրաքանչյուրս հարմար աման վերցրինք և գնացիք: Տեսանք, որ բավականին կանայք, փոքր, անչափահաս աղջիկներ, տղաներ և անգամ ծերեր են հավաքվել: Բավական հավաքվելուց հետո մի ասկյար հրացանը ձեռքին ասաց.

–Թող առաջին հերթին կանայք ստանան, հետո տղաները:

Ու ինչքան կին, փոքրահասակ աղջիկներ կային տարան բակը և դռները փակեցին, իսկ մեզ լարեցին երկաթգծից բավական հեռու: Լսում էինք մնացած կանանց լացուկոճը, բայց մեզ էլ այնքան հեռու լարեցին, որ այլևս ոչ մի բան ո՛չ տեսանք, ո՛չ էլ լսեցինք:

Մի օր էլ ինձ և Գևորգ հորեղբորս կնոջ քեռու տղային՝ 12-13-ամյա Հրայրին, հանդիպեց մի թուրք չաուշ և հարցրեց, թե ո՞ր ենք գնում: Ես պատասխանեցի, որ գնում ենք կայարան՝ հացի կտոր կամ փայտ ճարելու: Ասաց.

5 «Անհավա՛տ տղա, վերցրու՛ այս փայտակոճը և տա՛ր տեղը»:

–Շատ լավ, եկե՛ք ինձ հետ, ձեզ փայտ էլ կտամ, բայց մի փոքր գործ եք անելու: Պետք է ձիուս տակը մաքրեք:

Ուրախացանք և հետը ընկած ուրախ-ուրախ գնում ենք, քանի որ հացի անում ենք լսել:

Կայարան չհասած՝ մեզ տարավ գոմերի կողմը և մտցրեց գոմը, ցույց տվեց մեր մաքրելու տեղը, տվեց ցախավելը: Հրայրի հետ մաքրում են: Կատաղած ձիեր են, մի կերպ աշխատում ենք մաքրել: Այդ ժամանակ մեզ մոտ եկավ մի հասարակ ասկյար և հարցրեց, թե մեզ ով է բերել այստեղ: Ասկյարը, որը նկատել էր այդ շաուշին, որ թուրն է պատրաստում, որ գա գոմ, անմիջապես գլխի է ընկնում, որ նորից հայի երեխա է բերել մորթելու համար: Վազելով եկավ մեզ մոտ և ասաց, որ սա էլ քանի երեխա մեր հասակին բերում է այստեղ և թրով գլուխները թռցնում, մաս-մաս անում և թրիքի հետ դուրս գցում այն պատուհանից, որից թրիք են թափում: Սկսեցինք լաց լինել: Մեզ հանգստացրեց, ապա ինքը բարձրացավ մսուրի մեջ, կռացավ ու մեզ ասաց.

–Բարձրացե՛ք մեջքիս և այդ պատուհանից գցե՛ք ձեզ դուրս՝ թափած թրիքի վրա ու փախե՛ք, քանի կենդանի եք:

1919 թ. սեպտեմբերի վերջերից մինչև 1920 թ. մարտի սկզբները ասկյարները զինամթերք և այլ հարստություն էին տեղափոխում Ալեքսանդրապոլի պահեստներից դեպի Թուրքիա: Վերջում, երբ չկարողացան ամբողջը տեղափոխել, բարութի պահեստը վերջի օրերին պայթեցրին և դարձյալ բավականին վնաս հասցրին քաղաքին:

1919 թ. վերջերին մահացավ Արմենակ հորեղբորս փոքր աղջիկը, որը հագիվ մեկ տարեկան կլինեք: Ի՞նչ անել, ինչպե՞ս տանել, որ թուրքերի ճանկը չընկնենք: Մուշեղ հորեղբայրս ինձ վերցրեց, և մահացած փոքր երեխային տարանք գերեզմանատուն: Իրիկուն էր, նոր էր մթնում: Թաքուն ճանապարհներով մի կերպ հասցրինք գերեզմանները: Ո՛չ բահ կա, ո՛չ էլ բլուր: Մեկ էլ տեսանք նոր գերեզման, դեռ հողն էլ չէր սառել: Տարանք այդ գերեզմանի մոտ, ձեռքերով հողը վրայից մի քիչ հետ տվինք, հագիվ թե ծածկվեց, թաղեցինք և դարձյալ թաքուն ճանապարհներով վերադարձանք տուն:

Սառնամանիք, սով, ոչ մի տեսակ վառելիք չկա, իսկ ուտելիքի մասին ասել պետք չէ: Շատ դժվարությամբ մի քանի կիլոգրամ գարի էին ճարում մերոնք, որ օրական գոմն մեկ անգամ ամենքիս մեկ թեյի բաժակ բոված գարի տան: Կամ երկանքով աղում էին հում գարին և շատ քիչ քանակությամբ լցնում էին մոտ 5-6 լիտրանոց ամանի մեջ և առանց աղի մի փոքր եռացնում էին: Քանի որ փայտ էլ չկար, այդ պատճառով կիսաեփած լցնում էինք մեր անսնունդ ստամոքսը: Փորներս մի քիչ ուռչում էր, բայց ի՞նչ օգուտ: Այդ օրը, երբ այդպիսի բան էինք ուտում, դա մեր ամենալավ օրն էր, իսկ հացի երես

ամիսներով չէինք տեսնում:

1920 թ. փետրվարի վերջերին ես հիվանդացա: Քնելու տեղս սալքարերի վրա էր՝ գետնին: Տակս գցում էի մի չոր փալասի կտոր, գլխատակիս՝ վրայիս չուլ ու մուլը, իսկ վրաս՝ մի բամբակից բարակ ծածկոց: Այս բոլորին գումարած Գյումրիի ցուրտը, սովը: Իսկ ոջիլներին հաշիվ չկար: Երբ ճանկերով ծածկոցիս վրայով որոշ տարածություն քաշում էի, մի հարյուր հատ եղունգներիս տակը ճխվում էին: Բավական չէր սովը, մի կողմից էլ այդ անիրավ ոջիլն էր ուտում:

Օր օրի վրա ես վատացա և այլևս հույս չունեի առողջանալու: Այդ ծանր օրերին երագումս տեսա մի ծերունու, որն ինձ ասաց. «Հանի՛ր քո կեղտոտ շապիկը, որը միակն էր վրաս: Ես քեզ բոլորովին նոր հագուստ կտամ»: Այդ ծերունին ձեռքիցս բռնեց, տարավ, որպեսզի այդ նոր հագուստն ինձ հագցնի, որտեղ տարավ, ինձ չէր հարմարվում: Մի քանի տեղ տանելուց հետո ասաց, թե քեզ հարմար շոր ու ոտնաման չկա, զնա, ինչ ուզում ես արա:

Այս երագից հետո ես աչքերս բացի, տեսա, որ ամբողջապես տկլոր, այդ չլերի մեջ եմ պառկած, բայց կարծես թե ինձ մի քիչ լավ եմ զգում: Առողջացա:

Օրեցօր ես լավ էի զգում, բայց այս անգամ սովն ինձ վրա ազդում էր: Ստիպված եղա ուրիշ ելք փնտրել: Մեկ հատ ոսկի ձեռք բերեցի, որից ոչ մի գաղափար չունեի, թե ինչ արժի: Շուկայում ինձ հանդիպեց մի թուրք զինվոր, հարցրեց. «Ի՞նչ է»: Վախվեցիք բաց արի բռնու, անմիջապես վերցրեց և ինձ տվեց թղթադրամ՝ մեկ բանգրոտ, որը բավական ինձ օգնեց: Այդ բանգրոտով մոտ 20 օր օրական մեկ անգամ ճաշարանում մի փոքր սնվեցի: Ծննդոտ ճաշ և մի փոքր կտոր հաց էր օրվա կերածս: Հիվանդությունից նոր էի վեր կացել, և ութերս ինձ չէին ենթարկվում:

Չմռան վերջերն էր: Դռան մոտ՝ ջլերի մեջ դողալով պառկել էի, որ քնեմ, բայց ի՞նչ քուն: Մուշեղ հորեղբայրս էլ իր ընտանիքով (ինքը, կինը, աղջիկները՝ Մավլինազն ու Արփեհիկը, և տղան՝ Վարոսիկը) տան վերի անկյունումն էին տեղավորված: Մեկ էլ տեսնեմ, որ տեղաշորի մեջ նստեցին՝ մեկը մյուսին ձայն տալով: Պատից կախված կապույտ գույնի թեյնիկն իջեցրին և ամենքի համար մի փոքր կտոր հաց, եթե սուտը չլինի 50 գրամի չափ, այդ թեյնիկի միջից հանեցին, ինչ-որ ճարպեղեն քսեցին հացին ու կերան: Այդ ժամանակ Մուշեղն ասաց.

–Վարդանու՛շ, եթե ամեն օր այսքան ուտենք, պատկերացրու, որ կենդանի կմնանք:

Մի օր եկա կայարան, ինչ-որ գնացք եկավ Գյումրիի մարդաշատ կայարան, մի սպիտակ կապոց դռան մոտ դրած էր: Չեռքս գցի, վերցրի ու դուրս եկա կայարանից: Ո՛չ մի արգելք չպատահեց, կարծես թե դա իմ սեփականը լիներ: Կայարանից բավականին հեռացա, չէի էլ իմանում, թե մեջը ինչ

կար: Մտա մի խարաքի⁶ մեջ: Կապոցը բացի և տեսա մեկ հատ կանացի սև գույնի կիսաշրջագետս և տակը մոտ 4-5 կիլոգրամի հաց:

Ինձանից մեծ երկու տղա (տասնվեց-տասնյոթ տարեկան) եկան հետևիցս և ասացին:

—Բե՛ր միասին ուտենք, թե չէ ամբողջը ձեռքիցդ կառնենք:

Ես համաձայնեցի: Նստեցինք, երեքովս, որ ամիսներով հացի երես չէինք տեսիլ, կերանք, ո՛նց էինք ուտում:

Վերջապես կշտացանք, մնացածն էլ տղաներից մեկը, որն ավելի ուժեղ էր, վերցրեց, տարավ:

1920 թ. մարտ-ապրիլ ամիսն էր, երբ թուրքերը գնացին և մուսք գործեց խորհրդային իշխանությունը: Սկսեց քաղաքի ամբողջ խորը նկուղները դիակներից մաքրել: Ստիպում էին մաքրել բոլոր նկուղները և ջրհորները, որովհետև եղանակը տաքանում էր: Եթե ժամանակին չմաքրեին, շոգերը կընկնեին, և խուլերա կլինեին:

Ես էլ նայում էի այդ դիակներին, որպեսզի Արմենակ հորեղբորս դիակն էլ գտնեմ: Այն փոփ, որ թուրքերը զբաղեցրել էին և հաց էին պատրաստում իրենց գորքի համար, միայն դրա նկուղից հարյուրավոր դիակներ հանեցին: Որի վզին պարան կար, որի մարմնի վրա այրվածների և ամեն տեսակի չարչարանքների հետքեր: Հանում, դնում էին սայլերի վրա և տանում էին: Այդ ժամին ուժեղ անձրև թափվեց:

Քաղաքը գրեթե լրիվ մաքրվեց, բայց, միևնույն է, մարդիկ մահանում էին սովից: Դեռ խոտն էլ չէր կանաչել, որ խոտով սնվեին:

1920 թ. մարտի վերջերն էր: Արմենակ հորեղբորս կնոջ՝ Գյարանի մոտ մնացել էր երեք աղջիկ: Նրանք էլ այսօր թե վաղը սովից մահանալու էին: Մայրը ոչինչ անել չէր կարող: Հենց դուրս գար, այլևս տուն չէր գա, կընկներ ասկյարների ձեռքը: Այլևս փրկություն չկար: Մոված անգլուման⁷ մայրը լսել էր, որ մոտ օրերս ամերիկացիք Ալեքսանդրապոլից փոքր՝ չորս տարեկանից մինչև տասներկու տարեկան երեխաներին տանելու են Ամերիկա:

Այդ օրը գալուն պես հագցրեց եղած շորերից երկու աղջկան: Փոքրը՝ Վարսենիկը, կլինեի ոչ ավելի, քան չորս տարեկան, իսկ նրանից մեծը՝ Տիգրանուհին (Տիկուշ), վեց-յոթ տարեկան: Երկու քույրերին, ձեռք ձեռքի բռնած, խառնեցինք այդ որբերին, որոնց տանում էին Ամերիկա:

Նրանց ճանապարհ դրեցինք, իսկ մայրը, մոտ մեկ ժամ ուշքը գնացած, չէր կարողանում տեղից վեր կենար: Մինչ օրս էլ չիմացանք կենդանի՞ մնացին, թե՞ ոչ:

Ամենամեծ աղջկան՝ ութամյա Արմենուհուն, թողեց իր մոտ, իբր թե տարավ որբանոց: Մի երկու ան-

գամ եկավ տուն և այլևս չերևաց: Նա էլ այնտեղ սովամահ եղավ:

1920 թ. Գևորգ հորեղբորս ընտանիքը նորից գնաց Ռուսաստան:

Ինձ էլ առաջարկեց իրեն հետ գնալ, բայց Մուշեղ հորեղբայրս թույլ չտվեց: Ես մնացի, սպասում էի, որ Մուշեղ հորեղբորս ընտանիքի հետ գնամ, քանի որ մանկուց այս ընտանիքի հետ էի ապրել և սովորել էի: Տեսնում եմ, որ Մուշեղ հորեղբայրը բուլբուլի մտադիր չի տեղից շարժվելու, իսկ ինձ սովը նեղում է: Բացի այդ էլ՝ միտս է ընկել Կուրբանի հացը և տարբեր տեսակի խմորեղենը: Մտածեցի, որ պետք է գնամ: Ինչ լինում է թող լինի, միևնույն է, այստեղ էլ մնամ, հույս չունեմ կենդանի մնալու, քանի որ օր օրի վատանում եմ. մարմինս ուռչում է, ոտքերիս վրա չեմ կարողանում երկար կանգնել, ուժասպառ եմ լինում: Որոշեցի վերջնականապես գնալ: Կա՛մ ճանապարհին կմահանամ, կա՛մ էլ կյանքս կփրկեմ: Այդ մտքերի մեջ՝ գալիս եմ տուն, ճանապարհին մի գույգ դիֆֆիկից⁸ տնական, լավ թելից գործած գուլպա գտա: Հիմա մնաց մի գույգ էլ գոնե կիսամաշ տրեխ ունենալ: Վարդանուշը շատ խնդրեց ամուսնուն, որ ինձ համար տրեխ գնի: Հաջորդ օրը գնացի Յոթվերքի եկեղեցին և աղոթք արեցի:

Եկա տուն, տեսնեմ Ադուշը (այդպես էի անվանում հորեղբորս կնոջը, որի անունը Վարդանուշ էր), աղանձ է անում, որ ճաշի ժամանակ յուրաքանչյուրիս մի գինու բաժակով գարի տա: Լավ գիտեի, որ հորեղբայրս տանը չէր, դրա համար էլ որոշեցի, որ պետք է անպատճառ գնալ: Մոտեցա Ադուշին և խնդրեցի ինձ հասանելիք բոված գարուց կրկնակի չափով տա:

Ասաց.

—Ո՞նց տամ, Վաղո՛ ջան: Պետք է բոլորին հասնի, թե ոչ:

Իմ ուզածը մի թեյի բաժակ էր, որ գինու բաժակի կրկնակին էր:

—Ինչո՞ւ համար ես ուզում կրկնակի,— հարցրեց Ադուշը:

Ասացի, որ գնալու եմ Ռուսաստան:

—Հորեղբայրդ կնեղանա, մի՛ գնա:

—Ինչո՞ւ է նեղանալու: Ամեն օր ինձ ստիպում էր, որ գնամ որբանոց, այնտեղ էլ սովից մահանում եմ: Ո՞ր գնալի: Հիմա որոշել եմ անպայման գնալ Ռուսաստան՝ Կուրբան, որտեղ երեք տարի ապրեցինք:

—Ախր Վաղո՛ ջան, վրադ շոր չկա, մոտոդ փող չկա, տկլոր, բոքիկ, սոված գնաս, ճամփեքին կմնաս:

—Ոչինչ, ինչ լինելու է, թող լինի: Թեկուզ այդ բոված գարուց էլ չտաս, դարձյալ գնալու եմ:

Տեսավ, որ չեմ համոզվում, ստիպված ինձ մեկ թեյի բաժակով բոված գարի տվեց: Լցրեցի այն

6 Քանդված տուն:

7 Անհույս:

8 Դիվիկը կամ դիֆիկն այժմ մագի սակ գտնվող արվանդան է:

տուայրակիս մեջ, որը վաղորոք կարել էի ճիշտ այն ձևով, որի մեջ Կաղզվանում դպրոց գնալիս գրքեր էի տեղավորում:

Շատ շնորհակալ եղա, մնաս բարով արեցի ու գալիս եմ դեպի կայարան: Մինչ կայարան հասնելս ճանապարհին իմ բաժին բոված գարին կերա, վերջացրի: Հասա կայարան, մի կերպ բարձրացա բեռնատար գնացքը և վագոնի մի անկյունում նստեցի:

Կրկին դեպի Ռասշտոկա

Գնում եմք Ղարաքիլիսա: Դեռ Ղարաքիլիսա չհասած՝ վագոնում նստած գյուղացիները հանեցին խորջինից հաց ու պանիր, ձու, ուտում են: Կամաց հանեցի այն լավ տեսակի գուլպաներս, որոնք ընդամենը մեկ օր էին հագիս, և տրեխները, մոտեցա հաց ուտողներին: Նրանց ցույց տվեցի բոլորովին նոր գուլպաներն ու տրեխները: Իսկույն ձեռքիցս վերցրին և ինձ տվեցին մի կլոր հաց ու մի քիչ պանիր: Կերա: Դա ինձ բավական օգնեց, չնայած դարձյալ ոտաբորիկ մնացի:

Հասա Ղարաքիլիսա քաղաք, իջա գնացքից: Տեսա մի ամբողջ գնացք, որոնց մեջ կարմիր բանակն էր:

Գնացքի մի ծայրից մյուս ծայրն էին գնում ոտաբորիկ, ինձանից բան էին հարցնում, ես մի կերպ պատասխանում էի: Հացի կտորներ տվեցին և մի հատ էլ զինվորական կիսամաշ գլխարկ: Չյուն էր: Իրիկուն էլ, այնպես ցուրտ արեց, որ ոտքերս սառեցին, ինքս էլ մրսեցի, եկա կայարանի մեջը, որտեղ մարդիկ խիտ նստած էին, մտա արանքները և նստեցի ոտքերիս վրա, որպեսզի տաքանամ: Սպասում էինք գնացքի, որ գնանք Թիֆլիս: Մին էլ տեսնեմ մեկն ինձ է կանչում: Մեր բարեկամներից մեկն էր: Հորս մորաքրոջ տղան էր՝ անունը՝ Փուզո: Մոտեցա: Պատմեցի, որ ցանկանում եմ գնալ Ռուսաստան՝ Գեորգ հորեղբորս մոտ: Փուզոն ասաց.

–Այ օղու, նրանք երկու շաբաթ առաջ գնացին: Ինչպե՞ս ես նրանց գտնելու:

Ես ասացի.

–Գնալու եմ, գտա՝ գտա, որ չգտա, գնալու եմ Ռասշտոկա:

–Դե, ինչ արած, գնացք չկա: Վաղը ժամը 12-ին է լինելու: Այստեղ մրսելու ես, գնա՛ մեր տուն, այնտեղ կքնես: Վաղը նոր կգաս և կգնաս: Գնա՛, Տուրոն տունն է:

–Ախր ես չգիտեմ ձեր տան տեղը:

Ինձ բացատրեց, և ես գնացի: Կարծես թե մի անձնավորություն ձեռս բռնեց, և առանց դժվարության ուղիղ դռան առաջ կանգնեցի: Դուռը բակեցի, Տուրոն մորքուրբ բացեց և ինձ տեսնելուն պես ասաց.

–Վա՛յ, բռանամ, Վաղո՛ ջան, այս ի՞նչ օրի ես:

Իսկույն տուն մտանք, վառարանը վառեց, վրան էլ կորկոտից խաշիլ կար, տաքացրեց, հաց չկար: Խաշիլի վրա յոտի փոխարեն մի քիչ կաթ լցրեց և տվեց ինձ.

–Կե՛ր, Վաղո՛ ջան:

Այս սկսեց մանրամասն հարցուփորձ անել, ամեն ինչ պատմեցի: Առավոտյան Տուրո մորքուրբ իր ամուսնուն խնդրում էր.

–Փուզո՛ ջան, այս տղան մեղք է, ոտերը բորիկ են, քո բրդյա գուլպաներից մի գույզը վերանորոգել եմ գիշերը, գնա՛, մի գույզ տրեխ բեր, թող հագնի, որ ոտքերը չմրսեն:

–Շատ լավ, Տուրո՛ ջան, հիմա կբերեմ:

Չանցած մի ժամ՝ ամեն ինչ պատրաստ էր: Հագնվեցի և ուզում էի տանից դուրս գալ և գնալ կայարան: Մինչև դուրս գալս Փուզո քեռիս ասաց.

–Վաղո՛ ջան, ո՛չ հաց ունենք, ո՛չ էլ ուրիշ ուտելիք, ի՞նչ անեմ, ինչո՞վ օգնեմ քեզ:

Գրպանից հանեց 1000 ռուբլի Հայաստանի փող, որով կարելի էր առնել 1,5 կիլոգրամ սև հաց: Շատ շնորհակալ եղա դրա համար:

Գնում եմ կայարան: Ճանապարհին թեյարանի մոտով անցնելիս ախորժակս քաշեց տաք թեյ խմելու: Մտա թեյարան, խնդրեցի մեկ բաժակ քաղցր թեյ, քաղցր ասելով՝ շաքար չկար, այլ սախարին և մի փոքր կտոր սև հաց: Խմեցի, կերա, այդ բոլորի համար վճարեցի 300 ռուբլի, մնաց մոտս 700 ռուբլի: Ի՞նչ անեմ, եթե տամ մեկ կիլոգրամ հաց առնեմ, դա ինձ մինչ իրիկուն հազիվ բավականացնի: Շատ մտածելուց հետո հասա կայարան: Գնացքը դեռ կանգնած էր: Գնացի վերջի վագոնի մոտ, որի մեջ ձիեր կային: Ենթադրեցի, որ այստեղ գարի կլինի: Մի ժուս եկավ դռան մոտ: Վերցրեց փողը, տուրակս գրեթե լիքը գարի լցրեց: Ինչքան էի ուրախացել, որ այդքան գարի ունեցա: Այլևս սոված չէի մնա: Իսկույն մի թիթեղ ճարեցի, կրակ արեցի, սկսեցի գարին բովել: Բովելու եմ և բովածը լցնում գրպանս: Բովելու ժամանակ մոտենում է մի պառավ կին և ինձանից խնդրում է մի քիչ գարի, ասելով՝ մի երեխա կա, սովամահ է: Տալիս է ինձ աղբրեջանական փող, որ Հայաստանում չի անցնում: Դե ես էլ գնում եմ դեպի Աղբրեջանի կողմը, ինձ պետք կգա և ոչինչ չեմ հասկանում դրա արժեքից: Տվեցի պառավին մի քիչ գարի և այդ փողը վերցրի: Արդեն գործս վերջացնելու վրա էի, երբ գնացքը եկավ: Գնում եմք դեպի Թիֆլիս: Ամեն կանգառին ամեն կերպ աշխատում եմ ինձ իջեցնեն, բայց լացով, կոծով գործս առաջ էի տանում: Փոքր կայարան էր, եթե իջնեի, ապա ցրտից, սովից ի՞նչ պիտի անեի, ինձ մի փորձանք կգար: Այդ իսկ պատճառով ամեն կերպ աշխատեցի մնալ գնացքի մեջ: Մարդատար գնացքների ուղեկցողները տեսան, որ չեմ իջնում, խղճացին և ասացին.

–Գիշերը այստեղ մտի՛ր, քնի՛ր, իսկ ցերեկը բարձրացի՛ր տանիքը, արև է, տաք է, պառկի՛ր այնտեղ:

Այդպես էլ հաշտվեցինք: Այդ առաջին գիշերը տեղավորվել էինք երկու վագոնի միացման տեղում: Այնքան մարդիկ կային գնացող, որտեղ ասես, որ

չէին նստած: Մեկ էլ մի մարդ կողքս բռնում է և ականջիս ասում է.

—Հաց կուտե՞ս...:

—Ինչո՞ւ չէ: Շնորհակալ կլինեմ:

Եվ տվեց մի կլոր հաց՝ բռնոն: Ես կերա, տեսնեմ նորից է ինձ բռնում.

—Տեղ ունե՞ս պահելու, տամ քեզ, պահիր:

Տվեց երկու կլոր բռնոն՝ յուրաքանչյուրը հազիվ լինե՞ր 300-400 գրամ: Երկու հաց տալուց հետո տվեց հինգ հատ հում ձու և մի փոքր կտոր պանիր: Դրեցի գարու մեջ: Դանթելով գնում ենք:

Այդ մարդը, որ մոտ 35-40 տարեկան կլինե՞ր, մթության մեջ շոշափելով Քոլագիրանից նստած ուղևորների խումբիները, հաց էր գտնում:

Արևը նոր էր դուրս գալիս, Թիֆլիս չհասած՝ բոլոր ուղևորները իջան, քանի որ գնացքը քաղաք չէր հասնում, ինչ որ կամուրջ էր քանդված: Այդ իսկ պատճառով բոլորս այդտեղ իջանք: Մենք էլ իջանք: Այդ մարդն ինձ ասաց.

—Որդի՛ ջան, արի մեր ունեցվածքն էլ կխենք:

Քաշվեցինք ճանապարհից մի կողմ: Հանեց տոպրակից 2 հաց, 5 ձու և մի փոքր կտոր պանիր: Մեկ հացն ինձ, մեկն իրեն, 5 ձվից 3-ը ինձ, 2-ը իրեն, պանիրը ուղիղ մեջտեղից կիսեց: Հաց ու պանիրն անմիջապես կերանք:

Ես եկա քաղաք, ման եմ գալիս խանութների մոտով: Մեկ էլ աչքս առավ ճատի հացին: Հանեցի 3 ձուն և տալիս եմ այդ ճատի տիրոջը՝ խնդրելով փոխարենն ինձ ճատի տա: Մարդը բավականին մեծ կտոր կտրեց և տվեց ինձ: Համարյա թե կեսը կերա ախորժակով, մնացածը դարձյալ դրեցի գարու մեջ:

Թիֆլիսի կայարանում մեկ օր մնացի: Հարցրի, թե ո՞ր գնացքն է Բաքվի կողմը գնում: Ինձ ցույց տվեցին: Գնացի այդ գնացքի մոտ:

Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար Ռուսաստան գնալու: Միակ ճանապարհն էր, Մախաչկալայով էինք գնում:

Վերջապես հասա Բալաջար, որն արդեն վերջին կայարանն էր, որից հետո հասնում ենք Բաքու:

Արդեն պատրաստվում էի իջնելու, տեսնեմ մի ռուս կին ինձ հարցնում է, թե կարող ես օգնել: Չեռքում 2 հատ մեծ ձուկ կար: Մեկն ինձ տվեց, իսկ մյուսն ինքը վերցրեց: Տարանք շուկա, որի համար ինձ վարձատրեց: Այդ փողով իսկույն հաց առա և կերա:

Հենց Վրաստանի սահմանից անցա, իսկույն գործի դրի այն աղբբեջանական փողը, որը Ղարաքիլիսայում 2-3 գարու համար ինձ տվեց հասակավոր կինը:

Շուկայից հասա կայարան: Երկաթգծի աշխատողներին հարցնում եմ, թե ո՞ր գնացքով կարող եմ գնալ Կովկաս: Ինձ ասացին, այդ գնացքը մի ժամից հետո է գնալու: Մեկ էլ լսեցի Գևորգ հորեղբորս տղայի ձայնը, որ կայարանում հատով հաց էր

վաճառում: Գոռացի՛ Սահա՛կ: Նա էլ տեսնելուն պես վազեց, որ հորն ասի, թե Վաղոն եկել է: Տեսա, որ հորեղբայրս Սահակի հետ գալիս է ինձ մոտ: Ինձ համբուրեց և ուրախ-ուրախ տարավ այնտեղ, որտեղ իր կինն իրերի մոտն էր: Անմիջապես հաց և ձուկ տվեցին: Բայց ես հրաժարվեցի, քանի որ կուշտ էի: Անգամ զարմացավ, որ ես կուշտ եմ, և հանկարծ նկատեց իմ կողքից կախված գարիով տոպրակը և հարցրեց, թե դա ի՞նչ է: Ասացի, որ գարի է, և ինչպես եմ ձեռք բերել այդ գարին: Ծիծաղելով ասաց.

—Թափիր, Վաղո՛ ջան, այլևս պետք չէ: Փառք Աստծո, արդեն հաց կա, սոված չենք մնա:

Կայարանի հենց զանգի տակ, որտեղ մենք, տան իրերը դրած, սպասում էինք գնացքին, թափեցի գարին: Նստեցինք գնացքը և գնում ենք Կովկաս:

Հասանք Կավկասյի: Այդտեղ, ինչպես երևում է, ինձ ճանաչող է եղել՝ Ռասշևտկայի բնակիչներից: Լուրը հասել էր, և մեր տանտերն անմիջապես եկավ մեզ դիմավորելու: Նստեցրեց ձիասայլը և մեզ բերեց ուղիղ իրենց բակը: Յախանոցում ժամանակավոր տեղավորվեցինք: Ռասշևտկայում մոտ երկու շաբաթ մնացինք:

Երկու շաբաթ հետո կաղզվանցի կոշկակար Թարջիմանենց Եղիշի եղբայրները, որոնք առաջին գաղթից մնացել էին Ռուստաբում և արհեստավոր էին, փող են հավաքում, և գալիս են Գևորգ հորեղբորս ու իր աներոջը՝ Շախպորանց Մկրտիչի ընտանիքին տանում Ռուստաբ:

Մի մեծ դատարկ խանութում տեղավորվեցին Գևորգ հորեղբայրս, իր աներոջ՝ Շախպորանց Մկրտիչի և Պուպուենց Գալոյի ընտանիքները:

Այդ խանութն էլ հենց փողոցի վրա էր, գնացող եկողը տեսնում էր այդտեղի ասպրողներին: Մի օր նստած եմ այդ ճանապարհի վրա: Մի աղբբեջան մոտեցավ ինձ և սկսեց հարցուփորձ անել: Ես բացատրեցի, որ մանուկ հասակից գուրկ եմ ծնողներից: Կարծես թե ավելի ուրախացավ: Կանչեցի Գևորգ հորեղբորս, և սկսեցին իրար հետ խոսել: Ես հասկացա, որ ինձ ուզում է տանել իր մոտ պահել, միևնույն ժամանակ իրեն օգնեմ ուժիս համապատասխան աշխատանքով: Անգամ խոստացավ տարեկան երեք փութ եգիպտացորեն և երեք փութ ցորեն տալ: Համաձայնվեցինք: Եկանք նրա տուն՝ Խատուկա անունով: Ուներ 5-6 տարեկան մի տղա՝ Կադիր անունով: Այդտեղ աշխատեցի մոտ երկու տարի: Իմ գործն էր վառարանի համար փայտ պատրաստել, անասուններին կերակրելիս օգնել տիրոջը և այլն: Այնպիսի գործ էր, որ բոլորովին դժվար չէր ինձ համար: Գնում էի անտառ՝ սայլով փայտ բերելու: Եվ ամենակարևորն այն էր՝ աշնանը և վարուցանքի, հունձի ժամանակ երկուսով էինք:

Այդ թվերին ուտելիք չկար: Ման էին գալիս հարուստների տները, ում հացը, այլուրը, ցորենը ավել

էր լինում, տանում էին: Այդ իսկ պատճառով տերս հաշվեց, որ այլուր շատ ունի և ինձ հետ պահեց այնպիսի տեղ, որ կինն էլ չէր իմանում:

1921 թ. բոստանների ժամանակ, երբ արդեն մի քիչ մեծացան ձմերուկը և սեխը, տերս ինձ տարավ այդ բոստանը պահելու, որն այնքան էլ հեռու չէր տանից՝ մոտ 700-800 մետր: Շատ հաճույքով խնամում էի և անասուններից պահում, որ չուտեն: Ինչ որ հասունանում էր, արգելք չկար, կտրում, ուտում էի: Մնացել էր մի երկու օր, որ բոստանը քաղենք: Իրիկունը հարևան բոստանը պահող երեխեքից երկու-երեք հոգի հավաքվեցին՝ թուրթ և պահմտոցի խաղալու: Ուշ ցրվեցին: Ես երևի շատ վազվզելուց հոգնած եմ եղել, քնեցի մինչ առավոտ: Առավոտ տերս եկավ, ուտելիքը տվեց ինձ և բոստանի մեջը ման է գալիս: Հաց էի ուտում, մեկ էլ ինձ կանչեց: Գնացի մտքը, ի՛նչ տեսնեմ. այդ անտեր գոմեշները գիշերը մտել են բոստանը, որտեղ մեծ, լավ ձմերուկ, սեխ կա, դնչները կոխել են մեջը և ամբողջը կերել են, կճեպն են թողել: Անգամ իմ աչքերս կրակին տվեցին: Այսքան պահելուց հետո եկավ վերջին օրերը, որ պետք է հավաքենք, ամբողջ բոստանը փչացրել էին: Քաշեց մտրակը՝ տուր որ կտաս: Գոռում եմ, բղավում, լաց եմ լինում: Փախա դեպի լաստանավը, որ անցնեմ, գնամ Ուստլաբա՝ հորեղբորս տուն:

Մեկ էլ տեսա, որ տերս գալիս է դեպի իմ կողմը: Ինձ կանգնեցրեց, ձիուց իջավ, չոքեց ոտքերիս մոտ և աղաչում է.

–Մի՛ գնա, ա՛ն, ձիւն նստի՛ր, գնա՛ բոստանը, մնացածն էլ քեզ լինի, միայն ոչ մի տեղ մի գնա և ոչ ոքի չասես, որ քեզ ծեծել են:

Ուղղակի լաց էր լինում: Դա խորհրդային իշխանության դրվածքն էր: Ծեծի համար շատ խիստ էր, եթե կառավարությունն իմանար, փրկություն չկար տիրոջս:

1922 թվականի ապրիլին դուրս եկա բատրակությունից: Ազատվելուց ինձ տվեց փոքր գումար:

Եկա Գևորգ հորեղբորս տունը, որտեղ ապրեցի մի քանի շաբաթ: Գործս ավելի դժվար էր, քան աղը-դեյցու մոտ: Ամեն օր Կուբանից դանթարով ջուր էի բերում, վերցնում էի պարանը և գնում Կուբանի այն կողմը՝ անտառից չոր փայտ բերելու:

Քանի որ ամեն օր լաստանավով անցնում էի այն կողմը, մի օր լաստանավի տերն ինձ առաջարկեց իր մոտ աշխատել: Հացը, հագնվելը, քնելը՝ ամբողջը իր վրա էր, և ամիսն էլ 10 ռուբլի փող էր տալու:

Երկու շաբաթ հորեղբորս տանն ապրելուց հետո անցա այդ լաստանավի վրա աշխատելու: Իմ գործը նավակներից ջուր թափելն էր և նավամատույցից անջատելիս ու կապելիս իրեն օգնելը: Աշխատում էինք առավոտ լույսը չբացված մինչև գիշերվա 11-12-ը: Իմ հանգիստը գիշերվա հինգ ժամն էր, մնացած ժամերը ոտքի վրա էի՝ 18-19 ժամ: Աշխա-

տեցի մոտ մեկ տարի, իսկ աշխատավարձս քիչ-քիչ տալիս էր Գևորգ հորեղբորս: Վերջին ամիսներին մոտ վեց ամսվա փող հավաքեց: Երբ գնացի, ինձ տվեց 60 ռուբլի:

1924 թվականի գարնանն էր: Հորեղբայրս վերցրեց այդ գումարը, ապրանք և մանր-մունր բաներ գնեց, և երկուսով գնացինք Կուբանի մյուս կողմը՝ Պրաբրաժինկա, Մելնիկով, Մարուխին և Բելայա Մելո: Մի քանի անգամ միասին գնացինք, որից հետո սկսեց իր աներձագի՝ Մեղրակի հետ գնալ առևտուր անելու:

Մի քանի օր փողոցներում ման եկա, տեսա, որ Կարմիր հրապարակում, որտեղ մարդաշատ վայր էր, երեք տղաներ, արկղները դրած, կատակ անելով, կոշիկ են մաքրում:

Եկա տուն, հորեղբորիցս որոշ գումար խնդրեցի, գնեցի տարբեր գույների քսուք և արկղ՝ իր բոլոր հարմարանքներով: Մի հոգի էլ ավելացավ Ուստլաբայի Կարմիր հրապարակում կոշիկ մաքրողների թվին: Առաջինը Սամսոն Խարեցին էր, երկրորդը՝ Արամ Մշեցին, երրորդը՝ Մրապիոնը Կաղվականից, չորրորդը՝ ես:

1925 թ. սկզբին մոտեցա Մրապիոնին և առաջարկեցի միասին գումար դնել և առևտրով զբաղվել: Շատ հավանեց իմ առաջարկը: Ես եկա տուն, սկսեցի փող պահանջել՝ այն վերջին տված 60 ռուբլին: Հորեղբայրս հանեց 40 ռուբլի և ասաց, որ այսքանն է, էլ չունի:

Վերցրի այդ գումարը, եկա Մրապենց տուն:

–Նու՛ն մորքուր,– Մրապիոնի մոր անունն է,– ես 40 ռուբլի ունեմ, այսքան էլ դուք դրեք, սկսենք մեր նոր բռնած գործը:

Նու՛ն մորքուրն ասաց.

–Մենք փող չունենք, մեր ունեցածը 40 փուք սպիտակ այլուրն է, տարե՛ք, փուռը վաճառե՛ք և գնացե՛ք ձեր գործին:

Լաստանավ վարձեցինք, դրեցինք այդ այլուրները, տարանք փուռ, որտեղ դարձյալ խարեցիներն էին աշխատում: Մեզ տվեցին 38 ռուբլի փող: 38 ռուբլի Մրապիոնն էր, 40 ռուբլին՝ իմն:

Վերցրինք, միասին գնացինք Կրասնոդար: Այդ 78 ռուբլուց 10 ռուբլին ծախսեցինք երրորդ կարգի արտոնագրի, մի հատ մեծ զամբյուղի, ճանապարհաձախսի համար: 68 ռուբլու ապրանք գնեցինք և եկանք Բելայա Մելո, որի ճանապարհները ես լավ գիտեի, որովհետև մի քանի անգամ հորեղբորս հետ եկել էի: Մեր գործերը լավ էին:

Օրերից մի օր՝ աշնանը՝ Կրասնոդարում ինձ հանդիպեց մեր երկրացի մի հասակավոր կին, հարցրեց ում տղան եմ: Ինձ ճանաչեց և մորս էլ լավ գիտեր, ասաց.

–Տղա՛ ջան, գիտե՞ս, որ մայրդ Երևանում է:

Իսկ ես մորիցս արդեն վեց-յոթ տարի է, ինչ տեղեկություն չունեի: Անգամ մտքովս չէր անցնում, որ կենդանի է:

Այս լուրը լսելուն պես որոշեցի գնալ Երևան և մորս բերել Ռուսաստան:


1925 թվականի հոկտեմբեր ամիսն էր, եկա Երևան: Ճանապարհը տևում էր հինգ-վեց օր: Ես Երևանում չէի եղել, առաջին անգամ էր: Հասնելուն պես նստեցի մասնավոր ավտո, որի վարորդը 50 կուպեկ փոխադրավարձ առավ ինձանից և բերեց Ղանթարի տակ իջացրեց: Առաջինը ես եկա Մուշեղ հորեղբորս տուն: Հետո լուրը հասցրին մորս: Երեկոյան ամուսնու հետ եկավ ինձ տեսության, ի՞նչ ուրախություն, ի՞նչ ուրախության արցունքներ...

Բավական նստեցին, հարցուփորձ: Որոշ ժամանակ մնացի թե՛ մորս և թե՛ հորեղբորս տանը: Մի օր էլ մորս պատմեցի իմ գալու նպատակը, բայց մայրս հրաժարվեց:

1925 թվականի նոյեմբերից մինչև 1926 թ. մարտ ամիսն ապրեցի Երևանում: Նորից գնացի Բելալա Սելո և ընկերոջս՝ Սրապիոնի հետ շարունակեցինք առևտրով զբաղվել:

1927 թ. սկզբին եկա այն համոզման, որ պետք է վերջացնել ու գնալ Երևան, որտեղ մայրս է, Մուշեղ հորեղբայրս. չէ՞ որ մինչ գաղթվելը պահել է փոքր ժամանակից, կինը՝ Վարդանուշը, ինձ մորից շատ խնամք է տարել, վերջապես քեռի, մորաքույր և ուրիշ շատ բարեկամներ, որոնք բոլորը Երևանում են:

1927 թվականի մարտին թողեցի Բելալա Սելո գյուղը, ծանոթներինս, ընկերներինս: Եկա Երևան՝ հարազատներինս մոտ: Սկզբից ինձ վատ էի զգում, ինչ-որ բան ձգում էր դեպի այն կողմ, բայց միառժամանակ մնալուց հետո հասկացա, որ այլևս ոչ մի ուրիշ տեղ չեմ ցանկանում գնալ:



ԱՐՄԵՆԱԿ ՍԱՆՈՒԿԻ ԱՍՐԻԿՅԱՆ
(1887 -1975)

Համառոտ կենսագրություն

Արմենակ Մանուկի Ասրիկյանը ծնվել է 1887 թ. Վանի նահանգի Մոկս գավառի Ոզմ գյուղում (միառժամանակ մտել է հարևան Բարվար գավառի մեջ):

Ունեցել է երեք քույր և երկու եղբայր (Պետրոս և Սարգիս):

Մասնակցել է բազմաթիվ մարտերի և Փեսանդաշտի ինքնապաշտպանությանը:

Բնակություն է հաստատել Երևանում և աշխատել է որպես քարհատ: Ուներ 1 որդի¹ և 2 դուստր:

Հուշագրությունը գրի է առել 1962 թ. 75 տարեկանում:

Վախճանվել է 1975 թ. Երևանում և ամփոփվել Թոխմախի գերեզմանոցում:

¹ Որդին է բանասիրական գիտությունների դոկտոր, պետական մրցանակի դափնեկիր Սարիրեկ Մանուկյանը:

ԱՐԴՅՈՔ ԿՏԵՄԵՐՆ ԼՈՒՅՍ ԱԶՔՈՎ ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

քող հիշեն մեր Ոգմա նոր երիտասարդներ և սերունդներ

Բարվար գավառ

Բարվար կոչված գավառի մեջ է մտնում մեր Ոգմ¹ գյուղ: Այդ գավառ եղել է նախկին Ադճնեաց գավառ, որ սահմանակից է Մոկաց գավառին: Մոկաց և Ադճնեաց սահման եղել է Խնուկի² կամուրջ, որտեղ միանում են Մոկաց և Շատախի գետեր: Նրանից ներքև գետերը դառնում են Տիգրիսի արևելյան ճյուղը, մինչև հասնում է Բաթման գետին, որ գալիս է Վարզին քաղաքի մոտերից: Երկու մեծ գետերը միանում են իրարու Թլանավառու ասորի գյուղի երկու կողմից, խառնվում են իրարու և կոչվում են Բոտանասու՝ բուն Տիգրիս: Ասորի Թիլ գյուղից ներքև երթևեկություն սկսում էր նավերով կամ քելակով³, որի տակեր արջառի կամ երինջի տիկ են կապում գերանից, տախտակով մխում են ու սկսում են ապրանք բարձել: Քելակ տանում էր մինչև Ջեզիր, մինչև Մոսուլ⁴: Այդ երկրի առևտուր նրանով էր կապվում դեպի Արաքստան, Ջեզիր, Բոտան դուր, մինչև Շանգառի սարեր: Շատ ժամանակ թուրք պաշտոնյաներ կամ զորք մթերք այդ լաստերով ին տեղավոխում դեպի Բաղդադի կողմեր:

Մեր կենտրոն Խասիսեր⁵ ավան է, որտեղ նստում էր գայմագամ գավառապետ: Խասիսեր ուներ մոտ 300 տուն բնակիչ, շատ մաս քուրդ ին, իսկ հայեր քիչ ին: Բայց բոլոր հայեր արհեստավոր ին: Նրանք քրդերից շատ հարուստ ին, բայց շատեր խոսում ին քրդերեն լեզվով, գրագիտություն չկար ո՛չ հայերի և ո՛չ քրդերի մեջ: Դպրոց չկար, ոչ մի կուլտուրա չկար: Հայերի մեծամասնություն սուկար⁶ կամ կտավ, շալ գործող էր:

Խասիսերից դեպի հարավ-արևմուտք գտնվում էր Դեհ⁷ հայաբնակ գյուղ, մոտ 157 տուն քրիստոն-

յա հայեր: Խոսում ին քրդերեն լեզվով: Դեհեցիք բոլոր արհեստավոր ին: Նրանց շատ մաս ցրված էր գանագան տեղեր՝ դեպի Ջզեր Բոտանա կողմեր կամ Վան քաղաք:

Բարվարի գավառ 75 տոկոս քուրդ ին, մնացած՝ հայ և ասորի: Գավառի մեջ կար 17 հայաբնակ գյուղ, որից ինը գյուղ ասորի էր, մնացած՝ հայեր: Մնակ մեր Ոգմն էր մոտ 150 տուն մաքուր հայ:

Չորս գյուղ մաքուր ասորի ին, իսկ մնացած քիչ ին: Մեր գյուղին մոտիկ ասորի չորս գյուղերի և մեր արանք մի գետ էր բաժանում՝ Շատախի գետը: Մեր գյուղը գետի ձախ կողմն էր, նրանցը՝ աջ, բայց գետը շատ խոր ձորի միջից էր անցնում: Նրա համար հնար չկար անցնելու ասորի գյուղեր, որ կոչվում ին Բորմ, նրանց չորս գյուղ համարյա թե կպած ին իրարու: Բաղ չկար, բայց հացի կողմից շրջանի մեջ առաջին տեղն էր պնդում: Մեր գյուղին հաց նրանք ին տալում, շատ մաս, քանի որ մեր գյուղին տարին չէր անցնի, որ մի դժբախտություն չպատահեր:

Բորմա գյուղեր շատ հեռու չէին մեր գյուղից: Մեր սարի մեջի Սմբիտա բերդի գլխից որ կանչիր, նրանք շատ հանգիստ լսում ին, բայց այնտեղից մարդ չէր կարող անցնել նրանց մոտ, որովհետև մեր և նրանց գյուղերի մեջից անցնում էր աղմկահոս գետ: Թե՛ ջուրը շատ էր, և թե՛ ժայռոտ ավերից իջնել չէր լինում, որ մարդ կարողանար մոտենալ գետին: Մնակ ճանապարհի դեպի Բորմ Դաշտուկի⁸ կամուրջն էր, կանցնինք և կթեքվինք դեպի ձախ, նոր կանցնինք Բորմի Հարաթ⁹ գյուղ:

Մեր և Բարվարի հարավի կողմում կար մի դաշտավայր, որ ասում ին Կարաճամեր: Այդ Կարաճամերի դաշտի մեջ մի հին ավերակ բերդ կար, որ քրդեր ասում ին Գալիա Իսակ, այսինքն՝ Իսակի բերդ: Բայց թե ի՞նչ ժամանակ է եղել այդ բերդ, հայտնի չէր: Պատեր կային, բայց գրություն կամ ուրիշ նշանաբան չկար: Բերդի չորս կողմ մեծ տարածություն պնդում էր Կարաճամեր: Դարեր առաջ այդ դաշտում եղել են հայոց մեծաթիվ գյուղեր, բայց վերջերս ավերակ էին. մի քանի տուն հայ

1 Մինչև 1915 թ. գոտ հայաբնակ Ոգմ գյուղը գտնվում էր գավառահաս Մոկա քաղաքից ուղիղ գծով 17 կմ հարավ-արևմուտք, իսկ Բարվարի գավառահաս քաղաքից 22 կմ հյուսիս-արևելք: Պաշտոնապես վերանվանվել է Գյումյուշյորեն (Gümüşören):

2 Խնուկ գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Սղերդ գավառի Բարվարի գավառակում: Վերանվանվել է Գյուլեշեր (Güleçler):

3 Քելակ (քելեկ)՝ տկերով շինված նավ:

4 Մեկ այլ վկայությամբ՝ Բոհտան և Տիգրիս գետերի միացման մոտ գտնվող Թիլ գյուղի մոտից լաստերով բեռներ են տեղավոխում Մոսուլ և Բաղդադ (Գեորգ Փիստ, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա. Տրապիզոնէն Կարին, «Հանդէս Ամսօրեայ», 1892, էջ 175):

5 Խասիսեր «Գայմագամը կը նստի Խասիսեր գիւղը...» («Դրօշակ», 1901, № 7, էջ 118): Հիշվում է նաև Խսիսիր ձևով: Գտնվում էր Ոգմից հարավ-արևմուտք՝ Տիգրիս գետի ձախ կողմում:

6 Կոշկակար:

7 Դեհը (Տեհ) հայաբնակ գյուղ էր Բիթլիսի նահանգի Սղերդ գավառում (այժմ՝ Էրոտի):

8 Մինչև 1915 թ. հայաբնակ Դաշտուկ գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգի Սղերդ գավառի Բարվարի գավառակում:

9 1882 թ. փետրվարին տեղն այցելած ակադեմիկոսը նշել է. «...Յարաթ.— յառաջ 50 տնէ ւտելի բնակիչ եղել է հոս, հիմա 5 տուն մնացած են, վիճակնին խիստ արգահատելի է. Լտեանցի քրդաց դառնութեանց երեսէն, այս գիւղի մէջ կայ Ս. Սարգիս անունով եկեղեցի մը» (Նահապետեանց Ղ. Պ., Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արձագանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 201):



Տիգրիսի կիրճը Ոզմ-Քորմ միջակայքում (2006 թ.)

կար, նրանք 1895 թվին փախսան դեպի Բոտանի կողմեր՝ Ածեր գյուղ¹⁰:

Կարադաշտի միջից հոսում էր համանուն գետը: Այդ գետի դեմ աշխատում էր յոթ ջրաղաց: Մինչև մեր ժամանակ աշխատացնում ին քոչվոր քրդեր: Դաշտի հարավի կողմ մի աղբյուր կար, որ ասում ին Կազի աղբյուր, հոսում էր դաշտի միջից: Ջրի երես դեղին սերի նման յուղ կար: Իսկական նավթի նման վառվում էր հողի ճրագի մեջ: Շատ ժամանակ դիտմամբ կրակ գցում ին դաշտի մեջ, ջրի երես վառվում էր մինչև աղբյուրի ական մոտ: Ոչ որ ուշադրություն չէր դարձնի, թե ի՞նչ է աս վառվող նոթ, հասկացող չկար: Թե՛ հայ և թե՛ քուրդ ժողովուրդ, աշխարհից կտրված լինելով, ոչինչ չէր հասկանում: Մեր գեղից գալիս ին Վան, շալակով նավթ ին բերում ծախում, բայց առնող չկար, որովհետև վառելակերպ չեն իմանա: Մեր՝ Ոզմի վառելիք, պոպոկի ձեթ էր կամ կազվան ձեթ: Կազվան մի ծառի պտուղ է, խաղողի նման ճոթեր կախված էր ծառի ճղերից, բայց խատեր մանր ին, մեջ կորիզ կար, նրանից ձեթ ին հանում թե՛ վառելու և թե՛ սապուն շինելու համար: Կարածամեր շատ նոթեր կային, բայց գիտություն մեռած էր:

Աղի աղբյուր կար, որ ժողովուրդ այդ ջուր գործածում էր աղի տեղ թե՛ խմորի մեջ և թե՛ կերակուրի մեջ: Մնակ մի տեղ կար, որ այդ ջուրից աղ դուրս բերելու համար հանք ին սարքել: Հանք կոչվում էր Սարհալի աղնոց՝ Խասխերի մոտ:

Հառնակոլ սար ընկնում էր Արանի և Ջոզանի սահմանի մեջտեղ՝ հարավ-արևմուտք, կոչվում էր Ջզեր Բոտանի, արևելքում անմարդաբնակ ամայի արոտավայր էր, որ տարածվում էր մինչև Դիտր Դաերի կողմեր: Չորս օրվան ճանապարհ էր, շնչավոր չէր ապրում այն հսկա տարածության վրա: Ամառ ժամանակ քոչվոր քրդեր իրենց բազմաթիվ անասուններով լցվում ին այդ տեղեր: Դրանից հետո, բացի ջանավորներից, ուրիշ շնչավոր չէր համարձակվի ոտ կոխել այն տեղեր: Հառնակոլ սարից

ձյունը չէր վերջանա մինչև օգոստոս ամիս, բայց այդ հսկա սարին ծառի կտոր չկար: Չլուս սար էր, բայց շատ խոտավետ էր, ի՞նչ ծաղիկ, ի՞նչ տեսակ բույս ուզիս, կար սարի մեջ: Սարի գլխից հանգիստ երևում էր մինչև Սալամաստի սարեր, մինչև Մարշմունի կողմեր, Բաշկալայի սարեր, մինչև հասնես Դիտր Դաերի բարձունքերի, իսկ արևմուտքից մինչև Դորա սարի գլուխ՝ հին Տնորիք:

Մոկս գավառ

Հիմա պատմեն մեր գյուղի արևելյան կողմի մասին, ուր ընկած էր Մոկս գավառ: Այդ գավառ միշտ եղել է մեր պաշտպան թե՛ առաջ և թե՛ հետո: Թե՛ Մոկս և թե՛ մեր պաշտպան եղել է Մոկս Մուրթլաբեկ¹¹: Նրա խաղաղասեր քաղաքականություն Թուրքիայում չկար: Թե՛ առաջվան՝ 96 թվի դեպքերի ժամանակ և թե՛ 15 թվի ժամանակ նրա գավառից մի մարդ չգոհվավ, կամ մի մարդու մի ոչխար կամ հավ թալան չգնաց: Միշտ պաշտպանեց Մոկս հայերին: Նրա գավառի մեջ տեղավորված հայերի կյանք ապահովված էր: Ինչքան որ Բարվառի քրդեր, ատեանցիք մեր գյուղի վրա կռիվ են տվել, միշտ մեր կյանք Մոկս կողմից ապահով է

11 Մուրթուլա բեկը ծնվել է 1860 թ.: Էլ-բեկի տոհմից Աբդալ բեյի որդին էր: Մոկսի մյուսիքն էր: Եղբայրն էր հայաստաց Նուրի բեյը: «Մինչև վերջին պատերազմը, Մոկսի ցեղապետն էր Մուրթուլաի պէյ, որ հայ քահանայէ մը գրել կարողաւ սրբված և քրիստոնէական կրօնքին այն աստիճան ծանօթացած էր, որ ատետարանի ինչ ինչ մասերու մեկնութիւններ կուտար վարդապետի մը պէս»: Նաև «Ես այս մարդը ճանչցած եմ Վանի մէջ և իրեն հետ տեսակցած ու հաճելի խօսակցութիւններ ունեցած եմ: Այս մարդը Մոկսի շրջանի հայութեան պահպան հրեշտակը պիտի համդիսանար կոտորածներու շրջանին՝ 1895-1915» (Շրամեան Հ., Յուշարձան, Աղէքսանդրիա, հ. Ա, 1929, էջ 19): Մեկ այլ հեղինակ գրել է, որ գավառում մեծ հեղինակություն է վայելել Մուրթուլա բեկը, որը Մոկսի և շրջակա գյուղերի ֆինանսական գործակալն էր Աղթամարի կաթողիկոսարանում և բնակվում էր Արինում, «գիտէր օսմաներին, ֆարսի և հայերէն լեզուներն ու գրականութիւն. քրէատոնէական կրօնի ոգիով շատ հետաքրքրուելով, միջակ կրթութեան տէր հայ հոգևորականի չափ գիտէր նաև մեր կրօնը իր ծեսերով ու վարդապետութիւնով... Եթէ Մոկսում մի հայի քիթն պիտի արիւնի, ես այդ արիւնողի վիզը կտրել պիտի տամ. որովհետև Մոկսը թիւրքի կոտորածի տեղը չէ» (Շամբոյր, Մոկս կեանքից, «Մուրճ», 1903, № 12, էջ 83-84): Կամ՝ «Այս քուրդը որ յիսունն անցած առոյգ և գեղեցիկ մէկն է, սերած է պատմական Խան Մահմուտի բարբարի ցեղէն, բայց կարծես թէ տարբեր արիւն կը կրէ իր երակներուն մէջ. լինելով խիստ հեզահամբոյր եւ հայասեր, ու այս կերպով նոյն սահմանի ամբողջ հայերուն պահապան ու պաշտելի հրեշտակն համդիսացած էր, մանաւանդ որ 1896ի արիւնտ քուսկանին բողած չէր որ Մոկսի եւ իր շրջակա գիւղերուն հայութեան մէկ մագն իսկ խողելու... Ասոր բոլոր սպասատրները Հայ են, որովհետեւ իր ազգակիցներուն վրայ վստահութիւն չունի բնաւ, եւ այս անվստահութեան համար է, կըսուի, որ ցարդ ամուսնացած չէ...: Սա թէեւ շատ անգամ ուզած է հեռանալ իր չսիրած միջավայրէն, Պոլիս կամ Երուսալան անցնելու համար, բայց իր սահմանի Հայերուն թախանձանքին զիջած ու տեղը մնացած է: Քանի մը տարիներէ ի վեր այս գաւառի միւտիւրը կարգուած էր կառավարութենէն, բայց վերջերս հրաժարեցաւ իր պաշտօնէն» (Լեւոնեան Խ., Հայաստանի խորերէն, Ոգիւն եւ ոգմեցիք, Ա., «Կոչնակ», 1914, № 34, էջ 802-803):

10 Ըստ հուշագրի՝ այդ գյուղացիները բնակություն են հաստատել Կոտայքի շրջանում:

եղել: Շատ ժամանակ, որ կռիվ երկար է տևել, անձամբ Մուրթլաբեկ եկել է միջամտելու, և կռիվ կանգ է առել:

Հարկավոր է հիշել Մոկաց սարերի անուններ, քանի որ մի ժամանակ մեր Ոզմ եղել է Մոկաց անբաժան շրջաններից մեկ: Մոկաց հարավային կողմ Առնոս¹² սարն էր, արևելքի կողմ՝ Որենագու՝ սարերի բեկ, իսկ դեպի հյուսիս-արևելք Հաղերով մարդախեղդ սարն էր: Ասում ին՝ «Հաղերով մեր կերավ տղաներին»¹³: Դեպի ուղիղ հյուսիս Տավրոսի շղթան էր, որ միանում էր Քոբոռ¹⁴ սարին, մինչև Անդոկ, Խալյազ, Դերսիմի սարերին: Ընդհանուր սար կոչում ին՝ Տավրոս լեռ:

Մոկաց նստված տեղ շատ լավ էր վարի, ցանքի համար, չնայած սարեր շատ քարոտ ին: Ասում ին.

«Մոկաց սարեր,
բետ-բետ քարեր,
դեռ չի լուսցի,
արև առեր»:

Մոկաց գավառում հայեր քրդերից շատ ին, բայց դեկավարություն քրդերի ձեռքն էր: Մոկաց կողմ կալվածատեր չկար, եթե չհաշվենք մի քանի բեկերի, որոնք չին ուզում աշխատել, հողեր տալիս ին՝ հայերին կամ չքավոր քրդերին: Չկար այնպիսի բեկ կամ աղա, որ մի սեպհական գյուղ ունենար, նույնիսկ ամենամեծ բեկերից: Մոկաց մեջ հողագուրկ մարդ շատ քիչ կար:

Մոկաց մարդ արհեստ ուներ՝ սոլկար, շալ գործող: Քիչ մարդ էր գորարություն անում:

Մոկա պտուղ կար՝ տանձ, խնձոր, պոպոկ, սալոր, բայց դեղձ, խաղող, ծիրան չկար:

Մոկացին էլ մեզ նման շալակով էր բերք հավաքում: Ամեն աշխատանք շալակով էր կատարվում մեր Ոզմ գյուղի նման նրա համար, որ թե՛ մոկացին և թե՛ ոզմեցին ճանապարհի չունին ո՛չ բարձկանի և ո՛չ սայլի կամ ուրիշ միջոցի: Եզ պառնալու սովորություն չկար, շատ քերն ունին ջորի, ձի չկար:

Մոկաց մեջ դպրոց կար մի քանի տեղ, օրինակ՝ Հաղին¹⁵ գյուղում, Դաշտի թաղում¹⁶, Քաղաքի թաղում¹⁷, Բառ¹⁸ գյուղում և մի քանի գյուղերում: Շատից քիչ կարդում ին, բայց մեր գյուղ չկար դպրոց:

Մոկաց նստվածք բաժանվում էր 5 ձորակի: Մենք գալի ինք ասում:



Կարմիր կամուրջը Մոկացցուր գետի վրա, Նորովանց գյուղի մոտ, 1593 թ. (լուս. Ա. Չախնազարյանի, 1972 թ.)

Առաջի գալին կոչվում էր Փութկու, երկրորդ՝ Հանդինջի, երրորդ՝ Բառա, չորրորդ՝ Քիսորա, հինգերորդ՝ Տինես գալին, որ միանում էր Ոզմ գյուղին: Յուրաքանչյուր գալին կոչվում էր մեկ շրջան:

Խնություն Մոկաց մեջ շատ կար. թե՛ բերդեր և թե՛ կամուրջներ, օրինակ Կարմիր կամուրջ¹⁹, Հանդինա բերդ, Մալաքավին բերդ, Պոնաշենի բերդ, որ Կարմիր կամուրջի մոտ է: Կարմիր կամուրջ շինված էր կարմիր աղյուսից՝ Մոկաց գետի վրա: Շատ խին ժամանակակա կառուցված էր, գրված էր, բայց գրեր ջնջված էր:

Մղերդ գավառ

Մեր գյուղին ինչ որ վնաս հասած է եղել, Մղերդից է հասել: Մղերդի կառավարությունը քրդերի ձեռքն էր, որովհետև ուրիշ մարդ Մղերդում չէր դիմանա: Ստամբուլից կամ Բիթլիսից մարդ ին ուղարկում, մի տարի չէր դիմանա, մանավանդ Ստամբուլի ընտանիքով պաշտոնյա մարդ մի ամիս չէր մնա, փախչում էր, ասում էր, թե «Շուն Մղերդ չի ապրում, ես ինչպե՞ս դիմանամ»: Ինչ կարգի մարդ մտներ Մղերդի մեջ, թող իր պատանք հետ տաներ Մղերդ: Շատ լիք քաղաք էր, բայց ի՞նչ արած, որ մի տեղ, որ ջուր չեղավ, այնտեղ ավերակ է: Քրդերեն ասում են՝ «ավ դգա ավահի»²⁰: Ջուրն է պահում շենություն: Շատ ճիշտ է, առանց ջուր օժեր չեն ապրում: Մղերդ քաղաքին մի փոքր աղբյուր կար, որ կոչվում էր Անսալերի աղբյուր, բայց կես ժամ երկու դույլ ջուր չէր լցվում: Ընդհանուր քաղաքը մոտ քառասուն հազար բնակիչ ուներ, նրանց կեղտոտ, հո-

12 Առնոս լեռը (3550 մ) գտնվում է Մոկա և Շատախ գավառների սահմանագծին:

13 Եղերով լեռնանցքի վտանգավոր լինելու պատճառով ժողովրդի մոտ տարածվել է այս ասույթը՝ «Եղերով մերն է կերեր տղեներով», որը նշանակում էր, թե Եղերով լեռը «փչացրել է մորը տղաներով» (ՀԱԴ, ֆ. 428, ց. 4, գ. 104, թ. 3):

14 Գրգուռ լեռան տեղական արտասանությունն է:

15 Մինչև 1915 թ. հայաբնակ Հաղին (Աղին) գյուղը գտնվում էր Մոկա գավառում՝ Մոկա քաղաքից 5 կմ հարավ:

16 Քաղաքանաս գավառանիստ Մոկսում:

17 Քաղաքանաս գավառանիստ Մոկսում:

18 Մինչև 1915 թ. հայաբնակ Բառ գյուղը գտնվում էր Մոկա գավառում՝ Մոկա քաղաքից 6 կմ հյուսիս-արևմուտք:

19 Կարմիր կամուրջը գտնվում է Մոկա գավառում՝ Նորովանց գյուղի մոտ: Կառուցել են Մուրադ, Հայրապետ, Կարապետ, Ավետիս խոջաները 1593 թ. (Օրբելի **И.**, Избранные труды, т. II, Ереван, 2002, с. 7-8): Կամրջի հետ կապված ավանդությունը տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 221:

Ի դեպ, կարմիր աղյուսից կառուցված միաթռիչք այս կամուրջի շինարարական արձանագրությունը կրող երկու քարերը 2001 թ. տակավին տեղում էին (Vandeyra, editör: Öner Y. Ilgaz, Istanbul, 2001, s. 47), սակայն 2008 թ. պարզվեց, որ 3-4 տարի առաջ իրականացված վերանորոգման աշխատանքներից հետո դրանք անհետացվել են:

20 «Ջուրը կչենացնի»:

տած փողոցներով անջաղ պեռով ջորին կամ էլ էր անցնում:

Երանել ան մարդուն, որ Սղերդի փողոցներ չի տեսել կամ ման չի եկել²¹:

Սղերդը եղել է հայկական հին ավաններից մեկն Աղձնեաց գավառում: Հին եկեղեցիք կային, բայց ոչ մի ջրանցք չկար: Տիգրիսի արևելյան ճյուղն անցնում էր քաղաքի հարավի կողմից, իսկ Բաշոբ գետը՝ հյուսիս-արևմուտքի կողմից: Սուլթանը չէր մտածում ժողովրդի կյանքի մասին: Նա մնակ մտածում էր ժողովրդին խեղդելով տուրք հավաքի, որ լցնի գայմագամի, մութասարիֆի, վալի փաշայի գրպաններ, բայց չէր մտածում, որ սղերդցին հինգ կիլոմետր ջորիով կամ էշով, շատեր շալակով ջոր են բերում Բոհսան գետից²²: Թուրքն ասե՛նք գիտություն, տեխնիկա չունեն, բայց հայեր ի՞նչ են մտածած. այդ հին քաղաքին ջոր չեն հանած գոնե Բաշոբ գետից, որ շատ մոտիկ է:

Սղերդի բնակիչների շատ մասը քուրդ ին, հայեր քիչ ին, բայց հայերն իրենց դպրոց, եկեղեցի ունին: Հայերի ձեռքը բան չկար, քրդերի դեմ հեսիր ին դարձած²³: Ո՛չ գենք ունին, ո՛չ կազմակերպություն, իրենց մեջ մի քանի մարդ խանութ ունին հնից: Նրանցից առևտուր անող չկար, քրդեր չին թողնում՝ մարդ մոտենա հայերի խանութներին: Եթե քրդերը մի կարիք հայ տեսնին, երկու մատները խաչում ին ու քթում վրան՝ «նալաք խաչատա»²⁴: Հայերեն խոսող չկար²⁵, կառավարող իրենք ին՝ քրդեր, սև ասկար չկար Սղերդի մեջ: Սղերդի մարդ հողագործ չէր: Իրենց էշերը պարձած՝ ման ին գալիս գյուղեր, բոլորը չարչի ին: Նրանք հասնում ին Մոկաց կողմեր, Վանից մինչև Բաշկալայի կողմեր, Բիթլիսի վիլայեթ:

Սղերդից շատ ին վախում, քան թե Բիթլիսի վալի փաշից: Սղերդից մինչև Խարզան՝ նախկին Աղձնիք, մոտ երկու օրվան ճանապարհ էր: Խարզանա

բերդի բոլոր պատեր, բերդի տարածություն բոլոր կային: Բերդին մոտիկ՝ մի ապառաժ լեռան գլխին թառած արծիվի մման կար մի մեծ վանք, որ կոչում էին Դերակերի: Տակից հոսում էր Կազարե գետակը, որ թափում էր բուն Տիգրիսի մեջ: Դերակերի վանքից մինչև Աղձնեաց բերդի ճանապարհն անցնում էր Գավանագետի մեջից: Խարզանա բերդից երևում էր Սլիվանի մեծ դաշտավայրը, որի միջից անցնում էր Մեծ Տիգրիսը:

Թե՛ սլիվանցիք, թե՛ բշերիկցիք շատ մաս հայեր ին, կար ասորի: Կային կաթոլիկ հայեր, մի տեսակ անուն էլ կար, որ տեղացիք ասում ին Գլտանի Իսկոբի: Կային հրեաներ, որ երկրի առևտուր նրանց ձեռքում էր: Սլիվանի դաշտի քրդերից շատերն իրենց ազգի անունով գրվում ին հայերեն: Օրինակ՝ Ռասուլ Հակոբյուլի կամ Ջասեն Միսակոյլի, Բաբա Դավիթոյլի: Սլիվանցի հայերը մեծից փոքր խոսում էին քրդերեն, հայերեն խոսել չէին իմանում: Ընդհանուր սլիվանցիք կամ բշերիկցիք մինչև Սղերդ, Ջեզիր, Բոտան մինչև Դորշանգառի սար, մինչև Համիթ տասը մարդ չկար, որ թուրքի լեզուն իմանար: Թուրքերեն խոսող չկար: Այդքան տարածության վրա՝ թե՛ Բիթլիսի, թե՛ Սղերդի կողմեր և թե՛ Համիթի կամ Տիգրանակերտի մասերում մի տեղ դպրոց չկար: Քրդեր գնում ին Բաղդադի կողմեր, դառնում ին մոլլա, իսկ հայեր գալիս ին Սղերդի դպրոց կամ Վանի կողմեր, այն էլ շատ քիչ, հազարից մեկ: Նրանց մեջ կրոնը շատ խիստ էր. կիրակի օրը հաց չին թխում, իրիկուն թե առավոտ առանց աղոթքի չին մնա, գողություն նրանց դուշմանն էր: Շատ էլ մաքուր ժողովուրդ ին՝ թե՛ հայ թե՛ քուրդ: Սլիվանի և Բշերիկի դաշտերի մման բերքատու հող պակաս կար Թուրքիայի արևմտյան գավառներում, բայց երկիրն անտեր էր մնացել անշնորհք մարդկանց ձեռքում: Ընդհանուր դաշտի մեջ հողերի շատ մասն առանց ջոր էր, շատ տեղեր դեմայի էր, բայց հողը խոնավ էր, բոստան, բամբակ առանց ջրելու շատ լավ բերք կտար:

Բաթման գետ գալիս էր հյուսիս-արևմուտքի կողմից, կտրում, անցնում էր դաշտի մեջտեղից, մինչև հասնում էր Թլանավառու ասորի գյուղ, խառնվում էր արևելյան ճյուղին, այսինքն՝ Բշրագետին կամ Շատալիսի գետին: Բաթման գետի վրա մի կամուրջ կար, որ կոչվում էր Բրեբաթման²⁶: Կամուրջին գրվածներ կային, բայց կարդացող չկար: Ով իմաներ, թե որ թվի կառուցած կամուրջ է: Այդպիսի շինված կամուրջ Թուրքիա չունեն ուրիշ տեղեր, չինայած այդ կամուրջը թուրքի ժամանակից շատ դարեր առաջ էր կառուցված:

21 1882 թ. այդ մասին նշվել է. «...Սղերտ կարևոր շէնք մը ու հնութիւն մը չունի. տուներն անշնորհք ու աղտոտ, փողոցներ ծուռ ու մուռ և ապակաճումած...» (Գ. Մ., Տաճկական Հայաստան (Նամակ Սղերտից), «Արձագանք», 1882, № 9, 18 ապրիլի, էջ 136):

22 1901 թ. նշվել է, որ սղերդցիներն իրենց անասունների շալակով ջոր են բերում «Պօթթանայ գետակէն (Տիգրիսի արևելա-ճիւղն և քաղաքէն կէս ժամ հեռի, ջրի նագութիւնն այն աստիճան տագնապալի դարձած է հոս, Սղերդի մէջ, որ հասարակութիւնն իր խմելու ջորն հայթայթելու համար, այսքան հեռաւորութիւն կտրել ստիպած է)» («Գրօշակ», 1901, № 9, էջ 150-151):

23 Նույնն է հավաստում նաև 1882 թ. վկայություններից մեկը, ըստ որի՝ Սղերդի քրդերը «...հայոց վերայ իբրև ստրկի ու գերիի վերայ նայելու պէս կը նայեն» (Գ. Մ., Տաճկական Հայաստան (Նամակ Սղերտից), «Արձագանք», 1882, № 9, 18 ապրիլի, էջ 136):

24 «Անեծք խաչին»:

25 1882 թ. նշվել է, որ Սղերդի «...հայք մայրենի լեզուն կորուսած կը խօսին արաբերէն կամ քրդերէն...» (Տաճկական Հայաստան. Միացեալ Ընկերութիւնը Հայոց Վիճակագիր վարժարանաց, «Արձագանք», 1882, № 14, 23 մայիսի, էջ 214):

26 Բրեբաթմանի կամ Բաթմանի կամրջի վերաբերյալ գրվել է. «...շատ համբաւաւոր ու բանձրիկ, հոյակապ կամուրջ մէ Մուֆադիմի եւ Տօրոսի սարերուն մէջտեղ, տարիներէ ի վեր շէն ու հաստատ, Ս. Կարապետէն իբր 4-5 օր հեռի» (Տեղ-Կարապետյան Գ. (Մշո Գեղամ), Տարօնի վանքերը, Ուղեւորի Յիշատակներ, 2003, էջ 45):



Մոկսի Գոմանց գյուղից դեպի Ոգմ ձգվող կածանը (2008 թ.)

Բաթման կամուրջը հայ մարդի չաքուջի և բազուկի շնորհքն է ցույց տալիս: Տեղացի ժողովուրդն ասում էր. «Բրե Բաթման է, Սորա Հիզան է, քչեթև ոստան է, խրաբնաբի հատա ախեր գաման է»²⁷:

Սորա Հիզանն Խիզան գավառի մի հին քաղաք է: Մեր ժամանակ ասում ին Կարասու: Բիթլիսից շատ հեռու չէ, այնտեղ նստում էին շրջանի գայմագամ, պրիստավ: Քաղաքի հին տեղից մոտիկ՝ ոչ շատ քարոտ տեղ, հին քաղաք էր: Նրա պարիսպներ շինված էին մաքուր որձաքարից, բայց այնպես էր տաշված կամ շարված, տեսնող ասում է, թե մի կտոր քար է: Պարսպի լայնությունը կլիներ մոտ երկու մետր, բարձրություն՝ հինգից-վեց մետր, նրա ընդհանուր երկարություն՝ չորս, բոլոր եթե չափես, կլինի մոտ ութից-տասը հազար մետր: Մի ծայրը պռնում է Կարասուի (Սև ջուրի) կամուրջից մինչև Կազիգուլի մոտ: Հյուսիսի կողմից ոչ շատ հեռու շինված է Ութխորան վանք: Շատ հին ժամանակվա վանք է՝ Ութխորան վանք: Նրա նման հին վանք քիչ կար մեր կողմերում: Տեղական ժողովուրդ ասում են, որ Ութխորան վանք կառուցված է Տրդատ Մեծի օրոք, բայց գրություն ցույց էր տալիս, որ կառուցված է հեթանոս ժամանակ:

Մեր գյուղը

Ոգմ գյուղի հիշատակի, նրա դիրքի և կենսագրության մասին, թե որտեղ է կամ որ գավառի մեջ է եղել առաջ կամ մեր ժամանակ, թող հիշեն մեր Ոգմա նոր երիտասարդներ և սերունդներ: Մեծ հույս

կա իմ 75 տարեկան սրտում, դրա համար էլ ես այս գրքով ցույց կտամ մեր գյուղի տեղը: Մեր գյուղից քիչ մարդ է մնացել, որ հիշում է: Նրանք էլ արդեն ծերացած են: Կան ինձանից մեծեր, կան փոքրեր: Մեր գյուղացի մեծ մարդիկ շատ կային, որ հիշում ին մեր գյուղը՝ Գունկանց Մուրադը, Բղունց Կազոն, Լաթո Սեփանը, որոնք կլինին 140-143 տարեկան: Ձեզ կպատմեն իմ տեսածի և լսածի մասին:

Գառնանք մեր Ոգմա դիրքի²⁸ մասին: Գյուղի նստած տեղ դաշտ է, գյուղի չորսքողոր բաղ են: Մեր գյուղի արևելքից Մոկաց խաղաղ ու ծաղկավետ գավառն էր, իսկ հարավից Կանչա սարն էր, հյուսիսից Վանքեր հռչակավոր սարն էր, որ ուներ մոտ երեք հազար մետր բարձրություն:

Մեր գյուղից մի քանի տուն ապրում էր Վանքեր սարի դոշ, որ կոչվում էր Շակմերի մագրա²⁹:

28 Գյուղի դիրքի վերաբերյալ գրվել է. «Ոգիմ կը գտնուի Մոկսի Միմ լեռներու շրթային ստորոտը դաշտակի մը վրայ, շրջապատուած բարձրաբերձ սարերով, որոնց շրթան կերկարի մինչև Սասուն, իբրև հաղորդակցութեան միջոց արտաքին աշխարհի հետ ունենալով երկու մեղ կիրճեր՝ հարաւէն և հիւսիսէն... այս ռազմական դիրքին համար երբեմն Հայաստանի Ձէյթունը կը համարուէր...» (Լեռնեան Խ., Ոգիմ եւ ոգմեցիք, «Կոչնակ», 1914, № 34, էջ 801):

29 1882 թ. փետրվարին նշվել է. «...լեռան մը գառնիվայր Շակամեր անունով մի գեղեցիկ գիւղ կայ, որոյ համար Ոգմեցիներ կը պատմէին, թէ 20 տարի յառաջ՝ 30 տուն հայ բնակիչներ ունեցող գեղ մ'եղած է, ուր հինայ և ոչ մի հայու ձայն չը լսուիր. գեղը՝ ոտով գլխով քրդացել է: Այս գիւղի հիւսիսային կողմ բարձրաւանդակ տեղի մը վրայ կը տեսնուին Վանքեր բսուած քանի մ'ընդարձակ աւերակներ, որոց համար ալ կը պատմէին, թէ հռչակատր վանք մ'եղած է ժամանակին, որոնք դարտոր պատմութիւն ունին իրենց վրայ...» (Նահապետեանց Գ. Պ., Տանկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արձազանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

27 «Բաթմանի կամուրջները, Հիզանի Սորան, ... չեն քանդվի մինչև աշխարհի վերջը»:



ՈՋՄ. գյուղի տեսքն արևելքից (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1972 թ.)

Հիմա ես կնկարագրեմ Ոզմ գյուղի սահմանների և սարերի մասին: Հարավից դու կբարձրանաս Վերին Թացոց, այնտեղից Գոփերի սեր, քո աջ թև կբարձրանա Կաշամաղներ, իսկ ձախ կողմ՝ հոշակավոր Կայոց սար, Կարմրապատ: Ավելի վեր մեր զոմատեղն³⁰ է՝ Գոհարդրեժ ամառանոցը, մեր և քրդերի կովածաղիկ կամ Արնոտ սար, նրա բարձրություն կլինի 2500 մետր: Ամեն ժամանակ դու կտեսնես ձյունապատ լեռներ, այնտեղից մինչև անգամ շատ հեռու՝ դեպի հարավ ընկած Կորդվացոց աշխարհի հովիտներ, լեռներ, մինչև Ուսեանա դարին Արոխա բերդ, Բատիրխանի մեծ ամրոց, որ կոչվում է Բատիրխան բեկի³¹ բերդ: Գոհարդրեժ կոչվում է

կնոջ անունով, այսինքն՝ Գոհարի ականջի օղ՝ դրեժ, երկար՝ Գոհարդրեժ: Այդ կին եղել է Ոզմից: Նրա համար սարը կոչում ին նրա անունով՝ Գոհարդրեժ:

Սիրելի՛ ջահելներ, հիմա դառնանք դեպի ուղիղ հարավ՝ դեպի Գոփերի ամառառ: Առաջ իջանք Գոփերի արտ, մեր ձախ թև կտեսնենք Գառնելա քուն, իբր հեքիաթ: Ասում ին ոչխարի կթելու տեղ, որ բեր³² են տվել: Ոչխար, կթվորներ, հովիվներ, գառներ և գառնարածներ հանկարծ դարձել են քար, նրա համար այնտեղ կոչվում է Գառնելայ քուն: Տեսնող կկարծի, թե ոչխարն է կանգնած, հովիվն էլ բերատեղ է նստած:

Անցնենք արևելք, կտեսնեք Շարաֆե բերդ: Մեր և Տնեցոց սահմանի գլուխ մեր վերջին կռիւ նրա վերա եղավ: Շարաֆե բերդից մինչև Գոփերի արևմտյան [կողմը] կլինի երեք ժամվա ճամփա, հասնում է մինչև Դաշտոկի կամուրջ: Այդ հսկա անտառն ընկնում է Շատախի գետի աջ ափին: Այդ

30 Արոտավայր:

31 Բատիրխան բեկը ծնվել է 1802 թ. (կամ 1806) Ջիզրեում: Հոր՝ Ջիզրեի էմիր Աբդուլլահ խանի մահից հետո իշխանությունն անցնում է ավագ որդուն՝ Սալիհ բեկին, որն էլ մի քանի տարի անց այն փոխանցում է եղբորը՝ երիտասարդ Բատիրխանին: 1840 թ. նրա տիրապետության ներքո էին գտնվում Վերանշեհիբը, Սինջարը, Սեվերեկը, Դիարբեքիբը, Սդերդը, Ուրմիան, Սաբլահը, Մոսուլն ու Ռևանդուզը: Բատիրխան բեկի հոշակը՝ որպես արդարամիտ տիրակալ, տարածված էր նրա տիրապետության սահմաններից դուրս: Գողությունն արգելված էր. գողերին պատժում էր՝ ձեռքը կտրելով: Ի դեպ, բեկը դրական էր վերաբերվում ոչ միայն մահմեդականներին, այլև հայերին և ասորիներին: Բավական բարձր էր գնահատում հայերին. անձնական խորհրդատուները, բանակում պատասխանատու օղակները զբաղեցնում էին հայերը: 1847 թ. արքայվում է Մոսամբուլ, որտեղից էլ Կրետեի Քանդիլ քաղաքը: 1857 թ. կրկին վերադառնում է Մոսամբուլ, 8 տարի անց փոխադրվում Դամասկոս: Վախճանվել է 1869 թ. (Muhammed Munis, Bir Yaşan, Bir Isyan, Bir Sürgün: Botan Bey'i Bedirhan'in Hayati: kovarabir.com).

Մեկ այլ վկայությամբ՝ Բատիրխան բեկն իրեն ենթակա գավառներում «այն աստիճան կը հսկեր ապահովութեան եւ ար-

դարութեան, որ դեռ մինչև վերջին օրերը, ծերունիներ իրարու կըսէին. «Միթե՛ Պետրի խանի օրե՞րը կապրիս, որ դռներս բաց ու եզներդ կալատեղը՝ կը քնանաս անհոգ» (Երամեան Հ., Յուշարձան, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 22): Ինչ վերաբերում է իրեն ենթակա տարածքներում ամրություններ կառուցելուն, ապա այդ մասին նշվել է. «Բեւեռխանին օրերուն Օսմանեան կառավարութիւնը պարբերաբար ծառայելով կը հասնի Բեւեռխանին սահմանները եւ բեկէն հնազանդութիւն կը պահանջէ: Սակայն... Բեւեռխանը կը սկսի ամրութիւններ պատրաստել եւ նաեւ կը սկսի բանակ պատրաստելու բուն աշխատանքին... (Ազիզեան Մ., Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրութ, 1974, էջ 9):

32 Քրդերեն բառ է, նշանակում է գյուղից դուրս մակադատեղ, որտեղ կեսօրին ոչխարը հանգստանում է, ապա կթում են:



ՈՋՄ. գյուղի տեսքը հյուսիսից (2008 թ.)

անտառի մեջ է Սմբիտա բերդ, որ ընկած է Շատախի գետի աջ ափին: Բերդի գրածներ ցույց են տալիս Տրդատ Մեծի ժամանակվա, այսինքն՝ երրորդ դարի կեսեր՝ Սմբատ Բագրատունու ժամանակ: Բերդի անունն թե՛ քրդեր և թե՛ հայեր կոչում ին Սմբիտայ բերդ:

Կարդացել են Հայոց պատմությունից, որ հայոց մանուկ թագաժառանգին Սմբատ իշխան փախցնում է Մարաց երկիր: Մարաց թագավոր սիրով ընդունում է հայոց թագաժառանգի պաշտպանություն և պահում է, մինչև չափահաս դառնա, իսկ Սմբատ իշխանին տալիս է Ոզմ գավառի Ոզմ գյուղ՝ որպես ապահով տեղ: Բերդի բոլոր նշաններ՝ թե՛ գրություն և թե՛ կառուցվածք, ցույց են տալիս նույն թիվ:

Եղիշեի գրքի մեջ կա, որ Ոզմ եղել է Մոկաց գավառներից մեկը: Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ Բայտ և Ոզմ գավառների մասին գրված է, որ այն ժամանակ Ոզմ եղել է Մարաց իշխանության ներքո:

Մոկաց և Ոզմ գավառներ հետո դարձել են մեկ գավառ, բայց թե ինչն՞ է անջատված: Ես այսպես եմ լսած, որ մեր գյուղի մեծեր կպատմեն ինչպես հեքիաթ, թե անջատվել է այն ժամանակ, որ Ջզեր Բոտանի եղած քուրդ աշիրաթ եղել են հայեր: Նրանց մեծ իշխան եղել է Ազիզ իշխան: Այդ իշխանի ձեռք տակն է եղել ամբողջ Քրդաստան՝ Ջզեր Բոտանից մինչև Դխոբ Դաեր, մինչև Ջուլամերիկ, մինչև Շրնախա բերդ, որ առաջ ասում ին Կորդվացոց աշխարհ, որ սահմանակից է Դորա երկրամասին: Հիմա Դորա մեր ժամանակվա անուններ, իսկ ասում ին Տնորիք, իսկ թե ե՞րբ ին

տաճկացել, դարձել քուրդ, իրենք ին պատմում իրենց մեծերից լսածներ: Այդ Ազիզ իշխան մահմեդական դառնելուց հետո նրա ցեղին կոչում ին նրա անունով՝ ազիզանցիք, որ իշխում էր ամբողջ Քրդաստան մինչև նրանց վերջին սերունդ՝ Բատիրխան բեկ, որ թուրք կառավարություն Ստամբուլ արքայաց: Ազիզանցիք կոչվում ին Մերե Բոտան Քրդաստանի բեկեր, իսկ Մոկաց կամ Շատախի բեկեր կոչվում ին հեքարցիք:

Մեր Մուրադ քեռին Բատիրխան բեկի մոտ աշխատել է որպես բանվոր աներոջ՝ Գամշունց Միրզանի հետ Արոխա բերդը կառուցելու ժամանակ: Մուրադ քեռին ասում էր, որ ազիզանցիք չեն ենթարկվի թուրք կառավարության, թե՛ հայերի և թե՛ քրդերի տուրք, իսարջ բոլոր պատկանում էր ազիզանցոց բեկերին: Եվ ասում էր Մուրադ քեռին. «Լավ կհիշեմ, որ մեր կողմեր ռում չկար, այսինքն՝ թուրք կառավարություն Բատիրխան բեկին սորգոն³³ արին, նոր ռում եկավ, մեր երկիր տիրեց»:

Եթե թեքվես դեպի ձախ կողմ, դու կտեսնես Բլեճուկ կոչված քարի հեր և պղինձի հեր: Պղինձի հեր մի քարի մղարա է: Դռնից մտնող զարմանում է, տասը քայլից հետո ներս լույս չկա, պետք է մոմ վառես, որ քո ոտաց տեղ տեսնես, այնքան մութն է: Բայց մարդ կարող է առանց կռամալու ազատ առաջ գնա: Դա մի զաղա է՝ մաքուր կարմիր քարից: Քարեր այնպես են պլպլում, տեսնող կասի, թե ոսկի է կամ մաքուր պղինձ: Քարերի վրա ծիլ կա, մենք ասում ինք Ծաղկաքար:

³³ Սորգոն (սյուրգյոն)՝ արքայ:



ԱՐՄՇԱՏ. գյուղի տեսքը հարավ-արևմուտքից (2006 թ.)

Եթե հիմնական գիտնականներ լինեին, կարող է մի բան որոշեին, իսկ մեր անգրագետ ժողովուրդ ի՞նչ կարող էր իմանալ այն զաղի երկարություն: Մենք չկարողացանք իմանալ, թե որքան խորն է զաղան, մեկ տեղից՝ աջ կողմի վերև մասից լույս երևաց, բայց չիմացանք, թե որտեղի՞ց է լույս երևում և ոչ էլ զաղի վերջ իմացանք: Մենք վեց տղաներով շեշմած դուրս փախանք, մեզնից առաջ գնացողներ շատ քիչ են գնացել: Այդ զաղին ոչ մուրճի տեղ կար, ոչ էլ ուրիշ գործիքի: Դա բնական քարայր է:

Ոգմա ջահել տղեք, հիմա անցնենք Գոփերի անտառի հարավարևելյան կողմ, խասնենք մինչև Հարնագետի մոտ: Այդ գետ փոքր ջուր է, որ գալիս է Մոկաց հոչակառ Առնոս սարից, Ծափանց³⁴ և Հորիս գյուղերից, թափվում է նորից Բշրագետ: Այն ջուր մեր և Մոկաց սահման է հարավից, իսկ արևելքից մեր և Հարմշատ գյուղի հետ մոտիկ և ապահով կարճ ճանապարհն է Շատախ երթալու համար:

Մեր գյուղից մինչև Հարմշատ³⁵ երկու ժամվա ճանապարհ է, որ անցնում է Հարեն սարի միջով: Ամենալավ սարն է Հարեն, բայց, ափսոս, ջուր քիչ է:

Նկարագրեցի մեր Ոգմի հարավային մաս, հիմա դառնանք դեպի հյուսիս: Գյուղի բաղերի միջից

անցնում է Մոկաց կաթնահառ ջուրը, որ ջրում է մեր բաղերի քիչ մաս, իսկ գյուղ մնում է գետի ձախ կողմ: Դիմացը բարձրանում է Շակմերի մզրեն՝ բաժանված երկու թաղի՝ Դաշտ և Միմ³⁶, փոքրիկ գյուղեր: Վերև ես բարձրանում, առաջ կելնես խանդակ Թորքափիրան, հետո Կանասրկ, նրանց գոմատեղ սար կոչվում է Վանքեր անունով: Նրա գլխից ձյուն չի պակսի շատ ժամանակ: Սարի բարձրություն 3000 մետր կլինի: Սարի վերին մաս կոչվում է Կալ-հոկ կամ Որե Կասմաղա:

Հիմա դառնանք դեպի արևելք՝ դեպի Կոթոզակ Չավեմերան Շեկհարդ: Կոթոզակ սարի մեծ աղբյուր է, որ շատ տարիներ առաջ միշտ մեր և Տնեցոց քրդերի կռիվ³⁷ այդ Կոթոզակի ջրի վրան է եղել դեռ Բատիրխանի ժամանակից: Այն աղբյուրի ջուր թափում է Գեղին ջուր կոչված ձորակի մեջ: Գեղին ջուր մեր և Մոկաց հյուսիսարևելյան սահման է:

Միրելի՛ երիտասարդներ, մեր գյուղի սահման արևմուտքից մինչև Դաշտոկի կամուրջ է, դեպի հյուսիս՝ Վանքեր սարի գլուխը, հարավից՝ Բշրագետը (Շատախի գետը). նա երկու ճյուղ ունի. մեկ

34 Մինչև 1915 թ. խառը բնակչությանը Ծափանց գյուղը գտնվում է Մոկա գավառում՝ գավառանիստ Մոկա քաղաքից 13 կմ հարավ:

35 Հարմշատ (Արմշատ) գյուղը գտնվում է Վանի նահանգի Շատախ գավառում՝ Շատախից 24,5 կմ հարավ-արևմուտք, իսկ Ոգմից՝ 9 կմ հարավ-արևելք:

36 Շակմեր գյուղն իր Դաշտ և Միմ (Շեն) թաղամասերով գտնվում է Մոկա քաղաքից 17 կմ հարավ-արևմուտք՝ Մոկաց-ջրի աջ ձորալանջին:

37 1890-ական թվականներին նշվել է, որ Տինիսի բուրդ «...բնակիչները թեև արիմկակ եւ առազակաբարոյ հրեշներ են, միանգամայն ուխտեալ թշմանիներ Ոգմեցի Հայերուն...» (Լեւոնեան Խ., Հայաստանի խորերէն. Ոգիմ եւ ոգմեցիք, «Կոչնակ», 1914, № 34, էջ 803):

արևելքից՝ Ջուլամերկի սարերից, իսկ մեկ ճյուղ՝ հարավի կողմից՝ Կորդվացոց սարերից: Այն ճյուղ կոչվում է Ավամասի, այսինքն՝ Ծկան ջուր: Այդ գետի ձուկ պռնոդ չկա հեռու լինելու պատճառով: Այդ գետ Հարմշատ գյուղին մոտ է, բայց կամուրջ չկա անցնելու: Կամուրջ չեն կապում նրա համար, որ ամառ ժամանակ քոչվորներ վնաս չտան Հարմշատ գյուղին:

Իսկ մեր արևելյան սահման հյուսիսից դեպի Մոկաց կողմ Մոկաց գետն է, արևելքից՝ Դեղին ջուր մինչև Կոթոզակի աղբյուր, մինչև Գորտրեժի Աղեզ անտառ, դեպի արևկողմ կիջնես՝ Շարաֆե բերդ, մինչև Հարինա ջուր, հյուսիս-արևմուտք՝ Պղմաբաղ Շրմանց Ջամիր մինչև Մախտտի սահման: Մախտտ³⁸ քրդական գյուղ է, որ ընկնում է Մոկաց գետի ձախ ափին: Մեր գետի քամակ Դաշտի ձորն է, որ գարուն մինչև ամառ գյուղի արտեր նրանով ենք ջրում: Այդ ջուր Կարմիրպատից է գալիս:

Ջուր. Մեր Ոզմի տեղ դուզ էր, չորսբուր վարելահողեր և բաղ: Եղած հողեր բոլոր ջրովի էին: Այդ ջրեր բոլոր աղբյուրներից գալիս էին, չնայած գյուղի երկու կողմից գետեր էին հոսում. հյուսիսից Մոկաց կաթի նման մաքուր գետն էր, իսկ հարավից՝ Բշրագետ կամ Շատախի գետը, որ սկիզբ էր առնում Նորդուզի Անձևացոց սարերից: Մենք ասում ինք Բշրագետ, Տիգրիս, չինք իմանում, թե ի՞նչ բառ էր:

Ազիզանցիք, ասում էր Գունդկանց Մուրադ, մեր գյուղից տուրք չին առնում, որպես իրենց սեպիական գյուղ: Հարց ինք տալիս, թե ինչո՞ւ համար էր իր սեպիական գյուղ: Նա ասում էր, որ գյուղ նրանց ժամանակ տված է Մուրթեկի կնոջը՝ Փառոկին օժիտ: Նրա համար մեր գյուղ կոչվում էր Գունդե Հարոմա, այսինքն՝ Հարոմ բեկի գյուղ:

Առաջ, ասում էր Մուրադ քեռին, մեր գյուղին ջուր չկար: Բոլոր բաղեր և արտեր փոքրիկ լճերով ինք ջրում, շատ արտերին ջուր չէր հասնում: Ամառ ժամանակ շատ բաղեր առանց ջուր էին մնում: Մեր գյուղի ջուր, որ դուք կտեսնեք, կնոջ շնորհիվ է փոխված: Այս ջրանցքների տեղեն ջրից մինչև մեր գյուղ կլինի երկու ժամվա ճամփա: Մենք այդ կնոջ չենք մոռանա: Մի օր Ջզերո Միր Մահմուտ մի քանի պատվավոր մարդ է ուղարկում Մոկաց Միրշարաֆի մոտ, նրա աղջիկ Սթեա Մաֆե ուզի իր տղա Մուրթեկի համար որպես կին: Միրշարաֆ ընդունում է և խոստանում է տալ Սթեին: Վերջ նշան տալուց հետո որոշած ժամանակ գնում են հարս բերելու: Միակ ճանապարհը մեր Ոզմի միջից է անցում: Գիշեր մնում է մեր գյուղ: Մուրթեկ լավ ուսումնասիրում է թե՛ գյուղ, թե՛ սարեր և թե՛ բաղեր: Ոզմեցիք լավ պատիվ են տալիս Բոտանա Միր Մուրթեկին: Երբ հարց հասնում է ջրին, հայեր գանգատում են,

թե բաղերի ջրելու ջուր քիչ է, ամառ ժամանակ ջուր չի բավարարի գյուղին:

–Բայց ջուր բերելու հնար կա՞,– ասում է բեկը:

–Կա՞,– ասում է Քոսեց Մուխսին:

Հարսին տանում են Ջզերեն: Անցնում է քառասուն օր: Այն ժամանակ սովորություն կար ժողովրդի մեջ, որ քառասուն օր լրացավ, աղջիկ կտանեն դարձ՝ հոր տուն, մինչև ժամանակին նորից մարդ կգար, կնոջ տաներ իր տուն: Երբ որ հարս հեծնում է, որ դարձ երթա հոր տուն, մարդ կնոջ ասում է.

–Մենք շատ ենք կալան³⁹ տված խորդ, խեղդ նվեր կամ բաժին կտա, բայց եթե մենք մարդ ու կին ենք, դու պետք է ոչ մի նվեր չուզես՝ ապրանք, ոսկի, հարստություն, ոչ մի բան հարկավոր չի քեզ: Չիուց չիջնես, երբ որ խեղդ ձիու գամ⁴⁰ կպռնի, կասի՝ իջի՛ր, դու չիջնես ձիուց մինչև քու նվեր չտա: Դու քո նվեր կուզես Ոզմ գյուղ, եթե տվեց, ձիուց կիջնես, թե չտվեց, հետ կդառնաս, բայց լսի՛ր, Սթե՛, մինչև որ մորդ գերեզմանով չերդվի, չհավատաս: Դու ասա, իմ նվեր կամ օժիտ Ոզմ գյուղն է, կտաս, կիջնես, չես տա, չեմ իջնի:

Այդպես էլ աղջիկ կատարում է մարդու կամք: Այն օրվանից Ոզմ անջատվում է Մոկաց գավառից: Նրա համար գյուղ կոչվում է Գունդե Հարոմամեր, այսինքն՝ բեկի կնոջ նվեր:

Ճիշտ է, տվեց գյուղ, բայց փոշմանեց: Բեկ այսպես ասավ աղջկան. «Քու խելք չէր, բայց քեզ ասողի բերան կտորվի, եթե ես մորդ գերեզմանով չի երդվի, քսան քեզ կամ մարդուց նման մեռնին, ես ոչ մի անգամ Ոզմ քեզ չի տա: Բաց խոսքս մարդու խոսք է, էլ չեմ փոշմանի, խալալ է քեզ»:

Սթե երկու տղա ունեցավ, նրա մարդ մեռավ: Կին մտածեց, որ իր Ոզմ գյուղին ջուր բերի, նա առաջ պլան տվեց, որ Հարինա ջուր բերի գյուղ: Տեղ չափում են, տեսնում են, որ շատ հեռու է գյուղից, ճանապարհ վտանգավոր է: «Ձեզ համար ես այսօր կամ, վաղ չկամ, Քրդաստան վտահություն չկա, թողեք, որ Դեղին ջուրից բերենք, հա՛ն մոտիկ է, հա՛ն էլ վտանգ չկա»: Եվ կին իր խոստում կատարեց. իր ծախսով Կոթոզակի սարի աղբյուրի ջուր Դեղին ձորով բերեց, հասցրեց գյուղին: Նրանից հետո նոր ազատվեցինք փոքրիկ լճակներից: Գյուղ դարձավ ջրովի, իսկ մեր և Տնեցուց սահման դրեց, գնաց ինքն էլ:

Մրանով մեր Ոզմ մնաց Բարվարի գավառի մեջ, իսկ ազիզանցիք աքսորելուց հետո քրդերն էլ փոխվան, ատեանցիք և օսմանցիք ուժեղացան, կապվան քրդերի հետ: Մեր դրություն գնալով վատացավ, պատմում ին մեր մեծեր:

Մեր գյուղի հողային տարածություն շատ էր, բայց ամեն տեղ ջուր չկար: Ամեն տեղ ջրովի հող էր,

38 Մախտտ (Մախտտ, Մաքուտ) քրդաբնակ գյուղը գտնվում է Մոկսից 21 կմ, իսկ Ոզմից՝ 4,5 կմ հարավ-արևմուտք:

39 Դրամ, որ փեսան տալիս է աղջկա հորը իբրև գլխագին: 40 Մանձ:



Սոկացջուր գետի կիրճը Ոզմ-Գոմանց գյուղերի միջանկյալ հատվածում (2008 թ.)

մնակ դաշտերն էին գյուղի բլուր, իսկ գյուղի հարավային կողմի Խլուզենքներ, Լճեր, Տարեկներ, Փըշներ, Քառնճառ, Սղտորկոցներ, Բարձրափ դարձեալ ջրարբի էին: Ամառ ժամանակ գոլեր կար, որ մենք լիճ ինք ասում: Այդ հողամասեր լճերով ինք ջրում: Օրինակ՝ Ավագ լիճ, Կառի, Հավղական լիճ կն:

Աղբյուրների անուններ՝ Կռունկի աղբյուր, Քառնճառի աղբյուր, Հավղական աղբյուր, Կանեգոզան, Վերին Թացուց, Ներքին Թացուց, Արծաթալճի աղբյուր, Կաթնիկ աղբյուր, Բակի ճռռի աղբյուր կն: Էլ չեմ խոսում Բարձրափի բազմաթիվ աղբյուրների մասին, որ զարդարված էին զանազան տեսակի ծաղիկներով՝ տսի, բարուն, գներպուկ, Աղբերանց արու, Կոլտր ծաղիկ, ասենք Կարմիր ծաղիկ:

Մեր Ոզմ գյուղի ջուր, որ արտերն էին ջրում, սկսում էր ամառ ժամանակ պակասել: Ջուր դառնում էր նոթաթով⁴¹, մենք ասում ինք Աղսի ջուր: Այդ ջուր բաժանված էր տասնմեկ տան վրա: Յուրաքանչյուր տուն մեկ օր իրավունք ուներ բանացնելու. Բարեզարի արև, որ հասներ մեր գյուղի ժամի պատին, հերթը հասնում էր ուրիշ մարդու, որովհետև ժամացույց չկար: Ջրի նոթաթ փոխվում էր: Այդ օ-

րենք մնացած էր նախկին քրդական ժամանակվանից. 11 տուն ջրի տերն էր դառնում ամեն մեկ օր, մեկ օր էլ գյուղի ռեսին էր պատկանում: Ուզեր կծախեր, ուզեր իր բարեկամին կտար, բայց փողով չէր ծախի, այդ ջրից նա մի օր նրան խոտ կամ ցորեն պիտի քաղեր: Իսկ մնացած տասնմեկ տան ամեն մեկ տան բաժանված էր: Այդ տասը տան արտ ջրելուց հետո կարող էր մնացած ժամերին օգտագործեր իր և իր բարեկամների համար: Այդ Աղսի ջրեր տերեր պարտավոր ին տարին մի հատ գառ տանել աղային նվեր քրդերի տոնի՝ Ռոժառոյի օրը: Այդպես էր կոչվում Ռոժառո գետում լողանալու օրը. կատարվում է Վարդավառի կիրակին:

Ոզմի սոցիալական վիճակը. Ոզմից կար մինչև Կարսի կողմեր, իսկ գյուղի մեջ մնացեր ինք 104 տուն միայն, բայց նորից հազար հարյուր հիսուն ապրող անձ կար գյուղի մեջ:

Շատ տուն կար, քսան անձից ավել էր. աղբեր, աղբոր տղա, թոռներ բաժանելու սովորություն չկար: Էն մարդ, որ չէր ուզում մնալ հորեղբոր մոտ, վերցնում էր իր կին, երեխեք, գնում էր ուրիշ տեղ առանց բաժանվելու: Մեր Ոզմ գյուղ հարուստ մարդ չկար, բատրակ պահող չկար, շահագործող չկար: Մեր շատ հարուստ մարդ նա էր, որ մի կտոր հող ավել ուներ կամ կատանից մի չորս ոսկի ավել էր բերում մյուսից: Մեր գյուղի մի հարուստ Կանտալունց տուն էր, որ ուներ հիսուն-վաթսուն ոչխար, մի գույզ եգ: Այն տուն, որ իր հաց բավարարում էր, նրան ասում ին հարուստ տուն, մեծ Մոսի էր անուն: Նա մի քասիք մարդ էր պահում իր տան մեջ, որպես հովիվ՝ Վարթիկ անունով, որ ուներ մի կին, 2 երեխա: Նա մեր գյուղից չէր, նրա հող աղեն առած էր մոտից, փախեր էր մեր գյուղ, եղեր էր հովիվ, բայց ոչ թե վարձու հովիվ, այլ որպես տան նաֆար, տան անձ: Մնացած գյուղացիք, բլուր մարդիկ աշխատում էր իրենց համար:

Արհեստ. ոզմեցիներ լավ էր որպես կոպիտ ուժ կամ կռվարար մարդ⁴²:

Մեր գյուղի ապրուստի մեծ ճյուղերից մեկն էր զգրարություն (գեզ անել, քաղիք գցել կամ բամբակ գցել), որ մենք կատան ենք ասում: Մա մեր ապրուստի աղբյուրն էր աշունից մինչև գարուն: Մեր ձեռք ուրիշ տեղից փող չէր գա:

42 Ոզմեցիների խիզախ և մարտնչող բնույթի վերաբերյալ գրվել է. «Գտնելով վայրի մը մեջ, որ շրջապատում էր միմիայն պատերազմատեր և կուսական քիւրա աշիրաթներով, ոզմեցիներ շատ առաջընե, սովորեր էր իր ազգային և գիւղական պատիւն ու անունը բարձր պահել հերոսական գործերով: Ժողովորդ մեր, որ գիտէր կիսաքաղց մնալ, զրկւած լինել գիւղացու աջ թևը կազմող լծկան եզներէն, բայց միշտ իր տան պատէն կախած տեսնել երբեմն շաշխանայ, ապա մօսին, մոտել իրացաններն ու մաուզեր ատրճանակը: Բնագղաբար կը զգար, որ իր աշխատանքի արդիւնքը պահպանելու, ընտանեկան սրբութիւններն ու պատիւը ապահովելու, անձնական և գիւղական հմայքն ու արժանապատուութիւնը արժեցնելու միակ միջոցը՝ զէնքի դէմ զէնք ու ուժի դէմ ոյժ ցոյց տալն էր» (Աբրահամեան Ա., Մեր զոհերը, «Դրօշակ», 1928, № 4, էջ 124):

41 Նոթաթ՝ հերթ:

Մենք էլ խաչագողերի նման ինք, բայց, բացի աղաների կամ հարուստների բուրդերից, ուրիշ ոչ մի բանի ձեռք չինք տա: Մեր արհեստ բուրդ գողնալ էր, ուրիշ չարություն մեզ մոտ չկար, նրա համար որտեղ որ ինք, պատիվ կպահիինք շատ լավ: Մեզ թե՛ հայեր, թե՛ քրդեր կանչում ին լիպուտ⁴³ և ուրախանում ին: Մեզ տեսնելիս ասում ին՝ լպուտ եկավ, կռունկ գնաց՝ աշուն է:

Ուրիշ տեղերն ինք գնում, օրինակ՝ Մուշ, Մանծկերտ, Ալաշկերտ, Խնուս և այլն: Գլխավոր պատճառ այն էր, որ բռնակալ աղաներ թույլ չին տա, որ մեր սարեր վարուցանք անենք, բոլոր պիտանի հագարավոր հեկտար հողեր իրավունք չունինք ցանելու և Համիդի կառավարությունն աղաներին էին պաշտպանում: Մի կողմից աղաները, մյուս կողմից Մուլթան Համիդի կառավարությունը, մնացել ինք երկու բռնակալի լծի տակ:

Ապրելակերպ. մեր Ոզմ գյուղ քուրդ չկար, մինչև անգամ հովիվ չեն վարձի քրդերից: Սովորություն չկար մեր մեջ քրդին տուն տալ մեր գյուղի մեջ: Մեր գյուղի շատ կին կամ երեխաներ քրդերեն խոսել չին իմանա, տղերք մինչև չգնային կատան, գգրարություն, քրդերեն չեն իմանա խոսել:

150 տուն էր գյուղ, բայց հողից աղքատ էր: Նրա համար շատ տուն բաժանված էր, կես մնացեր ին գեղ, կես մաս տեղափոխվել ին դեպի Վան, Հայոց Ձորի, Թիմարի կամ Արծկեի կողմեր: Այնպես որ վերջերս մնացեր ին 115 տուն: Ժողովրդի թիվ հասնում էր 1123 անձի, որից շատ տղամարդ էր: Կանայք աշխատում ին տնային գործերով, իսկ տղամարդիկ գարուն-ամառ պարապում ին հողագործությամբ, իսկ աշուն վերցնում ին իրենց քաչ անեղներ⁴⁴ դեպի այն կողմ, ուր շատ ոչխար ին պախում կամ շատ բամբակ ին ցանում՝ Ջզեր Բոտանից մինչև Մոտուլ, Տիգրանակերտ-Համիթ, Վարզին: Արևելքից մինչև Ալաշկերտ անցնում ին մինչև Երևանի գավառ՝ Ապարան, Գոքչա, Սարդարապատ և շատ տեղեր: Այսպիսի գգրարներ շատ ին ուշանում՝ մեկ կամ երկու տարի, բայց նրանց աշխատանք քիչ էր լինում մյուսներից, որ շատ հեռու չին գնում և վերադառնում ին չորս ամսից ոչ ավել: Ասում ին. «Դանկի տոր խոշախի»⁴⁵:

Մեր գյուղում ճանապարհ չկար: Չինք մտածում գոնե մեր ճանապարհ սարքինք, որ Կորդեմից կամ Կառցից շալակով խոտ բերելու ժամանակ հանգիստ լինի մեզ համար:

Բարձր անասուն չունինք, ջորի կար, բայց բռնակալ տարեր էր դեռ մեծ դեպքից առաջ: Ջորիք քարվան գնալու ժամանակ բոհթանցի Մահմա՛ Մստեն գոռով առեց, էլ չտվեց, ինչքան որ բողոքին կառավարություն, չուզեց քրդի բեկի խաթրին կպնի:

43 Լիպուտ, լպուտ կամ լպուր՝ աղեղով բուրդ կամ բամբակ գգր, գգրար:

44 Անեղը գգրարի աղեղնաձև գործիքն է:

45 «Հեռու տեղի ձայն անուշ է»:

Անպես էլ գնացին ջորիք, բայց ջորիք տարող չի մարսեց: Մեր Կանդալունց Մոսին ծանոթ աղա կար Ջեզիրի քաղաք: Մոտ դիմեց այդ քուրդ բեկին, որին ասում ին Դահրե Ռեհան: Խնդրեց նրանից, որ տարած տասնհինգ ջորիք մի կերպ առնի Մստեից:

– Եթե դու մեր ջորիք առնես, ուղարկես, մենք քեզ թե՛ փող կտանք, թե՛ քեզ համար Վանից մի թանկագին նվեր կբերենք:

Դահրե, որ Վանից բերած նվերի անուն լսում, էլ չի համբերում, մարդ է ուղարկում Մստոյի մոտ:

– Դու իմ ծանոթ ոզմեցոց ջորիք տարեր ես, բոլոր ուղարկիր, թող բերեն քու խոլամներ⁴⁶: Թող մեր մեջ վատություն չի լինի, քեզ մի երկու օր ժամանակ, եթե ջորիք չեկան, դու լավ գիտես, որ իմ անուն Դահրե Ռեհան է, ինձ լավ ես ճանաչում, ես էլ քեզ եմ ճանաչում, դու չասես, թե ես քեզից քիչ խոլամ ունեմ: Ես մնակ իմ ծանոթ հայերի ջորիքն եմ ուզում, ուրիշ ոչինչ:

– Քեզ ինչ,– պատասխանում է Մստե,– ես շատ լավ եմ արել, որ ջորիք առել եմ, թող գան ինձանից հաշիվ պահանջեն: Դու ո՞վ ես, որ ջորիք քեզ տամ: Ես հայերին չեմ սպանել, թող երթան եկեղեցին աղոթք անեն, մատաղ կտրեն, որ ազատվել են, իսկ դու մի հասարակ ավագակ, ինձ սպառնալիք կտաս, դու չե՞ս իմանում, որ իմ ընդհանուր բաթյանցիք կանգնած են:

Դահրե Ռեհան էլ չի խոսում, վերցնում է երկու խոլամներ և գիշեր մտնում է Մստեի տուն: Մստեին ու նրա մեծ տղին սպանում է, չորս ջորի վերցնում, հետ է դառնում: Ջորիք նորից տերերին չհասան, բայց տերեր շատ ուրախացան, որ Մստե չկա: Նրանից հետո քրդերի մեջ սկսեց թշնամություն: Մոտ քսան մարդ իրար սպանին. պատճառ մեր գյուղացոց ջորիներն ին՝ ջորիի տեր մեկ Նուշիկանց Սահակն էր, մեկ Ջոնկանց Մուրադը, մեկ Մորջանկա Կարապետը և ուրիշներ: Այդպիսով, մեր գյուղ կտրավ բարձր անասունից: Նրանից հետո մարդ սիրտ չարեց ջորի կամ ձի առնելու, մնաց շալակով բեռ տանել գյուղից սար, սարից գյուղ:

Մեր ոզմեցոց սովորություն չկար էլ պահել, ամոթ էր էլ պահել: Մեր ընդհանուր աշխատանք կատարում ինք շալակով: Մի մարդ էլ առավ, նրա անուն դրին Էշի մուխսի: Ինք մուխսի էր, խեղճ մարդ տարավ ծախեց ամոթու:

Գյուղ միրգ շատ կար՝ տանձ, խաղող, խնձոր, թուզ, նուռ, պոպոկ, որին մենք կոզով կամ գուզ ենք ասում, բայց ինչ օգուտ, որ չէր ծախվում, ո՛չ ճանապարհ կար և ո՛չ էլ բարձր անասուն: Մնում էր, բոլորը փչանում էր: Ծալակով տանել չէր լինում, որ տանինք Վան կամ Բաղեշ ծախելու: Մեր գյուղից մինչև Վան երեք օրվա ճանապարհ էր, Բաղեշ նույնքան հեռու էր, ինչքան Վան: Նրա համար բո-

46 Ծառա:



ՈՋՍ. գյուղի կենտրոնական հատվածը (2008 թ.)

լոր միրգեղեն չորացնում ին, նոր չիր ծախում: Տանձի ժամանակ քոչվորները սարից գալիս են, մեկ-մեկ առնում, տանում ին, բայց համարյա թե ձրի. մի ջորաբեռ տանձը մի մաջեթիա քսան դուրուշ, ութ աբասի, որ անում էր մի մանեթ վաթսուն կոպեկ: Քուրդ քոչվորների ջորին ամենաքիչ տասնհինգ փութ կտաներ: Փութ գալիս էր տասը կոպեկ, ահա մեր շահած տանձ: Իսկ քանի ջորի կար, մերոնք տանձ, խաղող բառնում ին, տանում ին Գավաշ, Հայոց Չոր, Շատախի կողմեր, ծախում ին թանկ գնով կամ փոխում ին ցորենով, երկուսը մեկ, էլի շատ լավ էր: Օրինակ, մեր գինին կամ արաղը թե լավ ծախվեր, մենք շատ նեղություն չինք քաշի, կարող ինք կատանի չգնալ: Մեր խաղող, որ չամիչ ին անում կամ գինի կամ դոշաբ ին եփում, այնքան խաղողի փլուշ տալիս ին արտերի մեջ որպես աղբ: Չինք իմանում, որ փլուշից արաղ դուրս կգա: Չինք իմանում, որ թթից էլ են արաղ քաշում: Այդքան գինին մնում էր, չէր ծախվում, շատ մարդ գինու կամ դոշաբի տակի մնացածը հավաքում էր և արաղ քաշում: Թե՛ գինին և թե՛ քաշած արաղը նույնպես մնում էր առանց ծախելու: Գյուղում առնող չկար: Ուրիշ տեղ տարող չկար, եթե պատահեր մեկը հարսանիք աներ գյուղի մեջ, գինին պակսեր, կարող էր մի տեղից վերցնել սուլիկ քսան կոպեկով: Սուլիկ մի դույլ է: Կամ թե Մոկաց կողմից գալող լիներ, նրան էլ սուլիկը ծախվում էր քսան կոպեկ, ավել չկար: Շատ մաս Մոկաց տերտերներ են գալիս, տանում,

որովհետև Մոկաց գավառ խաղող չկար: Տանձ, խնձոր, պոպոկ շատ կար Մոկս, բայց խաղող չկար:

Մեր մոտ գերնտի չկար: Խոտ, ցորեն, գարին քաղում ին մանգաղով: Քաղած խոտ, ցորեն շալակով ինք կրում կալ: Չառջառ⁴⁷ չկար, կամ չկար: Յորեն, գարին և կորեկ կախում ինք հողայով, այսինքն՝ 5-7 եգ, կով կապում ինք շարքով ու քշում կալի վրա, մինչև դառնում էր դարման, իսկ մաղին տեղ քառեշտ⁴⁸ կար: Մինչև առվոտ մի մեծ տեղ մաքրում ինք, մաղելուց հետ դանին⁴⁹ չափեր, տասը չափից մեկ վերցնում էր որպես դանկ տասնորդ: Բայց մեր գյուղից հաց չին տանում, փող ին տանում: Մեկ մերի կոտին⁵⁰ հարյուր փարա, 2 կոտ ու կես՝ 20 կոպեկ ռուսական փուղով: Մեր գյուղի հացի շատ մաս կորեկ և բաջիկ էր⁵¹: Բաջիկ սպիտակ գեղգեշի նման էր, նրա փոքր կոռթ մի հոկի չափ էր ծանրություն, լավ մշակած բաջիկ երեք կոռթ մեկ հուկաքաշ ուներ, բրինձի նման սպիտակ: Եթե նրա հետ խառնին տարեկան, կղառնար մաքուր ցորենի նման

47 Կալը ծեծելու համար մեծ գործիք՝ հաստատված զլանաձև երկու փայտերի վրա, որոնց տակ տարբեր ուղղություններով շարված են ուրագաձև երկաթները:

48 Քառեշտը կամ քառեշը կալի մեծ երեք կամ չորսմասունանի փայտե եղան է, որով հարդախառն հացահատիկը դիզում են, ապա քամուն տալիս:

49 Դանը (խան) հացահատիկ չափելու համար փայտե աման է:

50 Հացահատիկ չափելու համար զլանաձև, տափակ ոտքով փայտե աման:

51 Կարմրագույն կորեկ:



ՈՋՄ. գյուղին տիրացած մերկայիս քուրդ բնակիչների ձեռագործ կողովներ (2008 թ.)

հաց, իսկ կորեկ երկու տեսակ կար՝ դառը կորեկ և բետ կորեկ, որ կազմում էր հացի վաթսուն տոկոս: Մեր Ոզմ ցանում ին տարին երկու անգամ: Նոյեմբերին ցորեն ցանում ին ջրովի տեղեր, իսկ փետրվարին գարի ին ցանում կամ գարնանացան ցորեն: Մայիսի 10-ից քաղում ին գարին, իսկ հունիսին ցորենն ին քաղում: Քաղած արտերի մեջ աղբ ին լցում, նոր ցանում ին կորեկ կամ բաջիկ, հավաքում ին հոկտեմբերի վերջ և նորից ցանում ին ցորեն:

Մեր գյուղի վառելիք ցախ էր, նրա համար թե՛ տվարի և թե՛ ոչխարի աղբեր լցնում ին արտերի մեջ տարին երկու անգամ՝ թե՛ աշուն և թե՛ գարուն:

Բացի հողագործությունից կամ գորարությունից՝ ուրիշ արհեստ չինք իմանում: Մի ուրիշ բան կար, որ մեր գյուղի մարդ ուրիշ շուկայից շոր կամ ոտնաման չէր առնի: Բամբակ կամ բուրդ կզգիք, կին կմաներ, տղամարդ կգործեր թե՛ մարդու շոր և թե՛ կնոջ: Նույնը և ոտնամանը, որը կկարիք մազից և կանափից: Նրան ասում ինք ոչիկ կամ վոչիկ⁵²: Ռշիկ շատ կակուղ և դիմացկուն ոտնաման է մեր սարերի համար: Չարուխ հագնել սովորություն չկար մեր մեջ: Մեկ-մեկ ծերերի համար կպատահեր, որ Վանից կամ Բաղեշից սուլ⁵³ ին առնում, բերում:

Երկաթագործ չկար մեզ մոտ, մանգաղ կամ կացին Վանից ինք առնում, բերում: Մեր ջաղացի ցից,

որ կտրում էր, ջաղացյան շալակում տանում էր Մոկաց շուկան, սարքում: Այդ բոլորի պատճառ տիրող դասակարգի բռնակալ օրենքն էր, որ թույլ չէր տա, որ դպրոց կամ արհեստանոց բանային, որ ժողովրդի աչք բացվի: Ժողովրդին պահում ին միշտ խավարի մեջ: Չնայած այդ ճնշումին՝ ոզմեցին ուրիշների նման գլուխ չէր պահում, չէր լսում գոռոզ աղաներին, միշտ կռիվ կար մեր և նրանց մեջ: Ճիշտ է, կուլտուրապես չէ, համա տեխնիկապես չկարողացան մեզ ենթարկեն իրենց կամքին:

Լեզու. մեր ամենավատ բանը մեր լեզուն էր, որ ուրիշ տեղեր չին հասկանա⁵⁴ մեր խոսակցություն: Բացի Մոկաց գավառից՝ ուրիշ տեղեր ծաղրում ին մեր լեզուն, չնայած որ մաքուր հայերեն ինք խոսում: Օրինակ՝ ջուրին ասում ինք ջոր, հացին՝ հաց, մածունին՝ մածոն, կնոջ՝ կնեկ, տղին՝ լաճ, այծին՝ էժ, եզան՝ եզ, ոչխարին՝ ոչխար, հայրիկին՝ բարե, հորեղբայրին՝ կակո, դեղձին՝ խոխ, ծիրանին՝ ծերան և այլն, իսկ գրական կողմից բոլորովին գրկված ինք:

Իսկ մեր կատան լեզուն ոչ ոք չէր հասկանա, մինչև անգամ մեր կանայք: Մեր լեզուն կոչվում էր դպրոդերեն լեզու, օրինակ՝ կանթ՝ կին, կծիկ՝ աղջիկ,

52 Ռշիկը (վոչիկ) կանեփից ու մազից կարված տրեխ է:

53 Փայտե կոշիկ:

54 Ոզմեցիների բարբառի վերաբերյալ գրվել է. «...ստոնց բնիկ բարբառը, գոր մարդ լսած ասեն չպիտի կարծե՛թ հայերեն է, ունենալով տարօրինակ շեշտատրումներ եւ արտառոց հնչյուններ» (**Լեզուսան Խ.**, Ոզիմ եւ ոզմեցիք, «Կուչնակ», 1914, № 35, էջ 825):

խոսակցի՝ հարս, դժո՞ւմ արդ, տալո՞ւ հաց, ծկնահոգի՞ ջուր, կոռքեան՝ անեղ, դժո՞ւմ վարեց՝ մարդ եկավ, կոռ վարեց՝ քուրդ եկավ, խոզ՝ հայ, առկող՝ ասորի, քոչ՝ աղա կամ բեկ, ցռուկ՝ տղա, կոռ մուսկեց՝ քուրդ տեսավ, պարկիպուջախ՝ թուրք, տիպ՝ լավ, անտիպ՝ վատ, կակուղ վարեց՝ բուրդ գողցավ: Այսպես էր մեր դպրոներեն խոսելու ձև⁵⁵:

Պատվախնդիր ոգմեցիներ. մի քանի խոսք նամուսի մասին գրեմ, թե կարող է մեր գյուղից շատ երիտասարդներ հետաքրքրվեն, թե ինչպես էին ապրում մեր պապերը, մեր ոգմեցիք: Մեր գյուղ շրջապատված էր քրդերով: Ես, որ գյուղից դուրս եկա, երեսուն տարեկան կլիներ: Քսանուհինգ տարի է արդեն, լավ կհիշեմ: Շատ բան եմ լսել մեր մեծերից, շատը Գռնկանց Մուրադից, որ ամենամեծն էր իմ տեսած ծերերի մեջ: Նա հարյուր քառասունի մեջ էր: Պատմում էր. «Ես տեսա, որ մեր կողմեր թուրք կառավարություն չկար, երկիր տիրում են ազիզանցիք, բայց Բատիրխան բեկ մեր գյուղ լավ էր պահում թե՛ տուրքից և թե՛ նամուսի կողմից, իսկ նրան, որ աքսորին, նոր մեր գյուղ ընկավ թուրքի ձեռք: Նրանից հետո նոր էս ասեանցիք դուրս եկան, մարդ դարձան, բայց պետք է ասեմ, որ նամուսի կողմից սրանք էլ լավ են եղել մեզ հետ: Մուտ չեմ կարող ասել, բայց իմ տեսած ժամանակ մի բան պատահեց: Մեր գյուղացի Բադո Հակոբ իր տուն տարավ մեր գյուղին մոտիկ Կոջոխս⁵⁶ հայի գյուղ: Ինք կտավ, շալ գործող էր, այնտեղ շատ գործ կար: Իր ընտանիք տարավ Կոջոխս՝ իր մոտ: Կոջոխս Մոկաց գավառի մեջ է ընկնում, բայց մեր գեղից շատ մոտ է, մի ժամվա ճանապարհ է: Կտավ գործող Հակոբ թե՛ քրդերի և թե՛ հայերի հետ ծանոթ էր: Ամեն տեղից իրենց կտավ կամ շալ բերում են, տալիս Հակոբին, մանածը թողնում են նրա մոտ, երբ որ գործեր, գալիս, տանում են: Հակոբը մի տղա ուներ, անուն Չատո, տղան պսակված էր: Հակոբի հարս մեր գյուղացի էր և մի քիչ սիրուն: Մի օր Դահեր աղայի տղան, որին ասում են Քաչալ Հաքիմ, գալիս է Կոջոխս գյուղ: Հանկարծ աղբյուրի մոտ նրա աչք կպնում է Հակոյի հարսին: Քաչալ հարցնում է գյուղացի մի կնոջից, թե այս կին վի՞ր տանից է: Կին միամիտ ասում է, թե դա ոգմեցի ջուլիակ Հակոյի հարսն է: Քուրդ իր մեջ որոշում է, որ ինչ գնով լինի,

ես այս կնոջ պետք է փախցնեմ, տանեմ, ինչ ուզում է թող լինի: Քաչալ Հաքիմ երկու օր մնում է գյուղում, որ հարմար ժամանակ վերցնի կնոջը, և փախչին, բայց իր խոր մոտ չի տանի: Ինք իմանում է, իր խեր չի թույլ տա, որ իր տղան ոգմեցու պատվին դիպչի: Եթե Դահեր աղան լսի, տղային կմորթեն: Նա չի ուզում, որ ինք թշնամի դառնա հայերին կամ անոթով մնա քրդերի մեջ, որ չասեն, թե Դահեր աղան իր տղային ուղարկեց ոգմեցու հարսին փախցրեց, տարավ: Մանավանդ, որ իր մոտիկ հայի՝ Բադոյի բարեկամի հարսն է: Բայց տղան ուրիշ է մտածում. «Ես այս սիրուն կնոջ կառնեմ, կտանեմ Խարզանի կողմեր, քրդերի մեջ կմնամ, խերս ինձ չի կարող պնդել տա»: Քաչալ Հաքիմ որոշում է անպատճառ գիշեր մտնի Հակոյի տուն և գռռով հարսին տանի: Հակոյի տղան փոքր էր, չէր կարող խոսել աղայի դեմ, իսկ Հակոն խեղճ մարդ էր, ի՞նչ կարող էր անել քրդին: Բայց գյուղի հայեր, որ իմանում են, անմիջապես հարսին տանում են և ուրիշ տեղ են պահում, իսկ Պետրոս անունով մի մարդ հարցնում է աղային, ի՞նչ գործով է եկած իրենց գյուղ.

–Այս երեք օր, եթե գործ ունիս, ասա, կկատարենք, աղա՛, քեզ դուրբան:

Աղան նրան իր միտք պարզում է, թե.

–Դու ինձ հավատարիմ հայ ես, ես որոշել եմ, որ կնոջ տանեմ, բայց դու պետք է ինձ օգնես, Պետրոս՝ քիրվա:

–Չեմ կարող, աղա՛, – ասում է Պետրոս, – վաղ, որ ոգմեցիք իմացան, ինձ կսպանեն: Այդպես գործ լավ չէ նաև քո կամ հորդ պատվի համար:

Բայց քուրդ չի լսում նրան և պատրաստվում է, որ տանի կնոջ: Հայեր վախում են, որ խոսեն: Մի կին վեր է կենում, գյուղափ գալիս է մեր գյուղ, որ իմաց տա Հակոյի բարեկամներին: Առաջ գալիս է մեր տուն՝ խորս մոտ, որ Հակոյի խնամին էր: Խորս ասում է, թե այսպիսի բան կա, թե կարող եք կնոջ ազատեք այն գազանի ձեռքից: Խերս մեր գյուղի քաթիբն էր: Նա գնում է Հակոյի հորեղբայր Բոժկանց Բադոյի մոտ: Նրան հայտնում է կնոջ պատմած: Լավ էր, որ մենք բոլորս գյուղն ինք: Մեկ էլ տեսա, որ Բադո խորս հետ եկավ ինձ մոտ, ասին, թե Քաչալ Հաքիմ ուզում է Ոգմա Հակոյի հարսին փախցնի տանի, վեր կաց, գնա՛ Ծահենի հետ, գուցե մի միջոցով հարսին ազատես, բերես գյուղ: Ես, որ լսա, խելքս թռավ գլխիցս: Ես լավ գիտեմ Քաչալին, իմ թայ տղա է, նա գա, գռռով մեր գյուղի նամուս թափի, էլ ինչո՞ւ եմ ողջ մնացել: Այն ժամանակ վեց կրականոց մի ատրճանակ ունեի, իմ կարծիքով աշխարհի տերը ես իմ, ուրիշ մարդ չկա, ջահելի խելք էր: Մի քիչ մնաց, Ծահեն եկավ, նա էլ մի ատրճանակ ուներ: Հայրը՝ Բադոն, շատ էր սիրում Ծահենին, չէր ուզում, որ չար գործի մասնակից դառնա, բայց Ծահեն չի լսեց հորը, ինձ հետ համաձայնեց, որ միասին գնանք Հակոյի հարսին ազատենք, բերենք մեր գյուղ: Ինչ լինում է թող լինի: Շատ մարդ

55 Ոգմեցիների գաղտնի բարբառի վերաբերյալ գրվել է. «...իրենց բուն լեզուի բառերեն գատ ունին նաեւ արգողիք բարբառ մը, որ կը գործածեն օտարականներուն առաջ անոնցմէ անհասկանալի մնալու համար, մանաւանդ երբ պանդխտութեան մէջ իրենց բուրդգգութեան արհեստն ի գործ դրած միջոցին հարկ կըլլայ նոյն բուրդին կամ ուրիշ բաներին խոռումներ ընել՝ գողնալով: ...ասոնց բառերը 500էն աւելի են» (**Առնետան Խ.**, Ոգիմ եւ ոգմեցիք, «Կոչնակ», 1914, № 35, էջ 825): 1911-1912 թթ. լինելով Մոկսում՝ Հովսեփ Օրբելին կազմել է գգրարների այս գաղտնի բարբառի բառարանը (**Օրբելի Ի.**, *Избранные труды*, т. II, Ереван, 2002, с. 355-358):

56 Ավելի հաճախ հիշվում է Կոնոս ձևով: Գտնվում է Ոգմ գյուղին գրեթե դեմ հանդիման՝ Մոկացքի աջ կողմում:

կար մեզ հետ գալող, բայց խերս չուզեց, որ շատեր իմանան: Արև բավական բարձրացել էր, որ գյուղից դուրս ելանք: Մի ժամից շուտ հասանք Կոջոխս գյուղ, բայց մեզ նկատել ին՝ գյուղի հայեր: Կամուրջ անցանք թե՛ չէ, հայեր աղային խաբին, տարան Խոչիկի տուն, ու մորթին նրա համար, պատիվ տվին աղային, իսկ մենք մտանք գյուղ: Աղեն մեզ չի նկատեց, թե ինչ մարդ են եկողներ: Մենք մտանք Ձետոյանց տուն, հարցրինք, թե որտե՞ր է Քաչալ աղան: Ես միտք ունեի, որ աղին պոնենք, տանենք մեր գեղ, բայց Շահեն թույլ չտվեց ինձ:

«Գործ չունես, – ասավ Շահեն, – մենք նրա հետ կխոսենք, հետո դու գործ չունես, խերս Դահեր աղայի հետ կխոսի, ես գիտեմ, թե ինչ կանի նրա գլուխ»: Համաձայնեցի Շահենի հետ: Առանց կովի հեռացանք գյուղից: Հակոյի հարսին վերցրինք մեզ հետ, իջանք կամուրջ, որ կառուցված է Մոկաց գետի վրա: Հասանք Բմբանց ասած սարի տակ: Քաչալ աղեն իմացավ: Վերցնում է այնալի հրացան, դուրս է գալիս տանից և հարցնում է մի պառավի.

– Ո՞վ էր, որ համարձակվեց այդ կնոջ տարավ: Պառավ պատասխանում է.

– Մեկ Մուխսի Մանուկի տղան էր՝ Ամրոն, մեկ էլ Բաղդոյի տղա Շահեն, թե տղայ ես, գնա՛, հասի՛ր նրանց հետևից, որ քու բուրդ զգեն: Նրանք ոգմեցի են, ոչ թե մեր Կոջոխս գյուղացոց նման, որ դու գաս ու վերցնես, ուրիշի նամուս գետին տաս, մարդով կնիկ տանես: Չես էլ ամաչում, գոնե հորիցդ ամաչի, տղա ես, գնա հետևից, նրան կատղած Ամրո են ասում:

Քուրդ տեսնում է, որ ձեռք բան չի հասնի, գյուղացիք անպատվում են, թողնում, հեռանում է ականջներ կախ կցած էջի նման: Գնում է, բայց ուրիշ մարդու բան չի ասի, մինչև որ մեր գյուղից Բաղդոն իմաց է տալիս Դահեր աղային: Լամուկ մի շաբաթ տուն չի գալիս: Հեր իմանում է, թե տղան, որտեղ է, մարդ է դրկում և տղային տուն է բերում: Սկսում է հարցնել, թե որտեղ էր այսքան ժամանակ: Տղան չի կարող պատասխան տա հոր կամ մոր հարցերին: Մեր թքում է երեսի մեջ, ասում է.

– Լակո՛տ, քուրդի կջա չկա, որ գնացել ես ուրիշի նամուսն ես թափում, մերն էլ հետը: Գնացել ես մարդով կնիկ տանե՞ս: Մեռնիս ավել լավ է, քան թե անամոթ ապրես:

Իսկ նրա հայր կասյում է ոտ ու ձեռ, զգում է զնդան (բոլոր աղաներ ունեն, չար մարդուն զգում են նրա մեջ): Աղի բարեկամները միջամտում են, նոր տղային ազատում են:

Հերն ասում է.

– Մեր Բարվարի գավառի մեջ մի քուրդ, որ հայի պատվին դիպչի, նրան կսպանեն, իմ տղան լինի կամ ուրիշ տղա, մեկ է ինձ համար, մեր պապերի ժամանակ չի եղել, չի պետք է լինի: Բա դու չես ամաչում, զնում ես, ոգմեցու կնիկն ես փախցնում: Դու լավ իմացի, որ իմ ծանոթի տղան չի լիներ, քեզ

չան պես կատակացներ Մուխսի Կոթոյի տղան, դու նրա ձեռքից քեզ չէիր ազատի, բայց բախտ ես ունեցել, որ մեր Բաղդոյի տղան հետն է եղել:

Մեր Ոգմա տղաներ ինձ մեղադրում ին, թող դու այն լամուկին սպանեիր, թող քրդեր գային մեր գյուղ վառեին, մեզ կոտորեին, որ մեկ էլ քուրդ չի համարձակվի մեր գյուղի անուն կոտոր գցի: Բայց մեծ մարդիկ ասում ին. «Ապրես, շատ լավ ես արել, որ խաղող ձևով ես գործ վերջացրել, կարիք չկար, կրակի հետ չեն խաղում, ժամանակ խառն է, Մուխսան Համիդ նրանց կողմն է կանգնած: Հայը եպիսոպոս է, ինչ ժամանակ որ ուզեն, կուտեն, հայն ինչ է, որ քրդի հետ գլուխ տա»:

Ինձ շատ մեղադրում էր խերս, թե՛ «քու ինչ գործն էր, որ քեզ դուշման շինեցիր այն էլ Դահերի տղայի նման մի կատղած մարդու: Բոլոր գյուղացիք քեզ գովում են, բայց թե մի բան պատահի, բոլոր քեզ կմեղադրեն, մեր տուն կվառեն, դու ծուռ ես, ծուռ էլ կմնաս»: Խերս վախում էր, որ Դահեր աղան մեզ կտուգանի, քանի որ մեր տուն պատկանում էր Մահմատ աղայի թավալային: «Մենք Մահմատ աղայի հայերն ենք», – ասում էր խերս, բայց խորս կասկածներ անցան, երբ որ Դահեր աղեն իմաց տվեց, թե «Շատ լավ եք արել, որ ձեր պատիվ պաշտպանում եք: Ես իմ տղային շատ եմ ծեծել այն բանի համար, որ նա իմ պատիվ գետին տվեց, ձեր խաբրին կպավ: Դուք իմ կողմից հանգիստ եղեք»:

Ես չեմ լսած, որ ոգմեցոց պատվին դիպչեն:

Ոգմի դպրոցը. ո՛չ դպրոց⁵⁷ կար, ո՛չ էլ դասատու: Բռնակալ քրդեր, աղաներ ճնշում, չին թողնում դպրոց բացինք: Նրանք ասում ին, որ եթե հայեր դպրոց բանան, կդառնան ֆիտայի, էլ մեզ չեն լսի, պետք է հայերին միշտ մութ պահենք, որ ենթարկվեն թե՛ մեզ և թե՛ կառավարության: Նրա համար էլ մեր Ոգմ կուլտուրապես շատ հետ էր մնացել Մոկաց և Խիզանի գավառներից:

Մեր գյուղական քահանան ձեռագիր կարդալ չգիտեր: Նա մի կերպ սովորել էր ժամագիրը կարդալ, այն էլ խաղի նման էր սովորել: Մի երկու մարդ կային, հագիվ տասն անգամ տասն ին իմանում հաշվել: Նրանք էլ Վանի կողմերն են սովորել:

Նրանցից մեկը խերս էր, որ գյուղում քաթիպի⁵⁸ պաշտոն էր կատարում, իսկ մյուսն Ավկաց Մանուկն էր: Թե գյուղ նամակ գար, նա էր կարդում, ուրիշ մարդ էլ չկար: Մենք ի՞նչ լեզու պետք է սովորինք, մի ուրիշ հանգամանք և՛ մեր գյուղին սովորող չկար:

57 Ոգմում դպրոց չլինելու վերաբերյալ գրվել է. «Դպրոցական հաստատություն համար գրեթե անտարբեր են, եւ ասոր համար քանիցս բացուած դպրոցները հիմ բռնած չեն հոն: Մանուսակո որ անոնք «կարդացուոր»ի վրայ բնու համարում չունին եւ զանոնք անաստուածներու հոմանիշ կը ճանչնան, եւ այսպիսի գործի համար դրան տալ չեն ուզեր» (Լեւոնեան Խ., Ոգմն եւ ոգմեցիք, «Կոչնակ», 1914, № 35, էջ 824):

58 Գրագիր:

1910 թվին Վանի առաջնորդի կողմից մեր գյուղի խնդրանքով մի վարժապետ ուղարկվին: Մի ծնեռ պարապեց պատանի տղաների հետ, բայց աղջիկների տերեր թույլ չտվին աղջիկներին սովորելու:

«Մեր աղջիկներ, – ասում ինձ նրանց ծնողներ, – կդառնան անամոթ, մեզ չեն ենթարկվի»:

Տղաներ լավ էր, առարկող չեղավ շատ, չնայած որ շատեր հոժար չէին: Վարժապետի շորեր մեր շորերի մեջ չէր, վարտիք նեղ էր, գլխարկը քոլոզ չէր, ֆես էր, նրա համար էլ մեր կողմի աղեք ասում ինձ, թե ոգմեցիք ֆիտայի են բերած, որ իրենք դառնան գավուր, անհավատ, նրա համար նորից թշնամություն ծագեց մեր և Բարվարի աղաների մեջ: Մա ավելի վատ դուրս եկավ, ասում ինձ մեր գյուղի մեծ մարդիկ, հինա ջրից էլանք, ընկանք ջրհեղեղ:

Մի քանի չուգող մարդ էլ մեր գյուղից բամբասին վարժապետին: Խեղճ մարդ գարուն թողեց, փախավ Վան: Էն գնալն էր, որ գնաց, էլ վարժապետ չտեսանք մինչև մեր վերջին գաղթը:

Հարսանկան սովորությունը. ուրիշ տեղից աղջիկ բերել հարս կամ մեր գյուղից աղջիկ տալ սովորություն չկար: Մեր մեծեր ասում ինձ՝ գյուղի աղջիկ գյուղի տղին կհասնի⁵⁹:

Երկու մարդ, որ կատան ինձ գնում, իրար հետ խոսում ինձ, թե քեզ աղջիկ եղավ, տաս իմ տղին, թե ինձ աղջիկ եղավ, քեզ տղա, ես կտամ քո տղին: Կամ կանայք, որ բեր են գնում ոչխար կթելու, նրանք խոսք ինձ տալիս իրարու: Շատ մարդ իր տղին կպսակեր անչափահաս, կար մինչև անգամ, որ շալակով կտանին եկեղեցի՝ պսակելու: Նշանդրեք կատարվում էր տերտերների ներկայությամբ, եթե չի հասե, տերտեր չէր պսակում: Այն ժամանակ տանում ինձ Հակոբ⁶⁰, մեր հարևան գյուղի տերտերի մոտ, որ հաս կամ չի հաս չէր հարցնում, թույլտես կպսակում էր:

Հակոբ գյուղ մեզինց դեպի արևմուտք մի ժամով ճանապարհ է: Տաս կամ տասնհինգ տնտեսություն էր Հակոբ գյուղ: Բոլորը աղաների հողեր ինձ նշակում, որ իրենց գյուղի մեջ էր: Ժամանակին աղաների պապերի պապեր կան փողով, կան գոռով ինձ առած հայերից: Մենակ մեր Ոգմ գյուղն էր Բարվարի մեջ, որ քրդեր մաս չունին և չունեցան մինչև վերջ: Նրա համար դուշման ինք դարձեր բոլորին՝ թե՛ աղաներին և թե՛ քրդերին:

Մեր գյուղ, որ հարսնեմիս լիներ, քուրդ մեր գյուղ չէր մտնում, որպեսզի հարբած մարդ չտեսնի, բայց բարեկենդանի հաջորդ՝ երկուշաբթի օրը գալիս ինձ

59 Նշյալ փաստը հաստատվում է մեկ այլ աղբյուրով. «...ստարներու հետ խնամութիւն չեն ընէր, միայն բացառիկ պարագայերուն կը համակերպին ակամայ: Ասոր համար նոյն ամբողջ գիւղացիները խնամիական կապերով կապուած են իրարու հետ – մօտ կամ հեռու ճիւղագրութեամբ» (**Լեւոնեան Խ.**, Ոգիմ եւ ոգմեցիք, «Վոչնակ», 1914, № 35, էջ 824):

60 Մինչև 1915 թ. հայաբնակ Հակոբ (Հակոբկ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Միերդ գավառի Բարվարի գավառակում: Միառժամանակ եղել է Մոկս գավառի մեջ:

և մնացած գաթա, հավա հավաքում, տանում ինձ, որ պասին մենք չենք ուտում, բայց գինի չին խմում: Մեր գյուղի մարդիկ խմող չեն շատ, մնակ հարսանիս, որ պատահեր, շատ ինձ խմում, թե չէ ուրիշ ժամանակ չեն խմում: Հարսանիսն էլ լինում էր բարեկենդանին, մինչև մարդիկ կատանից վերադառնան տուն, այն ժամանակ նոր սկսվում էր քեֆ-ուրախություն: Երկու շաբաթ տևում էր: Նրանք մեզ արգելում ինձ մինչև անգամ խոզ սպանել, չոլից չի բերենք գյուղ, հանկարծ եթե պատահին խոզին, պրծավ, էլ մի տարի հաց չեն ուտի մեր գյուղից: Ասում ինձ՝ «Հայերի գոշտե խնգեր խարընա⁶¹, նրանց հաց հարամ ա», բայց այդ մեզ օգուտ էր: Չի նայած մենք խոզի միս կերող չենք, բայց դիտմամբ ասում ինք նրանց, որ շատ չի գան գյուղ:

Մեր գյուղ հարսանիք չկար ուրիշ տեղից մարդ կանչել, որովհետև մեր ծաղով⁶² մեր փեսին նվեր կտար մեկ իր քրոջ մարդ, մեկ էլ հորեղբոր փեսեք, այն էլ մեկ մաջեթիա, իսկ մնացած գյուղացիք ոչինչ չեն տա: Մեր գյուղի հարսանիք լինում էր բարեկենդանի օրեր: Քանի մարդիկ կատանից չեն վերադարձի, մարդ չէր պսակվում: Հարսնատեր երեկոյան կանչում էր իր մարդկանց և բոլոր գյուղացոց և ասում. «Խաղտուն⁶³ կամ Կանտալունց տուն»: Բոլոր գյուղ պետք է հավաքվին այնտեղ, մարդ, կին, բարեկամ կամ չարկամ պարտադիր ինձ հարսանեաց տուն լինին: Երեկոյան հաց ուտելուց հետո փեսի հեր կամ հորեղբայր քավորի և մի քանի մարդի հետ գնում ինձ հարսի խոր տուն՝ նաղ⁶⁴ տալու կալան:

Բարև տալուց հետո քավոր կամ փեսի խեր ասում է.

–Խնամի՛, իրավունք կա՞ նստելու, թե՞ չէ:

–Բարով, հազար բարի եք եկել, համեցե՛ք:

–Խնամի՛ Խաթուն, դու ի՞նչ կասես, իրավունք կա՞ նստել:

–Կա ու կա, խնամի՛, իմ ջուխտ աչքի վրա տեղ կա ձեր համար: Բարի մարդ թող շատ գա, մեր տուն մեծ է, մեր սիրտն էլ բաց է:

Նստում են: Մեղան պատրաստ է, խնամիք նստում ինձ, խոսք քավորինն է: Քավոր խոսում է.

–Խնամի՛ Մարտո, խնամի՛ Գուլե, մենք եկեր ինք ձեր տուն, լսեր ինք, որ ձեր տուն մի հաստ կարմիր խնձոր կա, կուզինք տանինք մեր Մանուկին, որ խոտ քաշի, հոժարեք, կնստենք, հոժար չեք, ես չեմ նստում:

–Հոժար ինք, քավոր՝ աղա, նստի՛ր:

Քավոր նստում է: Քահանան Մաշտոց բացում է, այստեղ-այնտեղ նայելուց հետո խոսում է.

61 «Հայերի մոտ խոզի միս են կերել»:

62 Ծաղ 1. փեսային խոնջալով բերված ընծա, 2. նվեր, որ հարսանիքի վերջում հրավիրյալները տալիս են փեսային:

63 Նորափեսայի տունը հարսանիքի առաջին երեկոյին, որտեղ հավաքվածները պարում են:

64 Գրամ:

–Մարտո՛ւ, տղե՛ս, օրենք չկա աղջիկ ծախելու, բայց աղջկա մոր ծիծ տալու և չարչարվելու համար մեր մեջ օրենք կա, քու աղջկան նաղդ տալու համար: Իրավունք ունիս խոսելու: Ասա՛, մի՛ ամչնա:

–Տե՛ր հայր,– ասում է խնամին,– դու գիտես, որ մեր գյուղի իրավունք՝ աղջկան նաղդ երկու ոսկի է, էլ ի՞նչ ես ասում: Մի աղջիկ է, ձեզ դուրբան, մեկ մաջեթիան էլ հարսնաքրոջն է, տասը դուրուշ էլ տոնտանակն է: Հիմա մնաց հարսի աղբոր պահանջ, էն է կանգնած է դռան մոտ:

Խնամու պահանջ տալուց հետո աղջկան տեր ասում է.

–Մնաց Քեռկե Լաոն (ջահել տղաների ու):

Խնամիք մինչև նաղդ ին կտրում, աղջիկ լաց է լինում փոքր լինելու պատճառով, իսկ տղի դուռ կովանդ⁶⁵ արդեն սկսված է: Կարոնց Հովհաննես կովանդաբաշի տեղ է գրաված, մինչև Վանոնց Հովհաննես նաղդ տալուց վերադառնում է կովանդի տեղ, իր պաշտոն հանձնում ին իրեն, որ միշտ կովանդ գլուխ նա էր մեր գեղի մեջ:

Մեր գեղին սովորություն չկար դիող-գուռնի: Մեկ բերանացի ասում ին, խաղում մինչև առավոտ: Կեսգիշերին ուռից⁶⁶ պսակ ին կապում՝ փեսայի գլուխ զարդարելու համար: Այդ պսակի կապելու ժամանակ բոլոր հարևանները չիր, չամիչ, թուզ, նուռ, գուզ ին բերում, լցնում տան մեջտեղ: Մի կողմից էլ թամադան բաժանել է տալիս ժողովրդին: Վերջանալուց հետո մի քանի մարդ վերցնում են փեսային, տանում են աղբյուր լողացնելու: Չմեռ, պաղ ջուր, փեսայի շորեր հանում են, տկլոր մտցնում են սառը ջրի մեջ: Ջահելներ թափում ին գլխին: Ամեն մարդ ութ թաս ջուր է լցնում վրան: Մեծեր ասում ին՝ ինչքան շատ ջուր լցնին, այնքան մարդ պինդ կմնա, համա փեսեն շան մման դողում է, մինչև տուն հասնի: Բայց նորից չին թողնում, որ հանգիստ մնա: Բավական ժամանակ դուրս պարտում ին, հետո բերում ին տուն, նստացնում աթոռին, որ գլուխ թրաշեն: Ութ մարդ հերթով թրաշում ին փեսայի գլուխ, մինչև մաքրում ին:

Լույս բացվելու պես նորից հավաքվում ին, մի քիչ ուտում, խմում: Պարելով վերցնում ին փեսին: Մարդ-կին խաղալով գնում ին հարսի խոր տուն՝ Քեռկե Լաոյի միս ուտելու: Այնտեղից հարս տանում է փեսի գամակ: Հետո փեսեն դռշին պնում է ավետարան: Պարելով շարժվում ին դեպի եկեղեցին: Ժողովուրդ սկսում է պարել եկեղեցու դուռ, իսկ հարս ու փեսեն քավորի և մի քանի մոտիկ ազգականի հետ մտնում են եկեղեցին: Հարս, փեսեն կանգնում ին իրար կողք, քավոր թուր խաչմերուկ պնում է նրանց գլխին մինչև տերտեր իր կարգ կատարում է: Հետո հարց է տալիս առաջ փեսին.

«Որոյա՛կ, քոռ է, անգան, տե՛ր ես»: Փեսեն գլուխ կախում է, նրա փոխարեն քավորն է ասում. «Այո՛», իսկ հարսի փոխարեն հարսնքոր պատասխանում է. «Այո՛, տեր եմ»: Պսակ վերջացավ: Դուրս են գալիս եկեղեցու դուռ: Հարսին ու փեսային տեսնելուն պես չորս կողմից սկսում ին կրակել հրացանով, ատրճանակով: Այսպես բերում ին փեսի տուն: Այդտեղ նրան նստացնում ին մի աթոռի վրա՝ քավորի կողքին, փեսան իրավունք չունի նստելու, մարդկանց հետ հաց ուտելու կամ գինի խմելու: Խաց ուտելուց հետո բոլոր գնում ին քավորի տուն իր կանչելով: Նրանից հետո փեսի բոլոր ազգականներ մեկ ու մեկ կանչում ին իրենց տներ, մինչև երեք օր:

Մի սովորություն լավ չէր, որ հարսին եկեղեցուց փեսի տուն բերելուց հետո գիշեր չին թողնում փեսայի տուն: Երեկոյան վերադառնում էր խերանց տուն մինչև երեք օր, հարսանիք վերջանա: Հարսին կնիկներ ին անում խաղ, իսկ փեսին՝ տղամարդիկ: Փեսան պնում է քավորի ձեռք և սկսում են.

«Թագվոր, ի՞նչ բերեն քեզ մման,
Սոսի բաբոն, որ ծաղկում ա,
Դուն էլ ծաղկես նրանց մման:
Կարմիր վարդն, որ բացվում ա,
Բացվա քո արևիդ մման:
Գոլսոր կակաչ, որ բացվում ա,
Դուն էլ բացվես նրանց մման:
Անթառամ ծաղիկ, որ ծաղկում ա,
Բացվա քո արևիդ մման և այլ:

Կանանց երգ.
Վիր իլի, հա՛յ, վիր իլի,
Թագավորի մեր, վիր իլի,
Քի գլուխ դմփողն իմ բիրի,
Աման լվացող իմ բիրի,
Քի գոլի կազեն իմ բիրի,
Լեզուն ութ գազ իմ բիրի,
Թագավորի մեր, վիր իլի⁶⁷»:

Այսպես շարունակ ասում ու խաղում ին մինչև ութ փաթ թոնդրան բոլոր ման գան, ութ հատ բոքոն հաց հարսի գլխին պահած քավորկնոջ ձեռքով:

Մեր գեղի նորահարս կեսրարի, կեսրոջ հետ խոսում էր, բայց իր մարդի հետ չէր խոսի ուրիշի դեմ: Մեր մոտ նոր հարս երես չէր ծածկում, բայց առհասարակ մեր մոտ կին մարդի հետ հաց չէր ուտում, թե կուզա վաթսուն տարեկան լիներ կին:

65 Կովանդ (գովանդ)՝ շորջպար:

66 Խաղողի որթի կամ ուռենու բարակ ճյուղ: Ուռից պսակներ են հյուսում և գլխին դնում:

67 «Փեսի կովք» և «Թակավորի մեր» անվամբ այս երգերի ամբողջական տարբերակները տես **Օրբելի Ի.**, *Избранные труды*, т. 2, под редакцией П. М. Мурадяна, Ереван, 2002, с. 107-109. Այս երգերի այլ տարբերակները գրի է առել նաև Ս. Լիսիցյանը 1927-1928 թթ. գաղթական մոկսեցիկներից (տես՝ ՀԱԳ, ֆ. 428, ց. 4, գ. 104, թ. 100-102):

Բարեկենդան⁶⁸. Բարեկենդանի օր, հինգշաբթի մեր գյուղում, որ քեֆ ին սարքում, փաշա ին ընտրում մի մարդու: Նա պիտի գնար Մալմոտ դուռ, գյուղի մի քանի երիտասարդի հետ կանչում էր «Մալմոտ դուռ», բայց քարի միջից արձագանք էր գալիս, թե «Դուռ չի բացվի մինչև հինգ հատ գաթա, չորս դամաթ թութուն, մեկ ստիկ գինի, տասը դուրուշ փող չի բերես, դուռ չեմ բացում»: Փաշան խոստանում է տալ: Այդ ծախս ընկնում էր այն մարդու վրայ, ում փաշան բանտարկում էր: Փաշի անուն կանչում են Խոսրով փաշա, իսկ մի մարդ էլ ճշմանակում են փաշի պառավ: Փաշան հազնում էր փոստե կտորից կարած շարեր, իսկ պառավ՝ հին քոչոտ փալասի կտոր: Ընչու է, խաղը բոլոր հասարակության ուրախությունն էր, բայց շատ ժամանակ դառնում էր կովի տեսակ, եթե մեր գյուղում աղա կամ զավթիա էր լինում: Պատահում էր, որ գյուղի հասարակության լիագոր իրավունք էր տալիս ուրախության տոնին, որովհետև տոն կոչվում էր Վարդանանց տոն: Բարեկենդանի ավագ հինգշաբթի օր Խոսրով փաշան իր համար ընտրում էր տասը հատ դալուք, բոլոր ջահել մարդիկ: Նրանք, բացի մեկ վարսիքից, ուրիշ չոր չին հազնում: Գլուխ կապում են մի սև փուշի⁶⁹, ձեռք պռնում են դազանակներ, ոտներին ոչիկ են հազնում: Ինչ որ փաշան հրամայեր, դալուք պետք է կատարի, մի կողմից էլ մի քանի մարդ դառնում են կաշաղ՝ փաշին հակառակորդ: Փաշի քնելու ժամանակ մեկ էլ տեսար կաշաղներ պառավին փախցրին, տարան: Մինչև փաշին իմաց են տալիս. «Փաշա՛, քու պառավ չեկավ», կանչում է իր դալուքներ. «Շուտ գնացե՛ք, խնամիս գտե՛ք, բերե՛ք, տանողին կապե՛ք, բերե՛ք, գցե՛ք զնդան»: Ինչ մարդ, որ փաշան պռնում էր, նրա պատիժ քառասուն փարա էր կամ մի գաթա, իսկ աղաներին մի մաջեթիան, բայց աղին կամ զավթիին զնդան չէր գցում:

Մեր գյուղի փաշայի տոնի օր շատ աղաներ գյուղ են գալիս տեսնելու, թե ինչպես խաղ են խաղում ոգմեցիք, բայց միայն այն տարին, որ մեր և նրանց մեջ խռովություն չկար:

68 Բարեկենդանի տոնակատարության փոքր-ինչ այլ տարբերակը գրի է առնված 1911-1912 թթ. Մոկսում, տե՛ս **Орбели И.**, *Избранные труды*, т. II, с. 30-32. Տե՛ս նաև մոկսեցի գաղթականների պատումները՝ փոխանցված Ս. Լխիցյանին 1927 թ. (ՀԱԳ, ֆ. 428, ց. 4, գ. 103, թ. 40-41): Ըստ նրանց ասության՝ այս խաղը կոչվում էր Փաշա և խաղում էին միայն կիրակի օրը: Պառավի դերը տանում էր գյուղի տղաներից մեկը. «...ամեն օրան շինում է իրենց ծաղրի „փաշա, կամ „հաքիմ,, (դատավոր): Հազնում են մեծ-մեծ շորեր, տակից հաստ կտորներ, որ հաստ երևա, վրայից՝ մորթիներ, գլուխն էլ մի մորթի՝ շորով փաթաթած, ձեռքը՝ մեծ երկար շերեփ... վրան փեյին...: Նստեցնում արոռի վրա բարձր բարձր հաքիմին՝ գլուխը «ավտակ» կապած, նստեցնում են փաշայի կողքին և նրանց դատին կատարել տալիս: Բռնում են սրան-նրան, դատապարտում...» (ՀԱԳ, ֆ. 428, ց. 4, գ. 105, թ. 44):

69 Մետաքսե փայլուն թաշկինակ, որով կանայք գլուխներն են ծածկում:

Վարդանանց տոն. մեր գյուղի եկեղեցում Վարդանանց նահատակների հիշատակին տոն կար: Առավոտ պատարագին քաջերի անուններ հիշատակում էր⁷⁰:

Քահանայի և ծխականների հարաբերությունները Ոգմում. Մեր կրոն առաջ շատ խիստ էր, բայց երբ որ գնում ինք ուրիշ տեղեր, տեսնում ինք, մենք էլ թուլացանք: Ջահեկներ պաս չեն պահին, մնում ին պառավներ և ծերեր: Մի տարի գնացինք Խարբերդի կողմ գեղ անելու, տեսանք, որ այնտեղի առաջնորդ մեծ պասին ուտում է, ասինք.

—Հա՛յր սրբք, ինչո՞ւ պաս չես պահում:

Նա պատասխանեց.

—Որդի՛, ատամս ցավում է:

Ձմեռ, երբ որ կատանից վերադառնում ին գյուղ, մի օր մեր գեղի տերտեր Ազո Խաչոյի թև պռնում է ասում է.

—Օրչնած քու մեկ տղա թաղեր իմ, վարձ չես տված հարյուր փարա, քսան կոպեկ:

—Լավ,— ասում է Խաչո,— տու՛ր, ես քու երկու տղաներն էլ թաղիմ, մի կոպեկ չառնեմ:

—Անիծյալ մնաս:

Խաչո թողնում, հեռանում է: Տեր հայրը նորից դառնում է դեպի Խաչոն, ասում է.

—Ես իմ տված թաղում կզնահատեմ, Խաչո՛ տղա, չի մոռանաս, մեկ էլ կպատահի:

—Լավ,— ասում է Խաչո,— գուցե դու շուտ մեռնիս, քան թե իմ տղաներ:

Մեր գեղ մի կին կար, անուն Հերիք էր: Ասում ին Կրոն: Կրոն շատ գողություն էր անում: Ինչ որ հարևանի տուն մտեր, տեսներ, որ տուն մարդ չկա, մի բան վերցնում, տանում էր՝ եղից, չորթանից, փալասի կտորից, շորեղենից: Կրոնի բոյ մի մետրից ավել չէր, բայց լեզուն մի գազ էր: Վերջ հարևաններ բողոքեցին, նրա մարդ ամոթու թողեց Կրոնին, էլ տուն չի թողեց մտներ: Մի տարի անցավ, Կրոն իր խասեթ չի թողեց: Նրա մարդ ջահել էր, լավ ընկերներ ուներ: Մի օր նրան ասին. «Խալո՛, արի քեզ պսակենք»: Լսեց, և մի աղջիկ ճարին, որ Խալոյին պսակեն: Քսան ընկերով դիմին գյուղի քահանային, թե Խալոյին պսակի: Բայց քահանան մերժեց տղաների դիմում՝ ասելով. «Մարդ մի անգամ կպսակվի, եթե նրա կին ողջ է, ես չեմ կարող Զրիստոսի օրենքից դուրս պսակ կատարել»: Բայց տղաներ տերտերոջն ասին. «Եթե չես պսակի Խալոյին, մենք քեզ

70 Ըստ ոգմեցի Ասլան Ստեփանյանի՝ «Վարդանանց տօնը համարում էր հայրենիքի ազատութեան, քաջերի եւ գեղքի տօն: Գիւղացիք եկեղեցի էին գնում եւ խորին պատկառանքով լսում էին Վարդանանց շարականը՝ «Նորահրաշ պսակատր...»: Եկեղեցական արարողութիւնը վերջանալուց յետոյ երիտասարդները գիւղի կտուրները բարձրանալով, ի յիշատակ եւ ի յարգանս Վարդանանց նահատակաց՝ հրացանածօութիւն էին կատարում: Ոգմեցիների համար Վարդանանց տօնը ազգային եւ հայրենասիրական սրբազան տօն էր» (Ասլան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966):

կտանենք Աղթամար, մորուքդ խուզել կտանք»։ Տերտերոջ մարդիկ պաշտպանեցին տերտերին։ Շատ կովերուց հետո վերցրին Խալոյին, տարան Բորմա ասորի փաշայի մոտ, պսակին, բերին։ Տերտեր Խալոյին անիծեց. «Դու կռապաշտ ես, իրավունք չունես մեր եկեղեցին մտնես կամ երեխա մկրտես։ Ես քու տուն չեմ օրշնի, քեզ հաղորդում չեմ տա։ Դու դարձար մուսուլման»։ Այս էր մեր տեր Սիակի օրենքը։

Մի ուրիշ Մանուկ նշանված էր մի աղջիկա հետ չորս տարի առաջ, բայց աղջիկ փոքր էր, նրա համար չէր պսակվում մինչև աղջիկ դարձավ չափահաս։ Երկու թվին, մի օր պատրաստություն տեսավ, որ պսակվի։ Ամեն պատրաստեցին, երկու խաղտուն դրին, խաղացին, կերան, խման և ելան գնացին հարսի տուն, որ նաղդ տան, առավոտ պսակեն։ Գնացին, որ տերտերներին կանչին, բայց եկան ասին, թե մեծ տեր Սեփան տուն չի, իսկ տեր Սիակ ասում է.

–Չի հասա, ես չեմ պսակում։ Ես քանի անգամ ասի, թե տղա՛ Մանուկ, արի մեր Թանգոյի աղջիկ առ։ Նա չի լսեց ինձ, գնաց չի հաս Թարովոնդ նշանեց, հիմա ես չեմ կարող պսակել, ով որ կուզի, թող պսակի։

Այնինչ նրանց մեջ ոչ մի բարեկամություն չկար։

Ոզմա ջահելներ թափան տեր Սահակի տան դուռ.

–Շուտ դու՛րս արի, տղային պսակի, թե չի հիմա կրակ կտանք, տուն-տեղ կվառենք։

Բայց տեր Սիակ չկար, փախած էր տանից։ Բարեկամներ նրան տարել ին Կոչոխս գյուղ՝ Մոկաց կողմ։ Ջահելներ հարսանիք շարունակեցին մինչև առավոտ։ Գնացին, նաղդ տվին, ամեն ինչ վերջացրին առանց տերտերի։ Առավոտ փեսին տարան աղբյուր, լողացրին, պարին, կովանդ պռնին գյուղի մեջտեղ, ինաղու մի լավ քեֆով փեսին տարան հարսի խերանց դուռ, կանչին.

–Հա լրմն հաղթա հուն բուկի է քարզան⁷¹։

Հարսի ծնողներն ասում են, որ տերտեր չկա, ո՞վ է պսակող, որ մենք աղջիկ դուրս հանենք։ Բայց քավոր միջամտում է, և հարսին դուրս են հանում, տանում են ժամ։ Բոլոր գեղացիք զարմանում են, թե առանց տերտերի ո՞վ է պսակում։ Տղաներից մեկը՝ Շեխոնց Ղադրն, դառնում է տերտեր և Սբ. ավետարան կարդալով պսակում են, տանում են տուն։ Փեսան Լաթկենց Մանուկն էր⁷²։

Մոկաց գավառից Խրեք⁷³ գյուղացի Գուրո ամուսնով մի հարուստ մարդ եկավ մեր գյուղ։ Մեզի մի

հորեղբոր աղջիկ ունինք, որ ապրում էր Մոկաց Հավարիս⁷⁴ գյուղում։ Աղջիկ շատ տեսակով չէր, մարդ չէր հավանում։ Մեր գյուղացիք ասում ին դեխ աղջիկ։ Բայց շատ լավ աշխատող աղջիկ էր։ Այդ Գուրոյին կին ուներ, բայց երեխա չէր բերում։ Գուրոն ուզեց այն աղջիկ առնի, մենք հոժար ինք, եթե տերտեր պսակի։ Գուրոն դիմեց իրենց գավառի Կիթանց⁷⁵ գյուղի քահանային, թե ինք երեխա չունի, մի աղջիկ կա Հավարիս գյուղ, կուզի նրա հետ պսակվի, տեր հայր։

– Անունդ ի՞նչ է, օրշնամ։

– Գուրո, քեզ ծառա։

– Դու կին չունե՞ս։

– Ունիմ, բայց երեխա չի բերում։

– Լավ,– ասում է տեր Սարգիս,– չորս ոսկի կտաս ինձ, երկու ոսկի կտաս Աղթամարի վանքին, մեկ ոսկի էլ մոհրի⁷⁶ փող, մնացած ինչ որ նվեր կրերես ինձ, ան էլ դու կիմանաս։ Այն ժամանակ քեզ կպսակեմ, համա իմացի, որ շատ էլ լավ կպսակեմ, ուրիշի նման չեմ պսակի։ Դու լավ մարդ ես, ես քու անուն լսած իմ։

–Լավ ես ասում, տեր հայր, բայց ես այդքան փող չունիմ, որտեղից տամ։ Ես իմ ոչխար, տավար ծախեմ, այդքան փող չի հանի։ Ես չիմ կարող տալ քու պահանջած գումար, քեզ մի հատ ոսկի կտամ, պսակի, մի փութ էլ լավ պանիր, մի հատ էլ ոչխար մսացու,– ասում է Գուրո։

–Չի լինի, չեմ պսակում,– ասում է տեր Սարգիս։

–Ես գնում եմ պսակվիմ, դու ինչ կուզես արա,– ասում է Գուրո, հետ է դառնում իր տուն, կնոջ տանում է տուն։

Բայց մի տասը օրից հետո տեր Սարգիս նամակ է ուղարկում Աղթամար, բողոքում, թե այսինչ մարդ կին ունի, բայց մի աղջիկ գոռով փախցրեր, բերեր է տուն, ո՛չ օրենք կճանչի և ո՛չ էլ մեզ կենթարկվի, այսպես թե մնա, մենք կդառնանք քուրդ։ Միջոց ձեռք առեք, քանի շուտ է։ Աղթամարից մարդ են ուղարկում Մոկաց բեկին, Գուրոյին պռնում են, տանում Աղթամար և բանտարկում են։ Մի եպիսկոպոս երեք ոսկի է ուզում, որ կալանավոր Գուրոյին ազատի։ Բայց գյուղացին նրան էլ է մերժում, չի տալիս։ Մի օր մեր ոզմեցի վարդապետ տեր Գրիգորը Գուրոյին ասում է.

–Մի՛ վախեցիր, ես քեզ կազատեմ առանց փողի, դու մեր Ոզմա փեսացուն ես, ես քեզ կազատեմ։

Մի ամիս մնալուց հետո մեր գյուղացի վարդապետ նրան սովորացնում է լավ լող անել։ Երեք ամիս Աղթամար մնալուց հետո Գուրո լավ լողվոր է դառնում։ Մի օր վարդապետ նրան կանչում է, ասում.

71 «Շուտ արե՛ք, հարսին զարդարե՛ք, դուրս հանե՛ք, փեսան պատրաստ է»։

72 Ըստ հուշագրի՝ Լաթկենց Մանուկը երեք տղա ունի Դիտակ գյուղում։ Այժմ անվանվում են Հակոբյաններ։

73 Մինչև 1915 թ. մեծ մասամբ հայ բնակչություն ունեցող Խրեք (Խրքայ, Խրիպ) գյուղը գտնվում է Մոկա քաղաքից 11 կմ հարավ։

74 Մինչև 1915 թ. գերակշիռ հայ բնակչություն ունեցող Հավարիս գյուղը գտնվում է Մոկա քաղաքից 8 կմ հարավ։

75 Մինչև 1915 թ. գուտ հայաբնակ (Կայթանց, Գայթանց) գյուղը գտնվում էր Մոկա քաղաքից 11 կմ հարավ-արևելք։

76 Կնիք։

–Լավ, սովորար, հիմա լսի, այս տաշտակ առավոտ շուտ կնստես, քանի վարդապետներ քնած են, կքշես դեպի Քարադաշտ⁷⁷ գյուղ, այնտեղից կգնաս Մոկաց բեկի մոտ, նրան քու պատմություն կպատմես, նա քեզ թույլ կտա ազատ մնաս կեյթանցի տեր Սարգիսից:

Այնպես էլ արեց մեր փեսա Գուրո և ամուսնացավ, տղաներ ունեցավ, տերտերի աչքերն էլ մնաց բաց:

Այսպես էր մեր երկրի կենցաղ, մեր քահանի օրենք: Ժողովուրդ այնքան քրդերից չէր նեղանա, ինչքան որ իր հարս, փեսին առնում, ընկնում էր գյուղեր՝ տերտեր ճարելու:

Մի ուրիշ հարսանիս եղավ մեր 1902 թվին: Շերինանց Տիգրան և Շլիկնկապակա Ջուղոյի հարսանիս եղավ մեկտեղ: Մեկ չորեքշաբթի օր խաղաղուն արին, որ հինգշաբթի պակեն: Բոլոր գյուղացիք, բաժանված երկու մասի, սկսեցին ուրախություն անել. Տիգրանի նման տղա են պակում: Բոլոր գյուղացիք նրան հարգում են, ջահելների մեջ լավ դիսկոլ տղա է Տիգրան, իսկ մյուս Ջուղո շատ ազգական ունի գեղի մեջ: Նրանց թախում⁷⁸ մեծ է, բայց Տիգրանին ավելի շատ են սիրում երիտասարդներ: Վերջ խաղաղուն սկսեց: Կերան, խմեցին մինչև արլորականց: Երկու հարսնից տանից էլ երգով, խաղով, քեֆ ուրախությունով մտան տեր Սիակի տուն, որ օրշնի և «օրշնա ի տեր» ասեն քավորներ: Բայց գնացած մարդիկ չնստան:

–Շնորհակալ ինք, տերտեր ջան, եկած ինք, որ դու բարեհաճիս մեզ հետ գաս, գնանք նաղդ տալու՝ մեր երկու թանկագին ջահելներին պակելու համար: Պետք է վաղ առավոտ պակես:

–Շատ լավ,– ասում է տեր Սիակ,– բայց գիտեք, որ երկուսն էլ չի հասին. ո՛չ Տիգրանին պակ կհասնի և ո՛չ էլ Ջուղոյին, երկուսն էլ չհաս ին, ես չիմ կարող պակելի նրանց: Գնացեք մեծ տերտերի մոտ:

–Մենք մեծ տեր Սեփանին կբերենք, բայց գյուղի քահանի կնիք քու ձեռք է, մինչև որ չասիս, նա չի կարող պակ կատարի:

–Տերտեր, ոչ մի չհաս չկա ո՛չ Տիգրանի և ո՛չ էլ Ջուղոյի մեջ: Այդ բոլոր գունդ ու կծիկ ոչ թե տակն է, այլ ձեր Քոսենց մեծերի պլանի մեջն է: Մենք կպակենք և մեր հարսանիք կշարունակենք: Ժամանակին դու կզոջաս և լավ իմացիր, որ ինչքան վնաս պատահի, բոլորի մեղք քու վիզն է ինկնելու: Պատճառ պարզ է, տերտեր, մենք գիտենք, որ Ջուղոյի նշանած ձեր Քոսենց հարս էր՝ Սահակի նշանած, բայց քանի Սահակ մեռած է, աղջիկ խում չի մնա հոր տուն: Էլ ուրիշ պատճառ մի՛ պոնիր, թե չհաս են: Լավ իմանաս, որ դու կլինես գյուղի քան-

դելու, վնասելու պատճառ,– ասում է Տիգրանի հորեղբոր տղան՝ Խանեսկանց Վարդանը:

–Ես չեմ պակում, դուք գնացե՛ք, որտեղ որ ուզում եք, բողոքեցե՛ք,– ասում է տեր Սահակ:

Տեր Սահակ լավ է իմանում, որ Քոսենց թախում իրեն կպաշտպանեն: Նրա համար, որ չի ուզում պակելի, մի չհասս բերում է մեջտեղ:

–Լավ,– ասում են գյուղացիք,– բայց Տիգրան էլ հո չհաս չի:

–Նա էլ չհաս է, ութ պորտ չի լրացնում, վեց պորտ է: Նրան էլ չեմ կարող պակ կատարել:

Վաղ առավոտ շուտ գյուղով վեր են կենում և առանց տերտերներին դիմելու վերցնում են Տիգրանին և Ջուղոյին իրենց նշանածների հետ և խաղալով, պարելով մեր բոլոր ջահելներ, մարդ թե կին, աղջիկ-տղա, իրենց ուտելու, խմելու հաց-գինի շալակած, ընկնում են ճանապարհ դեպի Խլուզենց, դեպի Դաշտոկ գյուղ, որ շատ հեռու չի մեր գյուղից: Դաշտոկ մի փոքրիկ գյուղ է՝ Բշրագետի ձախ կողմի վրա, բոլորը մաքուր հայեր են: Հասանք գյուղի տակ: Բոլոր գյուղացիք՝ մարդ, կին, ահել և ջահել, մեզ դիմավորեցին շատ սիրով, և խաղալով՝ գյուղ մտանք: Չայն ընկավ մոտիկ Ալկև հայ գյուղ: Մինչև անգամ մոտիկ քուրդ գյուղից բոլոր հավաքվեցին Դաշտոկ: Մեր ուրախություն ավելի կրկնվեց: Մինչև գիշեր կովանդ չկանգնեց:

Մյուս օր Հավլանց գյուղի տերտերոջ բերին: Քավոր Մարգար հարցրեց տեր Ավետիսին, թե դրություն այսպես եղավ, որ մեր տերտերն էլ չի պակելի, բերինք քեզ մոտ, տեսնենք դու ի՞նչ կասես, կպակես՞, թե չի գնանք Բորմա ասորի փաշային մոտ:

–Ես կպակեմ, օրշնած, չորս պորտ, երեք պորտ էլ որ լինի, մեղք չի: Ձեր տերտերներ մեկ մեկից վախում են, նրա համար չհաս են ասում, թե չէ վեց պորտ, ի՞նչ չհաս կա մեջ:

Բուպեական փիլոն առեց թևերին և երկուսին մեկտեղ տարավ Սբ. Ստեփանոս փոքրիկ եկեղեցին, որ շատ հին եկեղեցի է:

Տերտեր իր պակ նոր էր վերջացել, որ Բարվարի աղան իր տղային ուղարկեց Դաշտոկ գյուղ՝ մեզ մոտ, թե ի՞նչ է պատահել, որ ձեր գյուղ երկու քեշիչ կա, ինչո՞ւ չեն պակում, բերեր եք այսքան հեռու տեղ: Մերոնք ասին, թե չուզեցինք մեր տերտերներ պակելին, բերինք այստեղ:

–Շատ լավ եք արել, բայց եթե ուրիշ բան կա, ասե՛ք, ես կգամ երկուսի մորուքներ կխուզիմ:

–Չէ, աղա՛, այդպես բան չի եղել:

Նոր դարձավ գնաց: Մենք վերցրինք հարս, փեսաներ և եկանք գյուղ: Առավոտ էր, երբ մի քանի երիտասարդ հավաքված Շականց սալ, խոսում ին մեր գյուղի տերտերների մասին. «Շատ են ժողովորդին տանջում, պետք է նրանց մորուսներ խուզել տանք, մեզ այդպես տերտեր հարկավոր չի: Մի բան, որ մեր նամուս առնում ենք, ընկնում ենք ուրիշ

77 Մինչև 1915 թ. գոտ հայաբնակ Քարադաշտ գյուղը գտնվում է Վանի նահանգի Ռշտունիք (Գյավաշ) գավառում՝ Ոստան քաղաքից 4 կմ հյուսիս-արևմուտք՝ Վան-Դատվան մայրուղու ձախ եզրին:

78 Տոն:

տեղեր, սա մարդու վերաբերմունք չի, կան մեր ձեռքով նրանց դատ անենք կան դիմենք Աղթամարա կաթողիկոսին, թող նա դատի»:

Մյուս օր գիշերը մոտ քառասուն մարդ հարձակվեցին տերտերների տների վրա, բայց մեծ տեր Սեփան չկար, փախած էր Վան՝ եղբոր տուն, իսկ փոքր տերտերին պռնին, բերին մինչև Դամանոկի անտառ, որ տանեն Աղթամար: Գյուղացիք իմացան. կին, մարդ երեխա բոլոր լաց ու կոծով թափան անտառ, խնդրեցին և տերտերին հետ բերին գյուղ: Նրա համար գյուղ նորից եղավ կռիվ-կալմակալ: Գյուղի կես դուրս եկավ գյուղից, տներ տարան Մոկաց կողմ, մնացած կես գյուղ չմնաց, նրանք էլ գնացին Գոմանց գյուղի սար՝ Կեչուտ կոչված տեղ: Մեր գյուղ էլի մնաց առանց տեր. ցանքեր բոլոր չորացան, բերք կես եղավ: Տերտերներին կանչին Աղթամար, ընդհանուր գյուղի ծախս նրանցից պահանջեցին: Թքին, մրին, նորից հետ ուղարկին, բայց դրված ծախս շատ էր, էլի գյուղացիք խոճացին չթողին, որ չարչարվեն: Նրանից հետո խելք հավաքին և էլ այդպես բան չարին: Ահա մեր գյուղի կենցաղ, կրոն, տերտերների արդարություն:

Հիմա դուք մտիկ արեք, թե մեր գյուղի մարդու անգրագիտություն և մեր գոռոգություն ինչ չափի պետք է հաշվեք, եթե մեր սև-սպիտակ կարդացողներ վեց պորտ չեն պատկույն կամ Ջուղայի չպատկույն պատճառ Ջուղայի կինը մեկ ուրիշ տղայի նշանածն էր, բայց տղան մահացավ: Դրանից երկու տարի է անցել: Ջուղոն ինչո՞վ էր մեղավոր, որ այդ աղջիկ առեց կամ թե Տիգրանի մի պորտ պակաս է, ասում է տեր Սահակ, նրանով դարձանք հեթանոս: Ցավ այսպես է, որ ինք ձեռագիր մի տառ ջոկում է, բացի ժամագրքից, ուրիշ ոչ մի գիրք չի կարդացել: Նրան գոռով օժել տվին: Ժամագիրք խաղի նման սովորեր, երգում էր ժամի մեջ: Մեզ էլ խաբում է, թե պատ ուտել մեղք է:

Ոգմեցի-քուրդ հարաբերություններ. Մեր գյուղի բոլոր քուրդ թե աղա մեզ հետ, որ վիճաբանում ին, ասում ին, թե «հառն ջիե»⁷⁹ Առաքել խանի երկիր, այստեղ ձեր տեղ չի, ձեր տեղ Առաքել խան երկիրն է: Նրանք Երևանին ասում ին Ռովան: Ասում ին, թե դուք՝ բոլոր հայերդ, Առաքել խանի սերունդն իք, իսկ մենք նրանց ասում ինք, թե ձեր երկիր Շամն է, դուք այստեղ իրավունք չունիք ապրելու, դուք եկել եք Շամից, նորից պետք է գնաք Շամ:

Ես մոտ երեսուն տարի ապրա Ռզմի մեջ, մի օր չլսեցի, որ մի քուրդ մի հային կնոջ կամ աղջկան մի բան ասի վատ կողմից: Մինչև վերջին գաղթելու ժամանակ էլ այդպիսի միտք չեն ունեցել մեր կողմի ոչ մի քրդից: Պետք է ասել, որ շատ մաքուր ին նամուսի կողմից: Մեր կողմ քուրդ ոչ թե մնակ մեր գյուղի, Բարվարի բոլոր հայերի հետ այդ կողմից մաքուր ին: Մեր կողմի քուրդ ռախ էր, իսկ Վանի,

Մանծկերտ, Ալաշկերտ կողմի քուրդ աշիրաթ էր: Մեր կողմ համիդեա չկար, բոլոր հայերի նման խարտար են, նրանք թե՛ տուրք և թե՛ ասկար տալիս են, իսկ աշիրաթ քուրդ ազատ էր ամեն բանից, ոչ ասկար և ոչ էլ տուրք չէր տա պետության: Նրանք պարտավոր ին կռիվ ժամանակ իրենց գենքերով ենթարկվեցին կռիվի հրամանատարին: Վերջիս նրանց էլ շատ նեղություն տվին, բայց շուտ փոշմանեց Ռաշիտի կառավարություն: Մի դող էր սարքել տված, քուրդեր ասում ին խալաթ⁸⁰, գցում ին բեկերի աղաների կնոջ գլխից, իջնում էր թևերից, թե մեջքից անցներ ցածր, այդ կնոջ տուրք չկար, իսկ թե բանդ եղներ, մեջքից չիջներ, այդ կնոջ մի ոսկի տուգանք կար, բայց շուտ վերջացավ քրդերի զայրույթից, և կառավարություն փոշմանեց այդ խայտառակ գործից:

Հուշարձաններ. մեր Ռզմ գյուղ սրբեր շատ կային, բայց մեկ ուխտատեղ, մեկ Ս. Ատոմի գերեզման էր, մեկ Ս. Գևորգին, մեկ էլ Ս. Եղիշին, մեկ էլ մի սառորի գերեզման կար, որ կոչվում էր Շմշմենեկ (Շմանեկ): Ասորին թե ի՞նչ ժամանակ է եղել մեր գյուղի մեջ: Դա շատ հին գերեզման էր, վրան գրություն չկար, բայց նրա բոլորի ծառեր ցույց են տալիս, որ շատ հին ժամանակվա ծառ են եղած: Բացի սրբերից՝ կար նաև մի շատ հին հետաքրքիր դուռ, որ կոչում են Խաչետակ: Մաքուր կապույտ քարի վրա գրված էին ֆրանսերեն տառեր, բայց մեր մոտ այնպիսի կարդացող չկար, որ հասկանար թե ինչ է նշանակում այդ քարե դուռ, մենք ասում ինք Մալմոտ դուռ:

Գյուղի արևելքի կողմ եկեղեցին էր՝ կառուցված 10-րդ դարի կեսին՝ 923 թվին⁸¹: Գրված կար պատերին, իսկ արևմտյան կողմ՝ մի փոքրիկ դարի վրա, Ս. Ատոմի և նրա կնոջ գերեզմանն էր: Առանձին էին թաղված: Ամեն կիրակի երեկո նրանց գերեզմանի վրա մոմ էր վառում Լաթոյենց Խաչոյի տուն: Գերեզմանի քարին գրած էր՝ «Մոկաց Ատոմ իշխան», իսկ կնոջ քարին մնակ մի տառ կար՝ «Տիկին :Ա.»::

Մսբիտա բերդի նկար չկա, բայց ես բերդի գլուխ շատ եմ կանգար⁸² հանե: Մաքուր բազալտ քարից բնական կառուցված բերդը երեք կողմից, գլխից մինչև գետ մոտ հազար մետր խորն է, գլխից տակ մարդ մի թզաչափ կերևա: Հյուսիսից մնակ էլք կա,

80 Պարան:

81 Մեկ այլ տվյալով՝ Ռզմի եկեղեցին կառուցվել է 1720 թ. և Ի դարասկզբին գտնվում էր անմխիթար վիճակում. «...ունին քարուկիր ու բառական հոյակապ եկեղեցի մը Ս. Ստեփաննոս անունով, շինուած 1720-ին Աղթամարի Յովի. կաթողիկոսի միջոցաւ, թէւ այժմ խարխաւած ու փլշելու ենթակայ» (**Լեռնեան Խ.**, Ռզմն եւ ոգմեցիք, «Կոչնակ», 1914, № 35, էջ 824): 1882 թ. փետրվարին Հակոբ անունով ոգմեցի 70-ամյա մի ծերունի վկայել է, որ «Ռզմի գիւղի հարաւային կողմ շինուած է Ս. Ստեփաննոս անունով հոյակապ եկեղեցի մը» (**Նահապետեանց Ղ. Պ.**, Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արձագանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

82 Կանգար (կանկար, կանկառ)՝ արտիճուկ:

79 «Գնացեք այդտեղ»:

որ ասում ինք Սմբիտա արտ. մոտ 15 հեկտար հողամաս էր բերդի արտի մեջտեղ: Նորից բարձրություն կար, բայց քիչ, անջաղ 100 մ լիներ: Միայն մի նեղ փողոց կար, որ մարդ կամ ոչխար կբարձրին բերդի գլուխ: Բերդի շենքերի, ջրի ամբարների տեղ անջաղ տասը հեկտար տարածություն լիներ, բերդի պատերի շատ մաս կար երկու մարդու բարձրությամբ: Երկու ջրի ամբարներ դեռ պահպանվում ին: Ամբարներ փորած ին կապույտ քարի մեջ՝ մոտ տասնչորս մետր խորությամբ: Ոչ ոք ջրի ամբարի մեջ քար չէր գցում նրա համար, որ այնտեղեր եղած թե՛ հովիվներ և թե՛ ման եկողներ այնտեղից են ջուր խմում: Իհարկե, անձրևի ջուր էր, որ մաքուր սալերից հավաքվում էր, լցվում ամբարների մեջ: Մենք այդ ամբարներին Սարիջ ինք ասում: Մեր գյուղի մարդիկ դեռ կան այստեղ, որ տեսեր են Սմբիտա բերդ:

Ոգմի բերդի ավերակներ դեռ պարզ երևում ին, որ կոչվում էր Մարամոտի բերդ⁸³: Մենք Մարամոտ ինք ասում: Բերդ կանգնած էր գյուղի արևելյան սարի գլխին: Մարամոտ բերդին ջուր կար: Մինչև մեր ժամանակ նրա ջուր գալիս էր մինչև բերդի տակ: Այդ բերդ նման էր մի արծիվի, որ կտուց կախ էր տվել դեպի գյուղի կողմ:

Կային էլի ուրիշ բերդեր, բայց նրանց մնակ անուն էր մնացած:

Մրբավայրեր շատ կային, օրինակ՝ Ս. Նարեկացին, Ս. Եղիշեն: Մրա գերեզման գյուղի վերև՝ բաղերի մեջ էր: Կար մի ուրիշ անուն՝ սուրբ Դավիթի գերեզման, Ս. Գևորգի գերեզման, որ կար Պռլում սարի մեջ:

Մեր Ոգմի սարի գլուխ, որ կոչվում էր Դերխումար, վանքի պատեր բոլորովին մնում էին: Պատի քարին գրված «Լուսապտուղ Ս. Սահակ»-ը պարզ կարդացվում էր: Վանք Դերխումար անուն նշանակում է Խումարի կառուցած վանք: Մեր լսելով՝ Խումար եղել է Մոկաց Ատոմ իշխանի դուստրը: Նա իր ծախսով է կառուցել տված այդ փոքր հիշատակարան, իր անուն գրել՝ Դերխումարի վանք: Դեր նշանակում է վանք կամ ժամտուն, աղոթատեղ:

Կալի Մեր, որ մենք ասում ինք, էլի եղել է այդ աղջկա հիշատակ: Մեր Ոգմի Բաճրափ, բոլոր Խումարի կավածն է եղել, ինչպես որ սուրբ Ատոմի և Խաթունի գերեզմանները: Մեր Ոգմի մեջ շատ մարդ իր աղջկան անուն դրում էր Խումար: Խումարի համար երգ կար մեր գյուղի և Մոկաց մեջ.



Բերդի ավերակներ Ոգմից ոչ հեռու (2008 թ.)

«Աշնան կալերն էր դիգած,
 Հա, խանում Խումար-Խումար,
 Խումար բերդեն երևաց,
 Հա, խանում Խումար,
 Ծիծեր ծոցից երևաց,
 Հա, խանում Խումար,
 Մատաղ կտրեց սրբոց,
 Հա, խանում Խումար,
 Խումար կապեց վզանոց,
 Հա, խանում Խումար,
 Խումար մտավ կուսանոց,
 Հա, խանում Խումար»:

Սա մեր գյուղի կանանց երգն էր, որ բարեկենդանին երգում ին:

Խումարի վանք շատ տեղից գալիս ին ուխտի, օրինակ՝ Հարմշատից: Մոկաց կամ Բարվարի հայեր Վարդավառի տոնին գալիս ին Ս. Սահակի ավերակ վանք և մատաղ անում: Վանքի չորս կողմեր անտառ էր, իսկ գարուն խավրժիլի լավ ժամանակն է: Բոլոր տեղերից գալիս ին Շարավի բերդ, որ իրենց ուզած խավրժիլ քաշեն, տանեն: Բայց առանց Դերխումարի ավերակ վանքը տեսնելու չեն վերադառնում: Աշխատավոր մարդ իր գործիք թողնում էր, վերցնող չկար, կուգես, ոսկի դիր, գնա, ձեռք տվող չի կար:

Մեր գյուղացի Կանդալունց Սոսոն հարյուր տասը տարեկան մարդ էր: Նա շատ հին սարերի, վանքերի անուններ կտար: Ասում էր, որ մեր գյուղ

83 1882 թ. փետրվարին ոգմեցի 70-ամյա մի ծերունի Հակոբ անունով վկայել է, որ գյուղի «...հիսիսային կողմ ասպառաժուտ ու բարձրաանդակ բլրի մը վրայ անառիկ ու ընդարձակ բերդի մը կիսակործան շենք մը կը նշմարուի. որուն տեղացիք «Մերասուս բերդ» անուն կուտան. ասկէ քիչ մը հեռի «Գումռուս բերդ» անունով ուրիշ աւերակ բերդակի մը հիմներ կերևան» (Նահապետեանց Ղ. Պ., Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արձագանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

շատ հին ժամանակից եղել է կռվածադիկ: Յույց էր տալիս, որ մեր Դաշտի գլուխի բերդ մեր գյուղի ժամից առաջ է եղել: Մեր ժամ եկեղեցին ինք հարյուր թվի կառուցված է, այնպես էլ կար գրված եկեղեցու խորանի պատին:

Քսան տեղ մատուռ կամ հին վանքի տեղեր կային, բոլոր հայտնի են՝ Ս. Գևորգի վանք, որ մենք Փութկու Ս. Գևորգ ենք ասում, Ս. Սահակի, Ս. Մեսրոբի, Ս. Եղիշեի, Դավիթի մատուռ, Ս. Ատոմ և շատ ուրիշ տեղեր: Գրիգոր Նարեկացու շենք կաթած էր մեր տան պատին, վախենում ինք ձյուն զցինք նրա կտուրի վրա, «մեղք ա» ասում ինք: Այդ ժամանակ ի՞նչ մարդ են եղած այդ սուրբ մարդիկ Նարեկ գյուղում: Ով որ մտներ Գրիգոր Նարեկացու գերեզմանը տեսնելու կամ խաչհամբույր տալու, պետք էր դռան մոտից ընկներ չոքերի վրա, հետո մոտենար գերեզմանին. աջ կողմում Անանիայի գերեզմանն էր, իսկ ձախում՝ Գրիգորի: Կամ թե մեզնից ո՞վ էր իմանում, թե ո՞վ էր Ս. Սահակ կամ Ս. Մեսրոբ: Մենք ի՞նչ իմանայինք, որ նրանք եղել են մեր հայ ազգի գրականության հիմնադիրները: Ես լավ կհիշեմ, որ մեր գյուղի մեջ կամ գյուղից դուրս չորս բերդ կար: Մեկը լավ գիտեմ, որ Ատոմ իշխանի անուն էր կրում, Մայրամոտի բերդն էր, իսկ մյուսը հայտնի չէր, գրված չկար ոչ մի տեղ, բացի Մմբատի բերդից: Նրա բոլոր ապացույցներ կար. թե՛ ջրի ամբարներ և թե՛ նրա գրվածներ տեսնողը կարող էր պարզ կերպով թվական կամ անուն կարդալ. «Մմբատ իշխան Բագրատունի»:

Մի օր Աղթամարից Եղիշ անունով վարժապետը եկավ մեր գյուղ: Տարանք, ցույց տվինք: Նա կարդաց և բացատրեց, թե՛ Մմբատի բերդ և թե՛ Ատոմի բերդ, թե՛ Մայրամոտի բերդ, որ ուղիղ կանգնած էր մեր գյուղի արևելյան դռնին, ինչպես մի արծիվ և չէր թողնում, որ արև շուտ կպնի գյուղին, այդ բերդի հետևի մասում՝ մեր գյուղին մոտիկ երկաթի հանքեր կային: Մենք ասում ինք Պռտնոցի սեր: Հալած երկաթի չանչեր բոլոր թափած էր հանքի հորերի մեջ: Մի փոքրիկ կտոր մի մարդ չէր կարող վերցնել: Հանքի չորս կողմի վրա մեծ անտառ էր, որին ասում ենք Խոպան կամ Վարդին արտ: Բակեջոռի մոտ Բակեջոռի ջուր գալիս էր Մայրամոտի բերդ, որի դեմ մի լիճ կար: Բոլոր ցեմենտած այդ բերդին մենք քրդերի պես ասում ինք Մերամոտ: Շատ հին մարդիկ ասում ին Բարեգար՝ Գեղին քար, որի հով մնում էր գյուղի վրա մինչև կեսօր:

Խնություն շատ կար, բայց գիտություն կամ գրականություն չկար մեր մեջ: Մնակ ժամագրերն էին, որ կարդում ին կամ սաղմոս, կտակարան, մեկ խոսքով, աշխարհաբար կարդալ չկար:

Մեծ դեպքի տարին

Աշուն վերջանում էր: 1895 թվականի նոյեմբերի 20-ին լուր տարածվեց մեր Ոզմ գյուղում, թե Շեխմոս Բաղեշի վալի հրամանով գալիս է հայկական



Սրբատեղի Ոզմի հարավային եզրին (2008 թ.)

գավառներ կոտորելու կամ իսլամացելու, որովհետև հայեր չեն ենթարկվում Սուլթան Համիդի կարգերին: Այդ լուր կեծակի արագությամբ տարածվեց ոչ թե մնակ Ոզմ գյուղ, այլ նաև Խիզան, Սպարկերտ, Կարկառ գավառ և Բարվար գավառ: Մարդիկ զարմանում ին, թե ինչո՞ւ է Սուլթան Համիդ այդպես հրաման արձակել: Մեր ոզմեցիք դրսից տեղեկություն չունին, միանգամայն կտրված ին դրսի աշխարհից: Այդ սարսափելի լուրը ստանալու պես ընդհանուր գյուղի ժողովուրդը հավաքվեց Շականց սալ կոչված գյուղամեջ: Մարդ, կին, երեխա որոշեց մարդ ուղարկեն Մոկս՝ հիմնադրու, բայց գյուղի երիտասարդներ ասին. «Ինչի՞ եք լիցնում, մենք գենք ունենք և կկռվենք մինչև վերջ, խո մենք կնիկ չե՞նք, որ լացենք»: Առաջ եկան Վանոնց Ներսո, Նուշկանց Մարդուն, Աբրո, Հարություն և շատ ջահելներ և վճռեցին կռվել մինչև մեռնել: Բայց մեծ մարդիկ չի ընդունին առաջարկություն: Նրանք որոշեցին դիմել հավատարիմ աղաներին, թե նրանք ի՞նչ խորհուրդ կտան: Նույն գիշեր մի խումբ ջահելներ գենքեր վերցրին, փախան սարեր, իսկ հետևյալ առավոտ Մահմատ աղեն լույս չը բացված եկավ գյուղ, բայց գյուղ չմտավ: Գյուղից վերև կար մի գոմ, որ կոչվում էր Կանջկանց սեր, այսինքն՝ Բալունց գոմ: Աղեն կանջեց գյուղի մեծերին և առաջարկեց, որ բոլորն իրենց գենք բերեն, հանձնեն, այն պայմանով, որ նորից կվերադարձնեն տերերին: Իրենց կրոնով շատ երդում արավ, բայց միայն իրեն պատկանող հայերին գենքեր բերին, ո-

րովհետև այն ժամանակ մեր գյուղ 150 տուն էր, բաժանված երկու աղաների մեջ: Կես պատկանում էր Մահմատ աղային, կես՝ Դահեր աղային⁸⁴: Աղան, որ իրավուք ուներ միայն իրեն պատկանող հայերի զենքը փոխանցել, սեղալակով⁸⁵ երդում արավ, որ նորից ետ կտա զենքեր իրենց տերերին: Նույն օր մոտ երեսուն հատ ստացավ, թողեց, հեռացավ գյուղից: Չենքեր բոլոր մի տեսակ չախմախլու⁸⁶ զենքեր են: Մեղալակ երդումով հավատացին և հանձնեցին աղային զենքեր՝ 30 շաշխանա հրացան:

Հետևեալ առավոտ Դահեր աղան եկավ գյուղ, նա էլ իրեն պատկանող հայերի զենքեր հավաքեց նույն պայմանով, բայց նրա խոսքեր ավելի դուրեկան էր հայերի համար, քան մյուս աղայինը: Բայց նրա տարած զենքեր քիչ էր, պետք է ասել, որ այդ Դահեր աղան մեր գյուղացոց և բոլոր հայերի հետ շատ լավ էր: Նա իմացավ, որ մի քանի տղաներ զինված սար են փախած, բայց ոչինչ չասավ այդ մասին, միայն գնալու ժամանակ այսպես ասավ. «Հայեր, իմ կողմից չի կասկածեք, ես ձեզ չեմ մոռանա: Ես ձեզ լուր կտամ, ինչ որ իմանամ: Իմ կողմից ձեզ վնաս չի պատահի, վստահ եղեք»:

Չենքեր տանելուց հետո որոշեցին մարդ ուղարկել Մոկս հաստատ իմանալու և անձամբ Մուրթլաբեկին տեսնելու և մի ստույգ տեղեկություն բերելու: Կասրը⁸⁷ շուտ վերադարձավ: Գնացողներ մեկ Կարունց Հովհաննեսն էր, մեկ Քանդալունց Միրզոն: Գնացողներ պատմին. «Բեկին տեսանք, նա ասավ, որ այդ բոլոր լուրեր մեզ մոտ էլ կան, բայց այդ բոլոր Մասունի ապստամբության զինված կռիվների կասկածն է, որ Մուլթան Համիդ պետության և իր կյանքից է վախենում: Նրա համար կատող է Համիդ, բայց ես հուսով եմ, որ մեր շրջաններին կոտորած, վտանգ չկա: Բայց դուք չի խաբվեք ձեր աղաների կակուղ լեզուներին: Մեր կողմից հանգիստ կացեք, ես ձեզ իմաց կտամ ամեն օր»:

1895 թվականի նոյեմբերի 22-ին Մոկս տեղեկություն տվին, որ սուլթանի ջարդարար զորքն անցել է Կարճկան, Կարկառ և Գավաշի կողմեր, այն հայը, որ չի ուզում տաճկանա, կոտորում են, ուլքեր որ կրոն փոխում են, նրանց չեն վնասում, ազատ են ամեն փորձանքից: Իսկ մեր Ոզն գյուղացիք մնացին շվարած, կես մաս ուզում էր փախչել դեպի Մոկս գավառ, իսկ կես, իհարկե աղասերներ, չին ուզում կտրվել աղաներից: Մտածում ին իրենց ապագային մասին, թե մեր քրդեր կնեղանան մեզանից:

84 1914 թ. նշվել է, որ ոզնեցիները «...իբրև ճորտեր կը պատկանին երկու քիւրտ աւատապետներու, որք են Ատեանցի Թահիր եւ Մեմէտ աղաները» (**Լեռնան Խ.**, Ոգին եւ ոզնեցիք, «Կոչնակ», 1914, № 35, էջ 824):

85 Ըստ հուշագրի՝ սեղալակը «քրդերի մեջ ամենամանր երդում էր. նրանք 3 քար մեկ-մեկ գցում են, եթէ իրենց խոսք չեն կատարում, իրա կին իրա մեր է դառնում»:

86 Կայծքար:

87 Մուրիանդակ:

Հերս պատկանում էր չքավոր խմբին, ես այն ժամանակ անջաղ 10 կամ 11 տարեկան լինեի: Մեզ մի հորեղբայր Մոկս կար, մերոնք ուզեին, որ տեղափոխվին Մոկս: Բայց խորս ընկերներ, թույլ չի տվին, թե փախչեմ և ասին. «Մախ ընկերով հարսնիս է»: Բոլոր միասին պատրաստվեցին գնալու դեպի Բետար⁸⁸ գյուղ:

Աղաների կողմից կարգադրված էր իբրև թե մեզ Բետար քրդական գյուղ տանել, ժողովրդին վնաս չի պատահի: Նրա համար մարդ ուղարկեց մեր գյուղ, որ ժողովուրդ թողնին իրենց տուն տեղ, ինչ կարող են, իրենց հետ վերցնեն և անասուններ բերեն, մնացած իրենք կպաշպանենք, բայց նրանք խաբեցին: Բացարձակապես մեզ այն տալով՝ գյուղից հանեցին, տարան իրենց մոտիկ Բետար քրդական գյուղ: Բայց մեր ոզնեցիք շուտ խաբվող պտուղ չեն: Բոլոր քեթրիկ⁸⁹ թալոդին, այսինքն՝ գորարար մեր թարս լեզվով ասում էին «Դփող թաղիք շինող»։ նախօրոք իրենց թանկագին ապրանքն պահած էին հորեր կամ անտառներ: Մնակ թեթև բաներն էին մնացել և ուտելեղեն, բայց պետք է ասել, որ աշնանը մնացել էին առանց հավաքել վերջին ցանած կորեկի ցանքի մի մաս և չհավաքած խաղողի բերք, որ ուշ են հավաքում ուտելու համար, ձմռան խաղող մնում էր մինչև դեկտեմբեր վերջ: Նոյեմբեր 23-ին մեզ գյուղից դուրս հանին: Առավոտ շուտ մի նոր սարսափ տիրեց ժողովրդի մեջ, լաց, կոծ սկսեց կանանց ու երեխաների մեջ, ո՞վ կուզի իր տնից-տեղից հեռանա աշնան վերջին, ցուրտ օրերին: Ի՞նչ արած, դրություն շատ լուրջ է, պետք է ենթարկվել բռնակալներին, որիչ միջոց չկար: Ուստի պատրաստվեցին ճանապարհ ընկնելու, յուրաքանչյուր մարդ և կին իրենց շալակ շալակեց և ճամբա ընկավ դեպի Բետար գյուղ, որ շատ հեռու չէր մեր գյուղից, ընդամենը երկու ժամվա ճանապարհ կլիներ, բայց ճանապարհ շատ դիք էր, և շալակներ՝ ծանր: Մեր տարած ի՞նչ էր, միայն ուտելեղեն, քնելաշոր: Մեր գյուղ կամ շրջանի բոլոր գյուղերի տեղաշարժեր թաղիք էր: Մեզ հետ վերցրել ինք ջրի և ճաշի ամաններ, մնացած ապրանք պահած էր: Ընդհանուր ժողովուրդ տքալով տարվեց դեպի Խլուզենց, դեպի Արծաթա լիճ: Քսան բուպեում գյուղ դատարկվեց: Բացի տասքսան երիտասարդներից, որ զինված փախեր ին սար՝ դեպի Թամք դալան և դեպի Բազաներյան, դեպի Կոռդեն, Կարմրպատ սարեր: Այդ խումբ դեկա-

88 Բետար քրդաբնակ գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մղերդ գավառի Բարվարի գավառակում: Վերանվանվել է Բեղենդիկ (Beğendik):

1882 թ. փետրվարին նշվել է, որ «...Չակուր և Շակամեր գեղերու մեջ՝ լեռան մը ստորոտ կը տեսնուի Բեղար անուամբ ուրիշ գեղ մալ, որոյ համար ալ կը պատմէին, թէ 20 տարի յառաջ 30 տուն հայ գեղջուկների բնակատեղի եղած է, բայց հիմայ անոնց բոլորի հետքերը անհետացել են» (**Նահապետեանց Ղ. Պ.**, Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արծագանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

89 Պարկ:

վարում էին Երցու Հարություն և Բանոնց Ներսուն: Իսկ գաղթված հասարակություն հասավ Կանեգոզան և Թորքավետա՝ մեր Ոզմի և Բետարի սահմանագլուխ: Այնտեղ սկսեց նոր լաց ու կոծ: Նոր իմացանք մեր դառն վիճակ, մեր կործանում: Բայց մեր գյուղի ռես Պետրոս կանգնեց ու այսպես մխիթարեց ժողովրդին.

–Մենք ոզմեցի ենք, ջուր ընկնող անձրևից չինք վախենա, թե մեզ քուրդ էլ դարձնեն, մենք նորից ոզմեցի ենք, չենք մոռանա մեր պապերի հավատ, աշխարհի այսպես չի մնա: Մուլթան Համիդ շուտով կկործանվի, ձեզնից շատեր կտեսնեն այն, որ շատ հեռու չի, բայց պետք է դիմանանք:

Մեր ճանապարհ, որ ցածրանում էր, դիմացի փոքրիկ դաշտավայր, որ կոչվում էր Գոհարքեր: Կեսօրին իջանք Բետար գյուղի դիմաց՝ Գրետոր կոչված բերդի հարավային, Մոկաց գետի արևկող ձախ ափին: Գրետոր բերդ կոչվում է Կարմիր դար: Դա մի հին բերդ էր քանդված: Մնակ նրա հիմքերից հայտնի էր, որ այդ Կարմիր բերդ եղել է հին հայկական բերդ: Նրա բոլոր նշաններից երևում էր, որ այդ բերդ շատ հին պատմություն ունի: Գրություն կար, բայց կարդացող չկար մեր կողմեր: Մեր գյուղի մեծերի ասելով՝ հին ժամանակ նա կապ է ունեցել Ոզմի Մարամոտ բերդի հետ: Բացի այդ՝ բերդի մոտիկ Բետար գյուղի մեջ կար ևս մի նշան, դա մի եկեղեցի էր Ս. Գևորգի⁹⁰ անունով: Եկեղեցու պատերին միշտ մոտ են վառում: Կար մի հուրիչ հետաքրքիր բունեղ, որ Մոկաց գետի ջուր սարի տակից բունեղին տված, ջուր անցնում էր արտեր և բաղերի ջրելու համար: Այդ բունեղին քրդեր ասում ին՝ Բոնա հերե՝ Տերտերի ծակ:

Աղայից հրաման բերին, որ թող հայեր մնան բերդի մոտ, մինչև կարգադրենք կամ որոշենք նրանց վիճակի մասին: Ժողովուրդ արևի տակ՝ բացօթյա, քարերի մեջ տեղավորեց իրերը և հանգիստ առավ: Ես շատ էի բեզարած բռն ծանր լինելու պատճառով: Ի՞նչ էր բռն՝ չորս հատ նոր պատրաստած հաց և երկու խաշած հավ, մի քիչ չամիչ՝ գուզի հետ խառնած: Բայց մենք՝ փոքրերս, չինք վախենում, մենք կարծում ինք, թե մեզ բերած են Գրետոր բերդ տեսնելու:

90 Ոզմեցի ծերերը վկայել են «թե յառաջ այս կիսակործան մեծ եկեղեցին Ս. Գեորգայ անուամբ հռչակաւոր վանք մ'եղած է. երբ հայերը նոյն գիւղէն կ'սկսին գաղթել, այս վանուց մէջ եղող Ս. Գեորգայ մասունքը անկէ կը վերցնեն և ատուր մը ճամբայ հեռի՝ Մոկաց արևելեան կողմ՝ Աղեթով ըստած լերանց մէջ տեղ շինուած վանքի մէջ կամփոփեն, այս վանուց հիմա ոմանք Մարի Ս. Գեորգ և ոմանք Պուսակի Ս. Գեորգ անուն կուտան... Ալբերան լերան Դոմինիկեանց վանքի պէս՝ հոս ազլոր կայ, որ գուշակողի պաշտօն կը վարէ. երբ նա խօսի, ուղևորների ճամբորդութիւնը ամվտանգ լինել կը յայտնէ, ու անոնք կը վստահին ճամբայ ելնել. բայց երբ օդը վտանգաւոր թուի, այդ ազլոր քանի մ'օր անխօս կը մնայ, որ ճամբորդների համար լաւ գուշակութիւն չէ» (Նահապետեանց Ղ. Պ., Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արձագանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

Չորս օր մեզ թողին չլի մեջ, մեր բախտից անձրև չեկավ, խմելու ջուր հեռու էր մեզնից, մեր անասուն չլի մեջ ցրված էր անտեր, սիրտ չունինք նրանց հավաքելու: Չորս օր հետո հրաման եկավ Մահմատ աղայից, թե հայերին տարեք գյուղ, արդեն տեղ պատրաստ է, հայերին պետք է տաճկացնեն, որ կարողանանք ազատել կոտորածից: Հրաման սուլթանից էր: Մեզ մեր տեղից հանին և Բետար գյուղի կողմ տարան: Արդեն մզկիթի հայաթում շեխ և մալաներ⁹¹ պատրաստ սպասում ին ընդունել մեզ արդար կրոնին դարձնելու: Նորից լաց ու կոծ ընկավ մեր մեջ: Ի՞նչ արած, մեր իրեր շալակինք, ընկանք ճանապարհ դեպի Բետար գյուղ, որ շատ հեռու չէր մեր նստած տեղից, մոտ մի կիլոմետր: Բայց մի ուրիշ կասկած տարածվեց մեր մեջ, որ մեր մեծ տերտեր տասը մարդի հետ անհայտացեր են: Բայց շատեր իմացան, որ նրանք գնացեր են մեր սար՝ դեպի Սմբիտի բերդի կողմեր, դեպի հռչակավոր Գուփբերի մեծ անտառներ, դեպի Սմբատ Բագրատունի ամրոցի հին քարանձավներ, որ կառուցած էին Շատախի գետի աջ ափին: Իսկ մեզ քշին դեպի կամուրջ, դեպի մեր քուրդ դառնալու վիճակ: Մի քանի մարդ արդեն հասել ին գյուղ, որ ստուգեն մաշիթի հայաթ, մենք էլ գետի մոտ էինք: Ես, դադեխ⁹² ձեռք ամուր պոնած, սարսափով նայում էի դադեխ դեմքին, որ մեռելի գույն էր ստացել: Ինձ ասավ.

–Դու գնա՛ մորդ մոտ, ես չեմ քրդանա, ես մուխսի եմ, ինձ գետ գցիմ, դու գնա՛:

Իսկ ես նրա փեշից պոնի, ասի.

–Քեզ գցես, ես էլ ինձ կգցեմ:

Դադեխ ինձ մի ապտակ տվեց.

–Թաժամիռել, դու գնա՛, դարձի քուրդ, դու փոքր ես»:

Ես ու դադեխ դեռ վիճում էինք, որ մի քուրդ վերից կանչեց.

–Դարձեք դեպի հետ՝ դեպի ձեր գյուղ, դուք ազատ եք:

Մեզ դարձրին նորից դեպի Գրետոր՝ Կարմիր, բերդ, բայց այս անգամ տարան դեպի Հուսիռանի կողմ: Այնտեղ նստանք, որ գիշեր մնանք, իսկ տղամարդկանց ուղարկեցին գյուղ՝ իբրև գյուղի պաշտպան: Այնտեղ մնացին միայն կանանք ու երեխաներ, անտեր ու անպաշտպան: Քրդեր հայտարարին. «Ձեր գյուղ Վանոց Ներսոյին սպանել ին, նրա համար բոլոր տղամարդիկ գնացին դեպի գյուղ», իսկ կանանք շփոթված մնացին իրենց տեղեր՝ սարի մեջ: Մեզ խաբին քրդեր: Մութ ընկավ թե չէ, մի ավագակ աղա եկավ, հայտնեց, թե՛ ինչ որ անասուն կա, թողեք, մենք կտանինք ձեր գյուղ, մինչև դուք կգաք առավոտ: Բոլոր ոչխար, տավար տարավ, փոխանակ մեր գյուղ տանելու, տարավ իրենց գյուղ: Չրկվանք մեր անասուններից:

91 Մոլլա:

92 Տատիկ:

Առավուտ շատ շեխ եկավ, մեզ բերեց մեր գյուղի տերերի մոտ: Վեց ավուր բացակայության ժամանակ գյուղ դարձեր էր ավերակ: Ոչինչ չին թողած, բացի պահած հորերից, ոչ մի բան չկար, թալաններ ին, բայց կորեկ հաց մնացեր էր: Կորեկ մինչև գարուն մեզ պահեց: Մենք շատ ուրախ ինք, որ մարդ չսպանվեց: Հետո իմացանք, թե ինչո՞ւ մեզ չը տաճկացրին: Պատճառ Դահեր աղայի կինն էր, որ իր մարդուն կկանչի, կսաի. «Գնա՛ շատ շուտ, ոգմեցոց ուղարկի՛ր իրենց գյուղ, թող մնան որպես հայ, թե նրանք քուրդ դառնան, մեր գործ շատ վատ կլինի: Անխեք մարդ, նրանք հայ են, ձեզ չեն ենթարկվի, որ քրդացան, մեր Բարվարի գավառ կքանդինք, ո՞վ մեր խոտ կքաղի կամ մեր ուրիշ աշխատանք կանի, եթե չի լինին հայեր: Վերադարձրեք իրենց և պահակ դրե՛ք, նրանց պաշտպանեք, որ ուրիշ ավազակ քրդեր վնաս չտան մեր հայերին»: Կնոջ հրաման ճիշտ կատարվեց: Չնայած թալան տարան, բայց մեր պատիվ մնաց մեզ մեծ դեպքի վերջ:

Կոտան Ալիբեկ⁹³

Մեր գյուղի մարդ, որ շրջան գնար, շատ լավ կպահեր իրեն ամեն կողմից և մաքուր, բացի հարուստներից, ինչպես Կոտան Ալիբեկը: Խլաթի Խուլիկ⁹⁴ գյուղն էր ապրում, անքան հայերի չարչարեց [1897] թվին Մուշ և Մանծկերտի կողմեր: Շատերին կոտում էր եզան նման, տղամարդկանցից շատեր մեռնում ին, չին դիմանում այդ բարբարոսական գործիքի տակ: Նա դարձեր էր Մուլքան Համիդի

⁹³ Ալիբեկի մասին նշվել է, որ 1890-ական թվականներին «...կառավարությունը պաշտօնի կանչեց Մանազկերտ հաստատում Իզգեթ բեգ անունով չեքեզ մը, տալով անոր պայքերնորեան կոչումը: ...Ալայ բեկ չտեսնում բարբարոս մըն էր, ամենադաժան տանջանքներու կենթարկելը ժողովուրդը՝ ամեն տեղ պահանջելով ձերբակալել Սերոբն ու իր ընկերները: Միայն Ալիբեկի մեջ, 97-98 թուականներուն, մոտ 45 հայ տղամարդ կը կռուէ (կը ներքինացնէ), կանանց վարտիքներուն մեջ կատուններ կը ձգէ, որուն հետեանքով տասնեակներ կը մեռնին: ...ժողովուրդէն Կոտան Ալայ բեկ անունը ստացաւ...» (Ռ., Հայ յեղափոխականի մը յիշատակները, «Հայրենիք», Պոսթրն, 1923, № 11, էջ 101): Նաև «Խլաթը իր հռչակատը «կոտան» Ալի բեկով, արդէն յայտնի է: Դա ֆեդայիների մահացու թշնամին է. մի քանի տարի առաջ ֆեդայիներ պատրաստելու մեջ մեղադրելով մի քանի տասնեակ հայերի, կռուել է նրանց, այդպիսով ստանալով իր «կոտան» մականունը» («Գրոշակ», 1904, № 6, էջ 81): 1912 թ. նրա մասին նշվել է. «Ալիբեկի կազայում, ուր մոտ 22 հայ գիտեր կան, օրինակ կարգի և օրենքի պահպան հանդիսանում է այժմ մի ժանդարմական կապիտան, ազգով չեքեզ, Ալիբեկ, որ 1909 թ. արձակվեց պաշտօնից նրա համար, որ վատ սովորություն ուներ ներկայացնել հայերին, որոնք որևէ բանով գրգռում էին նրա բարկությունը, և երկու տախտակների մեջտեղ սեղմել տալ այդ հայերի սեռական օրգանները: Երկու տարի առաջ՝ օֆիցերական համազգեստ հագած այդ հրեշը, որին ժողովուրդը կոչում է «դաշաղքեսան» (ամորձիք կտորո) Ալիբեկ, նորից ընդունվեց ծառայության մեջ, Խիզան և Մօսկէ շրջաններում, ուր բոլոր հայապատկան հողերի գրեթե 3/4 մասը անցել է քիբոլերին...» (Օլգենին Տ., Անհետացող Հայաստան, «Մշակ», 1913, № 97, էջ 2):

⁹⁴ Խուլիկ (Խուլեկ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Խլաթ գավառում՝ Խլաթից 17 կմ հյուսիս: Վերանվանվել է Օթլույազը (Otluyazi):

գազաններից մեկ: Նրա սարսափ տարածված էր ամբողջ Բիթլիսի նահանգ՝ մինչև մեր գյուղ: Կոտան Ալիբեկ չերքեզ էր, աքսորված էր Դադաստանի կողմերից Տաճկաստան: Մեր կողմն էլ եկավ, բայց ոչ թե հայերի, այլ աղաների համար. մի քանիսին կռուեց, գնաց մեր կողմերից: Մշեցիք և Խլաթա կողմեր շատ չարչարվեցին, որ Կոտան Ալիբեկ վիզ ծալեն, բայց չէր հաջողվում: Մի անգամ նրա եղբոր պոնեցին Դեղուտի կամրջի մոտ, ջարդին, զգին Մուրադ գետի մեջ՝ իմանալով, թե ինքն է, բայց դուրս եկավ, որ եղբորն են սպանել: Սպանողներ փախան դեպի Ռուսաստան, բացի մեկից, որ եկավ մեր գյուղ որպես բնիկ ոգմեցի: Նրա անուն Լուրթֆիկ էր, որ դարձավ Կաչաղ Ռաշիտյան: Բայց մեր գյուղացիք գաղտնի պահին դեպքի մասին, մինչև վերջ մարդ չի հասկացավ այդ մասին, բացի հավատարիմ երկու ընկերներից:

1902 թվական

1902 թվին մեր Ոգմից մարդ ուղարկին Վան, որ դիմում տան Վանա նահանգապետին, որ մեր գյուղ զգեն Վանա վիլայեթի վրա: Քանի որ մեր գյուղ դիմում գրող չկար, մեր ոգմեցիք Վանում շատ կար ապրող, նրանց միջոցով դիմում գրին, տվին Վանա վալի փաշին: Մեկ էլ գրին, բերին, տվին Մոկաց գայմագամին, որ նորից Մուրթլաբեկն էր նշանակված: Մեր դիմումներ ընդունին, բայց հարց ին տալիս, թե ինչի՞ համար է ձեր դիմում, ի՞նչ կառավարություն, որ Վան է, այնպես էլ Բիթլիսն է, երկուսն էլ բուրքական իշխանություն է: Մերոնք պատասխանին, թե ճիշտ է երկուսն էլ մեկ իշխանություն է, բայց տարբերություն շատ կա. առաջին, որ քրդեր մեզ հանգիստ չեն թողնում, մեզ ներություն կտան, երկրորդ, որ Սղերդի պաշտոնյաներ նորից քրդերից են կազմված, կրթված մարդ չկա մեր գավառի մեջ, նրա համար Վանի և Բիթլիսի օրենքներ տարբեր են: Կառավարություն մեկ է, բայց իրավունքներ տարբեր են, օրինակ հացի տասնորդ Վանում տասին մեկ են վերցնում, իսկ Սղերդում՝ ութին մեկ: Փողի մասին Վանում մեկ ոսկին վերցնում է հարյուր յոթ դուրուշ, իսկ Սղերդում՝ հարյուր դուրուշ: Մի՞թե փողեր մեկ պետության չեն, ուղղակի մեզ խաբում են Սղերդում նստած անգրագետ կաշառակերներ, նրա համար չենք դիմանա նրանց ձեռքը: Տուրքի մասին նորից շատ տարբերություն կա. մի կողմից պետությունն է տուրք հավաքում, մեկ էլ կողմից աղաներն են հավաքում: Մեկ նոքար երկու աղին ի՞նչ անի, դա մեր ոգմեցոց էր, որ երկու բռնակալի պետք է տուրք տայինք, մեկ աղաներին, մեկ կաշառակեր Համիդի մարդկանց: Մեր գյուղի տված դիմում հարգեցին թե՛ Վանի փաշին, թե՛ Մոկաց կառավարության կողմից: Մեր գյուղից երկու մարդ, որ Վան էր գնացել, շատ վանեցոց կողմից աջակցություն ստացավ այդ գործի համար: Երկու

մարդ վերադարձավ գյուղ: Մեկը մեր գյուղի մեծ տեր Ստեփան էր, մեկն էլ Նոշկանց Մարտոն էր: Նրանք պատմեցին իրենց հաջողության մասին և ասին, որ դիմում հասավ հայոց պատրիարքին: Բայց ի՞նչ օգուտ, որ գյուղի աղասեր մի քանի մարդ չհամաձայնին և գաղտնի տեղյակ պահին թե՛ աղաներին և թե՛ Սղերդի մութասարիֆին: Որքի նման ընկան ծառի մեջ: Ասում են՝ «Գրմ ժտար է նաքի գաղլի դարի թուն նա»⁹⁵:

Մեր կողմի բոլոր աղաներ և քրդեր սկսին գյուղի մի մասին քաշել իրենց կողմ: Գյուղ դարձավ երկու թայֆա, մեկը մնաց աղաների կողմ, իսկ շատ մաս մնաց հավատարիմ իր տված դիմումին: Թե՛ Բարվարի կառավարության ներկացուցիչներ, թե՛ քուրդ բռնակալներ սկսին հալածել դիմում տվող գյուղացուց, որովհետև Վանի կողմ անցնել վնաս էր բերում Սղերդի թե՛ կառավարության և թե՛ չարչի աղաներին: Նրանք սովոր ին միշտ ձրի կողոպտել քասիք ժողովրդի դառն վաստակ, այդ կողմից աղաներ տարբերություն չեն դնում թե՛ հայերի և թե՛ չքավոր քուրդ ժողովրդի մեջ, հավասար կողոպտում ին: Վերջը բան հասավ այնտեղ, որ գյուղի շատ մաս չդիմացավ և գաղթեց դեպի Մոկաց գյուղեր, իսկ մնացած փոքրամասնություն մնաց գյուղի մեջ: Բայց նրանք էլ չդիմացան, փախան Կեջութ սար: Ահա այսպես եղավ, և երբ մարդ եկավ կառավարության կողմից, քննեցին մեր գյուղի տված դիմումը, որ հաստատված էր Վանի փաշայի կողմից, թե ես ընդունում եմ, որ Ոզմ գյուղ անցնի Վանի վիլայեթի վրա, բայց տեսավ, որ գյուղի մի մաս չի ուզում: Նրանք ասին, որ մենք չենք կարող գյուղ կիսել երկու մասի, կես մնա Բիթլիսի վրա, կես Վանի: Նրա համար Մուրթլաբեկ մի քանի անուն հանեց մի քանի մարդկանց վրա և թողին, հեռացան: Մոկաց գնացողներ ճարահատ նորից վերադարձան գյուղ, բացի երեք տնից, նրանք թողին, գնացին Վանի կողմեր: Ահա այսպես եղավ մեր գյուղի երկու թայֆան: Այդպես էլ մնաց մինչև տասնհինգ թիվ, գաղթվանք ընդմիշտ, բաժանվանք թե՛ գյուղից և թե՛ մեկը մեկից:

Պետք է ասել, որ 1902 թվին մեր գյուղացիները եթե միացած հետևեին իրենց դիմումին և անցնեին Մոկաց կողմ, որ չխանգարվեր մեր գործ, մենք ոչ այնքան մարդ սպանել կտայինք և ոչ այդքան թալան: Ահա քեզ երկու ճյուղ լինելու օգուտ, իսկ Մոկաց հայեր ո՛չ կոտորած տեսան և ո՛չ էլ թալան տվին մինչև Մոկաց վերջին գաղթ տասնհինգ թվին: Նախքան մեր դիմում տալը Վանի կողմ անցնելու, մեր քրդեր շատ լավ էին մեր գյուղի հետ: Մեր ոչխար գիշեր ու ցերեկ սարեր մնար, մենք արխան ինք:

95 «Ծառի որդը ծառից չլինի, ծառին վնաս չկա»:

1904 թվական

Ոզմեցու անուն՝ որպես կովարար, հասած էր մինչև Ստամբուլ: Նրա համար 1904 թվին մի ջուկատ սև ասկար եկավ, պաշարեց գյուղ՝ որպես թե զենքեր կամ ժողովրդին գրգռող մարդկանց՝ որպես հեղափոխականների պոնի, տանի: Բաց իզուր անցավ ասկարի գալը: Նրանք մարդու կամ զենքի փոխարեն դատարկ գյուղ տեսան: Նախօրոք ժողովուրդ իմացել էր ասկարի գալը: Գիշերը՝ երկու ժամվա մեջ, գյուղ գաղթեց դեպի Գուփեր՝ դեպի Մազրիք սար: Իհարկե, շատեր զինված ին: Քրդերի ցուցմունքով ասկարներ չբարձրացան սար, հետ դարձան դեպի Սղերդ: Այս անգամն էլ պրծանք: Իմ տեսած ժամանակ, որ ես երեսուն տարի ապրա մեր գյուղում, հինգ անգամ գաղթել ենք գյուղից, իսկ վեցերորդ եղավ տասնհինգ թվին: Այդ վերջին գաղթին զրկվանք մեր օջախից:

Նարեկ գյուղի կռիվը⁹⁶

Կեցանի Մուսաբեկ իննսունվեց թվի հայկական ջարդարարներից մեկն էր և մինչև վերջ մնաց հայերի թշնամի⁹⁷: Տեղական իշխանության մոտ ինչ որ ասեր, նրա խոսք գետին չէր ընկնում:

1904 թվականին, որ Անդրանիկ Սասունից քաշվեց, եկավ, մտավ Աղթամարի վանք: Մի քանի օր հետո թուրք կառավարություն իմացավ, որ Անդրանիկ վանքի մեջն է, թուփեր բերեց, դրեց Զարդաշի տակ, կապեց Աղթամարի կղզու վրա: Բայց Անդրանիկ շատ չմնաց կղզին, դուրս եկավ, գնաց կռիվ չի երկարացնելու համար⁹⁸: Թուրք տեսավ, որ վանքում կռիվ չկա, իմացավ, որ հեղափոխականների բուն պետք է Նարեկ գյուղ լինի: Բայց թուրք շատ սխալվեց, նրա ման եկած Նարեկ չկար, նա հեռացել էր արդեն: Բայց Անդրանիկի փոխարեն թուրք պատահեց տեղական հեղափոխականներին: Անդրանիկին վանքից ուղարկելուց հետո մի քանի զինված մարդ եկել են Նարեկ գյուղ, թուրքական զլխավոր ուժ գնացել էր դեպի Վանա ծովի արևելյան ափեր՝ Անդրանիկի հետևից ման գալու, բայց իզուր, նա արդեն անցած էր դեպի Երևանի կողմեր, իսկ մի թափոր ասկար ուղարկեցին Նարեկ գյուղ՝ խուզարկելու թուրք կառավարության կողմից, որին զլխավորում էր մի քուրդ բեկ՝ հայոց դահիճ քուրդ Աբդուլ Համիդը, որ բնիկ Գավաշի Վարանդանց գյուղացի էր: Իննսունվեց թվին Գավաշի հայ ժողովրդի դահիճն էր: Գավաշ շատ մարդ սպանին այդ գազանի

96 Նարեկ գյուղի կռիվը տեղի է ունեցել 1904 թ. սեպտեմբերի 25-ին: Մանրամասն տես «Գրոշակ», 1905, № 4, էջ 56:

97 1902 թ. մայիսին Կեցան գավառակի Մուսաբեկի մասին գրվել է, որ նա «...արդեն զազանութեան չափն անցուցած է: 96-ի դեպքի ժամանակ 500-է ատելի հայեր իր ձեռքով շողգամի պես բրդած և անոնց արիւնը խմած է» («Գրոշակ», 1902, № 9, էջ 135):

98 Անդրանիկն Աղթամար կղզում է եղել 1904 թ. օգոստոսին: Դեպքի մասին մանրամասն տես **Աճեմյան Հ.**, Վասպուրական, էջ 214:

հրամանով: Մի մարդ, որ սպանում էր, ասում էր. «Մա բակաք գոշտ»⁹⁹: Նա հային գորտ էր հաշվում:

Մեր ողմեցի Հովհաննես անունով մի մարդ Վանից գալիս է Գավաշ, որ անցնի, Մոկաց կողմից գա մեր գյուղ: Նրան պռնում է Բախվանց գյուղի մոտ, սպանում է, ասում. «Մա մարեկ գոշտ»¹⁰⁰: Նա մեր ողմեցուն օձ էր անվանում: Բայց ողմեցու ձեռքով սատկավ վերջապես:

Մի առավոտ, երբ ժողովուրդ հանգիստ իր աշխատանքին էր գնում, Աբդուլ Համիդ Նարեկ գյուղ պաշարում է: Հանկարծ ժողովուրդ տեսավ, որ գյուղ պաշարված է քրդերի և սակարների կողմից: Աղթամարի վանքի կռվից հետո Համիդ ուզեց վրեժ Նարեկից հանի: Բայց Համիդ չարաչար սխալվեց: Նարեկ իննսուներեք թվի Նարեկ չէր, դարձեր էր նախկին Ռշտունիք: Նարեկ պաշարված էր չորս կողմից, բայց Նարեկի մեջ կար մի քանի զինված դրսից եկած փախստական հայ, ֆիտայիք, որից երկուս մեր ողմեցիքն ին, մեկ՝ Բոզո անունով, որ Տիգրան¹⁰¹ ին ասում: Նա Երևանի բոլորի գյուղեր շատ էր ապրել, չնայած անգրագետ էր, բայց Բաքվի բանվորական կազմակերպությունից լավ տեղյակ էր: Ինքն ասում էր, թե սոցիալիստ եմ, բայց մենք չինք հասկանում, թե ի՞նչ է սոցիալիստ: Բոզո էլ Նարեկի զինված տղաների հետ կռիվ սկսելուց առաջ նրանց ուղարկում է Ս. Գրիգոր Նարեկացու վանք՝ գյուղի եկեղեցին: Նարեկացու վանք գյուղի մեջ է, իսկ գյուղի տեղ ոչ շատ դաշտ է, սարին մոտիկ: Բնակիչներ բոլոր մաքուր հայ են: Գավաշի մեջ Նարեկ իր դիրքով բոլոր գյուղերից հարմար է: Կռիվ սկսելու պես գյուղացիք քաշվում են իրենց տներ: Մի մաս փախչում է դեպի Փախների սար, մի մաս օգնում է զինվորներին: Կռիվ գնալով ուժեղանում է: Բուրդ Համիդ մոտենում է տներին, բայց Մուխսի Մուրադի մշակ, Գավաշի Հնձակ գյուղացի Ասպոն¹⁰² տեսնում է, թե որտեղ մտավ Համիդ: Ասպոն գալիս է և ողմեցի Բոզոյին իմաց է տալիս, թե քուրդ Համիդ մտավ Կարոյենց մարազի պատի տակ: Բոզո էլ չի սպասում, վերցնում է Ասպոյին, որ տանի, տեղ ցույց տա:

–Շատ լավ,– ասում է Ասպոն և առաջ է ընկնում, տանում, տեղ ցույց է տալիս: Բոզոն քրդին տեսնում է, որ փանփուշտ կլցնի թուրքական տասը կրակաճնոց մայրաքի մեջ, էլ մաջալ չի տա, որ լցնի հրացան, հենց առաջի գնդակ տալիս է Համիդի դռնին, ասում է.

–Համիդ, քեզ օձ կծեց:

99 «Մենք մի գորտ սպանեցինք»:

100 «Մենք մի օձ սպանեցինք»:

101 Բոզոն (Բոզան Պողոս, ծածկանունն էր Տիգրան) «...յայտնի հայդուկ, Իշխանի զինուոր, որ Նարեկայ վանքի կռուին մեջ աննման հերոսություն ցույց տուա» (**Աճեմեան Հ.**, Վասպուրական, էջ 365): Չոխվել է 1908 թ. Ողմ գյուղում (այդ մասին մանրամասն տես սույն աշխ., էջ 308):

102 Նարեկ գյուղի կռվի ժամանակ «...հոտաղ Ասպո ցույց տուա իր յանդուզն և յեղափոխական ոգին և այդ պատճառով իսկ

Բայց էլ Համիդ չի լսում, ոտներ տնկում է մարագի դռան պատին, սատկում է ողմեցու ձեռքով: Իր վերջին խոսք ասում է Աբդուլ Համիդ.

–Հաճամասս հլտան ժի Ասպո¹⁰³:

Համիդի սպանելուց հետո կռիվ վերջանում է, գորք քաշվում է գյուղից: Իհարկե, հայեր շատ վնաս տվին, բայց մարդկային զոհ քիչ եղավ, հայից չեղավ, մնակ Վարանդի քուրդ Համիդի կոտորում էր եռում: Նրանից հետո մարդ չեղավ, որ հայ սպաներ: Ես մի քրդի սպանի: Կռվից հետո քրդեր մատնին, որ Համիդի սպանության պատճառ Ասպոն է եղել, որ ողմեցի Բոզոն Համիդին սպանեց: Նրանից հետո խեղճ մշակ դարձավ կաչաղ Ասպո: Նրա համար ընդհանուր Գավաշի, Կարճկանի քրդեր եղան նրա դուշման, որտեղ որ մի հայ մարդու տեսնում ին, կան չարչարում ին, կան սպանում ին, ասում ին. «Գնացե՛ք, ասե՛ք ձեր Ասպոյին, որ մեզ նեղություն տվող Կեցնա Մուսաբեկն է, թող դուրս գա դեմս, մի տեսնեմ նրան»:

Ողմի 1906 թ. կռիվը

Հագար ինը հարյուր վեց թվին մեր գյուղացիք որոշեցին, որ սար վարելահող շատ կա, բայց քուրդ գորբաներ թույլ չին տա, որ վարենք, ցանենք, մենք էլ հացի տեր դառնանք, կորեկի հացից թեթևանանք: Բոլոր գյուղացիք միացան ու սկսին սարի հող բաժանել համայնական ձևով: Հողի մի մաս բաժանին Հավալի կողմ միայն, իսկ մնացած Բարձրափներ կամ Գոփեր Կանչի քամակ մնաց: Բայց աղաներ լսեցին, որ ողմեցիք մեր քավաճիր անասուն պահելու տեղ ցանում են: Մենք թույլ չենք տա, որ նրանք ձեռք տան այդ հողին: Թող նրանք էլ

յետոյ դարձաւ արժանատի ֆետայի մը Լեռնապարի շրջանին մէջ» (**Աբրահամեան Ա.**, Ողմեցի Լաթօն, «Իրօշակ», 1928, № 4, էջ 125):

Ասպոն (բուն անունը՝ Աստվածատուր), որը հայտնի էր Առյուծ մականվամբ «...Նարեկայ կռի ժամանակ ի յայտ եկաւ իբր քաջ և խիզախ զինուոր մը: Ասպօն Իշխանի զինուորն էր և անոր յեղափոխական շունչով ու գաղափարներով ալ դաստիարակուեցաւ»: 1913 թ. օգոստոսի 13-ին մահափորձ է կատարել կարճկանցի Մուսաբեկի վրա «...օր ցերեկով և միայն 3 ընկերով՝ ժանդարմական հարիւրեակի մը աչքին առջեւ, բաց դաշտին մէջ: Եւ իր այդ մէկ քանի զինուորներով երեք օր, շնչասպառ խաղցուց 400 կանոնաւոր օրօքը ու հագարաւոր քիւրդ խունանը, արժանանալով նոյնիսկ Վանի կուսակալին հիացումին: Անիկա փրկեց Բէլուի մնացորդները և Լեռնի աջ թևն եղաւ Փեսանդաշտի երեսնօրեայ ինքնապաշտպան կռիւներու ընթացքին: Անկէ ետք հայ կամաւորներու հետ, Կապուտկողի յարձակումներու ժամանակ երևան հանեց ռազմիկի իր արտակարգ ձիրքերը: ...Ան Լեռնի խումբի «Հայրիկ»ն էր: Մարդ մը, որ իսկական մեծութիւն էր, թէև բոլորովին անգրագետ, որ չի՛ պարծիր իր կատարած գործերով, ո՛չ ալ արծաթ մեդալներով» (**Բարսեղեան Արտ.**, Գիւղացի հերոսներ, «Աշխատանք», 1916, № 6, էջ 3): Վիրավորվել է Փեսանդաշտի կռիվների ժամանակ և մահացել 1915 թ. «Յունիսի սկզբին, Վանի մէջ դիֆթերի մեռաւ Առիւծ Ասպօն, 30 տարեկան, սիրուած ու պաշտուած ամբողջ շրջանէն» (**Բարսեղեան Արտ.**, Գիւղացի հերոսներ, «Աշխատանք», 1916, № 6, էջ 3: Տես նաև՝ **Աճեմեան Հ.**, Վասպուրական, էջ 351):

103 «Իմ վրեժ հանեցե՛ք Ասպոյից»:

իրենց պապերի պես կորեկ ցանեն, ապրեն, նրանք որ ցորեն հաց կերան, կկատողեն: Այն ժամանակ մեր գյուղացի մի քանի մարդ ռես Պետրոսի գլխավորությամբ գնաց Խասիսեր՝ գայմագամին բողոքեն: Ուես Պետրոս մեջլիսի անդամ էր: Բողոքագիր գրին, մեկ տվին տեղական իշխանության, մեկ գրին, դրկին Բաղեշի վալի փաշին, մեկ գրին, դրկին Ստամբուլի հայոց պատրիարքին: Դիմողներ մնացին Խասիսեր, մինչև բոլոր տեղից պատասխան եկավ: Աղաներին կանչին Խասիսեր գայմագամի մոտ: Երկու մեծ աղաներին տուգանին, ամեն մեկին՝ քսանհինգ ոսկիի չափով: Այդ բոլոր տված դիմումներից մնակ պատրիարքի դրկած դիմում գործ կատարեց: Չարմանք նա էր, որ իշխանություն Թուրքիայի ձեռքն էր, բայց բուրդ բռնակալներ էին թե՛ հայ և թե՛ բուրդ աշխատավոր ժողովրդին ճնշում: Վանի նահանգից մինչև Կարինի կողմեր, մինչև Խարբերդ, Ադանա, Համիթ, մինչև Մոսուլ, Ջզեր Բոտան, որ գավառ որ մտնես, բուրդ կամ հայ աշխատավոր ժողովրդի բախտ կախված էր բուրդ աշխարհից: Խեղճ ժողովուրդ, դու աշխատի, թող Ստամբուլ աղեն ուտի, դեռ քո սեպհական հողն էլ չի թողնի, որ ցանես, իսկ ինքը՝ աղան, չորս կնիկ առնի, բարձրանա Մատրոս սարի գլուխ, որ քասիբներ նրա հող մշակեն: Աշուն չորս կին չաղացնի, դառնա սարից, նստի ու ապրի ուրիշի թափած քրտինքով: Մի օր մի ուրիշ աղա Մատրոսի հետ կովում է, երկու աղաների մեջ սկսում է քրդական կռիվ: Կես պռնում են Մատրոսի, կես՝ Հատրոսի կողմ: Կռիվ տևում է մի քանի օր, որի ժամանակ Մատրոսի տղան՝ Ջահվորիկը, սպանվում է: Տղայի թաղման ժամանակ Մատրոս չի թողնում, որ իր տղան թաղեն, ասում է. «Իմ տղան մնակ չեմ թողնում առանց խուլամի, առանց մշակի»: Մատրոս վերցնում է իր խանջար, իր ձեռքով զարկում է և մի քասիբ քրդի սպանում է, նոր տղային քրդի հետ թաղում են: Ասում է՝ «Այս աշխարհում իմ տղան աղա էր, իսկ Ջանաթում նորից պետք է աղա լինի: Մի մարդ պետք է, որ իմ տղային ծառայի, որ մնակ չի մնա»:

Այսպես են վարվում աղաներ քասիբ ժողովրդի հետ, բայց Մատրոս շատ չի վայելեց, նրան էլ սպանել տվեց Հասեն աղան: Ջեզիր Բոտանի մի մաս չեն իմանում, որ թուրք կառավարություն կա, թուրքերի լեզուն նրանք չեն հասկանում, թե ինչ բան է թուրքի լեզուն, մնակ իմանում են, որ թուրք իսլամ է, ուրիշ ոչինչ: Իրենց մեջ դատ-դատաստան իրենք են լուծում, տուգանեն, սպանեն, իրենք են անում:

1907 թվին՝ Սուլթան Համիդին ձեռքակալելուց հետո, հրաման եկավ, որ բոլոր աշխարհներին զենքաթափ անեն: Այդ հրաման հասավ Ջեզիր Բոտանի կողմեր, բայց հրամանի մեջ գրված էր, որ մնակ այն զենքեր, որ կոչվում են սորմալի բերդանկի հրացան կամ կավախալի, այնպիսի հրացաններ, բայց չախմախի հրացան պետք է մնա տերերին: Բոտանի կողմեր շատը չախմախի զենք էր, քիչը մեկ կամ

երկու փամփուշտով հրացան էր աղաների մոտ, մնացած քրդեր չունին: Տուրա (նախկինում կոչվում էր Տնորիք) երկրի քրդեր այդ չախմախի հրացան շատ լավ են բանացնում, քան թե ուրիշ երկրի քրդեր: Այնտեղի հայեր մնանապես զինված են, ինչպես քրդեր: Տուրա երկիր բուրդ կամ հայ բոլոր մի տեսակ են զինված: Նրանց մեջ խտրություն չի կար բոլորովին, միշտ եղբոր նման ազատ են: Տուրա ժողովուրդ տասնհինգ թվին նորից միացած կռվեց թուրք բռնակալների դեմ մինչև վերջ: Շատերը մնացին իրենց տեղեր, իսկ մի մասն անցավ դեպի Համիթի կողմեր: Անցան Մոյալ¹⁰⁴ քաղաք դեպի Միջագետք՝ Արաբստանի կողմեր: Տուրա երկրում սայլ կամ ձի անգամ դժվար է ման գալիս: Այդպես քարոտ երկիր չկա ո՛չ Բոտանի կողմեր, ո՛չ էլ նախկին Կորդվացոց կողմեր, Քրդաստան:

Տասնհինգ թվին Տուրա ժողովուրդ միացած կերպով կռվին թուրք Կասիմ փաշի գործերի դեմ իրենց չախմախի հրացաններով և չրոնին, որ թուրքի զինված ուժեր մտնեն երկրի ներս: Երեք հատ թուփ են գրավում Կասիմ փաշայից, բայց կրակել չեն իմանա: Երեք հատն էլ տանում են, ջարդում են: Տիգրիս գետի մեջ զցում են մեծ քանակությամբ զենք, փամփուշտ և շատ ուրիշ ապրանքներ:

Տուրա երկիր ես եղա տասներեք թվի աշնանը: Կառքորա ավանում հին հայկական բերդի բոլոր պատերը և եկեղեցին կան: Կառքորանի բնակիչների շատ մաս քրիստոնյա է: Նրանց պարապմունք հողագործություն է, բայց հող շատ քիչ է: Երկիր քարոտ է: Շատ տեղեր արոր չի բանում, փետատով են սերմ ցանում: Նրանց բերքը խաղող, թուզ, նուռ, դեղձ և ուրիշ շատ մրգերն են, զեյթուն: Ժողովուրդ հավաքում, չորցնում են, բեռներով տանում են կամ Մղերդ, կամ լաստով տանում են դեպի Մոսուլի կողմեր, ծախում են: Նրանց մեջ մի ափ կոտ չամիչ արժեք մի դուրուշ քառասուն փարա կամ այստեղի փողով ութ կոպեկ: Նրանց չորս կուտ մի էշի բեռ է: Մի ուրիշ պարապմունք էլ կա՝ նեճեր կամ որսորդություն: Նեճեր քրդական բառ է: Ընդհանուր Տուրա երկրի մեջ մեծ հարգանք ունեն Կառքորան:

Բնակիչները մաքուր հայ են: Քոսա անունով մի մարդու համբավ տարածված էր բոլոր գյուղերի մեջ: Խալե Քոսա կամ քեռի Քոսա են ասում: Նրան շատ տեղերից կանչում ին, որ քավոր անեն թե՛ հայեր կամ թե՛ քրդեր, գլխավորապես մեծ բեկեր՝ աղաներ իրենց լամուկներին (քրդերը փոքրիկ տղային լամուկ են ասում) թլփատելու ժամանակ: Տուրա գավառ իմ ման եկած գավառներից միակն էր, ուր քրդեր հայերի հետ խաղաղ են ապրում, եթե չի հաշվենք Մոկաց գավառ, որի ղեկավարն էր Մուրթլաբեկ:

Տուրա գավառում Սարհան և Չալաբի երկու եղբայրները թույլ չեն տա, որ մի բուրդ հայի մի հատ

¹⁰⁴ Մոյալ՝ Միդյաթ:

հավիճն քշա ասեր: Մարդ չի լսած, որ Տուրա գավառից մի օր մի հայի մամուսի դիպչեն: Իսկ երրորդ մարդը քեռի Քոսան էր, որ իր խելոքությունով հարգանք ուներ ժողովրդի մեջ:

Կառավարություն ամեն քաղաքում մարդ ուներ դրած, որպես մյուդուր, բայց մնակ որպես անուն: Թուրքի հպատակ են գավառներ: Տուրա գավառ ընկնում է կես Սղերդի սանջակի, կես Տիգրանակերտի սանջակի վրա: Տուրա հյուսիսի կողմ Խարզան է, իսկ արևելյան կողմ Բոտանի գավառն է, որոնց միջից անցնում է Տիգրիս գետ: Քրդեր ասում են Շատա Բոքտան: Բոքտանի մեծ գետ, որ գնում է Ջեզիրի քաղաքի միջից, անցնում է դեպի Մոսուլ: Բոքտան գավառ քիչ տեղ չէ, որ պոնում է Տիգրիսի ձախ ափից մինչև Շարնախ, իսկ արևելյան կողմից հասնում է Հառնակոլ սար մինչև մեր Բարվարի շրջան: Քրդեր Բոքտան ին ասում: Մի սար կար, որ կոչվում էր Ստոչքես Արանի: Սարի սահման էր ընդհանուր Բոքտան, որը կազմում էր մախկին Կորդվացոց աշխարհը, որին քրդեր ասում են Քրդաստան:

Բնակչության ութսուն տոկոս քրդեր են: Շատ գյուղեր, որ մտնեն գյուղի մեջ, նոր կիմանաս, որ այստեղ գյուղ կա: Մնակ աղայի տունն է, որ նոր էր կառուցել: Բոլոր տներ սարի մեջ են. բազալտ քարի մեջ փորել և տուն են սարքած: Թե ի՞նչ ժամանակվանից են կառուցել, հայտնի չէր: Գրվածներ կային, բայց ո՞վ կարող էր կարդալ: Քրդեր ասում են, թե Բատիկ անունով մի ֆրանկ է փորել տվել, նրա համար էլ երկիրը կոչվում էր Բոքտան: Բայց ես տեսա, որ շատ գյուղերի մեջ եկեղեցու հիմքեր կան: Բասան անունով գյուղից մի քիչ վեր Տաշորին էր, նրա մեջ եկեղեցին է, և բոլոր պատեր կանգուն են: Տեղի հայերը մեջը աղոթք են անում:

Ոգմի 1908 թ. կռիվը

Մի քանի ջահելներով որոշեցինք, ինչ գնով լինի, մեր սարի հողեր բաժանենք համայնական կերպով և ցանենք մեկտեղ՝ որպես եղբայր: Այդպես էլ արեցինք: Հողաբաժանություն եղավ 1907 թ.: Հող բաժանին տասը տեղ, այսինքն՝ տասը համայնքի, յուրաքանչյուր 12 տուն: Շատ տուն եզ չկար, նրա համար բոլոր մի տեղ ինք վարում-ցանում: Բայց ցեցեր չթողին, որ ցանած հավաքինք դավաճանության պատճառով: Շատեր գոհ եղան աղաների և թուրք կառավարության կողմից՝ շնորհիվ գյուղի գոռոզության: Ճիշտ ցանեցինք, բայց ծուռ կալսեցինք և չկերանք: Տեր տվեց, տերտեր տարավ:

Մեր մեծեր ասում ին, որտեղ չկա միություն, այնտեղ չկա երջանիկ կյանք, որտեղ չկա կրթություն կամ գրականություն, այնտեղ կլինի վայրենություն: Անմահ Թումանյանի մի «Մի կաթիլ մեղր»-ի պատմություն ճիշտ մեր գյուղի մի խուրձ խոտի պատմություն է: Մեկ խուրձ խոտ 18 մարդի գլուխ կերավ, առանց պատճառի չէր, իհարկե:

Գյուղ երկու թայֆա էր արդեն, մեկ մյուսին չէր ենթարկվի: Չորս տարի էր, որ գյուղի մեջ կռիվ չէր վերջանում: Նախկին կոմետին հանին իր պաշտոնից: Նրա պաշտոն տվին Բաղդիկ անունով մի ջահել տղի, իսկ նրանից հետո պաշտոնաթող Սարգիս սկսեց և իր չար ու փտած ծրագիր գործի դրեց: Ի՞նչ արին անգրագետ երիտասարդներ: Փոխանակ կանչելու և պատժելու չարագործին, ընդհանուր ժողովրդի առաջ մերկացնելու՝ նրանք գործ դրին իրենց կոպիտ ծեծելուն: Նրա դեմ ուղարկեցին մոտ տասը մարդ, լավ ծեծին: Սարգիս ասում էր. «Դու Խալոյի մեկ խուրձ խոտ գողացել ես: Մեր խոտ արժեր տասը փարա» (այստեղի փողով երկու կոպեկ): Այդ ծեծիլ եղավ պատճառ, որ մարդը դարձավ դավաճան: Բաց ծեծելից հետո մարդ նորից գնում է իր արտ և սկսում է գարի քաղել: Կես ժամից հետո Չաթո և Մեթո իրենց զենքերով դուրս են ելնում նրա դիմացի թումբի վրա: Մարդ տեսնում է, որ մոտենում են իրեն, թողնում, փախչում է անհայտ ձորերով, բայց թե ո՞ր գնաց, մարդ չի մանում: Խոտ քաղոցի ժամանակ ամեն մարդ իր աշխատանքի հետ է: Մի կողմից գարի են քաղում, մի կողմից՝ խոտ: Ամեն մարդ հանգիստ քնում է: Գիշեր՝ ժամի չորսին, աղաներ դավաճանների ցուցմունքով պաշարում են գյուղը չորս կողմից: Պոնում-կապում են ցույց տված անգեղք մարդկանց: Եվ թե գոնե լույսը բացված լիներ, կարող էր մի բան մտածելին, իսկ երկու Չաթոներ, չորեր հանած, արխային քնած էին մի գոմի վրա: Հանկարծ երկու աղա քսան քրդի հետ մտնում են ներս, բայց չեն հարձակվի, մոտենում են նրանց, որ կապեն: Տղաներից մեկը զարթնում, հրացանը դեմ է անում և փոքր աղայի դոշին կրակում է: Նրա ընկնելուց հետո, բացի մեռածից, բոլոր փախչում են դուրս և կրակ են տալիս գոմ, վառում են: Տղաներ չեն կարող դուրս գալ, քանի որ մոտ երեք հարյուր խուժան շրջապատում են բոլոր անցքերը: Երեք տղաներն էլ շատ կռվելուց հետո մխից խեղդվում են գոմի մեջ, իսկ կապած մարդկանց սպանում են գոմի դուռ: Նրանից հետո հավաքում են շատ հայերի, որ 100 մարդ սպանեն այդ մեկ աղայի դիմաց: Բայց հայերի բախտից նրանց մեծ աղեն շուտ է հասնում կռվի տեղ և փրկում է կտորածից հայերին, իսկ դավաճաններ աղայի հետ փախչում են քրդի գյուղ՝ Բետար¹⁰⁵: Նույն օր գյուղ գաղ-

105 Այդ դեպքի մասին հայտնի է նաև. «1908 թին ընդհանուր խուզարկությունն չազատեցաւ նաև Ոգիմը: Պետական վաշտ մը գործի հետ շրջապատող քիւրտերը եկեր էին զինաթափելու ըմբոստ գիտը: Ընդհարումը անխուսափելի կը դառնայ ոգմեցիներու ու խուզարկու գործին միջև ու դաւաճան Սարգիս պատճառով գիտի աչքի ընկնող կռուիները՝ Բօզօն, Աբրօն և ուրիշները կը պաշարուին Գոմերու մեջ և վերջ ի վերջոյ գոհ կերթան անհաւասար կռիւն» («Դրօշակ», 1928, № 4, էջ 125): Նաև «Մինչև վերջին շունչը կռուելէ յետոյ եօթն քաջերը այրուեցան բոցերուն մեջ: Այդ ողջակէզ հերոսներն էին՝ Բօզօն Տիգրան՝ 40 տարեկան, Աբրօ՝ 30 տ., Բօզօ և Մինաս Շերոյեան եղբայրներ՝ 30 և 35 տ., Արուիկ՝ 28 տ., Բաղդիկ՝ 27

թեց Մոկպաց շրջան՝ Մուրթլաբեկի թևի տակ: Խուրձ խտուն էլ գնաց, ցանքն էլ հետը գնաց, բաղ, ծառ, տուն՝ բոլոր կես եղավ: Պատճառ առաջին՝ գոռոզություն, երկրորդ՝ անգրագիտություն:

Այդ դեպք պատահեց 1908 թ. հունիսին՝ Հուլիսից առաջ¹⁰⁶: Մրա գլխավոր պատճառ նա էր, որ մեր գյուղի մի քանի տղաներ լսել են, որ Ռուսաստանում դեմոկրատ կուսակցություն կա, բայց չեն իմանում, թե ի՞նչ է դեմոկրատ կամ սոցիալիստ: Ջրի ձայն լսել են, բայց աղբյուր չեն տեսել, նրա համար գոռ տվել են կուպիտ ծեծի և մարդկանց ան-

պատվելու, որովհետև նրանք լսում էին մեր գյուղի ութնովհներանից, որ մի գավազ կին էր, չարժե նրա անուն տալ անգամ:

Մի պատմություն ևս 1908 թվականից

Ութ թվին մեր գյուղ շատ վատ դրության հասավ: Մի տղա, որ Վանի կոիվներին փախած էր դեպի Խանասոր դաշնակների հետ, ձեռքին զենք չի ունեցել: Կովին չէր մասնակցել, մի կերպ ուրիշի հետ ազատված է եղել, փախել է Մալամաստի կողմեր, հետո Վան: Մի տարուց հետո նրան պնդում է թուրք կառավարություն, որպես ֆիտայի կաշաղ, բայց մեր գյուղից մի քանի մարդ գնում են Վան, դիմում են վալի փաշային, կաշառք են տալիս, ազատում, բերում են գյուղ՝ որպես մեր գյուղի պատիվ: Բայց վերջը այդ մարդ դարձավ գյուղի ավերող: Խառնեց ընդհանուր գյուղ եղած երկու ավազակ թայֆայի: Նա ասում էր. «Ես Խանասորի զինվորն եմ, ինչ ուզենամ, կանեմ, իմ դեմ խոտողին կսպանեմ»: Տեսեք, թե ինչ գնով նրան ազատին բանտից, իսկ ինք ինչ արավ լավության դիմաց: Առաջին իր հորաքրոջ մարդին կապավ: Մեր գյուղի մեծ տեր Ստեփանին մորուսից պնդեց, թափ տվեց, հետո իր հորեղբորն անպատվեց և շատ ուրիշների: Մի անգամ գյուղի հովիվներ սարում կռվում են, ինքը մեջ է ընկնում:

–Այ մարդ,– ասում են գյուղացիք,– դու ոչխար, տավար չունես, ի՞նչ գործ ունես ուրիշի հովիվների հետ:

Ո՛չ ռեսի կհարցներ, ո՛չ էլ տերտերոջ, ո՛չ էլ իր տուն. «Ես Խանասորի զինվոր եմ»:

–Կրակ ընկանք, որ գնացիր Խանասոր, փախար,– ասում են գյուղացիք:

Մեկ ուրիշ էլ, որ եկավ, նա լավ մարդ էր: Նրա անուն Բոզո էր: Բնիկ ոգմեցի, շատ խելոք և կոշաղ տղա էր: Բոզոն հազար ինը հարյուր չորս և հինգ թվերին եղել էր Երևանում, մասնակցել Դամարլուի հայ-թուրքական կոիվներին: Բաքու էր գնացել, բավական բան էր պատմում Բաքվի բանվորական շարժման մասին: Ինք մասնակից էր եղել բանվորական շարժմանը, հետո նրան պնդել են, ուղարկել են դեպի Միքիլ, բայց փախել էր ճանապարհի կեսից, հասել էր Երևան, այնտեղից էլ մեր գյուղ: Բայց գյուղ չմնաց, գնաց Վան, մի աղջկա հետ նշանվեց, նրան թողեց Վան, ինք եկավ գյուղ: Առանց պատվելու մնաց, ինքն էլ գոհվեց՝ չար մարդկանցից խարվելով: Բոզո, որ եկավ գյուղ, քրդեր տեսան նրա շորեր, որ մեր գյուղացու շորի նման չէ, գնացին կառավարության ասին, թե ոգմեցիք ֆիտայի են պահում իրենց գյուղի մեջ: Բոզոն ստիպված գնաց Վան, մտավ Վանի շրջիկ խմբի մեջ, բայց այնտեղ էլ երկար չմնաց: Մարդու բախտ կապած էր:

Մի օր մի հայ գյուղի մեջ գիշեր դուրս է գալիս Բոզո, տեսնում է, որ իրենց դեկավար մի հայ կնոջ հետ չար գործ է անում, ուրիշի պատիվ գցում է: Էլ

տ., և Յովսեփ՝ 25 տ.» (Աճեմեան Հ., Վասպուրական, էջ 266): Ոգմեցի Ասլան Ստեփանյանն էլ իր հուշերում նշել է. «Ոգմեցի դաշնակցական գիւղական խմբապետ Սարգիս Դաթեանին մեր ռազմիկները ինչ որ յանցանքի համար սաստիկ ծեծել էին: Սարգիսը գնում է Բարվարի քիւրդ Ջամիլ բեկի մօտ եւ նրա պաշտպանութիւնն է խնդրում: Մի քանի օր յետոյ Ջամիլ բեկը, արեւածագին, իր մի քանի տասնեակ ծիաւորներով մտնում է Ոգմի գոմերին եւ մտնում է այն գոմը, որի մէջ գիշերող տղաները գնացել էին լեռները աշխատանքի: Գոմում մնացել էին միայն Աբրոն եւ Բոզո Տիգրանը, որոնք Ջամիլ բեկին տեսնելուն պէս հրացանազարկ են անում: Քրդերը յարձակում են գոմի վրայ, որ ներս մտնեն, սակայն Աբրոնն ու Տիգրանը յետ են մղում յարձակումները: Քրդերը բարձրանում են գոմի կտուրը եւ խոտերի խուրձերը վառելով՝ նետում են գոմի մէջ: Աբրոն ու Տիգրանը խեղդող ծուխին չդիմանալով, կրակելով դուրս են վազում, սակայն երկուսն էլ սպանում են՝ գոմակների տարափի տակ: Քրդերը դրսում բռնում են Բաղդիկին եւ սպառնում են սպանել, եթէ գիւղում պահուած զենքերի տեղը չյայտնի: Բաղդիկը մահուան սարսափի տակ մատնում է զենքերի տեղը: Քրդերը զենքերը գրաւելուց յետոյ Բաղդիկի ձեռքերը կապում են եւ մտնում են գոմը...: Գոմի դռան առջեւ, երբ Բաղդիկը տեսնում է իր սիրելի ընկերների՝ Բոզո Տիգրանի, Աբրոյի, Արեւիկի եւ Տիգրանի եղբայր Մնասի դիակները (վերջին երեք հոգին սպանուել էին աշխատանքից գոմերը վերադարձին)... ընկնում է Տիգրանի դիակի վրայ եւ պաղատագին ձայնով քրդերից խնդրում է, որ իրեն էլ սպանեն: Քրդերը «մամարո» չեն լինում, անմիջապէս սպանում են ...Բաղդիկին եւ հեռանում: Ոգմ գիւղի ամբողջ բնակչութիւնը կտուրների վրայ կանգնած դիտում էր այս արիւնոտ տեսարանները: ...Քրդերի վրէժխնդրութիւնից վախենալով, ոգմեցիք ամբողջ գիւղով վազրում են Մոկպի Գոմանց գիւղը...: Ոգմում ոչ մի հայ չի մնում» (Ասլան Ստեփանեանի հուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966): Ի դեպ, ոգմեցիները Գոմանցում մնում են մոտ 1 ամիս՝ մինչև 1908 թ. հուլիսի 10-ը՝ Սահմանադրության հռչակումը:

Միայն մեկ տարի անց է հաջողվում սպանել դավաճան Սարգսին. «Ոգմի պատիվը արատաւորած էր և պէտք էր մաքրել: Եւ Լաթօն իր մէկ քանի ընկերներուն հետ կը հետապնդէ Սարգսին և, մօտ մէկ տարի յետոյ, լիովին կը վերականգնէ ոգմեցու արատաւորած անունը: Նոյն իսկ դաւաճանի հետաւոր ազգականները չազատեցան պատժէ, գիւղացիներու պահանջի վրայ» («Իրօշակ», 1928, № 4, էջ 125): Կան «Սահմանադրութեան հռչակումից մեկ տարի յետոյ, 1909-ի ամառը, դաւաճան Սարգիսը, իր եղբայր Յարոն եւ մեկ ուրիշը քրդական շրջաններից անցնելով փորձում էին գնալ Մոկպ: Ոգմեցի հերոս Լաթոն իմանալով նրանց անցնելիք ճանապարհները, մի քանի հոգով սկսում է հետապնդել նրանց: Երբ դաւաճաններն անցնում են, Լաթոն եւ ընկերները դուրս են գալիս քարերի ետեւից եւ երեքին էլ սպանում են՝ լուծելով Ոգմի գիւղացիութեան վրէժը» (Ասլան Ստեփանեանի հուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966):

106 Մեկ այլ տվյալով դեպքը տեղի է ունեցել 1908 թ. հուլիսի 11-ին՝ Օսմանյան սահմանադրության հռչակման օրը. հայերն ունեցել են 7, քրդերը՝ 4 գոհ (Վշտասպատում, էջ 171):

չի դիմանում Բոզոն, հարձակվում է դեկավարի վրա, որ մի լավ ջարդի նրան, բայց Բոզոյի ընկեր միջամտում է և չէ թողնում: Նրանից հետո Բոզո դառնում է այդ մարդու դուշման: Մի քանի օրից հետո խմբի դեկավար գաղտնի որոշում է, որ Բոզոյին մեջտեղից հանի: Որոշում է, որ քնած տեղ Բոզոյին խեղդել տա, որ ասեն, թե հիվանդ էր, մահացավ, որ ոգմեցիք չմտածեն, թե սպաներ են: Բայց Բոզոյին Գուրգեն անունով մի լավ ընկեր է լինում նրանց մեջ: Հայտնում է Բոզոյին, թե քեզ կվնասեն, փախի՛ր ձեր գյուղ, որ քեզ պաշտպանեն, թե չէ, որտեղ որ գնաս, քեզ սպանել կտան: Բոզոն փախավ, եկավ գյուղ: Մի տասն օրից հետո Իշխան, այդպես էր դեկավարի անուն, եկավ մեր գյուղ իր խմբով: Նստավ մեծ թթի ծառի տակ, կանչեց գյուղացոց և պահանջեց, որ Բոզոյին բերեն, հանձնեն իրեն. «Նա փախած է մեր խմբից, պետք է նրան տանեն, թող իր պատիժ քաշե: Քանի գլուխ ունի, որ պատիվ գցի, ես նրան տիկ կհանեն, շուտ կանչե՛ք նրան, թող գա, եթե չգա, գոռով կտանեն»:

Բայց գյուղի մեծեր իմացան, որ Բոզոյին կտանեն, կսպանեն: Այն ժամանակ մեր գյուղացի ռես Պետրոս իր քույր գլխից հանեց, իր ոտին քաշեց: Մարդիկ տեսան, որ ճղում է իր քույր: Իշխան հարցրեց. «Ինչո՞ւ ես ճղում գդակդ, Պետրո՛ս»: Պատասխանեց. «Ես իմ քույր կհղեն, իմ գլուխ լաչակ կզցնեմ, ես ուզում եմ դառնամ կնիկ, ես տղամարդ չեմ, որ դու գաս իմ գյուղի մարդուն տանես, սպանես: Մենք բոլոր ոգմեցիք մեռա՞ծ ենք, որ դու մեր մարդուն գոռով տանես մեր գյուղից: Մենք չենք տա, թե դու կարող ես, գոռով տար»: Բոլոր գյուղացիք ոտքի են կանգնում, հեռանում են, նրանց թողնում են թթի ծառի տակ: Հաց են ուզում, հաց էլ չեն տալիս: Սոված թողնում, հեռանում են գյուղից:

– Բայց դուք չնոռանաք, ոգմեցի՛ք, ես ձեր գյուղ չի վառեմ, ամոթ ինձ, – ասում է պ. Իշխան:

– Գնա, որտեղ բարակ է, այնտեղ կտրի, – ասում է Նուշիկեց Մարտուն:

Բայց վերջ լավ չարավ Բոզո: Մահից փրկողներ դարձան իր համար վատ մարդ: Նա կապվեց Աբրոյի հետ, սկսին հալածել իր ազատողներին, դարձավ մի քանի անգրագետ, կոպիտ ջահելների ընկեր, չի լսեց մեծերին և այնպես էլ զոհվեց, իր նպատակին չի հասավ: Մեր գյուղացի Լաթկանց Սուտ ծեր մարդ էր, նրանց ասում էր «չիր կերող խումբ» կամ Ալի սորկ, որ նշանակում է ծույլ վարդ:

Մեր գյուղի ութ թվի դեպքի մասին վերև գրած է արդեն, բոլորի պատճառ դարձավ Ալի սորկ խումբ մի քանի մարդու սպանության և իրենց կյանքին:

Ոգմի 1909 թ. մայիսյան կռիվը

Թուրքիայի սահմանադրություն այնպես նշանակություն չունեցավ մեր Բարվարի կամ Մղերդի, ինչպես Կարճկանի Կեցանի Մուսաբեկի համար: Մղերդից դուրս եկավ կուգ Ֆարիաթ աղեն, Բարվա-

րից խորամանկ, հայ ազգին չուզող Մուֆի Մահմատ աղեն, Կարճկանից հայ ազգի դահիճ քոռ Մուսաբեկ: Հոռեթ չուզողներ շատ դուրս եկան, բայց նրանց նման մնակ Ադանայի դահիճ շեխ Բրահիմ սկսեց, Մուլթան Համիդի ծրագիր պաշտպանեց և սկսեց Ադանայի հայերին կոտորել: Նրա համագարկի ձայն հասավ շեխ Սայիդ Ալուն և քոռ Մուսաբեկին, կուզիկ Ֆարիաթ աղին, ինչպես նաև մեր Բարվարի աստված խաբող Մահմատ աղին: Ասում ին նրանք՝ «Հայ ի՞նչ է, որ մեր խոսքից դուրս գա, ապա մեր խոս, ցորեն, գարին ո՞վ պիտի քաղի, խոս մենք աշխատող չենք կամ մեր տղաներ, մեր կնիկներ չպիտի աշխատեն, իսկ հայեր ազատ ման գան, ամ վե հուրիաթե կաբոլ նագան, մա ամ ֆլանա¹⁰⁷: Հագեր սուլթան Ռաշադ տի տրսի բլաբի, նավ մա¹⁰⁸»:

1909 թվի մայիսի ամսի քսանին¹⁰⁹ Համբարձման օր-գիշեր սախուտցի Կաստ անունով ծանոթ քուրդն եկավ, գիշերը կանչեց գյուղի ռեսին, ասավ.

– Կփախե՛ք գյուղից, դավաճաններն աղաներին հայտնած են, թե ոգմեցիք ռուսական մոսինի զենքեր են բերած Վանից, կուզեն հարձակվեն ձեր Բետար գյուղի վրա՝ իրենց վրեժ հանեն ձեզմից: Քրդեր պատրաստված են, գալիս են ձեզ կոտորելու, բայց խնդրում են իմ անուն չտաք, ես շատ գողտիկ եմ եկած, խերս ինձ դրկեց: Խերս նրանց ժողովի մեջն է եղած: Ես վաղ առավոտ նորից ձեզ իմաց կտամ, մի հրացան կկրակեմ, դուք իմացե՛ք, ես քրդերի հետ եմ, դուք պատրաստ կացե՛ք, քրդեր շատ են:

Աղաներ հավատում են դավաճանին և պատրաստվում են առանց կառավարության իմաց տալու առավոտ շուտ վեց հարյուր կատաղած քուրդ խուժաններով հարձակվել Ոգմ գյուղի վրա՝ երեք դավաճան եղբայրների առաջնութամբ:

Կաստ գնաց, իսկ մենք սկսեցինք գյուղից դուրս գալ գիշերով: Մեր գյուղի կին մարդից պակաս չէր և սովոր էր թե՛ փախելու և թե՛ կռվելու ժամանակ: Նրանք, որ ընկան սար ու ձոր, ձի նրանց չի հասնի: Բարձկան չունինք, ինչ որ շալակով տարանք, նա է մերը, մնացած կմնա քրդերին: Ոչխար, տավար առինք և մինչև առավոտ մաքրվանք, ելանք Տսմանուկի անտառ: Շատ հեռու չէ՝ Մոկաց սահմանին, որ բաժանում է Դեղին ջուր ձորակ, որ կլինի կես ժամվա ճանապարհ: Գիշեր մարդ չքնավ: Ձինված երիտասարդներ գրավեցին կարևոր դիրքեր, իսկ ժողովուրդ մինչև առավոտ գյուղից իրենց ապրանքի թեթև մաս տեղափոխում էր անտառ: Ի՞նչ կար ոգմեցուն, բացի իր թաղիք կամ փալասի կտորներից, որովհետև առաջին կամ երկրորդ անգամ չէր, որ փախչում ինք:

107 «Մենք այս ազատությունը չենք ընդունում, ինչի մենք հայ ե՞նք»:

108 «Եթե սուլթան Ռաշադը փախենում է, թող գա մեզ մոտ»:

109 Համբարձման օրը 1909 թ. մայիսի 7-ն էր:

Մեր զինված տղաների դեկավար Ռաշխտի տղան էր: Նա ինձ երեք ընկեր տվեց ու թողեց գյուղի մոտ՝ Դաշտի հանք, մինչև ժողովուրդ մաքրվի գյուղից:

Նոր էր լույս բացվել, որ Կաստյի հարց դուզ դուրս եկավ. անտառ պաշարված էր քրդերով: Կաստյի հրացան կրակոց մեզ իմաց տվեց, թե եկան: Մենք՝ զենք ունեցողներս, դուրս եկանք կռվելու: Կռիվ սկսեց մեր Բարձրափ կոչված սարի կողմից, մեր գյուղից մինչև Կալի սեր միանգամից սկսին կրակել, ի՞նչ պետք է անել: Ժողովուրդ պետք է փրկել, կռիվ սկսվեց նաև մեր կողմից: Մոսխնի գեներալ արտադրողի ձեռք կանաչ մնա: Մոսխն կռկռաց սարուձոր, դրդրաց, քուրդ չէր լսած ռուսական գեների սարսափ, և մնացին շշմամբ: Ռաշխտի տղան, Մանուկ, Եղո, Մարգիս, Վարդան, մի տասը մարդ անցան Դեղին ջուր և բարձրացան Մոկաց գավառի Գոմանց գյուղի սար, որ քուրդ չկարողանա ժողովրդի ճանապարհի կտրի դեպի Մոկաց կողմ գնալու, իսկ մի քանի տղա Մեփանի, Հովսեփի հետ բարձրացան ուղիղ դեպի քրդերի ճակատ, մեզ էլ թողին վերջապահ, մինչև ժողովրդին վտանգից ազատենք: Մեզ հաջողվեց, և մի ժամում ժողովուրդ հասցրինք Գոմանց գյուղ: Գոմանց հասնելու պես առաջացան դեպի Մոկաց խորքեր և Փոխիկ անունով մի մարդու կասրդ ուղարկին՝ Մուրթլաբեկին հավար կանչելու:

Կռիվ գնալով տաքանում էր: Մենք, որ հասանք տղաների մոտ, Խաչո վիրավոր էր շատ թեթև: Նրա հրացան եղբար՝ Եղիազար¹¹⁰ վեցրեց: Մեզ կարգադրին բարձրանալ Գոմանց գյուղի Դեղրան սարի գլուխ, որ թշնամին չգրավի այն սարի արևելքի կողմ՝ որպես մեր ժողովրդի միակ ազատելու ճանապարհ: Տասը հոգի բարձրացանք այդ սարի գլուխ: Հազիվ ինք հասել սարի հյուսիսային կողմ, որ տասքսան քուրդ մի դավաճանի հետ հարավային կողմից դուրս եկան մեր դեմ: Երկու կողմից սկսեցինք կրակել: Մեր զենքի ուժի շնորհիվ մեզ հաջողվեց գրավել սարի կարևոր տեղեր: Քրդեր տեսան, որ կարող է իրենց սպանենք, թողին, փախան: Այդ ամբողջում մնաց մեր ձեռք, մինչև կռիվ վերջացավ:

Մեր ձախ կողմ կռիվ ընկնում էր Կոչխոնց կամուրջ, որի պաշտպանություն հանձնված էր Լաթկանց Մանուկին: Մարդ լավ դիմացավ մինչև վերջ: Այն օրվան կռիվ դեկավար Ռաշխտի տղան՝ Լուսիկ, ընկավ այնպես տեղ, որ հնարավոր չէր կան ինք դուրս գալու, կան նրան օգնություն տալու. նա ընկեր էր աղայի և դավաճան Մարգսի դիմաց: Նրա փոխարեն Եղիազարն էր թե՛ նրա թիկունք պահող և թե՛ կռիվ դասավորող:

Այդ օրվան կռիվն բոլորը լավ դիմացան: Վարդան, Մեփան, Պետրոս ընկան Ռաշխտ աղայի հե-

տևից: Նրա հացի չանթիկ խլեցին մոտից, բայց իրեն չսպանին, որովհետև կարգադրված էր, որ ինչքան հնարավորություն կա, մարդ չսպանեք, քանի որ մեզնից մարդ չի սպանվի: Մեկ էլ որ մեր գյուղ թաք գյուղ էր՝ շրջապատված քուրդ գյուղերով: Դա մեր ապագայի հարցն էր, թե որ միտք ունինք մեր գյուղ ապրելու, աղա սպանելու կարիք չկար: Կռիվ վերջացավ ժամի չորսին, որ Մոկաց Մուրթլաբեկ հասավ կռիվ տեղ: Բեկը թուլեցան սպիտակ դրոշակ կապեց փետի գլուխ, տվեց մի զավթի ձեռք, բարձրացավ բոլոր դիրքերի վրա ու կանչեց. «Մուրթլաբեկ եկա՛վ»: Բուլեական կռիվ դադար առեց, էլ ոչ մի տեղից զենքի ձայն չլսվեց, յուրաքանչյուր քաշվեց իր կողմ: Բեկ կարգադրեց. «Ուզմա ժողովուրդ թող անցնի Մոկա, մնացած ես կխոսեմ կառավարության հետ, ձեր գործ չէ»: Նույն օրվան երեկոյան ընդհանուր ժողովուրդ իր ոչխար, տավար դեմն առավ, անցավ Մոկա, Կարմիր կամուրջ և անցավ Պռնաշենի ճամ¹¹¹: Այդ օրվան կռիվ խերով էր, Համբարձման կիրակին, մարդկային զոհ չեղավ¹¹², բայց մեր գյուղի քրջեր՝ ջուլ, փալաս, տարան, կոխին իրենց փոր, էլ դուրս չեկավ:

Այն ժամանակ Մուրթլաբեկ Մոկաց գավառի պետն էր: Տուն հասնելուն պես հեռագիր տվեց Վանա վալի փաշին: Չորս օրից հետո պատասխան եկավ, թե Հուռիեթի ժամանակ այդ գաղթված ժողովրդին կորկես Վան, որ մենք խոսենք համապատասխան մարմինների հետ: Չորս օրից հետո Հադարով սարով անցանք Գավաշի գավառ, ոչխար, տավար թողինք այնտեղ, վերցրինք մոտ 500 անձ՝ մարդ, կին, երեխա, շալակով հասանք Վան, երեկոյան արևմտոցին քոչեր թափինք վալի փաշի բալկոնի առաջ՝ Խաչփողանի մեջ: Մեր ժողովուրդ արդեն բեզարած, ջարդված էր և ավելի կատաղածի մասն: Մախսոս կանչում էր. «Վալի՛ փաշա, դուրս արի՛, քո ապուր իփինք»: Գալկանց Հակո, որ բռնում էր, նրա ձեռն հասնում էր մինչև վալի փաշի կնոջ ականջ: Կին սարսափով դուրս եկավ տանից, մեզ տեսավ, նորից փախավ ներս: Ով որ մեզ տեսավ, զարմացավ թե՛ թուրք և թե՛ հայ: Նույն ժամին վալի փաշան կառավարության կողմից երկու հայ, երկու թուրք ուղարկեց, որ մեր ժողովրդին տեղափոխին քաղաքի մեջի ցորենի ամբարների մեջ, որ գարուն դատարկ է լինում: Մարդ բերին, մաքուր մաքրին, մեզ տեղավորեցին այդտեղ: Նույն երեկոն մեր ժողովրդի համար բերին հաց, պանիր, շաքար, չայ:

Գիշեր անցավ: Առավոտ շուտ պետական պաշտոն ունեցող երկու հայ մի թուրքի հետ եկան և թե՛ մեր կռիվ մասին, թե՛ մեր թողած թալանի և թե՛ ցանքերի, թե՛ անտեր մնացած բաղերի մասին մանրա-

110 Ծամ՝ գետափնյա դաշտ:

112 Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1909 թ. Համբարձման երկուշաբթի օրվա կռիվ ժամանակ սպանվել է 1 քուրդ և վիրավորվել 1 հայ (Վշտապատում. Հայոց մեծ եղեռնը ակամատեսների աչքերով, էջ 171):

110 Խոսքը հավանաբար վերաբերում է Եղիազար Մանուկյանին, որը 32 տարեկանում սպանվել է Նոր Բայազետում (Աճմեան Հ., Վասպուրական, էջ 266):



Մուրթուլա բեկը և Մոկսի վարչակազմի անդամները (լուս.՝ Ե. Լալայանի)

մասն գրին, տարան: Գրել տվինք, որ մեր ոչխար, տվարի կես տարած են: Նրանք գնացին: Առավոտ շուտ մեր ռեսին և մի քանի մարդու կանչին, թե ստորագրեք այս դիմումի տակ: Ստորագրել չգիտեն: Մի ոգմեցի Վան էր ապրում, նա ստորագրեց: Մի պատճեն սուլթանին, մեկ՝ հայոց պատիարարքին ուղարկին: Մեզ էլ պահին: Մոտ 5 օր անցավ, մինչև պատասխան եկավ, տասն օրից հետո նորից պատճեն ուղարկին: Վանա փաշեն, մեկ Բիթլիսի փաշեն «Ելտեզ» գոչեցի հրաման. «Ասկար կուղարկեք այդ գաղթված գյուղ՝ մեղավորներին սաստիկ կերպով պատժելու, թալան հետ վերադարձնելու հայերին և հայերին տանելու և իրենց գյուղ տեղավորելու»¹¹³: Բիթլիսի վալին հեռագիրը տվեց Վանի վալին և պահանջեց, որ Ոգմա մեծերեն չորս մարդ ուղարկեն Բիթլիս՝ մեր դրկած գորքի հետ Բարվարի գավառ գնալու համար: Որպես ծանոթ ճանապարհին՝ մեր միջից ուղարկին ռեսին, որ Կարունց Հովհաննեսն էր: Նրա հետ ուղարկին Վարթկանց Մարդո, Երցո, Պետրոս և Ծուռ Շահեն, Մանուկ: Նրանք հա-

սան Բիթլիս և առաջնորդեցին պատժող զորաբանակին, որի ղեկավար մեկ նորից Կոտան Ալի բեկն էր, մեկ Կուզ Ֆարհաթ աղեն: Բանակ Բիթլիսից շարժվեց դեպի Սղերդ, իսկ մեր տանջված ժողովրդին նորից ուղարկին Գավաշ գյուղեր, բաժանին գյուղերի վրա, մինչև հրաման տային մեր գյուղ երթալու: Գարուն անցավ, ցանք, բաղ առանց ջուր մնացին: Շոգ երկիր, ջրին սովոր ցանք, բաղ, ծառ կդիմանա՞ն: Որոշեցինք գոնե տունեն մի մարդ երթա գյուղ՝ արտեր, բաղեր ջրի, տեսնինք վերջ ի՞նչ կլինի: Բայց դեռ վախ կար, նրա համար էլ ամեն մարդ չեկավ: Բայց մենք տաս-տասնինգ մարդ գնացինք: Ի՞նչ տեսանք, երանի թե չգնայինք. ավերակ գյուղ մտնել չէր լինի: Կոտրած աման, հավի բմբուլ գյուղ ծածկեր էին, թե կոչաղ ես, գյուղ մտի: Դուրս եկանք գյուղից, ելանք գոմեր: Գիշեր մնացինք, առավոտ մի տասը զափթիա եկան գյուղ, նրանք ասին, թե Կոտան Ալիբեկ զորքով հասավ Բետար քրդի գյուղ: Աղեք փախած են, բայց շատեր պռնված են, իսկ մենք գնում ենք Մոկս՝ Մուրթուլաբեկին կանչելու՝ որպես ականատես վկա: Մենք արխային եղանք, սկսեցինք մեր արտեր ջրել, բայց Մուրթուլաբեկ ուշացավ, չեկավ: Մեկ էլ Ալիբեկ քսան զինվորով եկավ մեր գյուղ՝ անձամբ տեսնելու գյուղի վիճակ և անցավ Մոկս՝ Մուրթուլաբեկին բերելու: Մյուս օր դարձան մեր գյուղից, անցան Բետար քրդի գյուղ, բայց Մուրթուլաբեկ մեր գյուղի դրությամբ

¹¹³ 1909 թ. հունիսի 8-ի լրատվությամբ՝ «Ոգիմ գիտի ծանօթ հափշտակութեան և յարձակման խնդիրներուն համար Բաղէշն գալիչ զօրագունդ մը որկուած է Բարվարի քուրդ գաւառակը, բայց քիւրտերէն ո՛չ ոք ձերբակալուած չէ ու ոգմեցի զաղթականները դեռ կթափառին Կաւաշի ու Մոկաց գաւառակներուն մէջ» (Ս. Ն. Թղթակից, Կառավարական հրամաններ Վանայ համար, «Բիւզանդիոն», № 3862, էջ 1):

բոլոր ցույց տվեց Ալիբեկին: Մարդ ուղարկին Գավաշ, որ ժողովուրդ դառնա գյուղ, իր ցանքեր ջրի, տիրություն անի իր ավերակին:

Իսկ ի՞նչ եղավ քրդերի վիճակ: Հրահանգ տվին ասկարին ազատ գործելու, ամեն տեսակ իրավունք տվին նրանց: Այն չարչարանք, որ ասկարներ տվին քրդերին, նրա մասին պատմելու չէ: Մեր տարած թալան հավաքին. մի հատ կնոջ ծամ, որ մեր կանանց սովորություն էր քամակի կողմից կապում են իրենց մազերից, նրանց ծամ են ասում, թալանի հետ հավաքին բերին, մեջտեղ դրին: Մուրթլաբեկ, որ տեսավ, կանչեց քրդերին, բերեց:

–Լավ,– ասավ:– Կռիվ տեսել ենք, ոչխար, տավար տանել, թալան տեսել ենք, բա սա ի՞նչ է, որ դուք բերեք եք, չե՞ք ամաչում, գետին չե՞ք մտնում, ամոթ ձեզ, որ դուք մարդի բոլոր եք դնում ձեր անամոթ գլխին:

Փետով տվեց, գցեց շեխի ոտների մոտ, թքեց, հեռացավ:

Մի աղայի կին էլ Ալի բեկն էր պահե իր մոտ, իսկ մյուս աղայի մորը Կուզ Ֆարհաթ աղեն էր պահում իր մոտ: Աղեք փախած ին սարեր, չկան: Ասկար գնաց գյուղից, բայց մի քանի աղա և քուրդ պոնեց, տարավ, բանտ գցեց, քանի տարով բանտարկել տվեց: Մեր գյուղեն տարած թալան հետ բերին նորից մեր գյուղ, բայց պետք է ասել, կես փուչ դարձավ: Շատ մարդ իսկի չմոտեցավ, տիրություն չարավ: Վերջ գյուղ նորից հավաքվեց, ցանք քաղին: Նրանից հետո այդ բարբարոս քրդեր դարձան փախասի կտոր:

Մեր գյուղից մի քանի տուն չվերադարձան, մնացին Հայոց Ձորի գյուղեր: Այդպես է միշտ. հիսուն տուն մնացել ին զանազան տեղեր: Որ ժամանակ որ մի դեպք է եղել, մի քանի տուն փախել են Ոզմից, ապրել են ուրիշ տեղեր՝ Վան, Թիմար, Ալջավազ, Հայոց Ձոր, Գավաշ, որտեղ որ հարցնիր:

1910 թ. հողային-սահմանային խնդիրը

Մեր գյուղի Գունկանց Մուրադի մոտ թուրք կար, որ արաբերեն լեզվով գրված էր մեր գյուղի սահմանի մասին Բատիրխան բեկի ժամանակվանից: 1910 թ., որ մենք Տինեց քրդերի հետ կռվանք, մոտ վաթսուն մարդ սպանվեց քրդերից: Այդ թուրք մեզ փրկեց:

Քրդեր ապօրինի կերպով արձակվում ին մեր գյուղի խաղաղ բնակչության վրայ, այն էլ Հուռիեթի ժամանակ: Միտք ունին զենքի ուժով մեր ընդհանուր Գուփեր կոչված հողից և անտառից մեզ զրկին, այսինքն՝ հանին մեզ գյուղից:

Կովից առաջ մեր գեղ եկան չորս շրջանի գայմազամներ, երկուսը՝ մեր և Կարսոյի շրջանից՝ Բիթլիսի կողմից, իսկ երկուսն էլ Մոկլաց և Ոստանի շրջաններից՝ Վանի կողմից: Բոլոր հավաքվեցին մեր քավառնի¹¹⁴ մեջ:



Մուրթուլա բեկի աղջիկն ու ծոռը (լուս.՝ Ա. Չախնազարյանի, 1972 թ.)

Այն ժամանակ մեր գյուղացիք Մուրադի մոտի գրված վկայական ցույց տվին, որի մեջ բոլոր սահման գրված էր. արևմուտքից՝ Դաշտուկա կամուրջ, հարավից՝ Հարինա գետ, արևելքից՝ Բազարոկան, Հելինա ճուկան, Շարաֆե բերդ մինչև Աղլեզ և Կոթոզակ սար, մինչև Դեղին ջուր, որ հյուսիսից թափում է Մոկլաց գետի մեջ: Մի քար կար, որ ասում են Կելե ագո: Բայց քրդեր չհամաձայնվեցին և չսին կառավարության ներկայացուցիչներին, թողին հեռացան՝ ասելով. «Մենք սահման զենքով կորոշինք, մեր պապեր իրենց ոչխար միշտ այս սարի վրա են պահել, չենք ենթարկվի անհավատ հայերին»:

Կառավարության մարդիկ նրանց ասացին. «Հող հայերին է, կարող եք որպես հարևան համաձայնիք իրարու հետ: Իսկ զենքի ուժով, որ դուք ասացիք, ինչքան մարդու կամ անասուն վնաս պատահեց, դու ես պատասխանատու, Իսո՛ւ աղա: Մի՛ կարծիր, թե փորիդ մեջ ճրագու կա, սրանց ոզմեցի են ասում, հույս մի՛ դիր ձեր հաց կերող քրդական ավազակների վրա, դու կփոշմանես, Իսո՛ւ աղա, այնժամ էլ Մուրթլաբեկ չի խառնվի ձեր գործերին»:

Մի քանի օրից հետո Իսո աղան ասաց հայերին, թե մեր մեռելներ թաղված են այդ սարի մեջ, դուք ինչո՞ւ եք հակառակում մեզ, իսկ մեր գյուղացի Մուսին նրան այսպես պատասխան տվեց. «Իսո՛ւ, դուք Ջզեր Բոտանից մինչև Որենագու, որտեղ մտիկ տաս, ձեր մեռել կա, դուք քոչվոր մարդիկ եք, ու-

114 Տարածք:

րենն՝ այդ բոլոր երկիրներ ձերն են քու ասելով: Դու սխալ ես, աղա՛, մենք դրկից ենք, թող մեր մեջ արուն չթափվի: Հիմա դու կտեսնես, որ մեր ջահելներ չեն խոսում, նրանք պատիվ են պահում իրենց մեծերին: Իսո՛ւ աղա, մեր մեջ գեշություն չլինի, ես մեծ մարդ եմ, կխնդրեմ մեր ջահելներին, որ թույլ տան ձեր ոչ-խար մինչև Մզրիք բերեն ջրելու, ուրիշ խոսք չունեն ասելու, միայն իմացի՛ր, որ մեր մարդիկ առաջվան չեն, նրանք արդեն կատողած են, բավական է նրանց մի թեթև պատճառ լինի, դուք կամ մենք կորած ենք: Այսքան, աղա՛ ջան»:

Աղան ավելի շատ կատողավ և ասաց, որ ես կփորձեմ մեր և ձեր ուժերը և թողեց հեռացավ:

Բայց աղան իր ուժ տեսնում էր երկու քուրդ ավազակ խմբերի մեջ, մեկը Նորսուգի գավառից գրավցի Միր Մհեն¹¹⁵ էր, իսկ մյուսը Խիզանի Կափարս գյուղի Ահմեն էր, որին կոչում են Ահմեկափարս: Նա ուներ քառասուն կաշաղ ընկեր, իսկ Միր Մհեն՝ ութսուն կաշաղ մարդ, բոլոր զինված: Նրանց սարսափ տարածված էր Վանի վալի փաշի վրա:

Ոգմի 1911 թ. կռիվը¹¹⁶

Գավառաններ դեռ ապրում ին Բետար քրդական գյուղում: Նրանք հանգիստ չին թողնում մեր գյուղին բամբասելու թե՛ աղաների մոտ և թե՛ կառավարության մոտ՝ ասելով, թե ոգմեցիք նոր տեսակ գեներ են բերում, լցնում գյուղ, բոլոր ռուսական հինգկրակ մոսին: Անգամ գրպարտեր ին, թե գնդացիք են բերած և պահած եկեղեցու խորանի տակ: Բայց նրանք երկար չմնացին շարունակելու, նրանց վերջ տվինք, և գյուղ խաղաղվեց: Բայց այդ գեները չնռացան քրդեր: Տասնհինգ թվին մեր գաղթելուց հետո եկեղեցին քանդեր են մինչև հիմք: Մեր եկեղեցին կառուցված էր 900 թվին:

1910 թվին նորից մեր սարի խոպան հողեր բաժանք համայնական ձևով, յուրաքանչյուր տասը տուն մի համայնք: Արոր և եզներ միացրինք և սկսինք ցանել միասին: Մեկ տարի լավ բերք ստա-

ցանք, բայց երկրորդ տարին՝ 11 թվին, նորից սև ապուր թափեց մեր դռնին:

Մեր գյուղ անիծված էր, երկու տարի իրավունք չունինք խաղաղ ապրելու, հիմա էլ մեր արևելյան Տնեցուց քրդեր սկսին վերև հիշածս Գոփերի անտառի մասին, որ կառավարության չորս ներկայացուցիչների պայմանով սար մեզ էր մնացել: Չնայած որ մեր գյուղի մեծեր նրանց մեծերի հետ խոսեր ին, թե «մենք թույլ կտանք, որ ձեր ոչխար ազատ բերեք մինչև Մզրիքի ջուր ջրելու», Իսո աղան նորից չի համաձայնում:

Տաս թվի աշնան իրենց հովիվների մոտ զինված մարդ է ուղարկում, որ մեր հովիվներին ծեծեն և մեր ոչխար մեր սեփական արոտավայրից հեռացնեն: Մահմանից տասը կիլոմետր դեպի մեր կողմ մոտ տասը մարդ հարձակվում են մեր երեք հովիվների վրա: Մեր կոշաղ ոգմեցիք գլուխ չեն կռի նրանց դեմ և սկսում են կռվել: Մերոնց հաջողվում է քրդերից մեկին խփել ատրճանակով Մխիթարի ձեռքով, որին մենք Բխիկ ենք ասում: Քրդեր վիրավոր Քալաշին թողնում են անտառի մեջ և փախչում են: Հավար հասնում է մեր գյուղ: Գյուղն էլ մի ջահել չկա, բոլոր գնացել ին կատան՝ գեզ անելու: Երբ որ լսում են, վեր են կենում տասը ծերացած մարդ, մի տասն էլ կին Խումարի հետ հասնում են կռվի տեղ: Տեսնում են մարդ չկա, քուրդ մնակ պառկած է անտառի մեջ: Տատրո Կազար մոտենում է Քալաշին, որին, իհարկե, բոլոր ծանոթ ին: Կազար ասում է.

–Քալա՛շ, թաղեմ բոյո, այստեղ չի քո մեռնելու տեղ: Շատ ես հեռացի ձեր սահմանից, քեզ կտանեն ձեր մոտիկ Որսիայի սար կթաղին: Դու ինչո՞ւ ես Կեկկազո անցի մեր կողմ:

Հավաքվում են մեր գյուղացի մարդ, կին, Քալաշին կապում են երկու փետի վերա ու բերում մեր գյուղ: Վերքեր կապում են ու շատ լավ խնամում են, մինչև առավոտ նրա բարեկամներ, կին մի տասը հոգի Քալաշին տանում են իրենց գյուղ: Չնայած Քալաշի բարեկամներ շատ ին, բայց նրանք շատ շնորհակալ եղան, որ մեր գյուղացիք մարդ չին թողած չլի մեջ և բժիշկած են Քալաշին: Մեծ եղբայր՝ Գրեթ աղեն, մեր գյուղի բշնամություն չունեցավ մինչև վերջ:

Չմեռ անցավ, բայց Իսո աղի միտք չպարզվեց մինչև գարուն: Նորից սկսեց, իրեն մարդիկ հավաքեց և նրանց այսպես ասավ. «Դուք կին եք, դուք տղամարդ չեք, որ ոգմեցիք ձեր մարդ սպանին, ձեզ սարից զրկին: Դուք նստեր իք ձեր կանանց մոտ, ամոթ ձեզ պես իսլամի»: Նա ուղարկեց իր ծանոթ ավազակ ավազակների հետևից, բերեց, որ հարձակվեն մեր գյուղի վրա, բայց ավազակների տեղ հեռու էր. մեկ խումբ Խիզան գավառում էր, մեկն էլ Նորդուգի գավառում: Նրանք շուտ չեկան, մի ամիս ուշացան: Ապրիլի տասին մեր ոչխար սարն էր: Այն շաբաթ ոչխարի հերթ մեր տանին էր: Ես գնացի իմ աներոջ հետ, նրա անուն Պետրոս էր, բայց գյուղ

115 Միր Մհեն հայտնի ավազակ գրավցի Շաքիրի ավազ եղբոր՝ Քոռ Ամեի որդին էր, որը 1905 թ. չկարողանալով «սիրանալ իր իրաւունքին, նոյն տարին կորոշէ ասազակ դառնալ իր չորս խոլամներուն հետ: ...Միր Մհեն ...իր հորեղբայր Շաքիրի գիրկը նետուեցաւ եւ սկսաւ անոր խորհուրդներով շարժիլ: Միր Մհեն իր ասազակութեան սկզբի օրերուն Նորսուգի մէջ տեսնուեցաւ դաշնակցականի մը հետ եւ խոստացաւ Շաքիրը բարոյական եւ նիւթական փճացման մատնել, եւ ենթարկուիլ Շատախի յեղափոխական գործիչներու ուղղութեան: ...Կը սպաններ մանաւանդ աչքի ընկնող հայեր իր հորեղբոր ցուցմունքներով»: 100-ից ավելի սպանություններ, ավեր ու բալան իրագործած Միր Մհեի մասին մանրամասն տես **Կոնստանտին Կասպրյան**ի «Մեր Մհեի սպանութիւնը», 1913, № 47, էջ 5-6:

116 1911 թ. կռվի ժամանակ հայերը ոչ մի գոհ չեն ունենում, իսկ քրդերից սպանվում է 4 և վիրավորվում 35 հոգի (Վշտապատում, էջ 171):

նրան կկանչին Ռոստոմ: Այնքան ուժեղ էր: Մեկ էլ մի ուրիշ տղա էր, որի անուն Կամար էր: Երկու օր հանգիստ էր, ոչինչ չկար թե՛ գիշեր, թե՛ ցերեկ: Երբորդ ավուր առավոտ մեր ոչխար նստած էր Կանչա սարի գլուխ, հանգստանում էր, մենք էլ կաթ ինք ուտում: Հանկարծ մեր դիմացի Կառց սարից, որ գյուղից կլինի 2000 մետր բարձրություն, սկսեց քրդական խուժանավարի համազարկ: Կարկուտի նման կրակ թափին թե՛ մեզ և թե՛ գյուղի վրա: Նրանց տեղ շատ բարձր էր, գնդակ մեզ չէր հասնի և ոչ էլ գյուղին: Այն ժամանակվան քրդի հրացան բերդանկի կամ չախմախի հրացան էր:

Գարուն է, բոլոր երիտասարդներ գյուղի մեջ պարապ նստած ին, նրանց էլ այդպես բան էր հարկավոր: Գյուղից դուրս եկան մոտ հիսուն զինված մարդ և կին, շատ մաս դեպի մեր կողմ եկավ, ասելով, թե մեր հովիվներին պոնած կլինեն: Բայց մենք շատ հանգիստ մեր կաթ կերանք, հանգստացանք ոչխար, նոր մեր տեղից ելանք: Մեր հետ զենք կար, բայց տեղ հեռու էր: Իզուր տեղ ինչո՞ւ կրակենք, մեկ կողմից էլ աներս՝ Դարմոնց Պետրոս, թույլ չտվեց, որ կրակենք: Գյուղի տղեք հասան Թացոցի աղբյուր. մի մաս պոնեց դեպի Կառց սար: Քրդեր տեսան մեր կատողած և կարգին զինված տղաներին, իսկույն թողին, փախան: Բայց պետք է ասել, որ նրանք սպասում ին իրենց ավազակների ուժին, որ ուշանում էր: Մեր գյուղացիք բողոք հայտնին Մոկաց կառավարություն, որ թույլ են տալիս իրենց հպատակ քրդերին ամեն ժամանակ մեր հանգիստ խանգարեն այս սահմանադրության ժամանակ, որ ամեն ժողովուրդ իրավունք ունի ազատ ապրել:

Թե՛ Մոկաց և թե՛ Բարվարի կառավարությունների հրամանով մեր գյուղ չորս հատ զափթիա ուղարկին, երկուսը Մոկաց, երկուսը՝ Բարվարի կողմից: Այն ժամանակ մեր Խասիների գայմազամ մի լավ կրթված թուրք էր՝ եկած Ստամբուլի կողմերից: Վերջ մեր գյուղ հսկողություն դրին՝ որպես կան գյուղի պաշտպան, կան որպես վկա, որ իրենց կառավարության տեղյակ պահեն ամեն ժամանակ: Այդ էր, որ վերջ մենք արդար դուրս եկանք կովից հետո:

Եկավ հունիս ամիս, գյուղացիք սկսին հունձ՝ խոտ, գարի քաղել: Ժողովուրդ արխային իր բերքն էր հավաքում: Չորս ոստիկան, իբրև պահակ, գյուղի մեջ էր: Մեկ էլ հանկարծ առավոտ ժամի չորսին գյուղի երեք կողմից սկսին կարկուտի նման գնդակ թափել գյուղի վրա մոտիկ թե հեռու տեղերից: Ժողովրդի մեջ սկսեց լաց ու կոծ: Չորս զափթիք փախան, մտան եկեղեցու հայաթ: Մեզ էլ ուրիշ ճար չկար, բացի կովից: Երկու հարյուր մարդ բռնել էր Կառց սար: Հարավի կողմից մի մաս բռնել էր Կարմրապատ, մի մաս Բարեկաճկան՝ մինչև Խնտկուկի գլուխ՝ արևելքից, շատ մաս մնացել էր թիկունք՝ Խնդակ տեղրանքներ: Այնպես որ մեզ մնում էր գրավել Մերամոտի բերդ և Խչկա գանին:

Գյուղի մեծեր կանչին ոստիկաններ, որ լուր տան իրենց կառավարության՝ օգնություն խնդրելու: Ոստիկաններ պատասխանին. «Մենք տեսնում ենք, որ դուք մեղավոր չեք, բայց մինչև մեր լուր տանել ժողովուրդ չի դիմանա, մեզինք արխային եղե՛ք, մենք ձեր հաց կիրեր ենք, ձեզ չենք դավաճանի»:

Նրանք իմացան, որ չենք ուզում մեր զենք ցույց տանք իրենց: Էլ ուրիշ ճար չկար, զինվանք և դուրս եկանք գյուղից: Էլանք Շեխոնց գոմ: Բաժանվանք երեք խմբի: Առաջին խումբ հանձնինք Մեփանին, ուղարկեցինք դեպի Մերամոտ՝ դեպի Թամբի սեր, երկրորդ խումբ ինձ տվին, ուղարկեցին դեպի Խչկա գանին՝ դեպի Կայոց սար, երրորդ խումբ մնաց Հովսեփին և Եղիազարին: Պետք էր հարավ-արևմուտք մեկը թիկունք մնար՝ Մեփանին օգնելու համար: Յուրաքանչյուր խումբ տասը մարդուց էր բաղկացած: Մենք բարձրացանք մեր որոշված տեղ՝ կրակելով դեպի Մեփանի դիմացի ուժեղ ամրություններ:

Մոսին զենքի դրդոց բռնեց սարուձոր: Քրդեր չի դիմացան մոսինի գնդակից: Մաջալ տվին Մեփանին: Մերամոտից բարձրացավ մինչև Խանտկուկի սեր, Հովսեփ բարձրացավ Գոսքերի սեր: Եղիազար ելավ Քարխման Կող սար: Չորս կողմից ռուսական զինվորի նման տվինք զարբի¹¹⁷ տակ: Քրդեր մոտիկ տեղերից թողին, փախան դեպի սարի գլուխ, որտեղ նստած էր նրանց Իսո աղեն, ավազակ Միր Սիեի հետ: Երբ որ ավազակ տեսավ ոզմեցոց ուռա տալ, զարմացավ:

—Աղա՛, դու ասում իր, թե սրանք հայ ին, շատ խեղճ, քասիք մարդ ին, բայց բանից դուրս եկավ, որ ոչ թե 500 զինվոր, այլ չորս հազար զինվոր սրանց չեն հաղթի: Դու իզուր մեզ կանչիր, սրանք մեր մարդկանց կկոտորեն բոլոր:

Կովի տաքցած ժամանակ լուր բերին մեզ, թե ոչխար երկու հովիվի հետ տարել են: Պետք է մարդ չսպանել, մինչև մեր հովիվներին թողնեն, գան, թե չէ նրանք մեր հովիվներին կսպանեն: Հիմա ի՞նչ պետք է անել: Մեկ կողմից մնացած բերվորներ¹¹⁸, արևի տակ նստած, ոչխարի կսպասին, մեկ կողմից էլ պետք է անպատճառ խուժանին հեռացնել գյուղի մոտերից: Վերջ մեզ հաջողվեց: Թշնամուն այնքան հեռացրինք, որ նրանց գնդակ գյուղին չէր հասնի: Մինչև ան ժամանակ երկու մարդ էր թեթև վիրավոր եղած, այն էլ ավազակներից: Մեր երիտասարդներ որոշին մարդ չսպանել մինչև մեր հովիվների դրություն իմանանք: Կեսօրին ոչխար թողին, եկավ, մի տասը հատ պակաս, որ մորթեր ին: Ազո, Խաչո մի պինդ խաղ ասացին մեր բերվորների վերաբերյալ: Քիչ մնաց, որ ոչ մի վտանգի կամ հովիվի չսպասել, զարկել մինչև վերջին մարդ, բայց խելոք մարդիկ խնդրեցին կատողած ջահելներին, ասին՝ համբերություն կյանք է: Ժամի վեցին կռիվ դադարավ, բայց

117 Չարք 1. քափ, ուժ, 2. հարված:

118 Կրվոր:

հովիվներ չկան: Գիշեր մնացինք դիրքեր, կնանիք հաց բերին: Առավոտ շուտ հովիվներ եկան, մեկի անուն Ազիզ էր, մեկին՝ Պետրոս:

–Է՛, բարով եկաք, ի՞նչ կա չկա քրդերի մեջ, ի՞նչ են ասում, ի՞նչ է նրանց միտք:

Նրանք սկսին պատմել, թե քուրդ աղան մեզ արձակեց, ասավ:

–Գնացեք, ձեր տեսած կպատմեք ձեր կատողած ջահելներին, որ մենք չենք ուզում մարդ սպանենք, հետո ձեր գյուղի մեծերին կասեք, թող այսօր գան և իրենց ձեռքով թուղք գրեն տան մեզ, որ ընդհանուր Գոփերի անտառից ձեռք կքաշեք մինչև Ոգմա դուռ, այսինքն՝ բոլոր անտառից ձեռք քաշեք: Եթե չեն համաձայնվի, մենք երեք օր այստեղ ենք, ձեր ընդհանուր գյուղ տակնուվրա կանեն, անգամ եկեղեցին կքանդեն, մի մարդ կամ կին չի ազատվի իմ բերած զորքի ձեռքից: Դուք կտեսնեք, թե քանի հարյուր մարդ են բերել. կա՛ն ձեռք կքաշիք անտառից, կա՛ն ձեր վերջն է: Երեք օր կպասեն ձեր պատասխանին: Բողոքին դե հառա բեժա¹¹⁹:

Մեր գյուղ մարդ, կին կանգնեցին ոտքի. «Մենք կմեռնենք, բայց մեր սարից ձեռք չենք քաշի, երբ որ կառավարություն չի խոսի, թե՛ վկաներով, թե՛ թուղքերով սար մերն է, էլ ինչո՞ւ ենք ապրում կամ ինչո՞ւ ենք սոված մնացել, զենք առել: Պիտի կովենք, մենք մեր սար չենք զիջի Տինգի քրդերին: Ով որ հետ մնա այս կովից, նրա կին թող նրա մեր դառնա, նրա կնկան լաչակ նրա գլխին գցի»:

Մեր այս խորհուրդ եղավ Գոսքերի ձորի մեջ: Ի՛նչ արած: Լաթո գյուղ չէ, հիվանդ պառկած է Վաճում: Լույս բացվեց, պետք է պատասխան տանք կա՛ն բանավոր, կա՛ն զենքի ուժով: Մեծամասնություն որոշեցինք զենքով պատասխան տանք գոռոզ Խոյին և նրա բերած ավազակային խմբին: Մեր որոշում եղավ այսպես: Բաժանվանք չորս խմբի, որը պետք է լինի տասը մարդուց, բայց պետք է ասել, որ բողոքին զենք չկար, շատեր առանց զենքի էին, բայց հարմարացրինք և նրանց բաժանինք զինվածների մեջ:

Առաջին խումբ տվին ինձ և Մեփանին, երկրորդ տվին Եղիազարին, կենտրոն մնաց Հովսեփին: Առաջին խումբը պետք է աջ թևով ուղի բարձրանար Կառոց սարի գլուխ, որտեղ քրդի խուժան էր, որը կովանդին բռնած խաղում էր և ուժեղ կերպով կանչում էր, անպատիվ խոսքեր էր ասում մեզ: Ելանք Կաթնիկ աղբյուր, բարձրացանք քաշեր մինչև գանին, իսկ Եղիազարի տղաներ ելան Թամքի սեր, դեպի Կոռդեն՝ Բարեկանկան սար, Եղիազարին ձախ կողմից պետք է օգնություն հասներ Վարդան, Սարգիս, Տիգրան՝ Բաքի ճոռի կողմից, իսկ Ամրոյին, Մեփանին աջ կողմից պետք է օգնություն հասներ Մանուկ, Պողոս, Կազար: Մինչև այն ժամանակ երկու կողմից էլ կրակ չէր բացված: Մեզ տեսան

քրդեր, բայց նրանք սարի գլուխն են: Կայած սարի դռնից՝ քարերի արանքով սողում ենք օձի նման, մեր տեղեր շատ հարմար են: Մեր կողմից մեր դիմացի սար լավ երևում էր այնտեղ, որտեղ Եղիազար պետք է բարձրանար: Իսկ Եղիազար մեր սարի գլուխն էր տեսնում, չնայած տեղ հեռու էր, բայց մեր զենքեր լավ են հասնում նրանց: Եղիազարի և Վարդանի, Սարգիսի, Տիգրանի գցած գնդակներ ծեծում էին մեր կողմի Կառոց սարի գլխին կովանդ պռնած խուժանին, իսկ մեր կողմից նրանց վերևի ուժեղ դիրքն էր ծեծվում, այնպես որ շատ լավ էինք պաշտպանում թե՛ մենք նրանց և թե՛ նրանք մեզ: Թշնամին չէր իմանա, որ կարող է այդ տարածության վրա գնդակ հասնի նրանց և մարդ սպանի: Կռիվ սկսվեց երկու կողմից: Չախ կողմից, որ Եղիազար իր ընկերներով սողում ին քարերի միջից, բավական մոտեցան քրդերի դիրքին, իսկ աջ կողմից, ուր Ամրո, Մեփան, Պողոս, Հարո էին, սողալով հասան Կառոցի Դաշտանի թումբ: Դե ի՞նչ արած, խոսք ենք տվել կա՛ն մեռնել, կա՛ն թշնամուն հեռացնել գյուղի մոտերից: Մարդ, կին, երեխա սրտապատառ են լինում:

Խուժանի գեշ հայիոյենք գյուղն է հասնում: Ոչխար, տավար քշել են դեպի մեր դաշտի մոտեր՝ դեպի արևմուտք: Ժողովուրդ չի կարող ջուր բերի աղբյուրից: Շատեր պատրաստվել են, որ փախչին դեպի Հակոկ հայ գյուղ, որ շատ հեռու չի մեր գյուղից: Մեր գյուղի արևմտյան կողմ է ընկնում, բայց նա էլ ապահով չի, անգամ մի քանի կին բարձրացան սար, որ հաց բերեն, բայց չկարողացան հասնել մեր մոտ: Մենք տեղեկություն չունինք Հովսեփից, նրանք չեն երևում մեր տեղից: Դու մի ասա, որ մենք երկու թևերով բարձրանում ենք դեպի աջ և ձախ կողմեր: Նրանք վիճում են, թե ինչո՞ւ Ամրոյին, Մեփանին, Պողոսին տվիր մեկ տեղ կամ Եղիազարին, Վարդանին, Սարգիսին ինչո՞ւ չի բաժանիր իրարից, իսկ այստեղ ո՞վ մնաց, մեզ տանում ես դեպի Կարմրապատ կամ Բազաներյան կենտրոն տեղ, և կովում են իրար հետ: Հովսեփ խռովում է, դառնում դեպի հետ: Հասնում են Գրխամակողի սեր: Այն ժամանակ գյուղից եկած հաց բերող կանայք տեսնում են, որ կռիվ սարի երկու կողմից կրակ է թափում գյուղի վերա, իսկ սիրուն ջահել տղերք հետ են դառնում՝ ընկերներին թողած քրդերի կրակի տակ:

–Ամո՞ք ձեզ, որ ոզնեցի եք,– բժիշկ Խումար իր լաչակ գցում է Մարդոյի գլխին և ասում մյուսներին,– դուք մեռեք, ձեր կին կովի քրդերի դեմ:

Այդ կին սուտ բժիշկ Խումարն էր: Նա շատ կոչաղ կին էր, մեր գյուղի տիկին Խումար, նրա մարդ սպանված էր Խանասորի կովին, տղան սովորում էր Վաճում: Հեռվից մենք տեսանք կանանց, որ առաջնորդում ին հետ գնացած տղաներին: Էլ մեր սիրտ չտարավ: Կատողանք և մեզ գցինք Կառոցի թումբ, քսան մոսին շիտկինք դեպի Կառոցակել, ուր

119 «Գնա՛, ասա՛»:

քրդեր նախորդ օրը բերդ են սարքել: Մարդս հինգ փամփուշտ, որ չկրակվինք նրանց բերդի անցքերի մեջ, նրանք սկսին իրենց վիրավորներ փախցնել: Հինգ սպանված, մի քանի վիրավոր բարձան իրենց հետ բերած ջորիներին, տեղափոխին դեպի իրենց քիկունք՝ դեպի իրենց գյուղ: Ջորիք միշտ նրանց հետ էին, հաց են բերում թե՛ իրենց և թե՛ հարյուր ավազակներին համար: Մեր երկրորդ զարբին բերդ դադարվեց, մեր ձախ կողմից տեղեկացան դրությոն և իրենց տեղերից շարժվեցին առաջ՝ դեպի Կորդեմի սար: Նրանց տված զարբ մեզ միջոց տվեց և մեկս աջից, մեկս ձախից ուռա տվինք ուղիղ բերդի վրա և գրավինք ամենակարևոր դիրք՝ Կաոց սարի բերդ: Թշնամին փախավ մինչև Բազաներյան, մինչև Կարմրապատ սարի քամակ: Մենք տիրացանք նրանց նախաճաշի համար պատրաստված մսի դազաններին: Մոված ու տանջված տղաներ ինք. նախաճաշ չկերողի մալ կերողին հալալ է: Այժմ պարել մեզ է պատկանում, Կաոց և ընդհանուր սարը ազատելուց ապահով ենք, իսկ Իստ աղան չատր¹²⁰ քանդեց, տարավ և Կոթոզակի սարի դռնին խփեց՝ մեր և իրենց սահմանի մեջտեղ: Ճաշելուց հետո սկսինք կովանդ քաշել Կաոց սարի գլուխ: Մեր գյուղից տեսան, որ մենք ուրախ խաղում ենք, տներից դուրս եկան, ազատ շունչ քաշին, քսան բուպեի չափ կանանց հետ մեզ մոտ հասան Մանուկի տասնյակ և նրանց հետ գնացածներ:

Մեր ձախ կողմից Եղիազարի և Վարդանի տղաներ ելան Բարեկաճկան աղջիկների քար և երկու քուրդ վիրավոր, որ թողել են, պռնին, հանին սարի գլուխ: Երկուսն էլ Վարդանի ծանոթներն էին, վերքեր շատ ծանր չին: Մոսինի գնդակ ոսկոր շատ չի ջարդի: Վերքեր կապելուց հետո պառկացրին քարի տակ, որ ժամանակին հանձնեն տերերին: Մեր երկու թևեր միացավ մեկտեղ, թշնամին անցավ Կորտրեժ սարի արևկողմ, իսկ մենք պռնինք Բազաներյան և Կարմրապատ: Մեր տասնապետներ հավաքված նորից խորհրդի որոշեցինք հետապնդել թշնամուն, մինչև բոլորովին հեռացնենք մեր սահմանից: Հանկարծ մի հատ զափթիան ոստիկան առանց զենքի դուրս եկավ սարի գլուխ և կանչեց.

–Խնդրում եմ չկրակեք, ես եկած եմ Մոկաց բեկի կողմից, թույլ տվե՛ք գամ ձեզ մոտ, գործ ունեն:

Չափթին եկավ մեզ մոտ և ասավ, որ Մուրթլաբեկի կողմից, որպես Մոկաց կառավարության պատգամավոր, ձեզ մոտ գալու է խոսելու եզրի Շեր բեկ: Մենք սիրով դիմավորեցինք Շեր բեկին, որ ծանոթ էր բոլորին, բարև տալուց հետո նստեց մի քարի և սկսեց խոսել.

–Հայեր, ինձ ուղարկեց ձեզ մոտ մարդկանց ազատելու սպանությունից և թե՛ ձեր և թե՛ քրդերի սահմանի հարց լուծելու: Մուրթլաբեկ եկավ մինչև Գալաժեր ավան, որպեսզի ձեր գյուղից չորս մարդ

ուղարկեք նրա մոտ և քրդերի ներկայությամբ ձեր հարց լուծվի, թե քանի մարդ է սպանված քրդերից, շատեր կառավարության թշնամի ավազակներ են: Կան նաև Տինից քրդերից վիրավոր և սպանված, բայց դուք մեղավոր չեք, իրենք հարձակվել են ձեր խաղաղ ժողովրդի վրա: Մենք կհայտնենք թե՛ Վանի և թե՛ Բիթլիսի կառավարություն, որ դուք մեղավոր չեք այս կռվի մեջ: Դա կառավարության թշնամի կաչաղ Միր Միեի գործն է, լավ եք արել, որ նրա կաչաղներից շատերին վիրավորել կամ սպանել եք, դա մեզ համար ցավ չէ, ուզում ենք, որ ձեր երկու հարևանների մեջ հաշտություն լինի:

Բեկին այսպես պատասխան տվինք.

–Մեր գյուղի մեծեր այստեղ չեն, երկրորդ մենք չենք վստահի տինիցի Իստ աղային: Նա շատ խարդախ մարդ է, թող իր գորք և ավազակներին հեռացնի մեր սահմանից, մենք գյուղի ռեսին և նրա աղաներին կողարկենք Մուրթլաբեկի մոտ: Մենք խոսք կտանք, որ ոչ մի կրակ չբանանք նրանց վրա, մինչև որ նրանք չսկսեն նորից հարձակվել մեզ վրա: Մենք հավատում ենք քեզ և մոկաց Ամիրանին: Մեր կողմից կարող ես վստահ լինիս՝ որպես մարդ:

–Շատ լավ,– ասավ եզրի Շեր բեկ և գնաց:

–Դե խաթրի¹²¹,– ասաց և հեռացավ դեպի քրդերի կողմ:

Թե ի՞նչ խոսեց նրանց հետ, մենք չիմացանք: Միեր անունով մեկ մարդ, որ ծանոթ էր նրան, ասաց, որ ես չեմ հավատում սրա քաղցր խոսքերին, շուն շան միս չի ուտի: Միերի խոսք ճիշտ դուրս եկավ: Մնացինք մեր գրաված դիրքերի մեջ, մեր զենքեր պատրաստ պահած, մարդ որկլինք գյուղ՝ բեկի խոսքերը հայտնելու: Մի ժամից հետո նորից քրդեր սկսին հարձակում դեպի մեր դիրքերը: Կռիվ սկսեց կեսօրից հետո: Բայց պետք է ասել, որ բեկ մեղավոր չէր, նրան չին լսած Տինից քրդեր, ավազակ Միր Միեի ավազակապետի ասելով, թե հայեր մեր մարդկանց սպանին, և մենք հաշտվինք նրանց հետ, դա անկարելի է: Ինք կաչաղ էր կառավարության կողմից:

Այդ ավազակ շատ հայերի էր սպանել Շատախի, Նորտուզի և Աղբակի կողմերից, Բաշկալայի շրջանից և շատ տեղերից, քանի հատ զափթիա էր սպանել զանազան տեղերից:

Վերջ բաժին եղավ մի հայ ասկարի գնդակին իրենց սարերի կռիվներին¹²²: Ինք բնիկ գրավցի էր: Նա սովոր էր հայ սպանելու մեջ, բայց շլոխ չէր հանդիպել ոզմեցու գնդակին, դրա համար իր դիակ-

121 «Մնաք բարով, հաջողություն»:

122 Մեկ այլ վկայությամբ՝ Միր Միեի սպանվում է 1913 թ. հոկտեմբերի 1-ին՝ երեկոյան ժամը 9-ին Շատախի Թաղից Տաքու լեռան վրա հիսնապետեր Մեհմետ Էֆենդիի և Ալիի գնդակներից: Հատկանշական է, որ «Միր Միեի սպանմունքում պես անոր խոլամներեն մեկը անմիջապես կը հանէ անոր հագուստները եւ կը փախչի 4-5 հոգիներու հետ...» (մանրամասն տես՝ **Կոնակ**, Վասպուրականի մեծագոյն սուրբակ Միր-Միեի սպանութիւնը, «Աշխատանք», 1913, № 47, էջ 5-6):

120 Վրան:

ներ ծածկելուց հետո նորից սկսեց հարձակում դեպի մեր դիրքեր:

Մյուս ավազակ եկած էր Խիզանի գավառի Կաբարս գյուղից, որին կոչում են Ահմեկաբարս¹²³: Նա էլ պակաս մարդ չէր սպանել: Սպաներ էր շատ ուրիշ տեղերից, Գավաշի Պելու գյուղից երկու եղբայրների էլ: Նա էլ հայերի թշնամի էր և մասնակցում էր մեր գյուղի վրա հարձակվող խուժանին: Բայց նրանք չեն իմանա, որ ամեն քարի տակ ձեռք չեն կոխի, հանկարծ քարի տակից դուրս կգա ոչ թե նապաստակ, այլ կծող օձ:

Կռիվ սկսեց երկու կողմից, բայց պետք է ասեմ, որ մեր ուժեր բոլոր միացած էր մեկ գծի վրա: Բայց մեր գրաված դիրք շատ հարմար էր առաջվանից: Բաժանվեցինք հինգ տասնյակի: Հարավի կողմ՝ դեպի Շարաֆե բերդ պոնեց Եղիազարի տասնյակ, ձախ կողմ՝ դեպի Խանդակ, հասավ Վարդանին, Տիգրանին, իսկ դեպի Բալնեսայեկ տվին Ամրոյին և Պողոսին, կենտրոն՝ դեպի Կորտրեժ, մնաց Մեփանին և Հովսեփին: Մենք բոլորս ծանոթ ինք մեր սարին, սկսինք կրակելով առաջնել դեպի մեր զոմատեղ Կորտրեժ և շուտով գրավեցինք զոմատեղ, որ բոլոր սարերից բարձր էր: Քրդեր առաջ շատ ուժեղ դիմադրում ին, բայց չդիմացան մոսիմի գնդակին, փախան դեպի Կորթոզակ սար, որտեղ չատրոների մեջ նստած ին աղան և ավազակապետեր: Նրանք էլ կանգնեցին իրենց քիկնապահ քրդերով, կռիվ սաստկացավ: Գնդակների ձայնից դողդուցում էր սարուձոր: Հեռվից լսող կարծում էր, թե դիմ եմք զարկում, իսկ Մոկաց եկած բեկեր շատեր մնացին՝ կռիվ տեսնելու կամ ավել շուտ օգնելու քրդերին, մնակ Մուրթլաբեկ դարձավ Մոկա: Կռիվ տևեց ուշ գիշեր, նորից ջորիք գործի անցան ջանդակ կրելու քրդի գյուղ, որ շատ հեռու չէր կռիվ տեղից: Մութ էր, որ Բահրան աղի ջանդակ մաուզար գնդակով ծակած ընկեր էր մեր ոտքերի տակ, որ երկու ժամ առաջ կանչում էր. «Ես ձեր հայերի պակ կկատարեմ, ձեր ժամի մեջ սիրուն հարսներ կտամ քրդերին»:

Գիշեր կռիվ հանդարտավ:

Լուսաբացին մեզ լուր տվին. «Սարից քաշվեք դեպի գյուղ, որովհետև ընդհանուր քրդություն գրգռված է ձեր դեմ, այսքան մարդ է սպանված և վիրավոր: Նրանց թիվ հասնում է հիսուն-վաթսուն մարդու, բայց շատ մաս ավազակներից են»:

Քուրդ բան ծածկել չգիտե, նրանք զարմացած են, որ մոսեմի գնդակ կպած էր քրդի այնալի հրացանի բերանին, մեջտեղից ճղեր էր և հրացան չպրտեր էր քրդի գլխին, քուրդ վիրավորված էր:

Գիշեր մեր կողմից Բոժկանց Շահեն կանչում է Կորտրեժից դեպի Կորթոզակ Իստ աղային.

—Արի՛, մենք սահման դրինք Բահրանի ջանդակով, սրանից հետո էլ սահմանի անուն չտաս, թե չէ քու ջանդակ ավելի խոր կթաղենք: Լավ իմացի՛ր, որ մեր և ձեր սահման Աղիզա սպիտակ քարն է, որտեղ ձեր հպարտ Բահրան աղեն է քնած, այդ մեր ուղիղ սահմանն է:

Մեր այդ կռիվ լուր տարածվեց թե՛ Մոկաց, թե՛ Բարվարի և թե՛ Շատախի ընդհանուր քուրդ գյուղերի մեջ:

Բոլորը պատրաստվում են մեր դեմ:

Մեր Ոգմին օգնելու համար պակաս չեն պատրաստվի նաև հայերը Մոկաց, Շատախից և Մալարկերտից մինչև Վան:

Շատախից հասան մինչև Հարմիշատ գյուղ, մյուս կողմից հասան Կարկառի գավառից, եկան մինչև Մոկաց սարեր:

Պետք է ասել, որ հայ և քրդի մեջ շատ քիչ ժամանակ էր մնացել, որ կռիվ դառնար ընդհանուր: Բայց Մուրթլաբեկ շուտ դեմ առեց, նա մարդ որկեց Վան, մի ջոկատ սև ասկար կանչեց, բերեց, որեց մեր և քրդերի սահմանի գլխին: Նրանով փրկեց թե՛ հայերին, թե՛ քուրդերին: Մեր ոգմեցիք՝ Մշոյի հետ տասը զինված մարդ, Վանից հասան գյուղ, նրանք պատմին. «Լաթո շատ հիվանդ է, թե չէ շատ մարդ կար գալու: Վանից լսեցինք, որ գյուղ մարդ չի մնացել, բոլոր սպանված են, մենք գիշեր եկանք, որ մարդ մեզ չտեսներ»:

Պետք է ասել, որ այն կռիվն մարդու զոհ չտվինք, շատ տուժեցինք. մեր սարի ջուր կտրին, սարի ցանած հաց փչացավ, գյուղի առուն քանդեցին, կորեկ հաց չի ցանինք, կրկին մնացինք հացագուրկ, խոտ չքաղինք, ոչխար մնաց առանց խոտի: Չմոռանք ոչխար բաժնին հայ գյուղերին, իսկ ժողովրդի համար փող եկավ Ռուսաստանից, Ամերիկայից և շատ տեղերից, բայց ի՞նչ օգուտ, որ Վանի կռիվներն մի քառորդ էլ չորկեց գյուղ: Այն տարին կատան էլ չգնացինք: Ահա մեր ապրուստ, թուրքի հողի մեջ հեսիր¹²⁴ մեզնից լավ էր: Սա իմ տեսած երրորդ կռիվն էր¹²⁵:

124 Գերի:

125 Ըստ ամենայնի, այստեղ շփոթ կա: Խոսքը հավանաբար վերաբերում է ոգմեցիների և տինիսի քրդերի միջև ծագած 1913 թ. կռիվին. «Մէյիտ-Ալիի կամաւորներ, որոնց հետ նա Տինիս-ցոց աղան Իսօն այժմ Ոգմցոց վրայ յարձակելու մէջ են: Գիւղը չորս կողման կղզիացած և պաշարուած է, ժողովուրդը սովանահ է և թոպէ առ թոպէ Մէյիտ-Ալիի և Տինիսցիների յարձակման սպառնալիքի տակ կը գտնուի: Լուր խրկելով Շատախ՝ օգնութեան կոչ ըրած են» («Վան-Տոսպ», 1913, № 15, էջ 174): Իսկ նույն թվականի հունիսի 13-ի թղթակցութեանից պարզվում է «Ոգիմ գիւղը երեք օր պաշարուած էր Տինիսցի քիւրտերէն, այնպէս որ ոչ ժողովուրդը և ոչ անասուններ կըրցած են գիւղէն դուրս ելնել: ...Ոգիմցիները նամակով մը կը խնդրեն Մոկաց միւտի Մուրթլախ պէյէն, որ ճար մընէ քիւրտերը ետ քաշելու: Ասիկա նախ երկու ոստիկան կը դրկէ Ոգիմ իրողութիւնը հասկնալու, ասոնք գիւղը հասնելով ականատես կըլլան քիւրտերու և ոգմեցի հայերու մէջ մղուող կռիւն և ետ դառնալով կը պատմեն Մուրթլախ պէյէն, որ սպայի մը հրամանատարութեամբ 30-ի չափ օրք որկելով կռիւը կը դադարեց

123 Կաբարսցի Ահմեդը հռչակված էր հայերի նկատմամբ իրագործած չարագործություններով դեռևս Համիդյան ջարդերի ժամանակ («Արարատ», 1896, էջ 246):

Մեր և Տիմոսի քրոջի կռիվ վերջացավ, բայց թշնամություն չվերացավ: Սպանված Բահրամ աղի տղան, մի խումբ քուրդ լամուկ առած, մեր սարերից չէր հեռանում: Միշտ վտանգ կար թե՛ հովիվների և թե՛ սար գնացող կանանց, նույնիսկ խոտ քաղողների համար: Պետք է միշտ պահակ լիներ: Ինն անգամ նրանք խանգարին ջրվորներին կամ հովիվներին, վերջ կռիվ միշտ պակաս չէր մնա մեր գլխից, մինչև մեզ հաջողվեց նրանցից երկուսին պռնիլ: Բերինք, կապինք մեր գյուղը թթի ծառից: Նրանց տերեր եկան, չտվինք:

Մինչև լուր տվին Մոկաց բեկին, բայց բեկ չլսեց նրանց խնդիրք, ասավ. «Թող ձեր Իսո աղան երթա, բերի իր մարդկանց, ոգմեցիք մեղավոր չեն, կարող են ավազակին վիզ կտրեն, ես չեմ խառնվի ձեր գործերին, ձեր գոռոզ աղան շատ էր պարծենում, թե ես Ոզմ կքանդեմ, տակուվրա կանեմ: Ինչո՞ւ չի խոսում, մի քանի մարդու գլուխ կերավ, ավազակներ լցրեց ձեր գյուղի կանանց մեջ, նա էր ձեր աղայի փորագավ, գնացե՛ք, իրեն ասե՛ք, թող մի տասը հաստ չաղ ոչխար վերցնի, երթա Ոզմ, նրանց ոտներ պագի, իր մարդեր բերի, չլսող ինքն է, կփոշմանի»:

Մյուս օր մի քսան մարդ, կին եկան, լացով լցվեցին մեր գյուղ, որ իրենց մարդեր տանին: Մեր գյուղի ռես Հովհաննես նրանց ասավ. «Մինչև Մուրթլաբեկի կողմից մարդ չգա, մենք ձեր մարդկանց չենք թողնում, այս առաջին կամ երկրորդ անգամ չէ, դուք մեր առուն քանդում եք կամ մեր հովիվների վրա կրակում եք»:

Նորից մարդիկ դարձան Մոկա, կառավարությունը երկու հայ, չորս ոստիկան դրկեց մեր գյուղ, սահման կապին նրանց առաջին, մարդիկ կնքին, որ սրանից հետո չկրկնվի այս ավազակություն և իրենց մարդկանց վերցրին, գնացին: Այդ եղավ, էլ մեր գյուղին չկպան: Մինչև տասնհինգ թիվ նորից

նրանք մեր հանդեպ շատ հեռու մնացին, չմասնակցին մեր գյուղի գործերին:

1913 թ. դեպքերը

Մեր ոգմեցին ինչքան ասես ժողովրդասեր էր, եթե մի դժբախտություն պատահեր հարևան գյուղին, անմիջապես օգնության կհասնեն: 12 թվին մեր գյուղին մտոյիկ Հակոկ հայ գյուղից մի քուրդ Կիրակոս անունով մի մարդու սպանեց¹²⁶:

20 թույն չքաշեց, որ մենք հասանք օգնության: Չնայած որ սպանողին չտեսանք, բայց վերջ վրեժ առանք հետո: Թե հարևան և առհասարակ բոլոր ժողովրդին սիրում էր մեր գյուղի մարդ, բայց իրարու հետ լավ չին: Կար մարդ, որ մինչև վերջ մնաց քրդասեր, կային նաև բարի նախած մարդիկ:

Մի առակ կա. «Գեղ կանգնի, գերան կկտորի», բայց մեկ թաք գեղ ի՞նչ պիտի անի 200 քուրդ գեղերին: Այդ մեկ գեղ մերն էր, ոչ թե գերան, այլ մի հաստ փտած տախտակ չէր կարող կտորել: Մոկաց հայեր շատ հանգիստ ին իրենց տեղեր: Բարվարի հայեր քրդից կամ հեսիթից պակաս չեն, մնում էր մեր գյուղ, այն էլ կես գաղթած ին Վան կամ Վանի գյուղեր:

Մեր դրություն լավ չէր նրա համար, որ հաց չէր հերիքի ժողովրդին: Մեր գլխավոր եկամուտ մեր չաք ու անեղն էր, այն էլ պետք էր հեռանայինք դեպի Մուշ, Խնուս, Ալաշկերտ, մինչև Երևանի կողմեր: Մի քանի մարդ հասան մինչև Բաքու, նրանից երկուսին էլ 1905 թվին աքսորին դեպի Միքիլ, մնացածից մեկը մեռավ Բաքու, մնացածը փախան, եկան գյուղ: Միքիլից երկուսը տասը թվին փախան, եկան Վան, իրենց ընտանիք Վան էր ապրում. մեկի անուն ասում ին Պոկանց Պոլիկ¹²⁷, մյուսին՝ Բաղտիկ:

Մեր այդ խեղճ ապրուստին մեզ հանգիստ չին թողնում գոնե մի տարի:

1913 թվին նորից ուզեցին մեր գյուղ գցել կրակի մեջ, բայց էժան պրծանք: Այս անգամ Խիզանի շեխ Սալիկ¹²⁸ մարդ ուղարկեց մեր գեղ:

նե և պաշարումը վերացնել կուտայ: Կռուճն յետոյ Ոստանայ, Մոկսի և Խսիւէրայ (Պարվար) գայմագամները և Պարվարի քիւրտ աղաները Գոմանց հայաբնակ գիւղը կը հաւաքուին: Հոն կը կանչուին Տիմոսի աղաներ և Ոզմցոց կողմէն իբր փոխանորդ Պէրվարցի Մահմուտ, Թահիր, Ֆարմօ, Արիֆ և ուրիշներ, որպէսզի հաշտութիւն կայացուի կռուող կողմերու միջև, բայց չեն յաջողիր, որովհետև ոզմցիներ կը պահանջեն իրենց վնասուց հատուցումն և անցեալ տարի իրենցմէ յափշտակուած 1700 ոչխարները: Իսկ տիմոսից քոչ միայն այդ չեն ընդունիր, այլև կը պահանջեն, որ ի հատուցումն անցեալ տարուան կռիւներու միջոցին իրենցմէ ապանուած չորս մարդոց՝ իրենց յանձնուի չորս ոզմցոց գլուխ» (Իրազեկ, Բաց նամակ Մէքրուպճի Ահմէտ-Ֆուատ պէյի, «Վան-Տոսպ», 1913, № 21, էջ 250):

Նաև «1913 թին, Ոզմին մօտիկ և 300 տունէն աւելի քրտական գիւղ մը - Տենիս, կուի դուրս եկաւ Ոզմի դէմ գոմայի (եայլա) մը պատճառով: Տենիսիցները թով անհամեմատ շատ էին ոզմեցիներէն, բայց վերջինները զենքը ձեռին գիտցան պաշտպանել իրենց իրավունքները: Կռիւր տեւեց մէկ քանի օր և Մոկաց այն ժամանակուայ միտիթի՝ հայասէր Մարտուլլահ պէյի միջամտութեամբ միայն դադրեցաւ. գոման մնաց ոզմեցիներուն: Այս կռիւներու մէջ ալ Լաթօն կատարեց ամենափայլուն դեր, որպէս ղեկավար և հերոս կռուող» (Արքահամեան Ա., Մեր գոհերը, «Դրօշակ», 1928, N 4, էջ 126):

126 Դեպքը կատարվել է 1913 թ. մարտի 23-ին, երբ «Պարար գաւառի Աքուցցի Կիրակոս Աբրահամեանը իր երկու որդիներու հետ իրենց գիւղէն կէս ժամ հեռու փայտ կտրելու կերթայ ցերեկ ժամը 10-ին: Ատեանցի Օսման աղայի արքանակներէն ճընտիէ Ապտուրահման, Թահային 3 որդիներ, Ակիթ, Հաքըմ, Ալօ, Իսուֆին տղան ճաֆեր եւ ճնտոյի տղան Միւէն կը յարձակեն անոնց վրայ, Կիրակոսը կը սպանեն, իսկ տղաքը փախչելով կազատուին: Սպրիկ Յովհաննէսյանի եւ Յովսէփ Վարդանեանի վկայութեամբ թէւ ռճիրը հաստատուած է, բայց անհետեանք» («Աշխատանք», 1913, № 29 (125), էջ 4):

127 Ըստ հուշագրի՝ «Պոլիկի տղան Սաթիսա է, գրվում է Ա. Ոչտունի»:

128 «Խիզանայ շեխ Սէյտ Այի 25 տարեկան երիտասարդ մըն է, նշանաւոր շեյխ ճէլալտտիին որդին, մեծ պատիւ և յարգ կը վայելէ շրջակայ թիւրքերու և քիւրդերու մէջ, մեծ ազդեցութիւն ունի կառավարութեան վրայ և Խիզանի, Սպարկերտի, Շինձորի, Կեցանի, Ստորին Կարկառի, Դատիկի, Երունի գայմագամները անոր գիտութեամբ կընտրուին և հակառակ անոր կամքին ոչինչ չեն կարող ընել» («Դրօշակ», 1902, էջ 11, էջ 167-168): Նա «...սարսափելի կրօնամոլ ու հայատեաց է, որուն

–Շեխ Սալիդ մեզ դրկեց ձեզ մոտ,– նրանք ասին,– որ ձեզ հայտնենք շեխի գաղտնիք, որ ուրիշի չասեք: Մեր շրջանների մեջ դուք՝ որպես կոչաղ, կռվող մարդիկ, պետք է մասնակցեք շեխի կռիվներին:

–Ի՞նչ կռիվ,– ասին մեր գյուղից մի քանի մարդիկ:

Նրանք պատմին շեխի տված պլաններ, ոչ մի բան չպահին: Եկողներից մեկը շեխի եղբոր տղան էր՝ շեխ Սատոն, մյուսը մի աղա էր՝ Կասմ անունով: Նրանք մանրամասն պատմեցին շեխի որոշված ծրագիրը. «Շեխ Սալիդ Ալի մարդ էր դրկել Վան՝ հայերի կոմիտեին, որ միանան քուրդ աշիրաթի հետ, ապստամբենք սուլթանի կառավարության դեմ, Անատոլ մաքրենք թուրքերից, բաժանենք հայերի և քրդերի մեջ: Վան, Կարին և Դարպայիզում¹²⁹ տանք հայերին, իսկ Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Մուսուլ, Շանգառ մնա քուրդերին, նրանք Քրդաստանին կոչվում»:

Մեր գյուղացի Վանոնց Ներսո ասավ.

–Շեխ լավ երազ է տեսել, թե թողնին նրա կամքով:

Ռաշո լաճ ասավ.

–Շեխի տեսած երազ շատ խորն է:

–Շատ ճիշտ է,– պատասխանեց եկած պատգամավոր,– շեխ երազով գնացել է Բաղդադի շեխի [մոտ]: Բաղդադի [շեխ] երազում մեր շեխին ասել է, որ դու շուտ կդառնաս մեր ազգի, իսլամի ընդհանուր իշխանապետ, ինչ որ մտածել ես, կկատարվի, մի՛ վախեցիր: Սալիդ աղեն հիմնվեց իր երազի վրա, մարդ դրկեց բոլոր աշիրաթներին՝ պոնած Վանի նահանգից Մուսուլ, Շանգառ, վերջ ընդհանուր Անատոլ, նրանց ոտքի հանելու սուլթանի դեմ:

Քանի որ հայեր մերժեցին նրան, ուստի թուրք դրկեց Բաշկալայի շեխին և որպես իր տեղակալ՝ դրկեց Հասեն փաշային և Իբրհ Սնջոյին՝ որպես հարավային աշիրապետ: Թուրք դրկեց Բշարե Զաթոյին՝ որպես արևմուտքի հրամանատար և ինք՝ որպես Քրդաստանի կազմակերպիչ, բոլոր պատրաստ մնան իր հրամանին սպասող:

Հայեր մերժեցին շեխի առաջարկ, նրա համար շեխ սպանել տվեց Վանի դպրոցների տեսուչ Ռաֆայելին, որպես վրեժ, բայց սպանողներն էլ չմնացին ողջ¹³⁰:

տուած անտանելի նեղություններն հայերուն մեկ մարդ իր կալուածները, տունն ու տեղը, հայրենի օջախը քանցելով դես ու դեն գաղթեց: Մնացած մասը, ինչպես նաև թրքացածներն ալ, լոկ գերիներն են Շեխին ու իր ժողովուրդին» («Հնչակ», 1901, № 5, էջ 48):

129 Տրապիզոն:

130 Խոսքը վերաբերում է Վանի դպրոցների տեսուչ Ռաֆայել Երիցյանի սպանությանը, որը կատարվել է 1912 թ. աշնանը, Կարկառ գավառի քրդաբնակ համայնուն գյուղի մոտ. «Աղբամարի թեմի գիւղական դպրոցէն ներս ընդհանուր տեսուչի պաշտօնը վարող այս երիտասարդը գազանաբար կը սպաննուի քիւրտներուն կողմէ, որոնք դուրս կը հանեն անոր աչքերը ու կը կտրեն լեզուն: ...Տասնեակ հազարաւոր գիւղացիներու

Շեխ Սալիդ աղեն հայերի հին թշնամին էր, նա շեխ Ջալալդինի տղան էր. 1877 թվի հայկական ջարդարարն էր Աղբակի և Բաղեշի կողմեր, Ջալալդին իր և իր մուլա հոր պահողին չխնայեց, կոտորել տվեց: Այն մարդ, որ նրանց սովից փրկեց Մոկաց գավառից փախչելուց հետո, Ջալալդին կոտորել տվեց Խիզան գավառի Բեթամ¹³¹ հայաբնակ գյուղ, մոտ 150 տուն, նրա տեղ հիմնեց իր թաքեն շեխանիստ ավան, որ կոչեց Բեթամեր: Շեխի ավան դարձավ մի գյուղաքաղաք: Նրա հարստության չափ չկար՝ բոլորը հայերից թալանածով, հայերի թափած արյունով: Նրա համար շեխ Սալիդ Ալին ուզում էր հայերին կապեր իր չար գործերի հետ, բայց նա չարաչար սխալվեց իր տեսած երազով, այդ տեսած երազ կպավ իր գլխին:

1913 թվին պատրաստած ծրագիր նա կատարեց 1914 թվի ապրիլին¹³²:

Շեխը հրաման դրկեց նշանավոր և ազդեցիկ, բոլոր աշիրաթների մեծերին՝ հայտնելով, որ պատրաստվեն. «17 ապրիլի 1914 թ. ժամի 4-ին ես կգրավեմ Բիթլիս քաղաք, Շեխ Հներյան կգրավի Վան, Հասեն փաշեն՝ հյուսիսային գավառներ, իսկ Բշարե Զաթո՝ արևմտյան գավառներ, մենք ունենք մոտ հիսուն հազար կռվող մարդ»: Սալիդ Ալին, որ նշանակված օր՝ մոտ ժամի 4-ին, չորս հազար մարդով հարձակվեց Բիթլիսի վրա, այն ժամանակ Բիթլիսում քիչ ասկար կար: Կռիվ սկսեց լուսաբացին, տևեց մինչև ուշ գիշեր: Ասկարներ չդիմացան քուրդ խուժանի հանկարծակի հարձակման, քաշվեցին դեպի Փափշեն գյուղ: Երկու օր քաղաք մնաց շեխի ձեռք, երրորդ օր Վանից գործ հասավ, շատ հայ կար: Ուժեղ թափով հարձակվեցին շեխի խուժան անկիրթ քրդերի վրա, գնդացիքով և չափով¹³³ կռիվ երկար չտևեց, քրդեր սկսան անկանոն ոչ թե նահանջի, այլ ուղղակի փախան մեկը մյուսին տրորելով: Շեխեր բռնվեցին աղաների հետ, մույն օր հրաման եկավ, որ շեխերին կախեք հրապարակի մեջտեղ՝ ժողովրդի աչքի դեմ: Հրաման կատարվեց մույն օր Բիթլիսի մեջ:

ընկերակցութեամբ Ռաֆայելի դիակը բերուցաւ Վան եւ քաղաքին մօտակայ Արարքի գերեզմանատունը յանձնուցաւ հողին: ...Ռաֆայելի սպանութենէն քանի մը շաբաթ ետք, ...դաւադրութեան գլխաւոր դերակատարը՝ յայտնի աւագակապետ եւ մարդասպան Հաճի Եղկուպը, կը խողխողուի Ռաֆայելի վրէժխնդիր ընկերներուն կողմէ» (Թաշճեան Վ., Իշխանը, Երեւան, 1994, էջ 173-175): Այդ մասին մանրամասն տե՛ս նաև Ասլան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966:

131 Ջալալդինի կողմից Բեթամ (Բեյթամ) հայաբնակ գյուղն անբողոքայնորէն ոչնչացնելու մասին տե՛ս **Շեքինց Գ.**, Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանի նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 141-142; **Տևկանց Ե.**, Ճանապարհորդութիւն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ., Երևան, 1991, էջ 232:

132 Շեխ Սալիդ Ալիի ապստամբության մասին տե՛ս «Կոչնակ», 1914, № 18, էջ 421:

133 Շաքարի ճակնդեղը հանելու գործիք:

Շեխ Մայիդ Ալի երազ չկատարվեց այս երկրում, որովհետև նրա կազմակերպված աշխրաթներ ոչ մեկ իր տեղից չշարժվեց, իսկ Մայիդ Ալի մեծ եղբայր շեխ Շապադին կախելու ժամանակ պարան կտրեց ծանր լինելու պատճառով¹³⁴: Թուրքեր պահանջեցին, որ նա արդար է, իրավունք չկա նորից կախելու, բայց հրամանատար չլսեց նրանց: Նրանք պարան կախին վզից, բայց էս անգամ թուրք ասկարներ արթո չի քաշին ոտների տակից՝ մեղք համարելով: Ասկարի մեջ հինգ հատ ոզմեցի տղաներ կային. մեկ օմբաշի¹³⁵ Չատո անունով, պռնեց արթո, շարտեց մի կողմ, շեխի աչքեր դուրս եկան: Նրա համար քրդեր նորից մեր ոզմեցոց հետ դուշմանացան: Ահա թե որտեղից խաթաբալա¹³⁶ կգա մեր ոզմեցոց գլխին:

Բայց ասկար յուզբաշին¹³⁷ ոզմեցի Չատոյին պարզևատրեց այդ ռիսկի համար: Ասպես անցավ շեխ Մայիդ Ալի տեսած երազ: Ուրիշին հոր փորոք ինք կրնկի մեջ, հայ ազգի թալանած ապրանք մնաց գետնի տակ:

Կեցանի Մուսաբեկի սպանությունը

Մուսաբեկ շատ նեղություն տվեց հայերին, նրա համար ժողովուրդ շատ բողոքեց: Շատ տեղեր վերջապես որոշում հանին, որ ինչ գնով որ լինի, պետք է ավազակին հանել մեջտեղից: Քանի հայեր վնասվեցին նրա և Կաբարսի ավազակ Ահմեի ձեռքով: Նրանք ժողովրդին օր չին տալիս:

Մի անգամ աշխատանքի տեղից Պելու գյուղից երկու եղբայրներին պռնին, տարան սարի մեջ և փող պահանջեցին.

–Մարդուն տասը ոսկի, եթե չտվիք, երկուսիդ էլ կսպանենք:

–Լավ,– ասում է մեծ եղբայր Արշոն,– մեզ թողեք գնանք գյուղ, բերենք: Դուք գիտեք, որ մենք աղքատ, որք տղաներ ենք: Մեզ փող չկա, բայց մի տեղից կճարենք, մեր հող կծախենք, ձեր ուզած փող կբերենք, մնակ շատ ենք խնդրում, աղա ջան, մեզ մի՛ սպանի կամ էլ մեկիս թողեք, որ երթա: Գյուղից մեր մոր հետ կճարեն, կբերեն, շատ ենք խնդրում, աղա ջան, մեղք ենք, վերև աստված, ներքև դու: Ես մնամ, թող Միսակ երթա, եթե կսպանես, ինձ սպանի: Միսակ ջահել է, գոնե պառավ մորես թափած արտասուք խղճացե՛ք ի սեր Մուհամմատի, մեզ մի՛ սպանի:

Վերջ շատ են խնդրում տղաներ, աղան ասում է.

–Լավ, ձեր մեկին թողնենք, որ երթա, գյուղ հավար կանչի, որ ձեր կաշաղ Ասպո լսի գա ձեզ ազատի՞:

–Աղա ջան, Ասպո մեր գյուղացի չէ, ինչ գործ ունենք նրա հետ:

Տղաներ տեսնում են, որ ճար չկա, պետք է սպանեն իրենց, թողնում են, փախչում, բայց հետևից խփում են և սպանում երկուսին մեկտեղ. քանի այդպես հայ կոտորել տվեց քոռ Մուսաբեկ:

Ժողովուրդ դիմեց Ոստանի գայմագամին, նա էլ ոչինչ չարավ: Վերջ ժողովուրդ դիմեց Վանի կոմիտեին: Կոմիտեն հրահանգ տվեց Ասպոյին, որ այն ժամանակ փախստական էր Նարեկի կովից հետո, թե ժողովրդին պահանջ պիտի կատարենք: Որոշում Վանի կենտրոնից գրավոր ուղարկած էր Ասպոյին կամ Վարդանին:

1913 թվի քաղցին էր, ամառ թեքվում էր դեպի աշուն: Ասպո լսում է, որ Մուսաբեկ հինգ-վեց զավթիայի հետ գնացել է Կարճկանի Ուղվանց գյուղ՝ Մարքազ մյուդուրի մոտ և պետք է վերադառնա կեսօրից հետո: Ասպոյին իմաց է տալիս Ազնիվ անունով մի կին, որ ինք տեսել է գյուղից դուրս գալու ժամանակ: Նրա հետ վեց հատ զավթի: Մուսաբեկ ձիավոր է, իսկ զավթիք ոտով են:

–Դու հաստատ գիտե՞ս,– ասում է Ասպո Ազնիվին:

–Խա՛, ես իմ աչքովս տեսա, որ ձին խեծավ,– ասաց,– պետք է երթամ մյուդուրի մոտ, շատ կարևոր գործ ունեմ, բայց երեկոյան կվերադառնամ, ասաց իր կնոջ՝ Չայնոյին:

–Լավ, դու գնա գյուղ, ես էլ գնում եմ, Փլխուս գործ ունեմ:

Կին հեռանալուց հետո Ասպո իր ընկերներից վերցնում է Բելու գյուղացի Կոլոտ Եղոյին, մնացած տղաներին պատվիրում է, որ իրենք էլ պատրաստ մնան Կանջո դարի տակ. «Թե հրացանի ձայն լսեք, շատ շուտով իմաց տվեք մյուս ընկերներին: Մեկդ իմաց կտաք Վարդանին, թող նա էլ իմանա գործի եղելություն: Դահա խոսք չունեմ, ինձ կսպասեք Նանիկանց գյուղի անտառ՝ Կապոտ դարի տակ»: Ասպո, Եղոյի հետ գնում է դեպի Փլխուս գյուղ: Ժամի մոտ չորսին հասնում է այն ճանապարհին, որ Մուսաբեկ պետք է վերադառնա Կեցան՝ իր գյուղ: Ասպոն տեսնում է, որ ճանապարհի դիմաց մի մարդ իր պառավի հետ ցորեն է քաղում: Նա մոտանում է հալիվորին, ասում է.

–Գասպար քեռի, քո շորեր և քո մանգաղ տու՛ր ինձ, ես քու տեղ կքաղեմ, դու և քո պառավ նստե՛ք դեզի տակ, հանգստացե՛ք, ես Եղոյի հետ արտո՞ղ կքաղեմ:

Չինայած Գասպար քեռին զարմանում է, բայց տալիս է իրենց շորեր և մանգաղներ, իրենք մտնում են դեզի տակ, նստում են: Մի մանգաղ Ասպոն է վերցնում, մեկն էլ Եղոն, և սկսում են ցորեն քաղել: Կես ժամ չի անցնի, Մուսաբեկ գալիս է ձին հեծած, իսկ զավթիք հարյուր մետրի վրա հեռու են նրանից: Մուսաբեկ տեսնում է, որ քաղվորներ փոխված են, մնում է զարմացած: Ուզում է հետ դառնա, բայց

134 Շեխ Մայիդ Ալին և շեխ Շապադինը «...բուրք կառավարութեան կողմէ կախուեցան Պիթլիսի մէջ, պատերազմէն տարի մը առաջ» (**Հայկունի**, Ջարդի սարսափներէն, «Աշխատանք», 1916, № 43, էջ 3, ծնթ. 1:

135 Տասնապետ:

136 Փորձանք:

137 Հարյուրապետ:

Ասպո մաջալ չի տա, վերցնում է տասնոց ատրճանակ, դեմ է գնում Մուսաբեկին:

–Ես Ասպոն եմ, Մուսա՛, ինձ լավ տես՛:

Մինչև Մուսաբեկ ձիու գլուխ թեքում է, որ փախչի, էլ տղերք չեն սպասում, խփում են երկուսով և ձիուց ցած են գցում: Եղո վերցնում է նրա հրացան, շորեր փոխում են, հեռանում են արտից¹³⁸: Վագում են զավթիք, բայց զավթիք արդեն տեսել ին՛, որ իրենց Մուսաբեկ սատկավ, իրենք թողնում, փախչում են դեպի մյուրուրի կողմ՝ Ուղվանց գյուղ: Մյուրուր որ լսում է, թե Մուսաբեկ սպանած են, սրտանց ուրախանում է, բայց երկու զավթիքաներին դրկում է Գավառ քրդական գյուղ, որ շուտ իմաց տան գյուղի ասկարներին և բոլոր քրդական գյուղերին, որ զենքեր վերցնեն, զան, ճանապարհներ կտրեն, մարդասպանին պռնեն, բերեն իր մոտ: Բայց մինչև նրանց հավաքվել, մութ ընկնում է: Դեպի Գավառի տղաների ճանապարհ կտրում են Կեցանի քրդեր, տղաներ անցնում են դեպի Գոմս գյուղի կողմեր՝ դեպի ծովափ, որ նստեն նավ և անցնեն դեպի Հարտամերտ գյուղ: Բայց զիշեր նավ չի լինում: Ստիպված մնում են անտառ: Լուս բացվելու պես ասկարներ նրանց տեղ իմանում են, վերջ կռիվ սկսում է վաղ առավոտ շուտ: Տեղական հայերից մի քանի մարդ զենքեր վերցնում են, գալիս են օգնության Վարդանի ղեկավարությամբ, բայց կռիվ ժամանակ մյուրուր կանչում է Ուղվանց գյուղի ռեսին և ասում է նրան:

–Դու ժողովրդին ինձ՛ց տուր, թող չի վախենան, ես կասեմ, որ ժողովուրդ բանից տեղյակ չէ: Ռես Խալո՛, դու գիտես, որ ես ուրախ եմ, որ շուն սատ-

կավ, բայց դու ուրիշի մի՛ ասա: Թող ժողովուրդ իր աշխատանքից չի զրկվի, ես մեղք կզցեմ երկու մարդու՝ Ասպոյի և Բելվեցի Եղոյի վրա, որոնք արդեն կաշաղ են կառավարությունից:

Կռիվ շարունակվում է մինչև զիշեր: Գիշեր տղաներ նստում են նավ, անցնում են դեպի Սուրբ-Վարդան գյուղ, իսկ Վանից եկած զորք հասնում է մինչև Իշկերտ¹³⁹ գյուղ: Իմաց են տալիս զորքին, թե կռիվ վերջացած է:

Չորք Իշկերտից հետ է դառնում նորից դեպի Վան, իսկ Վանից կառավարության կողմից քննիչ եկավ, գնաց Կեցան՝ Մուսաբեկի տուն քննելու, թե ով է տեսել սպանողին: Բոլոր ցույց տվին, որ Վարդան մեղավոր չէ, Բելու գյուղացի Կոլոտ Եղոն է սպանող, որովհետև Մուսաբեկի կարգադրությունով Ահմեկաբարս Եղոյի երկու հորեղբոր տղաներին տարավ, սպանել տվեց էն էլ Հուռիեթի ժամանակ: Նրանց մեր լաց լինելով քռացավ: Եղոն էլ չի դիմացավ, գնաց Ասպոյի հետ միացավ, զարկին, իր վրեժ հանին: Ժողովուրդ իմանում էր, որ մեղք կզցեն Ասպոյի և Եղոյի վրա, իրենք կազատվեն: Այնպես էլ որոշված էր: Թե՛ կոմիտեի և թե՛ ժողովրդի կողմից ասում են, որ մենք կարող ենք երկու մարդու պահենք մեր մեջ: Անպես էլ արին:

Ասպոն և Եղոն իրենք էլ համաձայնին, որ ժողովուրդ թող չի չարչարեն, մենք այստեղ չենք մնա, կգնանք, ուրիշ երկրներ կապրենք: Մնացին գավառի մեջ, մասնակցեցին շատ տեղեր տասնհինգ թվի կռիվներին մինչև կամավորների գալու ժամանակ: Բայց Ասպո էլ Վարդանի պես կամավորներին տեսավ, ազատվեց իր չարչարանքից, բայց շատ չի վայելեց, նա էլ իր մահով մեռավ տասնհինգ թվի հունիսին:

Խորս անտեղի սպանվելուց հետո

Խերս թաք մարդ էր գյուղի մեջ, ոչ մի ազգական չունեմ, բայց շատից քչից գրագետ էր: Միշտ նա էր գյուղի քաթիբը, ձեռքը փող չունենալու պատճառով թողնում, գնում էր կատան, որպեսզի իր փոքր վեց երեխաներին մի կերպ պահի: Խերս միշտ քասիբ էր ապրում փողի տեսակետից: Հող ուներ, բայց չէր բավարարում մեր ընտանիքին: Բաղ շատ կար, բայց ինչ օգուտ, որ պտուղ, միրգ չէր ծախվում, բոլոր փչանում էր: Մեր տուն միշտ պարտքի տակ էր խորս ժամանակ: Մենք մեծացանք, նրա պարտքեր տվինք: Խեղճ էր խերս:

Նրա գլխավոր պարտք մեր գյուղի եկեղեցու պարտքն էր: Մեր մի արտը պապերս նվեր ին՛ տված եկեղեցուն որպես թե՛ գնան արքայություն, բայց նրանք արքայություն չգնացին և մեր տուն գցին պարտքի տակ: Մենք արտ վարում, ցանում ինք՛ Մբ. Ստեփանոսի հետ կիսովի, բայց խերս նրա կեսի

138 1913 թ. օգոստոսի 13-ին «...ճիշտ ժամ 4 կեսին, Աղստու եւ Կանտու գիւղերու մէջտեղ չորս անձնատրուքիւններ քանի մը համազարկերով կապաններ գաւառիս յայտնի աղաներէն Մուսա պէյը: Աղըստուից Կենդրանց վերադարձած միջոցին Մուսա պէյը 12 քիւրդ ընկերներով յարձակման կենթարկի 4 զիւղացու հագուստներով մարդոցմէ, որոնց զնդակէն անմիջապէս կընկնի Մուսա պէյը, իսկ ընկերակիցները շշկուած այս անակնկալ պատահարէն կը փախչին: Սպանողները կը բարձրանան Սրորս գիւղի ետեւի սարը, ուր իրենց ընկերակիցներ կան եղեր, ասոնց անմիջապէս կը պաշարեն զօրքն ու ժանտարմները եւ կսկսի կռիւր: Սպանողները կուելով կը բարձրանան մինչև Եղեգիսի ետեւի բարձր բլուրը, զօրքէն ու ժանտարմներէն կսպանին երկու հոգի: Մինչեւ երեկոյեան ժամը մէկը կէս այդ դիրքերէն կը լսէին հրացանի ձայներ, միայն ժամ երկուսի մօտերը լռեց հրացանի ձայները:... Օգոստոս 14-ի առաւօտեան նորէն դաշար թնդացուցին հրացանի անընդհատ համազարկերը: Ոստանէն հասնող զօրքը կը հանդիպի ճանապարհին սպանողներուն, եւ անոնց հալածելով կը հասնի Կոմս գիւղի լեռան բարձունքներուն: Մինչեւ ժամը 5-ը այդ դիրքերու վրայ կը տեղար ուժեղ, անընդհատ կրակ միացեալ զօրքերու կողմէն, որոնք եկած էին Ոստանէն, Պիթիլզէն եւ տեղիս զօրքն ու ժանտարմիի հետ միացած անոնց թիւր կը բարձրանար մօտ 400-ի: Ժամը հինգիս սպանողները չդիմանալով զօրքերու անընդհատ եւ ուժեղ յարձակումներուն կը թողնեն դիրքերը եւ կիջնեն դաշար: ...Ժամը 7-ին փախչողներու հետքը կը բռնի Օղվանց գիւղի ետեւի Բերդ կոչւած բլուրը... կը շարունակի կռիւր» (Ա. Մ., Կարճկանի ղեպքը, «Աշխատանք», 1913, № 41 (137), 24 օգ., էջ 6):

139 Իշկերտ քրդաբնակ գյուղը գտնվում է Վանի նահանգի Գյալազ գավառում:

զին չէր տված, նրա համար մնացել էր պարտքի տակ: Մենք երեք աղբերներս մեծացանք, մեծ եղբորս պսակինք, իսկ մենք երկուսով առանց պսակվել ինք, ազապ տղաներ ինք: Բայց խերս շատ տխուր էր միշտ:

Մի օր ես խորս հարցրի իր տխրության պատճառ: Նա ինձ պատասխանեց, թե ես քսանուհինգ ոսկի պարտք ունիմ վրաս, նրա համար է իմ տխրության պատճառ: Հետո պատմեց, թե տասնութ ոսկի եկեղեցուն է, մնացած քրդերին է: Ասի, թե քու պարտքեր ես կտամ, դու մի մտածի:

Գիշեր իբր երազ տեսա, որ մեր Ս. Ստեփանոս եկավ ինձ ասավ, թե՝ «Արմեն, ես իմ պարտք բաշխել եմ քեզ, ոչ մի փող չեմ ուզում քեզանից, փող կտաս քեզ համար մի մոսիկի հրացան կառնես, որ մեր հայ կրոն և լեզու պաշտպանես, որ թշնամին մեզ չվնասի: Այն փող քեզ խալալ լինի»: Իմ տեսած սուտ երազ պատմի հորս: Նա զարմացավ և ասաց.

–Այ տղա, քու տեսած երազ ուրիշի չասես, մենք չենք կարող ժամու փող չտալ, նրա համար պետք է մատաղ կտրես, որ քեզ չի վնասի:

–Թող վնասի, ժամ ինձ խոսք տվեց, թե փող տաս, երեցվոխ ուտի, ավելի լավ է դու ուտես, իսկ մնացած փող, որ ուրիշի է, աշուն կատան կերթամ, կբերեմ, կտամ, դու անհոգ կա՛ց, շատ մի՛ մտածի:

Նա ինձ ասավ.

–Անհավատ տղա ես, քեզնից ամեն բան սպասելու է, դու բիճ ես իմ տղաների միջին, Սբ. Ստեփանոսի մեղքը վզիդ լինի, դու գիտես:

Ասաց խերս ու թողեց գնաց, որ բողոքի երեցվոխի մոտ, որ ես չեմ խառնվում ժամի գործերին:

Աշուն եկավ: Փոքր եղբորս հետս տարա կատան՝ գեզ անելու: Երկուսով քսանուվեց ոսկի փող բերինք, տվինք խորս:

–Առ,– ասի,– պարտքերդ տու՛ր, բայց ժամին չտաս, նրան ես տվեցի: Մի հատ ժամի շապիկ առա, մի հատ էլ կանթեղ, Սբ. Ստեփանոս շատ օրշնեց ինձ, որ ես Վանից նրա համար նվեր բերի:

Խերս պարտքից ազատվեց, մի քանի հատ ոչխար առավ, մի գույզ եզ, մեկ կով և դարձավ իր ընկերների համար լավ մարդ: Բայց երկար չտևեց նրա ուրախություն: Ութ թվի մեր գյուղի դեպքից նա էլ ազատ չմնաց: Չոհվեց իր ընկերների պաշտպանության համար՝ ասելով.

–Ձեր գործ արդարություն չէ, դա հեղափոխական օրենք չէ, ձեր պնած գիծ երկար չի կարող գնալ, դուք ձեզ կվնասեք և շատ տուն կքանդեք:

Նրանք ասում են.

–Մենք մեր գործ կանենք, որտեղ բարակ է, թող կտրվի:

Եվ կտրվեց բոլորի կյանքի թել, կրակ ընկավ անտառ, թացն էլ չորի հետ վառվեց:

Ահա դուզ խոսողի խոսք չի անցնի, մեծին չի լսողին կտուժի: Խերս գոհվեց իր երկու խոսքի համար: Ասում էր. «Ժողովրդին չպետք է ծեծելով կազմա-

կերպեն, այլ խոսքով»: Մեր գյուղից տասնութ մարդ սպանվեց:

Դիմեցի Վանի կենտրոնական կոմիտեին՝ անձամբ պ. Վռամյանին՝ իմանալու խորս սպանության պատճառ: Նա ինձ պատասխանեց.

–Ձեր գյուղի դավաճանները ոչ թե գյուղի մեծ մարդիկն են եղել, այլ մի շարք այն մարդկանցից, որոնք իրենց անունը դրած են հեղափոխական, բայց քանդում են ժողովրդի տնտեսություն: Մենք խորդ դավաճան չենք կարող անվանել, գիտենք, որ նա եղել է ճիշտ խոսող մարդ, որ իր տված խոսքերով նա ժողովրդի շահերն է պաշտպանել, բայց ձեր շատ անգրագետ երիտասարդներ ուզեցել են մեծ մարդկանց մեջտեղից հանեն, որ իրենց գյուղի ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնեն: Ահա քեզ շիտակ խոսք: Դու գնա՛ գյուղ, կազմակերպեցե՛ք երիտասարդության, թող եղածը մոռանան, գյուղը վերականգեն և նախկին հարևանություն սկսեն: Մենք մարդ կուղարկենք գյուղ, որ մի խելոք ղեկավար ընտրի գյուղի համար, որ կարողանա ղեկավարի գյուղի երիտասարդներին: Դուք գործ չունեք կառավարության գործերի հետ, ես մարդ կուղարկեմ, որ ձեր գյուղին մի հինգ մարդուց բաղկացած մի հոգաբարձու ընտրեն, որ կարողանան ձեր գյուղի կոտրած անուն վերանորոգեն:

Բայց ես պատասխանեցի Վռամյանին.

–Կոտրած պուտուկ չի սաղանա:

Թողինք, վերադարձանք գյուղ:

Վանից գալուց հետո մեր գյուղի խառնակիչ յոթովիմերան նորից սկսեց իր խաղ խաղալ: Նա խոսում էր շատերի հետ.

–Ամրո եկավ Վանից, գնացել էր Վռամյանի մոտ բողոքի: Նրան շուտով կնշանակեն գյուղի հոգաբարձու, պետք է մենք թույլ չտանք նրան առաջ գալու, պետք է նրան վերացնենք մեջտեղից, թե չէ նա վրեժ կառնի մեզնից:

Այդ յոթովիմերան Գարլոնց Խաչոն էր, որ եղավ շատ մարդկանց կյանքի պատճառ, ինչպես և իր եղբոր: Նա էր, որ Բոզոյին և մյուսներին խաբելով խելքից հանեց: Նրանց համոզում էր, թե բավական է, որ մեր գյուղ ղեկավարեն Պետան, Մարտո, Մուխսի, Բաղդո, Մոսո և ուրիշներ, հիմա ղեկավարություն մեզ է պատկանում, և Բոզոյին դարձրեց Չիր կերող խումբի անդամ: Ինչպես Լաթկաց Մոսո էր ասում. «Այլի սորին բոլոր»:

Անցավ մի քանի տարի: Գյուղը մի թեթև շունչ քաշեց, բայց ահա նոր փոթորիկ եկավ մեր գյուղի գլխին, արև խավարեց տասնչորս թվի աշնան: Նորից դուրս եկավ ոչ թե մեկ խառնակիչ, այլ երկու: Մեկն իր հին պայքար սկսեց, որ ինքը կամ իր տնեցիք գուրկ մնացին գյուղի ղեկավարությունից: Այնքան խառնելուց հետո նորից մնացին փուչ: Առակն ասում է. «Աստված սար կտեսնա, ձուն կդնա վրա»: Տասնութ անձից մի հատ մուկ էլ չի մնաց իր սերունդից: Այն ժամանակ Լաթոն մեր գյուղի գործերի մեջ

չէր խառնվում: Նրան կարգադրված էր զբաղվել Մամոռտանք, Սպարկերտի շրջանների գործերով, իսկ մեր գյուղը մնացել էր ռեսի և հինգ դատավորների իրավունքին: Չար մարդիկ չի թողին, որ հանգիստ մնա գյուղ, քանի որ իրենք զրկված էին այդ հասարակ պաշտոնից: Մեր գյուղի մեջ սկսան գողություն անել, որ ջուր պղտորեն, իրենք էլ ձուկ պոնեն: Գողությունը շատացավ, գյուղացիք բողոքին դատավորներին, որ միջոց ձեռք առնեն: Որոշեցին, որ մի քանի տղա զիշերները հսկեն ճանապարհների վրա: Գողին պոնին, բայց գողությունը ծածկելու համար գողը զարկեց մի տղայի ու փախավ: Գաբրիել Խաչոյի՝ այն է յոթնվիներանի կարգադրությամբ եղբորը խփել տվեց իր եղբոր տղի ձեռքով: Խաչոն տեսավ, որ իրենց տուն կմեղադրեն: Կանչեց իր ազգական Հոխեկին, տասնհինգ ոսկի փող տվեց և ասավ.

–Գնա՛ սպանված տղայի մոր մոտ, ասա՛, որ այս փողը Խաչոն է տվել, որ ասես իմ տղան Արշակ չի սպանել, սպանողն Ամրոն է:

Եվ իր ազգականն այդպես էլ արավ, քանի որ սպանված տղայի եղբայրը Խաչոյի ազգական Հոխեկի փեսան էր: Նա էր, որ, որպես գող, զարկեց Հարութին, փախավ, գնաց Հոխեկենց տուն: Սպանության մեղքը զգեցին ինձ վրա, երբ ես տունս քնած եմ եղել: Խաչոյի տված փողն իր նպատակ կատարեց ինձ մեջտեղից վերացնելու համար, որ հարմար առիթ էր փնտրում ինձ գյուղից հեռացնելու: Գործը մեծացավ, Խաչոյի մարդիկ շատացան, բայց արդարություն իր գործ լավ է իմանում: Արդարություն մարդու չի խորտակում, զրպարտող մարդ չի գորանա, խոր փորող ինքը կընկնի խորի մեջ: Այդպես էլ եղավ, բայց խոսք ընկավ գյուղի մեջ: Շատերնը, իհարկե, չի հավատացին, որ ես այդպես անխղճություն եմ արել, բայց որի բերան կարող ես բռնել: Ասում են, «Եզ որ ընկավ, դանակ կը շատանա»: Տղի տերեր չի հավատաց, գտան, որ Խաչոյի գործն է: Տղայի հորեղբարներ այսպես ասին, թե՛ «Մեր գյուղի խառնող միշտ Խաչոն է եղել, իմա ուզում է նորից խառնի»:

Երկու օրից հետո Լաթոն եկավ գյուղ: Ինձ կանչեց, ասավ.

–Դու մի՛ մտածի, ես գիտեմ, թե ի՞նչ խաղ եմ խաղում: Մեր գյուղի քանդողներ նորից սկսել են իրենց դավաճանություն: Դու այդ գործ անող չես, ես կխոսեմ, որտեղ պետք է:

Գործը կառավարության չտվին: Տվին շրջիկ խմբին, որի ղեկավար պ. Լևոնն էր: Նա եկավ գյուղ՝ գործը քննելու: Առաջին օր Խաչոն նրան կանչեց իրենց տուն, պատիվ տվեց խմբին, որ իր կյանքի մեջ հաց մարդու դեմ չէր դրած եղել: Ահա այստեղ գյուղացիք իմացան խարդախության իսկություն: Լևոնն ինքն էլ իմացավ, թե ի՞նչ է նշանակում այս պատիվ տալ: Լևոնը, որ զիշերը վարժատան մեջ էր քնած, մյուս առավոտ վեր կացավ և վարժատան

մեջն էլ քննություն սկսեց Լաթոյի և Գալուստի ներկայությամբ: Կարկառ գավառի ներկայացուցիչ Գալուստը Չկոր գյուղացի էր: Երեքով քննություն կատարեցին գյուղի հասարակության ներկայությամբ: Կանչին այն վիրավոր տղային, թե ո՞վ քեզ խփեց: Նա ասավ, թե չգիտի: Ահա այստեղից իմացան, որ խփող իր բաջանաղն է եղել, չի ուզում, որ շիտակ խոսի, քանի որ նրան ասել են, թե մի ասանով խփեց: Կարծիքներ պարզվեցին, որ մեջտեղ կաշառք է խաղացել: Հետո շատ մարդ քննեցին, թե Ամրոն ի՞նչ թշնամություն է ունեցել սպանված տղայի հետ: Բողոքը պատասխանին, թե ոչ մի թշնամություն չի եղել մեջտեղ, զրպարտում են Ամրոյին՝ որպես աչքի ընկնող տղայի, որ Վան գնաց և գյուղի խառնողների պոչեր խուզել տվեց: Նրա համար էլ ուզում են, որ նրան գյուղից հեռացնեն, որ կարողանան իրենց չար գործ նորից սկսեն: Լևոնը Գալուստի և Լաթոյի հետ շատ լավ հասկացան, թե բանն ինչն է: Վերջում ինձ կանչեցին, թե ինչպես եղել է այս գործի բուն պատճառ: Ես մանրամասն պատմեցի, հետո ասի.

–Այս տղան, որ այստեղ նստած է որպես վիրավոր, երեկ, մյուս օր ասում էր, թե իմ խփող իմ բաջանաղն է, իսկ հիմա ասում է, թե չգիտեմ: Ի՞նչ է նշանակում այդ «չգիտեմ» խոսքը: Դուք լսեցիք, արդեն կարիք չկա իմ ասելուն կամ թե այն տուն, որ իր կյանքի մեջ մարդու չի տարե իր տուն, ու է մորթել: Մա ի՞նչ է նշանակում: Մրանից դեմ ոչինչ չունեն ասելու, ինչ որ որոշելու եք, ես պատրաստ եմ:

Մրանով վերջացավ քննություն: Մյուս օր Լաթոն ինձ ասավ.

–Արի իմ խմբի մեջ, դու գործ չունեն:

Բայց Լևոնն ուրիշ բան ասավ ինձ.

–Դուք չեք կարող իմանալ, դուք կարող չի գիտեք: Մենակ քեզ եմ ասում, որ Թուրքիան անցել է Գերմանիայի կողմ, կռիվ է հայտարարել Ռուսաստանի հետ: Մենք պետք է մարդ ունենանք, որ օգնություն ցույց տանք ռուսներին և կամավորներին: Մեջից պետք է ապստամբենք, որ թուրքի գլուխ խառնենք, ուշադրություն դարձնենք ներքին կռիվներին: Մեզ մարդ է պետք, որ գործ կատարի: Ես քեզ, որպես եղբոր, խոսք եմ տալիս, որ քու տան մեծին կպնողի վիզ կպոկեմ: Ես գյուղի ռեսից և վիրավորվածի տերերից ստորագրություն եմ առել, որ քու տուն ապահով մնա, դու ինձ լսի, չես փոշմանի:

Մի ժամ խոսելուց հետո ես համաձայնեցի Լևոնի հետ, որ դուրս գամ գյուղից, բայց դուրս եկա ոչ թե ժամանակով, այլ մինչև իմ կյանքի վերջը: Ես մեր տանից դուրս եկա, մորս թողի լացով, բայց բախտս օգնեց և մորս արտասուք դարձավ ուրախություն, արդարություն հաղթեց բողոք զրպարտության:

Գյուղից հեռացա ընդմիջտ: Ոչ մի բան միտս չի գալիս, բացի իմ սիրած բաղից, որին ասում ինք Դրախտիկ՝ գյուղի մոտի բաղ: Մեկ-մեկ երագումս տեսնում եմ իմ սիրած Դրախտիկ, որ մնաց քրդե-

րին: Ա՛խ, իմ փոքրիկ բուրաստան, ափսոս անտեր մնացիր: Ա՛խ, իմ սիրած Դրախտիկ, ափսոս քրոջին մնացիր, իմ տնկած տանձի ծառե՛ր, ճղակտոր մնացիր:

Լևոնի հետ եկա մինչև Շատախի Սևտիկին գյուղ, որտեղ նույն օրն Արամ փաշեն էլ էր եկել: Նա մեզ կանչեց, Լևոնից մանրամասն իմացավ, հասկացավ մեր գյուղի եղելություն, կարողաց Լևոնի գրած արձանագրությունը և իմ տված զեկուցումը, ապա վառեց, գցեց կրակի մեջ: Արամը պատմեց երկրի դրության, Գերմանիայի հետ Թուրքիայի միանալու, Անդրանիկի կամավոր հավաքելու, դեպի Կարսի և Վանի սահմաններ ռուսական զորքերի առաջխաղացման, կամավորների կազմակերպման մասին, որոնք, միացած ռուսաց զորքերի հետ, գալիս են մեզ ազատեն փաշաներից: Հետո Լևոնին ասաց.

–Իսկ դու գնացեր ես, ընկեր ես մի տղայի վիրավորվելու հետևից: Մենք շատ զոհեր պիտի տանք, մինչև վերջին փրկությունը ստանանք: Գուցե ես կամ դուք չի տեսնենք, բայց հայ ազգի փրկությունը կապված է ռուսի հետ, և Ռուսաստանը հայերին կազատի Թալեաթի ձեռքից կամ Էնվերի պողպատե սրից: Հերիք է, որ գլուխ կախենք օսմանցու բռնակալության տակ:

Լևոնին կարգադրեց.

–Դու պետք է ունենաս մոտավորապես մինչև հարյուր մարդ: Կուղարկես և Ոգմից կկանչես նրանց, որոնց Ամրոն ցույց կտա: Ես նամակ ուղարկել եմ Լաթոյին, որ նա պատրաստ մնա ժողովրդին պաշտպանելու համար: Շրջաններում պետք է զենքի համար հոգ տանեն, որ ժողովուրդն առանց զենքի չմնա: Ժողովուրդը պետք է պատրաստվի, մինչև ռուսական ուժը հասնի մեզ մոտ:

Արամն իր խոսքը վերջացրեց, ապա Լևոնին կարգադրեց, որ անցնի Գավաշ, Հայոց Ձոր և բոլոր տեղերին իմաց տա: Ինքն էլ անցավ Շատախի թաղ, որ այնտեղ ուժերին միացնի՝ ժամանակին իրենց ժողովրդին պաշտպանելու համար: Շատախը լեռնոտ գավառ է, և մեծ հույս կա նրանց կռվող տղաների վրա:

Մնացի Լևոնի մոտ: Միասին անցանք Գավաշ: Մի քանի օր հետո մեր գյուղի տղաներն եկան և մեզ հասան: Միայն իմ մոտիկ ընկեր Պողոսը չեկավ, մնաց և գյուղի կռվին զոհվեց: Ես բերել տվի եղբորս, որ չմնա գյուղ, և տանեն ասկար: Մնացինք Լևոնի մոտ: Վա՛յ այն մնալուն, բայց, ի՛նչ արած, պետք է դիմանանք, որ հասնինք արդարության օրերին:

Աքանանցի 1914 թ. կռիվը¹⁴⁰

Փերթակ գյուղ նստած ինք, որ Վանից նամակ ստացանք: Լևոնը գրել էր, թե Ամրոն և Մեփանը թող

140 Աքանանցի կռիվը տեղի է ունեցել 1914 թ. դեկտեմբերի 6-7-ին: Մանրամասն տես Ա.Գ.Օ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 131-134: **Մխիթարեան Օճնիկ**, Վանի ինքնապաշտպանությունը, «Հայրենիք», 1924, № 6, էջ 95:



Լաթո

զան Վան, գործ կա նրանց համար: Վեր կացանք, գնացինք Վան: Գիշերով Լևոնին տեսանք, նա մի շարք բաներ մեզ պատվիրեց, որ վերադառնալուն պատրաստ լինի, մինչև ժողով վերջանա, ինքն էլ կգա, կհասնի: Նույն օրը գիշերով վերադարձանք Կուռուպաշ¹⁴¹ գյուղ: Արդեն լույս էր, որ հասանք գյուղ՝ Բաղդոյի մոտ: Նա թույլ չտվեց ցերեկով գյուղից դուրս գանք:

–Թող մթնի, հետո գնացե՛ք, զորանոցը մոտ է, հանկարծ ձեզ կտեսնեն, գյուղին վնաս կհասնի, լավ չէ ժողովրդի համար: Մեր գյուղը,– ասաց Բաղդոն,– արդեն կասկածի տակ է: Քուրդ Ջահվար աղեն¹⁴² միշտ մեր գյուղի բոլորը ման է գալիս, մեր տղաները բոլորը պահված են սարեր, որ Ջահվար աղեն չտեսնի և նրանց ուղարկի ասկար: Նա մեր շրջանի մեղիքն է, հավաքում, տանում է թե՛ հայ և թե՛ քուրդ: Բոլորին պնդում, ուղարկում է Կոտուլի կամ Խանասորի ճակատ: Իմացեր են, որ ռուսաց բանակ կամավորների հետ հասեր են Դիլիման, շուտով սահման կհասնեն:

Ես հարցրի.

–Քու ասած քուրդ ո՞վ է կամ որտեղացի՞ է:

141 Մինչև 1915 թ. գուտ հայաբնակ Կուռուպաշ գյուղը գտնվում է Վասպուրական մահանգի Վան-Տոսպ գավառում՝ Վան քաղաքից 5 կմ հարավ-արևելք՝ ձորամիջում: Չի անվանափոխվել:

142 1904 թ. մի քանի քուրդ աղաների հետ հիշվում է նաև Ջահվար (Ճահվար) աղան, որոնց «...անլուր կեղեքմանց երեսէն, առ ահի պարտաւորուած է 10-20 չափ ցորեն վճարել տարին իբրև կապալ ...Այսքան քշառ և անպտղաբեր գաւառի մը իւրաքանչիւր գիւղը» («Հնչակ», 1904, ապրիլ (հավելված), էջ 13):

Բաղդոն ասավ.

–Նա Բիթնկերտի Ջահվար աղան է: Իննսունվեց թվի հայուց դահիճն է եղել: Հիմա նորից է սկսել իր գործ կատարել: Լսեր եմ, որ Ջավդաթ փաշեն ուզում է հայերիս տեղափոխի դեպի Արաբիա, որ մենք ռուս զորքին չի օգնենք, բայց ստույգ չի գիտեմ, թե որքան ճիշտ է:

Մենք Բաղդոյին լսեցինք և ցերեկը մնացինք նրա մոտ: Երեկոյան ժամի չորսին դուրս եկանք գյուղից և մեկնեցինք դեպի Փերթակ գյուղ¹⁴³: Հասանք Փերթակի և Կուռուպաշի սահմանագլուխ, որտեղից մի փոքրիկ ճանապարհ Կենդանանց գյուղից գալիս, անցնում է դեպի Հայոց Ձոր, դեպի Բիթնկերտ գյուղ: Մենք անցանք դեպի Փերթակ գյուղ:

Մի քանի մետրի վրա մեկ էլ հանկարծ կրակոցի ձայն լսեցինք մեր աջ կողմից: Մտիկ տվինք, տեսանք, որ մի ձիավոր քշում է դեպի մեզ ու կանչում.

–Կանգնե՛ք:

Տեսանք քրոյի տարագով մի լավ զինված մարդու: Նա մեզ հրամայեց. «Ձեր զենքերը հանձնե՛ք և անցե՛ք իմ առաջ, ձեզ կտանեն Վան, դուք կաչաղ մարդ եք»: Սկսեց խաչ հայհոյել. «Երկուսիդ էլ կսպանեն, քանի որ աշխարհ դուք եք խառնում»: Խնդրեցինք, որ մեզնից վազ գա, թողնի, հեռանա, որ մենք չէինք ուզում հրացանի ձայն լսել, բայց ճար չեղավ: Վերջ տեսանք, որ նա մեզանից ձեռք չի քաշի, տվինք ձեռք ցած գցինք, զենքեր, գրպանի թուղթ հանինք, ձին վերցրինք և եկանք Փերթակ գյուղ: Մեր տղաներն այնտեղ էին: Չին թողինք մարագների մոտ: Ես նստա, Մեփան գնաց գյուղ՝ Լևոնի տեղակալ Սկրտիչին իմաց տալու: Լսեցին, թե մարդ է սպանված: Նույն ժամին գյուղից տասը մարդ ուղարկեցին այնտեղ, որ սպանություն է կատարված եղել: Նրանք մարդու դիակ տարան, թաղին մի փոսի մեջ, թողին եկան, բայց մենք շատ ինք կասկածում, որ Լևոն մեզ կմեղադրի: Գիշերը Լևոն մեզ կանչեց: Սպանվածի վկայականները կարդաց, վեր կացավ մեզ մոտեցավ, երկուսիս պռնեց և համբուրեց:

–Կեցցե՛ք դուք, ողմեցի՛ք, որ սպաներ եք այն մարդուն, որի սպանության որոշում շուտուց կար, բայց չէր հաջողվում սպանել նրան,– ասաց Լևոն,– ձեզ նվեր կտամ, մարդու մի լավ կաստում, ինչ էլ որ մոտից վերցրել եք, ես կբաշխեմ ձեզ, իսկ ձին ձեզ պետք չէ, ձին տվեք շրջիկ Թորոսին, որ տանի, Վարագի վանք պահել տա:

Նույն գիշեր մենք խմբով անցանք Խորզոն գյուղ, որ մոտ է Վանի ծովին: Մյուս օր մեզ բաժանեց երկու խմբի, ինքը մնաց Խարականց: Մեզ ուղարկեց Աթանանց գյուղ, որ պատրաստվենք և

սպասենք իր հրամանին: Լևոնը Վանից գալուց շատ տարված էր երևում, բայց մեզ ոչինչ չէր ասում, միայն ժամի չորսին մեզ մոտ մարդ ուղարկեց, որ Վանից Ոստանի մեծ ճանապարհ կտրենք, հեռախոսի լարեր կտրենք, քիչ հետո Վանից Ոստանա դազին և Ջազառեսին եկան, որ անցնեն դեպի Ոստան: Մենք չորս հոգով գյուղի մեջտեղ նրանց կանչինք, թե թասլիմ¹⁴⁴ եղեք: Նրանք զարմացան, թե ի՞նչ է նշանակում ձեր թասլիմ ասել: Բայց մենք չի թողինք շատ երկար խոսի, մեր խոսք կրկնեցինք, բայց փոխանակ զենքեր հանձնելու մեզ, պատրաստվեցին կռվելու և փախան դեպի ծառաստանի կողմեր: Չին մնաց ճանապարհի մեջ: Պետք է ասեմ, որ տղամարդու նման կռվեցինք, մինչև երկուսին էլ սպանինք¹⁴⁵: Հրացանի ձայն հասավ Ոստան, որ շատ հեռու չի Աթանանցից:

Երեկոյան Լևոնը և շրջակա գյուղերից եկան մեզ օգնելու: Կռիվ սկսեց վաղ առավոտ շուտ: Մենք դիրքեր գրավեցինք դպրոցի մոտ և Աթարբեկի տան դիմաց: Առաջին կրակ բացեց գյուղի ավազ քահանան՝ տեր Հովակիմը¹⁴⁶, իր տան մոտից: Կեսօրից հետո թուրքեր ոստիկանների հետ ուժ տվին դեպի Սվտակ վանքի¹⁴⁷ կողմ, ուր գյուղացիք ուժեղ դիրք են պռնած, բայց զենք քիչ կար նրանց ձեռք:

Մեր Մեփանի տասնյակ դպրոցի դարի վրա էր կռվում, իսկ իմ տասնյակ Աթարբեկի տան դիմացի դիրքի վրա էր նշանակած:

Կեսօրից հետո Լևոնն ինձ կարգադրեց, որ չորս զինվոր վերցնեն, անցնեն Սվտակ վանք, այնտեղի տղաներ քիչ են, և դեկավար չկա նրանց մեջ: Ես վերցրեցի քերսեցի Հոխանեսին¹⁴⁸ և մոխարբերդցի Սկոյին: Անցանք դեպի Սվտակ վանք, ուղիղ Աթարբեկի տան դիմացով մինչև ձոր հասանք: Երեքիս էլ զնդակ բռնեց, բայց անվնաս: Գյուղի մոտ հասանք,

144 Այսինքն՝ անձնատուր:

145 Նշյալ դեպքի մասին տե՛ս Ա.Դօ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 131-132:

146 «Տէր Յակոբ եւ Տէր Յովակիմ քահանաները իրենց զիւղի ինքնապաշտպանութեան կոխներուն մէջ ի յայտ եկան ոչ միայն իբր քաջ կռուողներ, այլ և ժողովրդական ղեկավարներ» (Աճնման Հ., Վասպուրական, էջ 346):

1915 թ. ապրիլի 21-ին, երբ պախվանցի Հյուսեյն աղան մոտ 500 հոգով հարձակվում է Հայոց Ձորի Քերծ գյուղի վրա, ինքնապաշտպանությունը ղեկավարում են աթանանցի տեր Հովակիմը, քերծցի Հովհաննեսն ու Նշանը և պլթեցի Տիգրանը. «Կռիւի ընթացքին կը սպաննուին 20 հայեր՝ կին եւ տղաներ: Մութը իջնելուն զիւղացիութիւնը կը բարձրանայ Արոսու լեռը եւ ապա կիջնէ Փեսանդաշտ, ուր աւելի քան 15000 ժողովուրդ իր թեւերուն տակ առած կը պաշտպանէր Գաշնակցական գաւառական գործիչ եւ մարտիկ Լեւոն Շարոյեանը» (Մխիթարեան Օ., Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք», Պոսթըն 1924, № 1, էջ 93-94): Հմմտ. Ծիրին, Ջարդի սարսափներէն, «Աշխատանք», 1916, № 58, էջ 3:

147 Խոսքը վերաբերում է Վասպուրական մահանգի Ռշտունիք գավառի Սպիտակ վանքին:

148 Քերծցի Հովհաննեսը՝ Քերծո մակամունով, մասնակցել է Վանի ապրիլյան հերոսամարտին (Աճնման Հ., Վասպուրական, էջ 344):

143 Մինչև 1915 թ. հայաբնակ Բերդակ (Փերթակ) գյուղը գտնվում է Վասպուրական մահանգի Վան-Տոսպ գավառում՝ Վան քաղաքից 11 կմ հարավ՝ ձորամիջում: Վերանվանվել է Դողանլար (Doğanlar):

տեսանք, որ վանքի վարդապետ ու երկու հաս թուրդ բեկ եկան մեր դեմ, երկուսն էլ զինված: Ես պոռնի, զենքեր վերցրի քրդերից, բայց վարդապետ թույլ չի տվեց բեկերին սպանելու՝ ասելով, թե՛ սրանք մեր բարեկամներն են, թուրք զորքից փախած, այդ մասին Լևոն տեղեկություն ունի: Մենք զենքեր վերցրինք և անցանք Կանջո սեր կոչված սարի գլուխ:

Մեր կռիվ երկու օր եղավ: Քրդական մի ջոկատ, որ եկած էր Խարզինի կողմից Բաշկալա գնալու համար, մնացել էր Ոստան, չէր կարող անցնել դեպի ճակատ ռուսների դեմ:

Ջոկատի ղեկավար քուրդ Բշարե Չաթոյի փոքր եղբայրն էր, որպես անփորձ պատանի՝ նրա մայր եկած էր իր տղայի հետ: Բայց քրդերի ձեռք շատերին զենք չկար: Չլուտ, բորիկ, սոված մնացել ին Ոստան: Հեռախոս չկար, որ Վան իմաց տան, թե մենք եկած ենք Ոստան, հայեր մեր ճանապարհ կտրած են, թույլ չեն տա, որ անցնենք, դեպի ճակատ գնանք:

Ոստանի գայմագամ զիշեր մարդ է դրկել Գորանց դաշտի կողմեր, տեղեկություն տվել Վան, թե հայեր զորքի ճանապարհ կտրել են, չեն թողնում, որ տանեն դուրս գանք, մեզ օգնություն տվեք, հայեր մեր Թուրքիա լեզուն կտրած են, իսկ ապստամբության դրոշ ծածանվում է Աթանանցի գյուղի եկեղեցու կտուրի գլխին: Շուտ միջոց ձեռք առեք, թե չէ վաղ նրանք Ոստան կգրավեն:

Աթանանցի կռվին մենք զոհ չավինք, բայց քրդերից և թուրքերից մոտ տասը մարդ սպանվեց, որից մեկը հայտնի Խուրշուտ բեկն էր¹⁴⁹, որ սպանվեց ոզմեցի Բրուտի Սարգսի գնդակով, իսկ միլիտետ Հասան չավուշ զոհ եղավ Մեփանի ձեռքով: Դազին և Ջազանեսին նորից սպանվեցին, մեկը՝ Վարդանի և մեկը՝ Ամրոյի գնդակներով: Կռվի երկրորդ օր առավոտ Վանի կողմից մի հայ եկավ Լևոնի մոտ, լուր բերեց, թե երկու ժամից հետո Ջավղաթ փաշեն¹⁵⁰ պ. Վռամյանի հետ գալիս է, թող զինվորներ մտնեն դիրքերի մեջ, պահվեն երկու կողմից, որ նրանք ձեր ուժեր չի տեսնեն: Բայց պատրաստ վիճակում: Կռիվ արդեն դադարած էր, մենք ճանապարհի երկու կողմից պոռնինք նստանք: Քիչ հետո եկան նրանք՝ Ջավղաթ և Վռամյան, բայց գյուղ չմտան, ուղիղ անցան դեպի Ոստան: Բայց Ջավղաթ շիլ աչքով



Սպիտակ վանք

նայում էր, չի լինի թե հայեր հանկարծ իրեն մի գնդակով սպանեն: Մեզ կարգադրված էր, որ ոչ ոք չերևա դիրքերից, գլուխ չի հանի դուրս: Նրանք անցան Ոստան: Մի ժամից հետո քրդի խուժան թափափված զորք եկավ, անցավ գյուղի մեջից: Նրանք, որ հասան պոպուկի ծառի տակ, սկսին խաղալ և պարել, երգել: Խուժանապետ մայրը նստած էր ձիու վրա, բայց լաց էր լինում և ասում էր.

–Գոնտե կաչաղանա դանգ նակին¹⁵¹, հայ ի՞նչ է, որ զենք ունենա: Մի՞թե մեր իսլամի կառավարության վերջ եկել է: Եթե մեր Խարզանի կողմեր լինեք, ես հրաման կտայի, որ բոլոր հայերին կտոռեն, – ասում էր քավթառ պառավ:

Քիչ հետո եկան Ջավղաթը և Վռամյանը: Վռամյանը վերջին անգամ իր մտքի մեջ մեզ «մնաք բարև իմ թանկագին հայ քաջեր» ասավ ու անցավ: Մենք չի կարողացանք զոհն նրան տեսնինք կամ բարևինք: Վռամյանը մնակ տեսավ տեր Հովակիմին և նրան «Օրշնա ի տեր» ասելուց հետո ասավ.

–Պատվիրի՛ր քու ժողովրդին, թող հանգիստ մնան, առաժժ դուք չեք լսում, որ թոփի ձայն հեռվից՝ Խանասորի, Աղբակի կողմից է գալիս, հանգիստ կացե՛ք: Բարևի՛ր բոլորին իմ կողմից:

Գյուղ չի մնացին, որովհետև Ջավղաթ փաշային դուր չեկավ խռովարար գյուղ իջնել: Նրանց գնալուց հետո՝ մյուս առավոտ, լսեցինք ռուսական հզոր թոփի զմիոցներ, որ գալիս էին Չուլչիմանի Սարայի կողմից՝ նախկին Հարդամերտի բարձունքներից:

Հավաքվեցինք գյուղի մեջ, սկսեցինք պարել: Մեր Խանեսկանց Վարդան եղել էր Ռուսաստան:

–Սա շառաբլինի ձայն է, մենք շուտով կազատվենք թուրք բռնակալի լծից, – ասավ նա:

Լևոնի կարգադրությամբ բաժանվեցինք գյուղեր: Մի տասնյակ մնաց Աթանանցում տեր Հովակիմի մոտ, մի տասնյակ էլ մեր Մեփանի ղեկավարությամբ ուղարկեցին Սվտկա վանք, մի քանի զինվոր վարժապետ Մկրտիչի հետ ուղարկին Քերս գյուղ, իսկ իմ տասնյակ, որ վեց մարդ էր, ուղարկին Բլթենց գյուղ: Ինձ հանձնեցին երկու քուրդ, որոնք

149 Խոսքը վերաբերում է 1914 թ. դեկտեմբերի 6-ին սպանված Խուրշուտ աղային. «...Ոստանի Նոր-շեն թուրքական փոքրիկ թաղում, որը գտնում է Աթանանցի շատ մոտիկ, տղաների գնդակով զարկեց Ոստանի ազդեցիկ քիւրդերից մեկը – Խուրշուտ աղան. այս սարսափ ազդեց ոչ միայն քիւրդերի, այլև տեղական կառավարութեան վրա. և նրանք Սպիտակ վանքի վանահօր միջոցով հաշտութիւն խնդրեցին տղաներից» (Ա-Պ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 132):

150 Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ կռվող կողմերին հաշտեցնելու համար, որպես պառլամենտի անդամներ, Աթանանց են գնացել Վռամյանը և Մյունիր էֆենդին (Ա-Պ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 133):

151 «Կաչաղ գյուղերի ձայնը հաշվի չի առնվում»:

փախած ին թուրքիայից, բնիկ ոստանցի էին՝ Մավրատին և Իսլամ բեկեր: Նրանց գյուղը շատ մոտ էր Բլթենց գյուղին: Լևոնն ինձ ասաց, որ երկու բեկերին թույլ չտամ ուրիշ տեղ գնալու, նրանք ժամանակին մեզ պետք կլինեն: Այնպես էլ եղավ: Նրանք վերջի կովին շատ կին, երեխաներ պաշտպանեցին:

Ինձ մոտ էր քերսեցի Հոխանես, որ իրենց գյուղ մարդ սպանելու պատճառով չէր կարող գնալ տուն, իր կին տեսնելու:

Ոստանում

Ամբողջ ձմեռ մնացինք Բլթենց, մինչև 1915 թ. մարտին Կարկառի կռիվներ սկսեց¹⁵²: Մեզ հրաման եկավ, որ անմիջապես հասնենք Կարկառին օգնության: Նույն գիշեր բոլորս հավաքվեցինք Քոչք գյուղ, որ ծովի ափին մոտ էր: Գամին արդեն պատրաստ էր մեզ տեղափոխելու դեպի Գավաշ՝ Մոխրաբերդ գյուղ, բայց պետք է ասել, որ մենք նաև մատենցիներ: Նավավար ուզեց նաև շարժել, բայց նաև տեղից չի շարժվեց: Բոլոր նավի աշխատողներ շորեր հանին, մտան ծով: Բանից դուրս եկավ, որ նաև մատեն է տիրմի մեջ, վերջ շատ չարչարվելուց հետո դուրս եկանք ծով, բայց գործ, որ թարս գնաց, հա կերթա դեպի անհաջողություն: Միփանի քամին ուժեղացավ, մեզ քշեց դեպի Ոստանի կողմեր: Գիշեր լուսանալու էր, կարող էր Ոստանից նավ տեսնեն և նավ գործածեն, մեզ էլ հետ ծով գցեն: Մոտեցել ենք Չիթ մաչիթին, հանկարծ քամին փոխեց Արդուս սարից: Մեր նավ դարձավ դեպի Աղթամարի կղզին: Լույս էր, որ մի կերպ գամիչի Ասատուր մեզ հանեց կղզին, բայց մեզ վրա հալ չէր մնացել: Մի կերպով մեզ տեղավորեցին վանքի սենյակներ, մնացինք, մինչև մութն ընկավ: Յերեկ իրավունք չկար դուրս գալու: Մեփան մի երգ հանեց մեր գիշերվան ման գալու համար.

Եկավ Միփան սարի քամին,
Ոստան տարավ կտորած գամին,
Որ ազատենք մեր խնամին,
Որ սպասում էր ամեն ժամին»:

Մութն ընկավ: Վեր կացանք, նորից մատանք կտորած գամին:

Ժամի մոտ տասներկուսին հասանք Գավաշ՝ Մոխրաբերդ գյուղ: Լևոնը մեր երկու տասնյակը ուղարկեց առաջ, որ շուտ հասնենք մեր տղաներին՝ տեսնելու և օգնելու, բայց մեր զարմանք մեծ եղավ: Հասանք Բախսեն¹⁵³, տեսանք մեր տղաները բոլոր

152 Կարկառի կռիվը տևել է 1915 թ. հունվարի 30-ից մինչև փետրվարի 5-ը (Ա-Գօ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 134-136):

153 Չուտ հայաբնակ Փախսենը (Պագան, Պախսենը, Փակեահներ, Փախսենը, Փախսենը, Փեյկներ) ներկայումս պաշտոնապես վերանվանված է Բաղլամա (Bağlama): Գտնվում է Գավաշից 17 կմ արևմուտք:

ողջ մատած են, իրենց կովի մասին են խոսում: Պատմեցին, թե Ծկորա Գալուստ¹⁵⁴ սպանվեց, մենք ժողովրդի մի մաս մեզ հետ բերինք Գավաշ, իսկ մի մաս Լաթո տարավ դեպի Սպարկերտ, դեպի Մոկս, Ներքին Կարկառ: Բոլոր գյուղեր վառեց բուրդ խուժան:

Մյուս օր Լևոնն եկավ, մեզ բաժանեց գյուղերի վրա: Բայց տխուր լուր ստացանք, որ ռուսաց բանակը կամավորների հետ Սարայից հետ է նահանջել դեպի Սալամաստ: Տխրեցինք, բայց քրդերն ուրախացան՝ ասելով. «Էնվեր փաշեն Ալեքսանդրապոլ գրաված է և անցել է դեպի Թիֆլիս, ընդհանուր հայեր և ռուսներ մնացել են թուրքին գերի»:

Սուրհանդակը միշտ տեղեկություն էր բերում մեզ: Մի օր ասավ. «Էնվեր փաշի գործ Սարիկամիչի անտառի մեջ ռուսի բանակի կողմից ջախջախված է, շատերին ցուրտ տարավ, որպես առանց հագուստ, բայց Էնվեր ազատված է»:

—Հազար ափսոս,— ասաց մեր Վարդան,— շունն ազատված է:

Մի քանի օրից հետո նորից սուրհանդակն եկավ. «Ռուս և հայ զորքեր առաջանում են դեպի մեր կողմեր մեզ փրկելու համար»: Մնացինք Նարեկ գյուղ:

Հազար ինը հարյուր տասնհինգ թվի մարտի քսաներեքին՝ Մեծ գատիկի օրը, բոլորս գնացինք Գրիգոր Նարեկացու և Անանիայի գերեզմանը տեսնելու:

Փեսանդաշտի կռիվը¹⁵⁵

Ձմեռ անցավ: Մարտ ամսին դիմում տվինք, որ մեզ թույլ տան գնանք, մեր գյուղի դրություն իմանանք, որովհետև լուրեր վատ են խոսում մեր գյուղի մասին: Մեր տված դիմումին պատասխանին, թե չորս հոգի թող գնան գյուղ, իմանան, թե ի՞նչ կա: Եթե դրություն վատ եղավ, նորից մարդ կուղարկենք, բայց մենք չլսեցինք նրանց: Հավաքվեցինք

154 Պողոսյան Գալուստը (Կարկառի Գալո, Վերջիկ) ծնվել է Կարկառ գավառի Ծկոր գյուղում: 1905 թ.-ից մտել է ՀՀԴ շարքերը: Նա «անփոխարինելի ոյժ ունի էր կազմակերպական և ժողովրդի զինման ու ինքնապաշտպանության գործերու համար իր գառառի մեջ: ...Գալոն իր որոշ ընկերներու հետ վարեց Կարկառի յեղափոխական, հասարակական, կրթական գործերը մինչև համաշխարհային պատերազմը» (Արթուրյան Ա., Կարկառի Գալոն (Վերջիկ), «Դրօշակ», 1928, № 11, էջ 295): Չոխվում է 1915 թ. հունվարի 30-փետրվարի 5-ը տևած ինքնապաշտպանության ժամանակ. «Ինքնապաշտպանության կռուին ատեն Ծկորա մեջ կըսպանուի սիրելի եւ յարգուած դեմք մը՝ Գալուստը» («Աշխատանք», 1 յունիսի, 1915, № 21, էջ 2), որն «Անասան կուեցաւ մինչև իր մօսիին ու մաուգերի վերջին փամփուշտը և նահատակուեցաւ անվրդով հոգով: Թշնամին, անոր հրացանի ձայնի լռելէն բաւական ժամանակ յետոյ միայն մօտեցաւ դիակին և կտրեց գլուխը» (Արթուրյան Ա., Կարկառի Գալոն (Վերջիկ), «Դրօշակ», 1928, № 11, էջ 296):

155 Փեսանդաշտի կռիվի մասին տես նաև «Աշխատանք», 1916, № 28, էջ 2-3; № 29, էջ 3: Ա-Գօ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 404-435: Ազիզյան Մ., Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրուք, 1974, էջ 24 և այլն:

Գավաշու Փարգախներ գյուղ, որ երկու օրից հետո մեկնենք դեպի մեր գյուղ, բայց մեր բախտից դրություն փոխվեց:

Ապրիլ եկավ, չար ու բարին հետը բերեց:

Վերջին անգամ 1915 թվի ապրիլի մեկին սուրհանդակը լուր բերեց, թե Վռամյանին կանչեր են Ջավդաթ փաշի մոտ, բայց հետ չի եկել: Նա իր սեղանի վրա նամակ է թողել. «Իմ հետևից դուք չի գաք, որ ձեզ կանչեն, գուցե ես չի վերադառնամ, բայց դուք կարող եք դեռ հույս դնել ռուսների վրա, որ շատ չեն ուշանա: Կարող եք ազատության դրոշակ խփեք Նորաշենի եկեղեցու գլխին: Հայ ազգ միշտ փրկված է եղել ռուս մեծ ուժերի և մեծ բանակի ձեռքով: Մնա՛ք բարով, Վռամյան»:

Նույն թվի ապրիլի մեկին-երկուսին սկսեց ազատության պայքար: Ամսի մեկին ամենից առաջ Շատախի կողմից սկսվեց. առաջինը ռուսականությանը զինաթափ արին, հետո սկսին կռիվ: Ապրիլի երկուսին մեզ լուր տվին, որ շուտ հասնենք Շատախին օգնության, կռիվ սկսված է արդեն: Նույն երեկոյան դուրս եկանք Փարգախներ գյուղից դեպի Փեսանդաշտ՝ Շիտան գյուղ: Պետք է զիջերը բարձրանանք Արտոսի¹⁵⁶ և Հաղարով սարերի մեջից, ձյունը չափից դուրս շատ է: Հիրիճ գյուղից կանափ վերցինք, մի քանի կծիկ, որ կապենք մեր ոտների տակ, որ սոթ չտա:

Գիշերն անցավ, լույսը բացվեց, նոր հասանք Շիտան գյուղ: Մինչև վիզ թրջված, նոր ինք սկսել մեր ոտներ փոխել և մի թեթև հաց կերել, դուրս եկանք գյուղամեջ, մեկ էլ տեսանք Կաղազիզի¹⁵⁷ գյուղի կողմից մինչև վիզը թրջված մի մարդ մոտեցավ մեզ ու պոռաց. «Ձեր մեջ ո՞րն է Լևոն»¹⁵⁸: Յույց



Գրիգոր Նարեկացու ճգնարանը Նարեկ գյուղի մոտ

տվին Լևոնին: Չեռ տարավ գրպանը և մի թուղթ հանեց ու տվեց Լևոնին: Մենք պարում ինք, որ մի քիչ տաքանանք: Լևոնը թուղթը բացեց, մտիկ տվեց, կարդաց, մեկ էլ նամակը ձեռքից ընկավ: Ջարմացանք, մեր պար թողինք, հավաքվեցինք նրա շուրջ, բայց նա նամակ վերցրեց գետնից, դրեց իր գրպան, մեզ ոչինչ չասավ: Տեսանք, որ տխրություն կար նրա երեսի վրա. մեզնից թաքուն լաց էր լինում: Մի տասը րոպեի չափ մտավ իր սենյակ, դուրս եկավ, նորից մեզ բան չասաց, մնակ ասաց. «Գնում ենք դեպի Շատախ»: Մեկնեցինք դեպի Հառնին գյուղ: Երեկոյան հասանք Շատախի հյուսիսային կողմ՝ Սվտկին հռչակավոր գյուղ, որ տեսանք տեղական զինված ժողովրդական բազմություն՝ մարդ, կին մինչև 70 տարեկան ծերեր, բոլորը սպասում են մի մեծ վտանգի, որը շատ չուշացավ: Առաջին անգամ տեսանք հայ ժողովրդի մասսայական զինվածությունն ընդդեմ բռնակալի: Շատախցին շատ էր տանջվել բռնակալ գրավյանցոց կողմից, բայց այս անգամ դրություն մասսայական էր, ընդհանուր վտանգ հայ ժողովրդին էր: Մենք՝ ոգմեցիքս, աշխարհից տեղեկություն չունինք, մեր կարծիքով մեր գյուղ մոտ է Շատախին, վաղ առավոտ կհասնինք մեր գյուղին: Բայց այդ երազ չկատարվեց, մեր մուրազ մնաց մեր սրտի մեջ մինչև հման: Տեսանք Շատախի ժողովրդի դրություն, մերը մոռացանք նրա համար, որ Ոգմը և Շատախը մոտիկ հարևաններ են եղած: Միշտ մեր ցավեր շատախցուն հայտնի էին, նրանցն էլ մեզ էր հայտնի: Շատախի, Մոկսի,

156 Արտոսը Շատախի բարձր լեռներից է: Ունի ծ. մ. 3554 մ բարձրություն: Գտնվում է «Հայոց-Չորի սահմանի մօտ, որ կը տարածուի դեպի հարաւ ու արեւելք» (Բ., Տեղագրական. Շատախ, «Աշխատանք», 1911, № 19, էջ 11):

157 Մինչև 1915 թ. հայաբնակ Կաղազիզ գյուղը գտնվում է Շատախի գավառում՝ Շատախ քաղաքից 22 կմ հյուսիս: Վերանվանվել է Իջիմլը (Ijimli):

158 Լևոն Շաղոյանը ծնվել է 1887 թ. Հայոց Չոր գավառի Խարականց գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի եկեղեցական-ժխական դպրոցում, ապա ուսանել է Ադրբայժանի դպրոցում: Ազգային-ազատագրական շարժման մեջ է մտել իրենց արտի ջուրը բազմիցս կտրած քուրդ հարևանին սպանելուց հետո. «...երբ Լեւոնի հայրը իրենց արտը ոռոգելու համար կօգտագործէր ջուրի իր հերթը, դրացի քիւրտը ջուրը կը դարձնէ իր արտին: Այս անարդարութիւնը, երբ կը կրկնուի, պատանի Լեւոնի ըմբոստ ոգին չի հանդուրժեր եւ քիւրտը կը սպաննէ ջուրը կտրած պահուն: Այնուհետեւ, Լեւոն հալածական մուտք կը գործէ յեղափոխական կեանքէ ներս, ուր դեկավար դէմքեր Լեւոնի մէջ կը տեսնեն ոչ միայն յանդուգն երիտասարդը, այլեւ լրջախոհ եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը ունեցող մտատրակները» («Վարագ», 1975, № 82-85, էջ 39): Որոշ ժամանակ անց ահաբեկել է Վասպուրականի ազգային վարժարանների քննիչին սպանած գյուղապետին, ապա դարձել խմբապետ ու շրջանային գործիչ: Ժողովրդի կողմից ստացել է «Փաշա» անունը. «Փաշա տիտղոսը... ժողովրդին կողմէ իր անունին կցուած այդ յարգանքի մակդիրը ընդունած էր ամենայն պարզութեամբ, ոչ որպէս

պատիւ, ոչ որպէս փառք, այլ աւագանի մկրտութեան անունին վրայ աւելցուցած մասնիկ...» («Վարագ», 1975, № 82-85, էջ 55-56): 1914 թ. սկզբին նշանակվել է Գյավաշի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ապա Փեսանդաշտի զինվորական դեկավար: Նրա շնորհիվ փրկվում է Փեսանդաշտի 6000-ի հասնող հայությունը: 1918 թ. Մոսկուում հիմնում է Էլի Վան գյուղաքաղաքը: Երկար տարիներ բնակվում է այդտեղ, 1959 թ. փոխադրվում է Բեյրութ, իսկ 1972 թ.՝ Բաղդադ: Վախճանվում է 1974 թ. օգոստոսի 6-ին Բաղդադում և ամփոփվում Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բակում: Լևոն Շաղոյանի մասին մանրամասն տե՛ս «Վարագ», 1975, № 82-85, էջ 39-58; Ազիզեան Մ., Գնդապետ Լևոն Շաղոյանի (Փաշա) մահուան տարեկիցին առթիւ, «Վարագ» 1975, № 86, էջ 3-9:



Լևոն Շաղոյան

Ոգմի կապեր միշտ մեկ են եղած թե՛ վտանգի և թե՛ խաղաղ ժամանակ: Այս բարեկամական կապի համար մնացինք:

Չորս ժամ հանգստանալուց հետո մոտ իննսուն զինված մարդով բարձրացանք Հաճկանց¹⁵⁹ գյուղ: Մեզ հետ կար մի քանի հաստ ռումբ: Այնտեղ Լևոնը մեզ հայտնեց երկրի ընդհանուր դրությունը, թե ինչ է թուրք կառավարության միտքը հայ ժողովրդի հանդեպ: Մանրամասն պատմեց Վանի դրության, Ջավդաթի կողմից Վռամյանի բանտարկվելու, Հիրճ գյուղում Իշխանի և իր ընկերների սպանելու և Վանի ժողովրդի ապստամբելու մասին: Մենք իմացանք հայ ժողովրդի ընդհանուր վիճակի մասին և հաշտվանք մեր մտքերի հետ: Ստիպված ենք օգնելու այնտեղ, որտեղ հայ ժողովրդին ճնշում են: Մոռացանք մեր գյուղի ցավը, քանի որ կռիվն ընդհանուր հայ ժողովրդի կռիվ է:

Նույն օրը Վանից թերթ ստացանք, որի մեջ գրված էր, որ մեր արևելյան սահմաններին ռուսի մոտենալու մասին Ջավդաթ փաշան լսած է: Նա միտք ունի հայ ժողովրդին հեռացնի Վանից և ընդհանուր հայկական արևելյան սահմաններից քշի դեպի Բաղդադի կողմեր: Աշնանը ռուսների Սարալից հետ դառնալուց հետո թուրքեր հույս ունին, թե ալ չեն վերադառնա, բայց Ջավդաթ փաշա մուրազ մնաց փորի մեջ: Վասպուրականի ժողովուրդը լավ ծանոթ էր Բաղդադի շոգերին: Գիտեր, որ ժողովրդի կես մասը չի հասնի տեղ, ավելի լավ է կռվել ու մեռնել պատվով, քան թե կռուսկի մնան հետի զնալ Թալեաթի բռնակալ ոստիկանների մտրակի տակ մինչև Բաղդադի չուրեր: Վասպուրականի ժողովուրդը շատ մեծ հույս ուներ, որ ռուսները շատ չեն ուշանա: Այսպես էլ եղավ: Թե՛ Վանի, թե՛ գավառների

մեջ և՛ զենք և՛ միություն կար, մի մարդու մնան բոլորը՝ թե՛ մարդ և թե՛ կին, զենքը ձեռքին կանգնեցին Թալեաթի բռնակալության դեմ:

Վանում կռիվը սկսվեց ապրիլի երեքին: Կռիվը տարածվեց Շատախ, Կարկառ, Կարճկան, Գավաշ, Հայոց Չոր, Թիմար, Ալջավազ: Դարձավ ժողովրդական կռիվ, մեկ միություն մնաց՝ ժողովրդական միություն: Պետք է ասել, որ վանեցիները դարձան բոլոր գավառների ազատության դրոշմ: Շատ տեղերից, գյուղերից գաղթեցին դեպի քաղաք, իրենց ուժերը միացրին քաղաքի ուժերին, իսկ Շատախը մնաց անխախտ, իր տեղից չի շարժվեց մինչև ռուսաց գալու օրը:

Հաճկանց գյուղը Սվտիկին գյուղի մոտ է: Երկու գյուղերի պաշտպանություն հանձնված էր Բազիկ¹⁶⁰ անունով մի ծերունի մարդու, որ մասնակից էր եղել Խանասարի կռիվներին իննսունվեց թվին: Մոտ 70 տարեկան մարդ էր Բազիկը, բայց ամուր մարդ էր:

Մենք Հաճկանց գյուղում մնացինք հինգ ժամ, որից հետո պատրաստվում ինք գիշերով հարձակվել Ծառնու¹⁶¹ քրդական գյուղի վրա, որտեղ հավաքված էր Շաքար աղի¹⁶² լամուկի՝ Լազգոյի¹⁶³ ջարդարար խումբանը:

¹⁶⁰ Բազիկ Պետրոսյանը (մականունը՝ Առյուծ) ծնվել է Շատախի Սվտիկին գյուղում: Ազատամարտին նվիրվել է դեռևս մինչև Համիդյան ջարդերը. «...բարձրահասակ ու հարուստ կազմուածքով, սակառախուս ու քիչ մը մռայլ արտայայտութիւնով, միշտ ունկնդրողի դէմքին մէջ, մտածող ամէն մէկ նոր խօսքի ու մտքի վրա, հանդարտ ու մեղմաբարոյ, ...կրթւած ու հասկացող իսկական շատախցի Հայ էր մեր բոլորէն սիրւած ու յարգւած Բազիկը: Իրենց գիւղի թէ ամբողջ գաւառի Հայ կեանքին մէջ նա արժէք էր, նա ուժ էր և որպէս այդպիսին մեծ հեղինակութիւն ունէր մեր շրջանի Քիրտ ցեղերու մէջ: ...Նա ամէն տեղ էր, բոլոր կռիւներու բեմը – մերք որպէս ղեկավար, մերք որպէս սոսկ զինուոր»: Չոխվել է 1918 թ. Կոթուրի կիրճում (մանրամասն տես Տեր-Թովմասեան Ս., Մեր գոհերը. Բազիկ Պետրոսեան, «Գրօշակ»» 1927, 1, էջ 20-22):

¹⁶¹ Ծառնու (Մարնու) քրդաբնակ գյուղը գտնվում է Շատախի գավառում՝ Շատախից 0,5 կմ հյուսիս-արևելք:

¹⁶² Շաքիրը Նուրդուգի գրավցի քրդերի ցեղապետ-ավագակապետն էր, որն իր ոճրագործություններով աչքի ընկավ առանձնապես Համիդյան ջարդերի ժամանակ. «Հայկական կոտորածներէն առաջ Շաքիրը աւագակային կեանք կը վարէր, ասպատակելով Նորտուգի, Շատախի շրջանը: Այս պատճառով դատարանի կողմէ դատապարտուած էր 101 տարվա բատարկութեան: Վասպուրականի կոտորածին աւտեն՝ անիկա կոտորելով Նորտուգը, Հայոց-Չորը հասաւ, մինչև քաղաքը թալլեց ու վառեց Վարագայ վանքի յարակից շէնքերը և վերադարձին՝ Ծվատանէն անցած առտէն, սպաննեց 110 երիտասարդներ: Իր այս սխրագործութիւններուն համար Շաքիրը կ'արժանանայ Սուրբան Համիտի ներման ու կրկնակազատ ու սանձարձակ շահատակութիւնները ընել: Այս պատճառով Նորտուգ գաւառը գրեթէ ամբողջապէս աներակ կը դառնայ, ուրկէ հայ գիւղացիութիւնը հարկադրուած կ'ըլլայ գաղթելու: 800 տուն հայ բնակչութիւն ունեցող Նորտուգի մէջ հազիւ 250 տուն հայ մնացած է... Շաքիրը ուխտեալ թշնամի էր շատախցիներուն, որոնք չէին ուզեր անոր իշխանութեան ենթարկուիլ եւ չենթարկուեցան մինչև վերջը, չնայելով որ անիկա մշտակայ սպառնալիքներու եւ սպանութիւններու միջոցով կ'ահաբեկէր զանոնք» («Աշխատանք», 1913, № 44 (140),

¹⁵⁹ Հաճկանցը Շատախ գավառի գյուղերից էր:

Ծառնու քրդական գյուղը արծիվի նման թառած էր Շատախի գլխին: Հայերը ցերեկով չին կարող շարժվել, միշտ կրակի տակ ին պահում Թաղին:

Մեր պլանը շատ ձեռնտու էր գործին: Բայց տես, որ քրդերի բախտը լավ դուրս եկավ:

Մեր որոշումը քանդեց մի նամակաբեր աղջիկ¹⁶⁴: Թաղից՝ Շատախի պաշտպանության կոմիտեից, գրեր ին, թե եկող օգնական ուժեր պետք է ներկայանան և պատասխանատու մարմնի հետ որոշենք մեր գործը: Առանց Շատախի կոմիտեի իրավունք չունինք շարժվելու: Աղջիկ կլիներ տասնչորս տարեկան: Նա Թաղից բարձրացեր էր մինչև Սարբարի սար, այնտեղից Ռիսի ձորից իջեր էր Սվտկին աղբյուր, հասեր էր մեզ մոտ, նամակը հրամանի նման բան էր: Ի՞նչ պետք է անինք, պետք է ենթարկվել տեղի մարմիններին:

Մենք՝ Ոզմի տղաքով, հակառակեցինք այդ որոշման. «Թողեք առաջ քանդենք ավազակ Շաքար աղի լամուկի ամրացած բերդը՝ Ծառնու գյուղ: Հետո այնտեղից հանգիստ մտնենք և քուրդ խուժանին ցույց տանք մեր ռուսների ուժը, որ կապեր ինք մեր դռնից»: Բայց մերժեցին մեր առաջարկը՝ ասելով. «Ոզմեցիք, կոպիտ եք միշտ, կուզեք ձեր խոսքը լինի, պետք է լսեք տեղական կոմիտեին»: Այստեղ կատարվեց մի ուրիշ բան: Տեղական ժողովրդից բերին Իսան աղային՝ Հաճկանց գյուղը պաշտպանե-



Բազիկ Պետրոսյան (Առյուծ)

էջ 4): 1913 թ. սեպտեմբերի 10-ին ոստիկանության գնդապետ Խալիլ բեյի գլխավորած հետապնդիչ խմբի կողմից Շաքիի հայրենի Նորդուզի Փիրբաղայան գյուղի մոտակա Պերերաշ լեռան վրա տևած մեկժամյա կռվի ընթացքում: Ի դեպ, ոստիկանները քյուրիմացաբար են սպանում Շաքիին, քանի որ կարծում էին, թե հետապնդում են նրա հորեղբոր որդուն՝ Սիր Մեիին (մանրամասն տես Հ., Գրավցի Շաքիի սպանությունը. Շաքիի հորեղբոր որդին սպաննում է երկու որդիները վիրատու, «Աշխատանք», 1913, № 44 (140), էջ 4):

163 Նորդուզի գրավցի ցեղապետ-ավազակապետ Շաքիի որդին էր և Սիր Մեիի հորեղբոր որդին: Լեզգին առանձնապես «աչքի է ընկել» 1915 թ. ապրիլյան կոտորածների ժամանակ և արժանացել Ջեվդեթի գովեստին (**Արծրունի Վ.**, Շատախ, էջ 436): 1915 թ. ապրիլին Լեզգին, միացած Կալպալասանի ավազակ Ջանկոյին, կոտորում է Նորդուզի և Հայոց Չոր գավառի հայ բնակիչներին (մանրամասն տես **Մխիթարեան Օ.**, Վանի ինքնապաշտպանությունը, «Հայրենիք», Պոսթըն 1924, № 1 (25), էջ 92): «Ամբողջ Նորդուզ եւ Հայոց ձոր կոտորելէ յետոյ, Լազկին հրահանգ ստացաւ Նորդուզի վրայով օգնութեան հասնիլ Համտի բէյին եւ իր ազգական ցեղապետներուն: Պահ մը Համտի բէյ համոզուեցաւ, որ հռչակատր աւազակապետ Շաքի արիւրնարբու զաւակն ու յաջորդը սուր ու հուր պիտի տարածէր Շատախի հայկական շրջանին վրայ: Շաքաբներ յետոյ միայն համոզուեցաւ, որ սխալուեր էր: Ասոր ապացոյց են անոր քօղարկում թունոտ նամակները Ջեվտեթին ուղղած (**Արծրունի Վ.**, Շատախ, էջ 396):

164 Նամակաբեր աղջիկը թաղեցի Գուրոյի Ավետիսի 12-ամյա դուստրն էր՝ Սրբուհին. «...Սրբօն, նիհար դեմքով ու կազմածքով և լոխի բնատրությունը: ...դիրքերից աչ ու ձախ գնդակներ էին սուրուն: Շատախի փոքրիկ հերոսուհին աներկխո, նույնիսկ անտարբեր այս բոլորին կտրում էր ու կտրում դժվարին վերեքը, քարից քար ու թմբից թումբ ցատկում ինչպէս այծեամբ և նամակը տեղ հասնելով իր միասիան կատարում» (Մանրամասն տես **Ա-Դօ**, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 422-424: **Արծրունի Վ.**, Շատախ, էջ 400, 438):

լու համար, իսկ մեզ համին դեպի Թաղ տանող ճանապարհ, իջանք ճամփի վրա: Հիմա գլխավոր ծանր խնդիրք այստեղ է: Վարժապետներ որոշին, որ պետք է ելնենք Որիսի սար, բարձրանանք մինչև Բոլս հայ գյուղ, այնտեղից իջնենք Սոզվանց, նոր մտնենք Թաղի մեջ: Այդ կտևեր մինչ լուսաբաց, բայց այս անգամ ես և Սեփան միանգամից դեմ դուրս եկանք այդ անխիղճ որոշման դեմ՝ ասելով. «Մարդիկ մի ժամվա ճանապարհ թողած, ի՞նչ վեց ժամ քար կոխենք: Մենք դուզ ճամփով կերթանք, ինչ դուրս եկավ, թող գա»: Մեզ միացան շատերը: «Դե որ այդպես է, դու և Սեփան կանցնեք առաջ մի հարյուր մետր, մենք ձեր հետևից կգանք», – ասացին նրանք: Մենք առաջ անցանք: Մեր հետևից շարվեցին բոլորը, մեր Ոզմի տղաներն էլ հետևեցին մեզ: Բոլորի կարծիքն այն էր, թե ճվկատան¹⁶⁵ կամուրջ պռնված է քրդերի կողմից, բայց մենք հասանք կամրջին, մարդ չտեսանք: Կամուրջ երկու հատ գերան կար տրված, չորս հատ էլ տախտակ: Կամուրջ քանդեցինք, գերաններ գցեցինք գետի մեջ, անցանք առաջ՝ դեպի Թաղ: Մեկ մի մարդ պատահեց քաղաք՝ մոտիկ տների կողքին: Վերջ դարձան երկու, մեկ ձայն տվեց. «Ո՞վ եք, գիշերվան անուն»: Մենք շատ կիմանանք գիշերվան անուն: Ես կանչի, թե Ոզմից ենք, մարդ մեր լեզուն ճանաչեց և մոտեցավ մեզ: Տեսանք, որ տղան ծանոթ է.

–Մեներ, դո՞ւ ես:

–Խա՛, – ասավ, – Ամրո՛, դու այստե՞ղ, այս գիշերո՞վ:

Մերոնք եկան, հասան, մտանք Թաղ: Ժողովուրդ Թաղի հյուսիսի կողմից տների պատեր ծակած են մինչև դպրոցի դուռ: Մեզ տարան դպրոց, որտեղ նստած ին Շատախի խորհրդի անդամներ: Քիչ խոսելուց հետո մեծեր առանձին մտան ուրիշ սենյակ՝ իրենք որոշելու գավառի հայ ժողովրդի բախտ, բայց կրակ չէր դադարում թշնամու կողմից, գլխավորապես Ծառնուսի կողմից: Մեծերի խորհուրդ երկար չտևեց, շուտ դուրս եկան այնտեղից: Որոշեցին մերոնք հանգստանան մինչև առավոտ, բացի մի քանի տղայից, որ ուղարկեցին դիրքեր կովոներին հույս տալու համար: Իսկ ինձ ասին՝ «Մենք լսեր ենք, որ լավ ես նշան պռնում, քեզ այս գիշեր պետք է ուղարկենք Ասքանի հեր¹⁶⁶, որ բարձրա-

165 1916 թ. ապրիլի 4-ին Շատախով անցած գնդապետ Տիգրան Բաղդասարյանն իր հուշերում գրել է. «...Սոզվանցը, Բոլս, ճվկատան կամուրջը, որոնց շուրջ ի՞նչ հերոսական կռիվներ տեղի ունեցան» (**Բաղդասարյան Տ.**, Վանի երկրորդ կռիվները եւ վերջին իշխանությունը, «Վէմ», 1938, № 3, յունիս-սեպտեմբեր, էջ 27):

166 Խոսքը վերաբերում է Ազգային այր կոչված քարայրին, որը «...ինկված բարձր առանձնություն մը մեջ. այս դիրքը տեսակ մը ընդհանուր հակիչի դեր կը կատարէր ամբողջ հակառակող դիրքերուն եւ շարժումներուն վրայ (**Արծրունի Վ.**, Շատախ, Երևան, 2002, էջ 394): Այրի և 1915 թ. նրա կատարած դերի մասին նշվել է. «Շատախի Թաղին նայող Մետնիար լեռան կտրծին մեջ կը գտնուի այս այրը, ուրտեղ առաջին անգամ ապաստանած է Վարդանը ու այնուհետև կոչւած է «Ազգ.

նում է Թաղի աջ կողմի տների վերև: Այնտեղից դու կտեսնես ընդհանուր շրջակայք մինչև թուրքական գորանոց, մինչև Բրաղափին տախտակե կամուրջ: Այնտեղից դու կտեսնես թե դեպի արևելքի՝ մինչև Քրմինի սար, արևմուտքից մինչև Խոլիկի կամուրջ, հարավից մինչև Թազվա սարեր: Բայց այդ հերի մեջ մտնող չի կարող դուրս ելնի մինչև գիշեր: Այնտեղ հաց, ջուր կա, ամեն ինչ պատրաստ կա, մնում է մի լավ նշան խփող մարդ, քեզ ընկեր կա, հետո վերցրու, ում կուզես, մնակ չորս մարդ տեղ կա, ավել տեղ չկա քարի մեջ»:

Առավոտ ժամ հինգին երկու ընկերոջ հետ Ասքանի հերի մեջն ենք՝ փոխելով Արշակին և իր երկու ընկերներին: Լուսաբացին մեր դեմ բացվեց մի հրաշք՝ գորանոցից դուրս եկած մի մեծ բազմություն, բայց մեր տեսած ոչ թե թուրքական զորք, այ մաքուր քրդական ավազակային խումբան՝ ամեն տեսակ հագուստով: Լույս բացվեց: Լավ տեսանք նրանց, բայց սպասում ինք, որ մի հատ հրամանատար կամ աղա դուրս գա: Սկսինք կրակել հավաքվածների մեջ, մի քանի մարդ տեսանք, որ ընկան: Նրանց քաշին ներս, շփոթված թռան դեսուդեն, սկսին կրակել դեպի Հովան Ավանտոյի տան դիրքեր: Շատերը փախան դեպի գորանոցի կողմեր, բայց նրանց գլխավոր ուժ տեսանք, որ պռնեց դեպի Ծառնուսի ճանապարհ: Կռիվ սկսեց երկու կողմից: Հայեր կրակում ին Հովան Ավանտոյի տան դիրքերից և տախտակե կամրջի և Խոլեկի կամրջի կողմից, իսկ մեր մտած բնից մարդ չերևաց շատ ժամանակ: Մի քիչ հետո Հաճկանց գյուղից ծուխ բարձրացավ, գյուղ վառին: Այն քսան մարդ՝ գյուղի պաշտպաններ, թողին, փախան Սվտկին գյուղի ժողովրդի հետ, իսկ ոչխար, տավար տարան, գյուղ թալանին: Կրակ տվին, գյուղ վառին, թողին, գնացին: Այդ բոլոր Շաքրի լամուկի գործ եղավ, որ նախորդ գիշեր մենք չարեցինք, նրանք արին. չուտողի մալ ուտողի հալալ է: Այսպես եղավ կոմիտեի օգուտ Հաճկանց գյուղի համար, իսկ մենք մնացինք բնի մեջ, մինչև որ մութ տվեց: Եկա մեր տղաների մոտ: Հիմա ինձ հարց կտան, թե ի՞նչ արիր: Ի՞նչ պիտի անեմ, ծակից մարդ չի երևա, մնակ գորանոցն ենք տեսել: Ասի. «Մենք նստած ենք այնպես տեղ, քիչ մարդ է երևում»: Այն գիշեր մեզ ուղարկին գոմեր, Սեփանին ուղարկին Սարբեր քրդական գյուղ, բայց բնակիչներ փախած ին նույն գիշեր, որ Հաճկանց գյուղ վառեցին քրդեր:

Երեք օր Շատախ մնալուց հետո սուրհանդակ եկավ Գավաշից, թե շուտ օգնություն հասեք, ժողո-

այր»: Մեր կռիվներում, արշալոյսեն առաջ, երկու լալ նշանաձիգ զինուոր պաշարով միասին հոն կուղարկեինք: Անոնք իրենց տիրող աներետյոք դիրքի եւ ուղիղ նշանառություն շնորհիւ սարսափ կը ձգեին թուրքերու վրա եւ կարգիլէին անոնց ազատ շարժումները՝ խլելով բազմաթիւ զոհեր» (**Բաղդասարյան Տ.**, Վանի երկրորդ կռիվները եւ վերջին իշխանությունը, «Վէմ», 1938, № 3, յունիս-սեպտեմբեր, էջ 19):

վորողը ձեռքից գնաց: Մի ժամ հետո սուրհանդակ եկավ Հայոց Չորից, Կարկառից, թե շուտ հասե՛ք՝ ժողովուրդ կոտորում են: Ի՞նչ պետք է օգնություն տանք: Մեր խումբ Թռուցիկ խումբ է: Քուրդ չմնաց Շատախի հյուսիսի կողմ: Նրանք ապահով են այժմ: Բայց պետք է ասել, որ շատախցիք լավ պատրաստված ին որպես հայկական ազատագրական պայքարողներ և կռվեցին մինչև ռուսաց և կամավորների երկիր մտնել:

Մենք Թաղից դուրս եկանք դեպի Սվտկին գյուղ: Գամակից մեր Ոզմի կողմից դրկած Մարտիրոսից նամակ հասավ մեզ: Նամակում մանրամասն գրված չէր, թե ինչպե՞ս է եղել, բայց մերոնք էլ օգնություն են խնդրել իրենց հարազատ զավակներից: Ահա այստեղ ճիշտ դուրս եկավ մեր Խանեսկա Վարդանի խոսքեր, որ ասում էր. «Մենք դրա շներն ենք, ուրիշի դուռ կխաչանք, մերը կթողնենք գայլերի բերան»: Այդպես էլ եղավ, նրա խոսք կատարվեց:

Սվտկին գյուղ չմտանք: Պահանջեցինք, որ մեզ թույլ տան վերադառնալ դեպի մեր գյուղ, բայց Չաթո թույլ չտվեց, ասաց, որ ես ձեր գյուղին մարդ կուղարկեմ, դուք ձեր մեջից մի դեկավար ընտրեք, ես նրան մարդ կտամ: Մենք որոշեցինք Մեփանին, բայց Չաթոն կտրականապես մերժեց մեր տված թեկնածուին. «Ես Մեփանին և Ամրոյին կպահեմ ինձ մոտ՝ որպես ոգմեցի, որ մյուս զինվորներ նրանցից օրինակ վերցնեն: Եթե դուք շատ եք ուզում, որ նա գնա, ես ստիպված կթողնեմ այս խումբ: Թող ամեն մարդ գնա, որտեղ ուր ուզենա, ես առանց այդ երկու մարդու չեմ կարող գործ տեսնել»:

Մենք զգացինք, որ նրա ասած ուրիշ է, մեզ պահում է որպես մեղավոր, որ չինք լսի իրենց կազմակերպության, որ հակառակ է ժողովրդին: Մեր գյուղից մի քանի մարդ բողոքել են մեր վրա, որ մենք չենք ենթարկվում: Երկու ճյուղ կազմակերպության հակառակ ենք նրանց կուսակցության: Մենք լավ իմացանք, թե ով էր բողոքողը: Չի գիջինք ոչ ոքի: Մեր վրա բողոքող այն մարդն էր, որ մեր գյուղի մեջ վաթսուն տարեկան Թաթոսենց Մանուկին քառասուն դազանակով ծեծել տվեց իր արտ չջրելու համար, իսկ մենք դեմ դուրս եկանք և անգրագետ վարմունքի համար անպատվեցինք նրան՝ ասելով, թե իրավունք չունեն ծեծացած մարդուն ծեծես քո քմահաճույքի համար: Մրանով մնացինք դուշման: Մեր բողոքը գրած էր անգամ մինչև Վանա կոմիտեն, բայց մենք մնացինք մեր տեսակետին, մինչև ռուսներն եկան կամավորների հետ: Կռվում Մեփանը սպանվեց, բայց ես մտա ռուսաց ութերորդ վաշտի մեջ, մինչև անցա Սալամաստ:

Մեր Սվտկին որոշումն այսպես եղավ, որ Հովսեփ վերցնի տասը մարդ, անցնի Հարմշատ գյուղ, այնտեղացիներից քառասուն հոգի վերցնի, գնա մեր Ոզմին օգնության և մի կերպ ժողովրդին բերի Հարմշատ գյուղ, հակառակ դեպքում մեզ տեղյակ պահի: Իսկ մենք առաջ անցանք դեպի Փեսան-

դաշտ՝ փոքրիկ գավառ, որ նստած է Արտոս սարի գլխին: Ապրիլի ութի երեկոյան այնտեղ հասան Գավաշի և Վերին Կարկառի գաղթված և տկյոր ժողովուրդ: Թրջված, սոված, շատեր շոր չունին հագած: Կռիվ սկսել էր վաղ առավոտ մթան մեջ: Մի քանի գյուղերից տեղեկություն չեն տված, և մնացել են խուժանի ձեռք: Մի քանի կին, երեխա փախել են Աղթամարի կղզին նավերով, չնայած վարդապետներ շուտ ին փախած կղզուց: Մի քանի կին, երեխա մնացել են Հարբերտ գյուղի քրդերի մոտ, որպես իրենց ծանոթներ, քրդեր նամարդություն չարին: Այդ հեսիներին պահին մինչև ազատվելու օր, իսկ մի մասն էլ փախավ դեպի Հագու սար՝ կարճկանցի Վարդանի մոտ: Կարճկանցի Վարդանն էլ շատ ժողովուրդ փրկեց Հագու սարի մեջ:

Ներքին Հայոց Չորը չորս օր կռվելուց հետո նահանջեց: Մի մասն եկավ դեպի Վարագի, Վանի կողմ, մի մասն էլ Փեսանդաշտ՝ Արտոսի սարով: Լավ կռվեցին Քերծ և Բլթենց գյուղերը, բայց թշնամու շատ ուժերին չդիմացան:

Վերին Հայոց Չորը քիչ դիմացավ, նրանք շուտ նահանջեցին դեպի Վան: Մենք մեր տեղից տեսնում ինք, թե ինչպես մուխ է բարձրանում Թիմարի գավառից, մինչև Վանի ծովից դեպի հյուսիս Ալջավազի գավառի գյուղերից:

Շատախին ներդրություն տվող Շատախի ավագակ Շաքրի լսմուկ Լազգոյի ասում չքնեց, Շատախո ձորերից դարձավ դեպի Հայոց Չոր, որտեղ շատ վնաս տվեց ժողովրդին, կոտորած շատ եղավ և թալանեց, գնաց դեպի Նորդուզի կողմեր:

Մեր Թռուցիկ խումբը պետք է Արտոսի գլխից թռնի թե՛ Թիմար և թե՛ ծովից դեմ՝ Ալջավազ, թե՛ մյուս գավառներ:

Անտե՛ր Ոզմ, դու սպասի մինչև Հովսեփի հասնի Հարմշատ, այնտեղից մարդ խնդրի, որ մեր ժողովրդին ազատեն: Մեր աչքը լույս, ձերն էլ հետը, սիրելի՛ Ոզմա ժողովուրդ:

Փեսանդաշտի Կաղազիզ գյուղ հասանք կեսօրից հետո, բայց տեսանք, որ ժողովրդին տեղ-դար դար չկա:

Յուրտ ապրիլ ամսին Արտոս սարի գլուխ: Փեսանդաշտը ընդամենը չորս հայ գյուղ են¹⁶⁷: Այդքան բազմություն տեղ չի անի չորս գյուղի մեջ, այն էլ պիտի ասեն, որ Կանիմերան գյուղում կեսը քուրդ են ապրում, կեսը՝ հայ: Քուրդ ժողովուրդը շատ լավ էր իր հարևան հայերի, ինչպես եղբայրներ լինեն իրար հետ: Հիմա եկող ժողովրդին պետք է բաժանել չորս գյուղերի մեջ, բայց Կաղազիզը պետք է մնար որպես կռվող զինվորների զինկայան: Բացի ժողովրդին տեղավորելուց՝ ուրիշ շատ կարևոր գործ կար:

Այսպես, Գավաշի ժողովրդի կես մասը մնացել էր թշնամու ձեռաց մեջ, թե՛ մարդ և թե՛ կին, երեխա:

167 Փեսանդաշտի չորս գյուղերն են Առեղը, Կաղազիզը, Կայնամերանը և Շիտանը:

Առաջինը նրանց պետք է օգնության հասնել, ազատել ավագակ թախամանցի Հասան աղի ձեռքից, որ հին թշնամի է Գավաշի ժողովրդին:

Կեսօրից հետո Շիտան գյուղ հասավ մեր ողմեցի Եղիազարը Սարգսի և Շառոյի հետ, որոնք երկու օր խուժանի դեմ կռվելուց հետո իրենց հետ բերին Կարկառի և Փախներ¹⁶⁸ գյուղի ժողովրդին¹⁶⁹: Եղիազարը մանրամասն պատմեց ինչ որ պատահել է Վերին Կարկառի և Գավաշի ժողովրդի հետ երկու օրվան մեջ: Պատմեց նաև, թե որ գյուղը դիմադրեց, որն առանց կռվի փախավ, թե որքան զենք մնաց Մոխրաբերդ սարի մեջ պահված: Եղիազարը պատմեց Փախներ սարի կռվի մասին, թե ինչպես քուրդ խուժանի մի մեծ բազմություն ներխուժեց Վերին Կարկառի գյուղեր, ժողովուրդը փախավ դեպի Գավաշի սարեր և հասավ մեզ մոտ: «Երկու օր կռվինք Փախներ սարի ձախ և աջ կողմերից, բայց քանի որ մեր ղեկավարը գյուղից դուրս չէր ելնում (ժողովուրդը տեսավ, որ ղեկավար Միհրան Չաթոյանը զբաղված է իր սեպիական գործերով), թողեց, հետ եկավ դեպի Հարբերտի ձոր, որտեղից մնակ ելքն էր դեպի Շիտան գյուղ: Մեր տղաներից մի քանի մարդ սպանվեցին, մնացածը լքեցին դիրքերը, հետ քաշվեցին ժողովրդի հետևից, մեր մոտ: Նարեկցի Հարոյի¹⁷⁰ սպանվելուց հետո մնացած տեղական կռվողներ բոլորը թողին, հեռացան, բայց մենք մի կերպ դիմացանք¹⁷¹: Մութն ընկել էր, իսկ մեր աջ կողմում, որտեղ Սարգսիսը և Շառուն ին

կռվում Սարգի սարի կողմ, նրանք էլ դիմացան, մինչև մութն ընկավ, թողին, եկան: Հիսուն մարդով հագիվ դիմացանք հազար խուժանի դեմ, այն էլ շեյխ Սադալի տղան, իր հոր կախել չէր մոռացել, վառված էր հայերի հանդեպ: Եղիազարը պետք է մի կերպ ժողովրդին հավաքեր, որքան կարող էր: Ինչ որ այն գիշեր տեսան, բերեց, ողջ հասցրեց Շիտան գյուղ, իսկ մնացած ժողովուրդը մնաց տեղեր: Վառենց և Գանձակ գյուղերից տեղեկություն չկա: Շատ գյուղեր մնացած են իրենց տեղերում, Նորգեղ, Հնձակ, Նարեկ գյուղերից քիչ են եկած», – այսպես ավարտեց իր պատմությունը Եղիազարը:

Կաղազիզում ապրիլի ութին հավաքված ժողովրդի ղեկավարներ ժողով արին, թե որտեղ կարող են օգնություն ուղարկեն մնացած ժողովրդին ազատելու համար, իսկ Փեսանդաշտի պաշտպանության համար ընտրին մի ղեկավար մարմին, որի համար ընտրվեց Շադոյանը¹⁷²:

Առաջի հարցը եղավ եկած ժողովրդին տեղավորել չորս հայկական գյուղերի մեջ, ինչ գնով որ լինի, ժողովրդին տեղավորել տների, մարագների կամ գոմերի մեջ, որ ժողովուրդ չի սառի ցրտից: Այդ գործ հանձնեցին ինձ և մեր Սեփանին: Մենք ուրախութամբ հանձն առանք: Շադոյանը մեր մոտ եկավ, ասաց. «Ամրո՛ւ և Սեփան, հիմա կգնաք Շիտան գյուղ, ոչ մի բանի դեմ չառնեք, մնակ ժողովրդին տեղավորեք տաք տեղեր»: Մենք էլ նոր ինք եկած Շատախից թրջված շորերով, ինչ արած, պետք է ժողովրդին տեղավորենք: Մեկ կամ երկու օր է մեր գործ, բայց դու տես, որ մեր գործ շատ վատ եղավ: Սեփան չեկավ հետս, թե ին թաքեր թաց են, դու գնա, ես վաղ առավոտ կգամ, քեզ կհասնեմ: Իմ մեկնելուց երկու ժամ հետո որոշում են քառասուն զինված մարդ Ասպոյի և նորգեղցի Ապրոյի հետ ուղարկեն Գավաշի ժողովրդին օգնելու համար: Որոշում են մեր Եղիազարին ուղարկել նրանց հետ: Չի նայած, որ նա նոր է եկած Գավաշից, բայց հանձն առնում է երթալու, իսկ նրա հետ ուղարկում են մեր գյուղացի Մարգոյին: Մի ջանասեր, բայց վախկոտ մարդ էր Մարգոն: Նրան առաջարկում են պատրաստվի գնալու, բայց նա չի ուզում գնալ: Անպատվում են և զենքերը մոտից առնում: Այն ժա-

168 Գյուղի տեղադրության մասին տես № 153 ծանոթագրությունը:

169 Այդ մասին հայտնի է, որ 1915 թ. ապրիլի 11-ին Հաջի Դերվիշի զվաճարությանը բողոքի և ժանդարմների բազմությունը հարձակվել է Փախների վրա. «Հայ ղեկավար ուժեր միացնելու ճակատ կամ դիմադրություն չկատարելով, մեկ մաս Միհրան Չաթոյանի զվաճարությանը քաշում են Փախների սարը, իսկ միս մասը Նոր-գեղցի Մուսի Մուրատի և Մոխրաբերդցի Պետրոսի հետ՝ Բալաբեթ կատար: Փախների շուրջ սկսում է կռիւ, սարում ամրացած տղաները կռում են ամբողջ օրը, որից յետոյ դիմադրություն աննպատակալարմար համարելով գիշերով ժողովրդի հետ հեռանում են Փեսանդաշտ» (**Աճմեան Հ.**, Վասպուրական, էջ 73):

170 Խոսքը վերաբերում է նարեկցի Աղբյուր Հարոյին, որը սպանվել է 1915 թ. ապրիլի 13-ին Նարեկ գյուղի կռվի ժամանակ. «Ան երկրագործ յեղավորականի տիպարն էր, որ հզոր ձեռքով կը գրկեր և՛ մաճ, և՛ հրացան, որ կը շակեր և՛ բեռ, և՛ փամփուշտ, որ իր բահը կը զարներ ռոզգած արտին և կը վազեր խմբին հաց տանելու... Իբր փոխվրեժ, ան սպաննեց քիւրդն և հրդեհեց քանի մը քիւրդ գիւղերու խոտի դեզերը՝ այդ կերպով իսկոյն դադրեցնելով զազան դրացիներու չարագործութիւնները: Միակ մարդն էր, որ իր և շրջակայ գիւղերու վրայ կիշխեր ամբողջովին: Նա 35 տարեկան էր» (**Բարսեղեան Արտ.**, Գիւղացի հերոսներ, «Աշխատանք», 1916, № 6, էջ 3):

171 Ըստ Մուրադ Խաչատրյանի՝ «...խուժանը կհարձակի Փախների վրա, որի և մոտակա քանի մը գյուղերու պաշտպանությունը հանձնված էր Միհրան Չաթոյանին, նարեկցի Հարությունին և ողմեցի Եղիազարին, որոնք 30 ընկերով 5 ժամ շարունակ դիմադրելն վերջ կպատռեն թուրքական շրթան և ժողովուրդի հետ անվնաս կանցնեն Փեսանդաշտ, որու միջոցին կզոհվեն նարեկցի Հարություն Գրիգորյան և համագյուղացի Խաչո Մ. Խաչատրյան» (Վշտապատում, էջ 156):

172 Ըստ Մուրադ Խաչատրյանի՝ 1915 թ. ապրիլի սկզբին կատարված «...դեպքերը ծրագրված ջարդի արդյունք են, երբ գյուղերն լուրջ հասավ մեզ, որ բոլոր տեղ ալ միևնույն վայրագություններ կկատարվին, ամեն օր գյուղերն ծուխ ու մոխր կբարձրանար, առանց ժամանակ կորսցնելու ՀՀ Դաշնակցության շրջանային կոմիտեներ Լևոն, Միհրան Չաթոյան, Մովսիս Մուրադ, Աբրահամ և Պետրոս իսկույն խորհրդակցական ժողով կազմեցին, ընդ երկար խորհրդակցության հետևյալ եզրակացության եկան: ...վճռեցինք զենքի և ինքնապաշտպանության դիմել և մեր սովոր խմբերով պաշտպանել մեր հայ ժողովրդի կյանքն ու պատիվը...: Լևոնը իր 20 ընկերներով փութաց Շատախի՝ օգնության. արդեն Փեսանդաշտ սկսած էր ջարդ» (Վշտապատում, էջ 155):

մանակ մեր Մեփանի թասիր չի տանում և բռռում է Լևոնի վրա, թե ինչո՞ւ եք մարդուն անպատվում ժողովրդի առաջ, ամոթ ձեզ: Ապա վերցնում է իր գենքեր, հասնում է գնացողներին: Քանի անգամ ասում են, թե դու պետք է գնաս Ամրոյին օգնելու, չի լսում ոչ ոքի և գնում է նրանց հետևից: Ահա էն գնալն էր, որ գնաց, էլ հետ չեկավ:

Խումբը Բարատտոսիկից իջնում է ծովի ափ, դուգ անցնում են Իշկերտ քրդական գյուղից, անցնում են Նորգեղի և Մոխրաբերդի մեջտեղից, բարձրանում են սար, որի դռին մի վանք կա: Տեսնում են, որ վանքի միջից լույս է երևում: Խումբը թեքվում է դեպի աջ կողմ՝ դեպի Գոտիս Կապան, բայց Ապրոյի սիրտը չի դառնում վանքից, ասում է, թե մերոնք են վանքի մեջ: Իր ընկերոջն ասում է. «Դավո՛ւ, արի ես ու դու մտնենք վանք»: Դավոն չի լսում նրան: Այն ժամանակ խնդրում են Մեփանին, թե արի մտնենք վանք, թե ո՞վ է կրակ վառել: Երկուսով մտնում են վանքին: Տեսնում են, որ նստածները ոչ թե հայ են, այլ քուրդ խուժանն է արխային նստած քեֆ անում: Մեր տղերք հետ են դառնում, երկուսով գնում են դեպի Ասպոյի գնացած կողմ, բայց մութ գիշեր է, մարդու չեն տեսնում: Լույսը բացվում է, նորից մարդ չի երևում: Երկուսով մինչև մութն ընկնելը մտնում են ծառի տակ: Խումբը նրանցից մի կիլոմետրի չափ վերև է լինում, իրար չեն տեսնում: Մութը ընկնելու պես վեր են կենում իրենց տեղերից, երկուսով իջնում են Մոխրաբերդ գյուղ, մոտ երեսուցքառասուն կին, երեխա են հավաքում և ընկնում ճամփա՝ դեպի Արտոս սար: Երբ որ հասնում են ջաղացի մոտեր, Ապրո ասում է. «Մեփան, արի անցնենք աջ՝ դեպի Նարեկ, այնտեղից կբարձրանանք սար»: Նարեկից Ռեհան անունով մի կին կար նրանց հետ: Մեփան չի համաձայնի Ապրոյի հետ, և պնդում են ճամփով դեպի Իշկերտ գյուղ:

«Հազիվ ծովի ափ ինք հասել,— ասում էր Ռեհան,— որ հանկարծ Հասեն աղի գորք Ոստանի կողմից մեզ պաշարեց: Մեր տղաների ելք մնաց դեպի ծովի կողմ: Երեք կողմից վրա տվին, ուրիշ ճար չկար, պետք է կռվել մինչև մեռնել: Կռիվը սկսում է: Տղաները երկու հոգի են, իսկ քրդերը մոտ չորս հարյուր մարդից շատ»:

Տղաներ կռվեցին շատ լավ, Ապրո շուտ է սպանվում, բայց Մեփիկ կռվավ մինչև լուսաբաց, փամփուշտ պրծավ: Լույսը որ բացվեց, Մեփիկ վիրավոր է լինում: Ան ժամանակ Հասեն աղան մոտենում է և վիրավոր Մեփանին հարցնում, թե որտեղացի՞ ես:

—Ոգմից եմ,— հանգիստ պատասխանում է Մեփիկ:

—Անունդ ի՞նչ է,— հարցնում է աղան,— դուն Լաթոն չե՞ս, դուգ խոսիր:

—Չէ՛, ես Լաթոն չեմ, իմ անունը Մեփան է:

—Լավ,— ասում է աղան,— ով որ ես, դուն՝ որպես ոգմեցի, արժանի ես ապրելու, վերքդ կբուժեն: Դուն որ մնակ այսքան մարդու դեմ կռվեցիր, դուն իրա-

վունք չունես մեռնելու, ես քեզ կբուժեմ, դու կմնաս ինձ մոտ որպես հավատարիմ խոլամ:

Խոսակցության ժամանակ մի ոստիկան կրակում է Մեփանի վրա և Հասեն աղայի ձեռք մեջ սպանում է: Աղան վերցնում է ընկած Մեփանի տասնոցը և չորս գնդակ տալիս է ոստիկանի ճակատին: Աղան հրաման է տալիս կնիկներին ձեռք չտալ, Մեփանի և Ապրոյի դիակներ¹⁷³ թողնում է արտի մեջ: Իրենց տասներկու սպանված և վեց վիրավոր վերցնում են և տանում իրենց գյուղ թաղելու: Իսկ մնացած խումբը կռվից մեկ ժամ առաջ աջ կողմից անցնում է դեպի Նարեկ գյուղ: Այնտեղից առանց կռվի անցնում են դեպի սար: Հասնում են Շիտան՝ մեզ մոտ: Նրանք կռվից շատ հեռու չեն եղած, բայց չեն իմացած, թե կռվողները Մեփան և Ապրոն են եղած:

Առանց ժողովրդին օգուտ տալու երկու մարդ գոհ տվին, վերադարձան, իսկ ես գնացի իմ գործին: Տեղեկություն չունեցա Մեփանի գնալու կամ սպանվելու մասին: Մինչև Շիտան հասնելն արդեն ժողովուրդ տեղավորված էր: Տեղի ժողովուրդ մի բան չի խնայեց իրենց քույրերուն տեղավորելու համար: Երկու օրից շուտ վերջացրի իմ գործը և վերադարձա: Կաղազիզում լսեցի, որ Մեփան չի վերադարձել Եղիազարի հետ: Ինձ խաբին, թե Մեփիկ, Ապրո գնացել են Ագոլ՝ Վարդանի մոտ:

Փեսանդաշտի կռիվը տևեց մոտ քառասուն օր: Մենք սկսեցինք կռվել, որպեսզի կարողանանք գոնե այդտեղի ժողովրդին պաշտպանենք մի կերպ, հաց սակավ էր այն գյուղեր: Բայց որ ես գնացի Շիտան գյուղ, ռես Հակոբն ինձ ասաց. «Իմ հույս ձեր՝ ոգմեցոց վրա է մնակ: Դուք մեզ պաշտպանեք կոտորածից, մենք մեր ունեցած հաց, անասուն, տունտեղ հանձներ ենք ձեզ, մնակ ժողովուրդ փրկեցե՛ք, մինչև կհասնի շեկ ռուս»: Եվ մարդիկ ոչ մի բան չխնային կռվող մարդկանց համար, մնակ պակաս աղն էր, որ չկար մոտիկ տեղեր: Դարենց քրդի գյուղ

173 Մեփանը և նորգյուղցի Ապրոն սպանվել են 1915 թ. ապրիլի 16-ին. «...Մոխրաբերդի դաշտին մեջ, Ոգիմցի գինոտր Սեփիկի և ուրիշ 10 գիւղացիներու հետ սպանմուեցաւ Նոր-գիւղցի Աբրօն (Աբրահամ Դավիթեան), որ իջեր էր հոն տղամարդիկ հաւաքելու և Փեսանդաշտ բերելու»: Նորգյուղցի Աբրահամ Դավիթեանը «...26 տարեկան գեղակազմ երիտասարդ մըն էր, սերած Կորդուաց ցեղէն, ինչպէս կը վկայէ իրենց տոհմական աւետարանը: ...Ան կըրթած էր Աղթամարի, իսկ շերամապահութիւն սովորած Բրուսայի մէջ: Ուսուցիչ էր և գինոտր՝ երբ իրիկուան դասերը վերջացնելէ ետք աս ու ան գիւղը կը վազեր կնճռոտ խնդիրները հարթելու... Ապրիլեան կռուին, Աբրօն Լեւոնի խումբի հետ Շատախն անցաւ, սպա իջաւ Ռշտունիք, հոն իր վերջին փամփուշտն արձակելու, օրհասական կռուին մէջ» (Քարտեղան Արտ., Գիւղացի հերոսներ, «Աշխատանք», 1916, № 6, էջ 3): Ասպոյի և Ապրոյի սպանվելու մասին Մուրադ Խաչատրյանը վկայում է, որ երբ «Ասպոն և Աբրահամ 15 դաշնակցական վառվորն երիտասարդներով գնացին Լևոնի օգնութեան, սակայն Աբրահամ իր երկու ընկերով ընկերներից ետ կմնա և կհանդիպի խուժանին, անհավասար կռիվ մղելէն վերջ կսպանվի Փեսանդաշտի ճամբու վրա» (Վշտապատում, էջ 155-156):

մոտիկ էր, բայց տեղի հայեր խնդրվեցին, որ ձեռք չտան նրանց, որովհետև մոտիկ, ծանոթ և սերով ժողովուրդ են եղած հին ժամանակից: Նրանք վնասակար մարդ չեն, մեկ ուրիշ տեղ չեն գնացել, մի քանի տուն քասիք ժողովուրդ քուրդ են, թող մնան իրենց տների մեջ:

Մեր կռիվ Բարատտոսիկ սարի գլուխ շատ հաջող անցավ: Չնայած մեր մոտ փամփուշտ քիչ կար, յուրաքանչյուր մարդուն հազիվ հարյուր կամ հիսուն հատ հազիվ լինել, բայց մեր դիրք շատ հաջողակ էր: Պատճառը ոչ թե մեր կռիվ ուժն էր, այլ սարի ձյուն էր, որ պնճած էր Հաղարով սարից մինչև Արատսի գլուխ, պնճած էր հաստ ձյունի շերտով: Թշնամին չորս հատ թուփեր կապած էր Ոստանի սարի վրան, բայց թուփեր բարութով էին: Կրակելուց մուխ երկինք էր բարձրանում: Կռվող ուժ շատ էր: Չյան վրա բարձրացողին խփում ենք, գլորվում էր խոր ձորի մեջ: Նրանց կողմից գիշերներ հարձակում չէր լինում: Բայց պետք է խոստովանեմ, որ Բարատտոսիկ շատ գործ տեսավ թե՛ Շատախի համար և թե՛ Վանի համար, որովհետև Բիթլիսի կողմից եկած խուժան քրդեր լինում են Ոստանում, որ Փեսանդաշտը գրավելուց հետո ուժ տան և կեսը Վանին, կեսը Շատախին, որ մի անգամ մաքրեն հայերին այդ ուժեղ սմբուքյունից:

Փեսանդաշտ կոչված գավառը Շատախի հյուսիսային մասն էր, արևելքից Կորանդաշտի քրդական գյուղերն են, իսկ արևմուտքից Մոկաց աշխարհն էր, որ շատ հանգիստ էր: Ապրիլյան կռիվ ժամանակ թե՛ քուրդ և թե՛ հայ միացան Մուրթլաբեկի շուրջ, որը պաշտպանում էր թե՛ իրենց գավառ և թե՛ իրենց թույլ չի տալիս, որ ուրիշ ավազակ մտնի և Մոկաց գավառից անցնի դեպի Վան կամ Շատախի կողմեր: Ահա այդպիսով մեր կռված սարը բանալի դարձավ Ռշտունյաց և Շատախի գավառների համար:

Փեսանդաշտ նորից մի խումբ ուղարկեցին դեպի Շատախ՝ օգնություն ցույց տալու, քանի որ մեր կռիվ շատ դանդաղեց:

Ապրիլի վերջերն էր:

Մի օր, նստած իմ Բարատտոսիկի կենտրոնական դիրք, առավոտ շուտ տեսա մի մեծ խումբ խառնուրդ մարդ են առաջանում մեր դիրքերին մոտիկ, բայց զինվորի նման չին: Հեռադիտով մտիկ տվինք, տեսանք, որ մոտ վեց հազարի չափ կին ու երեխա են: Մնացինք զարմացած, թե սա ի՞նչ խաղ է, որ թուրքեր խաղում են մեր հետ, բայց որ մոտեցան, տեսանք Թիմարի հեաիր ժողովրդին դիտմամբ ուղարկում են մեզ մոտ¹⁷⁴:

174 1915 թ. ապրիլի վերջերին «օր մը, երբ Բարադողլիկի դիրքերու վրայ լուսին կը տիրեր երկուստեք, կէսօրէն առաջ, մեր զինուորները, իրենց դիրքերէն, հոծ բազմութիւնը մը նկատեցին Հիլլի գիւղին քով: Այդ բազմութիւնը սկսաւ կանաց-կանաց շարժուիլ և լերան ստորոտէն դէպի վեր, այսինքն դէպի

Թիմարի գյուղերից տղամարդիկ փախեր են սարեր կամ քաղաք՝ Վան, իսկ շատ տեղերի կնանիք մնացեր են գյուղերի մեջ, գլխավորապէս Ալյուր¹⁷⁵, Խավենց¹⁷⁶, Սոսրաթ¹⁷⁷, Գուլ¹⁷⁸ գյուղեր:

Թուրք կառավարություն հրաման է արձակում, որ բոլոր հեաիր ժողովուրդ հավաքեն, բերեն Վան: Հավաքված բոլոր կին, երեխաներ Վանում չեն պահում, դրկում են դեպի արևմուտք՝ դեպի Բիթլիս, Մղերդի կողմեր: Բայց երբ որ հասցնում են Ոստան, այնտեղի զինվորական մարմինը որոշում է, որ քանի հազար ժողովուրդ դրկեն Փեսանդաշտ՝ խոտկարարների մոտ, որ սոված կոտորվեն կամ անձնատուր լինեն:

Ահա այդ որոշումով այլանդակված, սոված, շուրթերը պատռտված, կեղտոտ ուղարկին Ոստանի ձորից դեպի Բարատտոսիկ՝ մեր դիրքերի կողմեր: Քսան օր Վանում մնացած ժողովրդի դրություն ինչպե՞ս կլինի:

Ով որ չի տեսել, թող չի զարմանա թուրքական կառավարության, ոչ թե կառավարության, այլ գազանի կողմից հայերի չարչարանքի վրա: Ժողովուրդը մոտեցավ մեզ, ոստիկանները կանանց ցույց տվին դեպի մեր կողմ:

–Գնացեք,– ասին,– ձեր հայ եղբայրներն են, դուք ազատ եք:

մեր զինուորներու դիրքերը բարձրանալ: Վերջիններս նախ կարծեցին, թէ թշնամին օգնութեան հասած նոր զօրախումբ մըն է, որ յիմար յանդգնութեամբ մը կ'ուզէ իր ուժը փորձել, սակայն հեռադիտակով դիտողները շուտով յայտնեցին, որ առաջացող մարդկային այդ թշուառ զանգուածը կին ու երախաներէ բաղկացած է: Այն ատեն ամենքը հասկացան տխուր իրողութիւնը: Ոճրագործ Ջելվիթը, Փեսանդաշտը գեղքի ուժով ընկճելէ յոյսը կտրած՝ զայն սովի մատնելով անձնատուրութեան ստիպելու հրէշային ծրագիրն յղացած էր. ոստիկանաքել տալով Թիմարի շրջանի կենդանի մնացած բոլոր կին ու երախաները, ոստիկաններու մտրակներուն տակ ուղարկեց մեզ մօտ: Մէկ երկու ժամէն այդ թշուառ բազմութեան ծայրը հասաւ Կաղազի: Եկողները, ամենքն ալ անօրութենէ և ճանապարհին կրած անօրինակ տանջանքներէ խելայեղ եղած էին և երկու բառ փոխանակելու անկարող: Փեսանդաշտի ազատ հողը կոխելուն պէս, անոնք ցրուեցան դաշտերու մէջ և սկսան զանազան բոյսեր քաղել և ուտել՝ զիրենք տանջող քաղցը քիչ մը յագեցնելու համար: Անոնց թիւը 1000-1200 հոգիի կը հասնէր: Լևոն շուտով զանոնք տեղադրել տուաւ Փեսանդաշտի 4-5 գիւղերու մէջ, կարգադրելով անոնց սնունդի խնդիրն ալ» (Փրօքսն, Փեսանդաշտի ինքնապաշտպան կռիւր, «Աշխատանք», 1916, № 29, էջ 3):

175 Մինչև 1915 թ. զուտ հայաբնակ Ալյուր գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Թիմարի գավառահիստ Ջանիկից 24,5 կմ հարավ-արևմուտք:

176 Մինչև 1915 թ. հայաբնակ Խավենց (Հավենց) գյուղը գտնվում է Թիմար գավառում՝ գավառահիստ Ջանիկից 25 կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Աթմաշա (Atmaca):

177 Մինչև 1915 թ. հայաբնակ Սոսրաթ գյուղը գտնվում է Թիմար գավառում՝ գավառահիստ Ջանիկից 10,5 կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Թաբանլը (Tabanlı):

178 Մինչև 1915 թ. խառն բնաչություն ունեցող Գյուլիվ (Գյուլու) գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Թիմար գավառում՝ գավառահիստ Ջանիկից 17 կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Գյուլլու (Göllü):

Ժողովուրդը սիրտ առեց: Ուներ շարժին և առաջացան դեպի մեզ: Առաջ մենք կարծեցինք գուցե արաբներ են, մախսու¹⁷⁹ շորեր փոխած, ուղարկում են դեպի մեր դիրքեր, բայց շուտ տեսանք փոքրիկ երեխաներին: Սիրտս չի տարավ նրանց տեսնելուն: Իջան մեր նստած քարի տակ: Ես էլ չսպասի հրամանի, անմիջապես իջա: Ժողովրդի մեջ ինձ տեսան, որ ես զինված եմ, բոլոր պառկան գետին:

–Քույրեր,- ասի,- մի՛ վախեք, ես հայ եմ, վեր կացեք, դուք բոլորդ ազատ եք: Մեզ մոտ քսան հազար հայ կա՝ կին, մարդ, տուն-տեղ: Կանչեք, թող բոլոր գան, թող չի վախեն, այստեղ զավթիա չկա: Մենք բոլոր ձեր եղբայրներ ենք:

Նրանք ուրախացան: Բոլորն անցան դեպի իրենց համար ազատ աշխարհ: Նրանց մեջից դուրս եկան կնոջ շոր հագած տղաներ, երեսներին թրիք քսած: Բայց պիտի ասել, որ շատ են տանջված քասիք ժողովուրդ: Փեսանդաշտը դարձավ քսանհինգ հազարանոց գավառ¹⁸⁰: Բոլորն ապրին մինչև ռուսական բանակը դուրս եկավ Վարազի սարի կողմից:

Փեսանդաշտի կռիվն այնքան վտանգավոր չէր, որքան քսանուհինգ հազար ժողովրդի սննդի գործ: Տեղի ժողովուրդը ո՛չ անասուն խնայեց, ո՛չ մի ուլ անգամ չի պահեց, բայց էլի նեղություն շատ էր թե՛ կովոդների և թե՛ ժողովրդի համար: Կովոդ տղաների մեջ դժգոհություն ընկավ, մինչև անգամ շատերը պահանջեցին, որ ժողովրդին թողնեն իր բախտին, իրենք փախչեն դեպի Աղբակի կամ Սալամաստի կողմեր: Բայց Լևոնը եկավ դիրքերը, կանչեց տասնապետներին և հայտնեց բոլորին ի գիտություն, որ «Ես՝ Լևոն Շաղոյանս, իմ գերեզման կթաղեմ այս Բարատտոսիկ սարի գլուխ, ժողովրդին չեմ լքի ու հեռանա, ով որ կուզի, կարող է հեռանալ»:

Սիրտս մղկտաց նրա արտասուքախառն խոսքերից: Տեղից վեր կացա և ասի. «Մենք տասնհինգ մարդ այստեղ ենք, մեր գյուղից տեղյակ չենք, բայց թե նրանք նույնիսկ բոլորը կոտորվեն, մենք Շիտանա Հակոյի հացը չենք ուրանա, չենք հարամի, կապրենք կամ կմեռնենք, բայց Բարատտոսիկ չենք լքի, թող այս ժողովուրդ չի ընկնի խուժանի ձեռք: Մեր կողմից արխային կա՛ց, մենք փախչող չենք: Տասը օրից հետո ռուսի թուփի ձայն կլսենք Կոտոլա

179 Գիտմամբ:

180 Մեկ այլ տվյալով՝ Փեսանդաշտում հավաքված ժողովուրդը տեղի բնակիչների հետ միասին կազմել է շուրջ 7000 անձ. «Այդ 7000 հոգին սպառեց Փեսանդաշտի ամբողջ պաշարը: Նախ սպառեց հացը, ապա կենդանիները. ոչինչ չը մնաց, ոչ տաւար, ոչ ոչխար, ոչ հաւ, ոչ աքաղաղ: Այ, որ բոլորովին սպառեց» (Ա-ԳԹ, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 434): Ըստ ականատեսներ Նշան Մուրադյանի, Մովսես Ազիզյանի և Մովսես Սարգսյանի՝ «Գյավաշի, Հայոց Ձորի, Թիմարի ժողովուրդն մոտ 8000 հոգի (մեծ մասամբ կին ու երեխա) կառավարությունը հետզհետե սարերեն քշելով, կճամբե Փեսանդաշտ՝ կովոդներ սովամահ ընելու նպատակով: Եկած ժողովուրդը կլեցվի շորս գյուղերու մեջ և հոն կկերակրվի» (Վշտապատում, էջ 175-176):

սարից, Անդրանիկ զորավարի կամավորները ռուսի զորքի հետ հասել են Բելքուկի սար, մենք թող մեռնենք, նրանք մեզ ամոթով չի տեսնեն»:

Բոլորս խոսք տվինք և համբուրվեցինք՝ ի նշան մեր հավատարմության:

Նրանից հետո մեր կռիվն ավելի ուժեղացավ: Մոտ քսան տասնապետներ ձեռքս պոնին, ասին. «Կեցցե՛ն ոզմեցիք»: Շիտանի Հակոն, մոտ իննսուն տարեկան մարդ, լսեց մեր որոշում, եկավ մինչև մեր դիրքեր, ինձ համբուրեց, վերադարձավ տուն: Նա չի խնայեց մինչև անգամ իր վերջին կրո՛ մատակ գոմեշ, մորթել տվեց, դրկեց թե՛ կովոդներին և թե՛ ժողովրդին: Մեր տղաներ որոշեցին, որ Դարենց քրդի գյուղը մեջտեղից հանեն, որ նրանց անասունները կամ հացը բերեն և ժողովրդին սնունդ տան: Բայց Լևոնը թույլ չտվեց այդ բան անելու: Պետք է ասել, որ քրդերն իրենք իրենց հոժար կամքով բերում ին:

Մայիս ամսի երկուսին նկատինք, որ Վանի ծովակի վրա նավեր են գնում դեպի Բիթլիսի կողմեր: Մեր դիմացի կռիվը թուլացավ: Մեր սուրհանդակը Վանից եկավ, լուր բերեց, թե թուրքերի մեծեր իրենց ընտանիքներ տեղափոխվում են դեպի Բիթլիսի կողմ: Արտոսի գլխից արդեն պարզ երևում էր նավերի շատանալը: Այն ժամանակ Լևոնը լուր ուղարկեց Շատախ, տեղեկություն տվեց: Շատախի կոմիտեն ասել էր, թե ամուր կացեք, շուտով ռուսաց զորքը կամավորների հետ կլինի մեզ մոտ: Պետք է ասել, որ թուրքական սև ասկար քիչ կար թե՛ Վանի և թե՛ մեզ մոտ: Թուրքական զորքը կռվում էր Կոտոլի, Սարայի, Բայազիտի, Կարսի, Էրզրումի կողմեր:

Այնպես որ տեղի կռիվ վարում են քուրդ աշիրաթներ, ինչպիսին էր Քոռ Հասեն փաշեն, Շաքրի և Լազգո, Գավաշի բեկեր, Ոստանի աղեք: Խարզանի կողմից եկած էր Բշարի Չաթոն, իր աղբեր Ջամիլի Չաթոն, որ սպանվեց ոզմցի Ապրոյի զնդակից Ալջավազի կռիվին¹⁸¹:

Բշարին սպանին սարի դաշտի մեջ հայ կամավորները, իսկ Սղերդի և Բարվարի քրդական հրոսակները մեր Ոզմը վառելուց հետո խուժեցին դեպի Մոկաց կողմ, որ անցնեն դեպի Փեսանդաշտի և Շատախի կողմ: Այն ժամանակ Մոկաց քրդերը և հայերը Մուրթլաբեկի հրամանով հետ են շարժում գազազած խուժանին, թույլ չեն տալիս իրենց գավառով անցին: Ասում են. «Դարձե՛ք ձեր Բիթլիսով, անցե՛ք դեպի Վան, մենք մեր խաղաղ ժողովուրդ չենք գցի ձեզ նման ավազակների ձեռք, թե որ կոտորվենք, մենք ձեզանից լավ ենք»: Բոլորը հետ են դառնում դեպի Սղերդի կողմեր, ուր մնացին մինչև վերջ:

Բարատտուրն Արտոս սարի ձախ կողմի վրա է ընկած, նրա աջ կողմում հսկա Արտոսն է, ձախ կողմում անվանի Հաղերով սարն է, որի վրայից

181 Չաթոյի սպանվելու մասին տե՛ս սույն աշխ., Սարգիս Ավետիսյանի հուշագրությունը, էջ 16:

մնակ ելքն էր Ռ-շտուռնիքից դեպի Մոկաց երկիր: Ուրիշ ճանապարհի չկար: Չմեռ շատ դժվար էր նրա վրայով անցնելը, բայց ամառ ժամանակ լավ էր: Հաղերով սարի մեջ երկու խան կար: Չմեռ ժամանակ բուք լինելու ժամանակ մարդիկ մտնում են, խանի թոնիր վառում են, տաքանում, մինչև բուք կտրվում է: Ամառ գազ¹⁸² հանում են, դիզում են խանի մեջ, չորացնում, ձմեռ վառում են:

Հայ կամավորները ռուսաց բանակի հետ մտան Աբաղու դաշտ և առաջացան դեպի Բերկրիի կամուրջ, իսկ Կոտուլի և Մարայի կողմից առաջացան Անդրանիկի և կազակների բանակներ դեպի Բաշկալա: Թուրքի առյուծ բանակ դարձավ կատու: Փախան դեպի Վարալին, դեպի Նորտուզի կողմեր, հռչակավոր Ջավատ փաշան փախավ դեպի Բոտանի սարեր, այնտեղից էլ դեպի Սղերդ, Բիթլիսի կողմ: Երևի առաջի անգամն էր լսած ռուսական թուփերի ահեղ ձայներ: Կատողած քրդեր մուկ դառան կազակի թրի դեմ: Վանն ազատվեց: Լավ փառքով ազատվեցին նաև Շատախը և Շիտանը: Յուրաքանչյուր ժողովուրդ վերադարձավ իր ծննդավայր, բացի Կարկառից: Թուրք ասկարներ փախչելուց կանչում են. «Անդրանիկ գալուր, գալուր գալուր»¹⁸³:

Ասում են՝ թուրքի զորքեր շատեր զենքեր գցում են և փախչում են մոտիկ քրդական գյուղեր:

Ոգմեցիների գաղթը¹⁸⁴

Հազար ինը հարյուր տասնհինգ թվին մեր գյուղ գաղթեց իր տեղից, եկավ Մոկա:

Տասնչորս թվին, որ արև խավարավ, էն ժամանակից մեր գյուղը տատանման մեջ էր, ոչ մի մարդ կատան, գգրարություն չգնաց: Բոլոր կասկածում ին, թե մի բան կա, արևի խավարում լավ բան չի: Մի քանի օրից հետո ոստիկանները եկան գյուղ, ասկար պահանջին մինչև 27 տարեկան: Շատերի թիվ պոնեց, բայց քիչ դուրս եկավ: Առաջի անգամ մինչև 27 տարեկան երեսունչորս մարդ տարան Սղերդ, ապա Բիթլիս, այնտեղից էլ Վան: Բայց Բիթլիսից մինչև Վան նրանց հետ ոչ մի զավթիսան չդրին, ասին. «Դուք գնացե՛ք Վան, ներկայացե՛ք զորակալանի մոտ»: Հարյուր մարդ՝ հայ, քուրդ, Բիթլիսից երկու օրում կհասնի մինչև Գավաշ: Անպահապան մարդիկ սկսում են փախել: Մերոնք եկան գյուղ, բայց այդ փախալը էժան չի նստեց մեր գյուղի վրա: Բոլորի փախուստ գցին ոգմեցոց վզին, թե նրանք են եղել փախուստի պատճառ: Այն օրվանից կառավարությունը թշնամի դարձավ մեր գյուղի հետ, մինչև անգամ քրդեր հայտնեցին մեր գայմազամին, թե ոգմեցիք չեն ենթարկվի թուրք կառավարությանը,

նրանց աչք դեպի Ռուսաստանի կողմն է, նրանք տեղեկություն ունեն ռուսներից, ոգմեցիք բոլոր ֆիտայի են:

Ես վերև պատմի մեր գյուղի երկու ճյուղի մասին: Գյուղի երիտասարդների մի մասը Ռաշիտի հետ քաշվել էր Մամորտանքի, Սպարկերտի, Խիզանի կողմեր: Շատերն իրենց տներ տեղափոխել ին Վան, իսկ մնացածը՝ ինչպես անհովիվ ոչխար, մեկը մյուսին չէր լսում: Գրագիտություն չկար, մեջներս միություն չկար, իրար չինք պաշտպանի, վերջն ի՛նչ եղավ: Վերջն այն եղավ, որ Վանից մի խումբ զինվոր ուղարկին մեր գյուղ, կազմակերպին. «Ձեր գյուղին առայժմ վտանգ չկա: Մենք ժամանակին ձեր գեղ կպաշտպանենք, համ էլ գյուղին փող կդրկենք, դուք պետք է օգնություն տաք վտանգավոր շրջաններին: Կռիվն արդեն սկսել է, ռուս շուտով կմտնի Բայազետ, Մարայ, Աղբակ, մենք պետք է պատրաստ դիմավորենք ռուսաց զորքին»:

Մեզ խաբելով քսան մարդ էլ նրանք տարան: Մեզ մի Վարդան անունով ընկեր կար, ասում էր. «Մենք դորա շներն ենք, մեր դուռ չենք պահում, ուրիշի դռան պահապան ենք կանգնում»: Այդպես էլ եղավ: Ոգմեցին կովեց, Բելու¹⁸⁵ գյուղի ժողովրդին դուրս բերեց կրակից¹⁸⁶: Ոգմեցին կովեց Կարկառի ժողովրդին ազատելու համար: Ոգմից Մանուկյան Սարգիսը տասը մարդով փրկեց Հարփենց¹⁸⁷ գյուղի ժողովրդին կրակի միջից: Եղիազարը Գավաշը պահեց մինչև Կարկառի ժողովուրդը դուրս եկավ Գավաշի գյուղեր: Ոգմեցին մասնակցեց Աթանանց գյուղի կովին: Այսքանը 1914 թվի աշնան կռիվներից:

Ոգմից տեղեկություն բերողներից մեկ՝ Փորոզկա Մանուկ, առաջ հասավ մեզ մոտ, Բարատոտիկ դիրքերում նստած մտածում ինք: Էս մեր փոքր Ավո Մանուկը մեզ պատմեց շատ տխուր լուրեր. «Ապրիլի վեցին տասը ոստիկան եկան գյուղից ասկար տանելու: Բաց ոչ թե այն մարդիկ, որ զինվորացու են մնակ, այլ պահանջեցին, ով որ կարող է ճանապարհի վրա աշխատի կամ ուրիշ գործ անի, որպես արքոզ¹⁸⁸, շալակ շալակող, զորքին պաշար տան:

185 Մինչև 1915 թ. հայաբնակ Բելու գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Կարճկան գավառում՝ Եղեգիսից 13,5 կմ հարավ-արևելք, Կասպուտկող (Ընծաքիսար) լեռան հարավային ստորոտում: Վերանվանվել է Ալազաբյուկ (Alacabük):

186 Խոսքը վերաբերում է ոգմեցի Լաթոյին՝ Միհրանին: 1914 թ. դեկտեմբերի սկզբին «Գայմազամը, որը գտնում էր Կարճկանում, հառաքում է բազմաթիվ միլիսներ ու քիլոդեր և գալիս է Բելուի վրա: Տղաներին օգնութեան են հասնում Գեառաշից ընծակցի Ասպոն և Միհրան Չաթոյեանը երկու տասնեակներով: Բելուն երկու օր ուժեղ դիմադրություն է ցույց տալիս, սակայն երրորդ օրը, այն է դեկտեմբերի 5-ին, տղաները այլևս չկարողանալով շարունակ աճող խուժանին դիմադրել, առնում են ժողովուրդը ու քաշում» (մանրամասն տես **Ա.Ղ.**, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 130-131):

187 Մինչև 1915 թ. գուտ հայաբնակ Հարբենց (Արբենց) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Խիզան գավառում:

188 Գունակ:

182 Լեռնային փշոտ թուփ, որն արմատներով հանում են և օգտագործում որպես վառելիք:

183 «Անդրանիկը գալիս է, անհավատը գալիս է»:

184 Ոգմի կովի և գաղթի մասին տես նաև Վշտապատում, էջ 171-174:

Գյուղի ռես Մանուկն¹⁸⁹ էլ չի հետաքրքրվի, թե ի՞նչ է այդ հրամանը կամ թե չի կարողալ տա: Նրանք պատասխան էլ չեն տա ոչ մի մարդու: Պահանջում են հիսուն մարդ. առաջին հերթին պետք է պատրաստ լինեն մեկնելու դեպի Սղերդի կողմերը: Ռեսը վերցնում է Նևոսի¹⁹⁰ ցուցակը, տանում է նրանց պետի առաջ դնում: Էլ հարցնող չկա, թե Ավկանց Մանուկը ուրքում տարեկան մարդ է, մեկ էլ Գոգո Կազարը, Հաջոնց Հակոն վաթսուն տարեկան է, Չիտոն երկու աչքից քոռ է, մեկ էլ 7 տարեկան մի տղա:

—Հիսուն մարդ տանելը քիչ բան չէ,— ասում է մեր գյուղից Շամտիկա Մախակը,— բերե՛ք այս տասը ոստիկաններին պոնենք կապենք, գյուղի ժողովրդին հանենք դեպի Մոկս: Տարած մարդիկ կկորեն անտեղի:

Նրան չեն լսում:

—Դու քու կինը տարեր ես Վան, կուզես մեր գեղ քանդե՞ս,— ասում է Մարտիկ անունով մի մարդ, որ գնաց, էլ չեկավ:

—Ով որ,— ասում է պատմող,— երկու ոսկի տվեց, նրան ազատին: Մեկ ոսկի տվողը չէր ազատվում:

Ռեսը չի թողնում, որ գյուղացիք գոնե խորհուրդ անեն, ուրիշ ելք մտածեն: Քառասուն մարդ տանում են անվերադարձ ճանապարհով: Նրանցից չորս մարդ կոտորածից փախան, եկան, հասան իրենց գաղթված ընտանիքին: Մեր գյուղից փախած մի քանի մարդ եկան մեզ մոտ և պատմեցին և մանրամասն տեղեկություն տվեցին գյուղից: Ասկարներ տանելուց հասնում են Վելաս գյուղ, այնտեղ մի ծանոթ քուրդ նրանց ասում է. «Հայե՛ր, ինչո՞ւ ելաք ձեր տներից, ձեր տունը քանդվի, վաղը զորք կը երթա ձեր գյուղի վրա կռիվ, ձեր գյուղից դուրս հանել պատրաստած պլան էր, եթե կարող եք, փախե՛ք և մի կերպ ձեր գյուղին իմաց տվեք, մեղք են: Դուք էլ փախե՛ք, ի՞նչ բանակ գնալու ժամանակ է: Որոշում կա բոլոր հայերին կա՛ն կոտորեն և կա՛ն հեռացնեն դեպի Բաղդադի կողմեր»:

Քուրդը, որպես մոտիկ ծանոթ մարդ, մեկ-մեկ պատմում է իրենց միջի որոշում: Հասնում են Հացի, Գրիգոր անունով մի ծեր մարդ ուզում է փախչել, դառնալ դեպի գյուղ, բայց ռես Մանուկը չի թողնում, բոլորին տանում են մինչև Խասխետր, հանձնում են տեղի իշխանության ձեռքը, իսկ ռեսը դառնում է դեպի մեր գյուղ, բայց զորքի հրամանատարը պահում է ռեսին՝ ասելով. «Կա՛ց, մեկտեղ կգնանք, ձեր գյուղով անցնենք դեպի Շատախի կողմեր»: Մոտ հազար մարդ հավաքում է, առաջանում է դեպի Ոգմի կողմ: Հասնում են մեր գյուղի սահման՝ Թորբավետի Մեր: Ռեսին թույլ են տալիս, որ առաջուց

ինքը գնա, գյուղին իմաց տա, թե զորքը կգա մեր գյուղ, բայց մեզ վնաս չեն տա, կանցնեն դեպի Շատախի կողմեր, թող չի կասկածեն: Խեղճ ռեսը չի հասկանա քրդերի քաղաքականությունը, որ իրեն խաբում են: Նա միամիտ առաջանում է դեպի մեր գյուղ, իսկ խուժանի խորամանկ ղեկավարը՝ Ռավետ բեկը, հետևից մարդ է ուղարկում, գաղտնի հետևում է ռեսի շարժումներին: Բոլոր քրդերը ծանոթ են մեր գյուղի ելք-մուտքին: Նրանք ռես Մանուկից շուտ են մոտենում արտերի սահմանին, բայց գյուղի ժողովուրդն արդեն կասկածում էր քառասուն ծերացած մարդուն ասկար տանելու համար և միշտ պատրաստ վիճակի մեջ էր պահում իրենց զենքերը: Հարոն¹⁹¹ իր Խլուզենց կոչվող արտի մեջ ցորեն է ջրում, բայց շատ զգույշ: Հանկարծ տեսնում է, որ մի խումբ քրդեր առաջանում են Արծաթա լճի կողմից, թողնում է, վազում դեպի գյուղի կողմ, բայց Հարոյից առաջ շատերն են նկատում: Յուրաքանչյուր մարդ վերցնում է իր զենքը, դիմում է դեպի Մերամոտի բերդի կողմ, բայց քրդերը շուտ են բռնում կարևոր տեղերը: Տղաները ժամանակ չեն ունենում հավաքվելու մի կողմի վրա և մնում են ցիրուցան: Ամեն մարդ աշխատում է շուտ հասնի Կալի սեր կամ Հարագինա սեր: Նրանք շատ կասկածում են Տինից քրդերին, ոչ թե Բարվար խուժանին: Նրա համար կռիվ թարս է ընկնում, որտեղից որ փախ կա, այնտեղից հանգիստ է, կռիվ չի լինում, իսկ որտեղից որ ապահով է գգում ժողովուրդը, կռիվն այն կողմից է սկսվում: Չինված տղաները պոնում են Մերամոտի բերդի և Չիաքարի դիրքերը մինչև Դորբա սեր, իսկ թշնամին պոնում է կարևոր տեղեր, ինչպիսին է Խլուզենց բերդ¹⁹²:

Խլուզենց բերդ կախած է գյուղի հարավի կողմ, ինչպես մի արծիվ կտուց կախեր է ուղիղ գյուղի վրա: Գյուղացիք չեն կարող շարժվել ոչ մի տեղ: Տղաներ կռվում են առջոց, բայց կասկածում են նաև թիկունքի կողմից: Կին, մարդ սկսում են կռվել իրենց ուժի չափ, ինչպես պետք է. տասը-քսան զինված մարդ հազարից ավել ոստիկան և քուրդ խուժանի դեմ: Քրդերի դարդը մարդ սպանել չէր: Նրանք ձգտում ին մտնել գյուղ, առաջինը եկեղեցին քանդեն, որ զենքերը հանեն: Լսած ին, որ մեր եկեղեցու մեջ զենքի պահեստ կա, զնդացիր՝ միտլառս, ինչպես քրդերն ին ասում: Մի տարի առաջ մեր գյուղացին մի պոպոկի ճյուղ է փորում, մեջը բարութ լցնում, կրակում է, քրդեր իմացեր են, թե Ոգմում

189 Խոսքը վերաբերում է գյուղի ռես Մանուկ Պետրոսյանին, որը գյուղի գրագիր Հակոբ Խաչատրյանի և ոգմեցի Զաքար Հովսեփյանի հետ 1916 թ օգոստոսի 21-ին Դորբուր գյուղում տեղեկություններ է հաղորդել գյուղի և 1915 թ. դեպքերի վերաբերյալ (Վշտապատում, էջ 170-174):

190 Նևոս (Նըֆուգ)՝ գլխահարկ, շնչահարկ:

191 Խոսքը վերաբերում է ոգմեցի Հարություն Հակոբյանին (Վշտապատում, էջ 172):

192 1882 թ. փետրվարին ոգմեցի 70-ամյա ծերունի Հակոբը վկայել է, որ Ոգմի «Հարաային արևելեան կողմ, ուրիշ բերդի մը հիմեր ալ կը տեսնուին, զոր տեղացիք «Խլուզենց բերդ» կը յորջորջեն. այս բերդէն 10 վայրկեան հեռի՝ Մոկլաց գետի արևելեան կողմ՝ բարձրիկ բլրի մը վրայ ուրիշ բերդակի մը հիմունք կան «Ամրովայ բերդ» անունով...» (Նահապետեանց Գ. Պ., Տաճկական Հայաստան (Բարվարայ տուն), «Արծազանք», 1882, № 13, 16 մարտի, էջ 200):

թով կա, բայց գլխավոր պատճառը Ոզմի թալան է, որ քանի տարի չեն տարած: Թովի կրակող Բոզե Պետրոսն էր եղած: Հիմա, սիրելի՛ ընթերցող, դու ասա, ի՞նչ անի այն գյուղ, որի անուն տարածված էր ընդհանուր Քրդաստանի մեջ, իսկ մեջտեղ կռվող ուժ չկար: Գյուղի կռվող ժողովուրդ մնացել է խեղճ օրով: Նա մտածում է իր գյուղի ջահելների մասին: «Ի՞նչ եղան այն մեծաքողոզ ջահելներ, գիշեր ու ցերեկ քեֆի, հարսանիքի մեջ ին: Ի՞նչ եղան մեր ազատության ժամին,— ասում ին մեր գեղի ծերեր հարսներ»: Շատ ճիշտ են ասում: Քուրդ խուժան նստել է Խուլզենց, բայց գյուղից մարդ չի կարող տնից տուն գնա: Ի՞նչ անի անտեր ժողովուրդ:

Շատ ճիշտ են մեր Վարդանի խոսքեր, որ մենք դորա շներն ենք, խաչում ենք ուրիշի դուռ, մերը թողել ենք գազանի բերան: Լաթոն քսան-երեսուն մարդ վերցրել-գնացել է Մամուրտանք, Սպարկերտ, Խիզան կաշտպանի, իսկ մենք քսան մարդով Բարատտոտիկ դիրք ենք պաշտպանում: Քառասուն մարդ տարան քանակ, մի քանի մարդ կռվում էր Վանի մեջ, մի քանիսը՝ Ալջավազի կողմեր, էլ ի՞նչ մնաց գյուղում կռվող՝ Վարդանը, Շահենը, Հարոն մի քանի ջահել տղաների հետ: Հովսեփին¹⁹³ որկեցիք իբր օգնության: Հովսեփը, որին Լևոնը թուրք էր տված՝ որպես լիազորված անձ, տասնհինգ մարդով գնաց դեպի Հարմշատ: Նա պետք է Հարմշատից հիսուն մարդ վերցնեք Ոզմին օգնելու համար, բայց մինչև հասնում է Հարմշատ գյուղ, իմանում է, որ գյուղից քառասուն մարդ տարել են ասկար, թե Լաթո գյուղ չի եղել, կռիվ վերջացած է: Ինքն էլ թողնում է Հարմշատը, քաշվում է Մոկսաց Հառեջա սար մինչև կամավորների գալը¹⁹⁴:

Ոչ մի տեղից հույս չկար գյուղին օգնելու, հույս մնաց ժողովրդի վրա: Բայց պետք է ասել, որ եղած տղաներ, մարդ և կին լավ կռվին, քանի որ փամփուշտ կար: Ոզմի անուն կոտոր չի գցին, բայց այդքան քրոյի դեմ հնար չկար երկար պաշտպանվել: Մի քանի օրից հետո թողնում, հեռանում են գյուղից կին, մարդ, երեխա: Անցնում են Մոկս, Գավառ, գյուղում մնում են մի քանի ծերացած մարդ: Խուժանը լցվում է գյուղի մեջ, որովհետև նրանցից շատ մարդ է սպանված եղել, նրանք էլ չեն խնայում ծերերին, որոնք ուխտել ին իրենց տան մեջ մեռնին, ոչ

193 Ոզմեցի Հովսեփ Շահինյանն է, որը սպանվել է Մոկսի կռիվների ժամանակ (Վշտապատում, էջ 173-174):

194 Այս տեղեկությունը չի հավաստվում այլ աղբյուրներով: 1916 թ. օգոստոսի 21-ին ռզմեցիներ ռես Մանուկ Պետրոսյանը, Չաքար Հովսեփյանը և Հակոբ Խաչատրյանը վկայել են. «Ոզմի ռեսը, որ Մոկս էր դեռ, մամակով մեզ կիծացնե իրենց կռվող տղամարդկանց (Շիտան) այս բոլոր անցքերը: Իսկույն 30 զինված ռզմիցիները ռզմիցի Հովսեփ Շահինյանի խմբապետությամբ Մոկս կհասնին, անկե ալ Մամուրտանք... Հովսեփի խումբը Մամուրտանք հասնելուն պես այնտեղ կսկսվի ընդհարում հայերու և թուրք բանակի միջև: Հովսեփը ռզմիցի հայտնի խմբապետ Լաթոյի հետ միասին, կռվելով և ճամբան բաց պահելով, կհաջողի թե՛ ռզմիցիներ և թե՛ ամբողջ Մամուրտանքի ժողովուրդը փախցնել Մոկս» (Վշտապատում, էջ 173):

թե իրենց օջախից հեռանան: Գունկանց¹⁹⁵ Մուրադը, որը 141 տարեկան մարդ էր, ասավ. «Ես չեմ փախի, 150-ի մոտ իմ, իմ գերեզման թող մնա իմ գյուղի հողերի մեջ: Իմ ոսկորներ կը խառնվին իմ պապերի ոսկորների հետ»: Քրդերը նրան սպանին 1915 թվին ապրիլի 7-ին:

Սպանում են նաև Ռաշոնց Խալոյին, որը երկու աչքից քոռ էր և մի քանի ուրիշ ծերերի: Գյուղն էլ վառում են: Հազար տասնհինգ տարվան շինած եկեղեցին քանդում են մինչև տակ: Բայց պետք է ասել, որ կոչաղ տղերքը կռվելով ժողովրդի նամուսը պաշտպանեցին:

Սիրելի՛ ընթերցող, Ոզմա երիտասարդներ, մտածեցե՛ք, եթե հարյուր մարդ գյուղի մեջ լինին ապրիլի վեցին, մենք կարող ի՞նք մեր գյուղի անուն բարձր պահել, թե՞ ոչ: Իհարկե այո՛, կպահինք, ոչ թե մնակ մեր գյուղին, այլ նաև Բարվարի հայերին կարող ինք պաշտպանել: Եթե գյուղի բոլոր ուժեր միացած լինին, մեր քառասուն մարդու քանակ չին տանի, մեր գյուղի հարս Խազալին Բետարի շեխը չէր անպատվի, որ իր պատիվ պահելու համար իրեն գցեց ջուր, խեղդվեց: Մենք ուրիշ գավառներից պակաս ուժ չունինք, մեր գյուղում մոտ երկու հարյուր կռվող մարդ կար: Գուցե շատերին գենք չկար, բայց էլի ուժ էր: Ապրիլի կռվին մենք ամոթանք կրեցինք նրա համար, որ մեր գյուղի քոռ Խալոյին և մի քանի ծերացած մարդու սպանին:

Ոզմեցի Լաթոյի մահը

Վարդանի և Ասպոյի նման մեռավ նաև մեր Ոզմեցի Լաթոն: Նա էլ շատ չարչարվեց ժողովրդի ազատության համար: Լաթոյի Խոլեկա տան կամուրջի¹⁹⁶ կռիվը զարմացրեք են ընդհանուր գավառներին, թե՛ Շատախի և թե՛ Նորտուզի գրավյանցոց բարբարոսներին, որոնք պոմի կերպով ուզում ին մտնել Կաջեթ հայկական գյուղ և դարձնեն իրենց սեպհական կալված: Նույն օրը Լաթոն նշանակված էր կամրջի պահակ: Դա հին ժամանակից շինված Խոլկատան կամուրջն էր՝ Տիգրիսի արևելյան ճյուղ Շատախի գետի վրա: Առավոտ շուտ գրավցիք գալիս են կամրջի վրա, որ անցնեն դեպի Կաջեթ գյուղ, բայց Լաթոյին ասել ին, որ թույլ չտաս մարդ անցնի կամրջից: Քրդեր ուզում ին գոռով անցնեն դեպի գյուղ, ինչ գնով որ լինի: Լաթո կանչում է, թե իրավունք չկա, նրանք չեն լսում Լաթոյին և սկսում են քրդերեն հայիոյել Լաթոյին: Վերջ բան հասնում է կռվի, առաջինը Քալաշ աղեն է կրակում: Նրան օգնում է նրա ընկեր Կոռտ բեկ, իսկ մյուսներ սկսում են սալավոթ¹⁹⁷ կանչել և տալիս են կամրջի

195 Գունկանց Մուրադի թոռը՝ Անդրանիկ Մուրադյանը, աշխատում էր Կիրովի անվան գործարանում: Նրա հոր անունը Մախու էր (ծանոթ՝ հուշագրի):

196 Խոլեկա տան կամ Խոլկատան կամուրջն ավելի հայտնի էր Խոլաքան կամուրջ անվամբ: Գտնվում է Տիգրիս գետի վրա՝ Շատախ գավառի Սազ գյուղից ոչ հեռու:

197 Սալավոթ (սալավաթ)՝ աղոթք:



Խոլտըան կամուրջը Շատախ գավառի Սագ գյուղի մոտ՝ Տիգրիս գետի վրա

հարավի ծայրին, բայց Լաթո էլ չի սպասում և իր դիրքից սկսում է կրակել հինգ կրակ մուսեն գենքով: Կռիվ տևում է մինչև կեսօր, քրդեր տեսնում են իրենց դիմաց մի հասարակ մարդ չի թողնում, հեռանում են: Լաթոյի անուն տարածվում է Նորդուզի բեկերի մեջ և մինչև Շաքր աղին է հասնում Ուզմեցի Լաթոյի անուն: Լաթոն շատ աշխատեց ժողովրդի ազատության համար, բայց նա էլ նպատակի չի հասավ: Կամավորներին տեսավ, երկար չի մնաց և այդ ազատության պտուղ չի վայելեց:

1915 թ. մեր Ուզմեցի մի քանի կին, որ կովի ժամանակ փախել են Խապսեր իրենց երեխաներով, նույնպես նրանց հետ գնացել են: Հիմա Բաղդադի մեջն են ապրում: Այդ չորս ընտանիքները, երբ որ մեր գյուղից փախչում են Բեստար քրդական գյուղ, մտնում են ծանոթ շեխի տուն: Որպես կրոնապետ՝ փոխանակ խղճալու, հակառակ նրանց լացելուն-խնդրելուն, շեխ նրանց դուրս է հանում իր օջախից և նրանցից մի սիրուն կին պռնում է, չի թողնում, որ կեսրոջ հետ գնա: Երեխային վերցնում է, տալիս կեսրոջ ձեռքը, դուրս է հանում գյուղից: Հարսին առնում է որպես իր կին: Բայց քրդեր և շեխի երկու կանայք դեմ են գնում շեխի արածին: Շեխ չի լսում ոչ ոքի: Այդ կին բնիկ մեր գյուղի Բողոն Շաղոյի աղջիկն էր: Կնոջ անուն Խազալ էր: Պատմեմ այդ սևաբախտ կնոջ մասին: Նրան փոքր հասակից պսակին Բադո Հակոյի տղայի հետ, համարյա թե շալակով տարանք եկեղեցին և պսակինք: Բայց աղջիկ շատ սիրուն էր: Մի քանի տարուց հետո Հակոն մեռավ, բայց նրա կինը՝ Թանգոն, լավ պահեց

իր տղային և հարսին: Տղան հոր արհեստ սովորեց՝ որպես ջուլիակ: Նրանց մի տղա եղավ: Տասնչորս թվին Հակոյի տղան՝ Չատոն, թողեց մորը և կնոջը, ինքը եկավ Երևանի կողմեր՝ գեգ անելու: Տասնհինգ թվին գրվեց կամավոր, եկավ երկիր, բայց ո՛չ մորը տեսավ, ո՛չ էլ կնոջը: Որպես ուզմեցու զավակ՝ տեսնում է, որ ճար չկա, իրեն գցում է գետ և խեղդվում է: Այդ կնոջ վրեժ լուծելու համար Լաթո վերցրեց մի քանի կամավոր և մի հիսունի չափ մեր գյուղացի, գնաց, մտավ Բեստար գյուղ, վրեժ լուծեց, քանի մարդ սպանեցին, քանի տներ վառեցին, բայց, ափսոս, շեխին չտեսան: Սրանով Լաթո զոհվեց Բեստարի մեջ, բայց բոլոր քրդեր իմացան, որ Լաթոն մի կնոջ թասիբի համար մեռավ: Պետք է ասել, որ մինչև Լաթոյի զոհվելը շատ քուրդ և աղա մեռան: Ինքն էլ մնաց քուրդ գյուղի մեջ առանց թաղելու: Նրա գլուխ կտրին քրդեր և տարան, կախին Գաշտոկի կամրջից, որ գնացող-եկուղ տեսնեն, թե սա Ուզմեցի Լաթոն է: Այսպես եղավ Լաթոյի վերջը¹⁹⁸:

198 Ուզմեցի Լաթոն (Միհրան Ռաշոյան կամ Չաթոյան) ծնվել է 1880 թ. Ուզմ գյուղում: Երիտասարդ հասակում ընտանիքով փոխադրվում է Վան: 1904 թ., երբ կազմվում է Լեռնապարի շրջանը, Լաթոն ևս դառնում է Իշխանի զինակիցներից: Մասնակցում է բազաթիվ կռիվների (մանրամասն տես՝ **Աբրահամյան Ա.**, Մեր զոհերը, «Գրոշակ», 1928, № 4, էջ 124-127): Լաթոն սպանվել է 33 տարեկանում 1915 թ. հուլիսի 6-ին Բեստար գյուղի կովի ժամանակ. «Ուզմեցի Լաթոն և Մոկացի Թռչուն 15-20 տեղացիներով և նույնչափ կամավորներով Պետար քիւրդաբնակ գիւղի վրայ կ'երթան: Խումբը բաժնուած երեք մասի կը պաշարէ գիւղը և կ'ենթարկէ համազարկելու: Կարճ կռիւ ետք Քիւրդեր թաալիւ կը պոսան: Այդ ժամանակ

Մոկս

1915 թվի ապրիլյան կոիվներից հանգիստ մնաց Մոկսը գավառ:

Կամավորներ հասան Մոկս, բայց Մոկսը քրդեր Մուրթլաբեկի կարգադրութեամբ չի մնացին, Մոկսը թողին, անցան դեպի Սղերդի կողմեր: Ինչքան որ հայեր խնդրվեցին, թե՛ «Մի՛ գնացեք, մենք եղբոր պես ենք, այնպես էլ կմնանք», բայց բեկ չի մնաց: Ասավ. «Ռուսների կամ հայ կամավորների մեջ հագար տեսակ մարդիկ կան, մեր քրդեր չեն դիմանա նրանց մեջ, մեկը մի անպատիվ խոսք կտա, լավ չի լինի մեզ համար: Լավ է, որ մենք հեռանանք, եթե դրություն լավ եղավ, նորից կվերադառնանք մեր տեղեր, իսկ եթե լավ չի եղավ, մեզ ձեռնառու չի մնալ ուրիշ ազգի մեջ: Մեր քուրդ բեկեր համաձայն չեն մնալու, մնաք բարև»:

Մուրթլաբեկը հեռացավ իր սեփական տանից՝ թողնելով իր տան ամեն ինչ, մինչև անգամ իր մեկ ձին չի տարավ, թողեց հայերին: Մուրթլաբեկ կին չուներ, ամուսնացած չէր վաթսուներեկան հասակում:

Մոկսը մեջ մնացին հայեր և մի քանի տուն քահիբ քուրդ: Մինչ այդ մեր Ոգմա ժողովուրդն արդեն մի ամսից ավել շատ հանգիստ և ապահով և՛ հացից և՛ բնակարանից և՛ թե քրդական վախից ապրում էր Մուրթլաբեկի հովանավորության ներքո:

Քարվար գավառի գաղթ

Հագար ինը հարյուր տասնհինգ թվին մեր Ոգմ գյուղի գաղթելուց հետո հերթը հասավ Բորմա չորս գյուղերին: Երկու օր առաջ վեց հատ ոստիկան են ուղարկում Բորմա ասորի գյուղեր՝ նրանց խաբելու, մինչև ջարդարար խուժան կհասնի գյուղեր, նրանց հարստություն կողոպտելու համար: Քրդերը նրանց հարստության հետ ծանոթ են որպես մոտիկ հա-

րևան: Արև մտնելուց հետո հացը չմոռացող մի քուրդ մտնում է Մեծ Բորմ գյուղ, որտեղ ոստիկաններ են նստած: Քուրդը գաղտնի մտնում է նես Ներտյի տուն, նրան դուրս է անում և ասում.

—Ձեր գյուղը վաղ առավոտ կլցվի քրդերով, որոշել են ժողովրդին կոտորեն, ձեր կյանքը փրկեցե՛ք այս գիշեր, ես գաղտնի եմ եկել, իմ անուն չտաք, ոչ որ թող չիմանա իմ գալ:

Քուրդը թողնում, հեռանում է դեպի իրենց Բետար գյուղ: Քրդի գնալուց հետո նես Ներսուն կանչում է իր գյուղի և այնտեղ փախած Ալկև, Բանիջան, Դաշտոկ գյուղերի մեծերին, որոնք 2 օր առաջ փախել ին Բորմ՝ Ներսոյի մոտ և հայտնում է քրդի բերած տեղեկություն: Ամմիջապես մարդ են ուղարկում իրենց գյուղի արևելյան սարի կողմ, որի դիմաց հայաբնակ Հարմշատ գյուղն էր՝ Շատախ գավառի գյուղերից մեկը: Բուպեական կրակ են վառում՝ նախօրոք պայմանավորված լինելով իրար հետ: Կրակ տեսնելուն պես Հարմշատից մոտ քսան-երեսուն մարդ իջնում են գետի ձոր, իսկ Բորմա կողմից իջնում է մի քանի մարդ: Սկսում են երկու կողմից ծառ կտրել և կամուրջ կապել գետի վրա: Քիչ ժամանակից հետո պատրաստում են մի թեթև կամուրջ, վրան փռում են ծառի մանր ճյուղեր և վրան էլ հին թաղիք, փալաս, որ ժողովուրդը հանգիստ անցնի մյուս կողմ: Իսկ Ներսուն ոստիկաններին հաց է տալիս, նրանց հետ քաղցր խոսում մինչև ուշ գիշեր: Պատրաստված ժողովուրդն իր գործ տեսնում է, ինչպես որոշված էր մինչև Ներսոյի դուրս գալ, մեկ՝ ինք և երկու ուրիշ մարդ ին մնացել գյուղի մեջ: Դուռը դրսից գնջով փակում են ոստիկանների վրա, թողնում, հեռանում են ընդմիջտ՝ գրկվելով իրենց հայրենական օջախից: Մնացած հայերը, ասորիք ազատվեցին՝ շնորհիվ Հարմշատի օգնության, որ գիշերով կամուրջ կապին: Նրանց ժողովուրդ անցկացրին իրենց գյուղ¹⁹⁹:

Մնացած գյուղերը՝ Բանեջան, Մալիկ, Դաշտոկ և Հավլանց, հայերին ծանոթ երկու քուրդ աղա գիշեր կանչում են ռեսերին, պատվիրում են. «Վաղը գիշերը ձեր ընդհանուր ժողովուրդ կբերեք Դաշտոկի կամրջի մոտ: Մենք Ալկև գյուղին էլ իմաց տված ենք: Բոլորդ կհավաքվիք մեր որոշած տեղ: Տասը մարդով այնտեղ կլինենք, ձեզ կտանենք մինչև Ոգմա դարեն, նրանից այն կողմ էլ կասկած չկա, այն կողմ բոլոր

Լաթոն իր ընկերներով դիրքերն դուրս կուզայ և կը յառաջանայ դեպի գիւղը: Քիրդերը, տեսնելով Լաթոն՝ քիչ ուժով, չնայած անոնց կրած ահագին կորուստներուն, յարձակման կը դիմեն: Լաթոն, ինչպէս միշտ, այս անգամ ալ չի փախչիր ու կը սպաննուի հերոսական մահով մը: Լաթոի մահէն ետք Թոշուն կամաց-կամաց կը նահանջէ, չկրնալով դիմանալ թշնամու ուժերուն, որոնք շրջակայ գիւղերէն օգնութեան կը հասնէին» (**Շահինեան Արտ.**, Մոկսը 915-ի նահանջի նախօրեակին (Լաթոի սպաննման տարեկիցը), «Աշխատանք», 1916, № 25, էջ 1): Մեկ այլ տեղեկութեամբ՝ Լաթոն սպանվում է Հադին գյուղից ներքև գտնվող «Կարմիր Կարմունջ կոչումով դժուարանցանելի վայրը, Քիրտական մեծ խմբի մը յարձակմանն ենթարկուելով, իր 26 ընկերներով միասին» («Կոչնակ», 1915, № 37, էջ 793): Կամ՝ «Թշնամին գրաւած էր Ոգմ գիւղը, Լաթոի ծննդավայրն ու հայրուկներով այդ արծուարոյնը: Լաթոն կը տանջուէր հոգեպէս, անպատճառ կուզէր յարձակուի գործել գիւղին վրայ և քշել թշնամին: 1915-ի մայիսի վերջերը Լաթոն յարձակեցաւ Ոգմի վրայ, թշնամիները դիմադրեցին ուժեղ կերպով: Կռիւղ ծանր էր և անհաւասար. խիզախ յարձակման մը ժամանակ թշնամիին ուժեղ համագարկին տակ կը նահատակուի Լաթոն, իսկ իր զինակիցները կը հեռանան: Քիրդերը կը ճանչնան Լաթոի դիակը, կը կտրեն գլուխը և խախտելով տանելով ցոյց կու տան կառավարութեան և ժողովուրդին» («Ասպարակական, էջ 266):

199 Բորմի ասորական 4 գյուղերի բնակիչներին արմշատցիների ցույց տված օգնության մասին գրվել է. «Արմշատ գիւղի արեւմտեան կողմի գետի ձախ ափին չորս ասորական գիւղեր կային, գիշեր մը խաբոյկի միջոցով օգնութեան նշան տրուեցան վերոյիշեալ գիւղերու ժողովրդին կողմէն: Գիւղացիները մեծ գոհողութիւններու գնով, խումբ մը զինուորներու պաշտպանութեամբ գերաններու վրայով, եւ թոկերով զանոնք անցուցին իրենց կողմ, ու տեղաւորեցին տուններու մէջ թիւով 140 անձ, որոնք՝ Արմշատի ժողովրդի սեղանին վրայ ապրեցան, մինչեւ հետագային անցան Վան, ապա Երեւան եւ հաստատուեցան Գանձակի շրջանը» (**Ազիզեան Մ.**, Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրութ, 1974, էջ 22):

հայերն են, քուրդ չկա, մենք ձեզ հետ ենք, բայց չու՛տ արեք»։ Այնպես էլ արին։ Այդ չորս գյուղի ժողովուրդ գեղից դուրս եկան գիշերով, հասան Դաշտակա կամուրջ։ Կոտաս աղեն տասը զինված մարդով նրանց վերցնում, բերում է մինչև Ոզմա դարեն, մինչև լուսաբաց մոտ վեց հարյուր մարդ՝ կին, երեխա ազատում են Բարվարի քրդերի ձեռքից։ Այդ աղային շահ չկար այդ հայերից՝ որպես ծանոթ և խեղճ, անշատ մարդիկ։ Բայց թե այդ գյուղերի անասուն կամ հաց ուրիշ ապրանք ի՞նչ եղան, արդեն պարզ է, թե ով տարավ։ Իհարկե, մնաց քրդերին։

Դառնանք դեպի արևմուտքի հայերի վիճակ։ Խասխեր՝ մեր գայմագամի նստած տեղ, նրա մեջի հայեր մնացին իրենց տեղեր, իսկ Հեշատի կամ Առտրվանահի Դեհեցիք մնացին գայլերի բերան մինչև Քամալ փաշի գալու ժամանակ։ Երբ որ Քամալ սկսեց բեկերին, աղաներին կամ շեխերին կախել կամ սպանել, այն ժամանակ Բարվարի աղեք փախան դեպի Բաղդադի կողմեր, տեղական հայերը միացան, նրանց հետ գնացին դեպի իրենց բախտ։ Բայց շատեր հասել են Մոսուլ, Բաղդադի կողմեր։ Թե որքա՞ն են ազատված, հայտնի չէ։

Խիզանը 1915 թ.

Սպարկերտի և Մամուրտանց գավառներն են, նրանց մեկտեղ Խիզանի գավառ, որ բավականին գրագետ մարդ կար։ Շատեր ուրիշ տեղեր դասատու են։ Այդ գավառների պաշտպանություն հանձնված էր տեղի ժողովուրդին։

Տասնհինգ թվին Խիզան, Սպարկերտ, Մամուրտանք կոտորածից ազատ մնացին, թե՛ ժողովուրդ լեզու գտավ տեղական իշխանության հետ, և թե՛ Մամուրտանքի և Սպարկերտի պաշտպանություն հանձնված էր ոգմեցի Լաթոյին²⁰⁰։ Մի քանի ոգմեցի

տղաների և տեղական զինված մարդկանց հետ շրջում են գյուղեր, հույս են տալիս ժողովուրդին, որ չի հուսահատվեն մինչև ռուսներ և կամավորներ կհասնեն։ Լաթոն գնաց Հորոք²⁰¹ գյուղ՝ մյուրուրի մոտ, համոզեց նրան, որ նրա ընտանիքը ապահով կմնա հայերի կողմից, որովհետև Սպարկերտի մեջ քուրդ քիչ կար և ոստիկան քիչ են մյուրուրի մոտ։ Բիթլիս հեռու էր մյուրուրից, նա ստիպված համաձայնեց հայերի հետ։ Այդ ձևով Սպարկերտը ո՛չ ասկար տվեց, և ո՛չ էլ կռիվ եղավ։ Պետք է ասել, որ Լաթո ժողովուրդի համար շատ գործ կատարեց։ Նա թողեց իր սեփական գյուղ, ուրիշ տեղեր պաշտպանեց վերջին ժամին, բայց էլի ժողովուրդի գործ էր կատարում։ Կարկառի կովին Լաթո անցավ Խնձորուտ գյուղ և բավական ժողովուրդ ազատեց, բերեց դեպի Մոկաց կողմ։ Գիշեր ցուրտ Մնարոս սարից անցնել դեպի Մոկաց կողմ շատ դժվար գործ էր, բայց Բոզե Շահեն և Նուշկանց Վարդան և շատեր ոգմում են ժողովուրդին, երեխաներին և պառավներին շալակով հասցնում են մինչև Մոկաց Սորս գյուղ։ Իսկ Թացու²⁰² գյուղի ժողովուրդ տանում են Սպարկերտի Կոտենց²⁰³ կամ Սևքար²⁰⁴ գյուղեր։ Ահա մեր ոգմեցոց ժողովրդասիրություն. ամեն տեղ իրենց բազկի ուժ ցույց տվին, բացի իրենց սեփական գյուղից։

Մեր տեսած ժամանակ ասենք Մղերդից մինչև մեր Ոզմի Մոկաց կամ Բարվարի, նույնիսկ Բիթլիս, ոչ մի տեղ Խիզանի նման դպրոցներ կամ գրագետ մարդ չի կար։ Շատ գյուղեր դպրոց կար, օրինակ Խակ և գյուղ տասը-տասնհինգ վարժապետ կտար ուրիշի գյուղերին²⁰⁵։ Խիզանցիք կուլտուրապես լավ են, բայց շեխ Մեյիդ Ալին Խիզան գավառին հանգիստ չէր թողնում։ Խիզանի և Տատկո դաշտի հայերին կամ քրդերին, առհասարակ բոլոր ժողովուրդին շատ էր տանջում։ Ոչ մի իշխանություն չէր ճանաչում, բացի իրենից, մինչև որ իր գլուխ կերավ։

Պետք է ասել, որ մեր Ոզմի փախչելու օրը, որ ժողովուրդ սարսափահար ցրված է եղել, մի չորս-հինգ ընտանիք փախչում են դեպի Հապրանց վանք, որտեղ որ այն ժամանակ ապրում էր Դահեր աղան²⁰⁶։ Նրանք լավ, ապահով վերադարձան

200 Հայտնի է. «...Սպարկերտ, Մամուրտանք, Շենիձոր, Խիզան հայկական գառառները... ընկել էին հեռու, քրտերի մեջ եւ տակալի վիճակ ունէին: ...այդ շրջանները կապուեցին Վանի հետ, ազատագրուեցին քրտական գուլումներից եւ վերջն ալ, պատերազմի ժամանակ, Վանի հետ կապուած լինելով կոտորածից փրկուեցին՝ շնորհիւ մեր կազմակերպական բռնցիկ խմբերի, որոնք, Ոզմեցի Լաթոյի ղեկավարութեան տակ, այդ շրջանի ժողովրդին պաշտպանեցին 12 ամիս, մինչեւ որ կամատրները հասան եւ փրկեցին ամէնքին, տեղափոխելով Վանի շրջանի ամբողջ ժողովուրդը: Խիզանը, դժբախտաբար, կոտորուել էր տեղական մի քանի հայ աղաների երեսից, մանաւանդ շէյխ Սայիտ Ալիի տղային անմիջական կերպով ենթարկուած լինելու պատճառով» (Աբամ, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 11, էջ 134-135: Տես նաև Աբամը (Աբամի յուշերը), Երևան, 1991, էջ 341-342): Կամ՝ «Լաթոն նշանակեցաւ Մոկսի, Սպարկերտի, Շենիձորի, Մամուրտանքի, Կարկառի և Ոզմի շրջանային Թռուցիկ խմբի ղեկավար և անգնահատելի գործ կատարեց: Ոմանց քաղցր վերաբերմունքով, ոմանց սպառնալիքով, ոմանց ալ, ծայրայեղ պարագային, ծեծով, կը համոզեր զէնքի անհրաժեշտութիւնը և զնէ կուտար: Ու մինչև 1914 թ., մինչեւ համաշխարհային պատերազմի բռնկումը, առանց հանգստի շրջեց իրեն յանձնուած գաւառները և ոգի բոյն աշխատեցաւ թէ զինման, թէ սազակներու սանձահարումներով և թէ նոյնիսկ կրթական գործիչներու օգնելու համար» (Աբրահամեան Ա., Մեր գոները, «Դրօշակ», 1928, № 4, էջ 126):

201 Հորոք գյուղը գտնվում էր Խիզանի Սպարկերտ գավառակում։ Ավելի հայտնի է Հարութ անվանաձևով։
 202 Թացու հայաբնակ գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգի Խիզան գավառում։
 203 Ներքին և Վերին Կոտենց հայաբնակ գյուղերը գտնվում են Խիզան գավառի Սպարկերտ գավառակում։
 204 Սևքար հայաբնակ գյուղը գտնվում է Խիզան գավառի Սպարկերտ գավառակում։
 205 Խակ և գյուղը «...հարուստ է ուսուցիչներով» (Մառտեան, Իմ կեանքի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1929, № 8, էջ 161):
 206 1914 թ. ամռանը «Վանի Ապարանից գիտին Ս. Խաչ նշանատր վանքին հողերն ու կալուածները բռնագրաւելով, տըր դարձած են անոնց՝ Թահիր անուն Քիւրտ բռնակալն ու իր որդիները...: Հիմա, բռնակալը, սկսած է նաեւ քանդել այն հնադարեան եւ պատմական վանքը, եւ անոր փայտերն ու քարերը քաղաք փոխադրել, շէնքեր եւ մկրիթ կառուցանելու համար» («Կոչնակ», 1914, № 40, էջ 955):

վանքից ուրիշ հայերի հետ, որոնք նույնպես վանքում ապրում ին որպես տեղական բնիկ ժողովուրդ: Վանքը Հին Հայաստանի վանքերից մեկն էր, որ կոչվում էր ս. Նշանի վանք: Քրդեր կոչում են Դերա Վարաս: Վանքի պատին գրված էր. հինգերորդ դարի կառույց էր: Շատ անվանի վանք էր Մոկաց հին իշխանության ժամանակ, բայց վերջերս հայեր կային, որ կոչվում էին Հաբրանցիք, մոտ քսաներեսուն տուն:

Գյուղի տեր դարձեր էր աղան, որ ամառ ժամանակ այնտեղն էր ապրում: Պետք է ասել, որ այդ աղայից ոչ մի հայի վնաս չէր հասնի, բացի օգուտից: Նա էլ իր հայ ժողովուրդ պաշտպանեց մինչև վերջին գաղթ, որովհետև ռուս զինվորներ կամ կամավորներ չհասան Բարվարի կողմեր:

Բշրագետի ձախ կողմում ապրում էր Դահերի ազգական Մահմատ աղան: Նրանք միասին դարձան դեպի ավազակ տերրոգի խուժանապետ Ռապատի կողմ, միացան ջարդարարների հետ և թափեցին իրենց աշխատող հայերի գլխին: Մասնակցեցին թալանին և կոտորածին: Մահմատ աղան հայերին թալանեց, բայց Քանալի ձեռք կալավ իր գլխին: Այն թալանչին Մահմատ աղան էր, որ դարձավ սուֆի: Սուֆին պետք է հեռու մնա չար գործից որպես հավատացեալ, բայց նա ավելի ավազակ դուրս եկավ:

Մի օր այդ չար աղայի պատրաստած կրոնական պլան խափանվեց: Այսպես, մի հիսուն աղա և բեկ հավաքում է իրենց մաշիք՝ աղոթելու: Շեխ վեր է կենում, ասում է. «Դուք աղոթեցե՛ք, ես վեր եմ բարձրանում՝ աստծո հետ խոսելու»: Մի քանի թուպեից ելնում է տան կտուրի վրա և գլորում բանգռեկը²⁰⁷: Առաստաղ դրդրում է: Քրդերն ասում են, թե «Շեխ գնաց երկինք՝ Աստծո մոտ»: Տասը թուպեից շեխը ներս է մտնում, բոլորը փաթաթվում են, որ գնաց երկինք, եկավ, բայց Դահեր աղան չի հավատում, անպատվում է. «Մեզ խաբում ես, մեր աչքեր կապում ես, ես չեմ հավատա քեզ»:

Բիթլիսի կոտորածը

Տատիկի գավառը շատ վնաս կրեց, թե՛ մարդ, թե՛ կին, երեխա շատ կոտորվան: Մի գյուղից էլ մի հատ հրացանի ձայն չի լսվեց, որովհետև այն հարստության տեր մարդիկ մի հատ զենք չունին: Բիթլիսին շատ մոտ էր Տատիկի դաշտ: Բիթլիսն առանց կռվի անձնատուր եղավ տեղական թուրքերին: Կոտորվան քիթիսցիք²⁰⁸, որովհետև բոլորովին պատրաստություն չունին, զենք չկար քաղաքի մեջ:

207 Բանգռեկ (բանգոռ, բանգորար)՝ գլորան, գլանաձև քար կտուրն ամրացնելու համար:

208 Բիթլիսի հայերի կոտորածը տեղի է ունեցել 1915 թ. մայիսի 20-22-ը: Ջարդը սկսվել է Խալիլ բեյի բանակի Բաղեշ հասնելուց երկու-երեք օր հետո: Գլխավոր դերակատարներն են Ապտյուլ Խալաֆ բեյը, Խալիլ բեյը, Վանի կուսակալ Ջեվդեթը (մանրամասն տես՝ «Կոչակ», 1916, № 7, էջ 175):

Եթե Բիթլիսի կամ նրա բոլոր գյուղերի հայեր զենք ունենալին իրենց ձեռքին կամ ազգային սեր, ժողովրդական կազմակերպություն լինե՞ր քաղաքի կամ գյուղերի մեջ, չէին կոտորվի: Բիթլիսի հարմարություն Վանից շատ լավ էր կռվի համար: Պետք է ասել, որ Բիթլիսի միջի թուրքերը հայերից շատ ին, բայց շատ լավ դիրք ունե՞ր, եթե ժամանակին իմաց տային Դատվան, Ուրտաբ, Խլաթի մոտիկ Ծղակ, Կծվակ, Կարմունց և Գոզալդարի գյուղերին, չէին կոտորվի: Ընդհանուր Տատկո դաշտի հայերի գյուղերը բոլոր քաղաքին մոտիկ ին: Բայց մի տեղ, որ ժողովրդի մեջ միություն չեղավ, ամեն մարդ իր համար մտածեց, այդպես էլ կլինի, ինչպես եղավ Բիթլիս քաղաքի և շրջակա գյուղերի հայերի հանդեպ:

Առակն ասում է. «Որտեղ չկա մի մեծ մարդ, այնտեղ մի մեծ քար դիր, որտեղ չկա ժողովրդական սեր կամ կազմակերպություն, այնտեղ ավերակ է»:

Բիթլիսի հայերը հավատացին իրենց հարևան թուրք բնակիչներին, բայց նրանք ժամանակին չի կարողացան պաշտպանել իրենց մոտիկ հարևանին անգամ, որովհետև Ջավդաթ փաշեն Վանից ամոթով փախավ և մոտ թափեց Բիթլիսի հայերի վրա:

Խախրև գյուղից Դարմանյան Տիգրան փախավ, եկավ մեզ մոտ: Նա ասում էր. «Եթե մի հարյուր մարդ դուրս գայինք Քոբռո սարի գլուխ, մենք մեր ամբողջ ժողովրդին կպաշտպանեինք ոչ թե մեկ ամիս, այլ երկու ամիս: Հաց կար, սար ապահով էր»: Մոտիկ գյուղերից տասը հազար ժողովուրդ կարող էր տեղավորել անվանի Քոբռոն և Գոզալտարի սարերի մեջ: Մայիսը վերջացավ, նոր կկարողանաս ման գալ մեր սարերում: Սարերի մեջ ինչքան ուզես քարայր կամ մարաղա կա: Այնպես տեղ կա, որ հազար մարդ կտեղավորի իր մեջը: Նույնպես տեղեր կան Բաբշեն սարի կամ Նամրուքի սարերի մեջ: Բայց դեկավար չկար, որ Վանի ման ժողովրդին պաշտպանություն ցույց տար, որ մեր ժողովուրդ կարողանար իր կյանք փրկել քուրդ ջարդարարներից:

Բիթլիսի կամ շրջակա գյուղերի հայերը մտածում են մնակ ոսկի հավաքելու մասին: Ոչ ոք զենքի մասին չէր մտածում, թե ժամանակին պետք կլինի ժողովրդի ազատության համար:

–Ես,– ասում է Դարմանյան Տիգրան,– մեր գյուղի մի քանի մարդու ասի զենք չունենք, բայց տեղին ծանոթ ենք, կարող ենք փախչենք դեպի Կարճկան, դեպի Հագոլ սար, ուր կարճկանցիք կռվում են: Մարդ ինձ չի լսեց: Ես մեկ բարեկամ ունեի՝ Մերոք անունով: Նա էլ չեկավ, ես էլ ստիպված մնակ փախա, եկա ձեզ մոտ:

Կարճկան. Ուրանցի Վարդանը

Կարճկան գավառն ընկնում է Վանա ծովի հարավարևմտյան երկարությամբ՝ սկսած Թուխ գետի ափից մինչև Կապուտկողա վանք: Մի կողմում ընկ-

նում է ծովը, իսկ հարավի կողմում Խիզան և Սյաք-կերտի գավառներն են: Կարճկանը Վանի վիլայեթի վրա է ընկնում: Կան անտառոտ սարեր, բայց շատ մեծ ծառեր չկան, թուփ են, որոնք ժողովուրդը լուզով²⁰⁹ կտրում է և ձմեռը տալիս այծերին կեր: Տեղի հողերը լավ են, բայց ոչ թե Արճեշի նման բերքատու: Մի քանի գյուղեր դաշտեր ունեն, երկիրը գլխավորապես սարոտ է: Ժողովրդի շատ կամ հողագործ մասը հայն է: Շատ գյուղեր դպրոց ունեին: Առաջին տեղ էր պնդում Ուրանց²¹⁰ գյուղը, որտեղ ապրում էր Վարդան աղեն: Տասնհինգ թվի կռիվներին մարդն իր խելքությամբ վտանգից շատ ժողովուրդ փրկեց: Զինված մարդկանց վերցրեց, բարձրացավ Հագով սար և ընդհանուր ժողովրդին, որոնք իրեն լսեցին, քաշեց սար: Մարդիկ կովեցին մինչև ռուսների և կամավորների գալը:

Իննսունվեց թվի հայկական կոտորածի ժամանակ Վարդանի ծնողներին սպանում է իրենց հարևան գյուղի Շաբադ աղան: Ինքը պատանի հասակում փախչում է Կովկասի կողմեր, հասնում է Բաքու: Անտեղ մնում է մինչև հինգ թիվ: Վերադառնում է իրենց գյուղ, տեսնում է իր ծնողների սպանողին, զարկում է, աղային սպանում է: Տղան՝ Կասն անունով լամուկը, հարձակվում է Վարդանի վրա, նրան էլ զգում է հայրիկի կողքին: Դրանից հետո Վարդանը դառնում է կաշաղ ֆիտայի, բայց Վանի կոմիտեն Վարդանին չէր սիրում: Ասում էին, թե Բաքվի ջրից ես խմել: Քանի անգամ ուզեցին մի պատճառ գտնեն, որ մեջտեղից խանեն, բայց ժողովուրդը նրա կողմն էր, նրան էր պաշտպանում, ինքն էլ ժողովրդին էր շատ հարգում: Թուրք կառավարությունը շատ մարդ ուղարկեց նրան պնդելու, բայց չի հաջողեց: Վարդանը մեռավ կամավորների գալուց մի շաբաթ հետո: Մար փախավ, հիվանդացավ, մեռավ իր հողի մեջ, թաղին ծնողների մոտ²¹¹:

209 Կացնի տեսքով դանակ:

210 Մինչև 1915 թ. հայաբնակ էր: Վերանվանվել է Անադերե:

211 Ուրանցի 30-ամյա Վարդան Մուրադյանի մահվան այս տեղեկությունը աղբյուրներով չի հավաստվում: Նրա մասին հայտնի է, որ 1915 թ. ապրիլին իր խմբով պաշտպանում է օղվանցիներին, սակայն մեկ շաբաթ անց, երբ որոշում է ազատել Փիկանց քրդաբնակ գյուղ տարված հայ կանանց և երեխաներին, կռիվ ժամանակ ծանր վիրավորվում է. «Ասիկա Վարդանի մղած վերջին հերոսական կռիւն է, ուր վերջ կը գտնէ իր արկածալից կեանքը: ...Վարդանի անունը սարսափ կազդեր Կարճկանի քիւրդ բնակչութեան և մանաւանդ քիւրդ աուագակախումբերուն, որոնց հայակեր ախորժակներուն սանձ դրած էր Վարդան» (մանրամասն տես **Փոքրան**, Ուրանցի Վարդանը, «Աշխատանք», 1916, № 39, էջ 2-3): Վարդանը ծանր վիրավորվում է, կարողանում են նրան տեղափոխել Ռշտունիքի Վառենց գյուղ՝ Քեռու բանակատեղ, ապա Վանի հիվանդանոց, որտեղ էլ մայիսի 17-ին վախճանվում է (մանրամասն տես **Մարկոսեան Խ.**, Ուրանցի Վարդանը, «Կարագ», 1965 (բացառիկ՝ նուիրում Մեծ եղեռնի եւ Վանի հերոսամարտի 50-ամեակի տարեդարձներուն, էջ 187-188: **Բարսեղեան Արտ.**, Գիւղացի հերոսներ, «Աշխատանք», 1916, № 6, էջ 3):

Վալատ ռուսական բանակում

Մինչև ռուսների և կամավորների գալը լսեցի, որ մեր գյուղի ժողովուրդ գյուղ վառելուց հետո փախած են Մոկաց գյուղեր: Ինձ հաջողվեց Մոկա գնալ և մեր ժողովրդին տեղափոխել դեպի Ոստան կամ Հայոց Ձորի գյուղեր:

Տեղափոխեցի նրանց, որոնք ինձ լսեցին: Տեղավորեցինք ժողովրդին Չաղար սուրբ Նշանա վանք, նրանից հետո՝ Գուգանց²¹² գյուղ, որի քրդեր փախած ին իրենց տեղերից: Բայց պետք է ասել, որ գյուղ մեզ տվին արեւոդով՝ ժամանակավոր կառավարության կողմից: Տունս տեղավորելուց հետո նորից վերադարձա Ոստան՝ Լևոնի մոտ:

Կամավորներ անցան դեպի Կարճկան, վերջում եկավ Անդրանիկի բանակ, որ գիշեր մնաց Ոստան: Նա եկած էր Խոշաբի կողմից, Բաշկալան գրավելուց հետո: Այն ժամանակ Ջավաթ փաշեն գնացել էր Բաշկալայի կողմի ճակատ, չէր դիմացել Անդրանիկի հարձակմանը, փախել, անցել էր Կորդվացոց լեռներից: Անցավ Մղերդի մոտով, եկավ Բիթլիսի կռիվ դեկավարելու: Անդրանիկ Ոստանից մեկնեց դեպի Կարճկանի կողմ: Մյուս օր եկավ ռուսաց բանակ, որ մի օր ուշացավ դաշտային թուփերի համար, որ Հանգեղի²¹³ կամուրջ չէր դիմացել թուփերի ծանրության տակ, նստել էր գետի մեջ: Ռուսներին հայ ժողովուրդ դիմեց՝ ուռա՝ կանչելով: Ռուսներ մեկ օր մնացին Ոստանում հանգստանալու: Մյուս օր Լևոն ինձ կանչեց, ասավ.

–Ռուս բանակի յոթերորդ վաշտը մի մարդ է պահանջում որպես երկրին ծանոթ, ես քեզ եմ նախատեսել: Դու բոլորիս վալադն իս²¹⁴ բոլոր գավառներին, բայց թողնում եմ քո կամքին:

Դա այն ժամանակն էր, որ նահանջը սկսել էր արդեն, և ռուսները հայ կամավորների հետ եկան դեպի սահման ժողովրդի հետ մեկտեղ: Մի քիչ ազատության շունչ քաշելուց հետո նորից ընկան դժվար ճանապարհի վրա, որ ավելի վատ եղավ, քան թե կովի ժամանակ: Ավելի շատ զոհ տվին, քան կովի օրերին:

Վանի ժամանակավոր կառավարությունը Լևոնին ընտրել ին Ոստանի գավառապետ: Նա ինձ տվեց մի վաշտ՝ ռուս կազակների հետ, հենց որ նորից եկան մեզ մոտ Փեսանդաշտից իջնելու ժամանակ:

Ես ժամանակ ունեցա տունս, մորս, կնոջս, եղբայրներիս, բոլորին տեսնելու, որոնց չէի տեսել մեր գյուղից դուրս գալուց հետո: Շատ ուրախ եղա, որ մերոնք բոլորը լավ են, ազատված կոտորածից, ամեն վտանգից: Բայց իմ ուրախություն քիչ եղավ: Միրոս էլի մեր գյուղի բամբասանքներից վիրավորված էր, և չէի ուզում շատ մարդկանց՝ ինձ զրպար-

212 Գյուղ Հայոց Ձոր գավառում:

213 Ավելի հայտնի է Անգղ անվանաձևով: Գտնվում է համանուն գետի ափին՝ Հայոց Ձոր գավառում:

214 Առաջնորդ:

տողներին տեսնել: Դրա համար էլ հոժար կանքովս ընդունեցի Լևոնի առաջարկը. մտա սիբիրական կազակների վաշտ, չի նայած որ նրանց լեզուն չէի հասկանում: Ձենքերս վերցրի, մտա յոթերորդ վաշտ, որի պետը շատ լավ մարդ էր: Նա իմ զենքերը փոխեց և ինձ մի լավ ձի տվեց, քանի որ վաշտը ձիավոր էր: Իմ բախտից մի հայ բուժակ դուրս եկավ նրանց միջից, և ես մնացի նրանց մոտ մինչև վերջ: Բայց պետք է խոստովանեմ, որ ես ձի հեծնելու սովոր չէի, իսկ նրանք բոլոր ձիավոր ին, բայց էդ էլ անցավ շուտով: Շուտով սովորեցի ձի նստել և նրանց հետ գնացի շատ տեղեր՝ որպես վալադ, լավ ծանոթ երկրին, տեղին: Նրանք առանց իմ ցուցմունքի առաջ կամ հետ չին շարժվում: Ինձ ճանաչին որպես շատ հավատարիմ մարդ:

Վաշտի մեջ երկու հայ կար, մեկ Ղանարլուի Իմանշալու²¹⁵ գյուղից էր, անունը՝ Արշակ, իսկ մյուսն էլ ախլալաքցի էր, անունը՝ Բենո: Նա տասնապետ էր, ինձ տվին նրա մոտ: Բոլոր վաշտի ձիանք միատեսակ էին, իրենք սիպիրսկի կազակ են: Ես ընկա առաջին հարյուրակի մեջ, որի հարյուրապետին ասում ին Իվան Իվանով: Նրան պարոն իմ ասում, բայց նա ասում էր.

–Ինձ ասա տավարիչ (ընկեր):

Առաջ իմացա, որ իր անունն է «տավարիչ», բայց հետո իմացա, որ ասում էր, թե ինձ ընկեր պետ ասա, դե ես ռուսերեն չէի հասկանում: Վաշտ շարժվեց առաջ՝ դեպի Կարճկան, քանի օրից հետո կովեցիներ, հասանք Դատվանի և Բիթլիսի դուրան²¹⁶:

Մեր վաշտին տվին դեպի աջ կողմի թուրքական սրի հեծյալ բանակ: Կռիվը սկսեց սրերով: Սուր բանացնել չէի իմանում, բայց երբ որ տեսա մի քանի թուրք իմ հարյուրապետին նեղում են, էլ չի համբերեցի, ատրճանակով խփի երկուսին, մնացածներ թողին, փախան: Իվանովին ազատեցի, բայց վաշտի հրամանատար Սոկոլով ինձ մեղադրեց, թե ինչո՞ւ կրակիր, թրի կռիվ ժամանակ իրավունք չկա, որ զենք կրակեն: Բայց զինվորներն ինձ պաշտպանին՝ ասելով, թե սրով կռիվ չի տեսել, չի իմանում սուր բանացնել: Բայց երբ հարյուրապետին զեկուցեց, նա ասավ. «Մալադե՛ց, դու կպարզատարվես իմ կողմից» և մի քանի օրից տվեց մի խաչ: Մեր կռիվը շատ երկար չի տևեց: Շուտով հրաման եկավ, թե նահանջեք: Մենք հետ եկանք Դատվան՝ ծովափ: Ես տեսա, որ մի շարան հայեր կապված են իրար ու սպանված են: Նրանք բոլոր գամոչիքն ին, որ թուրքերին Վանից տեղափոխել ին Դատվան, բոլորին կապած տեղ սպանել են ծովի ափին: Ես խնդրեցի կազակներին, որ ինձ օգնեն, և հայերին թաղենք: Մարդիկ լսեցին և օգնեցին, մի քանի մարդ թաղինք, բայց հրաման եկավ. «Թողե՛ք թաղում, դառնում ենք

դեպի Վան»: Մի տասը մարդ էր մնացել առանց թաղելու: Ես նորից խնդրեցի Սոկոլովին՝ վաշտի պետին: Նա թույլ տվեց և ասաց, որ մի ժամ կտա: Նորից սկսեցինք թաղել: Մնացած տասը մարդուն թաղելուց հետո պատրաստվեցինք և ճանապարհ ընկանք դեպի հետ՝ դեպի Ոստան: Բայց մինչև հասա Ոստան, Լևոնին տեսա, որ պատրաստված էր մեկնելու, ողջ ժողովուրդը չկար: Լևոնից հարցրի մեր տան մասին, թե ի՞նչ եղան: Նա ասաց.

–Քու եղբայր Սարգիսն եկավ, ես նրան բարձկան անասուն տվի, երկու հատ եզ, մի կով: Նրանք մի շաբաթ առաջ են գնացել, դու արի ինձ հետ, մեկտեղ գնանք:

Բայց ես իմ ռուս ընկերներին չի թողի, մնացի նրանց հետ: Մյուս օրը վաշտի պետին հրաման եկավ, թե քո վաշտը նշանակված է հետնապահ, դու պետք է մնաս բոլորից վերջ, մինչև ժողովուրդ մաքրվի ամեն տեղից: Բացի հրամանից՝ Լևոնը գրոթյուն ցույց տվեց, թե Շատախի կողմի ժողովուրդ մնացած է, դուք պետք է մեկնեք դեպի Շատախ, որպես հետնապահ, վերջում դուք եք մնալու: Վաշտը պատրաստվեց մեկնելու, իսկ վաշտի պետն ինձ ասավ.

–Մենք ծանոթ չենք Շատախի ձորերին, քարտեզը լավ չի ցույց տալիս, դու կա՛ց ինձ մոտ, մինչև հասնենք Կովկաս: Ես քեզ ամսական հիսուն մանեթ կտամ և տեղ հասնելու պես տունդ կապահովեմ ամեն բանով: Դու մեր վաշտի զինվորն ես քո հոժար կամքով և աջակցել ես կռիվներում և ամեն տեղ:

–Լա՛վ,– ասի,– կմնամ, միայն թե հասնենք տեղ, ինձ թույլ տաս, որ գնամ, տունս տեսնեմ:

–Շատ լավ, դու մեզ տա՛ր Շատախ, վերադառնալուն ինչ ժամանակ ուզես, քեզ թույլ կտամ:

Կեսօրից հետո մեկնեցինք և Արտուսի ձորի կողմից անցանք Շիտանի դաշտ:

Մութ չէր ընկել, որ հասանք Հառեղ²¹⁷ գյուղ: Սոկոլովը մեր տասնապետի միջոցով ինձ հայտնեց. «Դու լավ ես իմանում տեղեր, կարևոր տեղերում պահակ նշանակի՛ր, զիշերը մնալու ենք այստեղ»: Կատարեցի պետի հրամանը. կարևոր տեղերում տասական զինվոր դնելուց հետո վերադարձա տեղս, ուր իմ ընկեր Արշակը մեզ համար ուտելեղեն էր պատրաստում: Մենք նոր էինք սկսել հաց ուտել, որ մի կազակ զինվոր եկավ և ասավ, թե մի տան մեջ քուրդ կա, արի՛, քեզ կանչում են: Ես վեր կացա, գնացի: Դե ի՛նչ արած, ես նրանց վալադն եմ, երեք հարյուր զինվոր ինձ են նայում: Գնացի, տեսա ի՛նչ. մի տասը կազակ զենքեր պահած մի տան դուռ կանգնեցին, ներս չեն մտնում: Ինձ ասին, թե տան մեջ լիք քուրդ են:

–Լա՛վ,– ասի,– քուրդ որտեղի՞ց եկավ, մտավ տան մեջ, քանի որ հայերը նոր են սնեթից հեռացել:

215 Ղանարլուի Իմանշալու գյուղն Արարատի մարզի (Արտաշատի շրջան) Մխչյան գյուղն է:

216 Տափարակ, հարթ:

217 Հառեղ (Առեղ) հայաբնակ գյուղը գտնվում է Վանի նահանգի Շատախ գավառում՝ Շատախից 19,5 կմ հյուսիս:

Ներս մտա, տեսա ի՛նչ, մի մարդ նստած է տան մեջ: Հիվանդ է, մոտեցա և տեսա, որ Կարադերա վանքի²¹⁸ իմ լավ ծանոթ բարեկամ վանահայր Սախակն է:

–Քեռի՛ Սախակ, ինչո՞ւ մնակ ես, ի՞նչ է պատահել, ձեր տուն ո՞ր է, ինչո՞ւ ես մնակ մնացել:

Նա պատասխան չի տվեց, սկսեց լացել:

–Տղաները տուն տարան դեպի Ոստան, որ մի հաս ջորի կամ եզ բերեն, ինձ տանեն, բայց երկու օր է, չկան: Ես մնացի այստեղ մնակ սոված: Ի սեր Աստուծո, մի՛ ճար արա, Ամրո՛ ջան, մեռնում եմ սոված:

Դուրս եկա տանից, մեր տասնապետ Բենոյի մասի, որ քուրդ չէ, հայ է: Ռուսները գնացին և հաց, շաքար, միս բերին տվին: Քեռի Սախակը կերավ: Երկու ժամ հետո մութ էր, նրա տղաները մի եզ բերին և իրենց հորը տարան:

Առավոտ շուտ վեր կացա, գնացի վաշտի պետի վրանի կողմ: Պահակին իմաց տվի, որ պետին իմաց տա իմ մասին: Պետը զարթոնք էր արդեն: Նա ինձ ասավ.

–Մինչև զինվորները նախաճաշ չանեն, չեք գնալու, դու գնա՛, չայ խմիր, հետո կմեկնենք քո ցույց տված կողմեր:

Բայց ես նրան հասկացրի, թե այստեղ լավ չէ, հրաման տուր թող պատրաստվեն, գնանք, մոտիկ Սվտկին գյուղ շատ հարմար տեղ է և ապահով, թող այնտեղ ճաշեն, հանգիստ առնեն: Մենք այնտեղ կիմանանք ժողովրդի գնալու կամ մնալու մասին: Մարդն ինձ լսեց և հրաման տվեց մեկնելու: Երեք հարյուր մարդ մեկ մարդու նման ձի նստեցին, և շարժվեցինք դեպի Սվտկին գյուղ: Մենք հասանք մեծ ճանապարհին, զարմացա, որ տեսա վերջին գաղղներին: Կռոխվանքի գյուղացիքն ինձ Հարոյի ղեկավարությամբ: Հարոն հին զինվոր էր եղել Խանասորի կռիվների ժամանակ: Ես Հարոյին հարցրի, թե ո՞վ է մնացել հետ: Նա ասավ.

–Վերջում մենք ենք, մեզնից հետ ժողովուրդ չկա:

Բայց ինքը տեղյակ չէր բոլորից: Հարոն մի ձի էր նստել, որ մաքուր արաբական ցեղի էր: Ռուսները տեսան, որ ձին շատ լավ է, բայց վրա նստող մի թափափված, հին շորերով մարդ է, ուզեցին ձին ձեռքից առնեն: Թույլ չի տվի, որ մարդու ձին առնեն, ասի, որ իմ քեռին է: Ռուսներ հեռացան:

Հարոյին ասի.

–Քո ձին քո գլուխ կուտե՛, բե՛ր փոխենք, մինչև տեղ հասնենք, նոր քո ձին քեզ կտամ:

Բայց Հարոն չի լսեց ինձ, և ձին նրա գլուխ կերավ Աղբակի դաշտում. ձին տարան, իրեն էլ սպանին: Հարոյենց քոչեր անցան, մենք հասանք Սվտկենց գյուղ: Արևն արդեն դուրս էր եկել: Մի պա-

հակ նշանակեցի գյուղից ներքև՝ դեպի Թաղ, մնացած զինվորները հանգստանում են: Նստած եմ Բենոյի և Արշակի հետ, խոսում ինք, որ ռուսներ լավ մարդ են, որ եկան, հասան մինչև այս ձորեր: Տե՛ս, ինչքան քեզ սիրում են և քո խոսքեր չեն մերժում, իրենց մեջ խոսում են, թե դու շատ զգույշ տղա ես և ծանոթ երկին:

Մեկ էլ հանկարծ երկու կազակ երկու մարդու պոնած բերում են դեպի մեզ: Եկան մոտիկ: Տեսա ի՞նչ, Մարկեթ գյուղի Շերոյի տղաներն են՝ Ջիտոն ու Պետրոսը, Կարեի եղբայրներ, որոնց լավ ծանոթ էի շուտվանից:

Տեսա տղաներին, զարմացա, թե սրանց որտեղի՞ց են պոնել, բերել: Ասին.

–Մեզ պոնին արքայուրի վերևից, բայց մեզ շատ են չարչարել, մենք խաչ հանեցինք, թե չէ մեզ կսպանին, լավ ենք ազատվել, վնաս չունի:

Ռուսներ, որ իմացան հայ ին, թողին ինձ մոտ, գնացին: Ես հարցրի, նրանք լացելով պատմեցին իրենց և Հարմշատ գյուղերի դրություն, ու չեն իմացել, թե Վան գաղթում է:

–Լավ,– ասի ես,– հիմա ձեր կամ Հարմշատոց ժողովուրդը որտե՞ղ է:

Նրանք պատմին, թե մեր ժողովուրդներ մեկտեղ են:

–Մենք,– ասում է Պետրոս,– հասանք Մլախիրսո, մեր դեմ կտրեց քրդական մի ուժեղ խումբ, հիմա տղաներ կռվում են քրդերի դեմ, մեզ ուղարկեցին Շատախ՝ օգնություն կանչելու: Եկանք Շատախ, մարդ չկար: Եկանք, որ Սվտկենց հավար կանչենք, էն էլ այս մարդիկ պոնին, բերին ձեզ մոտ, բայց մենք քեզ էլ չենք ճանաչում:

Իմ անուն տվի, նոր հանգստացան և ասին, թե ճիշտ է, որ ասում են. «Շեր ժբուշելան իսլաս, նաքի»²¹⁹:

–Հիմա որ պատահար, մեր ժողովուրդ փրկված է,– ասաց Պետրոսը:

Վեր կացա և տասնապետ Բենոյի հետ դիմեցի մեր հարյուրապետ Իվանին, ամենից առաջ նրան պատմեցի երկու հազար հայ ժողովրդի մասին, որ եթե մենք նրանց չի հասնենք, նրանք բոլոր կորած են: Նա վեր կացավ և գնացինք վաշտապետի մոտ: Նա ինձ պատասխանեց, թե դու գիտես, որ եթե հնարավորություն կա, չեմ մերժի: Նրան մի քիչ խաբի, ասի, որ շատ մոտիկ տեղ է, մենք կարող ենք ժողովրդին շատ հանգիստ ազատել, միայն թե ինձ մի երկու տասնյակ զինվոր տաս:

–Չորս տասնյակ կտամ,– ասաց վաշտի պետ:

Մենք Սվտկինց գյուղից դուրս եկանք: Ես տասը զինվորով առաջ ընկա: Թաղին մոտեցանք, տեսանք, որ Թաղի մեջ շատ մարդ է շարժվում: Մոտեցանք, տեսանք, որ Կռոխի²²⁰ գյուղի ասորի ժողո-

218 Կարադերի վանքը գտնվում էր Շատախի համանուն գյուղում:

219 «Աղյուծ անտառից չի վերջանա»:

220 Կռոխի գյուղը Շատախ գավառի ասորաբնակ գյուղերից էր:

վորդ լցված է քաղաք, սկսել են ապրանք հավաքել, ոնց որ բանից տեղյակ չեն: Շատախի Թաղի լավ խանութներ, տներ լիքն է, ամեն տեսակի ապրանք հավաքում, դիզում են մեկտեղի վրա: Երբ մեզ տեսան, բոլոր թողին, փախան: Նրանց քրդերեն մի քանի խոսք հասկացրի, թե թողնեն, հեռանան դեպի Վան, քանի թուրք զորք չի մոտեցել Վանին: Ասորիք հեռացան դեպի Սվտկենց գյուղ, իսկ մենք մտանք Շատախի հնագույն ավան, որ կոչվում էր Թաղ: Վաշտի պետն ինձ ասաց. «Գնա՛, պահակներին տեղավորի՛ր, որտեղ պետք է»: Ես մի տասնյակ տարա գորանոցի մոտ՝ մեկ հովանաճանտ տան մոտ, մեկ էլ Շատախի մի տան մոտ՝ դեպի Խուլիկի կամուրջ, իսկ իմ խնդրանք շուտով ինձ մի երեսուն կազակ տվեց Հարմշատի ժողովրդին փրկելու համար: Խնդրեցի, որ Բենոյին տա, ռուսերեն չեմ կարող հասկացնել զինվորներին կովի ժամանակ:

–Լավ,– ասավ պետը,– թող նրա տասնյակն էլ գա ձեզ հետ:

Մենք ձիանց նստանք: Առաջ ընկա, զինվորներն իմ հետևից, բայց մեր շարժվելուց առաջ վաշտի պետն ինձ ասաց. «Այս մարդկանց պատասխանատուն դու ես, երեկոյան կվերադառնաս մեզ մոտ՝ մեր որոշված տեղ՝ Սվտկինի խան, մենք այնտեղ կլինենք», իսկ զինվորներին հրաման տվեց ու ասավ. «Մինչև ձեր վերադարձ այս մարդուն կլսեք, ձեր հրամանատար սա է, դե բարի ճանապարհ ձեզ»:

Արմշատ գյուղի գաղթը. 1915 թ. հուլիսի 7

Ուր ժամ կա մինչև մութ ընկնել: Մենք շարժվեցինք դեպի Տաղազպար²²¹ գյուղ: Անցանք Բիֆերան²²² գյուղի միջից, բարձրացանք Ծիծանց²²³ գյուղ, այնտեղ կես ժամ հանգստանալուց հետո դուրս եկանք դեպի Մլատզան, դեպի Առնոս սար, որ մեր գավառների ամենաբարձր սարն է: Մենք Մլատզանով բարձրացանք մինչև Կանի տղան գողերի աղբյուր, Մլատզան գյուղերի թև: Հասանք Առնոսի աջ կողմի վրա, որ նայում է դեպի Մոկլաց անվանի գավառ, որ մնաց անտեր, մնաց Նուրիքեկի մեռած լամուկին: Ես այնտեղ թողի տասը զինվոր՝ որպես մեր թիկունքի պաշտպան և պատվիրեցի, որ Մոկլաց կողմից հայ չկա, եթե հինգ մարդուց ավելի մարդ եկավ, քուրդ են, խփե՛ք, իսկ քիչին պռնեք, մինչև մենք վերադառնանք: Նրանց այնտեղ թողնելուց հետո մենք անցանք քոչարների ճանապարհով դեպի Մլասիքուն, դեպի Ծափանց գյուղի դուռ: Բայց պետք է ասել, որ հարմշատցիք լավ տեղեր շատ լավ ին դիրք պռնած: Մեր աջ՝ Արտոսի կողմից տեսա մի խումբ քրդեր, որ հայերի ճանա-

պարհն էին փակում: Նրանց խոսքից իմացա, որ քրդերը Բարվարի լեզվով են խոսում: Մեզ տեսնելուն պես կանգ առան, ձիուց իջանք, սկսինք կրակել դեպի քրդեր: Քսան ռուսներ նրանց տվին զարքի²²⁴ տակ, քուրդ կը դիմանա՞ կազակների զենքի դեմ, քրդեր փախան, ինչպես նապաստակը որսկանի դեմից: Ռուսներին թողի, առաջացա դեպի հայերի դիրքերի կողմ: Սպիտակ շոր կապի հրացանից, որ հայեր չի կրակեն: Շուտով հեռվից լսեցի իմ ծանոթ Կարապետի ձայն, որին մենք ասում ինք Կարե: Կանչի, որ չկրակեն, մոտեցա նրանց, նրանք ինձ չի ճանաչեցին առաջ, բայց երբ խոսեցի, ուրախությամբ լաց եղան:

Կարեն ասավ.
–Խտր Ալեաս²²⁵, դու այս սարի գլո՞ւխ:

–Լավ,– ասի ես,– լացի ժամանակ չի, վեր կացեք, Մելիքին²²⁶ իմա՛ց տվեք, որ ինչ որ կա, բոլոր թափեն, մնակ իրենց կյանք ազատեն: Երեխաներին վերցրե՛ք, ուղիղ դեպի Շատախ, ուր մեր բանակ ձեզ է սպասում²²⁷:

Խմբի ղեկավար Մանոն ուրախությունից չի իմացավ, թե ի՞նչ ասի:

–Գե, տղե՛ք, շու՛տ արեք, ժամանակ չունեմ:
Ժողովուրդ բավական հեռու էր մեր տեղից: Նրանք ինձ որպես ծանոթ լսեցին, մեկնեցին դեպի թափած քոչեր: Տասը րոպե չի քաշեց, ժողովուրդ թափեց եղած չեղած, վերցրին իրենց երեխաներին,

224 Հարված:
225 «Մուրք Մարգիս»:
226 Խոսքը վերաբերում է Արմշատի գյուղապետ Մելիք Աբրոյանին. «Գլուղապետ Մելիքը Թաղի մեջ ուսանած էր, որ հայերեն լեզուի հետ նաեւ տիրացած էր քրդերենի: Ուներ ազգային եւ ընկերային բացարձակ իրաւունքներու մասին լրիւ պաշար, բնատուր ընդունակութիւն, կառավարելու ձիրք եւ վեհանձնութիւն: ...կարգախոսն էր ժողովուրդին – դաշտային խաղաղ աշխատանքի կողքին ունենալ դրացիները գերազանցող որակատր զենք եւ անոր գործածութիւնը գիտնալ: Ժողովուրդը իւրացուց կարգախօսը» (Ազիզեան Մ., Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրոս, 1974, էջ 17):
Վախճանվել է 1924 թ. հունիսին մալարիայի համաճարակից և ամփոփվել Իրաքի Չախոյի շրջանի Բեշապուր գյուղի մոտ՝ Տիգրիս գետի ձախ ափին կառուցված Սբ. Գևորգ մատուռի մոտ. «Իր մահը սզացին զինք ճանչցող վասպուրականցիները, Չախոյի շրջանի պետական պաշտօնէութիւնը, աղաները ու քիւրտ ժողովուրդը, որոնք իր անունին երգեր յօրինեցին: ...Իր հողակոյտին վրայ պարգուած է պատշաճ փորագրութիւնով մարմարեայ սալ մը Մուսուլէն, իր հայրենակիցներու կողմէն որկուած: Իսկ ժողովուրդը՝ որպէս ուխտատեղի, տարիներու ընթացքին այցելութիւններ տուաւ անոր պարգունակ գերեզմանին» (նույն տեղում, էջ 45):

227 Մեկ այլ աղբյուրով՝ 1915 թ. հուլիսի 7-ին՝ վաղ առավոտյան արմշատցիներին գյուղը լքելու վերաբերյալ հրաման է ուղարկվել. «Չգել ամեն վայրկեան առաջ նահանջել դեպի Թաղ, Վան»: ...Նամակը հինգ օրուայ էր... Ժողովուրդը յանկարծակիի եկած, մաս մը իրմէ կը ստիպէր, որ ժողովուրդը իր բնական ամրութիւններուն ապաւինի, ինքզինքը պաշտպանէ մինչեւ իր կեանքի վախճան: Իսկ մաս մը՝ Մելիքին հետ միասին, դեմ այս տեսակէտին... Վերջին տեսակէտը նախընտրելի նկատուելով, խումբ մը երիտասարդներ որպէս յառաջապահ ճամբայ հանուեցան, ժողովուրդը ետեւէն» (Ազիզեան Մ., Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, էջ 33):

221 Մինչև 1915 թ. գոտ հայաբնակ գյուղը գտնվում էր Շատախ գավառում:
222 Շատախի գյուղերից էր:
223 Մինչև 1915 թ. գոտ հայաբնակ գյուղ էր Շատախ գավառում՝ գավառանիստ Շատախից 3,5 կմ հարավ-արևելք:

շրջվեցին դեպի Սաքա Մերին, ինչպես գիշեր հրացան կրակես ոչխարի հոտի մեջ, այնպես էլ նրանք: Տասը զինված մարդ առաջ ընկավ, տասը մնաց հետ, մնակ մի մարդ, մի կին գնացել ին գյուղ: Նրանց պատվիրի՝ Շատախ ամեն ինչ կա, թե՛ ուտելիղեն և թե՛ շորեղեն: Նրանց գնալուց հետո դարձա մերոնց մոտ:

Մոկաց կողմեր տասը զինվորի հետևից մի զինվոր դրկինք: Շուտով եկան, միացան մեզ, ուղիղ ելանք Կոռիվանք գյուղ: Այնտեղ ասի զինվորներին. «Այստեղ մեղը շատ կա, ինչքան կուզեք, կերեք, թող ձիանք հանգստանան, մենք վտանգից պրծած ենք»: Հանգստանալուց հետո իջանք ձոր և նստանք ձի՝ ուղիղ դեպի Թաղ, բայց զարմացա, որ ժողովրդին չի հասանք: Սվտկինց գյուղի մոտ Մելիք կանգնած էր ճանապարհի վրա: Նա ինձ ասավ, թե գիշերս մնացեք մեզ մոտ, բայց ես չուզեցի մնալ նրա համար, որ չէր սագում զինվորներ պահել ժողովրդի մեջ: Մելիքին ասի.

–Դուք հանգստացեք, բայց այնպես արա՛, որ լույս չի բացված դուք անցնեք դեպի Գորանդաշտի կողմ, մենք մնալու ենք Սվտկենց խան մինչև վաղ: Կեսօրին դուք կամաց-կամաց շարժվեք դեպի Վան, ճանապարհ ազատ է քո ժողովրդի համար:

Բարի գիշեր ասի, և մենք գնացինք: Մութ էր, որ հասանք Խան, մեր վաշտին միացանք: Բենոյի միջոցով Մոկոլովին տեղեկություն տալուց հետո գնացի իմ ընկեր Արշակի մոտ, որ մեզ համար ուտելիղեն էր պատրաստում: Ես ոչինչ չկարցա ուտել, ամբողջ օր ձի հեծած սարերի վրա ման գալուց հետո շատ էի բեզարած, պառկեցի քնելու, բայց մի ժամի չափ էլ չի թողին, որ հանգստանամ: Կանչին, թե արի քուրդ են պռնած պահակներ: Գնացի, տեսա, որ Քրմենց գյուղացի մի խում մարդ կնոջ հետ բերին ինձ մոտ:

–Հայ են, բա՛ց թողեք:

Վերջապես կեսգիշերին Հարմշատի ժողովուրդ եկավ, անցավ դեպի Գորանդաշտ, դեպի Վան:

Դեպի Նոր Բայազետի Ղշաղ գյուղ

Մյուս օրը՝ կեսօրից հետո, վաշտ պատրաստվեց մեկնելու, բայց մի հետաքրքիր դեպք պատահեց, որ մի ժամ մեզ ուշացրեց: Մի կազակ տասնհինգ հատ աղվեսի մորթի Շատախից բերեր էր, որ տանի, որտե՞ղ, չի գիտեմ: Չին, երբ տեսավ իր վրա աղվեսի դեղին մորթ էր քամին խաղացնում, խրտնած փախավ դեպի Սվտկին: Չորս ձիավոր ընկան հետևից մինչև Սվտկին, նրա դեմ կտրին, բերին մեզ մոտ: Այնքան մարդ այդ մեկ ձիուն էր սպասում: Վաշտի պետ հրաման տվեց շարժվելու: Առաջ հասանք Գորանդաշտ, այնտեղ մարդ չկար: Անցանք Խոր-զանու ձորից, եկանք Հիրջ գյուղ: Գիշեր մնացինք Հիրջ, մյուս օր եկանք Կոռուկի վանքի մոտ՝ Չվստանի դաշտ, որտեղ թե՛ խոտ շատ կար ձիերի համար, թե՛ միրգ շատ կար բաղերի մեջ: Մի օր մնա-

լուց հետո խնդրեցի վաշտի պետին, որ ինձ թույլ տա գնամ, գուցե տանս հասնեմ: Նա թուրք գրեց տվեց, որ ճանապարհին ինձ չարգելեն և հարյուր քսան մանեթ փող տվեց, ասավ.

–Քեզ պետք կլինի:

Մարդիկ ինձ համբուրելով ուրախությամբ ճանապարհ դրին դեպի Վան, իսկ իրենք մնացին իրենց տեղ:

Մտա Վանի մեջ, ոչ ոք չկար, բացի մի խումբ ռուս զինվորներից, որոնց Հարարոց մեյդան տեսա: Հասա Քենտրչին, մարդ չկար: Խաչվողանի միջից իջա Թավրեզի դարեին, մարդ չկար: Էլ չի կանգնեցի մինչև Հավանց²²⁸: Տեսա, որ մարդիկ այն կողմից գալիս են դեպի քաղաք: Նրանք ասին, թե ժողովուրդ հետ է դառնում: Ասում ին, թե Բերկրիի ձոր թուրք ճանապարհ կտրած է, բոլոր զինվորներ, ժողովուրդ հետ է դառնում դեպի Պարսկաստանի կողմ: Ես չի հավատացի նրանց, բայց երբ հասա Սև ջուր, ամեն ինչ պարզվեց: Ծանոթներ եկան, պատմին, թե Բերկրիի ձոր թուրքի զորք կտրեց, մեզ հետ տվին, թե գեներալի կողմից է կարգադրած, որ ժողովուրդ դառնա, դեպի Խոշաքի կամ Սարայի կողմից անցնեն դեպի Սալամաստ: Բայց ես նորից առաջ գնացի:

Մութ էր, որ հասա Ջանիկ²²⁹ գյուղ և պատահեցի Մոկաց Խրեթ²³⁰ գյուղացիներին, որ վերադառնում էին Տիրամոր վանքի մոտից: Նրանց մեջ էր իմ հորաքրոջ տղան՝ Գարեգինը: Գիշերվան կեսին մի խումբ ռուս զինվոր եկավ, ժողովրդին հանեց, դրկեց դեպի Վան:

Այն ռուսների վերջին պահակներն են, որ մնացել էին մինչև վերջ:

Ես էլ վեր կացա, ձիս պատրաստի, հեծա, փոխանակ դեպի Վան գնալու, չոր տամարս պռնեց, ձիս քշի դեպի Բերկրիի կողմ, քանի որ ծանոթ իմ բավական տեղերին: Ի՞նչ պետք է ստածիմ: Ասում են, թե մարդու գոռոզություն մարդու վնաս է բերում, սուտ չէ, չի լսեց ուրիշի խրատներ, գնաց կրակի դեմ: Բավական գիշեր կար, որ Ջանիկ գյուղից դուրս եկա: Ես հասա Տիրամոր վանքի տակ: Տեսա, որ ծովից այն կողմ՝ Արնիսի կողմեր կրակ են վառում, աստղերի նման պլպլում են: Հասկացա, որ բանակ է այնտեղ դրած, բայց որոշեցի անցնեմ Անկուզակի²³¹ մոտից դեպի Գործոթ²³², այնտեղից էլ

228 Մինչև 1915 թ. հայաբնակ Ավանց (Հավանց) գյուղը գտնվում է Վան-Տոսպ գավառում՝ Վան քաղաքից 7 կմ, իսկ Վանի բերդից 2,5 կմ հյուսիս-արևմուտք:

229 Մինչև 1915 թ. հայաբնակ Ջանիկը Վանի նահանգի Թիմարի գավառանիստ կենտրոնն էր: Վերանվանվել է Գեդեկբուլակ (Gedekbulak):

230 Մոկա գավառի՝ մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող գյուղերից էր:

231 Մինչև 1915 թ. հայաբնակ Անկուզակ (Գյուզակ, Գուզեկ, Կյուզեկ) գյուղը գտնվում է Վանի նահանգի Բերկրի գավառում՝ Բերկրիից 13 կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Թոփուզարպա (Topuzarpa):

Սպահան գոլից²³³ անցնեն Աբադու դաշտ, բայց զարմացա, որ լուսաբացին մի խումբ ձիավորներ Շվաբարի մոտից դուրս եկան դեմս: Կարծեցի, թե ռուսներ կամ հայ կամավորներ կը լինեն, բայց ոչ: Ճանաչեցի, որ սրանք թուրքական սուրի են, բոլոր չարքեզ, չաչաններ են՝ մերկ սրերը ձեռքերին: Ինձ չտեսան: Բարձրացա մի խրաբա տան մեջ: Չին կապի խրաբի մեջ, գեներա վերցի, մտա դիրքի մեջ, բայց նրանք իմ ձին տեսան և մոտեցան: Նրանց տասնապետ էր, ձին պահեց և մտիկ տվեց, կանչեց. –Քիմըսն, գեղ քասլիմ օլ²³⁴:

Չգացի, որ մահս մոտ է: Մտածեցի, թե գեներա քասլիմ, հանձնվեմ կամ կռվեմ, մեկ է, պետք է մեռնեմ, լավ է որպես ոգնեցի մեռնեմ, քան թե որպես հետիր: Առաջ ձեռներս դողացին, շփոթվեցի, բայց դա մի վայրկյանի չափ էր, հետո ռուսական կազակի մոսինս ուղիղ շիտկեցի դեպի նրանց պետ, նրան ձիուց վար գցի: Վերջն ինձ հաջողվեց երկուսին ուղարկել Թալեաթ փաշին մատաղացու երեք ձիու հետ: Տասը բռայեցի հետո նրանց քամակի կողմից՝ Գործոթ գյուղի դաշտից սկսեց հրացանի համազարկ: Մեկ էլ տեսա իմ դիմաց բացի սպանվածներից ոչ ոք չկա, մոտեցա ձիուս, խուրջինը կտրի, խալին գցի, նստա ձիւն, դարձա դեպի հետ՝ դեպի Ջանիկ գյուղ: Բայց ոչ ոքի չտեսա, միայն մի մարդու գլուխ տեսա, որ սև ձին նստած ուզում էր գնալ, ինձ տեսավ, կանգ առեց: Տեսա, որ Մոկացի Համբարձումն է²³⁵, որն ինձ ասավ. «Մի՛ վախեցիր, դու քու ձեռքով քեզ փրկեցիր, խալալ է քեզ, որպես ոգնեցի՝ դու քու պատանք պատռեցիր, դե հիմա իջի՛ր, լավ հանգստացիր, հետո մեկտեղ կգնանք»: Բայց իմ բերան ո՛չ լեզու կար, ո՛չ իմ ձիուն կոտոմ կար, որ շարժվեմ: Մի ժամ հանգստալուց հետո վերջ մի կերպ քարշ տալով գնացի Համբարձումնի հետ, բայց ճամփով չգնացինք, ձախ կողմով անցանք Խանգեհ գյուղ: Ամտեղից Գուսնենցի²³⁶ մոտով հասանք Ա-

վերակ²³⁷ գյուղ, որտեղ հանկարծ տեսա իմ հավատարիմ ընկեր, մեր գյուղացի Եղիազարին: Նոր սիրտս տեղը եկավ, և մի քիչ հանգստացա: Ամբողջ օր սոված մնալուց հետո նոր մի քիչ հաց կերա, երեկոյան եկանք Սոգա²³⁸ գյուղ: Մնացինք գիշեր, մյուս օր դուրս եկանք դեպի Կոռուպաշ գյուղ, անցանք դեպի Խոշարի ձոր: Մի գիշեր էլ մնացինք Խոշարի բերդի տակ, մյուս առավոտ մենք բարձրացանք Չուխի գատուկ:

Ռուսական մի բանակ Սալամաստի կողմից եկավ մեր դեմ, անցավ դեպի Վան: Չորնեզբով դեռ նստած էր Խոշարի բերդի տակ, երբ նոր գորք եկավ: Նա կարգադրեց, որ գորք անցնի դեպի Նորգյուղի սար, իսկ այն ժամանակ իմ թողած կազակների վաշտ դեռ նստած էր Չվատան գյուղի մոտ, որ ես թողի եկա: Թե ինչի՞ Վան գաղթեց, չիմացա: Մենք հասանք Սալամաստ, մնացինք Գոնաշար²³⁹ գյուղ: Մի շաբաթից հետո նոր իմ ծանոթ Միքիլի կազակներ եկան, ինձ տեսան և տարան իրենց մոտ՝ Խոսրովա²⁴⁰ գյուղ: Մի ամիս մեզ պահին իրենց հաշվին, մի ամսից հետո մեր խնդրանք մեզ համար վկայական հանեցին գեներալից, նոր մեզ ճանապարհ դրին դեպի Խոյ, դեպի Ջուլֆա, Երևան:

Երեք ամսից հետո վերջ ես մեր տուն հարցնելով՝ գտա Նոր Բայազետի Ղշլաղ²⁴¹ գյուղում, ուր ո՛չ տեղ կար, ո՛չ տեղաշոր: Սկսեցի նորից գորարություն անել, նորից մեր հին արհեստ բանացնել, որպեսզի կարողանանք մեր քայքայված դրութուն բարելավել, որ սոված չմեռնինք: Առանց այն էլ մեր ժողովուրդ կես մահացել ինձ ճանապարհին, ո՛րը սովածությունից, ո՛րը երկար ճանապարհ ոտով գալուց, շատերն էլ թուրքի սարսափից:

Գաղթից հետո

Գաղթից վատ բան չկա աշխարհում, մանավանդ որ թշնամին հետապնդում է ժողովրդին: Շատ տղամարդիկ շփոթվում են, գեներ ձեռքին՝ չեն իմանում, դառնան, իրենց երեխային շալակով ազատե՞ն, թե՞ կռվեն թշնամու դեմ:

«Մնակ ազատության հույս սահման հասնելն է, որ անցնենք ռուսական հող, ազատված ենք», – ասում էր մեր ժողովուրդը: Դեպի Սալամաստ գնացող ժողովուրդ շատ հեշտ անցավ: Նրանք, որ Սալայի կողմից գնացին, նրանք էլ քիչ վնաս կրին

232 Մինչև 1915 թ. հայաբնակ Գործոթ գյուղը գտնվում է Վանի նահանգի Բերկլի գավառում՝ Բերկլիից 12 կմ հարավ: Վերանվանվել է Ուլուշար (Uluşar):

233 Սպահան լիճը (Սպահան գյուղ, Մուբհանգյուղ) գտնվում է Բերկլի ավանից հարավ-արևելք՝ բաժակած և Սպահան լեռան ստորոտում (Միքայիսթեան Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս. Արեւելեան Տաճկաստանի, մասն Գ, Կ. Պոլիս, 1885, էջ 18):

234 «Ո՞վ էս, արի՛, անձնատուր եղի՛ր»:

235 Մոկացի կամ Բառի Համբարձումը ծնվել է Մոկսի Բառ գյուղում. «Լեռնապարեան գաւառներու ժողովրդական շատ սիրուած դեկավար մէկ դէմքը: ...1915ի ապրիլեան կռիւներուն և 1918ի Վանի դէպքերուն ու նահանջին Բառայ Համբարձումը հսկայական աշխատանք կատարեց Լևոն Շաղոյեանի և այլոց հետ: Երբ Վանէն նահանջող ռազմիկ ուժերը 1918ի մայիսին Սալմաստի Կարմիր սարի բարձունքներուն վրայ ուժգին դիմադրութիւն ցոյց տուին տաճկական զօրամասերուն, ...սպանուեցաւ Բառայ Համբարձումը» (Աճեմեան Հ., Վասպուրական, էջ 360):

236 Մինչև 1915 թ. հայաբնակ Գուսնենց (Կյուսնենց) գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Թիմար գավառում՝ գավառանիստ Ջանիկ ավանից 17 կմ հարավ՝ Մարմետ գետի ձախ ափից ոչ հեռու: Վերանվանվել է Կասըմօղլու:

237 Մինչև 1915 թ. հայաբնակ Ավերակ գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Վան-Տոսպ գավառում՝ Վան քաղաքից 8 կմ հյուսիս: Վերանվանվել է Ալաբայիր (Alabayir):

238 Մինչև 1915 թ. հայաբնակ Սոգա գյուղը գտնվում է Վասպուրական նահանգի Վան-Տոսպ գավառում՝ Վան քաղաքից 4 կմ արևելք: Վերանվանվել է Բոստանըլը (Bostaniç):

239 Մինչև 1946 թ. հայաբնակ Գոնաշարը (Քյոնհաշեհիլ, Քյոնհաշահար) գյուղաքաղաք էր Սալմաստի գավառում:

240 Գյուղ Սալմաստի գավառում:

241 Նախկինում գյուղ Կամոյի շրջանում: 1945 թ. վերանվանվել է Արծվաքար, ներկայումս Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի շրջագծի մեջ է:

սարեր պահված քուրդ խուժանի կողմից, որոնք մաքրված չեն եղել ռուսաց կամ կամավորների կողմից, մնացել ին Դերիկի ձորերի մեջ պահված:

Գաղթելու ժամանակ դուրս եկան իրենց պահված սարերից, ժողովրդի դեմ կտրին, բայց զինված հայ տղաներ կովելով կարողացան ժողովրդին անցկացնել Կոտոլի ձորից դեպի Խոյի կողմ: Տղաներից մի քանիսը սպանվեցին իրենց սխալ ճանապարհի համար, որ թողին Խոշաբի ճամբան և դեպի Սարայ գնացին: Ճանապարհին անձանոթ լինելու պատճառով ընկան Թակորոց քրդերի ձեռք: Թակորոցի քրդեր անվնաս մնացին նրա համար, որ ռուսական և հայ կամավոր բանակներ այդ կողմից չեկան: Նրանց կես մասը եկավ Աբաղի դաշտի կողմից, իսկ կես մաս Կոտոլի և Աղբակի կողմից մտավ Վան, Սև ջուրի (Ավա Ռեշ) կողմից գործ չեկավ: Քրդեր մինչև վերջ պահված մնացին Դերիկի սարեր, ձորեր:

Նույնպես թիկունք մնացին նաև Ջալալի քրդեր Մասիս սարի թիկունքի կողմեր:

Շատ վտանգավոր էր Երևանից Վան գնալու համար: Ջիլանցիք միշտ հարձակում ին գործում Վան գնացողների վրա մինչև երկաթուղու գիծ սկսեց աշխատել Մակուլից դեպի Բայազետ, Ալաշկերտի կողմեր:

Շատ մարդ վերադարձավ Վան թե՛ Երևանից և թե՛ Մալամաստի կողմից: Շատ ժողովուրդ մնաց Աղբակի Բարդուղիմեսի վանք, այնտեղից էլ վերադարձան Հայոց Չորի գյուղեր մինչև տասնութ թվի վերջին գաղթը: Շատերը գաղթեցին դեպի Պարսկաստան, քչերը՝ դեպի Երևան: Պարսկաստան գնացողներ հասան մինչև Բաղդադի չուլեր: Մոլորված կռունկի նման մինչև հիմա վերքը սրտերին՝ այն են քաշում, թե ե՞րբ կհասնեն իրենց մուրագին, արդյոք կտեսնեն լույս աչքով ազատ Հայաստան, թե՞ կմեռնեն մուրագակարոտ վերքով լիք սրտերով:

Դեպի Վան

Մի օր են եկա Երևան մեր տան համար մի քիչ բան, ինձ համար էլ անեղի լար առնելու: Ռուսաց եկեղեցիի մոտ հանկարծ մի ռուս օֆիցեր թևիցս պոնեց: Չարմացա, թե ի՞նչ է ուզում ինձանից: Ասավ.

—Դու ինձ չե՞ս ճանաչում, են հարյուրապետ Շոռլիսովն եմ:

Հիշեցի նրան, իմ տեսած կազակներից էր, որ են թողի, Մալամաստ եկա: Ինձ ճաշարան տարավ, հետո հարցրեց.

—Որտե՞ղ են ապրում:

Իմ հասցեն ասի, գրեց իր տետրակի մեջ: Մյուս օր են դարձա տուն՝ Նոր Բայազետ քաղաք: Մի քանի օր աշխատեցի և մեր ընտանիքի դրոթյուն մի քիչ կարգի բերի: Մի օր էլ գավառապետն ինձ կանչեց, ասավ.

—Քեզ յոթերորդ վաշտից վաշտապետ Սոկոլովն է կանչում Էջմիածնից:

Գավառապետն ինձ հարցրեց.

—Դու նրանց մոտ եղել ես որպես զինվոր՞ը, թե՞ որպես կամավոր:

Ես ասի՝ որպես կամավոր:

—Լավ,— ասավ գավառապետ,— մենք իրավունք չունենք քեզ գոռով դրկելու, եթե չես ուզում գնալ, դու ազատ ես, քո կամքից է կախված գնա՞լ, թե՞ չգնալ:

Վերադարձա տուն: Մի շաբաթ մտածելուց հետո մեր տնեցիներին խաբեցի, ասի կերթամ, բաց շուտ կվերադառնամ, իմ մասին չմտածեք: Վեր կացա, գնացի Էջմիածին, տեսա, որ իմ ծանոթ ռուսներն են: Առաջինը տեսա մեր տասնապետ Բենոյին, որ նոր էր վերադարձել հանգստանալուց: Նա ինձ վերցրեց, տարավ վաշտի պետի մոտ: Ասաց, որ պատրաստվում են երկու օրից հետո մեկնեն դեպի Վանի կողմեր: Վաշտի պետն ինձ տեսավ, շատ ուրախացավ, ասավ.

—Ես իմ գրոթյուն ուղարկած եմ քեզ կանչելու, որ միասին գնանք, ձեր երկիր թուրքերից մաքրենք: Դուք՝ ձեր գաղթված ժողովուրդ, նորից դառնաք իրենց տեղեր: Ես քեզ կանչել եմ, որպես եղբայր, ոչ թե որպես նորից տանեմ բանակ: Դու կարող ես գալ մեզ հետ, ինչ ժամանակ որ ուզես, կարող ես նորից վերադառնալ քու տուն: Բայց թե չես ուզում գալ, մենք քեզ չենք տանում գոռով:

Մի քանի կակուղ խոսքով համոզեց, թե մեր Վան գնալուց հետո երեք ամիս չի քաշի, որ ինչպես ողջ հայ ժողովուրդը, այնպես էլ քու տունը, կվերադառնան իրենց տեղեր: Բայց ես նրան ասի, թե կմտածեմ և մինչև առավոտ պատասխան կտամ: Տասը մասնեք փող տվեց, ասավ.

—Տա՛ր, ծախսի՛ր, մինչև վաղ նորից կտեսնվենք:

Գիշեր բարի ասի, թողի, գնացի մեր գյուղացի Դակունց Սարգսի տուն, որ ապրում էր Էջմիածին քաղաքում: Տուն մտա և զարմացա. մեր Եղիազար նստած է Սարգսի տուն: Եղիազարին տեսնելն ինձ համար լավ էր, որ նրանից մի խորհուրդ առնեմ իմ գնալու կամ չգնալու մասին: Չարմացա, որ նա ասաց.

—Եկել եմ, մտել եմ հայ կամավորների երկրորդ բանակ, ձի, գենք, շոր ստացել եմ արդեն, վաղը չէ մյուս օր մեկնելու ենք դեպի Վան կամ Մանձկերտի կողմեր: Թե ուզում ես, արի, մեկտեղ գնանք:

Բայց ես ասի.

—Եթե գնալու լինեմ, ապա ավելի լավ է ռուսների, քան թե կամավորների հետ:

Երկու ամիս մնացի ռուսների հետ: Շատ ազնիվ, ընկերասեր մարդիկ են ռուսներ:

Առավոտ ես և Եղիազար մեկտեղ գնացինք Բենոյի մոտ: Նա էլ մեզ տարավ Սոկոլովի մոտ, ինչ որ են ասի, թարգմանեց:

—Լավ,— ասավ,— ես քեզ կտանեմ բատալյոնի պետի մոտ, նա քո տան համար մի քիչ փող կուղարկի, եթե դու համաձայն ես մեզ հետ գալ:

Համաձայնեցի: Նույն օր ինձ ձի, գեմք, շոր, ուսնաման տվին և երկու հարյուր մանեթ փող ուղարկին մեր տուն իմ տված հասցեով: Մյուս օր՝ նոյեմբերի տասներկուսին, դուրս եկանք Էջմիածնից դեպի Իգդիրի կողմ:

Հորգովի մոտ որոշեցինք, որ մի հարյուրակ մնա թիկունք, որ ջալալցիք ճանապարհ չի փակեն, վնաս չտան ժողովրդին, գնացող, եկող շատ կան դեպի Վան կողմեր, իսկ մնացած զինվորություն անցավ Հին Բայազետի կողմ: Բայց հետևից հրաման եկավ, որ ռուսական գունդը պետք է անցնի դեպի Ալաշկերտ, դեպի Պատմոցի կողմ, որպեսզի ռազմաճակատի կենտրոն պաշտպանեն աջից կամ ձախից: Մենք իջանք Ուշքիլիսի վանք²⁴²:

Մի գիշեր մնացինք նախկին Չարեվանի մեջ: Մյուս օր Մուրադ գետի ձախ ավտով անցանք Անդաբ, վերջ հասանք Պատմոց, բայց ոչ մի թուրքական զորքի չի պատահեցինք: Երեք օր Պատմոց մնալուց հետո շարժվանք դեպի Մանձկերտ, բայց հանդիպեցինք թուրքի զորքի մի ջոկատի, որ դիրք էր պահում Մարմոս և Դոլաբաշ²⁴³ գյուղերի արանք:

Ես՝ որպես տեղին ծանոթ, նշանակված էի զինվորների հետախուզության հրամանատար հիսուն ձիավորով:

Մտեցանք Մարմոս գյուղին, բայց շատ ցրիվ իրարուց: Թուրքեր մեզ նկատին, սկսին կրակել: Մեր և թուրքերի մեջի կռիվ տասը լուսե եղավ: Թուրքեր փախան դեպի Դոլաբաշ քրդական գյուղ, հետևից մեր զորքը հասավ, բայց էլ թուրքական զորք չտեսանք: Առանց կռվի մենք հանգիստ մտանք Մանձկերտի բերդ: Մի քանի օրից հետո հրաման եկավ. «Թուրքի բանակ Սատիկ փաշի գլխավորությամբ մեծ ուժեր է հավաքել, միտք ունի դեպի ձեր թիկունք՝ Խնուսկալ անցնի: Դուք պետք է անցնեք Խնուսի Կարաչոպան գյուղ, թուրքի դեմ կտրեք, որ ձեր թիկունքն ապահով լինի: Մեր զորք անցավ Խլաթի գավառ, դուք ձախ կողմի մասին ապահովեք»:

Չորքի հրամանատարն իմ վաշտի պետի միջոցով ինձ կանչեց իր մոտ, ասավ.

–Դու լավ ծանոթ ես այս կողմերին:

–Այո՛, ծանոթ եմ:

–Մենք մի օրից հետո պետք է գնանք Խնուսկալ: Որտեղի՞ց Մուրադ գետն անցնենք, որ մեր պետտ կամ թուփեր լավ անցնեն: Այս կողմեր կամուրջ կա՞, թե՞ ոչ:

Ես ասի.

–Կամուրջ կա, բայց հեռուն է, որ ասում են Բիթլովի²⁴⁴ կամուրջ: Պետք է գետի ձախ ավտով իջնենք մինչև Դեղուտ²⁴⁵ գյուղի մոտ, նոր կհասնենք կամուրջ: Ես տեղ ցույց կտամ, որ բոլոր զորք կարող է հանգիստ անցնել գետը, եթե ցուրտ չի խանգարի զինվորներին, իմ ասած տեղ ջուր մարդու ծունկին չի հասնի:

–Լավ,– ասավ,– քու ցույց տված տեղից առավոտ կանցնենք, գնա՛, հանգստացի՛ր:

Մյուս առավոտ եղանք այնտեղ, ուր Խնուսի գետ չի խառնվի Մուրադ գետին: Շատ հանգիստ անցանք դեպի Կասմիկ²⁴⁶, դեպի Մերկախալե: Վերջ մի կամ երկու օրից հետո Ջեռնակի սարով մտանք Խնուսի Կարակոպրու²⁴⁷ հայկական գյուղ: Նրանից հետո խնուսցի տղաներ, որոնք կամավոր են, տեսան իրենց հարազատ գավառ և իրենց ավերակ անմարդաբնակ գյուղեր: Շատեր լացում են իրենց ավերակներ տեսնելով:

Մյուս օր տեսանք, որ թուրքի բանակ ոչ թե Կարաչոպան²⁴⁸ է, այլ մի մաս Խալիլչավուշի²⁴⁹ մոտ է, մյուս մաս՝ Չավուրմեի²⁵⁰ կողմ՝ դեպի Խոզլու²⁵¹ գյուղ: Նրանց կենտրոն Քաղքիկ²⁵² գյուղի մոտ էր:

Վերջապես մեր կռիվ թուրք բանակի հետ եղավ Խնուսի ընդարձակ դաշտի մեջ: Չնայած ցուրտ էր, բայց ռուսներ շատ դիմացկուն են: Կռիվ տևեց մոտ երկու օր:

244 Քրդաբնակ Բիթլու գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Բուլանջի գավառում: Վերանվանվել է Զյոփրյոյուլու (Köprüyolu):

245 Մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող Դեղուտ (Թեղուտ) գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգի Բուլանջի գավառում: Վերանվանվել է Բալոտու (Balotu):

246 Մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող Կասմիկ (Կասմիկ) գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Մանազկերտ գավառում: Վերանվանվել է Արսլանկայա (Arslankaya):

247 Մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող Կարաբյոփրու (Կարաբյոփրու, Կարակոպրու) գյուղը գտնվում էր Էրզրում նահանգի Խնուս գավառում՝ գավառանիստ Խնուս քաղաքից արևելք՝ Արածանիի ավիին: Չի անվանափոխվել:

248 Մինչև 1915 թ. Խնուս գավառի զուտ հայաբնակ գյուղերից էր:

249 Մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող Խալիլչավուշ գյուղը գտնվում էր Էրզրում նահանգի Խնուս գավառում՝ գավառանիստ Խնուս քաղաքից հարավ-արևելք՝ Արածանիի աջ վտակ Խնուս գետի ձախ վտակի՝ Մր. Դանիել գետի ավիին՝ Քաղքիկ, Ղզլահմեդ գյուղերի հարևանությամբ: Չի անվանափոխվել:

250 Մինչև 1915 թ. հայաբնակ Չավուրմե (Չեվիրմե) գյուղը գտնվում էր Էրզրում նահանգի Խնուս գավառում՝ գավառանիստ Խնուս քաղաքից արևելք՝ Խնուս գետի Բուլլա վտակի ավիին: Վերանվանվել է Օվաչեվիրմե (Ovaçevirme):

251 Մինչև 1915 թ. հայաբնակ Խոզլու (Դոզլու) գյուղը գտնվում էր Էրզրում նահանգի Խնուս գավառում՝ գավառանիստ Խնուս քաղաքից հյուսիս-արևելք՝ Չավուրմե գյուղից հյուսիս: Վերանվանվել է Օվաքոզլու (Ovakozlu):

252 Մինչև 1915 թ. հայաբնակ Քաղքիկ գյուղը գտնվում էր գավառանիստ Խնուս քաղաքից հարավ՝ Խալիլչավուշ, Ղզլահմեդ, Խասե, Աղջամեյիք, Շաբադի գյուղերի հարևանությամբ: Վերանվանվել է Գյոլլեր (Göller):

242 Խոսքը վերաբերում է Էրզրումի նահանգի Բագրևանդ գավառում գտնվող Բագավանի Մր. Հովհաննես վանքին (631-639 թթ.):

243 Մինչև 1915 թ. հիմնականում հայ բնակչություն ունեցող Դոլաբաշ (Տալաբաշ, Տոլաբաշ) գյուղը գտնվում էր Էրզրումի նահանգի Մանազկերտ գավառում: Չի անվանափոխվել (Dolabaş):

Մեր վաշտին տվին դաշտի ձախ կողմ, դեպի Կզլահմատ²⁵³ քրդական գյուղ: Կռիվ վերջանալուց հետո մենք մնացինք Չավուրմե գյուղ, որ Խնուսի հայկական գյուղերից մեկն էր դաշտի մեջ: Թուրք փախալ դեպի արևմուտք՝ դեպի Կոմգոմ²⁵⁴ գյուղաքաղաք, իսկ մեր զորքի կեսը մաս մնաց Քաղքիկ, կեսը՝ Չավուրմե:

Գիշեր ինձ Չավուրմից ուղարկին Խնուսկալա՝ հետախուզության: Տասը զինվորով դուրս եկանք դեպի Խնուսի բերդ, որ գտնվում է Բինգյոլ սարի տակ: Հասանք բերդի առաջին տներին, ձիանք թողինք մի զինվորի մոտ: Ոտով գնացինք, մի քանի տուն մտանք: Դատարկ տուն տեսանք, ոչ ոք չկար: Անցանք խանութների կողմ, նորից մարդ չկար, մի քանի տուն մտանք, տեսանք, որ շատ տներում սեղան պատրաստ, ինքնաեռ եռում է, բայց մարդու հոտ չի գալիս քաղաքից: Մութ ընկնելուց հետո բռնոր թողած, փախած են: Նույն գիշեր տեղեկություն տվինք բանակին: Առավոտ շուտ բանակ մտավ Խնուսի բերդ, ինձ կանչին, հարցրին, թե դու ծանոթ ես այս կողմերին, թուրքի զորք ո՞ր կողմով փախած կլինի: Ես ասի, թե մնակ ճանապարհի դեպի Կոմգոմն է, ուրիշ տեղ չեն կարող գնալ այս ցուրտ ձմեռնոցով:

–Շա՞տ հեռու է,– ասաց գնդի հրամանատարը:

–Մեկ օրվա ճանապարհ է:

–Լա՞վ,– ասավ,– գնա՛, հանգստացի՛ր:

Չորս օր Խնուսի բերդ մնալուց հետո հրաման եկավ, որ շարժվենք առաջ՝ դեպի Կոմգոմ՝ դեպի Վարդոյի գավառ, որ գտնվում է Ս. Կարապետ վանքի հյուսիսի կողմ: Մի փոքրիկ դաշտավայր է՝ երեք հայ գյուղերով: Վաղ առավոտ դուրս եկանք բերդից և ուղղվեցինք Սալթր, դեպի Կոմգոմ: Բայց հագիվ ենք հասել Ջևա Տմկի գյուղի մոտ, որ քրդական մի ուժեղ բանակ մեր դեմ կարեց, սկսեց կրակել մեր առաջապահ ջոկատի վրա:

Նորից կռիվ սկսեց: Ռուսական թուփեր Կապեն Սալթրի գլուխ սկսին կրակել, քրդական սովորիչ չի դիմացան ռուսների թուփերի համազարկի դեմ: Չորս ժամ կռվելուց հետո մի քանի տասնյակ մարդ զոհ տալուց հետ փախան դեպի Կոմգոմի կողմեր, իսկ մենք գիշեր մնացինք Ջևա գյուղ:

Մյուս օր առաջացանք Կոմգոմի վրա, բայց Կոմգոմ մարդ չկար՝ ո՛չ թուրք, ո՛չ էլ քուրդ: Նրանք անցել են դեպի Գոմեկի գավառամաս՝ հայոց հին Դարանաղի կողմ: Մի երեք օր մնացինք Կոմգոմի մեջ: Չորրորդ օր մեր մնացած ուժերն եկան, հասան մեզ: Հրաման տվին, որ մեր գունդը պետք է թեքվի

դեպի ձախ կողմ, դեպի Չարբոսի կողմ, որտեղ չաչաններ պատրաստված են մեր դեմ կռվելու: Մենք Կոմգոմից դուրս ելանք, առավոտ շուտ հասանք Խրբեկորան քրդական գյուղ: Նորից ինձ առաջ գցին: Մենք Չարբոս չհասանք, տեսանք, որ չարքեզներ վերջին քոչեր հասան Ախալար գյուղի տակ, փախչում են դեպի Մուշի դաշտի կողմեր: Մտանք Չարբոսի ձոր, մտանք Ջրնեկ²⁵⁵, Չարբոս, Թափա²⁵⁶ գյուղեր. միայն չորս պատավ կին տեսանք: Մի ժամ հանգստանալուց հետո շարժվեցինք դեպի Մուշի կողմ: Առաջ մտանք Յիսափու և Կուրավու հայկական գյուղեր, որոնց մեջ կենդանություն չկար, բայց գյուղեր վառած չէին: Նույն գիշեր գրավինք Մուլուխի անվանի կամուրջ և անցանք գյուղ:

Առավոտ շուտ հրացանի ձայն լսեցինք Մուշի կողմից: Անմիջապես պատրաստվեցինք մեկնելու: Կեսօր էր, որ Խոբերի²⁵⁷ կամրջից անցանք: Տեսանք թուրքական և քրդական բանակներ դիրք են պնդած Մուշի տակից դեպի Ալվարինջ²⁵⁸ հայկական գյուղ: Մեր երկու վաշտ կազակ և կամավորներ առաջ անցանք բոլոր կողմերից, ուռա տվինք դեպի թշնամու բանակ, կռիվ սկսեց երկու կողմից: Առաջին անգամ թուրքեր լավ կռվեցին, մանավանդ քրդեր, բայց երբ մեր թուփեր հասավ հետևակի հետ, թուրքեր սկսին թուլանալ, հետո կամաց-կամաց սկսին նահանջել դեպի Շեխլան²⁵⁹, դեպի արևմուտք՝ Մուրադ գետի ձախ ափով դեպի Գեմեջ ավերակ քաղաք, որ գտնվում է Ողական²⁶⁰ ամրոցից դեպի հարավ-արևմուտք: Մի քանի օր հետո դաշտի գյուղերից, սարերից բավական հայ ժողովուրդ հավաքվեց մեզ մոտ: Նրանց մեջ կային և քրդի կին, երեխաներ, որոնք չեն փախած իրենց ժողովրդի հետ: Մի քանի օր մնացինք Մուշի մոտի Ջրիկ²⁶¹,

255 Քրդաբնակ Ջեռնակ (Ջրնեկ) գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Վարդո գավառում՝ գավառանիստ Վարդոյից (Գյումգյում) հարավ: Վերանվանվել է Կայալիք (Kayalik):

256 Մինչև 1915 թ. չեչենաբնակ Թափա (Թափաքոյ) գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Վարդո գավառում՝ գավառանիստ Վարդոյից (Գյումգյում) հարավ-արևմուտք: Վերանվանվել է Սաղլիջաք (Sağlicak):

257 Մինչև 1915 թ. Խոբեր (Խոբեր) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառանիստ Մուշ քաղաքից 7 կմ հյուսիս: Վերանվանվել է Կարաքոյի (Karaköprü):

258 Մինչև 1915 թ. հայաբնակ Ալվարինջ (Ալվարինջ, Առվարինջ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառանիստ Մուշ քաղաքից 13 կմ հարավ-արևելք: Վերանվանվել է Կարաաղաչլը (Karaağaçlı):

259 Շեխլան (Շեխալան) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառանիստ Մուշ քաղաքից հյուսիս-արևմուտք: Վերանվանվել է Էդիրմեջ (Eğirmec):

260 1890-ական թվականներին Ողական ամրոցի վերաբերյալ գրվել է. «...բոլորածե ամրոցին աւերակներ այսօր ալ կեցած են Մշոյ դաշտին արեւմտեան ծայրը՝ Արածանոյ աջ եզերքին վրայ, ուր ցից ժայռերը գետը նեղցնելու կը սկսին» (Տոմաշեկ Վ., Պատմական տեղեկութիւնք Սասնոյ վրայ, «Հանդես Ամսօրեայ», 1896, էջ 70-71):

261 Մինչև 1915 թ. հայաբնակ Ջրիկ (Ջրեց) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառանիստ Մուշ քաղաքից 3,5 կմ հյուսիս: Վերանվանվել է Բաղլար (Bağlar):

253 Քրդաբնակ Կզլահմեդ (Կզլահմատ) գյուղը գտնվում է Էրզրում նահանգի Խնուս գավառում՝ գավառանիստ Խնուս քաղաքից հարավ-արևելք՝ Խալիչավուշ, Խամբերդ գյուղերի հարևանությամբ:

254 Մինչև 1915 թ. հայ և քուրդ բնակչություն ունեցող Կոմգոմ գյուղաքաղաքը գտնվում է Էրզրում նահանգի Վարդո գավառում: Գավառանիստ կենտրոնն է: Վերանվանվել է Վարդո (Vardo):

Գառնիկ²⁶², Հաջիմանուկ²⁶³ գյուղերի մեջ: Մի օր էլ հրաման եկավ մեր ղեկավարին. «Երկու վաշտ զորք ուղարկեցե՛ք դեպի Բիթլիս, որպեսզի օգնություն ցույց տան Բիթլիսը գրավելուն»: Բայց ափսոս, որ մեր մի վաշտին ուղարկին:

Ես շատ չի մնացի Մուշ, որ տեսնեմ Սև սարից իջնող հայ ժողովրդին, որոնք երկար ժամանակ կռվում ին Անդրք սարի և մյուս սարերի կողմեր, որ ժողովուրդ ինք իր միջից ղեկավար էր նշանակած եղել Մասունի կտրիճներից:

1916 թվի փետրվար ամսի ութին Մուշից դուրս եկանք դեպի Բիթլիս, բայց ձյուն շատ լինելու համար Խաց²⁶⁴ գյուղից ուղիղ կտրինք, անցանք Քրդագոմ²⁶⁵ գյուղ:

Գիշեր մնացինք այնտեղ, մյուս առավոտ Թիլ²⁶⁶ և Դրմեթ²⁶⁷ գյուղերից հասանք Խարս և Վարդենիս գյուղեր:

Խարս գյուղում նայեցի Բավա Մարգարի տներին, ուր շատ ժամանակ ենք ուրախացել այժմ ավերակ մնացած այդ տան մեջ: Մեր զգրարության ժամանակվա գյուղեր դարձեր են ավերակ:

Վարդենիսից դուրս ելանք դեպի Օձ քաղաք, դեպի Սերե Գուլե, այնտեղից՝ դեպի Բիթլիս: Չյուն քիչ էր, արևկող էր, բայց դեպի Մոխր²⁶⁸ կամ դեպի Փափշեն²⁶⁹ թուրքական զորքն էր նստած: Մենք սարի դռով Նամրուքի տակից հասանք Ջրխոր²⁷⁰ և Շահմերան²⁷¹ գյուղեր, միացանք Անդրանիկի և

ռուսաց բանակներին Ռավո դաշտում՝ Խանա Ալամանի²⁷² մոտ: Նույն օրը զինվորական ժողով արին գեներալի և Անդրանիկի հետ: Գեներալ որոշեց, որ թուփեր կապեն Քոքոռ սարի դռշին և Շամիրամ գյուղի մոտ, նոր առավոտ կռիվ սկսինք: Բայց Անդրանիկ համաձայն չեղավ: Նա ասավ.

– Ես Բիթլիսին ծանոթ եմ, ես Բիթլիս կգրավեմ առանց հրացան կրակելու, նրանից հետո Բիթլիսի պաշտպանել թողնում եմ ձեր կամքին:

Շատ վիճելուց հետո Անդրանիկի խոսք պաշտպանին մի քանի ռուս և հայ սպաներ: Որոշում կայացավ. վաղ առավոտ ժամի չորսին պետք է պատրաստ լինենք: Մեկնելու ենք դեպի նպատակ կատարելու: Անդրանիկ կանչեց հայ կամավորներին, հարցրեց մի քանիսին, թե ո՞վ է լավ ծանոթ Բաղեշ քաղաքին, թող գա ինձ մոտիկ: Գնացողներից մեկ մեր Եղիազար եղավ, բայց Եղիազար լավ ծանոթ չէր քաղաքին, նրա համար իմ անուն տվեց: Վերջ ինձ էլ տարան Անդրանիկի մոտ, նա ինձ ասավ.

–Դու ո՞ր վաշտից ես:

Ես ասի, թե Սոկոլովի վաշտից եմ:

–Լավ, դու որտեղացի՞ ես:

–Ոգմեցի եմ:

–Հա, լավ, որ դու ոգմեցի ես, դու ծանոթ կլինես այս քաղաքին, այնպես չէ՞:

Ես ասի, թե ծանոթ եմ բոլոր փողոցներին, տներին, մեր քաղաքն է: Ես ծանոթ եմ այստեղից մինչև Սդերդ, բոլոր սար ու ձոր գիտեմ:

Ասավ.

–Լավ, քեզ մի քանի զինվոր տամ, կարո՞ղ ես դուրս գալ քաղաքի միջից դեպի Ծակքար: Կարո՞ղ ես, խո՞սք տուր, ես քեզ հավատում եմ, որ Ոգմից ես, կկատարես քո պարտք:

–Փաշա՛,– ասի,– ես գիտեմ՝ քանի կամուրջ կա անցնելու մինչև Ծակքար հասնել, բայց խնդրում եմ մեր Եղիազարին թույլ տաս ինձ հետ գա:

–Լավ, թող գա: Դե, գնա՛, հանգստացի՛ր, գիշեր ժամի չորսին գնալու եք: Եր՞բ ես մտել ռուսների բանակի մեջ և ինչի՞:

–Ռուսներ շատ անկեղծ և հավատարիմ մարդ են: Ոստանից մտա նրանց վաշտի մեջ՝ որպես տեղին ծանոթ և մնացի նրանց մոտ իմ հոժար կամքով, որ մեր երկիր ազատինք թուրքից:

–Ապրե՛ս, տղա՛ ջան, շատ լավ ես արել, թող բոլոր քեզ պես մտածեն, դե գնա, կոչաղ եղե՛ք, շատ շուտով թուրքի լծից կազատվենք, մեզ հաջողություն,– ասավ զորավար Անդրանիկ, ինքը գնաց ուրիշ գործի:

262 Մինչև 1915 թ. հայաբնակ Գառնի (Գառնիկ, Գառնեն) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 2 կմ հյուսիս: Վերանվանվել է Աղաչլըք (Ağaçlık):

263 Քրդագոմակ Աջմանուկ (Հաջիմանուկ, Հացմանուկ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 6 կմ հյուսիս-արևմուտք: Վերանվանվել է Գյուզելթեպե (Güzeltape):

264 Մինչև 1915 թ. հայաբնակ Հացիկ (Հացեկաց, Խաց) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 24 կմ հյուսիս-արևելք՝ Մեղրագետի աջ կողմում՝ գետափից 10 կմ հեռու՝ հարթավայրում: Վերանվանվել է Գյուվեն (Güven):

265 Մինչև 1915 թ. հայաբնակ Քրդագոմ գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 17 կմ հյուսիս-արևելք: Վերանվանվել է Թաբանլը (Tabanlı):

266 Թիլ գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 25 կմ արևելք:

267 Մինչև 1915 թ. գերակշիռ մասով հայաբնակ Դրմեթ (Դրմեթ, Տրմետ) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ գավառում՝ գավառաանիստ Մուշ քաղաքից 29 կմ արևելք: Վերանվանվել է Ալազլը (Alazlı):

268 Քրդագոմակ Մոխր գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի համանուն գավառում: ԺԹ դարում այն հանգրվան էր Բաղեշ գնացողների համար, քանի որ Մոխրից մինչև Բաղեշ քաղաք ոչ մի գյուղ չկար (**Գեորգ Փիստ**, Ուղեորություն ի Փոքր Ասիա, Տրապիզոնեն Կարին, «Հանդես Ամսօրեայ», 1892, էջ 172):

269 Մինչև 1915 թ. հայաբնակ Բաբշեն (Փափշեն) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի համանուն գավառում: Վերանվանվել է Յումուրտաթեփե (Yumurtatepe):

270 Մինչև 1915 թ. հայաբնակ Ջրխոր (Ջրխոր) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի համանուն գավառում: Վերանվանվել է Բենեկլը (Benekli):

271 Մինչև 1915 թ. հայաբնակ Շամիրամ (Շահմերան) գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի համանուն գավառում:

272 Ալամեթի իջևանատունն է, որը գտնվում է մինչև 1915 թ. հայ և քուրդ բնակչություն ունեցող Ալամեթ (Ալաման) գյուղից հյուսիս՝ Բիթլիսը Դատվանին կապող մայրուղու աջ կողմում՝ Ռահվա (Ռավո) դաշտում: Կառուցվել է 1502 թ. (**Öner Y. Ilgaz**, Vanderya, Istanbul, 2001, sayfa 76):

Ես դարձա մեր վաշտ: Սոկոլով ինձ հարցրեց, թե ինչն էր կանչել գորավարը: Ես իմ հավատարիմ ընկեր Բենոյի միջոցով պատմեցի ինձ վրա դրած պարտք կատարելու մասին: Իմ հետ եղած բոլոր կազակներ ուրախացան և ասին. «Մալադեց»: Հետո Սոկոլովն ինձ ասաց, թե մեր վաշտից քեզ քսանուհինգ ձիավոր կտան, որ քեզ լավ պաշտպանեն, դու մեր եղբայրն ես և կմնաս որպես ընկեր, մինչև վերադառնանք տուն: Մութ ընկավ, բայց վաշտի պետն ինձ պահեց իր մոտ, մինչև հաց կերանք, չայ խմեցինք: Հետո ինձ ասաց. «Դու սրանից հետո ինձ «պարոն» չասես, ասա «ընկեր պետ», եթե մենք մնակ լինենք»: Ես նրա միտք հետո իմացա, որ նա բոլշևիկ է, նրա հետ կան շատեր, որ միշտ գաղտնի խոսում են, բայց ես ռուսերեն չ'ի իմանում, մնակ մեկ-մեկ լսում եմ, որ ասում են. «Ընկեր Լենին կեցցե, մենք կովից կազատվենք», բայց ես բոլորովին չ'ի հասկանում, թե ի՞նչ անուն է նրանց ալոքան հետաքրքիր, որ միշտ խոսում են և ինձանից չեն պահում ոչինչ:

Բիթլիս քաղաքի գրավումը

1916 թվին՝ փետրվարի տասնչորսի վաղ առավոտ շուտ՝ ժամի չորսին, մենք պատրաստ սպասում ենք հրամանի, որ շարժվենք դեպի Ծակքար, որ քաղաքի արևմտյան կողմ՝ Սղերդի ճանապարհի վրա է գտնվում: Մեր հրաման շատ չուշացավ: Չորսավար Անդրանիկ արդեն պատրաստ էր: Չին հեծած առաջինը մտտեցավ մեզ և ասաց.

–Դուք գնացե՛ք, ձեզ հաջողություն, ոչ մի տեղ չի կանգնե՛ք մինչև ձեր նշանակված տեղ՝ Ծակքար: Չի վախենա՛ք, թուրքի զորք սառած մտել է դիրքերի մեջ, նրանց կոխե՛ք էլ, չեն զարթնի: Էս գիշեր բոլոր տեղ եղել են Բիթլիսի մեջ, թուրքին կանոնավոր զորք քիչ կա, եղածն էլ բաշիբոզուկ են, քուրդ խուժան: Սոված սատկում են, բայց լսե՛ք, նրանք պիտի փախչեն դեպի Ծակքար, ժողովուրդ չի վնասե՛ք: Քուրդ կամ թուրք ժողովուրդ թույլ տվե՛ք թող անցնեն, իսկ հայեր, եթե կա, պահե՛ք ձեզ մոտ մինչև առավոտ: Դե, ձեզ հաջողություն:

Այսքան ասաց ու գնաց ուրիշ կողմ, ուր ամբողջ զորք նրան էր սպասում: Առաջին մենք անցանք դեպի Փափշեն գյուղ, բայց շատ դժվարությամբ առաջ ենք շարժվում: Ով որ չի տեսել Ռավո դաշտի ձյուն, թող իմանա, որ շատ տարի ձյուն հասնում է հեռագրալարերին: Ռավո դաշտ ընկած է Նամրուքի և Քոքոռի արանք, երկու կողմից սար է, իսկ արևելքից Վանի ծովի քամին գիշեր-ցերեկ ոռնում է, որին տեղի ժողովուրդ գելվազ²⁷³ են ասում:

Ես և մեր Եղիազար առաջ ենք գնում՝ որպես տեղին ծանոթ: Մեր հետ կար չորս կամավոր, որոնք բնիկ Պոլիսի կողմից են եկած, թուրքի բանակից փախել են, մտել են կամավորների բանակի մեջ:

Մենք քառասուն ձիավոր ենք՝ կես ռուս, կես հայ: Ամեն տասը զինվորին մի հատ թրքախոս զինվոր ենք տված, որ կարողանան իրենց դիմացի թուրքին թուրքերեն պատասխան տան: Հակոբ անունով մեկը կար, որ լավ թուրքերեն էր խոսում, նրան վերցինք մեզ հետ և պատվիրեցինք, որ եթե թուրքի զորքից կհարցնեն, ասի, որ գնում են տեղեկություն տան փաշային, թե ռուսներ չեն շարժվում, այսօր թող հանգիստ քնեն:

Հասանք քաղաքի մոտի փոքրիկ կամրջին: Նրա երկու կողմից խրամատներ կան, բայց մարդ չտեսանք, թիփին²⁷⁴ չէր թողնում, որ մարդ տեսնենք: Հասանք երկրորդ խրամատին, տեսանք, որ մի մարդ պառկած է, իսկ նրա կողքին մի ուրիշ լաց է լինում, քրդերեն երգում է. «Բրատ ռաբա, դու դելալի, դու նեզեկի բեստ չար սալի, դու ժիրքչեան դնալի»²⁷⁵:

Անցանք երրորդ խրամատ, բոլորովին մարդ չկար: Հասանք ներկատուն, ուր կտավ են ներկում, ոչ ոք չկար:

–Սա ի՞նչ բան է, Եղիազար, մարդ չկա, երևի քաղաքը թողել փախել են:

–Գուցե՞ ցուրտ է, դրա համար մտել են տների մեջ,– ասավ Եղիազար:

Մենք հասանք Չաքար քեռիի խանութի դուռ: Տեսանք, որ խանութը բայց է, ոչ մարդ կա, ոչ էլ ապրանք: Կանգ առանք փոքրիկ կամրջի գլխին, մարդու, կանանց, երեխայի ձայներ էին գալիս: Շտապեցինք, հասանք և տեսանք, որ ավանակ բարձած՝ քաղաքից փախչում են դեպի Ծակքար: Հակոբը թուրքերեն հարցրեց, թե ո՞ր են փախչում: Պատասխանին.

–Փախչում ենք դեպի Սղերդի կողմեր: Ասում են, թե գավուր հասել է Խանա Ալամանի²⁷⁶ մոտ, առավոտ կմտնի քաղաք: Մեզ կկոտորեն, նրա համար տուն-տեղ թողած փախչում ենք, որ մեր երեխաներ ազատենք գավուրի ձեռքից: Ասում են, թե գավուրի զորք հիսուն հազարից շատ են, մենք ինչ անենք, որ չի փախչենք:

Մի ծեր թուրք էլ ասավ.

–Կանոնավոր զորքը տարան դեպի Էրզրումի կողմեր գավուրի դեմ, իսկ մեր քաղաքը թողին անպաշտպան: Մի քանի հատ քրդի բաշիբոզուկ ասկար ի՞նչ կարող է անել գավուրի դեմ, ասա տեսնեն, դուք ի՞նչ մարդ եք կամ ո՞ր ենք գնում:

Հակոբը պատասխանեց.

–Գնում ենք թուրքեր²⁷⁷ բերելու, որ եկած են Դիարբեքրի, Սղերդի կողմից, որ գավուրին թույլ չտանք քաղաք մտնեն, մի՛ վախեցե՛ք, մեզ օգնական զորք է գալիս թուրքերի հետ: Մենք մեր քաղաք գավուրին չենք տա:

274 Չյունախատն մրրիկ, բուք ու բորան:

275 «Եղբայրս, արթնացի՛ր, դու գեղեցիկ ես, դու նազեմի ես, քսանչորս տարեկան ես, սովից նվաղել ես»:

276 Խոսքը վերաբերում է Ալամեքի իջևանատանը:

277 Թնդանոթ:

273 Յրտաշունչ քամի:



Ռահվա դաշտն ու Գրգուռ (Քոքոռ) լեռը

–Լա՛վ,– ասավ ծեր թուրքը,– տղա՛ս, աստված ձեզ հետ:

Մենք նրանց թողինք, անցանք առաջ: Սալիմի շուկան տեսանք: Նորից ժողովուրդ խառնված է իրար, հարցրինք, նույն պատասխանը տվին: Շատ կամուրջներ անցանք, շատ նեղ տեղերից անցանք, հասանք Ծակքարին: Ձիեր կապինք, դիրքեր պռնինք, սպասեցինք գորքի գալուն, բայց թուրքական գորք շատ քիչ կար: Մեր կողմից եկող ժողովրդին թույլ ենք տալիս անցնելու, իսկ զինված մարդկանց զենքեր վերցնում ենք և որպես քասիք մարդիկ՝ բայց ենք թողնում:

Այսպիսով, մոտ հարյուր հիսուն զենք հավաքինք, բոլոր անպետք, կոտրած, շատեր հին կափախի հրացան էին առանց փամփուշտի: Մի քանի տասնյակ հայ կին, երեխա հավաքինք մեզ մոտ: Ռուսներ նրանց հաց տվին, շատեր մերկ էին, շոր տվինք, ով որ մեր մոտ հասներ, խաչ էր հանում երեսին:

–Մութը որ ընկավ,– պատմեց մի քուրդ կին,– բոլոր թուրք, քուրդ լսեցին, որ ռուսական գորքը շատ է, մերոնք չեն դիմանում: Նրա համար փախչում ենք դեպի Սղերդի կողմեր, գուցե ազատվենք գավուրի ձեռքից: Մեր բոլոր ժողովուրդ մութ ընկնելու պես փախան: Մենք մնացինք որպես աղքատ մարդ, ասինք, մեզ վնաս չեն տա, մենք չենք փախչում, բայց ոստիկաններն եկան, գոռով մեզ տներից հանին, ասին, թե գավուր աղքատ-հարուստ չի հարցնում: Բայց մենք չենք ուզում ուրիշ տեղ գնալ այս ձյուն-ձմեռնոցով:

Կնոջն ասի.

–Գավուրը ժողովրդին չի վնասում, ձեզ խաբել են, կարող եք դառնալ ձեր տներ, ձեզ մարդ վնաս չի տա, մայրիկ, տեսնո՞ւմ ես, որ ոչ մի մարդու չենք սպանում:

Քրդուհին դարձավ, ինձ ասավ.

–Բրառ՛, դու գավուր ե՞ս, թե հայ ե՞ս:

–Հայ եմ,– ասի:

Այն կողմից մի հայ կին եկավ, լացավ ու ընկավ ոտներս:

–Տղա՛ ջան,– ասավ կին,– սրանք մեր հարևաններն են, շատ լավ մարդ են, խնդրում են թողեք, որտեղ ուզին, թող գնան:

–Լավ, մայրիկ, թող գնան, մենք ոչ մի ժողովրդի չենք վնասում,– ասի ես:

Հայերը հետ դարձան դեպի քաղաք, իսկ թուրք, թուրք Ծակքարից անցան դեպի արևմուտք:

Արև դուրս եկավ Քոքոռ սարի ձախ կողմից: Մեկ էլ տեսանք, որ տասը ոստիկան ոտքով գալիս են մեր կողմ, բայց բոլորի զենքեր կախած են ներքև՝ որպես անձնատուր ենք ձեզի: Չենք վերցրինք, նրանց թողինք, անցան: Մի տասը թուրքի չափ մնաց, տեսանք, որ գորք, ոստիկան բոլոր փախչում են դեպի Կուլթիկ հայ գյուղ՝ դեպի Տատկո տաշտ: Կես մաս փախչում են դեպի աջ կողմի սարեր՝ դեպի Պոնաշեն:

Մի ձիավոր եկավ մեր կողմ, մեզ տեսավ, ձիին հետ դարձրեց դեպի ձախ՝ դեպի Կուլթիկ գյուղ: Կարմիր ձիով գետն անցավ, շատ լավ հագնված էր: Տեսանք, որ անձնատուր չի լինում, Եղիազար էլ չի սպասեց, հրացանով տվեց, ձիուց ցած բերեց: Մենք գնացինք, սպանվածի ձիին, զենքեր, նրա բոլոր փաստաթղթեր բերինք մեզ մոտ, բայց քաղաքից տեղեկություն չունեցանք, թե ի՞նչ եղավ: Կեսօրին մեզ կանչին քաղաք հանգստանալու, մեր տեղ ուրիշ գործնաս տվին քաղաքը պաշտպանելու համար: Լսեցինք, որ մեր գնալուց հետո Անդրանիկ երկու հարյուր մարդով թուրքական գործանցի դուռն է գնացել և մեջի եղած գորք անձնատուր է եղել: Բոլորի զենքերն առնելուց հետո որպես զերի ուղարկել են դեպի Վան: Ես և Եղիազար նոր էինք հաց կերել, ուզում էինք քնել, մեկ էլ մի կամավոր զինվոր եկավ և ասավ

–Անդրանիկը ձեզ կանչում է:

Ելանք, երկուսով գնացինք: Դռան մոտ կանգնանք, մինչև մեզ կանչեց ներս: Անդրանիկ նստած էր Բիթլիսի ոստիկանի պետի գրասենյակում: Մեզ ընդունեց շատ սառը: Առաջին խոսքից շշմեցինք:

–Դո՛ւք եք հրացան կրակող,– ասավ,– ձեր երկուսից ո՞վ է կրակել:

–Ես,– ասավ Եղիազար:

–Շատ լավ,– ասավ Անդրանիկ,– զենքերդ վա՛ր դիր, հիմա ձեզ ցույց կտամ կրակել: Ես չասի, որ հրացանի ձայն չի լսեմ, որպես օրենք խանգարող՝ կրակողին պետք է սպանել տամ: Որ դու իմանաս, թե ի՞նչ է իմ տված խոսք չի լսողի դատաստան:



ՔԱՂԵՇ (ԲԻՅՈՒՍ) քաղաքի և բերդի ընդհանուր տեսքը

Կրակողին սպանել, իսկ մյուսի զենքեր թափել տամ, թող գնա, նորից դառնա լիբուս²⁷⁸:

Մեր լեզուն չորցավ բերնի մեջ: Ես տեսա, որ մեր բանը բուրդ է, և էլ ճար չկա, գրպանիցս սպանված թուրքի փաստաթղթերը հանեցի և զցեցի սեղանի վրա, մեր զենքերն էլ թափեցինք սենյակի մեջ: Նա թղթեր տեսավ, վերցրեց, մտիկ տվեց նկարին, թղթերը տվեց քարտուղարին:

–Կարդա՛,– ասավ:

Քարտուղարը կարդաց: Մեկ էլ ի՛նչ, Անդրանիկը տեղից վեր կացավ, հասավ Եղիազարին, պռնեց և չորս անգամ համբուրեց:

–Կեցցե՛ն մեր քաջ ոգմեցիք, դուք իմ տասը տարվան հակառակորդին եք սպանել, տասնհինգ թվի ռիսերիմ թշնամուն՝ Մուշի Ֆերեկ²⁷⁹ փաշային:

Հիմա մեր կապված լեզուն բացվեց, մեր սրտեր տեղ եկավ:

–Փաշա՛,– ասի,– մենք չենք իմացել, թե ով էր, մնակ տեսանք, որ լավ հագնված, լավ ձին տակին, ջուրն անցավ, փախչում էր դեպի Կուլթիկ գյուղ, էլ

չի համբերեց Եղիազար և տվեց սպանեց: Հիմա լավ է, որ մեր բերած թուրքը Եղիազարին փրկեց սպանվելուց: Նրա ձին ու զենքերը բերինք, տվինք պահեստ: Հիմա դուն գիտես, ում կտաս, տու՛ր:

–Լավ,– ասավ Անդրանիկ,– ձին և զենքեր տվել եմ ձեզ, ինձ մնակ այս նկարը և թղթերն էր հարկավոր, դուք գնացե՛ք հանգստացե՛ք: Ես ձեզ կպարզեցնեմ ձեր գիշերվան պարտք կատարելու և այսքան հայ ժողովուրդ փրկելու համար: Դուք արժանի եք:

Բայց մի հայ հարյուրապետ մի բամբասանք արավ: Նա այսպես ասավ:

–Փաշա՛, սրանք շատ փող բերած կլինեն, վատ են անում, որ ցույց չեն տա, Ֆերեկ փաշան շատ փող կունենար իր հետ, տղաներ ճիշտ չեն խոսում, պետք է ցույց տան բերած փող, որ տանք այս ժողովրդին:

Բայց Անդրանիկն անպատվեց հարյուրապետին:

–Դու ո՞վ ես, քեզ ի՞նչ ցավ կա, որ դու գրպարտում ես տղաներին: Դու փող ես ամբարել, տվել Ֆերեկին, որ խոսում ես: Գնացե՛ք, տղերք, ինչ բերած լինեք, ձեզ հալալ է:

–Մեր բերած Ֆերեկ փաշի զենքերն են,– ասի,– և նրա ձին: Ես եմ խուզարկել: Նրա գրպաններից

278 Թաղիքագործ, զգրար:

279 Հավանաբար խոսքը վերաբերում է Բաղեշի կուսակալ Ֆերիք փաշային, որը 1901 թ. նոյեմբերին Ալի փաշայի հետ 6000-անոց զորքով պաշարել է Մշո Սբ. Առաքելոց վանքը, որտեղ էլ տեղի է ունեցել Անդրանիկի գլխավորած Առաքելոցի հայտնի կռիվը:

տասը ոսկի փող է եղած, երեսուն մաջեթիան արծաթ փող, ահա նրա փող, թող ուրիշներ չկարծեն, որ մենք փողի համար մեռած ենք:

–Լավ,– ասաց Անդրանիկ,– մի՛ ջղայնացիր, մի խոսք էր, ասավ:

Գիշեր բարի ասինք, գնացինք Կարմրվոր եկեղեցին, որտեղ մեր ձիանք կապած են մի հայի տան բակում:

Բիթլիսում հայեր քիչ էին մնացել, մի մաս փախած էր զանազան կողմեր, մի մաս կոտորած էր թուրքի ձեռքով, մի քիչն էլ ծանոթ թուրքեր թե քրդեր պահած են իրենց տներում:

Բիթլիսի հայեր փողապաշտ էին: Մեր քաղաքն է, ես իմանում եմ նրանց: Այդքան փողի տեր ին, մի հատ զենքի կտոր չունին, և մի մարդ չկար դեկավարող: Երկու մարդ կար, կարող էին դեկավարել, նրանց էլ Բիթլիսի մեջ տասներկու թվին²⁸⁰ թուրք դեկավարություն կախեց: Մեկը Բիթլիսի առաջնորդն էր²⁸¹, մեկն էլ ուռուտափցի Կարապետը²⁸², որ Փալաքեղ են ասում:

Թե՛ Բիթլիսի մեջի և թե՛ շրջանի գյուղերի հայեր, եթե զենք ունենային, նրանց սարեր շատ հարմար տեղեր կար կռվելու, ինչպես Նամրուք կամ Քոքոռ սարեր կամ Գոզալդարի բարձունքներ: Բիթլիսում Վանի չափի հայ չկար, բայց եղածն էլ կազմակերպված չէր: Նրանց մեջ միություն չկար, յուրաքանչյուր մարդ աշխատում էր մի խանութ ավել բացեր, որ շատ չամիչ, խորմա, թուզ, նուռ Սղերդի կողմերից կամ Խիզանից առնի, ծախի: Թորոսյան Կարապետը մի պարկ ոսկի ուներ, բայց մի հատ երկաթի կտոր չկար տուն: Որ ասում էին, թե ջահելի տեր ես, մի երկու հատ զենք ա՛ռ, դի՛ր տունդ, մի օր պետք կլինի, ասում էր. «Ես կռվող չեմ, զենքն ինչ անեն»: Եթե մի երիտասարդ մի հատ զենք էր առնում, մատնում էին:

Մենք Բիթլիսի նահանգից ենք, բայց մեր գյուղը Մոկաց գավառին մոտ է: Մեր գյուղացիք ավելի շատ Վանից են առևտուր անում, քան թե Բիթլիսից: Երկու մութասարի՛ք կար Բիթլիսի նահանգ, մեկ՝ Մուշ, մեկ՝ Սղերդ: Բիթլիսի նահանգում քիչ չէր հայերի թիվ, բայց մնակ Մուշի և Մասունի հայեր զենքի հետ գործ ունեն, այնպես էլ շատեր ազատ-

վեցին կոտորածից: Խլաթի մարդիկ միշտ լավ են եղել կռվի մեջ, բայց տասնհինգ թվին մի բան դուրս չեկավ ընդհանուր գավառից, քանի որ այնտեղ էլ միություն չկար հայերի մեջ: Բիթլիսին մոտիկ շրջան Տատկո դաշտն էր, շուտ են փախած դեպի Խիզան, դեպի Կարճկանի կողմ: Առհասարակ Բիթլիսի բոլոր հայեր շատ վնասվեցին, քան թե Վանի նահանգի հայեր: Բիթլիսում չորս քուրդ ենք պոնած իրենց ընտանիքով: Նրանք խոստացան, որ կզնան մոտիկ քրդաբնակ գյուղեր, ուր հայեր կան, և նրանց կբերեն:

–Շա՛տ լավ,– ասին տեղացի ժողովրդին,– եթե դուք նրանց բերե՛ք, մենք ձեզ փող կտանք: Ինչքան հայ մարդ, թե կին բերեք, մարդագլուխ մի ոսկի կստանաք: Ուզում է չորս հազար մարդ բերեք, չորս հազար ոսկի կստանաք, համ էլ ձեր ընտանիք ապահով կմնա մեզ մոտ:

Քրդեր իրենց կին, երեխեք թողին, գնացին հայ բերելու: Մի անգամ երեսուներեք մարդ, կին բերին երեխաներով, բայց անչափահաս երեխաների համար փող չեն առնում: Մի ծեր քրդի հարցրի. «Այս հայերին կաս՞ թորբիք»²⁸³:

Ասավ, թե իրենց ծանոթների հետ փախել են դեպի Դոխանի կողմեր, Խանա Չավետորի քուրդ գյուղեր, մինչև Գոֆրայի մոտեր: Մենք պետք է գնանք մինչև Շիրվանի գյուղեր, մեր ծանոթ հայերին բերենք: Քրդեր բերած հայերի համար փողեր առան, նորից գնացին դեպի Շիրվան, իսկ բերած հայերը Բիթլիսում չմնացին:

Երկու օր հանգստացան և գնացին դեպի Վանի կողմեր: Մենք էլ շատ չմնացինք Բիթլիսում:

Մեզ կանչին նորից դեպի Մուշի կողմեր: Մեր վաշտից տասը զինվոր գնացել էին Կուլթիկ գյուղ, Մոկոլով ինձ դրկեց նրանց կանչելու: Երկու զինվոր տվեց, ասաց.

–Գնա՛, Բենոն այնտեղ է, նրան ասա՛, որ վերցնի իր տասնյակ, գա, վաղ մեկնելու եք դեպի Մուշ:

Վերցրի երկու զինվոր, գնացի հրաման կատարելու: Հասանք Կուլթիկ, արթեն մութ էր: Բենոյին ասի.

–Մուշից կանչում են, վաղը գնալու ենք:

–Լավ,– ասաց Բենոն,– հիմա հանգստացե՛ք, առավոտ կզնանք:

Մի քանի տուն մտա և ի՛նչ տեսա: Իմ տեսած Կուլթիկ գյուղ ավերակ է դարձել, ո՛չ բրուտ կա, ո՛չ պուտուկ, կուժ, կարաս, բոլոր ջարդած են քուրդ ավազակներ: Շեն Կուլթիկի մնակ անուն է մնացել: Կուլթիկ գյուղ Բիթլիսի ամենամեծ գյուղերից է, նրանց ընդհանուր արհեստ աման շինելն է, ասում ին Բրուտի գյուղ²⁸⁴: Գիշեր մնացինք, կրակ վառինք: Բենոյին պատմի Կուլթիկ գյուղի մասին, թե

280 Դեպքը կատարվել է 1915 թ.:

281 Խոսքը վերաբերում է Մուրեն վարդապետ Գալենյանին, որին 1915 թ. Արմենակ Յոխիկանի, Արմենակ Փարխանյանի, խիզանցի դարբին Վարդանի և այլոց հետ ձերբակալում են, ենթարկում տանջանքների, ապա քաղաքի հրապարակում կախաղան հանում («Կոչնակ», 1916, № 35, էջ 915):

282 Ուռուտափցի Կարապետ Սաֆարյանը (1865-1915) Աղբյուր Մերոքի զինվորներից էր. «Բալապեխ Կարապետ, Մերոք Աղբյուրի ամենէն նշանաւոր ֆետայիներէն մէկը... Հայաստան աշխարհի ամեհի լեներուն պէս ըմբոստ, սարսափազդու, վճռակամ եւ ազնուական ֆետայի մը...» (մանրամասն տես՝ Գալենյանյան պատմաբանի գիրքը, հ. Ա, Պէյրուք, 2003, էջ 208-210): 1915 թ. ձերբակալվում է և կախաղան հանվում Բաղեշում (Յուզամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան. այբոմ-ատլաս, հ. Բ, Լուս Անճելլոս, 2001, էջ 45):

283 «Որտեղի՞ց բերիք»:

284 Գյուղը հայտնի է եղել որպես բրուտագործության կենտրոն («Մշակ», 1888, № 99):

ինչ շեն գյուղ էր: Ի՞նչն էր պատճառ, որ բոլոր հայկական շեն գյուղեր ավերակ դարձան:

Մարտի երեքին դուրս եկանք Կուլթիկ գյուղից և եկանք Բիթլիս: Մարտի հինգին մեկնեցինք դեպի Մուշ քաղաք, առաջինը մտանք Փափշեն²⁸⁵ հայ գյուղ, այնտեղից գնացինք Մոխր քրդական գյուղ, բայց մարդ չկար: Քրդեր նույնպես փախած են գյուղերից: Մոխր գյուղ իջանք, մի քիչ տաքացանք: Թողեցի, որ ռուսներ հանգստանան, իսկ ես գնացի գյուղի մեջ: Բոլոր տներ շեն էին, ոչ մի տուն վառած չկար, նրանց մզկիթ նույնպես կար, քանի որ այն կողմեր կամավոր կամ զինվոր չէր գնացած: Ես, որ տեսա քրդերի աղոթատեղ քանդած չին, իսկ մեր եկեղեցին տակնուվրա են արած քրդեր, միտս եկավ, որ վրեժ հանեն: Լուցկին հանեցի, տվեցի խոտերին և զցեցի մզկիթի մեջ: Մյուս, չոր փայտ բուսեկան կրակ ընկավ, վառեց լրիվ շենք: Ջինվորներ եկան, լավ տաքացան: Վաշտի պետ մի քիչ նեղացավ ինձ վրա, թե ինչի՞ վառիր այս լավ շենք: Բենիկին ասի, թե դու ասա Սոկոլովին, որ քրդեր մեր եկեղեցին վառեր են, ես էլ նրանց մաշիթ վառի: Բենիկ պատմեց նրան, նա ծիծաղեց. «Մալադեց, Արմո՛, դու քո վրեժ լուծիր, հիմա գնում ենք, մեզ ճանապարհի ցույց տուր դեպի Մուշ»:

Մենք առաջացանք, հասանք Ավգուտ²⁸⁶ հայ գյուղ, բայց տեսա, որ ձախ կողմից դեպի Խվներ²⁸⁷ շատ դժվար է: Մեժ, դուման տվել է դաշտի վրա, ճանապարհ չկա: Որոշեցի Ավգուտից անցնեմ դեպի Վարդենիս, այնտեղից գնանք Քրդագոմով, Խոփերով հասնենք Մուշ, բայց հարցրի մեր պետից, թե ո՞ր կողմով գնանք: Նա ինձ ասավ.

–Դու լավ ես իմանում, որ կողմից մտաիկ է, այնտեղից գնանք:

Օր լավ է, եղանակ տաք է, բայց շատ դուման է, տասը քայլի վրա մարդ մարդու չի տեսնում: Իմ միտք փոխեցի, դարձանք դեպի ձախ՝ Մուշի և Բիթլիսի մեծ ճանապարհ: Երեկոյան հասանք Խվներ, նախկին Խորյան՝ Մովսես Խորենացու ավան, որ քրդեր անուն փոխել են Խվներ՝ Մուսաբեկի գյուղ²⁸⁸: Բայց մեզինց առաջ մի խումբ հայ կամավորներ, որոնց մեջ եղել են Մուշի դաշտի տղաներ, ավագակ Մուսաբեկի գյուղ տակնուվրա են արած, դարձրեր են խոպան: Նրանք էլ իրենց գեղերի վրեժ են հանած: Ընդհանուր Մուշի դաշտի հայեր ուզում

են Մուսաբեկին տեսնեն, նրա արյուն խմեն, բայց նա չկար, փախած էր դեպի Քրդաստան: Այն, որ Մուսաբեկ Խարսա Միրոյի աղջիկ Գուլոյին փախցրեց, մինչև վերջ մնաց հայերին թշնամի: Մուշի դաշտի վերջին կոտորած նորից Մուսաբեկի ձեռքով եղավ:

Գիշեր մնացինք Խվլա Գեսան, որ շատ հեռու չէր Մուսաբեկի Խվներից: Մյուս օր հասանք Խաց գեղ՝ Մեսրոբ Մաշտոցի գյուղ, որտեղ մի խումբ զինվորներ պատահեցին մեզ: Սոկոլով հարցրեց պոկովնիկի տեղ, նրանք ասին, թե պոկովնիկ Գառնիկ գյուղումն է նստած, այնտեղ էլ նրան տեսանք: Մեր վաշտ տեղավորանք Ջրիկ հայկական գյուղ, որ Մուշին շատ մոտ էր:

Մի շաբաթից հետո մեր վաշտին առաջարկեցին, որ պետք է մի վաշտ հայ կամավորների հետ գնանք դեպի Ս. Կարապետի կողմեր: Մարտի քսանմեկին մեկնեցինք դեպի Ս. Կարապետի կողմ: Մեզ հետ հայ շատ կար, բայց նորից տեղին լավ ծանոթ ես դուրս եկա: Նրանց առաջնորդեցի: Գետեր շատ լինելու համար նրանց տարա, Սուլուխի կամրջից անցանք դեպի Գոմս գյուղ: Բայց պետք է ասել, որ մենք նոր մտանք Մուշ՝ Կզլաղաջի կովի: Ժողովուրդ քիչ կար, Կզլաղաջ²⁸⁹ Մուշի դաշտ գյուղ էր:

Բիթլիսից դարձանք Մուշ, բոլոր գյուղեր շատ ժողովուրդ կար: Գիշեր մնացինք Գոմս գյուղ, մյուս օր գնացինք Խարիբյան: Հայկական մեծ գյուղ է Խարիբյան, բայց մենք ոչ մի թուրքական զորքի չի պատահեցինք:

Կզլաղաջի կովից հետո վերջապես հասանք Ս. Կարապետի վանք: Ես մեկ չորս թվին էի վանք գնացել, մեկ էլ տասնմեկ թվին, բայց երկու անգամն էլ թևս անեղ կար, իսկ այս անգամ թվիցս կոլտո մոսիմի հրացան կար: Վանք նույնպես քայքայված էր թուրք ասկարների ձեռքով: Վանքին վնաս չեն տված շատ, բայց մյուս շենքերից մի բան չէր մնացել իր տեղ: Մի քանի օր վանք մնալուց հետո ես վերցրի հիսուն ձիավոր և գնացի մինչև Կվարս, մինչև Բոկլան հայ գյուղեր: Բայց մարդ չտեսանք, բացի մի քանի պառավ քրդերից, որ նոր են սարից եկած հաց կամ ցորեն ճարելու:

–Բոլորս սոված մեռնում ենք,– ասում էր մի պառավ կին,– լսած ենք, որ գավառներում կին չեն սպանում, նրա համար եկանք, մի քիչ ուտելեղեն ճարենք, տանենք մեր երեխաներին:

Քրդերեն հարցրի, թե ձեր ժողովուրդ որտե՞ղ է: Ասավ, թե փախած են սարեր, ամեն մարդ մի տեղ է պահված: Գավուրներ որ մտան Մուշ, մենք մեր տներ թողինք, փախանք այս սարեր:

Պառավին ասացի.

–Որտեղացի՞ եք:

–Բաղլու գյուղից ենք, ուրիշ տեղից շատ կան:

285 Գյուղի տեղադրության մասին տե՛ս № 269 ծանոթագրությունը:

286 Մինչև 1915 թ. գերազանցապես հայ բնակչություն ունեցող Ավգուտ գյուղը գտնվում է Բիթլիսի նահանգի Մուշ քաղաքից 40 կմ հարավ-արևելք՝ Մեղրագետի ձախ ափին: Վերանվանվել է Բյուվեթլը (Büvetli):

287 Խոսքը վերաբերում է քրդաբնակ Վերին Խվներ գյուղին (վերանվանվել է Կողուկտաշ՝ Koşuktas), որտեղ բնակվում էր հայակեր Մուսաբեկը:

288 Այստեղ շփոթ կա, քանի որ Մովսես Խորենացու ծննդավայրը Տարոնի Խորոնք (Խորեն) գյուղն է (վերանվանվել է Խարման՝ Harman):

289 Մինչև 1915 թ. զուտ հայաբնակ գյուղը գտնվում էր Մուշ քաղաքից 16 կմ հյուսիս-արևմուտք: Չի անվանափոխվել Կզլաղաջ (Kizilagaç):

–Լավ,– ասացի ես,– այս Բոկլանի հայեր ի՞նչ եղան:

–Ես չտեսա, թե ուր գնացին տեղի հայեր,– ասաց պառավ,– նրանք շուտ են փախած, մենք լուր չունենք նրանցից:

Մենք թողինք, հետ դարձանք դեպի Կվարս և եկանք նորից վանք: Բայց հրամանատար նեղացավ, որ երկու կին չենք բերած, հետաքրքիր է նրանցից իմանալ, թե թուրքական զորք որտեղ է այժմ: Ես ասի:

–Նրանք տեղեկություն չունեն թուրքի զորքից, բայց մոտիկ գյուղում կարող ենք իմանալ, նրանք փախած չեն իրենց տեղերից:

Առավոտ գնալու եմ Բազ գյուղ, գուցե նրանք իմանան: Բազի ժողովուրդ քուրդ չեն, նրանք դվիլ են, ո՛չ քուրդ են, ո՛չ հայ, մի տեսակ ազգ էլ նրանք են: Նրանք մնակ սուրբ Սարգսին են հավատում: Նրանց լեզուն տարբեր է քրդերից: Նրանք Դերսի-մի դվիլկների ազգից են:

–Լավ,– ասավ,– վաղ գնալու ես քո ասած գյուղ:

Մյուս օր գնացինք Բազ, որ վանքից շատ հեռու չէր: Մտանք գյուղ: Մի քանի ծերացած մարդ եկան, մեզ դիմավորեցին աղով, հացով: Ես Բազին ծանոթ էի, այնտեղ շատ եմ թաղիք գզել: Քրդերին բարև տալուց հետո հարցրի. «Գյուղում քոչվոր հայերից չկա՞ն ձեզ մոտ»: Ասին, թե մի քանի կին, երեխա կան: Գնացինք տեսանք հայեր են: Հարցրի, թե որտեղացի են նրանք, ասին. «Մենք Վանքի գոմերի աշխատողներից ենք, երբ թուրքի ասկարներ մտան վանք, մենք թողինք, եկանք մեր ծանոթների մոտ»:

–Լավ,– ասի ես,– դուք բնիկ ո՞ր գյուղացի եք:

–Քառասուն, հիսուն տարի է, որ վանք անասուններ ենք պահում, առաջ մեր մեծեր եկել են Խլաթի գյուղերից:

–Շատ լավ, չե՞ք ուզում, որ ձեզ տանենք Մուշ՝ հայերի մոտ:

–Մենք շատ ուրախությամբ ուզում ենք, որ գնանք, հայ տեսնենք:

–Ի՞նչքան մարդ կա այստեղ հայերից,– հարցրի:

–Քառասունչորս մարդ, կին, երեխա կա:

–Լավ, պատրաստվեցե՞ք, ձեզ տանում ենք մեզ հետ:

–Ե՞րբ եք գնալու,– ասավ Ղուկաս ծերունին:

–Այսօր՝ կեսօրից հետո, դուք պատրաստվեցե՞ք:

Ես դարձա դեպի գյուղի տանուտեր, որ իրենք գայմագամ են ասում: Ասի, թե թուրքական զորք ո՞ր կողմից փախավ: Նա ասավ.

–Թուրքի զորք Կզլաղաջի կովից հետո շատ մաս փախավ դեպի Ճապաղջուր, իսկ մի մաս վանքի եղած զորքերի հետ փախավ դեպի Խոռխոռիք, դեպի Գեղվա ձորեր՝ Բոկլանի ձորով: Թուրք զորք, որ լավ, թե Մոսկով եկավ, էլ նրանք չի մնացին այս կողմեր, թողին, փախան: Մի մկան ծակ տասը ոսկի արժեք նրանց համար: Հիմա դու եմ ասա՛, դու Մոսկով ես, թե հա՞յ ես:

–Հայ եմ,– ասի ես,– Հասո՛ քիրվա:

–Լավ, դու իմ անուն ի՞նչ իմացար:

–Ես քեզ ծանոթ եմ, ես քեզ քեչա եմ գցել:

–Ուրեմն դու լրոտ ես, հա՞:

–Այդ թողնենք, Հասո՛ քիրվա, դու էմ ասա՛, թուրքեր ձեզ չե՞ն կոտորում:

–Չէ՛, մենք Թուրքիայից բան չենք պահանջում, ինչպես հայերն են պահանջում՝ թագավորություն, նրա համար էլ թուրք թշնամի է հայերի հետ: Իսկ մենք ոչինչ չենք պահանջում թուրքից: Մեզ համար մեկ է թե՛ թուրք և թե՛ Մոսկով կամ ինգլիզ, իսկ հայեր իրենց նախկին իշխանություն են պահանջում, նրա համար նրանց կոտորում են:

–Լավ, Հասո՛ քիրվա, շատ չի քաշի, կտեսնես կամ կլսես, որ հայեր իրենց ազատ իշխանություն կունենան երկու կամ երեք տարուց հետո: Ինչքան հայ կոտորվեցին, այնքան էլ մուսուլման կոտորվեցին, բայց դու իմացի՛ր, որ հայերի թափած արյուն գետին չի մնա, հայեր կունենան իրենց ազատ իշխանություն:

–Թող տա՛ աստված,– ասաց Հասո,– բայց չիմացա, թե քու ընկերներ ի՞նչ մարդ են:

–Իմ ընկերներ ռուսական բանակից են, բոլոր կազակ են: Թուրքի հոգեառներն են, սրանց գնդակ գետին չի ընկնում:

–Լավ,– ասաց Հասոն,– մինչև հայեր պատրաստվեն, դուք նստե՛ք, մի կտոր հաց կերե՛ք: Հետո բարի ճանապարհ ձեզ էլ, մեր սիրելի քույրերին, եղբայրներին էլ:

Հասոն երկու հատ ոչխար էր մորթել: Մի թեթև ճաշելուց հետո վերցրինք մեր գտած թանկագին գանձ, այսինքն՝ հայ ժողովրդին, երեկոյան նորից եկանք վանք: Այս անգամ Սոկոլով շատ ուրախացավ թե՛ ժողովրդի համար, թե՛ թուրքերի մասին տեղեկություն բերելու մասին: Նորից «մալադեց» ասավ:

Շատ չմնացի Ս. Կարապետի վանք, Սոկոլովի հետ եկա Մուշ, որտեղ նորից Եղիազարին տեսա Հաջիմանուկ գյուղ, որ Գառնիկ գյուղին կպած է՝ Մուշ քաղաքի տակ: Մի ամիս մնացինք Մուշի դաշտի իմ ծանոթ գյուղեր, բոլոր ման եկա: Մարդու սիրտ չէր դիմանում, որ մտիկ ես տալիս Յրոնքի մման շեն, մեծ գյուղին: Ո՛չ մարդ կա, ո՛չ անասուն, դարձել է ավերակ: Գնացի Սրկեխոնց տուն, Ջվե Մաֆարի տուն, որտեղ շատ ինք թաղիք շինել, ծախել: Այնտեղից եկա Մուշ, գնացինք Առաքելոց վանք և այն վերջին անգամ տեսանք: Շատ տեղեր գնացի մինչև մայիսի չորսը:

Մի օր Եղիազար ինձ ասավ.

–Արմո՛, դու լսեր ե՞ս, որ Անդրանիկ ասում են, որ գնացել է Թիֆլիս: Մենք ինչո՞ւ ենք մնացել այստեղ, արի մենք էլ գնանք:

–Լավ,– ասի ես,– թող ես Սոկոլովին տեսնեմ, նա շատ բարի մարդ է, տեսնեմ նա ի՞նչ խորհուրդ կտա, առավոտ քեզ կասեմ:

Երեկոյան տեսա մեր վաշտի պետին: Նա ինձ ասավ:

–Անդրանիկ փաշեն գնացել է Թիֆլիս գործով, բայց եթե դու ուզում ես գնալ, ես դեմ չեմ, քեզ մի քիչ փող կտամ, հետո էլ անցագիր, որ քեզ չի պոնեն ճանապարհին:

–Լավ,– ասի ես,– շնորհակալ եմ քեզանից:

Մյուս օր գնացի, նորից տեսա նրան, շատ տխուր էր երևում: Ինձ տարավ առանձին տեղ, Բենիկին էլ կանչեց մեզ մոտ, որ լավ իմանամ նրա ասածները: Նա Բենիկից ոչինչ չէր պահում, ինձ մի վկայական տվեց, Բենիկը կնքեց հրամանատարի մոտ: Ինձ երեք հարյուր մանեթ էլ փող տվեց և ասաց:

–Քեզ բարի ճանապարհ եմ մաղթում, բարով հասնես քո ընտանիքին: Դու լավ տղա ես, քեզնից չեմ պահում, մենք բոլորս շուտով թողնում, գնում ենք դեպի մեծ գործեր: Մինչև աշուն դու կլսես, որ բոլոր ժողովուրդներ կփրկվեն այս չարչարանքից: Դե գնա՛, քեզ բերի, չարչարեցի, բայց ոչինչ, դատարկ չես գնում տուն:

Մայիսի վեցին ես և Եղիազար Սասունից իջնող ժողովրդի հետ մեկնեցինք Ցրոնք, այնտեղից էլ դեպի Բլանուխ՝ դեպի Բոստանքենդ²⁹⁰ գյուղ, ուր իմ տեսած Մարտոյի տուն չկար, և ոչ էլ Բադի տուն կար: Հսկա Բոստանքենդ գյուղ ասես թե մարդ ապրած չի եղել այնտեղ, տեղ-տեղ շներն են սոված վնգատում, թե ինչն էր պատճառ այդքան ավերածության: Ի՞նչ գործ ուներ գերմանացին Սարիկամիշ կամ Վան, Բիթլիս, Էրզրում և այլ տեղեր: Բայց մնակ գերմանացին չէր, ի՞նչ գործ ուներ անգլիացին Երևանի կայարանում, այսքան ժողովուրդ, որ ազատվեց, բոլոր ռուսական գործի շնորհիվ ազատվեց, թե՛ Վանի և թե՛ ուրիշ տեղերի հայ ժողովուրդ:

Մենք մի գիշեր մնացինք Բոստանքենդ, մյուս օր եկանք Լիզ²⁹¹ իմ քրոջ տուն: Բայց ո՛չ քույր կար և ո՛չ էլ տղաներ: Մախտ բատեի տուն ավերակ էր դարձել: Այնտեղից անցանք Կոբ և Մուրադ գետի ձախ կողմով հասանք Մանձկերտ: Վերջ եկանք, Ալաշկերտով անցանք Կարս, Տեկոր, Ագարակ գյուղ: Եղիազարենց տուն այնտեղ էր: Մի քանի օրից մեկնեցի դեպի Երևան:

Եկա Բագարան, այնտեղից Արաքս գետի ափով եկա Գեջալու գյուղ, վերջին անգամ մորաքրոջս տեսա ու անցա ուղիղ դեպի մեր տուն՝ Նոր Բայազետ: Մեր տուն տեսա Ղշլաղ գյուղում, բայց ոչինչ չկար տան մեջ: Մնակ մեծ եղբորս կինն էր մահացել, իսկ մյուս ընտանիք ողջ են: Մի ամիս մնացի:

Տեղ չկա, որ ձին կապեմ: Տեղացի հայեր չեն թողնում, որ իմ ձին կապեմ նրանց չափր:

Ասում են.

–Մնակ գլավին իրավունք ունի այստեղ ձին կապի: Գաղթական երբեք իրավունք չունի ձի բերի մեր գյուղ: Չեզ տեղ ենք տվել, էլ ի՞նչ եք ուզում, գաղթականն ի՞նչ է, որ ձի պահի:

Ես ստիպված ձին տարա Բայազետ, ծախի, նորից վերցրի չաք-անեղս, սկսի գեզ անել: Մի առակ կա, որ ասում է. «Շերե հասան աստ սալ բեմալի, դե բչի, երկաթից թուր հարյուր տարի մնա, պետք է անեն խոփի գոր»:

Իմ գործ գորարություն է, ես ի՞նչ գործ ունեմ ձիու կամ գենքի հետ: Տունս փոխադրի Բայազետ, սկսինք մեր պապական արիեստը մինչև տասնութ թիվ: Առաջին անգամ մի գունդ զինվորներ եկան, Բայազետից անցան, որ կոչվում էր «Շուշինսկի պոլկ»: Նրանից հետո եկավ «Գեմջինսկի պոլկ»: Ջինվոր չի մնաց Թուրքիայի դեմ, մի քանի օրից հետո եկավ Անդրանիկի գունդ²⁹²:

Այն ժամանակ նոր ժողովուրդ սկսեց կասկածել, և ամեն մարդ իր պատրաստություն տեսավ փախչելու: Մեր գաղթականներ ինձ դրկեցին Անդրանիկի մոտ, ասին.

–Դուն ծանոթ ես նրան, գնա՛, տես ինչ խորհուրդ կտա, մենք գնա՞նք, թե՞ ոչ:

Անդրանիկ նստած էր Աբրիկյան Օհանի տուն: Նա ինձ ճանաչեց:

–Ի՞նչ կա, ոգմեցի՛ տղա:

Ես պատմի մեր գնալու կամ մնալու մասին:

Ասաց.

–Չեզ ոչինչ չկա, դուք հանգիստ կացեք, թուրք այստեղ չի գալու: Թուրքի Էնվեր փաշեն ուզում էր ինձ պոնեն, բայց նրան չի հաջողվում գալ, աղվեսին չի կարող մոտենա: Ես իմ ճանապարհ թեքեցի, իսկ նա կանչեց դեպի Բաքու: Նրա ցավ ես իմանում եմ: Նրա ցավ Անդրանիկն է:

Պատմեց Թուրքիայի դրության մասին: Ասաց.

–Էնվեր փախած է Պոլիսից, էլ հետ չի դառնալու Պոլիս: Հավիտյան մեկնում է Բաքու, իր համար նոր ապաստան գտնի: Բայց այնտեղ էլ նրան տեղ չկա: Նա ոչ մի տեղ չի կարող մնալ, շուտով նրա կյանքին վերջ կտան: Էնվեր Կովկասում կամ ռուսական հողի մեջ տեղ չունի, իսկ դուք չեք իմանում, որ անգլիացիք Դարդանել գրավել են: Սուլթան Ռաշիտ իրեն թունավորեր է, Թալեաթ փաշան նույնպես փախած է Պոլիսից, ինչպես նաև Ջամալ փաշեն, Նազիմ փաշեն: Բոլոր հայ դահիճներ չկան Պոլիսի մեջ: Շուտով թուրքի իշխանություն կփակվի, քրդեր նույնպես գլուխ չեն խոնարհի Թուրքիայի առաջ, եթե դրություն չի փոխվի: Միայն, որ հայեր խելոք

290 Մինչև 1915 թ. գուտ հայաբնակ Բոստանքենդ գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգի Բուլանըլս գավառի գավառանիստ Կոփ ավանից հարավ-արևմուտք:

291 Մինչև 1915 թ. գերակշիռ հայ բնակչություն ունեցող Լիզ գյուղը գտնվում էր Բիթլիսի նահանգի Բուլանըլս գավառի գավառանիստ Կոփ ավանից հարավ-արևմուտք՝ Վարդ կամ Լիզ գետի ձախ ափին: Վերանվանվել է Էրենթեփե (Erentepe):

292 Անդրանիկի ջոկատը Նոր Բայազետում է եղել միայն մեկ օր՝ 1918 թ. հունիսի 9-ին (Андраник Озанян. Документы и материалы, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, № 1-2, էջ 445):



Արմենակ Ամրիկյանը (կենտրոնում) 1918 թ. Երևանում

լինեն, կկապվեն Ռուսաստանի հետ, ձեռք կքաշեն խաբեբա, գոռոզ Անգլիայից: Նրանք հայերին խաբում են: Հայկական ներկա ժամանակավոր կառավարություն նույնպես երկար չի կարող ազատասեր մարդկանց իշխանություն անի: Հիմակվան կառավարողներ ինձ չեն ուզում, որ ես տեղ ունենամ Հայաստանի մեջ: Ես գնում եմ Պարսկաստան, գուցե ինձ հաջողվի Վանից գաղթած ժողովրդին մի թեթև օգնություն տան, որոնք Վանից փախած են դեպի Սալամաստի գավառ: Դուք այստեղ հանգիստ մնացե՛ք, ձեզ ոչ մի վտանգ չկա: Դուք շուտով ազատված կլինեք թե՛ Թուրքիայից և թե՛ Անգլիայից: Մեր հայերի փրկիչ միշտ եղել են ռուսներ, նորից նրանք կպաշտպանեն հային: Ես չեմ կարող սպասել այնքան ժամանակ, ես զզվել եմ այս իշխող մարդկանցից: Բայց ես հայ եմ, ես իմ հայ ազգին

շատ եմ սիրում, բայց իշխողներ ինձ ուրիշ անուն են տալիս: Թող ինչ գիտեն, ասեն, բայց ես չեմ կարող մոռանալ իմ սիրած հայ ժողովրդին: Ես հայ եմ, կմնամ որպես հայ ժողովրդին սիրող մինչև մահ:

Մյուս օրը նա մեկնեց դեպի Ջուլֆա, դեպի Խոյի կողմ, որ հասնի, Վանից եկած ժողովրդին օգնություն տա, բաց նրան չի հաջողվեց հասնել: Նրա դեմ դուրս եկավ Խալիլ փաշի զորք Խոյի մեջ: Չինայած որ Անդրանիկի զորք չի կարողացավ անցնել դեպի Սալամաստ, բայց էլի քիչ օգնություն չէր Վանի ժողովրդի համար: Թուրք զորք իր ուշադրություն դարձրեց դեպի Անդրանիկի կողմ, Վանի ժողովուրդ չուրմիա ծովի արևմտյան ափով ազատ գնաց դեպի հարավ: Այսքան եղավ Անդրանիկի օգնություն Վանից եկած ժողովրդին, իսկ ինքը դարձավ դեպի Գորիսի կողմ:

* * *

Մեր Ոզմեցոց անցյալի և ներկայի մասին, թե ինչպես էին ապրում առաջ երկրում կամ մինչև Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում, գրեցի, որ Ոզմի մեջ ապրում էր հարյուր տասներեք տուն: Նրա մեջի հարյուր տասներեք տնտեսության անձի թիվ կազմում էր հազար երկու հարյուր տասներեք մարդ, կին և երեխա: Բայց տասնհինգ թվի կռիվներից հետո ասկար գնացածների, գյուղում սպանվածների և ընդհանուր գաղթի հետ մնաց չորս հարյուր վաթսուներկու անձ:

Մեր տուն Ոզմա մեջ միջակ տնտեսություն էր. տասներեք անձից մնաց հինգ անձ: Էլ չեմ խոսում Գեբրլոնց տան մասին, որ քսանումեկ անձից մի հատ չկա կենդանի: Մոտ քսան տուն հիմա գոյություն չունեն, օջախներ հանգած են:

Մեծահասակ շատ ոզմեցիներ չեն կարող մոռանալ իրենց հայրենի տուն, Ոզմի անտեր մնացած ծաղկավետ սարեր, սառնորակ ջրեր, Կաոց և Վանքեր ձյունապատ գագաթներ, Կանչա սարի գլուխ և իրենց տղաներ և թոռներ հիշեցնում են, որ չի մոռանան:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբայենց Կարապետ 266
 Աբայենց Կարո 270
 Աբաջեան Ջէթէթ 143
 Աբաջեան Հմայակ 123, 137, 140
 Աբդալ բեյ, Մուրթուլա բեկի հայրը 280
 Աբդուլ Համիդ, սուլթան 18-19, 222, 289, 293, 301-307, 310
 Աբրահամ 334
 Աբրահամեան Լեւոն, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի փեսան 109, 114, 119-120, 145, 161
 Աբրահամյան Լուիզա Հովհաննեսի, հաճնցի Երվանդ Փոստալջյանի կինը 221
 Աբրահամեան Կիրակոս 319
 Աբրահամյան Հեղինե (Աչիկ), Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի թոռնուհին 95, 113-114, 158, 160
 Աբրիկ 14
 Աբրիկյան Օհան 361
 Աբրո, Աբրահամ Դաիթեան, նորգյուղացի 301, 308-310
 Ադամեան Սահակ 220
 Ադամենց Կարո, Վարդունի ամուսինը 101-102
 Ադամյանց Հայրապետ, ուսուցիչ 106-107
 Ադիխանենց Ադասար 101
 Ադուշ 273
 Ազատ, խարսեցի Դավիթ Ղազարյանի հայրը 68-69
 Ազատ (Ազգե, Լազար), խարսեցի Դավիթ Ղազարյանի հայրը 67
 Ազատ, առեճցի Սարգիս Ավետիսյանի որդին 7
 Ազատեանց Նահապետ, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի երեխաների կնքահայրը 158
 Ազիզ Էֆենտի 256
 Ազիզ իշխան 285
 Ազիզ, հովիվ 316
 Ազիզանցիք, քրդական ցեղ 285
 Ազնավուրյան Մինաս 98
 Ազնիվ 321
 Ազնիվ, խարսեցի Բավա Սմբատի և Մարգարիտ Խլղաթյանի դուստրը 184, 186
 Ազնիվ, խարսեցի Դավիթ Ղազարյանի հորեղբոր՝ Հակոբի կինը 67, 70
 Ազնիւ, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի քեճու դուստրը 127
 Ազնիվ, ոստիկան Վասիլի դուստրը 48
 Ազնիվ, Պողոս Կոստանյանի քույրը 253-254
 Ազո, Ոզնի տերտեր 296
 Ազոյան Թադևոս, Քյել Սարգիսենց Վարդանի մորեղբայրը 261
 Աթարբեկ 326
 Ալայ բեկ, տե՛ս Կոտան Ալիբեկ
 Ալէքսան, Լևոն Ստեփանյանի եղբայրը 123

Ալի Էֆենդի, դատավոր 138, 142
 Ալի 44
 Ալի 77-78
 Ալմաստ, առեճցի Սարգիս Ավետիսյանի հորեղբոր՝ Հովնեի կինը 21
 Ալօ, Թահայի որդին 319
 Ակիթ, Թահայի որդին 319
 Ահարոնյան Արմենակ, ուսուցիչ 103
 Ահարոնյան, պատվելի, ուսուցիչ 103
 Ահմե, Ահմեկափարս, Ահմեկաբարս (Կաբարսցի Ահմեդ) 314, 318, 321-322
 Աղայան Ղազարոս, ուսուցիչ 98
 Աղան, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբոր՝ Մուշեղի որդին 266
 Աղասի, ենիչերի 97
 Աղանի 127
 Աղավնի, օղուզուցի Բագրատ Սարգսյանի երկրորդ կինը 236, 248
 Աղավնի, խարսեցի Մարգարիտ Խլղաթյանի դուստրը 184-185
 Աղավնի, Նահապետի դուստրը 39
 Աղբյուր Հարո, նարեկցի 334
 Աղբյուր Սերոբ, Սերոբ փաշա, Սմբատ պապի հորեղբոր տղան 14, 68, 185, 304
 Աղիկենք, ազգատոհմ 240
 Աղվանյան Գրիգորիս վարդապետ (եպիսկոպոս), Կարսի փոխանորդ 101, 103, 105-107
 Աղուզումցյան Պետրոս, ուսուցիչ 106
 Աճեմեան Հայկ 232, 296, 309, 320
 Ամատունի Եղիսաբեթ, ուսուցչուհի 107-108
 Ամիրեանց Գրիգոր 140
 Ամիրխանեան Մոնա 158
 Ամրիկյան Արմենակ (Արմեն, Ամրո) Մանուկի, Մուխսի Մանուկի որդին, ողմեցի 278, 293, 316, 318, 323-327, 332-335, 346, 359-360, 362
 Ամրիկյան Սարգիս, ողմեցի, Արմենակ Ամրիկյանի եղբայրը 230, 234, 278
 Ամրոյի Աբգար 14
 Այծեմնիկ, իգդիրցի Լուսիկի դուստրը 27
 Այվազյան Գաբրիել եպիսկոպոս, Գևորգյան ճեմարանի տեսուչ, Հովհաննես Այվազովսկու եղբայրը 99, 103
 Անանիա 301, 328
 Անարխիստ տե՛ս Ռամոնյան Սարգիս
 Անդրանիկ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի ընկերը 268
 Անդրանիկ փաշա, գորավար 50, 61, 70, 232-235, 305, 325, 337-338, 345, 354-358, 360, 362
 Անդրանիկ, սեբաստացի 219
 Անդրեսա եպիսկոպոս 103
 Աշեր, Վանի ամերիկյան որբանոցի բժիշկ 88
 Աշոտ թագավոր 105
 Աշոտ քահանա, մարտեցի 157
 Աշուղ Հարութ (մականունը՝ Նահիլ), Թու-

մանի քրոջ ամուսինը, օղուզուցի 240
 Ապրե, մեխք, Առեն գյուղի ռես Կարոյի հայրը 12-20
 Ապրո, նորգեղցի 334-335, 337
 Առաքել, առեճցի Միսակ Ավետիսյանի եղբայրը 20
 Առաքել խան 299
 Առաքելյան Հրաչ 65
 Առներ, օղուզուցի 240
 Ասանեթյան Եսթեր Թադևոսի, ուսուցչուհի 105-107
 Ասանեթեան Վարոս 139
 Ասատուր 14, 16
 Ասատուր, ապարանցի 28
 Ասատուր, նավավար 328
 Ասմին, Սարգիս Ռամոնյանի մայրը 233
 Ատ, Ասատուր, Մոզիենց Համազասպի որդին, դվթամուրցի 22-25
 Ատ, կարսեցի 140
 Ատյեան Գրիգոր 149-150, 153
 Ասպո, Ասովածատուր 306, 321-322, 334-335
 Ավագ, Մուխսոնց տան հոտաղ 24
 Ավագյան Մերինե, արճակցի Գարեգին Մովսիսյանի քույրը 162-163
 Ավիշանց, ազգատոհմ 231
 Ավիշանց Փոխիկ, ողմեցի Շերոնց Շուշանի ամուսինը 230-231
 Ավետիս, ուսուցիչ 225
 Ավետիս, Ստամբուլցոնց Առ, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի եղբայրը 95, 97, 100, 103, 144, 156
 Ավետիս, առեճցի Սարգիս Ավետիսյանի հորեղբայրը 20
 Ավետիս, Հավանց գյուղի քահանան 298
 Ավետիսյան 163
 Ավետիսյան, ազգատոհմ Կաղզվան քաղաքում 260
 Ալետիսեան Խաչատուր, օլթեցի 143
 Ավետիսյան Մարիամ (Մամո), առեճցի Սարգիս Ավետիսյանի մայրը 7, 11
 Ավետիսյան Միսակ (Քոչեյի Միսակ), առեճցի Սարգիս Ավետիսյանի հայրը 7, 10-11
 Ավետիսյան Մարիամ Միսակի, առեճցի Սարգիս Ավետիսյանի քույրը 7-8, 12, 22, 25
 Ավետիսյան Սարգիս Միսակի, առեճցի 7, 22, 25-26, 337
 Ավետիսյան Վաղինակ, կաղզվանցի 259, 264-265, 269, 273-275
 Ավանց Մանուկ 339
 Ավո, Ֆահրադի թոռը 269
 Ավո, ճալա գյուղի քահանա 183
 Ավո, խանութպան Ուղուզլի գյուղում 239
 Ավո, Հայրապետի հայրը 240, 246
 Ատեանցի Օսման աղա 319
 Ատլաս խաթուն, Ավագի մայրը 24
 Ատոն 87-88
 Ատոն իշխան 299-301

Արաբաջյանց Ս. 107
 Արաբեանց Բաղդասար 112
 Արամ, բուստանչի 242-243
 Արամ, խմբապետ, նուխեցի 63
 Արամ Հարությունի Կյուրեղյան, սեբաստացի Արմենակ Կյուրեղյանի եղբայրը 188, 191, 202, 205, 207, 209, 215, 219-220
 Արամ Մշեցի 276
 Արամ, Նահապետի որդին 39
 Արամայիս 26
 Արարատյան Ալեքսանդր, վարդապետ 98
 Արդուն, օղուզուեցի Բագրատ Սարգսյանի եղբայրը 236, 240, 242, 245
 Արեգ, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների մորական տատը 211
 Արեիկ 309
 Արիֆ 319
 Արծրուն 127
 Արծրունի Վահրամ, Բեյրութի Ազգային դպրոցի տնօրեն 257
 Արմենակ 28
 Արմենակ, փարխանդի 358
 Արմենակ, Գավիթ Ղազարյանի եղբայրը 67, 69-70
 Արմենակ Կյուրեղյան, սեբաստացի Արամ Կյուրեղյանի եղբայրը 188, 191, 196, 200, 208-209, 216
 Արշալույս, հաճնցի Երվանդ Փոստալյանի հորական տատը 221
 Արմենակ, «չուն խաղցնող» 86-87
 Արմենակ, ջանֆիդայիների հրամանատար 44
 Արմենակ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբոր՝ Արմենակի դուստրը 273
 Արշալույս, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի եղբորորդին 130
 Արշալույս, Մկրտիչ Մինասյանի կինը 75
 Արշակ 166
 Արշակ, ողմեցի Արմենակ Ամրիկյանի ընկերը 332, 346, 349
 Արշակ, խարսեցի Բավա Մարգարի որդին 185
 Արշակ, Գաբունց Խաչոյի որդին 324
 Արշակ, գյուրեցի Չոնիկի հայրը 247
 Արշակ, իմանշալուեցի 346
 Արշակ, Խաչոյի որդին 324
 Արշակ, ուսուցիչ 224, 225
 Արշակի, Գայանե և Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանների որդին 108
 Արշո 321
 Արջ Պետրոս 54, 57, 58, 62
 Արսեն, ճալացի Ռուբեն Բաղդասարյանի մորեղբայրը 181
 Արսենան Քալի 159
 Արտաշես, կարնեցի, վաշտի ավագ 56
 Արտաշես, Տիրունի և Գևորգի որդին 97
 Արտավազդ 56
 Արտուշ, կոշկակար 248
 Արուիկ 308
 Արուսյակ, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների քույրը 188, 193, 196, 208, 213, 215

Արփենիկ, Թարգոնց Թաթուսի դուստրը 49
 Արփենիկ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբոր՝ Մուշեղի դուստրը 272
 Արփիար 58

Բ
 Բաբա Գավիթոլի 282
 Բագրատ, Սեդրակ Պապոյանի եղբայրը 57
 Բագրատ 246
 Բագրատունի Սմբատ, իշխան 285, 301
 Բաղդասար 145
 Բաղդ Հակոբ 292
 Բազիկ, տե՛ս Պետրոսյան Բազիկ
 Բահրամ աղա 318-319
 Բահրի փաշա 169
 Բրահիմ, շեխ 310
 Բաղդասարեան 112
 Բաղդասարյան Ջաբել Սահակի, Ռուբեն Բաղդասարյանի կինը, ճալացի 179, 183
 Բաղդասարյան Ռուբեն Վարոսի, ճալացի 179-180, 182-183
 Բաղդասարյան Վարոս, ճալացի Ռուբեն Բաղդասարյանի հայրը 178-181, 183
 Բաղդասարյան Սահակ 178, 180-181
 Բաղդասարյան Տիգրան, գնդապետ 332
 Բաղդասարյան Քնարիկ, ճալացի Ռուբեն և Ջաբել Բաղդասարյանների դուստրը 179, 183
 Բաղդիկ, Բաղդո 308-309, 319, 325
 Բաղչինենց Կարո 122, 139
 Բաղտիկ 308-309
 Բանգուշի գերդաստան 9
 Բանունց Ներսո 303
 Բաստամյան Վահան վարդապետ 103
 Բավա Մարգարի ընտանիք 184-185
 Բավա Մարգար, խարսեցի Մարգարիտ Խլղաթյանի մեծ պապը 185, 354
 Բավա Սմբատ, տե՛ս Սմբատ բեկ, Բավա Մարգարի որդին
 Բատիկ 308
 Բատիթյան բեկ, Բեխերխան, Ջիզրեի էմիր Բեդուլլահ խանի որդին 284-285, 292, 313
 Բարակյան Հակոբ 256
 Բարեղամ 28
 Բեկնազարյանց Սարգիս, Ալեքսանդրապոլի Սբ. Փրկչի եկեղեցու վիճակային դպրոցի տեսուչ, ուսուցիչ 98
 Բենիամին, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի բոռը 113, 158, 160
 Բենո, Բենիկ տասնապետ, ախլալաբցի 346, 347-349, 351, 355, 358, 361
 Բեզ-Յովսեփեաններ 129
 Բզնունի Խաչատուր 142-144
 Բզնունի, Կարսի քաղաքապետի օգնական 110, 129
 Բինբաշյան Նազար, սիվրիհիսարցի Պողոս Կոստանյանի քրոջ՝ Ազնիվի ամուսինը 253
 Բղոնց Շադո 341
 Բղունց Կազմ 283
 Բոզե Շահեն 343
 Բոզե Պետրոս 340
 Բոզիկյան Միրզո 232

Բոզո Տիգրան 306, 308-310, 316, 318, 323
 Բոզոյան Սիմոն 232
 Բոժկանց Բաղդո, Հակոյի հորեղբայրը 292-293, 323
 Բոժկանց Շահեն 318
 Բոյաճեաններ, ազգատուն 139
 Բոյաճեանց Ալեքսան 123, 140
 Բոնդո, հազարապետ 71
 Բորիս, Իվան Խյուստոսովի որդին 267
 Բշարե Չաթո (Բշիրի Չաթո) 13-14, 320, 327, 337
 Բրուտի Սարգիս, ողմեցի 327
 Բուլոշնիկ Համբար 244, 245

Գ
 Գաբիկեան Կարապետ, սեբաստացի 209, 213, 219
 Գաբունց Խաչո 323-324
 Գալեմյան Սուրեն վարդապետ, Բիբլիսի առաջնորդ 358
 Գալկանց Հակո 311
 Գալտյան Խախանյանց (Խրիստյանց) Պողոս, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի կնքահայրը 96
 Գալտյան Հովհաննես, ուսուցիչ 99
 Գալուստ աղա 149-154
 Գալուստյան Մանուկ 232
 Գալուստյան Միքիլ 232
 Գալուստյան Պետրոս 232
 Գալիազգյաններ, ազգատուն 254
 Գամշունց Սիրզա 285
 Գանդաբյան, կապիտան 62
 Գանդաբյան, հրամանատար 58
 Գանդիկ, առնցի Մարիամ Ավետիսյանի ամուսինը 8, 22, 25-26
 Գանդիկ, գնդապետ 359
 Գասպար 71
 Գասպար բեռի 321
 Գասպար, Հոսամ Գասպար, օղուզուեցի Գուլենց Հարութի որդին 237-238, 240-241, 244
 Գասպարեան Լիզա 159
 Գասպարեան Վահան, սպա 145
 Գասպարենց Սարգիս 48
 Գարակոչյան Լեոն, Չանազանի և Մխիթարի որդին 211-212
 Գարակոչյան Հայկ, Չանազանի և Մխիթարի որդին 211-212
 Գարեգին 28
 Գարեգին, բայբուրցի 54-55
 Գարեգին, ողմեցի Արմենակ Ամրիկյանի հորաքրոջ որդին 349
 Գարեգին քահանա, չլղանցի 152-153
 Գեթե, բժշկուհի 88
 Գեոնցեանց Ենոկ 98
 Գեղիյան Մեսրոպ 255
 Գեղիյանց Գևորգ 100
 Գեղորգ 130
 Գեղորգ, տիրացու 143
 Գիլյանդյանեան 109
 Գլատկին Վասիլ 267
 Գլիկ, թաղեցի 251
 Գլտանի Իսկոբի 282
 Գյարան, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբոր՝ Արմենակի կինը 265, 271, 273
 Գյունջյան Ենոկ 98
 Գյուլե 34

Գյուլի, Հուրոյի Թաղևորի կինը 269
 Գյուլիզար, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի տատը 264-265
 Գյուլյումջյան Գևորգ 229
 Գնեկ 172
 Գոգոր ամի, տե՛ս Ստամբոլյան Գրիգոր
 Գոգո Կազար 339
 Գոհար, Բատիթյան բեկի կինը 284
 Գոհար (Թօսունեան), սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների մայրը 188, 208, 210
 Գոհար, հաջի, հաճնցի Երվանդ Փոստալյանի հորական տատը 221
 Գոհար, ճալացի Ռուբեն Բաղդասարյանի մորական տատը 180
 Գոհար, հաճնցի Երվանդ Փոստալյանի քույրը 221
 Գոյունյան Կարապետ, հաճնցի Երվանդ Փոստալյանի ընկերը 227-228
 Գոնկանց Մուրադ 292
 Գոռոզ Հայրապետ, տե՛ս Գուլենց Հարութի որդին
 Գորոյեան 132
 Գոքոր, Գուլենց Մարգարի որդին, օղուլունցի 237-238, 240-241
 Գոռուզեան Խաչիկ 219
 Գրեթ աղա 314
 Գրիգոր 301
 Գրիգոր, ծերունի 339
 Գրիգոր, ողմեցի վարդապետ 297
 Գրիգոր, խարսեցի Դավիթ Ղազարյանի եղբայրը 67, 69, 71
 Գրիգոր, Ղազար պապի եղբայրը 68
 Գրիգոր, մարաշցի Սեդրակ Սարաֆյանի եղբայրը 76, 81
 Գրիգոր Չոխրապ 166
 Գրիգոր վարդապետ, Սեբաստիայի առաջնորդ 256
 Գրիգորեան Միսաք (Հարբեշենց) 140
 Գրիգորիս քահանա, բժիշկ Երզնկյանի հայրը 143
 Գրիգորյան Սեդրակ, ուսուցիչ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի դասընկերը 106-107
 Գրիգորեան Կարապետ, Մե Կարո 129
 Գրիգորյան Հարություն, նարեկցի 334
 Գունդկանց Մուրադ 287
 Գուլե, մոկեսցի տիրացու Վարդանի կինը 28
 Գուլե, օղուլունցի Բագրատ Սարգսյանի տատը 237, 240
 Գուլե, ողմեցի 294
 Գուլենեք, ազգատոհմ 237-238
 Գուլո, Մուսաբեկ Խարսա Միրոյի դուստրը 359
 Գունորյան Շահեն 232
 Գունկանց Մուրադ 283, 313, 340
 Գուրզեն 37
 Գուրզեն, ճալացի Ռուբեն Բաղդասարյանի եղբայրը 179, 183
 Գուրզեն, Բոզոյի ընկերը 310
 Գուրո 297-298
 Գուրոյի Ավետիս, բաղեցի 331
 Գևո, գզիր 14
 Գևորգ 28
 Գևորգ, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի ընկերը 60
 Գևորգ Ե կաթողիկոս 111, 157

Գևորգ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի հորեղբոր որդին 97, 156
 Գևորգ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբայրը 260, 265, 271, 273, 275-276
 Գևորգ Չավուշ 68, 185
 Գևորգի Մեն 21

Գ
 Դաբաղեանց Գեորգ Յակովբի, քիթեղագործ, կարնեցի պատուրմաճի Հակովբի որդին 143-144
 Դակունց Սարգիս 351
 Դահեր աղա (Թահիր), ատեանցի 292-293, 302, 304, 343-344
 Դահրե Ռեհան 289
 Դանիելեանց Հրանոյշ Ասլանի 148
 Դաթեան Սարգիս, խմբապետ 309
 Դավիթեան Յարութիուն 255
 Դավո 335
 Դարմանյան Տիգրան 344
 Դարմոնց Պետրոս 314-315
 Դարբինյան Արտակ 168
 Դարբինյան Խաչատուր, ուսուցիչ, վանեցի 107
 Դարբինյան Հովան (Օհան) 14, 17, 19
 Դարբենց Մարտիրոս 40
 Դերենիկ, օղուլունցի Բագրատ Սարգսյանի եղբայրը 236, 240, 242, 245-247
 Դերոյաններ 165
 Դերոյան (Տերոյան) Չարուհի, Տիգրան, Վազգեն և Վարազդատ Դերոյանների քույրը 166
 Դերոյան Վազգեն 166
 Դերոյան Վարազդատ 166
 Դերոյան (Տերոյան) Տիգրան (Վազգեն) 165-166
 Դիլանեան Ստեփան 137
 Դոխիկենց, կարսեցի 96
 Դոխիկյան Հովհաննես, քաղապետ, Կարսի Սր. Լուսավորիչ դպրոցի հոգաբարձու 105
 Դշխուհի, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի քույրը 39, 40, 66
 Դոռոյի Միսակ 10, 14
 Դրո, խմբապետ 61
 Դուրզարեան Մարութ, կարսեցի 155, 158-159, 161

Ե
 Եաղջեան 110
 Եաղջեան Բագրատ 139
 Եգոր Իվանիչ 123, 149
 Եգոր Չեօրնիյ 140
 Եզնիկ վարդապետ (Եպիսկոպոս) 104
 Եղիազար, Բագրատ Սարգսյանի հայրը 236-245
 Եղիազար Մանուկյան 311, 315-318, 334-335, 338, 350-351, 354-357, 360-361
 Եղիազարյան-Հակոբյան Շիրին 92-94
 Եղիայեան Բիզանդ 222
 Եղիշ, Միրանուշ Հակոբյանի և օղուլունցի Բագրատ Սարգսյանի քավորը 247
 Եղիշ վարժապետ 301
 Եղիշե 171
 Եղիշե, Տիրունի և Գևորգի որդին 97

Եղիսաբեթ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի մայրը 259, 264
 Եղիսաբեթ (Սավետ), խարսեցի Դավիթ Ղազարյանի մայրը 67
 Եղո 311-322
 Ենգոյենց տուն 49
 Եսայան Հովհաննես 220
 Եսայան Միրոյան 176
 Եսայան Սկրաիչ 220
 Եսթեր 100
 Եվգինե, օղուլունցի Բագրատ Սարգսյանի քույրը 236, 243, 245-246
 Երամեան, ուսուցիչ 220
 Երանեակ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի եղբոր դուստրը 124, 127, 130, 134, 147-148
 Երզնկեան, բժիշկ, Գրիգորիս քահանայի որդին 143
 Երզնկյան Գրիգորիս, ուսուցիչ 107
 Երիցյան Ռաֆայել, տեսուչ 320
 Երցո 312
 Երցու Հարություն 303
 Եփրեմ, Ղազար պապի եղբայրը 68

Զ
 Չանազան, Մխիթարի կինը 210
 Չառն Տեր-Եղիազարյան, Պոլսոս պատրիարք 220
 Չատո, ողմեցի, կտավագործ Հակոբի որդին 292, 321, 341
 Չարդար, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի քույրը 39, 40, 66
 Չարուհի, Եգոր Իվանիչի քույրը 123
 Չարուհի, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների քույրը 188, 196, 198, 201, 208, 213, 215-216
 Չարուհի, Քերովբեի կինը 210
 Չաքար, խանութպան 355
 Չաքար, խարսեցի Դավիթ Ղազարյանի հորեղբայրը 68
 Չաքարյան Մովսես, արճակցի Գարեգին Մովսիսյանի հայրը, պողանցեցի 162-165, 169-170, 177
 Չեյնաք խանում, Ռաշիդ բեկի դուստրը 39
 Չետոյանք, ազգատոհմ 293
 Չիտո, ողմեցի 339
 Չիտո, սարկեթցի Շերոյի որդին 347

Է
 Էլաբեդ Նիմաբեկ, քուրդ 34
 Էլաբեկ Աղաբեկ 43-44
 Էլ-բեկի տոհմ 280
 Էլեգյան Գևորգ, հաճնցի Երվանդ Փոստալյանի որբանոցի ընկերը 221
 Էլեյան Հովհաննես 104
 Էլյա, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի կինը 64, 66
 Էլպեյեանց Հովհաննես, կարնեցի 106
 Էնեդ Էֆենդի 124, 126, 130
 Էիրամճյանց Ալեքսանյան Խաչատուր, Կարսի Սր. Աստվածածին եկեղեցու լուսարար 106
 Էիրամճյանց Գայանե, Խորեն Ստամբոլյանի կինը 95, 106-108, 160
 Էմիր Աբդուլլահ խան 284
 Էնվեր փաշա 52, 328, 361
 Էփրիկենք, ընտանիք 129

Ը

Ընծայիկ, զինվորական բժիշկ 80

Թ

Թագուհի, Սկրաշի կինը 210
 Թաթուս 238
 Թաթուս, Թարգոնց ընտանիքի որդին 49
 Թաթուս, Սկրաիչ աղայի եղբայրը 40
 Թաթուսենց Մանուկ 333
 Թալեսաթ 325, 330, 350, 361
 Թախմանցի Հասան 334
 Թահա 319
 Թահիր 319
 Թանգո, ոգմեցի 297
 Թանգո, ոգմեցի Բաղո Հակոբի կինը 341
 Թապախանեան Յարութիւն 155, 158, 161
 Թարգոնք 30, 47, 49-50
 Թարովոնը 297
 Թարջիմանենց Եղիշ, կաղզվանցի 275
 Թելո, տե՛ս Վարդիթեր
 Թերլեմեզյան Փանոս 162
 Թխիկեան Անտիս 212
 Թողիկ 174
 Թորամանյան Թորոս 95
 Թորոս 72, 326
 Թութունճեանց Արսէն 129, 139, 144
 Թովսո, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի մայրը 39, 40, 43, 66
 Թուման, որդին Գուլեի 237-238
 Թումանյան 308
 Թումանյան Դավիթ (Մուրուչի Դավիթ) 167
 Թումոյենք, ազգատոհմ Կարսում 121

Ժ

Ժամկոչենք, ազգատոհմ Ուրուզլի գյուղում 240

Ի

Իբրի Սնջո 320
 Իդահատ Էֆենդի 145
 Ինճալեան Վարոս, առևտրական 135
 Իշխան 306, 310, 330
 Իշխան, խմբապետ Շավարշի որդին 48
 Իսահակյան Ավետիք 33, 180
 Իսայի, շէխ Իսախ 216
 Իսլամ բեկ, ոստանցի 328
 Իսկուհի, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի դուստրը 127, 136, 145-146, 155-156, 158, 160
 Իսկուհի, սերաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների քույրը 188, 196, 199, 208, 215
 Իսո աղա 313-314, 316-319
 Իրիցանց Դագո 38
 Իվանով Իվան, հարյուրապետ 346-347
 Իսուֆ 319

Լ

Լազարյան, գեներալ 100
 Լազգո (Լեզգի), Շաքիրի որդին 330-331, 333, 337
 Լազենկով, ֆելդշեր 260
 Լաթկանց Մուսո 310, 323
 Լաթկենց Մանուկ 297, 311
 Լաթո, Միհրան Ռաշոյան կամ Չաթոյան, ոգմեցի 309, 316, 318-319, 323-326, 328, 334-335, 340-343

Լաթո Սեփան 283
 Լաթոյենց Խաչո 299
 Լալա, Քյել Սարգիսենց Վարդանի կինը 261
 Լալա Մուստաֆա փաշա 107
 Լալմն 81
 Լաչին բեկ 122, 139
 Լենին 355
 Լետոն, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի քրոջ որդին 131
 Լորիս-Մելիքյան, գեներալ 100
 Լուրվիկ, Լուրնֆիկ, Ռաշիայան, ոգմեցի Ռաշիտի որդին 304, 311
 Լուսիկ, ճալացի Չաբել Բաղդասարյանի քույրը 181
 Լուսին, Դավիթ Դազարյանի հորեղբոր՝ Պողոսի կինը 67-69, 71-72
 Լուսինե (ճակամունը՝ Փնթունի) 28
 Լուսավարդ, Սարգարի և Ազնիվի դուստրը 186

Խ

Խազալ, Բորնց Շաղոյի դուստրը 341
 Խազալ, հարս 340
 Խազեց Մուսո 14, 16, 18
 Խաթուն 294
 Խաթուն 300
 Խալիս պեկ 190, 212
 Խալիս Էֆենդի 147, 154-155
 Խալիս, տրապիզոնցի 148
 Խալո, ոգմեցի 322, 340
 Խալո, Հերիքի ամուսինը 296-297, 308
 Խալո, տե՛ս Սկրաիչ, Մարթա Պարտիզպանյանի և Աբրահամ Մինասյանի որդին
 Խան, Բարսեղ Թիրյաքյան 33-34
 Խանամիրեան Ստեփան, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի ընկերը 138
 Խանամիրյան Արսեն, կարսեցի 101
 Խանեսկանց Վարդան 296, 298, 326, 332-333
 Խանջյան 58
 Խանջյան Ղևոնդ, Վանի Արարուց դպրոցի տեսուչ 164
 Խանուն, օղուգլուցեցի Բագրատ Սարգսյանի մայրը 236, 239-240, 242-247
 Խանուն, Մարդեի դուստրը 238
 Խաչատրեանց, Կարսի որբանոցների գլխավոր կառավարչուհի 145
 Խաչատրյան Հակոբ, գրագիր 338, 340
 Խաչատրյան Մուրադ 334-335
 Խաչատրյան Յոզակ 27
 Խաչատուր, Քյել Սարգիսենց Վարդանի եղբայրը 261
 Խաչիկ, Հարություն Թապախանյանի որդին 161
 Խաչո, Եղիազարի եղբայրը 311, 315
 Խաչո Մ. 334
 Խաչո, Նահապետի որդին 39
 Խաչո, ոգմեցի 296, 315
 Խաչո, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի քեռին 38, 43
 Խասկալեան Լետոն, իզմիրցի 141
 Խատիսեան, ինժեներ 109
 Խլղաթյան Մարգարիտ (Մաթո) 184
 Խլյուստով Իվան Մակարովիչ 267

Խոշիկ 293
 Խոջայանց Գ. 107
 Խորեն, սերաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների եղբայրը 188, 208
 Խոսրով, առնեցի Սարգիս Ավետիսյանի եղբայրը 12, 21-22, 24
 Խոսրով, առնեցի Սարգիս Ավետիսյանի որդին 7
 Խրիմյան Սկրաիչ, Հայրիկ 162-163, 165-167, 169, 170
 Խուլզարյան Ստեփան 58
 Խումար, ոգմեցի 314, 316
 Խումար, Ատոմ իշխանի դուստրը 300
 Խորշուղ բեկ 68
 Խորշուղ բեկ 327

Ճ

Ճաղիկ, Մարիամի մեծ մայրը 202
 Ճաղիկենց 246
 Ճկորա Գալուստ, տե՛ս Պողոսյան Գալուստ
 Ճոռ Շահեն 312

Կ

Կաղիր 275
 Կազանճեան Օզսէն 212
 Կազար 316
 Կակոսենք 246
 Կակոսենց Գեորգ 120
 Կաղ Խչո 71
 Կաճկաճյան Գեորգ, ղզլարեցի 106-108
 Կամար 315
 Կամբես եղբայր, կառապան 223, 226
 Կանայան Դրաստամատ (Դրո) 259
 Կանայան Հասմիկ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի կինը 259
 Կանդալունց Սոսի, տե՛ս Սոսի
 Կանտարունց տուն 288
 Կապուտիկյան Սիվա 28
 Կասիմ փաշա 307
 Կասո քուրդ, ախխտացի 310-311
 Կարամանուն 258
 Կարապետ 166
 Կարապետ, Կարեն 347-348
 Կարապետ, ճալացի Չաբել Բաղդասարյանի եղբայրը 181
 Կարապետ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի եղբոր որդին 112-113, 115, 122-124, 126-129, 132-137
 Կարապետ, խառակոնիսցի Գեղամ Սարգսյանի հայրը 83
 Կարապետ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի հորեղբայրը 97
 Կարապետ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլցյանի փեսան 115, 123-127, 130, 136, 148
 Կարապետ Մաֆարյան (ճակամունը՝ Փալարեղ), ուտուպիցի 358
 Կարապետ, ուտուցիչ, Եղիսարեթ Ամատունու ամուսինը 107-108
 Կարապետեան, բաքվեցի բժիշկ 117, 123, 129
 Կարապետեան Կարապետ, կաղզվանցի 109
 Կարապետեան Սարգսեանց Յակովբ 147
 Կարապետյան, Քյել Սարգիսյան 261
 Կարապետյան Հայկակ, ՀՄԽՀ Կարսի հյուպատոս 111

Կարգաշ 58
 Կարինյան 104
 Կարո 244-245
 Կարո պապիկ 266
 Կարո, Առեն գյուղի ռես 12, 14-15, 18-19
 Կարոնց, Կարունց Հովհաննես, ռես 295, 302, 312
 Կաքավ, շատախիցի Ռաշիդ Մանուկյանի կինը 249-250
 Կետիկյան Ավետիս 256
 Կիլիկեան 250
 Կինճեան, Կեճոեան Վարդան, տես Ղա- սապեան Վարդան
 Կիրակոս 71-72
 Կիրակոս, մելիք Ապրեի եղբոր որդին 13
 Կյուրեղյան, պոլսեցի վաճառական 97
 Կյուրեղյան Ժան Վարուժան, սերաստա- ցի Արամ Կյուրեղյանի որդին 188
 Կոլյա, Սիրանուշի և օդուզուտեցի Բագ- րատ Մարգարյանի որդին 236, 247
 Կոլոտ Եղո 321, 322
 Կոխման 58
 Կողակեց Արմեն 28
 Կասմ, Շաբադ աղայի որդին 320, 345
 Կոստան, սիվրիհիսարցի Պողոս Կոս- տանյանի եղբայրը 253-254
 Կոստան 44, 58
 Կոստանյան, Գալվազճյան Մարիամ, սիվրիհիսարցի Պողոս Կոստանյանի մայրը 254
 Կոստանեան Սյրուշի, երեցվոր 118, 128, 137, 142, 148, 152, 153
 Կոստանյան Պողոս (Ստեփան) Մարգար, սիվրիհիսարցի 253-255
 Կոստանյան Մարգար, սիվրիհիսարցի Պողոս Կոստանյանի հայրը 254
 Կոտաս աղա 343
 Կորին վարդապետ 137, 157
 Կորյուն, Մարգարի և Ազնիվի որդին 186
 Կոտան Ալիբեկ, Ալաբ բեկ 304, 312-313
 Կրջոյի Սողո 14
 Կուրո, Սիմոնի դուստրը 21

Հ

Հախմազարյան Կարո, հրամանատար 55, 57, 61-62
 Հախումեան Գրիգոր, Կարսի ռեալական դպրոցի և օրիորդաց գիմնազիայի տնօրեն 159
 Հախումյան Սիմեոն, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի դասընկերը 104-106
 Հակո, Խոռանց գյուղի ռես 20
 Հակոբ 355
 Հակոբ, Բադո Հակո, կտավագործ 292- 293, 341
 Հակոբ, խարսեցի Դավիթ Ղազարյանի հորեղբայրը 67, 70-71
 Հակոբ, նավավար, Սիրանուշ Հակոբյա- նի հայրը 247
 Հակոբ, ողմեցի 299-300
 Հակոբ, ռես 335
 Հակոբյան, կապիտան 58, 62
 Հակոբյան Հարություն, Հարո, ողմեցի 339-340, 347
 Հակոբյան Սիրանուշ, օդուզուտեցի Բագ- րատ Մարգարյանի կինը 236, 247
 Հակոբջանյան Խաչիկ, շրջկոմի քարտու-

դար 64
 Հակովբյան, ուսուցիչ 106
 Հանի Եադկուպ 320
 Հանիպապ երեցվոր 129
 Համազասպ քահանա 111, 133, 137
 Համամչեան Արտաշ, Մամիկոնի և Բագ- րատի եղբայրը 122, 140, 149
 Համամչեան Բագրատ 123, 140
 Համամչեան Մամիկոն 123, 140, 149
 Համբար, արունագրակցի Հովհաննես Հով- հաննիսյանի եղբայրը 39-40, 42, 66
 Համբարձում, Համբար, սերաստացի Ա- րամ և Արմենակ Կյուրեղյանների եղ- բայրը 188, 208, 220
 Համբիկեան ընտանիք 220
 Համբո 53, 55
 Համիդ 306
 Համիտ բեկ, Էմիր փաշայի որդին 190
 Համո, ոսկերիչ 122
 Համտի բեկ 331
 Հայզվարթ, սերաստացի Արամ և Արմե- նակ Կյուրեղյանների թույրը 188, 194, 197, 211, 213-215
 Հայկ, Հայկո, վանեցի 28
 Հայկազունի, Թագուհու և Մկրտչի որդին 210
 Հայկանուշ, Տիրունի և Գևորգի դուստրը 97
 Հայկո, մելիք Պողոսի դուստրը 21
 Հայրապետ, Ավոյի որդին 240
 Հայրապետ, Գռռոզ Հայրապետ, Գու- լեենց Հարութի որդին 237, 238, 241
 Հայրապետեան, բժիշկ 139
 Հաջի աղա 167
 Հաջոնց Հակո 339
 Հասան բեկ 183
 Հասան բեկ 80
 Հասան չավուշ 327
 Հասեն աղա 307, 320, 335
 Հասո 307
 Հասո քիբկա 360
 Հարո 316
 Հարոմ բեկ 287
 Հարութ, համաքաբարակցի 240
 Հարութ, Գուլեի որդին 237
 Հարություն, ողմեցի 301
 Հարություն, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի եղբայրը 95, 97-98, 100
 Հարություն, սերաստացի Արամ և Արմե- նակ Կյուրեղյանների հայրը 188-189, 208, 210
 Հարությունյան Գաբրիել 106
 Հարությունյան Գրիգոր (Արսեն քահա- նա) 254
 Հարուն, Շուշանի եղբայրը 232
 Հացագործյան Արսեն 172
 Հաքքոմ, Թահայի որդին 319
 Հաֆիզ, մոլլա 142, 151
 Հեր Սիբերի, Վանի գերմանական որբա- նոցի կառավարիչ 84-85, 87-88, 90, 93
 Հեռուց, Վանի գերմանական որբանոցի աշխատակից 88
 Հերիք, Կրոն 296
 Հելվաճեան Յարութին 255
 Հյուսյան-Հովհաննիսյան Մարգար, ար- ճակցի Գարեգին Մովսիսյանի քեռին 162-163, 165, 177

Հյուսեին աղա, պախվանցի 326
 Հնդո, Հրանտ, խարսեցի Դավիթ Ղազար- յանի մեծ պապը 68
 Հոխանես, Հովհաննես քերթեցի 326, 328
 Հոխենց Արդեն 241
 Հոխենց Գևոր 238, 241
 Հոխեկ 324
 Հովակիմ, տնտեսավար, Նազե մայրիկի որդին 90, 93
 Հովակիմ, Աթանանց գյուղի ավագ քահա- նան 326-327
 Հովան Ավանտո 332
 Հովան, Փոխիկի մեծ հորեղբայրը 231
 Հովհաննես, զինվոր 63
 Հովհաննես, Սիրանուշի եղբայրը 247
 Հովհաննես (Հովե), առեցի Միսակ Ավե- տիսյանի եղբայրը, Մարգար Ավետիս- յանի հորեղբայրը 20-21
 Հովհաննես, ողմեցի 306
 Հովհաննես, արունագրակցի Հովհաննես Հովհաննիսյանի պապը 39, 66
 Հովհաննես (Հովո), Նիգլարի ամուսինը 20, 22
 Հովհաննես, ռես 319
 Հովհաննես, քղեցի 171
 Հովհաննիսյան Աբիսողոմ 105
 Հովհաննիսյան Արշալույս, ողմեցի Զա- վեն Հովհաննիսյանի կինը 230-232
 Հովհաննիսյան-Բրուտյան Արշակ, Փեթ- րոնի ամուսինը 97
 Հովհաննիսյան Գաբրիել, բժիշկ, ուսուցիչ 98
 Հովհաննիսյան Զավեն, Ավդիշանց Փո- խիկի և Շերոնց Շուշանի որդին, ող- մեցի 230, 232
 Հովհաննիսյան Լիպարիտ, կարսեցի 27
 Հովհաննիսյան Հակոբ, պիլեճիկցի 256
 Հովհաննիսյան Հովհաննես Սուքիասի, արունագրակցի 29-30, 42, 47, 61, 66
 Հովհաննիսյան Մարգար 164
 Հովհաննիսյան Տամշեր, ողմեցի Զավեն Հովհաննիսյանի որդին 230, 232
 Հովոյի Հարութ, խանութպան, օդուզուտե- ցի 239, 240
 Հովսեփ 311, 315-316, 318, 333
 Հովսեփ, Հովսեփ Շահինյան, ողմեցի 340
 Հովսեփյան Զաքար, ողմեցի 338, 340
 Հովսեփյան Գարեգին արքեպիսկոպոս 109, 111-122, 128, 131, 133, 137, 145, 153
 Հովսեփյան, գեներալ 55
 Հոտած Գասպար, տես Գուլեենց Հարու- քի որդին
 Հոխիսիմե, Կարսի քահանա Խորեն Ստամբուլյանի թույրը 97
 Հոխիսիմե, Հարությունի դուստրը 100
 Հոխիսիմե, ճալացի Ռուբեն Բաղդասար- յանի թույրը 179, 183
 Հրայր 271-272
 Հրանտ, արունագրակցի Հովհաննես Հով- հաննիսյանի եղբայրը 39-40, 42, 66
 Հուսիկ վարդապետ 163
 Հուրոյի Թադևոս 268-270

Չ

Չիթոցյաններ 100
 Չոնիկ, Օմիկ, գյումրեցի Արշակի տղան 247

Ղ

Ղարբեյի Մուկուշ 140
 Ղարթոլոնց Շամիլ 115
 Ղազազյան Ալեքսանդր, ախյոյսացի, բժիշկ 105-108, 119, 124
 Ղազազյան Սոֆյա 107
 Ղազանճեան, բժիշկ 110, 129
 Ղազար 37
 Ղազար, խարսեցի Դավիթ Ղազարյանի պապը 68-69
 Ղազարեանց Արշալոյս 139
 Ղազարենք, ազգատոհմ 240
 Ղազարյան Դավիթ Ազատի, խարսեցի 67, 69
 Ղազին 327
 Ղաթողոց Ղամիշ 113
 Ղայվաչի Փանոս 140
 Ղասաբյան եղբայր 96, 147
 Ղասապեան Վարդան, Կինճեան, Կենջեան Վարդան, սեբաստացի Արմենակ Կյուրեղյանի դասընկերը 212, 215
 Ղարագեօզեան Համազասպ, Կարսի քահանա 128-129, 157
 Ղարիբյան, խմբապետ 57
 Ղոթուղեան Համազասպ 121, 136
 Ղորղանեան Ոսկի 159
 Ղուկաս 176
 Ղուկասյան Հայրապետ, ուսուցիչ 98
 Ղուտուրեթ, մարաշցի Մեղրակ Սարաֆյանի մեծ մամը 79
 Ղոնդաղեան Մանուկ 148
 Ղոնդաղեաններ 131-132

Ճ

Ճաֆեր, Իսուֆի որդին 319
 Ճենտերեճյան Մարիցա, սիվրիիսարցի Պողոս Կոստանյանի կինը 253-254
 Ճընտիե Ապտուրահման 319
 Ճիլնկապակա Ջուրդ 298-299
 Ճնտո 319
 Ճուղուրյան Անդրանիկ 58
 Ճունդյենց Հնայակ, կաղզվանցի 269-270

Մ

Մադրեան Մարտին 114
 Մագլումյան Կարապետ արքեպիսկոպոս 258
 Մագմանյան, Մագմանեան, Մագմանով, հրամանատար 60, 111, 128
 Մալաեբենց 143
 Մալխասյան Մտեփան 98
 Մախտո բատե 361
 Մախտոս 311
 Մահմադ Մստե, բոհանցի 289
 Մահմատ աղա, Դահերի ազգականը 293, 301-302, 310, 344
 Մահմեդ Օղլի, տես Փոստալջյան Երվանդ
 Մամիկոնյան 44
 Մամիկոնյան Հակոբ, կարմեցի 105
 Մամիկոնյան Վարդան, մշեցի 181
 Մամո, բատրակ 263
 Մամո, տես Ավետիսյան Մարիամ
 Մանասերյան ընտանիք 94
 Մանթաշով 185
 Մանո, խմբի ղեկավար 348

Մանչուկ, տես Բենիամին, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի թոռը
 Մանուկեան Նշան 212
 Մանուկ 156
 Մանուկ 294
 Մանուկ 311-312, 316-317
 Մանուկ, տես Լաթկենց Մանուկ
 Մանուկ աղա 171, 173
 Մանուկ, Սիմեի ամուսինը 21
 Մանուկ, Թաթուսի որդին 40
 Մանուկեան Ազատ 159
 Մանուկեան Աղէքսանդր 144
 Մանուկեան Շուշանիկ, Ազատ Մանուկյանի կինը 159
 Մանուկյան Արամ (Արամ փաշա) 92, 167, 176-178, 325
 Մանուկյան Արմենակ 232
 Մանուկյան Խաչո 232
 Մանուկյան Մեղիսեդեկ քահանա, ուսուցիչ 106-107
 Մանուկյան Ռաշիդ Հարիկի 249-250
 Մանուկյան Սարգիս, ոգմեցի 338
 Մանուկյան Սարիբեկ, ոգմեցի Արմենակ Ամրիկյանի որդին 278
 Մանուկյանց Ա. 107
 Մանուշ, Թումանի քույրը 240
 Մանուշյան Միսաք 188, 208
 Մանուսանոնց 138
 Մառ Ն. 95
 Մավրատին բեկ, ոստանցի 328
 Մատինեան Գեորգ 140
 Մատիշկին 58
 Մատիշյան Խանում, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի հորեղբոր որդու կինը 97
 Մարալ, փայտագործ, Խորեն Մտամբոյցյանի փեսայի՝ Լևոնի հորեղբայրը 113, 119-120, 126, 128-129, 132, 135, 138
 Մարգար, մորաքույր Ազնիվի ամուսինը 186
 Մարգար, քավոր 298
 Մարգար, խառակոնիսցի Գեղամ Սարգսյանի բեռին 93
 Մարգարիտ, խարսեցի Դավիթ Ղազարյանի տատը 68
 Մարգարիտ, ճալարի Ջաբել Բաղդասարյանի քույրը 179, 181
 Մարգարյան Արևիատ, առնցի Սարգիս Ավետիսյանի կինը 7
 Մարգարյան, Էնկազեպեի պետ 64
 Մարգարյանց Կարապետ, երգեցողության ուսուցիչ 104
 Մարզո 334
 Մարդե, աղջաղալեցի 238, 242
 Մարդինենց 244
 Մարդինենց Գարուշ 243
 Մարդինենց Գեղամ 243
 Մարդինենց Թորգոմ 243
 Մարդո 316
 Մարթա, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի հորեղբոր դուստրը 97
 Մարի, կարմուճեցի Մարթա Պարտիզյանյանի դուստրը 75
 Մարիամ, տանուտեր Նիկողոսի դուստրը 202
 Մարիամ, իզմիրցի 218

Մարիամ, փայտագործ Մարալի կինը 113, 123-124, 126, 138
 Մարիամ, Տիկուշի հորեղբոր դուստրը 127, 129
 Մարիամ, հաճնցի Երվանդ Փոստալջյանի քույրը 221, 226
 Մարկոս 72
 Մարկոսեան Սուրեն 159
 Մարո 12
 Մարո, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի տատը 39, 66
 Մարջան, Մանթուրի Մարգարի կինը 122
 Մարտիկ 163
 Մարտիկ, ոգմեցի 339
 Մարտիրոս 333
 Մարտիրոս, Լեւոն Խասկալյանի եղբայրը, իզմիրցի 141
 Մարտիրոս, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի եղբայրը 95, 97
 Մարտո 294-95, 323
 Մարտո 361
 Մարո, Ջորաբաբեյենց Հակոբի դուստրը 127
 Մաքո, տես Խղաթյան Մարգարիտ
 Մաքո, Սմբատի եղբոր կինը 184
 Մաքսիմով 52, 57
 Մաքրուխ, ոգմեցի, Տամշեր Հովհաննիսյանի մորական մեծ տատը 230, 232-233
 Մդեվանի, վրացի բուշկի 138
 Մելիք Աբրոյան, Արմշատի գյուղապետ 348-349
 Մելիք, Նախանճ Մելիք, Գուլբենց Սարգսի որդին 237, 240-241, 244
 Մելիք-Արամյանց Ա. 107
 Մելիք-Արամյանց Ռ. 107
 Մելիք-Հայկազեանց Գեորգ, Ժորժիկ, Կարսի Բ. հիվանդանոցի կառավարիչ 143
 Մելքոն 246
 Մելքունեան, ռուսահպատակ 141
 Մելքունեան, նախարարի ներկայացուցիչ 145
 Մելխակ, Տիրունի և Գևորգի որդին 97
 Մետրո Մաշտոց 359
 Մետրոյ Թաշտիկ 88-89
 Մետրոյ քահանա, կեսարացի 119
 Մեհմետ աղա 302
 Մեքթուպի Անմետ-Ֆուատ պեյ 319
 Միխայել Իվանովիչ, Իվան Խլյուստովի որդին 267
 Միիրան, ոստիկան Վասիլի որդին 48-49
 Միիրան 210
 Մինասյան Աբրահամ, կարմուճեցի Մարթա Պարտիզյանյանի ամուսինը 73-75
 Մինասյան Լուսին, կարմուճեցի Մարթա Պարտիզյանյանի հարսը 73, 75
 Մինասեան Հաճիպապ, առևտրական 135, 150
 Միսակ, Աղանայի որբանոցի աշխատող 224
 Միսակ 321
 Միսակ, մարաշցի Մեղրակ Սարաֆյանի եղբայրը 76, 79, 81
 Միսակ, վարժապետ 83
 Միր Մահմուտ 287

Միր Մին, Քոռ Ամնի որդին 314-315, 317, 330
 Միրաքյան Հարություն, սպա 176-178
 Միրզոյան 65
 Միրինան, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների հորեղբայրը 210
 Միրինանյան, գնդապետ 55, 58
 Միրինանյանց Գևորգ 104,106
 Միսթաթեբ Էմին 217
 Միքայել, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի հորեղբայրը 96-97
 Միքայելյան, ուսուցիչ, 98
 Միքո, շատախցի խմբապետ 165
 Մլխիթար 69
 Մլխիթար, Առն գյուղի քահանան 15
 Մլխիթար (մականունը՝ Բխիկ) 314
 Մլխիթար, խմբապետ 72
 Մլխիթար, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների եղբայրը 210
 Մլխիթարյան Էմնա Լևոնի, Ռեհան Մլխիթարյանի դուստրը, խարսեցի Մարգարիտ Խղաթյանի թոռնուհին 184
 Մլխիթարյան Լևոն Պողոսի, Ռեհան Մլխիթարյանի ամուսինը 184
 Մլխիթարյան Ռեհան, խարսեցի Մարգարիտ Խղաթյանի դուստրը 184-186
 Մլխկյան Պետրոս 84
 Մլխկյան Սիմոն 84
 Մլտ, հոգևորական 15
 Մլտ, խմբապետ 53, 57, 64
 Մխչյան Լիպարիտ 52, 58, 63
 Մկո, մոխրաբերոցի 326
 Մկրտիչ աղա 150
 Մկրտիչ աղա, արունագրակցի Հովհաննես Հովհաննիսյանի մորական պապը 40
 Մկրտիչ, Խաչատուր Լլեքսանյան Էհրամճյանի եղբայրը 106
 Մկրտիչ, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի եղբայրը 95, 97, 100, 133, 147, 156
 Մկրտիչ, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների հորեղբայրը 210
 Մկրտիչ, Խալո, կարմուճեցի Մարթա Պարտիզպանյանի և Աբրահամ Մինասյանի որդին 73-75
 Մկրտիչ, դայսերցի Հուսեփ աղայի որդին 138
 Մկրտիչ, Լևոնի տեղակալ 326
 Մկրտիչ վարժապետ 327
 Մկրտիչ քահանա, կաղզվանցի 119
 Մկրտչյան Արաքսյա, խարսեցի Դավիթ Վագարյանի կինը 67
 Մեհեր 332
 Միե, Ճնտոյի որդին 319
 Մյունիր Էֆենդի 327
 Մնաս, Տիգրանի եղբայրը 309
 Մնացական, ճալացի Հռիփսիմե Բաղդասարյանի ամուսինը 183
 Մնացական, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի խորթ եղբայրը 269
 Մնացական, Լալայի և Քյել Սարգիսենց Վարդանի որդին 261
 Մնացական, փեսա Կարապետի փոքր եղբայրը 130
 Մոռչյան Մկրտիչ 178
 Մոզլենց Համազասպ, ղզթամուրցի 22-25

Մոկացի Համբարձում, Բառի Համբարձում 350
 Մոռայեանց Շուշանիկ 128
 Մոռայեանց 129
 Մովսիս Մուրադ 334
 Մովսես 176
 Մովսես Խորենացի 359
 Մովսես, Մարգարի և Ազնիվի որդին 186
 Մովսես, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի պապի եղբայրը 260
 Մովսես, վարժապետ 104
 Մովսիսյան Գարեգին Մովսեսի, արճակցի 162-163, 177
 Մովսիսյան Եղիշե, արճակցի Գարեգին Մովսիսյանի եղբայրը 162-163
 Մորայեանց Շուշանիկ 139
 Մշո 318
 Մստե 289
 Մստո 307
 Մստո, շեխ 320
 Մսուրբեկ, Միր Մահմուտի որդին 287
 Մրոյեանց Կոստանդին 140
 Մութաֆյան Ալիս, սեբաստացի Արամ Կյուրեղյանի կինը 188
 Մովսիս 323
 Մովսիս Կոթո 293
 Մովսիս Մուրադ 306
 Մովստոնց 24
 Մուկուչենց Սառա 164
 Մուհամմեդ 227
 Մուհամմետ Էլ-Իսայի տե՛ս Արմենակ Կյուրեղյան
 Մուշեղ, խմբապետ 62
 Մուշեղ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբայրը 259-261, 263, 265-266, 268, 271-273, 277
 Մուպեանճյան Սարգիս, ուսուցիչ 107
 Մուսաբեկ Խարսա Միրո 359
 Մուսաբեկ, Մուսա պէյ 305-306, 310, 321-322
 Մուսի Մուրատ 334
 Մուրադ 25
 Մուրադ 112
 Մուրադ 313
 Մուրադի Արշակ 240
 Մուրադ, կանճեցի 86
 Մուրադ, սուլթան 38
 Մուրադ քեռի 285, 287
 Մուրադեանց Սարգիս Աւետիսի 143
 Մուրադյան Անդրանիկ, Գունկանց Մուրադի թոռը 340
 Մուրադյան Վարդ 88
 Մուրթլաբեկ, Մուրթուլաբեկ, Մուրթուլլահ, Մարտուլլահ պէյ, Աբդալ բեյի որդին 278, 280, 302, 304, 309, 311-313, 317-319, 336-337, 342
 Մուրո 167
 Մութայել, առնցի Սարգիս Ավետիսյանի հորեղբոր՝ Առաքելի որդին 20
 Մուքո 166

Յ

Յակոբ, Աթանանց գյուղի քահանան 326
 Յակոբ Օշական 209
 Յակովբ, կարմեցի, Գևորգ Դարադյանցի հայրը 143
 Յակովբ, տեր Ջորաբաբելի որդին 127

Յակովբեան Մոֆյա, աղեքսանդրապոլցի Սողոմոնյան Մարտինի կինը 139
 Յասադուլցոնք, ազգատուն 240
 Յասադուլցոնց Ազո 240
 Յարո, դավաճան Սարգսի եղբայրը 309
 Յարութին 190
 Յարութին 213
 Յարութինեան, գնդապետ 111
 Յարութինեան Մակար 139
 Յովսիկան Արմենակ 358
 Յովհաննէս, Աղթամարի կաթողիկոս 299
 Յովհաննէս, Թագուհու և Սկրտչի որդին 210
 Յովհաննէսյան Սպրիկ 319
 Յովհաննիսեան Մարգարիտ 159
 Յովսէփ 309
 Յովսէփեան, գեներալ, Կարսի զորամասի պետ 110
 Յուսէփ աղայ, դայսերցի 138

Ն

Նադիրյան Եղիազար 232
 Նադիրյան Մուրադ 232
 Նադր, ֆիդայի 68
 Նազար 36
 Նազարենց Մելիք 238-240
 Նազե մայրիկ, Վանի գերմանական որբանոցի աշխատող 85, 87, 90, 93
 Նազիմ վաշա 45-46, 361
 Նազու, արճակցի Գեղամ Սարգսյանի քեռակինը 93
 Նալբանդյան Լ. 58
 Նախանձ Մելիք, տե՛ս Մելիք, Գուլբենց Սարգսի որդին
 Նահապետ, արունագրակցի Հովհաննես Հովհաննիսյանի եղբայրը 39-40, 42, 66
 Նահապետ, Նահապետի որդին 39
 Նահապետ, արունագրակցի Հովհաննես Հովհաննիսյանի պապի եղբայրը 39
 Նահապետեան Ղևոնդ, մարաշցի, քահանա 81
 Նահապետ Քուչակ 91
 Նատո 26
 Նեճոնց Հովհաննես, Ջոջո 27
 Ներսիսյան Ավո 232
 Ներսո 342
 Նժդէհեան Գրիգոր, Կարսի քահանա 128-129, 137, 142, 147
 Նիգյար, առնցի Սարգիս Ավետիսյանի հորեղբոր դուստրը 20, 22
 Նիկոլայ 34
 Նիկողոս, տանուտեր, Մարիամի հայրը 202
 Նիկողոսենց Նիկողոս 47
 Նոխուտեան, պատվելի 81-82
 Նոհրատեանց, Նոհրատյան Համազասպ, Կարսի քաղաքագլուխ 128-129
 Նոշկանց Մարտո 305
 Նորայր 170
 Նշան 326
 Նշան Էֆենդի 103-104
 Նուբար, խառակոնիսցի Գեղամ Սարգսյանի մայրը 83, 94
 Նունո, Սրապիոնի մայրը 276
 Նուշիկանց Մահալ 289
 Նուշիկենց (Նուշիկանց) Մարտուն (Մուրդուն) 310

Նուշկանց Վարդան 343
Նուրի բեյ 280

Շ

Շաբաղ աղա 345
Շաբան էֆենդի, կարնեցի 155
Շախպորանց Մկրտիչ 275
Շահեն, երզնկացի 60-61
Շահեն, Բաղդոյի որդին 292-293, 340
Շահինեան Կարապետ 210
Շաղաբեան 139
Շաղոյեան Լևոն 306, 326, 324-330, 334-337, 340, 345-346, 350
Շամիլենց 115
Շամոխկա Սախակ 339
Շամունե, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի դուստրը 95, 111, 123, 127, 145, 147, 156, 158-160
Շապաղ, շեխ, շեխ Սալիդ Ալիի եղբայրը 321
Շապո, խմբապետ 143-144
Շառո 334
Շավարշ, խմբապետ 48-49
Շավարշյան Ալեքսանդր, ուսուցիչ 107
Շաղի էֆենդի 121, 123
Շաշեղեան Ստեփան, հյուսն 134
Շարա բեկ 163
Շարաֆ բեկ 251
Շարաֆեան Կարապետ 113
Շաքար աղա, տեն Շաքիր
Շաքարով 141
Շաքեր, տեն Մեղրակ Սարաֆյան
Շաքիր 250
Շաքիր, Քոռ Ամենի եղբայրը 314, 330, 332-333, 337
Շեխ Հնրեյա 320
Շեխմու, Բաղդէի վալի 301
Շեխունց Ղարո 297
Շեր բեկ 317
Շերինանց Տիգրան 298
Շերո, սարկեթցի 347
Շերոնց Շուշան, ոգմեցի 230-231
Շերոյեան Բօզօ, Սինասի եղբայրը 308
Շերոյեան Սինաս 308
Շիրազ 29
Շիրինենք 210
Շիրաջյան Ահարոն, պատվելի 219
Շիտանի Հակո 337
Շոլոխով, հարյուրապետ 351
Շողոկաթ, Թումանի կինը, Եղիազարի մայրը 238-240, 243- 245
Շողոկաթ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորաքույրը 260
Շողո, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի հորեղբոր դուստրը 97
Շուշանիկ, Բուլոշնիկ Համբարի կինը 244
Շուշանցի Նշան 176
Շուշիկ 127, 148, 153-156
Շուքրի 127-128, 130

Ո

Ովսանա, սեբաստացի Արամ Կյուրեղյանի մորաքույրը 193, 199

Չ

Չաթո 308, 333
Չախալ, արուճազրակցիներ Հովհաննես և Նահապետ Հովհաննիսյանների

հայրը 39, 66
Չախալենք, տոհմ 38
Չախիջյան Հովհաննես, հաճնցի Երվանդ Փոստալջյանի ընկերը 227-229
Չախուշեան, Կարսի նահանգապետի օգնական 145
Չալաբի, Սարհանի եղբայրը 307
Չալիկեան Յակովբ 139, 153
Չալխուշեան, ռուսահպատակ 141
Չալկատարյան Արշակ, վանեցի 165
Չալոյենց Խաչո 240, 243
Չալոյենց Մաթոս, Չալոյենց Խաչոյի եղբայրը 243
Չափութեան Ավետիս 77-78
Չիլինգարյան Խաչատուր, ախլցխացի, ուսուցիչ 108
Չիլինգարյան Նեկտար, ուսուցչուհի, Խաչատուր Չիլինգարյանի քույրը 108
Չմշկյան, կապիտան 57-58
Չոքո 47-48

Պ

Պալյան Հարություն 256
Պահատրյան Միսակ, հաճնցի 221
Պայծառ, Նահապետի դուստրը 39
Պապյան Մակար 107-108
Պապոյան Մեղրակ, հրամանատար 57
Պապունց, փոխգնդապետ 55-56
Պատկանյան 105
Պարզյան Մուքիսա, վարդապետ 98-99
Պարտիզպանյան Մարթա, կարմուռեցի 73-75
Պարոյր, Կարսի քահանա Խորեն Ստամբուլցյանի եղբորորդին 158
Պարոյր, Մոզինեց Համազասպի որդին 22-25
Պարունակեանց Արշակ 147
Պելենկեզ Օղլի Մահմուտ, թուրք առևանգիչ, Փայլածուի ամուսինը 76
Պետան 323
Պետիկ 42-43
Պետրոս, վարազավանքի վերակացու 173
Պետրոս 292, 311-312, 334, 347
Պետրոս, սեբաստացի Արամ Կյուրեղյանի դասընկերը 197
Պետրոս, ոգմեցի Արմենակ Ամրիկյանի եղբայրը 278
Պետրոս, արուճազրակցի Հովհաննիսյանի եղբայրը 39-40, 66
Պետրոս, հովիվ 316
Պետրոս, մոխրաբերդցի 334
Պետրոս, Ոգմ գյուղի ռես 303, 307, 310
Պետրոս, սարկեթցի Շերոյի որդին 347
Պետրոսյան Ալեքսանդր, Պետո 163, 165
Պետրոսյան Բազիկ (Բազիկ, մականունը՝ Առյուծ) 330
Պետրոսյան Մամուկ, Ոգմ գյուղի ռես 339-340
Պետրոսեան Սիմեօն 141
Պետրոսեան Սրափ, Չափար Սրափ, կարնեցի 143-144
Պերճուհի, հաճնցի Երվանդ Փոստալջյանի քույրը 221, 226
Պերվարցի Մահմուտ 319
Պիճինեճյան Մամուկ, հաջի 256
Պլեխանյան Նշան, ատենապետ 104-105

Պլուզյան Հովհաննես 163
Պոկանց Պոլիկ 319
Պողոս 316, 318, 325
Պողոս, դիոչի 247
Պողոս, խարսեցի Գավիթ Ղազարյանի հորեղբայրը 67-69, 71
Պողոս, մեկիք, 21
Պողոս, տիրացու 98
Պողոսյան Գալուստ, Կարկառցի Գալո, Շկորա Գալուստ, Չկորա Գալուստ, Վերջիկ 324, 328
Պրենացցի Լյուդվիգ, գեղանկարիչ 100
Պուպունեց Գալո 275
Պօղոսյան Արշակ, սեբաստացի Պարույրի որդին 209, 219

Ջ

Ջազառես 327
Ջախիճյան Հովհաննես 225
Ջալալդին 320
Ջահվար, ճահվար աղա 325
Ջահվորիկ, Մատոյի որդին 307
Ջամալեան 109
Ջամբազեան 129
Ջամբազեան Ջուրաբ 143
Ջամիլ բեկ 309
Ջամիլի Չաթո 337
Ջանկո 331
Ջասեն Միսակօղլի 282
Ջավահիր խանուն 245-246
Ջավատ փաշա 338
Ջավդաթ փաշա 325, 327, 329-330, 331, 336, 344-345
Ջենալ, Ջամալ, Ճենալ փաշա 79, 225, 227, 361
Ջվե Սաֆար 360
Ջիվան, աշուղ 105
Ջոնկանց Մուրադ 289

Ռ

Ռալֆ Ջորդանո 188
Ռամո, Սարգիս Ռամոյանի հայրը 232-233
Ռամոյան (Շերոնց, Շերոյան) Սարգիս, Անաբխիստ, Տամբեր Հովհաննիսյանի մորական մեծ պապը 230, 232-235
Ռաշաղ սուլթան 310
Ռաշիդ բեկ 37, 39
Ռաշիտ աղա 311
Ռաշիտ սուլթան 361
Ռաշո 311, 320
Ռաշոնց Խալո 340
Ռասուլ Հակոբօղլի, քուրդ 282
Ռավետ բեկ 339
Ռափայելեան Վաղարշակ 119
Ռաֆայել, օղուզունցի Բագրատ Սարգսյանի եղբայրը 236, 239-240, 242, 244-247
Ռեշատ, սուլթան 222, 225
Ռեան, մարեկցի 335
Ռեյնոլտս 84
Ռոստոմ 315

Ս

Սաթենիկ, Աղաունու դուստրը 127
Սաթենիկ, որբուհի 138, 155-156
Սաթենիկ, Ջամբազյանի քույրը 143
Սալբի, Նազարենց Մելիքի կինը 238

Մալդաթ 176
 Մալիի բեկ, էմիր Աբդուլլահ խանի որդին 284
 Մավինազ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հորեղբոր՝ Մուշեղի դուստրը 265-266, 268, 272
 Մախակ, վանահայր 346
 Մախու, Գունկանց Մուրադի որդին 340
 Մահակ 27
 Մահակ 298
 Մահակ աղա, ճալացի Չաբել Բաղդասարյանի հայրը 180-181
 Մահակ կաթողիկոս 222
 Մահակ, կաղզվանցի Վաղինակ Ավետիսյանի հայրը 259-260
 Մահակ (մականունը՝ Բոզկանց) 232
 Մահակ, հորեղբայր Գևորգի որդին 275
 Մահակ, կարմուճեցիներ Մարթա Պարտիզյանյանի և Աբրահամ Մինասյանի որդին 75
 Մահակ, Մհակ, Ոզմ գյուղի քահանան 297-299
 Մահանդուխտ, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի թույրը 39-40, 66
 Մաղաբեկյան Առաքել, թաղապետ, Կարսի Սբ. Լուսավորիչ դպրոցի հոգաբարձու 105
 Մաղաբեկյան Ստեփան, թաղապետ, Կարսի Սբ. Լուսավորիչ դպրոցի հոգաբարձու 105
 Մաղոյան Հակոբ 103
 Մամսոն Խարեցի 276
 Մամվել, առեճցի Սարգիս Ավետիսյանի ընկերը 25-26
 Մամվել 58
 Մայիդ Ալի, շեխ 310, 319-321, 343
 Մամթուրճի Սարգիս 122
 Մառնազ, Նիգյարի և Հովհաննեսի դուստրը 22
 Մասուն, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի եղբայրը 39-40, 66
 Մատիկ փաշա 352
 Մարատնիկով Վանիչկա 52-55
 Մարաֆյան Սեդրակ 76, 80-81
 Մարգիս զինվոր 56
 Մարգիս 308-309, 311, 316, 334, 346
 Մարգիս, Կիթանց գյուղի քահանան 297-298
 Մարգիս, առեճցի Սարգիս Ավետիսյանի եղբայրը 12
 Մարգիս, Գուլեի որդին 237, 240-241
 Մարգեսան Արեւահատ, Աւետիս Մուրադեանցի կինը 143
 Մարգեսան Սիմեոն 123
 Մարգսյան Գեղամ Կարապետի, խառակոնիսցի 83, 88
 Մարգսյան (Թումանյան) Բագրատ Եղիազարի, օղուզուեցի 236
 Մարգսյան Ռեմ, Ռեմիկ, օղուզուեցի Բագրատ Մարգսյանի ավագ որդին 236, 247-248
 Մարիան, Չալարիի եղբայրը 307
 Մարուխանեանց Գրիգոր 139
 Մաքո, ֆիդայի 64
 Մողի էֆենդի 138
 Մեքաստացի Մուրադ 30, 47
 Մեղա, օլբեցի Խաչատուր Ավետիսյանի դուստրը 143

Սեդրակ 276
 Սեդրակյան, Մելիք-Առաքելյան, Արիստակես վարդապետ 98-99
 Սեթո, կոճերերցի 12-13
 Սեթո 51
 Սեթո 308
 Սեմերջյան Խաչիկ, մատնիչ 167
 Սեպուհ, խմբապետ 58, 109
 Սերգեյ, բատրակ 267
 Սերգեն, ռուս կապիտան 96
 Սերենկյույան Հովհաննես, Վարդգես 166-167
 Սերոբ 344
 Սերոբ, Գավիթ Ղազարյանի հորեղբայրը 68
 Սերոբ փաշա, տե՛ս Աղբյուր Սերոբ
 Սերովբե, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների հորեղբայրը 210
 Սեփան, Սեփիկ 310, 315-316, 318, 325-326, 332- 335
 Սեփան (Ստեփան), Ոզմ գյուղի քահանան 297-299, 305
 Սէլիտ-Ալի 318
 Սթեա Սաֆե, Միրշարաֆի դուստրը 287
 Սիահմադ փաշա 17-20
 Սիմե, Մանուկի կինը 20-21
 Սիմեօն, Միսաթ Գրիգորյանի եղբայրը 140
 Սիմեօնեան Ալէքսան 140
 Սիմոն 21
 Սիմոն (մականունը՝ Դանչո) 42-43
 Սիմոն (մականունը՝ Ծիտան), Հարունի որդին 232
 Սիմոնյան Արաքսի, շատախցի, Ռաֆայելի կինը 247
 Սիմոնյան, վերակացու 99
 Սիրանույշ, մարաշցի Սեդրակ Մարաֆյանի թույրը 76
 Սիրունեան Օմիկ, ախլցխացի 156
 Սիրունեց Գևորգ 35
 Սիրունի Ռաշիդ 14, 16
 Սիրունի Մամվել 14
 Սմբատ, զոչեցի 51-52
 Սմբատ, զինվոր 59
 Սմբատ, խմբապետ 109
 Սմբատ բեկ, Բավա Սմբատ, Բավա Մարգարի որդին, խարսեցի Մարգարիտ Խղաթյանի ամուսինը 184-186
 Սմբատ, Օղուզու գյուղի քահանա 238, 246
 Սմբատ, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի քրոջ որդին 131
 Սմբատ, Անդրանիկ զորավարի օգնականը 61
 Սմբատյանց Արտակ վարդապետ, Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդ 156-157
 Սմիթ 25
 Սոկոլով, հրամանատար 346, 351, 354-355, 358-360
 Սողոմոնեան Մարտին, ալեքսանդրապոլցի 139
 Սողոմոնեան Սկրտիչ 149, 154
 Սողոմոնեանց Սոֆյա Յակովբի 140
 Սոնա, ճալացի Չաբել Բաղդասարյանի մայրը 180-181
 Սոնա, Եղիազարի հորաքույրը 240
 Սոսե, Աղբյուր Սերոբի կինը 14

Սոսի, Սոսո, Կանդալունց Սոսի 288-300, 323
 Սորջանկա Կարապետ 289
 Սոֆյա 113, 123-124, 127, 129, 136-138, 140, 152, 155-156, 158, 160
 Ստամբոյցյան Գրիգոր Օհանի, Գոգոր ամի, Կարսի Խորեն քահանա Մտամբոյցյանի հայրը 95-96
 Ստամբոյցյան Եղիաբեթ Գաբրիելի, Կարսի Խորեն քահանա Մտամբոյցյանի մայրը 95-96, 121
 Ստամբոյցյան Խորեն (աշխարհիկ անունը՝ Համբարձում) Գրիգորի 95, 98, 102-103, 105, 107, 117, 126, 134, 140, 142, 144, 148, 150, 152, 154-155
 Ստամբոյցոց Առ, տե՛ս Ավետիս, Կարսի Խորեն քահանա Մտամբոյցյանի եղբայրը
 Ստեփան, հաճնցի Երվանդ Փոստալչյանի եղբայրը 221
 Ստեփան, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի ընկերը 136
 Ստեփան քահանա, տե՛ս Կոստանյան Պողոս
 Ստեփան, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի քրոջ որդին 131
 Ստեփանե վարդապետ, Գևորգյան ճեմարանի տնօրեն 103
 Ստեփանեան Արշակ, Ջարուհու ամուսինը 123, 140
 Ստեփանեան Լեւոն, նորթաղեցի 123
 Ստեփանեան Ստեփան, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի քրոջ թոռը 131-132
 Ստեփանյան-Ամիրբեկյան Ասլան, ոզմեցի 232, 296, 309, 320
 Ստեփանյան Խաչատուր, Կարսի քահանա Խորեն Մտամբոյցյանի հորեղբոր դստեր ամուսինը 97
 Սրապիոն, կաղզվանցի 276-277
 Սրապիոն, Մնացականի հորեղբոր տղան 269
 Սրբուհի, Գուբրյի Ավետիսի դուստրը 331
 Սրգոյի Մուսե 21
 Սրկեխունց տուն 360
 Սուրեն 48
 Սուսի 313
 Սուրենյան Գևորգ, վարդապետ 99
 Սուքիաս, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի հայրը 39, 42, 66
 Սուֆի Մահմատ աղա 310

Վ

Վալի փաշա 225
 Վահագն հայրիկ, տե՛ս Տաթևյան Վահագն
 Վահան 182-183
 Վահան, արուճազրակցի Հովհաննես Հովհաննիսյանի եղբայրը 39-40, 66
 Վահան, սեբաստացի Արամ և Արմենակ Կյուրեղյանների հորեղբայրը 210
 Վահան, Նահապետի որդին 39
 Վահան Չերազ 246
 Վահան (մականունը՝ Փոխան), առեճցի Սարգիս Ավետիսյանի հորեղբայրը 20
 Վահրամ 49
 Վահրամ (Ստեփան) Մանկունի, արքեպիսկոպոս 254

Վանեցեան Զուրաբ 137, 140
 Վանեցեան Փեփրոնեա, Զուրաբ Վանեց-
 յանի կինը 137
 Վանո 68
 Վանո, Պողոսի կնոջ եղբայրը 71
 Վանո, Մաքոյի որդին 184
 Վանոն Հովհաննես 295
 Վանոն Ներսո 301, 303, 320
 Վառլամյան, Չիբրոյանների փեսան 100
 Վասիլ, Մարիդամիլի ոստիկան 48
 Վարդան, սեբաստացի 198
 Վարդան 338
 Վարդան, կարմուճեցի Մարթա Պարտիզ-
 պանյանի եղբայրը 75
 Վարդան, խիզանցի դարբին 358
 Վարդան, Խանասորի արշավանքի հերոս
 164-165
 Վարդան Մուրադյան, ուրանցի 310-311,
 333, 316-317, 320-322, 326, 328, 332,
 334-335, 338, 340, 345
 Վարդան, քոյսվա, Նազարենց Մելիքի
 եղբայրը 240
 Վարդանեան Առաքել աղա 142
 Վարդանեան Յովսէփ 319
 Վարդանուշ, կաղզվանցի Վաղինակ Ավե-
 տիսյանի հորեղբոր՝ Մուշեղի կինը
 263, 265, 272-273, 277
 Վարդերեսյան Խորեն ավագ քահանա
 254
 Վարդիթեր (Թելո), ճալացի Ռուբեն Բադ-
 դասարյանի մայրը 179-182
 Վարդուն, Կարսի քահանա Խորեն
 Ստամբուլցյանի քեռու դուստրը 101
 Վարդուշ, Լալայի և Քյել Մարգիսենց
 Վարդանի դուստրը 261
 Վարժապետյան Սերովբե (մականունը՝
 Հրուշան), մանկավարժ 254
 Վարսենիկ, հորեղբայր Արմենակի դուստ-
 րը 273
 Վարսենիկ, փեսա Կարապետի հորեղբոր
 դուստրը 115, 124, 130
 Վարտսիկ, Վարոս, կաղզվանցի Վաղի-
 նակ Ավետիսյանի հորեղբոր՝ Մուշե-
 ղի որդին 263, 266, 268, 272
 Վռամյան 323, 327, 329-330
 Վրացեան 146
 Վրթանես վարդապետ 163
 Վրթանես, տիրացու 128, 130, 142
 Վարթիկ 288
 Վարթկանց Մարդո 312
 Վարսիկ 182

S

Տաբլյան Վահագն, Վահագն Հայրիկ, Ա-
 դանայի որբանոցի տնօրեն 222-227,
 229
 Տայլանյան Պողոս 257
 Տատրո Կազար 314
 Տիմիկոլու Յորկի, բոքաթցի 256
 Տեմիրճիպաչեան 219
 Տեր-Անտոնյան Ստեփան 98
 Տեր-Արթինենց Մաքոյի գերդաստան 259
 Տեր-Արթինենց Մաքո, կաղզվանցի Վա-
 ղինակ Ավետիսյանի պապը 260
 Տեր-Գարրիելյանց Ե. 107
 Տեր-Գրիգորյան Մկրտիչ, Կաղզվանի
 քահանա 113
 Տեր-Հարությունյան, բժիշկ 107, 118

Տեր-Հովհաննիսյան Թադեոս, Ալեքսան-
 դրապոլի Սր. Աստվածածին եկեղե-
 ցու քահանա 96
 Տեր-Ղուկասյան, գեներալ 100
 Տեր-Մատթեոսյան Սենեքերիմ, ուսուցիչ
 98
 Տեր-Մկրտչյան Գալուստ, ծողրութեցի 98
 Տեր-Մինասյան Միքայել, Անիի վանա-
 հայր 95
 Տեր-Ներսեսյան Կարապետ 257
 Տեր-Ներսեսյան Ներսես, Կարապետի
 որդին 257
 Տեր-Պողոսեանց Թադեոսեան Պողոս 98
 Տեր-Սարգսյան Ալեքսանդր, Կարսի քա-
 հանա Խորեն Ստամբուլցյանի ընկերը
 100
 Տեր-Սարգսյան Արիստակես արքեպիս-
 կոպոս, Վրթանես ծայրագույն վար-
 դապետ Տեկանցի եղբայրը 169
 Տեր-Սարգսյան Երեմիա արքեպիսկո-
 պոս, Վրթանես ծայրագույն վարդա-
 պետ Տեկանցի եղբայրը 169
 Տեր-Սարգսեան Համբարձում, վանեցի,
 ուսուցիչ 159
 Տեր-Սարգսյան Վրթանես ծայրագույն
 վարդապետ Տեկանց, Վարազավան-
 քի վանահայր 169
 Տեր-Սարգսյան Սարգիս քահանա 254
 Տեր-Գրիգորեան տեր Արսեն 157
 Տեր Զորաբաբեկենք 127
 Տեր Մելքիսեդեկենք 124, 128-129
 Տեր-Մելքոնեան Սմբատ 156, 158-159
 Տեր-Միրաբեան Յովհաննես 159
 Տերտերանց Խաչիկ 48
 Տիգրան, հոտաղ 48
 Տիգրան, Վարազավանքի աշակերտնե-
 րից 172
 Տիգրան 79
 Տիգրան, պլբենցի 326
 Տիգրան, խարսեցի Բավա Մարգարի որ-
 դին 185
 Տիգրան էֆենդի, մշեցի 171-172
 Տիգրանյան Հովհաննես աղա, գնդապետ
 96-97
 Տիգրանյան Մկրտիչ, ուսուցիչ 98
 Տիգրանուհի, Տիկուշ, կաղզվանցի Վաղի-
 նակ Ավետիսյանի հորեղբոր՝ Արմե-
 նակի դուստրը 273
 Տիլտարենց Ծաղիկենց 210
 Տիկուշ, Կարսի քահանա Խորեն Ստամ-
 բուլցյանի փեսայի քույրը 113-114,
 117, 120, 125-129, 134-136
 Տիրացու Վարդան, մոկսեցի 28
 Տիրոսենց աղջիկ, Կարսի քահանա Խո-
 րեն Ստամբուլցյանի մեծ մայրը 97
 Տիրուն, Կարսի քահանա Խորեն Ստամ-
 բուլցյանի հորեղբոր որդու կինը 97
 Տրդատ Մեծ 283, 285
 Տոսրո, Փուլոյի կինը 274
 Տուկանենց Ալեք 232

P

Րիշտի 211

S

Տողիկ, Կարսի քահանա Խորեն Ստամ-
 բուլցյանի եղբոր դուստրը 114

Ու

Ուզունյան Հովհաննես, գրող, հաճնցի
 Երվանդ Փոստալցյանի քեռին 221,
 226

Փ

Փալեցունց Մակար 246
 Փալեցունց Սրապ 240
 Փայլածու, մարաշցի Սեդրակ Սարաֆյա-
 նի քույրը 76, 81
 Փանյան Եղիշե, արցախցի 27
 Փանոսյան Գեորգի 64-65
 Փառանձեմ, վարժուհի 180
 Փառուկ, Մուրբեկի կինը 287
 Փարվանի Սիրգո 16
 Փափազյան Վահան, Կոմս 42-43
 Փետրոն, Խանումի և Օհանի դուստրը 97
 Փիլոյան Հարություն, ուսուցիչ 107-108
 Փիլոյեան Անուշաւան 124
 Փիրումեան 114
 Փոլատեան Ոսկան, բայբուրոցի 220
 Փոխիկ 311
 Փոստալցյան Երվանդ Հակոբի (Մահմեդ
 Օղլի), հաճնցի 221, 224-228
 Փոստալցյան Հակոբ Ստեփանի, Երվանդ
 Փոստալցյանի հայրը 221-222
 Փորոզկա Մանուկ, Ավո Մանուկ 338
 Փուզո 274

Ք

Քաթան 118, 124, 127, 130
 Քալաշ 314
 Քալաշո 70
 Քամալ փաշա 343-344
 Քանդալունց Սիրգո 302
 Քանքնի Հակո 21
 Քաչալ Խաչո 27
 Քաչալ Հաթիմ, Դահեր աղայի որդին 292-
 293
 Քեազիմ փաշա, Կարսի վալի 136, 143, 145
 Քենալ 220
 Քերովբե, սեբաստացի Արամ և Արմենակ
 Կյուրեղյանների հորեղբայրը 210
 Քեսոսյանց Մելիսակ, առևտրական 135,
 149-150
 Քենալ էֆենդի 125-128, 130, 151
 Քենալ, մոլլա 115, 134
 Քիչուկ Հանի 122
 Քյել Մարգիսենց Վարդան 261, 269
 Քյուրքչյան Հովհաննես, լուսանկարիչ
 105
 Քյուփալենց Նիկոլ, Տիրունի հայրը 97
 Քնար, առեցի Սարգիս Ավետիսյանի
 դուստրը 7
 Քնարիկ, Լեւոնի եղբոր դուստրը 156
 Քոթանջեան Յարութիւն 123, 140
 Քոթանջեան Կորյուն, Կարսի Սր. Գրիգոր
 Լուսավորիչ եկեղեցու քահանա 111,
 118, 124, 126, 128-129, 133, 137, 142,
 148-154, 156
 Քոթանջեան Սարգիս, տիրացու, ուսուցիչ
 107
 Քոչե, առեցի Սարգիս Ավետիսյանի պա-
 պը 10
 Քոչարյան Աշոտ, առեցի Սարգիս Ավե-
 տիսյանի որդին 7
 Քոչարյան Նորիկ, առեցի Սարգիս Ավե-
 տիսյանի որդին 7

Քոռ Հասեն փաշա 337
 Քոսա 307-308
 Քոսենք 298
 Քոսեց Մուխսի 287

Օ

Օդաբաշյան 57
 Օլյա, Եղիշե Փանյանի դուստրը 27
 Օլոյենց Գրիգոր, Արուճագրակ գյուղի տանուտեր 46
 Օլոյենց Կիկո 40
 Օհան, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի հորեղբոր որդին 97
 Օհան, Կարսի քահանա Խորեն Ստամբոլյանի մեծ հայրը 96-97

Օհանեան Ներսես Հայրիկ 220
 Օհանի Պողոս, մեջլիսի անդամ 69
 Օմարի Չաթո, Բշիրի Չաթոյի քրոջ որդին 13-19
 Օսման աղա 40-41
 Օսման աղա 319
 Օսման էֆենդի 117-118, 120-121, 128, 133, 154-155

Ֆ

Ֆախրեղդին էֆենդի, վալիի օգնական 138-139, 142
 Ֆահրադենք 261
 Ֆահրադ, Բյել Սարգիսենց Վարդանի հորեղբոր որդին 261, 269

Ֆարիաթ աղա, կուզ 310, 312-313
 Ֆարմօ 319
 Ֆերեկ փաշա 357
 Ֆընտրզ, Մարիամի մայրը 202
 Ֆընտրզ տուտու, տանուտերի հարս 199, 215
 Ֆինանչոց Եգոր 150
 Ֆրանկին, նահանգապետ 106
 Ֆրիդա, Հեր Սփերիի դուստրը 86

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

- Աբաղա, Աբաղու դաշտ 21, 178, 338, 350-351
- Աբաղայի լեռ 164
- Աբդյուլ Ռահման գյուղ 256
- Աբովյան, տե՛ս Աղբաշ Վերին գյուղ
- Աբովյան փողոց Երևանում 25
- Ագարակ, գյուղ Լոռու մարզում 64
- Ագարակ (Ագրակ), գյուղ Կարսի մարզում 237, 361
- Ագտաղմատեն քաղաք 256
- Ադանա 19, 208, 215, 219, 222-223, 227, 229, 307, 310
- Ադանայի որբանոց 208, 215, 219, 221-222
- Ադգոռնի, հանդամաս 27
- Ադիլջևազ, տե՛ս Արծկե գավառ
- Ադրբեջան 274
- Ազատ գետ 27
- Ազատան, տե՛ս Խլի-Ղարաքիլիսա գյուղ
- Ազգ. Արամեան վարժարան, Սեբաստիա քաղաքում 189
- Աթանանց, գյուղ Հայոց Ձոր գավառում 325-327, 338
- Աթենք 220-221, 257, 258
- Ալաղաղ սար 35
- Ալամեք (Ալաման), գյուղ 354
- Ալամեքի իջևանատուն (Խանա Ալաման) 354-355
- Ալաշկերտ գավառ, քաղաք 43-45, 48, 53, 72, 147, 289, 299, 319, 351-352, 361
- Ալաշկերտի հովիտ 45, 48
- Ալաջա սար 239, 240
- Ալբերան լեռ 303
- Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ 30, 49, 51-52, 61, 92, 95-96, 98, 100, 102-103, 105-106, 109-111, 114, 120, 128-130, 134-140, 144-152, 154-160, 186, 236, 239, 242, 244-248, 253, 259, 265-266, 269, 270-273, 328
- Ալբրուլաղ (Ալբրուլակ) գյուղ 44
- Ալիոռլիս գյուղ 230, 234
- Ալիճագրաք, տե՛ս Արունագրակ գյուղ
- Ալիջեյրեք, տե՛ս Արունագրակ գյուղ
- Ալիս գետ, կամուրջ 190, 210
- Ալի Քուչակ գյուղ 51, 69, 97
- Ալկև գյուղ 298, 342
- Ալյուր (այժմ՝ Ալաքոյ), գյուղ Թիմար գավառում 28, 336
- Ալջավազ, տե՛ս Արծկե գավառ
- Ալջավազի հարթավայր 10
- Ավարինջ (Ավարինջ, Առվարինջ, այժմ՝ Կարաաղաչլը), գյուղ Մուշ գավառում 353
- Ալտուրխարապ, վայր 256
- Ալֆորվիլ 186
- Ախալքալաք 71, 106, 146, 241
- Ախալքլը գյուղ 255
- Ախլցխա 146, 241
- Ախկերան գյուղ 35, 36
- Ախպար գյուղ 353
- Ախտա 50
- Ախտա Ներքին, շրջան 83
- Ախուրյան գետ, կամուրջ 61, 97, 102
- Ախուրյան շրջան, շրջկենտրոն 49, 67
- Ականց, Ակն, տե՛ս Արճեշ քաղաք
- Ակնի գավառ 17-19
- Ահարոն Պատվելիի որբանոց, տե՛ս Մապունիսան որբանոց, Հալեպ քաղաքում
- Ահմեդաղա Կյումկյում գյուղ 257
- Աղավնատուն գյուղ 12, 21
- Աղբակ գավառ, դաշտ 163, 317, 320, 337-338, 347, 351
- Աղբաշ Ներքին գյուղ 7, 26-28
- Աղբաշ Վերին գյուղ 27
- Աղեքսանդրեան փողոց, Կարս քաղաքում 119, 124, 129, 135
- Աղբոր, տե՛ս Ղարաքիլիսա քաղաք, Ալաշկերտ գավառում
- Աղթամար կղզի, վանք, դպրոց 297, 299, 301, 305, 328-329, 333, 335
- Աղթամարի կաթողիկոսարան 280
- Աղին կայարան 239, 241, 242
- Աղլեզ անտառ, սար 287, 313
- Աղլիզա սայիտակ քար 318
- Աղձնեաց բերդ 282
- Աղձնեաց գավառ 279, 282
- Աղձնիք, տե՛ս Խարզան 282
- Աղձնեջիղ գյուղ 257
- Աղջաղալա գյուղ 237, 245
- Աղջամեղիք, գյուղ Խնուս գավառում 352
- Աղսի ջուր 288
- Աղսաու գյուղ 322
- Աղսու գետ 78
- Աղվեսաձոր, փողոց Վան քաղաքում 167
- Աղփուղար գյուղ 49
- Ամբերդ գետ 22
- Ամերիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ 7, 25-26, 171, 176, 181, 188, 208, 211, 219-220, 245, 273, 318
- Ամերիկեան քղեջ, Տարսոն 220
- Ամերիկյան Կարմիր Խաչի Անթուրայի որբանոց, Բեյրութում 219
- Ամերիկյան վարժարան, Վան քաղաքում 219
- Ամկու (Ամյուկ) բերդ 12
- Ամյուկ Փոքր գյուղ 12
- Այգեհովիտ գյուղ 98
- Այգեստան թաղամաս, Վան քաղաքում 84, 163-164, 166, 167, 177, 251
- Այլանու գյուղ 20
- Այնթապ 78, 219
- Անանիայի գերեզման, Նարեկ գյուղում 328
- Անատոլ 320
- Անդոկ (Անդոք) սար 281, 354
- Անգլիա 229, 362
- Անգորա 138
- Անթիլիաս 82, 111
- Անի 95, 105, 180, 237
- Անիի շրջան 180
- Անկարա 254
- Անկուզակ (Գյուզակ, Գուզեկ, Կյուզեկ, այժմ՝ Թոփուզարփա), գյուղ Բերկրի գավառում 349
- Անձավ 178
- Անձևացոց սար 287
- Անալեքի աղբյուր 281
- Աշնակ գյուղ 179
- Աշտարակ 50, 51,
- Աշոցք քաղաք, տե՛ս Ղզըղոչ գյուղ
- Ապազը գյուղ 255
- Ապարան քաղաք 28, 50-51, 67, 98, 179, 289
- Ապարանի շրջան 51, 69
- Ապարանցան աղբյուր 173
- Ապարանից, գյուղ Խիզան գավառում 343
- Առաքելոց եկեղեցի, Կարս 49, 95, 101, 109-111, 114-115, 119, 131, 134, 138
- Առեղ, Հառեղ, գյուղ Շատախ գավառում 333, 346
- Առեն, գյուղ Արծկե գավառում 7-22
- Առենի լիճ 8-9, 12, 20
- Առնչկուս (Առինջկուս, այժմ՝ Քավուշ-թուք), գյուղ Արծկե գավառում 13-14
- Առնչկուսա թե՛ 20
- Առնոս լեռ 281, 286, 348
- Առնջվան (Առինջվանք, այժմ՝ Յեշիլջե), գյուղ Մուշ գավառում 71
- Առվտոցներ, հանդամաս, դաշտ 9, 20-21
- Առտվան 343
- Աստապատ, գյուղ Նախիջևան գավառում 98
- Աստղկան բերդ 174, 176
- Աստվածաբանական ճեմարան, Մարաշում 219
- Աստրախան 162, 165
- Աստրախանի թե՛ 98
- Աստուածամայր եկեղեցի, Սեբաստիա քաղաքում 210
- Ասքանի հեղ (Ազգային այր) քարայր 332
- Ավազ լիճ 288
- Ավամասի (Ծկան ջուր) գետ 287
- Ավանց, Հավանց, գյուղ Վան-Տոսպ գավառում 236, 349
- Ավդիշանց գյուղիք, գոմեր 231
- Ավդիշանց ճամբար այգիներ 231
- Ավեստարանական վարժարան, Մարաշ քաղաքում 219
- Ավերակ (այժմ՝ Ալաբայի), գյուղ Վան-Տոսպ գավառում 350
- Ավզի լճակ, տե՛ս Առենի լիճ
- Ավզուտ (այժմ՝ Բյուվեթը), գյուղ Մուշ գավառում 359
- Ատաբազար 254
- Ատրյաման քաղաք 256
- Ատոմի բերդ 301
- Արաբկիր 104
- Արաբիա, Արաբստան, Արապիստան 190, 279, 307, 326

Արագած սար 10, 22, 49, 51, 62
 Արագածոտնի մարզ 21-23, 51, 61, 179
 Արագի գյուղ 237
 Արագոլի, տե՛ս Արագի գյուղ
 Արայրիս, տե՛ս Երագգավորս գյուղ
 Արածանի գետ 45, 48, 71, 193, 196, 213, 304, 352-353, 361
 Արամյան վարժարան, Կ. Պոլիս քաղաքում 188, 220
 Արամյան վարժարան (Սբ. Գևորգի դպրոց), Սերաստիա քաղաքում 208, 210-211
 Արան 280
 Արարատ գյուղ 179
 Արարատի մարզ 26-27, 62-63, 179, 230, 346
 Արարատյան դաշտ, հարթավայր 11, 23, 31, 63, 234
 Արարուց Սբ. Թարգմանչաց դպրոց, Վան քաղաքում 162-164, 168
 Արարք գերեզմանատուն 320
 Արաքս գետ 27, 31, 34-37, 39, 41-44, 46-47, 49, 64, 240, 265, 361
 Արաքս գետի կամուրջ, տե՛ս Կոտրած կամուրջ
 Արգինա գյուղ 239, 241, 246
 Արդահան գավառ, քաղաք 51, 53, 60, 110, 114, 146, 148, 241
 Արդանուշ քաղաք 44
 Արդվին գավառ 51, 53, 60
 Արեքինի սարահարթ 36
 Արթիկի շրջան 236, 240, 242, 248
 Արծաթա լիճ, աղբյուր 288, 302
 Արծեկ գավառ, քաղաք 7, 8-10, 12-14, 18-19, 21, 289, 313, 330, 333, 340
 Արծնյան վարժարան, Կարին քաղաքում 166
 Արծվաքար, գյուղ Գեղարքունիքի մարզում 350
 Արդուբյան օրիորդաց դպրոց, Ալեքսանդրապոլ քաղաքում 100, 105
 Արճակ գավառ 83, 92
 Արճակ գյուղ 162-165, 177-178
 Արճակ լիճ 91, 162,
 Արճեղ գավառ, քաղաք 8, 17, 345
 Արմաշ 209
 Արմավիր քաղաք, ՌԳ-ում 157, 259, 267
 Արմավիր գյուղ 64
 Արմավիր, տե՛ս Հոկտեմբեր գյուղ
 Արմավիր, տե՛ս Հոկտեմբերյան քաղաք
 Արմավիրի մարզ 20-21, 72, 186
 Արմտլի, գյուղ Շիրակի մարզում 236, 248
 Արմուտլու գյուղ, Ներքին Բասեն գավառում 49, 57
 Արնիս 349
 Արնոտ սար 284
 Արշալույս գյուղ 21
 Արոխա բերդ 284-285
 Արջարակ, տե՛ս Արուճագրակ գյուղ
 Արջրա գյուղ 13-14
 Արտաշատ 63, 236, 309
 Արտաշատի շրջան 7, 26, 55, 230, 346
 Արտաշատ Վերին գյուղ 55
 Արտոս, Արդոս, Արտոս լեռ, ձոր 326, 328-329, 333, 335-337, 346
 Արջայն 33, 98, 111
 Արուճագրակ, Արջարակ, գյուղ Բասեն գավառում 30-31, 35, 39, 43, 66

Արփա գետ 239, 234
 Արփաշայ, տե՛ս Արփա գետ
 Արփավար (Արփավա, այժմ՝ Նշավան) գյուղ 27
 Արևարյուր գյուղ 234
 Արևելյան Հայաստան (Ռուսահայաստան) 7, 11, 30, 33, 49, 58, 93, 181, 232
 Արևմտյան Հայաստան 8, 10-11, 42, 47, 49, 59, 60, 63
 Արևշատ, տե՛ս Աղբաշ Ներքին գյուղ
 Արևշատ, տե՛ս Եղանլար գյուղ
 Աբշրա, տե՛ս Արջրա գյուղ
 Աֆիոն-Կարահիսար 254

Բ
 Բաբշեն (Փափշեն, այժմ՝ Յունուրտաթեփե), գյուղ Բիթլիս գավառում 354-355, 359
 Բաբշեն սար 344
 Բագարան 361
 Բագրան գյուղ 237
 Բագրևանդ գավառ 44-45, 48, 352
 Բագրևանդի Սբ. Հովհաննու վանք 71, 352
 Բագ գյուղ 360
 Բագաբոկան 313
 Բագարաղան գյուղ 254
 Բագաներյան սար 302, 316-317
 Բագում, տե՛ս Բզովդալ գյուղ
 Բաթման գետ 279, 282
 Բաթում 146, 182, 258
 Բալաջար 275
 Բալնեսակ 318
 Բալուդ, տե՛ս Տերտերի գյուղ
 Բախներ (Փախներ, Պագան, Պայխնրիս, Փակեսաներ, Փայխրներ, Փայխներ, Փեյկներ) գյուղ 328, 334
 Բախվանց գյուղ 306
 Բակեջոռ, Բակի ձորի աղբյուր 288, 301
 Բաղդաղ 75-76, 279, 282, 320, 329-330, 339, 341, 343, 351
 Բաղեշ, տե՛ս Բիթլիս
 Բաղլամա, տե՛ս Բախներ
 Բաղլու գյուղ 359
 Բամբասանց բլուր 174
 Բայագետ, Հին Բայագետ գավառ 21, 31, 337-338, 351-352
 Բայագետ, Նոր Բայագետ 139, 311, 349, 350-351, 361
 Բայանդուր գյուղ 106
 Բայբուրդ գյուղ 54, 60
 Բայտ գավառ 285
 Բայրախտար գյուղ 237, 239
 Բայրան փաշա թաղ, Կարս քաղաքում 101, 120, 139
 Բանգուշի աղբյուր 9
 Բանեջան գյուղ 342
 Բաշգեղ գյուղ 30, 38, 43, 47-49, 53
 Բաշկալա 280, 282, 317, 320, 327, 345
 Բաշկերտ, տե՛ս Բաշգեղ գյուղ
 Բաշ-Շորագյալի գավառ 61, 110, 180, 237
 Բաշ-Շորագյալ, Շորագյալ, տե՛ս Երագգավորս գյուղ
 Բաշոր գետ 282
 Բաշքեղադիկար, Բաշքադիկար գյուղ 156, 237
 Բառ, գյուղ Մոկս գավառում 281, 350
 Բառա գալի, ձորակ 281
 Բասան գյուղ 308

Բասեն գավառ 30-34, 37-39, 43, 45, 47, 65-66
 Բասեն Ռուսական, գավառ 43, 109, 237
 Բասեն Ներքին, գավառ 30-35, 38, 43, 47-48, 53, 57
 Բասեն Վերին, գավառ 31-34, 43-44
 Բասենի դաշտ 33
 Բատիրխանի ամրոց, Բատիրխան բեկի բերդ 284
 Բարատտիկ սար 335-337, 340
 Բարատոր 337
 Բարդուղ 54, 56-57
 Բարդուղիմենայան լեռնաշղթա 48
 Բարդուղիմենու վանք 163, 351
 Բարեկաճկան սար 315-317
 Բարկաթ (այժմ՝ Էսենքըլը) գյուղ 13-14, 20-21
 Բարկաշատ, տե՛ս Բարկաթ գյուղ
 Բարձրափ դաշտ 288, 300, 306
 Բարձրափ սար 311
 Բարվար գավառ 278-280, 287, 293-294, 299-302, 304-305, 308-311, 315, 318-319, 337, 339-340, 342-344, 348
 Բաքի ճոռ 316
 Բաքու 63-64, 157, 162, 164, 167, 177, 236, 247-248, 275, 306, 319, 345, 361
 Բեթան, Բեյթան գյուղ 320
 Բեթամեր գյուղաքաղաք 320
 Բելայա Մետ գյուղ 259, 276-277
 Բելուտիկի սար 337
 Բելու (այժմ՝ Ալաջաբյուկ) գյուղ Կարճկան գավառում 321
 Բեհբութեան փողոց, Կարս քաղաքում 129
 Բեղենդիկ, տե՛ս Բետար գյուղ
 Բեյրութ 76, 81, 219, 221, 257, 329
 Բենգլի-Ամնեղ գյուղ 239
 Բեշապուր, գյուղ Իրաքում 348
 Բեսլան 267
 Բետար, Բեղար, գյուղ 302-303, 308, 312, 314, 341-342
 Բերդակ, Փերթակ (այժմ՝ Դոդանլար), գյուղ Վան-Տոս գավառում 326
 Բերդամեջ, Քալախի թաղ, Կարս քաղաքում 101, 121
 Բերդ բլուր 322
 Բերկրի գավառ, քաղաք, ձոր 21, 232, 338, 349, 350
 Բերնա գյուղ 30, 49, 61
 Բզովդալ գյուղ 49
 Բիթլիս (Պիթլիզ) մահանգ, քաղաք 31, 68, 184, 236-237, 279, 281-283, 289, 291, 294, 301-302, 304-305, 307, 312-313, 317, 320-322, 336-338, 343-346, 352-361
 Բիթլիկի կամուրջ 352
 Բիթլու (այժմ՝ Բյուփրյույուլու), գյուղ Բուլանլիս գավառում 352
 Բիժմկերտ գյուղ 325-326
 Բիճգյոլ սար 353
 Բիֆերան, գյուղ Շատախ գավառում 348
 Բլեճուկ հեր 285
 Բլթենց գյուղ 327-328, 333
 Բլրաշեն, տե՛ս Ալիուրլիս գյուղ
 Բմբանց սար 293
 Բշերիկի դաշտ 282
 Բշրագետ, տե՛ս Շատախի գետ
 Բոզիգեղ, տե՛ս Համգաշիման գյուղ
 Բոլս գյուղ 332

Բոկլան գյուղ 359-360
 Բոհտան (Բոտանսու) գետ 279, 282
 Բողազքյասան գյուղ 61
 Բողազ ճանապարհ 36-37
 Բողազ սար 37, 46
 Բոշագային գյուղ 60-61
 Բոտանքենդ, գյուղ Բուլանըխ գավառում 361
 Բոտան 188
 Բոսֆոր 222
 Բոտան, Բոտան դուր, Բոտանի կողմեր, Ջգեր Բոտան 279-280, 282, 285, 287, 289, 307-308, 313, 338
 Բորմ, գյուղախումբ 279, 342
 Բորմ Մեծ գյուղ 342
 Բոցիկ սար 33-34
 Բոնաշեն (Պոնաշեն), բերդ, գյուղ, դաշտ Բիթլիս գավառում 281, 311, 356
 Բվիկ գյուղ 237
 Բրադափին կամուրջ 332
 Բրուսա 335
 Բրեքաթմանի, Բաթմանի կամուրջ 282-283
 Բուքանիայի շրջան 64
 Բուլանըխ (Բլանուխ) գավառ 352, 361
 Բուլղարիա 176
 Բուլլա վտակ 352
 Բուրսա 209, 254

Գ

Գոլովինո (Գալավինո) գյուղ 50
 Գալիլիա 176
 Գալիա Իսակ (Իսակի) բերդ 279
 Գանըտեղե՛ ձոր 191
 Գանձարուր 35
 Գանձակ գյուղ 334
 Գանձակի շրջան 342
 Գառնեղա քեն 284
 Գառնի, գյուղ Կոտայքի մարզում 230, 232-234
 Գառնի (Գառնիկ, Գառնեն, այժմ՝ Աղաշ-լըք), գյուղ Մուշ գավառում 354, 359-360
 Գավանագետ 282
 Գավաշ, Գյավաշ, տե՛ս Ռշտունիք գավառ
 Գավատ գյուղ 322, 340
 Գավատ, քաղաք 350
 Գավուր բողան (Կեավուր Բողան), փողոց Կարին քաղաքում 32
 Գատըր գյուղ 188, 220
 Գեդիկսաթլմիշ (Գետիկսաթլմաշ, Գյադիկսաթլմիշ) գյուղ 60, 237, 247
 Գեղածոր, տե՛ս Գյոզաղարա գյուղ
 Գեղանա լեռներ 9
 Գեղարքունիքի մարզ 50, 350
 Գեղվա ձոր 360
 Գենջ քաղաքատեղի 353
 Գեջալու գյուղ 361
 Գետափի գյուղ 183, 242
 Գերմանիա 88, 90, 324-325
 Գըզլըլըմազ, տե՛ս Ալիս գետ
 Գըզլըլըմազի կամուրջ 211
 Գըրգլե՛օզ կամուրջ 193
 Գլխանթափ գյուղ 49
 Գիմնագիայի փողոց, Ալեքսանդրապոլ քաղաքում 51
 Գյաղուկի ձոր 163

Գյալի գրքսավայր, Վարագավանքում 173, 176
 Գյոզաղարա գյուղ 51
 Գյուղյուգյու, տե՛ս Առեն գյուղ
 Գյուլի գլուխ, վայր 101
 Գյուլու, տե՛ս Գուլ գյուղ
 Գյուլքիլիսա, տե՛ս Կապուտան գյուղ
 Գյորխանա գյուղ 237
 Գյուլանթափ գյուղ 43
 Գյուլեշեր, տե՛ս Խնուկ գյուղ
 Գյումրի, տե՛ս Ալեքսանդրապոլ
 Գյումուշյորեն, Գյումուշյորեն, տե՛ս Ուզ գյուղ
 Գյուվենջե, տե՛ս Չկանի գյուղ
 Գոզաղար, Բիթլիսի մահանգ 344, 358
 Գոզալտարի սար 344
 Գոհարդե՛ժ ամառանոց, սար 284
 Գոհարքեր դաշտավայր 303
 Գոմանց գյուղ 299, 309, 311, 319
 Գոմս գյուղ 322, 359
 Գոմաշար (Քյոհնաշեհիլը, Քյոհնաշահար), գյուղ Մալմաստ գավառում 350
 Գոմեկի գավառամաս 353
 Գոռք գետ 27
 Գոսքերի ձոր, սեր 315-316
 Գոտիա Կապան 335
 Գորանդաշտ 349
 Գորանց դաշտ 327
 Գորիս 109, 236, 362
 Գործոթ (այժմ՝ Ուլուշար), գյուղ Բերկրի գավառում 178, 349, 350
 Գորտրե՛ժ 287
 Գոքշա 289
 Գոփեր, Գոփերի սեր անտառ, Գոփեր կանչ 284, 286, 305-306, 313-314, 316
 Գոֆրա 358
 Գնունի փողոց, Երևան քաղաքում 25
 Գրգուռ (Քոքոռ) սար 281, 344, 354-356, 358
 Գրետր բերդ 303
 Գրիգոր Նարեկացու գերեզման, Նարեկ գյուղում 328
 Գրիմանկոլի սեր 316
 Գուբերնատորսկի փողոց 118, 123
 Գուզանց, գյուղ Հայոց Չոր գավառում 345
 Գուլ, Կյուլիվ, Գյուլու գյուղ 336
 Գունուտա բերդ 300
 Գունդե Հարոմա, Հարոմ բեկի գյուղ 287
 Գոսանագյուղ, տե՛ս Գավիլի գյուղ
 Գոսմենց, Կյուսմենց (այժմ՝ Կասըմ-օղլու), գյուղ Թիմար գավառում 350
 Գուրուշայ գետ 191
 Գուլքերի անտառ 303
 Գևորգյան ազգային վարժարան, Բուրսա քաղաքում 209
 Գևորգյան ճեմարան, Էջմիածնում 83, 94-96, 98-100, 104, 168

Դ

Դահար գյուղ 43-45
 Դահարի լեռնանցք 43
 Դադստան 70, 304
 Դամասկոս 76, 79-80, 284
 Դանագիրմազ, տե՛ս Տանագիրմազ գյուղ
 Դանկոլ գյուղ 237
 Դաշտ թաղամաս 286
 Դաշտավան, տե՛ս Շոռլու գյուղ

Դաշտանի թունթ 316
 Դաշտի բերդ 301
 Դաշտի թաղ, Մոկս քաղաքում 281
 Դաշտի հանք 311
 Դաշտի ձոր գյուղ 287
 Դաշտոկ գյուղ 279, 298, 342
 Դաշտոկի կամուրջ 279, 284, 286, 341-343
 Դավաթյունի լեռնաշղթա, տե՛ս Ուղտի պարանոց լեռնաշղթա
 Դավիթբեկ գյուղ 177
 Դավիթի մատուռ 301
 Դատիկ (Տատիկ) գավառ 319
 Դատվան 298, 344, 346, 354
 Դարանաղ 353
 Դարդանեղ 361
 Դարենց գյուղ 337
 Դեթրոյք քաղաք 220
 Դելիքաթա գյուղ 35-36, 44-46
 Դեն (Տեն) գյուղ 279, 343
 Դեղին ջուր, ձորակ 286-287, 310-311, 313
 Դեղրան սար 311
 Դեղուտ (Թեղուտ, այժմ՝ Բաղթոմ), գյուղ Բուլանըխ գավառում 304, 352
 Դեմուրչի Մեծ, տե՛ս Շոռլու գյուղ
 Դերակերի վանք 282
 Դերիկի ձոր 351
 Դերխումար սար 300
 Դերխումար վանք, Ս. Մահակ վանք 300
 Դերջան, տե՛ս Մամախաթուն գավառ
 Դերսիմ 281, 360
 Դիարբեքիր 166, 257, 282, 284, 289, 308, 320, 355
 Դիլիման 325
 Դիլիջան քաղաք 30, 49-50, 159
 Դիտակ գյուղ 7, 27-28, 230, 297
 Դիլաթլար (այժմ՝ Կանոնուտ) գյուղ 30, 49
 Դիսոթ Դաեր բարձունք 280, 285
 Դոլաթաշ (Տալաթաշ, Տոլադաթաշ), գյուղ Մանագլեքտ գավառում 352
 Դոխան 358
 Դոդս գյուղ 21
 Դոմինիկեանց վանք 303
 Դոն 33
 Դոշղայա սար 60
 Դորա երկրամաս, տե՛ս Տնորիք
 Դորա սար 280
 Դորբանտլի գյուղ 237
 Դորբա սեր 339
 Դորշանգառի սար 282
 Դարեվանք, Արմաշում 209
 Դսմանոկի անտառ 299
 Դվին, տե՛ս Դվին Ներքին գյուղ
 Դվին Հայկական, տե՛ս Դվին Ներքին գյուղ
 Դվին Ներքին գյուղ 7, 27
 Դրախտ այգի, Վարագավանքում 170
 Դրմետ (Դրմեթ, Տրմետ, այժմ՝ Ալազըր), գյուղ Մուշ գավառում 354
 Դրքանի տեքստիլ գործարան 229

Ե

Եգիպտոս 220-221
 Եդեսիա, տե՛ս Ուրֆա
 Եդեսիայի բարձրագույն վարժարան 73
 Ելենովկա, տե՛ս Սևան քաղաք
 Եկատերինօթար 157
 Եղանլար գյուղ 243-244
 Եղեգիս 322, 338

Շղեզմամբ, տես Չանգյու գյուղ
 Շղերով (Աղերով, Հաղերով) սար 281, 303
 Շովարդ գյուղ 50
 Շմիլասն գյուղաքաղաք 256
 Շասայան որբանոց, Կ. Պոլսում 220
 Շվրուպա 280
 Շրագավորս գյուղ 102, 243
 Շրզնկա 241
 Շրնջակ 98
 Շրկաբուդային դպրոց, Ղարաքիլիսա
 քաղաքում 159
 Շրուն 319
 Շրուսաղեն 166, 209
 Շիրաս գետ, կամուրջ 31, 70, 71, 193,
 195, 214, 256
 Շրևան քաղաք 26, 30, 32, 50, 63-64, 67,
 73, 75, 83, 98, 107, 109, 113-114, 129,
 138, 140, 145-147, 156, 158, 162, 166,
 172, 177-179, 182, 184-185, 208, 221,
 236, 241-242, 245, 251, 253, 258-260,
 276-278, 309, 319, 342, 350-351, 361
 Շրևան քաղաքի Ամերիկյան 11-րդ որբա-
 նոց 253
 Շրևանի բերդ 25
 Շրևանի գավառ 83, 289, 306
 Շրևանի բենական դպրոց 83, 94
 Շրևանի 5-րդ որբանոց 7, 22
 Շրևանի մանկավարժական տեխնիկում
 7, 179
 Շրևանի նահանգ 21, 25,
 Շրևանյան դուռ, Էրեվան-կապուսի,
 Կարս քաղաքում 101

Չ
 Չախն գյուղ 237
 Չախոյի շրջան, Իրաք 348
 Չաղարս գյուղ 256
 Չանգեզուր 233
 Չանգու գետ 50
 Չառաբխասան գյուղ 53
 Չառա 208
 Չարբոս գյուղ 353
 Չարդա հանդամաս 27
 Չարեվան 352
 Չարիշատ գավառ 51, 60, 237
 Չարնջի գյուղ 148
 Չեյթուն, Չեյթուն 79, 283
 Չեյթուն քաղամաս, գերեզմանոց, Շրևան
 քաղաքում 30, 66, 73
 Չեյնալ Աղալու գյուղ 50
 Չեռնակի սար 352
 Չետկան գյուղ 45
 Չոզան 280
 Չոչի, Չոճի (այժմ` Յաղլըջա), գյուղ Կար-
 սի մարզում 51-52, 237
 Չվատան գյուղ, դաշտ 349-350
 Չրնեկ (Չեռնակ, այժմ` Քայալըք), գյուղ
 Վարդո գավառում 353
 Չևա Տմիլի, գյուղ 353

Է
 Էլեշկիրտ, տես Չետկան գյուղ
 Էլմալը Էոզ գյուղ 256
 Էլեճիք 256
 Էշակեյլազ գյուղ 44-45
 Էջմիածին 7, 12, 21, 62-63, 72, 83, 94, 97-
 98, 104, 106, 168, 232, 236, 351-352
 Էջմիածնի վանք 62

Էպիմեզեր որբանոց, Մարաշ քաղաքում
 81
 Էրզրում (Կարնո) գավառ, նահանգ 21,
 30-31, 33-35, 38-39, 72, 171, 352-353,
 355, 361
 Էրզրումի (Կարնո) դուռ 101
 Էրզրում, տես Կարին քաղաք
 Էրուհ, տես Սղերդ գավառ
 Էրքենազ գետ 78
 Էֆենդի գյուղ 30, 50

Թ
 Թագավորանիստ, տես Համզաչիման
 գյուղ
 Թագվա սար 332
 Թագվոր սուրբ Խեչ տաճար 36, 37, 39
 Թաղեու Առաքեալ վանք, Արտազ գա-
 վառում 92
 Թաղ ավան, Շատախ քաղաքում 249,
 250-251, 317, 331-333, 347-349
 Թամբ դավան սար 302
 Թամբի սեր 315, 316
 Թավրեզի դարե (դուռ), Վան քաղաքում
 349
 Թարապուղ, տես Տրիպոլի
 Թարգմանչազ վարժարան, Սեբաստիա
 քաղաքում 209
 Թարթիս 257
 Թարխոջա Ներքին, Վերին գյուղեր 35,
 36, 40, 41
 Թացոցի աղբյուր 315
 Թացու, գյուղ Խիզան գավառում 343
 Թացուց Ներքին 288
 Թափա (Թափաշյոյ, այժմ` Մաղլըջաք),
 գյուղ Վարդո գավառում 353
 Թբիլիսի, տես Թիֆլիս քաղաք
 Թելլապիատ 208, 217
 Թեոդոսիա 99
 Թերս Կարո 229
 Թեքելի 208
 Թեքելլի գյուղ 210
 Թիլ գյուղ 279, 354
 Թիկնիզ (Թիքնիս), գյուղ Կարսի մարզում
 61, 237
 Թիմար գավառ, շրջան 12, 27, 92, 289,
 313, 330, 333, 336-337, 349, 350
 Թիֆլիս քաղաք 30, 64, 95-96, 99, 103-104,
 106, 108, 139, 146-147, 154, 156-159,
 161-162, 177, 245, 259, 266-267, 274-
 275, 328, 360
 Թլանավառ գյուղ 279, 282
 Թոխմա, տես Մելաս գետ
 Թովուզ գյուղ 156
 Թորքափիրան 286
 Թորքավետա, Թորքավետի Սեր 303, 339
 Թովդաղ սար 54
 Թուխ գետ 344
 Թումբա արվարձան, Սալունիկում 258
 Թուրքիա 44, 53, 82, 272, 280, 282, 310,
 324-325, 327-328, 360-361
 Թուրքիայի հյուպատոսարան 188

Ժ
 Ժամտուն թաղ, Կարս քաղաքում 100-101,
 121
 Ժառանգավորաց դպրոց, Վարազավանք
 162-165, 167-168, 177-178

Ի
 Իգդիր քաղաք 72, 93, 185, 352
 Իզմիր 186
 Իլիջա գյուղ 31
 Իմանշալու, տես Միսյան գյուղ
 Իմերեթի թեմ 98
 Իյտելի գյուղ 255
 Ինջադարս գյուղ 245
 Իշխանիզում գյուղ 219
 Իշկերտ, գյուղ Գյավազ գավառում 322,
 335
 Իջևանի շրջան 52
 Իսահակյան գյուղ 180
 Իվանեան, տես Ռոտունդեան փողոց
 Իրաք 348
 Իրիցուզուր (Իրիցուզեղ, այժմ` Ալբուլ-
 գեր), Ղարաքիլիսայի գավառակում 72

Լ
 Լալոյի Մավրակ գյուղ 237, 243
 Լեդիջուր 210
 Լենինական, տես Ալեքսանդրապոլ
 Լենինգրադ 30, 64, 67, 100
 Լեռնապարի շրջան 306, 341
 Լեսկ գյուղ 92
 Լիզ, գյուղ Բուլանդիս գավառում 361
 Լճեր դաշտ 288
 Լոռիբերդ գյուղ 64
 Լորիս-Մելիքեան փողոց, Կարս քաղա-
 քում 119, 135, 138
 Լոռու մարզ 48-49, 50, 186
 Լուսակերտ, տես Արփավար
 Լուսաղբյուր, գյուղ Լոռու մարզում 186
 Լուսաղբյուր, գյուղ Շիրակի մարզում 67
 Լոռնաբերդ 223

Խ
 Խալիբյան վարժարան, Թեոդոսիայում
 99
 Խալիլչավուշ, գյուղ Խնուս գավառում
 352-353
 Խալլազ սար 281
 Խալֆալու, գյուղ Մուրմալու գավառում 98
 Խախրև գյուղ 344
 Խակև գյուղ 343
 Խամլբերդ, գյուղ Խնուս գավառում 353
 Խամուր-քյասան փողոց, Վան քաղաքում
 164, 166
 Խանազահ գյուղ 39
 Խանա Չավետր գյուղ 358
 Խանասորի դաշտ 164, 251, 309, 325, 327,
 330
 Խանգեհ գյուղ 350
 Խանդակ 318
 Խանեզե, տես Խանազահ գյուղ
 Խանի (Իշխան) գյուղ 237
 Խաչփողան պողատա, Վան քաղաքում
 164, 311, 349
 Խառակունիս գյուղ 83, 91-93, 178
 Խասե, գյուղ Խնուս գավառում 352
 Խասթուր, Խաստուր (այժմ` Յուզեկապ),
 գյուղ Ալաշկերտ գավառում 45
 Խասխեր, Խսխիր ալվան 279, 280, 307,
 315, 339, 341, 343
 Խավենց, Հավենց (այժմ` Աբմաջա), գյուղ
 Թիմար գավառում 336
 Խատուկա սուլ 259, 275
 Խարաբա Աղբաշ, տես Աղբաշ Վերին գյուղ

Խարբերդի նահանգ, քաղաք 31, 191-192, 202, 212, 307, 320
 Խարզան, Խարզին 282, 308, 327
 Խարզանա բերդ 282
 Խարականց, գյուղ Հայոց Չոր գավառում 326, 329
 Խարիբյան գյուղ 359
 Խարս (Խարց, Ղարս, Հարս, այժմ՝ Գյունեյիկ), գյուղ Մուշ գավառում 67-69, 71, 184-186, 354, 359
 Խափան հրապարակ, Կարս քաղաքում 128
 Խըզըր Էլազ (Խըզըր Էլազ, Խըզըր Էլյաս) գյուղ 39
 Խժիշկ (այժմ՝ Հակալը) գյուղ 12
 Խիզան գավառ 282, 293, 301, 314, 318-320, 338, 340, 343, 345, 358
 Խյաթ, Ախլաթի գավառ 304, 344, 358, 360
 Խյի-Ղարաթիլիսա գյուղ 61
 Խյուզենց արտ, բերդ, հանդամաս 302, 339
 Խյուզենքներ դաշտ 288
 Խնդակ վայր 315
 Խնձորուտ, գյուղ Կարկառ գավառում 343
 Խնուկուկ 315
 Խնուկ գյուղ 279
 Խնուս գավառ, քաղաք 43, 71, 289, 319, 352-353
 Խնուս գետ 352
 Խնուսի բերդ (Խնուսկալա) 352-353
 Խոթեր (Խոփեր, այժմ՝ Կարաքյուփրու), գյուղ Մուշ գավառում 353, 359
 Խոզլու (Ղոզլու, այժմ՝ Օվաքոզլու), գյուղ Խնուս գավառում 352
 Խոլիկի (Խոլեկա տան, Խոլկատան, Խոլտրան) կամուրջ 332, 340
 Խոյ 350-351, 362
 Խոչար քաղաք, բերդ, ձոր 345, 349-350
 Խոշգյաղի գյուղ 43, 49, 53
 Խոպան, Վարդիին արտ, անտառ 301
 Խոջիվանքի գերեզմանոց, Թիֆլիս քաղաքում 95
 Խոռանց (այժմ՝ Քարշլյաքա) գյուղ 9, 12-15, 20
 Խոռխոռիք 360
 Խոսրովա, գյուղ Սալմաստ գավառում 350
 Խորասան քաղաք 34-35, 38, 46, 129
 Խորզոմ գյուղ 219, 326
 Խորյան, գյուղ Մուշ գավառում 359
 Խորոմներ, հարթավայր 44
 Խորոնք (Խորեն, այժմ՝ Խարման), գյուղ Մուշ գավառում 359
 Խորզանու ձոր 349
 Խչկա գանին 315
 Խսխեղայ (Պարվար) 319
 Խվլա Գեսան, գյուղ 359
 Խրեք (Խըրպ, Խրիպ), գյուղ Մոկս գավառում 297, 349
 Խվներ (Խվներ Վերին, այժմ՝ Կողուկ-տաշ) գյուղ 359
 Խրբեկորան, գյուղ 353
 Խրտոզ գյուղ 241
 Խուլիկ, Խուլեկ գյուղ 304, 348

Ծ

Ծակքար, գյուղ Բիթլիս գավառում 354-356
 Ծաղիկենց խան 246

Ծաղկահովիտ, տե՛ս Հաջի Խալիլ գյուղ
 Ծաղկածորի որբանոց 83
 Ծաղկաքար 285
 Ծաղկունք, տե՛ս Ալլանլու գյուղ
 Ծառնու (Մարնու) գյուղ 330-332
 Ծափանց գյուղ 286, 348
 Ծիծանց, գյուղ Շատախ գավառում 250, 348
 Ծղակ գյուղ 344
 Ծովագյուղ, տե՛ս Չբելլու գյուղ
 Ծպնի գյուղ 113, 237

Կ

Կաբարս (Կափարս), գյուղ Խիզան գավառում 314, 318, 321
 Կազաչի պոստի որբանոց, Ալեքսանդրապոլ քաղաքում 245, 246
 Կազարե գետակ 282
 Կազբեկ 267
 Կազի աղբյուր 280
 Կազիգուլի 283
 Կաթնիկ աղբյուր 288, 316
 Կալինինյի շրջան 30, 64
 Կալի սեր 300, 311, 339
 Կալիուկ, Որե Կասմաղա սար 286
 Կաղազիզ (այժմ՝ Իջիմլը), գյուղ Փեսանդաշտ գավառում 329, 333-336
 Կաղզվան գավառ, քաղաք 31, 35, 38, 43, 51-52, 60, 108-110, 113, 240, 259-261, 268, 274, 276, 280
 Կամո, գյուղ Շիրակի մարզում 71
 Կամո, շրջան, քաղաք 236, 350
 Կամրջագյուղ գյուղ 31, 34, 46
 Կայոց սար 284, 315
 Կան (այժմ՝ Դաղաշ) գյուղ 31
 Կանասարկ 286
 Կանեզոզան աղբյուր 288, 303
 Կանիներան (Կայնամերան), գյուղ Փեսանդաշտ գավառում 333
 Կանի տղան գողերի աղբյուր 348
 Կանչա սար 283, 362
 Կանջկանց սեր, Բալունց գոմ 301
 Կանջո դար, սեր, սար 321, 327
 Կանտու գյուղ 322
 Կաոց սար 289, 315-317, 362
 Կաչամաղներ 284
 Կապուտ դար 321
 Կապուտան, գյուղ Կոտայքի մարզում 83
 Կապուտկող (Ընձաթխար) լեռ 306, 338
 Կապուտկողա վանք 344
 Կաջեք գյուղ 340
 Կառքորա ավան 307
 Կառի լիճ 288
 Կասմիկ (Խասմիկ, Կասմիկ, այժմ՝ Արսլանկայա), գյուղ Մանազկերտ գավառում 352
 Կարաղաշտ 280
 Կարաղաշտ գետ 280
 Կարաղերի վանք, Շատախ գավառում 347
 Կարակոպրու (Կարաքյուփրու, Ղարաքյուփրու), գյուղ Խնուս գավառում 352
 Կարանաներ դաշտավայր 279-280
 Կարաչուպան, գյուղ Խնուս գավառում 352
 Կարասու, տե՛ս Մորա Հիզան քաղաք 283
 Կարասուի (Սև ջուրի) կամուրջ 283
 Կարաքեշիչ գյուղ 13-14
 Կարին քաղաք 31-32, 34-35, 43, 46-47, 66,

106, 109, 125, 129-130, 132-133, 135, 143-147, 149, 166, 241, 307, 320, 337
 Կարկառ Ներքին, Մտորին, Վերին գավառ 301-302, 318-320, 324, 328, 330, 333-334, 338, 343
 Կարճկան գավառ 302, 306, 310, 321, 330, 338, 344-346, 358
 Կարճան գյուղ 64
 Կարմիր աղբյուր 246
 Կարմիր դար, տե՛ս Գրեստր բերդ
 Կարմիր կամուրջ, Մոկս գավառում 281, 311, 342
 Կարմիր հրապարակ, Ուստլաբայում 276
 Կարմիր սար, Սալմաստում 350
 Կարմիր վանք գյուղ 237, 239, 243
 Կարմրավոր վանք, Շուշանց գյուղում 173, 176
 Կարմրալատ, Կարմիրալատ սար 284, 287, 302, 315-317
 Կարմրվոր եկեղեցի, Բաղեշ քաղաքում 358
 Կարմունց գյուղ 344
 Կարմունց գյուղ 73-75
 Կարոն լեռնաշղթա 34, 35
 Կարսի բերդ 60
 Կարս գավառ, քաղաք 30, 43, 49, 52-55, 58, 60-61, 95-97, 100-101, 103-113, 118, 123, 126, 128, 132, 133, 135-140, 143-149, 151-153, 155-159, 161, 180, 210, 237, 239, 240-244, 254, 259-260, 265-266, 269, 288, 313, 337, 361
 Կարս գետ, Կարսագետ 100, 106, 239, 241
 Կարսի մարզ 31, 35, 38, 43, 51, 60, 61, 109, 110, 113, 145, 179, 180, 184, 236, 237, 247, 325
 Կարսի ռեալական դպրոց 159
 Կարսի օրիորդաց գիմնազիա 159
 Կարսի 6-րդ որբանոց 119
 Կարսի 7-րդ որբանոց 119
 Կեղրոնական վարժարան, Կ. Պոլսում 209-210, 220
 Կեղե ագո քար 313
 Կենդանանց գյուղ 326
 Կենդրանց գյուղ 322
 Կեռլյուքի 256
 Կեչուտ սար 299
 Կեսարիա 33
 Կերչ 183
 Կեցան գավառակ 305-306, 310, 319-322
 Կզլահանտ գյուղ 353
 Կզլաղաջ, գյուղ Մուշ գավառում 359-360
 Կիթանց (Կայթանց, Գայթանց) գյուղ 297
 Կիլիկիա 10, 19, 21, 219, 221-222
 Կիսլօփոթակ 112
 Կիրովական տե՛ս Վանածոր քաղաք
 Կծվակ գյուղ 344
 Կյուլիչեր 257
 Կյուլլուպեկ գյուղ 256
 Կյունյուզիպազար գյուղաքաղաք 255
 Կոթի գյուղ 52, 64
 Կոթոզակ Չավեներան Շեկիարդ, հանդամաս 286
 Կոթոզակ սար, աղբյուր 286-287, 313, 317-318
 Կոնս գյուղ 322
 Կոնդ քաղաքում 26
 Կոշ գյուղ 61-62
 Կոշխոնց կամուրջ 311

Կոչոխա (Կոչոխա, Կճոխ) գյուղ 292-293, 297
 Կոռոն (Կորոն) սար 289, 302, 316
 Կոռիջ, գյուղ Շատախ գավառում 347
 Կոռիվանք գյուղ 347, 349
 Կովկաս 361
 Կոտայքի մարզ 83, 230, 280
 Կոտենց Ներքին, Վերին, գյուղեր Սպարկերտ գավառակում 343
 Կոտոլի, Կոտոլա սար, 325, 337-338
 Կոտրած եկեղեցի 106
 Կոտրած կամուրջ 37, 240, 265, 268-269
 Կոճերեր (Կոճեր, Կոճրեն, այժմ՝ Էրիքբաղ), գյուղ Արծկե գավառում 12-14
 Կոճգոմ (Գյումգյում, այժմ՝ Վարդո) գյուղաքաղաք 353
 Կոստանդնուպոլիս (Պոլիս) 97, 163, 166, 172, 176, 188, 208-210, 219-222, 225-226, 257-258, 280-281, 284-285, 305, 307, 315, 355, 361
 Կովկաս 92, 110, 156, 163-168, 172, 176-178, 275, 346
 Կոտոլի ձոր 351
 Կորանդաշտի գյուղեր 336
 Կորովաց աշխարհ 284-285, 307-308
 Կորովացոց լեռներ 286, 345
 Կորարեժ սար 317-318
 Կոփ (Կոբ) 361
 Կոռնկի աղբյուր 288
 Կոռնկի վանք 349
 Կվարս գյուղ 359-360
 Կրասնոդար 276
 Կրեսե 284
 Կուբան 259, 273, 276
 Կուզել (Գյուզել, Կյուզել, Դուզել) գյուղ 13-14
 Կուռուպաշ գյուղ 165-166, 325-326, 350
 Կուրավու, գյուղ Մուշ գավառում 353

Հ
 Հագոլ սար 344
 Հալեպ, Հալեպ 73, 75, 78-79, 81, 135, 208-209, 217-219, 257
 Հակոկ, Հակոկ գյուղ 294, 316, 319
 Հաղարով, Հաղերով սար 311, 329, 336-338
 Հաղին, Աղին գյուղ 280-281, 342
 Հաղինա բերդ 281
 Հանրն քաղաք, որբանոց 221-223, 226
 Հանկանց, գյուղ Շատախ գավառում 330-332
 Համամու, տե՛ս Սալխակ
 Համամուլի լեռնանցք 49
 Համգաչինան գյուղ 30, 48, 50
 Համգաքարակ գյուղ 237, 239-240, 242-243
 Համիթ 282, 289, 307
 Հայաստան 29-30, 48, 55, 58-59, 62, 73, 75, 92, 109-110, 162, 188, 230, 236, 247, 251, 253, 255, 258, 274, 279, 283, 351, 358
 Հայկազյան կենտրոնական վարժարան, Վան քաղաքում 165
 Հայկածոր գյուղ 183
 Հայմանա քաղաք 255
 Հայոց ազգային հոգևոր դպրոց, Ալեքսանդրապոլ քաղաքում 98
 Հայոց Ձոր գավառ 172, 219, 289-290, 313,

325-326, 329-331, 333, 337, 345 , 351
 Հանգեղի, Անգո կամուրջ, գետ, Հայոց Ձոր գավառում 345
 Հանկույսների նախակրթարան, Վան քաղաքում 165
 Հապեշխան վայր 257
 Հապրանց վանք 343, 344
 Հառեջա սար 340
 Հաջիմանուկ (Աջմանուկ, Հացմանուկ, այժմ՝ Գյուզելբեկե), գյուղ Մուշ գավառում 354
 Հաջինագար, տե՛ս Կամո, գյուղ Շիրակի մարզում
 Հաջի Խալիլ գյուղ 51
 Հաջիվալի գյուղ 237
 Հառիմջի գալի, ձորակ 281
 Հառնակոլ սար 280, 308
 Հառնին գյուղ 329
 Հասան բեյի որբանոց, Դամասկոս քաղաքում 80
 Հասանդակ գյուղաքաղաք 30-31, 33, 34, 38, 46-47, 142
 Հասանքեանդ գյուղ 216
 Հասան Չելեալի գյուղ, ճանապարհային կայան 191, 212, 256
 Հասան պատրիկ 256
 Հավարիս գյուղ 297
 Հավգակ 306
 Հավաքար 245
 Հավլանց գյուղ 298, 342
 Հավդական աղբյուր, լիճ 288
 Հավրան 80
 Հարագինա սեր 339
 Հարաք գյուղ 279
 Հարարոց մեյդան, Վան քաղաքում 349
 Հարբենց, Արբենց, գյուղ Խիզան գավառում 338
 Հարբերտ գյուղ, ձոր 333, 334
 Հարեն սար 286
 Հարինա գետ, ջուր 287, 313
 Հարմշատ Հարմիշատ, Արմշատ) գյուղ 286-287, 300, 318, 333, 340, 342, 347-349
 Հարնագետ 286
 Հարոն գյուղ 256
 Հարտամերտ գյուղ 322
 Հացի գյուղ 339
 Հացիկ (Հացեկաց, Խաց, այժմ՝ Գյուվեն), գյուղ Մուշ գավառում 354, 359-360
 Հանկանց, գյուղ Շատախ գավառում 330
 Հելինա ճուղկան 313
 Հեշատ 343
 Հեքիմխան 256
 Հեքիմխան գյուղ 192
 Հեքիմխան ճանապարհային կայան 192
 Հիլլի գյուղ 336
 Հիրիճ, Հիրջ, գյուղ Հայոց Ձոր գավառում 329-330, 349
 Հնաբերդ, տե՛ս Դոխդագիրման գյուղ
 Հնար սար 34
 Հնձակ գյուղ 306, 334
 Հոբվերան գյուղ 237, 240
 Հոկտեմբեր գյուղ 186
 Հոկտեմբերյան քաղաք 30, 64, 73, 75, 236
 Հողթար (Հողդար) բլուր 190
 Հոնս 80
 Հողմուտ գյուղ 176
 Հոռոմ գյուղ 61

Հովիտ, տե՛ս Քյափանակներ Ներքին (Փոքր) գյուղ
 Հովիտ, տե՛ս Տանագիրմազ գյուղ
 Հովվի կամուրջ 31
 Հորգով 232
 Հորդանանի կայարան 79
 Հորիս գյուղ 286
 Հորոք, Հարոք, գյուղ Սպարկերտ գավառակում 343
 Հրագդան 236
 Հունաստան 186, 220, 257
 Հուսփոռան 303

Չ
 Չակուր գյուղ 302
 Չերժինսկու անվան դպրոց 259
 Չիաքար 339
 Չիաթոնուկ բարձունք 176
 Չկոր (Շկոր), գյուղ Կարկառ գավառում 324, 328
 Չորակապ, տե՛ս Բողազքյասան գյուղ

Ղ
 Ղարան շուկա, Կարս քաղաքում 135
 Ղազարապատ, տե՛ս Իսահակյան գյուղ
 Ղազի (այժմ՝ Ասլանդազը), գյուղ Խամուր գավառում 45
 Ղազիպեյ 257
 Ղազիր 82
 Ղամարլու, տե՛ս Արտաշատ
 Ղամարլուի, տե՛ս Արտաշատի շրջան
 Ղամարլու Վերին, տե՛ս Արտաշատ
 Ղայնակխան վայր 257
 Ղանթար 277
 Ղանդալ (Գանկար), գավառակ Սեբաստիա գավառում 190, 212
 Ղանդալ գյուղ 256
 Ղասմալի, տե՛ս Գետափի գյուղ
 Ղասպլներ տե՛ս Քյոսաղերե թաղ
 Ղարաքաղ 247
 Ղարաքաղար Ներքին, տե՛ս Ուրցածոր գյուղ
 Ղարաղաղ ամրոց 113, 120
 Ղարաղաջներ հանդամաս 27
 Ղարաղուլ լեռ 36-37
 Ղարաղուրտ քաղաքատիպ ավան 43
 Ղարայոլ սար 239
 Ղարայվաղ գյուղ 39
 Ղարաշորան, գյուղ Խնուս գավառում 43
 Ղարապար 256
 Ղարատորան քաղաքատիպ ավան 44, 56, 58-59
 Ղարաքիլիսա գավառակ, Էրզրումի նահանգում 72
 Ղարաքիլիսա, գավառակի կենտրոն, Էրզրումի նահանգում 72
 Ղարաքիլիսա գյուղ, Փամբակ 108
 Ղարաքիլիսա, Մեծ Ղարաքիլիսա, տե՛ս Վանածոր քաղաք
 Ղարաքիլիսա Նայենու, տե՛ս Ղարաքիլիսա քաղաք
 Ղարաքիլիսայի կամուրջ, Էրզրումի նահանգում 72
 Ղարխուն, Վերին Ղարխուն, տե՛ս Ջրառատ, գյուղ Արմավիրի մարզում
 Ղարղաքազարի սար 34, 35
 Ղարղուլը գյուղ 256
 Ղարս, տե՛ս Կարս
 Ղարսաչայի կամուրջ 246

Ղափլի գյուղ 243
 Ղզլահմեղ (Կզլահմաստ), գյուղ Խնուս գավառում 352-353
 Ղզըլդը գյուղ 97
 Ղզթամուր գյուղ 7, 21- 24
 Ղզթամուրի գերեզմանատուն 22
 Ղզլախախախ գյուղ 61, 110, 156, 237, 239, 241
 Ղըսըլն կամուրջ 191
 Ղշլաղ (1946-ից՝ Ժղանով, այժմ՝ Վանաձոր քաղաքի թաղամասերից) գյուղ 30, 49, 349
 Ղշլաղ գյուղ 361
 Ղոթուր գյուղ 339
 Ղոշավանք 105
 Ղոշավանք, գյուղ Կարսի մարզում 184
 Ղոշավանք տե՛ս Հայկաձոր գյուղ
 Ղոխ այգի 99
 Ղոխդագիրման գյուղ 51
 Ղուզուլա 256
 Ղուրթիկ (Կուրթիկ, Բրուտի գյուղ) 356-359
 Ղուկասյան, տե՛ս Ղզըլդը գյուղ

Ճ

Ճալա (այժմ՝ Էսենքենդ), գյուղ Կարսի մարզում 179-180, 183, 237
 Ճապաղջուր 360
 Ճելտիպ 82
 Ճիհուն գետ 78
 Ճիլլապ գյուղ 216, 217
 Ճիկանի, տե՛ս Չիկանի գյուղ
 Ճռասոն գյուղ 34
 Ճվկատան կամուրջ 332

Մ

Մազե կամուրջ 114
 Մագրա գյուղ 156, 237
 Մագրայի ճանապարհ 139
 Մագրիք սար 305
 Մալաթիա գավառ, քաղաք 189-194, 202, 211-212, 256
 Մալաթիայի բերդ 281
 Մալիկ գյուղ 342
 Մալմուս դուռ 296
 Մախաչկալա 275
 Մակեդոնիա 258
 Մակու 351
 Մահմուդջուղ, Մայմուջու գյուղ, տե՛ս Պենգաշեն ավան
 Մաղավուզ գյուղ 111
 Մամախարուն գավառ 31
 Մամուտանք, Մամուրտանք գավառ 324, 338, 340, 343
 Մայրագոմ լեռ 210
 Մայր եկեղեցի, Անիում 105
 Մանազկերտ (Մանծկերտ) 289, 299, 304, 351-352, 361
 Մանծկերտի բերդ 352
 Մառնիկ գյուղ 69-70
 Մասիս սար 29, 72, 174, 351
 Մասիսի շրջան 230, 234
 Մասկարա, գյուղ Մուշ գավառում 143
 Մավրակ գյուղ 237
 Մատրոս սար 307
 Մարալիկ, տե՛ս Մուլլագոյշկա գյուղ
 Մարամոտ (Մերասուտ), Մայրամոտ, Մերամոտի բերդ 300-301, 303, 315, 339

Մարաշ 76, 78, 80-81, 219
 Մարաջ երկիր 285
 Մարգահովիտ, տե՛ս Համգաշիման գյուղ
 Մարգարա գյուղ 64, 147
 Մարմեն գետ 350
 Մարմոս գյուղ 352
 Մարշմուն 280
 Մարսելիա 220
 Մարուխին 276
 Մեզգե գիւղ 80
 Մեղրագետ 70
 Մեղրու շրջան, քաղաք 30, 64
 Մերդենիկ, Մերդենեկ 53, 56, 57, 109, 111, 128, 241
 Մերճեյին ըրմա, առու (Պարատա) 81
 Մելաս գետ 193
 Մեղրագետ 354, 359
 Մերկախալե 352
 Մգրիք 314
 Մէտնիար լեռ 332
 Մժնկերա 30, 53, 59, 63
 Միլան 100
 «Միլիսար» Օսման աղա խան 257
 Միջագյուղ 254
 Միջերկրական ծով 173
 Մյասիքմո 347, 348
 Մյատգան 348
 Մյաշյան գյուղ 63, 346
 Մղարճ 196
 Մշկոմեր վայր 100
 Մշո Սր. Առաքելոց վանք 357, 360
 Մուլլագոյշկա գյուղ 61
 Մուլլա Մուլեյման, գյուղ Ալաշկերտ գավառում 45
 Մոխրաբերդ, գյուղ Ռշտունիք գավառում 328, 335
 Մոխր, գյուղ Բիթլիս գավառում 354, 359
 Մոկաց գետ (Մոկացջուր) 279, 281, 286-287, 292-293, 303, 313, 339
 Մոկաց սարեր 281, 318
 Մոկս (Մոկաց) գավառ, քաղաք 10, 14, 28, 232, 278-283, 285-287, 290-294, 296-297, 299-302, 304-307, 309-313, 315, 317-320, 328-329, 336-340, 342-345, 348-350, 358
 Մոսկվա (Մոսկով) 138, 247, 360
 Մոսուլ 279, 284, 289, 307-308, 320, 329, 343
 Մոյաղ, Միոյաք քաղաք 307
 Մյոռս գյուղ 322
 Մուշ գավառ, քաղաք 67, 68, 71, 143, 184-185, 276, 289, 304, 319, 353-354, 357-360
 Մուշեղաշեն (Մուշաղշեն, Մուշ-Խշեն) գյուղ 184
 Մուսայելյան, տե՛ս Քյափանակներ Վերին (Մեծ) գյուղ
 Մուրաղ (Մուրատ) գետ, տե՛ս Արածանի Մուրաղյան վարժարան, Փարիզում 99
 Մուրց գետ 31
 Մուֆադին սար 282
 Մոսկե շրջան 304

Յ

Յաբաղ, տե՛ս Փոքր Ամյուկ գյուղ
 Յազըլ թաղ, Հաճըն քաղաքում 221-222
 Յաղան (Աղան, Եղան, Ճաղան) գյուղ 31
 Յարրմադաքյույու, տե՛ս Կարաքեշիչ գյուղ

Յըլդըզխան 256
 Յոզկատ քաղաք 255-256
 Յոթվերքի եկեղեցի 273
 Յոնջալու, գյուղ Բագրևանդի Ղարաքիլիսա գավառում 45
 Յուզվերան (Յուզյորեն) գյուղ 33-34

Ե

Եազիկ չարսրի (Եազիկ-Չարսու) փողոց 31
 Եախիջևանի գավառ 51, 98, 232, 237
 Եարեկ գյուղ 301, 305-306, 328, 334-335
 Եաֆթուլու կայարան 245
 Եեմրուք (Եամրուք) սար 344, 354-355, 358
 Եերեսեյան ազգային վարժարան, տե՛ս Սիվրի-Հիսարի դպրոց
 Եերեսեյան դպրոց, Թիֆլիս քաղաքում 162, 168, 177
 Եերեսեյան վարժարան, Մերաստիա քաղաքում 189
 Եիզավան, տե՛ս Տանագիրմազ գյուղ
 Եինվե գյուղ 80
 Եյու Յորք 208
 Եորագավիթ 63
 Եորաշեն, տե՛ս Էֆենդի գյուղ
 Եորաշեն գյուղ 64
 Եորաշենի եկեղեցի 329
 Եորդուզ, Եորտուզի գավառ 287, 314, 317, 330-331, 333, 338, 340-341
 Եորգեղ գյուղ 334, 335
 Եորգյուղի սար 350
 Եորովանց գյուղ 281
 Եոր-շէն թաղ, Ոստան քաղաքում 327
 Եուբարաշենի գերեզմանոց 67, 184, 236
 Եուլիսի գավառ, քաղաք, տե՛ս Շաքի

Ը

Ըարաղին, գյուղ Խնուս գավառում 352
 Ըականց սալ գյուղամեջ 298, 301
 Ըակմերի մագրա, մգրե, Ըակամէր, գյուղ Մոկս գավառում 283, 286, 302
 Ըամբ 71
 Ըամիրան (Ըահմերան), գյուղ Բիթլիս գավառում 354
 Ըանգառ սարեր 279, 320
 Ըապին-Գարահիսար 13
 Ըատա Բոքտան, տե՛ս Տիգրիս գետ
 Ըատախ գավառ, քաղաք 84, 232, 249-251, 281, 285-286, 290, 314, 317-318, 325, 329-340, 342, 346-349
 Ըատախ գետ 279, 282, 284-287, 298, 303, 340, 344
 Ըարամփա վայր 101
 Ըարաֆե (Ըարավի) բերդ 284, 287, 300, 313, 318
 Ըարանխ 308
 Ըաքի գավառ, քաղաք 63
 Ըեխլան (Ըեխալան, այժմ՝ Էղիրմեշ), գյուղ Մուշ գավառում 353
 Ըեխոնց գոմ 315
 Ըեյիս-Յուսուֆ (Շըխուսուֆ, Շուխուսուֆ, այժմ՝ Բոյունջուկ) 68
 Ըինձոր (Ըէնիձոր) 319, 343
 Ըիտան գյուղ, դաշտ, Փենանդաշտ գավառում 329, 333-335, 338, 346
 Ըիրակավան, տե՛ս Երագգավորս գյուղ
 Ըիրակի թե՛ն 95, 111

Շիրակի մարզ 49, 61, 71, 97, 102, 109, 180-181, 183, 243
 Շիրվան 358
 Շնչմենեկ (Շմանեկ) սրբատեղի, Ոգմ գյուղում 299
 Շողու գյուղ 30, 62, 63
 Շվանիձոր (Շիրվանիձոր) գյուղ 64
 Շվաքար 350
 Շրմախա բերդ 255
 Շումյան 82
 Շունքուռակ (Շունքուրակ, Շնքուռակ), գյուղ Մերաստիա գավառում 211
 Շուշանց գյուղ 92, 173, 176
 Շուշի 104

Ո

Ոգմ, Ոգին գյուղ 14, 230-232, 278-281, 283-286, 287-289, 291-294, 296-297, 299-306, 308-309, 312-314, 316, 318-319, 325, 329-333, 337-343, 354, 362
 Ողական ամրոց 353
 Ոսկեբակ 88
 Ոսկեհատ, տե՛ս Փաթրինջ գյուղ
 Ոսկեջուր գետ 27
 Ոսկեվազ, տե՛ս Ղզրամուր գյուղ
 Ոստան քաղաք, շրջան, գավառ 298, 313, 319, 321-322, 326-328, 336-337, 345-347, 354
 Որենագու սար 281, 313
 Որիսի սար, ձոր 331-332

Չ

Չաղար սուրբ Նշանա վանք 345
 Չամբարդիս սար 54-59
 Չայ կայարան 254
 Չամգու գյուղ 35
 Չավուրմե (Չեվիրմե, այժմ` Օվաչեվիրմե), գյուղ Խնուս գավառում 352-353
 Չափարենց մարզագետին 36
 Չբխլու գյուղ 50
 Չեմբերքենդի գերեզմանոց, Բաքվում 163
 Չերնովից քաղաք 67
 Չիբուխլու, տե՛ս Չբխլու գյուղ
 Չիմանքյանը, տե՛ս Ուրցածոր գյուղ
 Չիրիկ գյուղ 49
 Չիֆթիկ 210
 Չիֆթիկ գյուղ 35-36, 256
 Չղբր գավառ 51
 Չլուտ սար 280
 Չխուրախարս, տե՛ս Խարս գյուղ
 Չոբանքյարա (Մեծ Չոբանքյարա) 62
 Չոլախլու գյուղ 43, 48-49, 53
 Չոխուր մահիլա թաղ, Կարս քաղաքում 121
 Չոֆիկ աղբյուր, Վարազավանքում 167
 Չոչոան գետ 36
 Չկալովկա, տե՛ս Ջեյմալ Աղալու գյուղ
 Չկանի գյուղ 45
 Չուխի գատուկ 350
 Չուխուր թաղ, Կարս քաղաքում 97, 100-101, 139

Պ

Պալազուգագ թաղ 210
 Պակե քաղաք 255
 Պաղչեջիկ, տե՛ս Ֆրրնըլար գյուղական
 Պատնոց 352
 Պարտիզակ 254

Պարսկաստան (Իրան) 31, 76, 162-165, 178, 251, 349, 351, 362
 Պելու գյուղ 318
 Պեմգաշեն ավան 181-182
 Պետերբուրգ, տե՛ս Լենինգրադ
 Պետերբուրգի կայսերական համալսարան 100
 Պերերաշ լեռ 330
 Պերլին-Պաղտատ երկաթուղագիծ 222
 Պոլիգոնի զորամուցներ 244
 Պոլիգոնի կարուճկի արհեստանոց 247
 Պոլմարադ Շրմանց Ջամիր 287
 Պոլոմ սար 300
 Պողանց գյուղ 163
 Պոյալու գյուղ 255
 Պորու գյուղ 257
 Պոտնոցի սեր, երկաթի հանք 301
 Պրաքրաժինկա 276
 Պրասկոնդ սար 36
 Պուլան 256
 Պոլիցէյսկի փողոց 118, 129, 135

Ջ

Ջալալօղլի լեռնանցք 49
 Ջալալօղլի, տե՛ս Ստեփանավան քաղաք
 Ջանիկ (այժմ` Գեղեկբուլակ) գավառանիստ գյուղ, ավան, Թիմար գավառում 12, 28, 336, 349-350
 Ջաջուռի թունել 271
 Ջաջուռ Իրիցու, տե՛ս Տերտերի գյուղ
 Ջարապլու քաղաք 257
 Ջզեր (Ջեզիր, Ջիզրե) քաղաք 279, 282, 284, 287, 289, 308
 Ջեմալ փաշայի որբանոց, Ադանա 225-227
 Ջեռասուն, տե՛ս Ճռասուն գյուղ
 Ջրահովիտ գյուղ 230
 Ջրառատ, գյուղ Արմավիրի մարզում 67, 72
 Ջրասուն, տե՛ս Ճռասուն գյուղ
 Ջրիկ (Ջրեց, այժմ` Բաղլար), գյուղ Մուշ գավառում 353, 359
 Ջրիոր (Ջրխոր, այժմ` Բենեկլը), գյուղ Բիթլիս գավառում 354
 Ջուլամերիկ 285, 286
 Ջուլֆա 350, 362

Ռ

Ռահ գետ, տե՛ս Կարսագետ
 Ռահա քաղաք 217
 Ռահվա (Ռավո) դաշտ 354-355
 Ռայաք 78-79, 81
 Ռասշևոտկա գյուղ 259, 267-268, 274-275
 Ռաֆայելյան վարժարան, Վենետիկ քաղաքում 99
 Ռշտունիք (Գյալաշ) գավառ 290, 298, 302, 305-306, 311-313, 318, 322, 325-326, 328-330, 332-338, 345
 Ռոժատո գետ 288
 Ռոմանովո, տե՛ս Աղջաղալա գյուղ
 Ռոտունդեան փողոց 159
 Ռումինիա 67-68
 Ռուսաստան 55, 93, 138, 147, 158, 162, 164, 227, 259, 273, 277, 304, 309, 318, 324-325, 327, 338
 Ռուսաստան 53, 362
 Ռուսթավելի պողոտա, Թիֆլիս քաղաքում 64

Ռևանդուզ 284

Ս

Սաբլահ 284
 Սագ գյուղ 340
 Սալախանե գյուղ 178
 Սալմաստ (Սալամաստ) 280, 309, 328, 333, 337, 349-351, 362
 Սալոնիկ 186, 253, 258
 Սալոր գյուղ 353
 Սալբոր գետ 39
 Սալբոր գյուղ 35, 39, 44
 Սախտա (Սախտու, Սաքուտ) գետ 287
 Սահականուշյան օրիորդաց դպրոց, Երևան քաղաքում 98
 Սամաստ 257
 Սանասարյան վարժարան, Կարին քաղաքում 31, 43, 47, 166, 211
 Սանդխայան վարժարան 166
 Սապունիսանի որբանոց, Հալեպ քաղաքում 219
 Սասուն 10, 33, 40, 62, 283, 305, 354, 358, 361
 Սարայ գավառ 92, 330, 337-338, 349-351
 Սարբարի սար 331
 Սարգ սար 334
 Սարդարապատ 94, 289
 Սարիլամիշ (Սարիկամիշ) գավառ, քաղաք 30, 43, 48-49, 51-55, 57-59, 62-63, 106, 109-111, 128-130, 133, 136, 144, 146-147, 152, 237, 260, 328
 Սարիջ ամբար 300
 Սարկեթ գյուղ 347
 Սարիալի աղոնց հանք 280
 Սարչաբեկ գյուղ 64
 Սաքա Մերի 349
 Սբ. Աստվածածին, Ալեքսանդրապոլ 96
 Սբ. Աստվածածին եկեղեցի, Խարս գյուղում 186
 Սբ. Աստվածածին եկեղեցի, Կարս քաղաքում 95, 106
 Սբ. Ատոմ գերեզման, մատուռ, սրբատեղի, Ոգմ գյուղում 299-301
 Սբ. Գայանե վանք 98
 Սբ. Գրիգոր եկեղեցի, Ճալա գյուղում 183
 Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Կարս քաղաքում 111, 118, 126, 157
 Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, Բաղդադում 329
 Սբ. Գրիգոր Նարեկացու (Նարեկա, Նարեկացու) վանք, սրբավայր Նարեկ գյուղում 300, 301, 306
 Սբ. Գրիգոր վանք 176
 Սբ. Գևորգի գերեզման, սրբատեղ, Ոգմ գյուղում 299-300
 Սբ. Գևորգ, Էջմիածին 97
 Սբ. Գևորգ մատուռ, Տիգրիս գետի ձախափին 348
 Սբ. Գևորգ, Սարի Ս. Գեորգ, Պուտկի Ս. Գեորգ, Փոսկու Ս. Գևորգ վանք 301, 303
 Սբ. Դանիել գետ 352
 Սբ. Եղիշեի գերեզման, մատուռ, սրբատեղի, Ոգմ գյուղում 299-301
 Սբ. Էջմիածին 110-111, 157
 Սբ. Էջմիածնի Միհոդ 98
 Սբ. Թարգմանչաց դպրոց, Արարք գյուղում 168

Սր. Լուսավորիչ վանք, Մալաթիա քաղաքում 256
 Սր. Լուսավորչյան գրադարան 105
 Սր. Լուսավորչյան դպրոց, Կարս քաղաքում 95, 103-105
 Սր. Խաչ վանք, Ապարանք գյուղում 343
 Սր. Կարապետ վանք, Երնջակ գավառում 98
 Սր. Կարապետ 282, 353, 359-360
 Սր. Մայր Աստվածածին վանք 237
 Սր. Մեսրոբի մատուռ 301
 Սր. Մեսրոպյան դպրոց, Արձակ քաղաքում 163
 Սր. Նշան վանք, Սեբաստիա քաղաքում 210
 Սր. Նշանի վանք, Դերա Վարաս, տե՛ս Հապրանց վանք
 Սր. Սահակի մատուռ 301
 Սր. Սարգիս եկեղեցի, Սեբաստիա քաղաքում 189
 Սր. Սարգիս, եկեղեցի, Հարաք գյուղում 279
 Սր. Ստեփանոս եկեղեցի, Դաշտոկ գյուղում 298
 Սր. Ստեփանոս եկեղեցի, Ոզն գյուղում 299, 322-323
 Սր. Փրկիչ եկեղեցի, Ալեքսանդրապոլ քաղաքում 98
 Սր. Փրկիչ եկեղեցու վիճակային դպրոց, Ալեքսանդրապոլ քաղաքում 98
 Սեբաստիա (Սիվազ, Սվազ), գավառ, քաղաք 31, 188-191, 208-212, 216, 255, 256
 Սեզիբլու (Սեզիբլու) գյուղ 39
 Սեղիքու 30, 49
 Սելիմբեի կայարան 58
 Սելիմբի ամերիկյան որբանոց 257
 Սելմիկոլ 276
 Սենյոնովկա գյուղ 50
 Սեվերեկ 284
 Սերա 227
 Սերայի գորանոց 226
 Սերայի հրապարակ 225
 «Սերբիա» հիւրանոց, Կարս քաղաքում 145
 Սերե Գոլե 354
 Սեքիլի գյուղ 255
 Սթահան (Ստհան) գյուղ 49, 53
 Սիբիր 81, 309, 319, 350
 Սիլաչի թաղամաս 26
 Սիհուն գետ 222, 225-226
 Սիմ (Շեն) թաղամաս 286
 Սիմ լեռ 283
 Սինջար 284
 Սիս 222-223
 Սիսլեմի ձոր 250
 Սիվրի-Հիսար քաղաք 253-255
 Սիվրի-Հիսարի դպրոց 254
 Սիրիա 76, 82, 257
 Սիփան սար 8-9, 12, 29, 328
 Սիֆլիթելի փողոց 81
 Սիլվանի դաշտավայր 282
 Սղգա (այժմ՝ Բոստամբլը), գյուղ Վան-Տոսպ գավառում 350
 Սղերդ գավառ, քաղաք 279, 281-282, 284, 294, 302, 304-305, 307-308, 310, 312, 336-339, 342-343, 345, 355-356, 358
 Սղոտրկոցներ դաշտ 288

Սմբիտա (Սմբատի Սմբատ Բագրատունի) ամրոց 279, 284, 299-301, 303
 Սյունիքի մարզ 177
 Սյունյաց թեմ 156
 Սնտրոս սար 343
 Սոզվանց 332
 Սոխում 161
 Սողանլու 266
 Սոսրաք (այժմ՝ Թաբանլը) գյուղ 336
 Սովետաշենի գերեզմանոց 259
 Սորա Հիզան քաղաք 283
 Սորս գյուղ 343
 Սպահան գոլ, Սպահան լիճ, Սուբհանգյոլ 350
 Սպահան լեռ 350
 Սպանդարյանի շրջան 64
 Սպարկերտ գավառակ 301, 318-319, 324, 328, 338, 340, 343, 345
 Սպիտակ 30, 49, 52
 Սվազ, տե՛ս Սեբաստիա
 Սվանվերդի, տե՛ս Լուսադրյուր գյուղ
 Սվտակ, Սվտկա, Սպիտակ վանք, Ռշտունիք գավառում 326, 327
 Սվտիկին, Սվտիկին, Սվտիկնց, Սվտկենց, գյուղ Շատախ գավառում 329-333, 347-349
 Ստամբուլ, տե՛ս Կ. Պոլիս
 Ստամբուլի բարձրագույն դպրոց 226
 «Ստամբուլ» հյուրանոց, Բեյրութ քաղաքում 257
 Ստեփանակերտ քաղաք 236
 Ստեփանակերտ քաղաքի Մ. Գորկու (այժմ՝ Վ. Փափագյանի) անվան պետական թատրոն 236
 Ստեփանավան քաղաք, շրջան 30, 49, 64
 Ստոշքես Արանի սար 308
 Սուբբանց գյուղ 237
 Սուլուխի կամուրջ 353, 359
 Սուղաբի թաղ, Կարս քաղաքում 101, 121
 Սուսուզ Օվա 193
 Սուրբ Գևորգ 238-239
 Սուրբ Գրիգորի հովիտ 174
 Սուրբ Դավիթի գերեզման, սրբավայր Ոզն գյուղում 300
 Սուրբ Խաթունի գերեզման, սրբավայր Ոզն գյուղում 300
 Սուրբ Վարդան, գյուղ Հայոց Չոր գավառում 322
 Սուրմալու գավառ 21, 98
 Սևանա լիճ 50, 186
 Սևան քաղաք 50
 Սևերեկ (Սևերակ) 257
 Սևտիկին գյուղ 325
 Սև ջուր (Սվա Ռեշ) 349, 351
 Սև սար 70, 354
 Սևքար գյուղ 64
 Սևքար, գյուղ Սպարկերտ գավառակում 343
 Սևքար լեռ 36-37

Վ
 Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին
 Վաղարշավան, տե՛ս Կամրջագյուղ
 Վան-Տոսպ գավառ 325-326, 349-350
 Վան քաղաք 10, 19-20, 31, 83-85, 88, 91-92, 162-169, 172-173, 176-178, 219, 230, 232, 249-251, 279-280, 282, 289, 291, 293-294, 298-299, 304, 306, 309-

313, 316-327, 329-330, 333, 336-352, 356, 358, 361-362
 Վանա լիճ 8-9, 12, 17, 29, 305, 326, 333, 337, 344, 355
 Վանաձոր քաղաք (Մեծ Ղարաքիլիսա) 30, 45, 49, 50, 64, 95-96, 155, 158-160, 236, 258-259, 266, 274
 Վանի բանտ 249, 250
 Վանի բերդ 166, 349
 Վանի գերմանական որբանոցներ 83-84, 87, 90, 92
 Վանի նահանգ, վիլայեթ 7-8, 12, 17, 28, 83, 91, 162, 168, 236, 278, 286, 289, 298, 304-307, 314, 319, 320, 322, 325, 343-346, 349-350
 Վանքեր սար 283, 286, 362
 Վանքի գյուղ 50
 Վառենց, գյուղ Ռշտունիք գավառում 334, 345
 Վասպուրական նահանգ 165, 167, 169, 176-178, 249, 251, 325-326, 330, 336, 338, 350
 Վարագա լեռ 92, 166-167, 172-174, 333, 337
 Վարագավանք 162, 164-170, 172-174, 176-177, 326, 330
 Վարանդ գյուղ 305-306
 Վարալին 338
 Վարգին քաղաք 279, 289
 Վարդ կամ Լիզ գետ 361
 Վարդանլու (այժմ՝ Խնձորուտ, թաղամաս Վանաձոր քաղաքում) գյուղ 50, 60
 Վարդենիս (այժմ՝ Ալթընովա), գյուղ Մուշ գավառում 68, 354, 359
 Վարդո գավառ 353
 Վեդիի շրջան 62, 233
 Վելաս գյուղ 339
 Վենետիկ 99, 104
 Վերանշենիք 212, 214, 284
 Վերին թաղ, Հաճըն 222
 Վերին Թացոց սար 284
 Վերին Դուկասյան, տե՛ս Գլըղղոջ գյուղ
 Վերին Վարագ վանք 174, 176
 Վիեննա 186
 Վիճկացուկ գյուղ 13, 14
 Վլադիկավակ (Վլադիկովկաս) 156, 259, 267
 Վրանաձորի փողոց, Ղարաքիլիսա 158
 Վրաստան 109, 275
 Վրաստանի հայոց թեմ 98, 157

Տ
 Տաթևի թեմ 98, 156
 Տաթևի վանք 156
 Տաղազպար, գյուղ Շատախ գավառում 348
 Տանկաստան 304
 Տայքի գավառ 44, 53
 Տանագիրմազ գյուղ 51
 Տաշլըխ, տե՛ս Քարիստ գյուղ
 Տաշորի գյուղ 308
 Տավանապար թաղամաս 210
 Տավոսի անտառ 70
 Տավոսյան լեռնաշղթա 70, 222, 227, 281
 Տավուշի շրջան, մարզ 50, 98, 156
 Տատիկի գավառ, դաշտ 344
 Տատկո դաշտ 343, 356, 358
 Տարեկներ դաշտ 288

Տարոնի շրջան 10, 176, 184
 Տաքու լեռ 317
 Տելիքտաղիսան գյուղատիպ վայր 256
 Տելիքտաշ կամուրջ 256
 Տեկոր (Տիկոր) 237, 239, 361
 Տերեվանք գյուղ 33
 Տերտերի գյուղ 45
 Տեր-Ջոր 215, 217
 Տիզնիս, տե՛ս Թիկնիզ գյուղ
 Տիգրանակերտ, տե՛ս Դիարբեքիր
 Տիգրիս գետ 250, 257, 279, 282, 287, 307-308, 340, 348
 Տիմես գալի, ձորակ 281
 Տիրամոր վանք, Թիմար գավառում 349
 Տմորիք, Տուրա գավառ 280, 285, 307-308
 Տնեցոց, Տիմիս, Տիմեց 284, 286-287, 313-314, 316-319, 339
 Տողի գյուղ 35-36
 Տամանուկի անտառ 310
 Տրապիզոն, Տրապիզոն, Դարապիզոն 31, 146, 278, 320
 Տրիպոլի 257
 Տուզաղի աղի հանք 256
 Տուզենց տխախ, Սերաստիա քաղաքում 210
 Տփխիս, տե՛ս Թիֆլիս
 Տօրոս սար 282

Բ

Բագգա 218

Յ

Յիսավու, գյուղ Մուշ գավառում 353
 Յրոնք, գյուղ Մուշ գավառում 360-361

Ու

Ուզունքիլիսա գյուղ 237-238, 241
 Ութխորան վանք 283
 Ուլուխանլու 233
 Ուղտի պարանոց լեռնաշղթա 31
 Ուղվանց գյուղ 321-322
 Ուղուզլի, գյուղ Կարսի մարզում 236-240, 243, 246
 Ուչքիլիսի վանք, տե՛ս Բագավանի, Բագրևանդի Սր. Հովհաննես վանք
 Ուջան գյուղ 62
 Ուռնի Յապոյի գորանոց 244
 Ուսեանա դար 284
 Ուստլարանե, Ուստլար, Ուստլարա, վայր Ու-Ղ-ում 259, 275-276
 Ուրանց (այժմ՝ Անադերե), գյուղ Կարճկան գավառում 345
 Ուրմիա 284
 Ուրմիա, Հուրմիա ծով 362
 Ուրտաք գյուղ 344
 Ուրցաձոր գյուղ 62
 Ուրֆա քաղաք 73-76, 81, 188, 196, 198, 202, 204, 207, 215-218, 257

Փ

Փաթրինջ գյուղ 7, 22
 Փալոլովան գյուղ 237

Փալավան գյուղ 100, 156
 Փախներ, Փախներ սար 306, 334
 Փամբակ 108
 Փամբուղդարա Ներքին հանդամաս 27
 Փամբուղդարա Վերին հանդամաս 27
 Փաշալը-չայիր վայր 106
 Փասինլեր, տե՛ս Հասանդալա գյուղաքաղաք
 Փարգախներ գյուղ 329
 Փարգեթ Մեծ, Փոքր 237, 239
 Փարիզ 99, 104, 188, 208, 209, 220
 Փարսլի գյուղ 50
 Փարքիղ գյուղի գերեզմաններ 60
 Փափշեն գյուղ 320
 Փենիկ 256
 Փեսանդաշտ գավառ 278, 306, 326, 328-329, 333-337, 345
 Փիրբաղլան գյուղ 331
 Փլխուս գյուղ 321
 Փշներ դաշտ 288
 Փշոտ հանդամաս 27
 Փոս աղբյուր, Վարագավանքում 167
 Փոքր Հայք 253
 Փուրկու գալի, ձորակ 281

Ք

Քաղիկլար Ներքին 237, 239
 Քաղաքամեջ թաղամաս, Վան քաղաքում 164, 166
 Քաղաքի թաղ, Մոկս քաղաքում 281
 Քաղբիկ (այժմ՝ Գյուլլեր), գյուղ Խնուս գավառում 352-353
 Քանաքեռ 30, 50, 62
 Քանդիլ քաղաք 284
 Քառննձառ աղբյուր, դաշտ 288
 Քասաղ գետ 21-23
 Քարադաշտ գյուղ 298
 Քարափի թաղ, Կարս քաղաքում 139
 Քարդա դրբանոց, տե՛ս Ջենալ փաշայի դրբանոց
 Քարդաշ 305
 Քարխման Կող սար 315
 Քարհատ գյուղ 208, 210
 Քարե կամուրջ 122
 Քենտրչի փողոց, Վան քաղաքում 349
 Քեշ ճանապարհ 36, 46
 Քեռինե գյուղ 256
 Քեսկինմատեն քաղաք 255
 Քերձ, գյուղ Հայոց Չոր գավառում 326, 333
 Քերս գյուղ 327
 Քեստետրե, տե՛ս Տավշանպայեր թաղամաս
 Քիլիս 78, 81
 Քինակ գյուղ 243
 Քիտորա գալի, ձորակ 281
 Քիրքլար, տե՛ս Ղաասոն գյուղ
 Քլի գյուղաքաղաք 171
 Քյաղիկլար գյուղ 239
 Քյախտա 256
 Քյափանակներ Ներքին (Փոքր) գյուղ 49
 Քյափանակներ Վերին (Մեծ) գյուղ 49

Քյոթակ քաղաքատիպ ավան 44
 Քյոշկ գյուղ 219
 Քյոռոլի գյուղ 54, 55, 57-59
 Քյոսա-դերե թաղ 189
 Քյոփրի կամուրջ 256
 Քյոփրյոքյոյ, տե՛ս Կամրջագյուղ
 Քյուլիե 82
 Քյուրակդարա գյուղ 237
 Քյուրդ գյուղ 256
 Քոլագիրան 275
 Քոնա հերե, Տերտերի ծակ թունել 303
 Քոշք գյուղ 328
 Քոսադաղ գազաք 45
 Քոսադաղի սարավանց 48
 Քորփալու, տե՛ս Արշալույս գյուղ
 Քովդուռ ճանապարհ 36-37, 42
 Քովդուռ սար 37
 Քռասնի գյուղ 33
 Քոքոռ, տե՛ս Գրգուռ լեռ
 Քրդարագ, տե՛ս Քրդարաս գյուղ
 Քրդարաս (Քիրդարաս, այժմ՝ Քիլիքոնաք) գյուղ 31
 Քրդագոն (այժմ՝ Թարանլը), գյուղ Մուշ գավառում 354, 359
 Քրդաստան, Քրդաստան 285, 287, 307, 320, 340, 359
 Քրիստոսի արցունք աղբյուր 174
 Քրմենց, գյուղ Շատախ գավառում 349
 Քրմինի սար 332
 Քուվլերան գյուղ 239
 Քուչակ գյուղ, տե՛ս Ալի Քուչակ գյուղ
 Քուռ, Կուր գետ 245

Օ

Օդեսա 246
 Օբլույագ, տե՛ս Խուլիկ գյուղ
 Օլթի գավառ 51, 53, 60, 107, 109, 241
 Օլթիի ածխահանքեր 109
 Օկոն, Օզոնի, Օկոնի գյուղաքաղաք (այժմ՝ Յուլդյունյու) 34
 Օձ քաղաք 354
 Օղվանց գյուղ 322
 Օղուզլի, տե՛ս Ուղուզլի գյուղ
 Օշական 23
 Օսմանյան խորհրդարան 166
 Օվայի հարթավայր 31
 Օրթաքաղիկլար գյուղ 237
 Օրիորդաց դպրոց, Դարաքիլիսա քաղաքում 158
 Օրիորդաց Հոփսիմյան (Շուշանիկյան) դպրոց, Կարս քաղաքում 106
 Օրտունի մրբաթթան (Էգրա), տե՛ս Հորդանանի կայարան

Ֆ

Ֆալակի ջրաղաց 139
 Ֆրանսիա 186, 220, 229
 Ֆրննըլար գյուղավան 193, 212

ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿ	ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ	ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ-ՍՐԲԱԳՐԻՉ	ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՑԱՆԿԵՐ	ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	ՀԵՂԻՆԵ ԲԱՍՏՐՄԱՋՅԱՆ
	ՇՈՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱԿՈՐՈՂ	ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՂՆԵՐ	ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	ԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՋՈՒՄՅԱՆ
	ՇՈՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
	ՏԱԹԵՎ ԽԱԶԱՏՐՅԱՆ
	ՆՈՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
	ԱՆՆԱ ՉԻՉԱԿՅԱՆ
	ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՏՊԱՐԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2011